

1551.54
222

ԱԿՍԵԼՔԱԿՈՒՆՑ

ԵՐԿԵՐ

II

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

АКСЕЛЬ БАКУНЦ

СОЧИНЕНИЯ

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ

II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1970

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՕ

ԵՐԿԵՐ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹՐԵՎԱՆ 1979

Խմբագրական կոլեգիա

ԱՂԱԲԱՐՅԱՆ Ս., ՉԱՔԱՐՅԱՆ Ա., ԻՇԽԱՆՅԱՆ Ռ.,
ՀԱԿՈՐՅԱՆ Գ., ԶՐԲԱՇՅԱՆ ԷԴ.

Հատորի խմբագիր
Ա. Գ. ՉԱՔԱՐՅԱՆ

Բնագրերը պատրաստեց և ծանոթագրեց
ՌԱՅԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆԸ



129090

Բակունց, Ա.,

Բ 228 Երկեր: 4 հատորով /Խմբ. կոլեգիա Աղաքարյան Ս.
և ուրիշ.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1979.

Հ. 2 /Բնագրերը պատրաստեց և ծանոթագրեց
Ռ. Իշխանյանը: Խմբ. Ա. Գ. Չաքարյան. 715 էջ,
3 թ. նդ.

Հայ գեղարվեստական արձակի խոշորագույն ներկայացուցիչ-
ներից մեկի՝ Ակսել Բակունցի Երկերի գիտական հրատարակության
երկրորդ հատորն ընդգրկում է գրողի պատմվածքներն ու պատկեր-
ները, ակնարկները և Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը»՝ Բակունցի
փոխադրությամբ, առաջաբանով (Նախաշաղկիչ) և ծանոթագրու-
թյուններով:

Ա. 4702080200 83-78
703 (02)-79

Ար 2
ԳՄԳ 84.27



Ա. Բակունց (1927 թ.)

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ
ԵՎ
ՊԱՏԿԵՐՆԵՐ



ՀԻՄՆՈՐ ՄԱՐԴԸ

(Չեֆիաթ)

Լինում է շի լինում, մի հարուստ մարդ է չինում. նա ունենում է 7 աղջիկ, բայց ոչ մի տղա: Մարդը կամաց-կամաց սկսում է ծերանալ: Նա իր յոթ աղջիկներին ամուսնացնում է և ունեցած-չունեցածը ծախելով ճանապարհ է ընկնում Աստծու մոտ գանգատվելու, թե ինչո՞ւ իրեն տղա զավակ չի պարգևել:

Ճանապարհին նա տեսնում է մի մարդու, որ տխուր ու տրտում, վիզը ծռած կանգնած էր իր արտի մոտ:

— Բարի օր,— ասում է մարդը:

— Աստծու բարին,— պատասխանում է արտատերը տխուր:

— Ինչո՞ւ ես տխուր,— հարցնում է մարդը:

— Ինչ անեմ, որ շտխրեմ. ամեն տարի արտումս 100 սոմար ցորեն եմ ցանում, բայց որ գալիս է հնձելու ժամանակը, իսկույն ժանգը պատում է արտս: Չեմ իմանում՝ ո՞ր մեղքիս համար է այդպես լինում:

— Ես գնում եմ Աստծու մոտ. եթե կուզես, քո դարդն էլ կպատմեմ:

— Շատ լավ կլինի,— ասում է արտատերը ուրախացած:

— Մարդը շարունակում է իր ճանապարհը: Անցնում է շատ երկրներ, սարեր ու ձորեր, և մի խիտ անտառում պատահում է նրան մի գալլ, որ տխուր կանգնած էր ճանապարհի վրա:

— Բարի օր,— ասում է մարդը:

— Բարով եկար,— պատասխանում է գայլը տխուր:

— Ինչո՞ւ ես այդպես տխուր, գայլ աղբեր,— հարցնում է մարդը,— թե մի դարդ ունես, ասա՛, ես գնում եմ Աստծու մոտ, քո դարդն էլ կպատմեմ նրան:

— Իմ դարդն այն է,— պատասխանում է գայլը ուրախացած,— որ ես ինչքան միս եմ ուտում, շեմ կշտանում. շեմ իմանում՝ ինչո՞ւ: Խնդրում եմ խնդիրքս կատարես:

Մարդը շարունակում է իր ճանապարհը և վերջապես հասնում է Աստծու մոտ ու պատմում իր դարդը:

10 — Աստված պատասխանում է.

Քո վերջին օրերը շատ փառավոր կլինեն, եթե դու ցանկանաս, և քո դարդն էլ կմոռանաս: Կգնաս Մ..... Թագավորի մոտ, որը կին է, Կհայտնես նրան այդ գաղտնիքը և դու փոխարենը կթագավորես:

— Բայց այն մարդու արտը ինչո՞ւ է այնպես փշանում:

— Որովհետև,— շարունակում է Աստված,— նրա արտի մեջ գտնվում է յոթ կարաս ոսկի: Ամառ ժամանակ ոսկին տաքանում է, և արտը ժանգով է պատում:

— Իսկ գայլը ինչո՞ւ է այնպես քաղցած մնում:

20 — Նա կկշտանա, եթե մի հիմար մարդու միս ուտի:

Մարդը գնում է այն թագավորի մոտ և հայտնում նրան գաղտնիքը:

— Խնդրում եմ,— ասում է թագավորը,— դու հագիր շորերս և իմ փոխարեն թագավորիր: Ոչ ոք չի իմանա, բացի մեզնից:

— Չէ՛, շեմ ուզում,— ասում է մարդը և հեռանում:

Հասնում է արտատերին, որը էլի կանգնել էր տխուր իր արտի մոտ:

— Էլ մի՛ տխրիր. Աստված ասել է, որ քո արտում գտնվում է յոթ կարաս ոսկի, և դրանից է, որ քո արտը ժանգով է պատում:

30 — Խնդրում եմ,— ասում է արտատերը,— ոչ ոքի չասես, թե չէ կթափվեն, ոսկին կտանեն և արտս կկոխարտեն: Այս գիշեր շորս կարաս տանենք, իսկ մյուս գիշեր՝ երեքը:

Ասացին ու կատարեցին:

— Այժմ,— ասում է արտատերը,— կամ կեսը քեզ, կե-

սը ինձ, կամ, եթե ցանկանում ես, ինձ մոտ մնա և մինչ մա՛հ փառավոր ապրի՛ր:

— Չէ՛, շեմ ուզում,— ասում է մարդը և հեռանում:

Վերջապես նա պատահում է գայլին:

— Գայլ աղբեր, Աստված ասաց, որ եթե դու մի հիմար մարդու միս ուտես, կկշտանաս:— Եվ մարդը պատմեց իր գլխի անցածը՝ թագավորութան, փառքի և ոսկու մասին: Գայլը մտածում է.

— Այս մարդը ոչինչ չունի այլևս և բավականին ծեր է՝ նրան առաջարկել են թագավորութուն, փառք ու ոսկի, չի վերցրել. սրանից էլ հիմար մարդ:

Մինչ այդ մարդը մի քիչ հեռացել էր:

— էյ, մարդ աղբեր,— կանչում է գայլը և մոտենում,— ոտքիդ թելը բացվել է:

Մարդը կռանում է, որ կապի ոտքի թելը: Իսկ գայլը, հարմար համարելով և ցատկելով մարդու մեջքի վրա, հռչատում է հիմար մարդուն:

ԱՂՈՅՔ

Միայն Քեզ, Տե՛ր, միայն Քեզ եմ աղոթում:

Ընդունիր Տեր, իմ աղոթքը—սրտիս խորքերից բխած, թող քեզ հաճելի լինեն իմ տանջված հոգու մրմունջները, և աղերսանքս մի՛ մերժիր, Տե՛ր: Այս ուշ գիշերին, այս խավար գիշերին, երբ հոգիներն են զրուցում աստղերի հետ, և հազարավոր մարդիկ աղոթք են կարդում Քեզ, այս մութ գիշերին մի մերժիր հոգնած ու մոլար մարդու աղերսը:

10 Իմ միակ ապավենն ես Դու, Տե՛ր, և հույս ու հանգրվանս: Քեզնից հզոր ու կարող չկա երկրում, Քո արդարությունը միակն է, Տեր, ինչպես վրեժդ: Հազարավոր կարոտյալների ու տանջվածների հոգուց եմ խոսում Քեզ հետ, և նրանց հոգուց,— որոնք աղոթել չգիտեն, աղոթքի են պապակ:

Տե՛ր, հզոր ես և կարող...:

Հեռացրու տանջանքն այս ահավոր, զրկանքները բյուրավոր, էլ թող արցունքներ չհոսեն, թող հեռոց չլինի, թող հրդեհ չլինի: Տե՛ր, թուշունները բնակորույս են, այգիներն ամառի են, և շեները ավերակ, մարդ չկա՝ վարդի հոտով զմայլվող, Տե՛ր, ծուխ է ամենուր, տաճարներիդ զմբեթները հողի հետ են հավասարվում, Քո տները ավերվում են: Մոխիրը շատ է, արյունով հագեցավ երկիրը:

20 Հեռացրո՛ւ, հեռացրու, հեռացրու...

Խաղաղություն տո՛ւր երկրին, թող ծաղիկները բույր տան, թող առաջվա պես առունները կարկաչեն, և աստեղազարդ երկրների տակ մարդիկ գովքդ մրմնջան, աղոթեն Քեզ:

Ամառի դաշտերում գայլերն են ոռնում, մենավոր շիրիմներն են աղերսում Քեզ: Տե՛ր, անթաղ մեռելները Քեզնից

հանգիստ են խնդրում, մի կտոր տեղ,— Ծրկրի գրկում՝ պառկելու:

Տե՛ր, հազարավոր մատաղ կյանքեր մահացան, երազներ տրորվեցին, խինդն անցավ, և արցունքից մեր աչքերը կուրացան: Ի՞նչ եղան հին երգերը, ո՞վ էր այն անգութը, որ խլեց բոլորը, հրդեհեց տաճարները և հոգիները ամայի, ավերակ դարձրեց:

Քո երկնքի տակ, օրերից մեկում Հերդային տեսա, քոռ պես ջերմ սիրեցի, և կարոտը հոգուս մեջ — հեռացա նրանից: Նախճիր էր, Տեր, հեռացա նրանից... Բայց ես արյուն չհեղուցի, ես ավեր չարի, ես երազներ չավրեցի:

Տե՛ր, չէ՞ դու բարի ես և գթոտ, ինչպես հայր...

Աղերսանքս ընդունի՛ր:

Հին լավ օրերը տուր, լավ օրերը բեր, խնձ Հերդային տուր: Խնայիր Հերդային, նրա հոգուն խնայիր:

Այնքան շատ են Հերդաները:

Քանիսներն են աղոթում, կարոտը հոգում, լավ օրեր տեսնելու հույսը սրտում: Շատերն են երազում հին պալատները, որ կառուցել են խինդով, եռանդով, վայելքի ու աղոթքի համար:

Հոգնել ենք, Տե՛ր, էլ ուժ չունենք, էլ դիմանալ չենք կարող: Մանր է բեռը, մեր ուսերը կքվեցան, մեր ծունկերը կուրացան: Մարեցին, մարեցին բյուրավոր հույսեր, և խավարի մեջ հանգան մատաղ կյանքեր, երազներով, հույզերով հարուստ, մոմի պես հալվեցին, ոչնչացան սերունդներ:

Տե՛ր, հզոր ես, ավերը դադարեցրո՛ւ... Թող վայելեմ Հերդայի սերը, ես դեռ գուրգուրանք եմ ուզում, ես ապրիլ ու վայելել եմ ուզում, ես ստեղծել եմ ուզում, իմ հոգին կերտել է ցանկանում:

Արյունը վայելք չէ, ավերը կերտվածք չէ՛, Տեր:

Տե՛ր, բոլորին իրենց Հերդաները տուր, հին պարտեզներում թող սիրո բառերը հնչվեն, թող երգեն առաջվա պես և ստեղծագործեն, նոր շինքեր կերտեն:

Թող կառուցեն, Տեր, թող հորինեն:

Արյունը հերիք եղավ, մոխիրը շա՛տ-շատ է...

ԱՇՈՏԸ

Աշոտը մեր վաշտի զինվորներից էր:

Բարձրահասակ, գունատ մի պատանի էր նա, Շիրակի դաշտից: Նոր էր եկել զինվորական ծառայության և անվարժ էր դեռ զորանոցի անհետաքրքիր, միապաղաղ ու դաժան կյանքին: Երբեմն, ծանր աշխատանքից հոգնած, Աշոտը նըստում էր քարի վրա, և ունկնդիր խաղաղ գիշերվա հեքիաթին, երգում էր հայրենի մեկամաղձոտ երգերից: Անուշ են Շիրակի երգերը, երկար ու ծործորուն,—Շիրակի արգավանդ դաշտերի նման, և խորհրդավոր, ինչպես գիշերն այդ երկրի... Լավ էր երգում Աշոտը. նրա հոգու մեջ թախիժ կար, վշտի շեշտ կար երգերի մեջ: Իսկ ո՞վ չէր թախժոտ այն ժամանակ, երբ հայրենի երկրի վրա շարագուշակ ամպեր էին կուտակված:

Օրեցօր հավվում էր Աշոտը, դեմքը գունատվել էր, համարյա դեղնել. այտերը փոս էին ընկել, քունքերի երակները կապտին էին տալիս և թույլ-թույլ բարախում: Աչքերը երազկոտ, մարվող ճրագի պես մեկ բոցավառում էին, մեկ նսեմանում: Բուլորն էլ ափսոսում էին նրան, ցավն էին ուզում իմանալ, բայց ոչ ոք չէր կարողանում, շատ քշերն էին իմանում, թե ինչո՞ւ երբեմն աչքերը կարոտով հառում էր դեպի հայրենի դաշտերը:

— Էն սարերից դենը մեր դաշտերն են, ծաղկունքով, կանաչով հարուստ մեր դաշտերը: Էնքան նախշուն է մեր երկիրը:

Աշոտը հայրենի գյուղն էր ուզում գնալ: Մի քանի անգամ խնդրեց վաշտապետին, բայց նա մերժեց: Հայրենի երկրի կարոտը մաշում էր նրան, և օրեցօր նիհարում էր:

— Մեկ տեսնեմ մեր դուրանը, էլ մեռնեմ, հեշ դարդս չի...

Հայրենի երկրում Լուսնթագը կար, Աշոտի սիրած աղ-
ջիկը: Շատ էր սիրում Աշոտը իր Լուսնթագին, ու ամեն ան-
գամ, երբ իր հայրենիքի մեկամաղձոտ երգերն էր երգում,
Աշոտը իր երգերով սիրածի հետ էր խոսում, սիրածի գովքն
էր անում և կարոտում, կարոտում:

— Ղուշ էղնեի թռչեի, կարոտս առնեի, էլ հետ գալի,—
այսպես էր երգում Աշոտը:

Երբեմն էլ ակնապիշ նայում էր բարձր սարերին, որոնց
ետեր հայրենի դուրանն էր, ուր ապրում էր Շիրակի աղջիկը՝
Լուսնթագը, խաժ աչքերով, հյուսերը՝ երկար, շինարու պես 10
բոյով ու բարակ, և սիրող, գուրգուրող:

Աշոտը ինձ շատ էր սիրում, շատ բան էր պատմում, և
ոչինչ չէր ծածկում... «Լուսնթագը հեռանալիս, ճամփի եզրին
կանգնեց և թաշկինակը ճոճելով օղում մնաս բարև էր ասում
ինձ...»,— այսպես էր վերջացնում Աշոտը իր պատմությունը
նրա մասին: Հիշում էր, թե ինչպես միասին արտը քաղհանի
էին գնում, ինչպես աղբյուրի մոտ նստած իրար ջրով էին տա-
լիս և խնդում, ծիծաղում: Հիշում էր, էն որ գարնանը, ծառի
տակ առաջին անգամ համբուրեց Լուսնթագի նուան պես կար-
միր շուրթերը:

Եվ ժամերով փորփորում էր Աշոտը իր հիշողություննե-
րը, հաճույք զգում, երբ անցյալն էր հիշում: Աշոտը միայն
մտածում էր, թե ինչպես անի, որ սիրածին մեկ էլ տեսնի:
Սպասում էր, որ մի քանի շաբթից հետո, վաշտապետից
իրավունք խնդրի՝ տուն դառնալու:

Ու մի գիշեր մեր վաշտը հրաման ստացավ դուրս ելնել
կովի դաշտ: Կես գիշերին, կազմ ու պատրաստ վաշտը ճամ-
փա ընկավ քաղաքի լճու, կիսամութ փողոցներով:

Լուսաբացին՝ առաջին համազարկի ձայներն եկան: Ու
կռիվը սկսվեց:

Մեզ հրամայված էր գրավել դիմացի լեռները, որոնք իշ-
խում էին ամբողջ դաշտի վրա:

Թշնամին գիտեր մեր մպատակը, համառում էր և շէր
ուզում թողնել այդ լեռները:

Գայլերի պես թնդանոթներն էին ոռնում և քերում հսկա

լեռների կուրծքը: Գնդացիներին միալար կտկտոցը կարծես լրացնում էր այդ դժոխքի պատկերը, որին կռիվ են ասում: Կեսօրից անց, մեր ձախ թևը անցավ թշնամու թիկունքը, և թշնամին գերի շընկնելու համար սկսեց նահանջել: Արևը մայր մտնելիս մենք լեռների գագաթին էինք և հաղթողի հայացքով դիտում էինք, թե ինչպես հեռվում ցան ու ցրիվ նահանջում էր հակառակորդը:

Սկսեցինք դիակները ժողովել, թաղելու համար: Մի քանիսն էլ գերեզման էին փորում: Ու հանկարծ...

10 Առվի եզրին: որտեղ մեր շղթան քիչ հետ նահանջեց, Աշոտի դեռ տաք դիակն էր ընկած, արյունաթաթախ, հայացքը դեպի հայրենի դուրանը, ուր Շիրակի աղջիկը, Լուսնթագն է սպասում Աշոտին...

Աշոտին թաղեցինք մյուսների հետ ու փայտե մի պարզ խաչ ցցինք հողաթմբի մեջ, գլխիկոր ու տրտում հեռացանք դեպի նոր դիրքերը:

Բոլորն էլ ափսոսում էին Աշոտին,

— Ափսոս Աշոտ, բեմուրազ մեռավ,— ասաց մեկը:

ԱՆՏԱՌՈՒՄ

(ԸՆԿԵՐՈՋՍ՝ Վաղոյիճ)

Երկար ճամփից հոգնած ու դադրած մի օր, լուսաբացին ես անտառ մտա, հինավուրց անտառը, որի միջով ճամփես էր անցնում, և պառկեցի կիսաշոր կաղնու տակ՝ կանաչի վրա:

Վաղուց էր, որ անտառում շէի եղել: Ծառերը մի քանի անգամ ծաղկել էին այն օրից, երբ ես արևամուտին, անտառի կանաչազարդ ուղիով անցա դեպի անհայտ հեռուները, այնտեղ, ուր արևն էր հանգչում:

Եվ անտառն աչքիս փոխված երևաց:

Կարծես մի շար ձեռք ամենալավ ծառերն էր ջարդել և արմատախիլ արել փոքրիկ ցարասենիները, որոնց մեղմ սոսափն ինձ հիշեցնում էր մանկուց լսած հեքիաթներն անուշ: Եվ ամեն անգամ, երբ անտառ էի գալիս, հոգիս անհոճորեն իր ծալքերն էր բացում, ես ինձ երջանիկ էի զգում, որ անտառի անուշ բույրն եմ վայելում, և ունկնդիր ծառերի սոսափին, մտորում էի վաղուց մոռացված բաների մասին: Փոքրիկ ցարասենիները չկային... Ինչքա՞ն հաճելի էր փեթթել նրանց տերևները և մեկ-մեկ նետել պաղ ջրի մեջ:

... Իսկ այժմ ոչինչ չկար, անտառն ասես մեռել էր: Առաջվա գրավչությունը չկար: Ծառերը կարծես պառավել ու կորացել էին և հովի ամենաթեթև շնչից օրորում էին իրենց կատարները, ճիշտ այնպես, ինչպես ծերունին է երբում իջ գլուխը, երբ հին, անցած-գնացած օրերի հաճույքն է հիշում:

Ճղակոտոր ու կիսաշոր ծառերը հուսահատորեն իրենց մերկ կատարները դեպի վեր էին ուղղել և մի անհայտ Աստծու

10

20

պատմում, թե ինչքան ծանր է ճյուղերից զրկվելը: Անտառն երկնքին իր ցավն էր պատմում, իր մեծ ցավը, և անբարբառ զրուցում աստղերի հետ և խավարի մեջ՝ լքումով պատմում, որ մարդիկ անզուժ են ու շար:

— Թրա՛խկ-թրուխկ, թրա՛խկ-թրուխկ,— լսեցի ես անտառի խորքից:— Փայտահատն է,— մտածեցի ես և միտս ընկան իմ մատաղ ցարասենիները, որոնք բուսել էին շարքով, առվի եզրին: Հիշեցի մի հեքիաթ այն մասին, թե ինչպես ծառերը հեծում են կացնի հարվածների տակ, և արյունը
10 կաթիլ-կաթիլ դուրս է ծորում նրանց վերքերից: Խեղճ ցարասենիներ...

* * *

Հիշեցի այն օրը, երբ վերջին անգամ անցա անտառով դեպի հեռավոր մի աշխարհ, ծառազուրկ ու սառնամանիքոտ, ուր այնքան շատ արյուն էր հոսել, և ուր դաշտերում կարմիր, ճիշտ արնագույն ծաղիկներ էին բուսնում:

Հրաշալի մի աշխարհ, ուր սարալանջերին, երբ գարնանամուտ է լինում, կանաչը բարձրացնում է գլուխը և դիտում հսկա դաշտերն ու ձորերը: Հեքիաթի մի աշխարհ, ուր ամեն ինչ հեքիաթ էր, մի լուսեղեն երազ, որ կար և չկար:

Անտառը գիտեր ամեն բան: Նա ականատես էր, երբ ես իմ հառաչները ծաղիկների սոսափին էի խառնում, երկնքի կապույտը դիտում, ասես երկնի անհունության մեջ էի որոնում այն աշխարհը, ուր երբեք ես չէի եղել, բայց որի մասին հրաշալի պատմություններ էի լսել: Պատկերները խուռներամ ուղեղիս մեջ էին լեցվում, ես զգում էի մի հաճելի թմրություն, կարծես արբեցել էի ծաղիկների բույրով:

Հայրենի աշխարհս անհայտ հեռուներից կանչում էր ինձ, հմայում: Ես դիտում էի ձյունապատ շղթան, որի մյուս փեշերը հայրենի աշխարհի ջրերով էին ոռոգվում: Գիտեի, որ
30 այնտեղից երևում են իմ հեթանոս հայրենիքի արգավանդ և բերրի դաշտերը, և սրբազան Սփրատը ոլոր-մոլոր, լեռան փեշերը քերելով, անցնում է դաշտերի միջով և ցողում ծաղիկներն եղեմական:

Եվ մի օր, երբ արևի մարվող շողերը փայլվում էին լեռան կատարին, ես իմ երազած աշխարհի ճամփեն բռնեցի:

Ես ցանկացա մարմինս թրջել սրբազան գետի մեջ, և բարեպաշտորեն երկրպագել հեթանոս հայրերիս աստվածներին՝ ամենաճերմակ արջառնները զոհելով: Ես կամեցա դիտել, թե ինչպես արևի հրաշեկ գունդը տաքացնում է այն պտղավետ երկիրը, ուր ամեն բան առատ էր և գեղեցիկ:

Անտառը ամեն բան գիտեր:

... Ու քայլեցի ես, ուրիշների հետքով, շատերի պես: Ծամփեն երկար ու դժվարին, ճամփեն արնոտ ու մոլոր, բայց քայլեցիք մենք հավատով և անտրտունջ: Եվ հոգնած, արևառ ճակատով, հյուծված ու վտիտ, գալիք օրերի կարոտով էինք ջերմանում, երբ մի օր մեր երդիկից ծուխը պիտ ելներ և վայելքի, աշխատանքի երգերը պիտի լավեին դաշտերում, սարերում:

Մեր ոտքերը մաշվեցին քայլելուց, մեր ծնկները կքվեցին ծանր բեռից, բայց մենք մեր աշխարհը շտեսանք:

Իզո՛ւր, իզո՛ւր, իզո՛ւր...

Ե՛վ արյուն, և՛ քրտինք, և՛ զոհ ու զրկանք, և՛ արցունք:

Մենք վերադարձանք այդ ճամփաները նզովելով, այդ ճամփաները, որ հազար-հազար մատաղ կյանք լափեցին և չհագեցան: Մեր ուխտը մեզ անմիտ թվաց, մեր ճամփան կորստաբեր, և մնացինք շվարած: Մեկը չեղավ, որ մեզ նոր ճամփաներ ցույց տար, որ ամոքեր մեր հիվանդ սիրտը և թե տար, նոր թևեր, ապրելու, ստեղծելու:

Հինավուրց անտառը բոլորը գիտեր:

* * *

Ծառերը մեղմիկ օրորվում էին, ասես սգում էին բոլոր անթաղ մեռելների համար, որ այնպես առատորեն մենք ցրվեցինք այդ անարև երկրի սար ու դուրանում:

Հաստաբուն կաղնիները սգում էին մեր կյանքի վախճանը, և լուսթյան մեջ անտառը մտորում էր խորախորհուրդ և մեծ գաղտնիքների մասին, որոնց հասկանալու համար մարդու միտքն անզոր է հավիտյան:

* * *

Ծամփորդ էի ես՝ հոգնած ու ջարդված:

Ոտքերիս վրա դեռ մեծ ճամփի փոշին կար, այն ճամ-



փի, որով գնացինք մենք հեռուներում հրաշքի աշխարհը որոնելու:

Կանաչագարդ անտառում, այնտեղ, ուր մեծացել էի ես, ուզեցի անէանալ, սուզվել անտառի խորության մեջ, մտովին գրկել նրա մեծ գաղտնիքները և թավուտների կիսախավարի մեջ վերհիշել բոլոր պատրանքները հին ճամփի:

10 Տերևները սկսեցին երերալ, հովը կամացուկ հավում էր խոտերին, ծաղիկներին, ասես զգուշանում էր նրանց նիրհը վրդովել: Եվ մեղմաբար, քրոջական զուրգուրանքով շոյում էր քրտնաթոր ճակատս, կարծես հանդիմանում էր ինձ՝ թափառումիս ու որոնումիս համար: Թռչունները սկսեցին ձայնել, ձյուղից ձյուղ ուստոստել: Մի քանի թիթեռներ, օդում հանգույցներ կազմելով թռան անցան: Փայտփորը հավասար զարկերով և միապաղաղ կտցել սկսեց ծառի բունը:

— Անտառն էր զարթնում, հինավուրց անտառը:

Արևը դանդաղ և վեհափառորեն բարձրանում էր, արծաթն շողերով ողջ երկիրը ողողում: Լեռների կատարները սկսեցին հուրհրալ, ձյունը փայլում էր և խնդում արևի անզորության վրա՝ փափկացնելու դարավոր սառնությունը:

20 Մի թմրություն իջավ ինձ վրա, և ես քնեցի կաղնու տակ, ճամփի եզրին:

* * *

Երբ զարթնեցի, կեսօրից բավական անցել էր: Արևն արդեն թեքվել էր դեպի արևմուտ:

Մուլլ-ծուլլ մոտեցա առվակին, պաղ ջրով երեսս լվացի և նորից պառկեցի՝ այս անգամ սալորենու ստվերի տակ:

Զգիտեմ ինչու փշոտ սալորենու թուփը ինձ հիշեցրեց գանգրահեր մի գլուխ, և վաղեմի հուշերս վերակենդանացան, կարոտեցի նրան, որի հետ ես միշտ անտառ էի գնում:

30 Ես այժմ չեմ հիշում, թե ի՞նչի մասին էինք խոսում, միայն այդ զրույցների քաղցրությունը չեմ մոռացել:

Իմ մեջ մի անզուսպ կարոտ ծնվեց դեպի իմ մտերիմը, որին վաղուց չէի տեսել: Ցանկացա նրա հետ լինել, պատմել բոլոր զրկանքները և թույլ տալ, որ գուրգուրի կամացուկ, շոյի գեմքս և հոգիս լեցնեն աղոթքով, խինդով:

— Սիրտս գուրգուրանքին կարոտեց, իսկ անտառում ոչ
ոք չկար:

...Ու հիշեցի Հերդային:

— Ո՞ւր է նա, ո՞ր աշխարհում: Արդյոք հիշո՞ւմ է նա ինձ,
արդյոք գիտե՞, որ ես մի մոլոր ճամփորդ եմ, մի անտուն
շրջիկ, որ քնում է անտառում, ճամփի եզրին:

Եվ կարոտը մարեց իմ հոգում, այնպես ինչպես առա-
ջացել էր: Ոչ ոք չեկավ ցավս հարցնելու, մեկը չկար, որին
պատմեի, թե ինչքան ծանր է նստել հինավուրց անտառում և
հին օրերը վերհիշել:

Զգացի, որ մենակ եմ, մեն-մենակ...

* * *

Իրիկունն իջավ:

Եվ հեռացա ես վիրավոր անտառից, հեռացա՝ տրտում,
գլխիկոր, ճամփեւ շարունակելու մինչև նոր հանգրվան, այն-
տեղից նորից քայլելու, քանի ճամփա կա, քանի ոտքերս չեն
թուլացել:

Ճամփեւ երկար էր, ճամփեւ դժվար էր...

ԷՆ ՏԱՐԻՆ

Այնտեղ, ուր այժմ պետական թատրոնի դերասանը շնորհքով խաղում է «Երևակայական հիվանդը», հենց այդ նույն սրահում հավաքվել էին 97 վարժապետ՝ 97 երևակայական հիվանդ, Քյավառից՝ մի Եփրեմ, Գյումրուց՝ մի Մխո, Ղարսեցի Տիկոն՝ «ծխական» պատգամավոր: Այդ տարին ամենքն էլ ավելորդ անուն ունեին՝ Ղաչաղ Սիմոն, Դալի Սյուրբաս, Սարսաղ Եփրեմ, Դժոխք Դավիթ:

10 Ընամարյա ամեն իրիկուն՝ մութն իջնելուն պես (այն տարին աշտարակի ժամացույցն էլ չէր խփում) պետական թատրոնի սրահում հավաքվում էին 97 պատգամավոր, մեկը զանգահարում էր, մի քանիսը հազում, աջ նստած «ճաղատ գլուխ» խմբից կաղլիկ մեկն ամբիոն էր բարձրանում և սայլի չյուղած անիվի պես ճռնչում՝ զեկուցում բյուջեի մասին (եթե կար այդպիսին):

«Զախը» անպատճառ պիտի հարցապնդում աներ, աղմկեր, նախագահը երկու անգամ զանգահարեր, իսկ երրորդ անգամ՝ քվեստորին աչքով աներ, որ դուրս տանեն հարցապնդման հեղինակին:

20 Հարցապնդումից հետո՝ կենտրոնը, որ փռված էր ձախից աջ, առաջարկ էր մտցնում հավանություն տալ կառավարությանը և ընթացիկ հարցերին: Կենտրոնից խոսում էր մեկը՝ մի Դժոխք Դավիթ կամ Ղուրդու Բալա, և 97 վարժապետի ձեռքեր աղոթող մոլլայի ձեռքերի պես ցցվում էին վեր:

Քվեարկելիս մտածելու կարիք չկար, ձեռքի համբարձումն այն ժամանակ մարմնի մարզանքի պես մի բան էր:

Ես կարող էի պատմվածքս սկսել և այսպես.

«Այն տարին էլ ծիրանը դեղնել էր ժամանակին, ինչպես միշտ», բայց գերադաս եմ համարում ծիրանով շսկսել, այլ վարժապետարանի նկարագրով, որովհետև կենդանի վկաներ դեռ շատ կան, նախկին «նախարար հանրային վարուց», որոնք կարող են հաստատել, թե իրոք այդպես էր առաջ, պետական թատրոնի սրահում:

• • •

Անձրևոտ աշնան սկիզբն էր:

Ցեխոտ ու խավար փողոցներ, մայթերը դար ու փոս, ամեն քայլի տիղմոտ լճակներ, նեղութուն հացի, շաքարի, բնակարանի: Այն տարին ստարածված զգեստը վանեցոց զուգու շալից էին կարում, շապիկը՝ ջուլհակի գործած քաթան: 10

Մի արտոնյալ դաս կար միայն, որի համար իզուր շէին ծխում հրկիզվող գյուղերը, մայթերի վրա, ավերակ շենքերի մեջ և խաներում աղտոտ իզուր շէր մահանում գաղթական ամբոխն անտեր:

«Զինված, պատրաստված» դասն այդ շռայլում էր թալանը, ջարդում, ավերում: Այն տարին նրանց համար շկար ո՛չ դատ ու օրենք, ո՛չ կարգ ու կանոն:

«Սահման տղերանց էին մաուզերքն յուրյանց»:

Ու մութ գիշերին (չգիտեմ լուսին կա՞ր այն տարին) քաղաքի խուլ թաղերից մեկում Դժոխք Դավիթի տղերքը խմում էին, հետո կրակում աջ ու ձախ, ծովից ծով: 20

Շենց այդ նույն գիշեր թատրոնի սրահում վտիտ մի էսեռ դարձյալ հարցապնդում էր, իսկ կենտրոնը լսում էր, ընդունում ի գիտութուն:

• • •

Պատասխանատու այդ տարին ես խիստ անպատասխանատու պաշտոն ունեի: Ամեն օր պիտի շրջեի հիմնարկները պետական, լուրեր հավաքի, թե ի՞նչ է պատահել, ո՞ւմ են սպանել, գողերը քանի տուն են կտրել, քանի խանութ թալանել:

Լուրերիս համար տողավարձ էի ստանում, և որովհետև հունձն առատ էր, պատահարները բազմաթիվ, շաբաթվա վեր-

30

21

ջին մի քիչ դրամ էր ընկնում գրպանս, մյուս շաբաթ շոգիա-
նալու համար:

Հիշողությանս մեջ աղոտ՝ այն տարուց մնացել է իմ
պատկերը՝ անկարգ, սղտոտ մազեր, ինչպես մացառուտ, բե-
ղի տեղերը նոր ծլած մազ և զգեստի պես մի բան, որի մեջ
ես ավելի խրտվիլակի էի նման:

Զինվորի ոջլոտ շորերից նոր էի ազատվել:

10 Սակայն այս ամենը կարևոր չէ մի ամբողջ շրջան բնորո-
շելու: Այն ժամանակ պատմական օրեր էին, երբ յուրաքան-
չյուր հայ լուսավորչական «միացյալ էր և անկախ» դուքան-
չին՝ արող գրվող, պատվով մեռնող:

* * *

Աշնան անձրևոտ մի օր էր:

Խմբագիրը լուր էր ուզում, գրաշարը՝ նյութ, ընթերցողը՝
օրվա թարմ լրագիր:

Հենց ներս մտա գրասենյակ թե չէ, հրամանը պատրաստ
էր:

— Տասներկու լուր մինչև ճաշ:

20 Դուրս ելա փոշման ու ջղային: Անձրևոտ այդ օրը, ցեխին
ու կիսաքաղց, ես ամենևին հավաս չունեի իմանալու, թե որ
մինիստրության մեջ են գողություն արել, ո՞ւմ տունն են թա-
լանել, ո՞ւմ է հետապնդում միլիցիան:

Մի բոպե կանգնեցի փողոցում, հիշեցի, որ մի մինիս-
տրության պահեստից տասներկու հազար գերանդի է կորել,
մտածեցի, որ պարենավորման գործ է, քայլերս ուղղեցի դեպի
ժանոթ մի գործավար:

Իզուր հույսեր:

Գերանդիները կորել էին և ոչ ոք չգիտեր, թե ո՞վ է գողա-
ցել: Մի բաժնի վարիչ նույնիսկ տհաճորեն պատասխանեց
30 ինձ ու չկամ քրթմնջաց.

— Վերջապես այդ թերթի բան չի:

Հեռացա հուսահատ, մի լուր թխեցի, որ քաղաքի փողոց-
ները շուտով սարքելու են (երկարաճիտ կոշիկներս ծակ էին
և իմ ուժեղ ցանկությունն էր փողոցները մայթած տեսնել), մի
երկու հին լուր թարմացրի, ենթադրական ձևով և այնպես

մութ, որ ընթերցողը չպիտի կարենար իմանալ, թե որտեղ է կատարվել այդ:

* * *

Գնացի միլիցիա:

Այդ գիշեր, անշուշտ, մի բան պատահած կլիներ՝ սպանություն կամ թալան:

Հե՛յ գիտի ժամանակ... ամեն մարդ մութք շունի այնտեղ-շատ անգամ, երբ գողություն էր լինում, տուժած կողմը գերադասում էր միլիցիային չդիմել, թե չէ իրեն հանցավոր կհանեին և դեռ վզակոթին էլ կտային: Այդ մի տարի էր, երբ բունցքով «չփելը» մարմնի զանազան մասերին, քնքուշ շոյել էր նշանակում: Միլիցիոները «ոտճիկ համարյա չէր ստանում, ինքն էր հայթայթում իր պարհենը, և կամավոր այդ ծառայության համար ամբողջ մի թաղամաս նրան պարգև էր տրված:

Ինձ ճանաչում էին ու մի քիչ էլ քաշվում: Ծս զգում էի, որ հաճելի հյուր չեմ և գիշերվա կերուխումից ուռած աչքերով անքուն հերթապահի դեմքի վրա շատ դյուրին կարդում էի.

— Օ՛ֆ, զահլա տարավ էլի՛...

Բայց այս անգամ ես գնացի միլիցիապետի մոտ:

Այդ մարդուն հրավիրել էին արտասահմանից, չգիտեմ, որ շնորհքի համար: Ծաշ ու կինարմատ շատ էր սիրում: Մի դեպք հիշելու համար օրն այսպես էր որոշում.

— Էն որ Եգորի տանը փլավ կերանք:

Եթե շատ էր զայրանում, հայհոյանքի հետ դուրս էին թռնում զանազան խորտիկների անուններ:

— Շան որդուն այնքան կծեծեմ, որ լուլաքյաբար կդառնա:

Նրա տիրապետության օրոք ստորադրյալ պաշտոնյաները գիտեին, թե ի՞նչ պատիժ է գողին «թակել, ինչպես դու՛մա», «կարմրած բուդ շինել» և այլն:

Դեպի իզական սեռն ունեցած վերաբերմունքը նույն մըտապատկերից էր բխում: Եթե նա մի գեր կին էր տեսնում, նայում էր այնպես, ինչպես մսագործը՝ շաղ մսացուին:

Խոսելուց առաջ սրտալի հազում էր, վիզը թեքում այնպես, որ դեմքն ինչ-որ վճռական առնականություն էր ստա-

նում, ձեռքերը կոխում էր գրպանը և անպատճառ ցույց տալիս տասնոցի մի ծայրը:

— Օ՛, բարով տեսնա՞ք,— երկարեց ձեռքն ինձ՝ տնավարի:— Խաբար ես ուզում, նոր լուր, հրմ...:

— Այս քանի օր բան չի՞ պատահել քաղաքում,— հարցրի ես:

— Զատ չի եղել, ուտում են, խմում, ազգը բազմացնում,— հռհռաց նա,

10 նա ընդհատեց ինձ, ասելով, թե այդ առաջ է եղել, գրելու կարիք չկա:

Քոռ ու փոշման դուրս եկա:

* * *

Հերթապահի սենյակում աղմուկի ձայն լսեցի: Մեկը թուրքերեն բարձրագոչ հայհոյում էր: Հանկարծ դուռը բացվեց, հաղթանդամ մի մարդ ալևոր մեկի վզակոթին «շփեց», ու նա երեսնիվայր գլորվեց սանդուղքից մինչև մուտքի դուռը:

— Գե գնա, քո...— ու հիշոց լրբենի, դուռը շրխկոցով ծածկեց:

Մնացի քարացած:

20 Խեղճ ալևորը մուտքի մոտ մնաց պառկած, հետո տրնքալով վեր կացավ ու նստեց քարին: Գլուխը ճղվել էր, և արյունը կաթ-կաթ թափվում էր միրուքին: Մերունին արյունը շէր սրբում: Նստել էր գունատ, ասես հիմա շունչը պիտի տա:

Մոտեցա նրան, նայեց այնպես խեղճ, կարծես ուզում էր ասի, որ ոչ ոք իրեն այդ վիճակից չի կարող ազատի:

— Ալլա՛հ, հոգիս առ:

Ասաց ու հենվեց պատին: Մեկը իջավ վերևից, զայրացավ ծերունու վրա, քրթմնշալով սկսեց արյունը սրբել: Մերունին թողեց հեռացավ, դանդաղաքայլ, մի ձեռքը գլխի ճեղքվածին: 30 Մուտքի դռան մոտ արյունը լերդացել էր:

— Հալա տես՝ ի՞նչ արյուն ունի,— դարձավ ինձ ավլող պաշտոնյան ախպես, կարծես ափսոսում էր, որ ծերունու երակներում դեռ արյուն կա:

Հետո իմացա, թե բանն ինչու՞մն էր:

Այդ ծերունուն իր մի ընկերոջ հետ շուկայում բռնում են, քերում միլիցիա և ստիպում, որ միլիցիայի համար փայտ սղոցեն, իհարկե, անվարձ: Մարդիկ վախից համաձայնում են:

Սղոցում են մինչև իրիկուն, մյուս առավոտ մի ընկերը շի գալիս: Ծերունին մնում է մենակ, սպասում է մի քիչ, հետո հերթապահին հայտնում, որ մենակ շի կարող սղոցել, թող մի մարդ տան:

Հերթապահը զայրանում է, հրամայում, որ մենակ սղոցի: Երբ ծերունին հայտնում է, որ շի կարող, հերթապահը տուր թե կտաս վզակոթին, մի աքացի էլ մեջքին և սանդուղքներով **10** գլորում վար:

* * *

Ես արյուն շատ եմ տեսել՝ կոհ՛վ, կոտորած...

Սակայն ծերունի փայտհատի արյունոտ պատկերն ամուր մեխվել է ուղեղիս:

Եվ երբ հիշում եմ «երանելի» այդ տարին, ինձ թվում է, թե այն ժամանակ կար միայն անարդար մի բռունցք, կոշտ մի սապոգ, որ շարտում էր սանդուղքից վար այն ամենը, ինչ խեղճ էր ու թշվառ:

«ԱՐՏԵԼԻԱ»

Ամռան կեսօրվա կիզիչ արևը խանձում է: Մի նեղ կածանով ձին զգույշ փոխում է քայլերը, իջնում, նորից բարձրանում:

Գյուղը դեռ չի երևում:

Կածանը ցորենի արտերի միջով է անցնում: Բերք չկա այս տարի. ձմռան ցրտերը կտրել են, երաշտն էլ մի կողմից է այրել: Արտերում՝ լղարիկ հասկեր, հատ ու կենտ, թզաշափ բարձրության,

10 Կանաչն է փրփոռում միայն բազմերանդ ծաղիկներով բնական մարգերում, որ նախշուն գորգերի պես փոփում են սալալանջերին:

Հեովից, ասես, քաթանի կանաչ գույնի վրա մեկը վրձինով քմահաճ գծեր է քաշել՝ մի տեղ կարմիր, մյուս տեղ՝ դեղին:

Բանուկ ճանապարհ չէ: Գնում եք ժամերով, ոչ ոքի չեք հանդիպում: Հնձի ու վարի ժամանակ միայն մի քանի օր բանում է ճամփան: Գյուղից-գյուղ երթևեկ քիչ կա: Ամեն գյուղ ինքնամփոփ է, հարևանի մոտ գնալ-գալ շունի:

20 Կածանն իջնում է դեպի ձորը, անցնում սրածայր ժայռերի տակով: Վայրէջքը դժվար է, քարոտ, առապար: Ներքևն անդունդ է. մի անզգույշ քայլ՝ և մեծ կտորը ականջդ կմնա:

Վերևում ժայռեր են, որոնց հիմքը հեղեղը փորել է, մաշել, և մի թեթև ցնցումի են սպասում, որ գլորվեն ներքև:

Մի հեղեղ լինելիս՝ ավազախառն սելավը սրբում է կածանը, քար ու հողով ծածկում և տեղ-տեղ դժվար անցանելի խորխորատ կազմում:

Քերծի տակից մեկը հերոստ «թոշ-թոշ» է անում և հայհոյում: Հավասարվում ենք: Գյուղացի է, հանդ է գնում: Մի սրածայր մահակով բզում է իշին, զարկում զայրացած, իշատիրոջ հերն անիծում:

Լղար քոսոտ էշ է, զութանի խոփն ու թևը բարձած: Բարակ ոտքերը զգույշ է փոխում և ամեն քայլափոխին տնքում բեռան տակ:

Գյուղացին էլ է շալակել, և քափ-քրտնքի մեջ կորած, դժվարին վերելքով և՛ ինքն է բարձրանում շալակն ուսին, և՛ էշին բզում, հրում:

Մի կողմ եմ կենում, որ անցնի:

Շալակը մի քարի է գնում, մեջքը դեմ է տալիս և փափախով քրտինքը սրբում: Գեղի ճանապարհն եմ հարցնում:

— Հենց էս կածանը գեղի վրա յա իջնում,— ասում է և հարցնում, թե ինչո՞ւ եմ գնում:

Պատասխանում եմ. նա մի քիչ մտածում է, ասում, որ լավ գործով եմ գնում:

— Բարի նպատակ ա...

Եվ ոտից-գլուխ մի հայացքով շափում է ինձ, նայում ձիու սարքուկարգին:

— Ես էս կառավարության մի բանը գլխի շեմ ընկնում: Էդ ո՞նց ա, գյուղերը ման եք գալիս ու մի նշան չունեք, որ տեսնողն էլ իմանա, թե օրենքի մարդ ես: Առաջ է՛, էն քյոխվեն, որ էլի անուսում մի մարդ էր, մի մեծ զինջիլ վզին կախ էր ման գալիս: Տեսնողն էլ իմանում էր, որ հա՛, սա քյոխվա յա...

Ասաց ու քրտինքը նորից սրբեց:

Այնքան շարքաշ դեմք ունեի, խեղճ արտաքին: Տեղով մի միտք էր, թե՛

— Ես հեշ, հա՛, քո ասածն ա...

էշը բավական հեռացել էր: Նա մի անգամ էլ կրկնեց, թե կածանն ուղիղ գյուղի վրա է իջնում, բեռը շալակեց և ոտները ծանրության տակ կքելով՝ սկսեց բարձրանալ սարն ի վեր:

Քիչ հետո նորից լավեց նրա բարկացած «թոշ-թոշը»:

Ներքե՛ ձորի մեջ, լեռնային գետակն էր աղմկում, ճերմակ փրփուրներ բաշին ցատկոտում քարի վրայով:

10

20

30

Մի պահ դժվար թվաց ինձ աշխատանքը գյուղում, որպես առապարը քարոտ, անհատակ՝ անդունդի պես և անդուլ, ինչպես հոսանքն աղմկող գետակի:

• • •

Անսվաղ պատերով մի մեծ սենյակում տեղավորված է և՛ «խրճիթը», և՛ գյուղխորհուրդը, և՛ ՓՕԿ-ը:

10 Սենյակում տաշեղների կիտուկներ են թափված հատակին, ռանդած տախտակներ և հյուսնի գործիքներ: Դպրոցի համար նստարաններ են պատրաստում: Լենինի նկարը՝ սևացած քարից խմորով փակցրած և պլակատներ՝ մի հատը թարս կախած և լոզունգներ շարեշար, իբր նախշ:

Գյուղում իսկույն իմանում են, որ քաղաքից մարդ է եկել: Եվ մեկ-մեկ հավաքվում են, անպատճառ մոտենում, ձեռք տալիս, քեֆ-հալ հարցնում և հեռվից, կիռ ու մեռ ճանապարհով, մոտենում գալուդ նպատակին:

— Տեսնում եք, ինչքան քանդված տներ կան մեր գեղում:

— Յոթն անգամ ենք գաղթել,— ասում է մեկը:

20 Ավերակ տներ շատ կան, պատերը փլված, դուռ ու պատուհան այրած, հանած տեղից: Ազգամիջյան կոիվների ընթացքում մի քանի անգամ տեղահան են եղել, թալանվել և նորից վերադարձել, գոմ ու մարագ նորոգել, տունը կարգի բերել:

Ավերակ տնատեղերում փարթամորեն աճել են սոխ, կաղամբ, ծխախոտ:

Տան դիմաց, ծառի շվաքում, իր աժդահա հասակով մեկ փուլել է մեկը, քնել մուշ-մուշ:

— Զա՛ն նրան: Աչք էլ շունի, աչքացավ էլ,— ասում է մեկը և ավելացնում, որ քնողը գեղի աղքատներից է, տանն ուտելիք չկա, գյուղում էլ՝ աշխատանք:

30 Բաքվից մի բանվոր է եկել, նույն գյուղացի: Ընկերները նրան ուղարկել են գյուղի ապրուստն իմանալու, դպրոցի կառուցմանը հսկելու: Փող են հավաքել դպրոցի համար, գրքեր է բերել և մի դրոշակ, որ մի քանի օր առաջ առանձին շքով գյուղին է նվիրել: Բաքվի բանվորների վրա մեծ հույս ունեն: Դպրոցի կառուցման աշխատանքը նրանց վզին է ընկած:

Գյուղը միայն աշխատավոր ձեռք է տալու, քար ու կիրն է բերելու:

Մի քանի հոգի գանգատվում են, որ թերթերը կանոնավոր չեն ստացել: «Մաճկալը» երկամսյա թերթ է այդ գյուղի համար: Վեց ամսում երեք համար են ստացել:

— Հենց միայն անունն ենք լսում, բայց իրան չենք տեսնում:

* * *

Նախագահը ժողովը բացում է: Հավաքվել են, նստոտել գետնին, տաշած տախտակի վրա, պատուհանին:

— Էդ մահակները մի քիչ քաշ պահեք, — նկատում է նախագահը դռան մոտ կանգնած մի քանի հոգու, որոնց բարձր պահած մահակները ներս մտնողին խանգարում են: 10

Օրակարգում խնդիրներ շատ կան: Արտել, հողային հարց, դաշտապահի ընտրություն և զանազան գործեր:

Նախագահն ինքն է խոսում արտել կազմելու մասին, պատմում է, թե ինչքան դժվար է աղքատ գյուղացու համար մենակ աշխատել:

Տասներկու տնտեսություն միացել են և մի գութան կազմել: Այդ գութանի հետ է կապված արտել կազմելու գաղափարը: 20

— Մենք պետք ա «արտելիա» կազմենք, որպեսզի մենք էլ մարդկության շարքերում դասակարգվենք, — վերջացնում է նա իր խոսքը:

Ումանք դժվար են համոզվում: Մեկը, մահակին հենված, օրինակով ու առակով է իր միտքն ասում:

— Գութանում բոլոր եզները մին չեն. դալբ եզ կա, որ հա ծրից դուրս ա քաշում, ծուլություն անում: Նմանապես և «արտելիան»: Եթե բարկանամ՝ արնակոլով անեմ, տերություն ատաջ մեղավոր եմ, շանեմ՝ ընկերս թամբալ ա, ինձ հետ չի գալիս, բա էդ ո՞նց անենք: 30

Շատ են խոսում, աշխատում են իրար համոզել: Մի փոքրիկ խումբ է նկատվում, աչքաբաց ջահելներ, որոնք ինչ էլ լինի, որոշել են «արտելիան» հիմք դնել:

— Քյասիբը թող մեզ հետ գա, Մուքի ապեր: Մենք ջուրովի տղերք ունենք, մինը մինից ասլան: 20

Մուքի ապերը «ղալը» եզան պատմութիւնն անողն է: Դարձյալ առակով և օրինակով է խոսում, բայց վերջում ջահելները հաղթում են: Մուքի ապերը մի անկյուն է քաշվում, շիբուխին զոռ տալիս և փափախի տակից ունքերը կիտած նայում ջահելներին, որոնք իրեն հակառակ խոսեցին:

Մի քանի սպիտակ գլուղացիք թիկն են տվել պատին, թազբեհ են քաշում, ժպտում են ծերի ժպտով, բարի ու զարմացած են, որ իրենց կյանքի վերջում ջահելները շլսած, շտեւած բաների մասին են խոսում:

* * *

10 Հողային վեճ կա, ավելի ճիշտը՝ մի ծառի հարց: Մառը երկուսի սահմանում է բուսել, արտի միջնակում: Հին վեճ է. ամեն տարի նույն բանը կրկնվում է, երբ պատերը նորոգում են, փլվածը պատում: Մեկն ասում է, թե՛ ծառն իմն է, մյուսն էլ՝ իմն է: Չեն էլ ուզում ծառը կտրել, բայց այնքան պինդ են պատել ծառի շուրջը, որ ծառի բունը չի հաստանում:

Վեճին վերջ են տալիս, ծառը համարում դպրոցի սեփականութիւն: Կողմերը մի պահ վարանում են, հետո համաձայնվում:

— Թող ձեր ասածը լինի...

20 Հանդում մի ոչխար է կորել, թուրք քոշվորի ոչխար: Տերը գլուղի խորհրդից խնդրել է իմանալ, թե ո՞վ է տարել: Էլի Մուքի ապերն է խոսում:

— Էդ մի նամուս չի մեզ համար, այ ժողովուրդ. հարեան ենք, էգուց էլ մեր տավարը նրանց հանդում կարող ա կորչի: Եվ Մուքի ապերն առաջարկում է, ոչխարը եթե չգտնվի, գլուղի ոչխարներից մեկը նվիրել քոշվորին:

Առաջարկներ են անում, կասկած հայտնում, թե կարող է գալը կերած լինի: Բայց Մուքի ապերը չի համաձայնվում:

— Գելը որ ուտի, մի հետք կմնա, — և ավելացնում է.

30 — Հիմա ոչ ծեծ կա, ոչ էլ երդում տալ: Գողն էլ չի ասելու, էլ ի՞նչպես իմանանք, թե ով ա կերել էդ քյասիրի ոչխարը: — Եվ առաջարկում է կասկածավորին մի քանի ոռզգի հասցնել, ու ոչխարն իսկույն մեյդան կհանի:

— Մուքի ապեր, հիմա թակ չկա,— ասում է Բաքվից եկած բանվորը:

— Էդ ա փիս է՛... պիտի թակես, որ գողի աչքը վախենա,— պատասխանում է Մուքի ապերը:

Մի քանի հոգի գլխով հավանության նշան են տալիս:

• • •

Ժողովը վերջանում է: Մեկը մոտենում է ինձ, հայտնում, որ առանձին ասելիք ունի:

Թղթակից է, գյուղի ժրաջան աշխատողներից մեկը: «Արտեիլիայի» մասին առաջին անգամ նա է խոսել գյուղում: Մի պակաս տեսնելիս գրում է, իմաց է տալիս թերթին: 10

— Թե չէ՛ մի քանի տոն կա, որ չվախենան, գեղի աղքատներին հում-հում կուտեն:

Հողված է գրել, որ այդ ունեորներից մեկը մի աղքատի խաբել է և հողը զավթել: Հողվածը տպել են, լրագիրը գյուղ է հասել, կարդացել են ժողովում: Եվ հալածանքը ծայր է առել: Սպանացել են, թե՛

— Խելքդ գլուխդ հավաքիր. եթե մի անգամ էլ մեզ խայտառակ անես, մեր պատվին դիպչես, գլուխդ ուսերիդ վրա չի մնա:

Ափաշկարա շեն հալածում, ծածուկ են անում: Թղթակցի արտն են արածացնում գիշերով, տավարը նրա խոտատեղին քշում, ծառը կտրում, քաշած պատը փլցնում: 20

Երկու կրակի մեջ է: Դատարանի տա, վախենում է, որ ավելի կվնասեն: Չտա, չի լինում:

— Էսպես մտքիս հետ կոխվ եմ տալիս:

Գյուղում մենակ է, Հուսահատության բուպեներ են եղել, տատանվել է, մտքում դրել է հրաժարվել գրելուց, հաշտվել իրեն հալածողի հետ, բայց դիմացել է: Վճռել է շարունակել:

• • •

Մութ է արդեն:

Գյուղի դիմաց ողորկ լանջով մի սար է ցցված՝ սրագագաթ ու լերկ: «Դադ-Մելիքի» սարն է: Նստել ենք տան առաջ: Ընկերս պատմում է, թե ինչու սարին «Դադ-Մելիք» են ասում: 30

— Մեր գյուղն առաջ մեղիքին էր պատկանում: Պապս էր պատմում, թե մեղիքն ինչ ուզեր, անում էր գյուղում: Մի լավ օր շէին տեսնում նրա ձեռից:

Ու եթե մեկը հակառակ գնար մեղիքի կամքին, ուզածը չկատարեր, մարդ էր ուղարկում, բռնել տալիս, ոտ ու ձեռ կապոտում և սարի գլխից գլորում... էն օրից էլ սարի անունը մնացել է «Բադ-Մեղիք»...

«ՏՐԱԽՏՈՐԻ ՄԱՇԻՆ»

Գյուղը հեռվից քարակույտերի է նման: Աթարի սրածայր կիտուկներն են, խոտի դեղնած դեզերը, մեկ էլ երդիկներից քարձրացող ծխի քուլաները, որոնք անցորդին իմաց են տալիս, թե այդտեղ գյուղ կա, մարդիկ են ապրում:

Շատ հին անցյալ ունի գյուղը: Տների պատերը մամռոտել են, գերեզմանատան քարերը կիսով չափ թաղվել են հողի մեջ, շեշտել՝ արևից, անձրևից: Ինչե՛ր չի անցել գյուղի գլխով: Քանի՞ դարեր քարվանի պես եկել են, անցել ու հետք թողել: Հալածել են գյուղին, ավերել, հրդեհել մի քանի անգամ, բայց էլի հավաքվել են, քարերը դարսել իրար վրա, հնացած գերանները շարել և պատսպարվել նրանց տակ ու շատացել՝ իրենք էլ, գոմի տավարն էլ:

Հեռվից այդպես է թվում: Ու եթե տեսել ես գյուղը տարիներ առաջ, նայում ես հիմա էլ և մտածում, որ գյուղում ոչինչ չի փոխվել, դեռ ավելի են հնացել գուցե տները, քարերն ավելի մամռոտել:

Այդպես չէ սակայն:

Գյուղի ներսում, մզլոտած, ծխից սևացած պատերով խրճիթներում ամեն ինչ տակն ու վրա է եղել: Անդարձ մեռնում է հինը, ու նորը գարնան կանաչի պես հերվա դեղնած ցողունների արանքից ծլում է փարթամորեն:

Ավելի շատ գիտեն, ավելի բանիմաց են: Զինաստանով էլ են հետաքրքրվում, բյազի գնով էլ, կոոպերատիվի հաջողությամբ էլ: Երբեմնի ազգատը, որ անխոս հարսն էր ունևորի առաջ, հիմա համարձակ նրա երեսովն է տալիս.

— էն անցավ, գիտեցածդ մոռացիր...

Կոմսոմոլը մերվում է գյուղի հետ, բըիջը գնալով ուժեղանում է. հիմա ավելի շատ են թերթ կարգում, ժողովներն ավելի բազմամարդ են, քան առաջ, երբ շարշի կար, քյոխվարու պրիստավ:

* * *

Գյուղ ենք գնում ընկերոջս հետ: Նոր գործիքներ ենք ուղարկել՝ սերմագտիչ, շարքացան, քամհար: Գնում ենք՝ ցույց տալու, աշխատեցնելու:

10 Արևը թեքվել է արդեն, իրիկնանում է: Հնձած արտերում խրճերը դեռ չեն հավաքել: Մի մեղմ խաղաղություն կա դաշտերում, որ մերկացել են ցորենի դեղին հասկերից: Մարդ չկա, և խաղաղության հետ ամայություն էլ կա դաշտերում: Ճնճողականներն են միայն, որ խմբերով թռչկոտում են հնձած արտերում:

— Ինչքա՞ն դժվար էր առաջ գյուղում աշխատել, — ասում է ընկերս, որ քսան տարի անընդհատ, իր գործին հավատարիմ, շրջել է մեր գյուղերում, տարիներ առաջ նոր ագրո-խոսք ասել: Մերացել է այդ գործում, ճերմակել են մազերը, բայց ձեռքերում դեռ ուժ ունի աշխատելու:

20 — Առաջին անգամ էս գյուղը ես եմ եկել: Լավ հիշում եմ, խոսեցի, ցույց տվեցի նոր գործիքներ, բայց շուգեցին ձեռք բերել: Մի քանի «աղսախկալներ» խանգարեցին, նույնիսկ շարքացանը տնազ տվին, ասացին, թե մեր հողերում էս մաշինը որ երևա, մեր սերմը կկտրի:

Պատմում է, թե ինչպես ժողովից հետո քնելու էլ տեղ չեն տվել, հուսահատ ու փոշման ուզել է քաղաք վերադառնալ: Քյոխվան մի էլ է տալիս, խուրջինը պցում է վրան և ոտով, էշին բզելով, գյուղից հեռանում:

— Ինքս ինձ վրա բարկանում էի, թոնթորում, նզովում, թե ինչու ուրիշ արհեստ չսովորեցի...

30 Կես ճանապարհին իշատերը նրա ետևից հասնում է, էջը ետ տալիս, խուրջինն էլ, իրեն էլ թողնում կիսաճանապարհին:

— Հետո իմացա, որ գյուղում նրան ասել էին, թե էջը սատկելու է, եթե ես եմ տարել: Տեսա էլ ճար չկա, խուրջիննուսս առա և ճանապարհս շարունակեցի: Կես գիշերին բեզարած տուն հասա:

Իսկ հիմա թամբած ձիով ենք գնում. իրենք են մեղ
կանչել...

* * *

Պյուղի վերևում նոր շինած վարձակայանի առաջ գյուղա-
ցիք են հավաքվել: Ընդարձակ կալում մի տեղ քամհարն է աշ-
խատում, քամած ցորենը սերմազտիչի մեջն են լցնում, և մե-
քենայի ներքևից թափում է սերմացուն ջոկ, հավի կուտը ջոկ,
ուտելու ցորենն էլ ջոկ:

Կայանի քաց դռներից երևում են շարքացան մեքենաները,
որ պսպղին են տալիս: Նոր ձևի գութաններ կան, երկաթե փոց-
խեր և ուրիշ մեքենաներ:

10

Աղմկում է քամհարը, փոշի է հանում, մեկը փոշու մեջ
անընդհատ թիակն է լարձրացնում, հարդախառն ցորենը
լցնում մեքենայի մեջ: Իսկ տրիերն էլ գոգում է, ոսկեհատ
ցորենը թափում պարկերի մեջ:

Մի քանի օր է, որ բացվել է կայանը: Բոլոր գործիքները
նոր են ստացված. վարձակայանն էլ նոր է շինված: Պյուղի
նեղլիկ ծուռ ու մուռ փողոցները, ցածր դռները ոչ մի հարմա-
րություն չունեն շարքացան կամ մի ուրիշ մեքենա տեղավո-
րելու, փոխադրելու գյուղամեջ: Ստիպված կայանը շինել են
գյուղի զլխին, հանդ տանող ճանապարհի բերանին:

20

Հավաքված են գյուղացիք, նայում են զարմացած: Ոմանք
կուսնում են, տակից նայում կամ վիզը երկարացնում վերից
նայելու, տեսնեն, թե միջին փնչ կա, որ այդպես լավ մաք-
րում է:

— Մեր կնանոնց կռները դինջացան, խախալները կոտր
ընկան,— ասում է մեկը:

Մյուսը հարցնում է, թե՛

— էս «ազրանովը» Ռուսեթի հողում կարա՞ն շինեն:

Պյուղատնտեսական մեքենաներին շատերն են «ազրա-
նով» ասում: Լեզուն դեռ պատ շի գալիս, որ շարքացան ասի,
զտիչ, քամհար:

30

— էս «ազրանովը» սերմ ա գցում, էս մի՞նն էլ ջոկում
ա,— իրար բացատրում են:

Նայում եմ ընկերոջս: Թիկն է տվել պատին և անշարժ

նայում է նրանց, որոնք տարիներ առաջ էշ էլ չտվին, հիմա խոնավել են մեքենաների շուրջը, ինչպես երեխաները նոր խաղալիք տեսնելիս:

Մայր մտնող արևի շողերի հետ երանության մի ժպիտ խաղում էր նրա հոգնած, տարիների կնճիռներով ակոսած դեմքին:

* * *

— Ա խալիսը, հավատալիս չի գալիս, թե էս իմ ցորենն ա էսպես իստակ:

10 Զտիչը դադարում է: Մաքրած ցորենի մեջ տասնյակ ձեռքեր են մտնում, մի-մի բուռ անում ու մատներով խառնում, տեսնեն ինչպես է մաքրել: Ցորենի տերն է, որ դարմացել է լավ սերմացու ստանալուց:

— Հլա շատ կգարմանաս, Մուքի ամի.— պատասխանում է մի ուրիշը, որ նախքան այդ, ներքին պարծանքով պատմում էր, թե ինքն ինչ մաշիներ է տեսել Գերմանու պլենում: Երեք տարի աշխատել է լինչ-որ տնտեսությունում, ծանոթ է մեքենաներին:

20 — Հմի էդ ինձ համար ոնց որ խաղ ու պար.— վերջացնում է նա իր պատմությունը Գերմանու պլենում տեսածների մասին:

— Մուքի ամի, աստված կարա՞ մեղավորին արդարից էսպես ջոկի.— ձայնում է մի ջահել, և կողքին կանգնած մի ուրիշ ջահել պատասխանում է.

— Աստված էդ հունարը շունի:

Իսկ Մուքի ապերը զտած ցորենը շալակում է, դանդաղ քայլերով հեռանում գյուղի նեղլիկ փողոցներով:

Գլխը կտուրներից ձեն է տալիս, որ ժողով կա, ու հետո էլ, թե՛ մի ոչխար է կորել հանդում, տեսնողը գա իմաց տա խորհրդին:

30 Ժողովի են գալիս, բայց բոլորի բերանում էլ մի խոսք կա միայն.

«Ագրանովի» մաշիներ:

Գալիս են մեկ-մեկ, նստոտում բակի քարերին: Գյուղ-խորհրդի նախագահը մինչև ժողովի բացելը մի քանի գործեր է քննում, գանգատներ ընդունում:

Մանր գործեր են. մեկի ոչխարն է ընկել մյուսի արտը կամ հերվա ցորենից տալացուք կա, որ դեռ չի ստացել: Գործերը քննվում են շատ արագ, բանավոր գանգատի հիման վրա. բոլորին էլ հայտնի է, թե ինչ որոշում պիտի տա խորհուրդը: Գյուղական աղաթն է՝ քանավոր մի օրենսգիրք առանց մի հողվածի, առանց հատվածի:

Գործերը պրծան: Արդեն բավական բազմություն է հավաքվել:

— Հա՛, ընկերներ, դե կանգնածը մի նստի հալա,— ասում է նախագահը:

— էսօրվա ժողովում մին օրակարգ ունենք, բոլորիս էլ սրտակից քան ա...

Եվ մի քանի խոսք է ասում այն մասին, թե ինչքան դժվար է գյուղում եզներով վարուցանք անել, օրինակ բերում, թե մի օրվա վարելու համար մի եզան վրա քանի ճիպոտ են ջարդում, և հանկարծ խոսքը ընդհատելով՝ դառնում է մեկին, վկա կանչում.

— Քո ալա եզը վար անելիս սատկեց ո՞չ...

Նա էլ ասում է.

— Բա սատկեց ո՞չ:

Եվ խոսքը շարունակում է, ուրիշ օրինակ բերում՝ ապացուցելու, որ եզներով վարուցանքը ձեռնտու չի:

— Պետք ա մենք տրախտորի մաշին բերենք:

Այդ ասելիս մի թեթև շարժում է նկատվում ունկնդիրների մեջ, որոնց դեմքերը կիսամութի մեջ պարզ շեն երևում: Քութունի կրակներն են, որ պսպղին են տալիս:

Ընկերս է խոսում տրակտորի առավելությունների մասին, բացատրում է, որ հարկավոր է ընկերություն կազմել, ընկերության կանոնադրությունն է կարգում:

— Մեր հողերում բան կանի՞ էդ տրախտորի մաշինը,— հարցնում է մեկը, մյուսն էլ, թե՛

— Մաշինն առանց եզան ո՞նց ա շուռ տալու ծրելիս...

Էլի այն գյուղացին է, որ Գերմանու պլենում հազար հրաշք է տեսել. պատմում է հինգ տարի, և դեռ չի վերջանում տուտը տեսածի: Նա էլ մի կողմից է ավելացնում տրակտորի առավել կողմերի մասին:

— Մաշին ա էլի, մեծ մաշին. խոփերը ետնան քաշ տալիս, Մին օրում հինգ օրավար ցել կանի:

— Հինգ օրավա՛ր... էդ հո հրաշք ա:

Գնի մասին են հարցնում, ուզում են իմանալ, թե՛

— էդ տրախտորի մաշինի լեզուն հասկացող կճարվի՞ գյուղում:

Ակսում են թեկնածուների անուններ տալ, թե ով կարող է տրակտորով վարել: Գյուղը տասնյակ շոֆեր ու մեխանիկ ունի Բաքվում, պետք է մեկին գրել, որ տրակտորի լեզուն սովորի և գյուղ գա:

10

— Դե ի՞նչ եք ասում, այ ժողովուրդ.— ասում է նախագահը.— էն «ազրանովի» մաշինին էլ հավան չէիք, ասում էիք, թե մեր հողերում կարալ չի աշխատի:

— Ինչ պիտի ասենք: Որոշ դնենք. մարդս մի եզ տա տրախտորի մաշինը բերենք... Ծս իմ ագին ծաղիկ եզը էս գըլխից տալիս եմ էդ նպատակին,— ասում է մեկը, տեղից կանգնում և սպասողական դիրքով նայում, թե մյուսներն ինչ կասեն:

20

Քսանից ավելի գյուղացիք համաձայնվում են իրենց եզները տալ, տրակտոր առնել:

Բայց ժողովը որոշում է ցորեն հավաքել, ընկերության ամեն մի անդամից հինգ փութ ցորեն: Հենց տեղնուտեղը ցուցակ են անում, գրվում են ներկաները, քացականների կողմից էլ են հրաշխավորում:

Ուշ է արգեն: Գյուղացիք ցրվում են, հարևանը հարևանի հետ մինչև տուն խոսում է տրախտորի մաշինի մասին:

Մի խումբ երիտասարդներ շրջապատել են մեզ, ուզում են ավելի իմանալ, անհամբեր սպասում են տրակտորին:

30

— Մի պրծնենք էս շարշարանքից, էն ժամանակ տես գեղում ապրելն ինչքան կհեշտանա,— ասում է նախագահը, որ մինչև այդ ցորենի և անդամների քանակն էր հաշվում:

Ծվ քանի՞ ուղեղներ մզլոտած, ծխից սևացած խրճիթներում այդ գիշեր միտք արին քաղաքի տրակտորի մասին:

ԱՐԳԱՐԵՆՑ ԻՎԱՆԻ ԴԱՏԸ

1

Գյուղում Արգարենց Իվանից հարուստը ջկա: Ձիեր ունի, եզներ, բաղ ու բոստան, տարին 2 բատրակ է պահում, իսկ գարունքին մի շորան էլ ավել է վարձում՝ ոչխարը սար տանելու համար:

Ձմեռն էլ պարապ չի նստում, ուշքը փողի վրա է, մի քամի մանեթ աշխատելու: Ձեռաց փող է տալիս, առանց մուրհակ, մանեթին քսան-երեսուն կոպեկ էլ վրա դնում: Ոչխար է մորթում, եզ ու կով առնում, ծախում, մի խոսքով, մի ձեռքը միշտ փողի հետ է խաղում, մյուսը՝ ամբարների քանալիների հետ: 10

Արգարենց Իվանի ավել անունը դրել են «քյասիբ ուտող»:

— Էդ կայքդ ո՞վ ա ուտելու, Իվան, ժառանգ էլ շունես,— հարցնում էին գյուղացիք, երբ աշխատանքից ազատ ժամերին գրույց էին անում պատի տակ:

Իվանը խեղճ էր ձևանում, վիզը ծռում և կամաց ասում.

— Է՛, ինչ ունեմ, որ է... Երկու լղար եզ, մի քանի կով: Էն ա, ծախում եմ, տուրքը տամ...

— Դե լավ, լաց մի լինի, մեզ էլ շես խաբելու, Իվան,— ասում էին գյուղացիք: 20

Իվանը մի հոգս ուներ՝ ժառանգ ունենալ: Եվ երբ այդ հարցը տալիս էին նրան, թե կայքդ ով պիտի ուտի, խեղճանում էր, մտքում նզովում իր շքերք կնոջը, տուն դառնալիս ուշունց տալիս դարդից դեղնած կնոջը:

Իվանը մտքում դրել էր ժառանգ ունենալ, թեկուզ ուրիշ կնոջից:

Մի ուրիշ հոգս էլ ունեւր Աբգարենց Իվանը, նոր տուն շինել:

Նստել, հաշիվ էր արել, թե ի՞նչ պիտի նստի տունը. հաշվել էր և ձեռքի փողը, բայց ոչ ոքի չէր ասել, թե ինքը իր տունը կշինի ունեցած փողով:

Մի քանի օր հետո Իվանը, իրիկնադեմին, իր կալի մոտ խոսեց հարեան Սրապի հետ: Սրապն աղքատ էր, կայքը վաներ՝ ծուխ էլ չէր բարձրանա:

10 — Սրապ, ուզում ե՞ս հարստանաս,— ասաց Իվանը: Սրապը զարմացած նայեց:

— Էգուց կացինն առ, գնա անտառում գերաններ պատրաստի տանս համար, գիշերով քեր:

— Բա բիւժ, — հարցրեց Սրապը.

— Առանց բիւժ, ծածուկ բեր.

— Բա որ բռնե՞ն, — էլի հարցրեց Սրապը:

— Ա, տնաշեն, բռնեն, քեզ ի՞նչ պիտի անեն, ինչ ունես, որ ի՞նչ տանեն: Չես փմացե՞լ, որ էս կառավարութունը աղքատի համար է հոգս քաշում, դու էլ աղքատ ես էլի...

20 Սրապը մինչև միտք կաներ, Իվանը նրա ձեռքում մի քանի արծաթ դրեց, արծաթից Սրապը տաքացավ: Տանը հաց չկար, շոր չկար:


— Լավ,— ասաց: Եվ գիշերով կացինն առավ, գնաց անտառ:

3

Սրապը տասներկու գերան կտրել էր, վեր գցել, կլպել. Երեքն էր մնացել: Քրտինքը փրփուր էր դառել, Սրապը շէր բեզարում:

30 Երբ վերջին ծառը ընկավ, Սրապը կոացավ, որ ճյուղերը կտրատի, ոտնաձայնի վրա ետ նայեց: Մառի մոտ անտառապահն էր կանգնել:

Սրապը գունատվեց, կացինը ձեռքից վեր ընկավ: Երկու օր հետո, անտառապետի կազմած արձանագրութունը դատարան գնաց:



Եմիածնի ճեմարանի երգչախումբը 1913 թ. (Բակուցը վերջին շարժի արդյ երկրորդը)



Ա. Բակունց (1917 թ.)

— Իվան, տունս քանդեցիր, խայտառակ արիր,— ասում էր Սրապը:

— Բան չկա, կասես, որ քեզ համար ես կտրելի: Աղքատ ես, բան չեն առնի, կնեբեն,— սիրտ էր տալիս Իվանը:

Դատարան գնալուց առաջ Աբգարենց Իվանը գիշերով Սրապի տունը երկու փութ ցորեն ուղարկեց, նոքարին պատվիրեց թե՛

— Ասա, որ կալին էլ կտա...

4

Դատավորը հարց ու փորձ էր անում Սրապին:

10

— Ինչո՞ւ ես բերել, քեզ համար է, թե չէ: Ասում եմ, սուտ որ ասես, օրենքը քեզ խիստ կպատժի,— ասաց դատավորը:

Սրապը հանկարծ հետ նայեց: Իվանը նստել էր առաջին շարքում, որպես թամաշա անող: Սրապը նայեց Իվանին, Իվանը աչքով արեց.

— Պիտի ասեմ, Իվան, պիտի ասեմ: Հոգուս վրա մեղք մի դնի, ես անմեղ եմ:

Եվ բոլորը պատմեց: Հետո մոտեցավ դատավորին.

— Ահա շորս արասին, երկու փութ էլ ցորեն կա տանը, 20
ձեռք չեմ տվել...

Դատավորը, թե՛

— Ապրե՛ս, Սրապ:

Երկու օր հետո Իվանին պիտի դատեին:

Ժառանգ ունենալուց ավելի ծանր հոգս թվաց Աբգարենց Իվանին դատը, որ երկու օր հետո պիտի լիներ:

ԻՎԱՆ ԲԵՅԸ

Գավառական մի քաղաք. լայն և ուղիղ փողոցներ, կանաչ խոտ մայթերի վրա, տների առաջ բոստաններ և բարձր, ըստ-վերախիտ ծառեր, որոնց շվաքի տակ իրիկվա հովին նստում են հարևան կանայք, զրուցում, մինչև նախիրը հանդից գա, կիթ անեն, թեյ գցեն ու թեյից հետո խաղան նարդի, հետո՝ խոր քուն, մինչև լուսաբաց, մինչև նոր կիթ:

Մի քաղաք, ուր այսօր երեկվա պես է, վաղն էլ դժվար թե մի բան լինի: Մի խուլ անկյուն, ուր ավտոտ տարին մի անգամ է գալիս, փողոցներում մարդ էլ չկա, որ անցնելիս դիպչես:

Լեն ու արձակ, տան կարած վերմակի պես, իրա քեֆին քաշվել է սարերի ետև, միտք էլ շունի մեծ քաղաքին միանալու: Զարթնում է արևի հետ, մի քիչ շարժվում և երեկոյան նարդուց հետո քուն մտնում:

Այդ փոքր քաղաքում մի խուլ փողոց... տասներկու տուն: Իրար լավ գիտեն, հարևանի աքլորն էլ են ճանաչում ու գիտեն, թե դրկիցն այսօր ճաշին ի՞նչ է եփել կամ ինչպես երեկ նրանց տանը մի բաժակ ընկավ, կոտորվեց:

Այդ խուլ փողոցում՝ դարձյալ կանաչ խոտ, ցածլիկ տներ, պատերի տակ բանջար վայրի, ցերեկվա տոթին հաճելի շվաքարան նախիրից փախած հորթերի համար:

Մի պատյան, որի մեջ քաշվում է խխունջը, հենց որ անդուրեկան մի ինչ է շոշափում:

* * *

Իվան բեյի տունը այդ խուլ փողոցի տներից միսն է: Տան

այգին է, փողոցից քարն պատով բաժանված: Եվ ամեն տարի այգում ու բոստանում փարթամորեն հասնում են արևածաղիկն ու գլուխ սոխը, խնձորն ու սերկևիլը. վայրի խաղողի ճյուղերը, շղերի պես, փաթաթվում են պատին, կախվում փողոցի վրա:

Ամռան զով երեկոյան Իվան բեյը սիրում էր նստել դարպասի առաջ, քարի վրա և թաղբհի հատիկների հետ խաղալ, մինչև որ տնից ձեն տային, թե սամավարը սառչում է կամ մի հարևան գար, Իվան բեյի հետ նարդի խաղար:

Հե՛յ գիղի ժամանակ: Ասես երազ էր, իսկի շէր եղել: 10 Ի՛նչ մարդիկ էին գալիս Իվան բեյի տունը, նրա այգում ինչ քեֆեր են արել, քանի պրիստավ է լեզգինկա պարել՝ խանջալով կամ գինու շիշը գլխին:

Իվան բեյի այգում մի տանձենի կա, բունը ճեղքված: Տարիների ընթացքում այդ ճեղքվածքի շուրջը լորն ուռել է, հաստացել նեգրի պոռչի պես ու սպի կազմել:

Երմուղով պրիստավն էր, թրով ծառը ճղեց.— կասեր Իվան բեյը ու դանդաղ, ծերի դողդոջ ձայնով, ծոր տալով կպատմեր, թե Երմուղով պրիստավն ութ շուն էր պահում, լավ որսկան էր, կնիկն էլ թաթար էր, համեղ խմորեղեն էր պատրաստում: 20

Հերիք էր հիշողության տուտը բացվեր. կծիկը վերջ չուներ: Ետ կտար, ամեն մի հանգույցի մի պատմություն կաներ ու գլուխը կերերար, աչքերում հին օրերի կարոտը կփայլեր մեղմ, լուսաբացին հավիող աստղի պես:

Տունն էլ էր հին: Սանդուղքի գերանները փտել էին, տախտակները տեղ-տեղ վայր թափել, ինչպես Իվան բեյի ատամները ժանգոտ, տան սյունների վրա տեղ-տեղ բորբոսը բուն էր դրել:

Սանդուղքով բարձրանալը դժվար էր: Իվան բեյի ոտքերում առաջվա ուժն էլ չկար: 30

Հին տանը երկուսով էին ապրում՝ ինքը և պառավ կինը, որ միշտ թոնթորում էր իր վիճակից, ամեն օր ամուսնու երեսով տալիս, թե ինչ է շաքարավազ չի բերում, որ ինքը մուրաբա եփի: Ցավն ավելի էր շատանում, երբ պահարանի դա-

րակները վրա դարսած պնակներն ու մուրաբայի դատարկ ամաններն էր տեսնում:

Մաղկում էր կեռասը, բալը, կարմրին էր տալիս կեռասը, հետո բալն էր սևանում, իսկ իրենք կարոտ էին մնում մուրաբի: Հարևանի ժիր մանուկներն էին սլոկում իվան բեյի ընդարձակ այգին, օգտվում նրա բարիքներից և գրպան ու ծոց պտուղներով լցնում, ծլկվում մի ապահով տեղ: Երբեմն էլ ճղակտոր էին անում մի ծառ, պտուղ քաղում, իսկ ճյուղը թողնում ընկած, մորթած անասունի պես:

10 Իվան բեյը տուն էր գալիս, կինը լացակումած կոտրած ճյուղն էր ցույց տալիս և ասում, որ գանգատ տա... Իվան բեյը նայում էր, երբորում գլուխը, սուս անում:

Նե՛յ գիտի ժամանակ: Առաջ ծիտն իր թևով կվախենար իվան բեյի ծառից մի կեռաս կտցելու:

Այսպես էր մտածում իվան բեյը, մտքի ծովն ընկնում, լող տալիս դեպի ետ, տասնյակ տարիներ ետ, երբ պրիստավի գրագիր էր, կանցելարի շեմքով ներս մտնելիս գետնին պազած գյուղացիք պիտի ոտքի կանգնեին, մինչև գոտկատեղ խոնարհ գլուխ տային:

20 Իսկ ինքը հազում էր խրոխտ, աչքերն աջ ու ձախ ման ածում, տեսնի թե ի՞նչ նոր մարդ է եկել կամ ո՞վ է երեկվա խոսք տված փեշքեշը բերել: Նայում էր ու, կանցելարի դուռը բաց անելիս, դռան շեմքին արձանի պես կանգնած ծառային ամեն օր հարց անում:

— Ակո՛փ, օթազս լավ ես սրբե՞լ, տես հա՛...

Ու մատը թափ էր տալիս: Իսկ Հակոբը մեջքն ավելի էր դեմ անում պատին, ձգվում, վիզը երկարում հնդուհավի պես և աչքերը առաստաղին գցելով ասում.

— Հրամե՛լ ես, աղա, քո ուզածն ա...

30 Այդ էր վերհիշում իվան բեյը դարպասի քարին նստած ժամանակ: Թագբեհի հատիկների միալար ձայնն ասես զանգերի ծանոթ ղողանջներ էին՝ հարազա՛տ ու հին:

Փողոցում իրիկվա դեմ քամին էր սուրում մեղմ, իրար էին քսվում տերևները վայրի խաղողի. մի հաճելի խշշոց կար իրիկվա կիսամութին: Իվան բեյը կիսախուսի էր անում աչքերը, այդ ձայնին ունկնդրում:

Այնքան մոտիկ, այնքան հարազատ էին թվում օրերը, որ անցան: Երազ էր, ասես չէր եղել...

* * *

— Իվան, դե եկ էլի, սամավարը սառավ,— ձայն էր տալիս կինը ներսից:

Իվան բեյը տնքալով վեր էր կենում տեղից, թաղբհնչը պահում գրպանում և դարպասով ներս մտնում:

Ամեն իրիկուն դարպասի երկաթ կապն ինքն էր գցում ու մի քար էլ դռան դեմ անում: Առաջ հեշտ էր քարը տեղից ժած տալ. կոներում ուժ կար, տանը ծառա կար:

Դարպասն ամրացնելուց հետո պարտեզի դռան պիտի նայեր ու տեսներ, թե պառավը չի՞ մոռացել հավաքունը ծածկել: Հետո տնքալով բարձրանում էր գերանները փտած սանդուղքով, նստում սեղանի առաջ և դեղնած, կաշին կուշ եկած ձեռքերով պինդ բռնում տաք բաժակը: 10

Իվան բեյը մի փոքրիկ կտոր շաքար էր դնում լեզվի վրա և ծպացնելով թեյը կում-կում խմում, կում անելիս գլուխը բարձրացնում, իջեցնում:

Իսկ կինը միշտ թոնթորում էր, թե էլ առաջվա թեյը չկա, կամ միսն է լղար, կամ էլի մուրաբի պատմությունն անում:

Թեյից հետո Իվան բեյը սովորություն ուներ հին ժուռնալներ նայելու: Եվ անպատճառ ակնոցը պիտի դներ քթի ծերին ու պատկերին նայեր ակնոցի վրայից: 20

— Այ թե հա՛,— ասում էր երբեմն, նրա փոքրիկ, ջրակալած աչքերը ժպտում էին, մատը դողալով դնում էր նկարի վրա և պառավին ցույց տալիս այն, ինչ հազար անգամ տեսել էին միասին: Հետո շրջում էր նկարը, մի ուրիշը բաց անում և էլի ուրախացած ասում.

— Ա պառավ մի տես է՛...

Հետո պառավը ժուռնալն իր տեղն էր դնում, իսկ Իվան բեյը հանվում էր քնելու: Բայց առաջվա քունն էլ չկար. անկողնում տապակ-տասյակ էր գալիս, օֆ անում, մի կողքից մյուսը դառնում ու հանկարծ, միտը մի բան ընկնելուց, պառավին վարթնեցնում էր, ասում թե. 30

— Էգուց իմ պալտոնիս էն կոճակը կարի, այ պառավ:

Իվան բեյի վերարկուն...

Օձիքը մաշված, վրան մի մատ շորացած քրտինք ու կեղտ, որ փայլում էր մոմած հատակի պես: Իվան բեյը վերարկուն ուսին էր գցում կամ մի թևը հագնում, իսկ մյուս ազատ թևով վերաբրկուի տակ էլի թագբեհի հատիկները գլորում:

Այդ տեսքով թևը շարդած սագի էր նման Իվան բեյը, մի պառավ սագի, որ ընգնեցալին է գնում ու կախ ընկած թևը գետնի վրայով քարշ տալիս:

10 Քսան տարուց ավել էր, որ այդ վերարկուն նրա ուսին էր: Պարզե էր ստացել իր մի վաղեմի ծանոթից: Այնքան պսպղան կոճակ կար վրան և այնպես լավ էր սազում այդ վերարկուն Իվան բեյին:

Երբ թագավորը գահընկեց եղավ, Իվան բեյը գոմի մի անկյունում թաղեց արքայական նկարները և իր պղնձյա կոճակներն էլ մի ամանի մեջ լցրեց ու թաղեց նկարների հետ:

Այն օրվանից նա սովորույթ էր դարձրել վերարկուի մի թևը հագնել, իսկ մյուս ձեռքով վերարկուի տակ թագբեհի հատիկների հետ խաղալ...

• • •

20 Իվան բեյը ծառայում էր:

Ո՞վ էր, խղճացել էր նրան և տեղ տվել մի հիմնարկի արխիվում: Նրա պաշտոնն էր արխիվը կանոնավոր պահել:

Հիմնարկում առավոտյան նրանից կանուխ եկող շկար: Ամեն առավոտ նա իր ձեռքով պիտի սրբեր թանաքամանը, գրչածայրը մաքրեր թղթով, ապա շտկեր աթոռն ու փալասի կտորը, որ աթոռի վրա էր դնում, տեղն ավելի փափուկ լինելու համար:

30 Հետո սկսվում էր Իվան բեյի աշխատանքը: Եթե մեկը նայեր նրան, անշուշտ, կմտածեր, թե Իվան բեյը սովորական մի գործավար չէ, որ համարագրում է արխիվը հին, այլ ուսյալ գիտնական, որ դեղնած, մզլոտած թղթերի մեջ փնտրում է վաղուց մոռացված վավերագրեր:

Իվան բեյի ձեռագիրը...

Ասես ավետարան արտագրող, մաքրակրոն դպիրի գիր

էր, դպիր, որ դարեր անաչ խուցի կիսախավարում արտագրել է, ծաղկանկարել, համոզված, որ գալ սերունդը փոշեպատ մատյանի մեջ որոնելու է դարերի մոռացված անց ու դարձը:

Սակայն Իվան բեյը գալ սերունդի համար չէր սովորել գեղեցիկ և վայելուչ գրել: Տասնյակ տարիների ընթացքում նա այն համոզմանն էր եկել, որ վայելուչ դիմումը շատ ավելի ուժ ունի, քան նույն դիմումը մի քիչ անփույթ գրած:

Ամբողջ քաղաքում Իվան բեյի ձեռագիրը հայտնի էր: Ինքըն էլ միշտ սիրում էր պատմել, թե ինչպես բարձրաստիճան մի պաշտոնյա մեջքն էր շփել և խոստացել պարզև՝ գեղեցիկ գրելու համար:

10

— Առաջվա գիրն էլ չկա, այ կնիկ,— գանգատվում էր Իվան բեյը,— ձեռքս հիմա դողում է, ես էլ չեմ իմ գրածին հավան:

Աշխատանքի ժամանակ, երբ հին թղթերն էր համարազրուում, Իվան բեյը երբեմն ինքն իրեն ժպտում էր, ակնոցները շտկում և թուղթն ավելի մոտեցնում աչքերին: Դողում էին ձեռքերը, աշնան տերևի պես երերում էր թուղթը հին, իսկ Իվան բեյի գլուխը հանդարտ շարժումով դառնում էր մեկ աչք, մեկ ձախ:

20

Ժպտում էր Իվան բեյը երանության ժպիտով, աչքերը փայլում էին ակնոցների ճաքած ապակու ետև, միտքը թև առած թռչում էր դեպի ետ, երբ Իվան բեյի վերարկուն դեռ նոր էր, կոճակները պղնձափայլ, ձայնը խրոխտ:

Նա ժպտում էր, որովհետև արխիվի թուղթը հին հանկարծ հիշեցնում էր վաղուց մոռացված մի պատմություն: Նայում էր ստորագրության, թվականին, մի պահ դեն դնում թուղթը և թողնում, որ մտքերը տաշեղի պես լողան հիշողության ծովում:

Եվ այդ օրը նա ուրախ էր տուն դառնում, ճաշի ժամանակ էլ պատմում պառավին:

30

— Մի՞տղ է, էն տարին մի ուկրաին եկավ... Դու էլ ասում էիր, թե ինչ աղոթասեր մարդ ա...

— Էն, որ արադ խմելուց առաջ խաշակնքում էր երեսին,— ավելացնում էր կինը և հիշողության ուժ տալիս: Ու նրա մտքի առաջ, քարավանի պես անցնում էին ծանոթ դեմ-

քեր՝ կոկարդով, մեծ բեղերով, ակնոցավոր և առանց ակնոց, քեֆ սիրող, որսկան, ձիարշավի սիրահար: Պառավի մաշված միտքը կառչում էր մեկին, փոշին թափ տալիս, մոտեցնում աչքերին, ավելի լավ զննում:

— Էն, որ մի գիշեր մեր բալկոնից քիչ մնաց ընկներ...

— Հա՛, հա՛. խմել էր, ուշունց էր տալիս օրհնածը... — ասում էր Իվան բեյը, և երանության ժպիտը դեմքին խաղում էր, մայր մտնող արևի պես:

10 Պատմում էր Իվան բեյը, որ այդ օրը արխիվի թղթերի մեջ նրա գրածն է կարդացել՝ ուղղած գավառապետին, մի թուրքի տուգանելու մասին:

— Գրագիրն էլ էն ժամանակ Սարգիս աղան էր:

Հետո զրույցը խորանում էր, և եթե մի բան նրան չըս-
թափեցներ, Իվան բեյը շէր էլ նկատի, որ խոսում է:

Այդպիսի դեպքերում կիներ էր նրան սթափեցնում, էլի դժգոհում, որ մսի հետ ոսկոր շատ են տվել կամ թե հավա-
րունի տախտակը կտորվել է, պետք է նորոգել:

20 Իվան բեյի մտքի թելը կտրվում էր, չքանում էր հինը, անիմաստ հայացքով նայում էր ապուրին՝ կարծես ուզում էր ստուգի, թե իրո՞ք մսի հետ ոսկոր շատ են դրել: Մի քանի ան-
գամ գդալով ապուրն էր խառնում և մի բան ասած լինելու համար դառնում էր կնոջը.

— Ա կնիկ, կերակուրն էսօր աղի է...

Սակայն այդ շէր մտքինը: Այդ ավելորդ խոսք էր, հենց այնպես:

Մոայլվում էր Իվան բեյի դեմքը, ասես թունդ հարբելուց հետո քնել էր խոր, ինչպես առաջ, և զարթնել թթված դեմքով:

30 Առաջ վա՛յ եթե մեկն այդ ժամանակ նրան խնդիրք աներ: Քիթ ու մոուլը կծոմոներ, կխոսեր կոշտ ու բարձրաձայն, իսկ դիմացինը՝ մի գլուղացի անօգ, գլխաբաց, գդակը թևի տակ, կկուսնար, գլուխ կտար, ձեռքերը կրծքին, ինչպես պառավ կա-
նայք են կանգնում գլուղի եկեղեցու սևացած խաչքարի առաջ:

Մոայլվում էր դեմքը և էլի հին հարցն էր տալիս իրեն, ծանոթ հարցը, որ կրծում էր նրա ուղեղը, ինչպես որդն է կրծում տերևը կաղամբի:

Ինչպես հղավ, որ աշխարհը այսպես փոխվեց, ուր զը-

նացին երջանիկ օրերը երբեմնի, երբ սանդուղում զրնգում էր ոսկին, ամեն օր գառ ու յուղ էր ընծա ստանում գյուղերից, քայլերը հաստատ էին, կիցվածքը հպարտ:

Ինչպե՞ս եղավ... հարցնում էր, ճգնում շաղկապել երբեմնին՝ գառ ու յուղով, այսօրվա ոսկրոտ մսի հետ, բայց թելը կտրվում էր, ծայրերը ձեռքից բաց ընկնում:

Եվ Իվան բեյին այնպես էր թվում, թե երբեմնին է երազ, բայց միտն էր բերում արխիվում տեսած թուղթը դեղնած, մզլոտած ու հաշիվ չէր կարողանում տալ ինքն իրեն, թե ինչու առաջ, այն լի օրերին իր մտքով երբեք չէր անցնում այսօրվա օրը:

10

Մի կասկած օձի պես աննկատ սողում էր, սրտի մեջ կծիկ դառնում, մի ծանր կասկած, թե խանգարված է միտքը իր, մաշվել է մեքենան, շարժումները անկանոն են, ընդհատ: Խառնվել է գլխում հին ու նորը, միտքը սառել է ձյունի տակ մնացած դղումի պես, էլ երբեք չպիտի իմանա, թե ինչ է բերում օրը վաղվա:

Սոսկում էր Իվան բեյը իր մտքից ահավոր, կծկվում էր, կուշ գալիս ինչպես հավը հավաքից հետո, առնում էր ուսին հնամաշ վերարկուն, գլուխը կախում էր կրծքին, աչքերը կիսախուփ անում և ակնապիշ նայում մի կետի:

20

Այդ օրերին նա հնամաշ ժուռնալին էլ չէր նայում:

* * *

— Մամա՛, ավթանաբիլ...

Եվ փոքրիկ ու փայլուն ավտոն, փափուկ անիվների վրա մի արև առավոտ սահեց քաղաքի փողոցով, կանչեց զիլ և կանչեց անսովոր: Մառի շվաքի տակ նստած հորթերը կիտարին, պոչը կեռ բարձրացրած փախան քաղաքի փողոցներով:

Ավտոն դեսուդեն վազեց, նորից կանչեց և ոչ ոք գարածի դռները չբացեց, որովհետև գավառական քաղաքում գարած դեռ չկա: Նորից հետ եկավ, կանգնեց ծառի շվաքի տակ, ուր հորթերն էին նստոտած, փրթփրթաց դժգոհ ու շունչը կտրեց:

30

Ասես ումբ էր, որ հեռվից մեկը շարտեց փոքրիկ քաղաքի վրա: Ռումբ պայթեց, և աղմուկի անսովոր ականջները

գավառական ցնցում զգացին, պատուհանի վարագույրները հետ քաշեցին սահող ավտոն տեսնելու, մանուկները դուրս թափվեցին և ճղրտոցով ուրախ՝ ավտոյի հետևից սկսեցին վազվզել:

— Մամա՛, ավթանաբիլը...

Կարմրաթուշ մի մանուկ էր, առավոտվա մածունը շուրթերին, ոտաբոբիկ ու զլխարաց, որ մոր փեշից բռնած փողոց էր քաշում և կանչում:

10 Իսկ մաման, որ տասը ծին է անցրել և լիմոնի սմբած կճեպ դարձել, մաման, որ իր օրում ավթանաբիլ դեռ տեսած չէր, շատ էլ չէր վազում, թանովն էր խառնում:

— Ավթանաբիլը չի փախչի, կտեսնենք...

Մի մեծ դիպված էր ավտոյի գալը: Իզուր էր շոֆերը մանուկներին դեն քշում. մի քիչ հետո նրանց խիտ շարքերը օղակաձև սեղմվում էին ավտոյի շուրջ, իսկ մի քանիսն էլ մատով դիպչում էին ավտոյին ու էլի ետ փախչում:

Մի մեծ դիպված էր ավտոյի գալը: Խոսում էին հազար ու մի առասպել, բերնե-բերան լուրեր էին պատվում և այդ ամենը ավտոյի շուրջ, որ քնել էր ծառի շվաքի տակ:

20 Ավելի շատ խոսք ու զրույց կար գրասենյակներում, ուր գրագիրը տեղացի ալարկոտ շարժումով շորրորդ անգամ նույն գրությունն էր մուծում մտից մատյան և նոր թուղթ ծալում ուղարկելու «համաձայն մակագրության»:

Մանր շահերի, բամբասանքի, քարացած ըմբռնումի ի՛նչ մեծ աղբակույտ կար գանգերում երբեմնի սրատամ գայլերի, որոնք թև առան իսկույն, շարժվեցին և պատի ճեղքում սմբած մլեկի պես արյան հոտ առան, կենդանացան:

Դող, ներքին դող զգացին նրանք, ովքեր ճահճուտում այդ խուլ գոմեշի փնչոցով պառկել էին ապահով և ցեցի պես կրծում էին հիմքերը նոր շինության:

30 Մի պահեստապետ, ստորակետի պես կախ բեղերով, որ ամսավերջի զեկուցման մեջ գրում էր, թե «չորացել է այսօրան փութ, մկները կերել են այսօրան փութ և թափվել է այսօրան», մի գիրուկ նախկին, որ հազիվ էր մագլցել հիմնարկի պատից և տաքուկ անկյուն պատրաստել, ինչպես նապաստակը ձմեռելուց առաջ, մի հաշվապահ, որ մայր մատյանի լուսանցքում

սովորույթ ունեւր «Տիգրանին տվի հիսուն կոպեկ», «բրինձի համար առա մի մանեթ», «ևս առա մի մանեթ», «ձեռաց տվի ն-ին մի մանեթ» և այլն.— պահեստապետը բեղավոր, նախկինը գիրուկ, հաշվապահը «ևս տվի» խառնվել էին իրար: Սիրտ էր, որ տրոփում էր, մտքեր էին, որ խառնվում էին: Երեկ էլ արև էր, մյուս օրն էլ... բայց ոչ մի ավտո շեկավ և ով էր սպասում, թե պիտի գան:

Ավտոն երեք հոգու բերավ, երեք սովորական մարդու, աչք ու ունքով, շարժ ու ձեռով հասարակ: Նրանցից մեկը, երբ իջավ ավտոյից, շուրջիակ արած մանուկներից մեկին առավ 10 ու նստեցրեց կաշվե բարձին:

Այդ էլ տարածվեց քաղաքում ռադիոյից էլ արագ, հավելումով ձրի, որ երեխին գրկողը գթառատ է, քաղցրաբարո:

* * *

Իվան բեյն էլ իմացավ, որ ավտոն մարդիկ է բերել:

Ծառան էր, հիմնարկի ծառան, որ կուլան շրով լի դրեց սեղանի վրա և Իվան բեյին ասաց շշուկով.

— Քննիչներ են եկել...

Իվան բեյը նախ շհասկացավ, նայեց ծառային, որը ժրպտում էր խորամանկ, ակնոցները շտկեց ու նորից հարցրեց:

Լուրը նրա վրա սկզբում չազդեց: Նա շարունակեց համարագրել և դարսել թղթերն ըստ «գործի», բայց հանկարծ մտաբերեց, որ քննիչներ են եկել: 20

Նա փորձեց վանել այդ միտքը, նույնիսկ ժպտաց, որովհետև էլի աչքովն ընկավ մի ծանոթ գիր, բայց այս անգամ ժպիտը շուտ հալվեց, և դեմքի վրա քարացավ մի բույթ արտահայտություն:

Նոր միտքը էլի եկավ, աներես ճանճի պես, թառեց գլխի կատարի վրա և էլ պոկ չեկավ, տիզի պես կառչեց մորթուն:

Գրելիս սխալվեց, ուրիշ երես պիտի բաց աներ: Այդ ավելի շփոթեց նրան, ձեռքը շփեց ճակատին և սրբեց լորձունքի պես սառը քրտինքը ճակատի: Իվան բեյը վեր կացավ, աթոռը շտկեց, փալասի կտորն ավելի ուղղեց, գրիչն էլ ձեռքն առավ: Նա զգաց, որ քիմքը շորանում է, լեզուն շարժեց բերա- 30

նում, շրթունքները շարժեց, բայց դարձյալ չկարողացավ հավաքել իրեն:

Այդ օրը նա շորս գրություն միայն համարագրեց: Ամեն մի գրության վրա ժամերով կախում էր գլուխը, թերթում, իբր թե կարդում է (նա չէր ուզում ընկերներին իր հուզմունքը մատնել) և ապա դեն դնում:

10 Նույն օրը, ճաշից առաջ, դուռը բացվեց և նորեկ երեք հոգին ներս մտան, բարևեցին և անցան վարիչի մոտ: Իվան բեյը փորձեց ոտի կանգնել, բայց չկարողացավ, ծնկերը դողացին և նստեց:

Ծրեք հոգուց և ոչ մեկը չտեսավ Իվան բեյի ջրակալած աչքերը, որ ակնոցի ճաքած ապակիների ետևից նայում էին նրանց, մինչև դուռը ծածկեցին:

Փայտե վանդակների ետև, անկյունում, ուր ջրի կուլան էր և ավելը, նստել էր Իվան բեյը իր սեղանի առաջ, ուժը կորցրած թղթերի հետ, որպես թևը ջարդած թռչուն:

Տուն գնալուց առաջ տեղկոմը հայտարարեց, որ երեկոյան ժամը 6-ին բոլորը հավաքվեն:

* * *

Իվան բեյը չճաշեց էլ:

20 Նստել էր պատշգամբում, նայում էր բակին, ուր հավերժ էին քուջուջ անում, բակում բուսած խնձորենուն, որ պտուղի ծանրությունից ճղերն էր կբել: Նայում էր, բայց միտքը բակից ու պարտեղից հեռու էր թռչում:

Երբ կինը հարցրեց նրան, թե ովքեր են եկողները, Իվան բեյը չկարողացավ իսկույն պատասխանել, նայեց կնոջը, կարկամեց և լեզուն թուրովելով պատասխան տվավ:

— Այ մարդ, վրադ գույն չկա, — ասավ կինը: — Հերվա մուրաբից մի քիչ կա, ուզում ես մուրաբով շայ...

30 Իվան բեյը ավելի երկյուղեց, մեջքն ասես ասեղներով ծակծկեցին: Հետո ինքն իրեն սիրտ տվավ, նույնիսկ ձեռքերը շփեց:

Հանկարծ որդուն մտաբերեց, միակ որդուն, որ փախել էր ճերմակների հետ և տարին մի նամակ էլ չէր գրում: Իվան բեյի սրտում հույսը փայլեց մի հատիկ շողի պես, հույսը

տկար, թե լավ օրեր էլ կգան, որդին կդառնա հետ, կփոխվի աշխարհը, էլի հին ճամփով կերթա ջուրը առաջվա: Հույսը առկայծեց մի պահ մարվող խարույկի պես, ջերմութուն տվավ ու հանգավ:

Սառնութուն զգաց Իվան բեյը, մարմինը փշաքաղվել էր: Վերարկուն ուզեց, կոլոլվեց վերարկուի մեջ և անմիտ հայացքով էլի նայեց բակի խնձորենուն, կիսակարմիր խնձորենուն:

Մտածում էր. մտքերը ցրիվ ուստոստում էին, ինչպես ճնճողուկները ցանկապատի վրա. չէր կարողանում կապակցել իրար: 10

Ժողով պիտի լինի, գուցե հարց ու փորձ անեն, հին արածները երեսով տան, բանտարկեն, տանեն ուրիշ քաղաք, պաշտոնից արձակեն:

Ուրիշ քաղաք տանելու մասին մտածելիս քիչ մնաց լաց լիներ: Նա գլուխը թեքեց խոհանոցի կողմը, ուր կինը տնքալով սամավարն էր տաքացնում Իվան բեյին հերվա մուրաբով շայ տալու: Այդպես նայում է հորթը այն դռնակին, որով մայրը պիտի գա: Այդքան խեղճութուն կար նրա հայացքում, և այնպես թշվառ զգաց իրեն Իվան բեյը:

— Մի վեր կաց, բաղչեն գնա, քամին տա, աչքդ-ունքդ բացվի,— կինն էր ասաց Իվան բեյին,— ի՞նչ ես միտք անում, տղադ սաղ լինի... 20

— Հե՛չ, ասում եմ տես ինչքան խնձոր կա ծառի վրա,— շփոթված ասաց Իվան բեյը և մտքում ավելացրեց,— ո՞վ է այսքանն ուտելու...

Եվ խարխուլ սանդուղքներով վար իջավ, մի քանի անիմաստ քայլեր արավ բակում ու մոտեցավ մառանի դռան: Սանդուղքով իջնելիս նա ուզում էր հավաքնի կոտորած տախտակը տեսնել, բայց մառանի դռան մոտեցավ, դուռը թեթև հրեց ու ներս մտավ: 30

Ինքն էլ զարմացավ հանկարծ, թե ինչու է առանց ճրագ մառանը մտել, դատարկ մառանը, ուր գերանների վրա սարդերը ուստայն են հյուսել: Մի քիչ էլ կանգնեց ու մառանից դուրս եկավ:

Պարտեզի դուռը բանալիս նա հիշեց, որ մառանի աշ

անկյան մոտ հողի տակ մի փոքրիկ տուփ է թաղել, միջին լուսանկարներ՝ որդու և իր հին մեծավորների, էպոլետով ու շքանշանով մեծավորների թղթադրամ և պղնձե կոճակներ փայլուն: Նա մեկ էլ ուզեց հետ դառնա, բայց կինը վերից ձայն տվավ, թե.

— Էն քաղցր սալորից մի բուռ քաղի, շայի հետ լավ է լինում:

Իվան բեյը սալորենուն մոտեցավ, ցածիկ ճյուղից մի քանի հատ սալոր պոկեց: Հանկարծ աչքին ընկավ ծառը, բունը ճեղքած, որ Երմոլով պրիստավը թրով խփել էր: Սալորենին դեռ չկար այն ժամանակ, տեղը մի հին կոճղ էր:

Սազանդարը դրմփացնում էր դ՛հու ու գուռնա, քոռ Աթան համ թառ էր ածում, համ բլբուլի պես կլկլացնում, Երմոլովի կնիկն էլ նստել էր կոճղի վրա, քահքահ ծիծաղում էր, իսկ մարդը գինու կուլան ձեռքին պարում էր կանաչի վրա:

Երմոլովի կինը կոացավ, թեքվեց Իվան բեյի վրա, քիչ էր մնում ընկնի, իսկ Իվան բեյը երբ ուզեց պահել նրան, տեսավ Երմոլովի կնոջ սպիտակ ծծերը, ոնց որ ճերմակ խմորի երկու գունդ:

20 Պարեցին մինչև կեսգիշեր, Երմոլովը բոյով մին մեկնվել էր կանաչի վրա, իսկ Իվան բեյը ձիաճանձի պես պոկ շէր գալիս նրա կնոջից, բլբլացնում էր լեզվով և ուզում էր իրիկվա կիսամութին մի անգամ էլ տեսնել այն, ինչ պատահմամբ աչքին ընկավ:

Այդ նույն գիշեր Իվան բեյի կնիկը թոնթորաց, կոփ սարքեց, չեկավ նրա մոտ: Եվ Իվան բեյը մենակ քնեց ընկուղենու լայնարձակ մահճակալի վրա:

— Սամավարը սառավ, Իվան,— կանչեց կինը պատքը-գամբից:

30 Իվան բեյը վեր ելավ սանդուղքով խարխուլ, ձեռքին մի քանի սալոր: Եվ երբ կինը հարցրեց, թե ինչու քիչ է բերել, Իվան բեյը շփոթված պատասխանեց.

— Լավերը չկային...

Ժողովի մասին Իվան բեյը կնոջը ոչինչ չէր ասել: Գործից գալուց ուզեց ասի, բայց փոշմանեց: Կնիկ է, ի՞նչ պիտի հասկանա ժողովից:

Թեյ խմելու ժամանակ, երբ կինը հերվա մուրաբան մեծ գդալով էր լցնում բաժակի մեջ, Իվան բեյի սիրտը կակղեց և նա որոշեց հայտնել:

— Ժամի 6-ին ժողով են մեզ կանչել էն նոր եկած քննիչները,— ասեց և ունքերի տակից հայացքն ուղղեց կնոջը, ասես ուզում էր իմանալ, թե լուրը նրա վրա ինչպես պիտի ազդի:

— Դե ասի կանչված ես էլի, դրա համար ես ախորժակ պահում,— պատասխանեց կինը:

Այդ միտքը հանկարծ հավանական թվաց նրան: Գուցե 10 ժողով չէ, այլ ընթրիք: Առաջ ընդունված ձև էր. գուցե տեղկումն էր սխալվում:

Բայց ներքին հրճվանքը կարճատև եղավ: Ընթրիք չպիտի լիներ: Եթե լիներ, ծառան կասեր Իվան բեյին:

— Երևի մի բան կա, որ...— և բաժակը թեյի ետ տվավ: Ժամանակից շուտ նա պատրաստվեց ժողով գնալու:

— Այ կնիկ, ասում եմ պալտոս չհագնեմ, էն անտեր կոճակների տեղերը երևում են,— ասաց նա գնալուց առաջ:

— Բան չկա, գնա, կմրսես առանց պալտո:

Եվ Իվան բեյը դուրս եկավ դարպասից, վերարկուն ուսերին, մի թևը կախ, ձեռքին թագբեհը անբաժան: 20

• • •

Դեռ ոչ ոք չէր եկել: Միայն ծառան էր ավլում:

— Ի՞նչ շուտ ես եկել, Իվան բեյ,— ասաց նա:

— Մի քիչ գործ ունեմ, եկել եմ վերջացնեմ,— պատասխանեց Իվան բեյը, իր սեղանին մոտեցավ, գզրոցը քաշեց, որ գրիչը հանի: Բայց ծառան չհավատաց և ժպտաց խորամանկ:

Քիչ հետո մեկ-մեկ սկսեցին հավաքվել: Վեցից անց էր, որ ցերեկվա պես դուռը բացվեց և վարիչի հետ միասին երեք հոգին ներս մտան: 30

Իվան բեյը նայեց նրանց, բայց նրանք դարձյալ շտեման նրան, փայտե ցանկապատի ետևում, իր սեղանի առաջ:

Երեք հոգին առանձնացան մի սենյակում: Քիչ հետո նը-

րանք կանչեցին տեղկոմի նախագահին և խնդրեցին մեկ-մեկ ներս կանչել հիմնարկի աշխատակիցներին:

Ամենից առաջ կանչեցին զլիսավոր հաշվապահին: Տասը րոպե շանցած նա դուրս եկավ, քափ-քրտինքի մեջ, ասես բաղնիք էր գնացել: Դուան առաջ սպասողները շրջապատեցին նրան: Գլխավոր հաշվապահը մի խոսք միայն ասեց.

— Խիստ են քննում, մինչև յոթը պորտը:

Ասեց ու հեռացավ:

10 Իվան բեյն էլ լսեց այդ: Ի՞նչ են հարցնելու իրեն, գիտեն արդյոք, թե ինչ է արել ինքը անցյալում, ի՞նչ պատասխան պիտի տա: Թիկնել էր պատին, մերթ մի ոտի վրա էր հենվում, մերթ՝ մյուս:

Հերթը Իվան բեյին հասավ: Տեղկոմի նախագահը դուռը բացեց, և երբ Իվան բեյը ներս մտավ, վերարկուն ուսին, երեք զույգ աչքեր ժպիտով նայեցին նրան: Աթոռ առաջարկեցին:

— Ոչինչ, կկանգնեմ,— ասաց Իվան բեյը և նոր միայն զգաց, որ վերարկուն ավելորդ ծանրութուն է: Հանկարծ մեկը հարցրեց, թե ծեծե՞լ է գյուղացուն այնքան, որ նա հիվանդանա և անկողին մտնի: Հարցրեց և ուղիղ Իվան բեյի աչքերին

20 նայեց:

Իվան բեյը կմկմաց. լեզուն կարծես սառել էր, չէր շարժվում: Հետո մի ուրիշը հարցրեց, թե քանի տարեկան է, և մինչև կպատասխաներ, ակնոցները կուղղեր, — մյուսը, որ ամենից ջահելն էր, ասաց.

— Ազատ եք, կարող եք գնալ ձեր տուն և հանգստանալ:

* * *

Իվան բեյին կրճատեցին: Այդ մասին հայտնեցին նրան հենց նույն իրիկուն:

Նա չկարողացավ ոչինչ ասել և դանդաղ քայլերն ուղղեց դեպի տուն: Հեռվից նայողը կկարծեր, թե Իվան բեյը հարբած էր:

30

Ավտոմոբիլը, որ գիշերը մնաց ծառի տակ, որովհետև գավառական քաղաքում դեռ գարած չկա, հաջորդ առավոտ նորից կանչեց զիլ, փրթփրթաց, ոնց որ ձին էր վրնջում հեծվորին սպասելիս և երբ երեք հոգին տեղավորվեցին ավտոյի մեջ,



Ա. Բակունցը որդու՝ Սևադայի հետ



Ա. Բաղդուկ (1984 թ.)

մեկ էլ կանչեց զիլ, մնաս բարով ասաց քաղաքին և փափուկ անիվների վրա սուրաց արագ:

Մանուկը կարմրաթուշ, որ առավոտյան մածուն էր ուտում, նորից կանչեց ուրախ.

— Մամա՛, ավթանաբիլը...

* * *

Ավտոյի առավոտյան կանչը Իվան բեյն էլ լսեց, ցնցվեց և մնաց անշարժ, քարացածի պես: Հեռացող ավտոն իր հետ անվերադարձ տարավ տասնյակ տարիների մի պատմութուն, հեղեղի պես ավերեց այն, ինչ առօրյա էր և հաստարմատ, որպես դարավոր կաղնի:

10

Իվան բեյը գիշերը շէր քնել:

Ժողովից տուն եկավ՝ գունատված, ջրատար: Մի քանի ժամում ասես ավելի էր ծերացել, կռացել: Պատմեց, ինչ ասել էին:

Պառավը փորձեց հուսադրել, նույնիսկ երեքի եկած ճամփան նզովեց և ավելացրեց.

— Հողեմ դրանց զուխը, միշտ հո աշխարհն էս ճամփով չի գնալու:

Բայց Իվան բեյի վրա չազդեց այդ: Եթե սրտի խորքում, որպես ապահով թաքստոց, պահել էր մի միտք և առանձնության մեջ շոյել այն, թե աշխարհն այս ճամփով միշտ չի գնալու, — այժմ այդ միտքն էլ էր չքացել, հալվել գարնան ձյունի պես:

20

էլ ոչինչ չկա վաղվա համար, կտրվեց թելը այնքան սովորական օրերի:

Նստել էր Իվան բեյը անկողնի ծայրին, աչքերը հառել հատակին: Եվ միտք էլ չէր անում, որովհետև դատարկ էր ոչ միայն վաղը, այլ այսօր, դատարկ էր և գանգի խոռոչում, սրտի մեջ, չկար մի շող անգամ, որ լուսավորեր խավարը թանձր:

30

Նստել էր և թաղբհի դեղին հատիկներն էր համարում:

Զքնեց մինչև լույս:

Մեկ մտածում էր գնալ, խնդրել, գուցե մեղքանան, բայց երբ հիշում էր երիտասարդին, որ ժպտալով հարցրեց, թե ինչպես է ծեծել մի գյուղացու...

57

Մտքի առաջ բացվեց մի էջը հին օրերի: Սևացած և անսը-
վաղ պատեր, ծալքատեղում մի քանի ձեռք կեղտոտ տեղա-
շոր, անկյունում կոծկած կճուճներ և սենյակի մեջտեղ քուր-
սին՝ կարկատած թաղիքով ծածկած: Ուտաբորիկ, պորտը բաց,
անլվա մանուկներ կուշ են եկել տան անկյունում, իսկ փա-
փախի մորթին ցրիվ եկած մի գյուղացի գալարվում է իվան
բեյի մտրակի հարվածների տակ, ցավից մեջքը ծռմուստում,
բառաշում մորթվող անասունի պես: Երեխաների վայնասուն,
վախից շռած աչքեր, որ նայում էին անկյունից, և մտրակի
10 ձայնը, կտրուկ և խիստ:

Վերմակի տակ տապակվում էր իվան բեյը, շուռ ու մուռ
գալիս, բայց քունը չէր գալիս աչքին:

Մութի մեջ աչքին մտրակի հարվածի տակ ծռմուստող
գյուղացին էր երևում, մանուկները՝ անպաշտպան գառներ,
իսկ սենյակի կիսամուկ անկյունից երիտասարդն էր ժպտում:

Մինչև լուսաբաց իր ապրած տարիները հազար անգամ
վերհիշեց, արարքն անարդար, երդումները սուտ, կեղծիքները
անհամար:

Փոքրիկ գիշերալամպը լույս էր տալիս աղոտ, և նրա աչքին
20 երևում էին կարկատած ձեռքեր, որոնք մեկնվում էին, ձգվում
դեպի իվան բեյը, կոկորդը դուրս ընկած: Շուռ էր գալիս մյուս
կողքին, չքանում էին տեսիլքները վառ, աչքերը խուփ էր
անում, և դարձյալ անկյուններից կիսամուկ ձգվում էին բա-
զուկներ՝ մաշված, դեղնամորթ:

Վեր կացավ երկու անգամ, վերարկուն ուսին գցեց և
շապկանց դուրս եկավ պատշգամբ:

Քնել էր քաղաքը հոգնած, տներում լույս չէր երևում,
ոտնաձայն չէր լսվում փողոցներում: Միայն իվան բեյն էր
կես գիշերին արթուն պահակի պես հսկում քնած քաղաքին:

* * *

30 Օրերն անցան: Իվան բեյն էլ գործի չէր գնում: Առավոտ-
յան թեյից հետո նստում էր պատուհանի առաջ և նայում աշ-
խատանքի գնացող պաշտոնյաներին, որոնք թղթերի մի մի
կապոց կուս տակին գործի էին շտապում:

Իվան բեյը նայում էր նրանց հտևից, նախանձում սրտի

խորից: Օրվա ընթացքում նրա համար ամենից ծանր բուս-
ներն էին առավոտն ու ճաշվա երեքը, երբ գործից տուն էին
դառնում իր ընկերները նախկին:

Ցերեկով փողոց դուրս չէր գալիս, աշխատում էր ոչ ոքի
չհանդիպել: Երբեմն, երբ ծառան ծրարները թևի տակ, անց-
նում էր պատշգամբի տակով դեպի փոստը, Իվան բեյը ներս
էր կանչում նրան, մի թաս արաղ տալիս կամ թեյի կանչում և
հարցուփորձ անում, թե ինչ կա այնտեղ, ով է նստում իր սե-
ղանի առաջ, ինչ նորություն կա:

Երբ մութն իջնում էր, փողոցում երթևեկը դադարում, 10
Իվան բեյը դուրս էր գալիս փողոց և զգուշ ջայլերով մտե-
նում հիմնարկի դռան, կանգնում դռան առաջ և հենց որ ոտ-
նաձայն էր լսում, շտապում էր մի տեղ պահվել կամ տուն
վերադառնալ:

Իզուր էր վիզը երկարում, որ տեսնի շենքի ներսը, սեն-
յակը ծանոթ և սեղանը անկյունի մոտ, ջրի կուլան և ավելը
կողքին, Մի հատիկ ճրագը, որ կախված էր առաստաղից, շատ
թույլ էր լուսավորում:

* * *

Ձմեռն եկավ, ձմռան հետ էլ ցրտերն եկան: Իվան բեյի
տան կտուրը ձյունի հաստ շերտի տակ թաղվել էր, ծառերի 20
ճյուղերին ձյուն էր նստել, կտուրի անկյուններից սառուցե
լուլաներ էին կախվել: Թիթեղյա վառարանից ծուխը բարակ
եղնում էր, հալվում ցուրտ օդի մեջ:

Մրսում էր Իվան բեյը: Վառարանի մոտ նստած՝ վերար-
կուն ուսերից չէր հանում: Շատ քիչ էր շուկա գնում, գնալիս
էլ մի քանի օրվա պաշար միանգամից էր առնում:

Եվ օրերով դարպասի կապը գցած էր մնում, ներս ու
դուրս անող չկար: Առավոտյան սրբում էր սանդուղքների
ձյունը: Հավերին էր կուտ տալիս, պառավն էլ ջրի էր գնում և
հետո գալիս թեյ գցում: 30

Իվան բեյը շաքարի մի փոքրիկ կտորով մի քանի օր էր
թեյ խմում: Եկամուտ չունեի, ունեցածը սպառվում էր, հար-
կավոր էր խնայել, ձիգ տալ մինչև մի լավ օր:

Բայց քանի գնում լավ օրվա հույսը հալվում էր, խողո-

վակից ելնող ծուխի պես: Եվ երբ մտածում էր այդ մասին, նրան թվում էր, թե սենյակն ավելի ցուրտ է, կռանում էր վառարանի վրա, փայտի նոր կտորներ դնում և կոլովում վերարկուի մեջ: Վառարանի մեջ փայտը ճարճատում էր, բոցը թրթռում էր կարմիր լեզվակներով, Իվան բեյը մտքի ծովն էր ընկնում, փորփորում մարած հուշերը, անցած ճամփին ետ նայում, երանի տալիս:

10 Պառավն էր, որ էլ չէր թոնթորում առաջվա պես: Նրան պահողը, խոսեցնողը պառավն էր, որ օրնիբուն շարժման մեջ էր: Լվանում էր ափսեները, որ իսկի չէին էլ գործադրվում, սանդուղն էր քրքրում, պահարանի շորերը դարսում, ուտելիքի հոգս քաշում:

Իվան բեյին երեք այնքան հարազատ չէր թվացել իր կինը, այնպես մտերիմ չէր եղել, ինչպես այդ ձմռան: Երեխա էր դարձել, մի երեխա, որ մոր փեշից է բռնում և մոր գրկում էլ քնում: Երբեմն ինքը զարմանում էր, թե ինչու մինչ այդ չի մոտեցել սպառավին այդպես, սրտին այդքան մոտ չի եղել:

20 Պառավն աշխատում էր նրան միշտ մի բանով զբաղեցնել, հին ժուռնալն էր բերում կամ թե բրինձ էր տալիս ջուրը: Իվան բեյը խոնարհ երեխայի պես նստում էր վառարանի մոտ, սինու մեջ լցրած բրինձը մատով մեկ մեկ ջոկում:

Ձմռան երկար գիշերներին, երբ ձյունամրրիկը սուլոցով ուժգին զարկում էր պատուհանի ապակիներին և գայլի պես ոռնում բուխարիկի անցքում, Իվան բեյը երկյուղ էր զգում և ցուրտ, գլուխը կոխում էր հաստ վերմակի տակ, կծիկ դառնում և աշխատում շլսել, թե ինչպես է ոռնում ձմռան քամին:

— Այ պառավ, մեջքդ ծածկի,— ասում էր վերմակի տակ և ավելի մոտենում պառավին:

30 Ժամերով քունը չէր տանում: Աչքերը կիսախուփ, վերմակի տակ կծիկ դառած, Իվան բեյի մաշված միտքը շարունակում էր աշխատել: Հին օրերի դեպքերը թազբեհի հատիկների պես մեկ մեկ դարսվում էին իրար վրա:

Ցերեկով նա եթե սրտնեղում էր, թղթի մի կտորի վրա լրագրից կամ հին ժուռնալից արտագրություն էր անում, գրածը դարսում, համարակալում, ճիշտ առաջվա պես: Սա-

կայն երբ սթափվում էր և զգում, որ այդ միայն ժամանակի համար է, սիրտը կտրվում էր, հեռանում էր սեղանից և էլի ձեռքերը թիթեղյա վառարանին մոտեցնում:

Հին ծանոթներից երբեմն այցելության էին գալիս: Բայց ամեն անգամ, երբ ծանոթը դուրս էր գնում, և Իվան բեյը մընում էր մենակ իր մտքերի հետ, սիրտը տակնուվրա էր լինում, ալեկոծվում էր լճի մակերեսը, որի վրա տեղ-տեղ ջրախոտերը արդեն ճահիճ էին գոյացրել:

Չկամ էր ընդունում եկողին, նրանք էլ հաճախ չէին գալիս:

* * *

Ձմռան մի գիշեր էլ պառավը մեռավ: Հիվանդ չէր, միայն 10
քնելուց առաջ սրտի ծակոցից էր զանգատվում:

Իվան բեյը ուշք չդարձրեց, որովհետև պառավն այդ հիվանդությունը վաղուց ուներ և շատ անգամ էր սիրտը բռնում, տնքում:

Առավոտը կանուխ վեր կացավ Իվան բեյը, հավերին կուտ տվավ, եկավ, որ պառավին զարթեցնի:

— Վեր է՞, այ պառավ,— ասաց ու թեթե շարժեց:

Հանկարծ աչքին ընկավ պառավի գունատ դեմքը և աչքերը բաց, ապակու անկենդան փայլով: Իվան բեյը հասկացավ, ցավից կանչեց զիլ և ընկավ պառավի դիակի մոտ 20

Մանոթ ու հարևան հավաքվեցին և ձմռան մի ցուրտ օր, երբ նոր հկած ձյունը պսպղում էր արևի տակ, որպես ասեղի ծայրեր և ճոճում՝ նոր գնած կոշիկի պես, պառավին թաղելու տարան:

Յուրտ էր, տերտերը շտապում էր: Սառել էր գետինը, գերեզմանն էլ խոր չէին փորել:

Երբ դազաղն իջեցրին և ձյունախառն հողը բահով փոսի մեջ լցրին, Իվան բեյը, որ զլախաբաց կանգնել էր և լեցվող փոսին էր նայում, մտածեց, թե ինչքան ցուրտ է լինելու պառավի համար: Ավելի կուշ եկավ վերարկուի մեջ, արցունքները 30
զլորվեցին այտերի վրայով:

— Մի բուռ հող էլ դու լցրու, Իվան բեյ,— ասաց տերտերը:

Իվան բեյը կռացավ, որ հող վերցնի: Այնքան դժվար թվաց նրան այդ: Մի պահ կանգնեց, հողը բռան մեջ, ասես շէր ուզում գիրեզմանին լցնել:

— Անհաղորդ մեռավ,— ասաց հարևան մի կին, գոգնոցի ծայրով կարմրած աչքերը սրբելով:

Տուն վերադարձան: Ճամփին տերտերը հին պատմութուն էր անում, բայց Իվան բեյը չէր լսում, մտքերը հետ էին, թարմ հողաբլուրի շուրջը: Գլխաբաց էր և չէր նկատում այդ: Գլխաբաց էլ տուն եկավ:

10 Հարևանի կանայք մնացին մինչև իրիկուն: Նրանցից մեկը վառարանը վառեց, իրիկվա համար փայտ դարսեց, մյուսը ինքնահող տաքացրեց:

Իվան բեյը անպաշտպան մանկան խեղճ հայացքով մեկ սրան էր նայում, մեկ նրան: Անճարութուն կար նրա դեմքի վրա, կսկիծոտ մի հարց.

— Ես ո՞ւր մնացի...

Երբ կանայք հեռացան, քիչ հետո էլ տերտերը գնաց և գնալուց առաջ Իվան բեյին ասաց, թե ինչ լավ թեյաման ունես, և որ ինքը փող չի ուզում,— երբ տերտերը սանդուղքի ձյունը ճոճուցնելով գնաց և իր հետևից էլ դարպասի դուռը ծածկեց,— Իվան բեյին այնպես թվաց, թե դարպասի դռան հետ փակվեց և ամեն ինչ:

Պարապ զգաց, անասելի դատարկություն սրտի մեջ, կսկիծ, որ մրմուռ ունի:

Հանգավ վառարանի կրակը, մարեց և լույսը ճրագի: Մութի մեջ անկողնու վրա, հին վերարկուով կուլված պառկեց Իվան բեյը, գլուխը թաղեց բարձի մեջ:

10 Էլի քամի էր փողոցում, քամին ձյուն էր շարտում, և պատուհանի ապակիները զնգում էին կամացուկ: Կոշմարի պես ծանր էր սենյակի խավարը Իվան բեյի համար և մի միտք չէր հեռանում գլխից.

— Ինչքա՞ն ցուրտ է պառավի համար...

Եվ ոչ ոք չսեց Իվան բեյի զսպած հեծկտանքը ձմռան ցուրտ գիշերին:

Մանր օրեր էին Իվան բեյի համար: Չմեռվա կարճ ցերեկըն անցնում էր մի կերպ, և երբ իրիկուն էր դառնում, մութի հետ էլ երկյուղն էր իջնում Իվան բեյի սրտին:

Երբեմն էլ վառարանը շէր վառում. իրիկնանալու պես տեղաշորի մեջ էր մտնում, որ քնի: Բայց քունը շէր գալիս աչքին, գլուխն էլ վերմակի տակից շէր հանում սենյակի մութը շտեսնելու համար:

Մրսում էր Իվան բեյը, կծիկ էր դառնում առաջվա պես, բայց էլ պառավը չկար, որ մոտենար նրան և ասեր առաջվա պես.

— Կմրսես, ա՛յ պառավ...

Շարեաններն էին օգնում: Մեկը մի բաժակ կաթ էր ուղարկում, մյուսը մի աման տաք կերակուր: Երբեմն հարեվանի երեխան էր գալիս փայտ կտրատում վառարանի համար կամ ջուր բերում:

Իվան բեյը ոչինչ չէր ասում, կարծես շէր էլ տեսնում եկող գնացողին:

Նստում էր առաջվա տեղը, վառարանի կողքին, գլուխը կախում վառարանի մոտ:

Գնացող եկողից մեկն էլ, հարեանի մի կին, մի օր կամացուկ հայտնեց իր ծանոթներին, թե Իվան բեյը ցնդվածի պես է դառել: Ժպտում է ինքն իրեն, ձեռքերը մոտեցնում է սառը վառարանին և շփում իրար:

Մյուսն էլ լսել էր, որ Իվան բեյը խոսում է ինքն իր հետ: Մեկն էլ ավելացրեց, թե ինքը տեսել է Իվան բեյին իր նախկին հիմնարկի առաջ գլխաբաց կանգնած:

Իվան բեյը ժամերով վառարանի մոտից շէր հեռանում: Ցուրտ սենյակն էր, թե սովորույթը հին, որ մեխում էր նրան աթոռին, վերարկուն ուսին, թագբեհն էլ ձեռքին:

Մի իրիկուն էլ, երբ փողոցի անցուղարձը դադար էր առել, կողպ էին արդեն դարպասները, երբ սառած ապակիների ետևից կաթնաման լույս էին տալիս ճրագները,— Իվան բեյը իջավ բակ, դես ու դեն խլշած նայեց, ասես մարդու սովեր էր փնտրում բակում կամ լսում, թե մարդ կա՞ արդյոք այգում կամ փողոցում:

Հետո կամացուկ մոտեցավ և դարպասի դռները բացեց: Մի քիչ կանգնեց փողոցում, դարձյալ նայեց շորս կողմ և ժպտաց ինքն իրեն:

Տարօրինակ էր այդ ժպիտը. զարզանդ կար դեմքին, աչքերի մեջ մի անիմաստ փայլ: Ժպտաց, մտածեց, ծովա-տեց շրթունքները, ատամները կրճտաց և արագ քայլերով իջավ փողոցով:

Գողի պես էր գնում, պատի տակով: Մի ոտնաձայն կամ խշշոց լսելիս հենվում էր պատին, անշարժ մնում, մինչև վտանգն անցներ:

Քիչ հետո նա իր պաշտոնատան դռան առաջ էր: Վիզը երկարացրեց և փողոցից տեսավ ներսի ճրագը, որ առաստաղից էր կախված:

Ապա վճռական մոտեցավ և դռան զարկեց բռունցքով՝ մեկ, երկու, հետո սկսեց դուռը թափահարել: Գողում էր ամբողջ մարմնով, բայց ցուրտ չէր զգում: Նրան թվում էր, թե բազուկների մեջ ուժ կա անշափ, ասես ուզում էր կրնկահան անի դուռը:

Աղմուկի վրա ծառան ներսից ձայն տվավ և դուռը կիսաբաց արավ:

— Ակո՛ւփ, լա՞վ ես սրբել, — հարցրեց Իվան բեյը և դուռը հրեց:

Մառան ճանաչեց նրան և դուռը նորից կողպեց: Եվ դռան հետևից կանչեց վախից դողացող ձայնով.

— Իվան բեյ, գնա՛ քնիր, գնա՛...

Էլի կանգնեց մի պահ, հետո սկսեց նորից ծեծել, խոսել ինքն իրեն: Մեկ էլ վերարկուն, որ ընկել էր ձյունի վրա, ուսին գցեց, ճղրտաց, հեռացավ արագ: Մառան մինչև վերջ էլ չէր հավատում, թե այդ ձայնը Իվան բեյինն էր. այնպես զիլ էր. խոպոտ:

Իվան բեյը արագ վազելուց քրտնել էր: Ներս մտավ, դարպասի դուռը կողպեց ու սանդուղքով վեր բարձրացավ: Բայց մեկ էլ հանկարծ հետ դարձավ, իջավ բակն և էլի սկսեց ուշադիր լսել, թե ոտնաձայն չկա՞ այգում, ստվեր չի՞ երևում:

Մեկ էլ հետ նայեց և նրա աչքին ընկավ մառանի բաց

դուռը: Իվան բեյը ներս մտավ և մառանի մութի մեջ պատե-
պատ ընկնելուց հետո հասավ անկյունին, կռացավ, նստեց,
ձեռքերով շոշափեց գետինը, հռհռաց և սկսեց փորել գետինը:

Նա չէր փորում: Չանգոում էր մատներով, եղունգներով:
Մութի մեջ տնքում էր, թնշում և շանգոում: Հանկարծ մատ-
ները մի կոշտ բանի դեմ առան: Իվան բեյը մի վայրկյան մը-
նաց, հետո սկսեց ավելի արագ փորել: Նրա ձեռքը խրվեց մի
փոքրիկ կճուճի մեջ: Ձգեց և հանեց կճուճը, մութի մեջ զըն-
գաց կճուճը, և պղնձե կոճակները փայլուն բլեզների պես 10
դեսուդեն շաղ եկան:

Իվան բեյը կոճակները հավաքեց բոլի մեջ, մոտեցրեց աշ-
քին, որ ավելի լավ տեսնի, մատներով շոշափեց: Սիրտը բա-
բախում էր արագ, սարը մի շնչով վեր ելնողի պես:

Քրտինքի կաթիլները գլորվում էին ճակատից, քրտինք
էր դուրս գալիս և վաղուց շվաքված մազերի միջից: Թունգե-
րը լայնացել էին, շնշում էր հեփհեփ:

Կանգնել էր մառանի անկյունում, բուռը լի պղնձե կո-
ճակներին էր նայում, որոնք մութի մեջ փայլում էին պըս-
պըղան: 20

* * *

Առավոտյան, երբ հարևանի տղան կաթ էր բերել Իվան
բեյի համար, դարպասը փակ գտավ: Մեծեց մի քանի անգամ,
հետո կաթը ետ տարավ:

— Էսօր Իվան բեյը շատ է քնել,— ասաց:

Մյուս առավոտ մեկը պատով իջավ և դարպասի դուռը
բացեց:

Իվան բեյի վերարկուն ընկած էր մառանի դռան առաջ:
Քիչերվա քամին ձյուն էր լցրել սենյակի բաց դռնով:

Մառանի անկյունում սառած ընկած էր Իվան բեյը,
մատներն արնոտ, շոած աչքերով: Բռունցքի մեջ սեղմել էր 30
պղնձե երկու կոճակ, կողքին՝ ջարդված կճուճի փշրանքներ,
թղթի կտորներ, հին թղթադրամ:

... Իսկ հավերը բնում քաղցից ու ցրտից կշկշում էին, կուտ
ուզում:

ԾԱՏՈՒՆ ՏՂԱՆ

Նա հայր ուներ, իսկ հայրը՝ ոչխարներ: Եվ երբ հայրը մեռավ, գերեզմանի փոսը ծածկելիս իր մտքում նա հոր թողած ոչխարների համրանքն էր անում:

Գյուղի քահանան նրան Աբրահամ էր կնքել, մուծել մատյանի մեջ, բայց գյուղը նրան ավելորդ անուն էր տվել՝ լոշ՝ կախ ընկած ականջների համար:

Եվ երբ հայրը մեռավ (իսկ հայրը ոչխարատեր Մատին էր), մեռելահացն ուտելիս մի ալևոր բարիմաղթեց լոշ ականջի տավարին ու օջախին առատություն և դառնալով նրան ասաց.

— Մատու տղա, նզովյալ լինես, եթե շվաքդ անպակաս անես էս օջախին:

Այն օրից էլ լոշ ականջը դարձավ Մատուն տղա, ավազանի անունը հերվա ձյունի պես հալվեց:

Եվ երբ մի անգամ էլ ձյունը հալվեց, գարնանամուտին ոչխարը սարը քշելիս Մատուն տղան հորից ստացած ոչխարը քսանով ավելացած տեսավ:

Հետո մի քանի տարի անց, երբ Մատուն տղի բեղերն այնքան էին մեծացել, որ ապուր ուտելիս ձավարի հատիկներ էին մնում բեղերի արանքում, մի քանի տարի հետո Մատուն տղան այնքան ոչխար ուներ, որ երեք շորան հերիք չէր անում:

Հոգաբ սարում արածող ոչխարն էր. իրեն ի՞նչ, թե կտուրի գերանը ճաքել է, պառավ մայրը գլխին շալ շունի պցելու: Տանն իր կամքը կար միայն, իր խոսքը՝ անգիր օրենք տան անդամների համար, որոնցից մեկը՝ պառավ նանին, ճախարակի մոտ էր դարդահալ լինում, շորանին շուխացու մանում,

մյուսը՝ եփում, կարում, փոքրերի հոգսը քաշում, ծծկերին ծիծ տալիս և էլի քնում Մատուն տղի հետ մի վերմակի տակ, ծխից սևացած, ճաքճքած գերաններով խրճիթում:

Երազում էլ սարում արածող ուխարի հետն էր. գայլն էր վրա տալիս՝ ինքը քնի մեջ մոնչում էր, ասես բուկն են խեղդում, մին էլ այնպես էր թվում, թե ուխարները ոսկի են դառնում, դեղին ոսկիներ՝ սարի կանաչի վրա շաղ տված, ինչպես թոնրի մոխրում պեծին տվող պողեր:

Մեկ էլ զարթնում էր, մյուս կողքին դառնում և ուխարի շափ խոնարհ, անլեզու կնոջը հրում, քնահարամ անում և կատարում այն, ինչ անհաճո էր ծծկեր ունեցող մաշված կնոջ համար:

Ամեն ինչ կյանքում նրան ուխար էր թվում՝ յուզուտ դմակով, փափուկ դմակով: Սարում ուխարը խուզելիս, երբ բրդով լի պարկերը դարսում էին իրար վրա, շոբանի ձեռքի մկրատը նրան աշխարհի միակ գործիքն էր թվում, որով մարդ կարող է աշխարհներ դրավել, ծովի ավազի համրանքով ոսկի ունենալ:

Երբ տերտերը եկեղեցում քարոզ էր տալիս, ասում, թե քոլորը մի հոտ են եկեղեցու համար, թե կա երկնային մի հովիվ, Մատուն տղան իսկույն մտքով սարն էր թռչում, ուր կախ ընկած դմակով ուխարներն էին արածում, շաղանում, դառնում դեղին ոսկի:

Հեղափոխությունն էլ նա հասկացավ յուրատեսակ ձևով. թագավորը հովիվն էր, ժողովուրդը՝ հոտը: Մի մեծ մկրատ Մոսկվայից մինչև ինքը խուզում էր ժողովրդին:

Գյուղում զրույց անելիս նա այդպես էլ ասում էր, թե գայլերը գալու են անշոբան մնացած ուխարն ուտեն, սր առաջ յուզ ու կաթ էր հոսում Մոսկովից մինչև ինքը, երբ մեծ մկրատը կար:

Ամռան վերջն էր: Թուխպը մեկ-մեկ նստում էր սարին, շաղտոտում էր սարի կանաչը, թացանում էր ուխարի բուրդը:

Թուխպ կար սարում, երբ Մատուն տղան ուխարի մոտ գնաց: Չոբանները եկան, շները՝ գայլաբոյ, վնգստացին, բայց Մատուն տղան ունքերն էլ իրար շտվավ: Բարձրացավ մի քուրի գլուխ, ձեն տվավ շոբանին, որ ուխարը քշեն քարի տակով: Նեղվածք էր, դժար կապ, ուխարը մեկ-մեկ էր անցնում, գլու-

10

20

30

խը կախ, մանր-մանր քայլերով: Եվ երբ վերջին կաղ ոչխարն անցավ, Մատուն տղայի շրթունքները բեղերի տակ շարժվեցին:

— Երեք հարյուրից չորսը պակաս:

Ասեց և հեռացող ոչխարի ետևից նայեց մի պահ, շորանին կանչեց.

— Մեզին ոչխարը քչիր քաղաք:

Չորանն ուզեց հարց տալ, բայց բերանը բաց էլ մնաց: Մատուն տղան ձիու գլուխը գյուղի կողմն էր դարձրել:

Պառավ նանն էլ զարմացավ, երբ իմացավ, թե տղան առավոտ ծեղին քաղաք է գնում: Մեկ ուզեց խնդրի մի գոտկալ, մեկ տազ արեց: Մատուն տղայի աչքերը այնպես պեծին էին տալիս ունքերի տակ, ասես երկու թեժ ածուխ լինեին: Երբ մութ եղավ, քնեցին, կինը կամացուկ խնդրեց շապկացու, սիրտ արեց, մոտեցավ մեջքին, բայց Մատուն տղան երեսը շուռ տվեց, մյուս կողքի վրա պառկեց: Շուռ եկավ, բարկացած ասեց.

— Լավ, սատկիլ չես...

Մեզին գնաց, երկու օր հետո եկավ: Մատուն տղան էլ ոչխարատեր չէր: Ոչխարը ծախել էր քաղաքում: Այն, ինչ երազում էր տեսել՝ դեղին ոսկիներ, հիմա զնգում էր նրա գրպանում:

20

Չորանների ձեռքը մի բան դրեց, չորանները հեռացան, շներն էլ՝ պոչերը կախ, նրանց ետևից, դեպի սարերը թխպոտ:

Եվ երբ երկու օր հետո եկավ, Մատուն տղան իր հետ քաղաքից տասը ձիու բեռ ապրանք բերեց՝ ճոթ, սապոն, նալ ու մեխ, շաքար:

Մյուս օրը Մատուն տղան գեղում դուքան ուներ, տան մոտ, մարագի հին շենքում: Առաջ դժվար թվաց արշին բռնելը, գրվանքա շաքարին աչքը վարժ չէր, ճոթ ու կտորի թոփը բաց անել չէր իմանում, բայց հետո սովորեց:

30

Նույնիսկ գործը դուր եկավ: Հանգիստ նստում էր խանութում, նալ ու մեխ էր ծախում և ամեն իրիկուն մտքում հաշիվ անում, թե ինչքան օգուտ ունի: Էլի առաջվա պես էր մտածում. գյուղացիք, որ ապրանք են առնում իր խանութից, գյուղացիք նրա աչքում էլի ոչխար էին, աղի վրա վազող ոչխար, որ թողնում է կթես, խուզես:

Հինգ ամիս հետո գյուղում շատ երդիկի տակ էին խոսում, իրիկվա հացին։

— Մատուն տղան պարտքն ուզում ա, էգուց մի փութ պանիր տանք պարտքի դիմաց։

— Էսօր էլի ասեց էն շաքարի համար...

Գյուղը հեռու, յոթ սարի քամակին, ճամփեն՝ կածան, անապահով, տարիները՝ խոռով, ամեն տեղ երկյուղ, քաղաքում՝ խանութները փակ, ծածուկ պահեստներում՝ գաղտնի վաճառք հին ծանոթին։

Իր ոչխարի համրանքից ավելի լավ գիտեր այդ Մատուն տղան։ Ապրանքը թանկացնում էր ժամեծամ, գանգատվում, թե վնաս է անում, էլ ապրանք չկա։ Շաքարը հիվանդի դեղ էր, ոսկու հավասար։ 10

— Առ տա՛ր, էլ շաքար չես տեսնելու,— ասում էր Մատուն տղան իր հարևանին, որ հոգեպահուստն էր Մատուն տղին պահ տալիս։ Մատուն տղան մեծացավ, ուռեց, դարձավ անվանի, ազդեցիկ։

* * *

Չյունի սպիտակ փաթիլները թրթռում էին պաղ օդի մեջ, պտույտներ անում, կամացուկ իջնում, դարսվում իրար վրա։

Թարմ ձյունի վրայով քայլում էին երեք հոգի դեպի հեռու ձորի գյուղը։ Կարմիր բանակը քաղաք էր մտել, և լուրը թռել-հասել էր գյուղին։ 20

Երեք հոգին գյուղ հասան իրիկվա մութին։ Եկան, հավաքվեցին ծանոթ գյուղացիք, ազգ ու բարեկամ։

Մյուս օրը գյուղում հեղկոմ կար, եռուզեռ կար, խոսք ու գրույց։ Երբ բաց արեցին Մատուն տղի խանութը, միջին մի քանի թոփ քաթան կար, լամպի շորս շուշա, մի քիչ էլ մեխ։ Մատուն տղին կանչեցին։

— Չկա, էդ ա մնացել, տարեք...

Խուզարկեցին, բան չգտան։ Հեղկոմը առաջին նիստում որոշեց Մատուն տղի քաթանը գյուղի աղքատներին բաժանել։ 30

Չյունը հավից, սարերը կանաչին տվին, բայց կանաչ սարում Մատուն տղան էլ ոչխար չունեիր, խանութումն էլ խոտ էր դարսում։

Հողը տաքացավ, գութանները դուրս արին: Մատուն տր-
դան էլ վար գնաց: Վաղուց, շատ վաղուց էր մաճ չէր բռնել:
Մոտիկացավ մաճին, ուժը գութանին տվեց, մինչև մի ակոս
ծրելը ձեռքերը թուլացան, նստեց գետնին:

— Բո՛նը արշինն ա, Մատուն տղա,— ձե՛ն տվեց քշողնե-
րից մեկը, իջավ լծից, մաճը բռնեց:

Մատուն տղան հանգստացավ. մի քիչ էլ մնաց և, դեռ
գութանը շարձակած, տուն եկավ: Մյուս օրը մաճկալը Մատուն
տղից մի օրավարի վարձն էր ուզում:

10 — Առ, էլ շունե՛մ, երեխաներիցս եմ կտրում,— ասաց
Մատուն տղան, խեղճանալով:

Բայց Մատուն տղան բեռը բռնել էր առաջ, երբ ճոթ կար
խանութում, նալ ու միխ և շաքար: Պահած փող ուներ, մառա-
նում յուզ ու պանիր կտր:

Մի տարի էլ, և քաղաքում Մատուն տղի մի քանի հին
ծանոթները կողպած խանութները բաց արին: Մատուն տղան
պանիր ու յուզ տարավ քաղաք, հողի կճուճում պահած ոսկին
էլ հանեց, խանութի խոտը մաքրեց, կարգի բերեց:

12 էլի առաջվա խանութում էր Մատուն տղան մի քանի թոփ
կտոր դարսել, սաւյո՛ն, աղ, լուցկի: Քաղաքում ծանոթներ
ունե՛ր հին, օգնել էին, ապրանք տվել:

Մատուն տղան էլի դինջ նստեց խանութում, արշինը
ձեռքն առավ, ապառիկի հին դավթարում նոր երես բաց արեց:

Գյուղը հեռու՝ ճամփան կածան, ուժը պակաս Զա-
հիլներն աղմկեցին, նամուսի ընկան. ո՞վ էր՝ պատմեց կոռպե-
րատիվի մասին:

Կեսգիշեր էր, երբ ցրվեցին տները: Եվ դեռ երկար ժա-
մանակ մտածում էին կոռպերատիվի մասին, Մատուն տղի
նոր խանութի մասին:

30 Մատուն տղան լսեց, որ ուզում են շուրն էլ առաջվա
առվով շկապեն: Մի անգամ էլ մտքում կրկնեց այն, ինչ
հազար անգամ էր ասել.

— Թե սրանք մնան, վերջս լավ չի...

Հիշեց մի քանի թոփ կտավը, լամպի շուշան, նալ ու
մեխը, որ տարել էին, խլել իրենից, միտն ընկավ մաճկալի
խոսքը, թե՛

— Մատուն տղա, քո բանը արշինն ա...

* * *

Նոյեմբերի արև օր էր, պայծառ, դուրեկան աշնան օր։ Քաղաքում նոյեմբերի արևի տակ պսպղում էին նվազափողերը պղնձե, լայն փողոցներում ծովացել էր բազմութունը, ալեկոծ դրոշները՝ վե՛ր, բարձր։ Թնդում էր քայլերգը, աղմուկ կար, երգ ու ուռա, մեկը պատշգամբից ձայնով զիլ մեր վերելքն էր պատմում։

Արև էր, և հեռու գլուղում աշնան դուրեկան օր։ Դրոշներ կային՝ փայտի ծայրին հագցրած, գույնզգույն շորերով հարս ու աղջիկ կար, բրդի շուխավոր շինական։ Դհուրը դըմբում էր, զուռնան փշում էր զիլ։ 10

Շատերը խոսեցին. ամեն մարդ իր միտքն էր ասում, միտքը հյուսում յուրատեսակ, հետո մեկն էլ բարձրացավ քարի վրա, խոսեց, թե՛

— Ընկերներ, մենք կապերատիվի կողմից շատ ետ ենք մնացել, էս ձորերում մթին ա։ Մատուն տղան էլի կենդանացել ա։ Մեզ պետք ա մի կապերատիվ հիմնենք հենց էս տոնին, էստեղ։

Խոսեց, հետո դարձավ բազմությանը, թե՛

— Կապերատիվ սիրողը թող մոտենա, գրվի էստեղ... 20

Մոտեցան, առաջ քաշվելով, վարանոտ, հետո սրտալի։ Քալիս էին գրվում, փայլը վճարում։

Նա, որ խոսել էր, շուտ-շուտ կանչում էր տեղից.

— Շեն կենա մեր կապերատիվը...

Մատուն տղան էլ էր լսում նրան, տեսնում, թե ինչպես են գրվում։ Մեծ մասը իրեն պարտ էին՝ լավ էր ճանաչում։

Կանգնել էր մի քիչ հեռու, նայում էր նրանց։ Կարծես հեղեղ է, գարնան վարար հեղեղ, իսկ ինքը մի շոր տաշեղ հեղեղի բերանում։

Մատուն տղի փափախի տակ մի միտք կար միայն.

30

— Սրանք որ կան, վերջս լավ չի...

Այնքա՛ն հուսահատություն էր կաթում Մատուն տղի լոշականջներից։

ԹԱՆԳԻՆ

Եթե գյուղում ծաղիկ չլինեն, նա մանուկ ժամանակ չէր հիվանդանա, վերքերը չէր փորի և շեշոտ էլ չէր լինի: Մայրըն ուրիշ հոգս շատ ուներ՝ օրորոցում պարուրի մեջ Քանգուն կապելուց հետո ներս ու դուրս էր անում և չէր նկատում, թե ինչպես երեխան ուժ էր տալիս, թաթերը հանում և քորում, վերքերն արնոտում:

10 Քանգու առաջին սերը պատից կախ արած նախշով խալին էր: Ամռան շոգին ճանճերը լիզում էին երեխայի քթածակերն ու աչքի ակները, իսկ փոքրիկ Քանգին մատը բերանում, ծլուը կախ, ժամերով աչքը չէր հեռացնում խալու նախշերից: Առաջին շորեքթաթ արշավը դարձյալ դեպի խալին էր:

Տանը երեխա շատ կար, հոգսը շատ էր, վար ու ցանքսը միջոց չէին տալիս Քանգու հորը նկատելու ժառանգի առաջին սերը: Եվ պատահամա՞ք էր, որ նրա աչքին ընկավ որդու ծակոտկենն երեսը՝ չեշաքար:

Հայրը նայեց, ուզեց մի բան ասի, բայց բերանում հացի պատառը շաղախվեց թքի մեջ, կոկորդը սեղմեց, և մինչև կուկ կտար, միտքն էլ թռավ, անհետացավ:

20 Քանգին մեծացավ: Հոր տնկած ծառերը դեռ բար չէին տվել, երբ Քանգին մագլցում էր ծառն ի վեր, տավարը շուրը տանում, օրը տասն անգամ աղբյուրը վազում սառը ջուր բերելու:

Երբ գանգի խոռոչում նրա ուղեղը խմորի գնդի շափ դառավ, Քանգին արդեն գիտեր, որ ամենից թանկը աշխարհի երեսին պարարտ սևահողն է, աղբած բոստանը, գոմը ապ-

րանքով լի և նոր տնկած ծառերը, որոնց վրա մազլցում էր նա այն ժամանակ, հրը ետևն ու առաջը բաց էր:

Մեռնելիս հայրը Քանգուն փալասի մեջ փաթաթած ոսկիներ հանձնեց և աչքերը փակելուց առաջ մի անգամ էլ որդուն պատվիրեց ապրանքին լավ խնամել, տան կողքին մի ուրիշ ամարաթ շինել և ընդարձակել այգին:

— Աչքդ բաղին պահիր, — ասաց և աչքերը փակեց:

Ազգ ու բարեկամ լաց եղան, իսկ Քանգին գնաց գոմը նախ հոր թողած ոսկիները հաշվելու և ապա մի լղար եզ ջուր կելու մեռելահացի համար:

10

Գերեզմանատան ճանապարհը բաղի մոտով էր անցնում: Վերադարձին Քանգին բաղի դռնակը բաց արեց, ներս մտավ, նայեց ծառերին, և շատ փոքր թվաց նրան հայրական այգին: Գրպանում զրնգում էր ոսկին, և գրպանի ոսկուց ցուլք էր ելնում, Քանգու աչքերը շլացնում:

Կանգնեց այգում, որպես հաստարմատ ծառ, նայեց պատերից դեմ ձգվող պարարտ հողերին, մտքում գծեց մի սահման և այդ սահմանը դրեց իր կյանքի կետ նպատակ:

* * *

Տարիները զլորվում էին որպես անիվներ անտես:

Տարիները արծաթ փոշի էին շաղ տալիս Քանգու մազերի վրա, մի աներևույթ ձեռք նրա դեմքին ակոսներ էր ծրրում:

20

Ասես վերջ չպիտի ունենար ժամանակը Քանգու համար: Ամեն տարի բերում էր մի քիչ հող, երկու մուրհակ, տակոսով դիզած արծաթ և սև հողեր պարարտ՝ հասած խմորի պես:

Գյուղում Քանգին հզոր էր, բազուկն ուժեղ, ասածն օրենք: Խուլ բողոք կար և տրտունջ, թե Քանգին աղքատի պատառն է կուլ տալիս, պայմանագիր է կեղծում, կաշառում օրենքին և զավթում, թաթը դնում մսոտ հողերի վրա, դառնում խան ու սարդար:

30

Քմծիծաղ էր տալիս Քանգին, երբ ականջին էր հասնում գյուղի խոսքը, ուլորում էր բեզը և ինքնագոհ հայրա-

կան այգու ճանապարհը բռնում, դռնակը բաց անում:

Տարիները գլորվում էին, ծառը պտուղ էր տալիս, արտը՝ ոսկեհատ ցորեն, արևը ծագում էր, խանձում ցերեկին, մայրամուտին հանգչում: Թանգին պինդ էր կոխում սեփական հողը, մտքում դրած սահմանին ձգտում անխռով, ինչպես ծագում է արևը, խանձում ու հանգչում մայրամուտին:

* * *

Մի գարուն էլ, երբ օրերը երկարացան, հողը տաքացավ, և գոլորշի բարձրացավ հանգստացած հողից, մի գարուն էլ Թանգու համար ուրախ լուրեր շեկան քաղաքից: Արևն էլի 10 առաջվա տեղիցն էր ծագում, բայց Թանգուն թվում էր, թե ծովել է աշխարհի առանցքը, վազքն ընդհատ է, շնչակտուր:

Թխպեց Թանգին: Այգում սեփական հողը պինդ շէր կոխում, դողում էին կոր ծնկները: Կանգնում էր ծառի մոտ, տեսնում, թե ինչպես լցվում են բողբոջները, սևին է տալիս խնձորենու մաշկը, զգում էր, որ վարթնում են արմատները, շարժվում են հողի մեջ կենարար հյուսթերը, և մտածում, որ գարունն ուրախ լուրեր չի բերել: Գունատվում էր մերթ, զայրանում, և զայրույթից շեշաքար երեսը կարմրին էր տալիս:

20 Օգոստոսին կարմրեց խնձորը, հասավ: Գիշերով թրուան պարսպի վրայով, ծառերը պլոկեցին, ճղակտոր արին: Ծվ երբ լուսաբացին Թանգին այգու դռնակով ներս մտավ, տեսավ խնձորները լնափված, բոստանը ոտնակոխ, ճղները՝ կտրած կոներ, տեսավ և գիշերվա հետքերը, տերևներ ցողոտ այստեղ-այնտեղ, հասկացավ, որ գարունը տեղահան է արել պարիսպները, ուրիշ բերաններ կան գլորում՝ խնձորի, փափուկ լավաշի վարտու:

Տարիներն էլ անիվներ շէին անտես, այլ ծանր ջաղացքար, որոնք գլորվում էին թափով և տրորում պարիսպները, 30 հիմնահատակ անում զավթած հողերի սահմանները, հարթում հավասար:

Մուրհակները խոնավացան, բորբոսանցին երկաթե սրնդուկում, ուժը հազիվ էր հերիքում պահելու եղածը, հեռ-

վում մթնեց սահմանը, որ գծել էր նա գերեզմանատնից գալիս:

Խեղճացավ Քանգին:

* * *

Ուրիշ օրեր եկան, արև օրեր:

Կոռնկները եկան, սևահողը տաքացավ, սևահողում արևի տակ ծլեց ոսկե հատիկը:

Քանգին գոհ կլիներ, եթե միայն կոռնկները գային, և արևի տակ հատիկը ծլեր:

Գարունքին եկան հողերը շափելու, հավասարելու: Գյուղը մրջնոցի պես էր, գարունքին զարթնած մրջնոց:

10

Ժողով կար, աղմուկ, աղաղակ:

— Վեր թափեք Քանգու հողերը, հավասար բաժին անենք,— կանչում էին ժողովում, Քանգու երեսին շարտում՝ «քյասիբ ուտող»:

Եվ բարակ շղթաներով շափեցին հողերը, ապառաժն ու այգին, ջրովին ու դեմին: Չափեցին, նկարեցին, բաժին արին:

Քանգու հողերը սելավի բերանն ընկան, պարարտ հողերը թռան ձեռքից, հեռացող կոռնկի պես, և մնաց այգու կեսը, մի օրավար ջրովի, երկու կտոր վարելահող: Շունչը քիչ էր, այդքան էր հասնում:

20

Երբ շղթաները զնգալով կտոր-կտոր արին Քանգու հողերը, նրան այնպես թվաց, թե սիրտն են կտրատում: Բողոքեց, սպառնաց, գանգատվեց, հռհռացին, ծաղրեցին:

Քանգին հենվեց այգու քարապատին, նայեց շափարարների հեռացող խմբին:

Մայրամուտ էր, իրիկնամուտ էր արդեն:

* * *

Հենց նույն գիշերը Քանգու տանը մի քանի հոգի՝ աղզ ու բարեկամ ժողովի նստեցին: Քանգին էր կանչել իր ճանաչ մարդկանց՝ մի հնար գտնելու, հողերի բաժանումը խանգարելու, միևնչև՝

30

— Մեզ համար մի լույս ծագի,— ինչպես ասում էր Քանգին:

— Թողնեն իմ ձեռքով հողերս քաժանեմ: Մեկը քեզ տամ. ազգես ինձ, ինչո՞ւ խալիսը ուտի, ես դատեմ...

Մինչև կես գիշեր հնար էին փնտրում, խափանման միջոց:

— Քանգի ամի, մենք որ քողոք տանք, շեն ընդունի, վերջը լավ շի լինի,— ասաց մեկը:— Եկ կանանց կազմակերպենք, թող նրանք անեն:

10 Հենց այդ գիշեր էլ կանչեցին մեկին, որին Քանգին խոստացավ շորս փութ ցորեն, և դիմումը գրվեց նախ միայն «կանանց միության» կողմից, բայց վերջում անհրաժեշտ համարվեց, որ տղամարդիկ էլ ստորագրեն:

Եվ գրագիրը թղթի վրա շատ պարզ գրեց նախ «ՀՍԽՀ», ապա ներքևը՝ «Մրվան գյուղի կանանց և տղամարդկանց միություն»:

Աքլորականչին ժողովը ցրվեց: Քանգին ճրագի տակ նայում էր գրած թղթին, որի վրա ներկա եղողներին մի քանիսը բութ մատով կնքել էին «վասն անգրագիտության»:

20 Մյուս օրը Քանգին գյուղում մարդու էր ման գալիս, կողմնակից ճարում, համոզում, որ թղթին ձեռք քաշեն: «Մրվան գյուղի կանանց և տղամարդկանց միության» դիմումը Քանգին հատուկ մարդով քաղաք ուղարկեց:

• • •

Երկար ժամանակ շանցավ:

Մի իրիկուն, երբ Քանգին տնքալով շորերն էր հանում քնելու, զգիրը կտուրից ձեն տվեց նրան, թե շտապ գործով կանչում են գյուղխորհրդից: Քանգին զնաց՝ ճանապարհին հազար միտք անելով, հազար կասկած: Դիմումը մերժել էին, հողաքաժանումը հաստատել:

30 — Քանգի ապեր, գործդ հիմա էլ կանանց հետ է, միանում ես նրանց հետ,— ծիծաղելով ասաց նախագահը,— Գիշ, տեղդ հանգիստ նստիր, Քանգի ապեր, էն վաղ էր, որ...

Թանգին փողման տուն վերադարձավ:

Պառկեց, քունը շտարավ: Միտք էր անում, միտն էր քերում պարարտ հողերը, հոր պատվիրանը՝

— Աչքդ բաղին պահիր, — ոսկիները, որ տվեց հայրը մեռնելուց առաջ, բորբոսնած մուրհակները և երկաթե օղերով պսպղուն շղթան, որ բաժանեց սևահողը, այգին:

Թանգու աչքերն ընկան պատից կախած խալուն, որ տարիների ընթացքում խունացել էր արդեն, հնացել:

ԳԱԼՈՒՍՏԻ ՎԻԿԸ

1

Եթե գյուղում մի ժողով լիներ, և եթե Գասպարենց Գալուստը տանը լիներ, անպատճառ պիտի գնար ժողովի:

— Գալուստ, էդ ի՞նչ կա ժողովում, որ վազ ես տալի,— հարցնում էին երբեմն,— չունեոր մարդ ես, տանդ նստի, քո աղքատության ետևից ընկի: Ժողովն ի՞նչ կտա քեզ...

10 Գալուստը բեղի տակին ծիծաղում էր, ուսերն իրար տալիս ու ասում.

— Ժողով ա էլի, մի բան լսում ես, մի բան սովորում: Թագա մարդիկ են գալիս, դեսից-դենից խոսում են, գյուղացու համար են ասում:

Ժողով գնալը Գալուստին չէր խանգարում: Աշխատելիս՝ երեք մարդի գործ էր շինում: Գյուղի գործերին ակտիվ մասնակցում էր: Ազատ ժամանակ էլ գնում խրճիթում նրստում, գիրկապ անելով կարդում էր, թե ի՞նչ է կատարվում ուրիշ երկրներում, ո՞րտեղ կռիվ կա, մարդիկ ի՞նչ նոր բաներ են հնարել:

20 Մի բան որ դուր գար, երկրորդ անգամ էր կարդում, գլուխն օրորում և քթի տակ ասում.

— Տես ի՞նչ հունարներ են մշանց տալի, է՛յ գիդի ուում... Ապրելը հեշտանալու ա:

Դուր եկած բանը կպատմեր գյուղացիներին:

— Կազեթում էսօր գրած էր՝ մի տեսակ հնար են գտել, որ ինչ վախտ քեֆդ անձրև ուզի, ամպերից վեր կբերեն...

Գալուստը գիտեր, որ գյուղում նորից անհավատ, պապենական աղաթիւն պիտի կպած մարդ շատ կա: Այդպիսի բաներ որ պատմում էր, նրանք չէին հավատում, սկսում էին հռհռալ:

— Էլ ի՞նչ կա կազեթում... Կարող ե՞ն արևի՛ց շիրուխս վառեն,-- ասում էր մեկը:

— Ասում էլ էին, թե ղավոդում կովեր են շինում,— ծաղրում էր մյուսը,— ո՛ւր ա, կլինի՞ իսկի, կհավատա՞ս դու, Ռուստամ ապեր...

— Չէ՛, ո՛նց կլինի, մարդը չի՛ կարա ստեղծող լինի...— 10
ասում էր Ռուստամ ապերը և Գալուստին խրատ տալիս.

— Էդ կազեթը քեզ հաց չի տա, Գալուստ... Գու տավարիդ հոգսը քաշի, էս ա առաջդ ձմեռ ա գալիս:

2

Գալուստը գիտեր՝ գյուղում ով ի՛նչպես է ապրում: Ռուստամ ապերը գյուղի ունեորններից էր, բայց նրա տանն էլ մի ձեռքից ավելի փոխնորդ չկար:

— Կեղտոտ են ապրում, ցիխի ու թրիքի մեջ. հիվանդանում են: Հնար էլ չկա մաքուր լինելու, գյուղացին աղքատ ա, ուժը չի պատում: 20

— Մեկ ծնվելիս են լողանում, մեկ էլ մեռնելիս,— մտածում էր Գալուստը, և դրուժյունն ավելի վատ էր թվում նրան, երբ մտաբերում էր այն, ինչ տեսել էր ուրիշ երկրներիում, որտեղ զինվորական գերի էր:

Ժողովներում, երբ քաղաքից եկածները խոսում էին հազար ու մի բաների մասին, նորուժյուններ պատմում, Գալուստն ուշադիր լսում էր, մտքում ծանր ու թեթև անում նրանց ասածը և որոշում, թե ո՛րն է գյուղին հարմար և ո՛վ է ավելի լավ մոտենում գյուղի ցավին:

Ինքն էլ էր խոսում:

— Այ, մեկ համար քաղնիք ա հարկավոր, կեղտի մեջին ենք. մեր տավարը խոտ չունի, ճանապարհ չկա... Ցավեր շատ ունեմք, բայց մեծ ցավը մեր տավարն ա: Գեղացին վար ու ցանքով ա ապրում կամ անասունով: Գե, մեր 30

տեղը վար ու ցանքի համար չի, մենք անասունով ենք ապրում:

Գյուղացիք գլխով համաձայնության նշան էին տալիս, իսկ քաղաքից եկած ընկերը գրում էր Գալուստի ասածները, որ քաղաքում իմաց տա, թե գյուղն ի՞նչ ցավ ու հոգս ունի:

3

Ամեն անգամ ժողովներից հետո գյուղացիք խումբ-խումբ հավաքված ծանր ու թեթև էին անում բոլոր լսածները և իրենց գյուղն աղքատությունից դուրս բերելու մասին զանազան կարծիքներ հայտնում:

Ոմանք համոզված էին, թե գյուղն այդպես էլ կմնա, քանի որ տնտեսությունը լավացնելու հնարավորություն չկա: — Էս սարերում ու ապառաժներում ի՞նչ կարելի է անել,— ասում էին նրանք:

Բայց կային ուրիշ տեսակ մտածողներ էլ:

— Այ, մալականը մեզ օրինակ: Տեսնո՞ւմ եք, ի՞նչ կոմեր են պահում: Նրանք վաղուց արտել են կազմել, գործարան շինել, լավ պանիր ու յուղ են պատրաստում, և իրենք էլ կուշտ ու մաքուր ապրում են...

20 Մալականների օրինակին հետևելու միտքն ավելի հնարավոր ու իրագործելի թվաց, երբ մի անգամ քաղաքից եկած ագրոնոմը ժողովում խոսեց անասունների, նրանց կերի, պանրի ու յուղի գործարանների և արտելների կազմակերպության մասին:

— Ձեր գյուղում,— ասաց ագրոնոմը,— ներկա նեղ վիճակից դուրս գալու և քիչ թե շատ բարեկեցիկ կյանք ստեղծելու միակ միջոցը անասնապահության զարկ տալն է: Դրա համար դուք պետք է երեք բան անեք.

1. Վիկ և ուրիշ տեսակի խոտեր ցանեք, որ ձեր տավարը 30 կուշտ լինի և շատ կաթ տա:

2. Արտել կազմակերպեք, նրա միջոցով վարկ ստանաք ու գործարան շինեք— ընտիր տեսակի պանիրներ ու յուղ պատրաստեք, որ լավ գնով ծախեք ու հոգաք ձեր ցավերը:

3. Կամաց-կամաց լավացնեք ձեր տալարի տեսակը, ինչպես մալականներն են արել:

— Էդ մինը գյուղում գլուխ գալու բան չի,— կասկած հայտնեցին մի քանիսը:

— Ուրիշ գյուղերում որ գլուխ են բերել, մեզ նման մարդիկ չե՞ն,— առարկեց Գալուստը:

Այս անգամ Գալուստի շուրջը հավաքվեցին մի քանի ուրիշ աչքաբաց գյուղացիներ և գյուղի երիտասարդներից շատերը:

Խոսեցին երկար ու բարակ, հաշիվ արին, թե գյուղում 10 քանի՜ կո՛վ կա և ո՛վ կմիանա արտելին: Յուրաքանչյուր արին և որոշեցին կամաց-կամաց գյուղում սրա-նրա հետ խոսել ու մարդ ուղարկել քաղաք՝ արտել կազմելու համար:

— Գալո՛ւստ, դե էդ քո բանն ա, քեզանից բացի ոչ ո՛վ չի կարա,— ասացին ընկերները:

Գյուղի գործ էր, գյուղն առաջ տանելու, լուսավորելու համար էր:

Գալուստը համաձայնեց:

4

Մյուս օրը լուսաբացին Գալուստը ճանապարհ ընկավ: 20 Հովին հեշտ էր ճամփա գնալ: Երբ արևը ելավ ու քարերը տաքացան, Գալուստի ճակատից քրտինք կաթեց: Քայլում էր ճամփով, մեջքին մի աղլուխի մեջ ճամփի պաշար, քայլում էր և միտք անում էլի իր հին միտքը, թե ապրելը ե՛րբ է հեշտանալու...

Ճամփով սելվորներ էին գնում, ոտավոր, ծանոթ գեղական մարդիկ: Մեկը մի թաշկինակ ձու էր տանում քաղաքում ծախելու, մյուսը՝ երկու հավ, երրորդը՝ մի իշաբեռ խոտ: Ամենքն էլ հոգս ունեին, մեկը նավթ էր առնելու, մյուսը՝ շաքար, բլազ:

Ինքն իրեն թոնթորալով, մտքի հետ կոխով տալով գնում էր ճամփան, մտքում Ռուստամ ապոր հետ կոխով տալիս, նրան համոզում, որ արտելին անգամ գրվի, գեղով միանան, լավ բուղաներ առնեն, խոտ ցանեն:

30

— Ոսկորը պնդացել ա, էլ ծովիլ շի,— մտածեց Գալուստը Ռուստամ ապոր մասին, փափախը հանեց, սրբեց ճակատի քրտինքը: Միտն եկավ Ռուստամ ապոր խոսքը, թե՛ «աքինչի օլ, բիլանջի օլմա» (ոանչպար եղիր, գիտուն մի՛ լինիր), միտն եկավ և ծիծաղեց բեղի տակ:

5

Գալուստը քաղաքում ամեն ինչ իմացավ՝ գյուղին և իրեն հետաքրքրող հարցերի մասին:

Բանկը խոստացավ վարկով փող ու գործիքներ տալ, եթե նրանք արտել կազմեն և յուղի ու պանրի գործարան հիմնեն:

10 Գործարանի շենքի համար խոստացան հազար ութլի բաց թողնել և, դրանից բացի, այդքան գումարի էլ մեքենաներ ու գործիքներ: Տված վարկը բանկը հետ պիտի ստանա 2—3 տարվա ընթացքում, որից հետո դործարանը յուր սալք ու կարգով կպատկանի գյուղի արտելին:

Գալուստը գյուղ տանելու համար վերցրեց արտելի կանոնադրությունը:

Նա փնաց նաև գյուղատնտեսական պահեստը, տեսավ սերզատ, յուղհան և ուրիշ մեքենաներ, ամեն տեսակի սերմեր ու ծանոթացավ դրանց գների հետ:

20 Բայց այդ օրը Գալուստի համար ամենից կարևորն ու արտասովորն այն էր, որ ագրոնոմի խուրհուրդներով գնեց 2 փութ վիկ կոշված խոտի սերմից:

Եվ երբ եկած ճամփով Գալուստը գյուղ էր դառնում, նա ծանոթ սելվորին պատմում էր վիկի մասին:

— Անունը լսել էի, համա չէի տեսել: Ասել էին ինձ, որ վիկը ցանովի խոտ ա, մեր սարերում առանց ջրի բսնում ա, շատ էլ խոտ ա տալի...

— Առել եմ երկու փութ, տանեմ, մի լավ հող տնեմ սարում, սերմեմ, տեսնենք՝ ի՞նչ ա նշանց տալի: Թե որ լավ եղավ, եկող տարի շատ եմ ցանելու, գեղն էլ կսուլորի ինձանից:

30

— Էդ ի՞նչ խոտ ա. էդ հո գտած ա, որ առանց ջրի սարում բսնում ա: Քանի՞ տարվա խոտ ա, — հարցրեց սելվորը:

— Յոնջի նման շի, ամեն տարի պիտի սերմես:

— Սերմը ինքը տալիս ա՞:

— Կարելի աս, կտա,— պատասխանեց Գալուստը, և ինքն էլ կասկածեց: Մոռացել էր ագրոնոմից հարցնի այդ մասին: Սելվորը հետաքրքրվեց: Գալուստը պարկը բաց արեց, վիկի սերմերը ցույց տվեց նրան:

— Էս հո մեր գլուխն ա,— ասաց սելվորը զաւմացած:

— Հա, քայց սա լավ խոտ ա,— պատասխանեց Գալուստը:

Հետո խոսք ընկավ այն մասին, թե մեր սարերում, մեր 10 դաշտերում ինչքա՛ն տեսակ-տեսակ բույսեր ու խոտեր կան, որ մինք դեռ չենք օգտվում, անպետք խոտ ենք համարում, այնինչ ուրիշ տեղեր, ուրիշ երկրներում ցանում են, սերմերը հավաքում, մեկից դեղ են շինում, մյուսից՝ մի ուրիշ բան:

— Մենք էլ տուվար պահող ե՞նք,— ասեց Գալուստը սելվորին,— վո՞վի լեզուն մենք ի՞նչ գիտենք: Կեր չկա, որ ուտի, ձմեռը դարման ենք տալիս. սովածությունից խեղճ հայվանի կաթն էլ ցամաքում ա, կողքաճաղերը մին-մին կհամարես: Մի կովը մի տոնն կպահի, եթե լավ կարողանաս պահել:

20

Լսում էր սելվորը, եզներն օրորալեն քաշում էին սայլը, անիվները ճոճոտում էին: Գալուստը պատմում էր իր տեսած կովերի մասին, կաթնատու, ամեն մինը մի տոնն պահող:

— Խոտ չկա, ամենքի գլուխը խոտն ա: Խոտ որ շատ ունենաս, կով շատ կպահես: Շատ էլ չպահես, եղածին լավ կեր կտաս: Հայվանն էլ որ ուտի, տեղը լավ լինի, լավ էլ օգուտ կտա...

Բայց սելվորի մտքինը վիկն էր: Նա հարցրեց, թե օրավարում քա՛նի փութ են սերմում և ո՛նց են ցել անում վիկի համար:

30

— Մի հաշիվ ա, ցորենի հետ համեմատ ա, փութի տեղը մի փութ վիկ են շաղ տալիս, տափանում, մեկ էլ գալիս, հարում:

Ճանապարհը քարձրանում էր սարն ի վեր, իջնում, էլի քարձրանում: Կամուրջին որ հասան, սայլը կանգնեց, Գա-

լուստը պարկը շալակեց, որ կածանով բարձրանա դեպի գլու-
ղը:

— Շեն մնաս,— ասաց նա սելվորին:

— Գալուստ, էդ վիկի մասին ինձ իմաց տուր. թե լավ
բերք ստանաս, ես էլ եմ սերմելու:

Մութ էր, երբ Գալուստը պարկն ուսին տուն մտավ:

— Էդ ի՞նչ ա պարկի մեջ,— հարցրեց մեծ տղան:

— Խոտի սերմ ա,— պատասխանեց Գալուստը,— Սանդ
աղբյուրի գլխի օրավարում պիտի սերմեմ:

10 Հարցրեց, թե ջրե՞լ են կովը, դարման տվե՞լ են:

— Դարմանն էլ պրծնելու վրա յա,— ասաց կինը:

— Ոչինչ, մի ճար կանենք:

Գալուստը սաստիկ հոգնած էր՝ շորերը հանեց ու քնեց:

6

Առավոտյան եկան ընկեր ու հարևան, Գալուստը պատ-
մեց, թե ի՞նչ են ասել քաղաքում արտելի մասին:

— Էդ հո հարմար պայման ա, մաշինեքը տալիս են, փող
էլ կա, մենք էլ կաշխատենք էլի,— ասաց մեկը:

Խոսեցին, թե ե՞րբ ժողով անեն:

20 — Պետք ա շուտ անենք, հրես առաջներիս մայիս ա,
թե որ հիմա շանենք, պետք ա մնա եկող տարի,— ասաց
մեկը:

— Էդ շուտով գլուխ գալու բան չի: Մինչև ժողով անես,
մինչև հաստատեն, մաշինը բերես, տարին կանցնի:

Գալուստը լուռ լսում էր: Շատ խոսեցին: Երկու կողմ
կար. մեկը հենց իսկույն էր ուզում, մյուսն էլ կասկածում էր,
թե այդ գլուխ գալու բան է:

Բայց Գալուստի ասածը բոլորի համար էլ ընդունելի եղավ:

30 — Եկեք արտելը հիմի կազմենք, շենքի հոգս քաշենք,
վարպետ ճարենք, գնանք մաշինեքը բերենք: Էդ որ պատ-
րաստ լինի, եկող գարունքին կաթը կհավաքենք, պանիր կա-
նենք:

Վերջը Գալուստը ցույց տվեց քաղաքից բերած վիկի
սերմը:

— Մի տեսե՞ք՝ ի՛նչ եմ բերել, սրա՛ն մտիկ արեք: էս էն վիկն ա հա՛, էն որ ձմեռը կազեթում գրած էր, ագրոնոմն էլ ասեց, թե անշուր տեղի խոտ ա, սար տեղեցրում լավ բերք ա տալի...

Հարց ու փորձ արին, սերմը տեսան, գինը հարցրին:

— Գալուտ, բա հիմա ուշ չի՞, հրես ապրիլը վերջանում ա:

— Վնաս չունի, Սանդ աղբյուրի գլխին մի օրավար տեղ ունեմ. կտանեմ նրա վերի ծերին կսերմեմ: էնտեղ խոտը նոր ա կանաչում, տեղը սար ա:

10

— Ռուստամ ապերը որ իմանա, էլի ասելու ա, թե Գալուտը օյին ա սարքում:

— Ասում ա, թող ասի: Խոտը հարելիս ես նրան կասեմ: էս խոտն ա մեր գյուղը շինելու:

Մյուս օրը գութանը Սանդ աղբյուրի գլուխն էր վարում: Գութանավորն էլ չէր հավատում. վարում էին և ծիծաղում Գալուտի վրա:

— Ժանգյալ խոտ ա, սերմը ժանգելու յա, մեր հողերը ապականի, էդ ի՛նչ ա, որ բերել ես: Թողնեիր հողդ մի տարի էլ դինջանար, ցորեն ցանեիր,— ասաց մաճկալը:

20

— Կարկուտն էլ գա՛ր, ցորենս թակե՛ր կամ մուկը գար կրծե՛ր, մնայի սովա՛ծ: Վարի՛, վարի՛, էդ ակոսն էլ ծրի, հե՛րիք ա, երկու փութ ա սերմս:

Ծղներն արձակեցին, Գալուտն ինքը շաղ տվավ սերմը: Հերկը տափանեցին՝ սերմը ծածկեցին հողով:

Գալուտը կածանով իջնում էր տուն ու միտք անում արածի մասին: Պիտի բսնե՛ր վիկը, օգուտ պիտի տա՞ր, թե՞ պիտի չորանար, կորչեր:

Ինչքա՛ն պիտի խոսեին գյուղում այդ մասին, ինչե՛ր պիտի ասեր Ռուստամ ապերը Գալուտի երեսին, եթե վիկը չժլեր, բերք չտար...

30

Իսկ եթե ծլի՞, շա՛տ խոտ տա՞...

7

Աշխատանքի ետուն ժամանակն էր: Ցանքը պրծել ու ցե-

լի հետևից էին ընկել: Տավարը սար էին տանում: Լուսաբացից մինչև իրիկուն մրջնոցի պես աշխատում էր գյուղը. մեկը սարում, մյուսը բոստանում կամ արտում: Ցերեկով գյուղում միայն ծերերն էին մնում. նրանք էլ անգործ չէին նստում: Հավաքվում էին պատի տակ կամ ծառի շվաքում նստում, որը թոռան տրեխն էր կարկատում, որը գերանդի էր սրում. որն էլ թազբհը ձեռքին քաշում էր և անցած-գնացած օրերից պատմում: Մերերը լսում էին պատմությունը հին, մտաբերում օրերն անցած, արարքները ջահել, երբեմն էլ թառանչով ասում.

10

— Հե՛յ գիտի ջահելութուն...

Գալուստն է՛լ էր աշխատում մյուսների նման՝ լուսաբացից մինչև իրիկուն:

Շաբաթը մի անգամ, երկու անգամ, պատահած ժամանակ է՛լ ավել Գալուստը բարձրանում էր Սանդ աղբյուրի գլուխը տեսնելու, թե ինչպես է ծլում, մեծանում վիկը.

Առաջին շաբաթը բան չերեաց. ծիլեր չկային: Խո՞ր էր գցել, թե՞ ուրիշ պատճառ կար, վիկը չէր երևում: Գալուստը միտք էր անում, գուցե սերմն է վատ, գուցե ինքն է սխալ արել: Բայց երբ փորեց հողը և տռզած սերմերն ու սպիտակ ծիլը տեսավ հողի տակ, սիրտը լցվեց, ուրախացավ, սրտում էլ երեաց հույսը ծլի պես:

20

— Չէ՛, պիտի բսնի՛...

Մի շաբաթ հետո արտը կանաչին էր տալիս, սև հողը չէր երևում: Գալուստն ուզեց անպետք խոտը քաղհան անի. որ վիկն ավելի լավ աճի, բայց միտն եկավ ազրոնոմի խոսքը.

— Վիկն ուրիշ ժանգյալ խոտերի խեղդում է, չի վախենում...

• — Թող խեղդի, ձեռք չեմ տալու...

30

8

Միայն Գալուստը չէր հետաքրքրվում վիկով. ուրիշներն էլ էին գալիս նայելու: Արտի կողքով մի կածան էր ընկած: Անցնող դարձող էր լինում: Հենց որ Գալուստի հողին էին հասնում, կանգնում էին, նայում:

— էս ա, հա, Գալուստի օյինն ա...

86

Շատերը խոտի անունն էլ չգիտեին, հենց այդպես էլ ասում էին՝ Գալուստի օյինը:

Առաջին շաբաթը, երբ խոտը չէր ծլել, ցիլը դեռ սևին էր տալիս, ծաղրում էին, ծիծաղում:

— Այ թե հացդ կերար, հա՛, Գալուստ...

Կամ գնում էին գյուղ, Գալուստին փողոցում տեսնելիս ասում.

— Ե՞րբ ես հարելու, Գալուստ, խոտդ պառկել աս, փշանում աս:

Ռուստամ ապերը հո մատի փաթաթան էր շինել.

— էս հասակի մարդ եմ, տե՛սել չեմ, հիմի նոր խոտ են ասում: Մեր հողն ընդունիլ չի՛, գո՛ւր աս, Գալուստ:

Գալուստը լռում էր, պոռշները հուպ տալիս, բայց մըտքում մի խոսք կար.

— Սպասի՛, Ռուստամ ապեր...

9

Հունիսն էր. վիկը բոյ էր քաշել, աճել փարթամ, տերևները մուգ-կանաչ, ցողունը բարակ, փափուկ: Կանաչի մեջ կարմրավուն ծաղիկներ կային, ասես մեկը գունավոր քարեր էր շաղ տվել կանաչի վրա: Վիկը ծաղկել էր:

Սանդ աղբյուրի գլուխն ուխտատեղ էր դարձել: Գյուղում շատ անգամ էին խոսում Գալուստի օյինից: Բայց կամաց-կամաց մոռացվում էր օյինը, քանի բոյ էր քաշում խոտը: Առանց ջրելու բուսած վիկը խոստանում էր առատ բերք, և բերքի հետ բերնե բերան անցնում էր Գալուստի վիկի պատմությունը:

Գնում էին, պոկում, նայում ծաղիկներին:

Վիկը շսանրած մազի պես մճճվել էր, իրար խառնվել: Մի բուռ որ քաղում էին, ձգվում էին ցողունները, ասես՝ ծալվե՛ծալ էր պառկած:

— Գալուստ, սեյրակ սերմած լինեիր, լավ կլիներ,— ասում էին նրանք, որ մայիսին կասկածում, ծիծաղում էին:

— Լեղուն դեռ չեմ իմանում, եկող տարի սեյրակ կանեմ,— ասում էր Գալուստը:

Ռուստամ ապերն էլի չէր հավատում: Գալիս էին ու

10

20

30

նրան պատմում Գալուստի վիկի մասին: Մի օր էլ տավարածը սարից գալիս մի քիչ քաղց, բերեց ցույց տալու: Ռուստամ ապերն էլ նստած էր ժամի պատի տակ: Աչքի տակով նայեց, շոշափեց:

— Հը՞, Ռուստամ ապեր, հիմա ի՞նչ ես ասում, տես ի՞նչ բոյ ունի է՞,—ասեց մեկը և ցողունը մեկնեց:

Ռուստամ ապերը նայեց ցորնաբոյ ցողունին, գլուխը թափահարեց:

10 — էս խ՞ոտ, համա ի՞նչ անես, որ ապրանքն ուտելու չի,— ասաց նա բանիմաց մարդու նման:

Շատերը հավատացին, էլի կասկածեցին, գուցե ճիշտ է ասում Ռուստամ ապերը: Երևի մի բան կա, որ խոտն այդքան բոյ է քաշել: Հին խոսք է, թե պողատու ծառը բոյով չի լինի:

Ռուստամ ապոր խոսքը Գալուստի ականջին հասավ: Էլի պոռը հուպ տվավ, բեղի տակ ծիծաղեց:

— Սպասի՛, Ռուստամ ապեր, էլի սպասի...

10

20 Գալուստը գիտեր, որ վիկը շուտ է հասնում: Ցանելուց երկու ամիս հետո կամ թե մի տասը օր ավել, վիկն արդեն կարելի է հարել: Նրան ասել են, որ հարկավոր է վիկը փափուկ ժամանակ հարել, որ ցողունը կոշտ չլինի: Այդպես համ տավարն է ախորժակով ուտում, համ էլ ցողունն ու տերևները խուրձ կապելիս շեն ջարդվում, շեն փշրվում:

— Ափսոս, որ շուտ շեմ ցանել: Հողը նոր տաքացած ժամանակը ցանած լինեի, հիմա արդեն խոտը հավաքած կլինեի:

30 Գալուստին ասել էին, որ երկու տեսակ վիկ կա, մեկը աշնանն են ցանում, մեկն էլ՝ գարնանը: Գալուստի ցանածը գարնան վիկ էր:

— Մեկ էլ ոտս որ քաղաք ընկնի, էն մի տեսակից էլ պիտի բերեմ: Իմ խելքով՝ աշնան վիկը մեզ ավելի ձեռնտու ա,— ասում էր Գալուստն իր ընկերներին, որոնցից մի քանիսն արդեն խոսք էին տվել եկող տարի վիկ ցանելու:

— Մեր օգուտի թշնամին ե՞նք,— ասում էին իրար,—
եկել մեր դռանը շոքել ա, շվերցնե՛նք:

Գալուստը պատմում էր, որ լսելով՝ ուրիշ երկրներում
վիկով հողերը պարարտացնում են: Վիկը ցանում են, հենց
որ բոյ է քաշում, ուզում է պառկի, վարում են վիկի տե-
ղը, խոտը հողի տակովն անում, իրար խառնում: Հողի մեջ
վիկը փտում է և հողը պարարտացնում:

— էդ հենց մեզ համար ա: Փեյին շունենք, ճամփե-
քը դժվար, տեղներս սար, հողերը հեռու,— ասում էին նրանք:

— Թող մի եկամուտն իմանամ, եկող տարի էդ էլ եմ 10
փորձելու,— ասում էր Գալուստը:

— Չէ, Գալուստ, դու դեռ շատ հունարներ ես նշանց
տալու մեզ:

11

Մի օր էլ Գալուստը վիկը քաղեց: Վիկն արդեն հասել էր՝
ներքի տերևները դեղնել էին:

Տոն էր Գալուստի համար, մեծ ուրախություն: Արևը
խանձում էր վերևից, ինչպես առաջ, երբ ծանոթ սելվորի
հետ վերադառնում էր քաղաքից, պարկի մեջ վիկի սերմը:

Քրտնել էր Գալուստը, բայց գերանդին օձի պես սլլում էր 20
վիկի դալար ցողունների մեջ: Գերանդին պսպղում էր արևի
տակ, վիկի փնջերը թափվում էին իրար վրա:

Մի շերտ որ հարեց, ծայրին հասավ, ետ նայեց ու բեղի
տակ քմծիծաղ տվեց...

— Ռուստամ ապերն էստեղ լիներ, աչքով տեսներ...

Արևը խանձում էր վերևից: Սանդ աղբյուրի գլխին բեզա-
րած Գալուստը բաց արեց պաշարը, կերավ, աղբյուրի ջրից
խմեց, էլի գնաց հարած խոտը տեսնելու:

Նրան թվաց, թե ինքն ամենից բախտավոր մարդն է աշ-
խարհում, թե հիմա մի քիչ հեշտ է լինելու գյուղում ապրելը: 30

Առավոտն եկավ, հարածը մյուս երեսին դարձրեց, որ
չորանա: Արևը թեքվում էր, երբ նա սկսեց խորձ կապել:

Ճամփով անցնող գյուղացիք այդ օրն ավելի շատ էին
կանգնում Գալուստի արտի մոտ, կռանում, վիկի ցողուն-
ներին նայում:

— Տե՛ս է՛, արտում ժանգյալ խոտ էլ չի մնացել: Մեկի արմատն էլ ա շի երևում: Ա՛յ խոտ ա հա՛... —ասում էին ընկեր ու հարեան:

Նորից էին հարցնում, թե քանի՛ փութ է սերմել, սերմը ո՛րտեղից կարելի է ճարել, հաշիվ էին անում, վարն էլ, սերմի գինն էլ, հարողի փողն էլ, էլի մեկին երկու օգուտ էր մնում:

Գալուստը կ՛ խուրձ էր կապում, կ՛ պատմում, թե ո՛վ է իրեն պատմել վիկի մասին, թե առաջին անգամ ո՛ր կազմ-
10 թում է կարդացել, սերմը որտեղի՛ց կարելի է առնել: Պատմում էր և խրձեր կապում:

— Էս ձմեռ երեսկ քու տավարին, Գալուստ, մերը շոր դարման ա ուտելու, բոնը՝ վիկի խոտ:

Մութն ընկնելու վրա էր, երբ Գալուստը գործը վերջացրեց և սկսեց խուրձերը մեկ-մեկ համարել: Հարյուր երեսուն խրձից երկուսն էր պակաս:

— Էն երկու խուրձն էլ սրա-նրա պոկածը թող լինի:

Կիսամութին, Գալուստը շուխան ուսին գցած, իջնում էր կածանով և մտքի հետ հաշիվ անում, թե մի օրավարի տեղն
20 ինչքա՛ն խոտ կտար, մի դեսյատին՝ ինչքան: Հաշիվ էր անում, ծախսերը դուրս դրում, և էլի տակին մնում էր ավելի, քան թի ցորենի արտն է տալիս սարի գյուղերում:

Գութանավորը ծիծաղում էր, երբ վարում էր վիկի տեղը: Նույն օրը գութանը վիկի կողքին մի արտ էլ էր վարել: Նրա տեղը ցո՛րենն էր ցանել:

— Համա կլիանա հա՛,— մտածեց Գալուստը:

Արտի մի մասին կարկուտն էր արդեն խփել, իսկ կարկուտից ազատ մնացած մասում ցորենը բոյ շէր քաշել, սեյրակ էր բուսել:

30

12

Վիկը տուն կրելիս շատերն էին խուրձերին նայում, մատնեքով խոտը տրորում: Հարցնում էին, թե քանի՛ խուրձ է, ոմանք շէին հավատում ու Գալուստին կանգնեցնում էին:

— Ա՛յ մարդ, ձեր առաջով շպիտի անցնե՛մ,— ասում էր Գալուստը,— շես հավատում, դե կանգնի մեկ-մեկ համարի:

90

Մի բեռ էլ բերելիս Գալուստի աչքով ընկավ Ռուստամ ապերը, որ ժամի պատի տակ նստած թագրեհ էր քաշում: Միտըն ընկավ Ռուստամ ապոր խոսքը:

— էս խո՞տ... տեսնենք մեր տավարը կուտի՞...

Գալուստը նայեց Ռուստամ ապոր կողմը: Պատի տակ նստոտած մարդիկ տեսան այդ, հասկացան, թե ի՞նչ է ուզում ասի Գալուստը:

— Ռուստամ ապեր, մեր հողը կընդունի՞, թե չէ,— հարցրեց Գալուստը ծիծաղելով:

Ռուստամ ապերը չպատասխանեց: Նա դեռ երեկ էր լսել, 10 որ Գալուստը հարյուր քսանութ խուրձ խոտ է հարել իր փոքրիկ տեղից: Լսել էր և չէր հավատացել: Բայց առավոտյան նա արդեն առաջին բեռն ու մեծ խուրձերը տեսել էր:

Հանկարծ պատի տակից մեկն ասեց.

— Չէ՛, չէ՛, էդ հավատալի ա. հիմա դու էն ասա, էդ վիկի խոտը ձին կուտի՞...

— Բերենք փորձենք,— վրա բերեց մի շահել:

— Փորձենք:

— Ռուստամ ապոր ձին բերեք,— ասաց շահելը:

Ռուստամ ապերն ուզեց սաստի, արգելի, բայց ամենը 20 վրա տվին, հռհռացին, թե անպատճառ Ռուստամ ապոր ձին պիտի ուտի, որ հավատան:

Գալուստը բեռը վեր դրեց, բերեց մի խուրձ դրեց ճամփի մեջտեղը:

Ռուստամ ապոր ձին բերին: Ձին մոռթքը մի կողմից կոխեց խուրձի մեջ և սկսեց ախորժակով ուտել:

— Ա՛, ոնց ա գելի պես ուտում է՛,— ասաց մեկը:

— Ա՛յ քեզ խոտ...

Գալուստը խոտը բարձեց, գնաց: Մի անգամ էլ ետ նայեց Ռուստամ ապոր կողմը, ծիծաղելով հարցրեց. 30

— Ռուստամ ապեր, կերա՞վ, թե՞ չէ՞...

Ռուստամ ապերը չպատասխանեց...

Իրիկունը Գալուստի կիներ զարմանքով էր պատմում, թե ինչքան ծանր էին խուրձերը: Նա էլ սկզբում չէր հավատացել:

Քալուստը տրեխներն էր հանում և միտք անում, թե
վաղը քար պիտի բերվի արտելի համար:

Կինը մտածեց մի քիչ, հետո թե՛

— Ինչքան զարմանք բան կա՛ աշխարհում...

— Դեռ ո՛րտեղ ենք, — ասաց Քալուստը...

ԳՐՈԳՍՊԱՆ ԳԵՎՈՆ

1

Ամեն առավոտ խանի դարպասը բացվելիս, ամենից առաջ դրոգապան Գևոն էր դուրս գալիս: Եվ այնպես արագ, կասես հրապարակի վրա ուղևորները վաղուց էին սպասում նրան:

— Կամա՛ց, տո՛ւ, տակովն արի՛ր,— կասեր խանի տերը, երբ Գևոն դրոգի վրա նստած դուրս գար խանից:

— Կրակի հո շես գնում,— կավելացնեն նա: Իսկ դրոգը, փոշու ամպի մեջ կորած, գոգոալով հրապարակի լայնքն էր կտրում:

10

Գևոն առավոտ կանուխ մի քանի պտույտ էր անում, դրոգի վրայից ձայն տալիս.

— Մի հոգի, վռազ Երևան էթացող...

Եվ երբ փոքրիկ քաղաքում առավոտ կանուխ մի հոգի վռազ գնացող չէր լինում, Գևոն դրոգը շուռ էր տալիս հրապարակի կողքի նեղլիկ փողոցը և կանգնում ծանոթ միկիտանի առաջ:

Դրոգի վրայից թռնելիս էր նա բարի լույս ասում գիշերն անքուն լուսացրած, դախլի առաջ աչքերը կիսախուփ արած միկիտանչուն, որ նոր էր ջուր շաղ տվել խանութի հողե հատակին և խաշի կճուճի երեսը պինդ ծածկել:

20

— Մի թաս, վռազ, պասաժիրը չի կայնում,— կասեր Գևոն և ձեռքը կմեկնեն տախտակի վրա շարած բաժակներին՝ մեկի պոռնկը կոտրած, մյուսն առանց տակ, ապակին ճարպոտ, գինու կարմիր շիթերը վրան:

Ամեն օր Գևոն առավոտ կանուխ պիտի տաքանար օղիով:

Մի թաս խմելը նրա համար նույնքան անհրաժեշտ էր, որքան իր լղար ձիերի համար գարին: Նա ինքն էլ չգիտեր, թե առավոտ կանուխ խանից դուրս գալու պատճառը օդի՞ն էր, թե այն երևակայական մարդիկ, որոնք ըստ Գևոյի, անպատճառ պիտի սպասեին հրապարակում:

Եթե փոշու ամպի մեջ նա ձայն էր տալիս.

— Մի հոգի, վազ էթացող,— այդ էլ մի անհրաժեշտ ձև էր, որովհետև եթե այդպիսին ճարվեր էլ, նա դարձյալ նեղլիկ փողոցում օդին պիտի խմեր և վերադառնար պասսա-
10 Ժիրը տանելու: Այդ ժամանակ նա մի բան պիտի սարքեր, հնարեր մի պատճառ:

— Էն սև ձին մեխով էր ընկել, տարա մեխը հանի... է՛հ, մի օրինավոր նալբանդ էլ չկա էս քաղաքում, սաղ էլ հարամզադա են...

Կասեր և այնպիսի ձայն կհաներ, այնպես կկանչեր ձիերի վրա, որ դրոգում նստած մարդը մի րոպե կմոռանար դրոգի օրորվելը, անիվների շխկշխկոցը: Մի հոգուն նստացնելուց հետո Գևոն դրոգը քշում էր հրապարակի կողքի փողոցներով, էլի կանչում:

20 — Մի հոգի, վազ էթացող,— մեկն էլ ճարում, հետո շուռ տալիս հրապարակը, երրորդին վերցնում: Եվ եթե քաղաքից դուրս գալիս հանկարծ մեկն էլ պատահեր, Գևոն նրան էլ էր վերցնում, թեկուզ կես ժամ էլ ուշանար: Շատ անգամ ինքն իջնում էր, վերջին ուղևորի իրերը կապոտում, շալակում, բերում դրոգում տեղավորում:

Իհարկե, դրոգում նստողները զանգատվում էին, բարկանում: Իսկ առաջին ուղևորը, որ հրապարակում էր նստել և Գևոյի դրոգում նստած անցել էր քաղաքի ծուռ ու մուռ փողոցները, հրապարակը, լսել էր դրոգասպանի հնարած պատ-
30 մությունը, կեղծ զայրույթը:

— Գե ե՛կ էլի՛, շան..., երեկվանից եմ ասել հագիր կաց,— կամ թե՛

— Ախպե՛ր, ախր քու ի՞նչ բանն ա, որ քուչեքն ես ընկնում: Հազար անգամ ասել եմ, պասսաժիր ես, արի մեյդանն էլի, ընտեղ նստիր...

Առաջին ուղևորն այնքան էր հերսոտում, որ գերադա-

սում էր լռել, մտքում խոսք տալով մյուս անգամ Գևոյի դրո-
գով շգնալ:

Վերջին ուղևորին տանելիս, նա մյուսներին միշտ էլ
ասում էր.

— Ծանոթ տղա յա, բա վեր շունե՞մ... վախիլ միք,
ընենց թոցնեմ, որ ըսկի ռեզինի ֆայտոնն էլ չհասնի: Ձիերս
կես փութ գարի են կերել էս գիշեր...

Այդ ասելիս նրա մտրակը շառաշում էր լղար ձիերի
մարմնի վրա, ցնցվում էին ձիերը, հանկարծ ձիգ տալիս, դը-
րոզը տեղից շարժում: Քաշելիս տնքում էին, և եթե մեկը հաս-
կանար նրանց տնքոցը, պիտի ասեր, որ ձիերը համամիտ
չեն Գևոյի հնարած պատմության՝ կես փութ գարու մասին:
Բայց որովհետև չէին հասկանում ձիերի տնքոցը, դրոգում
նստողներից ոմանք առաջին պահ միամտորեն կարծում էին,
թե ձիերը, իրոք, հրեղեն են, ռեզինե ֆայտոնից էլ կանցնեն:

Ճանապարհին բավական փողի կուլ տալուց, անց ու դարձ
անող կառքերին նայելուց հետո, նրանք, որոնք առաջին ան-
գամ էին գնում Գևոյի դրոգով,— համոզվում էին, որ դրոգը
միայն եզան սայլի առաջն է կտրում և լուռ ու մունջ դրոգի
երկաթ ճաղերից բռնած, աշխատում էին հավասարակշիռ
նստել, կողքերով ավելի քիչ հրել երկաթ ճաղերին: Իսկ այդ
անխուսափելի էր, որովհետև դրոգն ալեծուփ ծովում լողացող
անառագաստ նավի պես ոչ միայն վեր ու վար էր անում, այլև
այս ու այն կողքին դառնում:

Հերիք էր, որ ճամփեն մի քար լիներ կամ մի փոքրիկ
փոս, անիվները շրխկոցով քարին կպչեին կամ փոսի մեջ
ընկնեին, հերիք էր այդ ամենը, որպեսզի դրոգում նստող-
ները խայթվածի պես ցնցվեին, իրար դիպչեին, աղիքները
տեղահան լինեին: Եվ այդ ժողորի մեջ նրանք չէին լսում Գևո-
յի ձայնը և թունդ հայհոյանքը ճանապարհ շինողի հասցեին:

— Գևո՛, քշի՛ր, մեռանք էս շոգին, թողը մեզ խեղդեց,—
ասում էին դրոգում նստողները, հենց որ մի կառք, փափուկ
ռեսորների վրա, սուրալով անցնում էր, փողի անում:

— Հրես քշեմ, էս դարն էլ բարձրանամ: Դու նրանց
քշելուն մի նայի, որտեղ որ ա ձիերը կայնելու են... նրանց
ուժը ես գիտեմ,— ասում էր Գևոն, սանձերն իրար տալիս:

10

20

30

Ձիերը քայլերը մի քիչ արագացնում էին, հետո էլի դանդաղում, կարծես նրանք էլ գիտեին, որ այդ դժգոհությունը հարկավոր է մի քիչ գոհացնել և հետո էլի առաջվա ընթացքով շարժվել:

Մեկ էլ ճամփի կեսին կանգնում էր.

— Արի՛ նստի, արի՛, ոտով մի գնա,— կասեր Գևոն ոտով գնացող մի ճամփորդի:

Դրոգում նստողները լսում էին նրանց սակարկությունը:

— Տո՛, ի՛նչ կտաս տուր է՛, ես քեզ հըմար եմ ասում, 10 ոտքով շքնաս...

Հետո ճամփորդը մի կերպ սողոսկում էր դրոգի մեջ, նստողները սեղմվում էին նորեկին տեղ տալու: Եթե մեկը բողոքեր, Գևոն էլի իրենն էր ասում.

— Բա հո ճամփին շեմ թողնելու... խղճով բան ասա, խղճով...

Իհարկե, բոլորն էլ հասկանում էին, որ այդ խիղճը քսան կոպեկից ավելի շարժեր, քանի որ նրանց սակարկությունը այդ գնի վրա էր հանգել:

Պատահում էր, որ Գևոն ճանապարհին մի ուրիշին էլ էր 20 տեղավորում դրոգում: Դրոգը մի քիչ ավելի էր ծանրանում, դարով բարձրանալիս մի քանիսը պիտի իջնեին, որ ձիերը կարողանային քաշել. իր բարձունքից Գևոն ավելի սաստիկ էր մտրակում ձիերին, որոնք մեջքները մտրակի ամեն մի հարվածից ծուռատում էին, ոտքերով դոփում խճած ուղին, լայնացնում ունգերը, որովհետև փուքսի նման բաց ու խուփանող թոքերը վերելքում ավելի շատ օդի կարիք ունեին:

Ճամփին մի տեղ Գևոն անպատճառ պիտի հանգստանար:

Դրոգը քշում էր ծառի շվաքի տակ, դարմանով լի պար- 30 կեր կախում ձիերի վզից, ինքը մեկնվում շվաքում:

Բայց միշտ այդպես չէր անում: Շվաքում պառկելը կախված էր նրա գրպանի արծաթից: Եթե գրպանում զնգար թեկուզ մի արծաթ, Գևոն շվաքում պառկելու տեղ՝

— Հրես կգամ,— էր ասում և դիմացի տան դուռը բաց անում:

Դրոգում նստողներից մեկը կամ երկուսը, որ ավելի

անհամբեր էին, պիտի գնային, նրան կանչեին: Գևոն դուրս էր գալիս, քիթն ավելի կարմրած: Երեսը փոշոտ էր, միայն շոթունքներն էին թաց:

— Հասանք հա,— կասեր, դարմանի սլարկերը կհաներ ձեռք գլխից,— ինձ էլ հո չեք ուտելու, անիրավներ,— ձեռքի կասեր, և լախտի պես մտրակը էլի կապույտ հետք կթողներ ձեռքի փոշոտ մեջքին:

Դրոզը գոռալով գլորվում էր փոշոտ ճամփով, ճամփորդները շոգից թուլացած, գլուխ գլխի, օրորվում էին դրոզում, ասես ամենքն էլ՝ Գևոն, դրոզը, ձեռքը և ճամփորդները թունդ **10** հարթած էին:

Վայ թե հանկարծ մի կառապան անցներ Գևոյի ծանոթներից և ծաղրանքով կանչեր.

— Ուստա Գևո, քշի է՛, քշի մեռելի դու՞թին...

Եթե ասեր, Գևոն պիտի ցատկեր նստած տեղից, իրեն քաշեր սանձերը և սուր, յուրահատուկ մի հայհոյանք շարժուն հեռացող կառքի ետևից:

— Մեռելիդ ականջը...

Ձայրույթը ձեռքի վրա պիտի թափեր:

— Ի՞նչ էք սատկածի քաշում: Գարին ուտելիս ախոռն էլ **20** հետն եք կրծում, գնալիս կասես մերած մածուն եք տանում:

Ձիերն էլի տնքում էին: Եթե նրանք գարի ուտելիս ախոռն էլ հետն էին կրծում (իսկ այդ ճիշտ էր), գարին քիչ լինելուց էր և եթե դրոզում ճամփորդների տեղը մերած մածունով չի կճուճներ լինեին, վաղուց արդեն մածունը յուղ դարձած կլիներ:

Երբ հասնում էին այգիներին, Գևոն ավելի հաճախ էր մտրակում ձեռքին, հոգնած ձեռքը վերջին ուժն էին տալիս, քայլերն արագացնում: Դրոզը շարժվում էր, ցնցվում: Նստողների մերթ այնպես էր թվում, թե գետինն է ժած գալիս, **30** որովհետև անհասկանալի էր, թե ինչու հարթ խճուղու վրա էլ այդպիսի ցնցումներով է գլորվում դրոզը: Այդ գաղտնիքը միայն ռեսոր շինող Մեխակի արհեստանոցում կարելի էր պարզել:

Դրոզը՝ կտուրին բարձած կողովներ, կապոցներ, սնդուկներ, մեջք լի ճամփորդներ, որոնցից ոմանք կես կանգնել

էին, կես կախովի դրոգի երկաթե ճաղերից,— երբ դրոգը վերջապես տեղ էր հասնում, ճամփորդներն իջնում էին, կապոցները շալակին ցրվում,— Գևոն դրոգը քշում էր խանի դռնով ներս, դարմանով լիք պարկերը էլի կախում էր ձիերի վզից, ինքը մոտակա խանութը գնում:

— Օ՛հ, մեռանք էս շոգից...

- Մի երկու բաժակ խմելուց հետո, երբ քիթը կարմրին էր տալիս հասած պամիդորի նման, գլուխը պտտվում էր, սեղանները, գինու դատարկ շշերը, մարդիկ, բաժակները պտույտ էին գալիս, օրորվում,— Գևոյին թվում էր, թե միկիտանն էլ մի դրոգ է, օրորվող, ռեսորները ջարդված դրոգ:

2

Սովորաբար Գևոն քաղաքում գիշերում էր: Եվ գիշերելու պատճառը ոչ միայն հարբած, պատեպատ ընկնելով խան վերադառնալն էր, այլև առավոտ կանուխ դրոգի կոտրված մասը նորոգելու անհրաժեշտութունը: Իսկ դրոգը հաճախ կարիք ուներ նորոգման, որովհետև ամեն անգամ կամ մեխ էր դուրս ընկնում, կամ ռեսորներին փաթաթած երկաթ լարերն էին բացվում:

- 20 Առավոտ կանուխ Գևոն գնում էր ձիերին նայելու:

— Հը՞, կերա՛ք, ես գիտեմ, ինձ էլ եք ուտելու մի օր:

Բայց նրա դժգոհությունն անհիմն էր, քանի որ եթե գիշերը հարբած շիներ և նայեր ձիերին, կտեսներ, որ կերը երկկոյան է վերջացել: Գիշերվա ընթացքում ձիերին մնում էր լսել, թե ինչպես կողքի կապած ձիերն ատամների տակ գարի են խոթացնում, կրծի ախոռի տախտակները կամ իրար վիզ բորել: Եվ երբ Գևոն առավոտյան էլի մի քիչ դարման ու գարի էր տալիս, ձիերն ազահուլթյամբ վրա էին պրծնում:

- 30 Մինչև ձիերը դարմանն ու գարին ուտեին, Գևոն դրոգից հանում էր փայտե մի մեծ արկղ, մեջը ժանգոտած երկաթեղեն, ծայրը ծուռ մեխեր, կոտրած էալիս, երկաթ լարեր և սկսում դրոգի պակաս տեղերը շինել:

— Հասնեմ թե չէ, Մեխակին եմ տալու մի լավ սարքի, լաբ քսի,— ասում էր նա դրոգին մի երկու մեխ գարկելուց, կոտրած մասերը մի կերպ իրար անելուց հետո:

Ամեն անգամ նորոգելիս Գևոն այդ խոսքն էր ասում, բայց տարիներն անցնում էին, դրոզը ձեռքից ընկնում էր, ձիերը պառավում էին, Գևոյի շորերի կարկատանը կարկատանի վրա էր նստում, անցնող տարիները հագիվ գինի և արաղ էին հասցնում առավոտ-իրիկուն:

Հետո ոտոսն էլի գոռալով խանի ռարպասից դուրս էր գալիս, կանգնում հրապարակում: Այստեղ Գևոն սովորութունն շուներ փողոցներում ման գալու: Նա բավականանում էր միայն մերթ ընդ մերթ կանչելով:

— Մի հոգի, վռազ էթացող...

10

Հրապարակում ուրիշ կառքեր էլ էին կանգնում: Մի անգամ Գևոն փորձել էր նրանց շարքը մտնելու, բայց կառպանները հարահրոցով, ծաղր ու ծիծաղով նրան շարքից դուրս էին արել:

— Քաշի է՛, մեզ խայտառակ ես անելու,— ասել էին:

— Քաշի է՛, էդ հո բոստանի պագա յա, դրոզդ տար բոստանում դիր, մտի տակը: Հլա ձիերին մտիկ:

— Ի՞նչ պակաս են, դու գիտես բանը շատ գարի ուտե՞լն աս, դու գնալն ասա:

Գևոն առաջ էլ էր այդպես ասել, բայց հետո ինքն էլ էր համոզվել, որ ձիերը պակաս են, լղար ու պառավ: Գևոյի ձիերը... Անասնաբույժը հազար ու մի հիվանդութուն, ուռուցք, քերվածք ու կապտած տեղեր կգտներ նրանց մաշկին, մեջքի վրա, ականջի մոտերքը քոս, այդչի մաղերը նոսրացած, կողքի ոսկորները դուրս ցցված, մի ոտը նալած, մյուսը առանց նալ, սմբակները ճեղքած ու ճաքած:

20

Գևոն էլ նրանց շարքում չէր, կանգնում էր հրապարակի անկյունում, էժանը փնտրող մի քանի աղքատ ուղևորներ գտնում և դեպի տուն ուղևորվում նույն ճամփով, նույն առուներով դրոզը ցնցելով, ձիերին մտրակելով, հնարովի պատմություններ ասելով, մինչև իրիկնադեմին հասնում էր տուն:

30

Նրա ստացած արժաթից էր կախված այն տրամադրությունը, որ ցույց էր տալիս կնոջ և երեխաների հանդեպ: Եթե

գործն աշող էր անցել, ճամփի կեսին իջել էր և մի քիչ կոն-
ծել, աղբի մեջ խաղացող իր փոքրիկին կանչում էր.

— Արի՛, բան տամ, արի՛...

Եվ երբ երեխան մոտենում էր, ձեռքը մեկնում, նա շատ
քիչ անգամ էր բան տալիս. կամ ասում էր թե՛ «պա՛հ, մո-
ռացել եմ, էգուց կտամ» կամ խաբում էր.

— Գնա, մորդ ասա, ջերումն ա, մորդ ջերումն ա:—
Բայց երեխան գիտեր, որ մոր գրպանում փալասի կտորներ
կան, հին կոճակներ և մի հին մատնոց: Եվ որովհետև գիտեր
10 այդ պտոշ էր անում, վերադառնում բակի աղբակույտում կի-
սատ թողած իր խաղին:

Այդպիսի երեկոյան տանը անպատճառ կոխվ պիտի լի-
նելու: Երեխան լացակումած մորն էր սպասում, թե հայրը
ոչինչ չի բերել, և այդ առիթ էր լինում, որ կինը հարձակվի
մարդու վրա, կանչի երեսին, բղավի: Իսկ եթե այդ չլիներ
առիթը, կինը հենց որ նրան քիթով տեսներ, ձիերի սանձերն
արձակելիս, դռան շեմքից կկանչեր.

— Բերե՛լ ես...

— Ի՞նչը, ա՛յ կնիկ:

20 — Շաքարը, ի՛նչը:

Եվ սկսվում էր: Հարձակվողը կինն էր լինում, ամեն ան-
գամ նույն ձևով, նույն բառերով, նույն անեծքով, ասես սեր-
տած դաս լինելու: Մի քիչ որ կինը շունչ առներ, Գևոն ձայնը
փորը գցած կասեր.

— Շաքար ա է՛լի, ըստեղից առ: էգուց քեզ կես մանեթ
տամ, ա՛ռ:

Այդ խոսքը կնոջն ավելի էր զայրացնում, քանի որ նա
գիտեր, թե վաղն ինչ է լինելու: Պիտի ասի, որ ուղևորները
քիչ տվին, հազիվ ձիերի գարի-դարմանին հերիք արեց:

30 Զայրույթի ամենաթունդ ժամին կինը ձեռքն ընկած իրը
մի տեղից մյուսն էր շարտում, ծալքատեղում դարսած ան-
կողինը ձգում, թափում, նորից դարսում, ջրի կուժի տեղը փո-
խում: Միակ տուժողները երեխաներն էին, որոնք զայրույթի
այդ ժամերին անակնկալ հարվածներ էին ստանում:

Դրա համար էլ երբ հայր ու մայր կովեին, երեխաները
կամ պահվում էին, կուշ եկած նստում, կամ բակ դուրս գա-

լիս: Եվ երեխաներն ամենևին չէին էլ ուզում, որ հայրը միջամտեր, երբ նրանք անակնկալ հարվածներ էին ստանում:

Նրանք փորձով գիտեին, որ այդ միջամտությունն ավելի ծանր հարվածների պատճառ էր դառնում, և մոր այն խոսքերին, որ վերաբերում էին ուտելուն և խմելուն: Եվ մայրը երեխաներին ծեծելիս ամուսնու երեսին էր կանչում:

— Ես եմ նրանց պահում, հաց եմ տալիս, շաքար եմ առնում, քո ի՞նչ բանն ա, քո ի՞նչ բանն ա...

«Քո ի՞նչ բանն ա»-ն և հարվածը կապված էին մի ութմով, որի ինչ լինելը շատ ցավ էր մանուկների փափուկ մըսերի համար:

10

Գևոյի վերջին միջոցը, վերջին զենքը խեղճ-խեղճ ասելն էր.

— Տաղ արա, ախշի, խայտառակ մի՛ անի...

Բայց որովհետև այդ էլ չէր օգնում, կտրուկ միջոցը ձիերի մոտ գնալն էր, խոտի խուրձերի վրա քնելը:

Եվ թեպետ կռվի թունդ ժամին նա խոսք էր տալիս վաղը կես մանեթ տալ շաքարի, սակայն առավոտյան աշխատում էր շատ կանուխ դուրս գալ խանի դարպասից, քանի կինը չէր զարթնել և չէր հիշեցրել խոստումը, որ արաղի թասի հետ պիտի գոլորշիանար, որպես ծեղի շոգ:

20

Ներիք էր, որ ուղևորներ ճարեր, դրոզը ճանապարհ ընկներ դեպի քաղաք, որպեսզի Գևոն մոռանար կնոջ հետ ունեցած կռիվն էլ, սղբի մեջ խաղացող երեխաներին էլ: Նա բարկանալու ոչ մի առիթ էլ չէր ունենա, եթե ամեն օր ճամփորդներ ունենար, գնար-գար:

Ուրախ կլինեիր, թեկուզ կառքերն էլ արագ սուրային, փոշի բարձրացնեին, փոշին մի մատ հաստությունամբ նստեր դռագի վրա, ձիերի մեջքին, Գևոյի ունքերին, դեմքը հողի գույն ստանար:

30

Արևի տակ քրտնում էր Գևոն, փոշին հալվում էր քրտինքի մեջ, ինչպես ձյունը ջրում, և շորերի վրա կեղտի բծեր էին երևում: Մննակ քրտնքի կաթիլները չէին, որ փոխվում էին կեղտոտ բծերի. կերակուր ուտելիս թափվում էր, գինի էր կաթում. գոմում քնելիս աղբաջուրն էր ծծում, ամիսներ շարունակ գլուխ չէր լվանում, շոր չէր փոխում: Դժվար էր

101

որոշել, թե նա ծուլ էր գլուխ լվալում, շոր փոխելում, թե ոչ գլուխ լվացող ուներ և ոչ էլ փոխնորդ:

Տարիների ընթացքում նա մերվել էր իր դրոզին, դարձել նրա անբաժան մասը: Երբ հրապարակում կանգնած ուղևոր էր սպասում և գլուխը քաշ ննջում, հեռվից նայելիս այնպես էր թվում, թե Գևոն մի կապոց է, կամ ռեսոր, մի արկղ՝ մեջը լի երկաթի կտորտանք կամ թե և՛ կապոց, և՛ ռեսոր, և՛ արկղ:

10 Եթե ամեն օր ճամփորդներ ունենար, արաղի փողը կլիներ, ձիերին՝ գարի ու դարման: Դրոզն այնքան կքշեր, մինչև կամ դրոզը շրջվեր կամուրջի վրա, կամ հարբած ժամանակ ընկնի անիվների տակ: Այն ժամանակ նա քաղցած մնալու վտանգը չէր զգա, կմեռներ ճամփի փոշու մեջ, թեկուզ իր պառավ ձիերի սմբակների տակ:

Բայց այդպես չեղավ, ոչ դրոզը շրջվեց, ոչ էլ ինքը մնաց անիվների տակ: Դրոզն էլի հրապարակում կանգնում էր, բայց առաջվա չափ ուղևորներ չկային: Միկիտանչին էլ էր տեսնում Գևոյի անգործ մնալը, օղու շիշն առաջվա պես սրբտարաց չէր հանում դարակից:

20 Երբ Գևոն առաջին անգամ քաղաք տանող ճանապարհին մարդատար ավտոմոբիլ տեսավ, դրոզը քաշեց ճամփի մի կողմը և գարմացած նայեց արագ գլորվող անիվներին: Ձիերը մի քիչ խրտնեցին, խլշեցին ականջները, մեկը ձգեց դրոզը մի կողմ, բայց ուժը չպատեց: Ավտոմոբիլը հեռացավ, ձիերն ականջներն էլի կախեցին, դրոզն իր ճանապարհը շարունակեց:

3

Տարիներ անցան, և տարիների հետ ավտոմոբիլը շատացավ, Գևոն ռեզինե փափուկ կառքերից ավելի թշնամացավ ավտոմոբիլի հետ:

30 Երբ ճանապարհին Գևոն դրոզը մի կողմի էր պահում եկող ավտոմոբիլին տեղ տալու, որ անցնի, ուղևորներից ոմանք նկատում էին նրա բարկացած հայացքը և լսում թունդ հայհոյանքներ:

— Գևո՛, էն ա հա լազաթը, — ասում էին նրան:

— Ոչ թող կուլ տուր, ոչ էլ կողքաճաղդ ջարդի:

Այդ խոսքերից և ոչ մեկը նրան դուր չէր գալիս: Պոռոշները կրծոտում էր, ձիերին մտրակում:

— Պետք ա մի օր շուռ գա կամրջում, որ ես իմանամ...

— Շուռ չի գա, Գևո՛, քշի, թողը մեզ խեղդեց:

Ավտոմոբիլն ավելի շատ փոշի էր բարձրացնում, քան կառքը, և Գևոյի գայրույթը փոշու բարձրության էր հավասար: Նա շնկատեց էլ, թե ինչպես իր գայրույթը հողմնացույցի պես փոխեց իր ուղղությունը կառքից մինչև ավտոմոբիլը: Ծիշտ է, առաջվա պես կառապանները նրան տեսնելիս էլի ծաղրում էին, հազար ու մի խոսք ասում, բայց ավելի սուր էին թվում այն բառերը, որ անց ու դարձ անող շոֆերը կիսաժպիտով շարտում էր ճամփի եզրին շորացած կրիայի պես կանգնած դրոզի կողմը: Եթե շոֆերը մի բառ էլ շասեր, հերիք էր, որ մի անգամ նայեր, ծիծաղեր, որ Գևոն պոռոշները կծոտեր, հայհոյանք տար:

10

Ի՛նչ անսահման էր նրա ուրախությունը, երբ ճանապարհի կեսին տեսնում էր շոֆերին փոշու մեջ, ձեռքերը, շորերը յուղոտ, նավթոտ, մեքենայի փշացած մի մասը նորոգելիս: Հրճվանքի կարճատև այդ բուպեններից նա լի ու լի էր օգտվում, քամում բաժակը, պոռոշներով վերջին կաթիլը ծծում: Եվ այն ուղևորին, որ հանդգնել էր ավտոմոբիլը դրոզից բարձր դասելու,— Գևոն հանգիստ չէր տալիս այդ ժամանակ:

20

— Տեսա՞ր, տեսա՞ր, նավթի մեջ կոլովվել էր, տեսա՞ր հո... բա ես էդպես բան կանեմ: Դե դու ես նստած, սպասի, թե երբ պիտի շինեն: Մի փորձանք էլ պատահի պասաժիրին, ո՞վ գիտի...

Ուղևորին նա հանգիստ չէր տալիս նույնիսկ այն ժամանակ, երբ կես ճամփին տեսած ավտոմոբիլը գալիս էր անցնում:

— Հրես, էլի կկոտրի, ա՛յ տես... Մարդ էլ էդ մաշինը նստի՛, գիժ հո չի: Հենց էն ա թող ա անում:

30

Գևոյի գայրույթն ավելի սաստկացավ, երբ առաջին անգամ երևաց ավտոբուսը, աժան գնով 15—20 մարդ միանգամից առավ, տարավ: Մի օր էլ, մինչև ինքը կկանչեր՝

— Մի հոգի, վռազ էթացող.—

Մինչև նեղլիկ փողոցներով կգնար մի երկու անգամ, վը-

աազ գնացող մի ուղևոր էլ ճարելու, հրապարակում Գևոյին սպասող առաջին ուղևորը ավտորուս էր նստել գնացել:

— Գևո բիձա, բո էն պասաժիրդ մաշինը նստեց, գնաց, ասեց էլ չեմ սպասի:

Հրապարակում մի երեխա լուր տվեց նրան: Եթե այդ ժամանակ կինը փորձեր մի գրվանքա շաքարի համար աղմկելու, Գևոյի երեսին հազար ու մի խոսք ասելու, դժվար թե Գևոն լռեր և խեղճանար, այնքան շատ էր նրա զայրույթը:

10 Մտրակը սեղմեց ձեռքում, նայեց ձիերին, որոնք պառավ էշերի պես ականջները կախել և իրար մոտի՞ք էին շոյում, և սկսեց մտրակել նրանց:

Ոչ մի անգամ նա ձիերին այնքան չէր ծեծել, բերանում թուքը փրփուր չէր կապել, աչքերն այդքան չէին մեծացել: Ձիերը դես ու դեն էին ձգում, ետևի ոտները ծռում, զավակն իջեցնում, որ հարվածներից խուսափեին, գլուխները մեկ աչ, մեկ ձախ դարձնում, հանցավոր շան պես պոչը ոտքերի արանքում պահում: Ձիերի վերքերն ուտող ճանճերն էլ տեղահան եղան, թռան մեկից մյուսը, իջան վերքերի վրա, բայց հենց որ հանեցին կնճիթները թարախի մեջ կոխելու, մտրակը շոռախ իջավ վերքերի վրա, ուռուցքների վրա, բոսից լերդացած, քերծված մաշկի վրա: Թարախ ծծող ճանճերը թռան հեռու:

20 Մսավաճառի խանութի շվաքում նստած մի քանի հոգի դիտում էին, թե ինչպես է Գևոն ձիերին ծեծում, ինչպես են ձիերը ծառս լինում: Մեկը հռհռալով կանչեց.

— Հո՛, Գևոն ձիերին ցիրկի խաղ ա սովորացնում:

Այդ որ լսեց Գևոն, ավելի դայրացավ, կռացավ, որ մտրակի կշկոած ծայրը ձիերի ականջներին հասնի, սկսեց հարվածել ձիերի գլխին, ականջներին: Ամեն մի հարված նրա սրտին մի պատառ հանգստություն էր բերում:

30 Սակայն նրա սիրտը լիովին չհանգստացավ, որովհետև մտրակի ճիւղ կտրվեց, կոթն էլ ձեռին փշուր-փշուր եղավ: Երբ ձիերի գլուխը դեպի խանի բաց դարպասները շրջեց, ձիերը բնազդաբար արագացրին իրենց քայլերը, օրորալով, հարվածների ցավից երբեմն ցնցվելով: Որովհետև Գևոյի աչքը միկիտանի նեղլիկ փողոցն էր, նա շտեսավ ձիերի վերքերից հոսող արյունը, որի շուրջը ճանճերն էլի բոլորվել էին:

Ծթե միկիտանի գինին այնքան տաք լիներ, ինչքան բացված վերքերի արյունը ճանճերի համար, դրոգապան Գևոն մի քիչ կհանգստանար: Բայց այդպես չեղավ: Խմում էր առվի ջրի պես պղտոր գինին, գավաթներն իրար հետևից պարպում, բայց միտքն ավելի էր սրվում, հիշողությունը պայծառանում, գետինը, պատերը, շշերը շէին օրորվում, ինչպես առաջ, երբ ուղևորներից ստացած արծաթը գրպանում, ճամփից բեզարած մտնում էր միկիտանը և գինի կաթեցնում փոշոտ շորերին:

Շատ քիչ էր պատահել նրան օրվա այդ ժամին նստել միկիտանում: Այդ էր պատճառը, թե գինին էր անշափ պայծառացրել դատողությունը,— որովհետև այդ օրը նա զգաց, թե ինքն իրոք որ բոստանի դագա է ունեցել, իր հին ուղևորներից շատերն են այժմ օմնիբուսով գնում:

— Էն մունդոսիկը, էն հարամզադան...

Երբ հիշեց Գևոն, թե քանի անգամ է նրան տեղ տվել դրոգում, աժան գնով տարել, ճամփորդների հանդիմանությունացել, երբ հիշեց այդ, գինու մի գավաթ էլ ծծեց և գավաթը սեղանին դնելիս ասաց.

— Վա՛յ աշխարհք... էն մունդոսիկն էլ:

Միկիտանի մի անկյունում մի խումբ քեֆ էր անում: Երգում էին, ավելի ճիշտ գազանային զանազան ձայներ հանում, որովհետև խմած ալկոհոլը շափազանց շատ էր նրանց ձայնալարերը փշացրել: Երբ մեկը ձեռքն ականջի մոտ պահելով ծոր տվավ ու զլեց.—

Ավտամարիլը ցուաց ու գնաց,

Սիրոս իմ յարի կարոտով մնաց...

Քեֆ անող խումբն ու միկիտանչին միասին վեր թռան, երբ Գևոն երգողի վրա բղավեց.

— Մի՛ ասի է, էդ մի ասի...— Եվ ձեռքի գավաթը գետնով տվավ: Շարունակությունը մի քանի բուռնցքների միաժամանակ հարվածներ էին, որ նրան դուրս արին միկիտանից:

Միկիտանից դուրս գալուց նա շիմացավ գիշեր է, թե ցերեկ: Պատերի տակով, ձեռքը պատին դեմ տալով, ինքն

իրեն խոսելով հասավ հրապարակին, աչք ածեց, խանի դարպասները շտեսավ: Եկած փողոցով անցնելիս նրան այնպես թվաց, թե այդ փողոցն էլ է անծանոթ: Հետո մի ուրիշ փողոց անցավ, շները հաշացին, կոացավ, որ քար շարտի շներին, օրորվեց, ընկավ գետին:

Առավոտյան աչքը բաց արեց և աչքի տակ, մարմնի զանազան տեղերում ցավ զգաց: Աչքերը շորս կողմը ածեց, իր տունը ճանաչեց: Հանկարծ աչքն ընկավ դռան մոտ կանգնած իր կնոջ վրա, աչքի տակի ցաված տեղը մրմռաց:

- 10 Կինը, երբ աչքն ընկավ աչքին, դռան մոտից հանկարծ վրա պրծավ, ասես ժամերով դարան էր մտել, սպասում էր, որ Գևոն աչքերը բաց անի: Երբ կնոջ ոտքերի հարվածները դիպան մեջքին, փորին, այնպես թվաց, թե մի սանձարձակ ձի հազար սմբակներով կոխկրտում է իրեն, երկաթ նալերով քթացիներ տալիս:

4

Հաշորդ շաբաթը մոռացնել տվեց ամեն ինչ: Զիբը և Գևոն հաշտվել էին, որովհետև, երբ Գևոն նստած տեղից մշտրակում էր ձիերին, կենդանիներն ուժ էին առնում, մի քիչ քայլերն արագացնում և հետո էլի դանդաղեցնում: Դրոզը երկու անգամ քաղաք էր գնացել:

- 20 Եվ նորից հավատալի թվաց ծանոթ միտքը, որ նրա ծածուկ ցանկությունն էր, թե գուցե հաշողվի մինչև վերջն էլ ապրել այդպես, գրոգապան լինել:

Բայց մի առավոտ էլ Գևոն գոմի դուռը բաց անելիս մի ձին պառկած տեսավ: Քթից կանաչավուն լորձուկ էր հոսել, սառել քթածակերի առաջ: Ատամները սեղմել էր և սեղմած ատամների արանքում բռնել մի դեղին ծղոտ:

- 30 Երբ Գևոն գոմի դուռը բացեց և ձին պառկած տեսավ, կայծակի պես մի միտք անցավ նրա գլխով, թե ձին սատկել է: Մի քայլ հետ կացավ, նորից կոացավ, ոտքով հրեց ձիուն, կանչեց: Երբ ոտքը դիպավ ձիուն, Գևոն իսկույն հետ քաշվեց: Մյուս ձին կամացուկ վրնջաց, գլուխը դարձրեց Գևոյի կողմը: Գևոն մեկ էլ նայեց պառկած ձիու աչքերին, բաց ատամներին և հասկացավ, որ ձին սատկել է:

Առավոտ կանուխ, երբ խանի դռները բացվեցին, Գևոն դրոզը շքշեց դեպի հրապարակ և շկանշեց առաջվա պես.

— Մի հոգի, վռազ էթացող... — Գրոզի վրա ձիու լեշն էր դրած, գլուխը մի կողմի վրա կախ: Միակ ձին շկարողացավ քաշել դրոզը: Գևոն պարապ սանձերից բռնեց և վերջին ձիու հետ լեշը խանի բակից հանեց:

Եթե մասվաճառի խանութը բաց լիներ և խանութի առաջ նստոտած մարդիկ լինեին, նրանք դժվար թե հռհռային, երբ տեսնեին, թե ինչպես դրոզի ամեն մի ցնցումից սատկած ձիու ոտքերը վեր ու վար էին լինում: Եվ եթե կինը քնած չլիներ, լսեր ամուսնու տնքոցը, երբ նա ձիու հետ քաշում էր դրոզը, գուցե թե երեսին շկանշեր:

Հրապարակի անկյունում այս ու այն պատի տակ գիշերով թազնող ավարա շները գլուխները կախ հետևում էին Գևոնի դրոզին, իհարկե նրանք սուտ հուղարկավորներ էին, թեկուզ գլխիկոր էին քայլում և դանդաղ: Նրանցից յուրաքանչյուրի բերանում լորձունքը կիտվել էր. սատկած ձին պետք է որ համեղ պատառ լիներ:

Քաղաքից դուրս աղբակույտեր կային, փոսեր, ժանգոտած երկաթներ, աղտոտություն: Երբ Գևոն լեշը գլորեց մի փոսի մեջ, ձին խլշեց, ականջները ցցեց. ծծծելու օրից հետո ձին ականջները շէր խլշել: Շները մոմռալով վրա տվին լեշին: Գևոն տեսավ, թե ինչքան կապույտ էր միսը:

Վերադարձին դրոզը մի ոտանի մարդու էր նման, ավելի շատ էր օրորվում և թեքվում այն կողմը, ուր վերջին ձին էր լծած: Խանի դարպասով ներս մտնելիս Գևոնի ականջին ընկավ ավտոբուսի ծկլթոցը: Եվ թեպետ կինն ավելի բարձր ծկլթաց, նույնիսկ զայրույթից կուժը գետնով տվավ (կինը կուժը մարդու գլխովն էր ուղում տալ, բայց Գևոն գլուխը թեքեց և կուժը ականջի տակով անցավ, գետին կպավ, փշուր-փշուր եղավ), բայց Գևոն ձայն էլ չհանեց:

Պատի տակ կանգնել էր Գևոն: Ինչ-որ մարդիկ էին գալիս գնում, հրապարակում աղմուկ կար, կինը դեռ չէր հանգըստացել, խոսում էր, շուտ-շուտ ներս ու դուրս անում, դուռն աղմուկով դնում:

Գևոյի աչքը կտտրած կփի սուր-սուր կտորների վրա էր, երբ ահանջովը ընկավ ավտոբուսի ձայնը:

— Էն մունդոսիկն էլի գնաց,— անցավ նրա մտքով:

Մեկ էլ նայեց կուփի կտորներին, մոտեցավ դրոգին, բացեց այն արկղը, որի մեջ հին մեխեր կային, ժանգոտած երկաթներ, լարեր: Դուռն մոտ կանգնած փոքրիկը, որ շոր հացի կտոր էր կրծում, զարմացած նայեց հորը և չհասկացավ, թե ինչու՞ նա կփի կտորները հավաքեց, լցրեց դրոգի արկղը և դուրս եկավ փողոց:

10 Մանոթ միկիտանում այդ օրը նա ավելի շատ խմեց: Երբ միկիտանչին հիշեցրեց պարտքի մասին, Գևոյի գինուց կարմրած, արնով լցված աչքերն ավելի լայնացան:

— Հեր օրհնած, ձիս քեզ փեշքաշ, դրոգն էլ քեզ... Հո ես մեռած չեմ:

Միկիտանչին փոշմանեց իր ասածից, որովհետև Գևոն այնպես բարձր կանչեց՝

— Հո ես մեռած չեմ,— և այնպես պինդ խփեց կրծքին, որ նրան թվաց, թե կրծոսկրից մեկը անպատճառ շարդվեց:

20 Անկապ խոսքեր Գևոն շատ ասեց, բայց միկիտանչին չսեց բոլորը, նրա միտքը տված շշերի համարքը հագիվ էր պահում:

Մութին, երբ Գևոն դուրս եկավ միկիտանից, փողոցները շխառնեց: Նա լավ գիտեր, որ հրապարակի միակ ճրագի դիմաց խանի դարպասն է, բակում իր դրոգը, գոմում վերջին ձին:

Եվ ոտքերը շողագցին, պատեպատ շրնկավ, երբ հասավ դարպասին: Ներս մտավ, մոտեցավ գոմի դուռն, ուզեց դուռը բաց անի: Ձին ոտնաձայնից վրնջաց գոմում, Գևոն դուռը բաց շարեց:

30 Երբ դարպասից դուրս եկավ, նրան շատ թեթև թվաց շալակի արկղը, մեջը լի կտտրած երկաթի, կուփի կտորներ: Մուռ ու մուռ փողոցներով անցավ, որովհետև զխավոր փողոցում դեռ երթևեկ կար, աղմուկ կար:

Արկղի ծանրութունն արդեն զգալի էր նրա համար, երբ Գևոն հասավ առաջին կամուրջին: Դրոգը կամուրջով անցնելիս ավելի շատ էր աղմկում, կարծես կամուրջը մի մեծ թըմ-

բուկ լինե՛ր, որի վրա անիվները և ձիերի սմբակները զարկում էին անկարգ, խառնիխառն:

Գևոն պահվեց կամուրջի մոտ, գլուխը դրեց գետնին: Մի ավտոմոբիլ հեռվում ճրագներ էր վառել, կարծես սելվորները ճամփին կրակ էին արել: Առաջ, երբ գիշերով էր քաղաք գնում, իջնում էր դրոգից՝ ձիերին խոտ տալիս և կրակի մոտ սելվորների հետ զրույց անում: Սայլերի վրա տակառների մեջ գինի կար. ինչքա՛ն էին խմում. խարույկի կրակը թրթռում էր, շորս կողմը լուսավորում:

Ավտոմոբիլը հանկարծ անցավ Գևոյի մոտով, լուսավորեց 10
ճանապարհի խիճերը, կամուրջի փայտերը, ինչպես առաջ, երբ սելվորները կրակ էին վառում:

Ավտոմոբիլն անցավ, մթնեց, Գևոն մոռացավ կրակները, ձեռքը դիպավ կողքին դրած արկղին: Արագ շարժումով նա հանեց արկղի մեջ իղած կուժի սրածայր փշուրները, երկաթի կտորները, ցրեց կամուրջի տախտակների վրա: Գրպանից հանեց ժանգոտ մեխեր, ցցեց մի քանի տեղ, ապա նորից պահվեց կամուրջի ետևին:

Կամուրջի տակ վշշում էր գետը, ալիքները քարապատին լափու էին տալիս, ճղփշուներով իրար զարկում, կամուրջի տակից անցնում: Կամուրջից դեն գետը լայնանում էր, ալիքները հանդարտվում էին:

Կամուրջի մոտ թփեր կային: Գևոն թփերի տակ էր պահվել և, երբ գլուխը խոնարհում էր ցած, կամուրջի տակ իրար հրող ալիքների ձայնն էր լսում: Երբ բարձրացավ, նայի ճանապարհին, ոտքը դիպավ արկղին, արկղը գլորվեց ու շրա՛փ ընկավ ջրի մեջ:

Պատահում էր առաջ, դրոգը ծառի շվաքի տակ պահում էր, ձիերին խոտ տալիս, իջնում, գետի մեջ լողանում: Ինչքա՛ն էր հովանում:

30

Մի ձայն լսելիս, Գևոն պահված տեղից գլուխը վեր էր բարձրացնում, ավելի պինդ բռնում թփի ճյուղից, որ վայր չընկնի: Մեկ ուզում էր վեր կենա, մեխերը, երկաթները հավաքի, գնա տուն, բայց հենց որ միտն էր գալիս ավտոբուսը, շոֆերի ծիծաղը, միակ պառավ ձին և օրերով հրապարակում

100

ուղևորի սպասելը՝ տապ էր անում, տեղը նստում: էլ ո՞ւմ էր պետք ինքը, դրոզը:

— Եթե ավտոբուսը չլիներ, պասաժիրը միշտ բոլ կլիներ...

Դիմացից լույս երևաց: Գևոն գլուխը բարձրացրեց, մոտեցող ճրագները տեսավ: Ավտոմոբիլ էր:

Ավելի կուացավ, մոտեցավ քարափի պռունկին, մի ձեռքը թփի ճյուղից բռնած: Գևոն մի ոտը կախել էր գետի վրա, կախած ոտով շոշափեց քարափը, մի քար գտավ, ոտը դրեց քարի վրա, մյուսը ծալեց:

10

Կամուրջի տակ գետը վշշում էր, վշշոց կար և Գևոյի գինով գլխում, նա չէր կարողանում որոշել, թե ո՞ւր է գնում գետը՝ հե՞տ, թե առաջ, ա՞ջ թե ձախ:

Հանկարծ կամուրջի փայտերը լուսավորվեցին, լույսն ընկավ ջրի վրա, գետի հունը երևաց, քարափի պատի մի մասը:

Ավտոմոբիլը ասես Գևոյի գլխավերևը պայթեց, շիները սրածայր մեխերի վրա ընկան: Գևոյի ձեռքերը թուլացան, ոտքը սայթաքեց, շիմացավ՝ թո՞ւփը պոկվեց, թե ինքն ընկավ:

Ավտոմոբիլի մեջ նստողներն այնպես կարծեցին, թե

20

կամուրջից մի քար պոկվեց, ընկավ գետի մեջ:

ՀԻՆ ՏԱՆԸ

Իրիկվա դեմ հասա գյուղի մարագներին, աչքս ընկավ ճամփի տակի բոստանին, ուր ամեն տարի, Ավան ամի, կարտոֆիլ ես ցանում, սոխ ու սխտոր: Բոստանի անկյունում, հին աղբի վրա կանեփ էր բուսել, խիտ եղեգնուտի պես: Հավերն ամռան շոգին փախչում էին հավաբնից և կանեփուտում ձու ածում, երբեմն էլ թուխս նստում: Նանին տնքտնքալով կանեփի ցողուններն էր դես ու դեն հրում, հավերին կանչում: Հիմա նանին չկա, բայց կանեփուտի ստվերում հավերն առաջվա պես ննջում են:

10

Մտտեցա տան շեմքին: Դու նստել էիր ստվերում, դանակով քերում էիր եզան կաշի: Տեսար ինձ, ձեռքդ ճակատիդ դրիր, և երբ կաշին ձեռքիցդ վար ընկավ, զգացի, թե ինչքան շոր են շրթունքներդ, ինչպես եզան կաշու կտորներ: Լեզուդ կարկամեց, չգիտեիր ի՞նչ հարցնես:

Եվ երբ կարկատած արխալուղի փեշերից թափ էիր տալիս քերած կաշու մազերը, որ մտքերդ հավաքես, աչքիս ընկավ ճակատիդ կնճիռները, սպիտակած մազերդ: Մատերիդ երակները ուռած էին, ասես մեկը բարակ պարան էր փաթաթել մատերիդ:

20

Շատ ես ծերացել, Ավան ամի: Եթե եզդ այդքան պառավեր, լուծը վիզը մաշեր, ատամները թափվեին ու էլ չկարողանար շոր հարդը որոճալ, իհարկե, ձեռքիդ դանակով կմորթեիր պառավ եզան, կաշին տրեխ կանեփ, միսը որպես մատաղ, հարևաններիդ կբաժանեիր: Երբեք մտքովդ չի անցել ձեռքիդ դանակը կոկորդիդ տանելու, որովհետև գիտես, որ մի օր ընկնելու ես հասած տանձի պես, թաղելու են գյուղի գլխին,

111

պապերիդ մոտ, որոնց գերեզմանների օրհնեքին հազար թափ օղի ես խմել:

Հարցրիր, թե ինչո՞ւ եմ եկել: Մոռացել եմ պատասխանս. գուցե ոչինչ էլ չասացի:

— Շատ ես մնալո՞ւ,— հարցրիր: Աչքերդ ջրակալեցին, Ավան ամի, երբ իմացար, որ վաղը գնալու եմ: Եվ թեկուզ իսկույն ավելացրիր, թե քանի եմ տվել կոշիկներիս, բայց հասկացա, որ մտքինդ այդ չէր:

10 Կաշին ձեռքդ առար, քերում էիր և տրտնջում, որ մեր տունը ծիծեռնակի բուն է դարձել, ձագերը թև են առնում, ուրիշ երկրներ թռնում, և ձագերից ոչ մեկը մի շյուղ էլ չի բերում հին տունը կարկատելու:

— Դու գնացիր, Վահանն էլ գնաց, Սամսոնը, որ իսկի նամակ էլ չի գրում: Էսպես ցրվել եք աշխարհքով մի: Բա մեր տունը...

Քեզ ի՞նչ, թե Սամսոնը մեծ մարդ է, անվանի: Կողքիդ լինեիրք, մեկը մաճող բռներ, մյուսը քեզ համար կալ կասեր: Իհարկե, մագերդ այդքան շուտ չէին սպիտակի: Բայց դու էլ գիտես, որ մեզնից ոչ ոք տուն չի գալու, թեկուզ երբեմն 20 մտաբերում է նանուն, կանեփուտի հավերին, անտառը, շոր ցախի շալակները:

Ինձ այնպես թվաց, թե դու թեք շարդած ծիծեռնակ ես, ընկել ես հայրենական բնում, մի ցուրտ գիշեր պիտի փետանաս, թեքերդ փռես դատարկ բնի վրա: Մահը քեզ թեթև կթվա՞, երբ հիշես, որ ձագերդ ուրիշ երկրներում են: Ո՞ւմ պիտի տաս տան բանալիները, ժանգոտած, ծայրը ծուռ բանալիները, որ միշտ գոտուցդ կախ են:

Քաղաքի մասին հարցրիր: Որքան նահապետական ես, Ավան ամի. ինչպես շփածաղել խոսքիդ վրա, թե այն օրից, 30 երբ հացը կշեռքի վրա դրին, աշխարհքից վերացավ լիությունն ու բարին: Խոսքիդ վրա շփածաղեցի, բայց պատասխան էլ չտվի: Չայնդ ուրիշ աշխարհից էր գալիս, մտքերդ այնքան հին ու միամիտ, բայց շկա ասածդ, Ավան ամի, հիմա ուրիշ օրեր են, պատմեմ էլ չես հասկանա:

Քաղաքն առաջ էլ քեզ համար շարիքի որջ էր: Աշխատում էիր ամեն ինչ բո ձեռքով անել: Տանը քեզ համար կտավատի

Թելերից շապիկ էին գործում, գառան բրդից շալի շալվար, գառան մորթ ես դնում զլխիդ և եզան կաշուց տրեխներ հագնում: Դու մինչև վերջ էլ այդպես մնացիր: Քաղաքին ի՞նչ, թե գյուղում Ավան ամի կա, որի միտքը սառել է, հետ մնացել 30 տարի:

Ի՞նչ ես ապրել: Կոխ ես կացել խոտի խուրձերի հետ, սարում անձրևի, ձյունի տակ ես մնացել, կրծել ես սոխով հաց և անտառում շոր ցախից շալսկ կապել, մթնելու հետ քնել ես, զարթնել աքլորականչին, բանել մինչև մութն ընկնի: Մի անգամ ես քաղաք տեսել, քո ջահել օրերին, երբ կոռ են տարել 10 քեզ էլ, ձիուդ էլ: Ավան ամի, քո տեսած քաղաքը հիմա մի հետ ընկած անկյուն է, ուր մի զույգ կառք է բանում:

Այդպես էլ կմահանաս, և ոչ մի վայրկյան միտքդ տեղահան չի լինի. ոչինչ քեզ չի սասանի: Դու գիտես, թե գյուղը ամուր պտտվանդան է, աշխարհը պտտվում է նույնքան դանդաղ, ինչքան կալիդ կամները:

Հարցրիր ինձ եկեղեցու մասին և խեթ նայեցիր, երբ տեսար, թե ժպտում եմ հարցիդ վրա: Մթնում էր, դու տան դռնակը բաց արիր, երբ հարցրիր ինձ եկեղեցու մասին: Ժպտացի, որովհետև հիշեցի քո հնօրյա սովորույթը՝ իրիկնադեմին տան դուռը բաց անել, որ զանգակների ծլնգոցը կտուրի տակ մտնի: Հիմա զանգակներն ամեն իրիկուն էլ չեն զարկում: 20

Մեր սլառավ կովն եկավ, եղջյուրի մեկը կոտրած: Կովի ետևից եկավ և հարևանի կինը, կովկիթը ձեռքին: Բակում կովը բառաչեց, հորթը գոմից ձայն տվավ, հորթի հետ էլ դու ինչ-որ սրտանց խոսք ասիր կովին, ասես բակում Սամսոնն էր կանգնած:

Կինը շոքեց կրծի տակ, մոտեցար և շոյեցիր կովին, մինչև կինը կիթը պրծնեիր: Այն օրից, երբ նանին մեռավ, կովն առանց քո շոյանքի չի թողնում կթել: Կաթը համաշափ ցայտյուններով զարկում էր կովկիթին, զրնգում էր կաթնամանը, ասես ավազի հատիկներ էր թափվում: Այդպես էին զնգում ժամի զանգերը: 30

Բարեկամներ եկան, ժանոթ-հարևաններ: Քեզ աչքալուս էին տալիս, ինձ՝ բարի գալուստ: Շատերին ես մտահան էի արել, հարկավոր էր մի դեպք ասեիր, որ նրան վերհիշեիր: Եվ երբ

նրանք հեռացան, պատի ճեղքում պահած կեղտոտ փալասի կտորը հանեցիր, միջին՝ տուրքիդ թղթերը: Զոկեցիր և ամենից նորը մեկնեցիր:

— Մի տես՝ ի՞նչքան են ուզում...

Ավան ամի, դու այնքա՛ն քիչ ես տալիս: Ասացի այդ, բայց չհամոզվեցիր:

— Դե մի էզուց գրիր, որ շառնեն: Գրիր, խոսքիդ մերժում չի լինի:

10 Էհտո նորից փաթաթեցիր փալասի մեջ, դիր պատի ճեղքում:

Ճրագն աղոտ լույս էր տալիս, ճրագի տակ այնքան սև էին տան պատերը, օճորքի գերանները: Գետնին՝ նանու տեղտեղ կարկտած կարպետն էր: Մեկնվել էի կարպետի վրա, որովհետև չկարողացա քեզ պես ծալպատիկ նստել:

Հարց ու փորձ արիր:

— Գործիդ անունն ի՞նչ ա...

Էհտո հարցրիր, թե ի՞նչքան են փող տալիս, և երբ ասացի, զարմացար:

— էդքան փողն էլ մարդ կարա ծախսի՞:

20 Քիչ հետո ինքդ քեզ պատասխան տվիր:

— Դե որ հացն առնովի լինի, շրին էլ փող տան, սելի չափ էլ որ փող ստանաս, առաջը չես առնի:

Հարցրի քեզ գյուղից, շրջանից:

— Գյուղս Արսենն ա կառավարում, դե պրիստավի տեղն էլ Սուղու տղան ա...

Շրջանի կենտրոնում առաջ պրիստավ էր մնում: Հիմա դու ճանաչում ես միայն Սուղու տղին և Արսենին, ավելի վերև քեզ համար անթափանց խավար է: Քո ամենահեռու տեղը Սուղու տղի գրասենյակն է: Դու սրտաբաց ես գնում նրա մոտ, ճանաչում ես նրան էլ, Սուղուն էլ:

30 Պատմում էիր գյուղից, ու կամաց-կամաց ձայնդ թուլացավ, պատմությունդ ընդհատեցիր, նստած տեղդ էլ քնեցիր, խոսքդ բերանում կիսատ մնաց, որպես կուլ շտված պատառ:

Ճրագը հանգավ, ինչպես քո խոսքը: Մութի մեջ ճպուռ էր, թե՞ ծղրիդ, պատի ճեղքում ծղրտաց այնպես, ասես մեկը ժամացույց լարեց: Մի քիչ հետո ուրիշ ծղրիդներ էլ կանչեցին...

Առավոտյան տեսա Արսենին, կտուրի վրա հավաքվեցին գյուղացիք: Հեղնար մորթուրը ինձ որ տեսավ, հեռվից թևերը լայն բաց արած, օրորվելով մոտեցավ, համբուրեց:

— Տես է՛, մի գոտկալ էլ չունիմ, կապեմ...

Երբ որ Արսենը տնազ արեց Հեղնար մորթուրին, թե գոգնոցի համար է համբուրում, նեղացավ:

— Թող ողջ լինի, գոտկալ էլ չեմ ուզում... — Խոսք ընկավ թանկ ու էժանից, նավթից, բյաղի գներից, նալ ու մեխից: Կոնատ Ալումը Վարշավայից հարցրեց:

— Բա ի՞նչ են ասում էն կողմերի կոիվներից...

10

Թեկուզ նա եղել է բանակում, լեհական անտառներում թևն է թողել, բայց Վարշավան չի տեսել: Եվ երբ պատասխանեցի, որ Վարշավայի կողմերում կոիվներ չկան, կոնատ Ալումն իսկույն իր պատմությունը սկսեց գերմանական ումբերի մասին, թե ինչպես էին մարդիկ կոտորվում:

Հողերից հարցրին: Կոնատ Ալումը լռեց, տեսավ, որ լսող չունի. ինքն էլ ականջը կախեց հողի համար: Դու էլ եկար, Ավան ամի, եղանիդ ծայրին մի խուրձ խոտ քաղած: Երբ պատմում էի, թե ինչպես պիտի հողերը բաժանել, օրենքն ի՞նչ է ասում, դու դիմացինիդ ուսի վրայով մեկնել էիր վիզդ, աչքերդ շէիր հպում, լսում էիր բերանբաց, որովհետև խոսքը արտիդ ու բոստանիդ մասին էր:

20

Տանը նորից հարցրիր: Տեսա, որ ամեն ինչ սրտովդ չի, ասածիս մեջ քեզ ընդդեմ խոսք կա: Բայց դու չհակառակեցիր, թեկուզ մտքիդ մեջ համամիտ չէիր:

Նույն օրն էլ հեռացա գյուղից: Դու գրպաններս չոր մրգով լցրիր, ճիշտ առաջվա պես, երբ դպրոցում սովորող աշակերտներ էինք: Հետո սոխի սերմ խնդրեցիր:

— Մեր գյուղիներ լավը չի, գլուխ չի բռնում: — Ութ համարի գերանդի ուզեցիր, արջանշանն էլ վրան: Մի անգամ էլ տուն մտա, նայեցի օճորքին, սյունից կախած նանու գդալների կողովին: Մի անգամ Սամսոնը կատուն գցեց գդալների կողովի մեջ. կատուն թռավ, կողովն ընկավ, փայտե մի գդալ ճաքեց, նանին շերեփով խփեց Սամսոնին: Հին տանը ոչ նանի կա, ոչ Սամսոն: Մեկը գյուղի գերեզմանատանն է թաղված, մյուսը

30

գյուղից հազար վերստ հեռու, ուրիշ շրջապատում, ուղեղի մեջ
այլ մտքեր: Լավ է, որ նանին մեռել է ու շի տեսել մեր ցաք ու
ցրիվ լինելը:

Ձին բակում վրնջաց, դուրս եկա: Ձիու սանձն էիր կա-
պում և աչքերդ գետնին խոնարհած խոսում ինձ հետ: Ը

10 — Սամսոնին նամակ գրելիս, ասա թող մի անգամ ոտը
տուն գցի, վահանն էլ... Իմ հալից էլ գրիր: Գան մի բուռ հող
վրաս գցեն, էլ շաղ գան աշխարհով մին: Ձիու գլուխը պինդ
պահի... Հա՛, Սամսոնին գրելուց կասես, թե կարող է էնտեղից
մի արխալուղացու ուղարկի: Գու էլ քեզ լավ պահիր, չմրսես...

Քեզ էիր հուսադրում, որ լաց չլինես: Թուած ծիծեռնակ-
ներից մեկը պատահմամբ եկավ հին բունը, մի քանի պտույտ-
ներ արավ ու հեռացավ: Գրա համար էլ արցունք երևաց աչ-
քերիդ մեջ, երբ կուացար՝ ճակատս համբուրելու:

Անցա կանեփուտի մոտով: Հավերը չկային: Ճանապարհը
ծռելիս մի անգամ էլ ետ նայեցի, բակում տեսա քեզ: Հեղնար
մորթուրը փեշի ծայրով աչքերն էր սրբում:

20 Հիմա քաղաքումն եմ, Ավան ամի, իմ հին աշխատանքին:
Նամակիս հետ ուղարկում եմ սոխի սերմ և արջանշան գերան-
դի: Գոգնոցի կտորը Հեղնար մորթուրին տուր: Երեկ լրագրում
կարդացի, որ Սամսոնին ավելի հեռու տեղ են ուղարկել: Միև-
նույն է, դու ոչ լրագիրը գիտես և ոչ էլ այն երկիրը, ուր որդիդ
է աշխատում:

Նրան կգրեմ քո մասին: Զգիտեմ, մոռացե՛լ է կանեփու-
տը, քեզ: Շատ բարեններ եմ հիշում Արսենին: Տուրքը պիտի
տաս, Սուղու տղին դրա մասին բան չեմ ասել: Հեղնար մոր-
թուրին բարեկիր, նաև Անդրեաս քեռուն: Շատ կարոտալի բա-
րեններ քեզ, Ավան ամի: Մնամ քո՝ Ակսել:

ԱՐԱՐԱՋԻ ՉԱՔԻՆ

Գյուղում միայն Արաբաջի Զաքու տունն է թիթեղյա կտուրով: Այդ տունը, որը գեղի գլխին է, կարծես շոկվել է մյուս քարակույտերից և առանձնացել, որպեսզի իր նախշուն կտուրը չաղտոտվի գյուղի մոխրից ու զիբիլից:

Թիթեղյա կտուրով այդ տունն անհաշտ է գյուղի հետ և իր բարձունքից հպարտ նայում է ներքևը, ուր աղտոտ բակերում աղբի ու կվաջրերի մեջ վազվզում են կիսամերկ, կեղտոտ մանուկներ, վնգստում են շան լակոտներ, կարիքի ու մութի գեմ կռիվ է տալիս գյուղը:

Արաբաջու տան առաջ ընդարձակ բակն է, կողքին փոքրիկ բանջարանոցը, որի մի անկյունում իրար վրա դարսած են ցեխապատ քթոցները:

Ունևոր է Զաքին: Տարին տասներկու ամիս նոքարը նրա տանն անպակաս է լինում: Ամեն ինչից էլ ունի՝ ձիու պայտից մինչև շոր գերանը: Եթե գյուղում մեկին մի բան է պետք լինում, Արաբաջու ներկած դարպասն է ծեծում:

Եվ Զաքին ունեցածը չի մերժում, բայց գիտն, թե ում պետք է տալ: Ամենքն էլ գիտեն, թե ինչպես է, որ նա իր ունեցածից տալիս է և միշտ էլ ավելացնում:

— Նա էն ժամանակ իր բռնը դիզեց, երբ որ դուքան ուներ, և տղեն էլ պրիստավի մոտ պիսեր էր, — ասում էին գյուղացիք, երբ շահելներից մեկը զարմացած հարցմունք էր անում, թե՝

— էս Արաբաջոնց տան ապրուստը հորո՞վ ա, թե ձորո՞վ, որ վերջանալ չունի...

Զաքին իր դիրքը գիտի: Ծիշտ է, նա մի փոշ իրեն զսպված

10

20

է պահում, առաջվա պես գյուղում խնքնիշխան չի, բայց էլի հին շարժ ու ձևը չի մոռացել:

Եթե մի մարդ է գալիս գյուղում ժողով անելու, նա խեղճ է ձևանում: Տուրքն իջեցնելու համար շրջգործկոմին դիմում է տալիս, հնամաշ շոխա է հագնում,— բայց գյուղի երեխեքն էլ գիտեն, որ Ջաքու սնդուկներում պահած քան շատ կա, նրա տավարը մի քանի տուն կպահի:

10 Ամարին Ջավահիրը—սրա-նրա տան հաց թխող, լվացքին օգնող մի այրի կին, որին Ջաքու կինը միշտ կանչում է ու մի փոքր հացով ամբողջ օրն աշխատացնում,— Ամարին Ջավոն շատ լավ գիտի Արաբաջու խալու և կարպետի հաշիվը:

— Կոներս կոտրատվեցին նրա խալիքը լվանալով,— ասում է նա հարևան կանանց:

* * *

Ջավոնի տղան՝ Օվիսը, Արաբաջու տանը նոքար էր: Ջավոն շատ աղաչեց Ջաքուն, որ Օվիսին վերցնի:

— Չի լինի,— ասում էր Ջաքին,— քո տղան շատ ա կապը կտրած: Իմ նոքարը պիտի խոնարհ լինի: Ա՛յ, տես Օրուչը, հալալ ծիծ կերած ա...

20 Օրուչը նրա թուրք նոքարն էր: Եվ այդ ասելով նա կանչեց.

— Օ՛րուչ...

— Համմե, աղա,— պատասխանեց Օրուչն ու ծլունս, կանգնեց նրա առաջ ամաչկոտ հարսի պես:

— Գոմը լավ սրբի՛ր,— ասաց Ջաքին, հենց այնպես, մի հրաման տված լինելու համար: Օրուչը գլուխը կախ հեռացավ, ցախավելը վերցրեց և փնաց արբած գոմը մեկ էլ ավլելու:

Գործին մեղամտեց և Ջաքու կինը: Նա էլ խնդրեց.

— Հաց չունեն ուտելու, դե ո՞նց անեն,— ասաց նա այն ժամանակ, երբ ամուսինը մեղմացել էր, շարություն չկար սրտում:

30 Ջաքու կինը վաղուց էր նկատել, որ ամուսինը խաղաղ և զիջող է այն ժամանակ, երբ շաքար է շարդում իր ձեռքով և մանր կոտորներ անելով տալիս է նոքարին կամ երբ շոր հաց է փրթում յուզոտ ապուրի մեջ և հինգ մատով իր փրթոջը խառնում: Այդպիսի մի օր էլ նա իր համաձայնությունը տվեց:

— Ասա թող երեսիս շատ շխուփ, լեզուն մի քիչ հավաք պահի,— դարձավ նա Զավոյին, որ վարկատած շալի տուտով երեսը ծածկել էր և գլուխը խոնարհել նրա առաջ:

Զավոն ուրախ տուն եկավ, բայց ինքն էլ շիմացավ, թե ինչո՞ւ արցունքներ եկան աչքերից: Արցունքները սրբեց, որ Օվիսը շտենի և պատմեց որդուն:

Որդին անտրտունջ համաձայնվեց: Վաղուց էր որոշել նոքար մտնել, արդեն հասակն առած տղա էր, մի տեղ աշխատանքի պիտի գնար: Բայց Զաքու մոտ շէր ուզում ծառայել. ուրիշի մոտ էր ուզում նոքար գնալ: Հիմա, որ Զաքին համաձայնվել էր, էլ անհնար էր ուրիշի մոտ ծառայել: Զաքին մի թշնամություն կաներ նրան, ով իր խոսքը տափով կտար:

10

Օվիսը դուրս եկավ տնից, անցավ Զաքու դարպասի մոտով ու նստեց գյուղի վերև սեպի պես ցցված քարի վրա:

Նստել էր Օվիսը քարին, նայում էր գյուղին ու միտք անում, թե որքան պիտի աշխատի, որ էլ նոքար չլինի: Տանը հասած քույր ուներ և մի փոքր եղբայր: Նրա հոգան ավելի քույրն էր. շոր շունի, բորիկ է: Ո՞վ է նրան առնելու, ում ցավն է աղքատի օջախից կրակ վառել:

Օվիսի հայրը վաղուց էր մեռել: Մրսել էր հանդում ուրիշի համար վար անելիս: Այն ժամանակ Օվիսը խելքը գլխին երեխա էր: Միտն ընկավ, թե ինչպես մի հավ կռան տակին գնաց Զաքու դուքանից շաքար առնելու հիվանդ հոր համար: Զաքին հավը տնտղեց ու քմծիծաղ տալով ասաց, թե աղքատի հավն էլ է լղար: Հետո շաքարը կշռելիս, հարցրեց թե՝

20

— Ապերդ հոգի ա՞ տալիս...

Հոր մահից հետո տան պակասն ավելի շատացավ: Մի կով ունեին, էն էլ տարան տուրքի դիմաց, և իրենց մնաց երկու այծ և ութ հավ:

30

Իրիկուն էր արդեն, երբ նա տուն եկավ, մի քիչ շոր հաց ջիբում դրեց և էլի դուրս գնաց ընկերների հետ գրույց անելու: Ընկերներ ուներ, իր նման աղքատ, շարքաշ աշխատող: Գյուղում նրանց անվանում էին «Ղարիբանոցի» խումբ: Ղարիբանոցը գյուղի աղքատ թաղն էր, ավելի կեղտոտ, ավելի ավերված:

Տաք օրերին, երբ արևը առատորեն ջերմութիւն է սփռում գյուղի վրա, Ղարիբանոցի պատերի վրա կարելի է տեսնել կեղտոտ լաթեր. պատերի տակ ցնցոտիներ հագին նստոտած են կին ու աղջիկ, որոնք իրենց զգեստներն են արևին տվել:

Մի օր էլ, մի կոմսոմոլիստ տղա եկավ ու խմբին շատ բաներ ասեց: Տղերքն այն հասկացան, թե պետք է կազմակերպվել և սովորել, Եվ առաջին անգամ, արևոտ մի օր, քաղաքից եկած կոմսոմոլիստ տղան այնքան նոր բան պատմեց նրանց...

10 Արարաջի Զաքու համար Ղարիբանոցի խումբն աչքի փուշ էր: Նա առիթ չէր փախցնում իր կծու արհամարհանքն արտահայտելու: Մի օր էլ, երբ Զավոն նրանց բակում բուրդ էր լվանում, Զաքին դարձավ նրան.

— Զավո՛, տղադ ասում են ուսումնագետ է դառել, հը՞, — ու ժպտաց քենոտ, երևաց առողջ ատամների երկու շարքը, թավ ունքերի տակ պսպղացին խոժոռ աչքերը:

Զավոն անխոս էր: Մի միտք էր անում, թե չլինի Օվիսին դուրս անի, էլ նոքար չպահի:

20 Բուրդ էր լվանում, լվացածը դարսում քարերի վրա: Զուրը ծլում էր բուրդից, Զավոյի աչքերից էլ արցունք էր թափվում առվի ջրի մեջ:

• • •

Օվիսը նախրապան էր: Առավոտ կանուխ, ծեգը տալիս, Զաքու տավարն առաջ արած, օրվա հացը մեջքին կապած, սար էր գնում, իրիկնադեմին տուն գալիս:

30 Հացի հետ, հրահանգչի տված գիրքն էր ու մատիտը: Մարում տավարն ախորժով խոտ էր ուտում, ինքը պառկում էր մի թփի տակ և գիրկապ անելով օրվա դասը սերտում: Երբ հոգնում էր կարդալուց, պառկում էր մեջքի վրա, նայում երկընթի երեսով լողացող ամպերին ու միտք անում: Մտքերն էլ լողում էին ամպերի պես:

Մի իրիկուն էլ Զաքուն կանչեցին գեղամեջ: Քաղաքից մարդ էր եկել: Եկողն անբեղ, անմորուս մի երիտասարդ էր:

Երբ Զաքին ներս մտավ, նրան առաջարկեցին պայմանագիր ստորագրել բատրակ վարձելու համար: Նա ուզեց չեմ ու

շում անել, բայց փորձված աղվես էր. մտածեց մի քիչ և պայ-
մանագիրն ստորագրեց:

Օվիսին էլ կանչեցին, որ նա էլ ձեռք բաշի: Արաբաջի Զա-
քուն այդ դուր չեկավ: Նա համաձայն էր նշանակած գինը
տալու, մի մեծ բան չէր նրա համար, իր մտքում դրածն էլ
համարյա այդ շափ էր. բայց նրան դուր չեկավ, որ իր նոքարը
ստորագրեց իրենից վերև: Նրա ձեռագիրն էլ ավելի վարժ էր
ու սիրուն:

— Ե՞րբ սովորեց գրել,— մտածեց ինքն իրեն ու տուն
դարձավ: Այդ գիշեր քունն ու չեկավ: Անկողնում շուտ էր գա- 10
լիս, ոնց որ շիշի խորոված. տկարութուն զգաց, կարծես ոս-
կորները ցավում էին, մեջքն էլ ծակում էր:

Վեր կացավ տեղից, շապկանց անց ու դարձ արեց
սրահում:

— Օրո՛ւջ:

— Համմե, աղա,— գոմից քնաթաթախ ձայնեց նա:

— Էգուց գոմը լավ կսրբես: Օվիսին էլ ասա,— ու էլի ետ
դարձավ, անկողինը մտավ:

Մի իրիկուն էլ, տավարը տեղավորելուց հետո, Զաքին
Օվիսին կանչեց, մի քանի ռուբլի տվեց աշխատավարձի հաշ- 20
վին: Փող տալու ժամանակ Զաքին մի քանի խոսք էլ ասաց,
«խելոք» խրատներ, մեծի առաջ խոնարհ լինելու, հարգ ու պա-
տիվ ճանաչելու մասին: Օվիսը փողը սեղմել էր բռի մեջ, նա-
յում էր Զաքուն, նրա հաստ բեղերին և ուրախ էր, որ համար-
ձակ է նայում Արաբաջու աչքամեջին:

Իսկույն տուն վաղեց: Առաջին վաստակն ուզում էր մորը
ցույց տալ: Ամարին Զավոն իր կյանքում այդպիսի երջանիկ
երեկո քիչ էր տեսել: Մի քանի անգամ փողերը համարեց, մի
շորի տուտում կապեց պինդ և դրեց ապահով տեղ: Այդ գիշերը
մի քաղցրութուն կար այժի շոր ու կարծր պանրի մեջ: 30

Մի քանի օր անց, Զաքին նրան քաղաք ուղարկեց, խոփը
զողելու, Օվիսն առիթից օգտվելով մի քանի արշին բյազ
առեց, մի գրվանքա շաքար, երկու տետրակ, մատիտ և լենինի
նկարը:

Միից սեացած, մզլոտած խրճիթում լենինի նկարը Օվի-
սի համար դարձավ հատուկ խնամքի առարկա: Նա շատ ան-

գամ տուն գալիս առաջին հայացքը նկարին էր ուղղում, տեսնի
իր տե՞ղն է, շի՞ ծովել կամ շի՞ կեղտոտվել:

* * *

Ընկերները մի օր Օվիսին իմաց տվին, թե քաղաքից
մարդ էր եկել գյուղի տավարը ցուցակ անելու: Արաբաջին իր
տավարը մեկին տասը պակաս էր գրել:

— Ես լսում էի, ասաց թե երկու կով ունիմ, մի երինջ,
մեկ էլ մի ավանակ: Մի քանի հոգի ուղեցին հակառակել, Զա-
քին աչքերն էնպես խոժոռեց, որ տապ արին,— ասաց մեկը:

— Ոնց թե, բա դուք որտե՞ղ էիք...

10 — Ուրեմն տերությանը խաբե՞ց. մենք մեռած ենք էլի,—
զայրացած հարեց Օվիսը:

Եվ Զարիբանոցը որոշեց գաղտնի տեղեկութուն ուղարկել
քաղաք, հայտնելով Արաբաջու ունեցած տավարի ճիշտ քա-
նակը:

— Մաթո՛ւ, ես ասեմ, դու գրի,— դիմեց Օվիսն իր ըն-
կերներին մեկին,— կով՝ ութ գլուխ, վեց եզ...

— Մի՛նն աշառ ա, մի՛ հաշվի, հինգը գրի,— ասաց մի
ուրիշը:

— Լավ, հինգը գրի, երկու ձի, հարյուր քսաներեք

20 ոչխար...

Մի շաբաթ հետո ամբողջ գյուղն էր խոսում այն մասին,
թե Արաբաջի Զաքին սուտ է ասել տավարը գրելիս, ու մեկը
«դանոս» է գրել: Իսկ Զաքին կատաղել էր, տեղ ու դադար չէր
գտնում: Արագ քայլերով բակն էր շափում, իրեն-իրեն թոն-
թորում:

— Էսպես էլ ժամանակ, ոչ կարգ, ոչ վախ...

Երբեմն էլ իր սրահից նայում էր Զարիբանոցի խղճուկ
տներին և զայրույթից մոռում:

— Էս շան լակոտն իմ գլխիս ձեն շատ ա բերելու:

30 Եվ Զաքին հենց նույն օրը որոշեց Օվիսին դուրս անել:

— Թող գնա սատկի սոված շան նման:

Բայց երեկոյան դեմ զայրույթը մի քիչ նստեց: Նա գերա-
դասեց մի ամիս էլ սպասել և աշունքադեմ դուրս անել:

Օվիսն այդ իրիկուն Զաքու տանը հաց էլ չկերավ:

— Կփռումանես շան նման,— հետևից զայրացած կանչեց Զաքին և կարգադրեց, որ նրա բաժին թանապուրը Օրուջին տան:

Օրուջը նստել էր գետնին, նրանց սեղանից մի քիչ հեռու և գլուխը կախ ընթրում էր: Նա գիտեր, թե ինչու է «աղան» շարացել: Եվ իր մտքում Օրուջը մեղադրում էր Օվիսին, նրան անխելք համարում:

Առավոտ կանուխ, երբ միասին գոմն էին ավլում, Օրուջը Օվիսին ասաց.

— Այդպես չի լինի, աղան հարուստ ա, մենք քյասիր: Եվ խնդրեց, որ այդ մտքից հետ կենա, դարձի գա, Զաքու սիրտը շահի ու իր քյասիրության մասին մտածի:

Օվիսը ժպտաց, աղբրով լի քթոցը շալակեց ու դուրս եկավ գոմից: Նա շատ անգամ էր խոսել Օրուջի հետ, փորձել էր նրան իր կողմը քաշել, գրել կարդալ սովորեցնել, բայց Օրուջն այդ չէր ցանկացել: Սովորելը նա իր ուժերից վեր էր համարում:

Բարի էր Օրուջը, խավարամիտ ու անգիտակից, աչքը ծայր աստիճան չբավորության մեջ բացած, տնով-տեղով սրա-նրա մոտ նոքարությունով գլուխ պահող ընտանիքի զավակ: Տանն ուտելիք չկար, իր գլուխն էր պահում մի փոր հացով: Զաքին նրան երկու ոչխար էր խոստացել մի տարվա ծառայության համար:

Օրուջը հրաժարվել էր պայման վապելուց: Նա ուրախացել էր, որ Արաբաջու մոտ նոքար է, որովհետև Զաքին նրան այդպես էր սովորեցրել: Օրն ի բուն աշխատում էր, պառկում գոմում, փտում էին շորերը կծծահոտի մեջ, բայց մի բառով էլ դժգոհություն չէր հայտնում: Աչքն իր երկու ոչխարի վրա էր, որ տարին լրանալուց հետո պիտի տուն քշեր:

Օրուջն Օվիսին սիրում էր: Նա ճանաչում էր նրանց աղքատ ընտանիքը, տեսնում էր, որ Օվիսը լավ աշխատող է, բայց չէր հասկանում, թե ինչու է նա Արաբաջուն հակառակ, ինչու է պայմանագիր վապել: Եվ նա մտքում դրել էր լուռ ու խոնարհ նոքար լինել, երբեք չտրտնջալ:

10

20

30

Աշունքանում էր:

Հունձը վերջանում էր: Կալիբրոս անավտոսից մինչև արևա-
մուտ եզներն էին այրվում արևի տակ: Չոր հասկերը կամերի
կայծաքարի տակ տրաք-տրաքում էին, փշրվում: Փոշի էր
ելնում կալերից և երգի ձայն:

Գյուղացիք շապկանց, մի սպիտակ շոր գլխներին, ճի-
պոտն օդում շարժելով, հա քշում էին եզներին. ոմանք եղա-
նում, կալսում, աջ ու ձախ ցրում: Իրիկնադեմին եզները հոգ-
նած պառկում էին գետի ափին, ուռիների տակ, որոճում և
10 պոշով ճանճեր քշում, իսկ կալերում թեղ էին տալիս, իրիկվա
հովին ջոկում ցորնի հատիկները դեղին դարմանից:

Սարերում խոտը տեղ-տեղ դեղնել էր: Օվիսը նախիրն
ավելի հեռուներն էր տանում, սարերի լանջերը, ուր խոտը
դեռ վանաչ էր:

Աշունքանում էր, և Օվիսը գիտեր, որ Զաքին իրեն էլ չի
պահելու: Հոգսը տան մասին էր: Տունը որ չլիներ, գյուղից
փհեռանար քաղաք, կսովորեր, առաջ կգնար, և էլ հոգս չէր
անի: Տանը մայրը անձար, քույրը՝ հասած աղջիկ և եղբայրը
փոքրիկ, փթանոցի պես կախվել էին ոտքերից, դանդաղ էր
20 վազքը, մեղմ՝ հարվածի թափը:

Չէր ընկճվում: Բավական գրաճանաչ էր դարձել, առաջին
գիրքը փոխել էր: Զգում էր, որ գլխում մի փոքր պաշար կա
ամբարած:

Արևը, աշունքաշեմի թուլացած արևը, մայրամուտն էր
ապրում, ասես կռիվ էր տալիս, մահու կռիվ, որ մի ժամ էլ
չող տա ու ջարդված քաշվում էր սարի ետև, իր շողերը խա-
ղացնում ամպերի վրա:

Արևմուտ էր, երբ նախիրը տուն բերեց: Օրուջն էլ տանն
էր: Երբ նախիրը դարպասով ներս արեց, Օրուջը մոտեցավ
30 Օվիսին և ականջին փսփսաց, թե աղեն իրեն այսօր մի արխա-
լուղ է փեշքեշ տվել. լավ խաբար է առել—թուղթ է ստացել իր
որդուց:

Արարաջու որդին, որը պրիստավի մոտ գրագիր էր, թավ-
րիկ էր փախել: Նրա օրոք գյուղում շատ մարդու քիթ էր

արնոտվել, շատ էլ թալան տարավ իր հետ, տավար ու խալի անցկացրեց Արազի մյուս ափը:

Օվիսն ուրախանալու պատճառ շուներ: Նա գոմի դուռը բաց արեց, որ թին վերցնի, բակը քերի: Դուռը քաց արեց և մի րուպե քարացած մնաց:

Գոմի անկյունում, տախտակների վրա նստոտել էին Զաքու բարեկամ մի քանի գյուղացի, տերտերն ու Արաբաջին: Նրանց առաջ մի քանի գավաթ գինի էր, կանաչեղեն ու խորոված:

Օվիսն իսկույն հասկացավ, որ Թավրիզից թուղթ առնելու համար են հավաքվել: 10

— Հը՛, կարո՞ղ ես էլի իմաց տաս,— դարձավ նրան տերտերը ու կուշտ ուտելուց բխկացրեց կոկորդում:

Օվիսը ոչինչ չպատասխանեց: Թին առեց ու դուրս եկավ:

Գոմի քեֆը թեժացավ: Զաքին իր գիտեցած մարդկանց էր հավաքել, գոմի անկյունում մի անգամ ապահով կերպով սիրտ բացելու, դարդահալ լինելու: Նեղություն շա՛տ. ապրելը դժվարացել էր նրա համար: Լուր կար, որ հողերը պիտի խլեն, տուրքը տարեցտարի ավելացնում էին:

— Շան ծիծ կերած ա, տերտեր,— ասաց Զաքին գլուխը դեպի բակը շարժելով: 20

— Փուչ ժառանգ ա: Ասում են Լենինի պատկերքն էն ա տան պատից կախած,— պատասխանեց տերտերը և մի րուբլ սղալելով խմեց Արաբաջոնց «ննջեցելոց» հոգու համար:

Գինին թուլացրել էր ուղեղի կապերը: Լեզուն իրեն-իրեն շարժվում էր նրանց բերանում, և սրտի խորքում պահված մտքերը ակամա դուրս էին թռչում:

Օվիսը բակում աշխատում էր: Նրա ականջին էին հասնում խոսքեր, որ չէր լսել նրանց բերանից:

Հետո տերտերը մի երգ ասեց.

— Բա՛... ողջում կենաս, տերտեր, էդ հո իմ Թեանիս ասած երգն ա,— բղավեց Զաքին այնպես բարձր, որ փողոցումն էլ կլսվեր: Երգ չէր, այլ մորթվող ածասունի խոռոց: 30

Օվիսը լսեց, սիրտը թունդ առեց, թիակի կոթն ավելի սեղմեց: Ուղեց դուրս գնա, ընկերներին իմաց տա, մեկ էլ մտածեց, որ հարբած են, հարկավոր չի:

Երգը փոխեցին: Այս անգամ մի ուրիշն էր երգում. նա, որ Քեանի աջ կուռն էր, թալանով իր տունն էր լցրել:

Օվիսն էլ շղիմացավ, գոմի դուռը բաց արեց ու ասաց.

— Զաքի դայի, էդ երգը մի ասի, լավ չի լինի...

Մի պահ լռեցին:

Հետո Արաբաջին գոռաց.

— Դե կորի՛, շան ձագ...

Օվիսը մի երկու քայլ էլ արեց ու նորից խնդրեց: Հարբած խումբը շոտծ և անմիտ աչքերով, բերանը բաց նայում էր Օվիսին:

— Ես քո խրատողին էլ, քո կենինին էլ,— բղավեց Զաքին ու տեղից ծառս ելավ, ամենհի գազանի պես:

Օվիսի արյունը գլխին խփեց: Նրա աչքին ընկավ գինու տիկը: Մոտ վազեց, տիկը գետնով տվեց: Կարմիր գինին խառնվեց գոմի կվաջրին:

Զաքին եզան կապն առեց ու մի քանի անգամ հասցրեց Օվիսի մեջքին, կռան: Օվիսը ծառս էր լինում, ծոմնատվում հարվածների տակ, շանգոտտում Զաքու երեսը, բեղից ու մազերից քաշում: Մեկը հետևից բացի տվեց, և Օվիսը փովեց գետնին: Արյունը բերանն էր լցվել, լնդերքում զգաց մի սուր ցավ: Եվ Օվիսի գինու պես կարմիր արյունն ևս խառնվեց կվաջրին...

* * *

Օվիսը տնքում էր հազար կարկատանով վերմակի տակ պառկած: Ցավում էին մեջքը, ուսը, ջարդված ստամի տեղը մրմռում էր: Ճրագի աղոտ լույսի տակ հազիվ էր նշմարվում աչքի տակի ուռուցքը:

Զավոն շուտ-շուտ փալասի մի կտոր թաթախում էր ջրի մեջ, որդու գլխին դնում: Եվ երբ Օվիսը աչքերը բաց էր անում, մայրը կռանում էր նրա վրա, հարցնում.

— էլի ցավը կա՞...

— Հիմա մի քիչ լավ եմ,— պատասխանում էր Օվիսը, աչքերը նորից փակում:

Գլխավերևում նստոտած ընկերները, երբ Օվիսն աչքերը բաց էր անում, մի քիչ մոտենում էին, սիրտ տալիս:

— Դու հենց գիտես մենք մեռած ենք...

— Թող մի լուսանա...

— Թողը գցենք վիզը, քաշ տանք դատարան: Էս ո՞ր տարին ա...

— Դի քիչ հետո ներս մտավ Մաթոսը:

— Հը՞...

— Ասեցի: Ծան նման դողն ընկել ա ջանը: Կանչեց մի կողմը, թե չի՞ լինի որ հաշտվենք, մի բան տամ ու սուս կացեք, էղածն էլի ա: Դարպասն էնպես շրխկացրի, որ պատիցն էլ քար ընկավ...

10

— Դե հըմի թող իրեն ուտի:

Ջավոն փորձեց հակառակել, թե հարկավոր չի թշնամանալ Արաբաշու հետ, էլի մի փորձանք կբերի, լավ կլինի, եթե հաշտվենք:

— Դու սո՛ւս, Ջավո հոքիր: Էլ անցավ... Մեր մեռած օրը պիտի լինի, որ Ջաքին անպատիժ մնա:

Եվ ընկերներն սկսեցին խորհրդակցել վաղվա անելիքների մասին: Մաթոսը պնդում էր, որ հարկավոր չի Օվիսի արնոտ արխալուղը լվալ: Նրա միտքն էր վաղ առավոտյան արխալուղն առնել ու դատարան գնալ, ամենքին ցույց տալու:

20

— Բա էս գիշեր մի բան շանե՞նք,— համարյա փսփսուկով ասած նրանցից մեկը:

— Ի՞նչ:

— Գնանք Ջաքու քթոցները ցրիվ տանք... Դեզը կրակենք. էն որ բոստանի կողքին է:

— Չէ՛, հարկավոր չի, էդպես բաներ մեզ սազական չի: Էգուց գեղում ի՞նչ կասեն,— պատասխանեց Մաթոսը: Մյուսները համաձայնվեցին:

Օվիսը քնել էր: Ու նրա քնից օգտվելով ընկերներն սկսեցին պատմել, թե ով ինչպես է լուրն իմացել, ինչպես է հավարին հասել:

30

— Ես եզները տարել էի ուռոց տակ: Մեկ էլ տեսնեմ տերտերը տմբտմբալով եկավ, կռացավ գետի վրա, ձեռքերը լվաց: Ա՛յ տղա, ասացի, տերտերը հարբած լինի կասես: Ինձ որ տեսավ, մատը թափ տվեց, թե՛ «անխրատ, անիրավ, դե մի

գնա ընկերդ տես, Օվիսին, Օվիսին...»: էդտեղ մի բան սրտումս տպվեց...

Զավոն լուռ լսում էր: Նստել էր օջախի մոտ, նայում էր որդուն, ընկերներին: Նստած միտք էր անում, թե ինչի՞ցն է, որ այդքան սրտակից են դեպի Օվիսը, ասես բոլորն էլ մի տան տղաներ են:

Օվիսը աչքերը բաց արեց:

— Հը՞,— հարցրեց Մաթոսը:

— Քունս մի քիչ տարավ, հիմա լավ եմ...

10 Դուռը ճռռաց, ու շեմքին երևաց Զաքու կինը, կռան տակին ինչ-որ կապոց: Զավոն տեղից վեր կացավ, աղջկանը ձայնեց, որ կարպետի վրա ներքնակ փոխ և Զաքու կնոջը խնդրեց նստելու:

— Չէ՛, գնալու եմ...

Մոտեցավ Օվիսին:

— Ո՞նց ես... Բան չկա, կմեծանաս, կմոռանաս:

Ոչ ոք նրան պատասխան չտվեց, կինը տեսավ, թե ինչպես Օվիսը երեսը շրջեց, իսկ Մաթոսը նայեց մյուսներին, որոնց աչքերից ասես կայծեր էին թռչում: Անհարմար դրու-
20 թյունից դուրս գալու համար, Զաքու կինն սկսեց պատմել, որ ամուսնու բնավորության մեջ այդպիսի մի «չար քամի» կա, բռնելիս ինքն էլ չի իմանում, թե ի՞նչ է անում:

— էգուց դատարանում էդ քամին կհանեն,— ասաց Մաթոսը:

Զաքու կինը պատասխանելու ոչինչ չգտավ, լռեց: Մի քիչ հետո, կռան տակին կապած կապոցը բաց անելով, Զաքու կինը երկու պղնձե աման մեկնեց Զավոյին:

— Զագի մեղր ա, մեկ էլ կարագ: Թող ուտի, սիրտը կառնի...

30 Զավոն մոտեցավ, ամանները վերցրեց: Ու հենց այդ ժամանակ Օվիսը տեղից թռավ, խլեց ամանները, գետնով տվավ: Պղնձե կլոր ամանները զրնգոցով ֆռռացին սենյակում, բաց թողած հոլի պես:

— Գնա՛, գնա՛ ասա, որ Արարաչու տան հացը հարամել ա. իմ արնագինը էս չի, ասա՛, էգուց կիմանա...

Զաքու կինը գլխիկոր դուրս եկավ:

ՎԱՂԸ ՄԱՐՏԻ 8-Ն Է

Մարանենց հին տունն այդ օրը անճանաչելի էր դարձել: Մզլոտած օճորքը սրբել, մաքրել էին, գետինը լավ ավելել, պատերի ճեղքերը թղթով կալել ու շարվեշար կախ արել նկարներ, կարմիր շորով նկարների շորս կողմը սարքել: Ծվ այնքան վա՛ռ էր երևում պատերի վրա կարմիր գույնը:

Երբ Մարանենց պառավը շեմքից ներս մտավ, զարմացած մնաց:

— Ախշի, էս հո հարսանքա՞տուն եք շինել մեր դարադամը:

— Մինա՛ հորքիր, դու էգուց արի, հարսանիքն էգուց կտեսնես,— ձայն տվեց Աննան, որ քթոցի վրա բարձրացած աշխատում էր կարպետի մի ծայրը հագցնել սեպին:

— Բա էդ ի՞նչ ա,— հարցրեց պառավ Մինան, մի քիչ առաջանալով:

— Էս բեմ ա, բեմ... էգուց թատրոն ենք տալու,— պատասխանեց կինը և կարպետի ծայրը սեպին հագցնելուց հետո քթոցը մոտեցրեց մյուս պատին, վաղվա ներկայացման համար կարպետից վարագույր սարքելու:

Պառավ Մինան մոտեցավ մի ուրիշ կնոջ, որ թղթեր էր խմորում ու փակցնում պատերին: Հարցրեց նրան, թե ինչ թղթեր են, գլուխն օրորեց ու, իրեն-իրեն խոսելով, դուրս գնաց: Կանանցից մեկը նրա հտևից շանչ տրեց, մյուսը նախատեց շանչ անողին:

— Ի՞նչ է հասկանում խեղճը, որ շանչ ես անում...

— Է՞նչ չի հասկանում: Գիտե՞ս ինչ սառանան ա: Ասենք

10

20

հիմա յա խեղճացել: Մարանենց Մինան մի ժամանակ ունեք որ...

— Ձեռքովը գա, հիմա էլ կանի,— ձայնեց մի ուրիշ կին, որ օգնում էր Աննային՝ բեմը սարքելու:

— Ասում են հարսին գերեզման գցողը սա է եղել... էնքան թուք ու մուր է տվել երեսին, ծեծել... Հիմա եկել ու քաղցր զրույց ա ուզում անի մեզ հետ: էգուց տես ինչեր ա պատմելու մեր մասին...

10 Աննան և սարքում էր բեմը, և կիսականջ լսում ընկերների խոսք ու զրույցը Մարանենց պառավի մասին: Եվ երբ բեմից իջավ, որ հեռվից նայի պատերից կախ կարպետներին, հանկարծ աչքն ընկավ սեղանին ու սեղանի վրա դրած շալին: Աչքն ընկավ, ու մի վայրկյան աչքը սառած մնաց:

— Հը՞, զարմացա՞ր: Տես ինչ շալ եմ առել,— ասաց շալի տերը, նկատելով Աննայի սառած հայացքը:

— Չէ, էնպես աչքս ընկավ... Ախշի, մի տեսեք բեմը պակաս տեղ հո չունի՞... — Ու մինչդեռ այս ու այն կողմից ձայն էին տալիս, մեկը՝ թե կարպետը ծուռն է կախած, մյուսը՝ որ բեմը լավ է սարքած,— Աննայի աչքը շալին էր: Կամաց-կամաց դեմքի արտահայտությունը փոխվեց, զգաց, որ հոգնել է ու նստեց տախտակի վրա...

20 Այդպիսի շալ ունեք և քույրը: Փաթաթվում էր միջին, երևում էր միայն աչքն ու ունքը: Այնքա՞ն սիրուն էր Փառանձեմը ծաղկանկար շալով: Նստում էին տան առաջ, թթենու տակ, խաղեր էին անում, Փառանձեմը տիկնիկներ էր շինում, տալիս իրեն: Եվ իսկույն Աննան պիտի վազեր հարևանի աղջիկներին ցույց տալու իր նոր տիկնիկը:

30 Աննայի միտն ընկավ, թե ինչպես մի անգամ տեսավ քարերի վրա ընկած բարակ, երկար, պսպղուն կտոր... Ուրախացած մոտ վաղեց, որ վերցնի, Փառանձեմը տեսավ ու ծկրվեց: Քարերի վրա գարնան արևի տակ տաքացող օձը կամացուկ շուլավեց ու պահվեց քարերի արանքում:

Աննան ժպտում էր:

— էն ո՞ւր փախավ կտորը...

— էն օձ էր, օձ... Որ բռնեիր, ձեռքդ կկծեր,— ասաց Փառանձեմը ու գրկեց նրան:

Նստում էին թթենու տակ, ու եթե տանը մարդ չէր լինում, Փառանձեմն Աննային ուղարկում էր հարևանի աղջկան կանչելու: Մտողներն անհաշտ էին իրար, գնալ-գալ շունեին: Իսկ Փառանձեմն ու հարևանի աղջիկը մոտ ընկերներ էին: Եվ հենց որ տանն էլ ուրիշ մարդ չլիներ, Փառանձեմը կասեր.

— Աննա, գնա Սրբուհուն կանչիր... Համա լեզուդ վկտրեմ, որ ուրիշին ասել ես: Էլ տիկնիկ չեմ շինի քեզ համար:

— Ինչի՞ ես պարապ նստել, Աննա,— ձայն տվավ սեղանի վրա թուղթ խմորող կինը,— վե՛ր, գործ արա: Էգուց մարտի 8-ը լինի, դու պարապ նստե՞ս...

10

Աննան ցնցվեց, սթափվեց: Ձեռքերը մազերին տարավ, երեսի վրա կախ ընկած մազերը հտ քաշեց, մոտեցավ սեղանին: Մի կին պատմություն էր անում: Աննան խմորը մատով քսում էր թղթին, դեն դնում: Մի ուրիշը խմորած թղթերը փակցնում էր ծխից սևացած, հարյուր տարվա պատերին:

Մի անգամ էլ բակում նստել, միամիտ խաղում էին: Հանկարծ դուռը բացվեց, մայրը ներս մտավ ու Փառանձեմին ասաց.

— Գնա մազերդ սանրի... Էն կապույտ դեյրագ էլ հագի: Տունը մարդ ա գալու:

20

— Բա ե՞ս...— հարցրեց Աննան: Մայրը շպտասխանեց, ավելն առավ և սկսեց արագ-արագ ավելի սրահը, գետնին խսիր փռել: Փառանձեմը նայեց, շատ նայեց Աննային, ու երբ մայրը մի անգամ էլ կանչեց, վեր կացավ ու ներս մտավ տուն:

Մի քիչ հետո Մարանենց պառավն եկավ: Ու դեռ չէին քշվչացել իրար հետ մայրն ու Մարանենց Միհան, երբ ներս մտան հայրն ու մի ուրիշ երկար հասակով մարդ, որ կուռալիս գլուխը դուռը զարկեց ու թոնթորաց:

— Ափի, էլի մեր եզը պիտի ծախե՞ս,— հորը հարցրեց Աննան: Ի՞նչ ցուրտ էին այն մարդու մատները, երբ նա ձեռքը մեկնեց և Աննայի թշերից բռնեց: Գոմում մի պառավ եզ կար: Ամեն զարնան հայրը մտադրվում էր ծախելու, առնողները գալիս-գնում էին, ու եզը մնում էր գոմումը: Այդպես էլ մնաց, մինչև որ մի առավոտ գոմում անշնչացած տեսան:

30

Թե ինչ կատարվեց այդ և հետագա օրերում, Աննան չէր կարող հասկանալ: Ու մի օր էլ շատ միս բերին, Փառանձեմի

131

համար նոր շորեր առան, եկան հարեան ու բարեկամ, բակում կրակներ վառեցին ու մեծ կաթսաները դրին կրակի վրա:

Փառանձեմը լաց էր լինում: Աննան հենց որ հեռանում էր նրա մոտից, ուրախ-ուրախ թռչկոտում էր: Եկողները նրան միրգ էին տալիս: Բայց երբ մոտենում էր Փառանձեմին, ուրախությունը կորչում էր...

Մութը ընկնելուց՝ Փառանձեմը Աննայի հետ կամացուկ տնից դուրս եկավ: Նա տան հտեին պահվեց, Աննան վազեց Սրբուհու մոտ: Այն իրիկուն նրանք քիչ խոսեցին: Հանկարծ մայրն երևաց: Փառանձեմը աղաչեց, լաց եղավ:

— Ջան, էլ շեմ անի: Սիրտս ուզեց:

Մայրն էլ լաց եղավ Սրբուհու հետ: Հետո բաժանվեցին: Տան կողմը ծովելիս, Փառանձեմը հտ նայեց: Սրբուհին էլ էր կանգնել իր տեղում: Եվ երբ տուն մտան, Աննան կամացուկ քրոջը հարցրեց.

— Բա Սրբուհին գիշերս բոստա՞նում պիտի քնի...

Փառանձեմը կոացավ, համբուրեց Աննային. արցունքները կաթեցին նրա աչքերից:

20 Զուռնի ձայնը երբ լսվեց, Աննան դուրս թռավ: Գարպասը բաց արին, ինչ-որ մարդիկ հարայ-հրոցով, դուռնա-դհուրով բակը մտան: Պարում էին բակում, ծափ էին տալիս: Մեկը բարձր կանչում էր: Դհուրի ձայնից դրմբում էր տունը: Գնում-գալիս էին, մեկը թե՛

— Ախի, կորի՛ է՛, ոտնատակ կլինես...

Աննան հտ եկավ քրոջը պատմելու, թե բակում ինչ լավ են պարում, ինչքան շատ մարդ է եկել:

30 Փառանձեմին հագցնում էին: Մրսում էր: Մաղկանկար շալը գցել էր ուսին, լուռ կանգնել: Բարեկամ կանայք շորերն էին շտկում, սիրտ տալիս: Ինչո՞ւ էին մոմ դրել Փառանձեմի ձեռքին: Մոմը դողում էր, կրակը թրթռում էր: Բարակ քող էին գցել Փառանձեմի գլխին, և մոմի լույսի տակ, քողի արանքից, նրա դեմքը սփրթնած էր երևում:

Մյուս առավոտ Աննան զարթնեց, զարմացած նայեց շորս կողմը: Իր տեղաշորում չէր քնել, շորերը հագին էր: Փառանձեմը շկար: Մայրը ուռած ու կարմրած աչքերով ներս ու դուրս էր անում, հավաքում ամանները, կարպետները: Աննան նրս-

տեց տեղաշարժում, աչքերը տրորեց, հետո նայեց մորը: Մայրը մոտեցավ, կռացավ ու նրան համբուրեց: Արցունքներն ասես մոր համբուրյին էին սպասում, որ ծլլան: Երագի պես թվաց Փառանձեմի դեմքը լուսադեմին: Ականջին ինչ-որ բան ասաց, պինդ համբուրեց: Իսկ Աննան տրտնջում էր, որ քունը տանում է:

Նույն օրն էլ գնաց քրոջը տեսնելու: Ուրիշ տուն էր, ուրիշ մարդիկ, և այդ ուրիշների մեջ լուռ ու անխոս Փառանձեմը: Երկար հասակով մարդը գրկեց Աննային, ուզեց համբուրի: Բայց Աննան դուրս թռավ նրա գրկից, վազեց քրոջ մոտ: Բեղերն այնպե՛ս էին ծակում, և այնպե՛ս վատ հոտ էր գալիս նրա բերնից: 10

Այդ տանը մնաց մինչև իրիկուն: Բաժանվելիս Փառանձեմը նրան միրգ տվեց, կանչեց մի անկյուն և ասաց.

— Սրբուհուն կասես, որ կիրակի օրը մեր բոստանում ինձ տեսնի: Համա տես, որ ուրիշին ասել ես, էլ քեզ տիկնիկ...
Լացը խիղդեց, չկարողացավ խոսքը վերջացնի:

— Էստեղ լավ չի, արի գնանք մեր տուն,— ասաց Աննան: Փառանձեմը ժպտաց:

— Դե, մուլն ընկնում ա, գնա՛ր բալիկ: Նանին հիմա մե- 20
նակ ա: Խելոք կաց...

Գնում էր գալիս: Մի քանի անգամ Փառանձեմը եկավ իրենց տուն: Առաջվանը չէր: Աննան ուզում էր, որ նստեին թթենու տակ, հավաքում էր զույնզզույն կտորներ, բայց Փառանձեմն էլ՝ առաջվա պես սիրուն տիկնիկներ չէր սարքում:

— Էլ հերիք ա, Աննա... Մարանենց պատերը սաղ թղթեցինք,— ասաց կինը, որը Աննայի խմորած թղթերը փակցնում էր պատերին:

Կինն իր պատմությունը դեռ չէր վերջացրել: Աննան լավ չէր լսել նրա պատմածը... Երկու ձիավոր էին... Կարճիկ մարդը հենց նրանց տեսավ թե չէ... Այդ ժամանակ Մարանենց պառավը դեռ ջահել աղջիկ է լինում... 30

— Աննա, համ զրուցին ականջ արա, համ էլ սրանից մի հատ գրի, բեմից կախ տանք,— ասաց պատմություն անող կինը, Աննային մեկնելով թղթի մի կտոր և ապա բաց գիրքը: Աննան գրքից պիտի արտագրեր մի քանի խոսք: Փորձեց,

լավ դուրս չեկաւ... Տառերը խառնվում էին իրար, շաղվում: Քուղթը շուռ տվաւ մյուս երեսի վրա...

Ու մի օր էլ Աննան գնաց, Փառանձեմիին անկողնում պառկած տեսաւ: Գնացել էր կորեկ քաղելու, թռել էր առվի վրայով, ճմացել էր ոտքը, թաթի խաղը դուրս էր ընկել: Մինչև իրիկուն աշխատել էր արտում, երեկոյան կաղալով տուն էր եկել: Մյուս օրն անկողնուց վեր չէր կացել:

Փառանձեմը Աննային երբ տեսաւ, ասես սիրտը բացվեց: Վերմակի մի տուտը բարձրացրեց: Աննան թեք ընկաւ նրա կողքին: Մի կին տաք մոխիր էր լցնում պարկերի մեջ և շուտ-շուտ մոխրով լի պարկերը դնում Փառանձեմի ուռած ոտքի վրա: Քույրը ցավից տնքում էր, կինը սիրտ էր տալիս:

Այդ օրը մայրն էլ եկաւ: Աննան անշափ ուրախ էր: Նրան թվում էր, թե ուրիշի տանը չեն, այլ իրենց. Փառանձեմը սուտ է պառկել, ոտքը չի էլ ցաւում: Այնպես էր ուզում գլորվել ու խաղալ նրա վերմակի վրա, ինչպես առաջ, երբ միատեղ էին քնում:

Մյուս օրը Մարանենց Մինան եկաւ: Սպասում էին դալլաք Սիմոնին: Փառանձեմը մաշվել, դեղնել էր: Գիշերը քունը չէր տարել: Երբեմն տնքում էր, բայց և ոչ մի խոսք չէր ասում: Դալլաք Սիմոնն եկաւ. վերմակը վեր քաշեցին, և Աննան տեսաւ քրոջ ուռած ու սպիտակ ոտքը: Իրեն դուրս տարան:

Բակում ուրիշ երեխաներ էին խաղում: Աննան կանգնել էր ու նայում էր նրանց, երբ հանկարծ ականջովն ընկաւ քրոջ ճիչը: Վազեց դեպի դուռը, հրեց. դուռը ներսից փակել էին: Փառանձեմը ցավից ծկլթում էր, բարձր կանչում: Աննան դուռն մոտ լաց էր լինում, ուսով դուռը հրում, բռունցքներով զարկում: Ներսից ոտնաձայն էր լսվում, գնում էին, գալիս, ամանների շրխկոցի ձայն էր լսվում:

Դուռը հանկարծ բացվեց: Մի կին արնով լի տաշտը դուրս էր տանում: Աննան ներս վազելիս, կպաւ տաշտին, քիչ մնաց տաշտն ընկներ կնոջ ձեռքից:

Փառանձեմն աչքերը բաց ու խուփ էր անում: Սպիտակել էր երեսը, շրթունքները կապտել էին: Աննան զարմացաւ, թե ինչու Փառանձեմը նայում է ու իրեն ոչինչ չի ասում, չի կանչում՝ կողքին նստեցնում: Դալլաք Սիմոնը արնոտ ածելին

վերմակի ծայրին էր քսում և հույս էր տալիս, որ երկու օրից ուռուցքը կքաշի:

Մայրն անխոս էր: Կոացել էր, երբեմն ձեռքով սրբում էր Փառանձեմի ճակատի քրտինքը: Միայն Մարանենց Մինան էր, որ դալլաքի հետ զրուցում էր և մի պատմություն անում, թե ինչպես տարիներ առաջ մի ուրիշի գլխին էլ այդպիսի փորձանք է պատահել և թե ինչպես էր նա առողջացել:

— Փորձանք ա, կպատահի... Մարդս որ կա, մի անգիտուն հեյվան ա... Միայն տերը կարող ա փորձանքը իմանա:

Սակայն օրեցօր ուռուցքը շատացավ, վերքը թարախոտեց: Փառանձեմը դժվար էր շնչում, չէր կարողանում տեղում շարժվել: Ոչ ուտում էր, ոչ խմում և ոչ էլ խոսում: Երբեմն աչքերը բաց էր անում, նայում սրան նրան, շրթունքները շարժում, բայց ձայնը չէր լսվում, թեկուզ կոանում էլ էին և ականջները մոտեցնում բերանին:

Ու մի անգամ մայրը նայեց աղջկա դեմքին, շարժվող շրթունքներին, Աննային ասաց.

— Սրբուհուն ա ուզում, Աննա, գնա կանչի...

Երբ Սրբուհին ներս մտավ, Փառանձեմը ժպտաց: Զկարողացավ ոչ մի խոսք ասել:

Աննան տեսավ, թե ինչպես Սրբուհին աչքերը սրբելով, դուրս եկավ սենյակից, մի անգամ էլ ետ նայեց բաց դռնով և նրան կանչեց:

— Գիշերս գնանք մեզ մոտ, Աննա, նանիդ ու հերդ էստեղ են մնալու:

Առավոտ կանուխ, երբ Սրբուհու հետ միասին Աննան մոտեցավ Փառանձեմենց բակին, ներսից վայնասունի ձայն լսեցին: Սրբուհին թողեց Աննայի ձեռքը, և, մազերը քանդելով, ներս վաղեց: Փառանձեմը մեռել էր...

— Ի՞նչ եղավ, Աննա, հը՞, էդ ինչ է, աչքերդ ջրակալած են, — հարցրեց կինը, որ պատմությունն արդեն վերջացրել ու նայում էր, թե ինչպես է Աննան շուռ ու մուռ տալիս թուղթը:

Աննան փղձկաց, արցունքները թափվեցին սպիտակ թղթի վրա:

— Ինչո՞ւ ես լալիս, Աննա... Գիժ հո չե՞ս... էգուց մարտի 8-ն է, դու ճառ ես ասելու...

10

20

30

— Հեշ, միտս եկավ մեր Փառանձեմը,— ասաց Աննան և արցունքները սրբեց: Տիրեց լուսթյուն:

— Թե ողջ մնար, հիմա մեր միջի առաջավորը կլիներ...

— Էնքան էղպես անտերունչ ու անխոս մե՞ռել են... Ի՞նչ էր մեր հալը, կարո՞ղ են հիմա զոռով պսակեն, դալլաք Սի-մոնին կթողնեի՞նք, որ նշտարեր...

Աննան ունքերն իրար հավաքեց, մոտեցրեց թանաքա-մանն ու փետուրի ծայրով թղթի վրա մեծ տառերով գրեց.

Խոր հրշայի ձ
Իշխան ու յթու շ
Տէշ աղաւտ-յթու շ
Բէրեց, կէցցե
Տարրի 8-ի ր ու շ

Հետո վեր կացավ, գրածը կախեց բեմի ճակատից, մի քիչ նայեց ու թեթևություն զգաց:

Մուտ էր, երբ կին ու աղջիկ ցրվեցին գյուղի ծուռ ու նեղ-լիկ փողոցներով: Ու հեռվից իրար կանչում էին.

— Աղջկերք, էգուց կանուխ կգաք, մարդ շատ կլինի, բռ-լորին իմաց կանեք...

20 Աննան քայլում էր մյուսների հետ: Վճռական և ուրախ շեշտ կար նրա ձայնի մեջ, երբ ընկերներից բաժանվելուց հե-տո գյուղի խաղաղ փողոցում բարձր կանչեց.

— Աղջկերք, վաղը մարտի 8-ն է...

ԲԵՎԱՆ, ԲԵՎԱՆ...

Դաժուկց Տիտոսի հագին տարին բոլոր ուրիշի շոր էր: Հորթարած էր. վարձի դիմաց մեկը նրան մեջը ծակ հին փափախ էր տալիս, մյուսը տասն անգամ կարկատած տրեխ կամ հնամաշ, գունավոր կարկատաններով շալվար: Ուրիշի մեծ փափախը ծածկում էր ականջներն ու ճակատը: Եվ թեկուզ երկար շալվարը պարանո՞վ կապում էր կրծքի տակ, ծայրերը ծալում, դարձյալ նրա բարակ ոտքերին շալվարը նստում էր, ինչպես ճիպոտին հագցրած պարկեր: Տրեխներն էլ անձրև օրերին թրջվում էին, լապո մսի պես ծայրերը դեսուդեն ծռվում: Տիտոսը ոտը դեռ գետին չդրած, տրեխի կախ ընկած ծայրն արդեն ցեխումն էր: 10

Տեսնողն այնպես էր կարծում, թե ծաղրի համար են Տիտոսին կոլորել շորերի մեջ, փափախի բրդի տակ ծակեր թողել, որ նրա ժիր աչքերը հսկեն հորթերին: Ծաղրի համար, որ հորթերը բերելիս, գյուղի փողոցում կանգնած մարդկանցից մեկը բամփեր նրա գլխին և ծիծաղելով ասեր.

— Տիտո՛ս, շմեռնես դու, ճակատդ էլա մի բաց արա...

Տիտոսը միայն մայր ուներ, որ ամուսնու մեռնելուց հետո մի քանի տարի հավատարիմ էր մնացել առաջին մարդու կիսավեր տանը, բայց որովհետև նրա միակ ժառանգությունը՝ պոչը ծաղիկ կովը, հորթատել էր ու սատկել, սառած թոնրի պատերին էլ խմոր շէր փակցրել, — մի օր դրժել էր հավատարմություն ուխտը, կուժ ու փալաս շալակել, փողոցն անցել և մտել մի տուն, որի դռնից իր ամուսնուն թաղելուց մի շաբաթ հետո հանել էին երկունքից արնաքամ եղած մի կնոջ դագաղ: 20

Տան տերը հյուրընկալեց Տիտոսի մորը, սա էլ իր կուժը նոր տան կժեբրին խառնեց, փալասը փռեց հողե հատակին:

Դրսում մնաց Տիտոսը: Այդ իրիկուն նա հորթերը բերեց գյուղ, և երբ հորթերը բուրն էլ շրթունքները կախ արին մոր կուրծից, Տիտոսը տուն եկավ և կիսավեր տան մեջ միայն պառավ կատվին տեսավ, թո՛ղի սառը մոխրում նստած: Կատուն մլավեց, մի անգամ էլ ապացուցելու այն խոսքը, թե ավերակում կամ բուն է կանչում, կամ կատուն մլավում:

10 Իհարկե, մոր սրտի տեղը քար չէր, երբ վախվիսելով, որպես դուռը կորցրած հորթ, Տիտոսն ուրիշի դռնակը բացեց և կանգնեց: Մայրը լաց եղավ. այդ տեսավ Տիտոսը, մայրը ուրիշ խոսքեր ասաց, բայց խոսքերից ավելի քաղցրը յուղով հացի այն պատառն էր, որ մայրը արցունքները սրբելով գոգնոցի տակից ծածուկ հանեց և կոխեց Տիտոսի տոպրակը: Այդ գիշեր հարևանի դեզի վրա, կարպետի տակ Տիտոսը ծամեց յուղոտ հացը, աչքերը երկնքին, բայց միլիոն աստղերից և ոչ մեկն էլ չնշմարելով: Նույն գիշեր մայրն ուրիշի բարձի վրա մի անգամ էլ լաց եղավ: Ծիշտ է, քար չէր մոր սիրտը, բայց մարմինը միայն սրտից չէր կազմված:

20 Եվ այդպես սկսվեց Տիտոսի նոր կյանքը: Որբ մնալուց հետո ուրիշների կարեկցության չափը նրա հանդեպ մի քիչ ավելացավ: Եղան մարդիկ, որոնք մորը նախատեցին: Սակայն այդ կարեկցությունը կարկատած տրեխներից ու փոստը ծակ փափախից հեռու շանցավ: Պատահում էր, որ սրա նրա շեմքին, տոն մի օր կամ հարսանիքի գիշեր հորթարածը կաթսայում մնացածն էր սրբում մատներով և մատները լիզում, բայց այդ միայն դիպված էր նրա կյանքում:

30 Իսկ այդ կյանքը կանաչ սարերն էին, բազմատեսակ խոտերը, որոնցից մեկի արմատն էր քաղցրահամ, մյուսի ցողունը: Կանաչ սարերում թո՛ղ ու անձրև, արև օրեր, երբ կարպետը փռում էր քարին շորանալու. աղբյուրի ջուր, ցամաք հաց և հորթեր, հորթեր, որոնցից ամեն մեկն իր տեսքն ուներ, և բուրբը միասին ընդհանուր սովորույթ՝ շոգ օրին տուն վազելու, մոր բառաչը լսելիս պոչը կեռացրած դեպի բառաչը փախչելու:

Հորթային հրճվանք, հորթի ոսկե մանկություն, որից

զուրկ էր Տիտոսը, որ ամենից շատ հենց այդ օրերին էր վազ-վըզում, ցրիվ հորթերը հավաքում, կանչում, սուլում, վազելիս սայթաքում, վազելիս լաց լինում և հայհոյում հորթի հրճվանքն էլ, տիրոջն էլ: Հորթերը հասունանում էին, հորթերն ուրիշ նախիր էին գնում, ցուլով էին գալիս հորթերը՝ Տիտոսի համար նոր հորթեր ծնելու:

Ե՞րբ պիտի ծներ վերջին կովն այն հորթը, որի հրճվանքն այլևս չպիտի ստիպեր Տիտոսին վազելու սար ու ձոր և որին այլևս նա կանաչ սարերը չտաներ: Գիտակցական վերաբերմունք դեպի իր վիճակը Տիտոսն առաջին անգամ այս կերպ հանդես բերեց: Այնպես հանկարծ ծնվեց այն միտքը նրա գրլխում և այնքան հանդարտ: Երևի կա այդպիսի մի վայրկյան, երբ ծլում է սերմը, ասեղի ծայրի չափ արմատիկը խրում հողում, որ հետո տարիների հետ հզորանա ու դառնա հաստարմատ ծառ:

10

* * *

Շարունակությունն էլ հասարակ եղավ: Առաջին ծիլը ձրգվեց, հողի կոշտուկները հրելով, մի օր արև տեսավ, ջերմություն զգաց:

Տիտոսը՝ խոտի խուրձը շալակին, ձյունաջուրը կոխ տալով, ձմռան մի օր անցավ դպրոցի կողքով, պատուհանից տեսավ հորթատիրոջ որդուն դասարանում, կանգնեց, ժպտաց: Տղան էլ ներսից պատասխանեց նույն ժպիտով: Եթե ներսում ժպտացողի միտքը Տիտոսի ճանների շուրջն էր և կտուրի գլխին տեղի ունեցած խաղերի, ապա Տիտոսի ժպիտը ուրիշ պատճառ ուներ:

20

Երևի լավ է ներսում, որ ամեն օր հավաքվում են իր հասակի տղաներ, երգ են ասում, գրիչները թաթախում թանաքի մեջ, տետրակներում արտագրում այն, ինչ գրում է ուսուցիչը պատից կախած տախտակի վրա, սպիտակ կրաքարով: Վերի սարում այնքան շատ կա այդ քարից, և այնպես պարզ է խազում Տիտոսը, սպիտակ բծեր անում գետի կապույտ ու ողորկ քարերի վրա:

30

Այդ իրիկուն գոմի դռան կատարվեց տարօրինակ մի գործարք: Իր բուրբ ճաները Տիտոսը փոխեց տիրոջ տղայի

139

վաղուց սովորած, թերթերը պակաս գրքի հետ: Եվ երբ ախոռները խոտով լցրեց, կովերի տակ շոր հարդ ցրեց, գոմի ճրագի տակ Տիտոսը բաց արեց գիրքը: Ծրագի լույսի հետ տառերը թրթռացին նրա աչքին: Ինչքան շատ էին, իրար նման, բոլորն էլ սև: Գիրքը թերթեց, տեսավ ծանոթ նկարներ՝ ուլ ու ծառ, ազգիկը կուժն ուսին, պառավ նանը թոնրի առաջ: Համր նրկարներն այնքան հարազատ թվացին: Գուցե դրանից էր, որ գիրքը գոմի պատուհանում դնելուց առաջ նա ստուգեց՝ արդյոք շո՞ր և ապահո՞ւմ է թաքստոցը:

- 10 Առավոտյան Տիտոսն աչքերը տրորելով ձեռքը մեկնեց գոմի պատուհանին: Կովերը կոշտ լեզվով լիզում էին մսուրի շոր փայտերը, կարծես մեկը խոզանակով էր սրբում: Տիտոսը մոռացել էր կովերին: Գրքի թերթին էր նայում, այն թերթին, որի վրա երկու հոթի գլուխ կար նկարած: Նայում էր և լաբում ամբողջ ուշքը, ասես հավատում էր, որ շատ նայելուց տառերը լեզու պիտի առնեն ու խոսեն: Այդ օրը նա ջոկեց միայն այն, որ սև նշաններն իրար նման չեն, մեկը կեռ է, մյուսը տափակ, երրորդը ձեռնափայտի պես գլուխը կլոր: Գոմի դռանը ոտնաձայն լսեց, գիրքը ծալեց, թռավ տեղից, մսուրին մոտեցավ:

- 20 Այդ գարնան Տիտոսն արդեն գրաճանաչ էր: Նրա հացի պայուսակում թերթերի ծայրերը կտրտած գիրքն էր, որի առաջին երեսից մինչև թոնրի մոտ նստած պառավի նկարը Տիտոսը վարժ կարդում էր, նույնիսկ առանց մատը տառերին տանելու: Ուրիշի գրած տետրակների լուսանցքում երկրորդ անգամ Տիտոսը գրել էր այն, ինչ տետրակի տերն էր գրել դպրոցում:

- Աշխարհն ուրիշ տեսակ երևաց նրա աչքում, երբ տեսավ ծանոթ առուն, կանաչ արտերն ու սարերի լիրկ կողերը: Հողի կոշտերի տակ մուժ կար և առաջին արևոտ օրը հալեց մութի հետքերը: Տիտոսը նույն փափախն ուներ գլխին: Չմեռվա ընթացքում նրա գույքը ավելացել էր երկու գույգ կարկատած գուլպայով, որ ուրիշի ձեռքով ծածուկ ուղարկել էր մայրը: Մնացածը նույնն էր, ազրից տեղ-տեղ կարկատանների թելերը փտել էին, կախ ընկել: Եվ երբ առաջին օրը Տիտոսը հորթերն առաջ արած գյուղի ծայրին հասավ, փողոցում կանգնած մի

մարդ մտքում նրան դմակը կախ ոչխարի հետ համեմատեց:

Հին փափախի տակից նրա աչքերը գրգռին ընկնելիս՝ հորթերն ուզածի շափ կարող էին ցատկոտել, ցրիվ գալ, իրար պողպահարել, մինչև սթափվել, գիրքը խնամքով ծալել, տեղավորեր պայուսակում և ապա առաջվա պես սուլելով, կանչելով հավաքեր ցրված հորթերին: Սպիտակ փափուկ քարը, որով գրում էին պատից կախված տախտակի վրա, Տիտոսը հենց սարի տակի հանքից վերցրեց. այնքան, որքան հերիք էր գետի ողորկ քարերի վրա ոչ թե բծեր ու անկարգ խազեր քաշելու, այլ գրելու գրքի բառեր, ամբողջ երեսներ, մինչև անձրևը գար ու ավերեր գրածը:

Ամեն իրիկուն՝ հորթերը տեղաց անելուց հետո, պատահած տղից հարցնում էր չիմացածը: Հերիք էր միայն մի անգամ ասելին, որպեսզի ասածը պինդ նստեր նրա մտքում: Սեվահողում լլար հատիկն էլ փարթամ է աճում:

Գրած տետրակները, եթե ապակու տեղ պատուհանին չէին փակցնում կամ տետրակի հաստ կողը ձվի դեղնուցով հիվանդի մեջքին չէին փակցնում, — գրած տետրակները Տիտոսի պայուսակում էին հավաքվում, մինչև անգիր աներ վարժութունները, մինչև ծվեն-ծվեն շիհներն տետրակի թերթերը: Նրա միտքը ազահուժյամբ էր կլանում գիրք ու տետրակ: Ինչքան զարմացավ տիրոջ որդին, երբ գարնան վերջին Տիտոսը երկրորդ գիրքը խնդրեց:

Հենց այդ երեկոյան էլ նրա մայրը ծննդյան ցավից կանչում էր: Հաջորդ առավոտը, լուսանալուն պես, երբ Տիտոսը լսեց, որ մի նոր մանուկ է ծծելու մոր կաթը, սառնութուն զգաց մոր հանդեպ, վերջին բարակ թելերն էլ կտրվեցին, մայրը հեռացավ, դարձավ երկնքի երեսին լողացող թռչուն:

* * *

Ամառվա շողին գյուղ եկավ Տիտոսի մանկության ընկերը՝ Անտոնը: Երեկոյան բեզարած գյուղ վերադարձավ Տիտոսը, ոտները քարշ տալով բարձրացավ հերվա շոր խոտի դեզի վրա, կարպետը գլխին քաշեց:

Եվ միայն առավոտ կանուխ, Անտոնենց դռանը, Տիտոսը

տեսաւ ջրի կուժերն ուսին երկու կանանց, որոնք աչքալույս էին տալիս Անտոնի մորը:

— Անտոնը եկել է,— մտածեց Տիտոսը, մոտեցաւ, նրա մորը հարցրեց: Ինչպես կոտորվեց Տիտոսի սիրտը, երբ մայրը գլխին բամփեղով ասաց.

— Հենց դու էիր մնացել, որ գնաս նրան քնատեղից վերկացնես:

Տիտոսը միայն հեռվից էր ուզում տեսնել Անտոնին: Ինչքան են խաղացել միասին, քանի ծտի բուն են քանդել, գետում լողացել այն ժամանակ, երբ իրենց թոնիրն էլ տաք էր:

— Ով գիտի՝ հիմի մեծացել, մեծ մարդ է դարձել: Տեսնես ի՞նչ շոր ունի հագին:

Այդ մտքերից հետո Տիտոսին այնքան խեղճ թվաց տրեխների ծուռ ծայրը և այնպես կարոտեց մորը. նրա լացը հիշեց, երբ ուրիշի դռնակի մոտ յուզոտ պատառ տվեց: Այն օրից նրան շէր տեսել, նրանց փողոցովն էլ շէր անցել:

Տիտոսը հորթերը հեռու շտարավ: Գյուղի մոտիկ կանաչուտին հասնելուց հորթերը կանգ առան. Տիտոսը բաց արեց գրքի այն երեսը, որի արանքում բրդի թելի նշանը կար:

Քիչ հետո գլուխը վեր հանեց հորթերին նայելու: Գյուղի ծայրին սպիտակ գլխարկով մեկն երևաց: Եկողը ձեռքի ձեռքով մոշի թփերին էր զարկում և արագ քայլերով մոտենում կանաչուտին:

Տիտոսը հեռվից ճանաչեց Անտոնին: Այդ օրը երկրորդ անգամ նա ամաչեց կարկատած տրեխների, մորթին ճղած մեծ փափախի համար:

Հանդիպումն այնպես պարզ եղավ, այնքան հասարակ: Անտոնն առաջինը կանչեց, ձեռքը մեկնած մոտեցավ: Նա՛ առաջին խոսքն ասաց, որովհետև Տիտոսն անակնկալ հանդիպումից շփոթվեց, գիրքն արխալուղի թևի տակ առավ:

Եվ ոչ մի կարկատան չկար Անտոնի շորերի վրա: Էլի առաջվա պես ծիծաղելիս կոտրած ատամը երևում էր: Կոտրած ատամի պատմությունը Տիտոսի միտն ընկավ:

Անտոնը ոչ նրա գիրքը տեսավ, ոչ էլ հետևից կախ ընկած կարկատանները, որի համար մեկը նրան դմակավոր ոչխարի էր նմանացրել:

Պատմելու այնքան բան ուներ Անտոնը. անցած տարիներն այնքան նման էին անցել Տիտոսի համար: Եվ ինչ որ ասում էր Անտոնը «Րևանու* կողմի» մասին, Տիտոսին երագի պես էր թվում: Գյուղի սարերից դեն նա ոչինչ չէր տեսել:

Այդ հեռու կողմերում եղել էր Անտոնը. նրա աչքերը տեսել էին մեծ տներ, որոնց նման գյուղում չկա:

— Փողոցներում էնքան մարդ կա՛, հազար, երկու հազար: Ամեն օր ուրիշ քաղաքներից մաշին է գալիս: Կառքեր կան, մեծ խանութներ, ու ուզածդ կա ու շտես բաներ: Ոնց ասեմ քեզ: Դե մեր գյուղում երեք հարյուր մարդ չկա, երեխա, 10, կնիկ, բոլորը հաշված: Համա մենակ մեր ուսումնարանում էդքան աշակերտ կա... Հետո վագոնները... Տիտո՛ս, ավտանաբիլի խժժոցից խամ մարդը կվախի: Խաղող ինչքան ասես, ձմերուկ: Էնտեղ մեզ նման չեն վար անում, կորեկ սերմելը սովորութուն չի: Բամբակ են ցանում, մաշինի գութան էլ ունեն: Վերջը ի՞նչ ասեմ է՛, ես որ գնացել էի, շորս օր աչքերս շաղված էին... էսպես զարմացք բաներ:

Տիտոսը շունչը պահած լսում էր: Թեի տակ գիրքը սըլլաց, ընկավ: Տիտոսը նստած տեղից մի քիչ շարժվեց, գիրքը տակն առավ, նստեց վրան: Պատմելիք շուներ: Ուզեց ասի, 20 որ ինքն էլ է սովորում, բայց անկարևոր համարեց: Եթե Անտոնը հարցներ, կասեր:

Իր տեսածից ոգևորված, գյուղում մնացած նախկին ընկերոջ առաջ Անտոնն այնքան հրաշքներ պատմեց «Րևանու կողմերի» մասին:

Օրբ հեռացավ Անտոնը, Տիտոսը մի քիչ էլ նստած մնաց, հետո սթափվեց, նայեց Անտոնի ետևից: Երագի պես թվաց հեռավոր Րևանը, վագոնները, որոնք ամեն օր մարդ են տանում, բերում: Բայց չէ՛ որ Անտոնը տեսել էր, Անտոնն էր պատմում: Տիտոսն էլ ականջով լսեց, նրա կոտրած ատամը տեսավ: Ա՛յ, էլի ձեռքի ճիպոտով մոշի թփերին է խփում: 30

— Րևա՛ն, Րևա՛ն...

— Էստեղից մի օրում կհասնես Սիսիանի մհալին, էնտեղից էլ օր ու կեսվա ճանապարհ է, մինչև մաշինին հասնես:

* Ջանգեղուբի շատ գյուղերում այժմ էլ Երևանը հնչում են որպես Րևան:

Մի սար է, բարձրանաս իջնես, սարի տակին կոտրած քար-վանասրա կա, էնտեղ կքնես: Հետո լայն ճանապարհ է մինչև մաշինին հասնես: Վազոնը որ նստես, ուղիդ քեզ կտանի Բևանու մեջը... Բիլեթ են տալիս փողով, պետք է բիլեթը պինդ պահես, որ չկորչի. թե չէ կտանեն, շտրաֆ կանեն: Ծս իմս ծոցումս էի պահում, քնելիս էլ ձեռքս վրան էի դնում: Էսպես հասա Բևան...

Անտոնի խոսքերն էին, որ խժժում էին Տիտոսի ականջի տակ, որպես ձագ տված մեղու: Փակեց աչքերը, միտքը լարեց, 10 թև առած մտքերը թռան սարերի վրայով հեռուն, դեպի ուր մեկնեց Անտոնն իր ձեռքը, պատմութունն անելիս:

— Տեսնես Կատարի խաչի ուխտավորի շափ մարդ կլինի,— մտածեց Տիտոսը, պառկած տեղում նստեց, գիրքը բաց արեց: Գրքում Անտոնի ասածներից ոչինչ չկար: Մտուրի մասին էր գրված, ազին ծաղիկ աղվեսի մասին և ոչ մի խոսք Բևանու կողմերից:

— Ծրևի ուրիշ գրքերում կլինի:

Լսեց գյուղից մի ձայն.

— Տիտո՛ս, էհե՛յ, հորթերը արտի կանաչումն են, կա- 20 նաչումն են, էհե՛յ...

Տեղից վեր թռավ, թռնելու հետ էլ մտքերը հորթերի պես շաղ եկան: Բևանը շքացավ, որ մի քիչ հետո նորից փակչի նրա ուղեղին տիղի պես, բուն դնի և օրնիրուն միտքն զբաղեցնի իրենով:

* * *

Աշունքամուտ էր:

Սարերի բարձր կատարներին ամպը ցող էր շարում, լուսաբացի ցողը սառչում էր, դառնում եղյամ: Արտերը հնձել, վերջացրել էին, գյուղը կալ էր կասում, այգիների բերքը ժողովում: Դրանից էր, որ հնձած արտերում ոչ մարդ էր երե- 30 վում, ոչ անասուն:

Արահետը օձապտույտ ոլորներով բարձրանում էր սարի ստորոտից մինչև գագաթ, իջնում ձորը, նորից բարձրանում:

Մահակը գետնին դեմ տալով, կածանով բարձրանում էր Տիտոսը, հացով լի պայուսակը մեջքին: Արևը բավական ճանապարհ էր կտրել, բայց արևից չէր, որ քրտինքի կաթիլներ

էին շարվել Տիտոսի ճակատին, այլ արագ քայլելուց: Մեջքը քրտնել էր. շապիկը կպշում էր, էլի պոկվում:

Տիտոսը ոչ քրտինքն էր զգում, ոչ էլ արևի տաքությունը: Նրա միտքը ետ էր, եկած ճամփին, որի վրա կրած խուրձերից ընկած հասկեր կային, մի քիչ հեռու գյուղը, կալերը, խրձան դեզեր, իրենց կիսավեր տունը:

Օգոստոսի կեսին Անտոնը գնացել էր: Գնալուց մի օր առաջ Տիտոսը նրան տեսավ դռան մոտ:

— Տիտո՛ս, էգուց գնում եմ...

Տիտոսը շիմացավ ինչ ասի: Մոտեցավ Անտոնին՝ բարի **10**
ճանապարհ ասելու: Ձեռք տալուց հետո, երբ մայրը ներսից Անտոնին կանչեց, և Անտոնը տուն գնաց, Տիտոսը դռան մոտ մի քիչ էլ կանգնեց: Քարերը կճաքեին, եթե նրանք էլ այնքան ուժեղ ցանկանային Անտոնի հետ գնալ, ինչպես դռան մոտ ցանկացավ Տիտոսը: Սակայն Անտոնը դուրս չեկավ տնից. Տիտոսը գլուխը կախ հեռացավ:

Տիտոսը միայն մորն ասաց, որ գնում է: Ինչքան դժվար էր վերջին օրը: Հորթերն էլ էին մի տեսակ մոլորվել: Երեկոյան՝ հորթերին տեղաց անելուց հետո, անցավ այն փողոցով, ուր մայրն էր ապրում: Գոնակից նայեց, մարդ չտեսավ: Հենց **20**
ուզում էր հեռանա, մայրը դիմացի անկյունից դուրս եկավ:

— Նանի, առավոտյան գնում եմ:

— Ու՞ր:

— Բևան:

— Բա մենա՞կ. հաց, ճանապարհի ծախս...

— Բիլեթի փող ունեմ, ամառս եմ հավաքել, դե տոպրակս էլ հացով լիքն է:

Տիտոսը տեսավ մոր արցունքները:

— Բա շոր, գուլպա... Ընկեր ունե՞ս, ճանապարհը...

— Լիքը մարդ է, ինչ կա որ... Հրեն էն սարն է, սարը որ **30**
անց կացար, Բևանը մոտ է,— ասաց Տիտոսն այնպես վստահ, կասես Երևան գնալը նրա համար գյուղի ջաղացի ճանապարհըն էր:

— Դե էդտեղ ոտը կաց, տեսնեմ էն Ազրայելը տանը չի՞...

Ազրայելը նրա երկրորդ ամուսինն էր: Տիտոսը գիտեր, որ մայրը նրա ձեռքին լավ օր չի քաշում: Ծիշտ է, այդ հանգա-

մանքը նրա մեջ բորբոքում էր սեր ու կարեկցութիւն մոր նը-
կատմամբ, բայց և իր մտքից նա շէր կարողանում ջնջել այն
գիշերը, երբ ուրիշի դռնակի մոտ մորը տեսավ, ինքն էլ քնեց
դեզի վրա, որպես որբ: Թեկուզ Ազրայելին հանդիպելիս նա
խոժոռ աչքերով էր նայում նրան, բայց հերիք էր մտաբերեր
այն գիշերը, որպեսզի կարեկցութեան ալիքն իջներ, մոր հան-
դեպ զգար անտարբեր սառնութիւն:

10 Տիտոսը հասավ կայծակի հարվածից ճաքած քարին, որից
դեն արահետը իջնում էր ձորի վրա, մի ուրիշ սարով բարձրա-
նալու համար: Ծաքած քարը նրա ամենից հեռու սահմանն էր,
որից դեն Տիտոսի ոտքն առաջին անգամ էր կոխում:

Քարի մոտ մի քիչ շունչ առավ, նստեց: Բավական ճանա-
պարհ էր անցել: Առաջին անգամ հայրենի գյուղը նրա աչքում
շատ փոքր թվաց: Ահա գետակը, Անտոնենց այգին... Սարի
տակին սպիտակին էր տալիս քարհանքը, որտեղից դպրոցի ա-
շակերտները կավիճ էին տանում: Տիտոսը տեսավ և գետի մեծ
քարը, որի վրա կավիճով մի օր արտագրեց «Պառավի ուլերը»:
Աչք ածեց իրենց տունը տեսնելու, շերեաց: Հարեանի բարձի-
պատը խանգարում էր:

20 Քրտինքը ցամաքեց, Տիտոսը վեր կացավ, մի անգամ էլ
նայեց գյուղին: Այնքան ցանկացավ, որ մեկը կտուրի վրայից
նայեր իրեն, մինչև սարի հետևն անցներ: Գուցե Ազրայելից
ծածուկ մայրը կալից նայում է: Նրևի լաց է լինում, գոգնոցի
ծայրով սրբում արցունքը, որ մարդ շտենի...

Փողոցում կանգնել էր: Մի քիչ հետո մայրը շտապ քայ-
լերով դուրս եկավ, հացի կապոցը թևի տակ: Լաց եղավ:

— էս երկու արծաթն էլ առ, ճանապարհին պետք կգա...

Իր մաշված գոտին կապեց Տիտոսի մեջքին, կռացավ, աչ-
քերը համբուրեց:

30 -- Զմրսես, եկողով իմաց տուր, որ հասել ես... Դե՛...

Բայց խոսքը կիսատ մնաց — ոտնաձայն եկավ: Մի ան-
գամ էլ համբուրեց և դուռը ծածկեց:

Գյուղն արդեն մնաց սարի հետևում: Բայց սարի հետևում
մնաց և նրա տիրութիւնը: Թեև արցունքը սրբեց և մեծ քայ-
լեր անելով իջավ կածանով: Զորակում մի ուրիշ կածան էլ էր

միանում և երկուսի խառնուրդից ճանապարհը մի քիչ ավելի էր լայնանում:

Ջրի մոտ Տիտոսը քաղց զգաց, մոր շինած պաշարը բաց արեց: Երբ կուացել էր ջրի վրա, կողքին ոտնաձայն լսեց, վեր կացավ:

Հարևան գյուղից մի իշավոր գնում էր նույն ճամփով, ինչ որ Տիտոսը: Նա հացը մեջքին կապեց, միացավ իշավորին:

* * *

Բարձր սարերը ջրբաժան սահման են երկու մեծ գավառների մեջ: Սարերի արևմտյան փեշերից սկիզբն առնող մանրիկ գետակները ստորոտում միանում են իրար, որպեսզի ներքև, սարահարթում, կազմեն հանդարտահոս և լայն տարածվող մի գետ: 10

Հաջորդ առավոտյան ջրբաժան սարերի զլխից Տիտոսը հետ էր նայում սարահարթին, որի գնդաձև փոսերի մեջ ընկած էին մեծ ու փոքր գյուղեր: Այդ գյուղերից մեկումն էր գիշերել Տիտոսը, առավոտ կանուխ զարթնել, շարունակել ճանապարհը:

Մի պառավ կին հյուրընկալել էր նրան, քնելու տեղ տվել, հարց ու փորձ արել: Լուսաբացին պառավը թանով ապուր էր եփել: Եվ երբ Տիտոսը փայտի գդալով տաք ապուրն էր ուտում, պառավը սիրտ էր տվել նրան: 20

— Ծանապարհը լիքը մարդ է, գնացող եկող շատ կա: Հենց մի ճանապարհ է գնում մինչև սարի գլուխը, էնտեղից քեզ ցույց կտան...

Այդ մի ճանապարհով էլ բարձրացել էր Տիտոսը, ճանապարհին մի քանի հոգի տեսել, որոնք զարմանքով էին նայել նրան:

— Էս հասակին, որ սա վախ շունի մենակ գնալու, ուրեմն սրտոտ տղա պիտի լինի,— ասաց մեկը, որին Տիտոսը հարց տվավ, թե երբ կհասնի կոտրած քարվանսարին: 30

— Արևով կհասնես... Առաջիդ իշավորներ են գնում, որ ուզենաս՝ նրանց կհասնես,— ասաց մարդը:

Տիտոսը քայլերն արագացրեց: Ինչքան բարձրանում էր

սարն ի վեր, օդն այնքան սառնանում էր, կանաչն ավելի շատանում, թեկուզ աշնան սկիզբն էր:

— Ա՛յ հորթերը էստեղ լինեին, ի՞նչ կուտեին,— մտածեց նա, հետ նայեց մի ուրիշ լեռնաշղթայի, որի գագաթներին ամպ էր նստած, և որի հետևին հայրենի գյուղն էր:

— Տեսնես հիմա հորթերն ո՞վ է պահում...

Կածանով մենակ էր բարձրանում, ինքն իրեն միտք անում: Հեռվից՝ նա անտառից մոլորված արջի քոթոթի էր նման, որ ընկել էր բացուտի մեջ, բրդոտ ոտքերն արագ էր փոխում, մյուս անտառին հասնելու համար: **20** Չլինի՞ թե բացատում տեսնեն իրեն:

Փագաթին ամպերը թանձրացան, բրդի գորշ մալանչների պես իջան գետնին, փաթաթվեցին ոտքերին, շորերի վրա խոնավություն մաղեցին, տրեխները թացացան: Ճանապարհը հազիվ էր երևում. ամպը մեկ խտանում էր, մեկ նոսրանում: Նոսրանալիս նա ճանապարհն ավելի հեռուն էր տեսնում, բայց երբ խտանում էր, Տիտոսին թվում էր, թե ճանապարհն էլ է հալվում ամպի մեջ:

Եթե հանկարծ մոլորվեր, հեռանար ճանապարհից, մութն իջներ ու մնար սարում: Այդ միտքը վախեցրեց նրան, ուզեց կանչի, քայլերն ավելի արագացրեց: Գուցե հասներ իշավորներին: Միայն թե շմոլորվեր, ամպած գիշերը սարում շմնար: Հանկարծ գայլերը քարի տակից ցցվեին ճամփի վրա: Ի՞նչ պիտի աներ... Ինչո՞ւ նստեց ամպը սարին: Արև լինեիր, ինչպես երեկ, ոչ մենակություն կզգար, ոչ վախ:

Տիտոսն իր մտքերի հետ էր. հսկա քայլեր էր անում, հանկարծ տեղում մեխվում, երբ ականջին շշուկ էր հասնում կամ աչքն ընկնում էր ճամփից հեռու ընկած տձև քարերին: Գուցե գայլերն են մրափած:

30 Նա արդեն սարի ջրբաժան սահմանն անցել էր, հետ էր թողել սարահարթն ու ծառաստանների մեջ թաղված գյուղերը, մհալի հանդարտահոս գետը: Եթե արև լինեիր, գագաթից վերջին անգամ կտեսներ այդ ամենը, հեռու կաղաղալի լեռնապարրը, որի հետևին հոր կիսավեր տան սառած թոնիրն էր, մայրը, պտուղ կատուն, որ արդեն վայրենացել էր:

Մի շուն հաշաց, երկրորդը նրան ձայնակցեց: Տիտոսը

կանգ առավ, լսողութիւնը լարեց հաշոցի կողմը: Գուցե գլուղ է, բայց ինչու Անտոնը ոչինչ չասաց: Այդ մտքին հաջորդեց մի ուրիշը, աղվեսն էլ շան նման է հաշում: Հանկարծ շատ մոտ լսեց հաշոցի ձայն, երկու ստվիր կլանչեցին և մինչև Տիտոսը կկռանար քար վերցնելու, ձախ ազդրի փափուկ մսի մեջ զգաց սուր ծակոց. վայր ընկավ ու ցավից բարձր ճչաց:

Շները հետ փախան, տասը քայլի վրա նստեցին խուլ մոռոցով: Տիտոսի կանչին ամպի միջից երևաց հովիվը, թաղիքե վերարկուն ուսին: Նրան թվաց, թե հովիվը երկնքից իջավ: Շները վնաստոցով հեռացան, հովիվը մտեցավ Տիտոսին, ոտքի վերքին նայեց:

— Բան չկա, հիմա արյունը կկտրվի,— ասաց նա:

Տիտոսը վախից գունատվել էր: Ոտքի կանգնեց և նոր միայն զգաց, որ ձախ ազդրը ցավում է, ասես մեկը եղինջի փշերով ծակծկել էր փափուկ միսը:

Հովիվը թաղիքից մի քիչ բուրդ հանեց, փաթաթեց վերքին:

Եվ երբ Տիտոսը կարողացավ մի քանի քայլ անել, մարդը հարցրեց.

— Բա ո՞ւր էդպես մենակ...

— Մենակ չեմ, ընկերներս հրես հետևիցս գալիս են,— ասաց Տիտոսը, աչքի տակով նայեց հովիվին, ստուգելու՝ արդյոք հավատա՞ց նա: Հետո նրան հարցրեց, թե ուր է տանում ճանապարհը, հեռո՞ւ է կտրած քարվանսարան:

— Դեռ օր շատ կա, արևը մայր շմտած կհասնես: Հենց էդպես վեր արի...— ասաց հովիվը, մի քիչ էլ կանգնեց, մինչև Տիտոսը ձախ ոտից կաղալով կորավ ամպի մեջ: Հետո փաթաթվեց վերարկուում, սուլոցով բարձրացավ ոչխարի մոտ:

Տիտոսը քանի իջնում էր, ամպն այնքան էլ նոսրանում էր: Սարի քամին ծվեն-ծվեն էր անում ամպի դեզերը, քշում ներքև, ուր ամպի մանրիկ քուլաները հալվում էին, կորչում:

Մի քիչ հետո ամպի միջից երևաց արևը: Դիմացը շոր, ցամաք ժայռեր էին, կարմիր ու գորշ քարեր, որոնց վրա անկարգ բուսել էին կարճլիկ մացառներ: Չորակները շատ հեռվում հալվում էին, աստիճանաբար ցածրանում և ձուլվում տափաստանի հետ:

Տափաստանը Տիտոսի աչքին անժայր թվաց: Հեռվում

դժվար էր որոշել տափարակի կապույտ հորիզոնը: Հարթ
երկիրն աննկատորեն միանում էր կապույտ երկնքի հետ, հե-
ռուներում կազմում մի այլ աշխարհ, որ ոչ ծով է, ոչ երկիրք
և ոչ էլ անծայր անապատ:

Նստեն ամպոտ սարն էր, որի վրայից նա անցավ: Սարի
զլխին դարձյալ ամպ կար: Մի պահ Տիտոսին այնպես թվաց,
թե սարը մինչև երկինք է հասնում, շները բարձր ամպերի մեջ
վրա տվին իրեն:

— Չո՛ւ, շո՛ւ,— լսեց Տիտոսը, երբ մի քիչ էլ ցածրացավ
10 ճանապարհով: Բարձրացավ քարի զլուխը, նայեց ձորին: Իշա-
վորներն էին:

Արևը մայր էր մտել, երբ հոգնած քարվանը հասավ կոտ-
րած քարվանսարին: Քարվանի հետ իջևանի բակը մտավ և
բեզարած Տիտոսը:

* * *

Գիշերով քարվանսարա ուրիշ ուղևորներ էլ եկան: Հայեր
կային, թուրքեր՝ իշով, ձիով: Ուղտապաններ եկան, որոնք
ուղտերով նավթ էին տանում այն մահալը, որտեղից ինքն
անցավ: Գուցե ուղտապաններից մեկն էլ իրենց գյուղը նավթ
տանի:

20 Տիտոսը պառկեց խսիրի վրա, պայուսակը զլխի տակ:
Միտն եկավ, թե ինչպես էր ուղտապանը գյուղում կանչում.

— Նավութ ալան, ա՛յ նավութ ալան*...

Հավաքվում էին նրա զլխին, և մինչև գյուղը նավթի գինը
չորոշեր, ոչ ոք նավթ չէր առնում: Ուղտապանը բարկանում
էր, սպառնում հեռանալ:

Ցեխապատ սենյակում հատակի խսիրների վրա պառկել
էին բեզարած ուղևորները, ով որտեղ ազատ էր տեսել: Մեկը
ձիու հարդով լի պարկն էր դրել զլխի տակ, ուղտապանը
նավթոտ ջվալն էր գցել մեջքին: Շատերը խոր քնի մեջ խո-
30 ուացնում էին, ոմանք օջախի մոտ նստած դեռ թեյ էին խմում:
Քարվանսարայի տերը շուտ-շուտ ներս ու դուրս էր անում,
գիշերով ճանապարհվողներից հարկն առնում, հարդ շունեցող-
ներին հարդ տալիս, էլի նստում տախտակների մոտ, նավթի

* Նավթ առնող, այ նավթ առնող:

փոքրիկ ճրագի կողքին, մի քիչ ննջում, մինչև մեկը գամից կանչի և կամ օջախի մոտ թեյ խմողները մի կտոր շաքար ուզեն:

Տխտոսի կողքին պառկածը շորեպան էր, աղ էր տանում ցորենի հետ փոխելու: Առավոտյան շորեպանը պիտի անց կենար նույն սարով, որի վրայով անցել էր Տխտոսը, ամպի քուլաների միջով:

Տխտոսն աչքերը նոր էր փակել և ոտները հանգիստ մեկնել խսիրի վրա, երբ զգաց, որ մեկը ոտները կոխ տալով եկավ, կողքին պառկեց: Ցավից զարթնեց, ոտքը հետ քաշեց, տեսավ, թե ինչպես մարդը մեկնվեց:

— Որտեղացի՞ ես,— հարցրեց նա:

Նա թեկուզ ցավ էլ զգաց, բայց մարդու հարցի մեջ կարեկցանք տեսավ, մոռացավ ցավն ու պատասխան տվավ:

— Ո՛ւր ես գնում, մենա՞կ ես,— հարցրեց նա, գլխատակի կապոցը պատին հենելով:

— Բեան:

Մի քիչ հետո մարդը հարցրեց.

— Ճանապարհի ծախս, ձեռագող ունե՞ս...

— Ունեմ, հա՛, բիւթի փող: Հրես ծոցումս կարած է,— ասաց Տխտոսն ու ձեռքը ծոցին տարավ, մատերով շոշափեց փալասի կտորը, որ մի քանի տեղից թելով կարած էր ծոցին: Շուտով կհասնի մաշինին: Ահա կոտրած քարվանսարան, որի մասին ասել էր Անտոնը:

— Ուղիղ ճանապարհ է, կգնաս, կհասնես մաշինին:

Պուցե Անտոնն էլ է գիշերել այդ իջևանում, պառկել նույն խսիրի վրա: Ինչքա՛ն պիտի զարմանա, երբ տեսնի Տխտոսին:

Ուրախության ալիքը բարձրացավ այնքան, որ սրբեց, ետ վանեց քունը: Ինչո՞ւ կողքին պառկած մարդը էլ ուրիշ ոչինչ չհարցրեց: Պուցե Բեանու կողմերից է գալիս: Չի՞տեսել արդյոք Անտոնին: Եթե նա գիտենար ինչ մտքեր կան Տխտոսի գլխում, եթե հարցնեի: Տխտոսը բոլորը կպատմեր:

Սակայն մարդը քնել էր, շորեպանն էլ քնի մեջ անկապ խոսքեր էր ասում: Օջախի կրակը մերթ հանդարտում էր, բոցը գետնի երեսին էր պառկում, ճիգ անում օջախի մոտ ընկած, կեսը վառված ցախերին հասնելու: Եվ երբ կրակի լեզուները հասնում էին ցախին, օջախը նորից բոցավառվում էր, լույսի

10

20

30

տակ Տիտոսը տեսնում էր տան ցեխապատը, եղեգնով ծածկած կտուրը:

Իրենց գյուղում պատերը քարից են, շատ տների կտուրներն էլ է սալ քար, հաստ գերանների վրա: Ինչքան կզարմանային գյուղում, եթե մեկը իր կտուրը եղեգնով ծածկեր:

Քնելուց առաջ Տիտոսի վերջին միտքն այն մասին էր, թե չի՞ կաթում այդ կտուրը անձրև օրերին: Հետո քունն իջավ, միտքն օրորաց, հալվեց, որ կեսգիշերին դառնա երազ:

Երազի մեջ Անտոնն էր, ձեռքի ճիպոտով խփում էր մոշի
10 ճյուղերին, տերևները փրցնում: Կանչում էր, Անտոնը պատասխան չէր տալիս: Ձեռք էր, թե հորթի ոտք կրծքի վրա, ձայնը լավ չէր հնչում: Քնի մեջ շարժվեց, երազը փոխվեց...

Առավոտյան Տիտոսն ուշ զարթնեց. քունը հաղթել էր նրան: Նստեց խսիրի վրա, աչքերը տրորեց, մի պահ զարմացած նայեց շորս կողմը: Հետո վերհիշեց քարվանսարան, օջախի գիշերվա կրակը: Կողքին քնած մարդ չկար: Բակում ուղտապանները նավթի պարկերն էին բարձում ուղտերին: Իշավորները տոպրակի մեջ դարման էին լցնում:

Իջևանի առաջ՝ առվի ջրում, Տիտոսը երեսը լվաց, ձեռքը
20 տարավ պայուսակի հացին: Ծամփի պաշար դեռ ունեւր: Պառավի տված բլիթները մնում էին, թեկուզ գլխատակին մի քիչ փշրվել էին:

Երբ մի քիչ հետո իշավորները ճանապարհ ընկան, Տիտոսն էլ պայուսակը ուսին նետեց, փայտը ձեռքն առավ, որ հետևի նրանց: Իջևանի տերը տեսավ այդ, կանչեց.

— Ա ջահել, քնելուդ փողը...

Տիտոսը զարմացած կանգնեց: Նա չհասկացավ, թե ինչու պիտի փող տա քնելու համար: Այնքան մարդ էր գնում գալիս, և գյուղում ոչ ոք մտքովն էլ չէր անցնում փող տալ:
30 Ի՞նչ կասեին: Բայց երբ ուղտապանները ծիծաղեցին, մեկն էլ սրախոսեց, թե՛

— Քեռու տունն է կարծել,— Տիտոսը համոզվեց, որ այդ օրենք է, սահմանված կարգ: Ինչո՞ւ Անտոնը չէր ասել այդ մասին:

Ուղտապանները տեսան, թե ինչպես նա Վերսը մյուս

կողմը դարձրեց, ձեռքը տարավ ծոցին: Մի վայրկյան հետո Տիտոսը բարձր ծկլթաց, օձից խայթվածի պես:

— Վա՛յ, աման, փողոս...

Փայտը ձեռքից ընկավ, փայտի հետ էլ Տիտոսը: Նա ոտքերը գետնովն էր տալիս, քարերը շանգոռում, կանչում, լաց լինում, լացի հետ էլ օգնությունն փանշում:

— Վա՛յ, աման, փողոս...

Ուղտապանները նախ շհավատացին, քարվանսարայի տերը կարծեց, թե տղան դիտմամբ է անում: Բայց հետո հավատացին, ուղտապաններից երկուսը մոտեցան, սիրտ տվին: 10

— Ինչքա՛ն էր:

— Բիլեթի փող, Բեանի մաշիճի փող: Ես ոնց անեմ, վա՛յ աման...

— Տղա մի լինիր, լավ... Կաշխատես, մի մեծ փող չի: Կասես՝ քեզ անփող կտանեն, մի մարդ կճարվի...

Արխալուղի կոճակներն արձակված, մի ձեռքը ծոցին բռնած, Տիտոսը շոած աչքերով մեկ սրան էր նայում, մեկ նրան:

Ո՞վ տարած կլինի: Զորեպանը. բայց նա խոր քնի մեջ էր: Գուցե այն մարդը, որ այնպես սրտանց հարցրեց, թե ուր է գնում, հետո կողքին դարձավ, քնեց: 20

Իշավորները հեռացել էին: Ի՞նչ անել. հետ վազել սարն ի վեր, հասնել ջորեպանին, ոտքերն ընկնել, աղաչել, գուցե հետ տա: Բայց ո՞ւր հասնի նրան, գուցե ուրիշ ճանապարհով է գնացել, գուցե տեղեկություն էլ չունի փողից:

Քարվանսարայի տերը վկայեց, որ մյուս մարդը լույսը շքացված է գնացել: Վճարել է իր հարկը: Նրա ձին բեռան տակ շէր, ո՞վ էր, ո՞ւր գնաց, ոչինչ չի կարող ասել:

— Հսքան տարի է էստեղ եմ, էդպես բան չեմ տեսել...

Եվ իջևանի տերը նորից կասկածեց— գուցե Տիտոսն է հորինում: Բայց տղան լալիս էր, աչքերով օգնություն աղերսում, մի ելք: 30

— Լավ, գնա՛, իշավորներին հասի: Ինձ հասանելիքն էլ քեզ եմ բաշխում,— ասաց տերը և ներս մտավ:

Տիտոսը մի քիչ էլ սպասեց: Ուղտերը տեղից վեր կացան, դանդաղ քայլերով ճամփա ընկան: Նա մեկ ուզեց հետևել

ուղտերին, հետ վերադառնալ, մի ուղտապանի հետ գնալ գյուղը: Մեկ էլ հետ վանեց այդ միտքը, գետին ընկած փայտն առավ և արագ քայլերով իջավ ձորի լայն ճանապարհով:

Արևը կեծացել էր: Գյուղում արևն այդպես խանձում է միայն ամռան օրերին: Արևից քարերը տաքացել էին, ձորը թվում էր երկար կոկորդ, որի միջով երբեք սարի հովը չի անցել: Չէր երևում աշնան կանաչը, և եթե ամպի մի քուլա էլ մոլորվեր, հասներ ձորին, տաքը սարի ամպին պիտի հալեր:

20 Զորի միջով հոսող պղտոր գետակի ափերին բուսել էին դեղձի ու ծիրանի ծառեր: Տիտոսի տեսածը խնձորի էր, կեռասենի ու տանձի: Իջավ ձորը, մոտեցավ ծիրանի ծառին, նայեց և շկարողացավ որոշել խնձորենի է, թե տանձի: Կռացավ գետակից ջուր խմելու: Սարի ետևին կանաչի հետ մնացել էին և սառնորակ ջրերը: Զորի գետակի ջուրը փտած խոտի համ էր տալիս: Տիտոսը միայն բերանը ողողեց, ճանապարհ ընկավ...

Եվ երբ իշավորներին հասավ ու նրանց էլ պատմեց փողի մասին, մի քանիսն իսկույն հարցրին, թե ինչքան էր:

20 — Ոչինչ, անցածն անցել է,— ասաց ծերունի իշապանը, որի երկար, կախ ընկած ոտքերն իշու քայլերի հետ օրորվում էին:

Արևը նեղացնում էր: Տիտոսը փափախով սրբեց քրտինքը, արխալուղը հանեց: Ուսին զցելուց առաջ մի անգամ էլ նայեց աստառին, որից բարակ թելերով կապել էր փողի փալասը: Թելերից երկուսը կախ ընկած մնացել էին:

Արևի տակ ավելի շատ հոգնեց: Փորձում էր ոտքերը գետնից բարձր վերցնել, բայց չէր կարողանում: Տրեխները քսվում էին ճանապարհին, փոշի հանում, փոշին նստում էր բրդի շալվարի վրա: Մարավից լեզուն չորանում էր, պռոշներն էր լիզում, զուլսը երբեմն թեքում ձորի կողմը, գետի պղտոր ու անհամ ջրին նայում:

— Հիմա սարի աղբյուրի մոտ լինեի, ինչքա՛ն կխմեի,— մտածեց Տիտոսը: Միտն ընկան հորթերը, աղբյուրը, որի սառը ջրում հաց էր թաթախում, խաղ անում ջրի հետ, ջաղաց շինում կամ ձեռքով մաքրում աղբյուրի ակը, խիճ ու ավազ դուրս թափում: Զուրը նախ պղտորում էր, հետո պար-

զում, աղբյուրի ական ավելի խոր էր թվում, բայց շուրջ նորից
փլցնում էր ավազի պատերը:

Էշերն էլ էին հոգնել: Հենց որ մեկի տերը մի քիչ ետ էր
ընկնում կամ իշու վրա ննջում, մահակը գետնով քարշ տա-
լիս, էջը զգուշությամբ մոտենում էր ճանապարհի կողքին բու-
սած մացառին, մի քանի տերև պոկում, մինչև տերը կհասնի
կամ կզարթնի և ձեռքի մահակով մի կշափեր իշու փորին:

Տիտոսն աշխատում էր ետ շմնալ: Ուժ էր տալիս ոտքե-
րին, երբեմն վազում, երբ նկատում էր, որ իր և իշավորների
միջև եղած տարածությունն ավելի է մեծանում: Վազելիս 10
փոշի էր կուլ տալիս, պայուսակը համաշափ ցնցումներով
զարկում էր թիկունքին:

Ճանապարհը ձանձրալի էր, միապաղաղ: Թվում էր, թե
ձորը վերջ չպիտի ունենա, թեկուզ ամեն մի պտույտ թվում
էր որպես վերջինը, որից հետո պիտի սկսվի տափարակը:
Բայց պտույտը վերջանում էր, որպեսզի մի ուրիշը ծայր
առնի:

Ճանապարհին մի քանի գյուղեր տեսան քարերի գլխին,
ծիրանու այգիների մեջ: Իրենց գյուղի նման չէին: Տները
ցածրիկ, առանց կալ ու մարագ, իրարից հեռու, մեկը մի քարի 20
տակ, մյուսը առվի եզրին:

Ո՞ւր էին Անտոնի պատմած բարձր տները, փողոցները,
ուր հազար մարդ է անցնում, ավելի, քան Կատարի խաշի
ուխտի օրը: Ո՞ւր էին կառքերը, ավտոմոբիլները, որոնց վժժո-
ցից մարդ վախենում է, ետ փախչում:

Եթե իշավորներից ետ մնալու հոգսը չլիներ, զուցե Տի-
տոսն ավելի երկար նայեր, թե ինչպես են ձորի գյուղում մի
զույգ եզով վար անում: Մի քիչ վազելուց հետո, երբ ծերունի
իշապանը Տիտոսին ձայն տվեց, թե իջևանը հեռու չի, իրենք
պիտի գիշերեն այնտեղ, նա քայլերը դանդաղեցրեց:

Արևը մարմրին էր տալիս, և արևի շողերից քարափի կա-
տարները փայլում էին պղնձի կարմիր փայլով, ստվերներ
կախում ճանապարհի վրա:

Տիտոսը ճանապարհի կողքին բոստաններ տեսավ: Ահա
թե որն է սեխը: Աշնանը հեռու տեղից սեխ էին բերում գյուղ,
փոխում գարու հետ: Տիտոսը և՛ ուրախ էր, և՛ հպարտ: Նա

տեսաւ այն երկիրը, ուր բոստաններում սեխն է բուսնում: Եթե վերադառնա՞ր գյուղ... Ինչե՞ր պիտի պատմեր և ինչքան պիտի զարմանային ընկերները:

Ճամփի կողքին հինայած մուրուքով մի մարդ էր շոքել: Նրա շրթունքները շարժվում էին, մարդն իրիկվա նամագն էր անում, անթարթ աչքերը դեպի հեռուն: Երբեմն ձեռքերը կրճճին էր դնում, գլուխը խոնարհում գետնին, մի քիչ մնում այդ դիրքով, ապա բարձրանում, նորից շրթունքները շարժում:

10 Երբ Տիտոսը մոտեցավ նրան, մարդն ասես ոչ տեսավ և ոչ էլ նրա ոտնաձայնը լսեց: Տիտոսի աչքն ընկավ նրա կողքին, հենց ճամփի վրա դարսած սեխերին, որոնց մոտ հասարակ կշեռքն էր, քարե գրվանքաներով:

Եթե փողը լիներ, կառներ— այն դեղինը, որի կլեպը հասնելուց ճաքել էր, մի տեղն էլ սևացել: Ի՞նչ համեղը պիտի լինի... Գյուղում նա միայն մի անգամ էր սեխ կերել, ավելի ճիշտ սեխի վլեպ:

20 Տիտոսն ինքն էլ շիմացավ, թե ինչպես ձեռքը դեղին սեխին մեկնեց հենց այն ժամանակ, երբ մարդը մի անգամ էլ երկրպագեց: Եվ երբ թևի տակ զգաց հասած սեխի փափկությունը, քայլերն ակամայից արագացան: Ճանապարհն աչքն քվեցվելիս, Տիտոսը մի անգամ էլ ետ նայեց: Մարդը շարունակում էր աղոթել:

Մի քանի քայլ էլ արեց, հետո նստեց, դանակը գրպանից հանեց և խրեց սեխի մեջ: Իրոք որ սեխը և՛ հասած էր, և՛ համեղ: Սեխը կրճեցի հանկարծ նրա ականջին վազող ոտքերի ձայն ընկավ, թվաց, թե նախիրից փախած հորթ էր վազում: Պատառը դեռ կուլ չտված, մեկ էլ առաջը ցցվեց աղոթող մարդը, թևերը քամու ջաղացի պես իրար տալով: Մարդը քարձր կանչեց Տիտոսի ականջի տակ և ոտքը թափով վրա բերեց նրա թիկունքին: Տիտոսը փուկեց գետին և տեսավ, թե ինչպես իր գլխի վրայից թռան սեխի ջարդված կտորները:

30 Ուղղափառ սեյիդը, հավատարիմ հնօրյա նամագին, սեխի համար աղոթքը չէր ընդհատել:

* * *

Մուլթ էր, երբ Տիտոսը հասավ իջևանին: Սերունի իշապանը դեռ չէր քնել: Եվ երբ Տիտոսը մեկնվեց խսիրի վրա, ծե-

րունին ասես ինքն իրեն հաշվեց, թե լուսաստղը դուրս շեկած
եթե ճանապարհվեն, կարո՞ղ են թեյին հասնել քաղաք:

— Մաշինն էլ հենց էդ ժամանակն է ճանապարհվում
Ռևանու կողմը, թե բիւթ ճարես, կնստես... Աստված մեծ է,
մի լույս կհասնի,— ավելացրեց ծերունին, կողքին դարձավ,
լիաթոք հորանջեց ու լռեց:

Իշևանի տերը, որ կաղլիկ ոտը քարշ տալով ներս ու
դուրս էր անում վրա բերեց:

— Ինշալլահ, ինշալլահ...

Տիտոսին այնպես թվաց, թե կաղն իր մտքերն էր անում, 10
որոնց հետևից նա ասաց «ինշալլահ»:

Վաղը... Ուրեմն վաղն առավոտյան նա կտեսնի վագոն-
ները, որոնք հարյուրավոր մարդ են տանում երկաթ գծերի
վրայով: Եթե փողը մնացած լիներ: Ի՞նչ է անելու վաղը: Մի-
թե պիտի ետ մնա: Իսկ եթե ճամփի պաշարը վերջանա՞:

Տիտոսը ձեռքով շոշափեց պայուսակը, հացը նրան սիրտ
տվավ: Եվ ոտները մեկնեց, ձեռքը կամացուկ տարավ ազդրի
վերքին, այնքան թեթև թվաց վերքը: Նույնիսկ ժպտաց, երբ
միտն ընկավ շների վրա տալը, ինչպես ինքը վախից գետին
ընկավ:

20

Կաղլիկ մարդը կողպեց իջևանի դուռը, ոտը քարշ տալով
մոտեցավ տախտակների վրա պառկեց

Տիտոսը շուռ եկավ տեղում, գլուխը մոտեցրեց ծերունու
թիկունքին, կուշ եկավ: Կաղլիկ մարդը պառկելուց առաջ
մոտեցավ, ճրագը իջեցրեց, նայեց Տիտոսին, հետո պատի
նիշին նայեց, և երբ Տիտոսը պառկած տեղից ձայն տվավ, թև
ինչ է փնտրում, կաղը պատասխանեց.

— Հե՛շ, մի փետ կար...

Հետո նա հարցրեց Տիտոսին, այս անգամ ճրագը հանգ-
ցընելուց և տեղում պառկելուց հետո.

30

— Մայր ունե՞ս, տղա...

— Ունեմ:

— Հա՞յր:

— Չէ՛:

— Բա էդ ալևորը քո ի՞նչն է...

— Հե՛շ,— ասաց Տիտոսը այնպիսի շեշտով, որ նշանակում էր, թող քնեմ:

«Ինչալլահին» լոնց: Քիչ հետո Տիտոսն էլ քնով անցավ, մոռացավ աքացին էլ, հոգնածությունն էլ:

Գիշերվա կեսին, երբ բեզարած անցորդները քնել էին խոր մրափով, «ինչալլահին» տախտակները ճռռացին, կաղիկ ոտը վերմակի տակից թեքվեց, մութում գտավ գետինը, մյուս ոտն էլ հետևեց նրան, վերմակն ուսն առած կաղը մոտեցավ Տիտոսին, մի վայրկյան շունչը փորում պահեց և 10 ապա կամացուկ պառկեց խսիրի վրա:

Քնի մեջ Տիտոսն զգաց, որ մի տաք շունչ, մարմանդ թոնրի բերանի պես տաքացրեց մեջքը: Այդ նրան դուր եկավ, ոտքերը երկարեց և ավելի խոր քնեց:

Երազի մեջ թվաց, թե շունն իր տաք չեզվով չիզում է ազդերը, հետո լեզուն դարձավ թաթի պես, մատներն զգուշ մոտեցան շալվարի կարկատանին: Մսերը թրթռացին, Տիտոսը շուռ եկավ մեջքի վրա, նորից քնեց:

Մի մեծ մուկ աշխատում էր կրծել զոտու պարանը, որով բրդի շալվարն էր կապված մարմնին: Մուկը նստել էր 20 պորտի տակ, շանչով խողտացնում էր պարանի հանգույցը, աշխատում էր կապերն արձակել:

Տիտոսը հանկարծ աչքերը բաց արեց: Մարդու մատներ էին շարժվում պարանի հանգույցի մոտ: Ականջի տակ մի ուրիշի շնչառություն էր, ընդհատ ու խռպոտ, ասես խեղդվում էր:

Կողքին շուռ եկավ, թիկունքը ծերունու թիկունքին: Շուռ գալիս նա տեսավ, թե ինչպես մի ձեռք խխունջի պոչի պես հոտ քաշվեց, մտավ վերմակի տակ:

Ձեռքի տերը զգուշությամբ գլուխը հեռացրեց: Տիտոսի 30 գլխում մի միտք որպես կայծակ փայլատակեց: Ու նրա առողջ ոտը այնպիսի թափով հարվածեց վերմակի տակ պառկած մարդու փորին, որ մարդուն թվաց, թե փթանոց քարով տվին: Հարվածից տնքաց ու փորսող տալով հասավ տախտակներին: Մութի մեջ նա քարշ էր տալիս զույգ ոտքերն ու վերմակը՝ որպես խեցի մեջքի վրա:

Տիտոսը դեռ երկար չկարողացավ քնել:

— Կոտրած քարվանսարից մի ուղիղ ճանապարհ է, մի օր կգնաս, կբնես, մյուս օրը կհասնես վագոնին...

Ճանապարհն ուղիղ էր, սակայն այդ ճանապարհի վրա այնքան խուժ ու խոռոչ կար, օրերն այնպես փորձանքներ էին պահել և այնքան արկածներ: Առաջ ի՞նչ հանդարտ էին հոսում օրերը, որպես պաղ առու կանաչ խոտերի մեջ, և ինչպես պղտոր էր ձորի գետը, ջուրը դառնահամ:

Լուսաստղը շէր ծագել, երբ ծերունին տեղում նստեց, հորանջեց և ձայն տվեց ընկերներին: Տիտոսն իսկույն վեր կացավ, պայուսակը թափ տվավ:

10

— Ականջդ ինչքան թեթև է,— ասաց ծերունին Տիտոսին:

— Ես կանուխ էի զարթնել,— ասաց նա և դուրս եկավ իջևանից:

Աչքերն ուռած կաղլիկը, մեջքը քորելով մտեցավ իշապաններից քնելու փողն ուզելու: Տիտոսը ճիշտ նրա աչքամիջին նայեց, մահակը սեղմեց բռունցքի մեջ: «Ինչալլահը» տեսավ այդ և շմոտեցավ:

— Տեսա՞ր, բալա,— ասաց ծերունին, երբ էշերի քարվանդ ճանապարհվեց,— Աստծո լույսը սրան են ասում: Միտն էլ շէր, որ փող առնի քեզնից:

20

Տիտոսը լուռ քայլում էր ամենից առաջ: Նրան թև էր տալիս այն միտքը, որ շուտով արևը պիտի ծագի և հենց արևը մի քիչ բարձրանա թե չէ, պիտի հասնեն վագոնին: Էլ ոչ մի սար, ոչ մի շուն ու իջևան:

Ձորն էլ էր այդ ասում: Քանի գնում, բլրակները տափականում էին, խոնարհում էին գագաթները, ձորի բարձր ժայռերը մանրանում էին, նոսրանում:

Երբ լուսաստղը դժգունացավ ու վորավ կապույտի մեջ, Տիտոսի աչքի առաջ բացվեց այն անծայր տափաստանը, որի հորիզոնը հեռվից դժվար եղավ որոշել, իմանալ հեռվի կապույտը երկի՞նք է, թե հարթավայր:

30

Լուսաբացին, օդի մեջ եղած փոշին ցողի հետ իջել էր գետին: Օդը մաքուր էր և թափանցիկ, որպես սրբած ապակի: Եվ երբ Տիտոսը հարթավայրի վրա կանաչ այգիներ տեսավ, ուրախությունից ձեռքը մեկնեց այգիների կողմը, կան-

չեց ծերունուն: Իշավորներից մեկը շտապեց պատասխանելու:

— Մաշինը հենց էնտեղ է:

Ճամփի կողքին Տիտոսը բամբակի մարգեր տեսավ: Բացվել էր բամբակը, կնգուղների սպիտակութունից ասես դաշտում ձյուն էր եկել: Վազեց, բացված կնգուղներից մեկը պոկեց:

— Բամբակն էդ է էլի՞,— ասաց ծերունին:

— Տեսնես մեր կողմերում կբանի՞,— հարցրեց Տիտոսը, կնգուղը քրքրելով:

— Չէ՛, բամբակը սար տեղում չի բսնում:

10 Տիտոսի միտն ընկավ գյուղի ձմեռը, սպիտակած դաշտերը: Խուրձը շալակին անցավ դպրոցի կողքով, մեկը ժրպտաց ներսից, ինքն էլ ժպտով պատասխանեց:

Ի՞նչ են ասում իր մասին գյուղում: Մայրը սպասում է մի լուրի: Երևի ուրիշ հիշողներ էլ կան: Հենց այդ ժամին, երբ արևելքում ամպերը ոսկու փայլ ունեին, գյուղում կովերին խոտ են տալիս, ծուխը հերդից բարձրանում է: Զանունց պառավը, արմունկները վեր քաշած, պատին առավոտյան թրիքն է ծեփում:

20 Անցնելու մի քանի տարի, մեծանար, Անտոնի շափ իմանար, վերադառնար գյուղ, տեսած տեղերը ման գալու: Ո՞վ պիտի ճանաչի հորթարած Դաժունց Տիտոսին:

Արևի բարձրանալու հետ ճանապարհն էլ քշանում էր: Էջերը փռնչացնում էին քթածակերի փոշին, ոտով գնացողները փոշի էին հանում: Տիտոսի քայլերը հետ չէին մնում մյուսներից: Ոտքերն այնպես պինդ էր կոխում, ասես ամեն մի քայլը ուժեղ կամքի մի որոշումն էր անընդհատ քայլելու, բարձրանալու սանդուղքն ի վեր, մինչև գագաթ:

30 Ճանապարհը քաղաքի այգիների մեջ մտավ: Զորի գետը քաղաքին հասնելիս մանրիկ առուների էր բաժանվում, ջուր տալիս առուներին, խաղողի վազերին:

Տիտոսն առաջին անգամ ոտք կոխեց քաղաքի փողոցը: Թեկուզ քաղաքն ընդարձակ գյուղի պես էր, փողոցները ծուռումուռ, տները ցեխով շինած, ջուրը կեղտոտ, բայց և այնպես նրա համար նոր քան շատ կար ասիական քաղաքի նեղլիկ փողոցներում:

Ահա կառքը, մի զույգ ձի լծած: Ինչպես հանդարտ է

ալլում, ասես անիվները գետնին շեն դիպչում: Ինչքան շատ գլխարկ կար այն խանութի դռանն. ինչ լավերն էին: Մեկը միս էր խորովում, սպիտակ գոգնոցը հագին:

— Ճանապարհը շտապվես, թալա,— ասաց ծերունին, որ իշու վրա նստած հետևում էր Տիտոսին: Եվ եթե առաջինը գլուխը բարձր էր պահում, քաջերն ամուր կոխում, ժիր աչքերը խաղացնում բնում,— եթե Տիտոսն այդ դիրքով լեռնըցի աշխարհակալ էր, իշու վրա նստած ծերունին ապացուցում էր, որ, իրոք, հին դարերում էլ էջը հարգի է եղել, և մարգարեն իշու վրա նստած մտել է հրեական մի խուլ քաղաք:

10

Շուկայում Տիտոսը բաժանվեց իշապաններից: Նրանք կայարան չպիտի գնային: Ծերունին մահակով ցույց տվեց քաղաքի ծայրին ընկած սպիտակ տունը:

— Հրեն է, մաշի՛նն էնտեղ է կանգնում,— ասաց և հարդի տոպրակը հագցրեց իշու գլխին:

Տիտոսն իջավ դեպի սպիտակ տունը: Ահա թե որն է երկաթ ճանապարհը: Հեռվից արևի տակ պսպղին էին տալիս երկաթի զույգ գծեր: Թվում էր, թե երկաթ չի, այլ շափաղ տվող ապակի:

Սպիտակ տան առաջ մի քանի կառքեր կային: Ներսում մարդիկ շարք էին կանգնել, մոտենում էին նեղլիկ պատուհանին, որի ետևից մի ձեռք ներս ու դուրս էր անում:

20

— Երևան, մի հատ,— լսեց Տիտոսը: Նա էլ է գնում նույն ճանապարհով: Եթե մարդը նրա համար էլ տոմս ստանար:

— Բիլեթը պինդ պահի, որ չկորչի: Թե չէ ճամփին կմնաս...

Անտոնի խոսքերն էին: Հետո մի զանդ եղավ, ճիշտ ժամի զանգի պես: Մարդիկ խոնվեցին իրար: Փնչոցով մոտեցան վազոնները. մաշի՛նն այնպես պինդ ծկլթաց, որ Տիտոսը հետ քաշվեց, աչքերը վախից շռեց:

30

— Սա է տանում Բևանու կողմը,— մտածեց Տիտոսը, մոտեցավ մուտքին:

Մի մարդ Տիտոսին հետ տվավ: Տիտոսն էլ վազեց, ամբոխի մեջ փափախալոր մեկին տեսավ:

— Բա իմ բանը ինչ կլինի,— ես առանց բիլեթ... Ցանիք
թողիլ չե՞ն,— հարցրեց նա: Մարդը ծիծաղեց:

Ետ գնալ շկար Տիտոսի համար: Հարյուր մարդուց ավելի
է գնում, ինքն էլ կխառնվի նրանց հետ: Հո չի կոտրվի, քանի
փութ է, որ... Հացն էլ պրծնելու վրա է:

Այդ ամենը հայտնեց նա մուտքի մոտ կանգնած մարդուն,
բայց մարդը չսեց: Ուրիշներին էր բաց թողնում: Տիտոսի
աչքն ընկավ դահլիճի բաց պատուհանին: Մոտեցավ, ցատկեց
վրան, ասես գետնից մի ոստյունով իշու վրա նստեց, մի քիչ
10 սահեց և երբ տեսավ, որ նայող չկա, ոտքերը մյուս կողմի
վրա կախեց, ցատկեց ու խառնվեց մարդկանց մեջ: Բևանը
այնքան մոտ թվաց նրան, բոլոր արգելքներն ընդմիջտ վե-
րացված:

— Մաշինն ուղիղ տանում է Բևանու մեջը...

Մարդիկ քարձրանում էին սանդուղքով, ներս մտնում
Սանդուղքի կողքին կանգնած մեկը, որի գոտուց կանաչ կար-
միր փայտեր էին կախված, Տիտոսին թույլ շտվավ սանդուղ-
քով քարձրանալ:

— Ո՞ւր վզագես, լապատրակ,— ասաց մարդը ու ետ հրեց
20 նրան:

— Բևան,— կանչեց Տիտոսը, ձեռքով փափախը մի քիչ
ետ տանելով:

— Բիլեթ ունե՞ս,— հարցրեց նա:

Տիտոսը ետ քաշվեց, մի քիչ կանգնեց, տեսավ, թե ինչպե-
ս են մարդիկ գալիս, սանդուղքով քարձրանում: Աչքն ընկավ
մյուս կողմի սանդուղքին, որի մոտ ոչ ոք չէր կանգնած, կո-
ցավ վագոնի տակ, անցավ մյուս կողմը, ձեռքը մեկնեց սան-
դուղքի երկաթին: Դուռը փակ էր: Տիտոսը սանդուղքի վրա
նստեց:

Այսպիսի երջանիկ ըուպե նա ապրել էր և այն ժամանակ,
30 երբ գոմի ճրագի տակ՝ գրքի սև նշաններին նայելուց հետո,
նա հասկացել էր, որ շատերն իրար նման են, հարկավոր է
միայն երկար նայել, որ գրեթե լեզու առնեն ու խոսեն:

Երկրորդ զանգին մեքենան սուպեց, անիվները դղրդոցով
շարժվեցին, վագոնները ձգեցին մեկը մյուսին: Տիտոսը քիչ

մնաց ընկներ: Տեղն ամրացրեց, թևը պատ տվավ սանդուղքի
ծրկաթին:

Առաջին պահ նրան թվաց, թե կամա՛նի վրա է նստած,
եզնները փափուկ խուրձերի վրայով կամն են բշտում: Բայց երբ
գնացքն արագացավ, նրան այնպես թվաց, թե իրենք մի տեղ
կանգնել են, անիվներն աղմկում են ջրաղացքարի պես,
հողն է միայն հտ շարժվում, և հողի հետ էլ պիտի մոտենա
ծրկանը:

Բայց երբ ճանապարհի կողքին սայլեր տեսավ, սելվոր-
նները գրականերն օդում ճոճելով կանչեցին, Տիտոսը տեսավ, թե **10**
ինչպես սայլերը հտ մնացին:

Ընդարձակ դաշտ էր, դաշտի վրա գյուղեր, այգիներ, ճա-
նապարհ: Բամբակը բացվել էր, կանայք կոանում էին, բարձ-
րանում, գոգնոցները լի բամբակ: Հենց որ գնացքը մոտենում
էր, նայում էին անշարժ, ձեռքերը ճակատին դնում, մինչև
վերջին վագոնն անցնեն:

Հորթերը փախան... Տիտոսի աչքին հորթերը լղար երևա-
ցին:

— Լավ չի պահում,— մտածեց նա, նայեց հորթարածին,
որ մահակին հենած ոտքերը մկրատի բերանի պես լայն բաց **20**
արած, վագոններն էր համարում: Եթե նա իմանա՛ր, որ ուրիշ
աշխարհից մի ուրիշ հորթարած է գնում վագոնի սանդուղքին
նստած:

Առաջին կայարանում կանգ առնելը Տիտոսին զարմանալի
թվաց: Նա այնպես էր կարծում, թե գնացքը մի շնչով տեղ
պիտի հասնի: Նոր մարդիկ նստեցին, մի քանիսն իջան: Էլի
երկու անգամ զանգ տվին, գնացքը շարժվեց:

— Ուր մնացին իշավորները, ալևորը, որ քնում էր իշու
վրա, ոտները կախ անում: Նրանք նորից պիտի վերադառնա-
յին նույն ճամփով: Էլի այն խսիրը... Երազի մեջ մուկը **30**
կրծում էր մեջքի պարանի հանգույցը: Ինչ տաք էր ծերոնու
մեջքը՝ որպես մարմանդ թոնիր:

— Հիմա մեր կատուն պառկել է կտուրի վրա, արևի
տակ... Ազրայիլը կալ է կասում: Եթե հայրը տեսներ իրեն
վագոնի մեջ: Հանկարծ վագոնը նստած գնար գյուղը: Սեյիդի
սեխերը կլցնեն մեջը, թող հտեկից վազի: Սարի շները ոնց

կփախշեին մաշինի ձայնից: Ամպն ի՞նչ նրա համար, անձրևն ինչ...

Կամուրջի վրայից արագ անցնելիս՝ Տիտոսին թվաց, թե անիվները շարդվում են: Բնազդով հետ քաշեց գլուխը: Կամուրջի երկաթները նրան բարակ ճաղերի պես թվացին: Քիչ մնաց փափախն ընկնելը:

Գնացքը մի անգամ էլ կանգնեց:

— Երևու,— մտքում հաշվեց Տիտոսը: Միտն ընկավ, թե ինչպես մանուկ ժամանակ մորը հարցնում էր, թե երբ է լինելու զատիկ, ձու ներկեն:

10 — Քնես վեր կենաս, մեկ էլ քնես, կդառնա զատիկ,— պատասխանում էր մայրը:

Տիտոսը պայուսակին նայեց: Պառավի բլիթները փշրվել էին: Չեղբը կոխեց, բուռը լցրեց: Մոր տվածից մնում էր շոր պանրի մի կտոր և առանց յուղ գաթա, քարի պես պինդ: Գրքերը տեղն էին: Բլիթի փշրանքները կուլ տալիս Տիտոսը բռի մեջ տեսավ կավիճի կտորը, սրբեց, նորից տեղը դրեց: Գրիչն էլ էր պայուսակում: Տիտոսը նայեց գրիչն, որի կոթը մասրենու ճյուղ էր, վրան սև թելով փաթաթած ծայր:

20 Հանկարծ դուռը բացվեց, Տիտոսը քիչ մնաց ընկնելու:

— Հը՛, լապտրակ, բռնվեցիր,— ասաց մարդը, որ մուտքի առաջ տոմս էր ստուգում:

— Գե՛, ներս եկ, հիմա հոգեառդ կգա...

Տիտոսը սանդուղքից ցած նայեց: Գետինն արագ էր դառնում, անիվները դղրդում էին: Եթե ցած թռնել...

Բայց մարդը նրա թևից բռնեց, ներս հրեց և դուռը կողպեց: Ներս հրելիս Տիտոսի փափախը գլխից պոկվեց, ընկավ: Նա միայն այն տեսավ, թե ինչպես փափախը ոգնու պես գլորվեց ավազի կույտերի վրա:

30 Մարդը գնաց: Տիտոսը զգաց, թե ինչպես ոտքերի տակ անիվները թափով զարկվում էին տախտակներին, ասես հիմա պետք է տախտակները շարդվեն: Ոտքի մեկը բարձրացրեց, աչքը ման ածեց, ավելի ապահով տեղ գտնելու:

Մի ուրիշն եկավ: Առաջին մարդը ցույց տվեց նրան դռան մոտ կուլ եկած Տիտոսին:

— Ո՞ւր ես գնում,— հարցրեց նորեկը:

— Բեան,— պատասխանեց Տիտոսը: Ու մի քիչ սրտապնդեց: Ինչ ուզում են ասեն, միայն հասնի քաղաք, Անտոնին տեսնի:

— Ո՞վ ես,— հարցրեց մարդը:

— Տիտոսն եմ, Դաժոնց թոռը...

Ու շհասկացավ, թե ինչու մարդիկ ծիծաղեցին իր պատասխանի վրա: Ինքն էլ ծիծաղեց: Նորեկը նրա պաշուսակը քրքրեց: Չոր հացի կտորտանք կար, թերթերը մաշված մի գիրք, մի քանի գրոտած տետրակներ:

— Կա՛վ, էնտեղ կքննենք,— ասաց մարդն ու հեռացավ: 10

Տիտոսը ոչինչ չհասկացավ: Ծվ երբ մարդիկ հեռացան, գնացքը կանգնեց, Տիտոսը բարձրաձայն համրեց.

— էս էլ շորս...

Մի քիչ հետո գնացքը շարժվեց: Մարդը մի անգամ էլ եկավ անցավ մյուս վագոնը: Նա ոչինչ չասաց:

Բաց պատուհանից Տիտոսը զլխաբաց նայում էր դուրս: Քամի էր փչում, քամին իրար էր խառնում նրա անլվա մազերը: Տիտոսն այդ շէր զգում: Նրա աչքերը հեռվում փնտրում էին բարձր, սպիտակ տններ, փողոցներում հազար մարդ և հազարի մեջ Անտոնին...

Ծվ շրթունքները անիվների միալար գզրդոցի հետ կրկնում էին միայն մի բառ.

— Բեան, Բեան...

ՏՐԱՆՁԻՏ via ԲԱՅԱՆԴՈՒՐ

Յուրայինների շրջանում բարեսիրտ և ազգասեր մարդու համբավ ունի Մաքսուտ էքմեքճյանը, որի ծննդյան տոնին ամեն տարի «Հայրենիքի ձայն» օրաթերթը բարեմաղթում է երկար կյանք և անհատնում հաջողություն, հիշատակելով և այն գումարը, որ էքմեքճյանը նվիրում է Աղքատախնամին և կամ Չափահաս երկսեռ որբերի միություն:

10 Ամեն օր նույն ժամին էքմեքճյանը իր գործատունն է գալիս և ընկղմելով բազմոցի խորուխյան մեջ, տնօրինում, հաշվում, մերթ սիրալիք օպտում, եթե ժպտը պիտի ավելացնի իսթ Ուոթթաունի օֆիսի մեջ ունեցած դրամագլուխը, մերթ թավ ունքերը կախում և սիգարի թանձր ծխի մեջ դեմքի մոռայովությունը պահում, որպեսզի վայրկյան հետո կայծակի պես որոտա շաբաթականից դժգոհ գործավորի վրա:

Այդ եռուզեռի ընթացքում, երբ հարկավոր է օժանդակել հարյուրավոր պատիկ տներին աճման, հսկել մանոսայի և կտավի գործին (մի ուղերձի մեջ «Հայրենիքի ձայնը» գովասանքով է գրել, թե էքմեքճյան առևտրական տունը միակն է, որ վաճառում է երկրում հյուսած կտավ ու մանոսա), 20 հետևել «Հայ փեյնթրը» ընկերության, որ ներկում է տան ներսի ու դրսի մասեր, աժան և մաքուր կատարում փլեսթրի գործ, վերջապես վարդալ ամենօրյա տեղեկագրերն այն հակա վաճառատան, որի տնօրիններից է և որտեղ, ինչպես ամեն գիշեր ազդարարում է էլեկտրոնեկլամը, «կգտնվի ամեն տեսակ կարասիներ արարթմաններու համար, մասնավորաբար քոֆրեֆոր և այլն», այդ ժխորի մեջ էքմեքճյանը ժամանակ է գտնում թերթելու գրասեղանի վրա դրած Ս. Փրկչի օրացույ-

ցը, հետևելու «Հայրենիքի ձայնին», տեղյակ լինելու համար, թե Սաղկազարդ կիրակին ազգային ո՞ր սրահի մեջ պիտի լինի «Պեսքեթ պարթի», Զատկի առթիվ ի՞նչ ընկերություն է կազմակերպում հավկթախաղ և այլն:

Եթե այդ ամենին ավելացնենք և այն, որ նա կիրակի օրերը սովորություն ունի եկեղեցի գնալու և պիտի ճաշին ուտի «հայկական թոնրի բարակ հաց», համարյա ավարտած կլինենք կինոժապավենի պես արագ դարձող նրա օրերի նկարագիրը:

Երբեմն, երեկոները, զվարթ տրամադրություններ, նա սիրում է լսել «Ստամպուլ» բեքըրդի վրա հայրենական գանոնի վարպետ Օկսենտ Տաշճյանի նվագը և գոհունակ ժպտալ, երբ գանոնը նվագում է «Գոլլարընտա ճան վերեյիմ»:

Սակայն Մաքսուտ էքմեքճյանի համար ամենից հատկապես արժեք ունի այն, որ նա ունի հայ գործավորների հանդեպ: Առանձին պարծանքով է նա ասում, որ ինքը շատ ազգակիցների է գործ տվել: Եվ «Հայրենիքի ձայնի» կիրակնօրյա համարում ամեն շաբաթ Մ. էքմեքճյան Ընկ. խոշոր տառերով ազդարարում էր.

— Ով գիտե ջահրակով ու մանիչով բամբակ ու բուրդ մանել, ինպես նաև կտավ գործել, թող աճապարի այս հասցեով...

Եվ մի քիչ ներքև այլ ազդ.

— Հայրենակիցներ՛ր, երկիրը հյուսած կտավ, մանուսա կվաճառե միայն Մ. էքմեքճյան Ընկ...

* * *

Այդ օրը Մաքսուտ էքմեքճյանի ժպիտը խաղում էր, ինչպես արևի շողերը ծաղկանկար գորգի վրա: Ավելի պայծառացել էին աչքերը, և դեմքի դեղնած, ծալ-ծալ նստած կաշին փայլում էր անխոռով քնած և վրդովելու ոչ մի առիթ չունեցող մարդու ներքին գոհունակությամբ: Հեռաձայնը ուրախ լուրեր էր բերել Խաթ Ութթթաունի օֆիսից:

Երբ մի կողմ դրեց օրվա լրագիրը, հանկարծ ապակեպատ դռան ետևում տեսավ կտավի ամենից լավ վարպետ Երվանդին: Խոնարհ և համեստ մարդ էր Երվանդը, գլուխը կախ աշ-

խատում էր շահրակի առաջ, և եթե շաքաթակահն էլ ուշ էին տալիս, շէր տրտնջում: Ամիաներով դուրս շէր գալիս գործարանի բակից, ոչի մի անկյունում, ներքնահարկ խուցի մեջ, ուր անկարգ թափված էին դատարկ արկղեներ, երկաթի կտորտանք, շարված կահույք,— իր անկողինն էր և մեծ սնդուկը:

Պատերազմից մի տարի առաջ էր եկել, և այդ տարիները նրա հիշողության մեջ չէին ավերել Շիրակի տափարակի վրա ընկած իր ծննդավայր գյուղը, իրենց տոնը, որի երդիկից ծուխը կապույտ ժապավենի պես վեր էր ձգվում այն երեկո, երբ գյուղից բավական հեռու հրածեշտ տվեց յուրայիններին և արագացրեց քայլերը, մուլը դեռ չընկած հասնելու քաղաք: Եվ նույն գիշեր փնացքը ալացավ, հետևում ֆողնելով տափարակի ներհած գյուղերը, ինչպես դադրած եզներ, ամռան լուսնկա գիշերին:

Տասերեք տարի առաջ էր...

— Ներս եկե՛, յավրում, Երվանդ, ինչո՞ւ կեցեր ես,— կանչեց էքմեքճյանը:

Եվ երբ Երվանդը ներս մտավ, խոնարհ գլուխ տվեց, էքմեքճյանը բազմոցից վեր կենալով մի քանի քայլ արեց, մոտեցավ նրան ու ձեռքը ուսին դնելով հարցրեց.

— Տկա՞ր ես, փնչ է, ըսե նայիմ, աչքիս տխուր կերևաս...

Երբեք էքմեքճյանը այդքան սիրառատ շէր եղել, նույնիսկ Երվանդի հանդեպ, որի ջանասեր ու համեստ վարքը նա շատ անգամ էր օրինակ բերում շաքաթակահնից դժգոհ մյուս գործավորների առաջ:

— Համեստության տիպար, պարկեշտ... Անոր կերածն ալ հալալ է, վաստակն ալ... Տասը Երվանդ ունենայի, գործս ֆոռալով կդառնար:

— Է՛, ըսե նայիմ, ակոսյիդ տակ բան մը կա...

30 — Միտքս փոխել եմ, աշխատիլ չեմ ուզե... Տուն կերթամ...

— Տո՞ւն... Տո՞ւն մնաց, որ երթաս... Պատուհաս էր, յավրում, եկավ ու քանդեց: Ո՞վ կսպասեր, ո՞ւմ մտքեն կանցաներ... Հերիք չեղա՞վ քաշածնիս: Առ, կարդա, փնչ կզրե այսօրվան թերթը,— և էքմեքճյանը սեղանի վրա ընկած թերթը մոտեցնելով Երվանդին, սկսեց կարդալ:

«Ահռելի թշվառութեան նկարագիրը Լենինականի մեծ աղետին... Տասնյակ գյուղեր վայրկյանի մը մեջ գետնի տակ անցան, շին տներին ափ մը հող անգամ չմնաց... Կրսեն թե սև ջրեր են ժայթքեր շատ մը տեղեր և լրացրել են աղետին ավերածութիւնը: Ականատեսները կվկայեն, որ երկրաշարժի գիշերը Սողամ Գամորի առասպելական պատկերը կհիշեցնեն... Մազապուրծ բազմութիւնը սարսափահար կփախչի դեպի Պարսկաստան... Առայժմ օգնութեան և ոչ մի նշույլ...»:

— Կսեցի՞ր, Երվանդ... Սուրեն փախանք, հուրի մեջ ընկանք... Ա՛ս է մեր ճակատագիրը: Կտոր մը հաց կվաստը- 10 կենք, հանգիստ կուտենք: Ալ մեզի ո՛չ տուն մնաց, ո՛չ հայրենիք:

Այս բառերը էքմեքճյանը հառաչելով ասաց և փափուկ բազմոցի մեջ ընկղմելով, շարունակեց իր խոսքը.

— Քանի մը սենթ վաստկած ունիս, ան ալ երթաս, ձեռքեդ կառնեն, քեզի ալ ով գիտե ո՞ր քոշեն այսօր աքսոր դրկեն: Ժամանակը գեշ է, Ե՛րվանդ: Անտեղ կարգ-կանոն ըլլա նե, ի՞նչ կա... Կերթաս աչքովդ ավերակները կտեսնես նորեն կուգաս, սրտի հովութիւնն է: Օր ցերեկով մարդ կկողոպտեն: Սապես երթաս նե, քեզի բուրժույ կրսեն, ծակը կխոթեն: 20

Երվանդը դժվարացավ պատասխան գտնելու: Եվ հազիվ կմկմաց.

— Չեմ ուզե աշխատի: Քուն շունիմ, դադար շունիմ: Աչքես անդին շին երթա...

— Կհասկնամ, Երվանդ... Այդպես շեղավ մեզ հետ... Ի՞նչ ընենք, ճակատագիր է: Դիմանանք պիտի. օր մըն ալ հելթեթ բախտը մեր դռանը կշոքեն... Գնա՛, գնա գործիդ: Թե շարաթականեդ գոհ չես, ըսե՛, ես խնայողը չեմ... 30

— Զէ, էդոր բան չեմ ասե...

Ու քիչ կանգնելուց հետո՝ գլխիկոր դուրս եկավ...

Այդ օրից մի ամիս շանցած Մաքսուտ էքմեքճյանը խրատներ էր տալիս, թե փեշպեւ Երվանդն իրեն պիտի պահի ճանապարհին: Նրա գնալն արդեն որոշված էր: Երվանդը մի

քանի անգամ էլ դիմել էր և վերջ ի վերջո էքմեքճյանը համա-
ձայնվել էր ճամփի համար անհրաժեշտ թղթերն ու վիզան
ձեռք բերելու:

Բայց էքմեքճյանին հաջողվել էր Երվանդին համոզել, որ
եթե յուրայիններից մեկն ազատվել է երկրաշարժից, ապա
նրան պիտի փնտրել Պարսկաստանում, ինչպես տեղեկացել էր
ինքը վիզան ստանալուց:

Նրա անցագիրը տրանզիտ էր, և միայն գնացքի պատու-
հանից իրավունք ուներ տեսնելու հայրենի գյուղը...

10 — Ռուսաստան որ հասնիս, կայարաններում շատ շիշ-
նես... Պառկե քեզի համար, ձեացուր թե համր ես... Զգո՛ւյշ
անդուկիդ: Կրսեն թե կարթերով կքաշեն սունդուկն ալ, ուղևո-
րին ալ... Պարսկաստան հասնիս նե, ներկայացիր Ամերիկ-
յան կոնսուլադ, սա թղթերդ ցուցուր: Դրամի պետք ունենաս
հեռագիր մը քաշե ինձի, ուզածիդ շափ կղրկեմ...

Եվ երբ Երվանդը սեղմեց նրա ձեռքը, էքմեքճյանը բարի
ձանապարհ մաղթելուց, մի անգամ էլ ասաց.

— Ինչ ընեմ, չլսեցիր ընձի: Համոզված եմ, որ ամիս մը,
երկուս՝ նորեն հոս ես, գործիդ վրան: Վաստակիդ մասին ան-
հոգ մնա: Եկած օրվանեդ նորեն գործի ես: Ինձի նայե, եթե
20 անտեղվանքը խառնակչություն բան մը ըլլա՝ ապաստանե
Ամերիկյան կոնսուլի քով, թղթերդ ցուցուր...

Նույն երեկոյան ընկերներին մնաս բարև ասելուց հե-
տո, «Բարսելոնա» շոգենավի ներքնահարկում հարյուրավոր
մարդկանց հետ տեղավորվեց և Երվանդը:

«Բարսելոնան» ճղփոցով պատռում էր օվկիանոսի ալիք-
ները:

* * *

9-րդ վազոնի կոնդուկտորն անշափ զարմացավ, երբ
Բաբու հասնելուց և նոր ուղևորների տեղավորելուց հետո,
30 № 26 ուղևորը, որի տոմսը մինչև սահմանագլուխն էր, հան-
կարժ գլուխը վեր հանեց և մի բոպե ականջ դնելուց հետո
մոտեցավ նոր ուղևորներին, որոնք իրար հետ զրուցելով իրերն
էին տեղավորում ու նրանց ինչ-որ բան հարցրեց:

Կոնդուկտորը զարմացավ, որովհետև կարծում էր, թե

№ 26-րդ ուղևորը կամ համր է և կամ անտեղյակ այն լեզու-
աներին, որով մինչ այդ խոսում էին գնացքում:

№ 26 ուղևորը շատ սակավ էր իջնում կայարաններում
և գնացքի մեկնման զանգը շտված, շտապում էր գրավել իր
տեղը: Օտարական ըինելը նա հասկացավ տշ միայն տոմսի
վրա նշանակված կայարանի անոսնից, որից դեն փնքը երբեք
չէր եղել, այլ խոսակցության այն ձևից, որպիսին ունենում
են համրերը կամ օտարականները: Մի կայարանում հաց առ-
նելուց կոնդուկտորը տեսավ, թե ինչպես № 26-րդ ուղևորն
առանց խոսք ասելու մատով ցույց տվեց մրգին, ապա թղ-
թադրամ տվեց և ստացավ այնքան, որքան վերադարձրեց
կրպակի տերը:

10

№ 26-րդ ուղևորը Լենինականի գավառի Բայանդուր գյու-
ղացի Երվանդ Ադամյանն էր, որը մինչև Բաքու գնացքում
հայերեն խոսք չէր լսել: Ու երբ ներս մտնող ուղևորներից մի
քանիսը սկսեցին իրար հետ հայերեն խոսել, նա պառկած
տեղից իջավ ու հարցրեց նրանց.

— Ո՛ւր կերթաք...

— Սանահին, — ասացին նրանք:

— Մեր կողմը կերթաք, — ավելացրեց Երվանդը: Սա- 20
կայն ուղևորները չհարցրին նրան «մեր կողմի» մասին:

Երբ նրանք տեղավորվեցին, Երվանդը սրտատրոփ հարց-
րեց, թե ինչ են լսել երկրաշարժի մասին:

— Հաստա՞տ է, կըսեն թե հեշ մարդ չկա... Գետինը
ճեղքել, տները մեջն է առել...

— Տատիս հեքիաթներն են, — ասաց ուղևորներից մե-
կը, — վնաս եղել է, բայց գետինը ձմերուկ խո չի, որ ճեղքիս

— Մարդ կա՞ հեշ...

— Ո՛նց թե, քա հո երկինք չե՞ն թռել...

— Մեր գեղը տե՞ղն է, Բայանդուրը...

— Էդ մեկը չեմ կարող ասել, էն կողմերում չեմ եղել, —
պատասխանեց նա ու շուռ եկավ մյուս կողքին...

30

• • •

Երեկոյան գնացքը փնջալով կանգ առավ էրեկտրական
վամպերի լույսով ողողված կառամատույցի առաջ:

Երվանդը տխուր էր...

Լուսարացին գնացքը պիտի հասներ Լենինական ու պիտի կանգներ միայն կես ժամ, հետո նորից շարժվելու դեպի հարավ, մինչև սահմանազուլս, որից այն կողմ անծանոթ երկիր էր նրա համար: Միայն կես ժամ կարող էր գնացքի պատուհանից նայել շատ ծանոթ հարթության, որի մի ծայրին իրենց գյուղն էր:

Մն՞ում է, կտեսնի՞ր արդյոք...

10 Եթե ծանոթ մեկը հանդիպեր ու նրան պատմեր, թե ինչպես եղավ աղետը, ո՞ւր են, ո՞վ մնաց... Պատմեին մոր մասին, դրկիցների, սանամեր Շուշանի, դիրգար Հակոբի աղջկա մասին... Փոքր էր, հիմա շատ մեծացել է, երևի վաղուց մարդու են տվել...

Բայց մն՞ում են...

Թա՛ք-թրաք, թա՛ք-թրաք, միայլար ու համաշափ զարկերով դղրդում էին անխվնեբր... Գնացքը խոր ձորի միջով էր անցնում և երբ շշում էր, արձագանք էր տալիս ձորը...

20 Օրորվում էր Երվանդը, մտքերը տարուբեր էին լինում, հանդարտվում, մեկ էլ հանկարծ փոթորկվում... Խ՞նչ կանեն, եթե բռնեն, եթե պարզվի, որ տրանզիտ անցազիր ունի, օտարահպատակ է և պիտի դար, անցնեն գնացքի հետ:

Մի ձեռք նրան մղում էր, ակնակուռ մատանիով սպիտակ ու փափուկ ձեռք: Սրտի վրա էր այդ ձեռքը՝ ծոցումն էին թղթերը:

Լուսարաց կլինի, կմոտենա կնայի ու ձեռքը նրան նորից կմղի առաջ:

— Տոմսերը պատրաստե՛ք:

Երվանդը ցնցվեց: Ներս մտան օրվու հոգի: Տոմսերն էին ստուգում:

30 — Մո՛, Մուկո՛ւչ, ա՛յ օղու, ի՞նչ ես կուչ էկե: Ծ՛լ, պառկե, — դարձավ նրանցից մեկն անկյունում ննջող մի ուղևորի: Զրագի լույսը մոտեցրին, տոմսն էին նայում...

Երվանդի ախրտն արագ էր բարախում, թպրտում էր, որպես մորթված թռչուն: Ո՞րտեղ էր տեսել նա այդ դեմքը...

Եվ երբ մարդը ճրագը իջեցրեց, Երվանդը կամացուկ ասաց.

— Օճնի՛կ...

Մարդը հետ նայեց:

Համագյուղացի Քիրամիդչոնց Օննիկն էր:

Այս անգամ տոմսերի ստուգումն Օննիկի ընկերը մենակ կատարեց:

— Մերդ քիչմ վախեցավ, եղև հե՛շ, անցավ... Շարաթ օրը գեղն էի... Կշինեն, փետ, քար էնքա՛ն են թափել... Անդերը մեկեն եղավ... էսպես զրուց կենեհնք, մեկեն մալականի ֆուրգոնի պես գոռաց: Իմանաս թե պիլումենտը կրակեց, թոփ տրաքեց... Քարերը կշխրտային, գետինքը կխաղար... Ցարալու էլ եղավ... Սուսանենց Սերոբը միտքդ է՞... էսման 10 քար ընկավ գլխուն, տեղոց տեղ մնաց... Մեր մի եզր գոմշ մնաց... էլի հաստատ մնա կառավարությունը, օգնություն շուտ հասցուց: Թե չէ ժողովուրդը ցրտից կշարդվեր...

Երվանդին թվում էր, թե իրական չէ ոչ այն, որ ինքը տրանզիտ է գնում, ոչ այն, որ քարերը շխրտում էին, Սուսանենց Սերոբը... Մոռացել էր, նրան երբեք չէր հիշել... Ուրեմն մայրն էլ կա...

Երազ է, բայց պատմում է Օննիկը, իրենց հարևանը:

— Է՛, դու ի՛նչդ ես... Կեցի մորդ աչքալուս տանեմ... Հեշ ո՞ւմ մտքեն կանցնեք, թե կուգաս... Ինչդ ես, լա՛վ ես... 20 Քիչըմ պառվցած կերևաս աչքիս, հիվանդ խո շես...

— Դիրգար Հակոբի աղջիկը... գե՞ղն է...

— Հա՛, իրեք մանչ ունի... Մշեցու առավ, հիմա մեր գեղը կապրի...

Քիչ հետո Քիրամիդչոնց Օննիկի ակամջին Երվանդը շրջնալուով պատմում էր հեռավոր երկրի մասին, ուր պիտի գնար, պարտավոր էր գնալու...

Պատմում էր ու դողում...

Կուսաբացը հեռու չէր...

Գործկոմի նախագահը մինչև այժմ էլ չի մոռացել այն 30 օրվա դեպքը: Եվ եթե խոսք է բացվում երկրաշարժի մասին, և ամենքը հետ են տալիս իրենց հիշողության կծիկը, նախագահը զարմանալի այդ դեպքի նկարագիրը անելուց, ամեն անգամ հիշում է մազակալած երեսում, գլխի մազերը ցրիվ մի մարդու, որ նախասենյակում աղմկելուց հետո, երբ ինքը

ներախց ձայն տվա՛վ դռան մոտ կանգնած պահակին, թե ի՞նչ կա, ո՞վ է աղմկում, — հանկարծ ներս վազեց ու մի քանի քայլ անելուց հետո շոքեց, գլխարկը դեն շարտեց ու ձեռքերը երկարեց:

— Առ, ընկեր, առ... Ես Պարսկաստան չեմ երթա... Ինձի կախե, էստեղից մի՛ ղրկե...

- Մի թուղթ շարտեց դեպի ինձ: Մնացի զարմացած, ես ասի խելագար է: Աչքերը գծի աչքեր էին, դեղնել էին՝ դուրս ընկել: Ես թղթին էի նայում, իսկ նա պատմում էր...
- 10 Ասում է, ես Ամերիկայից եմ գալիս, բայանդուրցի եմ, ինձ Պարսկաստան են ուղարկում: Խաբել են: Հետո գլխի ընկա... Հիմա միլիտերին կանչել եմ, որ վերադարձը ձևակերպվի, կպե՞լ է փեշիցս, թե ես քու ձեռքը պիտի համբուրեմ: Վերջը մի կերպ դուրս տարան...

* * *

Ամեն առավոտ գործարան գնալուց Երվանդը ըստմ է գրնացքի սուլոցը: Նստում է դազգահի առաջ ու կտավ գործում... Երբ գնացքը փնչոցով գալիս է ու անցնում, միտն է գալիս այն օրը... Ժպտում է ու ավելի պինդ խփում մաքրքին...

- 20 Մաքսուտ էքմեքճյանն այրևս օրինակ չի բերում պարկեշտ ու խոնարհ Երվանդին: Եվ նա գիտե՛, որ իր գործավորներին մեջ ձեռքե-ձեռք են անցնում ինչ-որ նամակներ, որ ուղարկում է Երվանդը:

Գիտե ու չի հաջողում մի նամակ էլ բռնելու...

ՉՄՌԱՆ ՄԻ ԳԻՇԵՐ

Հունվար ամիսն էր: Չորս օր գիշեր-ցերեկ ձյուն էր եկել, ժածկել սար ու ձոր: Պատերի տակ քամին ձյունը կիտել, դիզել էր մինչև կտուր: Փողոցներում ձյունի վրայով քարակ արահետներ կային, տնից տուն ձգվող, որից ամենից տրորվածը գեպի գյուղամիջի աղբյուրն էր տանում: Եզ ու կով ձմռան այդ սաստիկ սառնամանիքին տաք գոմերից դուրս էին անում, ջրելու տանում: Յրտից անասուններն էլ չէին ջուր խմում. կռանում էին նավի վրա և իսկույն հեռանում: Մինչև գոմերը հասնելը, քթածակերի տակ գոլորշին սառչում, մազերից 10 կախվում էր, որպես ասեղներ:

Օջախները միշտ վառ էին: Եվ ցուրտ օդին երգիկներից բարձրացող ծուխն ավելի կապույտ էր երևում, թանձր քողի պես քարակ նստում էր կտուրի վրա, մինչև քարակ քամին փչեր, ծվեն-ծվեն աներ: Միայն երգիկի մոտ էր, որ ծուխից ձյունը հալում էր, խառնվում սևացած քարերի վրա նստած մուրի հետ և մազութի պես կաթկթում օջախի քարերի և ամանների վրա:

Ցերեկով երբեմն, երբ արև էր անում, շտապ ներս ու դուրս էին անում, տավարը տեղավորում, փայտ ու աթար բերում, 20 դողդողալով, ձեռքերն իրար քսելով, գնում ջրի, որովհետև արևը մայր մտնելուց՝ երկինքը ծածկվում էր գորշ ամպերով, ամպերը կախվում էին, սկսվում էր մի քարակ քամի, որ ածելու պես կտրում էր, ծակծկում: Թքեիր, թուգ գետին շառած, կսառչեր: Իսկ մուժն ընկնելուց՝ քամին մինչև լույս վզգում էր, բորանը պտույտ էր անում, կտուրից կտուր թռչում, երգիկներից ձյուն մաղում և միջիտնավոր բյուրեղներ

չարտում դռներին, պինդ փակած լուսամուտներին: Ջրնգում էին պատուհանները, և այդ զրնգոցը, քամու զիլ ոռնոցի հետ, սարսափ ու ահ էր տարածում օջախի, բուխարիկի կամ քուրսու մոտ նստոտած մեծ ու փոքրի վրա:

Ես երբեք չեմ մոռանա ձմռան այդ գիշերը: Կուշ էինք եկիլ քուրսու մոտ, ոտներս կոխել հաստ յորդանի տակ, իրար մոտեցել ու լսում էինք պապիս, որ բարձերին թիկն տված, շոբերն առանց հանելու մտել էր տեղաշորի մեջ, պատմում էր մեզ իր գլխով անցած օրերից:

10 Ես էի և քեռու տղաները, հասակակից երեխաներ: Քեռիս մեզանից մի քիչ հեռու նստած, ապակու կտորտանքով քերում էր եզան կաշի, ականջը պապիս պատմածին:

— Հա... էն ճաք բարը որ անց կացա, ձին մեկ էլ կանգնեց, ականջները խլշեց: Մի մթնկա էլ գիշեր էր, երկինքը՝ սև, ոչ աստղ կար, ոչ լուսին: Ձին կանգնեց. Ղազար մի՞տղ ա. մի կապույտ ձի ունեխնք, յոթերին էլ սխալակ խալեր ունեք,— դառնում է քեռոս, կոտաքը կիսատ թողնելով:

— Օրուշին ծախած ձին չես ասո՞ւմ,— պատասխանում է քեռիս: Հայր ու որդի մտաբերում են կապույտ ձին: Մենք էլ խառնվում ենք նրանց խոսակցության:

20 — Հետո՞, պապի... Ձին, որ կանգնեց...

— Հա... ձին որ կանգնեց, ասի էստեղ մի քան կա... Գլուխս շուռ տվի, տեսնեմ մթնում երկու պող պեծին են անում: Իմ ուսին էլ շախմախլու մի հրացան էր, կտաներ միանգամից մի բուռ բարութ... Անիրավիդ ձենն էլ էնքան պինդ էր, թոփի ձենը ձեզ օրինակ: Նազու աղջիկ, աչքիս շի ընկել, էն յարաղը ո՞րտեղ ես դրել:

Նազու աղջիկը տատս էր:

— Հրեն հացատանը, պարկերի քամակին...

30 Քեռու կինը, որ մալանջների դեզը կողքին կիտել էր, գլխով ու ձեռքով սկեսուրին հասկացրեց, որ հրացանը ուրիշ տեղ է, հացատանը չի: Եվ երբ պապս նրան հարցրեց, թե ո՞րտեղ է, ո՞վ է տարել, քեռոս կինը մոտեցավ, ականջիս փսփոսաց.

— Ասի ժանգոտել էր, Շալունց Ավանին եմ տվել՝ սրբի... Անխոս էր սկեսուրից, թեկուզ 15 տարվա հարս էր:

— Հետո՞ պապի... Գա՞լլ էր...

— Արջ էր, արջ, քեզ կուտեր, — ժպտալով պատասխանեց քեռիս, ձգվեց տեղում, մեջքն աջ ու ձախ ուղորեց, ջղերը տրաք-տրաքոտեցին, ու նորից կոացավ կաշվի վրա:

Պապս բերանը դեռ բաց չէր արել, երբ բորանը մի պտույտ էլ արեց, ու երդիկով քամին ներս թռավ, ձյուն մաղեց: Քիչ մնաց ճրագը հանգչեց:

— Տես ինչ է անում է՛... Մեր էն դեզը փուլ շտա, հը՞, Ղազար...

— Չէ, վրան սալ քարեր եմ դրել:

Եվ տեսնելով, որ մեր աչքերը փր կողմն է, վերհիշեց կիսատ թողածն ու շարունակեց.

— Ես ու ես միտք եմ անում... վեր գամ, գալլ կլինի, վրա կտա փորձանք վպատահի: Ձին էլ տեղիցը չի շարժվում, ականջները խլշել է, գլուխը ծռել... Ի՞նչ ասեմ, վախը կալավ ինձ, չիմացա ոնց շախմախուն վզիցս հանեցի: Էն անտերն էլ տեղն եղած ժամանակ չէր տրաքում, չգիտեմ էդ գիշեր ոնց եղավ... Աչքս քցեցի էն պեծերին... էն եմ հիշում, որ մի սև բան շարժվում էր, պեծերն էլ մթնում վառվում էին... Հենց շախմախը քաշեցի թե չէ, մի որոտաց, մի որոտաց, կասես երկինքը տրաքվեց... Ձին թռավ... Դե հիմա չեմ կարողանում պահել, հրացանն էլ ձեռքիս էր...

Պապս սրտի ցավ ուներ, շնչելիս խզզացնում էր, մեկ-մեկ էլ հազը բռնում էր, հազում էր, հազում, կապտում, գրլուխը մորթած հավի շնքի պես ծռում քարձի վրա: Եվ պիտի սպասեինք, մինչև հանգստանար, մի խոր շոճնչ քաշեր:

Եվ երբ խոսքի կեսին հազն սկսեց, մենք ավելի կուշ եկանք: Իսկ քամին հա ձյուն էր շպրտում տան պատերին, քամուց դռան դրսի կողմի երկաթե լեզվակն օրորվում էր, դարկում շաղացի շախչախի պես:

— Հասա մինչև Սանդ աղբյուր, նոր էդտեղ ձին մի քիչ հանդարտեց:

— Պա՛հ ինչքան տեղ ա թռել է՛... .

— Հա... անիրավը շատ սրտոտ էր, դուշի նման էր թռչում: Վերջը եկա տուն, մի էսպես, էսպես բան... Մինը՝ թե արջ կլինի, մեկելը՝ աղվես: Լուսացավ, տեսնեմ մեր Առա-

10

20

30

քելը՝ ձին նստած, դարպասի մոտ կանգնած:— Առաքել, էս ո՞ր էսպես կանուխ. թե՛ բա շես ապի մեր երինջը էսա երկու օր կորած ա, ջանդաքը գիշերս գտել են ճաք քարի մոտ, գլուխը ցրիվ եկած: Ավանն ասում է, թե առաջ գյուլով են տըվել, հետո ջանդաքը գելերը ցրիվ են տվել... Թե չէ գելը հեյվանի գլուխը շի ուտիլ: էդտեղ ես լեզուս կծեցի...

Ու սկսեց բարակ, նվաղուն ձայնով ծիծաղել: Չէր իմացվում ծիծաղից էր, թե հին ցավից, կրծքի տակ մի բան խզզում էր: Քեռիս ծիծաղից թուլացել էր.

10 — Դու հո գիշերը քոռ բու ես... Գել լինե՞ր հո կրակիլ շէիր... կորած երինջ պիտի լինի, որ սպանես:

Թեկուզ դեպքը շատ առաջ էր կատարվել, բայց տատս չէր կարողանում ներել նրա սխալը: Ծա ուրիշ անգամ էլ եմ լսել այդ պատմութիւնը: Տատս այս անգամ էլ նույն ձևով էր իր զայրույթը հայտնել, երբեք չհաշտվելով այն մտքի հետ, թե վախից կարելի է շփոթվել:

Մի քիչ հետո, պապս քամու վզզոցին սկանջ դրած՝ դարձավ քեռուս.

— Ղազար, ապրանքի տեղը հո ցուրտ չի...

20 — Ծակ ու ծուկ պինդ կալել եմ, դռան գլուխն էլ ծեփել եմ միջի կողմից:

— Էն մադյանը միշտ ջուլած պահեք... Հեյվանը ծանրած ա, կմրսի...

Փոքրիկ Սամսոնը, որ պատմութիւն կեսին քնել էր, հանկարծ զարթնեց, աչքերը լայն բաց արավ ու ասաց՝

— Պապի, բա գելը քեզ չկերա՞վ...

Քուրթս ծիծաղեցինք:

— Գել չէր, բալա, Առաքել ապոր երինջն էր.— ու քիչ հետո դարձավ քեռուս,— Ղազար, Առաքելը երկու ջուխտ եզն էլ տարե՞լ է...

30 — Մի ջուխտով էնքան տեղը գերան կբերվի՞ էս եղանակին:

— Նրան էլ ինչ ասեմ... էտ մարդը դադար չունի էլի: Հենց էս բորանին պիտի գնա՞ր:

Թոնթորաց տատս, մոտեցավ Սամսոնին, որ մեր ծիծաղից խռովել, կուչ էր եկել ու նորից քնով անցել, մոտեցավ ու վերմակի ծայրով ծածկեց:

— Խելք շունի՞, շի տեսնում: Նրանք էս եղանակին ճանապարհ կգա՞ն: Սոնակ նա շի... Սարվանենց տղերքն էլ են գնացել, Մուզումին Անդրիասը,— ասաց քեռիս, կլլած կաշու մազերը փեշերից թափ տալով:

— Նրանք հիմա կրակ են արել, գերանները քցել ու նստոտել կրակի կողքին: Անտառի մեջ էլ հո բորան շի... է՛, էնքան եմ մնացել անտառում... Նստոտում էինք, կրակը երկինք էր հասնում, մեջքներս կրակին դեմ էինք անում: Ու մին էլ մի պախրա, ծառի ճղները պղզիւն տալով: Ժառերի արանքից դուրս էր գալիս, զարմացած նայում կրակին, էլի ճղները կտորատելով փախչում, կորչում... Լուսնյակ որ լիներ, տեսնում էինք գալլերին: Գալիս էին՝ վստեղ նստում, էնտեղ նստում, ձյունը քանդում, կորչում, էլի գալիս... Բայց վախնում էին մոտ գալ: Մենք էլ մինչև լույս կրակը վառ էինք պահում: Մի գիշեր էլ ողորմած հոգի մեր Սիմոնն էր, ես էի, մեր Առաքելն էր...

10

— է, դե երեխեքը ննջում են, թող քնեն,— դարձավ տատս նրան, իսկ մենք աչքներս լախն քաց արինք՝ ցույց տալու, որ քնել չենք ուզում:

— Նանի, նանի, էդ էլ լսենք, հետո քնենք...

20

— Վեր կացեք, մտեք տեղաշորի մեջ, էլի լսեք...

Տեղաշորը ցուրտ էր, և մենք շատը դրա համար էինք չեմ ու շում անում, պոռչ կախում: Բայց տատս իր ասածի կին էր, պրծնում չկար:

— Հա... ես ասեմ, դուք էլ շորներդ հանեք... Էդպես էլի գնացել էինք գերանի... չէ, մեղա աստծու, ածուխ էինք վառում: Ծս ու Առաքելը նստել էինք կրակի մոտ, ողորմած հոգի Սիմոնն էլ փախանները շարել էր, արջի բուն շինել, մտել տակը...

— Պապի, սուս... կասես դուր շանգում են,— ասացի ես: Մի վալրկյան լոցիցինք, նայեցինք դռան կողմը: Չայն չկար...

30

— Քամին էր, ձյունով տվավ,— ասաց պապս ու շարունակեց: Հաստ վերմակի տակ ես ու քեռուս երեխաները կծկրվել, գունդ էինք դառել, մեջք-մեջքի տված: Ուզում էինք և լսել, և մեր շունչը վերմակի տակ անել, տաքանալու համար:

— Նազու աղջիկ, մի կարպետ էլ քցի, երեխեքը կմրսեն: Տասու ծալքից մի կարպետ հանեց ու տնքալուվ մեկնեց մեզ վրա: Կարպետի ծանրութունը հաճելի էր մեզ համար:

— Զիերն էլ կապոտել ենք իրար, դարման են ուտու:!

— Պապի, դուռը էլի շանգոում են...

— Ղազար, մի տես ի՞նչ կա...

Քեռիս վեր կացավ, մոտեցավ ու ետ քաշեց դռան հաստ կապը: Դուռը բացվեց, ու մեկ էլ տեսնենք ձյունի մեջ թաթախված մի բան ներս ընկավ, գլորվեց ու շորեքթաթ եկավ առաջ: Քեռիս զարմանքից, թե վախից բաց դռան մոտ մի քիչ կանգնեց, քամին բաց դռնով այնպիսի թափով ներս թռավ, որ ձյունի փաթիլների սառնութունը մենք ևս զգացինք:

— Նազու աղջիկ, Ղազար, բա չեք տեսնո՞ւմ...

Քեռիս գուռը դրեց ու մոտ վազեց:

Ներս մտնողը Առաքել ապոր Ավանն էր, որ հոր հետ գնացել էր անտառից գերաններ բերելու: Ես հետո մտաբերեցի, որ տասու Ղփոթմունքից ձեռքի քարձը դրեց խմորով լի տաշտի վրա:

— Ավան, բա Առաքե՞լը...

20 — Վայ, ապերս մեռա՞վ...

Լեզուն կապ էր ընկել, փոսելիս սառած շրթունքները հագիվ էին շարժում:

— Ղազար, շուտ հավար քցի... թո՛ւ, Դանիելին ձեն տուր... Հարեդին... ձիանքը նստեք...

— Որտե՞ղ են... բա եղինքը...

— Լուս խաշերում... եղինքն էլ: Վա՛յ ապեր...

Վայ էր կանչում և տնքում: Շորերը, փափախը, տրեխները ձյունով ծածկված, բեղերից, փափախի մազերից սառցի կտորներ էին կախվել: Տնքում էր, գլուխն օրորում:

30 — Ա հարս, ինչի՞ ես սառել... Շուտ ջուր դիր... հանի չուխան, հանի տրեխները... Մտի՛ քուրսու տակ:

Քեռիս մահակի ծայրին փաղապը փաթաթեց, գունդ արեց դրումի ջափ, կոխեց սև նավթի կարասի մեջ, ծլծլալով հանեց ու վառեց շահը:

— Ղազար, յափնջի առ...

Տասու հազիվ հասավ նրան ու դռան մոտ յափնջին գցեց
ուսերին:

Մենք վախից կուշ էինք եկել, նայում էինք մերթ Ավա-
նին, որ տնքալով պատմում էր, մերթ տատիս, որ օջախն էր
տաքացնում՝ շուր դնելու:

Պապիս հազն էլի բռնեց:

— Սարվանենք՝ մի կողմից, Մուզումին Անդրիասը՝ մեկ էլ
կողմից՝ թե մի՞ գնացեք, բորան է, եզինքը կկտորվեն, ճա-
նապարհը չեք ճարի... Ապերս թե՛ չէ ու չէ, պիտի գնամ, բո-
րանն ինձ ի՞նչ պիտի անի...

10

— Հակառակ հակառակի տղա, — նախատինքով ասաց
պապս, երբ հազը կտրեց, — բեզյառ չեն քշում քեզ, սպա-
սեիր էլի...

— Եկանք... Մինչև կեսօր լավ էր, արև էլ կար... Սարը
որ անցանք, ապերս թե՛ էս երեսը ցուրտ կլինի, բեր մի քիչ
արաղ խմենք... Մին, երկու քցեց, թե քշի... Սլլալով եկանք...
Գետի մոտ արևը մեր մտավ...

Կտուրի վրայով լինչ-որ մարդիկ էին անցնում, լսում էինք
ոտների տրփոց: Քեռիս գոռում էր ձիու վրա, որը դժկամու-
թյամբ էր տաք գոմից դուրս դալիս:

20

— Նազու աղջիկ, Ղազարին ասա շաղ եկած չգնան, իրար
չկորցնեն...

Իսկ Ավանը, որ մտել էր քուրսու տակ ու միայն գլուխն
էր երևում, մերթընդմերթ տնքում էր, ասում.

— Վա՛յ, ապերս, վա՛յ... էս ի՞նչ փորձանք էր...

— Լուս խաչերում շկարեցի՞ք մտնել էն քարի տակ...

— Քարի տակը ո՞րն ա, քարի տա՞կ էր մնացել, ձյունը
ծածկել, կորել էր... Խաչերի քարերն էլ չէին երևում...

Քանի տաքանում, այնքան էլ լեզուն բացվում էր, ուշքի էր
գալիս, ավելի մանրամասն պատմում, բայց և ավելի հաճախ
ախուժախ անում:

30

— Գետին որ հասանք, Ալա եզանը ոտը սլխկաց, սառնը
կտրեց, քիչ մնաց եզն ընկներ... Ապերը թուավ լուծի վրա,
թռնելիս փափախն ընկավ... Վազ տվի, ընկա շուրը, փափա-
խը ձեռքս ընկավ, տվի իրեն... Հասանք Լուս խաչերը... էլ
ճար չկար, ոչ ճանապարհ էր երևում, ոչ քար, ոչ սար... Ապերս

131

թե՛ Ավան, ես եզնբրի մոտ մնամ, դու թո՛ւ, հավարը քցի, թե չէ ձյունը մեզ կխեղդի... Մինչև հասա, էլ ինչ ասեմ, տարի քաշեց:

Ու ցածր ձայնով ավելացրեց.

— Ինքն էլ մի քիչ քեփով էր... Յուրտը որ նեղում էր, կանգնում էր, բուժուլի բերանը բաց անո՞ւմ... Նանի, գնացի՞ն...

— Շուտ են գնացել, հիմի կհասնեն...

10 — Եղնբրն էլ էին մոլորվել, փնչացնում էին, թաղվում ձյունի մեջ... Երկու գերան թողինք գետի են կողմը... Հիմա ով գիտի ձյունը ծածկել է... Ապեր, գելերը փորձանք շեն բերի՞:

— էս եղանակին գել կլինի՞,— պատասխանեց պապս: Լոեցին: Օջախում կրակը ճատճատում էր, և երբ բուխարիկով վայր էր ընկնում ձյունի մի գունդ, կրակը թշշում էր, կարծես դժգոհում էր ձյունի սառնությունից: Քամին դադարեց էր, էլ առաջվա թափով շէր խփում դռանն ու լոսամուտին:

120 Քիչ հետո գնացողները եկան: Բակում լսվեց ոտների ձայն, ձիան վրնչոց: Տատիս դուռը բանալն ու քոռուս ներս մտնելը մեկ եղավ: Բաց դռնից տեսանք բակում վառվող շահերը: Քոռուս ետևից ներս մտան՝ երկու հոգի, որոնք բերում էին Առաքել ապոր ձյունով ծածկած մարմինը:

— Ղա՛ղար...

Պապիս կանչելու շեշտից քեռիս հասկացավ և, յափնջու ձյունը շեմքի մոտ թափ տալով, պատասխանեց՝

— Միրտը տեղն ա, շունչ ունի... Մի երկու անգամ էլ տընքաց...

Ավանը ուզեց դուրս գալ քուրսու տակից, պապս վրան նեղացավ, ու նա նորից ներս շուշալվեց, այս անգամ հեկեկալով:

30 Ներս մտան և մյուսները, որոնց թվում և շաղացպան Անդրին, որի սպիտակ միրուքի վրա ձյուն էր նստել ու միրուքը հաստացել, մեծացել էր: Զարմանալու էր, որ այդ բորանին շաղացպանը միացել էր նրանց:

— Նագու աղջիկ, բա ջուրդ շտաքացա՞վ,— դարձավ նա տատիս, որն առանց այն էլ աշխատում էր արագ շարժվել:

Քեռուս կիներ տաք ջրով լի կաթսան օջախից վերցրեց, դրեց գետնին:

— Սա ջրի բան չի... Գոմում թե փեյլին կա,— դարձավ ջաղացպանը քեռուս,— կիտուկը ճղենք, Առաքելին դնենք մեջը, թե չէ ջրով ետ չի գալ:

Ջաղացպանը բարի ու միամիտ մի ծերունի էր, իր կյանքում շատ բաներ էր տեսել ու լսել, շատ անգամ էր իր խորհուրդով օգնութեան եկել սրան նրան:

Առաքել ապոր շուխան ու փափախը հանեցին, քեռիս ու Դանիելը թեք մտան ու կես քարշ տալով, տարան նրան: Այնքան պարզ հիշում եմ նրա քայլվածքը: Առաքել ապերը ավելի ղանդաղ էր քայլերը փոխում, քան թե տանողները: Ասես փայտից էին նրա ոտները, և գետին դնելուց էլ՝ փայտի ձայն էին հանում:

Քիչ հետո ներս եկան: Քեռիս ու Դանիելը բահով ճեղքել էին գոմի մեջ կիտած թարմ աղբի կիտուկը: Առաքել ապոր շորերը հանել և ջաղացպանի ցույց տված ձևով նրան նստեցրել տաք աղբի մեջ, մինչև բերանը ծածկել:

— Մի բող էր դուրս գալիս որ, ասես թոնիր լիներ...

— Էդ բողը նրան կփրկի.— ասաց ջաղացպանը և տեղավորվեց օջախի մոտ:

— Էսպես էլ փորձանք.— ասաց պապս, երբ եկողները նստոտեցին:— Սատանի բան ա էլի... Ասա քեզ ո՞վ էր ասում էս եղանակին ճանապարհ ընկի...

— Փորձանքը մարդուց մշտական անպակաս կլինի...— ասաց ջաղացպանը, ձեռքով օջախից վերցրեց կրակի կտորը, դրեց բարակ ու երկար կոթով շիբուխի ծայրին և մի քանի անգամ փստացնելուց հետո շարունակեց.— Էն տարին էլ Սարվանենց ալեոքն էր մնացել ձյունի տակ... Եկա տեսա փետացած, գերանի պես մեկնված: Տարանք էլի փեյլինը ճեղքեցինք, դրինք մեջը: Մի քիչ հետո ետ եկավ...

— Էն հենց էդ ցավից էլ մեռավ... Ապրեց, բայց ներսի կողմը փչացած էր. ասում էին ջիգյարը սեացած էր...

— Եզնեը բերի՞ք, Ղա՛զար,— քուրսու տակից ձայն տվեց Ավանը:

— Հա, գոմումն են... Ապեր, գնացինք տեսանք լուս

խաչերի էս կողմին, էն մեծ քարի մօտ, եզներն իրար կողքի, Առաքել ապերն էլ գլուխը կոխել է եզների փորի տակ... Որ մոտեցանք, եզները իրար անցան:

— Հայվանն անլեզու ա, համա մարդու պես հասկանում ա,— ասաց ջաղացպանը:

— Ես ասի՛ Առաքել ապերը ջան շունի,— ասաց ճախարակից քիչ հեռու նստած Գանիելը.— Որ կռների տակից մի երկու անգամ հոսպ տվի, տեսնեմ տնքաց...

10 — Էնքան ձյունն էլ կիտել էր, որ անասել: Մեր մադյանը ոնց էր փնջացնում:

— Ղազար, մի բան չլինի հեյվանին, չքուռակատի,— ասաց պապս:

— Չէ, էն հաստ շուկն էի քցել, համ էլ ետևիցս էի քաշում...

— Անդրի...— ու պապիս հազը նորից բռնեց, հազաց, ձեռքը սրտին տարավ, կապտեց, ասես հիմա հազի հետ տակն ու վրա պիտի լինեն թոքերն ու սիրտը... հետո թուլացավ:

20 — Այ տղա, էս հազն էլ ձեռք չի քաշում էս հալեորից,— ասաց Գանիելը: Բուրդի աչքն էլ նրա՝ բարձին հենած գլխին

էր: Ու մի քիչ հետո, խոր շունչ առնելով, պապս շարունակեց՝

— Անդրի, մի տեսեք փ՛նջ եղավ...

Ջաղացպանն ու քեռիս դուրս եկան: Գանիելը պատմում էր, թե ինչքան հաստ էին գերանները, որ քաշ էին տվել, անցկացրել գետի այս կողմը:

— Բորանն էլ չլինեք, մի՛ հաշիվ է, էլի եզները էս ձյունին էն գերանները տեղ չէին հասցնի... Ամեն միևը էս պարկի հաստոցի շափ:

Գանիելը պատմում էր, քայց պապս անհանգիստ էր, աչքը՝ դռանը: Տատս տեղավորվել էր մեր գլխավերևում, բարձի վրա, ձեռքերը խաչել կրծքին: Գանիելը ուզեց պատմի, թե ինչքան էր Առաքել ապոր վրա նստած ձյունը, երբ դուռը ճռուց ու ներս մտավ քեռիս, հետո՝ ջաղացպանը:

30 — Հը, Ղազար... քեռիս շպտասխանեց: Ու երբ տատս բռունցքները կրծքին խփեց, հասկացանք, որ Առաքել ապերը մեռել էր...

ՄԱՅՐԸ

Երբ գարնանամուտին Ունանը տնքտնքալով մաշված, ցեցը կերած փայտե սանդուղքը տեղափոխում էր սրահից բակ և պատին դեմ աճում, որ վեր բարձրանա ու իրենց տանը վարժված արագիլի բունը սարքի,— հարևաններն իրար ասում էին.

— Գարունն եկա՛վ... էլի Ունանը լազլագի բունը շքեց: Հրեն հա՛, օճորքի գերանները դմբումբում են, կտուրին որ խաղան:

— Մինն էլ նրանց տունը շքե՛ր...

10

— Հրեն Ռուշանը կմեծանա՛, կսարքի:

— Է՛, նրանց ցեղը ես գիտեմ,— ասում էր Ունանի զբուցընկեր և դրկից Մեծլումը, որի աչքերը ծերութունից շոբացել, ճաքճքել էին, ձմեռը ճյուղին մնացած ծիրանի նման: Գլուխը թափահարելով, Մեծլումը կրկնում էր իր վաղեմի խոսքը.

— Բարի Օհանի վողմն են քաշել Ունանի երեխեքը: Առուշանը հլա թև շոնի, Զանու փեշի տակին է սթարվում: Որ մեծացա՛վ, թևին է տալու, թոնի տվ գիտե ո՛ր աշխարհ...

Բարի Օհանը Զանու հայրն է եղել, անհանգիստ, ինքն իր ասածի և հակառակ մարդ: Եզան նման աշխատել գիտեր, նրա շալակը ոչ ոք չէր կարող տեղից շարժել: Զեռքը եթե ձիու մեջքին էր դնում, ուժով ձին էլ կռանում էր, փորը գետնով տալիս: Երբեմն անհայտանում էր, մի քանի օրից հետո նորից երևում: Ոչ բան էր բերում, որ ասեին, թե գողության կամ որսի է գնացել, և ոչ էլ նրան շրջակայքում տեսնող էր լինում: Տուն էր գալիս նիհարած, աչքերը փոս ընկած: Վա՛յ

20

թե մեկը նրան հարցնե՞ր գնացած տեղը: Աչքերն այնպիսի դա-
ժանությամբ էր ուրորում, որ հարցնողը լեղապատառ հետ էր
քաշվում: Ու միայն քնի մեջ անկապ խոսում էր, մոմոում,
այս ու այն կողմը դառնում, ձեռքերը շարժում, ասես կոխ էր
բռնել իր նման մի ասդահայի հետ: Մի օր էլ Բարի Օհանը
գնում է ու չի վերադառնում: Շատ են փնտրում, հայտնում
օրենքին, գյուղերն ու անտառը մարդ ուղարկում, բայց իզուր:
Ու հետքից մնում են միայն առասպելի նման պատմություն-
ներ նրա կյանքի և տոեղծված մահվան մասին:

- 10 Եթե հարևաններից մեկը խոսք ընկնելուց Ջանուն հայտ-
նում էր Մեծլումի ասածը, պառավի սիրտը կոտրվում էր,
շաղվում էր միտքը և մոլորված վերադառնում էր տուն, կան-
չում որդուն՝ Ռուշանին, նստեցնում գոգը, և մատները նրա
մազերի մեջ կոխելով, շոյում, հարցնում, թե սոված չի՞...
Հարցնում էր, աչքերը հառում մաքուր ավյած գետնին, որի
պատկերն այնքան ծանոթ էր, որ կնկատեր, եթե մի շյուղ էլ
ընկած լիներ:

Ռուշանը մոր մոտը շատ չէր մնում, ծլկվում էր կամ
փողոց, կամ այգի: Պառավը նայում էր նրա հետևից և ապա
ինքն իրեն թոնթորալով, որ նստել է պարապ, վեր էր կենում
անխուսափելի դարձած աշխատանքն անելու:

Մի փոքրիկ տուն ունեին և տան մոտ՝ պարտեզ, որի մի
մասը բանջարանոց էր: Տարին բոլոր Ունանը պարտեզից
դուրս ուրիշ տեղ աշխատանքի չէր գնում: Թեկուզ պարտեզը
փոքր էր, ծառերը ծեր, մամոտած փշակներով, բայց Ունանի
համար աշխատանքն անպակաս էր: Քանդված ցանկապատն
էր նորոգում, շորացած ճյուղքը կտրում, ծառի տակը փորում
և մատներով փափկացնում հողը, ավելորդ խոտերը պոկո-
տում,— մի խոսքով պարտեզն ու բանջարանոցը նույնքան
30 մաքուր ու խնամքով պահում, ինչքան կինը՝ Ջանին, դուռն
ու բակը:

Եվ ամեն տարի ծառերի ճյուղերը ծանրանում էին խնձո-
րից ու տանձից, Ունանը փայտյա հենարանները մեկ այս
ճյուղին էր դեմ տալիս, մեկ՝ այն: Ազոավ ու կաշաղակ, ծիտ
ու ծիծեռնակ խմբերով ուրիշ պարտեզներից հավաքվում էին,

որովհետև այստեղ և՛ քար քցողն էր քիչ, և՛ խնձորներն էին համեղ:

Նրանց միակ կովը, պողը կոտրած Նարգիզը, սերվում էր այն նախշուն երինջից, որ Ջանին, որպես օժիտ, բերել էր Բարի Օհանի տնից: Ամեն իրիկուն նախիրը գալուց կովը դարպասի մոտ բառաչում էր, Ռուշանը բակից ձայն էր տալիս հորը.

— Ապի՛, Նարգիզն եկավ:

Հայրը կանաչ խոտի մի կապ թևի տակ, պարտեզից բակ էր մտնում, խոտը դնում գետնին և մոտենում դարպասը բաց անելու: Իսկ պառավ Ջանին փեշերն այնպես էր վեր քաշում, պղնձե մեծ կովկիթը մի քանի անգամ չվանում, ասես բակում տասը կթի կով էր կապած: Մինչև Ջանին կիթը վերջացնեի, Ունանը շոյում էր կովի ճակատն ու վրզը, իսկ որդին կանաչ խոտը մանրիկ փնջերով մոտեցնում էր Նարգիզի թաց դեշին:

Կովը տեղաց անելուց հետո Ջանին թեյ էր քցում, իսկ Ունանը տղայի հետ խոսում էր այն մասին, թե վաղը ո՞ր մարգը պիտի ջրվի: Եվ երբ Ռուշանը հոր խոսքը կիսատ թողած փողոց էր վազում, Ունանն էլ շուխան ուսերին քցած դուրս էր գալիս, դարպասի քարին նստում, մինչև Մեծլումն էլ երևար: Իրկիցներն ակսում էին զրույցը, ամեն մարդ իր դարպասի քարին նստած:

Օրերը խաղաղ էին անցնում, մանավանդ ցերեկը, երբ Ռուշանը դպրոց էր գնում: Ջանին նստում էր բակի կեռասե՛նու տակ, գուլպա գործում կամ կարկատան անում: Մտերն ուրախ ճովողում էին, երբեմն գետնի երեսով թռնում: Ջանին գործում էր գուլպան, քթի տակ դնդնում մի երգ: Կատուն նրա փեշերի վրա փռվում էր, ննջում ու երբ բեզարում էր ննջելուց, թաթերով կծիկի հետ էր խաղում: Իսկ Ջանու աչքերը հոգնում էին ճաղերին նայելուց և գլուխը կախ էր քցում կրծքին:

Եթե պարտեզի դռնակը բացվեր կամ մի հարևան տուն գար, Ջանին տեղից վեր էր կենում, փեշերը թափ տալիս և բարկանում կատվի վրա.

— Մի՞ծ ուտող երեխի պես փեշիցս կա՛խ ընկի:

Եվ աչքերը տրորելով մոտենում էր եկողին, բարի ժըպտով ասում.

— Էս նիւջը որտեղից եկավ, հաղթեց ինձ:

Երբեմն էլ ինքն էր գնում պարտեզ: Երկուսով նստում էին վարունգի թաղի մոտ, Ունանը շիրուխն էր լցնում, իսկ Զանին գուլպայի մատերը խաղին հագցնելով, զրույց էին անում: Զարմանալի սեր ու հաշտութիւն կար նրանց միջև: Երբ պառավի աչքովն էր ընկնում ամուսնու մաշված արմունկը, զրույցը կիսատ թողնելով ասում էր.

— Իրիկունը մի քիչ շուտ պառկի, ըստով էդ արմունկդ կարկատեմ... Ծրագի տակ աչքս չի տեսնում, որ ասեղը թելեմ:

10 — Դու էլ շատ մի գուլպա անի: Տուր թող Մեծուամի հարսերն անեն...

Բայց և այնպես իրիկունը նա մի քիչ կանուխ էր պառկում, իսկ Զանին կովը կթելուց հետո կարկատում էր արխալուղի մաշված արմունկը:

Ինչպես ճնճղուկների կայտառ երամը կհարձակվի կեռասենու վրա, այնպես էլ դպրոցական ընկերների իր խմբով Առուշանը, երբ տուն էր գալիս, մայրը շէր թոնթորում, եթէ նրանց ոտնաձայնից հավ ու թուխս իրար էին անցնում, վշկշում, թռնում պատուհանի ու ցանկապատի վրա, եթէ երե-

20 խաները ձեռք էին տալիս բակի ու սրահի իրերին, քցում, նույնիսկ կոտորում: Սրտաշարժ համբերատարութեամբ պառավը կոանում էր և գետնից հավաքում թղթի, փայտի կտորտանքը, որ բերում էին նրանք իրենց հետ: Եթէ պարտեզ էլ փնային, Զանին գիտեր, որ աչևորը շէր տրտնջալու: Ու միայն նրանց հետևից կանչում էր.

— Երեխեք, սոխի մարգերը կոխ շտաք...

Օրերն իրենց խաղաղ ընթացքը փոխում էին, երբ դարպասի երկաթե կոշնակը ծեծում էին, և մի ձեռք մեկնում էր ծրարը: Ռուշանը եթէ տանն էր լինում, ամենից առաջ նա էր վազում և նամակը վերցնում:

30 — Անտոնիցն է... տես ինչ մեծ-մեծ է գրել: Վաղոն էսպես չի գրում, նրանը իսկի մեր ուսուցիչն էլ չի կարդա...

Պարտեզի դռնակը բացվում էր, և Ունանը բահը ձեռքին մտնում էր:

— Բահն ո՞ւր ես բերում: Անտոնն է գրել... Քոռանամ, էս նրա ձեռքն է:

Ունանը դողդողալով ծրարը բաց էր անում, մինչև Ռու-
շանը նրա՝ թերով կապիկած, մի ապակին ճաքած ակնոցները
տնից բերելու։ Ծրարը բացելուց հետո մատները դողում էին,
երբ հանում էր նամակը, ակնոցները հագնում քթին, գիրկապ
անում։ Ռուշանը վիզը մեկնում էր, աչքը քցում նամակին,
բարձր կանչով նա ընդհատում էր ընթերցումը, եթե հայրը
սխալ էր կարդում։

«...Իմ աշխատանքին եմ, նույն քաղաքում։ Հետևեք Ռու-
շանը լավ սովորի։ Եթե արձակուրդ ստացա, կգամ ձեզ մոտ
կարճ ժամանակով... Վաղոն Մոսկվա է, նրան նշանակել են 10
պոլկի կամիսարու նանի գուլպեքը ստացել եմ. ինչո՞ւ ես շար-
չարվել, էստեղ էլ կա... մնամ...»:

Ու նամակը կարդալուց հետո Ջանին պիտի առներ, նա-
յեր, աչքերը պիտի շրակալելին։

— Ի՞նչ ասեմ Բարի Օհանին... Մեզ խավար թողաց։ Բա
գիր շիմանա՞ս...

Եվ նա դեռ երկար պիտի նայեր անհասկանալի գործին,
ճշմաններին, պիտի լարեր տեսողությունը և փնտրեր այնպի-
սի բան, որ միայն ինքը կարող էր տեսնել։

Ապա հանում էր Անտոնի՝ պատից կախված նկարը, սրբ- 20
բում փեշով, թեկուզ ապակին պլավում էր։ Երբեմն նա մեղմ
երգում էր, եղունգով քերում շրջանակի վրայի աղտոտ բծե-
րը։ Անտոնի նկարը տեղը կախելուց հետո, մեծ որդու՝ Վա-
ղոյի նկարն էր վերցնում։ Նրան նայելուց Ջանու դեմքի ար-
տահայտությունը փոխվում էր։ Վաղոն ավելի կանուխ էր
գնացել, մոր հիշողության մեջ որդու շատ հետքեր ավերվել
էին, ու միշտ մոմոտում էր հին վերքի ապին։

Ոչ միայն այդ երեկո, այլև մյուս օրերը խոսակցությունը 30
նամակի շուրջն էր։ Պատահում էր, մանավանդ Ջանու խընդ-
րանքով, որ Ունանը նամակը սնդուկից հանում էր ու մի
անգամ էլ կարդում։ Այդ երեկո նրանք թեյը սառած էին
խմում, խակ Ունանը միշտ շորերը հանելուց էր նկատում, որ
ակնոցները դեռ քթին են հագցրած։ Ու երբ Ջանին ճրագը
հանգցնում էր, մթնում շորերը հանում (այդ նրա սովորու-
թյունն էր՝ այն օրից, երբ հարս եկավ. ոչ ոք երբեք լուսով
չէր տեսել նրան շոր հանելուց կամ հագնելուց), պառկելուց

առաջ մի անգամ էլ մոտենում էր Ռուշանի վերմակը շտկում. մթնում երկու պառավ դեռ երկար էին քշվչում, մինչև Ունանը հորանջի և կողքին դառնալով կնոջը պատվիրեր իրեն կանուխ զարթեցնելու:

— Տանձիքը պիտի ջրվի՛... էգուց ջրի հերթը մերն է... 10

Իսկ պառավը դեռ միտք էր անում... ուրեմն գուլպաները ստացել է... իր գործած գուլպաները, ձյունի նման փափուկ ու սպիտակ... Հասել են, գուլպաները գնացել են ու հասել Անտոնին... Ուրեմն կարոտ կա, որ ասում է, թե ինչո՞ւ ես ուղարկել, նեղութուն ես քաշել... Անտոնը հենց փոքրուց էր սրտով: Մի անգամ փուշ էր մտել Զանու ոտքը... մրմռում էր ու ինքը ասեղի ծայրով ուզում էր փուշը հանի... Երբ գլուխը վեր հանեց, Անտոնը հարցրեց, թե ցավը կտրե՞ց, նանի... Վաղոն էլ էր ջիգայրով... Լեզուդ պապանձվի, ինչո՞ւ ես նրան ջոկում Անտոնից... էն որ շէր թողնում իրեն ալյուրի պարկը շալակի: Ունն առավ ու մի շնչում ջաղացից տուն բերեց... է՛հ, հիմա տեսնես քնել ե՛ն... Չէ, ջաղաք է, ո՞վ գիտե երբ են քնում... էդ լավ չի, որ զորքի վրա է... կոխվ կա, պատերազմ կա... Մի բան չպատահի՞, մի բան չպատահի՞... 20

Պահարանում շարած պղնձե ափսեները զրնգացին... կատուն էր: Լիզում էր ու վեր քցեց:

— Փի՛շտ,— ձայն տվավ Զանին: Կատուն հեռացավ: Նրա մտքի թելը կտրվեց: Հիշեց, որ երեկոյան ափսեները չի վա-
ցել սամավարի ջրով:

Ռուշանը քնի մեջ ծանր էր շնչում: Մայրն ականջ դրեց ու վեր կացավ բարձր շտկելու Ու երբ գրկեց գլուխը, երեխան քնի մեջ շրթունքները շարժեց ու խոր շնչելուց հետո նորից թանձր քուն մտավ... Մայրը համբուրեց նրան ու, բորիկ ոտ-
քերը մթի մեջ զգուշ փոխելով, հասավ տեղը:

30 — Ռուշանը... Հանկարծ կատուն շգնա, դռչին նստի... էգուց արևորին ասեմ փենջարան ճիլոպով ծածկի... էնտեղով է մտնում, թե շէ դուռը փակ է... Ռուշանը... կմեծանա... Ապ-
րեմ էնքան, մինչև նրա կանաչ-կարմիրը կապեմ, իմ ձեռքով մի փափուկ բարձ լցնեմ...

Զանին հիշեց, կոտրած կարասի մեջ պահած բմբուլին վաղուց չի նայել... ցեց մտած չլինի՞: Հետո միտքը սահեց,

ինչպես հանդարտ լողացող ամպի քուլա... Հիշեց Ռուշանի խոսքը, ե՞րբ ինքը հավերին կուտ էր տալիս:

— Նանի, որ մեծանամ քեզ համար ինչքա՞ն հավ եմ առնելու...

Ու քունը թեթև փետուրի պես իջավ Չանու հոգնած կուպերին:

Արևը մայր էր մտնում:

Չանին գուլպան ձեռքին նստել էր կեռասենու տակ: Կաշաղակներն ու ծտերը թռչկոտում էին ճյուղից ճյուղ, կտցահարում կասկարմիր կեռասը: Երբ նրանց աղմուկը սաստկանում էր, Չանին կողքին դրած բարակ ճիպոտը ճոճում էր, «հուշտ» անում... Ծտերն ու կաշաղակները փռուսլով թռչում էին, պահվում մյուս ծառերի ճյուղերին ու հետո նորից մեկ-մեկ հավաքվում... Կտուրի վրա, բնի կողքին կանգնել էր ծեր արագիլը ու պլշած նայում էր, երբեմն գլուխն այս ու այն կողմը դարձնում: Չարմանո՞ւմ էր կաշաղակների հանդգնությանը, թե զայրացած էր, որ անհանգստացնում են պառավին,— միայն երբ Չանին ճիպոտ էր վերցնում, արագիլն էլ թևերն էր թափահարում, կարծես ինքն էր քշում աներես ծտերին:

10

20

Հանկարծ արագիլը վիզը երկարեց, դժվարությամբ թեվին արավ ու թռավ: Հենց այդ վայրկյանին մեկը մոտեցավ դարպասին, կոշնակը ծեծեց.

— Չանի մոքիր, դուռը բաց արա, աչքալուս եմ բերել...

Պառավին թվաց, թե ծնկները պոկվեցին: Ու քիչ մնաց ընկներ... Գուլպան ձեռքից սահեց գետնին: Պարտեզի դռնակը բացվեց, և Ռուշանը գնդակի թափով վազեց դարպասի կողմը: Ու հե՛հե՛հ ներս ընկավ. ներս մտավ Մեծլումի հարսը:

— Չանի մորքուր... Անտոնը, ձեր Անտոնը հրեն գալիս է... Ֆայտոնում նստած: Աչքալուսս տուր... ես բուրդն էի լվանում, մին էլ ֆայտոնը կամրջի գլխով անցավ: Տեսնելա ու ճանաչելու մին եղավ: Հրես որտեղ որ է ձենը կլսվի... Ասի բուրդին նայեք ես վազեմ... թե որ չէի՞ ճանաչել, էն ա աչքալուսս...

30

— Ռուշան, ա՛յ ալևոր...

Ռուշանը շկար: Մեծլումի հարսի հենց առաջին խոսքից

193

նա դուրս էր վազել: Պարտեզի դռնակը բացվեց, երևաց Ունանը: Մերունին մի վայրկյան զարմացած նայեց:

— Անտոնը՛, ա՛յ մարդ,— իսկ Մեծլումի հարսը ձեռքով հասկացրեց, որ աչքալուսն ինքն է բերել: Մերունին քայլերն արագացրեց, շապիկը կոճկելով: Լսվեց զանգակների ձայնը...

Վաղուց, շատ վաղուց պարտեզի դռնակը կիսաբաց չէր մնացել... Ստվերում նստած հորթը վեր կացավ ու կամացուկ ներս մտավ երբեք շտեսած մի աշխարհ, ուր աճում էր համեղ և մսոտ տերևներով կաղամբը:

10 Կառքը դարպասի մոտ կանգնեց: Ներս մտավ հաղթանդամ մի տղամարդ ու ներս մտնելով դիպավ դարպասի դռներին, կոշնակը թույլ զարկեց: Նա գրկեց Զանուն. պառավի ոտքերը գետնից կտրվեցին: Անտոնի աչքին մայրն ավելի փոքրացած երևաց, սմբած, ու թեթև բաբուլի նման գրկեց վեր բարձրացրեց:

— Նանի, ո՞նց ես...— մոր դողացող շրթունքների համբույրը շոր տերևի նման հպվեց որդու այտին: Զանին մի վայրկյան աչքերը փակեց և մանկան նման գլուխը հենեց Անտոնի կրծքին: Ու հանկարծ արցունք կաթեց:

20 — Նանի՛...

— Հա, քեզ մատաղ,— իսկ մայրը մեղմ ժպտում էր: Անտոնի աչքին հոր տունը փոքրացած ու ցածրիկ երևաց, սանդղղքները՝ բարա՛կ ու մաշված: Ու մտածեց,— կդիմանա՞ն, եթե բարձրանա արահը:

Հարևանները հավաքվեցին: Ռուշանը հուլի նման ֆոռոմ էր, մեկ փողոց դուրս վազում, մեկ տոնն, նորից մոտենում եղբորը, վազում ու նրա իրերը տնտղում:

— Օ՛... Մեծլում ապի... պառավել ե՛ս:

— է՛հ, այ որդի... Աչքերիցս եմ խեղճ, թե չէ կոներումս

30 հլա ուժ կա:

Անտոնը նրա թևը բռնեց, մտավ ու բարձրացրեց սանդղղքով: Ունանը հետևեց նրանց: Բարձրացան և սուրիշները: Հայրը զարմացած լսում էր: Մի՞թե դեռ հիշում է որսորդ Ավուն... Հարցնում է, թե բժիշկը քանի անգամ է գլուղ գալիս, ինչպես են ցորենը մաքրում... մաշինից է հարցնում:

— Ապի՛ր, բա ե՛րբ են բերելու լույսը,— հարցրեց Անտոնը:

— Ինչը՞,— և ավելի մոտեցավ նրան:

— Էլեկտրականը, էն, որ ձորում շինում են...

— Եսի՛մ ինչ են շինում ձորումը... Ո՞վ է էնտեղեք գնացողը,— սրտնեղած պատասխանեց հայրը: Որտեղից գիտեր նա... Հիմա երեկ մտքում հանդիմանում է հորը, թե ես հեռու քաղաքում եմ ապրում, բայց գիտեմ, թե ձորում ի՞նչ են շինում... Ինքը նրան իր նամակում աչդ մասին ոչինչ չի գրել:

Ջանին ներս ու դուրս էր անում: Երբեմն կանգնում էր որդու մոտ, թեկուզ մտքում թեյ ղնելու հույան էր կամ մի այլ գործ: Եթե Անտոնը նրան էր դառնում մի հարցով, Ջանին բարակ դողացող ձայնով պատասխանում էր, ավելացնելով. «Հա՛, քեզ մատաղ...»: Մեծլումի հարսը չլիներ, նա երեկ դեռ շատ կփնտրեր շաքարամանը:

Նարգիզն եկավ, դռան մոտ բառաչեց, Ջանին կովկիթն առանց լվանալու իջավ սանդուղքով, նրա հետևից՝ Ունանը: Երբ կովի երկրորդ բառաչին հորթը սլողը ցցած դուրս եկավ պարտեզից, երկուսով իրար նայեցին:

— Կավ, անցել է:— ասաց Ունանը և սկսեց նարգիզի ճակատը քորել:

Պառավ արագիլը զարմացած նայում էր բակին. երբ սանդուղքով իջնում էին ու բարձրանում, վախեցած հետ էր քաշվում, մոտենում բնին: Այդպիսի եռուզեռ նա չէր տեսել, ո՞վ էր այն բարձրահասակը, որի ծանր սապոֆներից ճռռում էին սրահի տախտակները:

Հարևանները մեկ-մեկ հեռանում էին: Մթնում էր: Անտոնը մոտեցավ իրերին, սկսեց կապոցներն արձակել:

— Ռուշա՛ն, պիտներ ես՞...

— Հլա չեն ընդունել...

— Գիտե՞ս որտեղ է կոմիտեն:

— Էն, որ ընկեր Սահակը նստում է, է՛ն,— Անտոնը ծիծաղեց:

— Հա՛, էն:

— Մեր դպրոցի կողքին է,— ինքնագոհ պատասխանեց Ռուշանը, իսկ հայրն ավելացրեց.

— Իվան բեյի օթախններում...

Սերունդները նայում էին Անտոնի իրերը. մի բարձ էր, փափուկ վերմակ, մի երկու կտոր շոր, գրքեր, զանազան մանրուք: Զանին միտք էր անում, թե Անտոնն ինչ գործի է քաղաքում, որ լավ ու հարուստ զգեստ էլ շունի: Մեկ էլ հանկարծ դարձավ Ռուշանին.

— Իվան բեյի օթախնները դու ո՞րտեղից ես ճանաչում...

— Ե՞ս,— մանկան ինքնագոհությամբ պատասխանեց տղան,— հլա մեջն էլ եմ մտել... Տակին պիտեներների շտաբն է, վերը ընկեր Սհակն է նստում: Հլա մի անգամ էլ հարցրեց, թե նամակ չկա՞ աղբորիցդ,— ու հորը դառնալով ավելացրեց,— ապի, էնտեղ մեծ թմբուկ կա, ա՛յ էսքան...

10

Ռուշանը թևը բարձրացրեց:

Դարպասը նորից ճոռաց: Մի քանի հոգի ներս մտան: Անտոնը մտտեցավ նրանց, սանդուղքի գլխին մեկին գրկեց ու համբուրեց, ապա ամուր: սեղմեց դեպի իրեն մեկնած ձեռքերը:

— էս քանի ժամ է, որ երեացել ես մեր երկրի սահմաններում ու շեռ ներկայացել մեզ,— դարձավ նրան առաջին բարձրացողը և ավելացրեց,— դա՛, բրատ, դու էլ ես պառավել...

20

Ռուշանը ճանաչեց ընկեր Սահակին:

— Ինչի՞ եք մինչև հիմա զարթուն,— դարձավ նա ծերունիներին:— Մայրի՛կ, տեսնում ե՞ս ինչ տղա է դառել:

— Հա՛, քեզ մատաղ...

— Դե ի՞նչ ունես, բեր նանի՛, թաքուն տեղ պահած կլինես:

Պառավը ուրախ սենյակ մտավ, սնդուկը զնգաց, ապա գոփոցը քոնած մտտեցավ օջախին: Շեմքի մոտ նստել էր Ունանը և զննող հայացքով նայում էր մեկ Անտոնին, մեկ Սահակին ու նրա ընկերներին: Նրանք երբեմն ուսերեն էին խոսում, Անտոնն ավելի հաճախ. ու բոլորովին օտարի էր նմանվում նա այդ բոպեին, ասես քորիկ ոտներով, երեսին քերծվածքն անպակաս երեսան չէր... Ի՞նչ մարդիկ են նրա ընկերները... Եվ ո՞րտեղից է այդ ընկերությունը... Թե հին

30

Ճանաչներ են, ինչո՞ւ մի անգամ Սահակն իրենց տուն հյուր չի եկել:

Անտոնը ծոցից թղթի կտոր հանեց, կոացավ վրան, մյուսները գլուխները մոտեցրին: Մատիտով գծում էր, սևացնում... պատմում էր, իսկ Սահակը գլխով նշան էր անում: Ունանի աչքին ընկավ Անտոնի ճակատի սպի՛ն, որ կոանալուց ուռել էր... ինքը շաղացումն էր, մեկ էլ խաբարը բերին, թե ծառից ընկել է... Հիմա տեսնես ի՞նչ գործի է... ինչի՛նք է, աղվակատ է... Ինքն ի՞նչ իմանա, միայն եկողներից միշտ լավն է լսել: Գուցե ինքը լավն է, իսկ այդ դարիք մարդիկ, նրա ընկերները... Հը՞, ով գիտե... Աշխարհն այնպես խառնըվեց, այնպես բորան եղա՛վ, և քցեց որսեղից որսեղ... Ոչ մեկն էլ մի նշան, մի մեղալ չունի, որ ինքն իմանա, թե ով է ումնից մեծավոր... Սհակի պաշտոնն է բարձր, թե որդունը... Սհակն իր ոտով եկավ, ուրեմն... թե մեծավոր են, ինչո՞ւ հարցրեց, թե ծողովուրդը ոնց է ապրում: Երևի թաքուն քրննիչ է Անտոնը, քաղաքից ուղարկել են: Հալբաթ մեծ զորություն ունի:

Իսկ Անտոնն ընկերներին պատմում էր այն մեծ ճանապարհի մասին, որի կառուցման խնդիրը դրական լուծումն էր ստացել և որը հետ ընկած գավառը միացնելու էր երկաթգծերի գլխավոր մագիստրալին: Նա խոսում էր քարհանքների մասին, գավառի խիտ և անանցանելի անտառների օգտագործման մասին: Այդ բոլորը քանի անգամ քննության էին առել Սահակը, նրա ընկերները... Իսկ Անտոնը պատմում էր վերջին նորությունները, գործի մանրամասնությունները, որ անհայտ էին շրջանի ընկերներին:

Չանին մի անգամ կամացուկ ասաց.

— Անտոն, սմավարը սառչում է՛... փետով եմ քցել,— բայց նրանք շլեցին: Ունանն էլ պառավին հանդիմանեց.

— Մի երկու կտոր տաշեղ քցի... Տեսնում ես պլան են քաշում... հոսում են:

Հանկարծ Անտոնի աչքն ընկավ Ռուշանին, որի գլուխը ծանրացել էր ձեռքերի վրա, մեկ ննջում էր, մեկ աչքերը լայն բաց անում, միտքը վարում՝ նրանց ասածներից մի բան հասկանալու:

— Գնա՛ քնի, Ռուշան,— ասաց Անտոնը:

— Քոնն չի տանում,— ու տեղում շտկվեց: Զանին առիթից օգտվելով սամավարը դրեց սեղանին: Զրույցը հանդարտվեց, մոտեցան սեղանին: Ունանը տեղից վեր կացավ ու նստեց իր անփոփոխ տեղը՝ սեղանի ծայրին:

— Ռուշան, Անտոնը որ քեզ հետը տանի, կգնա՛ս,— հարցրեց Սահակն այն աշխույժ տրամադրությամբ, որպիսին ունենում է աշխատանքից հետո հանգստացողը:

10 — Կգնա՛մ,— կտրուկ պատասխանեց Ռուշանը և շնկատեց, որ սամավարի հետևից իրեն հառած մոր աչքերը զարմանքից լայնացան:

— Որ քեզ տանի, ի՞նչ ես դառնալու...

— Միլիցիա,— լուրջ ասաց տղան:

Սահակն ու Անտոնը ծիծաղեցին, Ունանը ժպտաց նրանց ծիծաղի վրա, իսկ Զանին ձեռքը մեկնեց սամավարի ծորակին ու սառավ:

20 — Աչքդ վրան պահի, շես տեսնո՞ւմ,— ասաց Ունանը, ձեռքով ծորակը շրջելով: Բաժակը լցվել էր ու ջուրը թափվում էր սեղանին: Զանին շփոթվեց, և նրա թորշոմած դեմքը պղնձագուլյն դարձավ հուզմունքից:

... Ուշ էր, երբ նրանք գնացին:

— Նանի, տեղերս քցի... է՛, ապի, դու ոնց ես... Մազերդ սպիտակել են, բայց էլի պինդ ես:

— Ինչ դժար գործի ենք որ...— պատասխանեց հայրը և դարձավ կնոջը,— թախտին քցի տեղերը: Էն պատռահանն էլ փակի. լուսադեմին քամի է վինում:

— Նանի, դու ոնց ես... բա շես բեզարել, էսքան որ աշխատում ես:

— Նանին քեզ մատաղ...

30 — Բա վաղոյից շես հարցնո՞ւմ:

— Հը, բան կա՞,— ու բարձր մնաց ձեռքին:

— Ամուսնացել է,— ժպտալով ասաց Անտոնը:

— Արի՛ է, այ ալևոր,— կանչեց Զանին,— հարսը լավ տնի՞ց է:

— Ի՞նչ տուն, նանի: Ամհեր, անմեր մի ուու աղջիկ է...

— Ռո՞ւս:

Անտոնը ծխախոտի տուփը դրեց կողքին ու շուլալվեց վերմակի տակ:

— Օխա՛յ... էսպես փափուկ տեղ վաղուց է շեմ քնել... Նանի, Սահակն առավոտ կանուխ է գալու, միասին տեղ պիտի գնանք: Չայը կանուխ կքցես...— ու գլուխը ծածկեց վերմակի ծայրով:

Ունանն էլ պառկեց: Միտք էր անում ծերունին, թե էս ի՞նչ մարդիկ են... Չհարցրեց, թե բաղը ոնց է, ծառերը, հողը... Տան ապրուստի, մուլքի կողմանից... ոնց որ մի դռնաղ: Իսկ փոքրուց էդպես չէր... Ոնց փոխվեց, հը՞... Մառերն ո՞ւմ պիտի մնան,— ու նրա միտքն ընթացավ ծանոթ ճանապարհով, դռնակը քաց արեց,— ջրի բանդը պիտի կալնել... Անտեր շները գալիս են լտբու մարգերը կոխ տալի... 10

Պառավը ճրագի տեղը փոխեց: Աչքը դարձյալ ընկավ Անտոնին, անխոռվ քնել էր: Ու շա՛տ մաշված, այտերը փոս ընկած թվաց նրա աչքին Անտոնի հոգնած դեմքը: Մայրը կամաց հառաչեց, կոացավ նրա կոշիկներին նայեց, գոգնոցի ծայրով փոշին սրբեց:— Վաղո՞ն պսակվել է: Շրջանակի միջից մի գույգ աչքեր նայում էին մորը: Իր ասածը շեղավ... է՛, ինչ թաքուն մտքեր ուներ Ձանին անդրանիկ որդու հարսանիքի հետ կապված: 20

Ծրագը ձեռքին մայրը մոտեցավ Ռուշանի վերմակը շրտկի, ամեն օրվա պես: Ռուշանը քնաթաթախ աչքերը քաց արեց ու ծոր տվեց...

— Հիմա հո շեմ գը-նո՛ւմ... որ մեծանամ, էն ժամանա՛... 30

Մայրը կոացավ, ճակատը համբուրեց ու ականջին շշրնշաց.

— Բա ես՞, բալիկ...

— Դու ապուրը մոտ մնա... էնքան համա...— խոսքը թերի մնաց, աչքերը փակվեցին:

Մայրը մի պահ նայեց նրան: Ծրագը ձեռքում դողում էր: Երեխան քնի մեջ ժպտաց: Եվ անլուծելի առեղծված դարձավ այդ ժպիտը մոր համար:

Ձանին ճրագը հանգցրեց:

ՎՃԻՌԸ

Այն սենյակը, որի դռան փակցրած ազդն արգելում է առանց զեկուցման ներս մտնել, փակ է միայն կիրակի և տոն օրերը: Իսկ շոգ ժամանակ դուռը առավոտից մինչև երեկո բաց է: Երկար է ու նեղլիկ, առաստաղը ցածր, տեղ-տեղ ծեփը թափված: Դիմացի պատի մոտ դրված են փայտե հասարակ մաշված աթոռներ: Մինչև դուռը խիտ շարված են շառնդած նատարանները:

10 Մի թեթև շուք էր տալիս առաստաղից կախված փարթամ կանթեղը, պղնձյա մոմակալներով, որոնք միացված էին ապակյա ուլունքների շղթաներով: Այդ կանթեղը գործածության պիտանի չէր և չէր մերվում սենյակի ընդհանուր տեսքին: Մնացել էր հնուց, և իբրև անգործադրելի ինչ, թողել էին տեղը:

Այդպես է շրջանային ժողդատարանի սենյակը, ուր այն առավոտ, երբ քննվելու էր սովորական գործերից մեկը և արձակվելու վճիռ, ինչպես պատշաճ է օրենքի ոգուն, — այն առավոտ փայտյա նատարանների վրա տեղավորվել էին մի քանի հոգի և մինչև դատավորների գալը իրար հետ զրուցում էին:

20 Առաջին ներս մտնողը դատարանի քարտուղարն եղավ, ձողի նման բարակ մի մարդ: Նրա փոքրիկ գլուխն անշարժ միացված էր իրանին, այնպես որ աչ ու ձախ նայելուց ամբողջ իրանն էր դարձնում, ինչպես բուկուռուցքով հիվանդը:

— Ուտքի՛, — ասաց քարտուղարը և տեղում մեխվեց: Մի կի՛ն կանգնելուց թաշկինակը քցեց:

Քարտուղարը առաջներում հաշտարար դատարանի գրա-

գիր է եղել: Նրա համար ամենից հաճելին այն հրամանն է, որ արձակում է ինքը, երբ դատավորները գալիս են և կամ թե նախագահը կարողում է վճիռը: Այդ բուպեին նրա դմքն արտահայտում է խորին պատկառանք նույնիսկ դեպի այն պառուզան, որ ունենում է դատավորը վճռի ընթերցման ժամանակ: Ասում են, որ ինչքան էլ երկար տևի ընթերցումը, նա աչքը չի փարթում:

— Աղլուխդ վերցրո՛ւ,— կամաց ասաց քարտուղարն առաջին շարքում կանգնած կնոջը ու դատավորների հետ միաժամանակ նստեց աթոռին:

— Քննվում է գործ №224... ըստ հայցի Մարիամ... ընդդեմ քաղաքացի Տոնական... — կարդաց նախագահը և դարձավ քարտուղարին, — ժանուցագրերը հանձնվա՞ծ են: — Վերջինս գլխով արեց:

Նախագահը հանդարտ ձայնով սկսեց պատմել գործի հանգամանքները: Աջ կողմը նստած ատենակալը մատիտը զարկում էր ճակատին, կարծես դատավորի պատմածը մեխի նման նստեցնում էր գլխի մեջ:

Բաց պատուհանից երևում էր ցուցանակի մի անկյունը, վրան գրված՝ «...ես» — ի՞նչ ասել է, — մտածում էր նա: Ի՞նչ ցուցանակ է: Ինչքան էլ վիզը ձգում էր, չէր կարողանում երկու տառից ավելին կարդալ: Վերջապես չհամբերեց, կանգնեց, ձեռքը մեկնեց ջրամանին և աչքի տակով կարդաց. «Շրջանային սորես»...

— Զարմանալի մարդ է Սեթոն, — մտածեց ատենակալը, — գրասենյակը տեղափոխել է, վիվեական թողել, ու նորից սկսեց մատիտը խփել ճակատին:

Հարցաքննությունը սկսվեց:

— Տոնականը դո՞ւք եք, — հարցրեց նախագահը: Քարտուղարը թեքեց ամբողջ իրանը, մեկին ձեռքով արեց:

— Մենք ենք, հա՛... — շտեղծ հատակին քսելով, մանրիկ քայլերով սեղանին մոտեցավ կարճահասակ, նիհար մի մարդ: Ամեն ինչ նրա հագին փոքրիկ էր, իր հասակի համեմատ: Բարակ գոտին մեջքն այնպես էր սեղմել, ինչպես տասը տարեկան աղջկա մեջքը:

— Ի՞նչ կասեք...

— Դե ի՞նչ ասեմ, ընկեր դատարան, բոլոր հանգամանքներին էլ ծանոթ կլինեք,— ու վիզը խեղճ-խեղճ ծռեց:— Ամոթ էլ եմ համարել վկա բերել, նրա համար, որ արար աշխարհքին է հայտնի իմ եղելությունը... Ծն խնդրում եմ, որ արդարությունը պաշտպանեք, իմ մեղավորությունը երեսովս տաք... Եթե որ մի օտար դատավոր լիներ, կասեի հանգամանքներին անծանոթ է.. Ինչքան շլինի Հոռոմսի հորքիրը ձեզ պատմած կլինի իմ գլխով անցկացածը: Ինչու, քեզ էլ հայտնի կլինի, հարևանությունը որ օրվա համար կլինի:

10 Գահլիճում մեկը փոթկացրեց: Քարտուղարը վտանգ կասկածող արագիլի նման վիզը ձգեց:

— Գործի էությունը պատմի,— սաստեց նախագահը և խակույն փոշմանեց իր խստության համար:

Տոնականը փշաքաղվեց, ոտները փոխնիփոխ արեց, աչքերը գետնին քցելով, շարունակեց.

— էությունն էն է, որ երկինք գետինք վկա, ես ինձանում մեղավորություն չեմ գտնում: Էն տարին, որ ուզում էր գնա, խնդրեցի, աղաչեցի, ասի՝ էդ անվայել գործը մի անի... Հոռոմսի հորքիրն էլ պախարակեց,— դատավորը ձեռքը զանգակին տարավ, բայց հետ քաշեց:

20 — Չլսեց: Սովի էն նեղ վախտը երկու երեխան երեսիս թողեց... Մի ամիս շքաշեց, աղջիկս սաթիլջամ ստացավ... է՛հ, կտրվի անկնիկ տունը: Մի օր էս հարևանը, մի օր էն միեր... Շնորհակալ եմ Հոռոմսի հորքուրից... Շատ դեղ ու դարման արեց, զե փնչ արած, ճակատագիր էր... Գործիս միջին զագսից դրա մասին թուղթ եմ բերել...

Կինը փղձկաց, երեսը ծածկեց զոգնոցով: Տոնականը փոշմանած իր խոսքից, դառնությամբ հանդիմանեց նրան.

30 — էս օրն էի լաց լինում է՛, Մարիամ,— և ինքն էլ հուզվեց, կնոջ անունն ասելուց, ձայնը դողաց:

— Քաղաքացի Տոնական... Մասնավոր խոսակցությունով մի ընդհատեք... Շարունակե՛ք...

— Հա՛, էն խոսքն էի ասում, որ...

Նախագահի համար էլ օտարոտի էր նրան անվանել «քաղաքացի Տոնական»: Ամբողջ շրջանը հայ ու թուրք, մեծ ու փոքր նրան ճանաչում և կանչում էին նալբանդ Տոնո: Հրա-

պարակի թթեհնու տակ նրա տեղն էր: Օրնիրուն գլուխը քաշ աշխատում էր, փոքրիկ զնդանի վրա նալ տափակացնում, ծակոտում, ծուռը հարթում, մեծը փոքրացնում, մեխի ծայրը սրում: Մառին խրած ցցերից նալների շարանուկներն էին կախած, ձիու նալը ջոկ, եզանը՝ ջոկ: Իսկ մեխը փայտե աղկըղների մեջ էր, դարձյալ ըստ տեսակների՝ մաշինի տափակ մեխ, տեղական մեխ:

Նրա համար տոն ու կիրակի չկար: Մինչև մուժն ընկնելը զըրնգ հա՛ զըրնգ դարկում էր նալին ու մեխին: Եթե անձրև լիներ կամ ձյուն գար, Տոնոն զնդանը տեղափոխում էր դիմացի իջևանատան դարպասի տակ և կոտրած մանղալի կրակը թեժ անելով դարձյալ աշխատում, երբեմն ձեռքերը կրակի վրա պահելով: Օրվա որ ժամանակն էլ լիներ, ինչպիսի ձի բերեին,— այդ փոքրիկ ու վտիտ մարդն առանց վախի կռանում էր սմբակի վրա, նույնիսկ երբ ձին ուժ էր անում աքացի տալու:

Տաք ու դուրեկան լուսթյան մեջ Տոնականը հանդարտ ձայնով շարունակեց իր պատմությունը, կարծես լսողները պատի տակ արևկող արած իր ընկեր հարևաններն էին: Իսկ ատենակալը մտածում էր, թե ինչպես կարելի է օգտագործել առաստաղից կախված կանթեղը:

— Վեր կացավ գնաց,— շարունակեց Տոնոն,— անցկացավ մի տարի: Դիմացա, ասի ինչքան շլինի մայր է, սիրտ կանի, կգա երեխու վրա... Մի օր էլ խարարը Գյանջու կողմերից եկավ, թե էն, ասելն էլ ամոթ է, սիրեկանին բաց է թողել, մի ղինվոր տղի հետ գնացել է Բաքու... Կարելի է ճանաչեք Առուշանենց Անդոնին... Նրա ձեռքով մի նամակ ուղարկեցի... էն տարին ճանապարհները նոր-նոր բացվում էին:

Տաք հովը բաց պատուհանից ներս էր բերում այն անորոշ աղմուկը, որ հատուկ է գարնան պայծառ օրին, աղմուկ, որ առաջանում է թռչունների ճովողյունից, սարերում հերկող գյուղացիների հորովելից, այգիներում հող քանդող մշակների երգերից և էլ ո՞վ գիտե, ինչպիսի ձայների խառնուրդից:

Մի իշամեղու թևերն արևի տակ փայլփլեցնելով, բզզալով ներս մտավ, պտույտներ արեց, թևով դիպավ կանթեղի

ապակյա շղթաներին և ուլունքներից բարակ փոշի մաղեց ու տեանելով, որ իր տեղը չի, դժգոհ դուրս թռավ նույն պատուհանից:

Աջ կողմը նստած ատենակալն աչքի տակով հետևեց իշամեղվին, տեսավ կանթեղն ու զարմացած նայեց խորը, հետաքնին հայացքով, կարծես կանթեղից դարձյալ հարցնում էր, թե ինչո՞ւ է կախված:

10 — Անդոնին էլ ապսպարեցի, թե կտանես կտաս, իմ կողմից էլ կասես, թե ես էլի առաջվանն եմ, իմ ջուրն ես, իմ արխովը գնա, արուող հավաքի, արի... էլ պատասխան չըստացա... Հա՛, հոգի ունեմ տալու, սուտը չեմ կարող ասի, Անդոնն ուղիղով ինձ ապսպրել էր, թե թող հույսը կտրի, հեռու ձեր երեսից, եթե ամոթ չլինի ասել, Բաքվա քաղաքում Մարիամը անառակի մինն է...

— Լեզո՞ւդ,— ճշաց և օձից խայթվածի նման ցնցվեց կինը, որ մինչ այդ արցունքները սրբել ու որդուն գրկած, աչքն առանց թարթելու նայում էր գետնին: Քարտուղարը զայրացած նայեց նրան:

20 — Քաղաքացի Տոնական, ջափավորեք ձեր խոսքերը,— հանդիմանեց նախագահը:

— Ես ներողություն, եթե օրենքին ընդունակ չի, չեմ ասի... Հա, դե ես էլ նամուս ունեմ, արհեստ ունեմ, օրվա հացի պակասությունը չեմ քաշում: Շատ միտք արի, ընկերահարևանից խորհուրդ հարցրի: Շնորհակալ եմ, Հոռոմսի հորքուրն էլ ասաց, թե մեղք ես, նրանից էլ քեզ հույս չկա, կարող ես, գլխիդ ճարը տես: Մեղքս ինչ պահեմ, տեսա, որ ստունը առանց կնիկարմատի յուլա չի գնում: Երեխես ուրիշի դուանը, ես էն ծառի տակին, տաք կերակուրի կարոտ... գնացի, ամոթ չլինի ասել, վերին գյուղից մի որբևայրի բերի... է՛հ, լավ, վատ կառավարվում ենք:

30 — Իսկ նա երեխային ի՞նչպես էր նայում,— հարցրեց ատենակալը:

— Թակում էր,— տեղից կանչեց սղան:

— Քեզ խոսք չի հասնում, փոքրիկ,— միշամտեց նախագահը:

— Գե առանց էդ էլ չի լինի... Ինչքան չլինի խորթ մայր

է... Հալալ մորը հարցրեք՝ չի՞ թակել: Ես էլ հո մեռած չեմ...
Տուն գալուց մշտական տեղեկանում էի, թե երեխին ոնց է
պահել... — և ձայնը ցածրացնելով շարունակեց.

— Հարեաններից էլ էի հարցուփորձ անում, թե ձեռքի
կողմանից ո՞նց է, հո հարամ չի... Հա, աչքս երեխի վրան էր:
Ջեքս դատարկ տուն եկած չկամ: Իսկի էլ որ չի եղել, մի խըն-
ձոր էլ տարել եմ, ասել եմ անմեր երեխա է, սիրտն առնեմ:
Ուսումնարան եմ տվել, ասել եմ ժառանգս է, ես կեղտի, թրի-
քի մեջ եմ ապրել, թող նա լավ օրի հասնի...

— Մարիամին դո՞ւ ես կանչել, — հարցրեց նախագահը: 10

— Կանչելը չի եղել, համա սուտ չեմ ասի, եկողով լսել
էի, որ երեխի կարոտը շատ է քաշում... Ասի նա էլ չի գյար
է, էսքան տարի է արանքովն անցել, թող գա տեսնի: Իմ
սիրտն էլ հովութուն կլինի, աչքս ընկնի աչքին, հենց մի
կարճ խոսք ասեմ, թե կշտացա՞ր էս աշխարհից, հիմա ո՞ւմ
օրն է լավ, ի՞նչ թե քոնը... էդպես մի խոսք ասել էի... Եր-
կու շարաթ առաջ, իրիկունը մթնած, տեսնեմ ըճը՞, մի կա-
պոց կոնստուկին դռնովս մտավ... Գուրս անեի, էգուց հա-
զար բան կասեին: Ասի լավն էն է մեռելս իմ հողում թա-
ղեմ, էս կեղտը քուչեն շածեմ... հազար մարդ, հազար խոսք: 20
Երեխան էլ շատ լաց եղավ, ես էլ, ինքն էլ...

— Շոր-բան բերե՞լ է երեխայի համար:

— Գրքեր է բերել, մի ջուխտ շաքմա, ային-օյին:

— Պատկոմի շորեր, — տեղից վրա բերեց տղան: Նա-
խագահը նորից գանգահարեց:

— Էսպես մի օր, երկու օր, — շարունակեց նախագահը: —
Երեխի համար ասում էի համբերեմ: Չորս օր հետո, թե՛ գի-
տես ի՞նչ կա, Տոնո, ես քո տանը մնացողը չեմ, համա երե-
խեն ինձ կպատկանի, եկել եմ տանեմ: Ոնց որ ծանր քարը
գլխիս քցեն... Ո՞նց թե, ես ծառ տնկեմ, պահեմ, շարշար- 30
վեմ, դու գաս պտուղը քաղե՞ս... էդ ո՞ր օրենքին է ընդու-
նակ: Ես մեկ ասի, նա՛՝ երկու. վերջը տունը դառավ կովա-
տեղ: Երեխան էլ չեմ իմանում ոնց հեղափոխվեց... Էսպես
վերջն էլ գործս ընկավ ձեզ: Հիմա իմ հույսը դուք եք, ըն-
կեր դատարան. խղճի մտոք էս գործը քննեք, թե արդար եմ,
թողեք իմ ժառանգը իմ տանը մնա: Միկնույն է, այսուհե-

տև ինձ ոչ ժառանգ կլինի, ոչ մի հուսատեղ: Ես հալից ընկել եմ, շատ ապրեմ տասը տարի: Զնդանին խփելուցն եմ խմանում, որ կռնեբխս ուժը առաջվանը չի:

— Իսկ տան գույքը քաժանե՞լ եք, թե ոչ, — հարցրեց նախագահը:

— Հագի շորերը, ինչ որ հոր տնից բերել էր, բոլորը հետը տարավ... Որ ասես մի մեկս էլ չեմ վերցրել:

— Դո՞ւք ինչ կասեք:

10 Մարիամը նրա հակոտնյան էր: Իզուր չէին ասում, թե նա փեշի տակ երկու Տոնո կպահեր: Նրա դեմքն ավելի առնական էր, քան կանացի: Եվ այդ կնճռոտ, ծալքերով ակոսած երեսի վրա զարմանալի կարմիր էին մսոտ շրթունքները: Նրա մուգ կապույտ աչքերը համապատասխան չէին կոշտացած, զրկանքից ու կարիքից թորշոմած դեմքին:

Կինը հանդարտ մոտեցավ սեղանին: Տղան մոր փեշից բռնած հետևեց նրան: Քարտուղարը աչքերը խոժոռեց տղայի վրա, գլխով նշան արեց, որ հեռանա, բայց նա մնաց տեղը:

— Ես միայն էն կասեմ, որ դրա տանը օր չեմ տեսել: Սոված չեմ եղել, բայց լավ օր էլ չեմ տեսել:

20 Եվ աչքերը գետնին գցած, շարունակեց պատմելը, կարծես խոսում էր ինքն իր հետ:

— Թե ինչից պատահեց բոլորը, ավելորդ է պատմելը: Նա իր ճանապարհով, ես իմ:— Ու հանկարծ դուխը բարձրացրեց, մի վայրկյան նայեց դատավորներին, դառնությամբ ասաց.

— Անցած տարիներս եմ ափսոսում...

Կնոջ կապույտ աչքերը փոքրացան, դառնության ժպիտը ծովոտեց շրթունքները, և մի պահ ակնապիշ նայեց դատարանին, կարծես նրանցից էր պահանջում այն տարիները, որ անիմաստ կորան:

30 -- Մի՞տղ է, որ հիվանդ էիր, գնացի սարից շալակով սառույց բերի՞, — լուսթյունը խախտեց Տոնոն ու նայեց հասարակության, ասես ստուգում էր իր խոսքի ազդեցությունը: Նախագահը զանգահարեց:

— Միտս է, — շարունակեց կինը, — բերել ես, չեմ ուրանում: Բայց դու ինձ պահել ես ոնց որ դափազի դուշը: Ոտս կտպած էր, ինչ արած, որ շաքար ու նաբաթ էիր տալի: Դրա-

ձից էր, որ թողի տունս էլ, երեխաներիս էլ, գլուխս առա կորա: Սիրտս մղկտում էր, որ երեխեքս միտս էի բերում: Համա որ քաշածս էր աչքիս առաջ գալի, ուզում էի էլ հեռու գնամ: Ես իմ կին հալովս, ինչքան մարդ եմ տեսել, ինչեր եմ լսել: Նեղ օրեր շատ եմ քաշել, բայց շնորհակալ եմ ընկերներից, բանվորներից և իմ դասակարգի մարդկանցից: Ինչպես մի կույր մարդու աչքեր բաց անեն, նոր էնպես էլ ես աշխարհքը տեսա: Հիմա Բալխանու կանտորումը ուբորչիք եմ, իմ ժալովնը երկուսիս հերիք է: Ինձ նման կլանիք շատ... Ընկեր դատավոր, էս էլ լավ հայտնի է, թե ինչ թիվ ենք ապրում... Եվ ես ինքս որպես դիլիգատկա լավ եմ իմանում պարտեյնի որոշը էս մասին: Երանի՜ թե էս ազատությունը կանուխ եկած լիներ:

10

Մարիամը շունչ քաշեց: Տոնոն զարմացած և ներքին երկյուղով նայում էր կնոջ առաջը դեմքին: Նա անճանաչելի էր դարձել: Ո՞րտեղից գիտեր այդ խոսքերը: Ինչքան խեղճ խոսեց ինքը... «Տարավ գործը...», մտքում վճռեց նա:

— Հիմա երեխիս ապագայի համար եմ մտածում, — և հաստատակամ մարդու վճռականությամբ Մարիամը մի քայլ և մոտեցավ դատավորների սեղանին:

20

— Ուզում եմ իմ որդին մարդ դառնա, շփվի նոր սերնդի հետը, նստի վեր կենա քաղաքումը, բանվորական շրջանի մասսաներումը: Կարելի է, թե ես լավ չեմ հասկացնում իմ միտքս, մութն եմ ասում, բայց սրտինս էն է, որ իմ տղան հոր ճանապարհով չգնա, էնպես մի գործ բռնի, որ հիշվի, շասեն, թե զուր ապրեց էս նոր ազատությունով: Նրանից բաժին չեմ ուզում, շնորհակալ եմ ինչքան պահել է...

— Ուրեմն դուք ընդունում եք, որ նա խնամել է ձեր որդուն, — ընդհատեց նախագահը:

— Ընդունում եմ, որ պահել է, բայց որ գաղափարի կողմից մութն է: Հիմա էլ ես եմ ուզում նրան պահել: Ես նրան ամենապերվի նվիրված գիտակից մարդը կդարձնեմ: Մի սրան էլ հարցրեք, թե որի մոտ է ուզում... — ցույց տվավ տղային մայրը:

30

— Ես նրա մոտ մնալ չե՛մ, — սերտածի նման կրկնեց տղան:

— Դատարանը որտեղ վճռեց, էնտեղ էլ կմնաս,— սաստեց նախագահը:

— Քուչումը կմնամ, էլ էն տունը չեմ գնա:

— Միլիցիայով կտանենք:

— Կփախենեմ,— ասաց տղան, որ մտք փեշը բաց էր թողել ու առաջացել դեպի սեղանը:

Քարտուղարը զայրույթից անհանգստանում էր: Նա արագ-արագ, ամբողջ իրանով մե՛կ նախագահի կողմն էր դառնում, մե՛կ երեխայի: Ունքերը մե՛կ իրար էին հավաքվում, մե՛կ բացվում:

Կարճատև հարցաքննությունից հետո քարտուղարը հայտարարեց.

— Դատարանը գնում է խորհրդակցության:

— Դե վճռի, որ նրա մտտ մնա՛մ, տես քարը որտեղիցդ կտամ,— կանչեց տղան:

Նախագահն ու ատենակալները իրար նայեցին և անցան մյուս սենյակը:

Ընդմիջումի ժամանակ քարտուղարը ազատություն տալով իր փրփրած զայրույթին, սկսեց Մարիամին հանդիմանել, որ տղային անխրատ է պահել, երես է տվել:

— Էդպես էլ լակո՞տ... դու գիտե՞ս Օրենսփիրքը ինչ է ասում դատարանում անկարգ պահողների մասին...

Քսան բոպեջից հետո նախագահը վճիռը կարդաց:

— Հանուն... ժողդատարանը քննելով գործ № 244 ըստ հայցի քաղ. Մարիամ... ընդդեմ... և ծանոթանալով գործի իրական սովյալների հետ, որոշեց. ի նկատի ունենալով, որ պատասխանող քաղ. Տոնական... տարիներ շարունակ խնամել է երեխային որպես օրինական հայր... որ Մարիամը հեռացել է իր հոժար կամքով... որ չի ապացուցվում անշափահաս որդուն վատ խնամելը և ի նկատի ունենալով քաղ... Տոնական... բարելավ նյութական դրությունը... մերժել Մարիամի հայցն ընդդեմ... և որդուն թողնել հոր ծխի կազմի մեջ: Վճիռը վերջնական է և ենթակա...

— Ենթահակալ եմ,— շքնջաց Տոնոն:

Մայր ու որդի իրար նայեցին: Իսկ քարտուղարը առանց

աչքը ճպելու նայում էր պատին և սպասում, որ դատավորը
ակսի հաջորդ գործի քննությունը:

* * *

Երկու օր անց հրապարակում, փոշոտ ու քրքրված ավ-
տորուսի շուրջը խոնվել էին կանայք, տղամարդիկ, երե-
խաներ: Նրանց մի մասը ճանապարհվում էր, մյուսը՝ հա-
վաքվել էր հրածեշտ տալու:

Շտապ-շտապ խոսում էին, պատվերներ տալիս, ապրս-
պըրում խոսքեր, որ գնացողը տեղ հասնելուց մի ուրիշին
պիտի ասեր, և խոսքը կիսատ թողած հարցնում էր, թե ինչ-
պե՞ս են իրերը դարսել, բան հո չե՞ն մոռացել:

10

Շոֆերը ներս ու դուրս էր անում, հաճախ հարցնում.
«Շեկավ՞ տո էն շան...»: Գնահատականը վերաբերում էր
ուղևորներից մեկին, որ ավտորուսը նստելուց հետո հիշել
էր մի բան և վազել տոն՝ «էս ըոպկիս» վերադառնալու հա-
մար:

— Այ քեզ քաղաքավարություն,— թոնթորաց շոֆերը,—
և ներս մտավ պանդոկը՝ կիսատ թողած քաժակը դատար-
կելու:

Հրածեշտ տվողների մեջ էր և նալբանդ Տոնոն: Աղմու-
կի մեջ նա էլ էր փորձում իր խոսքը լսեցնելու: Երբեմն ոտքը
դնում էր անխվի վրա, բարձրանում, մի բան ասում, ապա նո-
րից իջնում:

20

Ավտորուսում նստել էր Մարիամը, կողքին՝ տղան: Հայտնի
չէ, թե ի՞նչ պատահեց այդ երկու օրում: Միայն Հոռոմսի-
հորքիրն ինքն իր ոտով երեք, թե չորս անգամ գնացել էր
Ֆրանց տուն: Վերջին երեկո պառավը ծիծաղելով որդուն
ասել էր.

— Տեսա՞ր, որ իմ ասածն արին:

— Ո՞նց թե,— զարմացած հարցրել էր տղին, հացի պա-
տառը բերանը:

30

— Է՛է, նրան Մարիամ կասեն,— պատասխանել էր մայ-
րը,— նրա զակոնը քո դավթարում գրված չի...

— Տեղ հասնելուց շուտ խաբարն ուղարկի...

— Դե յալբա հա՛,— կանչեց շոֆերը:

207

Վերջին ուղևորն արդեն տեղավորվել էր: Ավտոբուսը գգուչուֆյամբ հետ գլորվեց: Տոնոն գրպանից հանելով արծաթ դրամը, վազեց հետ ու ձեռքը մեկնեց.

— Մարիամ, երեխին ճանապարհին ծիրան...

Ու վերջին խոսքը չլսվեց ավտոբուսի աղմուկից: Մեքենան գոռոցով զլորվեց փողոցի դարուփոսով, հետքից թողնելով խանձված բենզինի հոտ ու թանձր ծուխ:

Տոնոն կանգնեց, մինչև մեքենան ծովեց դեպի կամուրջը: Մյուսներն էլ մեկ-մեկ ցրվեցին, ամեն մարդ իր տունը, իր գործին:

...Ամիսը մեկ-երկու անգամ փոստի ցրիչը Տոնոյին է հանձնում նույն շափի կապույտ ծրարներ, հասցեն գրված տղայի անվարժ ձեռքով: Հեռավոր քաղաքից Մարիամը նրան ուրախ լուրեր է ուղարկում:

Եվ խոստանում է նրան էլ կանչել, «երբ որ նոր տներումն օթաղն ստանանք...»:

ՀԵՐՈՍ ՆՈՔԱՐԸ

Ուրախ աղմուկով թափվում էր գարնան առաջին անձրևը: Մանր կաթիլները պատուհանի ապակիներին էին զարկում. թմբկահարում թիթեղյա կտուրները, կարծես ավետում էին, որ դաշտերի համար քերել են առատություն և հարուստ բերք:

Տաք ու խոնավ քամին մերթ փրցնում էր կաթիլների մի խորձ և շարտում մինչև պատշգամբի խորքը, մերթ ծառս լինում դեպի մթնկա երկինքը և թափով խփում էլեկտրական լամպերին:

— Չե՞ս մրսի, Գանե՛լ,— ասացի ընկերոջս,— ուզում ես 10
ձեռքս մտնենք...

Հանկարծ շողշողաց արծաթագույն կայծակը, կարծես մեկը լախտ նետեց մթնի մեջ, և ապա ամենհի գոռոցով ամպերը պայթեցին: Առաջին որոտից զրնգացին պատուհանի ապակիները: Կայծակը փայլատակեց մի անգամ էլ, բոցն քնկավ պատուհանի ապակիներին, ես տեսա իմ ընկերոջ գոնատ դեմքը: Նա աչքերը փակել էր, կարծես նիրհում էր:

— Լավ է,— ասաց ու մեղմ ժպտաց:

Համառ մարդ է իմ ընկերը: Ինձ մնում էր վերարկուն նրա ուսերին քցել և պատուհանի փեղկը կիսախուփ անել, որ- 20
պեսզի քամին չհասնի նրան:

— Գիտե՞ս առաջին անձրևը ինձ ինչ է հիշեցնում,— և շսպասելով պատասխանիս, շարունակեց.

— Մի թուրք ընկերոջ: Էսօր ցերեկով էլ մտաբերեցի նրան... Դու էն ասա, թեյը հո չի՞ սառել...

Չեռքս մեկնեցի թեյամանին:

— Լցնե՞մ:

— Լցրու: Գրող մարդ ես, էս պատմությունը լավ լսիր, որ կարողանաս պատմածիս նման գրել, թե չէ...

Նա շարունակեց իր «թե չէ»-ն, որովհետև հայտնի էր ինձ նրա վերաբերմունքն ու պահանջը գրքի հանդեպ: Ընկերս մեկն է նրանցից, որոնք գրքից պահանջում են մերկ ճշմարտություն հասարակ մարդկանց հոգսերի, նրանց առօրյայի և մղած պայքարի մասին:

Մի ժամանակ ես նրան գրքեր էի մատակարարում, ինչպես ինքն էր ասում՝ «շեֆություն էի վերցրել»: Բայց 10 իմ առաջարկած գրքերի մեծ մասը հետ էր վերադարձնում անբավական րոպեհավիմամբ: Միակ գիրքը, որ երկու անգամ կարդացել էր և նույնիսկ եղունգով նշան արել չուսանցքների վրա՝ Զոն Ռիդի «Տասը օրն» էր...

— էլի էսպես նստել էինք դուրսը... Անձրև էր... էս անց շուտ թռան է՝ էն տարիները: Բայց սպասի գլխից պատմեմ: Նորաշենցի Գավիթին ճանաչում ես, չէ՞:

— Զրային բաժնի...

— Հա՛: էն հիմա է էնպես լցվել: էսօր տեսա, ասացի՝ մեր տղա, փորիդ մակարդակը բարձրանում է... Հա՛: էն ժամանակ լղա՛ր, կարճիկ մարդ էր, ճղտոված, մի ոտքին տրեխ, մեկինը տելեֆոնի թելով կապված սապոգ:

Խոր աշունք էր: Արև էր անում ցերեկը, իսկ գիշերները ջրերը սառչում էին: Մի առավոտ ինձ գավհեղկոմից շտապ պահանջեցին: էն ժամանակ հիմիկվա պես շէր, որ մի տեղ ուղարկելուց դիսկուսիա բաց անեն: Հրամանը հրաման էր: Մենք էլ էնպես էինք վարժվել էդ դիսցիպլինին, որ ասես հենց քսան տարվա զինվոր էինք:

Մի ժամ շանցած ճանապարհ փնկա: Գավառն էլ երեք-չորս ամսվա խորհրդայնացած էր: Բայց ծավկներում թաքնը-ված մնում էին մի քանի վաշտապետ մավզերիստներ: Նժդե-հը թառել էր Խուստուփի գլխին: Ղափանի կողմը ֆրոնտը դեռ մնում էր:

Որտեղ էլ գնայինք, գիշեր լիներ թե ցերեկ, հրացանը կար հո՛ կար: էնպես էլ վարժվել էինք էն անտերին, որ քնաթաթախ էլ զարթեցնեին, ձեռքներս մեկնում էինք հրացանին: Եկա հեղկոմ: Արամն էր նախագահ: Մի կարտուզ գըլ-

խին, ճղտաված շինելը ոստերին քցած, կռացել էր թղթերի վրա: Նա հենց սեղանի վրա էլ քնում էր: Ինձ որ տեսավ, թե Դանել, գիտե՞ս ես քեզ ինչու եմ կանչել:

— Որ ասես, կիմանամ...

— Այ էս թոուցիկները պիտի նրանց գյուղերում ցրես: Դու գիտես... էս էլ քեզ մանդատ, որ Ֆրոնտոն անց կենաս... Նորաշենցի Դավիթն էլ քեզ հետ կգա, նա էն կողմերին ծանոթ է:

Աչքս քցեցի թոուցիկների կապոցին:

— Հը՞, ճակատդ քորեցիր. է՞,— հարցրեց Արամը:

— էս ո՞նց տանեմ, որ չփչանա:

— Սումկաների մեջ լցրեք... Դե շուտ: Քեզանից բացի էլ հարմարը չկա:

Մարդ ինչքան էլ ասի, թե պովասանք չի սիրում, չհավատաս: էդ խոսքն ասեց թե չէ, մանդատը ստացա: Երկու ժամից հետո ես ու Դավիթը ճանապարհ ընկանք, ամեն մեկիս շալակին փութ ու կեա ծանրովյուն, չհաշված մեր հրացանները, հացն ու շաքարը, որ ստացել էինք բրիգադի շխառլդից:

Հիմա բարձրանում ենք կարճ ճանապարհով: էնպես ենք որոշել, որ ճանապարհին մեզ ոչ ոք չտեսնի:

Պլանը էդպես էինք քաշել: Դու Զուխտակ քարի ճանապարհով անցած կա՞ս...

— Ո՛չ:— Օգտվելով նրա հարցից ես ուզում էի հիշեցնել, որ թեյը սառել է, բայց նա շարունակեց:

— էդ մի դժվար ճանապարհ է, անասելի դժվար: էն որ հեքիաթի մեջ ասում են յոթ սար ու ձոր,— իսկը մեր ճանապարհն էր: էն էլ ի՞նչ սա՛ր, ինչ ձոր... Արևը թեք էր ընկել, երբ բարձրացանք Բոլոր խութի կատարը: Քարի տակ նստեցինք: Դավիթը թուփոնի ամանը հանեց:— Թողթ շունե՞ս...

— Չէ...

— Բա ո՞նց պիտի լինի մեր հալը... Երկու օրվա ճանապարհ կա...— հարցրեց նա:

Իրար երեսի նայեցինք: Շատ էլ ծխել ենք ուզում, թոքերս փերվում են:

Այս ասելուց փոմ ընկերը բնազդաբար ձեռքը մեկնեց սե-

10

20

30

211

ղանի ծխախոտին, վառեց և խոր ծծեց: Լուցկու լույսի տակ մի վայրկյան փայլփլեց նրա նշաձև աչքերը:

Ու շարունակեց:

— Մի քիչ մնացել էինք, մեկ էլ թե՛ Դանն՛լ:

— Հը՞...

— Ի՞նչ կլինի որ...

— Ի՞նչը:

— Ղրաղից մի քիչ կտրենք... Հո վաժնի թուղթ չի որ, անգրած տեղից եմ ասում է՛...

10

— Ա, հաշված կլինե՛ն... Պատասխանատուր ենք:

— Էլի հաշիվը թող մնա, հո գրածը չեմ ասում... Ղրաղից, մի մատը տեղ:

— Մինը քո սումկից, մինը իմ,— որոշեցի ես: Էն բուպեին թռուցիկի կողքերից բարակ զոռով պոկեցինք սպիտակ թուղթը...

Մխախտոր քերանխա, մեկ էլ աչքս ընկավ Դավիթի ոտքին: Բուժ մատի արանքից արյունը կաթում էր, ճանապարհի սուր քարերը քերծել էին նրա քաց մատները:

— Ասեիր, կարկատել տայինք, էլի՛...

20

— Էնպես վռագեցի, տնաշեն, բանկան էլ մնաց հեղկոմի հայաթը... Ուզում էի մի գրվանքա նավթ տանեի տունը:

Վեր կացանք: Ձորոտ երևացին Քարափորի մարազները, մի քիչ հետո ներքևից լավեց շան հաշոցի ձայն: Խոր աշնան կարճ օրը մթնում էր, սարի ստվերը հասել էր ձորի մյուս կողմը:

— Դավիթ:

— Հե՛...

— Գիշերս ո՞րտեղ մնա՛նք,— հարցրի նրան:

— Տավարածի տղի մոտ շգնա՛նք...

30

Տավարածի տղան Քարափորի լիազորն էր: Նա մեզ հետ մասնակցել էր կռվին, քայց փրենց գյուղի սահմանին հասել էինք թե չէ, մնացել էր գյուղում:

Երկուսով խորհրդակցեցինք և որոշեցինք մթնով մտնել գյուղը և ծեգը շրացված ճանապարհը շարունակել: Որպեսզի տավարածի տղան էլ չիմանար մեր նպատակը, որոշեցինք

գյուղի ծայրի մարագներից մեկում թուուցիկները պահել և էնպես գյուղ մտնել:

Մութը կոխած մոտեցանք գյուղին: Թուուցիկները խոր թաղեցինք դարմանի մեջ, տավարածի տղան կաշի և փոկ բերեց Դավիթի տրեխը կարկատելու, բայց դեպքերն էնպես իրարով անցան, որ մեր թուուցիկները մինչև վերջ էլ մնացին մարագում:

— Անձրևը բարակում է... հը՞,— հարցրեց ընկերս:

— Հանդարտ և՛ գալիս:

— Փակի՛ր, ցրտում է,— խնդրեց նա և ձայնը ցածրաց- 10
նելով շարունակեց:

— Լուսադեմին տրաքոցը սկսվեց... Դուրս թռանք փողոցը, տեսանք հարայն ընկել է: Դիմացի քարափից գնդակները կարկուտի նման թափվում են: Մի սպիտակ ձիավուր դուրս եկավ անտառից, ձին քշեց դեպի ձորը: Մեղրեցի Սմբատի խումբը ձորի բերանը կտրել էր: Դավիթ, թո՛ւ մարագների կողմը: Էն նեղ մաջարին էլ մարագի կապոցը միտքս ընկավ: Տավարածի տղան գլուխը շկորցրեց: Գերեզմանուտը բռնեք,— էնպես գոռաց, որ ես ասեմ՝ նրանք էլ լսեցին: Վեց- 20
յոթ հոգով վազեցինք դեպի գերեզմանուտը: Հենց էդ ըոպեին թոփը սարի հետևից տրաքեց, զվվալով անցկացավ մեր զրխով ու ա՛ռ հա՛ քարափի դռնին: Էնպես պայթեց, որ ասես էն քարափները փուլ եկան, ձորը լցրին: Մի կես սահաթ դաշնակները կորան: Որ թնդանոթը շտրաքեց, ձորում որոտաց, էնպես մի «ջա՛ն» ասինք, կասես սնարյազը մեր սրտիցը թռավ:

Սիրտ արինք: Հիմա Դավիթը կանգնել է, թե՛ եկեք վրա քշենք... Հենց էդ խոսքին, տեսնենք գյուղի վերևից մերոնք կոսզեկուզ քաշանում են, որը տտով, որը ձիու վրա, որն էլ ձին հետևից քաշելով: Դու մի ասա, մենք նահանջում ենք... 30
Հետո իմացանք, որ փրեկոյան դեմ դաշնակները մի քանի տեղից հանկարծ վրա են տվել: Սմբատի խումբն էլ կտրել է նահանջի ճանապարհը:

Ի՞նչ երկարացնեմ, նահանջեցինք: Եվ էն էլ անկանոն... Առհասարակ նահանջը լավ չի, բայց մերը վատից էլ վատ էր: Քարափորից դուրս եկանք թե չէ, տրաքոցը նորից սկսվեց:

Մեր ձիավորների ասորյադը նրանց հետ կռվի է բռնվում, երկու անգամ նրանց գյուղը ձեռք ձեռք է անցնում:

Երեկոյան դեմ գետն անցանք: Մուժ, ցուրտ, ցեխ: Հակառակի պես մի անձրև էլ սկսվել է, թրջվել ենք, ջուր դառել: Կես գիշերին շտաբից հրաման եկավ, որ շարունակենք ճանապարհը, մինչև Բարկուշատի գետերը, այսինքն անցնենք Ադրբեջան:

10 Հենց էն գիշեր էլ տեղեկացանք, որ նահանջել ենք ամբողջ ճակատով, թողել ենք և քաղաքը: Բայց էդ եղավ մեր վերջին նահանջը:

Ընկերս վերարկոսի մեջ ամուր փաթաթվեց, երեսը դարձրեց դեպի փողոցը: Էլեկտրական լամպերը քամուց մեղմ օրորվում էին, և նրանց ցոլքը տարուբեր էր լինում գուրբրում հավաքված անձրևաջրի մեջ: Մի փիչ շունչ առնելուց հետո շարունակեց, երեսը դարձյալ դեպի մուժը, կարծես մի ուրիշի հետ էր խոսում:

— Ամբողջ ձմեռ մնացինք Գետերում: Համարյա ամեն օր սպասում էինք հարձակման հրամանին: Բայց հրամանը ուշանում էր: Երբեմն կցկտուր տեղեկություններ էինք ստանում մեր գյուղերից, գավառից: Մեր ընկերների մի մասը մնացել էին թշնամու թիկունքում: Ոմանք չէին ուզեցել նահանջել, ոմանց էլ կարգադրված էր մնալու գյուղերում: Եղան վախկոտներ, որոնք հրացանը շարտեցին բիլեթի հետ միասին:

20 Գարնան դեմ մի քանի անգամ խաբար ստացանք, որ մեր ընկերներից մի քանիսին սպանել են, ոմանց աքսորել: Մեղանից շատերի ընտանիքներին էին նեղում: Դավիթը հանգիստ չուներ: Քանի՜ անգամ խնդրեց, որ թույլ տան ֆրոնտով անցնի գյուղ փնա և էլի գա: Շատ էր մտածում տանեցիների մասին:

30 Ես էլ էի անհանգիստ: Մեր գյուղի բջիջի կեսից ավելին չէր կարողացել դուրս գա: Ամեն օր ընկերներս աչքիս առաջն էին:

Վերջապես մի օր մեր շտաբը հրաման ստացավ կազմ ու պատրաստ լինելու: Տեղեկացրին, որ հարձակումը շուտով պիտի լինի:

Մեր ոռոտան տեղավորվել էր Սարվանլար գյուղում: Էնպես էլ մեզ ընդունում ու պահում էին, որ շեմ կարող ասել: Թուրքերն էլ էին սոված, բայց շատերը, ինչպես ասում են, եղբոր նման փրենց քաժինը մեզ հետ կիսում էին:

Ես ու Դավիթը մի թուրքի տան էինք ապրում՝ Թեմուրի տանը: Աղքատ, որ անամելի: Տունը վառեիր խանձահոտ շէր լինի: Մեր ձորերում քանի տարի նոքարություն էր արել, հայերեն էնպես էր խոսում, որ շտողը հայից շէր շոկի:

Մենք որ Սարվանլար գնացինք, տեսավ թե շէ, ճանաչեց, փաթաթվեց մեր վզով, լաց եղավ: Հետո էլ աչքերը սրբելով, թե՛ ես էլ եմ բայլշեիկ, ասենք՝ բիլեթ շունիմ: Ճիշտն ասած մենք էլ շատ էինք օգնում նրան: Պայտկն ստանում էինք, կինը մի բան էր եփում, ամբողջ տնով միասին ուտում էինք:

10

Մեր ձորերի շատ մարդկանց ճանաչում էր: Առաջին օրից արդեն նա տեղեկացավ, թե մեր բջիշում ո՞վ կա, ովքեր են մնացել, գյուղում, ո՞վ է դաշնակցականների հետ: Ես մինչև այժմ էլ հիշում եմ նրա խոսքը. երբ մեկ-մեկ թվեցի մեր տղաների անունները, Բեգլարանց Միմոնի անունը տալիս Թեմուրը թե՛ նա կեղծ բայլշեիկ է, չհավատաս: Զարմանալին էն է, որ էդ մարդու ասածը ճիշտ դուրս եկավ, թեև նա Միմոնին կուսակցության մեջ եղած ժամանակ շէր տեսել: Էդ էն Միմոնն է, որ 25 թ. պարզվեց, թե նա դաշնակների ագենտն է:

20

Հա, գաւթ մեր պատմության: Էդ օրը ես տեղեկացել էի, որ շտաբից հրաման կա հարձակվելու: Ուրախ-ուրախ եկա տուն, տեսնեմ Դավիթն ու Թեմուրը թոստանո՞ւմ աշխատում են: Էս Դավիթն էլ ինչպես էր ոգևորված Թեմուրի թոստանով, որ կարծես իր ցանածը ինքը պիտի ուտեր:

Խաբարը երբ նրանց հայտնեցի, Դավիթն ուրախացած լոք-լոք արեց, գիժի նման բահը մի կողմը քցեց, Թեմուրին խոտեց ու վեր-վեր հանեց: Թեմուրը թե՛ ես էլ եմ ձեր հետ գալու: Մենք նրան կանուխ էինք խոսք տվել, մի քանի անգամ էլ մեզ հետ գնացել էր բջիշի ժողովների: Ինչքա՞ն ուրախացավ, երբ խոսք տվինք նրան կուսակցության մեջ անցկացնելու:

20

— Ես ձեզ հասցնեմ ձեր գյուղը, ինձ էնտեղ ընդունեք, որ իմ ճանանչ մարդիկ լսեն նոքար Քեմուրի բայլչևիկ դառնալը:

Եվ ոգևորված շարունակում էր.

— Բիլեթը դնեմ ծոցս, գնամ էն Սիմոն բիժի կտրիհ կանգնեմ, մի բերան ասեմ նախնասֆ հարամզադա, հախվեբան էիր հա՞, մի տես ո՞վ է դեմդ... էղքանն ասեի, աշխարհքի հարատության վրա շէի թքիլ...

10 Սիմոն բեյը վերին գյուղի քոխվան էր, հարուստ և ազդեցիկ մարդ: Վերջին տարին Քեմուրը նրա ոչխարն էր պահել, և բեյը վարձը լրիվ շտալով նրան ձմեռվա ցրտին դուրս էր շպրտել:

— Էնքան ժամանակ, ինչքան քեզ պատմում եմ,— հանկարծ երեմն իմ կողմը դարձրեց ընկերս,— այ էսքան ժամանակ չի քաշել խաբարը բերելուց, երբ մեզ կանչեցին մոտակա գյուղը, որտեղ գտնվում էր շտաբը, մեր պատասխանատու ընկերները, մի խոսքով մեր կենտրոնը:

Բոլորս գնացինք: Քեմուրն էլ եկավ: Ծանապարհին հանաքներ էինք անում, Քեմուրին նշանակում ուստիբունալի նախագահ, Դավիթն էլ կանվոյով բերում է Սիմոն բեյին, տավարածի տղան «կամանդիր» էր, ինչպես ինքն էր ասում այդ օրերին, երբ մենք ժամանակ անցկացնելու համար խոսում էինք վերադարձից հետո մեր անելիքների մասին:

Ժողով եղավ: Ընկեր Արամը խոսեց միջազգային դրության մասին, մեզ ոգևորեց: Խոսեց մի ուսու աղջիկ, նա էլ զազախի շորեր էր հագնում: Ես էլ ուսեբրենից բորիկ եմ, բայց էն ժամանակ բոլորովին խեղճ էի: Լավ չէինք հասկանում, բայց մեր սրտիցն էր խոսում, համ էլ աշք-ունքից երևում էր, որ կրակոտ հեղափոխական է:

30 Մեր մի մասին կանչեցին առանձին, շտաբից մեկը եկավ, թե հարկավոր է, որ մի քանի հոգի էդ գիշեր կամ էգուց անց կենան մեր ու դաշնակների գծով, մտնեն նրանց թիկունքը: Գնացողներին հանձնարարվում էր նախ՝ եթե կարողանալին հետ գալ, տեղեկություններ բերել թշնամու ուժի մասին և ապա մեր պաղպղղնի ընկերներին տեղեկացնել, որ

շուտով հարձակման ենք անցնելու, պատրաստվեն գոնե իրենց փրկելու նահանջող դաշնակիների գազանություններից:

Պահանջվում էր երեք հոգի: Երեքն էլ տարբեր ուղղությամբ պիտի գնային, զանազան շրջաններ: Նրանցից մեկը պիտի գնար ձորերը և պիտի աշխատեր մեր գլուղի ընկերներից մեկնումեկին հանձնելու գաղտնի նամակը: Այդքանն անելուց նա, եթե հաջողացներ, պիտի վերադառնար, եթե ոչ՝ պիտի միանար մերոնց և կամ աշխատեր գլուխը մի կերպ պրծացներ:

Յնացողը գնում էր դեպի մահ: Եթե նրան հաջողվեր 10
թշնամու ֆրոնտից անցնելը, ապա նա իրեն վտանգից դեռ ազատված չէր կարող համարել:

Հայտարարությունից հետո մի քանի լոպե տիրեց խոր լուսթյուն: Ապա զանազան տեղերից վեր կացան, մոտեցան սեղանին: Ես տեսա Դավիթի ռեկորդած աչքերը ու ձեռքը վեր բարձրացրած. սրան-նրան բոթելով, բարձր բղավելով՝ «մեկը ես, ես» առաջ անցավ: Ես էլ մոտեցա սեղանին, տեսնեմ Քեմուրը բոլորից առաջ է կանգնել, գլուխը բաց, վիզը ձգել և աշխատում է նախագահի աչքն ընկնել:

— Քեմուր...

20

— Ես եմ գնալու, ես... — ասաց և բռունցքը զարկեց կրծքին:

— Չէ, դու մնա, տունդ...

— Քեմուր բայլշեիկ չի՞, Քեմուր փափախ չի ծածկո՞ւմ...

Ցանկություն էին հայտնել ութ հոգի: Այդ ութին էլ հավաքեցին առանձին, որպեսզի մեզանից երեքը չոկեն և գնացողներին բացատրեն անելիքը:

Ինչե՞ր արեց, ինչե՞ր արեց Քեմուրը... Նա մի գլուխ կրկնում էր ասածը.

— Քեմուր բայլշեիկ չի՞... Հայ-թուրք մեկ չի՞...

30

էն ընկերը, որին շատրից հանձնարարել էին էդ գործը, փորձեց Քեմուրին հետ ուղարկել: Կհավատա՞ս, եթե ասեմ, որ ոտքերին փաթաթվեց և աղաչեց, աղաչեց, որ իրեն ուղարկեն:

— Քեմուրն ի՞նչ ունի... Մի թատան, ցանկ աբծել եմ: Մի օղուշաղ, մի տղա... Քեմուր լավ ինկեր ունի: Քեմուր

217

դոշաղ սիրտ ունի: Էնպես հայերեն խոսի թեմուր, որ հայի տերտեր չի խոսի... Մի շարաթ տանեմ իմ քերվա Գալուստին տամ թուղթ, էլի էստեղ եմ:

Գալուստը մեր գյուղի պարպուլնի բջիջի ղեկավարն էր: Թեմուրը նրան առանձնապես ճանաչում էր իր նոքար ժամանակից: Մինչև էդ շատ անգամ ենք նրա բերանից բել, որ Գալուստի հերը՝ շաղացպան Անդրին Թեմուրի համար հալաչ հորից ավելի հարազատ է եղել:

10 Եվ ի՞նչ կասես... Երեքից մեկը Թեմուրն եղավ, մյուսը Դավիթը, երրորդն էլ ոտը կաղ մի ջնկեր: Նա էս վերջի տարիներս մահացավ:

Վերադարձին ես ու Դավիթն ինչքան փորձեցինք նրան հետ պահել, շեղավ: Պատմում էինք, թե ի՞նչ դրության մեջ են գյուղերը, դաշնակներն ամեն տեղ լրտեսներ ունեն, կիմանան, որ թուրք է, ավելի կկասկածեն: Վերջապես կինն ու տղան կմնային անօգնական, եթե մի փորձանք պատահեր: Սակայն ոչինչ չազդեց նրա վրա, ո՛չ խնդիր, ո՛չ բացատրություն:

— Ես իմ քերվաների մոտ ղոնաղ եմ գնում... Դժվարը 20 Ֆրոնտ անցնի Թեմուր... ոչխարի հետ շատ եմ ման եկել ձորեր: Ծներն էլ գիտեն, ճանաչում են Թեմուրին:

— Անց կացած պատմություն է,— տեղը շտկվելով ասաց ընկերս,— կարող եմ քեզ ասել: Իմ մտքինս ուրիշ էր: Ես ուրիշ բանից վախ ունեի: Մտածում էի, որ դադտնի գրությունը նա չի կարող հասցնի, կկորցնի և կամ թե մերոնք կկասկածեն և չեն մոտենա նրան,— մի խոսքով ինքն անփորձանք կմնա, որովհետև եթե Ֆրոնտն անցնեք, մեր ձորի գյուղերում նրան ձեռ տվող չէր լինի, թե դրսից՝ եկած մավզերիստ-բանի ձեռք չընկներ,— ինքն անփորձ կմնար, բայց 30 մերոնք ժամանակին տեղյակ չէին լինի և ո՛վ գիտե...

Մրա համար էր կատկածս: Մերոնցից թաքուն մյուս օրը եկա Արամին պատմեցի, նա էլ թե՛ ով որ էլ գնա, ենթակա է նույնսլիսի վտանգի ու փորձանքի:

Թեմուրը գնալու էր ձորերը, Դավիթը՝ Ղափանի կողմերը: Նրանք հենց մեր առաջին դիրքերում արդեն պիտի բաժանվեին, մեկը դեպի հարավ, մյուսը հյուսիս-արևմուտք:

Թեմուրը ճանապարհին մեզ խնդրել էր, որ տանը ոչ ոքի շասենք իրենց հեռանալը: Նա կ' շէր ուզում, որ կինն արտասովի, կ' ուզում էր գաղտնապահ լինի հենց առաջին օրը, ինչպես պատվիրել էին շտաբում:

Մի օր հետո հեռացան Սարվանլարից: Թեմուրը տնեցոց ասել էր, որ գնում է Բարկուշատի կողմն աշխատանքի: Շտաբում խնդրել էինք, և չէին մերժել մի քիչ կրուպա, շաքար, ձեթ, մի հին շինել և ուրիշ մանր իրեր տալու Թեմուրին, որով ընտանիքը պիտի վառավարվի մինչև նրա վերադարձը:

Ես ոչ Գավիթի գնալը տեսա, ոչ մյուս ընկերոջ: Չգիտեմ էլ, թե նրանք ի՞նչ շորով, ի՞նչ պատրվակով անցան սահմանը: Մեզանից էլ գաղտնի պահեցին նրանց գնալը: 10

Թեմուրը գնալուց առաջ տեսնվեց ինձ հետ: Մի փոքրիկ խորքին էին տվել ուսը, մեջը մի քանի կտոր սապոն, ասեղ, թել, կոճակ և չարչու մանրուք: Նա ձորի գյուղերում հարկ եղած դեպքում երևալու էր իբրև չարչի:

Ճիշտն ասած, իր փոխած հագուստով, ուրիշ փափախով, որ ներս մտավ, մի ըուպե ես էլ նրան շճանաչեցի: Մի բան, որ շատ ուրախացրեց Թեմուրին: Ես ուզեցի իմանամ, թե որտեղ է պահել գաղտնի նամակը, որ պիտի հանձներ Գալուստին, բայց Թեմուրը ժպտալով գլուխը թափահարեց: 20

— Կբախշես ինձ, որ էդ շասեմ... ինձ փղպես է հրամայել ինկեր վամանդիրը...

Ես է՛լ չփորձեցի տեղեկանամ, միայն մի քանի անհրաժեշտ խորհուրդներ տվի, թե ո՛ր ճանապարհով կարող է մոտենալ մեր գյուղին, ումնի՛ց շատ կասկածի, որի՛ տանը կարող է գիշերել: Հրաժեշտ տալով խնդրեցի, որ եթե մորս տեսնի, մի կիրպ հասկացնի, որ ողջ եմ:

Դուան մոտ փաթաթվեց վզովս: Ա՛յ էսպես անձրև էր եկել, ինչպես էսօր... Աստղալուս էր: Էնտեղ զարուհը շուտ է բացվում, տաք երկիր է, ինչպես որ մայիսը մտնելուց արդեն զարիները դեղնում են: 30

— Արխային կաց... Տասը օր չի քաշի, Թեմուր էստեղ թաղա խաբարի հետ...

— Ուրեմն, տասը օր էստեղ ենք...

— Վա՛յ,— ասաց ու բերանը փակեց: Երևի այդ մասին նրան շտաբում ասել էին:

— Ուրիշներին չեմ ասի,— սիրտ տվի նրան,— սալա-
մաթ գաս...

Էսպես անձրև էր գալիս էն գիշերը, երբ Թեմուրը գնաց փտուղիներ ոսփին, մի երկա՛ր, շոքանի մահալ ձեռքին:

Տասն օրից ավելի տևեց, մինչև սկսվեց հարձակումը: Մեր զորամասը սպասում էր 84-րդ քրիզադայի առաջ շարժվելուն: Նրանք միզնից հյուսիս էին և ամբողջ ճակատով պիտի
10 խփեին թշնամու գլխավոր ուժին, որպեսզի մենք նահանջի ճանապարհը կտրենք:

Գնացողներից ոչ մի զուր: Առանց էդ էլ վերջին ամիսն, ինչպես ասում են՝ թուշունն իր թևով էլ չէր կարող անցնի նրանց ու մեր գծերի վրայով: Մեր ռազմիկները տեղեկություն էին բերում, որ նոր ուժեր են հավաքվում, ձիավոր խմբեր են երևացել: Մի քանի տեղ խոր խրամատներ են սարքում: Մի խոսքով վերջին կովին էինք պատրաստվում մենք էլ, նրանք էլ:

Մի երեկո հանկարծ հրաման ստացանք, որ մութը
20 չընկած դուրս ենք գալու ուղիղ դեպի ճակատ: Ճաշի մոտերքը Թեմուրի կինը տղայի ձեռքից բռնած եկել էր ինձ մոտ: Չգիտեմ նրան ասող էր եղել, թե ինքն էր կասկածում,— բայց չէր հավատում, որ Թեմուրը գնացել է Բարկուշատ վաստակի: Չէր հավատում, քայց չգիտեր էլ, թե ո՞ւր է գնացել: Նա ինձ մոտ մի անգամ էլ էր եկել, ես նրան հանգստացրել էի, տղային կարտուղ էի տվել, մի մահրամա, մի քիչ շաքար, ալյուր: Թեմուրը գնալուց ինձ հանձնել էր մի կտոր սապոն՝ այն մանրուքից, որ զորամասի պահեստից էին տվել նրան: Հանձնել էր սապոնը, որ իրենց տուն ուղարկեի:

30 — Միմոն բեյից որ հախս առնեմ, գինը կտամ,— ծիծաղելով ասաց նա:

Այդ օրն էլ միամտացրի կնոջը, խոսք տվի անմիջապես Թեմուրից խաբար եթե առնեմ, իմաց տամ: Եվ ես իմ խոստումս կատարեցի:

Մութը չընկած մեր զորամասը ճանապարհվեց: Չիավորները առաջ էին գնացել: Կես գիշերին մեր թնդանոթները

որոտացին մի անգամ: Որոտացին թշնամուն սարսափեց-
նելու համար, և ինչպես արձագանքը ձորից ձոր դրնաց,
էնպես էլ սարսափը գնաց հասավ մինչև նրանց վերջին գին-
վորը:

Լուսը մութից շէր բաժանվել, երբ մենք առաջին գրոհին
գնացինք: Երբեք չեմ մոռանա էդ լուսարացը: Մթնով էինք
գետն անցել, թրջվել էինք, անձրև էր գալիս, ինչպես նահան-
ջի գիշերը, բայց էս արդեն գարնան տաք անձրև էր: Մեր
ոտները խոտերի շաղից թացացել էր, մասրենու թփերը մեզ
վրա ցող էին կաթեցնում, իսկ մենք կուզեկուզ, էս թփի տակ
կուշ գալով, էն քարի տակ պառկելով հա բարձրանում էինք
բլուրները, իջնում, նորից քարձրանում ավելի մեծ բլուր,
մինչև լուսարացին հասանք համարյա թշնամու առաջին
դիրքերին: Էդտեղ էր, որ թնդանոթները կրակ թափեցին, և մենք
առաջին գրոհին դիմեցինք:

Երբեք չեմ մոռանա էդ լուսարացը... Ու մեկ էլ էստեղ
հիշողությունս կտրվում է, ինչպես թրով ճեղքած, էդպես էլ
եղել էր իսկականում: Ես աչքս բաց եմ անում, նայում եմ,
նայում եմ, էս մեր հին տան օճորքն է, մեր երդիկը, երկնքի
կապույտ կտորը և արևի սյունը էդ կապույտ կտորից մինչև
մեր թոնրի քարը: Ես աչքերս ավելի եմ մեծացնում և տես-
նում եմ երդիկի պենձիկը, կոտրած կարասի կարմիր պոռնզը,
որ պղնձի նման արևի տակ շողշողում է:

Ուժ եմ անում և հիշում եմ ձիու կարմիր մուկթը հա-
մարյա կրծքիս և սուր ցավ գլխիս: Էլ ուրիշ ոչինչ: Ես մինչև
հիմա էլ հիշում եմ այդ ձիու մուկթը: Երևի ձիւն էլ չկա, բայց
եթե լինեիր, հազար ձիու մեջ ես Վշոկեի վն ձիուն, որ քշում
էր ինձ վրա:

Էն նույն առավոտ առաջին գրոհին վիրավորվել էի
գլխից: Թրի հարված էի ստացել, ոտնակոխ էի եղել: Մենք
վաղուց էինք հաղթել, երբ ես ուշքի եկա, և աչքիս ընկավ մեր
հին տան կարմիր պենձիկը:

Ինձ ուշաթափ վիճակում բերել էին մեր գյուղը, մեր
տունը: Դուռը ճռում է... Մայրս կռանում է ճակատիս վրա.
Ես ուզում եմ խոսել, բայց չեմ վարողանում: Հետո մի ուրիշն

չ գաբիս, մի տղամարդ շինելն ուսին: Նա ինձ է նայում: Ես լսում եմ նրա հարցը.

— Ո՞նց է, նանի...

Իմ նանը նայում է ինձ: Թևս ժանր է, քայց ես մի քիչ բարձրացնում եմ, և Գալուստը, մեր պաղպղղնի բջի ղեկավարը, սեղմում է իմ ձեռքը:

Իսկ Դավիթը, հետո նա... Թեմուրը, Սարվանդարի փոքրիկ տնակը, տղան՝ գինվորական կարտուզը գլխին:

— Թեմուրը,— շշնջում եմ ես, ձեռքով հարցնում, թե ի՞նչ

10 եղավ:

— Ի՞նչ ասաց,— իրար են հարցնում Գալուստն ու նանը: Եվ էլ շեմ վարողանում իմ հարցը կրկնել:

Ընկերս լսում է: Նա ձեռքը մոտեցնում է ծխատուփին, տրորում է պապիրոսը, տրորում է մատների ծայրով:

— Իսկ Թեմուրը,— անհամբեր հարցնում եմ ես:

— Թեմուրը... Ես քեզ Անդրի ամու պատմածն ասեմ, լսիր... Երկու օրից հետո ես արդեն կարողանում էի ավելի հանգիստ խոսել, այսինքն՝ առանց հոգնելու մի քանի խոսք իրար կապել: Անդրի ամին ներս մտավ, էջի առաջվա նման ավրաթաթախ, պատառոտած քուրքն ուսին:

20

Ջաղացպանը ծոր տալով, թե լուսադեմին մի պարկ գարի էի վրա քցել, շեմքին նստած շախմախը քարին էի տալիս, մեկ էլ տեսնեմ մասրոցի տակից մեկը կուզեկուզ իրեն քցեց շաղացը: Թուփունի քիսան ձեռքիցս ընկավ... Թե՛ Անդրի ամի, վախենաս ոչ, Թեմուրն եմ... Ա Թեմուր, դու ըստե՛ղ... Թե՛ էլ վախտ չի, ինձ մատնող է եղել... էս տրեխի տակի կարկատանը պոկի միջինը շուտ հասցրու Գալուստին: Ասելն ու տրեխի հանելը մին եղավ...

30

Տրեխը քցեց թե չէ, տեսնեմ կամուրջի գլխից մեկը կանչեց՝ կանգնի, շան որդի... Սիմոն բեյի փոքր ախպերը մավզերը ձեռքին վրա քշեց դեպի շաղացի դուռը: Այ քե մատաղ, անմեղ է. խեղճ է... Թե՛ ասա, ինչ էր անում ըստեղ... Ես էլ վախլուփյունից ասի բերել էր տրեխը կարկատեմ, այ հրես, թե հավատում չես՝ օրիսկություն արա... էս, ես, էս էլ նրա տրեխը, էս էլ ինքը:

Տրեխը մեկնեցի իրեն, յուրուղով տվեց քցեց շաղացի

պուճախը: Էն խեղճին թե՛ առաջ ընկի: Էն էլ սփրթնել էր, ալրից սփպտակել: Բեղի տակին ծիծաղեց, թե՛ էնքան տարի դու առուտուր ես արել, հիմա էլ ես եմ շարջի: Աչքերը ուռեց իմ կողմը, ունքերին ձիգ տվեց, ես նոր գլխի ընկա տրեխի հանգամանքը:

Թեմուրին տարան: Կամուրջը անց շէին կացրել, տեսնեմ մեր պառավը քաշանում է դեպի աղբյուրը: Տրեխի թայը առա վազ տվի: Հիմա մնացել եմ երկու կրակի մեջ: Չեմ իմանում տրեխը Գալուստին հասցնեմ, թե էն բեշարի հետե-
վից գնամ:

10

Պառավը տեսավ: Էն խեղճն էլ մնում է կամուրջի գլխին կանգնած: Թեմուրը բարով է տալիս, թե նանի, բա շե՞ս ճանաչում, խեղճը վախլությունից. թե ամաշելուց ձայն չի հանում: Տրեխը տվի պառավին, թե հասցրու մարագը, Գալուստը օխտն օր էր դարմանի մեջ էր քնում, սոսա կարկատանը քանդի, տակը ամանաթ կա: Ես վազ տվի գյուղամեջ, դես ընկա, դեմ ընկա, մի քանի փնձ նման հալ ու ոտից ընկածը հավաքվեցին, գնացինք նրանց մեծավորի մոտ, թե էսպես, էսպես, դա մեր տանը մեծացած, մեր աղ ու հացը կերած տղա է, խեղճ, անշառ, վերջապես գլուխներովս պատասխանատուր ենք, թե դրանում մի մեղք կա,— չէ՛ հո չէ: Չլսեց. թե սրան ես կուղարկեմ ամենամեծի մոտ, թող դադ-
նանի անի:

20

Տարան: Էն խեղճն էլ թե՛ Անդրի ամի դարդ մի անի, թող տանեն: Զուր ուզեց մի գավաթ, պառավն էլ հացը-մացը շինեց ճանապարհի համար: Երկու ձիավորն առաջն արած տարան...

Էն էր, որ տարան: Զիավորները տեղացի շէին, որպեսզի նրանցից իմանային եղելությունը: Նրանք նույն երեկոյան վերադարձել էին և Անդրի ամուն պատասխանել, որ բան-
տարկյալին հանձնել են քաղաքի կամենդանտին:

30

Տասն օրից հետո մերոնք մտել էին գյուղը: Պաղպուղի բջիջն ահագին գործ էր կատարել գաշնակներին թիկունքից խփելու: Գյուղը գրավելուց հետո Գալուստը հարցուփորձ էր արել Թեմուրի մասին, եղել էր քաղաքում,— չկար ու չկար:

223

լուր էր տարածվել, թե ձիավորները նրա խուրջինն ու մանրուքը վերցրել են, նրան բաց թողել:

Մի խոսք՝ եւ արդեն ոտքի վրա էի, ֆրոնտս արդեն վերջացել էր, երբ Գալուստը բերեց Թեմուրի պատառոտված տրեխը, գաղտնի նամակը, որ խնամքով կարված էր եղել կարկատանի տակ:

Նամակն էինք կայդում, երբ մեր գլուղացի որսորդ Սամսոնը մոտեցավ մեզ: Նրա գոտուց երկու աղավնի էր կախված, մի կաքավ:

10 — Վեր ես կացե՞լ... Նանի, աչքդ լույս,— կանչեց մորս:— էս կաքավը խորովի, թող ջանը պնդանա:

Ասաց և կաքավը քցեց մորս գոգնոցը:

— Դանել, մի բան եմ տեսել էսօր ախր...

— Ի՞նչ:

— Մեր էն թղիի ծմակում մի մելիդ կա, ամա ցրիվ տված է, համ էլ կանուխվա բան է...— և շսպասելով մեր հարցին, տրեխը խլեց Գալուստի ձեռքից:

20 — Վա՛յ... էս նրանն է, Գալուստ... Սենց մինն էլ հրեն հագին, մի ոտն էլ բորիկ... Կարմիր էլ կապեր են, իսկը սրա նման... Ջանավարը ցրիվ է տվել, բայց տրեխը դեռ ոտին է...

Գալուստը նայեց աչքերիս:

Ընկերս լռեց: Ապա նայեց ինձ այնպես, փնչպես տարիներ առաջ Գալուստն է նայել նրա աչքերին:

Քիչ հետո պատշգամբից ես տեսա նրա բարձր, մի քիչ կորացած սիլուետը: Նա գնում էր ծանրախոհ մարդու հաստատ քայլերով, և նրա քայլերի ձայնը արձագանքում էր լուռ փողոցում: Իսկ էլեկտրական լամպերը ասես իրենց ցուլքով հիացած, ձեռնվում էին առավակների զվարթ ջրերում:

ՏՊԱՐԱՆԻ «ՊԱՊԱՇԱՆ»

1

Ամենքն էլ ճանաչում էին գրաշար Դանեղին կամ, ինչպես ասում էին՝ «տպարանի պապաշային»։ Քսան տարուց ավելի քանվորութունն էր արել, միշտ տառերի արկղի վրա կռացած, երկաթե վերստակը ձեռքին։

Շարել էր գրքեր, անհամար կոշիք, լրագիր ու ամսաթերթեր։ Տարիների աշխատանքից մի քիչ կռացել էր, գլուխը կրծքին խոնարհել։ Տառերի արճիճը, տպարանի մուրը ծծվել էին մաշկի տակ, և նրա երեսը, ձեռքերը արճիճի գույն էին ստացել։ 10

— Մինչև մահս էսպես մրոտ եմ մնալու... որ մեռա, կսիպտակեմ,— կատակով ասում էր նա տպարանի նոր քանվորներին, ցույց տալով ոսկրոտ մատները։

Պապաշան քիչ էր խոսում։ Նրանից կարգապահ՝ և աշխատասերը տպարանում չկար։ Նույնիսկ տան կենվորները գիտեին նրա կարգապահ լինելը. հենց որ Դանեղը տնից դուրս էր գալիս տպարան գնալու, բակի երեխաներն էլ գիտեին, որ ժամի 8-ից պակաս և 15 րոպե։

Մեր գրաշարը երբեմն ուրախ տրամադրությամբ էր ներս մտնում տպարանի ընդարձակ դահլիճը, ուր շարվեշար տեղավորված էին տառերի արկղերը։ 20

— էսօր պապաշան զվարթ է, — ասում էին գրաշարներն իրար։

Նրա զվարթ լինելը հայտնի էր և նրանից, որ այդ ժամերին ծեր գրաշարը և՛ շարում էր, և՛ լինքն իրեն դնդնում միալար, շատերին անծանոթ մի երգ։

Իսկ եթե պապաշան զվարթ էր, ապա տրեմն ընդմիջումի ժամանակ, երբ գրաշարները հավաքվում են նախաճաշի, նա պատմելու էր հետաքրքիր մի արկած հին «խաղեհինի» կյանքից, իր երիտասարդության օրերի «խաղերից և օյիներհից»:

Բայց ամենից հետաքրքիրը և ծիծաղելին նրա շարած գրքերի վերնագրերի անգիր ասելն էր: Ինչքան գիրք էր շարել, ինչքան բրոշյուր,— բուրի վերնագրերն էլ հիշում էր և կապում իրար այնպես, որ ստացվում էր խառնաշփոթ, բայց 10 և ծիծաղելի նախադասություն:

Այսպես էր տպարանի պապաշան, ընկերասեր, երբեմն լուակյաց, երբեմն զվարթ, բայց առավոտ ութից մինչև ճաշ տառերի արկղի վրա կուացած:

2

Երեկոյան տպարանի կարմիր անկյունը լեփ լեցուն էր:

Ժողովը դեռ չէր սկսվել: Գրաշարները, տպագրիչները, նրանց կանայք խումբ-խումբ խոնվել էին միջանցքում, դահլիճում, պատերի տակ: Մի մեծ խումբ էլ, երկար սեղանի շուրջը հավաքված, տաք-տաք վիճում էր:

20 Նրանց վեճի առարկան տպարանի նոր շենքի առաջ եղած ավագի և փիճի կույտերն էին, որ մնացել էին շենքերը շինելուց հետո: Մի թեթև քամի լինելուց փոշին բաց պատուհանով ներս էր լցվում: Գանգատվում էին մանավանդ առաջին հարկում տեղավորված տպագրիչները:

— Թող փոքրիկ պարտեզ տնկեն, օդը մաքուր կլինի, փոշուց էլ կազատվենք,— կանչում էր տպագրիչներից մեկը, որի կարճահասակ լինելը խանգարում էր նրան սեղանի մոտ նստած ընկերոջը տեսնելու:

— Պետք է մանկապարտեզ էլ բաց անել,— վրա բերեց 30 մի կին,— երեխաները փողոցում են ամբողջ օրը:

Արդեն բավական բազմություն էր հավաքվել: Տեղկոմի նախագահը հայտարարեց, որ «հարյուր տոկոսով» ներկա են, եթե չհաշվենք հանգստյան տուն գնացածներին և հիվանդներին:

— Ուրեմն ժողովը բաց արա, — ձայն տվին մի քանի հոգի:

Տեղկոմի նախագահը զանգ տվեց:

— Շուտ արեք, ընկերներ, նստեք... Մի քիչ նեղվածք է, ոչինչ, Սեդրակ... տեղ տուր՝ պապաշան նստի...

— Արի՛, պապաշա:

— Մեզ մոտ արի... — վանչեցին այս ու այն կողմից:

Գանելը ժպտոն երեսին կոշեց եկավ նստարանի ծայրին: Նա այդ երեկո էլ զվարթ տրամադրություն ուներ:

— Ընկերներ, ընդհանուր ժողովը հայտարարում ենք 10
քացված... խոսքը ընկեր Խաչիկյանինն է, որն որ ձեզ ման-
րամասն կհասկացնի քանի հանգամանքը: Ուրեմն լսողու-
թյուն:

Ընկեր Խաչիկյանը հանձնաժողովի կողմից ուղարկված էր քաղխորհրդի համար տպարանի կուլեկտիվից պատգամավոր ընտրելու:

Նա պարզ և հասկանալի տեքստ պատմել, թե ինչո՞ւ հա-
մար է քաղխորհուրդը, ո՞վքեր են մասնակցում նրա ընտրու-
թյան:

Ընկերոջ զեկուցումից պարզվեց, որ քաղխորհրդի ան- 20
դամը պիտի աշխատի խորհրդի սեկցիաներից մեկն ու մե-
կում: Նա պարտավոր է հաշիվ տալու իր ջնտրողներին, լսե-
լու նրանց պահանջները:

— Չէ՛, մանկապարտեզն ստացանք, — ընդհատեց մեկը:

— Քաղխորհուրդն ունի առողջապահական, կրթական,
կոմունալ, ֆինանսական և նման սեկցիաներ: Պետք է ընտրել
աշխատասեր, գիտակից և բանվորների շահը պաշտպանող
ընկերոջ:

Մի ժամից զեկուցումը վերջացավ: Մոտ կես ժամ էլ տե-
վեց հարցերը: Նախագահը վերջում հայտարարեց. 30

— Այժմս, ընկերներ, տվեք համապատասխան թեկնա-
ծու... Հստ օրենքի մենք պետք է տանք երկու պատգամավոր...
Առարկություն չկա՞, որ մեկը կին լինի...

— Չէ՛, չէ՛... Չկա:

— Ուրեմն տվեք անունները...

— Պապաշայից լավը չկա... — վանչեց մի տպագրիչ:

— Պապաշան, պապաշան... — ձայնակցեցին մյուսները: Բարձրացավ աղմուկ: Մափահարեցին: Մի քանի հոգի ժեր գրաշարի թևերից բռնած մոտեցրին սեղանին:

Պապաշան մի բերան վանշում էր.

— Ուրիշին, ուրիշին... Ես հե՛շ...

— Ուրիշին շենք ուզում,— բղավեցին երիտասարդ գրաշարները:

Դանեչը ինչքան հակառակեց՝ շեղավ ու շեղավ:

— Ընկերներ, ես լավ խոսալ չգիտեմ...

10 — Մեզ գործ անող է պետք... — կանչեցին տպագրիչները:

Եվ միաձայն պապաշան ու վարդապետան հավաքարար Մարիամն ընտրվեցին քաղխորհրդի պատգամավոր...

3

Տպարանի շրջապատը երկու տարում անճանաչելի դարձավ:

Ընտրությունից մի ամիս շանցած, քաղաքի գումակը մաքրեց ավազի և խիճի կույտը: Երիտասարդները մի տոն օր բարակ լորենիներ տնկեցին շենքի շորս բոլորը: Քաղխորհրդի ժողկանոցից տունկեր բերին և զարդարեցին փոքրիկ պարտեզը:

20

Պապաշան օրն ի բուն աշխատում էր: Նրա պահանջով էլեկտրական լույսերը հասցրին խուլ փողոցներից մեկի ծայրը: Նոր շենքի առաջ քաղխորհուրդը ջրի ծորակ սարքեց:

Այժմ գարունը քաջվելուց տերևակալում են լորենիները, ծաղկանոցի ծաղիկները բույր են տալիս բաց պատուհանների ետևն աշխատող հարյուրավոր մարդկանց, որոնք շարում են գրքեր, թերթեր, շարում են, տպում, կազմում:

30

Գարնան հետ գալիս են սարյակները, ճովողյունով ներս մտնում, պտույտներ անում կտուրի տակ: Մառերի տակ ուրախ վազվզում են տպարանի մանկապարտեզի երեխաները:

Փայտե նստարաններ կան ծառերի տակ: Նրանց վրա ընդմիջումի ժամերին հանգստանում են գրաշարները:

Նրանց հետ հանգստանում է և ծերունի Գանելը, որ արդեն կենսաթոշակ է ստանում երկարամյա աշխատանքի համար, էլ չի շարում գիրք ու լրագիր, սակայն ամեն օր գալիս է տպարանի պարտեզը:

Գալիս է, նստում փայտե նստարանին, լսում սարլակների ճովողյունը, մանուկների ուրախ կանչերը և զվարթ երգում է՝ մեղմ, դողդոջ ձայնով...

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

1. ԱԿՈՒՄԲԻ ՍՐԱՀԸ

Շչակը սուլեց հանգստի ժամը:

Գործարանի բաժանմունքներից, ցեխերից և արհեստանոցներից բանվորների խմբերը դիմեցին դեպի ակումբի արահը, որի բաց պատուհաններից մեղմ զուլը ներս էր մտնում և ճռճում սրահի լայնքով կախած կարմիր պլակատները:

10 Մինչև կես գիշեր կոմերիտականների մի խումբ աշխատել էր ներսը: Նրանք պատերից կախել էին հարվածային բրիգադիւրների նկարները, պատրաստել էին բազմաթիվ լողունգներ արդֆինապլանի կատարման, գործալքումների, սոցիալիստական մրցութայան և հարվածայինների մասին:

Զարդարել էին բեմը, որի ճակատին խոշոր տառերով գրել էին՝ «Փառքի և արիության հերոսները»: Ապա թվել էին այն բրիգադները, որոնք կատարել և գերակատարել էին պլանը:

120 Բեմի դիմացը, մուտքի ամբողջ պատը սև շրջանակի մեջ էր առնված: Այստեղ կախված էին նրանց նկարները, որոնք ավելի շատ բրակ էին տալիս, որոնք կեղծ հարվածային էին: Զէին խնայել հարբեցողներին, գործը լքողներին, ծուլերին:

Դռան վերևը «կոմերիտական» Բալոյի նկարն էր: Նա մեքենան թողել է անտեր և վազում է ծտի հետևից, որ ներս է մտել բաց պատուհանից: Նրա կողքին վարպետ Անդրեյի նկարն է. Անդրեյը լողում է օդու վիթխարի շշի մեջ:

— Համա՛ կկատաղի հա՛ վարպետը, — ասաց կոմերիտ-

ներից մեկը, որ նստել էր պատուհանին և անքնութիւնից հոգնած աչքերով նայում էր դուրս, ակումբին մոտեցող խմբերին:

— Տեղն է. թող շիմի,— պատասխանեց մյուսը:

— Այ Անդրեյը,— մատը մեկնեց պատուհանին նստած երիտասարդը: Նրանք մոտեցան պատուհանին: Բայց այդ բո- պեին դուռը բացվեց և մանարանի ցեխից մի խումբ երիտա- սարդ բանվորներ ներս մտան:

Հինգ բոպեից հետո դահլիճում նստելու տեղ չկար: Ուշա- ցողները կանգնում էին դռների մոտ, պատուհանների տակ: Բաց դռնից երևում էին բազմաթիվ գլուխներ: Այդ՝ դուրսը տախտակների կույտի վրա տեղավորվածներն էին: 10

Մինչև ժողովի սկսվելը բանվորները դիտում էին պատե- րից քաշ արած նկարները և պլակատները:

— Այ թե լա՛վ են նախշել հա՛...

— Թամամ Մոսկվա է,— ասաց մի բանվոր, որ նոր էր վերադարձել Մոսկվայից: Նա մասնակցել էր տեքստիլ բան- վորների խորհրդակցութեան:

— Էն մոռթը տես, էն մոռթը,— ծիծաղելով մատը մեկնեց մի ուրիշ բանվոր: Պատից կախել էին մի դիմանկար. երևում էր, որ մարդը գիշերը թունդ հարբել էր, ընկել ցեխի մեջ: Նկարի վրա մտրուռ երեսին դեռ մնում էին ցեխի հետքերը: Մազերը գզգզված էին, գդակը ծուռ: Չախ աչքի տակ նկարել էին ընկույզի շափ ուռուցք: 20

— Մեր վարպետին են լա՛վ թրջել,— վրա բերեց մի ուրի- շը, որ տառերը կապելով վերջացրել էր լողունգի ընթերցումը:

ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՊԱՏՎԻ ԵՎ

ԱՐԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾ

Նախագահի զանգը ընդհատեց սկսված խոսակցութիւնը վարպետ Անդրեյի մասին: Տիրեց խոր լռութիւն: Դուրսը եղածները ավելի մոտեցան պատուհանին: 30

Ժողովն սկսվեց:

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ



ՄՊԻՏԱԿ ԶԻՆ

ԽՅԶԻՐ ԺՈՂ. ԿԻՆՏՐՈՆ. ՀՐԽՏԱ-
ԲԱԿՉՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1929

Ա. Բակունցի «Մպիտակ ձին» պատմվածքների ժողովածուի շապիկը
(Մոսկվա, 1929 թ.)

2. ԶՆԿՈՒՑՈՒՄԸ

Զեկուցում էր մանարանի ցեխի վարիչը:

— Ուրեմն, ընկերներ, այսպիսով հարվածային բրիգադներից դուրս են մնացել միայն 6 հոգի, որ ամբողջ բանվորության շնչին տոկոսն է կազմում: Կարող ենք ասել, ընկերներ, որ մեր ցեխը հարյուր տոկոսով հարվածային է...

Բունն ծափահարություններն ընդհատեցին նրան:

Վերջին շարքերից մի խումբ երիտասարդներ բղավեցին «հուռա...»: Այդ հուժկու կանչը ալիքի նման հասավ մինչև առաջին շարքերը, մինչև բեմը, որի վրա էլ խիտ նստոտել էին: Առաստաղից կախված կարմիր կտորները, որոնց վրա լսողներն էին, մեղմ ծփացին ծափահարությունների որոտից: Կարծես վերևը ճոճվում էին բազմաթիվ կարմիր դրոշներ:

— Բրակի տոկոսը այսպիսով իջել է. և բարձրացել է աշխատանքի արտադրողականութունը: Առաջ ունենում էինք պարապ դազգյահներ, այժմ քսան դազգյահից մեկը պարապ չի մնում: Թույլ տվեք, ընկերներ, բերեմ մի օրինակ մեր գործարանի հարվածայինների աշխատանքից... Խոսքի օրինակ մեր կոմերիտների հարվածային բրիգադները: Զեղ հայտնի է, որ նրանք կոմուն են կազմել և աշխատում են կոմունայի հիմունքով, փոխադարձաբար միմյանց օգնում են, աշխատավարձը բաժանում են հավասար: Եվ ահա, ընկերներ, նրանք արտադրութունը բարձրացրել են 40 տոկոսով...

— Կեցցե՛ն հարվածային կոմերիտները,— բացականչեցին այս ու այն կողմից:

— Բայց, ընկերներ, նրանք սոցյալիստական պայմանագիր են կապել Ալավերդու № 1 հանքի կոմերիտների հարվածային արտելի հետ: Նրանք մեզ ուղարկել են իրենց հաջողությունները: Արտելը 3 հերթի է աշխատում, մերոնք էլ. հունվար և փետրվար ամիսների պլանը նրանք կատարել են 150 տոկոսով, մերոնք այստեղ մի քիչ նահանջել են...

Առաջին շարքում ժպտացին: Կոմերիտներից մեկը, որ հարվածային կոմունի անդամ էր, տեղից բղավեց, թե սխալ են հաշվել իրենց տոկոսը:

— Շուտով, շուտով,— մեզմ առաջարկեց նախագահը,— սպասի էդ հարցն էլ կքննենք...

— Ընկերներ, ես դեռ չվերջացրի... Մարտ ամսում նահանջել է Ալավերդու հարվածային արտելը, իսկ մերոնք նորից են առաջ անցել...

Սահահարովթյունների և բացականչությունների հորդ աղմուկը նորից ընդհատեց գեկուցողի խոսքը:

— Նրանք մարտ ամսվա պլանը վերջացրել են ամսի 25-ին, իսկ մերոնք 15-ին...

10 — Այ թե հա՛,— ուրախ բացականչեց մի ծեր բանվոր: Նրա սիրտը կոտրվել էր, երբ լսել էր գեկուցողի խոսքը մերոնց «նահանջի» մասին.

— Ախր լինելու բան չի, որ Ալավերդին մերոնց առաջը գտրի: Մերոնք տարիջ են, ուրիշ... — շնչաց նա հարևանի սականջին:

Ապա նա գլուխը դարձրեց դեպի ետ: Նրա աչքն ընկավ իր որդու՝ կոմերիտ Վաղոյի քրտինքից և աշխատանքից կարմրած դեմքին: Վաղոն էլ էր հարվածային կոմունիստ մեջ: Որդին շնկատեց հոր հայացքը, նրա լարված ուշադրությունը բեմի կողմն էր:

20 Ինչպիսի՛ հպարտությամբ և ջերմ գորովով էր նայում ծերունի հայրը կոմերիտ որդուն: Ո՛վ գիտի, ինչ մտքեր զարթնեցին նրա հիշողության խորքում:

3. ԼՍԱՐԱՆԸ

Փահլիճի խորքում պատի տակ կուշ էր եկել վարպետ Անդրեյը: Նա միայն մի անգամ իր գլուխը բարձրացրել և նայել էր ծագրանկարին:

— Անպիտաններ, ո՛նց էլ սարքել ե՛ն,— մրթմրթաց քթի տակ:

30 Մինչև նախագահի զանգահարելը՝ կողքին նստողները սուրախ կատակներ էին անում նրա հետ:

— Գիշերը ոնց պիտի մնա բոթլի մեջ...

— Դու առա լես աժդահա շամդաքը ոնց են մտցրել բոթուրը:

— Խմողի մաշտաբ ուրիշ է:

Սակայն վարպետը ոչ մի ուշադրություն չէր դարձնում այդ սրահոսություններին: Գլուխը դժժում էր երեկվա խմած օգուց:

Երբ զեկուցումն սկսվեց, խոսակցությունները դադարեցին, հանգիստ թողին վարպետ Անդրեյին:

Եվ գլուխը դարձրեց դեպի ծաղրանկարը: Նա աչքի պոչով էր դիտում, որպեսզի կողքին նստողները չնկատեն, թե ինքը հետաքրքրվում է պատից կախած նկարով:

Շենց այդ բոպեին նրա ականջին հասավ մանարանի ցեխի վարիչի խոսքը, թե բոլորը հարվածային են հայտարարել իրանց, բացի վեց հոգուց... Նրանք շնչին տոկոս են կազմում...

Ստահահարություններից խառնվել էին նրա մտքերը:

Երբ զեկուցողը շարունակեց իր խոսքը, վարպետը էլի նույն միտքն էր անում. «Չնչին տոկոս են... Ես քսան տարվա վարպետ չնչին եմ, անպետք թելի կտոր»: Նա մտքում մի քանի անգամ կրկնեց «չնչին» խոսքը. և ամեն անգամ կարծես այդ բառը նոր իմաստ էր ստանում:

— էդպես են ասում, որ ես էլ հարբում եմ... Թե չէ ի՞նչու պտի խմեմ,— արդարացրեց ինքն իրեն:

Սակայն մի ներքին ձայն հսկառակը պնդեց և գնալով, այդ ներքին ձայնը հաղթեց: Նա մտաբերեց իր բոլոր ընկերներին: Ահա նրանց մի մասը բեմ է բարձրանում: Նրանք աշխատանքի հերոսներ են, այսօր պիտի պարգևատրեն նրանց:

Ահա Ջանոն, ալեխառն, ինչպես ինքը: Ամիսներ շարունակ դազգյահի վրա կոացած դիտում էր, ռսում նասիրում, կարծես առաջին անգամն էր տեսնում դազգյահը: Ցեխում լուր էին տարածել, որ Ջանոն նոր մաշին է հնարում. առաջինը դարձյալ ինքը ծիծաղեց:

— Քեզանից ինչիններ չի դուրս գա... Արի, արի գնանք.— և ցուցամատը խփեց կոկորդին,— մենք հե՛շ, մեր բանը պրծել է...

Իսկ Ջանոն լուռ նայեց, ապա գլուխը քարշ արեց:

Այդ հայացքի մեջ և՛ հանդիմանություն կար, և՛ զայրույթ:

10

20

30

Սլ Անդրեյը ոտները քարշ տալով գնաց դեպի օդու խա-
նութը:

Իսկապես Ջանոն հնարեց մի նոր դազգյահ, ավելի ճիշտ,
եղածը փոփոխեց, ավելի լավացրեց: Գյուտարար Ջանոյի և
նրա դազգյահի մասին թերթերը գրեցին, փնտենեցին եկան,
վազմվեց հանձնաժողով, քննեցին և որոշեցին, որ Ջանոյի
գյուտը շատ արժեքավոր է:

Ահա Ջանոն նստել է բեմի վրա, մի անկյունում, գլուխը
քարշ, կարծես դարձյալ մտածում է դազգյահի մասին:

10 — Որտեղից որտե՛ղ... դառնությամբ մտածեց Անդրե-
յը, — միասին եկանք գործարան... Այժմ նա աշխատանքի հե-
րոս է, իսկ ես՝ չնչին տոկոս...

4. ՎԱՐՊԵՏ ԱՆԴՐԵՅԸ

Ջեկուցումը վերջացել էր:

Նախագահը կարդում էր առաջին հարվածային բրիգադի
կատարած աշխատանքը և ֆարկոսի որոշումը նրանց պար-
զեատրելու մասին:

— Կեցցեն առաջին հարվածայինները, — աղմուկից և
ժափահարություններից թնդաց դահլիճը: Բեմի վրա պատի
20 նման կանգնել են առաջին բրիգադի հարվածայինները, դահ-
լիճը ծափահարում էր, իսկ նրանք գլխարկները թևի տակ,
կանփնել էին. ոմանք հուղմունքից կարմրել էին, ոմանք գլուխ-
ները մի կողմի վրա դարձրել: Նախկին կարմիր բանակային
Սեթը ուղիղ ձգվել էր, փնչպես զորահանդեսի ժամանակ:

Վարպետ Անդրեյի հետ մի զարմանալի բան կատարվեց:
Սրբ առաջին ծափերը պայթեցին, նա տեղից կիսով շափ
բարձրացավ, ինքն էլ սկսեց ծափահարել նախ թույլ, ապա
ուժգին: Ծափի աղմուկը մեղմանում էր, բայց նրա բազուկները
չէին հոգնում: Նրա ծափից վարակվում էին և մյուսները, նո-
30 րից էր թնդում աղմուկը:

Ապա հոգնած տեղը նստեց: Ջեոքերը կարմրել էին ու
գողում էին:

Կարգացին գյուտարար Ջանոյի անունը: Նորից ծափեր,
նորից աղմուկ:

Վարպետ Անդրեյը ոգևորված գդակը վեր շարտեց: Մի քանիսը հետևեցին նրա օրինակին:

Այդ էլ դուր եկավ վարպետ Անդրեյին: Ինքը շարունակում էր ծափահարելը, և ծափերի մեղմացած թափը նորից էր թնդում: Ինքը գլխարկը ճոճեց, մյուսները հետևեցին: Մի մեղմ ուրախություն ծփաց ներսը, ինչպես ծովի թեթև կոհակները:

Չէ՛, նա էլ չպիտի խմի. նա շի ուզում, որ իրեն համարեն աշնչին տոկոս»: Նա պտի գնա մյուսների հետ հավասար քայլերով, նա հետ չի մնա իր ընկերներից:

Վարպետ Անդրեյը աչքերը կիսախուփ արեց. կարծես ննջում էր: Նա մտքի առաջ հետ էր տալիս իր անցած տարիների գիրքը, կարծես փնտրում նշանավոր մի էջ, մի գլուխ, մի դեպք, որից հետո տարիները գնացին ուրիշ ճանապարհով:

Գտավ: Այդ դեպքը գտավ:

Սիրտը դառնությամբ էր լցված, գայրույթը նրան մղեց դեպի օդու խանութը: Հետո ավելի հաճախ էր գնում: Եվ վարժվեց: Վարպետը գլուխը վեր հանեց: Արդեն ցրվում էին, ժողովրդ վերջացել էր:

Վարպետը գլխարկը թեփ տակ դուրս եկավ: Դռան մոտ նա հանդիպեց Զանոյին: Վարպետը մի րոպե կանգնեց. Զանոն ժպտաց:

Եվ հին ընկերները լուռ սեղմեցին իրար ձեռք:

Վարպետ Անդրեյը տեսավ մանարանի ցեխի վարիչին: Քայլերը արագացրեց, հասավ նրան: Վարիչը բարևեց.

— Հը, վարպե՛տ...

— Ես... ինձ էլ գրեք հարվածային... Ես շեմ ուզում,— քայց նրա ձայնը դողաց և շկարողացավ խոսքը շարունակել և ասել, որ շի ուզում դուրս մնալ շարքերից:

— Ես այդպես էլ գիտեի, վարպե՛տ...

Գործարանի սուլիչները ճշացին, աշխատանքն սկսվեց:

10

20

30

ԿՈՄՍՈՄՈՒԼԻ ՓՈԿԵՐՈՎ

1

Նախագահը գրութիւնը կարդաց, գլուխը դարձրեց դեպի պատուհանը, մի բոպե նայեց,— կարծես առաջին անգամն էր տեսնում ձյունի հորդ փաթիլները և ապա նորից աչքերը հանեց թղթին:

Ներս մտաւ կատարածու Ենոքը և շեմքում ոտքերը պինդ դոփեց՝ ձյունը թափվելու համար:

— Զի՛ վերջանում, էլի՛...— տրտնջաց Ենոքը և սառած **10** ձեռքերով գրկեց վառարանի տաք խողովակը,— էսքան էլ ձյո՞ւն...

Ենոքի տրտունջը տեղին էր: Զորրորդ օրն էր, որ թափվում էր ձյունը և շէր դադարում: Սար ու ձոր ծածկվել էին ձյունի հաստ շերտով, տները կփսով շափ թաղվել էին ձյունի մեջ: Ո՛չ ճանապարհ էր երևում, ո՛չ առու, ո՛չ ձորակ:

— Ի՞նչպես անենք, Ենոք,— հարցրեց նախագահը: Կատարածուն հանկարծակիի եկավ և ապա գլխի ընկնելով, որ հարցը ձյունի մասին է, վառարանի խողովակը պինդ գրկելով ասաց.

— Փետը բերենք լցնենք, թող գիլ տաքանա, մենք էլ **20** շորս բոլորը նստենք...

— Բա սա՞,— և թուղթը մեկնեց:

Ենոքը մի քայլ մոտեցավ: Նա վախեցավ, նրա մտքովն անցավ, որ երևի շտապ գրութիւնն է ստացվել, և պատասխանն ինքը պիտի տանի այդ ցուրտ օրն:

— էդ ի՞նչ է,— կամաց հարցրեց Ենոքը:

— Երկաթուղու կայարանիցն են գրել,— դանդաղ պա-

տասխանեց նախափահր և կարծես միաժամանակ մտածում էր, թե ինչպես ելքը գտնի.— մաշիները եկել են, սերմազտիչները... Չորս օր է ստացնցումն ջնկած են, որ չբերենք, համ պենիա ենք տանելու, համ էլ մեր գործն է ետ ընկնում:

Ծնոքը թեթև շունչ փառեց: Ծշմարիտ է՝ գործն ավելի մեծ էր, բայց անմիջապես իրեն չէր վերաբերվում: Ու նա կուսցավ, մի քանի կտոր փայտ էլ քցեց վառարանը:

— Բա՛, Ծնոք... էսպես քաներ...

— Պենի հարցը դժվար է, մնացածը հեշ...

Նախափահր վրդովվեց.

— Ո՞նց թե հեշ:

— Ասում եմ՝ մաշին է, ճանապարհը վրացվի, կբերենք...

— Էն ժամանակ գարուն կլինի, վարը կընկնի, էլ երբ պիտի սերմացուն գտենք, Ծնոք... էսօր էգուց պիտի բերվի մաշիները:

— Էս եղանակի՞ն,— զարմացած հարցրեց Ծնոքը:

— Հա՛, հենց էս եղանակին,— կտրուկ պատասխանեց նախափահր:

Եվ, քիչ լռելուց հետո, ձայնը ցածրացնելով ասաց.

— Գնա կանչի՛ր Սմբատին... Եթե լեռներ տանն է, նրան էլ ձայն տուր:

Կատարածուն փայտը վերցրեց և դժկամ հեռացավ տաք ահնյակից:

2

Իսկ ձյունը հա գալիս էր: Չմեռվա այն ժամանակն էր, երբ ինչպես ասում են, օձը բնոտ կսառչի:

Բայց ինչպես էլ չլիներ, մեքենաները պիտի կայարանից բերեին, թե չէ՝ սերմազտման պլանը չէր կատարվի, ուրեմն և սերմացուն հնար չէր լինի ժամանակին ախտահանելու: Գարունը պիտի քացվեր, և իսկույն սկսվելու էր վարը, ժամանակ չէր լինելու սերմացուն գտելու:

Ահա ինչու, երբ ներս մտավ կոմսոմոլի բջիջի քարտուղար Սմբատը, և նախափահր նրան հայտնեց գրոսթյան մասին, նա մի րոպե մտածելուց հետո՝ ասաց.

— Պետք է բերենք...

Ծնոքը զարմանքից գլուխը քարձրացրեց: Նրա դեմքը արտահայտում էր և՛ կասկած, և՛ զարմանք: Կարծես ուզում էր ասել՝ գժվե՞լ են նրանք, որ շեն նայում եղանակին: Բայց այդ ժամանակ ներս մտավ կեռնը. ու Ծնոքը՝ իր պարտականությունը կատարած համարելով՝ գերադասեց շխառնվել նրանց խոսակցությանը:

— Լեոն, կոլխոզի համար էլ է,— ասաց նախագահը և գրությունը մեկնեց նրան: Լեոնը կարդաց, թուղթը դրեց սեղանին և ճակատը տրորելով պատասխանեց.

— էդպես է... Ճիշտ է, քայց...

— էլ բայց-մայց չկա,— իսկույն վրա բերեց նախագահը:

Լեոնը նեղացած նայեց նրա կողմը:

— էդպես ես միշտ. շես թողնում խոսքս վերջացնեմ...

Կոլեկտիվի նախագահը դանդաղ էր խոսում: Ինչքան էլ դիմացինը արագախոս լիներ, մտքերը կարճ ու կտրուկ ասեր, նա ծնոտը պիտի շարժեր դանդաղ:

— Դե ասա, հը՞:

20 — Ասելս էն է, որ ճիշտ է՝ եղանակն էսպես է, ինչպես որ ներկայումս է, բայց որ խոր մտածում եմ, տեսնում եմ, որ պիտի սերմազտիչը բերվի:

— Դե ասա, էլի՞,— անհամբեր կրկնեց նախագահը,— էլ ինչ ես սարով, քարով ջնկնիլ:

— Ինչպե՞ս... — և լռեց,— պետք է մի հնար մտածենք, էլի՞...

Սմբատը տեղից վեր կացավ:

— Հնար ես ասեմ... Սահնակի պես բան կշինենք, տանենք վրան պնդացնենք, քաշ տանք...

30 — Եզննրո՞վ... — հարցրեց նախագահը:

— Սար ու ձոր ձյունով լցված՝ եզ կրանի՞... Բոլորը կխրվեն, ոտները սոթ կտա, կջարդվեն հեյվանները,— ավելացրեց Լեոնը:

Ծնոքը, որ մինչ այդ զարմանքով և հետաքրքրությամբ էր լսում նրանց խոսակցությունը, փայտը ձեռքից վայր գցեց,

երբ լսեց Սմբատի առաջարկը սերմազտիչները կայարանից գյուղ քերելու մասին:

Ամենից անհավատալիւն այդ էր:

3

Կայարանի ծառայողներն էլ զարմացան, երբ լույսը նոր բացված ներս մտաւ գլուղացիների մի խումբ: Նրանց մեծ մասը կլուված էր բրդե վերարկուների մեջ, գլուխը փաթաթած տաք շալով. երևում էին միայն աչքերն ու քթի հետևի մասը: Տաք գոլորշին սառել և փոքրիկ ասեղներ էր դարձել շալից կախված: Ոմանք ուղտի բրդից փափուկ ձեռնոցներ ունեին: 10
Նրանց մեծ մասը երիտասարդներ էին, միայն մի քանի հասակավորներ կային, որոնց թվում մեկը մի երկար ձող ձեռքին քայլում էր խմբի առջևից, ձողը խրում այս ու այնտեղ՝ սառած ձյունի հաստությունը և խորությունը որոշելու:

Հենց այդպես էլ ձյունաթաթախ խմբով ներս մտան հերթապահի սենյակը:

Սմբատը մեկնեց գրությունը: Հերթապահը կարդաց, տեղից վեր կացավ, ու գնացին կայարանի հետևը, որտեղ ծածկոցի տակ, մի անկյունում փայտե վանդակի մեջ նրանց սերմազտիչներն էին դարսված: Գիշերվա բուքը առատ ձյուն էր 10
լցրել մեքենաների ներսը:

— Էլ մի՛ կանգնեք,— ասաց մեկը, որի գլխին մաշված կոմունարկա էր.— ձյունը մաքրե՛ք... կտաքանաք:

Կոմերիտականների մի խումբ մոտեցավ մեքենաներին: Կես ժամ շանցած մեքենաները հանեցին փայտե վանդակից, մաքրեցին և պարաններով պինդ կապեցին հենց այն տախտակներին, որոնցից շինված էր վանդակը:

Նրանք կառուցել էին սահնակի պես մի բան:

— Լեռն, ա՛ռ փայտը,— և կոմունարկայով մարդը, որ ինքը նախապահն էր, փայտը մեկնեց նրան.— դու կգնաս առջևից... Տես որ փափուկ տեղեր չլինեն, շխրվենք: Սմբա՛տ, դու վերջին մեքենայի հետ կլինես:— Ապա դառնալով մյուսներին՝ ուրախ բացականչեց,— տաքանանք, հը՛... Դե՛, ձեզ տեսնեմ, կոմսոմոլի անունը գետնով շտաք... 30

Ու փոկերը, պարանները հազցրին մեքենայի ոտքերից, աահնակի տախտակներից, շարվեցին մեքենայի կողքին, իրենց տակերին քաշելով փոկի ծայրերը:

— Մե՛կ, երկո՛ւ, երե՛ք...

Ճռուցին տախտակները, սառած ձյունը, Քափորը շարվեց դեպի գյուղը ափտակ թլուրների լանջով, ձյունով լցված ձորակների վրայով:

Կայարանի հերթապահը պերրոնի վրա կանգնած դիտում էր նրանց: Քանի հեռանում, այնքան փոքրանում էին: Կարծես մրջյունների երկու խումբ էր, որ գլորելով իրենց բունն էին տանում մի վիթխարի տրա:

Քամին դադարել էր: Ծթե ամպերը չլինեին, սառը փայլով կշողար ձմռան ցուրտ արևը:

— Կտանե՛ն,— ուրախացավ հերթապահը, երբ առաջին մեքենան հասավ բլուրի գագաթը,— նրանց մերը շմեռնի... հերո՛ւ են, հերո՛ւ...

Մեքենաները շքացան նրա աչքից:

Նրանք բլուրից սահելով վրան սարահարթի վրա, որից այն կողմը սկսվում էր նոր վերելք, նոր բլուրներ, ապա միայն 20 պիտի երևար գյուղը:

Քրտինք էր կաթում երիտասարդ ճակատներից: Ամեն անգամ, երբ ճիգ էին անում, գորրոշին քուլաներով էր բարձրանում: Ոմանք արձակել էին վերարկուների կոճակները, ավելի հեշտ շնչելու համար:

Երկրորդ մեքենան առաջինից հետ չէր մնում: Երբեմն բոլորը միանում էին և մեկ-մեկ անցկացնում նեղ տեղերից, ոմանք քաշում էին, խակ մնացածները հրում ձեռքերով, ուսով, կրծքով:

Քարմ ձյունի վրա մարդկային բազմաթիվ ոտնատեղերի հետ մնում էին մեքենաների հետքերը՝ իբրև լայն ակոսներ: Առաջին անգամն էր մեքենան բարձրանում դեպի գյուղը:

4

Բազմություն էր հավաքվել ծածկոցի տակ, որտեղ տեղավորել էին մեքենաները: Գյուղացիներից շատերը առաջին ան-

գամն էին տեսնում սերմազտիչը: Ճիշտ է, գյուղին շհասած, երբ տեղեկացրել էին, որ մեքենաները կոմսոմոլները բերում են, շատերն էին գնացել առաջ և օգնել բերելու, բայց հրելու ժամանակ նրանք լավ չէին դիտել մեքենաները:

— Ապրի Սմբատը, — ասաց մի կին, — կոնկրետ կդինջանա...

— էլ խախալ չկա՞... Օրը հարյուր փոսթ էլ լցնես, կմաքրի...

— Հարյուր փոսթ, — ծոր սվեց կինը:

Ծրբեմն մեքենաներին էր մոտենում կոմերիտականներից 10 որևէ մեկը: Նա հաճույքով էր պատասխանում հարևանների հարցերին, թե ինչպես բերեցին մեքենան, որ շուտ շեկավ, ձյունը շատ էր: Նրանք իրար հետ վիճում էին, թե քանի փոսթ կբերին մեքենան. սակայն վիճողների երկու կողմն էլ գովում էին կոմերիտականների հերոսական աշխատանքը:

— Զորամա մեր կոմսոմոլը...

Իսկ գյուղխորհրդի գրասենյակում Սմբատը, նախագահը, կեռնը և մի քանի երիտասարդներ հաշվում էին սերմացուն, որոշում սերմազտման հերթերը, նշանակում հսկիչներ, որոնց պատասխանատվությամբ օր ու գիշեր պիտի աշխատեին մեքենաները: 20

Ծնոթը թեժացնում էր վառարանը և նրանց լսում խոր հավատով:

«ԸՆԿԵՐ ԳԱԼՈՒՍՏԸ»

Մինչև նախագահը դաշտից վերադառնար խորհրդի գրասենյակը, էյվազանց Սահակը առաջարկեց գնալ իրենց տուն:

— Ես Մուխանի երիշը գիտեմ... Երկու ահաթից ամռախ հասնի:

Սահակին ես վաղուց գիտեմ: Խորհրդայնացուսից հետո, երբ առաջին անգամ նրանց գյուղը վիկի սերմ տարանք փորձելու, ոչ ոք չմոտեցավ: Միայն Սահակը սիրտ արեց, իր հողամասը տվեց: Սիրտ արեց և իր լայն սրտի շափ էլ առատ բերք հավաքեց: Հիմա էդ խոտը նրանց գյուղում տարածվել է. շատերը վիկ չեն ասում, այլ էյվազանց Սահակի խոտ:

Նա եղել է Գերմանիայում գերի: Շատ քաներ է տեսել, շատ երկրներ ոտնատակ տվել, տեսել է, թե ուրիշ կողմերում ինչպես են ապրում գյուղացիները և հենց վերադարձել է իրենց գյուղը, հիասթափվել է:

Բայց թողնենք, որ ինքն ասի էն խոսքերը, ինչ որ ասել է գյուղ գալու առաջին տարին:

— Մեր հողերը ոսկի են, մենք չենք հատկանում նրանց լեզուն: Մի սոմար որ սերմում ենք, հինգը հավաքում, էդ հո հաշվում ենք առատութուն, իսկ եթե բանը հաջողվեց, և վեց սոմար ստացանք, քերթը գլխակեր է, սրա մեջ փորձանք կա, կոփվ, պատերազմ պիտի լինի: Այ թե ինչ են ասում, եթե մի քիչ լավ բերք են ստանում: Ինչո՞ւ, ախպեր. ինչո՞ւ իմ տեսած տեղերը սոմարին տասն էլ են ստանում, տասնհինգ էլ... Մեր գյուղում որ մաճկալին հարցնես, կասի, թե հողի լեզուն էնպես է հատկանում, որ էլ դենը չկա: Բայց եկ տես, որ նա

հողը վարում է էնպես, ինչպես իր պապերը և նրանց պապերը:

էսպես խոսքեր էր ասել Սահակը գյուղացիներին. որը համաձայնել էր նրան, որը կասկածել, մեծ մասն էլ ասել՝ թե Սահակի ասածը գերմանու հողում կլինի, մերում՝ ոչ:

— Ինչո՞ւ,— քարկանում էր Սահակը:

— Էնպես: էդ էլ մեր երկրի շնորհքն է... Մինչև հիմա, որ շենք տեսել, այսուհետ էլ, Սահակ, տեսնենք սավետական կառավարությունը ինչ շնորհք ցույց կտա:

էդ տարին էլ տարել էի վիկի սերմը: Հետո երկու շաբաթացան ուղարկեցինք, վերջը՝ սերմզտիչը: էս մեքենաները տեղ արին, որ տրակտոր մտնի: 10

Սահակին էդ առիթով էի ճանաչել: Մենք իրար հասկանում էինք: Մի քանի անգամ նա էր եկել ինձ մոտ. էն կողմերը չինելուց ես աշխատում էի ինձ գցել էն գյուղը, Սահակին տեսնել: Երբեմն հուսահատվում էր, դառնացած զանգատվում, թե բան չի դուրս գալու, էսպես խավար ապրել են, էդպես էլ խավարի մեջ վկորշեն:

Նրան համոզում էի, հուսադրում: էն առաջին տարիները գյուղում դեռ բջիջ չկար: Միակ կուսակցականը Միխայիլն էր, որ և՛ նախագահ էր, և՛ հողբաժին, և՛ զագսի գործերն էր տանում, և՛ սերմացու բաժանում: 20

Մի տարի հետո նորերն եկան, հոտաղ, քատրակ երիտասարդներ մտան կոմսոմոլի մեջ, բջիջը մեծացավ, աշխատանքները շատացան: էդ տարիներում մի կարգին դպրոց շինեցին, քանդված, խափան ճանապարհներ կային՝ նորոգեցին, մեծացրին: Ամեն տարի գյուղ գնալուց նկատում էի, որ մի բան էլ են ավելացրել, նոր անրունդը կամաց կամաց դուրս էր գալիս և իրեն հետ տանում գյուղի ամենալավ տարրը դեպի նոր կյանք, նոր գյուղ: 30

Երեք տարի առաջ մի փոքրիկ կոլեկտիվ էին կազմել: Սահակն էլ էր մեջը: Ինչպես ասում են՝ իրար բռնելով, իրար օգնելով, դժվարություններ հաղթելով, ուժեղ աշխատանք էին տանում նոր կյանք, կոլեկտիվ կյանք ստեղծելու:

Վերջի տարիները Սահակին շէի տեսել: Հեռվից հեռու լսում էի նրանց աշխատանքը, երբեմն էլ «Մաճկալում»

պատահում էի թղթակցությունների, գրված նրանց գյուղից, նրանց կուեկտիվից:

էս գարնանը գործս ընկավ նրանց կողմերը: Խորհուրդի դռան առաջ կանգնել էի, մեկ էլ տեսնեմ ներքի ճանապարհով դեպի փնձ է գալիս Սահակը: Քեֆ հալ հարցրեց և տեղեկանալով, որ կատարածուն ուղարկել եմ նախագահի ետևից, նեղացավ, որ իրենց տունը չեմ գնացել:

— Ինչ է, կուեկտիվ ենք մտել, գուցե կարծես, թե ղոնաղ չենք ընդունում... Արի՛, արի գնանք հիմա առաջվանից

10 սրտաբաց կընդունեմ:

Նրա տունը գյուղի ծայրին է: Վերջին տարիները նոր տնատեղեր այդ մասում են բաժանել: Արդեն կառուցված են 10—20 նոր տուն, պլանով, լայն փողոցի երկու կողմը:

Մենք ներս մտանք սրահը: Գերանի վրա նրա երեխան նստել էր, գլուխը կախել գրքի վրա: Մեզ տեսնելուց նա վեր կացավ, ապա տեղը փոխեց և շարունակեց ընթերցանությունը: Սահակի վիճը արևի տակ շորացնում էր մանր, դեղին սերմեր, որ փռել էր առանձին թերթերի վրա:

— էս ի՞նչ է, Սահակ,— զարմացած հարցրի ես: Սերմերն անծանոթ էին:

— Սա դեղին յոնջի սերմեր են: Խալիսը ցանում է, յոնջից շատ քերք ստանում, մեր տեղը սրան ասում են իշու յոնջա: Հերու սերմացու եմ հավաքել: էս տարի ապառաժ տեղերը պիտի ցանեմ... լավ խոտ կլինի՛,— և մատների մեջ տրորեց տաքացած սերմերը:

— Սահակ, էլի էն բաները չես մոռացե՞լ...— հարցրի ես: «էն բաները» օտար երկրներում տեսած արդյունավետ բույսերն ու մեքենաներն էին:

— «էն բաների» ժամանակը հենց հիմա է... էնպես խոտեր ցանի կուեկտիվը: էս ապառաժները դարձնի ծաղկած դրախտ:

— Հա՛, դու էդպես ասա... Մատներս տարավ էս անտեղը,— դժգոհեց և ինը, մեկնելով ձեռքը, որի մատները ծակծակել էր շոր ցողունը:

— Անխե՛լք, դու էլ փալասի մեջ փաթաթած տրորի,—
պատասխանեց Սահակը,— վե՛ր, վեր բան-ման շինի...

— Սահակ, կուշանանք...

— Մովսանի երիշը ես գիտեմ... Արևը չթեքվի, չի գա-
լու: էն վերի հանդում նոր հողեր են ձևում:— Եվ կոճղը տակը
դնելով, շարունակեց կնոջ թերի աշխատանքը:

— Իզուր աշխատանք է, քայց փնչ արած...

— Ի՞նչը,— հարցրի ես: Կարծեցի, թե խոսքը սերմերի
մասին է:

— Մովսանի արածը: Կուլեկտիվը վերի հանդումն էլ հող 10
ունի, արանքումը անհատական հողեր են... Հիմա նրանց ու-
րիշ տեղ են տալիս... Ասա վաղ թե տշ մտնելու ենք կուլեկ-
տիվ, էլ փնչո՛ւ զուր աշխատանք եք անել տալիս:

Սահակը լռեց: Նա ճաքճքած, եղունգները ճոթած մատ-
ներով մեկ-մեկ ջոկում, դեն էր գցում մոլախոտի փշոտ սեր-
մերը: Ապա գլուխը քարձրացնելով նայեց ինձ.

— Այ, էսպես է հիմա... Զոկում ենք, խախալում...
դժվար է, ինչ արած... Հեշտ բան չկա: Հազար տարվա տե-
սածը շուռ է գալիս, փոխվում, իհարկե, արտեները մի քիչ
կպղտորվի: Բայց էդ էլ իմացիր, որ ջուրը մինչև չպղտորվի, 20
չի պարզվի: Հիմա ջուրը զուլալվում է...

Մեր զրույցը դարձավ կուլեկտիվի շուրջը:

— Նոր-նոր տեսնում են կուլեկտիվի օգուտը: Քանի տես-
նում են, էնքան շատ են գալիս, սիրտները տաքանում է: էս
քանի օրը տասը դիմում ընդունեցինք: Առավոտս գնացել էի
Նոնաձորի բաղերը. առու էինք հանում: Վերջացրինք, գալիս
էի, Չետանց Առստամ ենք ասում, հերու ձմեռը ձենը գլուխն
էր գցել, գոռում էր կուլեկտիվի հակառակ, հա՛, Առստամը
առաջս կտրեց, թե խոսք եմ ասելու: Ես գլխի ընկա մտքինը:

Սահակի կինը օջախի առաջ շոքած՝ գլուխը դարձրել էր 30
մեր կողմը: Նա տեղից կանչեց.

— Բալքի ուզում է կուլեկտիվ մտնի...

— Հենց քո ասածն է:

— Զընդունեք, նրան շընդունեք: Նա որ էնքան հակա-
ռակ էր:

— Ո՞նց շընդունենք,— հեզնեց Սահակը:— Հիսուն տա-

րի շոքանովթյունն արած մարդուն ո՞նց շես ընդունի: Կամքի վրա չի՞: Գյալինն էլ էր հակառակ. հիմա տեսնում ես:— Եվ դարձավ ինձ.

— Գյալինն դու էլ պիտի ճանաչես... Էն տարին, որ շարքացանը բերել էինք, քեզ խարեց, թե ինչքը կսերմի: Հետո հարբած եկավ կոիվ քցեց: Նա էլ շատ հակառակ խոսեց, քրիզադը որ եկավ մեզ մոտ, էն օյինը դրեց մեր գլուխը: Որ ասել են աղքատ եմ, հպարտ եմ, մեր Գյալինի համար են ասել: Ներքի գյուղում, որ հարսանիք լինեի, ինքը էստեղ կտուրի վրա պար կգար...

10

Երեխան գիրքը թողած, ծիծաղից փոթկացրեց էս խոսքի վրա: Սահակը շնկատեց և շարունակեց:

— Հավատ, ընկերություն, տղամարդի խոսք,— բոլորը կտար մի ստաքան արաղի: Էնքանն էլ ծո՛ւյլ, որ շահի թամբալը նրա մոտ ոչինչ: Խամած որ շլինեի, պատի շվաքում կքնեի... Մի առակ են ասում, թե վաղ ժամանակները, երբ փահլեանները գյուղերը ման էին գալիս, օյիններով իրենց ապրուստը հավաքում, մի մարդ է գալիս մեր գյուղը, էն ժամանակ մեխիք էր նստում, էդ մարդը մեխիքին ասում է՝ ինձ

20

կամ մի բեռ ցորեն տուր, կամ գյուղից մի մարդ դուրս բեր, որ ինձ դանիմ լինի, հետս հավասար քնի: Ո՞վ կլինի, ով շլինի ասում են Շիրանանց տնից մեկը կա, որ առավոտից մինչև իրիկուն ուռու տակը քնում է. թե հաղթեց, նա կհաղթի: Կանչում են էս մարդուն, բերում փահլեանի առաջը, մեխիքն ասում է, թե քեզ դանիմ սա կլինի: Գնում են ուռու տակը: Էս փահլեանը բոյով մի մեկնվում է, որ քնի, մեկնվում է ասում՝ «Յա իլ վաղասի», այսինքն՝ թե մի տարի ժամանակով էդքան պիտի քնի. էս Շիրանանց թամբալը կողքը քորում է, պինդ օրոշտում, էլի մեկնվում և ասում՝ «Յա ախրի զամանի», այսինքն՝ մինչև աշխարհի վերջը: Էս փահլեանը վեր է կենում փախչում, թե ես սրա հետ շեմ կարող քնել:

30

Թեև առակ է, բայց մեր Գյալինն քեզ օրինակ: Օխտն օր, օխտը գիշեր կքնեի: Այ խմելուն ինչ եմ ասել. մի կարոն արաղ կիմի, թե էս պատը հարքեց, նա էլ կհարքի: Որ իրեն հարցնում էինք, թե դու ինչ ես՝ չքավոր ես, միջակ ես, ասում է, ես աշխատավոր պլանից եմ:

Ինքն էլ շատախոս, դարաշի, որ հարբեց, ինչ լեզվին գա, կասի: Բաննահենց խալխը նրան շինել էր ձեռքի դուշ, արաղ էին տալիս, կատարը տաքացնում, բաց թողնում մեզ վրա:

Բալշևիկը տր գալիս էր, էն առավոտը տեսնեմ Գյալեն քյանդիրով կապկպոտել էր թվանքը, ուսը քցել: Տկո՛ր, մի ոտին տրեխ, մինը բոբիկ... Ո՛ւր Գյալե. բալշևիկը գալիս է, գնում եմ կոխվ տամ: Ասի քարեքար մի ընկնի, բալշևիկի դեմ թող Բաննահենք գնան: Եթիմներդ մեղք են, ա՛յ անխելք: Քամով են քցել, քեզ խաբել են: Մի սհաթ չէր քաշել էս խոսքից՝ տեսնեմ ներքևի ճանապարհով բալշևիկի գորքը բարձրանում է: Սարի կողմից դաշնակները կրակում էին, բայց գնդակները գյուղի տներին էլ չէին հասնում: Գյալեն քաշվեց տունը: Հետո իմանամ, որ Բաննահենք նրա խելքումը նըստացրել են, թե բալշևիկները գալիս են չբավորներին կոտորեն: Հալել են լցրել գլուխը, թունդ էլ խմացրել:

10

Հերու ձմեռ էլ նա էդպես արեց: Կոլեկտիվի բրիգադը որ եկավ, գյուղացիք ձագ տված մեղրաճանճի նման հավաքվեցին: Էնպես մարդ էլ եկավ, որ մի տտը գերեզմանումն էր, բուրսու տակից չէր դուրս գա: Մեկը մեկի վրա լցվել էր, տեղ դադար չկար:

20

— Ո՛ւ, էն ինչ օր էր, — ասաց կինը:

— Մի հին դարադամ էինք հավաքվել, էլի շատը դուրսն էր: Բաննահենց խալխը առանձին էին: Բրիգադը ընկեր ներսեսն էր, մի ժամանակ հողբաժնի վարիչ էր: Ժողովը սկսեց, խոսեց, բացատրեց: Հարցեր էին տալիս. դե անժանոթ բան, էն էլ կոլեկտիվի պես: Մինը թե, որ կոլեկտիվ մտնեմ, էգուց իմ տանը ձավար չի լինելու, էն մինը թե՛ երեխա ունեմ, նրա դարդն եմ քաշում, թե չէ կոլեկտիվ կմտնեմ, էն մյուսն էլ թոքախտությունը պատճառ բռնեց: Մեր գեղը Բոզի անունով մի դալլաք կա. եկավ՝ լաց, աղաչանք, պաղատանք, թե կինս մի կողմից է ապստամբել դեմս, մի կողմից էլ մասսայի ձեռքն եմ մնում կրակի մեջ, մի տեղ ցույց տվեք կորչեմ գնամ, էսքան տարի հալալ հարազատ հակված եմ եղել դեպի հորհրդային իշխանությունը:

30

Էդպես խոսում էին տատանողական դրովթյան մեջ,

249

սարի խոտի նման որտեղից քամին փչում էր, էն կողմն էին կռանում: Էնպես էլ կար, որ դիմումը ծոցից հանում էր, որ սեղանի վրա դնի, մեկ էլ նայում էր հարևանին, դիմումը նորից ծոցը դնում: Մի քանիսն էլ թե՛ ախպեր, հերիք է ինչքան խուլ ապրեցինք, էս կառավարութայն փեշիցը բռնած գնալու ենք, որ ծովն էլ թափվի, կթափվենք:

10 Կոլեկտիվի մասով ես խոսեցի, մեր Միխայելը խոսեց, վարկային Սմբաթը, կոմսոմոլ Սերոբը, մի նավո անունով բատրակ ունենք, ինքն էլ մշեցի, նա խոսեց, էլ հիմա շեմ հիշում բոլորին: Մենք կողմ էինք, մի խալխը հակառակ, Բաննահենք էլ նրանց գլխավորը, մի մասն էլ արանքն էր, ապաստամ էր, թե որ կողմը կհաղթի:

Մեկ էլ Գյալեն դալմադալը քցեց: Էն տեսանք, որ քոռ մոշահավի պես թևերն իրար տալով առաջ ընկավ, գոռաց.

— Մի հարց, ընկերներ...

— Հարցերը վերջացել են, Գյալե...

— Թող ասի, թող, — կանչեց Բաննահենց խալխը:

20 Ես գլխի էի, որ լակել է. արաղի հոտը փչում էր, ոնց որ կուպրից: Թիկունքին վանգնել եմ, էն է հա մի խառնակչություն աներ, տակս պիտի կոխի:

Գյալեն թե՛ ընկեր բրիգադ, դե որ էդպես հավասարություն է, Երևանի ինչիներները, կամիսարները բերեք թող ինձ հետ հավասար աշխատեն: Էն կոնիցը կանչեցին՝ «ա՛յ ճշմարիտ խոսքը», մենք էլ՝ «ի՛նչ էլ աշխատող ես...»: Մի քանիսը ծիծաղեցին:

30 Ես ասի ընկեր բրիգադը պատասխանը լավ չի տա, համա չէ, ընկեր ներսեսը գաղափարի կողմանից շատ զրինգ է: Նա թե՛ ընկեր, էդ ինչիները, որ էդրոկայանը շինի լա՛վ է, թե կոլեկտիվի եզինքը պահի: Գյալեն տազ արեց, ես կանչեցի.

— Հարկե, էդրոկայանը... Հրեն մեր գետի վրա էլ են ստանցի շինում:

— Ստանցին լուսավորություն է, — իմ հետևից կանչեց մեր Անդրեասի տղան:

— Բա էդ խոսքն ինչո՞ւ ես ասում, ընկեր ջան:

Գյալեն տաքացավ:

— Բա ոնց ջասեմ, ե՞ս եմ մտնում կոլեկտիվ, թե դու: Պիտի ասեմ, բա ո՞նց. հողս, բաղս ձեռիցս տամ, մեջտեղը տկլոր վանգնե՞մ: Էն վախտը տեղդ էլ շեմ իմանա, որ զամ ասեմ, ընկեր, էս ի՞նչ արիր:

— Էդ ե՞րբ ես բաղատեր դառել, Գյալե...

Հարցը ես իմանալով տվի: Ճանապարհի տակը նոնա-
ծոր ենք ասում, շեմ իմանում տեսել ես թե չէ: Էդ ձորումը էն առաջի տարիները կոկլիկ քաղ տվինք Գյալեին: Աքյալ գույք էր. առաջներումը էլի Քաննահենց ազգն էր տիրապետում: Էդ հարցը իմանալով տվի, որ էն խումբը կատաղի:

10

— Էդ է, որ բաղ ես տվել, կոլեկտիվ չի մտնում է՛,—
էն կոնիցը պատասխանեցին,— փորը տաքացել է, սիրտը մուգի վրա մրմռում է:

Էս խոսքին տեսնեմ Չետանց Առստամը «հեռի, հեռի՛» ասե-
լով քունջիցը առաջ եկավ, շոբանավարի մահակը մեկնեց թե.

— Ծս իմ հոգիս, Գյալեն ուղիղությունը խոսեց կոլեկտի-
րի մասով: Այ խալխը,— և երեսը շրջեց դեպի ժողովուրդը,—
էլի էն մեր հողն ու ջուրը չի՞: Որ կոլեկտիր դառանք, հողը
հո ավելանալու չի՞. ծմակը հո մեզ չեն տալու: Էնքան տարի
գիշեր-ցերեկ վրան արյուն քրտինք ենք թափել, օրը մի ժում
հաց կերել, ի՞նչ ենք դատել, որ հիմա կոլեկտիվը դատի. էն էլ
աշխատանքը սհաթով, ես ի՞նչ իմանամ կնիժկայով, շեկով...

20

— Տրակտոր ենք բերում է՛, Առստամ ապեր, տրակտորի
մաշին...

— Ընկերովի լավ կաշխատենք,— էս ու էն կողմից վրա
տվինք:

Ասացի, որ մեր գյուղում մշեցի մի բատրակ կա, անունը
Նավո: Դա Առստամին էն խոսքերն ասաց, որ մի փութ մեղ-
րով չի ուտվի: Նրա մերն էլ խոսեց, Հերթո պառավը: Արմացք
բան էր. էսքան տարի ո՞վ էր տեսել, որ Հերթո պառավը
ժողով գա:

30

— Խազեյնի ձեռք տանջվիր եմ, ջնջվիր եմ: Իմ ջիգյար
դաղուկ է: Ցամաք հաց կիտար, փշուրըմ շոռ: Մենք լե հոգի
ենք, չէ՞...

Վերջը, թե՛ էդ կուլակությունը ջնջենք, կոլեկտիվ հիմնենք,
Շատ լավ խոսեց մշեցի պառավը:

251

Գլալին տակից գլխից սկսեց դուրս տալ: Ընկեր ներս-
սի հետ մի բարակ երիտասարդ էլ էր եկել: Շատ քաղցր վար-
վեցողութիւն ունեւր: Գլալին հիմա էլ շուռ տվեց նրա վրա:

— Անունդ դրել ես ծառայող, կայոշ հագել, փափուկ
պալտո, ինձ ճանապարհ ես ցույց տալիս: Շեն մնաս, ախպեր,
ինչո՞ւ ես նեղութիւն քաշում: Ծա քեզ շեմ հասկանում. ֆրան-
սերեն ես խոսում, ֆրանսերեն: Քո ասածը շեմ հասկանում:

— Էդ Բաննահենց արաղն է խոսում, դու շեա խոսողը:

10 Հենց վարկային Սմբաթի ձենն իմացա: Մեկ էլ ժողովը
իրար խառնվեց: Մի խումբ հուշըլում արեց ընկերների վրա.
մինը գոռում է «քշեք», մինը՝ «չենք ուզում», մի ուրիշ խումբ՝
«կեցցե կոլեկտիվը»:

Ծա Գլալեի յախիցը բռնեցի:

— Էդ արաղը որ լակել ես, էլի մեր իշխանութիւն էրե-
սիցն է... թե ո՞նց: Չոռ ու ցավ տես: Դու Գլալին լինես, նրանք
էլ Բաննահենց ազգը, սոված սատկեիր, քեզ մի պատառ հաց
չէին տա, քեզ մարդու տեղ չէին դնի: Սոռացե՞լ ես, որ
նրանք գլավիցը քաշ մարդու հետ նստել վեր կենալ լայեղ
չէին համարում:

20 — Գլավան ով է, հայրիկ,— հարցրեց երեխան, որ ըն-
թերցանութիւնը թողել ու նստել էր մեր կողքին:

— Գլավա՞ն... — և Սահակը նայեց իմ երեսին, կարծես
խնդրում էր, որ ես քացատրեմ:

— Գլավան մի արնախում մարդ էր, բալա ջան,— և
խոսքը շարունակեց,— հիմա որ նեղն են, տեղները դառն է,
արաղով են քեզ խաբում, իրենց մարդը հաշվում:

էս խոսքին, տեսնեմ մի փափախ թռաւ, ճրագը հանգեց:

— էն ո՞վ էր, ով չէր...

Որտե՞ղ... հազարի մեջ կիմացվի: Սերոբի ձենը լսեցի.—

30 փափախս... բաց թողեք, թողեք ինձ...

Կրակ արինք, բայց ուշ էր:

Ժողովուրդի շատը ցրիվ էր եկել, որը դաժմադալի ահից,
որի զահլին էր գնացել, որն էլ մհանա բռնեց ճրագի հանգ-
շելը:

— Սերոբ, էդ ո՞վ էր...

— Չիմացա, հենց էն տեսա, որ փափախը գլխիցս առան,
ճրագը հանգավ, միհն էլ բամփեց:

— Բա ո՞վ էր կողքինդ:

— Մերոնք էին:

էդպես էլ շիմացվեց, թեև մի քանիսի վրա կարծիքավոր
էինք:

Ի՞նչ երկարացնեմ: Էդ ձմեռ մեր գյուղը շատ բան տեսավ:
Կուլեկտիվ էլ մտան, դուրս էլ եկան, շատ անատուն մորթեցին,
միսը շան փայ արին: Շատ էլ սխալ բաներ բռնեցին. ժողո-
վուրդն իշխանությունից մի քիչ մրսեց:

10

Չիտանց Առստամը որտեղ նստեր, շախշախը հա կբա-
ներ. թե ասում է վերի ուրգանների կոմունիստներն են լավը:
էս բոլորը գյուղի կուսակցականների գործն է, ձեռ-ոտի
մարդկանց արածը:

էլ ինչ պրավակացի, ի՞նչ տեսակ օյիններ...

Մի հորքուր ունեմ. ինձ բռնել էր, թե՛ ասա տեսնեմ կո-
լեկտիվի երեխան հո՞ր անունով պիտի գրվի, թե՞ մոր: Ես
գլխի չէի. ասի ո՞նց թե մոր անունով,— թե՛ բա որ իրար
խառնվեն, հերը ո՞նց պիտի իմացվի:

Սահակի կինը քթի տակ ծիծաղեց: Երևի նա էլ շատ էր
բեւէ կուլակների տարածած լուրերը: Սահակը շարունակեց.

20

— Ձուր շեն ասել, թե խոսքը վախտին է գալիս: Թարսի
նման էդ ժամանակները «Մաճկալն» էր, թե ո՞րը, տպել էր,
թե Մոսկով մեռելը էլ շեն թաղում, վառում են: Էդ էլ տա-
րածվեց. լուն ուղտ շինեցին, թե կուլեկտիվը հիվանդներին,
պառավներին պետք է վառի:

Խոսվածքությունը տներն րնկավ:

էդ որ շատ ասում էին, թե կնանիքը շեն ուզում կուլեկ-
տիվ գրվեն, չհավատաս: Մարդիկ տակից սովորացնում էին,
թե էսպես կասեք: Թե չէ կնիկս ո՞րն է: Ես որ գնացի՝ կնիկս
էլ կգա, երեխաս էլ: Հո բոլոր կանայք մարդաթող չպիտի մնան:

30

Բայց կանայք էլ կուլեկտիվի հակառակ ագիտագցի էին
անում: Մինը հրես է՛...— և խոսքն ընդհատելով՝ Սահակը
ձեռքը մեկնեց կնոջ կողմը:

— Կատեգորսկի կերպով ինձ տուն չէր թողնում: Ասում
էր՝ դու քո գլխին, ես՝ իմ:

Կինը գլուխն աթարի ծխի քուլաներէց հեռացնելով նա-
յեց մեզ:

— Ինչ ճիշտ է, ախպեր, վախենում էի երեխորց մասով... Ասում էին, երեխորցը հավաքելու են տանեն ռուսացնեն: Ես էլ ասում էի՝ այ մարդ, մի՛ վնասի, կոլեկտիվ մտնողը թող մի ցամաք հաց ճարի, հետո հեշտ է:

— Բա դու խորհրդային միջոցով շեռ առաջ եկե՞լ,— հարցրեց Սահակը:

— Չեմ ուրանում:

10 — Դե առաջաքաշ եղի՞ր, է՛:

— Մենակ ես չէի հո: Մեր վարկային Սմբաթի կնիկը էն քարոզն էր տալիս գոլեկտիվի հակառակ ո՞ր... հալա մարդն էլ վրասակցական:

— Զուռնեն մեղավոր չի, տիկն է մեղավոր: Մեզ հայտնի է ձեր քարոզիչն ով էր,— և դառնալով ինձ, զրույցը շարունակեց:— Ասենք մի կողմից էլ ժողովրդին մեղապարտել չի լինի: Տեսած բանը չէր, դժվար էր: Եկած բրիգադն էլ սխալ խոսքեր ասաց. մինը թե՛ մտուր պիտի շինենք, էն մինը թե՛ մանկապարտեզ, քորպիս երեխոցը պիտի շահում վաթ տա մանկապարտեզուհին:

20 Դրանից էլ մի պատմութուն դուրս եկավ: Կնանիքը թե՛ մեր երեխեքը ոնց պահ տանք խորթ մորը: Քցում ենք մի քուլի տակ, արտը քաղհանում, զարթնում է, ծիծ ենք տալիս: Մեր կաթը թողենք թափի, մտուրի վաթ տա՞նք: Մեր երեխան, որ ժամով հաց կերավ, կմեռնի:

Տո ո՞րն ասեմ:

էդ օրերը Բաննահենց երկու տունը գյուղից քշեցին: Ճիշտն ասած՝ ես դրանց քշելուն հակառակ էի: Ախպեր, ասի, առեք տունը, տեղը, բաղը, հողը, իրան մի խարաբա տվեք, թող մեր աչքի առաջն ապրեն: Թող տեսնեն, սիրտը դաղվի, ոնց որ դաղել են մեր սիրտը: Թող դարդից ցնդեն:

30 Չլսեցին. թե քո ասածը հակառակ է մեր ծրագրին, թի գալլը թողնում ես գառանոցում, որ մեկ-մեկ բռնի խեղդի՞: Ես էլ գնացի իմ ձեռքով նրանց քոչը բռնեցի, ասի՝ շասեք, թե էլ վազանց Սահակը կուլակի արտիցն է խոստամ:

Քշեցիներ: Համա վերջն իմ ասածը կատարվեց: Քննութիւն արին, տեսան, որ սխալ ենք բռնել: Գարունքվա մի առավոտ նրանց քոչը էլ ետ եկավ: Հեռու էլ չէին գնացել. էս մոտերքը իրենց ձմեռանոցում օթարվել էին:

Նլի սօր զրույցին գանք:

Կոլեկտիվը որ շաղ եկավ, մնացիներ քսան-երեսուն տուն: Մեր Գլալեհ հենց առաջին օրերը գլուխն առել էր, կորել: Խաբարն եկավ, թե գետերումը քար է շարդում ստանցու շինութեան համար:

Գարունը բացվեց: Նստեցիներ, հաշիվ արինք, մեր աշխատանքի պլանը կազմեցինք, մի առավոտ էլ առաջինը մենք դուրս եկանք դաշտ: 10

Մի տեսակ էինք զգում մեզ: Էլի մեր հողերը, մեր ընկերահարեանները, բայց մենք էլ առաջվանը չէինք: Կարծես էն հողերն էլ ուրիշ տեսակ երևացին, թեև տեսքն էն էր, ինչ տեսել էինք մեր ծնվելու օրից:

Չեմ իմանում քեզ պատահել է, թե չէ, իմ գլխովն անցել է, որ ասում եմ: Գերութիւնից վերադարձա, հենց գլուղը աշքիս երևաց թե չէ, մնացի զարմացած: Ասեմ թե տուն էր քանդվել,— քանդված տուն չկար, թե տներն էին հնացել,— մի քանի տարում ինչքան պիտի հնանային հարյուր տարվա տները, որ աշքիս թվար: 20

Մի օր մնացի, ման եկա տեսած տեղերս, նոր գլխի ընկա, որ ես եմ փոխվել, և աշքիս է երևում:

Նդպես էլ առաջի գարունը:

Մեր հողերն են, անուններով ճանաչում ենք, գիտենք, որը ումն է, ինչ ուժ ունի, բայց էլի մի տեսակ էր թվում: Տղերքն էլ էին փոխվել:

— Ուրեմն էլ ջրի կռիվ չպիտի տա՞նք...

— Բա էդ ո՞նց կլինի, որ հարեանիս միջնակից մի ակոս չժրեմ իմ կոտոր: 30

Նդպես հին սովորութիւնն կա մեր գլուղերում: Շուտ վարողը մեկ էլ տեսար սահմանի միջնակից կեսը ցելեց. կռիվ, դալմադալ... Մերոնք դրա մասին էին ասում:

Վարն սկսեցինք: Լավ էր տրակտորը հասավ, թե չէ բաներս բուրդ էր: Լծկան քիչ ունեինք: Տրակտորը հասավ, թե

չէ, մենք էլ գիշերը ցերեկ արինք, էնքան ցել սևացրինք, որ մնացել էին զարմացած:

Մենք էլ էինք զարմացել մեր արածի վրա: Եթե շոկ-շոկ վարեինք, դրա կիսի շափն էլ չէինք հասցնի: Ընկերովի աշխատանքն ուրիշ է, ուրիշ:

Մեր Գյալեի սերմը մնացել էր տափին: Նրա արտն էլ մեր հողերի սահմանին կպած էր: Մերը որ վերջացրինք, ասի եկեք մի լավություն անենք, Գյալեն հեշ, բայց երեխաներն են ափսոս: էս նեղ մաջալին տվ է նրա համար վար ու ցանք անելու:

10

Տրակտորը շուռ տվինք դրա հողի վրա: Մինչև կեսօր վարեցինք, ցանեցինք, հլա մի փոսթ սերմացու էլ մեր ձիու վրա դրած՝ հտ ուղարկեցինք տունը:

Կինը եկավ, շա՛տ, շատ շնորհակալ եղավ: Մեկ ուզեցի հասկացնեմ նրան, որ դիմում տա, մտնի կրեկտիվ, մեկ էլ ասի, ով գիտի ինչ պրավակացի տարածեն գյուղում, թե կոլեկտիվը զոռով կնիկը մարդուց քաժանում է:

Չասացի:

20

Արտերը կանաչեց: Մի թամաշ էր ո՛ր... Ուրիշինը ծուռտիկ, մի տեղ սեյրակ, մի տեղ՝ թանձր, կորեկի կողքին գարի, միջնակների խոտը գարուց անցել էր: Իսկ մերը՝ միատեսակ, մաքուր ցորեն, ոչ միջնակ ունի, ոչ սահման կա, միահավասար կանաչել է:

Մի երեկո էսպես նստած խոսում էինք, տեսնեմ ըհը՛, ներս մտավ:

— Ո՞վ,— հարցրի ես:

— Գյալեն: Ներս մտավ, բարև տվեց: Հենց էդ էլ զարմացրեց ինձ, բարև տալը: Գյալեն որտեղ, բարև տալը որտեղ: Հարց ու փորձ արինք գործից, էզրոկայանի շինությունից: Լավ խաբարներ ասաց: Մեկ էլ թե՛ քեռու տղա,— ինձ էլ քեռու տղա է ասում,— դուրս արի, բան պիտի ասեմ:

30

Դուրս եկանք բակը:

— Ի՞նչ կա, Գյալե...

— Հե՛շ... Ասում եմ լավ եք արել, որ արտս խափան չեք թողել...

— Բա ոնց:

— Ես էլ էդ եմ ասում,— մի քիչ լռեց, մեկ էլ ձեռքը դրեց ուսիս, աղաչելով ասաց:— Քեռու տղա, ինձ էլ գրիր կուլեկտիվ...

Մնացի զարմացած: Աչքիս շէի հավատում: Էս մեր Գյալեն և էսպես խեղճացած, փոխված: Էնպես լացակումած ասեց, կարծես մի շատ դժվար, շատ ծանր բան սրտիցն ընկավ, թեթևացած:

— Լավ... էգուց արի տեսնենք:

— Էլ տեսնել չկա: Այսուհետ էլ վերջ,— և ձեռքը թափ տվավ:

10

— Ինչի՞ն վերջ, Գյալն:

— Ամեն ինչին... Երկու ամիս է քերանս էն զահարից մի կաթ շեմ առել և շեմ առնի: Հիմա ես հասկացա, Սահակ, շատ բան իմացա... Դուռակ էի,— և ձեռքը խփեց ճակատին,— խելքս ինձանից առել էին:

Սահակի կիներն էլ էր ուշադրությամբ լսում: Երևում էր, որ նրա պատմած մանրամասնությունները կնոջ համար էլ նորություն էին:

— Լավ,— ասացի:

— Դուք որ իմ սերմը տափին չեք թողել, էլ ձեզանից լավ ընկեր չունեմ... Քեռու տղա, շատ բան հասկացա, շատ...

20

Նորից ասաց: Ի՞նչ մեղքս թաքցնեմ, մտքովս անցավ, թե էլի խմած կըլինի: Ոտի վրա մի տեսակ պինդ շէր:

— Էն մեռավ, քո տեսած Գյալեն մեռավ, թաղեցի քարի տակ: Էլ նա դուրս չի գա: Այ տե՛ս,— և նա ծոցից հանեց մի կապ թուղթ փող,— էնտեղ եմ աշխատել, հալալ քրտինքով, որ խմեի, ոչ փողն էր պակաս, ոչ խմիչքը: Բայց շեմ խմել... Եվ բոլորը տալիս եմ կոլեկտիվին: Էս էլ իմ փայլը:

— Պետք չէ, Գյալն... գնա տուն, հանգստացի: Տանը պակասը շատ է: Էգուց վզաս, կվերջացնենք:

30

— Հա՛, էգուց: Անպատճառ էգուց:

Նա գնաց, մեկ էլ հետ եկավ և բոլորովին մոտեցավ: Քիչ էր մնում ճակատը տրաքեր ճակատիս:

— Մի բան էլ եմ ասելու, քեռու տղա...

267

— Ի՞նչ, Գյալե, — համ հարցրի, համ էլ մտքումս ասացի, որ խմած չի, որովհետև բերանից հոտ չէր գալիս:

— էդ անունը էլ մի տուր:

Կարծեցի գովել է:

— Գյալեն մեռավ, Գյալեին թաղել եմ քարի տակ... Հիմա ես Գալուստ եմ, ընկեր Գալուստ:

Եվ վրձքին պինդ խփեց, կարծես այդ նոր անունը ամենաթանկ պարծանքն էր:

Վերադարձա, մերոնց ասացի, որ ուզում է կոլեկտիվ մտնի:
10 Մեկն ուրախացավ, մյուսը թե՛ շիինի սրա տակը բան կա, մի օյին, էն մեկէլը թե՛ բանվորների մեջ մի քանի ամիս մնացել է, շփվել, երևի համոզել են:

Մյուս օրն ընդունեցինք: Անունը որ ժողովին կարդացինք, ծափահարեցինք: Շատ ուրախացավ, անշափ: Ասաց թե ինձ որ ծափահարեցիք, այսուհետև մեռնեմ էլ դարդ չունեմ:

Նշանակեցինք բրիգադ:

Դու աշխարհքի բանը տես, թե մարդն ինչպես է փոխվում: էն ծուլը, դարաչի, հարբեցող, չքավորության մեջ խեղդված Գյալեն մեր կոլեկտիվի ամենաեռանդով բրիգադն է: Ոչ մի

20 խոսք, ոչ մի ծպուտ չի հանի, առավոտը լույսը չբացված՝ գործին է, ուր էլ ուղարկես՝ կգնա, մի խոսքով՝ կարծես նոր մորուց ծնված է:

Նրա էդ փոխվելը անասելի օգնեց մեր կոլեկտիվին: էնքան մեր օգուտի մասին չեն խոսում, ինչքան նրա մասին: էս զարմանալի բանը պատահեց, ախպեր, մարդը դարձավ ուրիշ, բոլորովին ուրիշ:

Սահակի կինը մեզ կանչեց թեյի:

— Ես քեզ երեկոյան նրան ցույց կտամ... Մուխանի հետ գնացել է էն կողմի հողերի վրա: Մի խոսեցրու, խոսեցրու,
30 տես ինչեր է ասում:

— Ի՞նչ է ասում, Սահակ: Ձի ասում, թե առաջ ինչո՞ւ էր այդպես:

— Ասում է, որ հարցնում են, ասում է: Սիրտս նեղվում էր, ասում է, չքավորությունը խեղդում էր ինձ, ես տեսնում էի, որ էսպես զուլս չեմ հանելու, մենակ աշխատելուց սիրտս սեանում էր: Ես էլ ինձ տալիս էի ծուլության, հարբեցողու-

թյան: Ասում էի աշխարհի հերն անիծած, ինչ ուզում է թող լինի, էսօր կամ, էգուց չկամ: Հիմա ինչպես խոր քնից զարթնած: Ես եմ փոխվել, և ամեն ինչ աչքիս փոխվել է... Ես էլ փոխվեցի, որ գնացի ստանցու շինություն վրա, որ կոլեկտիվը հիմնվեց: Ասում է, տնից որ նամակ եկավ, թե կոլեկտիվը մեր արտը վարել է, ցանեւ, ջանս մի տեսակ սարսռաց, ես ինքս ինձ մտածեցի, թե ինչ ճանապարհի վրա եմ, մտածեցի և ձեռք քաշեցի ծուլությունից, հարբեցողությունից: Եվ դարձա ուրիշ մարդ:

Բա, էսպես եղավ, էսպես զարմանալի բան եղավ մեր 10
աչքի առաջը: Ու հիմա գնա հետը խոսի. լեզուն էլ էն չի. նստել վերկենալը: Շատ աշխատում է, լավ էլ ստանում է: Առաջ եթե նրան մեկը ընկեր Գալուստ ասեր, ժողովուրդը կծիծաղեր: Հիմա նրան քչերն են Գյալի ասում: էդ քչերն էլ նրա երեսին քաշվում են ասել, իրար մեջ են էդպես կանչում: Հիմա նա Գալուստ է, ընկեր Գալուստ...

Սահակի այս խոսքին կատարածուն ներքեկից ձայն տվեց: Նախագահը դաշտից վերադարձել էր գրասենյակ:

Ես շտապով վեր կացա:

ԺՊՏՈՒՄ ԷՐ ՄԱՐԴԸ

1

Քաղաքի խուլ փողոցներից մեկով անցնում էր մի մարդ: Հնամաշ կարտուզը քամուց պահելու, նաև ականջները շատեցնելու համար՝ մարդը կեղտոտ լաթով փաթաթել էր գլուխը, ծոպերը նապաստակի ականջների նման գլխավերևը ցցել:

Նա աշխատում էր ձեռքերն ավելի խոր կոխել կիսամուշտակի տաք թևերի մեջ: Մարդը թևին էր հագցրել կարկատած
10 կողովը, որը նրա քայլերից ցնցվում էր, մուշտակի փեշին զարկում: Նրա կոշիկների հաստ մեխերը մետաղի ձայն էին հանում, երբ կոխում էր սառույցը, և խուլ՝ երբ ոտքը խրում էր փափուկ ձյունի մեջ:

Ու նա գնում էր՝ գլուխը կախ, ցրտից կծկվելով: Գնում էր հավասար քայլերով, շնայելով ո՛չ տներին, ո՛չ ծուռումուռ փողոցների լաբիրինթին: Երբ քամին ձյունի փոշի էր շպրտում՝ նրա երեսին, մարդը մի վայրկյան կանգնում էր, շունչը պահում և ապա կուրծքը դուրս քցած ճեղքում բուքը:

Տրամվային հասնելիս նա հետ դարձավ, նայեց կա-
20 մուրջի սև սիլուետին ու սյուններին, որոնց վրա ճոճվում էին ջարդված ճրագների երկաթյա լուսամփոփները:

Մարդը նայեց, կռացրեց գլուխը կրծքին ու քայլերն արագացրեց: Ու նա հիշեց սարսափելին, ամենից սարսափելին, որ տեսել էր իր կյանքում...

... Երբ 'եներկիկնը քաղաքը գրավեց, նա առավոտ կանուխ դարձյալ շտապում էր գործարան... կամուրջին հասավ. ձիա-

վոր պատրուկները հետ ու առաջ էին գնում: Իսկ սյուններից ճոճվում էին դիակները...

Առաջին սյունից կախված էր մի կին, վիզը ձգած, կապտած, լեզուն կախ: Ու նա սարսափած հետ դարձավ, չկարողացավ կամուրջով անցնել: Երկու հոգի տանում էին փայտյա սանդուղքը...

Ու նա գնում էր, գնում էր դեպի գործարանը, և հիմար մի հարց բուրավի նման ծակում էր նրա միտքը. «Մի՞թե այդքան սոսկալի ու մեծ լեզու ունեւր այն կինը, որի ցրված մազերը պղնձի պես կարմիր էին...»:

10

2

...Հրապարակի ամենաքարձր տան պատշգամբից կախված հսկայական քարտեզի առաջ խոնվել էր ծով բազմություն: Կային ծեր ու երիտասարդ բանվորներ, արհեստավորներ, դոնապաններ: Տեղ-տեղ երևում էին շալով փաթաթված կանանց գլուխներ:

Քարտեզի հաստ քաթանի վրա սև շրջաններով նշանակված էին քաղաքները, քառակուսիներով՝ գործարանային ավանները, շախտերը, ավելի փոքր կետերով՝ գյուղերը:

Հարավային ռազմաճակատի քարտեզն էր, ու նրա լայնքով, ներքևի մասում, ձգվում էր սև, օձանման գիծը: Սպիտակների դիրքերն էին, որոնց դեմ առ դեմ դարձյալ ամբողջ ճակատով ձգվում էր կարմիր ժապավենը, մի տեղ ուղիղ գծով, մի տեղ՝ կոր, քաղաքի մոտ՝ օղակաձև:

20

Գծերը դողդողում էին, շարժվում, փոխվում՝ մեկ ձրգվում, երկարում, մեկ գոգաձև դիրք ստանում, մեկ հետ քաշվում, թողնելով քաղաքներ, գյուղեր ու ավաններ:

Իբրև ձգված լարեր գծերը դողում էին: Այդ հասարակ քարտեզ չէր, այլ արյունահեղ ռազմաքեմի կենդանի պատկերը, որ յուրաքանչյուր ժամ փոխվում էր, համաձայն շտաբի զոսպ և համառոտ հեռախոսագրերի: Կարծես արյունով լի երակներ էին, ուռչում էին հուզմունքից, դողդողում ու նորից հանդարտում: Դողացող այդ երակների միջով վազում էր բազմահազար մարդկանց արյունը:

30

Սպիտակ բանակն արշավում էր: Երկու օր առաջ նրանց սև գիծը քարտեզի վրա հազիվ էր երևում: Իսկ այժմ արձանի պես քարացած բազմութունը նայում է սև գծի առաջանայուն: Ահա մի սև սլաք երևաց: Հարձակվում են շախտերի ուսյունի վրա... Մի ուրիշ սև սլաք ձգվում է դեպի մեր աչքերի թիկունքը:

Սև գիծը մոտենում է իրրև մահվան օղակ: Բազմությանը թվում է, թե իր վզին է փաթաթվում այդ օղակը՝ սառն ու սև օձի նման: Ու հիպնոսացած նայում է, նայում է ու չի զգում ո՛չ ցուրտ, ո՛չ քաղց, ո՛չ հոգնածութուն:

Բուքը ձյուն է մաղում, ձյունի սյունները կատաղի պարով թռչկոտում են հրապարակում, բազմության գլխավերևը, սակայն ոչ ոք տեղից չի շարժվում: Ոմանք կուչ են գալիս, գլխարկներն ավելի խոր կոխում: Այդ մարդկանց հոգսն ու միտքը պիրկ ձգված կարմիր լարն է:

Ու խուլ մոնչում են, ինչպես ծովը փոթորկից առաջ: Կարմիր գիծը ձախ թևում վախվեց, թեքվեց... նրա մի ծայրը կեռ է տալիս թշնամու թիկունքն անցնելու— Ո՛ւհ,— լսվում է մի ձայն, մի խուլ հոգոց, որ և՛ հառաչ է, և՛ ուրախութուն, և՛ կասկած, արդյո՞ք կհաջողվի:

Այն մարդն է, հնամաշ կարտուզը գլխին, կողովը թևից կախ: Բազմությունը ճեղքելով նա մոտեցել է քարտեզին, մոտեցել է ու սառած աչքերը չի կարողանում պոկի դողացող գծերից:

Քարացած լուսթյան մեջ մի ձայն հանկարծ որոտաց պատշգամբից.

— Պրոլետարներ... էլ ինչի՞ ենք սպասում... Վրանգելի սև օղակը մոտենում է մեր քաղաքին: Ընկավ Մեխիտոպոլը, մենք հաց չենք ունենա... Դոնբասը կառնի՝ կսառչենք մենք էլ, մեր գործարաններն էլ... Պետք է շարժել կատաղած բարոնին, պետք է ծովը շարտել նրան... էլ ինչո՞ւ ենք սպասում... Պրոլետարներ... իզե՛ն...

Ու նրա որոտն արձագանքեց փողոցներում: Վիթխարի տներն ասես ցնցվեցին: Բազմությունն ալեծուփ ծովի նման հեռ-հեռ քաշվեց: «Իզե՛ն, իզե՛ն», պոռթկաց կոչը...

Ո՞վ էր, որ առաջինն եղավ և կովի կանչեց: Ելք ստացավ

այն զայրույթը, որ եռում էր, ինչպես գոլորշին փակ կաթ-
սայում:

Մարդը ժպտաց: Պարզ ու հասարակ ասաց նա, որի սի-
լուետը պատշգամբի վրա հագիվ էր երեւում: Ճշմարիտ
ասաց նա:

— Միշո՛ւտկա, դու է՞լ ես եկել,— հարցրեց մարդը մի
տղայի, որ թույլ բազուկներով սրան-նրան հրելով աշխա-
տում էր դուրս գալու բազմության միջից ու տուն վազելու:
Տղան ուրախացած մոտեցավ հորը:

— Միասին գնանք տուն, հա՛,— ասաց նա հոր թևից **10**
կախվելով: Այդ ընկերին մեկը կանչեց. «Գեպի կայարան...
ցելահատուղների մոտ...»:

— Միշո՛ւտկա... դու մենակ գնա: Սա էլ հետդ տար,—
ու մեկնեց կողովը,— վաղվա հացն է... Մորդ ասա, որ ես
մերոնց հետ գնացի:

Տղան մնաց տեղը կանգնած: Ու երբ հայրը կոացավ,
գրկեց նրան, ճակատը համբուրեց, նա զգաց մախորկայի
ծանր հոտը, որ միշտ գալիս էր հոր բերանից, շրթունքնե-
րից: Բեղերը ծակծկեցին տղայի այտը: Աչքերն արցունքով
լցվել էին. ինքը մենակ պիտի գնա տուն... **20**

Հայրը մի քիչ հեռացավ ու նորից ձայն տվավ: Տղան
վազեց: Հայրը արձակեց գլխի շորը ու փաթաթեցիվ որդու
վիզն ու ականջները, ասաց.

— Գե վազի՛, որ շմբեսս...

Մարդիկ լուռ գնում էին: Ստվերներ՝ խումբ-խումբ,
առանձին: Մեկը գիլ ձայնով սկսեց ծանոթ երգը: Մտունե-
րը ձայնակցեցին: Երգի ուրթմը շափ տվեց քայլերին: Բնազ-
դը մոտեցրեց իրար: Ցրված խմբերը միաձուլվեցին և հա-
մաշափ օրորվելով, կորան խավարի մեջ:

Մարդը գնում էր բազմության հետ: Գնում էր, հանդարտ **30**
ժպտում ու քթի տակ ձայնակցում երգին: Յուրտ չէր զգում
նա, ո՛չ քաղց, ո՛չ հոգս:

Վիթխարի տներն ասես կուշ էին եկել, ներս քաշվել:
Հրապարակը դատարկվեց: Միայն գազազած քամին վայրենի
հոնդյունով մեկ առկայծող խարույկների վրա էր հարձակ-

վում, ձյունի վրա կայծ ու կրակ ցրում, մեկ վզզաբով կորչում սառած փողոցներում:

Գիշերային լուռության մեջ, քնած քաղաքում լսվեց հեռվի ուժքակոծության խուլ արձագանքը: Քարտեզի վրա կարմիր գիծը ձգվում էր, իրոև պողպատյա լար . . .

. . .
. . .

3

10 Ինչքան էլ բնությունն աշխատեց այդ օրերում մարդկանց ներս քշել, բայց և այնպես տոնին բազմությունը փողոց դուրս եկավ, և անհամար ոտքերի տակ փողոցների ձյունախառն ցեխը տրորվեց ու սեղմվեց սալաքարերին:

Ձյունաբեր ամպերը կախվել էին քաղաքի վրա, նրանցից ավելի հանդուգներն իջնում էին ցած և խխունջի նման լիզում բազմահարկ տների կտուրները, գործարանների ծխնելույզների գագաթները:

Սակայն օդանավերի երամը վեր սլացավ, կորավ ամպերի մեջ, ապա երկար օձաշարանով պտույտներ գործեց քաղաքի վրա: Ամպերը ձյունի փաթիլներ տեղացին, օդանավերը՝ գույ-
20 նրզգույն թերթեր:

Սրբեմն ձյունի մի փաթիլ քնքշությամբ նստում էր թերթիկի վրա և իջնում: Իսկ ներքևում՝ հազարավոր ձեռքեր որսում էին թերթերը, մանուկներն ուրախ ձիչով թաթիկները մեկնում էին: Ու ձյունի փաթիլը նստում էր նրանց տաք թաթերին, մի վայրկյանում փշրվում, հալվում...

Սրկու օր քաղաքը պատրաստվում էր այդ տոնին: Պսակներ էին հյուսում, վիթխարի պլակատներ նկարում, էլեկտրական ճրագներից գունավոր շղթաներ հյուսում, զուգում-զարդարում գործարանների դռները, տների պատշգամբները, փողոցների խաշաձև անկյուններում հաղթական կամարներ կապում:
30

Մարդիկ էլ էին մաքրվում, հարգարում, լվանում, կարկատում, պատրաստվում: Բոլոր նրանք, որոնք սպասում էին այդ օրերին, ցանկանում էին և՛ մաքուր լինել, և՛ պարզ, կար-

ծես այդ հսկա քաղաքը մի ընտանիք էր, տոնը՝ արդեն միս ու արյուն դարձած օր:

Ու շարժվեց քաղմությունը... Շարժվեցին սեղմ շարքերով՝ տղամարդիկ, կանայք, երիտասարդներ: Դրոշակների ծովը հանդարտ ծփում էր, փայլփլում էին կարմիրի վրա ոսկի տառերը: Քայլում էին գործարանները, երկաթուղին, բանակը, դպրոցները, հիմնարկները, քոլորը, բոլորը...

Մի քանի տեղ մարդիկ իրենց ուսերի վրա էին տանում փոքրերին ու ցույց էին տալիս հրապարակները, փողոցները... Ահա ընդարձակ հրապարակը, որտեղից առաջին թնդանոթը որոտաց տարիներ առաջ, ցրտաշունչ ձմեռվա մի գիշեր...

10

— Տե՛ս, տե՛ս, բալիկ, ա՛յ նա է՛... Մնում է... ու դեռ շատ կմնա, էնքա՛ն, որ դու մեծանաս,— ասաց մի հայր:

Կալանատունը բարձրացնում է կարմիր դրոշը, իբրև վիթխարի նավի կայմ... մարդիկ շեն երևում, իսկ բարձր ձողին քավելով բարձրանում է կարմիր դրոշը, բարձրանում է ու քամուց փռփռում:

Թնդաց մի նվազախումբ, նրան արձագանքեց երկրորդը, երրորդը, և արձագանքը գնաց փողոցներով, հրապարակներով, բազմահազար մարդկանց զուխների ծովի վրայով, գնաց ու դիպավ անհամար դրոշների, և իբր նիրհած եղբանուտ, օրորվեց քաղմությունը: Որոտացին փողերը, թմբուկները, ամբողջ քաղաքը վերածվեց մի պողպատյա ութմի:

20

Պահակներն արձանացել էին մայթերի վրա, փողոցների անկյունում: Երբեմն զգուշությամբ սլում էր մի ավտո, կանգնում մարդկանց ալիքին ճանապարհ տալու, և ապա սրտնեղած ծովում ամայի փողոցը՝ զարտուղի ճանապարհով տեղ հասնելու: Զիավոր պահակները մե՛րթ հսկում էին, մե՛րթ էլ ձիերի տեսքով հմայված, հետ ու առաջ անցնում: Զիերն էլ էին կարծես զգում, որ իրենք էլ մասնակից են հաղթանակի այդ զորահանդեսին, որ իրենց հայրերն էլ կռվել են ստեպներում, անտառներում, և իրենց մեջքին նստել են հերոսներ:

30

Մարդիկ, որոնք դուրս էին մնացել շարքերից, նայում էին պատշգամբներից, պատուհանների հետևից, դռների արանքով: Մի հիվանդ դեռ վաղ առավոտյան բարձր դրել էր պատուհանին և ժամերով սպասում էր՝ երթը տեսնելու: Անսահ-

ման ուրախ էր նա, հիվանդ այդ երիտասարդը և մոռացած
այն, ինչ ասել էր բժիշկը՝ ճակատը չէր հեռացնում սառը պա-
տուհանից:

Մամոռտած, երեսի մաշկը ծալ-ծալ մի կի՛ն վուալը մինչև
քիթը վեր քաշած, նայեց երկար և կոացավ կողքին կանգնած
պառավի ականջին.

— Կարծես ոչինչ, չէ՞...

— Այո,— ասաց նա ու լռեց:

Կուռ շարքերով քայլում են կոմունարները, և նրանց դոփ-
10 յունից փողոցի գրանիտը զրնգում է որպես պողպատ, ու
մեղմ ձայնակցում են փակաղակաները, ուրիշով դիպչում
պղնձյա կոճակներին: Բոց կա աչքերում, քարձր են գլուխնե-
րը և քայլը՝ վստահ: Պողպատյա հալոցք է հոսում և ոչ մարդ-
կային զանգված: Իսկ ձյունաթույր ամպերի մեղմ փայլը խա-
ղում էր սրածայր ավիաների վրա:

Երթի առաջին խմբերը հրապարակը հասան: Ու հանկարծ,
ինչպես որոտը, թնդաց հուժկու «հուռռան»... Մովն է այդպես
մոնչում և ոչ թե մարդը: Հին, խարխլած տներն ասես դողա-
ցին... Աղավինները պտույտ արին եկեղեցու գմբեթի շուրջը,
20 իսկ վուալով տիկինը թեթև ցնցվեց, թիկնեց ամուսնու ուսին:
Քայլում էր ծովացած բազմությունը, որոտում էին հա-
զարաբերան հուռռաները, պղնձյա փողերը հնչեցնում էին
հաղթական մարշ:

Այդպես մինչև մութն ընկներ... Ու դեռ գնում էին:

Մթնում թնդանոթն ավետեց պատմական ժամը: Վիթխա-
րի քաղաքի հազարավոր գործարանների շշակներ միանգամից
ձայնակցեցին՝ հուժկու սարսուցենող սուլոցներով՝ մեկը բամբ,
մյուսը՝ թավ, երրորդը՝ զիլ: Ռակետները հրե օձերի նման
ճեղքեցին ամպերը՝ վճրից գունավոր անձրև թափելով:

30 Ամպերը խողտում էին, աշխատում դանդաղ սահելով
պահվել երկնակամարի մութ խորշերում, որպես գիշերահավ:

Հրապարակի վրա վիթխարի տան ամբողջ ճակատը հրա-
վառ էր: Այդ մի հսկա քարտեզ էր, որի առաջ ծովացած բազ-
մության վրա լուսարձակները կաթնագույն լույս էին մաղում:
Գունավոր ճրագներով նշանակված էին քաղաքները, գործա-
րանները, կարմիր գծերով՝ ճանապարհները, կապույտ՝ ջրանցք-

ները, պղնձագույն՝ հանքերը: Երբեմն մարում էին ճրագները, և մթության միջից դուրս էին թռչում հրե տառեր, շարվում կողք-կողքի: Մի խուլ մոռոց, ինչպես քամին ծովի վրա, անցնում էր հրապարակով: Կարողում էին գրերն ու թվերը...

Այդ հաղթանակների մատյանն էր, տառներկու տարվա գրքի էջերը, քայլ առ քայլ, սայթաքելով, մագլցելով անցած հաղթության ուղին:

Ու մեկ էլ լույսերը ողողում էին քարտեզը, ամայի ստեպների մի խորշը կարմրին էր տալիս, և հառնում էր կարմիր թիվը:

— Այստեղ պիտի լինի Մագնիտստրոյը...

Ու նորից թվեր, նորից կտրուկ բառեր, պարզ և անպաճույճ:

— Վուզան միանում է Դոնին,— և կարմիր հալոցքի նման մի երակ սլաքի նման ձգվում էր, ջրերը թափում ընդարձակ ծովը:

Բազմության մեջ մի մարդ, ինչպես բյուրերը, հարյուր հազարները, աչքը չէր հեռացնում քարտեզից: Փաթաթվել էր մուշտակի մեջ, ոտքերը վեր ու վար էր անում... որովհետև ծերացել էր նա, խոնավությունից մրմռում էր աչ սրունքի հնացած սպին:

Նա աչքը չէր հեռացնում միթխարի քարտեզից, և երբ լույսերը մի վայրկյան հանգչում էին, նրա աչքի առաջ կախվում էր մի այլ քարտեզ, որի վրա կարմիր գիծը դողում էր իբրև պիրկ ձգված լար...

Բուրը խուլական պար էր խաղում մթնած հրապարակում և ձյուն շարտում խարույկների շուրջ հավաքված մարդկանց երեսին: Լույսերը նորից էին ողողում հրապարակը, տները: Ու մարդը ժպտում էր՝ հանդարտ, խաղաղ...

— Ի՛նչ լավ կլինի,— ասաց մեկը:

— Եթե՛ լինի,— կամաց արձագանքեց մյուս երիտասարդը:

— Կլինի՛,— վճռական ասաց մարդը և իր ծանր թաթով մեղմ զարկեց երիտասարդի թիկունքին: Նրանք իրար երեսի նայեցին: Ու երկրորդը գլուխը կրծքին խոնարհեց:

— Կլինի՛ ասում եմ,— կրկնեց մարդը ու անհայտացավ
քաղմութեան մեջ:

Հաստատ ու դանդաղ քայլերով նա մոտենում էր ակումբի
հրավառ մուտքին, որի բաց դռներից, իբր առատութեան եղ-
ջյուր, պղնձյա փողերը հնչեցնում էին հաղթութեան երգը:

Քայլում էր իր մտքերի հետ ու ժպտում՝ աշխատանքի
մարդու իմաստուն ժպիտով...

ԿԱՂՆՈՒ ԳԵՐԱՆԸ

Ինձ շատ է պատահել գյուղերը ման գալ: Շատ էլ պատմություններ եմ լսել իմ պատահած գյուղերում, շատերը մոռացել եմ, բայց մի զրույց մինչև հիմա շարժի նման պտըտվում է գլխիս մեջ: Ես խոստացել եմ «գազեթ քցել» Սիմոն ամուսն և նրա զրույցը, կատարել նրա սրտի փափագը:

— Հուր հավիտյան քեզ պարտական կմնամ,— խնդրել է Սիմոն ամին: Հիմա չրում եմ, բայց չգիտեմ նա ողջ է, որպեսզի նրան կարգան իմ գրածը, թե թաղել են հոր կողքին՝ հին գերեզմանաւանդ: Եթե այդպես է, թո՛ղ այս զրույցը պայծառ պահի նրա և հոր հիշատակը, ինչպես «Արյուն աղբյուրի» ուստան անմահացրել է յուր աշակերտինը:

10

Բայց դառնանք զրույցին:

էս վերջին տարին սարի արոտները չափում էինք, բաժանում գյուղերի վրա: Աշխատանքը ծանր էր, էս սարում մի կուրգան, էն բլուրի գլխին մի նշան, իջիր, բարձրացիր, սահմանները բացատրի: Լավ սարեր են՝ բարձր, կատարները ամպերից վեր: Երբեմն ամպը կոխում էր, ձորերը լցնում սպիտակ քուլաներով, ոչ գյուղ էր երևում, ոչ անտառ, ոչ ճանապարհ:

20

Ամպերից բարձր արև էր, ամառվա պայծառ երկինք, իսկ ներքևը՝ մութ ամպ: Մեր աշխատանքը խանգարվում էր, սպասում էինք մինչև ամպերը ճանապարհ տան դիմացի արոտները տեսնելու: Եթե անձրև գար, իջնում էինք ներքև, գյուղերը:

էդպես մի երեկո հոգնած իջնում էինք: Քիչ անց սկսվեց Օվենի անտառը: Անտառ, ի՛նչ անտառ... Թեև օր կար, բայց

200

մթնեւ էր անտառում, և մեր ձիերը փոնշարով դժվար էին տեսնում և հոտոտում բարակ արահետը:

Անտառից դուրս եկանք, ջների հաշոցի ձայն եկավ: Գյուղը փոսի մեջ էր:

— Մարավ չե՞ք,— հարցրեց մեր ձիականը, որ նույն գյուղացի էր, և կուսցավ ջրի վրա:

— «Արյուն աղբյուրի» ջուր ենք ասում սրան...

Աղբյուրի շատ անուններ էի լսել, բայց այդպիսի անուն չէի լսել: Հետաքրքրվեցի, բայց ձիականը չկարողացավ բացատրել:

10

Մի քիչ էլ իջանք, մեր առաջ ցցվեց մի ավերակ: Ոչ վանք էր, ոչ բերդ: Ավելի նման էր աշտարակի:

— Բեզի ամարաթն է,— իմ հարցին պատասխանեց ձիականը,— «Արյուն աղբյուրը» նրա հայաթումն է...

Երևացին առաջին տները, որոնք կուշ էին եկել ավերակ շենքի շուրջը: Որքան ցածր էին գյուղի տները, այնքան ամարաթն ավելի բարձր էր: Դարեր շարունակ ամարաթի տերերը ճնշել, արյունլվա էին արել գյուղը, որի տները կիսով չափ մտել էին հողի մեջ, ինչպես քարը ծանրության տակ, և այդ ծանրութունը եղել էր ամարաթը:

20

Մեզ բաժանեցին տների վրա: Լավ էր, որ տներում դեռ արթուն էին:

— Սիմոն ամի՛...— կանչեց կատարածուն: Ներսից մեկը ձայն տվեց:

— Ղոնաղ եմ լքել...— ասաց կատարածուն: Մեկը ճրագը ձեռքին դուրս եկավ, դարպասը բացեց, և գնացի մի գիշեր հյուր լինելու անծանոթ մի մարդու, որ իմ առաջ դուռը բաց արեց, դողացող ձեռքին ճրագը:

Այդ անծանոթը Սիմոն ամին էր:

30

Սենյակը նոր էր: Պատուհաններից մեկը նույնիսկ շրջանակ չուներ, իսկ մյուսը՝ ապակու փոխարեն թղթել էին «Մաճկալ»-ի թերթերով: Ամուր շինած սենյակ էր, վրայի գերանները մաքուր տաշած: Միայն մեջտեղի գերանը, որից կախված էր ճրագը, յանդած չէր: Կլեպից երևում էր կաղնի լինելը: Միջի այդ գերանի վրա ուռուցք կար, որ վինում է,

երբ ծառը հիվանդանում է կամ թե կացնով խփում են, խփած տեղը պոռչի նման հաստանում է:

Հենց ուզում էի հարցնել Սիմոն ամոն, թե ինչո՞ւ բոլոր գերանները տաշած են, միայն միջի գերանն է անտաշ, երբ ինքը գլխի ընկավ, ասաց.

— Հիմա կասես, թե Սիմոն ամին անշնորհք մարդ է, հը՞... էսքան սարքել է, էն մի գերանում խոտվել: Է՛...

Սիմոն ամին էնպես ծոր տալով ասաց, որ իմ հետաքրքրությունն ավելի շարժեց:

— Սիմոն ամի, էն ի՞նչ տուն է գյուղից վերև:

10

— Բեգերի ամարաթն էր... էս մեր սաղ մհալը՝ հայ-թուրք նրանց ճորտերն էին: Մմակ, հող, ջուր նշանցն էր:

Ջուր ասելուց մտաբերեցի «Արյուն աղբյուրը»:

— Էդ ինչո՞ւ են «Արյուն աղբյուր» ասում, Սիմոն ամի...

— Պա՛հ, էդ անունն էլ ես իմացել...

Ընթրեցինք: Սփոռցը հավաքեցինք: Սիմոն ամին թե՛ հոգնած կլինես, տեղերը քցեն: Բայց ես խնդրեցի, որ նա ինձ աղբյուրի պատմությունն անի, և Սիմոն ամին այսպես սկսեց.

— Ասացի, որ հողերը, հողի վրա էլ ինչ կա, բոլորը բեգերինն էր: Ճանապարհին ջուրը անցկացած կլինես... Մեր խմելու ջուրը էդ է: Ներքևի թաղում մի երկու աղբյուր կա, նրանք անհամ ջրեր են: Վաղ ժամանակները էս ամարաթը շկար: Բեգերը ապրում էին Բարգուշատում, ամառը գալիս էին մեր սարերը: Իլդրիմ բեյի հայրը, շան փայ դառնա նա, ոնց որ դառավ, անասելի շար մարդ էր: Օխտն օր, օխտը գիշեր մարդ նրա արածները նստի պատմի, շի վերջացնի:

20

Հա՛, էդ անիրավը ամարաթը որ շինում է, էդ մեր աղբյուրի ջուրը ուզում է կտրի, տանի իր հայաթը: Ո՞վ էր կարող ձեն հանի... Ժողովուրդ է հավաքում, ֆահլա հանում, քյունգերով բերում մինչև տան կողքը:

30

Ուստեքը քար են տաշում աղբյուրի համար, քարի ավազաններ են շինում... Բանի ժամանակը ուստայի աշակերտը չլաքյուճը զրաղ է շպրտում, թե ես մատս կտրեմ, էս հարամ գործին շեմ խառնվի:

Բեգը լսո՞ւմ է, ուստայի աշակերտին բերել տալիս: Ասում

371

է, դու քանի՞ գլխանի ես, որ իմ հրամանին հակառակ ես կանգնում: Մին է ասում, երկու, ուստի աշակերտը ասածից հետ չի կենում: Բեզը կատաղում է:

— Դո՞ւ ես ասել, որ մատդ կկտրես, հա՞:

— Ե՛ս եմ ասել...

էդ խոսքն է ասում թե չէ, վրա են տալիս կապոտում, քցում գետնին, բեզը թուրը քաշում է, դրա աջ ձեռքի մատը կտրում:

— Ո՞նց թե,— զարմացած հարցրի ես,— Սիմոն ամի, ախր...

10

— էլ ի՞նչ ախր, ա՛յ որդի,— գլուխն օրորելով շարունակեց Սիմոն ամին,— քեզ հաստատ պատմություն եմ անում... Ես մշակին հաց տանող երեխա էի, մատը կտրած աշակերտին էնպես եմ հիշում, ոնց որ էսօրը: Հրե աչքիս առաջ:

Նա ձեռքը մեկնեց, կարծես, իրոք, մեր առաջ կանգնած էր մատից արյուն ծորացող՝ վարպետի աշակերտը:

— էս խաբարը որ հասնում է նրա ուստային,— լուսթյան մեջ շարունակեց Սիմոն ամին,— գնում է աշակերտին բերում: Ասում է, դու գլուխդ վախ աշխատի, աշխարհն էսպես փակ չի մնա, մի օրից մի օր էս թարս փակած դռները կբացվեն, մեզ էլ մի լույս կծագի: Ասում է էս իմաստուն խոսքը, ոնց հիմա ես եմ քեզ ասում... Լուս դառնա նրա հիշատակը... էն վաղի ժամանակներն ո՞վ կիմանար, թե օր է գալու, որ չի լինելու ո՛չ բեզ, ո՛չ թավադ:

20

Հա, վարպետի խոսքերին զանք: Ասում է՝ ես էնպես հիշատակ թողնեմ, որ մնա, քանի էս աղբյուրի ջուրը մնա: Են բնակավայր տեղ է, ծարավ մարդիկ կգան-կիմեն, քեզ ու ինձ կհիշեն ու շեն ասի, թե խան ու քեզ է եղել աշխարհում:

Ուստան բերում է աղբյուրի ճակատը տաշովի քարով շարում: Որ վերջանում է, աշունք է լինում, բեզը քոշում է արանը, ուստին պատվիրում՝ մինչև հետ գալը իստակ, մաքուր սարքի: Ուստան բերում է աղբյուրի ճակատին փորում աշակերտի ձեռքը, մի մատը կտրած: էդ կտրած մատի տեղն էլ հագցնում է ջրի ծորակը:

30

— Դու աշխարհի բանը տես,— ժպտալով երեսը իմ կողմը դարձրեց Սիմոն ամին,— էդ ձմեռ էլ բեզը արանում որսի է գնում, գնում է ու շան փայ լինում... Ասում են կա-

տաղած ջանավարի բերանն է ընկնում, մեծ պատառը ականջն է լինում: Խարարը մեզ գարունքը հասավ: Արանքն անցավ մի տարի, թե երկու, լավ չեմ հիշում,— վաղուց անցկացած բան է,— տեղը նրա ջահել տղան եկավ, Իլդրիմ բեյը... Նրա վերջն էլ փուշ եղավ,— դանդաղ վերջացրեց Սիմոն ամին և կարծես ինքն իրեն ավելացրեց.

— Էդ վերջերքս էր, թագավորը թախտից ընկնելու տարին... Էն էլ մեզ շատ խաշեց, խաշահանեց... Հերս նրա ձեռքից չկորած,— և խոր հոգոց քաշեց: Ապա դառնալով կնոջը, ասաց.

10

— Ա՛յ պառավ, բա շես ասում մեր դոնադը բեզարած կլինի... Ես էլ խոսքով եմ քցել:

Պառավը ձեռքը մեկնեց անկողնուն: Բայց իմ քունը խանգարել էր նրա պատմածը: Թեև առավոտյան կանուխ պիտի փնայի, բայց երևի էլ առիթ չէր լինի այդ գյուղը գալու: Ուստի ես Սիմոն ամուն խնդրեցի, որ հոր պատմությունն էլ անի: Սիմոն ամին նորից հիշեցրեց իմ հոգնածությունը:

— Չէ, Սիմոն ամի, պատմի... Ես գազեթ եմ քցելու քո ասածը...

Այս խոսքին պառավը նույնպես հետաքրքրվեց և մի քիչ մոտեցավ մեզ:

20

— Ո՞նց թե,— զարմացավ Սիմոն ամին, ապա համեստ ավելացրեց:— Ա՛յ որդի, ի՞նչ գազեթի բան է... Անգլիայից, Մոսկովից, ուրիշ տերություններից գրեք, թե չէ էս իմ խակ առակը ի՞նչ գազեթի բան է:

— Շատ պետք է...

— Կտպե՞ն,— ուրախացած հարցրեց նա:

— Կտպեն:

Սիմոն ամին տեղը շտկեց և շարունակեց:

— Իլդրիմ բեյն էլ հոր ճանապարհով գնաց: Խուլ երկիր, մո՛ւթ մարդիկ: Ո՞վ էր օրենքից հասկանում: Օրենքն էլ նրա կողմը, արդարությունն էլ:

30

Էդ ճանապարհով, որ եկել ես, ծավալում մի քանի թալա տեղեր կան, առավոտ լուսով կտեսնես: «Արյուն աղբյուր»-ի ջուրը տակտվն է գնում: Էդ տեղերը շատ հնուց մերն էր. կո-

րեկ էինք ցանում, գարի, հազար-հազար դժվարությամբ: Էնու ծմակն էր գալիս կոխում, էնու ծմակի գառանները: Կորեկը որ հասնեք, գիշեր-ցերեկ կողքին կրակ արած պահում էինք, մինչև հավաքելը:

Բեզերը էդ հողը վեճի քցեցին: Մենք մի կողմը, նրանք՝ մյուս: Դեա քաշեցինք, դեն քաշեցինք, վերջը շեղավ: Գործը տվինք սուդի, սուդից՝ պրակուրորի, նրանից՝ սենատ: Էնա պատրաստովել էինք մինչի Պետրպուկ մարդ ուղարկել, որ կռիվն ընկավ: Կռիվը որ ընկավ, շատը զոռով, խնդիրքով, կաշառքով մեր հողերը մեր ձեռքին պահեցինք, մինչի հեղափոխությունը:

Շատ ուրիշն էր Իլդրիմ բեյը: Հային շատ էր սիրում, քան թուրքին: Նրանց գլխին էն աղու կրակն էր թափում, որ անասելի: Հայերեն էնպես կխոսեր, որ հայից չէիր ջոկի: Գլուղացու լեզվով կխոսեր, վարժապետի լեզվով կխոսեր, որ ասելի գնա եկեղեցում քարոզ տուր, վարդապետից չէիր զանազանի:

Էս հողերի համար մենք Թիֆլիս մի հայտնի աղվակատ էինք բռնել: Մեզանից երեք հոգի գնացել էին նրան հանգամանքները պատմել: Էդ աղվակատը մեր մարդկանց հույս էր տվել, հետ ուղարկել: Մենք էլ վերջի կոպեկներս, եղած-չեղածը հավաքել ենք տվել նրան, որ սենատումը մեր գործը տանի:

Դատից մի քանի օր առաջ էդ աղվակատի տունն է գալիս մի ճղոտված գյուղացի, մոթալ փափախը գլխին: Աղվակատը նրան հարցնում է, թե ո՞վ ես, ի՞նչ մարդ ես, թե ասում է էն հողի վեճի համար եմ եկել, էս հետ գյուղացիք ինձ են ուղարկել, որ իմանամ, թե գործը ոնց են վճռելու: Աղվակատը դրան հանգստացնում է, թե էսպես, էսպես օրենքից եմ խոսելու, սա եմ ասելու, էս թուղթն եմ ցույց տալու: Էս շինացին ասում է, թե՝ ախր լսել ենք, որ Իլդրիմ բեյը էս խոսքն է ուզում ասի դատի ժամանակ: Բա որ նա ասի, դու ի՞նչ կպատասխանես: Աղվակատն էլ ասում է, թե ես էլ էսպես կպատասխանեմ: Վերջը նրան բոլորովին հանգստացնում է, օրենքներից ցույց տալիս, գործի որպիսությունը պատմում, ճամփու դնում: Գնալուց առաջ էս շինացին նորից է խնդրում թե՛

գյուղացիք մեղք են, ընկնում է ոտքերը, թե քո հույսով են, դու մի ճար անես, ազատես նրանց բեգի ձեռքից:

Շինացին փափախը դնում է գլուխը, դուրս գնում:

Մի շաբաթ հետո դատարանը նստում է: Մի կողմը մեր աղվակատը, թղթերը, օրինագիրքը առաջը: Էն մի կողմը դեռ մարդ չի լինում: Մին էլ, որ քննությունը սկսվում է, խոսքը տալիս են մեր աղվակատին: Ըհը, առաջը կանգնում է Իլդրիմ բեյը՝ կարգին, սարքին հագնված:

Էստեղ աղվակատը գլխի է ընկնում, որ քն խեղճ շինականը հենց ինքը՝ բեգն է եղել, որ թաքուն եկել էր բոլոր գաղտնիքները իմացել: 10

Գլխի են ընկնում, էլ ո՛րտեղ... դատարանը նստած, ամեն մարդ իրեն տեղը:— Սա շշմում է, խոսքը խառնում, էլ չի կարողանում օրենքներն ափ, մեկ-երկուսն ասում է, Իլդրիմ բեյը նրան հակառակ տասներկուսն է ասում, գործը տանում:

Մենք մնացինք քոռ ու փոշման, համ խայտառակ եղանք, համ մեր ծախսը ջուրն ընկավ: Էլի շխրատվեցինք, թարսի ձին նստել ենք: Գործը էն է տալիս էինք Պետրպուկ, որ կոխվն ընկավ: 20

— Բա վերջն ի՞նչ եղավ:

— Վերջը հեղափոխությունը բերեց: Հեղափոխությունը որ ընկավ, դա էլ մտավ իսպալկոմի անդամ: Էն առաջին ամիսները իսպալկոմի կեսը բեգ ու շինովնիկներ էր: Մենք էլ զարմացել էինք, ախպե՛ր, թե թագավորը թախտից ընկել է, էս մեր թագավորներն ինչո՞ւ են գործի մեջ: Իսպալկոմը մի կենտ անդամ ուներ, ինքը ռաշպար: Խոսք է լինում հողերի մասին, թե գյուղացիք պահանջում են հողերը հետ տան: Իլդրիմ բեյը հայրենն հարցնում է մի վարժապետի, թե օրենքով հիմա հողը գյուղացիներին է հասնում: Վարժապետը հա է ասում, սա տուս ու փուս վեր է կենում ժողովից դուրս գալիս: Մին էլ վազ են տալիս, թե հասեք, որ Իլդրիմ բեյի սիրտը ճաքեց, մեռավ... Շեմքի առաջին սառած ընկնում է, ոնց անհոգի քարը: 30

— Էսպես եղավ նրա վերջը: Թե գազեթ ես քցելու, է՛ս էլ գրի,— դարձավ ինձ Միմոն ամին:— Էդպես կորավ անիրա-

վր, և իմ հոր խոսքն էլ կատարվեց, թող լույս դառնա նրա հիշատակը:

— Ի՞նչ խոսք, Սիմոն ամի...

— Հերս, ա՛յ որդի, մի շոքան, բոի մարդ էր... Գոմեշը, որ ցեխում նստեր՝ պողերից կքաշեր, կհաներ, էղբան ուժ կար կոններումը: Գուժանը շալակում էր, սարը տանում, ու գնջիլները կոանը փաթաթում, ինչպես թելի կտորը: Մի օր ծմակը վար անելուց գուժանի մաճը կտորում է: Բանի վատ ժամանակը, որ մի սհաթը մի տարի արժե: Տեսել ես էլի, մեր սարերը, որ մին թխպեց, քառասուն օր արևի երես շենք տեսնի: Հա՛, հերս կացինը վեր է առնում, աչք ման ածելով գնում է, որ մաճի համար ծառ գտնի: Երկու անգամ կացինը վեր է հատում մի շիմշատ կաղնու, ըհը՛, առաջը կտրում է բեզի մեշաբաշին (անտառապահը), նրա հետևից բեզն իր մարդկանցով: Որսատեղից գալուց են լինում: Հերս խնդրում է, աղաշանք անում, շի համոզվում: Կացինն առնում են, իրեն էլ առաջ արած քշում: Հերս էլ շի համբերում, էդտեղ բեզի երեսին ասում է, թե ես մեռած՝ իմ երեխան կենդանի, էս ծառը մե՛րը պիտի լինի:

20 Ծատ շարշարանք քաշեց խեղճը: Բեզի աչքիցն ընկավ, էլ կոռ, էլ բեզյար, էլ անիրավութուն շմնաց թափեց մեր տան գլխին: Էն աժդահա մարդը մաշվեց, մաքառվեց, անկողին մտավ: Մեռնելուց ինձ, թե՛ պարտական մնաս, եթե տեղդ հեշտանալուց էն ծառը չբերես տուն: Աչքերը փակեց և էլ չբացեց:

Տարիներ անցկացավ, գետով շատ ջուր գնաց: Ես հասակ առա, էն կաղնին հաստացավ, դառավ ահագին: Ինչքան կողքով անց էի կենում, հերս կանգնում էր աչքիս առաջը, սիրտս պղտորվում էր: Ասում էի կտրեմ, վեր թափեմ սաղ ծմակը, բեզի ամբարաթը, վախենում էի խմբորակեր մանրերը մնան կրակի մեջ:

30 Էն ծառի անունը մնաց Մանուշարի կաղնի, հորս անունով: Կաղնու կտրած տեղը հաստացել, պտոշ էր կապել: Էլի վերջը մեր արածը եղավ:

— Ինչպե՞ս, — հարցրի ես:

— Այ տես, — և Սիմոն ամին գլուխը վեր բարձրացրեց, մատը մեկնեց միջի գերանին, որից կախված էր ճրագը:

— Էս էն գերանն է... Քառասուն տարի համբերեցի: Շեն մնա սովետական կառավարութիւնը: Առաջին տարին եկան մեզ մոտ փայտ տվին, որ տուն շունեցողը տուն շինի, ինձ էլ տվին... Սաղ գյուղը խնդրեց, որ հորս գերանն ինձ տան: Գնացինք բերինք... Մի ուրախութիւն էր, ո՛ր...

Սիմոն ամին հոգնել էր: Տնեցիք բոլորը քնել էին: Միայն պառավն էր ննջում: Ծա նայեցի գերանին և հասկացա, թև ինչու Սիմոն ամին գերանը չի ունդել:

10

Քնեցինք: Առավոտյան կանուխ ճանապարհ ընկանք դեպի սարերը, աշխատանքը շարունակելու: Հրածեշտ տվի բոլորին: Սիմոն ամին եկավ ճանապարհ քցելու մինչև «Արյուն աղբջուրը»:

Ջարմացած նայում էի հին վարպետի գործին: Կտրած մատի տեղը փայտե ծորակն էր: Թվում էր, ծորակից կաթկըթում է ուստայի աշակերտի արյունը:

Իսկ դիմացն ամարաթի ավերակներն էին: Այդտեղ ապրել է արյունոտ ընկեր:

Ծա շնորհակալութեամբ սեղմեցի Սիմոն ամու ձեռքը և թեքվեցի արահետով դեպի անտառը:

20

Այնուհետև էլ առիթ չի եղել ոչ այն գյուղը գնալու, ոչ էլ տեսնելու Սիմոն ամուն:

ԵՂԲԱՑՐՈՒԹՅԱՆ ԸՆԿՈՒՋԵՆՆԵՐԸ

1919 թվի ձմեռը Շուղանց քարատակը, որ հիսուն տարուց ավելի հարդանոց էր, նորից դարձավ գյուղի հավաքատեղին: Մերուները պատմում էին, որ նույնիսկ Օսմանլուի մեծ կովի տարին այդքան մարդ չէր հավաքվում այդ քարանձավի մեջ: Շուղանց քարատակն այժմ օդա չէր, ինչպես հիսուն տարի առաջ, այլ շտաբ, բազար և մինչև անգամ կլուբ, ինչպես անվանում էր Բալթա Թիվին, որը Բաքվում խոհարար էր եղել և հետը գյուղ էր բերել արծաթ գդալներ, ճենապակե գավաթներ և ափսեներ, որոնց մեջ նրա ընտանիքն ուտում էր ձավարով հիլաթ, անխեն շորվա և խաշած ոսպ՝ այլ անունով աղքատի փլավ:

Քարանձավի այդ քոլոր անունները՝ շտաբ, բազար և մինչև անգամ կլուբ, ունեին իրենց հիմքը: Շուղանց նախկին հարդանոցում պատերազմական գործի հանճարեղ ղեկավարներ կային, որոնք քարայրի հատակին շիբուխի կոթով խազում էին լեռնաշղթաներ, ձորեր և խոր գետեր, ապա այդ խազերից անցում տեղավորում էին շողշողուն քարեր, որ փոխարինում էին Նժդեհի ձիավոր խմբերին, պղնձադրամ՝ Դալի Ղարդաշի տղաների տեղ, ճաքած կոճակ՝ Կտետ կապիտանի զորամասի կամ, ինչպես անվանում էին՝ «տրեխավոր բատալիոնի» տեղ: Աթա ապոր բռնոթամանը միշտ նշանակում էր հանլար փաշայի դիվիզիան, իսկ նրա հոնի վորիզներին «տեր ողորմյան», մուսավաթի բանակն էր: Երբ Աթա ապորը գրպանից հանում էր «տեր ողորմյան» և փռում մի խազի վրա, միշտ նույն խոսքն էր ասում.

— Ա քեզ մատաղ, էս մեր թուրքերը հինչ են ուզում մեր ձորերից... Ախր հի՞նչ կա էս ցամաք ձորերում:

Եվ այդ խոսքերից հետո սկսվում էր զինվորական խորհուրդը, որին մասնակցում էին Աթա ապերը, Քոլում Բադին, Չետանց Վանեսը և Ջանջալ Մանդուն Կլիբոն, խորհրդական ունենալով զինվորների, որոնք արևմտյան ֆրոնտում (« գ ր մ ա ն ու փ ո ո ն թ »),— ինչպես ասում էր Աթա ապերը) թողել էին ոտքը կամ թևը: Այդ խորհուրդն էր քարատակը դարձրել շտաբ, որի աշխատանքներին, եթե կարելի է այդպես ասել, երբեմն մասնակցում էին ուրիշները, երբ նոր լուր էին ստանում իրական ռազմաճակատից և կամ եթե Աթա ապերը կովի էր բռնվում Չետանց Վանեսի հետ, և քարանձավի մեջ ահարկու որոտում էր նրա ձայնը:

10

— Ծս իմ հոր տղան չլինեմ, եթե խանլար փաշայի զորքը Դրնգանի ձորով անց կենա... Գայլի սիրտ կերած պիտի լինես, որ արևով մտնես էն ձորը: Ինչո՞ւ, շես հիշում— և Աթա ապերը բոթում էր ջրաղացպանին, որը տեղը տաքացրել և ննջում էր, ինչպես եթե աղմկող ջրաղացում լիներ, իր հին ջրաղացում, որի դուռն ինչքան ժամանակ է փակ էր, որովհետև ով մի պարկ կորեկ ուներ, գերադասում էր սանդի մեջ ձեծել,— շե՞ս հիշում Դրնգանի ձորը,— և Աթա ապերը բոթում էր ալևոր ջրաղացպանին, որը շէր հիշում Դրնգանի ձորը, այլ հիշում էր միայն ջրաղացի ընկուզենիները...

20

Աթա ապերը, ընդհատելով ռազմական խորհրդածությունները պատմում էր, թե ինչպես մի տարի ինքը և ջրաղացպանն ուլարած տղաներ էին, ուլերը տարան Դրնգանի կողմերը, ուլերը մտան Դրնգանի ձորը...

Ի՞նչ ձոր, ի՞նչ ահի ձոր...

— Իրիկունը, օդորմի իրեն, Օհան ապերը (Աթա ապոր պապը), որ տեսավ ուլերից երկուսը չկան, դանակը դրեց սև ուլի վզին, ասաց. «էնքան ուլը որ Դրնգանի ձորից հանել եք, զուգ էլ ողջում տուն եք եկել, էս մի ուլն էլ ձեզ մատաղ...»: Հիմա ասում ես, թե խանլար փաշան...

30

Եվ Չետանց Վանեսը պարտվելով լռում էր, լռում էին նաև շտաբի մյուս անդամները և միայն ջրաղացպանը, որ Աթա ապոր մանկության ընկերն էր, երկա՛ր-երկար հորան-

379

շում էր, քաղցր և բարակ ձայնով, կարծես շտաբի հարևանը չէր, այլ ամառվա շոգին քնել էր ընկուզենիների ստվերում և զարթնելով միտք էր անում՝ նորի՞ց քնի, թե վեր կենա նայի ջրադացի դամբին...

Այդպես էր այն ուղիղաբան խորհուրդը, որի պատճառով Շուղանց հին քարանձավը կոչվում էր շտաբ: Իսկ եթե կոչում էին նաև բազար, չպետք է կարծել, թե Մելքումովներն իրենց մ ա ղ ա զ ա ն կողպել էին և ապրանքը դարսել քարանձավի խոռոչներում: Ճշմարիտ է, 1919 թվի ձմեռը և դեռևս նույն թվի գարնանը Մելքումովները փակել էին խանութը, բայց ապրանքը նրանք հակերով դարսել էին խոր մառաններում և դեղի համար գյուղացիներին վաճառում էին մի շերթ շաքար, երկու խան արշին կտավ պատանքի և մի վարդ Բաշկինակ նորահարսի համար: Որովհետև ինչքան էլ կյանքը դժվար էր, և շատերը կիսաքաղց էին օրը մթնեցնում, — այնուամենայնիվ հիվանդի սիրտը շաքարով թեյ էր ուզում, ննջեցյալին սովորութուն էր պատանքով թաղել, իսկ եթե առջիկ էին ամուսնացնում, նորահարսին վարդ Բաշկինակ ընծայելն անհրաժեշտ էր, ինչպես հարսանիքի զուռնա նաղարան:

Բայց և այնպես Շուղանց քարատակը նաև բազար էր: Քարատակի մարդիկ կովի լուրերի հետ իրար էին հաղորդում ցորենի, կաշվի, աղի, նավթի և շաքարի մ ա զ ա ն դ ա ն, — թեև նրանց մեծ մասը ոչ գնորդ էր և ոչ վաճառող: Միայն երբեմն փոխանակում էին նորսի գինին, որ անհայտ է, թե ինչ կերպ, նույնիսկ ուղիղաշտով անց էին կացնում ճարպիկ գինեվաճառները, որոնք լավ գիտեին, թե աշխարհում ավելի շատ խմող ուժ կա, քան կովող: Նորսի գինին և Քարահունջի «ջեջան» Շուղանց քարա ռակում մինչև անգամ փոխանակում էին ավանակի փորքաշի հետ:

30 Եվ այդ պատահում էր այսպես:

Դալի Ղարդաշի տղաները հանդից տանում էին մի որևէ Մանգասարի զառամյալ էջը, որի նոր փորքաշը տերը պահել էր ջահել էջ գնելու հույսով: Բայց ահա խորտակվում էր նրա հույսը, քանի որ ժամանակն ահեղ էր, և այնպիսի ժամանակ էր, երբ շատ հույսեր էին խորտակվում: Սակայն գալիս էր անխուսափելին: Մանգասարի կինը ծնում էր մի սպի-

տակ երես տղա՝ «քոլիշ», ինչպես Զանգեզուրում ասում են այն աստղով մանուկներին, որոնք անարատ սպիտակ են, ինչպես գառան վեզը:

Մնվում էր Մանգասարի «քոլիշ» տղան և հետը բերում էր անխուսափելի՝ կնունքը: Եվ էշի նոր փորքաշը նա հանում էր ծալքատեղից, փոխարենը տուն էր բերում մի փարշ Նորսի գինի:

Այս և այսպիսի առևտուր էին անում քարատակի բազարում ամենքի ներկայությամբ, և երբեմն մի բահի կոթի վրա քարանձավում աղմուկը զրնգում էր, կարծես Աթա ապերը Զետանց Վանեսին լեզվակոխ էր արել Խանլար փաշայի զորքի և Դրնգանի ահավոր ձորի համար:

10

Իսկ եթե ոմանց համար քարատակը նաև կլուբ էր, ապա այդ ոմանց մեջ առաջինը Բալթա Թիվին էր, որը և հեղինակն էր քարատակի այդ անվան: Բալթա Թիվին ամենեկին շէր խառնվում զինվորական խորհրդի կամ Աթա ապոր շտաբի նիստերին: Նա այն կարծիքին էր, որ այդ ահագին պատերազմը մի ոչ ինչ բան էր, միաժամանակ համամիտ էր, որ Դրնգանի ձորը Խանլար փաշայի ճաշը չի: Նրա կարծիքով ուսմանը շուտով պիտի սուփրան քցեն, և այն ժամանակ ամեն ազգ իր գոալից կուտի: Դրանով էլ վերջանում էր Բալթա Թիվու և նրա համախոհների վերաբերմունքը Շուղանց քարատակում արժարծվող քաղաքական խնդիրներին:

20

Սակայն նրանք բերել էին այնպիսի սովորություն, որ քարանձավը երբեք չէր տեսել նաև հիսուն տարի առաջ, երբ դեռ հարդանոց չէր, այլ Շուղանց նշանավոր տոհմի օդան էր:

Բալթա Թիվու խումբը թուղթ էր խաղում: Քարատակի ժխորի մեջ մի կողմից հնչում էին ռազմական վեճերը, մյուս կողմն առևտուր էր անում, երրորդ անկյունում ոչ վիճում էին և ոչ առևտուր էին անում, այլ դալլաք Իսոն Ալուն թրով թրատում էր Գլդան Գոդու վեսուտը* և պատմում էր Զնդան Ավթանդիլի կոխիներից,— քարատակի ժխորի մեջ լսվում էին և այսպիսի բացականչություններ:

30

— Շամաթայ բալթայ... Պրիբոր շտա՛ս... էս փոսիկի բիրին, էս էլ կավալերը... Խոա՛փ, բաջօղլի: Զերվոննի տես դյուշան տրեզ... Ինքն էլ իսկական պերսոն... — Եվ հանկարծ

* Վեսի—մացառ, փուշ:

Բալթա թիվին հաջողակ խաղաթղթերը զարկում էր գետնու՜մ, ամբողջ քարատակը լուռում էր, և խոր լուռության մեջ հնչում էր միայն նրա կանչը.

— Խոս՛ւմի, բաջողլի...

— Անդարդը հո պողավոր չի,— մեղմ հանդիմանում էր Աթա ապերը, և բոլորը լսում էին նրա խոսքը, և լսողը հասկանում էր, թե ով է անդարդը:

Բայց չի կարելի ասել, թե քարատակ եկողն անպայման պիտի հարեր խմբերից մեկն ու մեկին: Մեծ մասի համար 10 Շուղանց երբեմնի հարդանոցը տաք անկյուն էր, որտեղ կարելի էր մի առ ժամանակ մոռանալ տան հոգսը, կարելի էր մի բարի լուր լսել և ապրել հույսով, թե շուտով կվերջանա տեր նորընծայի ասած «աշխարհավեր պատերազմը» և մանգաղներն այլևս չեն ժանգոտի: Այդ մեծ մասը երբեմն մասնակցում էր զինվորական խորհրդին, եթե օրվա լուրը շատ կարևոր էր,— և այդ ժամանակ քարատակում ոչ քազար էին անում և ոչ թուղթ էին խաղում: Իսկ երբեմն մի պարկ կորեկի և կես փութ աղի փոխանակումը դառնում էր ամենքի մտահոգության առարկա, երբեմն էլ նույնիսկ Չետանց Վանեսը 20 նայում էր Բալթա թիվու օլիններին...

Քարատակ եկողների մեջ միայն մի մարդ կարող էր ընդհատել նույնիսկ զինվորական խորհուրդի նիստը: Այդ մարդը Նիազանց Անդրին էր, գյուղի սրախոսը, որի պատմությունները մինչև այժմ ասում են, թեև այլևս չկա այդ քաղցրախոս լեզուն: Անդրին մտնում էր, ողջունելով «աստծու ծեծած խեղճերին».

— Հը՛, Աթա ապեր, Ղարսը առա՞ք, թե տվիք... Սպասի 30 ես թիլիպոնով խոսեմ տեսնեմ հի՞նչ կա աշխարհում...— և արձակում էր այժեմազ պարանը, որ գոտու փոխարեն փաթաթած էր մեջքին, պարանի փայտե կեռը հագցնում էր քարատակի դռան ունկին.

— Հը, ցենտրալնի, ա՛յ ցենտրալնի, դավայ Բաբու... Բարիշնա ջան, Բաբու, դա՞, Բաբու... Հը՞, Բաբու: Ա՛յ Բաբու, ախր մարխի ծխում կոտորվեցինք, բա հի՞նչ ես ասում... Արա, ո՛ւր ա պանիրը: Պանրի երես ենք տեսնո՞ւմ: Որ ազոավի 30 ծերտ ենք տեսնում, վրա ենք տալիս... Ղարդաշ, այ Ղարդաշ.

քա երբ ես խոիկ տալի էն Խանլարին: Հը՞, գնում է անգլիացու վրա: Ո՞նց թե, Անգլիայի ճանապարհը հո մեր ձորերով չի: Մենք խոիկ տվինք մեր բաժին անգլիացուն*... Հա, քեզ մատաղ, դարդաշ Հուսեյին, Իվանին բեր, քեր է՛ սարու ուսին: Էնքան շլորի տերև քաշեցի, լյարդս սևացավ: Հա՛, քե ղուրբան, հաց կլինի, նավթ կլինի, շաքար կլինի: Հրեն, Անա գիզին տկոթ է, ամաշում է աղբյուրը գնա... Հը՞, օրիորդ, Հայաստանի կողմեբրում ով կա... մարդ-մուրդ մնա՞ց, թե քոլորն իրար կերան: Դրովի զորքը գալիս է Զանգեզու՞ր... 20
Քո շունը լինեմ, Բևան, էդ կրակը մեզանից հեռու պահի: Խումբի տղերքը մեզ կերան, Մանգասարի էշը փալանով կերան, արտերը կանաչ կերան, մի խակ տանձի համար տեր Նորընձայի... տանձը կերան...

Քարատակը դղրդում էր ժողովրդի ծիծաղից, մինչև անգամ ջրաղացպանն էր ծիծաղում և ուրախության արցունքը գլոր-գլոր ընկնում էր նրա սպիտակ միտքի վրա: Այս և այն կողմից բացականշում էին.

— Այ թե հա՛...

— Դամդ լինի, Անդրի,— և նույնիսկ Բալթա Թիվին, խաղը թողնելով, ասում էր. 20

— Յիրկի վլովուն կլինի, երևելի կլովուն...

Իսկ Նիազանց Անդրին ծիծաղի աղմուկի մեջ շարունակում էր «հեռախոսել».

— Բևան, քանդվես դու, որ քանդեցիր մեզ... Ամեն մի շանորդի երկաթի կտորը քամակից կախել է, ժողովուրդի գլխին կամիսար է դառել: Զինվոր տո՛ւր, հաց տո՛ւր, եղ տո՛ւր, ձավար տո՛ւր,— էլ չմնաց է՛, չմնաց, մենակ սևացած օճորքը մնաց և մեր հարսի...— և նա այնպիսի խոսք էր ասում, որ Աթա ապերը նրան անվանում էր «շեթ անամոթ», իսկ քարանձավում նորից հնչում էր ժողովուրդի ծիծաղը: 30

Բայց ի՞նչ ուրախություն էր, երբ Նիազանց Անդրին ներս էր մտնում սազը մեջքին: Այդ ժամանակ ամեն զրույց վերջանում էր, և այնպես լուռ էին լսում, որ նույնիսկ Աթա ապերը

* 1919 թ. Հուլիսի 4-ին Զանգեզուրից վտարեցին բրիտանական զենեբալ Շատելվորտի միսիան:

գետնից շեր վերցնում բռնոթամանը, ո՛չ նրա համար, որ կմոռանար Խանլար փաշայի բանակատեղը, այլ որովհետև բռնոթի քաշելուց հետո Աթա ապերն այնպես էր սարք գալիս, այնպես աղմուկով էր սարք գալիս, որ մինչև անգամ փոստի տրակտով անցնողները լսում էին նրա փռշտալը, ինչպես եթե մի քերծ փլվեր:

Եվ ամենքը լուռ լսում էին նփազանց Անդրու նվագը... Երեխաները, որոնք մեծերի ահուց մուտք շունեին Շուղանց քարատակը, հավաքվում էին դրսում, դնամուտից լսում էին այդ նվագը և զարմանում էին, թե ի՞նչ կա նփազանց Անդրու ճոթոած, կոշտ և կոպիտ մատների մեջ, ի՞նչ զորութուն կա, որ այդպես լացացնում է մարդկանց:

Այդ երգերը հիմա չկան, և լավ է, որ հիմա այդպես չեն նվագում: Գուցե թե մի հեռավոր գյուղում դեռևս մեկը սազ է նվագում, բայց ոչ այդ սազն է Անդրու սազի նման, և ոչ նրա նվագը: Երբ քարատակում Անդրին նվագում էր, մեկը հիշում էր անհայտ կորած որդուն և սուգ էր ասում, մյուսի աչքերի առաջ հառնում էին լեռներն աշունքին, երբ քոչն արդեն գնացել է, ցուրտ ամպերը լիզում են ուրթի տեղերը, հիշում էր օջախի քարը, որի մոտ ամառը լուսնկա գիշերով կրակ է արել մի շարմաղ աղջիկ... Նա այդ էր հիշում, իսկ նրա կողքին նստողը միտք էր անում, թե ե՞րբ կբացվի իր կյանքի փակ դուռը, տաշտում ե՞րբ հաց կլինի, երեխաները մերկ չեն լինի, ծառ կտնկի, ծառը պտուղ կտա, և երբ հասնի արդար ծերության, իր տնկած ծառի ստվերում կնստի փոհ և երջանիկ:

Երբ Անդրին այլևս չէր նվագում և արդեն սազը կոխում էր պարկի մեջ, — դեռ ոչ ոք ձայն չէր հանում, կարծես ամենքն ուզում էին լսել մինչև վերջին հնչյունը, որ արդեն պոկվել էր լարերից և քարանձավում թրթռում էր, ինչպես արևից զարթնած ոսկե թիթեռ: Եվ նույնիսկ այն ժամանակ նրանք չէին խոսում, երբ Անդրին, սազը պարկի մեջ տեղավորելուց հետո, ասում էր.

— Ինչո՞ւ եք լռել, ա՛յ սրտամեռ խեղճեր...

Միայն այդ ժամանակ ոմանք հառաչում էին, կարծես զարթնում էին խոր քնից, ծխելով թեժացնում էին շիբուխների սառած կրակը, իսկ ով քարատակն էր եկել կաշվե ձողով,

շարունակում էր քերել տրեխացու կաշին: Չեստանց Վանեսը գրպանից հանում էր դա՛վը, ահագին պողպատը զարկում էր կայծքարին, խակ Աթա ապերն առնում էր բռնոթամանը...

— Մաղկես դու, Անդրի... Երեխայի նման մեզ մղկտացրիր... Զորանաս, մեջլիսներում մշտական զա՛ւ. ասր... դաա՛ա,— և պատահում էր այն, որ փոստի տրակտով անցնողները կարծում էին, թե քերծ փլվեց:

Այդ ամենից հետո Բալթա Թիվին դարձյալ շարունակում էր թղթախաղը: Իսկ մյուսները հավաքվում էին Աթա ապոր շուրջը, և ծայր էին առնում այնպիսի զրույցներ, որոնց լսողը կմտածեր, թե 1919 թվի ձմեռը չէ, այլ շատ վաղ ժամանակ, և գյուղում ոչ կոմիսար կա, ոչ ֆրոնտ կա և ոչ ատվի ահ, այլ քարանձավների դարն է, դուրսը ցուրտ ձմեռ է, մուժ խավար,— մարդիկ մտել են այդ թաքստոցը և կրակի շուրջը բուրած պատմում են որսից, գազաններից, քաջքերից, որոնք բնակվում են հենց այդպիսի քարատակներում, կարող են պարել, զուռնա փչել, մթնում կարող են մենակ մարդուն խաբել և քարափից քցել ձորը...

2

Մտավ 1920 թիվը, ձմեռը զոռեց, և սովը սաստկացավ: 20

Թեև Խանլար փաշայի զորքը նահանջել էր, սակայն հաղթանակն ուրախություն չբերեց: Կարծես այդ պատերազմը, որի վախճանին քաղաքում թափոր և զորահանդես եղավ, և գինի խմեցին հաղթողների պատվին,— կարծես այդ կռիվը եղել էր յոթ սարերից այն կողմ մի աշխարհում, որի միայն անունն էին լսել քարատակի մարդիկ:

Հաց չկա՛ր,— ցամաք հաց, գարեհաց և նույնիսկ կորեկի բլիթ չկար: Իսկ ձյունը գալիս էր, և զարնան ոչ մի նշան չէր երևում: Այդպիսի ձյուն Աթա ապերն իր կյանքում չէր տեսել: Իզուր տեղ նորընծան ամեն օր գուշակում էր «բարեխառնություն օդի և ջերմություն ջրի»: Ցերեկը ձյունը դադարում էր, երևում էր սառն արևը, և նոր ձյունի ցուլքն ընկնում էր ժայռերի լանջին: Մարդիկ հագիվ էին մաքրում դուռ ու բակ և ցրտին կուշ գալով մի կերպ արահետ էին բացում դեպի հարևանի տունը, երբ գորշ ամպերը նորից էին կախվում:

30

սկսւում էր ձյունը, լեռնային երկրի ձյունը, որ փջնում է անընդմեջ,— այն սպիտակ ձյունը, որ փայլում է աստղերի լույսով և թվում է, թե ձյունը կաթկթում է ցուրտ աստղերից:

Ահավոր ձմեռ էր՝ դաշտերից ծտերը փախչում էին դեպի հարդանոցները, նապաստակները գիշերով թաքնւում էին դեզերի մեջ, և գայլերը պտտւում էին տաք գոմերի շուրջը, և նույնիսկ նրանցից հանդուգնը գիշերով վազում էր գլուղի միջով իր ետևից ձյունամրրիկի նման բարձրացնելով շների կաղկանձը:

10 Ոչ դիրք էր մնացել, ոչ դիրքապահ զորք: Այդպիսի ձմեռը Սուլթան Մուրադի բանակն էլ չէր անցնի Զանգեզուրի լեռներով:

Աթա ապտր շտաբն այլևս չկար: Պղնձե բռնոթամանը նա այլևս գետնին չէր դնում, որովհետև բազմաթիվ ձեռքեր մեկնրւում էին նրա կողմը, մանավանդ Քալանթար Բեդին թաթն այնպես էր կոխում, կարծես Աթա ապտր բռնոթամանը վայրի մեղրաբուն էր: Միայն նրա ձեռքին հոնի «տեր ողորմյան» էր:

Կորիզները գլորերով Աթա ապերը գուշակում էր, թե երբ պիտի բացվի լավ օրը, և վերջին կորիզը միշտ ընկնում էր աստծու անվան և ապագան մնում էր մութ: Աթա ապերը լուում էր և եթե խոսեր, միայն ջրաղացպանին կասեր.

— էլի փառք, որ շառի վրա շեկավ...

Բազար էլ չկար: Ոչ առնելու բան կար, ոչ ծախելու: Միայն Բալթա Թիվին էր աննկուն: Քարատակում որքան ավելի խոսում էին հացի մասին, նրա խումբն ավելի համարձակ էր խաղում: Արդեն խաղում նա տարել էր Մելքունտաների մաղազան, Կատարի խաչի ուռիները, տեր Նորրնձայի ջորին, մինչև անգամ Կուտուռուզ Սաքոյի Բողար շունն էլ տարել էր և խաղը մեծացնելով տեղափոխվել էր Բաքու և մեկը մյուսի ետևից տանում էր կիանոզովների նավթահորերը:

30 Երբեմն մեկը քարատակում հառաչում էր թոքերը կտրատելով և այնպես խոր, որ հարևանը նրան էր նայում, կարծես այդ հառաչի հետ դուրս էր թռել հառաչողի շունչը:

— Իսոն ասում էր էգուց եզը պիտի մորթի,— լուռթյան մեջ լսվում էր մի ձայն:

— Իսո՛ն...

— Ասում են եզր պիտի մորթի...— և ասողը նայում էր հարևանին, աչքերով հարցնում էր, թե եթե Իսոն եզր մորթի. ի՞նչ կլինի:

— Իսոյին փնշ... Եզ էլ կմորթի, գոմեշ էլ կմորթի: Իսոն կանի:

— Դու ինչո՞ւ չես մորթում... Քո տավարն Իսոյից շատ, մի բեռ գարի էլ ավել,— անհայտ է, թե ինչու, առաջինի վրա հարձակվում էր մի ուրիշը, որը քարանձավի մթնում մինչ այդ չէր երևում: Նա Իսոյի ազգակա՞նն էր և առաջինի թշնամի՞ն, թե՞ բաժին էր ակնկալում Իսոյի մորթելիք եզից,— մութ էր և միայն ներկաները մտաբերում էին, որ խոսողի փոքր երեխան երեք օր է կապտած ընկած է, և, ինչպես կանայք էին ասել, մնացել է երեխայի վաշին և ոսկորը:

— Ա՛յ ժողովուրդ, ես պակաս խոսք հո շտաացի, տր էն մարդը տեղն էրվեց...

— Ես քո մտքինը լավ գիտեմ,— և մթնից դուրս էր գալիս դեղնած երեսով մի մարդ, որի նույնպես վաշին և ոսկորն էր մնացել:

— Մտքինդ լավ գիտեմ... Եզներդ ուղարկել ես աներոջդ տունը, երեխեքդ կուշտ, էգուց էլ վար ես գնալու ուրախուրախ, իսկ Իսոն ձեռքը ծոցում պիտի մնա,— նրա աչքերը վառվում էին մթնի մեջ,— պա՛հի, պինդ պահի, քո երեխի արյունն իմից կարմիր է, չէ՛...

Ներկաներն ուզում են նրան հանգստացնել: Նրանք գիտեն, որ խոսողն այն խեղճ մարդը չէ, այլ սովից գաղազած նրա ոգին: Իսկ նա բորբոքվելով հետզհետե քարձրացնում է ձայնը, հայհոյում՝ անհայտ է, թե ում մեռել-կենդան և ձայնը մինչև վերջ խզելով դուրս է թռչում, կարծես քարից իրեն քցեց անդունդը:

Այդպիսի ժամանակ մարդիկ քարատակում լուռ էին, և նույնիսկ Բալթա Թիվին այլևս չէր խաղում: Մարդիկ իրար էին նայում. նրանց դեմքերը համր էին և մոռյլ, ինչպես քարանձավի պատերը:

Աթա ապերը առաջինն էր խոսում.

— Ժողովուրդ, հապա էն խելագարն ո՞վ էր, մեր տղան չէ՞ր... Ուրեմն թողնենք, որ նրա երեխան մեռնի: Ուրեմն

մենք մեռած պիտի լինենք, որ մեր երեխան սովից մեռնի:

— Ինչ անենք, է՛, Աթա ապեր, ինչ անենք...

— Ում տանը մի բուռ կորեկ կա, թող նրա տունը կրակ բռնենք...

— Լավն էն շէր, որ սրով կոտորվեինք:

— Մենք սրով շենք կոտորվել, սովից էլ շենք կոտորվի: Ուրեմն արար աշխարհը պիտի մթնի, որ մենք սովից կոտորվենք: Առաջ էլ է սով եղել, պատերազմ է եղել,— ինչպե՞ս են ապրել մեր պապերը: Օղորմի իրեն, իմ Օհան պապին, մի

10 պինդ սովի ժամանակ դալիս է տեսնում ժողովուրդը տավարի նման արածում է, իրա հերն էլ ցորենի հորը բաց է արել, թաջ իրն երին ցորեն է ծախում՝ սոմարը մի աբասի: Մահակը վեր է առնում իմ Օհան պապին, թաջիրներին տո՛ւր թե կտաս, էն օրն է քցում, որ եկած ճանապարհը մոռանում են:

— Այ թե հա՛...

— Օղորմի Օհան պապին,— սրտի խորքից գոհ կանչում էր ունկնդիրներից մեկը, կարծես անհայտ թաջիրները նրա թշնամիներն են, և ինքն էլ մասնակցել է ծեծին:

20 — Հա՛, Օհան պապին ցորենը ետ է ածում հորերի մեջ և հորն ասում է՝ վե՛ր կաց, հիմա ես պիտի չափեմ: Նստում է հորի բերանին, ժողովուրդին կանչում է, որին մի կոտ, որին երկու, լցնում է պարկերը, թե շահով, կարգով ետ կբերեք, երբ ունենաք:

— Ա՛յ արդար դատաստան...

— Առաջ էլ է սով եղել, հապա ո՞նց են արել...

— Ո՛ւր է հիմա Օհան պապի, ո՛ւր էն ժամանակի հորերը... Աշխարհի վերջն եկել է, Աթա, զուր հենց մենք ենք շարշարվում,— ասում էր Չիտանց Վանեսը, որը շտաբի անդամ եղած ժամանակ էլ կարծում էր, թե Խանլար փաշան Դրնգանի ձորով կանցնի և այդ անխուսափելի համարելով առաջարկել էր գյուղը վաղօրոք տեղահանել Մեղրաքերծի անտառը:

30 — Հորեր շա՛տ... դու հանելն ասա, Աթամի...

1920 թվի սկզբին դիրքերից տուն էին վերադարձել այն զինվորները, որոնք կազմում էին ինքնապաշտպանության կանոնավոր զորամասեր, վերադարձել էին նաև նրանք, որոնք պարտադիր զինվորական ծառայության մեջ չէին, այլ Զան-

գեգուրի զինված ուժերի հրամանատարի առաջին հրամանին պարտավոր էին «իրենց հացով և ջրով» բարձրանալ լեռների և դիրք պահել գյուղերին մոտիկ: Նրանց մեծ մասը արևմտյան ֆրոնտում մասնակցել էին այնպիսի պատերազմների, որոնց համեմատությամբ տեղական կռիվները սոսկ «զլխացավանք» էին: Առաջիններից էր կազմված «տրեխավոր բատալիոնը», իսկ երկրորդներն ունեին փրենց յուրահատուկ կարգը, որ նմանվում էր քրդական աշիրեթին. «բառկալո»*, և քոլորը բարձր էին քոչը, ախսինքն մի քանի օրվա պաշար մեջքերին բարձրանում էին լեռները:

10

Այդ զինվորներից ոմանք երևում էին նաև Շուղանց քարատակում, թեև նրանք դերադասում էին հավաքվել ընկերներից մեկի տանը, այդ տունը վերածելով զորանոցի: Քարտակ մտնելով նրանք բերում էին ոչ միայն շինելի և սպառֆների հոտ, այլև մասնակցում էին գյուղացիների զրույցին, և Աթա ապերն զգում էր, որ նրանց հետ դժվար է զուլս դնել:

Աթա ապերը զգաստացավ, երբ Անդոն, այդ զինվորներից մեկը և հենց Աթա ապոր եղբորորդին, ասաց.

— Հորեր շատ, դու հանող ասա, Աթամի...

20

— Այ տղա, ե՛...— Ի՞վ Աթա ապերը ձայնը բարձրացրեց, որովհետև հակառակորդն իր արյունն էր, — ես գլխի եմ, թե ուր ես ծուռ, համա առաջդ քար կա... Կամաց, վեր կրնկնես...

— Աթամի, թե հորի բերանի քարն ես ասում, կզլորեմ Սանդ աղբյուրի ձորը: Թե չէ ուրիշ քար չկա:

Մի քանիսը ծիծաղեցին Անդոյի այլիմաստ պատասխանի վրա: Նրանք հասկացան, որ Անդոն ակնարկում է եղբայր Մելքումովների հորերը, քանի որ Սանդ աղբյուրի ձորը նրանց տան սուաջն էր:

30

— Քեզ ո՞վ է էդպես խրատել... Ուրեմն Մելքումովների ցորենը դո՞ւ ես աշխատել: Դու խնձորին լ ո լ ո էիր ասում. որ նրանք մաղազա բաց արին, ցորենատեր, փողատեր եղան: Հիմա ասում ես...

* Բառկալո—քոչը բարձնելու հրաման՝ քրդերեն:

— Աթամի, ախր Օհան պապի հորերը չկա է՛...

— Օհան պապին չկա, ողջ մնա շենը: Հապա էսքան մարդ մի Օհան պապի շարժի՛:

— Շատ էլ արժի, հաց տուր է, հա՛ց...

Եվ քարատակում սկսվում էր սուր վեճը, «կոաժմունք»-ը, ինչպես ասում է աշխարհի շար ու քարուց հեռու ջաղացպանը: Անդոն մի կողմից, Աթա ապերը մյուս և երկուսին էլ միանում էին կողմնակիցներ, վեճն այնպես էր թնդում, որ հեռվից լսողը կկարծեր, թե երկու գյուղի միջև ջրի կռիվ է, և ահա ուր որ է պիտի տրաքեն մահակները:

10

Վեճի թունդ ժամանակ Աթա ապերը սկսում էր հայհոյել Անդոյի քեռիներին, որոնց կողմն էր քաշել Անդոն, իսկ նրանք՝ Անդոյի քեռիները, Աթա ապոր ասելով, քարվան կտրողն եր են: Նա հայհոյում էր Անդոյին ճանապարհից ծոռղնեբրին, նրա խրատիչներին՝ մեծից մինչև փոքրը, ապա շուռ էր գալիս Անդոյի պաշտպաններից մեկի կողմը, ներկում էր նրա յոթ պորտը, անվանելով բակլայի գող, մատաղ ուտող, մաղ ծախող բոշա և էլ ինչեր չէր ասում Աթա ապերը, երբ գազազում էր և սկսում էր հակառակորդին հայհոյել:

20

— Աթամի, եկել է, եկել... Հրեն դռանը կանգնած, — և Անդոն նայեց դռան կողմը: Եվ նրանք, որոնք շհասկացան Անդոյի հնարը, բոլորը նայեցին դեպի դուռը:

— Ո՞վ է դռանը կանգնած, — և Աթա ապերն էլ նայեց դեպի դուռը:

— Ժողովրդի թշնամիների հոգեհառը, — և Անդոն իսկույն թաքնվեց հարևանի հետևը, որովհետև Աթա ապերը գլխի ընկնելով, որ Անդոն իրեն կապ գցեց, ձեռքը մեկնեց մահակին:

30

Ժողովուրդը քրքջաց:

— Անդո տղա, հալբաթ ձեռքս կրնկնես... Հո չեմ վախելու քո խշտիկից: Ես իսկի Ալխազով պրիստավից չեմ վախեցել: Կամիսարին ասեմ էդ փափուկ տեղերիդ մի տասը ճիպոտ տա, որ իմանաս, թե ճանապարհը որն է... Աչքերդ հենց պատրաստի վրան է: Աշխատեք է՛, դուք էլ աշխատեք, Մեղքումովների նման դիզեք: Էս էլ դառավ էն բունթի տա-

րին: Մի քանի շահել եկան ժողովուրդին խելքահան արին, իրար մսի քցեցին,— հետո էլ թողին փախան: Չէ՛, ճանապարհն էդ շի...

— Ասա է, խոսքդ ասա, Աթա ապեր,— և ծերունին հանգարտվում էր:

— Իմ խոսքս նա է, որ էլի մենք իրարի ցավ կիմանանք: Սրտից սիրտ մի քարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ գարծնողը: էն էլ որ շինի, գետը թող քշի տանի մարդուն: էն որ կռունկը թուխպի մեջ ցրիվ է գալիս, լսե՞լ եք ոնց են իրար կանչում, ու մինն էլ է շի կորչում: Ուրեմն մենք էն **10** երկնային թռչունի շափ էլ չկա՞նք... Իրար ձեռք բռնեցեք, մինչի դուրս գանք էս դժվար տարին: Իմ խոսքս սա է...

Եվ Աթա ապերը տուն էր գնում, առնում էր մի բուռ ձավար, մաշ, շորաթան,— ինչից որ տանը ճարվեր, շատ անգամ թռռներից ծածուկ, ուղարկում էր այն տունը, որտեղ մի երեխա կապտած նվում էր և նման էր շոր պարկի, որի մեջ ոսկորներ են լցրել:

Այն դժվար ձմեռը Աթա ապերը ձյունի մեջ գլորվելով քարձրանում էր հին եկեղեցու թաղը, նա երևում էր Միջին մահլայում, գնում էր այն աղքատ թաղը, որ հայտնի էր Մոխրաթաղ անունով: Նա դրացիներին համոզում էր իրար օգնել, ստիպում էր, հանդիմանում էր հրապարակով և ավելի հաճախ հուսադրում էր. **20**

— Հրե հա՛... Մեղրաքերժը կարմրեց: էսօր վերին թաղում ասում էին, որ Եղջաքար ձյուն չկա: Դիմացեք հա՛, ձեզ մատաղ, շատը գնացել է, մնացել է քիչը: Եղջաքարում որ ձյուն չկա, ուրեմն էսօր-էգուց Միջնաոխ հանդերը կբացվեն, Ծգնարածի առվի տակ դաղձ կլինի, ի՞նչ դաղձ... Քիչ է մնացել, Աթա ապերը ձեզ մատաղ: Մանր-մունրին մի կերպ արեք, դուք էլ գոտիներդ պնդացրեք... Դուք որ քարից կակուղ ամեն **30** ինչ էլ ուտեք, կապրեք, ձեր ոսկորը պինդ է: Երեխաներին նայեք... էսօր-էգուց ճանապարհները կբացվեն, էշերը առաջ կանենք, կգնանք Բարկուշատ, է՛, Աթա ապերը ճանանչ թուրքեր ունի, որ ամեն մի՛նը մի խան, մի սուլթան: Հիմա հարյուր ուղտաբեռ բրինձ են դարսել...

Մայրերը լսում էին նրան, լսում էին և հոգսի տակ կքած

հայրերը, և թեև ապրելը ծանր էր, բայց էլի Աթա ապերը հույս էր կամ ինչպես ասում էին ցորենն լեզու էր, որ նման էր ցորեն հացիս:

3

Մարտի վերջին երեք օր արև արեց: Արեգոմնի ձորերում ձյունը հալվեց, Եզնարածի առան բացվեց, և երևացին մուգ կանաչ դաղձի առաջին թփերը:

10 Բայց հենց այդ երեք օրում մեկը մյուսի հետևից մեռան հինգ երեխա, որից երկուսը մի տնից էին: Գյուղի համար այդ ամենածանր օրն էր: Պատահել էր, որ կայծակը խփել էր ոչխարի հոտին, և հոտի կեսը այրվել էր,— պատահել էր, որ արև կեսօրին հանկարծ հեղեղը սրբել էր հասած արտերը և մինչև անգամ հնձվորին էր խեղդել. տարի էր եղել, որ նախիրի մեջ սև ցավը հունձ էր արել և ինչպես հնձվորի աչքից վրիպած հասկեր, ամբողջ գյուղում մնացել էին մի քանի նիհար երինջ,— բայց որ սովից հրեխա էր մեռնում այդ ավելի էր պատուհասից:

20 Ամբողջ գյուղը հավաքվեց դժբախտ տան բակը: Երբ տնից հանեցին զույգ դազաղները երեսները բաց,— մարտի արևն օժեց, և ոսկեփայլ շողացին մանուկների դեղնած արտեվանոնքները: Տանը սուղ բարձրացավ: Թշվառ մայրը ձեռքերը շեմքից դուրս արած կանչում էր. «Մ'ըր եք տանում, իմ ձագերին ո'ւր եք տանում...»: Կանչում էր ձեռքերը դեպի արեվը, կարծես արևին աղերսում էր կյանք տալ սառած մանուկներին:

30 Այն լեռնային երկրի սովորության համաձայն դիակին ուղեկցում էին միայն տղամարդիկ: Կանայք մնացին տանը ողբ ասելու նոր և հին մեռելների համար, որոնք ննջել էին ուլ գիտե որ տարին: Իսկ թաղման թափորը դանդաղ բարձրանում էր դեպի ժայռերը, դեպի գյուղի հինավուրց գերեզմանատունը:

Աթա ապոր սիրտը լցվել էր: Նա այն լեռնցի ծիրունիներից էր, որոնք իրենց կյանքում շատ անգամ են նայել մահի երեսին, կոխ են բռնել գայլի հետ, գիշերը մենակ գնացել էն մութ անտառներով, գիշերել են ձորի արխաջներում, տեսել են թրատված և արնաշաղախ դիակ,— և ոչ լաց են եղել,

ոչ հառաչել են: Բայց մի փոքր երեխայի լաց կարող է նրանց հուզել:

Աթա ապերն այդ լեռնցի ծերունիներից էր, և երբ թափորը գյուղից դուրս եկավ, հանկարծ նրա սիրտը փլվեց, և ծերունին սկսեց ողբ ասել: Լսե՞լ եք դուք լեռնցիների ողբը, ո՛չ ախ՛ն ողբը, որ կանայք են ասում, շար ընկնելով պատի տակ կամ գերեզմանի շուրջը: Նրանք բարակ ձայնով են երգում և ինչքան ողբան, այնքան բորբոքվում է սուգը և ոչ վերջ կա, ոչ հոգու հանգիստ: Այդպես են ողբում լեռնցի կանայք, և լսելով նրանց, թվում է, թե մոլորվել եք մի անտակ ձորում և ուր էլ դնաք բարձր ժայռեր են և փրկության դուռ չկա: Բայց այդպես չեն ողբում լեռնցի տղամարդիկ և այդպիսի ողբ չասաց Աթա ապերը: Նա սկսեց խոր ձայներից, հանդարտ, ինչպես հողմի առաջին ալիքը, որ անցնում է անտառի վրայով և արտերի վրայով, երբ ծփում են խոտերը, և լորը դեռ չգիտե. որ ահա ձագերի վրա կթափվի սև կարկուտ: Աթա ապերը խոր սկսեց, ինչպես հորովելի սկիզբը, ապա բարձրացավ, կեռամաններով ոլոր-մոլոր բարձրացավ, և ինչքան բարձրացավ, հզորացրեց ձայնը և վերջում, ինչպես սևակնած երկնքի որոտ, դղրդացրեց և արձագանքը դրնգալով գնաց մինչև Մեղրաքերծ, մինչև Զինգիլա քարերը գնաց, և յոթ անգամ Պղնձաքարը դրնգաց:

Այդ ողբ չէր, այլ ահարկու բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձայնակցում էր ձմեռվա քնից զարթնող բնությունը և քարե արծիվը, որ երգի աղմուկից դուրս էր թռել, — քարե արծիվն իր թևերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ:

Գերեզմանատնից Աթա ապերը գնաց Խուռուփի ձորը, որտեղ արևաճակատ ավազահողերն արևից տաքացել, և ձյունը հալում էր: Զորում մարդ չկար: Տաք էր. Աթա ապերը գնաց ձյունների վրայով, սև ավազահողերով գնաց, կոխելով կածանը, որ տեղ-տեղ բացվել էր և նստեց գետափի քարին:

Խատուտիկ ջրածուերը քարից-քար թռչելով որսում էին մծեղներ: Մի ագռավ ձյունի վրա կտցահարում էր չորացած տանձը: Հերվա մասուրները կարմրին էին տալիս, իսկ մոշի տերևները կարծես նոր էին կանաչել:

10

20

30

— Փա՛ռք քեզ, որ ամեն բան կարգին սարքել ես, մինչև անգամ մժեղին էլ անտես չես արել... — Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապերը՝ աստուծո՞, որ ապրում էր Խուռուփի ձորի արխաջում, — հին թթենն ո՛ւ հետ, որի փշակում գուցե ապրում է այն տգին, որ Աթա ապոր նման սպիտակամորուս ծերտնի է և տրեխներ է հագնում և մինչև անգամ արխալուղի գրպանում պղնձե բռնոթաման ունի: Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապերը, — ինքն էլ չգիտեր, բայց խոսում էր, որովհետև շէր կարելի գարնանամուտի արևին լինել Խուռուփի խաղաղ ձորում, լսել ջրի ձայնը, այն խորհրդավոր ձայները, որ հնչում են քարանձավներում, — տեսնել ձորը խոր լուծթյան մեջ և շխտել:

10

— Մա՛հ էիր բաժանում, — արժանի մարդու տայիր... Հրեն Գիշունց պառավը երկու տարի աղատ-պաղատում է հոգին առնես... Հապա դու կո՛ւյր էիր, քո ձեռքն ի՞նչպես բարձրացա՛ւ անմեղ փոքրերի վրա: Հիմա ես ի՞նչ պատասխան տամ խալխին: Առաջից սուր, ետևից սով. ձեռքդ պարանի ես քրցում, օձ է դառնում: Ո՛ւր պիտի գնա էս ժողովուրդը. վերևից կամխարն է մեր գլխին կրակ թափում, ներքևից էս կրակն է մեզ խորովում: Ասա է՛, ասա...

20

Ջրածտերն ուրախ ճկում էին, խաղացնելով պոչը: Ուրիշ ծառից թռավ մի ագռավ և առաջինից խլեց նրա ուտելիքը: Ապա երկուսն էլ թևերին արած թռան ծառերի խորքը: Եվ ուրիշ էլ ձայն չկար, բացի այն խորհրդավոր ձայները, որ գալիս էին Խուռուփի քարանձավներից:

Աթա ապերն սկսեց ձորով բարձրանալ: Ձորի արևկող լանջձորին ձյուն չկար: Երևում էին աշնանացան գարու արտերը, փոքր այնքան, որ թթենու ստվերը ծածկում էր արտը:

Աթա ապերը կանգնեց մի արտի եզրին:

— Երբ պիտի հասնես... Ախր մի տնից գույգ դագաղ

30

հանեցինք...

Նա դուրս եկավ բլուրի գագաթը: Վերևը դեռ թանձր ձյուն էր: Աթա ապերը շրջվեց և այդպես էլ կանգնած մնաց, կարծես այն, ինչ նրա աչքին ընկավ, ծերունին տեսնում էր առաջին անգամ:

Հեռվում գետահովտի վրա փռվել էր քաղաքը: Թիթեղյա կտուրները մայրամուտի արևից փայլվում էին, և այդ փայլը

տարածվում էր հեռու, ընդարձակելով քաղաքի սահմանները: Այդ փայլուն դաշտում, ինչպես ցորենի դեղին շեղջ, երեւում էր եկեղեցու ոսկեզօծ գմբեթը: Եվ ուրիշ ոչինչ չէր երեւում, և չէր որոշվում մի առանձին ձայն այն խուլ աղմուկի մեջ, որ փայլի հետ միասին քաղաքն արձակում էր դեպի հեռունները: Մարդկա՞նց աղմուկ էր, դարբնոցների՞ց էր գալիս, թե փողոցներով անցնում էին բեռնած ֆուրգոններ,— չէր լինում որոշել, ինչպես և չէր կարելի համատարած փայլի մեջ նշմարել մի որևէ տանիք:

Աթա ապերը նայեց, խոր նայեց և արագ քայլերով իջավ գյուղի վրա: Նա նման էր անտառաբնակ եղջերուի, որ մոլորվելով դուրս է եկել անտառից, աչքն ընկել է օտարոտի մի բանի, որ շլացնում է և հմայում է և ահ է ներշնչում նրան, և եղջերուն կանգնած միտք է անում՝ ի՞նչ է այդ, թակարդ, բարեկամ, թե՞ դարանամուտ որսորդ... Միտք է անում և իրեն գցում է ծանոթ թավուտները: 10

4

Իսկ գյուղում այդ ժամանակ իրարանցում էր:

Մի խումբ զինվորներ գերեզմանատնից վերադառնալով, գյուղացիների գլուխն անցած գնացել էին դեպի Մելքումովների բարձր դարպասը: Նրանք պահանջել էին կոմիսարին և տեղեկանալով, որ կոմիսարը բացակա է, աղմկելով ներս էին մտել: Մելքումովների մեծ եղբայրը ամբոխից ահաբեկված մի բառ անգամ չէր կարողացել ասել: Նրան կիսամեռ ներս էր տարել նրա եղբայրը: Նրանց կանայք և երեխաները վախճաստուն էին բարձրացրել, իսկ ամբոխից գոռացել էին. 20

— Հորերը բաց արեք... Մերոնք սովից կոտորվում են...

— Ես հոր շունեմ,— պատշգամբից բղավել էր Մելքումովների փոքր եղբայրը,— եթե այս երիտասարդները չգիտեն, դուք հո գիտեք,— և նա մի քանիսին մատով ցույց էր տվել, նրանց անոմներն ասել էր և այսպիսով երկպառակել էր բազմութունը: Նրանք, որոնց նա անոմներով կանչել էր, ներքևից բղավել էին, որ այդ գործում խառը չեն և եկել են հաց խնդրելու իբրև բարեկամներ: Այդ խոսքից 30

գազազել էին մյուսները, և զինվորներից մեկը Կուտուռուզ Սաքոյի երեսին թքել էր:

— Թող հորերը բաց անեն, թող բաց անեն,— ներսից ասել էր մեծ եղբայրը, իսկ ամբոխն ինքնագլուխ հարձակվել էր հորերի վրա, որոնցից երկուսի բերանին Մելքումովները խոտ էին դարսել:

Սակայն շորրորդ հորն էին բացել և շորսի մեջ էլ մի հատիկ չկար: Մի հորը լիքն էր բրդի պարկերով, այն երկու հորը, որի վրա խոտ էին դիզել, բերնե-բերան լցված էր պղնձե կաթսաներով, փարչերով, կժերով և ուրիշ պղինձներով: Իսկ շորրորդ հորը՝ ամենից մեծը, դատարկ էր և երբ մեկը կոացավ հորի վրա և բղավեց «հաց չկա՛, չկա՛»,— հորն արձագանքեց՝ «կա՛... կա՛...»:

Դատարկ հորերից սիրտ առնելով նրանք, որոնք հայտնել էին, թե իբրև բարեկամ են եկել,— սկսեցին հանդիմանել նախաձեռնողներին: Կուտուռուզ Սաքոն բղավում էր այնքան բարձր, ասես կամենում էր, որ Մելքումովները տնից լսեն նրա խոսքը.

— Զկա՛, չկա՛... Այ մարդիկ, բա դուք հա՛յ չեք: Ուրեմն սրանք մեզ թշնամի են, որ հաց ունենան և թողնեն, որ մենք սովից կուտորվենք...

Ասում են, որ այն զինվորը հենց այդ խոսքից հետո է թքել Կուտուռուզ Սաքոյի երեսին:

Հորերի դատարկ լինելը շատերին հուսահատեցրեց: Մի մասն իսկույն ցրվեց տները, անիծելով այն ժամը, երբ խառնվեց տաք զուխ երիտասարդներին: Բակում մնացին զինվորների խումբը և գյուղացիներից նրանք, որոնց պարագլուխը Կուտուռուզ Սաքոն էր: Զինվորները պահանջում էին ցույց տալ իսկական հորերը. նույնիսկ մեկն սպառնաց տունը հրդեհել, իսկ Մելքումովների փոքր եղբայրը միայն կրկնում էր, որ այլ ուրիշ հոր չկա, որ իրենք էլ քաղաքից են հաց բերել: Ավելի համոզելու համար նա պատշգամբից զինվորների կողմը նետեց բանալիների կապը և բղավեց.

— Բաց արեք տարեք, ինչ ուզենաք, քայց հաց չկա...

Անդոն բանալիների կապը հետ շարտեց և նրանից ավելի հզոր կանչեց.

— Քեզ լինի քո մաղազան... Մենք աղքատի պղինձը կո-
ղոպտող ավազակներ չենք:

Անդոյի այդ խոսքից կարող էր բռնկվել ավելին, քան
խոսքի կռիվն էր, բայց այդ ժամանակ ներս թափվեցին
զինվորների կանայք և մայրերը, որոնք մինչ այդ մեռելատա-
նը դառնաղի ողբում էին մանուկների մահը: Նրանք ներս
թափվեցին, ինչպես սագերի վախեցած երամ, աղմկեցին,
կախ ընկան իրենց որդիներից և ամուսիններից, աղերսեցին,
լաց եղան, իսկ Անդոյի մայրը ճչաց:

— Անդո, խեղճ եմ, արյուն մի անի,— և գրկեց որդուն: 10
Կանայք նրանց դուրս տարան:

Աթա ապերը գյուղին մոտեցավ այն ժամանակ, երբ
գյուղացիները կտուրների վրա փոքրաթիվ խմբերով աղմկում
էին: Ամբոխն, ինչպես պղտոր հեղեղ, բաժանվել էր մանր
ճյուղերի. մի տեղ արդեն հանդարտել էր, մի ուրիշ տեղ առ-
վակը նույն աղմուկով շառաչում էր, մի երրորդը գնում էր
վճիտ, և ոչ ոք չէր ասի, թե նրա սկիզբը եղել է պղտոր հեղեղը:

Աթա ապերը մոտեցավ զինվորների խմբին: Նրան ար-
դեն պատմել էին դեպքը:

— Անդո,— և ծերունին բարձրացրեց փեշը,— իմ բաժին 20
ցորենը տա՛ս,— ապա խիստ ասաց,— ծոխ էդ ճանապար-
հից. ա՛յ ջահել, Աթամին հին մարդ է, գիտի ինչ է ասում...

Անդոն ոչինչ չպատասխանեց, և զինվորներից ոչ ոք ոչ
մի բառ չասաց:

Աթա ապերն սկսեց պատմել, թե խուռուփի ձորում գա-
րիներն արդեն երկու մատ բարձրացել են, թե ամբողջ ձո-
րում համարյա ձյուն չկա, և եթե այդպես արև անի, խուռուփի
ձորի գարիները շուտ կհասնեն, շատ շուտ...

Երբ ծերունին խոսքը վերջացրեց, զինվորները դարձյալ 30
լուռ մնացին: Այնպիսի քար լուռթյուն էր, որ Աթա ապերը
զարմացած աչքերով նայեց Անդոյին, նրա ընկերներին, կար-
ծես այդ մարդիկ հանկարծ օտար թվացին Աթա ապորը,
ինչպես ուրիշ ազգի մարդիկ, որոնք չեն հասկանում նրա լե-
զուն,— և ինքն էլ օտարական է ու մոլորելով ճանապարհն
ընկել է այս անծանոթ գյուղը:

Մերունին նայեց շորս կողմը, կարծես ուզում էր ստուգել, թե իրոք այդ մարդիկ իրենց գյուղից են և գյուղն այն ծանոթ գյուղն է՝ Շուղանց քարատակով, նովավոր աղբյուրով և հին ջրաղացով գյուղը:

Աթա ապերը տեսավ եկեղեցու պատի տակ նստած գյուղացիներին և շտապեց նրանց պատմի ձորի գարիների մասին...

5

Մարտի հետ վերջացան այն արև օրերը, որ Աթա ապոր հույսն էին: Ապրիլն եկավ պառավի ցրտով: Ամպերից
10 թափվում էին թեփի նման բյուրեղներ:

Ապրիլի սկզբին գյուղերից հետ կանչեցին զինվորներին: Կոմիսարը ցուցակ հանձնեց նրանց ավագին և Անդոյին նայելով ասաց. «Պարապ մնալուց բուրա էիք դառել, պողահարում էիք անմեղ մարդկանց: Գնացեք ձեզ ֆրոնտում ցույց տվեք»:

Նորից լուրեր էին տարածվում, որ մուսավաթը Ղարաբաղում զորք է կուտակել և զարնան հետ ձորերում պիտի որոտային թնդանոթները: «Դե միանգամից կոտորվենք վերջանանք, է՛», — ասում էին Շուղանց քարատակի մարդիկ, և նույնիսկ Բալթա Թիվին այլևս թուղթ չէր խաղում, որովհետև
20 տև արդեն սաղ աշխարհը տարել էր:

Շուղանց քարատակը դատարկվում էր: Ոմանք գյուղեգյուղ շրջում էին մի կտոր հացի հոգսով. ոմանք գուլթանի սարքն էին նորոգում, որովհետև ինչքան էլ սովը զորեր, նրանք այնուամենայնիվ պիտի սերմենին աշնան ցելը, թեկուզ թնդանոթի կրակի տակ:

Առաջիկա պատերազմով ոչ ոք այլևս չէր հետաքրքրվում: Քարատակում նույնիսկ այնպիսի խոսքեր էին ասում, որ մինչև այդ ոչ ոք չէր ասել: Նիազանց Անդրին սպառնում էր Մեղրաքերծի գլխին կախել իր զադաք ոտնաշորը, իբրև
30 սպիտակ դրոշ. «Կանաչ մատուռը վկա, որ պիտի թուրքանամ... Պիտի թուրքանամ, որ ականջներս հանգստանան: Իմ գեշի անունը կդնեմ Ասմար, շարսավը գլխին կքաշեմ, կդառնա նորահարս: էլ ոչ բերանի սեպերը կտեսնեմ, ոչ շեշաքար երեսը: Կդառնա հյուրի-փերի...»: Նա այդ ասում էր բուրո-

վին լուրջ, և չէր իմացվում, դառն հեզնա՞նք էր նրա ասածը, թե ճշմարիտ ցանկութուն:

Ծերունիների հմայքը հալշում էր: Նրանց լսում էին, երբ պատմում էին շատ հին օրերից, երբ այնքան ցորեն կար, որ մոռանում էին հորերի թիվը և նույնիսկ մի սաստիկ ձմեռ իբր թե ցորենը ձյունների վրա շաղ են տվել թոշունների համար:

Նրանց այդ ժամանակ էին լսում, իսկ մնացած ժամանակ քարատակում աղմկում էին այն զինվորները, որոնք կազմում էին ինքնապաշտպանութւյան զորամասեր և առաջին հրամանին պարտավոր էին դիրքերը բարձրանալ «իրենց հացով և ջրով»:

— էսօր հարսը ասաց, որ տանը մնացել է շորս հաց...

— Հիմա որ պատրոնը տանեմ մոլլա-ղասումեցի թուրքերի մեջ հացով փոխեմ, պիտի ասեն ազգի դավաճան էր... Մինչև լույս էն փոքրը սովից չքնեց:

— Փոքր ասեցիր, հիշեցի,— ասում էր մի ուրիշը,— տասն օր է մեր խաշոյի երդից ծուխ չի բարձրանում: Չեմ իմանում մեռած են, թե ապրում են...

— Երեկ տեսա... Ոտքերն ուռած գնում էր: Ասում էր հարսի ճակատանոցը տանում եմ գարով փոխեմ:

— Ասա մինչի հիմա ինչո՞ւ ես պահել ճակատանոցը:

Դե ինչ աներ: Եզը ջրօրհնեքից առաջ մորթեց, երեք ոչխարը Մայու Սիմոնին ծախեց, խոտ ու դարմանը ծախեց. Խուռուփի ձորում մի քանի թթենի ուներ, ծախեց, հիմա էլ հարսի ճակատանոցն է ծախում...

— Դու էդ մի ասա: Դու ասա, թե ճակատանոցի փողերն էլ որ վերան, վաղն ինչ պիտի ուտեն...

— Խաշոն մինչի հունձը չի ապրի: Երեկ որ տեսա, ասես գետինը պատռել, մեջից մեռել էին հանել:

— էլ կա էդպես, միայն Խաշոն չի...

Եվ պատմում էին ընտանիքների մասին, որոնք կերել էին մինչև վերջին փալասը և անկողին շունենալով քնում էին հարդի մեջ: Պատմում էին տների մասին, որոնց եթե կբակ տալիր, խանձահոտ չէր բարձրանա, որովհետև տան մեջ այրվելու բան չկար: Եվ դեպք էր լինում, որ մեկը բնելով պատմում էր, թե իբր հարևան գոլողում վատվի միս են կե-

10

20

30

390

րել, բայց հենց այդ էլ սահմանն էր: Նույնիսկ նրանք, որոնք սովամահից էին պատմում,— նույնիսկ այդպիսիները, անհայտ է ինչու, հարձակվում էին այդ շուրջ հաղորդողի վրա, նրան հանդիմանում էին սուտ լուրի համար, և բոլորն էին վկայում, թե հարևան գյուղում խեղդամահ կլինեն, քարով կգցեն իրենց, բայց այդպիսի անառակ բան չեն անի:

10 Աթա ապերը գալիս էր տուն, և քունը շէր տանում: Պառավը մի կտոր կորեկ հաց էր մեկնում նրան, բայց ծերունին այդ էլ շէր ուտում, խաբելով, թե տեր Նորընծայի տանը ոսպով ճաշ է կերել: Եվ երկա՛ր, շաււ երկար, մինչև արևուկանչ, երբեմն մինչև լոսոս մոտ, երբ արդեն ճոնչում էր հարևանի դուռը,— Աթա ապերը նստում էր օջախի առաջ, իրենց հին տանը, որի պատերն այնպես էին սևացել և կրակի լույսով այնպես էին փայլում, ասես պատերը ձյութած էին:

20 Օջախի առաջ Աթա ապերը միտք էր անում հին օրերից մինչև ներկան. նրան թվում էր, թե իր ամբողջ կյանքը եղել է մի արև ճանապարհ ծաղիկների մեջ, սառն աղբյուրների երկրում, տրտեղ լեռնալանջին կարմրում է մորին, ձորերում՝ մոշը և երբ կովերը տուն են գալիս, կաթը ցողի նման կաթկըթում է ծաղիկների վրա...

30 Նրան այդպես էր թվում, և երբ մտքով գնում էր Ցուրտ աղբյուր, ման էր գալիս Շահ յուրդի տախտերում՝ աչքերի առաջ Ցուրտ աղբյուրը գլգլում էր ոչ այնպես, ինչպես առաջ... Առաջ աղբյուրը ծաղիկների մեջ շէր երևում, հիմա շորս կողմը փուշ է, և Ցուրտ աղբյուրը վարար չի: Եթե այսպես գնա քսան տարի, հիսուն տարի,— Ցուրտ աղբյուրը մի օր կցամաքի, և մի մարդ չի մնա, որ վկայի, թե այս ամայի առապարտում երբեմն կար մի զանգակ աղբյուր. Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր, այնքան խոտը բարձր էր... Հիմա այն տախտերը վարում են, հեղեղատի ձորակները հետզհետե խորանում են, և ով գիտի ուր կհասնի այսպես:

Աթա ապերը երբ ուզում էր հասնել մինչև ակունքը, որտեղից ջուրը պղտորվեց,— գտնել ս ա բ ա բ ի ն, որից սկսվեց Ցուրտ աղբյուրի ցամաքելը, և այլևս չկար առաջվա փարթամ խոտը,— Աթա ապերը պտտվում էր գետահովտի շուրջը,

որտեղ փուլած ընկած էր քաղաքը: Ամեն ինչ այնտեղից եկավ: Իբրև ժայռ այդ ակունքի մոտ երևում էր ինքը՝ Օհան պապին. որ ասում էր, թե հացը եթե կշեռք տեսավ, արտերը կշորանան: Եվ ինքը Օհան պապին էր գուշակել մի մեծ պատերազմ և սով, մի ահավոր ժամանակ, երբ հայրը որդուն կուրանա, աղբյուրները կցամաքեն, գետնի շարժ կլինի և կվերջանա երկաթի թագավորությունը:

Ապա մտքով ետ էր գալիս մինչև գյուղի խառնակ առօրյան: Մեկը մտնումների մաղազան նա համարում էր քաղաքի կտորը, սահմանանիշ այն ձողը, որից այն կողմ արգելված էր վարել: Գալիս կանգնում էր այդ սահմանում, որտեղից ջուրը շրջել էին ուրիշ առվով, և այն հին ջուրը կորչում էր խոր ձորերում: Աթա ապեղը հասնում էր այդ սահմանին և մոլորված կանգնում էր.

10

— Աթա, ալեորել ես, — ինքն իրեն խոսում էր ծերունին, — շատ ես ապրել, Աթա... Դու էն ժամանակ պիտի մեռնեիր, երբ ոչ կոփվ կար, ոչ սով կար: Աշքերդ լիության մեջ կփակեիր և հիմա երկնքից քաղցր կնայեիր հողի երեսին շարշարվող մարդու որդուն... Հայր որն է, թուրքը որն է, դաշնակցականը որն է, մուսավաթը որն է, — դու շէիր իմանա: Դու միայն կիմանայիր, որ աշխարհում թողել ես ցուրտ աղբյուրներ, ծաղկած սարեր և ախպեր մարդիկ... Շատ ես ապրել, Աթա...

20

6

Մի գիշեր, երբ Աթա ապերը մեծակ նստած հիշում էր իր ճանաչ թուրքերին, որոնց երրորդ տարին էր շէր տեսել և ոչինչ չէր լսել նրանց մասին՝ ո՞վ է մեռել, ո՞վ է մնում, — միտք էր անում, թե օրերը երբ տաքանան, պատերազմ էլ լինի, պիտի գնա Գետամեջերը, որտեղ մեծ ու փոքր նրան ճանաչում են, — և մի ձիաբեռ բրինձ կբերի, — մի այդպիսի գիշեր շունը հանկարծ կոխեց: Մարդահաչ էր: Աթա ապերը ականջ արեց. ոտնաձայնը լսվեց բակից, շունն ավելի սաստիկ հաչեց, և մինչև Աթա ապերը ներսից կանչեր, դուռը ծեծեցին: Ներս մտավ մի մարդ, ոտքից մինչև գլուխը սպիտակ:

30

Նա դուռն իր ետևից իսկույն ծածկեց, որովհետև քամին ձյունը ներս էր շարտում: Աթա ապերը զարմացած նայում էր անծանոթին, որը թտքերը գետնին զարկելով թափ էր տալիս ձյունը:

— Չճանաչեցի՞ր,— հարցրեց ներս մտնողը:

— Օրուշ քիրվա՛,— և ծերունին նրան գրկած մտեցրեց օջախին:

10 Ներս մտնողը Շոթանանի թուրքերից էր: Աթա ապոր և նրա գյուղն անջատված էին բարձր լեռնաշղթայով, որ ազգամիջյան կոիվների վայրն էր:

Նրանք հին «քիրվաներ» էին: Հայերի և թուրքերի մեջ բարեկամության այդ ձևը հին էր, այնքան հին, որքան հին էր նրանց երկիրը: Գուցե թե դաշնի այդ ձևը գալիս է այն ժամանակներից, հրբ լեռնցի խաշնարածները և դաշտի երկրագործները բարեկամ դարձան, համոզվելով, որ լեռն ու դաշտը մի մայր երկիր են: Նրանք բարեկամացան և այդպիսով աշխարհում հիմնվեց առաջին եղբայրութունը ոչ ըստ արյան: «Քիրվան» եղբայր էր, թանկագին հյուր էր, նա կսկծում էր քիրվայի անբախտության համար և ուրախանում էր նրա ուրախությամբ:

20 Աթա ապերը աչքերին շէր հավատում:

— էս ո՞նց, էս ձյուն ձմեռը ո՞նց անցար կրակի սահմանը...— Աթա ապերը հրեք տարի նրան շէր տեսել,— հրեխաներն ինչպե՞ս են, Ջավահիր բաջին ինչպե՞ս է...

— Դու ողջ մնաս, շատ-շատ սալամ են ուղարկել:

— Ախր ո՞նց եկար, Օրուշ:

— Աթա քիրվա, քո անունը տվեցի եկա:

— Ինչպե՞ս, ո՞ր ճանապարհով...

— Սարի ճանապարհով... Երկու օր եկա: Գիշերը մնացի կոտրած քարվանսարայում:

30 — էլ ո՞նց ես:

— Դո՞ւք ոնց եք, Աթա քիրվա...

— Վեր է՛, այ պառավ, վե՛ր... Մի տես ս՛վ է եկել,— և պառավը մթնում ճրագ արեց, ապա աչքերը տրորելով մտեցավ,— Օրուշ քիրվան է՛... Բա շէի ասում էլի խաղաղութուն կլինի, էլի բարին կմնա:

— Ճշմարիտ խոսք է, Աթա քիրվա, այս ամենը կանցնի և սեր բարեկամութիւնը կմնա,— Օրուշը գրպանից շիրուխը հանեց, ապա հանեց և մի փոքր կապոց,— Զավահիր քույրդ է ուղարկել...

Աթա ապերը երեխայի նման ուրախացավ:

— Այ պառավ, մի տես է՛, մի տես ինչ բռնոթի է ուղարկել... Այ շեն կենա Զավահիրը: Ոնց էլ չի մոռանում... Պառավ, դե կրակը խառնի, տես ինչ կա չկա... Օրուշը սոված կլինի:

Աթա ապերն այդ խոսքն իզուր ասաց: Պառավն արդեն 10 կրակը խառնում էր...

— Աթա քիրվա, մի ասա տեսնեմ ո՞նց եք, եղբայրդ ոնց է, ձերոնք ոնց են... Ինչպե՞ս եք ապրում:

— Է, ոնց ենք ապրում, Օրուշ,— Աթա ապերն ուզեց գանգատվի, բայց ժամանակը չհամարեց և միայն ասաց.— էս դժար ժամանակ որ ողջ ենք, էլի՛ փառք ալլահին...

— Փառք ալլահին, Աթա քիրվա, թող մեր սև օրը սա լինի: Եվ Օրուշն սկսեց պատմել այն դառնութիւնները, որ Երեք տարի շարունակ նրանք կրել էին լեռնաշղթայի մյուս երեսին: Այդ դառնութիւնների նույն շարանն էր՝ նույն կռիվը, նույն բռնութիւնները, առվը, իրար նման, ինչպես լեռնաշղթայի երկու կողերը:

— Հապա Գետամեջերում քրինձ քան...— զգուշ հարցրեց ծերունին:

— Ո՞րտեղից, և ո՞վ է աղքատին բրինձ տվել... Բրինձը հավաքել են զորքի համար, տղտերով տարել են Բաքու, լըցրել են այնպիսի հորեր, որ ա՛յ,— և Օրուշը ձեռքով ցույց տվեց այնքան խոր, ասես բրինձը լցրել են ծովի խորքը:

— Խեղճ ժողովուրդ,— Աթա ապերը հայացքը դարձրեց կրակին:

Պառավը սուփրի վրա դրեց մի աման պեքի, մածոն և կորեկի հացի երկու բլիթ: Նրանք ըուռ էին: Կրակն ուրախ աղմկում էր, ինչպես աղբյուր:

— Էս սուփրան ինձ ու քեզ, Օրուշ, ուրախ շատ է տեսել, էս անգամ էլ ուրախ սրտով ուտենք,— և Աթա ապերը մի կտոր հաց կտրեց:

— Ինչալլահ, ինչալլահ,— և նրանք ուրախ սրտով կերան պարզ ընթրիքը:

Ապա երկու հին բարեկամները քնեցին օջախի առաջ՝ մեջք մեջքի, ինչպես հովիվ ժամանակ շատ անգամ քնել էին:

Առավոտյան Օրուջն ասաց, որ մութն ընկնելուց ուզում է տուն վերադառնալ: Աթա ապերն առարկեց: Օրուջն ասաց, որ տնից անհանգիստ է:

— Զավահիր քրոջդ հիվանդ եմ թողել...— և լռելուց հետո հանկարծ ասես սիրտ առնելով, թուրքը դիմեց իր բարեկամին.

10 — Աթա քիրվա, ախր... Ես բանի եմ եկել... Ես քո անունըդ տվել եմ եկել...

Աթա ապերը ուզեց խոսք ասի, բայց Օրուջը վրա բերեց.

— Աթա քիրվա, ի սեր աստծո, մի ճար... Սովից մեռանք... Զավահիր քրոջդ անկողնում պառկած եմ թողել: Չեմ իմանում ողջ կգտնեմ նրան, թե մեռած... Նա ասաց, ա՛յ մարդ, աշխարհում թե մի մարդ մեզ ճար անի, Աթա քիրվան կանի... Հիմա տեսնում եմ, որ դու էլ դատը տեղ...

— Օրուջ, կաց,— և Աթա ապերը վեր կացավ դեպի տան անկյունը: Պառավը հասկացավ, երկու քայլ հետևեց նրան և կանգնեց:

20 — Բաց արա պարկդ, Օրուջ,— Աթա ապերը ետ եկավ թևի տակ կորեկով պարկը,— սա է մեր հույսը, մեր հացը...

Երբունին պարկի կորեկը կիսեց, պառավին պատվիրեց մի քիչ ձավար բերել, մի բուռ շորաթան և նույնիսկ կորեկի երկու բլիթ կոխեց պարկի մեջ, ասելով, թե ճանապարհին նա կուտի:

Աթա ապերը միայն խնդրեց, որ եթե իր հարևաններից տունը մարդ գա և Օրուջին հարցնի Գետամեջերի մասին, թող Օրուջը նրանց ասի. որ թուրքերի գյուղերում շատ բրինձ կա, ցորենի արտերը ծփում են և շուտով այնտեղ գարին կհնձեն:

30 — Մենք ձեր հույսովն ենք ապրում, Օրուջ քիրվա, այդպես ասա, որ նրանք հույսով ապրեն, որ գոնե մեռնողը հեշտ մեռնի...

Եվ այդ օրն ով որ եկավ Աթա ապոր տունը տեսնելու նրա հին ճանաչին,— բոլորին Օրուջը պատմեց, որ երբ ձյունները վեր կենան և այլևս պատերազմ չլինի, ճանապարհները

կրացվեն և քանի-քանի ուղտեր հարավից կրերեն բրնձ, ցորեն և մինչև անգամ թուզ կրերեն:

Մեկն ասաց.

— Օրուշ քիրվա, դու առաջին կոտնկն ես... Դու որ եկել ես, մենք համարում ենք, թե բրինձ էլ ունենք, ցորեն էլ ունենք, մինչև անգամ թուզ էլ ունենք:

Միայն նիազանց Անդրին սրախոսեց.

— Երբ քարվանդ գա, Օրուշ քիրվա, իմ զուռնային մի պիպիչ* կուղարկես...

Երեկոյան մթնով, Աթա ապերն իր բարեկամին ճանապարհ դրեց, շատ-շատ բարևներ ուղարկեց Ջավահիր քուշը, նրանց ազգականներին և Գետամեջերի իր հին ծանոթներին:

Աթա ապերը Օրուշին պարգևեց իր մաշված ձեռնոցները, որովհետև նա պիտի սարովն անցներ և վերջին բոպեին, երբ թուրքն արդեն շեմքի մոտ էր, նրա գրպաններն ընկույզով լցրեց.

— Երեխաներին կտաս, երեխաներին...

7

Օրուշ քիրվան ի՞նչպես ընկավ քաղաք և քաղաքի բանտը, — մինչև հիմա էլ անհայտ է: Նրան գյուղի մոտ էին բռնել, թե՞ ձորում հանդիպել էր զինվորական պահակների, որոնք հսկում էին ճանապարհների վրա և իջնում էին ձորերը:

Ապրիլի կեսերին գյուղի կոմիսարը Աթա ապորը կանչեց, հարցեց, թե ո՞վ էր այն թուրքը, որ եղել էր նրա տանը, մենա՞կ էր, թե ուրիշ մարդ էլ կար, ի՞նչ էր ասում և ո՞ւր գնաց: Աթա ապերը դեռ չգիտեր, որ իր քիրվան տուն շի ընկել և հասել է քաղաքի բանտը:

— Մի խեղճ մարդ էր, պարոն կոմիսար, — պատասխանել էր Աթա ապերը. — հետը ոչ ոք չկար, և ինչ պիտի ասի մի մարդ, որ տանը հաց չունի և էս ցրտին անցել է սարը... Նա ինչ գիտի և կամ ես ի՞նչ գիտեմ, պարոն կոմիսար: Էս ձորերում ի՞նչ կա, որ մարդ ինչ իմանա: Թե սով ես ասում, նրանք մեզանից խեղճ, մենք նրանցից...

* Լեզվակ:

— Իսկ դու չգիտե՞ս, որ թշնամու երկրից գաղտնի անց-
նողը կամ լրտես է, կամ...

— Ի՞նչ թշնամու երկիր, ինչ լրտես... Կարելի է որ դու
չես իմանում, պարոն կոմիսար, բայց արար աշխարհն իմա-
նում է, որ Օրուլն իմ քիրվան է, նրա տունն իմ տունն է...

— Տարիքիդ եմ խնայում, ծերուկ, թե չէ քեզ հետ ուրիշ
լեզվով կխոսեսի:

— Ուրիշ լեզու չեմ իմանում, պարոն կոմիսար, ես քեզ
մատաղ, էս է իմ լեզուն:

10 Լինգ օրից հետո Աթա ապորը կանչել էին քաղաք, և
միայն այդտեղ էր նա խմացել, որ իր քիրվային կալանավորել
են: Ինչքան խնդրեց, աղաչեց, ծանոթների դիմեց, որ միջնորդ
լինեն, բայց բան չեղավ:

— Դեռ եթե քեզ չենք պատժում, շնորհակալ եղիր,— և
հետախուզական բաժնում նրան դուռն էին ցույց տվել:

— Աթա ապեր, մութ գործ է, էս գործին դու մի խառնը-
վիր,— խորհուրդ էին տվել քաղաքում:

— Աստված, երկինք, գետինք, ճրագի նման արդար մարդ
է իմ քիրվան, նրանում մեղք չկա՛, չկա՛,— և Աթա ապերն
արտասվել էր:

30 Շատ ժամանակ անցավ, այնքան, որ պատահական ակա-
նատեսն առանց երկյուղի կարող էր պատմել այն, ինչի մա-
սին եթե յուր ժամանակ ծպտուն հաներ, գլուխը մահու կտար:
Այդ պատահական ականատեսը՝ Մինասի աղա Ստեփանը,
որի այգին գտնվում է Սորանի ձորում, այսպես է պատմել:

— Մայիսի 4-ի երեկոյան դեմ ես գնացել էի մեր բաղի
քանդված պատը նորոգեմ... Մութը որ ընկավ, ասի աչքս մի
քիչ փակեմ, մինչև լուսնյակը դուրս գա, լուսնյակով բանս
վերջացնեմ: Շատ էի քնել, թե քիչ, մեկ էլ քնիս մեջ ձայներ եմ

30 լսում... Արթնացա, ասի էս ի՞նչ մարդիկ են մտել բաղը: Ուզե-
ցի կանչեմ, մեկ էլ մի քանի հրացանավոր տեսա, որ պատի
տակով կամաց գնում էին: Էլ չկանչեցի. ասի ո՞վ գիտե ինչ
մարդիկ են... Տապ արի մնացի: Չեմ իմանում նրանք ինչո՞ւ
պատի տակ կանգնեցին: Մեկը ուսերեն մի քանի խոսք ասաց.
հենց մենակ էն հասկացա, որ ասեց «սկարեյ, սկարեյ»,
ուրեմն թե շուտ արեք... էն առաջին տարիները, ղազախը որ

եկել էր, ես նրանց ձիերի համար խոտ էի հարում. էդ խոտքն էն ժամանակից գիտեմ: Որ «սկարեյ» ասաց, միտք արի, թե սրանք փախած զինվորներ են, ասի կանչեմ, ինձ ինչ պիտի անեն որ... գուցե ճանապարհը մոլորել են, ճանապարհը ցույց կտայի... Չեմ իմանում Սորանի ձորում եղել եք, թե չէ... Թե եղել եք, պետք է տեսած լինեք, որ մեր բաղի տակով ճանապարհը գնում է խանդակի վրա: Էլ էն կողմը բաղ չկա... Իսկ խանդակի միջով վերևի ճանապարհն է... Հա՛, մեկ էլ էն տեսնեմ, որ հետևից էլ են զինվորներ գալիս... Էս որ տեսա, ասի դաշնակցականի զինվորը փախչում է: Հիմա նրանք պատի տակով են գնում, ես էլ պատի էն մի երեսով փորսող տալով գնում եմ... Նրանք էլ եկան կանգնեցին: Մին էլ լսեմ, որ մի հալկոր տնքում է: Էստեղ սրտումս կասկած մտավ: Ասի բան կա: Գլուխս մոտեցրի պատին... Էն հալկորը խոսում էր, զինվորներն էլ հեռու կանգնած են: Էն առաջի մարդիկ էլ ձորում քանդում են: Հալկորը թուրքերեն ասաց. «Ալլահ, ողորմությանդ մեռնեմ... Թե ես ավազակ եմ, բա ձեզ ինչո՞ւ են բերել: Թե հայերը թուրքի են սպանում, ախր դուք էլ հայ եք, բա ձեզ ինչո՞ւ են սպանում»: Մթնում մի ջահել հալկորին ասաց. «Օրուշ քրիվա, ոչ մենք ենք ավազակ, ոչ դու. քեզ էլ մեզ էլ սպանում են, որովհետև մենք պատերազմ չենք ուզում»: «Ա՛յ որդի, ախր ե՛ս ով, պատերազմն ով... Ծս մի խեղճ, աղքատ... Կա՛վ, ասենք ես պառավ եմ, կյանքս ապրել եմ՝ ես հե՛շ, բա ձեզ նման ջահելներին ինչո՞ւ են սպանում... Ասենք թուրք եմ, բա ձեզ նման հայերին ինչո՞ւ են սպանում...»: Էն կողմից մի ջահել թե՛ «Ա՛ հայր, մենք էն քո ասած հայերից չենք, մենք նոր հայեր ենք...»: «Ափսո՛ս, ափսոս ձեր որբերին, ձեր հայրերին, ա՛յ որդիներ...»: Էդ խոտքին ձորից ուսերեն կանչեցին. նրանց առաջ արին տարան... Էսքան ժամանակ ինչ պատմում եմ, էդքան ժամանակ շէր քաշել արանքը, որ ձորից հալկորը թուրքերեն կանչեց. «Ինձ թաղեք իմ էս ջահել տղաների հետ»: Մինն էլ հայերեն կանչեց. «Կեցցե կոմունիստը, կեցցե հեղափոխությունը, կեցցե...»: Բայց էն ուսերեն խոսողը հրաման տվեց, հարացանները կրակեցին: Էլ ոչ մի ձայն, ոչ մի ծայուտ: Մենակ ոնց տր թե հող էին լցնում: Էլ ես բան չիմացա. էդպես մնացի պատին կպած, չիմացա ոնց հետ գնացին: Մեկ էլ տեսնեմ արևը տվեց. քունգն առա ներքևի ճա-

10

20

30

նապարհով գնացի տուն: Մեր բաղի պատն էլ էնպես թերի մնաց...

Մինասի տղա Ստեփանի պատմածը ճշմարտանման է: Նա խառնել է միայն ամսաթիվը. գնդակահարությունը եղել է ոչ թե մայիսի 4-ին, այլ 27-ին, ինչպես հայտնի է անում Զանգեզուրի զինված ուժերի հրամանատարության կից ռազմադաշտային դատարանի որոշումից և նրան կցված հետևյալ ակտից.

«Սույն որոշմամբ գնդակահարության դատապարտված 2-րդ վաշտի զինվորներ Ռուբեն Հայրիյանցի և Տիգրան Թոխունցի կոմունիստական քայքայիչ աշխատանքի համար և թուրք Օրուջի՝ Շոթանան գյուղից, լրտեսության համար,— վճիռն ի կատար է ածված 1920 թվի մայիսի 27-ին և նույն օրը դիակները հանձնված են հողին...»:

Մի տարի հետո, Սորանի ձորում, ճանապարհից դուրս ծլեցին մի թուփ ընկուզենիներ: Մինասի տղա Ստեփանի ասելով կարծես հողի տակ մի բուռ ընկույզ էին թաղել... Ձորով անցնող նախիրը տրորել էր այդ տունկերը և միայն երկու ընկուզենի դիմացել էին անասունների ավերածության:

Նրանք հիմա ահագին ծառեր են և ստվեր են գցում ճանապարհի վրա, և պատահում է, որ ճանապարհով անցնողը նստում է նրանց ստվերում: Այն ժամանակ Մինասի տղան ցանկապատի ետևից զրույցի է մտնում անցորդի հետ, հարցնում է ո՞վ է, ուր է գնում և եթե անցորդը շգիտե, թե ինչ ընկուզենիներ են, Մինասի տղան պատմում է, ինչպես հին զրույց.

— Մեր գյուղում կար մի Աթա ապեր... ողորմի նրան: Էն խառը տարին մի թուրք, անոանը Օրուջ...

Եվ նրա զրույցի հետ աղմկում են եղբայրության ընկուզենիները, ասես նրանք լրացնում են այն, որ շես պատմի ոչ մի լեզվով և շես գրի ոչ մի գրչով...

ԱԿՆԱՐԿՆԵՐ





„ՇՅԱՐՔ ԳԱՓՈՒՍԻ“

կուսարաց է:

Գնացքը դանդաղ կանգ է առնում կայարանի առաջ: Հին Նախիջևանն է, կիսավեր կայարանը, որի մի մասը նորոգել են, ներկել, մի քիչ սարք ու կարգել:

Ներս եմ մտնում կայարան:

Բեռնակիրների քնատ դեմքեր, մի քանի պաշտոնյաներ: Գահլիճում, բուֆետի տերը կոլոված կարպետի մեջ, քնած է դեռ սեղանի վրա:

Բակից կառապանը ձեն է տալիս.

10

— Մի հոգի էլ...

Մոտենում եմ. կոտրատած լինելյալի վրա տեղավորվել են յոթ հոգի, ես ութերորդն եմ: Կառք քիչ կա, ճամփորդների քաժինը լինելյալն է:

Անցնում ենք աղյուսի գործարանի մոտով. շեն աշխատում, կիսավեր դրության մեջ են:

Ահա և քաղաքի ծայրը, կամարակապ աղբյուրը և պղտոր գետը, որ վշշալով գլորվում է դեպի ջաղացները, ոտոգում դաշտը և խառնվում Արազին:

Ուղեկիցներս կառապանին իրենց իջնելու վայրի անունն են տալիս: Ես ծանոթ չունեմ և ուզում եմ իջնել մեյդանում:

20

Մի քանի ծուռ ու մուռ փողոցներով անցնելուց հետո, իջնում եմ մեյդանում: Խանութները դեռ գոց են:

Քայլերս ուղղում եմ դեպի քաղաքի վերին մասը: Նախիջևանում եղել եմ ես մի քանի անգամ, պատերազմից առաջ: Քաղաքի մի խոշոր մասը խանութներ էին: Նախիջևանը առու-

տուրական կենտրոն էր Զանգեզուրի, Օրդուրաթի, Մակվա և այլ շրջանների համար:

Հիմա շկա առաջվա եռ ու զեռը:

Պատերազմը ավերել, սրբել է շատ բան. հիշում եմ դաշնակ-մուսավաթյան անիծյալ օրերը:

Մի քանի տեղ նորոգման հետքեր կան: Պետական հիմնարկներ են գլխավոր փողոցի վրա, գույնզգույն ցուցանակներով:

10 Ինչո՞ւ արևելքն այդքան վառ գույներ է սիրում, նույնիսկ ցուցանակները կանաչ գույնի են, կապ-կապույտ, կարմիր ու դեղին:

Անցնում եմ մի խոշոր շենքի մոտով, ուր տեղավորված է աղահանքերի գլխավոր վարչությունը, Նախիջևանի գյուղատնտեսական բանկն ու «Նախիթթիֆազը» (կոոպերատիվների միությունը):

Մի քիչ դե՛նը սիրուն, կոկիկ հրապարակ է, աղյուսի, կիրի և գաջի կույտերով: Նորոգում են, նոր տներ են շինում: Հրապարակի ճակատին Ժողկոմխորհրդի սպիտակ շենքն է: որ շատ դուրեկան է շրջապատի մոխրագույն ֆոնի վրա: Բակում սիրուն ծաղկանոց, միակը ամբողջ քաղաքում, ինչպես իմացա ես հետո:

20 Ժողկոմխորհրդի շենքի կողքին մի այլ շենք, ավելի սիրուն, արևելյան նիշերով, ճակատը բրգաձև ուռուցքներով, նեղ ու երկարաձիգ պատուհաններով: Շենքն արդեն ավարտված է, միջին մասն են պատրաստում: Նախիջևանի խաներից մեկն է շինել այդ շենքը մեչխտի համար, թերի է մնացել: Խորհրդային իշխանության հաստատվելուց հետո մեչխտի շենքը վեր է ածվել ակումբ-գրադարանի:

Մտտենում եմ քանվորներին. շնայած որ կանուխ է դեռ, բայց աշխատանքն արդեն սկսված է: Մի խումբ բանվորներ ցեխ են խառնում հարդի հետ, աղյուս պատրաստում: Ալևոր մի բաննահ, քթի տակ մի երգ մոմուալով պատ է շարում:

— էս շենքը Աբաս խանի տղան էր ուզում շինել, հիմա տեսնում ես աստղը ճակատին,— ասում է ինձ բաննահ ծերուկը, ցեխոտ մատն ուղղելով դեպի շենքի ճակատը:

Կարմիր աստղը նախկին մեչխտի ճիշտ ճակատին:

Մերուկը պատմեց ինձ, որ երբ կառավարութիւնը որոշում է շենքը ակումբի վերածել, սեյիդ Ղասում անունով մի մոլեռանդ հավատացյալ գիշերով ծածուկ մտնում է ներս, կրակ անում շենքի մեջ և սկսում բարձրաձայն աղոթել: Մյուս օրը քաղաքում լուր է տարածվում, թե մարգարեն իջել է մեշիտի մեջ և հայտնել սեյիդ Ղասումին, որ այդ մեշիտը «սուրբ» է. իհարկե «հրաշքը» պարզվում է, և սեյիդին ուղարկում են ուղղիչ տուն:

Այդ փոքրիկ հրապարակը քաղաքի ամենից սիրուն մասն է: Հրապարակից տարբեր ուղղութիւններ են սկսվում: 10
Հիմա շտկում են, դար ու փող լեցնում, պատերը կոկում, սվաղում: Եթե այդպես թափով տարվի աշխատանքը, մի քանի տարուց հետո Նախիջևանը կդառնա մի փրուն քաղաք:

Հրապարակի դիմաց այգին է, որի մոտով անցնում է սրընթաց, պլտոր գետակը, Նախիջևանի «Նեղոսը», որ իջնում է սարերից, արգավանդ տիղմ բերում և առատաձեռն փռում հարթավայրի վրա:

Բաժանվում եմ արևոյ քանոնահից և դանդաղ քայլերով իջնում դեպի հրապարակ: Կանուխ է դեռ, հիմնարկները բաց չեն: 20

Ահա և բազարը՝ նեղիկ փողոցների մի լարիտինթոս. փոքրիկ կրպակներ՝ մսավաճառի կողքին դարբին, հացթուխի կողքին՝ կոշկակար: Ապրանքները շարել են խանութի առաջ. ներսում քիչ քան կա:

Էժանութիւն է, յուղ ու պանիր— որքան ասես: Առուտուրը իրար մեջ «ղռանի» հաշվով է, իսկ նորեկի կամ անծանոթ մեկի հետ շերվոնեցով: Մի բան եք ուզում, նայում է նախ, մտածում, թե ի՞նչ ասի— «ղռան», թե «շերվոն»: Իրենց ծանոթ մարդկանց հետ ղռանով են խոսում ու կեռ ծածուկ բռնի մեջ դնում ղռան կամ թուման: Առնում ու ծախում են 30
ամեն ինչ. նպարավաճառը պղնձե ամաններ է առնում, նավթ ծախողը՝ գորգ ու կերպաս, որ հետո հարմար դեպքում կամ թանկ ծախի, կամ արտահանի Իրան: Առևտրական կապը Իրանի հետ շատ է ուժեղ. քարավանների կան, որոնք հատուկ այդ գործով են պարապում և բերում ու տանում են, ինչ որ ձեռնտու է՝ պղինձ ու ճոթեղեն, կաշի ու միրգ և այլն:

Զայխանե եմ մտնում. աթոռներ չկան. տեղավորվում եմ գորգի վրա: Այցելուներ շատ ունի շայխանեն. նա և բորսա է, և հանդիպումների վայր, և լուրերի կայան: Երկու ջահել հագիվ են հասցնում թեյ տալ: Մտեանում է մեկը:

— Մի քաժակ թեյ, — ասում եմ:

— Քո՞ շաքարով, — հարցնում է տղան:

Ընդունված է այստեղ մի կտոր շաքար դնել գրպանում և օրը մի քանի անգամ մտնել շայխանե:

10 Նայում են ինձ հետաքրքիր: Ինձ զարմացնում է վարդերի առատությունը: Համարյա ամեն սեղանի վրա մի փունջ վարդ կա: Երևանում դեռ չկա, իսկ այստեղ յուրաքանչյուր ոք իր պարտիզում բացված վարդ ունի:

Գորգերի վրա ծալապատիկ նստած են, խոսում են, թեյ խմում, ծխում կամ դալյան քաշում: Իմ գլխավերև կախված է ընկ. Կալինինի նկարը, ներքև՝ եվրոպական պատերազմի մի քարտեզ, որի վրա ճանճի աղտոտությունից ճերմակ տեղ համարյա չի մնացել:

20 Ներս մտավ ճպոտ աչքերով, փալնքոտ, պատառոտած աքան ուսերին, աղտոտ շալման գլխին փաթաթած մի մարդ, «սեյլամ» տվավ և նստեց անկյունում: Երևում էր, որ շրջապատողները պատկառում են նրանից: Կողքիս նստողը շշուկով ասաց ինձ, որ եկողը «իմաստուն սեյիդն» է:

Միտս ընկավ ծերուկ բաննահի պատմածը սեյիդ Ղասումի մասին: Գուցե «նա ինքն է թագավոր փառաց»: Չգիտեմ ո՞վ Բաքվի թուրքական թերթում մի հոդված էր գետեղել շայխանենների մասին: Հոբվածագիրը շատ տեղին էր նկատել, որ շայխանենները ոչ միայն քաղաքական ասեկոսների վայր են, այլև մի տեսակ «կլուբ» ուղղափառ հավատացյալների համար:

30 Դուրս եմ գալիս փողոց:

Մանուկների մի խումբ անցնում է շուկայով: Դպրոցական տղերք են, գրքերը թևի տակ. կանգնեցին մի խանութի առաջ, ուր արկղների մեջ դարսած է զանազան շաքարեղեն, կողքին էլ վանդակի մեջ մի կաքավ: Նայեցին ու անցան:

— Ծամփա տվեք, ճամփա՞, — հանկարծ ետևից լսեցի մի խրոխտ ձայն: Նեղլիկ փողոցներում ժողովուրդը քաշվեց

մեկդի: Լսվեց թմբուկի ձայն ու երևաց կարմիր դրոշը, ամ-
րացրած մի ձողի: Դրոշի ետևից շահել մարդկանց մի ամբողջ
շարան, որ քայլում էր հսկա թմբուկի զարկերի տակ:

Շարուրի զինվորացուներն են, գնում են զինվ. կոմիսա-
րիատ ներկայանալու: Արևից սևացած ուռնչաբուններ, շատերը
քաղաք չտեսած, զարմանքով նայում են շրջապատին, աշխա-
տում շարքից դուրս չգալ և իրենց կեցվածքին զինվորական
ձև տալ: Մի քանիսն էլ շուխաները մեջքին են կապել այն-
պես, ինչպես զինվորն է կապում շինելը: Յուրաքանչյուրի
կրծքին կախված է կարմիր ժապավեն: Զինվորացուների ետե-
վից գնում է մանուկների, թամաշա սիրող անձանց մի ամ-
բողջ խումբ, որ աշխատում է ետ շմնալ: Ես էլ եմ խառնվում
նրանց ու մի քանի բուսից հետո թափորի հետ միասին հաս-
նում զինվ. կոմիսարիատ:

10

Հավաքվում է ահագին բազմութուն: Ահա և նվագախում-
բը: Ինձ ասացին, որ ընդամենը 15 օր է, ինչ կազմակերպել
են նվագախումբ, որի ղեկավարը զանգեզուրցի մի եռանդուն
տղա է:

Զինվ. կոմիսարիատի պատշգամբից դիմավորում են
զինվորացուներին, ողջույնի խոսք են ասում զանազան ընկեր-
աներ: Զինվորացուների կողմից պատշգամբ է բարձրանում մե-
կը և խոստանում պաշտպանել բանվորի ու գյուղացու շահը:

20

— Մեզ նիկոլայը սալդաթ չէր տանում, որ մութ մնանք,
ուրիշ քաղաքներ չտեսնենք: Հիմա «Դրամբը օրդուն» (Կար-
միր բանակը) մեր սիրելի մայրն է, համ ուսում պիտի առ-
նենք, համ էլ սովորենք պաշտպանել մեր երկիրը վտանգնե-
րից, թեկուզ այդ վտանգը Արագի մյուս ափի խան ու բեկե-
րից լինի:

Մափահարում են, «յաշասըն» կանչում, գդակները օդի
մեջ նետում, նորից կանչում «ուռոա»: Նվագախումբը «Ին-
տերնացիոնալ» է նվագում. դեռ նոր են սովորել, նվագը մի
քիչ խառն է, արևելյան շեշտով:

30

Միտինգը վերջացավ, զինվորացուների շարքերն անցան
դեպի զորանոցները: Ժողովուրդը ցրվել սկսեց: Բոքիկ ոտ-
քերով, կուրծքը բաց երկու պատանի, հաղիվ 15 տարեկան,
մոտեցան ինձ, ճերմակ թղթի մի փտոր ձեռքերին:

315

— Խնդիր գրի, որ մեզ ընդունեն Կարմիր բանակում կա-
մավոր:

Ջահելների աշքերի մեջ կրակ ու եռանդ կա. հենց այստեղ
դիմում եմ գրում. առնում են ու վազում դեպի զորանոց:

* * *

Արևն արդեն նեղում է:

Փողոցում անց ու դարձը պակասում է, մարդիկ ստվերոտ
մի տեղ են փնտրում, որ մի քիչ շունչ առնեն, մինչև հովն ընկնի:

Գործ. կոմ. շենքի առաջ նստոտել են մի քանի հոգի:
10 Ներս եմ մտնում: Հենց միջանցքում գետնի վրա ծալապատիկ
նստել է մեկը և գրում է: Նրա կողքին նստել են մի քանի
գյուղացի, որոնցից մեկը գրողին թելադրում է իրենց դիմումը:

Միջանցքում անց ու դարձ են անում սպասողներ: Այս-
տեղ ամեն ինչ հասարակ է ու պարզ: Փոքր է երկիրը, պաշ-
տոնյանների թիվը քիչ, բոլորն էլ ճանաչում են իրար, հիմ-
նարկները համարյա իրար կից: Մի երկու ժամում կարելի է
բոլոր հիմնարկներում լինել, տեսնել բոլորին, ուզած տեղե-
կությունն առնել ժող. կոմ. խորհրդի նախագահից մինչև հա-
սարակ գործավարը: Պաշտոնյանների մեծ մասը տեղացիներ
20 են, որոնց հականն հանվանն ճանաչում են գյուղացիք: Շատ
անգամ հենց տեղն ու տեղը որոշում է կատարվում և խնդրին
սպառողական լուծում տրվում:

Տալիս են ինձ թվական տվյալներ գալառի դրուժյան մա-
սին: Ամեն տեղ շինարար աշխատանք, դպրոցներ են բացվել,
խրճիթ-ընթերցարան, ճանապարհներ են նորոգվում, կազմա-
կերպվել է գյուղատնտեսական վարկի գործը, կոոպերացիան
դանդաղ, քայց աշող դրավում է գյուղական շուկան և դուրս
վրձնում շարշուն ու վաշխառուին: Այս տարի բամբակը ցան-
վել է որոշվածից սովելի:

30 — Եթե ժամանակին վարկ ստանայինք, մեկին երկու
ավել կցաննեինք, որովհետև անցյալ տարի գյուղացիք տեսան
բամբակի օգուտը,— ասում են ինձ:

Հատուկ ուշադրություն է դարձված բժշկա-սանիտարա-
կան գործին: Մի քանի կարևոր կենտրոններում մտցված են
բժշկական կայաններ: Գյուղացիք իրենք ընդառաջ են գնում

իշխանութեան շինարար աշխատանքին, տրամադրում շին-
քեր, բանվորներ, հաճախ ծախսի մի մասը վերցնում իրենց
վրա:

Շինարար աշխատանքի մասին գիտեն և Արագի մյուս
ափին ապրող խեղճ ու կրակ գյուղացիք, որոնք դարերից ի
վեր տքնում են, աշխատում անդուլ և իրենց ամբողջ վաստա-
կը խան ու ասրդարի տալիս: Հողային հարցի աջող և արագ
լուծումը, բեգական հողերի գրավումն ու հողահավասարե-
ցումը լավագույն ագիտացիոն ազդակներ են այդ շարքաշ
գյուղացիների համար, որոնք Արագի մյուս ափից կարոտով
են նայում, թե ինչպես հալալ և ազատ ապրում է Նախիջևա-
նի գյուղացին առանց բեգի ու խանի:

Շատ է պատահում, որ մյուս ափից փախչում են և գալիս
բնակվում Նախիջևանի շրջակայքում, դառնում խորհրդային
քաղաքացիներ:

Նախիջևանի շրջանը հարստանալու բոլոր պայմաններն
ունի:

Հողը բերրի, վլիման նպաստավոր բարձր կուլտուրաներ
մշակելու համար, հողի սակավութունն չկա, հոշակավոր
աղահանքերը խոշոր եկամուտ են տալիս, Պարսկաստանի հա-
րևանությունը թույլ է տալիս արտահանման և ներմուծման:

Անցնում եմ դեպի քաղաքի ծայրամասը: Ավերակ տներ,
համարյա ամեն քայլափոխի հողակույտեր աջ ու ձախ: Զարդ-
ված աղյուսների կույտերի վրա աչքիս են ընկնում հին փա-
լասներ, փոլած արևի տակ: Մոտենում եմ մի խորշի. երևում
է, որ գետնափոր տներում մարդ է ապրում: Կուզե-կուզ իջ-
նում եմ սանդուղքներով: Գետնափոր անյակի մեջ ապրում է
մի ամբողջ ընտանիք. մի քանի աման, մի կուժ, մի երկու
փալաս և իրենց վրա եղած ցնցոտիները՝ ահա նրանց սեփա-
կանությունը:

Նախկին բնիկներ են, որ ազգամիջյան կռիւների ժա-
մանակ գաղթել են, թալանվել, հիմա նորից վերադարձել են
ավերակները շենացնելու:

Անցնում եմ առաջ. ականջիս է հասնում մեքենայի անի-
վի ձայնը: Մոտենում եմ մի փոքր շինութեան, նայում եմ
պատուհանից ներս:

10

20

30

Տպարանն է:

Ներս եմ մտնում ուրախ, որ այդ քանդված տների մեջ տեսա վեհնդանի մի անկյուն, ուր աշխատանք կա, աղմուկ ու երգ: Տեղական թերթի խմբագրատունն է՝ «Շյարք Գափուսի» (Արևելքի դռներ):

Ավելի հարմար անունն չկա թերթի համար: Իրոք որ Նախիջևանը Արևելքի դռներից մեկն է: Թերթը երեկոյան պիտի լույս տեսնի, շտապ երեսներն են վապում, որ հասցնեն: Օրաթերթ չէ, աշխատակից քիչ կա, գրելու ժամանակ չունեն: Բայց թերթն արդեն իր թղթակիցների խումբն ունի, ճանապարհը հարթված է, նույնիսկ հեռավոր գյուղերում է ստացվում:

Գրաշարներից մեկին հարցնում եմ նոր տառերի մասին.

— Ե՞րբ պիտի լինի, — լսել ենք դրա մասին, բայց դեռ չենք տեսել: Մի քիչ մոլլաները կնեղանան, բայց հուպ կտանք, — ասում է նա և ծիծաղում:

Կատինական շրիֆտ դեռ չկա: Նոր միայն ստեղծվել է մի հանձնաժողով այդ նպատակով: Հարց ու փորձ եմ անում թերթի տիրածի մասին:

— Մեկ-մեկ տալիս ենք ուղտապաններին, Արագի մյուս ափն են անցկացնում մեր թերթից մի քանի հատ: Էս էլ մեր կանտրաբանտը, — ժպտալով ասում է գրաշարներից մեկը:

Հարցնում են դրաի աշխարհից: Մեկը բավական զարգացած, ինքնուս տղա է: Երբեմն թերթում հոդվածներ է տալիս:

Կրագրի հին համարներից մի քանի օրինակ նվիրում են ինձ, ցույց տալիս կարևոր հոդվածները:

— Էս էլ մեր Մեհտու գրածն է քյաբինի դեմ:

Մեհտին գրաշար է, հակակրոնական պրոպագանդայի ակտիվ մասնակից, սեյիդ ու մոլլայի թունդ հակառակորդ:

Հեռանում եմ այդ կուլտուրական անկյունից, ուր մի քանի հոգի ումբեր են պատրաստում՝ Արևելքի սեյիդ ու խանի մեջիտն ու քոշքը պայթեցնելու:

Նոգնած իջնում եմ վայարան: Ցերեկվա տպավորությունները խոնվել են գլխիս մեջ, աչքիս առաջ է փոքրիկ շինությունը քանդված տների թաղում, ուր մի քանի հոգի շարում են «Շյարք Գափուսի»-ի փոքրիկ համարները, իսկ մեքենան

ժիր ու աղմուկով տպում է, դարսում սուր սլաքները կարմիր, որոնք տարածվում են Արևելքի դռներից այն կողմ՝ Արագից դեն, ուր կամաց-կամաց զարթնում է Իրանի շարքաշ ունչ-պարը:

Միտս ընկան շարուրցի նորակոչ զինվորի խոսքերը, թե՛

— Սովորենք պաշտպանել մեր երկիրը վտանգներից, թեկուզ այդ վտանգը Արագի մյուս ափի խան ու բեգերից լինի:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ (Ա)

Գորիս (Ձանգեզուր), 18 դեկտ.

1

10 Մեր քաղաքը գրպանի քարտեզի վրա ամենեւին մի փնտրեք, փոքր է, շեն նիշել, թեկուզ որպես միջակետ: Եթե հիշատակում են խոշոր ավանները, մեր քաղաքն էլ նրանց կարգում են դասում և նշանակում: Խորհրդային Միության մեջ հազարներով են մեր քաղաքի չափ բնակավայրեր, որոնք չունեն դործարանի և ոչ մի ծխնելույզ, ոչ մի անգամ սուլի- չի ձայն շեն լսել, խոտով պատած և աղբուս փողոցներով երբեք օթո չի անցել. քաղաքի մի ծայրից կարելի է մեկին մյուս ծայրից բարձրաձայն կանչել, և նա կգա, ճաշիդ կհաս- նի:

Մեծ քաղաքում կզարմանան, եթե մի օր երկաթուղի չլինի. մեր քաղաքն ուրախ է, եթե շաբաթը մի անգամ փոստ է գալիս: Այդ լուրը բերնե բերան տաղածվում է. փոստը գա- լուց մի օր առաջ են իմանում, որ արդեն այսինչ գյուղից ճա- նապարհվել է: Ցրիչ չկա. նամակդ ինքդ գնա ստացիր. մտիր փոստ և վարիչին ընկերարար ասա, որպես մոտ ծանոթի՝

20 — Օհան, ես նամակ չունեմ՝

Եթե դու չունենաս ոչինչ, գոնե կիմանաս, թե քաղաքում ուրիշ էլ ով նամակ կամ լրագիր ստացավ. հարցրու Օհանից, նա անգիր գիտե:

Մեր քաղաքը միայն մի ժամագործ ունի, որ ազատ ժա- մերին կոշիկ է կարկատում, պարապ շմնալու համար: Քա-

զաքը փոքր է, հազիվ հիսուն ժամացույց լինի. դե հո ամեն ամիս չպիտի տանեն ժամագործի մոտ: Կառք չկա. միայն մի կառք գործկումն ունի, բայց ճամփեքը առապար են, քարոտ, միայն տոն օրերին են լծում, ձիերը զարդարում գուլնգուլն փնջերով ու զանգուլակներով և ման ածում քաղաքի կարճ ու լայն փողոցներով:

Քաղաքից գլուղ կամ ոտքով պիտի գնալ, կամ ձիով: Քաղաքում միայն եզան երկու սայլ կա, որ լծում են միայն այն դեպքում, երբ տուն շինելու համար հարկավոր է գետից քար բերել:

Շատ մարդ ձի չունի, իսկ կան բաժիններ, որ մի քանի ձի ունեն: Մեր քաղաքի բոլոր բաժինների վարիչները (նույն- նիսկ զագսի) ձի ունեն՝ շրջան գնալու համար: Եթե ժողովուրդը գիտե, որ Աթասանց Իվանը փոխօգկոմի վարիչն է, նա շատ լավ ճանաչում է և նրա ձիուն, Իվանի ձիուն: Եթե այդ ձիւն մի ուրիշ մարդ նստի, տեսնողը պիտի ճանաչի և ասի.

— Էս րնկեր Իվանի ձիւն է...

Մեր փողքիկ քաղաքում, որ երկաթուղուց 200 վերստ հե- 20
ռու է, բարձր լեռներով շրջապատված, հնուց ավանդ մնա-
ցած սովորույթ շատ կա. իգիթ լինելու, լավ ձի քշելու, փո-
ղոցներով սրարշավ անցնելու, գլուղին մոտենալիս ձիու
սանձը մի քիչ թափահարելու, որ ձիւն վիզը կեռ պահի,
բարձրախոս լինելու և էլի այսպես տեսակ-տեսակ շարժ ու ձև,
իրեն կեցվածքին ու տեսքին վայելուչ ձև տալու անմիտ
սովորույթ:

Անցյալ զարնանն էր, որ մեր քաղաքի գլխով առաջին
անգամ աերոպլան թռավ, իսկական և ոչ թե հնարովի. շատերը
նույնիսկ ձայնը լսեցին, մի խուլ դոռոց: Այդ օրը քաղաքն
անօրինակ տեսք էր ստացել, ասես ժողովրդյան պատուհաս էր 30
շարժվում դիմացի լեռներից: Աերոպլանը երևաց երկնքի կա-
պույտում, մի քանի անգամ պտույտ տվեց քաղաքի գլխին և
կորավ կապուտակ հեռվում: Շատերը միայն այդ օրը հա-
մոզվեցին, որ աերոպլան («այերոպլանգա») կա, իսկ ոմանք
էլ... (երդվյալ հակահեղափոխականները), որ խորհրդային
իշխանութունը հաստատ է: Այդ օրը քաղաքի ամենից լավ

10

20

30

321

օրն էր. դեռ մինչև հիմա էլ շատ մարդիկ մի բան հիշել տալու
դիպքում, ավելացնում են:

— Հերու էր, էն որ այերուպլանգան շուռ էր գալիս եր-
կընքում:

Շատ անխմատ կրիներ մեր փոքրիկ քաղաքի գոյությու-
նը, եթե նրա հիշատակման արժանի կողմերը՝ փոստը լիներ,
կամ զագսի ձին և կամ թե անցալ տարվա անբուպլանը:

2

10 Խաղաղ և իր քեֆին ապրում է այս փոքրիկ քաղաքը, որ
գրպանի քարտեզի վրա չի էլ նշանակված թեկուզ որպես մի-
ջակետ: Կարծես դիտմամբ հեռացել է այս անկյունը խուլ,
որ իրեն չխանգարեն, շատ եռ ու զեռով, ժխորի աղմուկով
փրեն շնեղացեն:

Ապրում է իր քեֆին, կատարում է այն ամենը, ինչ հարկ
է, աշխատում է նմանվել մեծ քաղաքներին և օրինակ դառ-
նալ շրջակա գյուղերի համար: Փոքրիկ այդ քաղաքը գավառի
կենտրոնն է, նրան են նայում հարյուրավոր գյուղեր՝ թառած
լեռան կատարին, խոր ձորերի մեջ ընկած գյուղեր:

10 Դրսի աշխարհի հետ ունեցած կապը փոստն է, որ գա-
լիս է անկանոն, բեռը կես ճամփին թողնում, որ հետո վե-
րագառնա բերի. կապը ծուռ ու մուռ խճուղին է, որ լղար
եզան պես կողքի ճաղերն է ցցել, կապը՝ հեռագրի մի բարակ
թելն է, որ անցնում է տասնյակ վերստեր անմարդաբնակ
սարերով, կտրում հավիտյան ձյունապատ լեռների կատար-
ներ, իջնում անդնդախոր ձորեր և հասնում հեռավոր եր-
կաթուղուն: Շատ հաճախ է գիծը փտրվում. ձյան հյուսեր, սա-
րի քամի, փոթորիկ պոկում են սյունը տեղից: Սարերով
անցնելիս մեկ էլ հանկարծ հանդիպում ես հեռագրասյունե-
րի ուղիղ շարքին ու բարակ երկաթալարին, որ կանչում է
30 ասես հուսակտուր ու խեղճ՝ մեծ քաղաքին հաղորդում, որ
այնտեղ, երկաթուղուց հարյուրավոր վերստեր հեռու, լեռ-
ներով փակված մի գետահովտի վրա անհոգ ընկած գավա-
ռական փոքրիկ քաղաքում ևս կա մոլեկուլյար աշխատանք,
այնտեղ էլ են շինում, այնտեղ էլ է քաբախում թեկուզ մի

երակ, որ տանում է դեպի սիրտը՝ լալնարձակ Միությունը
հորհրդային: Մարդ այնպես խղճահարվում է, երբ ձյունա-
պատ լեռան գլխին՝ ժխորից հեռու, հանկարծ լսում է, թե ինչ-
պես նվվում են երկաթի թելերը հեռագրի, ինքդ էլ ուզում ես
կանչես, որ մեծ ճամփով անցնող գնացքը մի օր էլ շուռ տա
ուղին իր և մխրճվի քնած լեռնապարն այս, լեռները վախե-
նան, բազմանան գործարանները, խաղաղ ու հանդարտ գե-
տահոյիտում այս վառվեն հսկա լապտերները քաղաքի:

Ամեն ինչ դանդաղ է, խաղաղ գավառական այս խուլ
անկյունում: Շտապելու հարկ չկա. կենտրոնից հեռու լինե- 10
լը, մարդաշատ քաղաքի վարիքներին անհաղորդ լինելը ստեղ-
ծում է անհրաժեշտ միջավայր, ուր առատորեն զարգանում
է գավառացու մտավոր կարճությունը, նրա մեղկ և կենդա-
նական կյանքը, որկրամուլ և թուլամորթ լինելը: Կատարյալ
քաղքենի, օրինապաշտ, պինդ փարած հնօրյա աղաթին՝
նավասարդին ու ձմռան երկար գիշերների զրույցներին:

3

Լեզո՞ւն, կենդանի խոսքը այս խուլ անկյունում...

Յոթ տարի է անցել Հոկտեմբերից, և դեռ մարդիկ կան՝
հին պիսարներ, որոնք հայերենը համարում են գյուղացու 20
լեզու, անվայել «իրենց» շրջանի համար: Քա՛րը գլխին, թող
համարեն. բայց զայրանում ես, երբ ժողովում են այդ ասում,
և մեղչանական տիղմի մեջ սնված, շինվնիկի մունդիրի տակ
աճած մի էքս-գործավար, որ այսօր մատենավար է սոսկա-
կան, — և անդամ թեկուզ հորաշխի վերստուգիչ հանձնաժո-
ղովի, — զայրանում ես, երբ ընդհանուր ժողովում ձայն է
խնդրում և խոսում... ռոսերեն (երբ լսողների կեսից ավելին
իրենց քաղաքից ուրիշ քաղաք չեն գնացել):

Եվ այն էլ ի՞նչ ուսերեն...

Իր ելույթը պատճառաբանում է ազատ ցանկությամբ և 30
մայրենի լեզու շիմանալով, այնինչ ստում է, հորինում:

Այդ Կարապետ Հախնազարիչը թեկուզ սոսկ մատենավար
է, բայց նրանից շատ բան է կախված: Իրեն այնպես է դրել՝
մանավանդ եկող-գնացող գյուղացիների մոտ, որ կասես

վարիչն ինքն է, շահագանց պատասխանատու մի պաշտոնյա:

Մարդու խելք չի հասնում, երբ քննում է մեր խուլ անկյան «անքննելի» բաները: Ասես մի մեծ հեղեղից փախել և կորած, մոլորած այս մեծեղ քաղաքում հանգիստ են առել նրանք, մրուրը հնի, ոտից ցզլուխ կեղծիք, կաշառք և ցածու-թյուն:

10 Իրեն պատասխանատու չի համարում և ոչ մի դեպքում: Եթե մեղադրես, կարդարանա հազար տեսակ, իսկ առիթը չի փախցնի իր «բազմանդամ ընտանիքի» համար մի կատեգորիա էլ ավել կորզելու, շնայած աշխատանքն էլ մի գատ չի, կես կատեգորիա արժե:

6/2/1977
Նա ջուխտ ոտով ու կենտ գլխով անցյալի մեջ է թաղված, սիրով (իհարկե ծածուկ) է պատում սրան-նրան, թե այսինչ պրիստավի ժամանակ իրենք ոնց կերան, ոնց «մեծավորը» մատը թափ տվեց և գլուղացիք խոնարհվեցին: Ինչ խոսք, որ ներկա կարգերին հավան չի. անկետա լեցնելիս էլ «համաերոզ» գրելիս նայում է շորս կողմը, և տասն անգամ գույնը թռչում է, էլի գալիս:

20 Կարապետ Հախնազարիչը առիթը չի փախցնում կծելու, շնայած գիտե և քսվել, պոչը թափ տալ: Եթե նա վերաստուգիչի անդամ է, այդ որոշ «պալիտիկա» է, իր ակտիվ լինելն է ուզում ցույց տալ, գուցե մի օր պետք գա: Եվ անհաշտ հակառակորդ է նորին, իսկ պետական լեզուն հո նրա աչքի փուշն է: Որ մորթես, նա չի ասի երբեք «գործկում», այլ անպատճառ՝ «իսպալկում»: Հայերեն խոսելիս էլ խառնում է այնքան առեսերեն, որ շիլաճաշ է դուրս գալիս՝ անհամ, անհոտ:

4

30 Մեր փոքրիկ քաղաքում ուշադրության արժանի բան դեռ շատ կա:

Ինչպես ամեն քաղաք, մերն էլ ունի բուլվար ու հրապարակ: Ծիշտ է, մեր բուլվարում նստարան չկա, բայց լավ յոնջա է բուսնում՝ պառկիր կանաչի վրա ինչքան քեֆդ ուզի:

Շատ անգամ՝ մանավանդ գարնան, կարելի է տեսնել

բուլվարի մի անկյունում նստած քաղաքի նախկին «հայրերին» (այժմ պարապ, հոգեպահուստով ապրող) անուշ գրույց անելիս: Բուլվարի մյուս անկյունում մի գյուղացի իր էշն է թողել կանաչ ուտելու, ինքն էլ դինջանում է կողքին:

«Հայրերի» խումբը ուշադրություն է գրավում: Առաջ հարուստ էին, խանութատեր. մեկը մի քարվանսարա ունեւր; մյուսը՝ բաղ ու հող, տոկոսով տված փող: Հիմա շկա, բայց մրմուռը կա, զայրույթը մնում է: Նրանք երդվյալ հակահեղափոխականներ են, շնայած որ նրանց ուժը տկար է, խոսքերը ծիծաղ հարուցող:

10

Բայց մարդիկ ապրում են քաղաքականորեն, դեռ շեն մեռել: Նրանք սնվում են... պրովոկացիայով, իրենց հնարած լուրերով, սրանից-նրանից թերատ լսած ու հասկացած խոսքերով: Հերիք է, որ մի լուր իմացան. մեկը ծաղկեցնում է, մյուսը եզրակացություն հանգում, մեկէլը ապացուցում, որ «սրանք» երկար կյանք չունեն:

Յոթ Հոկտեմբեր է անցել, Եվրոպան իրար է անցել՝ երրհրդային Միությունը շուտ ճանաչելու, իսկ փոքրիկ մեր քաղաքում (որ քարտեզի վրա լվի ծերտի շափ էլ չէ) դեռ համառում են և հավատում «սպիտակ ձիավորին», հակահեղափոխության սուղր Գևորգին, որ պիտի գա... Ավան ապոր՝ բանկում թողած մանեթները ետ տալու:

20

Կարապետ Հախնազարիչը գործն ավարտելուց հետո շտապում է նրանց մոտ, հավաքվում են և գրուցում, հուսադրում ու հորինում: Կարապետ Հախնազարիչը լուրջ հայտնում է, որ այսօր վռազ ժողով են հրավիրել նրանք, մի բան կա երևի:

— Երևի մի բան կա...

Մրմուռ է խումբը ցմահ հակահեղափոխության, և հույսը, իբրև ձմռան անզոր արև, մի անգամ էլ շողում է նրանց պառազ դեմքերին...

30



ԳԱՎԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ (Բ)

Ձմռան էն թունդ ցրտերն են այժմ: Յուրտ քամին ասես ուզում է մարդու մարմինը ծակել ու թափ անցնել: Ձեռներդ կապտում են ցրտից: Երջանիկ ես, եթե մի օջախի մոտ կարող ես մեկնվել կամ թոնիրի մեջ լոտներդ կախել ու տաքանալ:

10

Անօգ մի կին, վարձու աշխատանքով ապրող՝ ջրկիր, լվացարար, թե տան ծառա, անօգ մի կին ամեն օր կուծն ուսին՝ այս ցուրտ ձմռան բոկոտն անցնում է մեր փողոցով՝ «խանումի» համար ջուր է տանում:

այնպես

Կրունկները սառել են, ճաքճքել, դարձել հաստ պաղոշ՝ անզգա, առանց նյարդի: Այդ ավելցուկ մսի կտորներով մարմինն իրեն պաշտպանում է ձմռան ցրտից: Համարյա կիսամերկ է, ուռած, կապտած մարմնով: «Խանումը» նրան իր տան ներքնահարկում մի անկյուն է տվել ապրելու. դրա փոխարեն ծառայում է, ջուր բերում, լվացք անում:

20

Ամուսինը հաշմանդամ է, կինն է նրան պահում: Երեք ամիս աշխատելուց հետո նա կարողացել է շորս արշին բյաղի արժեք ետ պցել: Մնացել է շիվար, չգիտե իր մերկութունը՝ ծածկի այդ շորս արշինով, թե՞ բարուր պատրաստի մանուկի համար, որ մուշ-մուշ քնել է կիսամերկ մոր արգանդում և չի զգում, թե մայրը ձմռան ցրտին «խանումի» համար ջուր է բերում:

Իբանիյեսը իր գրքերից մեկում շատ սիրուն նկարագրում է Մադրիդի աղքատներին, որոնք ապրում են քաղաքից դուրս

և աղբակույտերը փորփորում մի բան գտնելու հուսով: Նրան
եմ հիշում և նրա աղբատներին, երբ տեսնում եմ ձմռան ցրր-
տին բոբիկ ոտքերով «խանումի» համար ջուր տանող կնոջ:

2

Գյուղը շատ է փոխվել:

Հին կապերը թուլացել են, տեղ-տեղ մի թեթև հարվա-
ծի են սպասում, որ իսպառ վերանան: «Ամբողջ աշխարհն
եկավ մեր առաջով անց կացավ», — պարծենկոտ ասում է
ամեն մի թեկուղ փոքր գյուղ, որ ձիու հանգիստ ճանապարհ
էլ չունի:

10

Մի շնչին օրինակ. ամեն ինչի հետ փոխվում է և գյու-
ղացու տարազը: Առաջ շուխան էր ու մոթալ փափախը, բայց
հիմա կեպկա էլ են դնում, շլյապա էլ: Յրենչն ու գալիֆեն
մեր պապենական շուխայի հետ այժմ գյուղում կոճով ունեն:
Երիտասարդութունը «փրենջ» է ուզում. ի՞նչ խոսք, որ գյուղի
դերձակները «փրենջը» ըստ իրենց «հայացնում» են: Մեր
գյուղերում իսպառ վերացել է հին տարազով հարս գնալու
սովորութիւնը, հինգ տարուց ավելի է մի դեպք չի եղել, որ «բե-
րանը» ծածկած հարս տանեն:

20

Նոր կենցաղը գյուղում դեռ թույլ նվաճումներ է անում,
սակայն գյուղն արդեն հակված է նորին: Հեղափոխական
կնունքը կամ, ինչպես գյուղում են ասում՝ «կոմսոմոլի մկրտու-
թյուն»-ը անցյալ տարի ավելի քիչ կողմնակից ուներ, քան
այս տարի: Անկուսակցական գյուղացին էլ է տանում իր մա-
նուկին կոմսոմոլի «տերտերի» մոտ:

Այդ բանն առանց «շերտավորման» ու պայքարի չի լի-
նում: Գյուղի պառավ կանայք, որոնք հարս ունեն և թոռ-
ներ և որոնք ավանդապաշտ են ու հնի փեշից պինդ բռնած, —
արգելում են, որ հարսները «կոմսոմոլի կնունքին» տանեն
իրենց մանուկին:

30

— Աման, մեր օջախը միք հարամի:

Վերիշեն գյուղում կոմսոմոլի կնունքին այս տարի հարս-
ները քիչ չեն կովել պառավների հետ: Շատերը ծածուկ են
տարել իրենց երեխաներին նոր ձեռով մկրտելու: Մի այսպիսի:

դիպք է պատահել այս տարի այդ գյուղում. ծիծաղաշարժ է, քայքայ խիստ բնորոշ:

Մի կին որոշում է ինչպես էլ լինի իր մանուկին նոր ձևով կնքել: Երբ լուր է առնում, թե գյուղում արդեն նոր կնունք կա, ուզում է տանի: Սկեսուրը վրա է հասնում և արգելում. ահագին աղմուկ, աղաղակ: Հարսը համոզվելու է ձևացնում ու մի քիչ անց մանուկի հետ ծլկվում: Բայց կնոնքն արդեն վերջացած է լինում: Ճանապարհին մարագի մոտ նա հանդիպում է մկրտություն կազմակերպողներին, դիմում է նրանց և խնդրում է իր մանկան էլ կնքել: Եվ հենց մարագի մոտ, փողոցում, կնքում են մանուկին:

Մեր գյուղերում դեռ շատ են նրանք, ծնոտն ու բերանը սպիտակ լաթի կտորով ծածկած, խոսելիս՝ ամաչկոտ ու անհամարձակ, սկեսրոջ և ամուսնու կրկնակի ահի տակ մեծացած մունջ հարսեր: Սակայն քիչ չեն և շրջապատի խավարին հաղթել կամեցող և «քաղաքի» կնոջ պես՝ «քաղաքավարի» ապրել ցանկացող գեղջկուհիներ:

3

Բռունը մի փոքրիկ գյուղ է, բլուրի արևկող լանջին: Ամեն անգամ, երբ լսում եմ գյուղում տարվելիք աշխատանքի մատին, միտս եմ բերում այդ փոքրիկ գյուղը՝ բլուրի լանջին:

Այս ձմռան էր, գյուղ-ժողով կար: Կիսամութ, ծխով լրցված մի սենյակում գյուղացիք իրար կողքի ծալապատիկ նրստոտել են գետնին, նստարան չկա: Սեղանի վրա պլպլում է սև նավթի ճրագը և մրով սենյակը լցնում: Սենյակում էլ նրստելու տեղ չկա. այդպես լավ է, տաք է լինում, խոնավ գետնին ոտքերդ չեն պաղում:

— Հընգերնե՛ր, խնդրեմ նախ և առաջ տուվեցեք մին նախագահ...

Գյուլխորհուրդն է. ուրեմն ժողովը սկսված է համարվում.

— Արուսյակից հարմար նախագահ չկա,— ձայնեց մեկը, հետո երկրորդը և այդ ձայնը դարձավ մի կատարյալ օվաթիա:

Քվեարկութիւնն ավելորդ է արդեն:

Առաջին անգամ ես այդտեղ տեսա կնոջ՝ գյուղի համայնական ժողովի նախագահ: Ի՞նչ ծածկեմ, առաջին պահ տարակուսանք ունեի և թեթև կասկած ժողովի աջողութեան մասին: Բայց ժողովից հետո ես ինձ հանդիմանում էի կասկածիս համար:

Հետո գյուղացիք ինձ շատ բան պատմեցին ընկերոջ մասին: Նա դպրոցի միակ ուսուցիչն է, ակտիվ մասնակցութիւն ունի գյուղի անց ու դարձին, կոոպերատիվին ու նոր դպրոցի շինութեան: Աշխատում է գյուղում կազմակերպել լիկկայան, որի միակ դասատուն ինքն է լինելու: Գյուղացիք պատմում էին, որ ընկ. Արուսյակը ոչ միայն պարապում է դպրոցի երեխաների հետ, այլև հոգս է տանում նրանց առողջապահութեան, դեղ է ձեռք բերում շքավոր աշակերտութեան համար: Դեպք է եղել, երբ ինքն է դեղ պատրաստել աշակերտների մեջ տարածված «քոսի» դեմ:

— Առավոտից մինչև արևամուտ դաս է տալիս. քա նրա գլուխը շի՞ ցավում է դրան աշխատանքից...

Հիշեցի մի հին պատմութիւն՝ «Նորհրդավոր միանձնուհի», բայց ընկեր Արուսյակը «միանձնուհի» չէ, այլ մի անխոնջ մշակ, որի կարևոր աշխատանքն արժանի է հիշատակման ու խրախուսանքի:

Եվ ամեն անգամ, երբ մտաբերում եմ Բոունը՝ քլուրի արևկող լանջին, սիրտս անկեղծ ուրախութեամբ է լեցվում, որ մենք այսօր համեստ աշխատավորուհիներ ունենք, ցրված մեր հեռավոր գյուղերում, որոնք մի-մի քլունգ առած անդադաջ փորում են հիմքերը գյուղական խավարի:

4

Մեծ քաղաքներում պոետներ շատ կան, որոնք հորինում են «Ծրկաթե երգեր», գրում «Վուլկան» ու «Տիտան», մի խոսքով մի ամբողջ «Հրաբխոպոեզիա»: Իսկ ո՞վ է գրել այն մասին, որ Հերիքնազը այժմ դելեգատկա է, նա, որ երկու տարի առաջ շփտեր ոչ գրել, ոչ կարդալ ու մինչ այժ իր օրում գրքի երես չէր տեսել:

10

20

30

Հերիքնազն այժմ էլի առաջվա պես է ապրում՝ սրա-նրա տան. խմոր է հունցում, բուրդ լվանում, ջուր է բերում կա՛մ լվացք անում: Ժամանակ շունի շատ պարապելու, երեխաների հոգան ու կարիքը շատ է: Դրա համար էլ նա օրընդմեջ է հաճախում ետկեսօրյա դպրոց, մի օր աշխատում է՝ երկու օրվա համար: Ու դասերը սերտում է փոքրիկ ճրագի աղոտ լույսի տակ, երեխաներին քնեցնելուց հետո միայն:

10 — Անցյալ օրը դասի ժամանակ,— պատմում է ետկեսօրյա դպրոցի մի դասատու,— դուռը կամացուկ բացվեց ու դասարան մտավ մի թմբիկ մանուկ՝ ուռած թշերով, ոտնամանի մեկը ձեռքին: Ներս մտավ ու զարմացած սկսեց նայել մեզ. իր տեսածը նրա համար օտարոտի էր: Մանուկը նայեց մի քիչ, պոռչ արեց, որ լա, երբ հանկարծ աշակերտուհիներից մեկը «վույ քոռանամ» ասեց ու արագ մոտեցավ մանուկին: Հերիքնազն էր, մայրը մանկան:

20 — Ես այս պատկերը շեմ մոռանա. նստել է Հերիքնազը նստարանին, մանուկը գրկին: Մի ձեռքով երեխան է գրկել, մյուսով գրատախտակից թվաբանության խնդիրն է ընդօրինակում իր տետրակում: Երբ նրան կանչեցի գրատախտակի մոտ խնդիրը լուծելու, փոքրիկն էլ հետն եկավ, մոր փեշից բռնած: Մայրը խնդիր է լուծում, իսկ մանուկն աչքերը շուրջ մերթ մորն է նայում, մերթ ինձ...

* * *

Քույրեր են՝ նա, որ դեռ ցուրտ ձմռան բոկոտն ջուր է տանում «խանութին» և նա, որ մանուկը գրկած գրատախտակի մոտ խնդիր է լուծում: Քույրեր են՝ և նա, որ արևածագից մինչև արևամուտ դաս է տալիս դպրոցում, և ամաչկոտ հարսը գյուղի, որ ուզում է նոր ձևով կնքել իր մանկան, թեկուզ փոքրցում, մարագի մոտ:

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ (Գ)

1

Բանակումբի դահլիճում նստելու տեղ չկա: Խորհուրդների համագումարն է: Եկել են հեռու գյուղերից, քերծի գլխին թառած արծիվի բներից, ծմակների խորքում ընկած շեններից: Եկել են՝ որը ոտով, որը ձիով: Եկել են գործի, պակաս պռատի մասին խոսելու, թե ոնց անենք, որ ավելի լավ լինի:

Դահլիճն անզարդ է, պետք էլ չի, որ սիրուն լինի: Անելիք շատ կա, մարդու աչքին էլ չի ընկնում, թե ինչու զարդարված չի: 10

Բեմի վրա տեղավորվել է նախագահությունը: Մակիչ ամին էլ է այնտեղ, գլխով հազար անցք անցած Մակիչ ամին: Լուռ լսում է գործկոմի զեկուցումը մի տարվա աշխատանքի մասին: Լսում է գլուխը կախ, ուշադիր, ասես լարել է ուղեղն իր՝ հետևելու զեկուցման, արդյո՞ք ամեն ինչ ասաց, պակաս բան չմնաց:

Զեկուցումը վերջացավ: Խոսում են իրար ետևից կարճ ու նաղդի մասին, ինչ որ հնարավոր է. խոսում են ազատ, իրենց մայրենի լեզվով (տեղական բարբառով): Մի գյուղում կոոպերատիվ չկա, մի տեղ «փոնթի» (ֆոնդ) հողը քիչ է, դարձեցի շենքն է թերատ մնացել: 20

Ուշադիր լսում է Մակիչ ամին, ասես հետևում է, թե մեկն ու մեկը կասի՞ այն, ինչ ինքն է մտածում: Չէ՛, պետք է խոսի:

Ու դեռ միտքը չպարզած, ներողություն է խնդրում, որ իր կորեկի պատմությունն է անելու: Փութ ու կես կորեկ է ցա-

նել, բայց ուրիշը հնձել է ու տարել: Գյուղի խորհուրդն այդ շի արգելել, որովհետև իր իրավունքից վեր է համարել: Մակիչ ամին դատարանի էլ չի դիմել. փութ ու կես կորեկի համար դատարան գնալն էլ մի բան չի: Ուրեմն հարկավոր է գյուղի խորհուրդին ավելի իրավունք տալ, — եզրակացնում է Մակիչ ամին:

Համագումարը աղմկահույզ ծափերով է ընդունում Մակիչ ամու ասածը կուլակի մասին:

Ո՞վ է կուլակը:

10 — Էն մարդը, որ խտհարքը չի ջրել, բայց հարում ա, ով որ չի վարում, չի ցանում, բայց հնձում ա, նա ամենամեծ կուլակն ա:

— Էս ի՞նչ ա իմ հագիս (շորերն է ցույց տալիս), բայց տես որտեղ եմ կանգնած: Դեռ էդ հերիք չի, պակաս-պոատի մասին էլ եմ ասում: Կեցցե՛ մեր կառավարությունը...

Մակիչ ամին իր խոսքն ավարտեց, սրտինն ասեց ու նստեց տեղում: Եվ համագումարը միաձայն որոշեց գյուղխորհուրդներին իրավունք տալ 5 ռուբլու սահմաններում վճռել տեղում քրեական և քաղաքացիական գործերը:

20

2

Սարերն ամալի, անկենդան:

Գարնան սկիզբն էր: Ձին կայտառ՝ կածանով նեղ ելնում էր սարն ի վեր, իսկ Սիմոն ամին պատմում էր, թե արտերը «խեյբատ» են, քարոտ ու հող, թե իրենք «քարահեր» (պարարտ) վարելահող շունեն:

Սիմոն ամին՝ շարքաշ ու ուամիկ, քար ու քուլի հետ ամբողջ տարին կոխվ է տալիս, մի քիչ հաց ու թազան ունենալու համար: Մեր գյուղերում հազար ու մի Սիմոն ամի ամեն լուսաբացի լարում են մկանները բազուկների՝ քարից, հողից մի բան պոկում, մի բան ստեղծում:

30

— Մեր շենում հինգ տարուց ավել մաճ բռնել դժվար ա: Հողը «խեյբատ» ա, հողուտ, տակը մեծ քարեր կան, գութանը դեմ ա առնում մեկ էլ, ու վա՛յ մաճկալին:

Ուրիշ տեղ եզները մանուկներ են քշում, մեզ մոտ տղա-

ճարդիկ: Պատահում է, որ ցնցումից մաճկալն ընկնում է, կամ եզն է սայթաքում:

— Դժար ա... Մենք էլ ենք շարդվում, եզինքն էլ:

Ինքն էլ, եզն էլ:

Սիմոն ամին ջահել ժամանակ շատ է վարել, հիմա պառավել է, կաշին ծալ-ծալ կախվել է կզակի տակ:

— Հերու էր,— շարունակում է Սիմոն ամին,— Ղլեչուն Մադին վար անելիս խոփը հոշին դեմ առավ բիրդան, Մադին ընկավ գութանի վրա, գութանը նրա փորը ճղեց:

Մադին արնակոլոլ ընկավ հենց իր քաշած ակոսի մեջ: 10
Տունը անտեր է՝ կինը և երեք երեխան: Հաց շունեն, աշխատող շունեն: Հիմա Մադու դռներից էլ շեն կանչելու, թե

— Եզները հանե՛ք, էգուց վար ա...

Ձին կայտառ՝ կածանով նեղ ելնում էր սարն ի վեր: Սիմոն ամին՝ փշրված ու պառավ մի եզ, էլի պատմում էր, թե մաճ բռնելը ինչքան դժվար է...

3

Ուզուն մեշեն կուսական մի անտառ է, որ տասնյակ վերատ երկարություն ունի: Մինչև այժմ էլ շատ տեղեր կան անտառում՝ մնացած անաղարտ, ուր ոչ մի անգամ կացին 20
չեն շարժել, ոչ մի ծառ չեն կտրել:

Լուսնկա գիշերով անցնում ենք Ուզուն մեշով: Ես եմ, Դիլան դային՝ վաթսոսնամյա մի ծերունի և մի ուրիշ գյուղացի: Ձյունը փայլում է լուսնի լուսի տակ, հաստարուն կաղնիներն ասես քարացած հսկումի մեջ են:

— Է՛, էս ճանապարհով հազար անգամ եմ անցել...
Հրես մեռնելու եմ, համա աչքս մեշին կարոտ մնաց:

Օրեր տեսած, կյանքում եփված մարդ է Դիլան դային: Ու պատմում է, թե առաջ հենց այդ ճանապարհով ստրածնիկի առաջն ընկած ոնց է վազել մինչև քաղաք՝ ամբողջ քառասուն վերստ: 30

— Ես տոով, ինքն ասլան ձիու վրա: Քրտինքից շապիկս մեջքիս էր կպել: Որսկան շան պես լեզուս կախ արած առաջին վազ էի տալիս: Որ մի քիչ ետանոտ էի, պլետով էր տալիս: Հիմա ո՛ւր, էն ժամանակն ուր...

Զիեբը փոռացնում են: Ճանապարհ շատ ենք անցել,
հոգնել են:

— էս դատը հաստատ մնա, լավ դատ ա, համա մի բա-
նի հավան չեմ,— ասում է Գիլան դային ու ջորին պահում
ծառի մոտ, մի ճյուղ կտրում, որ ջորուն քշի:

Ասում է, թե ինչին հավան չի:

— Մեր շենում մի քանի ջահել-ջուհուկ կա: Նրանք ինձ
տեսնելիս բարի օր են ասում, ես էլ «աստծու բարին» ասելիս
նեղանում են, էլ խոսում շեն ինձ հետ, թե ինչ ա՛ստված
չկա:

Գիլան դային խոսում է դանդաղ, իր տարիքին համեմատ:

— Բա ես որ ասում եմ աստված կա, ես տեսե՞լ եմ:
Լսել եմ էլի, ոնց որ լսել եմ, թե սա կաղնի ծառ ա: Նա ին-
չո՞ւ պետք ա իմ բարեկեց նեղանա: Տեսնանք արդյոք էդ մինը
գրվա՞ծ ա կամինիստի ծրագիրում:

Իր միտքն ավելի է պարզում, թե իր «միջուկը» փտած
է, էսպես էլ մեռնելու է, բայց սիրտը չկոտրեն, ասած «աստ-
ծու բարին» ընդունեն:

Համաձայնվում եմ նրա հետ: Գիլան դայու բարևը պիտի
ընդունել, ինչպես էլ ասի: Նա արդեն անուղղելի է, թող այդ-
պես էլ ասի:

— Սոված են, տես ոնց են կանչում է՛,— ասաց մյուս
գյուղացին:

Գայլեր էին, ոռնոցը ձորից էր գալիս: Չմտան պարզկա
գիշերին ոռնոցն արձագանք էր տալիս ձորերում և մի խուլ
աղմուկ ասես լեցվում էր Ուզուն մեղայի թավուտներում:
Ակամա զարզանդ ես զգում:

— Բան չկա. հրես գեղին մոտենում ենք,— սիրտ է տա-
լիս Գիլան դային:

Զիեբն ասես հասկանում են մեզ և քայլերը մի քիչ արա-
գացնում: Մի քիչ էլ, և շների հաշոցը լսելի եղավ: Գյուղը
հեռու չէր:

• • •

Հոգնել ենք ճանապարհից ու մի կուշտ պանիր-հաց ուտե-
լուց հետո իսկույն պառկում ենք: Սենյակի անկյունում բու-
խարին է. կրակը մերթ լուսավորում է ամբողջ սենյակը, մերթ

հանդարտում: Փայտն առատ է և ածան, գյուղն անտառի մեջ է, վառում են ուզածի շափ:

Դիլան դային էլի իր պատմութունն է անում: «Արմենտուրքի» (Արմենտորգ) մասին է պատմում: Շատ գոհ է, որ իրենց շրջանում ժողդատարան են քացել: էլ առաջվա պես ամեն հասարակ գործի համար կարիք չկա քաղաք գնալու:

Ինչ-որ գործ ունի դատարանում և համոզված է, որ դատը հօգուտ իրեն են վճռելու:

— Շունչա շատ, ապրուստս քիչ, ուրեմն ես շունկոր եմ էլի,— եզրակացնում է նա:

10

Խոսքերն էլ մի տեսակ են, դեռ լեզուն շի ընտելացել նոր բառերի: Այդ երևույթն ընդհանուր է մեր գյուղերում: Խրթին բառն աշխատում են գեղավարի դարձնել ու ստացվում է մի տեսակ հայերեն: Դիլան դային իր գործի մասին պատմելիս, ասաց.

— Անհարի ա (անհնարին), որ հնարապետության (հանրապետության) տված գործը ժողով դատարանը (ժողդատարանը) կարճատի:

Նոր կենցաղի հետ տեղծվում է նոր լեզու, նոր բառեր: Շատ անգամ գյուղերում կարելի է լսել այսպիսի խոսք, թե «ընկերներ, օրակարգերը պրծավ» կամ մի այլ բնորոշ գեղավար դարձվածք:

20

Իհնջը հաղթում է ինձ: Կիսաքուն միճակում ականջիս է հասնում թառի ձայն: Մեկը երգում է դիմացի տան՝ ծոր տալով ու զգացված.

— Ավտամարիլը ցոլա՛ց ու փնաց...

* * *

Առավոտ կանուխ հավաքվում ենք դպրոցում: Հարց ու փորձ են անում, իրենց հոգսերից պատմում: Մեկը հարցնում է նույնիսկ... Դոուեսի ծրագրի մասին: է՛, որտեղից որտեղ. Դոուես ու Զելվա...

30

Գյուղի ներքև դպրոցի շենքն է, մի փառահեղ շինություն, որ դեռ պատրաստ չի: Երկու տարի է գյուղն աշխատում է վրան, այս տարի մեջն էլ կպատրաստեն.

335

— Առաջ ուզում էինք մի փոքր շենք շինել, բայց մեկ էջ պլանը փոխեցինք: Էս նորը լավ է:

Դասը սկսվում է: Աշակերտները շեն գրում, միայն կարդում են, որովհետև նստարան չկա: Նոր են շինում: Նստոտեչ են տախտակների վրա հիսունաչափ մանուկներ՝ կարմրաթուշ ու կայտառ, մեկը մյուսից ժիր:

Այդ առաջին խմբակն է: Նրան հաջորդում է երկրորդը: Պարապմունքները տևում են մինչև երեկո, իսկ երեկոյան մեծահասակ անգրագետներն են պարապում:

10 — Մեզ էլ էսպես, որ կարդացնեին, հիմա մենք էլ մարդու շարքում կլինեինք, — սրտանց և շատ անկեղծ ասում է մեկը գյուղացիներից:

— Ընկեր լենինն ասել ա, որ մինչի երեք տարին երկրագունտի բոլոր մարդիկ պետք ա գրագետ լինեն: Եթե շատ չկարան, գոնյա իրենց անունը պետք ա ձեռք քաշեն, — պատասխանում է նրան մի ուրիշը, որ «գերմանու պլեն» է եղել:

Գյուղը մի քիչ ծաղկեցնում է պատգամը լենինյան, բայց խմաստն ու ոգին ճիշտ է ըմբռնել:

20 Խոսում ենք գյուղի պակաս-պռատից: Նավթը թանկ արժե՝ մի ֆունտ նավթին տալիս են 3 ֆունտ ցորեն: Կոոպերատիվ դեռ շունեն: Բաքվի հայրենակցական միությունն իր աջակցությունն է ցույց տալիս. նոր դպրոցի կառուցման մեջ նա մեծ աշխատանք է թափել:

Քիչ անց ճանապարհվում եմ մի ուրիշ գյուղ: Դիլան դառին ճանապարհ է գցում ինձ:

— Տեսա՞ր ուսումնարանը, — հարցնում է, — պալատ ախանի պալատ...

Ու մի բան էլ դեռ ավելի:

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (Ա.)

Յածիկ անաստաղով մի ընդարձակ սենյակ է Միսիանի շրջգործկոմի «կանցիլարը»: Սանդուղքները ծուռ ու դիք, բարձրանալիս պիտի կռանաս, թե չէ՝ գլուխդ անաստաղին ես զարկելու:

Արտասովոր աղմուկ է, գնում են, գալիս: Գյուղխորհուրդների հերթական համագումարն է. եկել են հայ, թուրք, մալական, շրջանի 37 գյուղից:

Ժամի 12-ն է արդեն: Սպասում են ամենից հետո գյուղերի պատգամավորներին, որ նիստն սկսեն:

10

Ջանգ շունեն: Մեկը կանչում է բարձրաձայն.

— Դե, ընկերներ, նստեցեք: Մեկիք, էն սկամին մոտ քաշի, թող նստեն:

Մի կերպ տեղավորվում են, որոնք ոտքի վրա են, դռան մոտ:

Նախագահը հայտարարում է, որ այսօրվա օրակարգի խնդիրներն են լինելու գյուղատնտեսական և դպրոցական, հետո շինարարական աշխատանքները: Տեղերից պիտի զեկուցեն.

— Ուրիշ հարցեր կա՞ն:

20

— Դե դրանից էլ լավ հարցե՞ր,— ձայնում է մեկը:

Հաղթանդամ, թխադեմ մի տղամարդ, տեղական շալից գալիճեն հագին, զինվորական կոշտ սապոգներով մոտենում է սեղանին: Շրջգործկոմի նախագահն է: Նայում է ընկերներին, ժպտում ու հնամաշ շինելի ջերից հանում մի փոքր թուղթ:

— Երկու ամսում շոշափել ենք 408 հարց, մեծ մասամբ

337

Հրթական և շինարարական: Դեպի կառավարութեան հասցեին սերտ վերաբերմունք ա. շրջանում տիրված ա խաղաղ աշխատանք: Մենակ մի գողութիւն ա եղել, էն էլ գողերը, հուսով ենք, որ կը բռնենք: Դե, կուշտ ենք, սերմի պակաս չունենք: Էդ էլ մեր տնտեսական դրութեան մասին:

Նայած որ էս տարվա ցանքսերի 20 պրոցենտը ցրտից վտանգի ճանկերում ա գտնվում, հողբաժանում ամեն տեղ չի եղել: Թյուրիմացութիւն ընդմիջտ էլ եղել ա: Ես կարող եմ մատնաշնչել մի քանի թյուրիմացութիւն հողերի վերաբերյալ, բայց մեր կամիսիան կը որոշի այդ գյուղերի սահմանները: 10 Հողը չափելումը գյուղում լավ մասնագետ չկան:

Կանգ է առնում մի պահ, մտքերը ժողովում: Ուզում է շրջանի դրութիւնը նկարագրել ճիշտ, իր պարզ ու անպաճույճ լեզվով:

— Միսիւնում բաշխական շին. աշխատանք ա տարվել, պետք է գնահատենք: Առաջ էնպես ճանապարհներ կային, որ էշ էլ չէր գնում, հիմա գյուղացիք շինել են, շատ տեղ արաբա էլ ա անցնում: Առաջ գետով անցնելիս պետք ա ոտքերդ հանեիր, հիմա լավ կամուրջներ կան: Շուտով հեռախոսական գիծ են անցկացնելու: Գյուղարանք կա, որ դպրոցի ֆունժամենտը դրել են, և 22 թվին 12 դպրոց ունեինք, էս տարի 26, 1800 աշակերտ, 19 լիկկայան և 700 էլ սովորող: Սա էլ պակաս աշխատանք չի:

Չի հպարտանում: Ասես՝ ուզում է ասել, թե դեռ ո՛րտեղ ենք, ինչե՛ր պիտի անենք: Ձայնը հաստատ, խոսքերը որոշ, ասես ամեն խոսքին պատասխանատու է զգում:

— Կոոպերատիվն առաջ վախճան դրութեան մեջ էր, և ժողովուրդի մասսային քիչ էր օգնում: Հիմա շրջանային կոոպերատիվ ունենք, և էդ կոոպերատիվը առողջ հիմքերի վրա ա դրվում: Որպես բանկը (շրջանում վարկ. ընկերութեան բանկ են ասում) ևս տալիս ա սերմացու և եղ, միջակ և շքավոր գյուղացու համար: Բանկը տվել ա ութ հազար ռուբլու օգնութիւն: Փօկը շրջանումս մի տեսակ դրութեան մեջ ա: Վերջին ժամանակներս գյուղացիք անդամագրվում են Փօկի շուրջը, և Փօկը դառնում ա հետաքրքիր:

Կյանքը էսպես ա: Մեր միլիցիան օգնել ա գյուղի խոր-

հրդրին, և ոչ մի թյուրմացութեան առաջ չենք եղել տուրքերը գանձելու մեջ: Մենք, ճիշտ ա, մի քիչ ուշացել ենք, բայց տուրքը գանձվել ա:

— Մի քանի խոսք ևս կազելացնենմ ենթաբաժինների մասին, որի մեջ ա Զագսը: Շրջանիս գյուղացիութեան 90 տոկոսը կապված ա Զագսի շուրջը: Հոգևորական իշխանութուն գոյութուն չունի, և Զագսի աշխատանքները լավ են գնում: Մի կարևոր խնդիր էլ Պետապն ա: Պետք ա գյուղերում հասկացնել նրա մասին:

Նոր պատգամավորներ են գալիս: Ընդմիջում են. զեկուցողը դադար է առնում և դառնում է մեկին՝ «էն օթախում նստարան կա, բերեք նստեք», հետո էլի շարունակում է. 10

— Գոնյա պետք ա մեծ աշխատանք տանենք Պետապի մասին: Դե սրանով էլ իմ զեկուցումս պրծավ:

Հարցեր են տալիս, թե հեռախոսի սյունները իրտեղից պիտի բերեն, թե թերի մնացած դպրոցական նոր շենքերը ե՞րբ պիտի պատրաստեն: Զեկուցողը պատասխանում է հարցերին ու հանկարծ մի բան է մտաբերում:

— Հա, մոռացա ասել, որ մենք գյուղխորհրդի աշխատանքները կանոնավորել ենք: Այ, լծենը հիմա լավ ա աշխատում. առաջ մի քիչ թույլ էր: 20

էլի հարցնում են, թե ո՞նց անենք, որ գյուղերում անշափահասներին շամուսնացնեն:

— Դրա դեմ օրենքը տուգանք ա առնում և գրանցման շենք ենթարկում: Բայց դի էլի ապրում են ծածուկ, մինչև շափահաս դառնան (ու՞մանք ժպտում են): Դե դեպք ա եղել, որ քննել ենք, աղջկանը կամ տղին ասել ենք, թե սպասեք, ասում են՝ թե բանը բանից արդեն անց ա վացել, էլ ի՞նչ սպասենք (ծիծաղում են):

— Սա նրանով եմ իմանում, որ դպրոցը լավ է, որ հիմիկ գարունք ա, բայց էլ առաջվա պես երախոցը դպրոցից չեն հանում և ուղարկում տավարը կամ վարը, — ասում է մի գյուղացի: Նրան ի՞նչ, թե ըստ էութեան չեն խոսում: Միտք էր, եկավ, պիտի ասի, ու տեղից առաջարկում է ամեն ջանք թափել, որպեսզի դպրոց շունեցող գյուղացիներն է՛ւ երկու տարին դպրոց ունենան: 30

Մեկը քանաձե է առաջարկում՝ շրջգործկոմի գործունեությունը հաստատել:

— Կարճ ա գրած, է՛, դուք հետո մաքուրը կգրեք:

Չեկուցում է Բունակոթ գյուղի ներկայացուցիչը գյուղի խորհրդի աշխատանքների մասին:

— Ունեցել ա 10 նիստ, շոշափած ա 45 հարց. էս երկու ամսում հասարակության ժողով 5 անգամ ա եղել: Ունենք 2061 շունչ, արական էլ, փգական էլ: Բարձրում ունենք 381 բանվոր, գյուղում կա 560 հատ լծկան եզ, 1428 ոչխար, 33 ավանակ (ոմանք ծիծաղում են, մեկը տեղից ձայնում է՝ «մին էլ ասա»): Գյուղում կա Փօկ, 65 գութան: Գյուղում ունի դպրոց, որտեղ հաճախում են 157 (տեղից հարցնում են՝ «ի՞նչ», «աշակե՞րտ, ի՞նչ» ժպտալով պատասխանում է զեկուցողը): Հետո սեկցիաները, — կուլտուրական աշխատում է լավ: էս 2 ամսում գյուղում ծնվել է 17 երեխա, մեռել են 7 (մի պատգամավոր տեղից՝ «Մեր գյուղում էս տարի հլա մեռնող չի եղել»): Զորս ճանապարհ ենք շինել, 400 մարդ ա աշխատել: Կապերատիրն ունի 175 անդամ: Լիկկայանը առայժմս լավ ա:

20 Հարցեր են տալիս.

— Ի՞նչքան տուրք եք տվել:

— 80 տոկոս տվել ենք, 20-ը մնում ա:

— Դաշտային աշխատանքների պատճառով աշակերտները դպրոցից շեն հակաստ՞ում (երևի ուզում էր ասի պակասում):

— Զէ՛, շեն հակասում, — պատասխանում է:

— Մի դուռը բաց արեք, օդը փոխվի, — ասում է նախագահը:

Դուռը բացում են. ցածրիկ սենյակը ավելի է լուսավորվում: Դուրսը զարնան արևոտ օր է, ու հեռվից կանաչին են տալիս արտերը:

— Կզեկուցի Անգեղակոթն իր արածի մասին:

— Կազմը բաղկացած է 38 հոգուց, ունեցել է 12 հատ նիստ, 7 հասարակական ժողով: Խորհուրդը 13 օրվա մեջ շինել ա մի մեծ ճանապարհ, աշխատել ա 1400 բանվոր: Որ կարելի ա ասել առաջ էդ ճանապարհով ուլախ շէր գնում, հի-

մա փոշտ էլ կգնա: Մառատունկը բաղում տնկել ա 120 հատ, շինել ա 13 նստարան, պետք ա 25 հատ էլ շինի: Փօկն ունի 96 փութ ցորեն: Երեսուն տարի ա մեր հողը չի բաժանվել: էս տարի խորհուրդը որոշել ա գավառից բերել 7 հատ հողաբաժին, որ էս տարի հողի բողոքը միանգամից վերջանա:

Խրճիթ-ընթերցարանում պարապմունք լինում ա, գալիս են կուսակցական և գյուղացի ընկերներ: Գողություն չկա: ՄՈՊՐ-ի անդամ 35 հոգի, Պետապի հարկը գրում են: էլ էն-պես հարց շունիմ:

— Գյուղում կա՞ առողջապահական սեկցիա, — հարցնում է մեկը: 10

— Կա՞, — պատասխանում է:

— Ի՞նչ աշխատանք ա տանում:

— Դե պարզ ա ի՞նչ պիտի անի: Մրագիրը իրագործում ա:

Հարցնում են, թե նախզինակոչները լիկկայան հաճախե՞լ են, թե ոչ, կոպերատիվն ի՞նչպես է աշխատում և այլ բազմաթիվ հարցեր, որոնցով այսօր մեր գյուղն է զբաղված:

— Ավագ, էն կուլան մի դես տուր, — խնդրում է մեկը: Պաղ չրով լի կուլան ձեռքե ձեռք է անցնում:

Խոսք է տրվում Ախլաթյան գյուղի նախագահ Կոնսուլին: 20
Զարմացա, երբ այդ անունը լսեցի: Եվ ի՞նչ տեսակ ավել անուն չեն հնարում մեր գյուղերում:

Ցեխոտ պաշտոն ուսին, մտրակը ձեռքին մոտենում է Կոնսուլը սեղանին:

— Կոնսուլ, վիզդ ինչո՞ւ ես կապել:

— Զիբան ա, — խոսպոտ ձայնով պատասխանում է նա ու սկսում պատմել արած աշխատանքի մասին: Դարձյալ դպրոց, կամուրջ, ճանապարհ: Գյուղում բոլորն էլ կոպերատիվի անդամ են: 500 արշին տախտակ են քաշել նոր դպրոցի համար, քար են կտրել: Բաքվի բանվորներն օգնում են, ուղարկել են տետրակներ, գիրք, փող, ապակի: Կոնսուլը հայտնում է, որ գյուղը տրոշել է ավելի սերտ կապվել քաղաքի բանվորների հետ: 30

Կոնսուլից հետո խոսում է մի ալևոր գյուղացի, որի գլխին գրած գլխավորական հնացած գլխարկը չի սազում նրա պատ-

կառելի միրուքին: Առաջարկում է, որ խորհրդի անդամները գյուղացոց հասկացնեն, թե երեսններին դպրոցից չի կարելի հանել:

— էսօր էթ': նա հինգ փութի կամ հինգ գառան համար նա իրեն երեսային կույր ա թողնում ուսումի կողմից, մի քանի տարի հետո նա հինգ հարյուր փութի վնաս ա քաշելուս Կոնստ:ը պպզել է գետնին, ծնոտը հենել է ձեռքին և աչքերը ճպճպացնելով նայում է մեկ սրան, մեկ նրան:

Հարցնում են, թե լիկկայանում ի՞նչ են սովորել:

10 — Ես վարժապետ չեմ, որ իմանամ: Լիկկայանը գնացողը գիր չգիտե, դե նա էնտեղ գրագիտություն պիտի սովորի, էլ ուրիշ ի՞նչ պիտի անի:

էլի խոսում են, պատմում արածի, պակաս-պռատի մասին: Համագումարը ասես մի նահապետական գերդաստան է, որ վաղվա աշխատանքն է բաժանում, թե ո՞վ է հանդ գնալու, ո՞վ հունձի, ո՞վ կալի:

Մի թուրք գյուղացի նախագահին է հարցնում թե՛

— Բըզըմ դարալարդա հա՞վախ օլաջայ բջիջլար:

20 «Մեր ձորերում ե՞րբ են բջիջներ լինելու». հեռու ձորերում դեռ թույլ են աշխատում, բայց այդ ձորերում էլ շուտով «բջիջլար օլաջայ»:

* * *

Արևը թեքվում է արդեն:

Պատուհանի ճեղքից շողերի մի խուրձ դիմացի պատին է ընկել, ասես շոյում է ընկ. Մյասնիկյանի պատկերը, որի շուրջ մեկը դաշտի ծաղիկներից փնջեր է շարել, խնամքով ու գորովով: Ասես ժպտում է մայր մտնող արևի շողերի միջից և ուրախ է, որ «մահվան կռիվ է հայտարարված հայ գյուղի տգիտության և աղքատության»...

ԲԻԶԱՆԱԳ

Միսիանից Նախիջևան տանող ճանապարհն անցնում է Սալվարթուի լեռներով: Վեց ժամ անընդհատ պիտի բարձրանալ և ապա իջնել:

Ու վերև, գագաթից բացվում է մի հսկա տեսարան: Հեռվում կապույտ մշուշի մեջ երևում են Ղարադաղի ժայռերը, ավելի մոտ անտառոտ Ղափանը գանգուր մորթու պես փռվել է բլուրների վրա, իսկ արևմուտքում՝ Նախիջևանի հարթավայրը բերրի:

Հունիսին Սալվարթուի վրա դեռ ձյուն է լինում: Զուլալ 10 առունները քչքչում են կայտառ, ծաղիկները գույնզգույն, կանաչ ֆոնի վրա, ասես գորգեր են փռած:

Զմեռն է սոսկալի: Միսիանի գյուղացին գիտե ինչ ասել է ձմռան բուքին Նախիջևանի սարն անցնել. քանի՞ հոգի են քթախեղդ եղել, ձի ու շարվաղար մնացել ձյունի հաստ շերտերի տակ մինչև գարուն, մինչև հալոցքը ձյունի:

Լուսաբացը հեռու է դեռ: Վայրէջքն է սկսվում: Նեղ կածանն անցնում է փոքրիկ մացառուտների միջով: Քանի իջնում ենք, այնքան մացառուտը խտանում է ու վերջում դառնում անտառ:

— Որ մեշին հասնենք, տաք կլինի, — ասում է շարվաղար Արոն, որն իր գլխի մազի համրանքի շափ գնացել-եկել է այդ ճանապարհով ու գիտե ամեն քար ու քոլ:

Ցուրտ քամի է փչում, բայց ինչքան ներքև ենք իջնում, այնքան օդն ավելի տաքանում է: Արոն փորձված է, ձիու կողքից է քայլում: Այդպես ավելի լավ է պաշտպանվել ցրտից:

Մեզ հանդիպում է մի մեծ քարվան: Արմենտորգի ապրանքն են փոխադրում: Հարցնում են, թե սարում հո ցուրտ չի: Արոն գիտե բոլորին, ճանաչում է, ով որ գյուղից է:

Իջնում ենք նեղ կածանով: Մեկը ներքևից բարկացած կանչում է ձիուն, հայհոյում: Հավասարվում ենք: Մանր բեռան տակ ձին շոքել է, չի կարողանում վեր կենալ:

— Թամահո մի քիչ պակաս արա, էլի՛, բա էդ ձին էդքանը կտանի՞, որ բեռնել ես,— կանչում է Արոն և մոտենում: Օգնում ենք: Բեռը չորից բարձում է ու ճանապարհը շա-

10 բունակում:

— Է՛հ, սրանք շարվադար ե՞ն: Հե՛յ գիտի ժամանակ: Էնպես աղաթ կար առաջ, որ եթե շարվադարը ճանապարհին իր ընկձրոջ թողներ, էլ նրա հետ ոչ ոք ճանապարհ չէր գնա: Թողել են բեռը վեր ընկած, իրենք գնացել,— տրտնջում է Արոն:

— Հասանք հա: Հրեն Բիշանագի ծուխն երևաց

Ձորից ծուխ էր բարձրանում:

Բիշանագում առաջ մալազան էր ապրում: Գյուղը կոչվում էր Կարմալինովկա: Պատերազմի տարիներում մալազանները քոչել են ուրիշ գավառներ, որը՝ Շամախի, որը՝ Գիլիջան, որն էլ Ռուսաստան: Գյուղում այժմ թուրքեր են բնակվում:

Բիշանագը Նախիջևանի սահմաններումն է: Կտրված լինելով կենտրոնից և ընկած հեռու ձորում, Բիշանագն առաջ էլ իր ուրույն կյանքով էր ապրում: Այժմ էլ շարունակվում է այդ դրուժյունը:

Բիշանագում ոչ մի կազմակերպություն չկա. չկա կոոպերատիվ, դպրոց: Գյուղում կուսակցական մարդ չկա: Առանձին գյուղխորհուրդ չունեն: Նայում են Շահբուզ շյուղին, որ 20 վերստի վրա է: Հողաշինարարական աշխատանք ամենեվին չի տարված:

Գյուղում գանազան վեճեր լինելու դեպքում այս կամ այն ախսատեղալն է վճիռ տալիս, համաձայն աղաթի ու հին սովորության:

— Սեյիդ ամու մոտ մի լավ շայ խմենք,— ասում է Արոն:

Ձիերից իշնում ենք: Սեյիդ ամին բարևում է մեզ մի առանձին ախորժով և պես-պես շարժ ու ձևով ներս կանչում:

Նրա խրճիթը մալականի մի հին տուն է: Նոր կենվորը փոխել է ըստ ճաշակի: Տան անկյունում դեռ մնացել է ուսական վառարանի մի մասը, որի վրա դարսած է աթար:

Քոնիրը թեժացրել են: Մոխն ու ալավը իրար են խառնըվել: Սեյիդ ամու ամբողջ ընտանիքը բուլորել է թոնրի շուրջ: Ետ են քաշվում, մեզ էլ տեղ տալիս:

— Սարից եք եկել, մրսած կլինեք, — ասում է Սեյիդ 10
ամին:

Քոնրի վրա մի խաշափառ երկաթ ձգված, վրան ապուրով լի մի կաթսա: Սեյիդ ամու պառավ կինը, շորացած ձեռքով՝ խառնում է ապուրը: Աչքիս այնպես է երևում, կարծես մխից սևացած շերեփն էլ կնոջ ձեռքի շարունակութունն է, և կինը ապուրը ձեռքով է խառնում:

Քոնրի շուրջը շարվել են երեք կիսամերկ մանուկներ՝ անվա, ճպոտտ աչքերով: Նրանցից ամենափոքրը դժգոհ մոմոում է քթի տակ. հաց է ուզում:

— Եղբորս երեխաներն են, ես եմ պահում, — ասում է 20
Սեյիդը:

Աբոն արդեն ձիերը տեղավորել է:

— Սեյիդ, մի լավ շայ գցի մեզ համար:

— Գլխիս վրա: — Ու ձայն տվավ:

Անկյունից, ասես թաքստոցից, դուրս եկավ մի մանկահասակ աղջիկ, սամավարն առավ ու դուրս գնաց:

— Նորապսակ է Սեյիդը. էս երեխան նրա թաղա կնիկըն է, — կամացուկ ասաց Աբոն: — Հինգ կնիկ է առել, շեն գիմացել, մեռել են, հիմա էլ էս երեխին է բերել:

Ներս մտավ մի երթնասարդ, որ անդամալույծի էր նման, ոտքերը զոռով էր քարշ տալիս ու խոսելիս էլ բերանը ծովառատում: 30

— Սեյիդի տղան էլ էս է. հոր մեռնելուց հետո նա պիտի նրա տեղն անցնի: էդպես է օրենքը, — բացատրում էր Աբոն:

Ապուրն արդեն եփվեց: Պառավ կինը հողե ամանների

մեջ լեցրեց ապուրից, տվա՛վ երեխաներին, մի կտոր էլ գարու բոբոն: Փոքրիկը, որ մոմառւմ էր քթի տակ, ի՛նչ ախորժով էր ուտում տաք ապուրն ու գարու բոբոնը, ծպացնում շրթունքով ու գդալից ծծւլացնում կիսաքաց կրծքին, մերկ ոտքերին:

— Է՛հ ո՞նց ես, Սեյիդ ամի, — հարցնում է Աբոն:

Սեյիդն աստծուն փառք է տալիս, գո՛հ է ապրուստից: Մի բանից էր դժգոհում. որ ուժը պակասում է, ծերությունը հաղթել էր:

10 Խոսում էր դանդաղ, ծոր տալով, կարծես աղոթք էր անում: Ժողովուրդն իրեն լավ է նայում, գյուղի գործերից շատերն իր ձեռքով են անցնում:

Մանկամարդ կի՛նը սամավարը բերեց, բաժակները շարեց և էլի քաշվեց անկյուն:

Թե՛յ եմ առաջարկում Սեյիդին: Իրենք շաքար չունեն, շատ վաղուց է, ինչ բերանը շաքար չի դրել: Հրաժարվում է: — Դուք անուշ արեք:

Աբոն ինձ կամացուկ ասում է, որ Սեյիդը շատ մոլեռանդ է, «հարամ» մարդու շաքար կամ հաց չի գործածի:

20 Նոոից առաջարկեցի: Ծս էլ, Ընկ՛նրս էլ, Աբոն էլ, կարծես խոսք մեկ էինք արել, որ Սեյիդին շայ տանք:

Վերջում համաձայնվեց, առավ իմ բաժակը, տվա՛վ կնոջը և կարգադրեց, որ... 14 անգամ լվա: Հետո խմեց:

Չոքել էր գետնին ուղտի պես, բաժակը բռնել էր ձեռքին, ոնց որ քահանան սկիհն է բռնում, մի կում էր անում, տնքում, լեզվով շաքարը բերանում խաղացնում ու մեկ-մեկ էլ ազատ ձեռքով միրուքը սղալում:

30 Բաժակը լվալուց հետո «հարամն» այնպես էր հալալվել, որ Սեյիդը թեյից ետ կենալու միտք չուներ: Բաժակներն իրար ետևից դատարկում էր, առանց տեղից շարժվելու: Ասես մտքում դրել էր սամավարը դատարկել:

— Էն ո՞նց ես ասում, Սեյիդ, թե աստված հեռու պահի մին... էն ոնց է, մի ասա, Սեյիդ ամի, — դիմեց Աբոն նրան ու ծածուկ էլ մեզ աչքով արավ:

Ե՛վ առանձին պատկառանքով ու վեհությամբ (երևի այդպիսի դեմք ուներ Մովսեսը Սինայի պատգամները բերելու

ժամանակ) Սեյիդ ամին միրուքը սղալելով ու փոքրիկ, փոքր
ընկած աչքերը կկոցելով, ասաց.

— Ալլահը թող մարդուն հեռու պահի նախ բեկի բան-
տարկությունից, հետո կնոջ խարդավանքից և վերջում էլ...

Նա արաբերեն էր ասում: Այդ երրորդ պատգամը վերա-
բերում էր Սեյիդի «հանդերձյալ» կյանքին: «Ըստ օրինաց»
նրան բարձր տեղ թաղել, որ նրա հոգին ավելի մոտ լինի
երկնքին:

Հետո նամագն էր, ավելի շուտ նամագի դասը: Որդին
բերանը ծամռելով կրկնում էր հոր ասած խոսքերը արագ, 10
կատարում էր այն, ինչ հայրն էր անում:

Մենք լռել էինք: Տնեցիք անշարժ նստել էին: Միայն
փոքրիկն էր, որ ապուրը կերել էր և փորը կուշտ՝ քորում էր
ետևի փափուկ մսերն ու նայում աղոթողներին:

Նամագը վերջացավ: Աբուն՝ ձիերը հանեց գոմից. բա-
կում՝ դիմացի սենյակից լսեցինք կուփիչի հավասար զարկերի
ձայն:

Սենյակի ներսում, գերանների վրա կարպետի հենք էր
ամրացված, որի դիմաց նստել էր մի աղջիկ: Նա նուրբ ու բա- 20
րակ մատներով գույնզգույն թելեր էր հագցնում հինածին և
կարպետ գործում:

Մեզ որ տեսավ, գլուխը կախեց, գլխի շալն ավելի քա-
շեց, որ երեսը շտեմենք: Լղարիկ, բարակիրան մի աղջիկ է:

— Սեյիդի աղջիկն է, մայրը հերու մեռավ,— ականջիս
փսփսաց Աբուն:

Աղջիկն իր օժիտն էր գործում: Սեյիդն ասաց, որ շու-
տով քյարինը կտրելու է:

— Տեսնես ինչ քավթառ մարմին պիտի գրկի այս փոք-
րիկին, ո՞ր ձեռունու շորացած շրթունքները պիտի համբու- 30
րեն սրան,— զայրացած ասաց ընկերս ու դուրս եկավ:

Ես էլ դուրս եկա սենյակից: Դուան մոտ ետ նայեցի, աղ-
ջիկն էլ նայեց: Ու աքնպե՛ս ծով խեղճություն, անտերունչ գա-
ռան վիշտ կար նրա աչքերում:

Հանկարծ լեզու առներ կարպետը գունավոր ու պատմեր,
թե ինչ մտքեր է հյուսել աղջիկը հենքին, ինչպես ծանր հա-
ռաչել է կուփիչի զրնգան ձայնի հետ ու ինչպես նրա բարակ,

դեղին մատները ամեն մի թելի հետ մի ծանր մխոք են կապել
կարպետին:

• • •

Մեր ճանապարհը շարունակեցինք Ղզլ-Քողազի ձորով,
որի երկու կողմում տձև ապառաժներ և ահռելի քարակույ-
տեր են: Ճանապարհի հետ, ձորով, կեռ ու մեռ հոսում է մի
փոքրիկ վտակ, որ հետո կորչում է Նախիջևանի տափարա-
կում:

10 — Է՛, էն քաղաքի լուսավորութունը երբ է հասնելու էւ
մեր ձորերին,— լուսթյունը խախտելով ասաց շարվաղար
Արոն: Ու վրա բերեց.— էս մեկը լավ աղաթ չի: Ախր ի՞նչ
կյանք պիտի քաշի էն փոքր երեխան:

Ճտ նայեցի Բիշանագին:

Տան կտուրի վրա պահապան արագիլի պես կանգնել էր
Սեյիդ ամին, ձեռքերը կողքին. հեովից ուսերեն «Ք» տա-
ռի էր նման:

Մի քիչ էլ ու ճանապարհը ծովեց, Բիշանագն է՛ջ շէր երե-
վում:

Ճանապարհն ասես վերջ շպիտի ունենար: Այ ու ձախ
ժայռեր, որոնց վրա, ոնց որ քյոսա մարդու բեղ, բուսել
20 էին հատ ու կտոր թփեր, գորշ; մոխրագույն:

Վայրի բաղերի մի երամ կռնչոնով անախորժ՝ սլացավ
գետն ի վեր:

— Սրանց տեղ որ այրոպլան գա, էն ժամանակ ամեն
ինչ լավ կլինի, — ասաց Արոն:

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (Գ)

Ուլու շայի ձախ ափին ընկած է Թազա գյուղը, որ հար-
յուր տարվա անցյալ ունի: Խոյեցի են, լեզուն չի զանազանվում
իզդիրցու լեզվից: Տեղացիք նրանց «կլլան» են ասում:

Սիսիանում մի քանի «կլլան» գյուղեր կան, որոնք մինչև
այժմ էլ հարազատորեն պահել են իրանց բերած տարազն ու
աղաթը:

Գյուղը ցավեր շատ ունի, բայց Թազա գյուղի հոգսը եզա-
վի է:

— Մի տեղ լինե՞ր, քոչեինք,— ասում են գյուղացիք մաս- 10
նավոր զրույցի ժամանակ, հասարակական ժողովում, ամեն
պատեհ առթիվ:

— Մեր գեղի տեղը ժած է գալիս, տես, էս տները փլվել
են: Մարդ է մնում փլվածի տակ, ապրանք է փշանում:

Գյուղատեղն անհարմար է: Վերի սարում մի փոքր լճակ
կա, որից աղբյուրներ են սկսվում, անցնում գեղի տակով ու
քերում հողի ստորին փափուկ շերտը: Ու հանկարծ տեստեղը
նստում է, պատերը ճաքճաքում են: Կամ մի ուրիշ տեղ գե-
տինը բարձրանում է, հարևան տներն իրարից հեռացնում:

Տան պատերի վրա կարելի է տեսնել մեծ ճեղքվածքներ: 20
Գյուղի վերին թաղը քոչել է մի քիչ ներքև, շնայած որ այդ
տեղն էլ ենթակա է «ժածքի»:

Դպրոցի երկու պատն էլ ծովել են ու ճեղքվել:

— Այս տարի պարապել ենք միշտ էլ վտանգի տակ,—
ասում է ուսուցիչը:

Մի ուրիշ ցավ էլ ունեն: Գյուղի կողքին էլ ընկած է մի

ձորակ, որի բերանը հենց գյուղի գլխին է վերջանում: Գարնան հեղեղի ժամանակ սելավը երգիկից է ներս թափվում:

— Հերու գարնան մի տուն ջրով լցվել էր: Խմորի տաշտը շոգենավի պես լողում էր: Մի երեխա էլ ջրախեղդ եղավ, շկարողացանք ազատել, — պատմում է մի գյուղացի ու նորից կրկնում.

— Մի տեղ լինե՞ր, քոչեինք:

Ուրիշ ցավ էլ ունեն: Գաղթելուց հետո, մինչև այժմ, 90 տարվա ընթացքում գյուղը չի աճում:

10 Այժմ էլ այնքան շունչ կա, որքան գաղթելուց հետո: Գյուղի ծննդյան մատյանում մեծ տոկոս է կազմում մանուկների մահացումը:

Շատ հաճախ լինում են վիժումներ կամ ծնվում են մեռած: Գյուղացիք այդ վեղարում են ջրին, որ բխում է ծծմբի հանքերից և անդուրեկան համ ունի:

Թագա գյուղը վատառողջ է:

Գեղնած, կանուխ թառամած դեմքեր, վաղահաս ծերացած կանայք և մանուկներ՝ վտիտ, ռախիտից տառապող, կեղտի մեջ: Փողոցներում աղք ու ցեխաջուր, տներն անկարգ, իրար վրա կուտակված, հողաշեն խրճիթներում միշտ էլ կիսախավար, խոնավության ու բորբոսի հոտ:

Հասկանում ես, թե ինչո՞ւ են ասում.

— Մի տե՞ղ լինե՞ր, քոչեինք:

• • •

Ալեյուն Սիսիանի հետամնաց գյուղերից մեկն է: Եվ իզուր չէ, որ «Մաճկախի» խմբագրությունն ընկ. Մյասնիկյանի նվիրած տասը թերթից մի օրինակը Ալեյու գյուղին է ուղարկում:

30 Կեղտոտ է գյուղը, փողոցները ծուռ ու մուռ, տներն անհամաչափ, մեկի կտուրը փողոցին հավասար, մյուսինը՝ բարդու բարձրության:

Արևի տակ աղբակույտերն են նեխվում, ու փողոցում, շվաք անկյունում ծուլորեն մեկնվել է որոշ տարիք անցրած մասը, գյուղի ալեորը, որ էլ հանդ շի գնում, հորանջում է,

ծոր տալով՝ «Հե՛յ գիդի շահելություն» ասում ու պատմում մովրովի օրերից:

Մեկը կաշի է քերում ապակու փշրանքով, մեկելը թաց ցողոնից կթոցներ է գործում, մի ուրիշը՝ թագբեհ է քաշում, թոնթորում ինքն իրեն և դժգոհ՝ աներես ճանճերին քշում:

Միայն անցյալ տարի են դպրոց շինել, բայց շատ անհաջող, շենքի տակը խոնավ է, դիրքն անհարմար, պատուհանները նեղլիկ:

— Ձմռան օրերին մենք ցերեկով ճրագ ենք վառում կամ դռները բաց թողնում, որ լույս լինի. — գանգատվում էր ուսուցիչը: 10

Մախս են արել, հեռու տեղից քար ու գերան բերել, գեղովի աշխատանք թափել ու ղեկավար չլինելու պատճառով, այդպիսի շենք կառուցել:

Գյրոցից զատ կուտուրական ուրիշ օջախ չկա գյուղում: Խրճիթ-ընթերցարանն ուսուցչի բնակարանն է:

Պետապի մի երկու պլակատ, մի աերոպլանի նկար, որը գլխիվայր են փակցրել պատին: Մի քանի փոշեպատ գրքույկներ, «Բամբակի շոռը», «Քաղվածքներ և որոշումներ», «Աշխատանքի պաշտպանությունը քաղաքում» և էլ ուրիշ ոչինչ: Ահա Խրճիթ-ընթերցարանի գրականությունը: 20

Լրագիր կանոնավոր չեն ստանում: Մինչև հասնում է Ալեյու, սրա-նրա ձեռքին անհայտանում է կամ տվ գիտե, փոստի ո՛ր գրասենյակում ամիսներով ընկնում: Մաչխ ամսվա ընթացքում «Խ. Հ.» ստացել է միայն հինգ օրինակ:

Գրագետ քիչ կա, մատների վրա կարելի է հաշվել: Մի համախոսական գրելու դեպքում մի քանի հոգի «վասն անգրագիտության» ստորագրում են ամբողջ գյուղի տեղակ:

Երիտասարդ սերունդը մի քիչ ուշադիր է, ավելի եռանդուն, բայց անգրագիտության վերացման աշխատանքը հարկավոր եռանդով չէ տարված: 30

Գյրոցական տարիք ունեցող երեխաների մի երրորդն է հաճախում դպրոց: Մի քանի աղջիկ են սովորում, այն էլ առաջին խմբակում:

Գրաճանաչ լինելուց հետո ծնողները նրանց հանում են դպրոցից՝ մարդու տալիս:

Փոքրահասակների ամուսնութունն «անշեղ» է կատարվում:

— Գե հլա սովորութ ա, էլի, վերջապես շի լինում ժըխտեի,— ժպտալով ասում էր խորհրդի նախագահը:

Հենց այդ նույն օրը մի դեպք էր եղել: Տասներկու տարեկան մի աղջիկ են առնում: Նախագահն արգելում է և տուգանք նշանակում: Գյուղացին տուգանքը տալիս է, բայց էլի աղջիկն առնում իր տղին:

20 — Ահա քո շտրափը, էլ հո չես կարա մի խոսք ասի,— ասում է, գուռնեն փչում է «տարանինան»:

Կոոպերատիվ չկա: Կենտրոնից հեռու է, ապրանք դժվար են ստանում, կոոպերատիվի գաղափարը դեռ հանրացած չէ, նախաձեռնող էլ չի եղել:

Չարիներն են, որ խմբերով պարբերաբար գալիս են Նախիջևանից ու ապրանք բերում: Ինչ խոսք, որ քերթում են, մի տուփ լուցկին 2 գրվանքա ցորենով են տալիս: Հավաքում են յուղ, պանիր, ոչխար ու նորից վերադառնում Նախիջևան:

Չմուսն երկար գիշերներին ուսուցիչը մի խումբ աշակերտների հետ հրատարակել է պատի լրագիր:

30 Գարնան սկզբին աշակերտների մեծ մասը դպրոց չի հաճախել դաշտում աշխատելու համար: Թերթն էլ փակվել է մինչև աշուն:

Մեկը մի ոտանավոր է գրել, որ վերջանում է հետևյալ տողերով:

«Ամուր հիմքերով տարածենք լենինիզմ, հիմնովին տապալենք խավար կրոնիզմ»: № 2-ում խոշոր տառերով մի կոչ է գրված, որտեղ ասված է այսպես.

«Ընկեր պյուղացիներ, ստիպե՛ք, որ ձեր երեխաները տանը դաստիարակվեն մարքսիզմի հոգով»:

30 Ու մի քիչ հետո՝

«Մեր դպրոցի աշակերտութունը գտել է, որ մարզանքը մարդկության կյանքում ամենաառաջին տեղն է բռնում»:

Մի կիսատ պոեմ— ձոն կա, ուր հեղինակն ամպագոռոգոռ լեզվով Ալեյուի պսպղուն աստղերին հրամայում է չբանալ անհետ, որովհետև «ավելի փայլուն են մտքերը Իլլիչի»:

Շատ զգացված շարադրել է մի աշակերտ իր մտքերը Լե-
նինի մահվան տարեդարձի առթիվ:

«Համաշխարհային պրոլետարիատի հանճարեղ արժիվը,
թուով մեզանից: Խելքի, կամքի, գործի ծովը շորացավ»:

Մի ուրիշ համարում խմբագրութունը դիմում է Ասատու-
րին և ասում՝

— Ասատու՛ր, թող զուռնեղ և հետևիր կոմունիզմին...

* * *

Այս տարվա երաշտը տեղ-տեղ խանձել է արտերը: Բերքը
հերվա շափ չի լինելու: Գյուղացին մտահոգ է, և համայնքի
ժողովին Չեմբերլենի մասին էլ որ խոսեն, էլի նա իր կորեկի 10
մասին է ասելու:

Նրա հանդն ու տավարն է այն առանցքը, որի շուրջը
պտուլտ է գալիս գյուղացու դանդաղաշարժ միտքը:

Գյուղը դեռ մութ է: Ալելուն էլ մութ գյուղերից է, շնայած
որ «Նոր պայթում» լրագիր ունի ու մի տարեկան ուսումնա-
րան:

Ծթե կայուն ժողով է, գեղամիջում մեկ-մեկ հավաքվում
են, ու եկողն անպատճառ պիտի մոտենա քեզ, ձեռքդ սեղմի,
հալո հարցնի, թեկուզ առաջին անշամ է տեսնում:

Ամռան զով գիշեր է: Լուսնյակի շողքն անձև սովերներ է 20
կախել, աթարի դեզերը ձիգ ու սրածայր են երևում: Նստոտել
են գետնին գերանի ու քարի վրա:

Լսում են ու հետո բացվում են, մտքի կծիկը ետ տալիս:

Ինչքան խայտարեղետ, կարծիքները, հոգսերը զանազան:
Քաղաքի երես տեսածն ու ջահելը ավելի շուտ է հասկանում:

Մի ուրիշը, որ օրն ի բուն վար ու ցանքսի հետ է, որի
միտքը խոպան է, հերվա հարոս արտի պես, տեղով մի աղաթ,
քարացած սովորույթ, նորին դեմ է, քաղաքին կասկածով է նա-
յում:

— Մեզ ագրամոն հարկավոր չի:

Գյուղատնտես չի ուզում: Դեռ ավելին. կասկածում է, որ
«ագրամոնը» կարող է իրան օգուտ տալ:

— Թե որ ագրանովը մեզ նման գեղացի ա, ի՞նչ պիտի
ասի. նրա ասածը ես շուտուց գիտեմ, թե որ նրա իմացածը

10

սովորովի ա, իսկի զատ չի կարա տալ, ուզում ա տեղով մի կրակ էլ դառնա:

Համոզում եմ: Խամ արջառի պես լուծին չի մոտիկանում, կանգնած տեղից մի քայլ առաջանալ չի ուզում:

Այս տարի երաշտ է եղել: Ու խուլ գյուղերում գյուղացիք էլի «ճուլի» են ման ածել, մատաղ հավաքել, խաչերին ոչխար մատաղ արել: Մատաղը կերիլ են, ու մի կաթ անձրև էլ չի կաթել: Վաղուց մոռացված մի սովորույթ այս տարի երաշտի հետ հարուսթյուն է առել: Մի հեթանոս սովորույթ, ով գիտե, ո՞ր դարից մնացած:

Հավաքվում են մի խումբ կանայք, տղամարդու շորեք հագնում, եզան տեղ լծվում գուլթանին մի քանի զույգ, մի պառավ նան էլ մաճն է բռնում:

Գետն են «վարում»։ գետի ափի ավազուտը կամ աղբյուրի մոտ: Վարում են, անհծքներ կարդում, «չարը խափանում»: Ու եթե գիշերով հանկարծ մի քիչ անձրևեց, գեղը մաճկալ նանին սրբոց կարգն է դասում:

* * *

Մազրան հեռվից գեղեցիկ է երևում: Կարմիր կավից ցեխապատ խրճիթները կանաչ մարգերի վրա մի առանձին գրավչություն ունեն:

Մազրան Նախիջևանի սարերի ստորոտին է, մի բարձր բլուրի գագաթին թառած:

էլի նույն արևկող մարդիկ, գեղամիջում գրույց անող ալեվորներ:

— Հա՛, տերտեր, էն ո՞ր սուաջնորդն էր որ...

Ու տերտերը պատասխանում է, թե էն ո՞ր սուաջնորդն էր, որ մի սինի փլավը միանգամից էր ուտում:

Մազրան հնուց դպրոց ունի: Նրպու ուսուցիչ հերթով պարապում են շատ անգամ մինչև երեկո, բայց էլի շեն հասցնում:

Կոոպերատիվն ապրանք շունի: 21 թ. ժժմբոտ լուցկիների մի կիտուկ, մի քանի կտոր սապոն, թեյի պնակներ, ձիու պայտ ու մի քիչ էլ տեղական ծխախոտ:

— Լուցկիները գյուղացիք ձրի էլ շեն առնում, դե լավն

էլ չունենք,— ասում էր կոռպերատիվի գործակատարը, որը
խանութի հովում կարդում էր Շիրվանզադեի ժողովածուն:

Նախագահը շաբաթօրյակ է կազմել դպրոցի փլած պատը
շինելու: Տունը մի ֆահլա պիտի տա: Հավաքում է ցուցակի
համաձայն, աշխատանքը բաժանում ու ճամփու դնում: Հարց-
նում եմ գյուղի դրության, խորհրդի աշխատանքների մասին:

— Դե գեղ ա, էլի, կառավարում ենք,— ուսերը շարժելով
ասաց նա ու մի քիչ հետո ավելացրեց,— չէ, հիմա էնքան էլ
հակայություն չկա:

ՍԱՐԱԼՈՒ

Գյաղբելը Զանգեզուրի բարձր սարերից մեկն է: Ամռան շոգին, երբ ներքև՝ ձորում արևն անխիղճ խանձում է, ու արտերը դեղնին են տալիս. Գյաղբելի գագաթին ու լանջերին տեղ-տեղ դեռ ձյուն կա, ու կանաչ մարգերում՝ գույնղգույն ծաղիկների գորգեր:

Սարի լանջին, մի քիչ փոս ընկած տեղերում, օրաներ են, արանից սար բարձրացած բոշվորների վլանները՝ խմբերով կամ հատ-հատ, սառնորակ աղբյուրի մոտ, կանաչի վրա:

10 Սարալուի յուրդերն են:

— Գյաղբելին ղուրբան, մենք հո առանց նրան կկոտորվենք,— ասում էր մի շոբան ու պատմում, թե «դաշնակյար»-ը երբ փակել էր ճանապարհները ու էլ սար չէին բարձրանում, ամռան շոգին ժողովուրդը կոտորվում էր, ոչխարը սատկոտում: Օձն ու կարիճը մի կողմից, արանի մոծակը մյուս կողմից հանգիստ չէին տալիս:

Սարալուն— քրդեր են, մի ամբողջ համայնք, նահապետական վարք ու բարքով, «պատվավոր» խաշնարած: Մի քանի գյուղեր են՝ Քյուրդստանի հարավային մասից: Գարունը բացվելու հետ քոչի ծայրը բացվում է: Չորս օր ու գիշեր գալիս են անվերջ ու Գյաղբելին հասնում, սառնորակ աղբյուրներից մի կուշտ խմում:

Առաջին օրերը ջերմն անպակաս է լինում: Կլիմայի զգալի փոփոխումը իրենն անում է: Բայց հետո վարժվում են սարի օդին:

* * *

Մի ուրույն կյանք կա յուրդերում, դարերով ստեղծված վարք ու բարք, որ ասես մազաշափ անգամ չի փոխվել:

Ահա շորանը, թաղիքի յափունջին ուսերին, մի ահագին, գլուխը երկաթապատ մահակ ձեռքին, կանգնել է երկու մեծ քարերի միջև և ոշխարն է համարում:

Ուզում եմ մոտենալ, արգելում են: Չորանը թույլ չի տալիս, որ ուրիշ մի օքմին «աղայի» ոշխարներին մոտենա:

— Եթե դագանակով շտա, շներին կարող է «քրս» տալ, — ասում են:

Ոշխարը սուրուններով է, գալիս են և մեկ-մեկ անցնում երկու քարի արանքով, իսկ շորանը մահակի ծայրով անցնող ոշխարների մեջքին է խփում և ինչ-որ մի բան ասում:

10

— Չի համրում, նա մինչև հարյուրը դժվար թե կարողանա ուղիղ հաշվել, — ասում են ինձ:

Նշաններով է համարում: Ամեն մի ոշխար մի նշան ունի՝ մեկի դմակը կախ է, մյուսի ականջն է կտրած, երրորդի՝ գլխին սպիտակ նշան կա և այլն: Ու ամբողջ հոտը նա այդ նշաններով ստուգում է և իմանում, թե ճակատը դամղած ոշխարը չկա:

Համրանքի մի հին ձև է, գուցե ավելի հին, քան փայտի վրա խաչեր քաշելը: Եվ ինչ հիշողություն ու վարժություն է պետք, որ հինգ հարյուր ոշխարի միջից մեկը պակասելու դեպքում իմանա:

20

Չորան կա, որ տարիներով գյուղի երես չի տեսնում:

Ամառը սարերում, ձմեռը հարավի տաք հովիտներում: Ինձ մի հովիվ ցույց տվին, — աժդահա մի տղամարդ, — որ քսան տարուց ավել է տաք կերակուր շէր կերել:

Նրանք միս եփելու մի առանձին ձև ունեն: Ոշխարը մորթում են, մաշկում, միսն ու դմակը խանչալով մանրացնում, լցնում նույն մորթու մեջ և թաղում հողի տակ: Հողով ծածկիլուց հետո վրան կրակ են անում, աթար դարսում և իրենք հեռանում:

30

Երկու օրից հետո վերադառնում են և հողի տակ թաղած մորթին հանում, եփած միսն ուտում:

Անշափ հավատարիմ են: Իրենց հոտն ապահով պահելու համար ամեն ինչ կանեն:

«Աղան» էլ օգտագործում է նրանց: Ամբողջ տարին շո-

բանը ոչխարի հետ է լինում՝ անձրևի, կարկուտի տակ թրջվում, այրվում և դրա փոխարեն տարվա վերջում ստանում մի երկու ոչխար:

* * *

Վրաններն ենք վերադառնում: Իրար ձեն են տալիս, թե քաղաքից մարդ է եկել: Ու գալիս են սարի գագաթից, ձորերից, լանջերից, մոթալ փափախներով, թխադեմ, բարձրախոս և խանչալից անբաժան սարալուսեցիք:

Մեկը հողի պակասությունից է գանգատվում, մյուսը թե՛ ոչխարը սատկոտում է, երրորդը տուրքերի մասին է հարցնում:

10 Վեճեր միշտ էլ լինում են. երբեմն բանը հասնում է դա-գանակի կամ խանչալի: Եվ ախսախկալն է, որ դատ է անում, մի կողմին համոզում, երկրորդ կողմին հանդիմանում, մի կերպ հաշտեցնում:

Չեն ուզում, որ բանը հասնի դատարանին: Այդ նախ՝ ժախսի հետ է կապված, հետո՝ հնամյա աղաթը ոտնակոխ անել է նշանակում:

— Ջանրմ, հիմա լավ է, ամեն բան հեշտացել է, — ասում է հինայած մորուքով մի ծերունի, որի հանդեպ մյուսները մի խորին պատկառանք են տածում:

20 Ու սկսվում է «շուրա հուքումաթի» գովասանքը: Իհարկե, այժմ լավ է, բայց հնից մնացած շողոքորթ ձևերը ոսկրացել են: Բեկն ու պրիստավը նրանց սովորեցրել են մանվածապատ դարձվածքներ, երկմիտ խոսքեր, ակնարկներ, զգույշ և առատ գովասանք, շարքաթած անուշ խոսքերով:

Եվ այդ ալեորը պատմում է հին մի դեպք, թե ինչպես հարևանը կացնով տալիս է ու նրա գոմեշի պոչը կտրում:

Երկու տարի գործը դատարանում քաշքշում են, գնում է գալիս, մի գոմշի գին էլ կաշառք տալիս:

Վերջը դատ են անում:

30 — է, «փաղիշահի» օրենք, դատավորը ռուս, ես էլ մի անլեզու հայվան: Մի Ալիշ բեյ կար, մեր Սարալուի բեկերից: Էն էլ դիլբանջ էր (թարգման): Դատավորը խոսեց, ասեց, Ալիշ բեյի վրա «չորտ-չորտ» արեց ու վեր կացավ գնաց:

Հիմա Ալիշ բեյը ոնց է կարմրել:

Հարցնում եմ նրան, թե բանն ինչու՞մն է: Ալիշ բեյը թե՛

— Էս անտեր միլլաթը ոչ գոմեշ ունի, ոչ կացին: Ծառուներեն ո՞նց ասեմ, թե գոմեշի պողը կացնով կտրեց: Հերստոեց, գնաց... Հապա, էսպես բաներ:

Ու դանդաղ շոյում է իր հինայած փառահեղ միրուքը, իսկ մյուսները ծիծաղում են:

* * *

Մալապատիկ նստոտել ենք վրանի տակ:

Մի երիտասարդ կին, մանուկը մեջքին կապած, ներս ու դուրս է անում, օջախն է վառում: Սկեսուրը հիվանդ պառկած է վրանի մի անկյունում:

Ներս է մտնում մի պառավ, ձեռքին հողե գավաթ, կանաչավուն հեղուկով լեցված: Պառավը հեքիմն է ամբողջ յուրդերի: Մի բան լինելու դեպքում նրան են կանչում: Ամեն ցավի դեղ ունի. խոտ է քաղում, եփում, ջուրը հիվանդին խմեցնում կամ ինչ-որ մածուցիկ նյութ շինում և փետուրով քսում վերքի վրա:

Հիվանդը, որ տաքության մեջ էր, վեր ելավ, նստեց անկողնու մեջ, նայեց գավաթին ու զզվանքով ասաց.

— Անա, զահրումար է...

Բայց խմեց, խմեց մինչև վերջին կաթիլը, հետո զզվանքից գլուխը թափահարեց, ընկավ կեղտոտ բարձի վրա: Քիչ հետո՝ գունատվեց, քաթան դարձավ, աչքերը գլուխն ընկան, մարելու պես եղավ:

Իսկ հեքիմ պառավը պազել էր հիվանդի սնարի մոտ, անթարթ նայում էր հիվանդի դեմքին, ասես այնտեղ կարդում էր գաղտնի մի թալիսման, որոնց իմաստը արևելքի հեքիմներին է հայտնի:

Իսկ հարսը օջախի մոտ հաց թխելու պատրաստություն էր տեսնում: Երևի այդպես էր հաց թխում և մարդը հնում, երբ առաջին անգամ կրակին վարժվեց: Եվ ոչ մի գործիք, ոչ մի թոնիր: Մի փայտյա տաշտակի մեջ խմոր էր արել, որից գունդեր էր պոկում, ձեռքերի մեջ տափակեցնում և զցում մոխրի վրա կամ օջախի քարից փակցնում: Ծիշտ այդպես մեր գյուղերում ջրաղացպանն է բաղարջ թխում: Հետո մոխրա-

Քննախ քննիչները դարսեց իրար վրա ու դրեց վրանի մի անկ-
յունում, ուր կանաչը աճել էր փարթամորեն:

Քեյ բերին: Մաղկավոր պնակներ, բաժակները նախշուն:
Ինչքան գունեղ և վառ ճաշակ ունի արևելքն արևհեր: Շաքարը՝
սպիտակ տեղ շեր մնացել: Կինը մի քանի փալասի մեջ էր
փաթաթել և սանդուղում պահել ազիզ օրվա համար:

— Սար տեղ է, շաքար դժվար է ճարվում,— ասում են
նրանք:

10 Զարչիններն են առուտուր անում, նրանք են քոշվորին
ապրանք տալիս: Ամեն մեկը մի փոքրիկ պարկ ուսին՝ միջին
լուցկի, սուպոն և ուլունք, ասեղ ու շաքար, պտտվում են
սարեսար և օբաներում իրենց ապրանքը յուղ ու պանրով փո-
խում: Մի տուփ լուցկին մի գրվանքա պանրով են առնում:
Ամբողջ ապրանքը սպառելուց հետո, յուղ ու պանիրը ծա-
խում են մոտակա գյուղում կամ քաղաք են տանում, ծախում,
պարկը նոր ապրանքով լեցված էլի յուրդերի ճամփան բռնում:

20 Քեյ ենք խմում: Մպպացնում են, շաքարի մի փոքրիկ
կտոր բերանում լեզվով խաղացնում ու ամեն կումից հետո
տնքում: Ի՞նչ խոտրժակով են խմում և կարագի ահագին կտոր-
ներ կուլ տալիս, մոխրոտ բլիթը ծամում: Մի անգամ կուլ
տված կարագը քաղաքում մի ընտանիքի օրեկան բաժինն է:

Իզուր է որոնել գրավիչ մի կողմ յուրդերում, Գյազբելի
գլխին:

Մենակ սարն է կանաչ, օդը անարատ, թարմ կաթի պես
և աղբյուրը պաղջուր: Իսկ ինքը սարվորը՝ տգետ բնության
արհամարիքին ենթակա, հիվանդանալիս՝ զահրումար խմող,
ցեխի ու կեղտի մեջ, քաղաքի բարիքից զուրկ:

* * *

Մայուն է, որ լսվում է:

30 Անվարժ մարդուն թվում է, թե ձորը ոչխարով լեցվեց,
քարերն էլ են մայում:

Ճաշվա կիթն է: Ոչխարը սարից իջել է, գառն ու ոչխարը
խառնվել են իրար:

Սկեսուրը տնքալով՝ հարսին պատվիրում է շտապել, թե
չէ գառները կծծեն: Ու կինը շահել, մանուկը շալակին, շար-

ժումներով վարժ, կթում է, ամանը դատարկում, նորից կթում: Քարմ կաթը փրփուր է տալիս, յուղի կաթիլները ոսկու ավազի պես լողում են կաթի երեսին: Կինը կաթը քամում է մի կեղև տոտ փալասի կտորով, մրից սևացած կաթսայի մեջ:

Ամեն ինչ պապենական ձևով է դեռ, և այդքան աշխատանքն ու առատ բարիքը կորչում է իզուր: Մի քիչ յուղ են ստանալու, մնացածը թան է, շներն են լակելու:

— Տեսնո՞ւմ ես էն շոբանին,— ասում է կողքիս նստած մեկը, մատը դեպի առաջ մեկնելով:

— Մարդան-բեյն է, երկու հազար ոչխարատեր:

Նայում եմ ու շեմ հավատում, թե այդ գզգզված կարպետի մեջ կոլոված կարճ ու բրդոտ շոբանը, աթարի դեզի պես սրածայր մի փափախ գլխին, որ սուլոցով ոչխարներին մի կողմ է բշտում, թե նա երկու հազար ոչխար ունի:

Մարդան-բեյը մեզ տեսնելուն պես մոտեցավ «սելամ» տվավ ու կռթնեց մահակին: Կատարյալ շոբան, որի գլուխն ով գիտե քանի տարի է տաք ջուր չի տեսել և ոչ էլ սապոն, որ իր սուր դանակով կ' ոչխար է մաշկում, կ' երես է ածիլում, որ լուցկի շունի, այլ կայծաբար ու մի կեռ պողպատ էլ կողքից կախ:

Ուրիշ ապրանք էլ ունի՝ ձի, կով, ուղտ: Վեց տղա ունի, վեցն էլ ամուսնացած: Իհարկե կարող է հովիվ վարձել, բայց իր ապրանքն ինքն է ուզում պահել:

Կռթնել է մահակին, ոտքերը շոբել, մկրատի բաց բերանի պես, ու մի ձեռքով էլ հուկի փափուկ մասերն է բորում այնպես, ինչպես եզն է քսում վիզը մի ծառի կամ քարի և բորում ախորժով:

Փորձում եմ խոսել նրա հետ, բայց նրա ուշքը ոչխարի կողմն է. տեսավ, որ կիթը վերջացել է, իսկույն շտապեց դեպի այն կողմը:

Այնքան շատ կարկատան կար Մարդան-բեյի շալե շալվարի վրա...

• • •

Իրիկուն է դառնում:

Արևի շողերը ամպի ճերմակ քուլաներն են ներկում՝ մեկ կարմրագույն, մեկ նարնջագույն:

10

20

30

361

Յուրտ է: Առանց յափունջու վրանի տակ նստել չի լինում: Արանից մեկն եկել է, պատմում է գյուղից: Հունձն արդեն սկսվել է այնտեղ, շոգ է անտանելի: Բերքի մասին են հարցնում:

Եկվորը պատասխանում է ընդհանուր առմամբ, բայց ամեն մեկն աշխատում է իր արտից տեղեկություն իմանալ: Եվ հարցեր է, որ տալիս են:

— Դե, էգուց կանուխ պիտի գնանք:

10 Հինայած մորուքով ծերունին է, որ Ալիշ-բեյի դիւբանջ լինելուց էր պատմել:

Եվ որոշում են լուսաբացին ճանապարհ ընկնել: Տղամարդիկ պիտի գնան, հունձն անեն և էլի ետ գան:

Այնտեղ գյուղում մարդ չի մնացել:

Շոգին դիմանալ չի լինում: Դռները շատ անգամ թողնում են բաց և իրենք սար քոշում: Գյուղում թողնում են մի քանի պահապան, որոնք արագիլի նձան, կտուրների վրա, իրենց համար բարձր տեղ են շինում՝ մոծակից ու կարիճից անվտանգ լինելու:

20 Վաղը պիտի գնան, հնձեն արտերը, խուրձերը թողնեն արտում ու վերադառնան: Կալը ուշ են կասում, աշունքվա մոտ, սարից իջնելու ժամանակ:

Իմ տանտերն էլ է պատրաստություն տեսնում: Սրաքարն ու մանգաղն է հազրում, տրեխի ծակ տեղերն է կարկատում: Իսկ հիվանդ սկեսուրը հարսին պատվիրում է ճամփի համար պաշար շինել:

Մութ է արդեն:

Օբաների առաջ խարույկներ են վառվել: Մի տեղ իրիկվա ընթրիք են եփում, մի ուրիշ տեղ սարից մի քոշվոր է թրջած շորերը շորացնում:

30 Խարույկները թեժանում են, երբ մի կապ չոր ցախ են գցում. բոցը բարձրանում է, կայծեր են թռչում վեր, պսպղում մութի մեջ ու հանգում:

Խարույկի շուրջը նստոտել են, խոսում են բարձրաձայն, մեկը զիլ ձայնով նախիրից ետ մնացած կովին է ետ կանչում: Եվ ձորերը թնդում են նրա ձայնից:

Աղմուկը հանդարտվում է, խարույկների կրակը թուլանում, մերթ էլի բռնկվում: Շներն են հաչում. կլանչում է մեկն այս ձորից, մյուսը ոռնում է զիլ, և երկյուղ է ազդում, անմեկնեի մի զարզանդ: Կոչվում եմ յափունջուս մեջ ու թիկն տալիս:

Քիչ անց, սարի ետևից, արծաթ սինու պես, կոլոր լուսնյակի պուունկն է երևում, ասես մի անտես ձեռք սարի ետևից բարձրացնում է նրան:

Խաղաղ է յուրդերում: Շներն էլ շեն հաչում: Վրանի առաջ կովերը մուշ-մուշ որոճում են: Զորակից լսվում է բայաթու մի մեղմ ձայն, որ թրթռալով հանգում է օդի խաղաղ ոլորտում:

ԿՅՈՒՒԱ

(Գյուղի ապավորություններ)

Քերժերի մեջ պահված մի գյուղ է Կյորան՝ սրածայր ժայռերով, քարանձավներով շրջապատված, գետնափոր տներով, ուր արևի շողերի մի խուրձ է թափանցում փոքրիկ հերդիկից և հազիվ է լուսավորում քարայրի ներսը:

Մեկներդ դողում են ու ցավում, մինչև նեղ կածանով Կյորա կիջնես:

10 — Ինչպես են ապրում, ինչո՞ւ այս խորխորատից դուրս չեն եկել,— պատրաստվում ես հարցնելու հանդիպած գյուղացուն:

Իրենք էլ են բեզարել:

— Ոչ մի շինարար աշխատանք չենք ուզում կատարել,— ասում են գյուղացիք:

— Ղզլբաշի ժամանակ Կյորան «պենդոտ» (բերդ) է եղել: Մեր պապերը դրա համար են հավաքվել էստեղ,— ասում էր մի ալևոր:

— Հիմա փուշ տեղ է, էստեղ ապրել չի լինի:

20 «Պենդոտի» ավերակները մինչև այժմ էլ կան: Չորի երկու ասփին բարձր ժայռերի մեջ թաքստոցներ և անցքեր կան, որտեղից կրակել են Ղզլբաշի ժամանակ: Այդ ամրոցում գյուղացիք հիմա խոտ են դարսում:

Կյորան աղքատ է, անչափ աղքատ: Յոթանասուն ծովան ունի մի ձի և մի շորի: Ամենից ունևոր գյուղացին ունի 20 ոչխար, 2 կով, մի կամ երկու լծկան և մի էշ: 25 տուն լծկան ու կթան չունեն:

— Հավ էլ շունեն իսկի, նրանց շեմքում կատու էլ չի մլավում:

Աղքատներն ամառը հասկաքաղ են անում, մի փոքր հացով սրա-նրա արտը քաղհանում, շալակով փայտ են բերում, ծախում կամ թե հարևան գյուղիցում մշակ վարձվում: 20 տոն գաղթել է Բաքու և աշխատում է նավթահորերում: Այնտեղ նրանք ավելի լավ են ապրում, քան գյուղում և գյուղ վերադառնալու մտադրություն էլ չունեն:

Գարոց շունեն: Եկող տարվա համար որոշել են մի սենյակ պատրաստել: Նստարանների վարձը Բաքվի միությունն է 10 խոստացել տալ:

— Վարժապետ շունենք, մեր գյուղը դժվար թե գան,— ասում են գյուղացիք:

Իրենց գյուղից մեկին ուղարկել են Բաքու, որպեսզի կուրսերում ավարտի, ուսուցչության պատրաստվի: Հիմա էլ ցենզի խնդիր կա, խեղճը շվարել է, հույս չունի, թե կկարողանա քննություն տալ:

— Աղքատ ենք, համա գիտակից,— մի առանձին հպարտությամբ ասում է ընկեր Արամայիսը՝ բջի քարտուղարը:

Գյուղում կա 60 պիտներ, որոնք լավ կազմակերպված են, 20 կանանց միությունը 45 անդամ ունի: Ձմեռվա ընթացքում կանոնավոր պարապել են:

— Նոր կենցաղն սկսել է տիրապետել,— ասում է ընկեր Արամայիսը և պատմում է, թե ինչպես է մեռնում գյուղում չքավոր մի երիտասարդ: Քահանան պատրաստվում է թաղելու, իսկ իրենք մինչև լուսաբաց նստում են ու սովորում հեղափոխական երգեր, դրոշակ պատրաստում և առավոտյան մեծ շուքով թաղում:

Շողը պակաս է, տեղը քարոտ:

Շողային խնդիրը խճճված է:

Այս տարի ցանքսերը երաշտից ու ձմռան ցրտերից վնասվել են. մուկն էլ մի կողմից է վնասել:

Շույս են դրել այգիների վրա, գուցե մի բան ստացվի: Այգիներում էլ հիվանդություններ են տարածվել, իսկ գյուղացիք՝ բժշկության ձևերին անծանոթ են:

30

363

— էս Կյորում ապրելով մի լայն օրի հասնելու շինք,—
ասում է մի գյուղացի, որ եկել էր մեզնից նոր լուր իմանալու:

Գյուղը ջուր էլ չունի:

Գարերի ընթացքում որքա՛ն աշխատել են ջրի փոքրիկ առվակները քերծից քերծ տանելու: Մի տեղ ժայռն են ծակել մի քանի սածնե երկարությամբ, մի այլ տեղ հսկա թմբեր շինել կամ նավեր անցկացրել, որոնք լարախաղի պարանի պես ձգվում են մի քերծի գլխից դեպի մյուսը: Եվ ինչպիսի վտանգավոր ձևով են մաքրում այդ նավերը կամ ժայռեր պայթեցնում նոր առու անցկացնելու: Պատահել է, որ նավի գլխից մարդիկ ձորի անդունդն են ընկել: Սարի գլխին մի տափարակ տեղ կա, գյուղի համար շատ հարմար, և ահա որոշել են ամբողջ գյուղով ձորից դուրս գալ և այդ տափարակում նոր գյուղ հիմնել, սակայն որոշումն անկատար է մնացել, միջոց չունեն:

— էս հեռու ձորին ո՞վ է օգնում,— ասում են,— օգնություն որ լինի, մենք էստեղ շինք ապրի:

Վտանգավոր էլ է: Շատ անգամ ժայռերը փլվում են, մարդու անասուն տակովն անում: Քանի՞ գլուխ անասուն է գլորվել նեղ կածանից դեպի անդունդը: Հենց հիմա էլ գյուղի վերևում մի ահռելի ժայռ կա, որը ճաքել է և մոտ է փլելու: Եթե դինամիտ լինի, վտանգը կարելի է կանխել:

Մի քանի տարի շարունակ գյուղը դաշտում ջրի ակունք է փնտրել: Գաշտում էլ ջուր չկա: Գութանավորին էշով են ջուր տանում:

Ջրորսների այդ բազմությունը շատ տեղեր է փորել, ջուր գտնելու հույսով: Եվ գյուղում որքան են ուրախացել, երբ մի գեղեցիկ օր, հողի երեսին խոնավ շերտը վարելուց հետո, կանոնավոր առու է գոյացել: Փրկության ուղին գտել են, ելք են ստեղծել, բայց միջոց չունեն նոր գյուղ հիմնելու:

Ջրորսները հիմա էլ շարունակում են ջրի ակունք փնտրել լերկ ժայռերի մոտ, ամռան կիզիչ արևի տակ:

* * *

Աղբյուրի մոտ հանգստանում ենք: Կին ու աղջիկ ջրի են գալիս: Մեզ տեսնելիս մի քիչ շփոթվում են, ոմանք երեսը

կիսով շափ ծածկում: Լսում եմ ինչպես միմյանց հարցնում են, թե ովքեր են սրանք:

— Ամոթ չի նի հարցնել, ո՞րտեղացի եք,— դառնում է մեզ մի տարիքավոր կին, կուժը աղբրի տակ դնելով:

Ես պատասխանում եմ, ու մի քիչ անց՝ էլի հարցնում է, այս անգամ՝ թե ինչու ենք եկել:

— Նանի՛, եկել ենք բաղերին ճար խփենք,— ասում է մի կոմսոմոլ:

Նանին չի հավատում, թե այգիները դեղ սրակելով կարելի է բուժել:

Նայում է մեզ, մեր գործիքներին ու ծոր տալով ասում.

— Է՛, դրանով բան չի լինի: Ցավը տվովի է, ինչ կարող եք անել:

«Տվովի» ասելիս, գլուխը դեպի երկինք է բարձրացնում, ինչպես հավը ջուր խմելիս:

Նանին գնաց ու քիչ հետո մի փոքրիկ տղայի թևից բռնած հետ եկավ:

— Կար՞ք սրան մի ճար արեք, մինուճարս է,— ասեց ու փոքրիկի շապիկը վեր քաշեց: Երեխայի պորտի տակ մի մեծ ուռուցք կար, որից նա շատ էր նեղվում:

Ասում եմ, որ բժիշկի մոտ տանի:

— Բա դուք մի ճար շունե՞ք,— նորից է հարցնում ու զղջալով հետ դառնում:

Աղբյուրին է մոտենում մի պատանի, ծաղկատար դեմքով, ծաղկից կուրացած աչքերով: Փայտով գետինը շոշափելով՝ նա հասնում է աղբյուրին, մի կուշտ խմում է ու էլի հեռանում:

— Կույր է, գիշերն էլ մենակ հանդ է գնում, եզները պահում: Տան միակ աշխատավորն է,— ասում է զգիրը, որ երկու ժամ գյուղում ման գալուց հետո հազիվ կարողացել է մի լղար էջ գտնել, դեղորայքն ու գործիքներն այգիները տանելու համար:

Ճանապարհ ենք ընկնում: Այգիները շորս վերստ հեռու են: Պետք է բարձրանալ սարն ի վեր, իջնել, նորից վեր ելնել ու այսպես մի քանի անգամ:

Որտում է, անձրև է գալու, շտապում ենք: Գզիրը բզում է էշին և մերթ ընդ մերթ հետևից հրում:

10

20

30

367

— Մի տուն է պահում է՛, ութ շունչ էս քուռակին են նա-
յում, — ասում է և սրածայր մահակով կրկին բզում:

Անձրևը կաթկաթում է և հանկարծ փոխվում կարկտի:

Տասը բույս շանցած՝ գետինն սպիտակին է տալիս: Կար-
կրտին հաջորդում է անձրևը, վարար անձրև, ասես դուլլերով
են ջուր թափում:

Գզիրը ավելի է բզում, նզովում, «վաշ» անում, որ կար-
կուտն արտերին վնասեց, որ հեղեղ է լինելու և նորից ու նորից
հրում, բզում իշին:

10 Այգիները դեռ հեռու են, որոշում ենք վերադառնալ: Մեր
եկած ճանապարհն անճանաչելի էր դառել: Ամեն քայլի վրա
մանր վտակներ, պղտոր անձրևաջուր ու սրընթաց գետակներ,
որ շառաչով, ահագին քարեր տանելով թավալզուր իջնում էին
սարի լանջով:

Ցեխ է, սայթաքում ենք: Շորերս սպունգի պես անձրև է
ծծել:

Արագացնում ենք մեր քայլերը:

Վայրէջքն ավելի հեշտ է: Աղբյուրի մոտ, ձորի միջով, մի
ահագին գետ է անցնում:

20 Մի կերպ քարերի վրայով ցատկում ենք վազում ու մշտ-
նում առաջին պատահած գոմը:

Գզիրը տնից տուն է ընկնում՝ փոխնոր: շորեր հավաքե-
լու: Մեկից մի բլուզ, մյուսից՝ տրեխ, երրորդից շապիկ է բե-
րում մեզ:

— Մի տան լավ շորեր կար, շտվին, — ասում է գզիրը: —
Բաքվից են բերել, ազիզ են պահում:

Անձրևը շի դադարում:

Հավաքվում ենք «կանցելարը», որ ներքնահարկ մի սեն-
յակ է:

30 Հեղեղը փոքրիկ լճակներ է գոյացրել կանցելարի հողե հա-
տակի վրա:

Գզիրը ցախ է բերում, հենց կանցելարում էլ կրակ անում:
Տաքանում ենք: Գյուղացիք մեկ-մեկ հավաքվում են:

Բոլորն էլ բոբիկ, թրջված, ոմանք մի հնամաշ կարպետ
ուսերին: Խոնվում են կրակի շուրջը:

Խոսքը հեղեղի մասին է: Մի տեղ հեղեղը արտն է սրբել,

տարել, մի ուրիշ տեղ այգում կարասներն են շարդովել, ոչխար է ընկել հեղեղի բերանը, շաղացի առուն է քանդովել:

— Դրանց էջը ջրի մեջ տաշեղի նման վեր ու վար էր անում,— հայտնում է մեկը:

Մի քանի օր առաջ արտերը երաշտից խանձվում էին, հիմա էլ հեղեղն է վնասել:

— Էդ լավ եղավ, որ թրջվեցիք,— ասում է մեզ մի ալեվոր,— գյուղացու հալն իմացե՛ք:

Խորհրդի նախագահը գանգատվում է, որ մկների դեմ պայքարն ուղացնում են: Ինքն այդ մասին վաղուց է հայտնել 10 շրջգործկոմիին:

Հետո պարզվեց, որ մկների մասին ուղարկված դիմումը շրջգործկոմի գրասենյակից հողբաժին է հասել... տաս օրվա ընթացքում, այնինչ երկուսի միջև միայն մի արշինանոց պատ կա, դռներն էլ իրար կից են:

* * *

Կանցելարում կրակը թեժացնում ենք:

Բաբվից նոր եկած մի բանվոր, որ հանդում թրջվել ու ցեխոտվել է, մոտենում է կրակին:

— Է՛հ, տասը տարի քաղաքում շարշարվես, մի քանի օր գյուղում շապրես: Էս ինչ հալ է՛... 20

Սկսում է Բաբուն գովել:

— Ութ ժամ աշխատի, եկ տանը քնի՛ր, ինչքան ուզես:

Կուշ ենք եկել կրակի շուրջը: Բոցը կարմիր լեզվակներով լիզում է ցախերն ու լուսավորում ներքնահարկ կանցելարը: Անձրևը շի դադարում:

Դուրսը մութ է արդեն: Քամուց խշշում են դարավոր ընկուզենիները, իսկ ձորերում հեղեղն է վշշում, ահագին քարեր իր երախի մեջ առած: Մթի հետ զարգանդ է իջնում գյուղի վրա:

Մոթալ փափախի տակ, շիբուխին զոռ տալով, մի միտք 30 են անում գյուղացիք.

— Ինչքա՞ն վնաս տվեց հեղեղն այսօր...

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (Գ)

Գյուղը դեռ հնի փեշը բաց չի թողել, էլի ծածուկ, թե ափաշկարա գյուղի զորքան աշխատում է զավթել սրա կամ նրա այգին, արտը, կալն ու մարագը: Աղբերամեջ հողը բաժինք անելիս մեծ եղբայրը շատ հաճախ էլի շաղ բաժին է ստանում, երբեմնի «մեծահարկը», որ մեր գյուղերում դեռ մոռացված չէ:

10 Հողային հանձնաժողովները շատ գործեր են քննում, մեկը մյուսից բնորոշ գյուղի ներկա իրադարձի, ներքին աշխարհի տեսակետից:

Ահա մեկը, «մեծ տեգրը», որ բռնություն է գործ դրել և ուժով գրավել իր եղբոր այրի կնոջ կալ ու մարագը: Տիրապետել է, փլած պատը նորոգել, մի քանի վկաներ հավաքել, հաստատելու, որ այդ կալն ու մարագը դեռ «Օհան քյոխվի ժամանակից իրեն հայրենիքն էր»:

Ահա և ամաշկոտ տեգրակինը, որ հանձնաժողովի առաջ էլ քաշվելով է խոսում, շուտ-շուտ շալի տուտը քաշացնում, ձեռքերով, մատներով զանազան նշանների անում և հասկացնում, որ մեծ տեգրը խաբել է նրան սովի տարին:

20 Ահա մի ուրիշ եղբայր, որ իրեն բաժին ընկած հողամասում նոր տան պատն այնպես է շարել, որ արևի լույսից զրկել է հին տանն ապրող մորն ու եղբորը:

— Ընկե՛ր դատավոր, նամության մեջ կատորվում ենք, ասի՛ պատը մի քիչ դես քաշի,— լացակումած խնդրում է:

— Հնար չկա, լինիլ չի,— ասում է մյուս եղբայրը և ասածի վրա կանգնում:

Ահա մի նիհարավուն պատանի, շոբան, երբեմնի գերդաստանի միակ ժառանգը, մի քիչ խելապակաս, խոսելիս՝ փսիլնքը շաղ է տալիս: Խաբել են, հայրական հողը մի քանի փութ կորեկով առել: Կորեկը կերել է, հիմա «ղաբալան» (պայմանագիրը) էլ է հետ տալիս, կերած կորեկն էլ: Ահա «ղաբալան»:

«Մենք Խնձորեսկ գյուղացի Փարսադան Թոխսանց և այրի կին Ագյուլ Թոխսանց որպես որբի խնամատար հանգուցյալ Սհակ Թոխսանցի ծախեցինք նույն որբին պատկանյալ Կուրաթին Գետ անվանյալ տեղի ջրովի հողից մի մասը քեզ համագյուղացի Արսեն Զանունցիդ վրա, որի սահմանները հետևյալն են»:

10

Թվում է սահմանները, մանրամասն. «Շաբունցի հողամասի պատի տակին մեկ կապույտ քառից ուղիղ կտրի մինչև պատի տակի մեծ բուսովի լափոի ծառն» և այլն, և այլն: Սահմանները թվելուց հետո ավելացնում է.

«Այս վերոհիշյալ հողամասն իր հիշած սահմաններով ծախեցինք քեզ Արսեն Զանունցիդ վրա գումարով հարյուր հինգ մանեթ ոսկի փողով, որի գումարը ստացինք լիովին այս ծախած հողամասը որպես քո սեփականություն իրավունք ունիս տիրապետելու որդաց որդի ազգե ազգ եթե լինի և հակառակ խոսողներ ազգականներից և այլ մարդկանցից ընդդեմ այն զարալուս մենք խնամատարներս լինենք պատասխանատու օրենքով սույն ծախած հողամասի ճանապարհը լինի որբերի հողամասով»:

20

Հարյուր հինգ մանեթ ոսկի չի ստացել, այլ 3 փութ ցորեն, մի փ. բրինձ և տասնվեց փութ կորեկ: Գրված է այդչափ, որ «եթե լինի և հակառակ խոսողներ ազգականներից և այլ մարդկանցից ընդդեմ այն զարալուս» — չկարենան ասել, թե աժան է ծախված:

Ղաբալի տակ ստորագրել են տասը վկա, իսկ գյուղխորհուրդն ավելացրել է.

30

«Ուղիղ իմանալով սույն զարալաս հաստատեցինք Խնձորեսկի Գործկոմի նախագահության կազմ»:

Հողհանձնաժողովը, սակայն, «ուղիղ չիմացավ սույն զարալան» և լուծարքի ենթարկեց:

871

Մի ուրիշ կալվածագիր, որ ասորական՝ երկրներ ավերող, քաղաքներ գրավող և քարե քանդակների վրա արքայական սնապարծությամբ այդ արշավանքների մասին պատմող թագավորի ոճն ունի, իր նզովքով հանդերձ: Այս անգամ «ղաքալա» չի, այլ կալվածագիր, գրված համարյա թե «երկաթագիր», հինավուրց «պատիվներով», սղումներով: Սկսվում է այսպես:

10 «Ես, ներքո ստորագրող որ եմ Զանգեզուր գավառի Ալի-ղուլիշեն գյուղի բնակչուհի Նախշուն Պատրապետյանս այսու վաճառել եմ իմ Քյումբաթի ձոր անվանյալ տեղում գտնվող թուփի այգիս ընդքեզ համագյուղացի մեր Գալուստ Ավագիմյանիդ որի դիմաց ըստացի քեզնից ութնասուն փութ ցորեն այդ գումարը ըստացի այսօրվանից լիովին և հետ այսու իրավունք ունիս տիրապետելու վերև հիշված այգուն որդոց որդի: Այգու սահմանները սոքա են»:

Գարձյալ մանրամասն թվում է սահմանները՝ «հարավակողմից մինչև մեծ քարը, էնտեղից կտրի անցնի»,— իսկ և իսկ երկու տերության սահմանագիծ: Հետո վերջում ասում է.

20 «Այսուհետ դու հանդիսանում ես այդ բաղին տեր ու տիրական, եթե այդ բաղի վերաբերյալ որևիցե մեկս ազգական բարեկամներից մեկն ու մեկը խոսելու լինի խոսքը լինի անընդունակ և պատասխանատու լինի օրենքի առաջ ոչ ոքի իրավունք չի տրվում ձեռնամուխ լինելու վերև հիշված այգուն բացի քեզանից և քո որդկերանցից գուցե թե ես Նախշունս փոշմանելի լինեմ և հետ դարձնեմ բաղը պարտավորվում եմ մեկ հարյուր ուրբի ոսկի տալ իսկ եթե ես Գալուստս փոշմանեցի և ուզեցա վերադարձնել զրկվում եմ իմ տված ութնասուն փութ ցորենից կալվածագիրը գրված է Նախշուն Պատրապետյանի համոզմունքով»:

30 Կալվածագիրը Նախշունի «համոզմունքով» գրելուց հետո «մեր Գալուստը դառնում է տեր ու տիրական», սակայն «ազգական բարեկամներից մեկը խոսում է օրենքի առաջ», և նրա խոսքը լինում է «ընդունակ», «մեր Գալուստը» զրկվում է «որդոց որդի ազգե ազգ տեր և տիրական լինելուց»: Գործի քննությունը պարզում է, որ «մեր Գալուստը» ութնասուն

փութ ցորեն չի տվել, իսկ գյուղխորհուրդը հաստատում է, որ «Գալուստը գյուղիս գործկոմից ծածուկ առել ա նախշունի բաղը»:

Քննությունը շարունակվում է, դատ է կատարվում, որին որպես արձագանք գյուղխորհուրդը վերջին անգամ գրում է, թե «Նախշունը իր այգին վերադարձրել ա Գալուստից և էլ չի ծախել իսկ ինքը գնացել ա Բաքու»:

Եվ «մեր Գալուստը» շկարողացավ «որդոց որդի ազգե ազգ» «տեր ու տիրականի» պես «տիրապետելու» նախշունի այգուն:

10

• • •

Բայց գյուղում ափաշկարա ուրիշ ավելի կարևոր երևույթներ են տեղի ունենում:

Քար ու քերժի տակ դարեր շարունակ կուշ գալուց, կածաններով, ձորերի բաշով վերուվար անելուց, գետնափոր անձավներում ապրելուց գյուղը բեզարել է, էլ չի ուզում: Գյուղում մեծից մինչև փոքրը մի միտք են անում. «նոր գյուղատեղը ձևել ինչինների ձեռքով և ինչինները պիտի ճանապարհն այնպես վերցնի արաբա բանելու համար»:

Ահա ինչ են ուզում այն գյուղերը, որոնք ձորերի մեջ են, ժայռերի կատարին, մթին ծմակների և տև, հարմար ճանապարհներից զուրկ, եզան արաբի կարոտ:

20

Տասնյակ գյուղեր ունենք այդպես, որոնք համախոսական թերթեր են կազմում, ժողովներ անում, նոր գյուղատեղը որոշում: Մի քիչ վարկ և տեղահան կլինի հին գյուղը՝ ձորի գլխին կթողնի մամուտած քարերով եկեղեցին խանգարված և սարահարթում կփռվի շեն ու արձակ, ուղիղ փողոցներով, կոկիկ տներով:

Ահա ինչ են գրում համախոսական թերթում.

«Հավաքվելով հասարակության ժողովարանը նախագահությամբ գյուղի Գործկոմի առ այն թե առաջին հարցն է գյուղը ամբողջությամբ տեղափոխել դաշտը վերանորոգել նոր գյուղ բնակություն հաստատելու թե հասարակությանս և թե օրենքին հայտնի է գյուղը միանգամից անվայել անհարմար տեղ է նեղվածք դժվարին ամեն կերպ անհարմար որպես գյուղ միանգամից անունթունակ է հասարակության»:

30

373

Դրա համար էլ ստորագրում են «սեփական ստորագրու-
թյամբ» և հետո նորից ավելացնում, որ հին գյուղը «միանգա-
մից անվայել անհարմար տեղ է նեղվածք դժվարին և միան-
գամից անընդունակ հասարակության»:

Իսկ «ընդունակ» տեղ նրանք կստանան:

ԽՈՏ

Երբ «Կատարի խաչի» բարձունքից նայում եք ներքև, խոր ձորին, որի միջով արծաթե գոտու պես ձգված հոսում է Որոտան գետը և պսպղին տալիս այգիների մութ կանաչի մեջ, երբ նայում եք ձորին ու գետին, որի երկու ափերը վայրի ընկուզենիներ են բուսած՝ հաստարմատ, դարավոր, իսկ քիչ վերև, ժայռի ծերպերին, գյուղերն են թառել. ամեն մեկը ցինի մի բուն,— շեք ուզում հռանալ «Կատարի խաչից», նեղլիկ կածանով իջնել ներքև:

— Զու, շու,— լսվում է ընդհատ մի ձայն քերծերի ետե- 10 վից:

էշը բարձրանում է զառիվերով, ականջները լոշ շարժում, և նստողի երկար ոտքերն էլ մորթած հավի վզի պես կախվել են մինչև գետին:

Հարցնում եմ Որոտանի մասին:

— Մի շահու էլ օգուտ չի տալիս,— ասում է և էշը պահում.— եղած շեղած մեզ համար մի հաշիվ ա... հալա տարին մի քանի գլուխ ապրանք ա ունի գցում, տանում...

Իսկ եթե բետոնի հունի մեջ դնես, բանդին երկաթե շլուզներ կախես, շառաչելով թսփի, ջուր տա լանջերի ցամաք մա- 20 ցառուտին, քանի միլիոն շահու օգուտ կտա...

Ապերը կարծես միտքս հասկանում է և ասում, որ այդ էլ կլինի:

— Հաստատ մնա էս կառավարությունը: Ոսկին դիր գըլխիդ ման եկ. մեկէլ օրը իմ մի աշառս կորել էր, գնացի Բարկուշատի ձորում գտա: Բա ես կարող էի առաջ Բարկուշատ գնա՞լ:

Նայում եմ ճամփի գլխին ցցված ժայռերին, որոնք մի թեթև ցնցումի են պատրաստ, որ պոկվեն, գլորվեն ներքև:

— Վախիլ մի՛, բան չի լինի,— ասում է էշավորը, ոտներով էշի փորին խփում:

— Ամեն տարի չի վեր ընկնում, էնպես, պատահում ա... Հերու մի քերծ պոկվեց, լավ էր եկավ մի մարագի դեմ առավ, թե չէ գյուղի կեսը կշարդեր, ոնց որ հնձանի խավող...

10 Ապերն իր ճանապարհն է շարունակում, ես՝ իմ: Իջնում եմ գառիվարով, աչքս վեր ցցված ժայռերին, որոնք կախվել են ճանապարհի վրա, կոացել:

Ամեն տարի հեղեղը փորում է հիմքը, մաշում, և ժայռերն ավելի են թեքվում:

Մի քիչ ներքև արդեն ընկուզենիներ են բուսած քարերի, ժայռերի արանքում:

Մագիլների պես խրել են արմատները փխրուն ավազահողի մեջ, քարերը տեղահան արել:

Ագռավներն են, որ ընկույզը կտցահարելիս կորցրել են, ընկույզը քարի տակ է ընկել, խոնավություն ծծել ու ծլել:

20 Մի մարդ, փեշը լիքը քար, ժայռի գլխից քար է շարտում ընկուզենուն, իսկ ագռավները կոնչոցով պտույտ են անում հարևան ծառերի շուրջը:

— Շատ խելոք ա ագռավը,— ասում է նա:— Ընկուզը կտուցին թռնում է բարձր, վերից գցում քարի վրա, շարդում և ապա թռնում՝ ուտելու:

Քիչ հետո արդեն գյուղն է, խոտը, թաղված այգիների մեջ, տները գորշ խորանարդներ անկարգ, խառնիխուռն, փողոցները ծուռ ու նեղլիկ, փողոցներում աղբ, ընկույզի կճեպներ, խաղողի շոփեր:

* * *

30 — Ընկեր, կարելի՞ ա նվիրել ձեր անունները.— դիմում է մի երիտասարդ, կարմրաթուշ, կարճլիկ: Բատրակ է, հարցմունք ունի: Իր և տիրոջ մեջ անհամաձայնություն կա: Աշունքացել է: Շուտով լիկկայան է բացվելու, իսկ իրեն առաջարկում են խոզերը տանել անտառի ձմեռանոցում պահել:

— Նա էնպես մի դիփ ա, մին անհայտ ա, որ եթե ձեռքե-

ըրս էլ մոմ անեմ, նրա առաջ վառեմ, էլի՛ որ սրտում պիտի պահի:

Քիչ հետո էլ խոզատերն է գալիս, խառնվում է մեր գրույցին և թոնթորում, թե նա ինչպես է խոզերը թողել, գանգատի եկել:

— Կոնգարեսը որ որոշում ա դրել, ուրեմն որ բատրակը լավ աշխատի, ես էլ նրան լավ հաց տամ, լավ փող տամ:

Լսել է «Կոնգարեսի» մասին, տեղյակ է, իր շահին աչքաբաց: Խոսելիս մեջքին է ընկնում, փորը ցցում, նայում կողքին կանգնած հարևաններին, ասածին հավանություն ստանալու հուսով: Եվ խոսելիս թափահարում է իրեն, զրնգում է արծաթ գոտին: 10

— Կառավարության հարկ տալի՛ս եմ,— հարցնում է և ինքն էլ խկույն պատասխանում,— տալիս եմ: Դե ինձ հրաման տուր հարստանամ, ինչքան ուզում ես տուրք տամ...

Բայց վերջում համաձայնվում է բատրակին ձմեռը լիկկայան ուղարկել: Հեռանալուց հետո գգիրն է կամացուկ ասում նրա մասին.

— էս տարի տուրքը պակաս ա, մեծ-մեծ խոսում ա... Մի տեսնեիր հերու ոնց էր խեղճացել, համ էլ կատարը կեծ էր... 20

— Դե հիմիկուց դեն էլ էդ ա, անտեր գինին խմում են, կատարնին կեծացնում, դատաստաննին քաղցրացնում,— ավելացնում է մի ուրիշը, շաշված մուրոված աչքերով:

Նրա «դատաստանն» էլ դառը չէր:

Գրասենյակը՝ խոնավ, մութ, հողի հատակ, մի քանի գերաններ պատերի տակ շարած: Սեղանի վրա ընկած և խունացած թերթերով չափաբերական մատյանը հին, կազմը մաշած, տեղ-տեղ բորբոսնած:

Խոտում, ուր սևենի խաղողը փաթաթվում է բարձր ծառերին, ուր հնձաններում սևենի խաղողից քաղցրահամ գինին են ստանում և խմում փթերով, հողի մեծ գավաթներով, ուր «առաջներում մեծամեծ շինովնիկները գալիս էին, լակում»: Խոտում՝ առաջներում մի տեր Անդրիաս է եղել, որ մեռել է, հիշողություն թողել չափաբերական մատյանը կիսամաշ, թունդ հարբողի համբավ և խարխուլ եկեղեցի, որի դուռը փակ է մնացել նրա մահից հետո: Հիմա մի ինվալիդ տղա կա, որ եր-

բեմն բանում է եկեղեցու դուռը, ապրում հուսով, որ հազարափրկիչը ոտը կուղղի:

— Բայց հազարափրկիչը մի շահու օգուտ չի տալիս:

10 Թերթում եմ շափաբերականը, 80-ական թվերն են, մանրամասն գրած, «յաղագս ծնելոց և դավանության», «յաղագս ննջեցելոց և պատճառք մահվան», սյունակներ «յաղագս ննջեցելոց», որոնց դիմաց տեր Անդրիասը խնամքով գրել է «պատճառ մահվան» — կարմրուկ, ծաղիկ: Հարյուրներով են մեռել տասնյակ տարիներ առաջ, երբ պրիստավ կար, քյոխվա ու տեր Անդրիաս, մեռել են ծաղկից, կարմրուկից, որպես աշնան ճանճեր, իսկ տեր Անդրիասը թաղել է օրական երեքին, չորսին, խմել սևեհի գինին «ննջեցելոց հիշատակ» և շափաբերականում նշանակել՝ «ի հանգրստարան առհասարակ գերեզմանատան է թաղյալ»:

Այդպես ապրել է տեր Անդրիասը, խմել, «պատճառ մահվան» գրել՝ «փորացավոց», «փորձանքից», «մեծամահից», մինչև որ դաշնակների օրերն են եկել, սով ու տիֆ, և արևոր տերտերը, որ էլ գինի չէր ճարում խմելու՝ պատճառ մահվան է գրել «դիփոց», «գնդակից», «խփված» և լուսանցքում ավելացրել «հակառակ օրինաց»:

Մի օր էլ ինքն է մեռել, և նույն մատյանում ժամի տիրացուն գրել է. «Տեր Անդրիաս հանգյալ ի տեր»:

* * *

Երեկոյան ներկայացում կա: Գգիրը՝ կենդանի աֆիշա, Վտուրններից կանչում է զի՛լ՝ «թատրոն կա, այ ժողովուրդ»:

Քիչ հետո մեկ-մեկ հավաքվում են, ամենից շուտ երեխաներն են գալիս և դուան արանքից ներս նայում, թե ինչպես են բեմը սարքում:

— Ամեն բանը լավ ա, մենակ ծմակն (անտառը) ա պինդ է դ էլ որ մի կանոնի գա, էլ ուրիշ պահանջմունք չունենք, — ասում է գյուղխորհրդի նախագահը:

Գյուղի դիմաց անտառներ կան, արոտատեղ չունեն, տավարն անտառի ձմեռանոցներում են պահում:

Գյուղում մի ուրիշ «թյուրիմացություն» է եղել, որի առթիվ նախագահն արձանագրություն է կազմել:

«Առաքել Քյունանյանը գնալով իր այգին ջրեղու և ճուլյն՝ պես առաջարկված է եղել, որ Շողեր Հայրապետյանը ջուր տանի Քյունանյանի այգու վր և Առաքելն արգելք է հանդիսանում Շողերին ջուրը կապելու իր այգու վր և կանչելով թե՛ ինչո՞ւ ես ջուրդ կապել իմ այգու վր և Շողերը վերադառնում է գյուղ և ասում է, որ Առաքելն իր այգուց կանչել է, ինձ՝ Շողերին տարել, որ ուժով բռնաբարի, այդ դեպքումը եղել են շրջակայքում հրեք հոգի 15 քայլի վրա և ոչինչ չեն ցույց տալիս Շողերի մասին...»:

— Գնանք, տեսնենք մեր տղերքն ինչ դերեր են կատարում, ո՞նց են թատրոն տալիս,— առաջարկում է մեկը: 10

Թատրոնի շենքը գյուղխորհրդի կողքին է, մի հին կամարակապ աննյակ, նեղ և երկար, փոքրիկ պատուհանով: Սենյակի վերի մասը հարմարեցրել են բեմի համար, բեմի պատերը ցախերով է գործած, ցեխով պատած:

Անկյունում պատի մեջ մի փոքր անցք կա, որի ետևից հուշարարն է հուշում:

Դերակատարները գյուղխորհրդի անդամներն են, կոմսոմոններ, գյուղացիք: Հինգ պիես գիտեն, շատ անգամ են ներկայացրել, ամեն մարդ իր դերն անգիր գիտե: 20

— Ընկերներ, հլա մի քիչ նստեցեք, մինչև բեմը սարքենք...

Նստոտում են տախտակների վրա՝ առաջին կարգերում տղամարդիկ, հետո կանայք, իսկ դուան մտտ երեխաները. զբաղիրն է կարգը պահպանում:

Բեմի առաջ դհուլ են խփում, թառ ածում, պար գալիս, իսկ բեմի վրա վռազ աշխատանք են տանում, դռներից վարագույրներ կախում, շորերը փոխում: Գաջով ներկած ցեխապատի վրա կարմիր ներկով մեկը նկարել է ծառեր, երկու Մասիսն, ուրիշ նախշեր: 30

Վարագույրը բացվում է, դհուլն էլ չեն խփում: Բեմից մեկը խոսում է նորակոչիկների մասին, որոնք վաղը ճանապարհվում են բանակ:

— Մենք էս թատրոնն ի պատիվ նրանց ենք տալիս...

Խոսքը վերջացնելուց հետո հեռանում է, որպեսզի բեմի

կտևում շուխան հանի, ուրիշ փափախ դնի և մասնակցի ներկայացման:

Մի կոմսոմոլ տղա վնոջ դեր է տանում, քոլորն անգրիմ են, շատ անգամ տեղական բարբառն են գործածում. «Տորթ»-ը հնչում է «Տորթն»-ի, որ շրջակա գյուղերից է:

Բայց և այնպես հանդիսականների անկեղծ և սրտանց ծիծաղը ձեզ էլ է վարակում: Եվ ոչ ոքի աչքին չի ընկնում այն, որ դերասանները տրեխով են, շալե շալվարով ու խնդում են «բուրժուազի» դեր:

10

Ուշ գիշերին ներկայացումը վերջանում է:

— Թատրոնը պրծավ, — ազդարարում է գզիրը: Յրվում են տները նեղրիկ քարոտ փողոցներով, հանգչում են ճրագները, և մի խոր մրափ իջնում է բեզարած գյուղի վրա:

Թատրոնում դեռ ճրագ կա, մի խումբ ջահերներ խոսում են նոր ներկայացման մասին, դերերն են բաժանում, արած սխալները շտկում: Եվ երբ հանդչում է վերջին ճրագը, ցրվելիս՝ նորակոչիկներից մեկն ասում է դերակատարներին.

— Ընկերներ, ձեր տված էս օրվա պատիվը մենք հուր հավիտյան մտահան չենք անի:

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (Ե)

Գուման է սարերում, խոնավութուն է կաթում ամպերից, ցուրտ է, ցեխ: Քամին քշում է քուլաները ամպի, մի պահ բացում ձորերը խոր, սարի անտառապատ լանջերը, հետո հանդարտում, և ամպերը, լորձունքոտ խխունջի պես, շարժվում են, լիզում սարի փեշերը, էլի ձորը լցնում ամպի սպիտակ քուլաներով:

Եվ երբ քաշվում են ամպերը, ներքև՝ ձորում երևում է գյուղը՝ քարակույտերի պես, տները՝ տափակ կտուրով, իրար վրա, մեկի բակը մյուսին կտուր: Դեղնել են ծառերը, եզները այգիների ցանկապատն են քարուքանդ անում և, վարից պրծած, ծառերի շոր տերևներն ուտում:

Վայրէջքը՝ լայն ու կոկիկ ճանապարհով է: Նոր են շինել, հինգ հազարի չափ քանող ձեռք է աշխատել, տասնյակ կապեր են դինամիտով պայթեցրել, քարապատ արել, սալել, սալի ճանապարհ շինել: Բայց գյուղը սալ չունի դեռ:

Իջնում եմ. ձին՝ վարժ քարոտ ճամփին, գլուխը կախ հետևում է ինձ: Քիչ հետո հասնում եմ պառավին, որ բորիկ ոտքերով, էշն առաջ արած, իջնում է ճամփով: Հայ է հարցնում, նպատակը գնալուս: Գլուխը երեբաց, խոր թառանջ քաշեց նանին, մեռած որդու մատին պատմեց:

— Վանիս մեռավ, հեղափոխության գործերին գլուխը գոհ տվավ: Էն ժամանակ, որ փմ Վանին բալչևիկ էր, էս ձորերում մինն էլ հասկանում չէր հեղափոխության գործերից: Մեռավ, ինձ էս օրին թողեց...

Նանին լացակումեց, ձայնը դողաց պինդ ձգած լարի պես: Հետո արցունքը կուլ տալով կամացուկ ասաց.

— Մահ բաժանողի կոնեբրը կոտորի, բա ինձ թողաց, նրան տարա՞վ...

էշը, դատարկ կողովները մեջքին, իջնում էր վայրէջքով: Պառավը, — թորիկ, տտքի կաշին ճաքճքած, կոշտացած, — տնքալով էշն էր քշում և շարունակում թոնթորալ ինքն իրեն: Նա իր Վանու գերեզմանի տեղն էլ չգիտեր, չէր տեսել ու միշտ միտք էր անում, թե ինչու է ապրում դեռ:

* * *

Գյուղամիջում, կաշի քարերին, նստոտել են գյուղացիք: Խոսակցությունը դադարում է, երբ մոտենում եմ նրանց: Մեկը նրանցից մոտենում է, ձեռք տալիս: Նախագահն է:

— Գնանք, մի քիչ հանգստացի, — ասում է, ուղեկցում դեպի տուն:

Մխից սևացած պատերի վրա գույնզգույն պլակատներ, լրագրի պատկերազարդ հավելվածներ, անկյունում սեղանն է, վրան մատյաններ, գրքեր:

— Կանցելար շունենք, մեր տանն եմ պահում դավթարները, — ասում է և պատուհանից ձեն տալիս գզիրին, որ խմաց տա, թե ժողով է լինելու:

Հարցնում եմ գյուղից:

20) — Գյուղ ա էլի, կառավարում ենք... Մի քիչ դժվար ա, շտրաֆի իրավունք չկա, դե թակել չի վարելի, մի քիչ դժվար ա...

Եթե մեկը մյուսից մի խուրձ վ գողանում կ'ամ արտն է անարդար վարում, տուժողը գանգատվում է, և խորհուրդը եթե չի կարողանում տուժողին բավարարել, ելքի միակ ճանապարհը դեպի ժողդատարան է տանում: Իսկ այդ կապված է ծախքի հետ, գնալու գալու հետ:

Զրույցի վրա ներս է մտնում մի երեխա, քիթ մոռթք մրոտ, փափախի փոստը ծակ:

30) — Անգրի դայի, մեր շալ հավը էն ա Շարանենց գոմում դուսաղ. տալիս չեն...

— Լավ, Մաթին (գզիրը) կը գա, կուղարկեմ: — Երեխան հեռանում է, իսկ նախագահը, որ տրեխների քանդած թեղն էր կապում, դարձավ ինձ, թե՛

— Աչքը հենց քյասիրի հավին է տեսնում, անխիղճ...
Եվ կուշտ հայհոյեց, դինչացավ:

— Բա մի թափ չլինի երեք օրով նրան գոմում նատեց-
նես...

Ներս է մտնում մի ուրիշ գյուղացի, սպիտակամազ, եր-
բեմնի «ախասխակալ».

— Ընկեր, ախր մի գանդատ ունեմ...

— Զո՛ւր ա, զուր գանգատդ,— ասում է նրան գյուղխորհրդի
նախագահը:

— Հա, հենց դու մի գլուխ զուր ասի. տեսնե՞ք ընկերն **10**
ինչ ա խորհուրդ տեսնո՞ւմ...

Հին վեճ է. մինչև այժմ տասն անգամ գանգատ տված կը
լինի հողբաժին, խորհրդին: Մերժել են, բայց այդ մտքի հետ
չի հաշտվում:

— Ոնց թե, բա ես հալալ դատած փող եմ տվել ժամա-
նակին:

Հողի վեճ է. տասնյակ տարիներ առաջ հող է գնել հարե-
վանից, նոր հողաբաժանման ժամանակ հաշվի չեն առել պայ-
մանագիրը՝ հին, խունացած, պատուրած:

«Միամտության թուղթ հորինեցավ 1898 ամին...», այս- **20**
պես է տկավում պայմանագիրը. «ու՞մ մանեթ թղթադրամով»
մի դեսյատին հող է գնել, պայման կապել, հիմա հողաբա-
ժանման ժամանակ հաշվի չեն առնում:

— Զուր ա գանգատդ, ապեր, քեզ նոր հող կը տան,—
ասում եմ. իսկ նա աչքերը շոած նայում է ինձ, շրթունքները
շարժում: Հենվել է փայտին, դողում է ձեռքը, դողում է ձեռ-
քին պահած «թուղթը միամտության»:

Բացատրում եմ, թե ինչու է գանգատը զուր: Լսեց, կանգ-
նեց մի քիչ, հեռացավ անխոս: Իմ խոսքս էլ էր իզուր նրա հա-
մար:

— Եկող տարի էլի է՞ք թուղթը պիտի նշանց տա... Ռա-
միկ ժողովուրդ ա: Բայց ջահել դասակարգը շրջված ա...

Նոր սերունդը սովորելու ծարավ է, ժողովներին միշտ
գալիս է, ավելի աչքաբաց է, նորին հարմարվող:

— Քեզ օրինակ ասեմ այ հենց մեր Մաթին, գզիրը:

Մաթին զորակոչի է ենթարկվել, ազատել են. Մաթին բո-

դոքել է, շին լսել: Եվ մտքո՞ւմ մեխել է ամուր՝ փախչել բա-
նակ, կամավոր գնալ:

— Ճանապարհից ենք ետ տվել: Բայց միտքն էլի ծուռ ա:
Ուշքը էն ա կարմիր բանակում:

Գնում ենք ժողովի: Յեխ է փողոցներում, խրվում ենք
ցեխի մեջ, աշխատում շոր տեղով գնալ:

— Ընկեր, բա ծմակի (անտառի) մասին... Գազեթում
գրված էր, որ թույլ են տալու: Մեր ժողովուրդը դրա մասին
շատ ա հետաքրքիր:

10 Ասում է և ճարպիկ ուսույունով մի քարից մյուսի վրա
ցատկում:

Եվ ժողովին էլ անտառն է խոսակցության առարկան.
լրագրում գրված է, կարդացել են, ուրախացել, բայց անտա-
ռապահը առաջվա պես խիտտ է, ասում է, որ հրաման դեռ չի
ստացել:

Մի ուրիշ գանգատ: Կոոպերատիվ ունեն, բայց փող չկա
ապրանք գնելու: Մթերք՝ ինչքան ասես, բայց կոոպերատիվը
դրամով է առուտուր անում, մթերք չի վերցնում՝ յուղ, պա-
նիր, ցորեն: Տեղում պահանջ չկա, ամեն մարդ էլ իր պաշարն
ունի, իսկ ավելցուկը սպառելու տեղ չկա:

20

— Եթե ցորենն ընդունեն, սաղ գյուղով կոոպերատիվի
անդամ կգրվենք:

Կոոպերատիվն էլ ընդունած մթերքում վնաս է արել:
Յորնի գներն իջել են, ձեռնտու չի համարում մթերք հավաքել:

— Մինչև քաղաք տանեմ, փութին տասը կոպեկ քրեհ եմ
տալու, բա մեր օգուտը ինչո՞ւմն ա, — վիճում է վարչության
նախագահը նրանց հետ, որոնք մթերք են առաջարկում:

— Լավ, դու բյազը կապերատիրում ցից ես արել, իմ ցո-
րենն էլ շես առնում: Բա ես ի՞նչ անեմ, բյազիդ նայեմ, կշտա-
նամ...

30

Վեճը երկար է տևում: Վերջում համաձայնություն են գա-
լիս մթերքը հանձնել քաղաքում, շուկայի գնով:

— Մմակի հարցն էլ որ էսպես վերջանար, մեր փափա-
խը ծուռ կը դնեինք...

Տուրքի մասին են խոսում: Դժգոհ չեն: Շատերը հարկա-
թերթ ստանալուց երկմտել են, դիմել խորհրդին, թե ինչու է

քիչ, գուցե սխալ լինի: Ստուգել են, տեսել, որ սխալ չի, այդ-
քան էլ պիտի լիներ: Եվ քեֆ ու զուռնով են տուրքերը գան-
ձում, շատերը միանգամից են մտցնում:

* * *

— Գնանք դպրոցը տեսնելու, — առաջարկում է ընկեր
Անդրին:

Գյուղում հերու դպրոց չկար, հիմա հարյուր աշակերտ
ունեն, տեղ չկա: Մեկը աչքացավոտ, մի հին, կեղտոտ գոգնոց
է փաթաթել փափախին, աչքերը ծածկել, — հնամաշ շուխով մի
գյուղացի կանգնել է դպրոցի դռան առաջ:

— Վե կալ, վարժապետ, մեղք ա, սրան էլ վե կալ, —
խնդրում է, չորս տակ ծալած մի թուղթ ուղղելով ուսուցչին:
Հոր մոտ կանգնել է որդին, բոբիկ, պորտը բաց: Փսիխք է քթի
տակ, տղան սրբում է թևով և վայր սլող շալվարը ձգում:

— Տեղ չկա, Հարուդ ապեր: Երկուսին ընդունել եմ ձեր
տնից, էլ տեղ չկա, նստարան չկա...

— Վնաս չունի, թող կանգնի, հո չի մեռնի...

Էլի է խնդրում, դիմումը գոռով ուսուցչի ձեռքին դնում
և հեռանում: Որդին մնում է: Եվ հեռվից Հարուդ ապերը նորից
է կանչում:

— Վե կալ վարժապետ, քե մատաղ...

Ուսուցիչը շիվար է:

— Ընդունեմ, տեսնում եք տեղ չկա, ջրնդոմնեմ, լսեցի՞ք
ինչ ասեց Հարուդ ամին:

Դիմումն եմ կարդում, ուղղած «ուսումնարանի տեսու-
չին»: Հարուդ ամին է խնդրում որդուն ընդունեն, «որ ինձ
մման շմնա անկիրթ»:

Դպրոցը երկու սենյակից է. մի հին, փխսավեր տուն, նեղ-
լիկ պատահաններով: Մի կերպ հարմարեցրել են, ավաղել,
ապակու տեղ թուղթ փակցրել պատահաններին: Նստարան դեռ
չունեն, երկար տախտակներ են, քարերի վրա շարքով դար-
սած:

— Էն հեչ, — ասում է մի գյուղացի, — եկող տարի նոր
դպրոց ենք շինելու:

Գնում ենք նոր դպրոցի տեղը նայելու: Քար ու ավազ են

բերել, քարերը պայթեցրել, տեղը հարթել: Անտառում հար-
յուր գերան ունեն, վլպած, տաշած: Դպրոցի տեղը մի քիչ հե-
ռու է գյուղից:

— Ոչինչ, ժամանակով իլիստրիկի ճրագ էլ կը բերենք,
ճանապարհին ֆանարներ կը կախենք, լույս կը լինի...

Տուն ենք դառնում: Մթնում է, դրսում՝ դուման է սարե-
րում, խոնավութուն է կաթում սարերից, ցուրտ է, փողոցնե-
րում՝ ցեխ:

10 Շարվում ենք շուրջը թեժ թոնրի: Կրակը ճարճատյունով
լափում է գերանները շոր, հրի լեզուները թռնում են վեր, կայ-
ծերը մի պահ սենյակի կիսամութն են լուսավորում, որպես
«իլիստրիկի» ճրագներ...

ԼՕԵՆ

Ճամփի լայնքը քառորդ մետր, այծի ճամփա, քերծերի վրայով: Այնքա՛ն տրեխ, սմբակ ու կճղակ է թակել քարերին, փորել, արահետ արել: Ներքև՝ Որոտանը փրփրած, պղնձագույն ժայռերի մեջ ոռնում է, քարերը կրծոսմ, բայց փլվում են ժայռերը վերի, թափվում ձորի մեջ:

Կածանը Լծենի ցաքուտների միջով իջնում է դեպի գետը, տեղ-տեղ անցնում փայտե կապերի վրայով և իջնում դեպի Որոտանի միակ անցքը, հետո գառիվայրով օձապտույտ ձրգվում է բարձր, դեպի փեշերը անտառապատ սարերի: 10

Երբ ձյուն է լինում, սառչում է անցքը, կապերը պնդանում են, գլուղը օրերով կտրվում է դրսից, կածանով գնացող եկող չի լինում:

Լծենը հարյուր տարի առաջ Խոյից գաղթել է, եկել ապառաժի գլխին թառել: Հինգ տուն են եղել, հիմա վաթսունից անց է: Անտառները կտրատել են, ծառերը արմատահան արել: տեղը կորեկ, հաճար վարել, շալակով հող կրել, թափել քարերի վրա, բոստանատեղ սարքել: Ներքև՝ ձորում, Որոտանի ափին, ժայռերի ձեղքերում ծառեր են տնկել՝ ընկուզենի, բալ:

Գյուղի տեղը դառն է, քամու բերան, բաղ ու բարահիր 20 հողից գուրկ: Եթե սարալանջը վարելիս մաճկալը մաճն է բռնում, մեկն էլ մաճկալին է պահում, որ չգլորվի ներքև:

Գերդաստաններ կան քսան շնչով, նահապետական վարք ու բարքով: Իրար ազգ ու բարեկամ են, հարսանիքին՝ ամբողջ գյուղով պիտի լինեն, ուտեն, խմեն:

Շատ քիչ է դրսից մատո գալիս և՛ժեն: Ո՞վ է գլխից ձեռք

վեր կալել քերծերի վրայով ժամերով գնալ, ցաքոստի միջով Որոտանի դժար անցը կտրել:

Երբ հարս ու աղջիկ վժեհն ուտին իրիկվա ջրի համար աղբյուրի առաջ հերթի էին կանգնել, հոգնած բեզարած գյուղ մտանք:

• • •

Լծենի դպրոցը մի սենյակ ունի, մի փամբակ: Եթե գյուղում ժողով է լինում (իսկ Լծենում ժողով քիչ է լինում), դրպրոցի սենյակում են հավաքվում:

- 10 Երեկոյան ժողովը հողերի հավասարման համար է: Գուցե ոչ մի գյուղում հողն այնքան թանկ չէ գյուղացու համար, որքան Լծենում: Կես օրավար վարելահողի վրա տասնյակ տարիներ մի գերդաստան քրտինք է թափել, քարը ջոկել, ծառն արմատով հանել, ամեն գարնան արտի եղերքին բըսնող թփերը կտրատել, կոխ կպել մաճի հետ, մինչև ցել անի:

— Էս հողերում երախտիք շատ է թափել մեր գյուղը: Հիմա շատացել ենք, հողը չի հերթում, — ասում է մի ալեվոր, և շնայած, որ նախագահը նկատում է, թե հերթով խոսի, նա էլի շարունակում է.

- 20 — Իմ միտս է, որ մեր գյուղում թավչի (տուրք) անեքիս տասնչորս տուն կար, հիմա վաթսուներ անց ա:

Մի ուրիշն է խոսում.

— Մենք գեղով մի արմատ ենք, մի ցեղ ենք: Հաստատ մնա սովետական իշխանը, սապոնը կա, շաքարը ճարվում ա, դե հիմա էլ պետք ա հողերը քաժին անենք, շատացել ենք:

Թեպետ բարձր նահապետական է, և ծերերը աշխատում են գյուղը հաշտ ու միաբան ներկայացնել, բայց հողերի մասին խոսելիս շահերն աններդաշնակ են, հակառակությունը շատ: Հողաբաժանում դեռ չի եղել. նա, ով փափուկ բարահիր ունի, խոտատեղ և ջրովի, նա լուռ է, եղած դրության հետ հաշտ: Նա, ով մեռել թաղելու տեղ էլ չունի, ում բաժինը մի փութ կորեկի տեղ է, այնքան է պինդ կպած հողահավասարման, որքան փշոտ թուփը՝ Լծենի հողին:

- 30 Գիշերը կես է դառնում, ժողովը դեռ վերջ չունի: Գյու-

դի ամբողջ ներքինը, այն՝ ինչ ատաշին ակնարկից շեռ տեսնում, գյուղի ատօրյան պարզվում է, մերկանում, որպես վահրտոս մարտին, պլակված կաշիով, փռտուկներով, մի տեղ ճարպոտ, մսակալած, մի տեղ կաշի ու ոտկոր:

Ահա մի ընտանիք, որ գյուղի ծխամատյանում նահապետական գերդաստան է հիշվում, պապ ու թոռնով, չորս հարսով, սկեսուրով պառավ,— ժողովում փոքր եղբայրը, որ ինվալիդ է գերմանու կովի, ինվալիդը կռնատ մի ձեռքով կուրծքըն է ծեծում և ետևի շարքից բղավում.

— Մեծ աղբերս ինձ ճնշում ա, նրա ձեռքին օր շեռ քաշում: 10

Պատմում է, թե ինչպես մեծ եղբայրը հին տան միակ սենյակի անկյունում պատ է քաշել, մի հավաքուն շինել, սորվել ինվալիդ եղբորը: Տունը ոչ դուռ ունի, ոչ պատուհան, փշրված պատի ճեղքով են ներս ու դուրս անում:

— Էդ հարկավոր չի, էդ ժողովի բան չի,— սաստում է մի ալևոր, իսկ ինվալիդը ավելի է զայրանում, ձայնը բարձրացնում և փորձում ավելի առաջ գալ:

— Պիտի սսեմ, էս ժողովում պիտի սսեմ, որ բոլորն էլ իմանան: Ծս հող շունեմ, տնատեղ շունեմ, ես իմ աղբոր ետիրն եմ, նրա տան ծառան, քա հիմիկվա օրենքը էդ վեր կունի... 20

Մեծ աղբերը աչքերը ոլորում է, սպառնալից նայում նրան: Մոտին կանգնած մի ծերունի նրա թևից քաշում է, հրամայում լռել:

Ինվալիդը աղմկում է, ուրիշներն են խառնվում, նախագահը փորձում է կարգ պահել, չի լինում:

Մեղադրում են իրար: Մի ճղոտված, մսերը բաց լծենցի գոտում է դռան մոտ կանգնած գյուղացու երեսին:

— Տուր է, շրովուդ կեսը տուր ինձ, քա քեզ չորս կով լինի, դու խոտ էլ ծախես, ինձ մի՛նն էլ չըլնի՞, տուր, որ ապրեմ... Գերասիմը (ինվալիդը) ճշմարիտ խոսք ա ասում, ի՞նչ եք վրա թափվում: 30

Ապա ետ է դառնում, նայում սենյակի կիսամութում նստած հարևաններին և ասում.

— Մո՛ւտ եմ ասում, այ ժողովուրդ... Մի գեղում մի

քանի տուն ճնշում ա էլի, խի՞ չեք խոսում, պապանձվել եք, որ էզուց պատերի տակ փսփսաք...

Մի քանի հոգի կանչում են.

— Դուզ խոսք ա, ճշմարիտն էդ ա:

Գերասիմը ավելի է ոգևորվում.

— Դե մի տուր, ժողովի գիրքը քեր, էն որ գրել ես, թե ի գիտությունն, տուր ընկերն էլ կարդա, լիմանա ի գիտությունը որն ա...

10 Նախագահը ուզում է կոծկի, թե այդ հին բան է, ժողովին չի վերաբերում, բայց Գերասիմը համառ է: Թերթում եմ գյուղի խորհրդի մատյանը.

«Լսեցի՛ն. Ընկ. Ավագը զեկուցում տվավ, որ Գերասիմը, որն որ հանդում վար անելիս ուշքը գնաց»:

«Ուռռեցի՛ն. Ընդունեցի՛նք ի գիտությունն»:

— Բա ես ընկնավոր ե՞մ, ոչ վար անելիս ուշքս գնա: Աղբերս ա թակել, այ ասում եմ, էդ ա ի գիտությունը...— կանչում է Գերասիմը:

20 Աղբերը փորձում է վրա հարձակվել, պահում են, հետո զոռով ժողովից դուրս անում: Սաստում են Գերասիմին, թե լեզուդ հավաք արա, գեղը խայտառակ մի անի:

Ժողովը տևում է մինչև աքլորականչ: Որոշումը կտրուկ է, հաստատ. հողերը բաժանել, շունկորին կալ ու մարագի տեղ տալ: Գերասիմին ընտրում են հեղկոմի անդամ:

• • •

Լուսաբացին գյուղից դուրս եկանք: Գերեզմանատան մոտ Գերասիմն ու ճղոտված, մսերը բաց լծենցին սպասում էին մեզ: Մոտեցան, բարի լուս տվին, Գերասիմը թե՛

— Կարճ ասեմ. մեզ տնատեղ շուտ հասցրեք, հողերը բաժին արեք, թե չէ մեզ կխեղդեն:

Ճղոտվածը շխտեց: Պոռռները կապտել էին...

ԱՐՄԱՇ

Տափարակի հողերը տեղ-տեղ ճերմակին են տալիս, ասես աշունքվա առավոտը եղյամ և ցողել:

Շորաքյաթ հողեր են, յոռոգման կարոտ: Շուտով ջուր կլինի, հողն սպունգի պես կծծի ջուրը, հողը կփափկանա, և այն-տեղ, ուր այժմ փշեր են բուսել և ուղտի խոտ, կլինի բամբակ, արևի տակ կլցվեն ողկույզները խաղողի, ցորենն առատ բերք կտա:

Ավերակ գյուղեր են, քանդված ցեխապատեր: Առանց ծածկ, առանց դուռ ու լուսամուտ: Տարիներ առաջ տափարակի վրայով մահվան թաթառ է անցել և հրդեհել տները: Գյուղերի մոտ շամբուտները շատացել են, հասել գյուղին: Եղեգնուտն իր մեջ է առել շատ ավերակներ:

10

Տափարակի վրա վրաններ կան, տեղ-տեղ՝ հատ-հատ, տեղ-տեղ՝ խմբով: Դեղնագույն վրանների տակ ապրում են նրանք, որոնց ոտքերը տարագրության հազար վերստեր և շատ սահմաններ են կտրել, տեսել են ծովեր, անցել են ծովեր: Երբեմնի մշակներ են սրանք, հողի մարդիկ, որոնք ճամփան կորցրած երամի պես թռել են, հազար մղոն անցել և իջել տափարակի վրա, վրաններ զարկել:

20

Գարունքին վար ու ցանքս են արել, այժմ տներ են կառուցում. նոր գյուղեր են հիմնվում: Արմաշն այդ գյուղերից է, գյուղ՝ վրանների տակ, վրանների մոտ ավերակ տներ: Քանդում են ավերակները, կառուցում նոր տներ: Տունը պատրաստ լինելուց հետո մի ընտանիք թողնում է վրանը, տեղավորվում նոր տանը:

Վրանները լայն են և երկար: Մի քանի ընտանիք միասին են ապրում, մի վրանի տակ: Վրանի մի անկյունում

օրորոցի մեջ երեխան է քնած, կողքին մայրը նստել, հետը բերած սերմերն է շոկում, որ վաղը ցանի ստացած հողում: Վրանի առաջ վազվզում են երեխաները, մի-պառավ կին ցեխից հավաքուն է շինում, հենց վրանի մոտ:

Մի ծեր մարդ, որի հագին տեսած երկրներից մի-մի կտոր շոր կա, հույն զինվորի շինելից մինչև ամերիկյան շլյապը, երեք սպիտակ զառնուկների խոտ է տալիս: Նստել է զառնուկների մոտ, նայում է նրանց և ուրախ է անսահման, որ կյանքի արևմուտին մի անգամ էլ զառներն իր քաղած խոտը կերան:

Վրանների մոտ գերաններ կան թափված: Տաշում են, սարքում, մի տեղ աղյուս են պատրաստում, մի ուրիշ տեղ քար են տաշում, ավերակ տները քանդում են, որ ավերակների տեղ աղյուսան աղյուսի վրա նոր տներ կառուցեն, նոր Արմաշ, և դադրած, տարիների տարագրությունից բեզարած մարմինները հանգստանան:

* * *

Տրակտորները հերկում են վաղուց չվարած արտերը, որտեղ եղեգն է բուսել և ուղտի խոտ, անմշակ մնալուց հողը շորաքյաթ է դարձել, ասես աշունքվա առավոտը եղյամ է ցողել: Տրակտորներ շատ կան, հերկում են լուսաբացից մինչև արևմուտը, վայրի խոտերն արմատահան են լինում, արևի տակ սեին են տալիս պարարտ ցելեր:

Թխական դնող պառավը, որ ցեխից հավաքուն է շինել, թիթեղյա տաշտի մեջ ծխախոտի սերմ է ցանել, իր հետ հեռուներից բերած ծխախոտի սերմ: Մլել են սերմերը, պառավն անհամբեր է, շուտ-շուտ գնում է մոտակա ցելին նայում, թե ե՞րբ պիտի մարգեր կապեն, որ ինքը ցանած սածիլը տնկի:

— Ուշի ընկանք,— ասում է,— թեզ գայինք նե, հիմակ տուն ու տեղնիս հագիր կընեինք:

Եվ ինչքան անհամբեր է տուն ու տեղ հագիր անելու, ի՞նչպես է դիմացել տարիներ մինչև այսօր, երբ մյուսները գերաններն են տաշում, աղյուս են թրժում, երբ պառավը գիտե արդեն իր ապագա տան տեղը:

Վրանի մոտ մի փոքր տեղ պառաւլը փորել է բահով, երկու մարգ արել:

— Աստեղ աղվոր սխտոր կըլլա,— ասում է, ծիծաղում: Խոպան հողը շգիտեր, որ Կալալայից, Սիրիայի, ավազուտներից ծովերի վրայով մի օր մի պառավ պիտի գա սխտոր ցանելու: Կասկածում էր և պառավը, թե պիտի ուտի՞ իր ցանած սխտորն օրերից մի օր:

Վրանների մոտ տրակտորներ կան ընկած, բանած եզան նման ասես հանգստանում են շվաքում:

Գանգուր մազերով մի տղա ուլի նման ցատկոտում է տրակտորի վրա, մի ուրիշը փայտի կտորներից տուն է շինել, վազում է վրանից բերանով ջուր բերում, ցեխ անում, տրակտորի շվաքում շինած տան կտուրը ցեխելու:

Խոսեցնում են գանգուր մազերով տղային, անունն են հարցնում:

— Ան հայերեն չհասկնար,— ասում է տրակտորի շվաքում տուն շինող երեխան: Տաճկերեն են հարցնում:

— Ժիրայր,— ասում է. մայրը ձայն է տալիս վրանից, որ ջրի սալը եկել է արդեն, թող ջրի գնա: Ժիրայրը թոնում է գնդակի պես:

Խմելու ջուրը հեռվից են բերում: Երբ Արմաշում էլ վրաններ չեն լինի, պառավը կշտանա սխտորից, սպիտակ գառնուկները մեծանան և ծնեն, երբ Արմաշը գյուղ դառնա, սարի աղբյուրից ջուրը խողովակներով կբերվի մինչև գյուղ:

Ջրի սալի մոտ հերթի են կանգնում: Ամեն մեկի ձեռքին մի տեսակ ջրաման կա: Ահա մեկը, որ բենզինի դատարկ քակը հարմարեցրել է ջրամանի, մյուսը՝ Յուվայի կավե կուժ ունի, երրորդը՝ փայտե փոքրիկ տակառ, երկար շղթայով, շորրորդը՝ պղնձե սափոր:

Ջրի սալի մոտ հերթի են կանգնել, ինչպես մեր գյուղերում աղբյուրի մոտ: Էլի այն զրույցները կան՝ ջրի մոտ՝ մի ջահել կին, ուրիշ վրանում ապրող իր բարեկամ կնոջից խորհուրդ է հարցնում:

— Տղաս կարմրուկ է հանել,— ասում է:

— Տաք պահե, փայտ չունես նե, եկե տար,— ասում է բարեկամ կինը, սափորը մոտեցնում ջրի տակառի ծորակին:

20

30

383

Արևը թեքվում է, իրիկունը հով է բերում, հովի հետ մի սառնություն է իջնում աղանձված դաշտերի վրա:

Վրանների առաջ իրիկվա կրակներն են վառվում: Ասես եկվորներ չեն, այլ սար բարձրացած գյուղացիք: Եթե իրիկվա հետ հանդից նախիրը գար, բառաչեին կովերը, կուրծքը լի լիզեին հորթերին, եթե նախիրի հետ աղմուկ գար արոտներից հեռավոր, շները հաչեին իրիկվա դեմ, կթվար այնպես, թե վրանների տակ ապրողները նորեկնօր չեն՝ տարագրությունից բեզարած, այլ սարվորներ:

10 Վար ու ցանքսից վերադառնում են գյուղացիք, տրակտորներն աղմկում են մոտակա հողերում, կիսատ մնացած տեղերում: Ծրակտորներն, ասես, հսկա թռչուններ են, պողպատ թևերով, իջել են հղեգնուտի մեջ, կոնշում են քնելուց առաջ և պառկում փափուկ բներում:

Հովին նստել են կրակի մոտ, հանդից են խոսում, վար ու ցանքսից: Թուրքեր կան, հարևան գյուղերից են, օգնում են նրանց, վար ու ցանքսին մասնակցում:

20 Նրանք տեղացի են, գիտեն, թե բամբակը ե՛րբ պիտի ցանել, գարին քանի՞ անգամ պիտի ջրել, ո՛ր հողում ցորենը լավ բերք կտա: Հովին նստել են կրակի շուրջ, զրույց են անում:

— Հեյդար, դու ինձի ան ըսե, գարին սեյրակ ցանե՞նք նե, թե ղալին,— հարցնում է մեկը և իսկույն ավելացնում.

— Մեր տեղն ըլլայինք, ես գիտցածս կընեի, համա աս հողերուն վալադ (ծանոթ) չեմ:

Հեյդարը պատմում է, թե ինչո՞ւ պիտի խիտ ցանել, թե Արմաշի հողերում ինչո՞ւ է խիտ ցանածը բերք տալիս: Պատմում է, կարծես թե մի էպոսից անգիր կտորներ է ասում, դարերի փորձով ստուգված կանոններ գարու, բամբակի մշակության մասին:

30 — Մըգարա մը վառե, Հեյդա՛ր,— ասում է մեկը և ծխախոտի քիսեն մեկնում նրան:

Հեյդարը ծխում է, գոփում ծխախոտի համն ու հոտը: Հարցնում է, թե ո՞ր երկրում են մշակում:

— Աս թուփունի սերմը հետս բերած եմ,— ասում է ծըգարա տվողը,— պիտի ցանեմ ես...

Հեյդարը հարցնում է, թե Արմաշի հողերում կրումնի՞ր այդ ծխախոտը:

— Հելրեթ (իհարկե) կրումնի... մինակ թե լեզուն գիտե-
նալու է,— ասում է և Հեյդարին բացատրում, թե ի՞նչպես են
ծխախոտ մշակում:

Խոսք է ընկնում մոծակի մասին: Պատմում է, որ իրենց
ապրած տեղերը՝

— Ասկից շատ շոգ էր, մենք շոգին կրիմանանք:

— Ճանրմ, մժեղք հարուստին կուտե, ան արյուն շատ
ունի, մենք աղքատ ենք,— ասում է մեկը, կրակի մեջ նետում
փայտի կտորներ:

— Մենք մժեղին կուտենք,— հարում է մեկը, ծիծաղելով:
Ծիծաղում են և մյուսները: Զրույցը ուրիշ նյութի շուրջ է
դառնում:

Մեկը, որ երկրներ է տեսել, բազմատեսակ ժողովուրդներ,
սովի ու նեղության օրեր քաշել, հերթի կանգնել ամերիկյան
օֆիսի առաջ՝ հացի փշրանք ստանալու, «Ազգային մարմնի»
դռները մաշել,— պատմում է իր զխտով անցած նեղ օրերի մի
պատմություն, թե ի՞նչպես հեռու մի երկրում առավոտից մին-
չև իրիկուն շալակով քար էր կրում, քարը ջարդում, խիճ
անում, ի՞նչպես քարն ընկավ ոտքին, ուշաթափ ընկավ քար-
հանքում:

— Եսիրի նման էինք, Հեյդար,— ասում է և շարունակում
պատմությունը:

Լուսինն արծաթ սինու պես ելավ ամպերի հետևից, լուս-
նի տակ Արարատը զույգ, գագաթը ձյունոտ: Ասես լուսինն ու
գագաթը ձյունոտ նույն մարմարից էին շինած:

Հեյդարը նայում էր կրակին, վերհիշում նման մի պատ-
մություն:

Արմաշի մոտ, բլուրների վրա, Վեղիի խաների գերեզման-
ներն են, ամեն մինը քարապատ մի բուրգ: Այդ այն օրերին էր,
երբ բուրգերի տակ թաղված խաները դեռ ողջ էին, Հեյդա-
րի մեջքը ճկուն էր, ջահել, խանի ձեռքին եզան ճիւղերից մի
լախտ...

19

20

30

ՇԱԹՐԻՉ

Սյուսանի սարերը, Բարկուշատի տափարակին հասնելուց առաջ, խառնվել են իրար, խոր անդունդներ գոյացրել. ուղղաձիգ ժայռեր՝ պղնձագույն քարով, տեղ-տեղ բարձրացել, որպես սրածայր գագաթներ, որոնց վրա ամպերը նստում են, գագաթները թաղում թանձր մառախուղի մեջ:

10 Անտառապատ են սարերը, և տրովհեստե նեղըրիկ փածաններով շատ քիչ են անցուղարձ անում, անտառները մնացել են կուսական, ձյունն ու քամին տեղ-տեղ արմատախիլ են արել փշակով կաղնիները, ձգել ժայռից ժայռ: Սյուսանի անտառներում վայրի վարազներ կան, պախրա ու սևամորթ արջ: Ընկած գերանների վրայով ժայռից ժայռ անցնում են արջերը, որպես լարախաղը պարանով, և բրդոտ թաթը մեկնում ժայռի ճեղքում բռն դրած վայրի մեղվին: Շոգ օրերին անմատչելի բարձունքից ծորում է մեղրը, պսպղին տալիս արևի տակ, որպես ոսկու հալոցք, փայտահատը բերանբաց նայում է մեղրի փայլին և լսում, թե ինչպես են բզզում մեղուները պղնձագույն ժայռերի վրա:

20 Զիերը փնչոցով բարձրանում են փածանն ի վեր: Թվում է, թե սմբակներ չեն, այլ մագիլներ, որոնցով ձիերն ամուր բռնում են կածանի սրնածայր քարերից և մագլցում: Թփերն ու ծառերը խառնվել են իրար, պիտի կոացած քարձրանալ, ձիու բաշից բռնած, ձիուց թռնելուն միշտ պատրաստ, եթե սմբակը սայթաքի:

Մառերի սաղարթը խիտ է, մճճվել են ճղներն իրար, և օրը ցերեկով մութ է թփում անտառում: Դիտես, որ հեռուններում կա արևոտ մի աշխարհ և լայն ճանապարհ, և երբ փա-

կում ես աչքերդ, թվում է, թե հեռանում ես այդ աշխարհից, իջնում ինչ-որ անդունդներ, որոնք գուցե գետնի տակ են տանում, մթնած ձորեր, ուր սև արջերն իրենց համար որջեր ոսնեն քարերի տակ, ծառի փշակներում:

Մի ցանկություն է ծնում ներսդ՝ կանչել բարձր, ինչքան թոքերդ ուժ ունեն, գուցե ծառերի հետևից մեկը կանչիդ արձագանք տա: Եվ ինչ տարօրինակ է թվում ժամացույցը Սյուսանի անտառներում, այնքան թույլ են նրա զարկերը: Ժամանակն այստեղ ուրիշ ընթացք ունի, որի նվազ միավորը դարն է:

Մոռացվել էր համարքն անցած շղթաների, երբ մի բլրակի լանջին, անտառի մեջ կարծես հանկարծ ցցվեց խամբարված մի եկեղեցի: Ոչ մի գիր, ոչ մի քանդակ: Բնմի մեջտեղ հաստաբուն կաղնի էր բուսել, ճյուղերը տարածել պատերի վրա, ճյուղերը խորանի նեղրիկ պատահանից դուրս հանել: Ավերակը կարծես մի պատյան լիներ, հագցրած կաղնու ճյուղերին, պատած բնի շորս կողմը: Ովքեր են ապրել դարեր առաջ այս ձորերում, գուցե գյուղ է եղել կամ մենաստան:

Միծաղել են, աշխատել, լաց եղել, ծնվել ու մեռել: Հասել է մի օր, երբ էլ չեն ծխացել օջախները, անտառը կլանել է ամեն ինչ, տները դարձել են խղճուկ քարակույտեր, թոնրի փոսերում գայլեր են պառկել, խաղացել ձագերի հետ: Մնացել են քարակույտեր, եկեղեցու պատերը, մի խղճուկ խաչ և անտառ, անվերջ անտառ:

Վայրէջքով իջնելիս ներքի անտառից հաշոցի ձայն եկավ: Դժվար էր որոշել, շուն է հաշում, թե աղվես: Եվ ինչքան մեծ եղավ մեր զարմանքը, երբ մի քիչ հետո վայրի տանձիններ տեսանք, շուրջը ցանկապատ, ձորակում աղբյուր՝ առաջը նովդան, աղբյուրի մոտ ցորենի մի քանի հասկ, եզան, կտվի թրիք:

Այստեղ կամ մոտիկ, շատ մոտիկ մարդիկ են ապրում, կենդանի մարդիկ: Ձիերն էլ ասես զգացին այդ և ասպանդակների զրնգոցով արագաքայլ իջան ձորը:

Մի բարձունք էլ, և հանկարծ ծառերի հետևից երևացին տներ, մարագներ: Զգացի՞նք Քսենոֆոնի ուղախությունը, երբ նա ծովը տեսավ:

10

20

30

Ներքևից մեզ տեսան և քարացած մնացին: Ոմանք կալ էին կասում, մեկը ցանկապատն էր նորոգում, մի կին կտուրի վրա վայրի տանձ էր փռում՝ շորացնելու: Կալում եզներն էլ կանգ առան, որովհետև քշողի ճիպտոր ձեռին մնաց: Ցանկապատ նորոգողը մի պահ, փուշի կապը գրկին, նայեց մեզ և շիմացավ ո՛ր դերի. կտուրի վրա կինը չքած էլ մնաց, տանձի կիտուկն առաջին:

10 Առաջին տան ստվերում կանգ առանք: Հավաքվեցին՝ կալից, կտուրից, բակերից: Նրանք էլ էին զարմացել, ասես իրենց օրում դրսի մարդու երես չէին տեսել: Աչքիս ընկավ, թե ինչպես մի քանիսը շատ ուշադիր նայեցին մեր ձեռքի ասրք ու կարգին:

Շաթրիզ գյուղն ունի երեսուն ծուխ: Թուրքեր են. հիսուն տարուց ավել է, որ բնակություն են հաստատել այդ ձորում: Գյուղը նայում է Զանգիլանի դայրային: Ոչինչ չունեն, ոչ խորհուրդ, ոչ դպրոց, ոչ կոոպերատիվ: Ոչ մի գրագետ չկա: Իր օրում Շաթրիզը բժշկի երես չի տեսել:

120 Իզուր էինք քարտեզի վրա փորձում թեկուզ մտավոր որոշել գյուղի տեղը: Գյուղացիք զարմացած նայում էին քարտեզին և երբ նրանք իմացան, որ գյուղի անունը չկա քարտեզում, հուզվեցին:

Մեկը հարց տվեց, թե ի՞նչ իրավունքով են հավաքում տուրք, եթե իրենց գյուղը չի նշված քարտեզի վրա: Եվ համարյա բոլորը միասին խնդրեցին նշանակել քարտեզի վրա Շաթրիզ գյուղը: Երբ խոսքն ընկավ հողերի մասին, հասկանալի դարձավ նրանց պահանջը:

30 Շաթրիզն առաջներում օգտվել է Զիվանշիրի քեկերի հողից: Այդ քեկերը հիմա էլ մնում են և շարունակում են տիրել իրենց հողերին: Շաթրիզը հող չունի, օգտվում է առապար տեղերից: Բեկերը ջրարբի հողերն ուրիշներին են արենդով տալիս, հազար ու մի խորամանկ միջոցների են դիմում, հողերն իրենց ձեռքում պահելու:

Շաթրիզն ամենածանր պայմանով էլ խնդրում է քեկերից հող՝ կապալով մշակելու, բայց մերժում են, վախենալով, որ կապալի վարձը շեն տա: Դիմել են դայրային, ոչ մի պա-

տասխան: Եվ երբ նրանք խմացան, որ քարտեզի վրա գլուղը չկա, հոսահատվեցին, նրանց այնպես թվաց, թե երբեք հող չեն տտանալու:

Շաթրիզի երեսուն տոնը 10 եզ ռնի, երկու էջ, մի քանի այծ: Ձի շունեն, շատերը քլունգով են փորում հողը, ցանում կորեկ: Ուտում են կորեկ հաց կամ կորեկին խառնում գարի: Անասելի աղքատություն կա: Քիչ է այդպես ասել: Վարազն անտառում ավելի լավ է ապրում, քան շինականը Շաթրիզում:

Տան ստվերում նստել, պատմում էին գլուղի կյանքից: Մարդիկ տարիներով թեյ չեն խմում, թեյը հիվանդի համար սրտի ուզելիք է: Կողքիս նստել էր մեկը, որի բրդե շավարի ճեղքից երևում էին մսերը: 10

Չկար մեկը, որի հագուստը զգզզված շիներ, կեղտոտ. կտորը կեղտից փտած, գունավոր թելերով կտորներն իրարից կապած: Քաղաքի աղքատությունը ընկած հին լաթերը գուցե հարսանիքի շոր լինի Շաթրիզի համար: Խոսք ընկավ սապոնի մասին:

— Որ գլուղը կրակ տան, ասեն կես գրվանքա սապոն հանեք, չենք կարող: Շորերը մոխրաջրով ենք լվանում...

Ջարմանալի տներ կան Շաթրիզում: Տան միայն մի պատն է երևում, ցածլիկ դռնակով: Երեք պատը հողից է, կտուրներին՝ թփեր, մասրենի, վայրի տանձ: Կարմիր քարից են տները, և երբ ներս ու դուրս են անում, անծանոթին այնպես է թվում, թե նրանք ժայռի փշակի մեջ են մտնում վամ գետնի տակ, մի աղվեսաբուն, կտուրից դուրս գալու համար: Նույն դռնից մտնում են եզն ու այծը: Տնից տուն շատ նեղ արահետ է, կողքերին փշի թփեր: Կարծես ամեն տուն առանձնացած է ապրում, հարևանի մոտ փնալու հարկը շոնի, դրա համար էլ ճանապարհ չի շինել: 20

Տուրքը հավաքել են: Շաթրիզը հիմա էլ զարմացած է, թե ինչպես են խմանում հարկատուների անունները, ինչպես են հարկ որոշում: Հարկահանը երբ հասել է Շաթրիզի բարձր քարի գլխին, ցաքուտի ետև պահված տնակին, շները հաշել են, տան տերը վերից ձայն է տվել, թե «վ է եկողը»: 30

— Կառավարութեան մարդ է, շնորք պահիր,— պատասխանել են ներքեկից:

— Կառավարութունն է՞լ հասավ էս քարին,— ձայն է տվել տան տերը և շնորին բանտարկել գոմում:

— Շնորհակալ ենք շուրայից, որ էս ձորերում դինջութուն է պահում: Բայց էլ ուրիշ լազաթ չենք տեսել:

Լսել են, որ կա շուրայի իշխանութուն, դրա սարսափից են շքացել անտառի ավազակները: Բայց Շաթրիզում շուրա դեռ չկա, ոչ էլ համն են առել:

10 Շուրայի իշխանութեան միակ ներկայացուցիչը Շաթրիզի համար անտառապահ Շաֆի բեյն է, մի հին գայլ, որ իրեն այդ ձորերում նույնքան ազատ է զգում և ինքնիշխան, որքան արջն անտառի թավուտներում:

Հիմա էլ նա բեյ է, Շաթրիզը՝ ուհաթ: Բեյի ձին գարի պիտի ուտի և ափսոսանքով գարու տերը պիտի նայի ձմեռվա պաշարին: Ո՞ւմ գանգատվեն: Առայժմ Շաֆի բեյի թաթն ավելի մոտ է, քան մի ուրիշ ձեռք, որ մի օր սուր դանակով այդ թաթն արմուկից պիտի կտրի:

Նկատելի էր, որ երկյուղով են գանգատվում: Քաշվում էին սկզբում, հետո բացվեցին: Իրար սիրտ էին տալիս և հազար անգամ խնդրում մի ելք, մի միջոց, իրենց ձայնը լսելի անելու ձորերից դեն, հայտնելու, որ մի ամբողջ գյուղ խեղդվում է աղբատութեան ճիրաններում, մարդկային պատկերն է կորցնում, արնաքամ լինում, օրն ի բուն կոպում փուշի, քարի հետ, փշերն արմատախիլ անում, գարի ցանում, եզան հետ հավասար կալը ծածում, կրում շալակով և բռան տակ մտածում, թե ձմռանը սոված չպիտի՞ մնան կինն ու երեխան:

30 Մի տեղից ինքնաեռ ճարեցին: Գյուղում մի հատ կոտորած, ժանգոտած ինքնաեռ կա: Մի բանի անգամ լվացին, միջից սարդի ոստայն հանեցին: Երեկ տարիներ առաջ մարդըն առաջին ինքնաեռը հնարելիս նրան այդ կերպ է պատկերացրել՝ մասերն անհամաշափ, անտաշ ու հաստ:

Կանայք փսփսոցով բաժակների հոգս էին քաշում: Մեկը կտուրից կտուր էր անցնում՝ թեյի բաժակ կամ պնակ ճարելու: Բոլորն էլ բոբիկ էին, երկար շրջազգեստով, թի-

կունքին տանը գործած բաճկոն, որի ծուպերից կախ էին արծաթ դրամներ, ապակու կտորտանք, ուլունքներ:

Քայլելիս զննում էին արծաթ ուլունքները, բարձրահասակ էին երևում և բարակիրան, կոանում էին, նայում ինքնաեռին, փշում: Թվում էր, թե սրբազան ծես են կատարում, ծունկ են շոքում ինքնաեռի պղնձե կուռքի առաջ և համբուրում նրա ժանգոտ ունկերը:

• • •

Հեռանում ենք, նորից են խնդրում հողի մասին: Ո՛չ, չեն խնդրում, աղերսում են: Հարկավոր չեն արցունքներ, համոզելու, որ աղերսն անկեղծ է և խորերից:

10

Վերջին տան առաջ, կտուրի շվաքում, պառկած է մի հիվանդ, գլխին կեղտոտ շոր, նույնքան կեղտոտ ու կարկատած վերմակի տակ: Գլխատակին խոտի խուրձ է, վրան գառան մորթի:

Հիվանդի ոտքին վերքեր կան, ծունկը շի կարողանում ծռի: Վեցերորդ ամիսն է՝ պառկել է անօգ, մտքում մահը, որ ավելի հեշտ է թվում, քան ձմռան սոված մնալու սարսափը, երբ եղունգներով էլ քերծի, Շաթրիզի քարերը մի բուռ կորեկ չպիտի տան: Անցնում են արևոտ օրերը, կտուրի շվաքից նա տեսնում է, թե ինչպես ամպ է նստում սարի գագաթին, ամպի հետ էլ աշնան սկիզբը:

20

Պատմում է վերքից, լաց է լինում, բայց աչքերը չեն թաքանում: Կծկում է դեմքը, շրթունքները ծովոտտում, արագ-արագ թարթում է արտևանունքները, բայց աչքերը ցամաք են:

Փոստի վրա, հիվանդի գլխավերև, նստել է դեղին մազերով մի մանուկ, թաշկինակի չափ՝ սպիտակ շապիկն ուսին: Զարմացած մերթ մեզ է նայում, մերթ հորը և ձեռքին բռնած բնկուղենու տերևներով քշում ճանճերը հոր դեմքից: Ահա մամը ոսկրացած դեմքով, աչքերը դեղին, ցամաքած շրթունքներով ցավի մասին է պատմում: Կողքին կանաչ մի շյուղ. մահվանն այնքան մոտ, և միամիտ, առանց հօգս:

30

Մեկը մեզ ճանապարհն է ցույց տալիս: Բարձրանում ենք մի անգամ էլ սարն ի վեր, իջնելուց, սարն իր ետև է առնում Շաթրիզը, բարձրահասակ կանանց, աղքատությունն ու երե-

խան, ընկուզենու տերևները ձեռքին: Նոր վերելք, նոր ձորեր
և անվերջ անտառ:

Այժմ հեռու եմ Շաթրիզից: Գուցե Շաֆի բնի ձին նո-
րից է գարի ուտում Շաթրիզում, իսկ վերմակի տակ մի երեխա
կրծում է կորեկ հաց և միտք անում, որ աշխարհը Շաթ-
րիզի սարից դեմը չի անցնում և այդ աշխարհում ամենից լավը
հայրենական արջաբունն է և կորեկ հացը:

10 Եվ երբ հիշում եմ հեռու ձորերում ընկած Շաթրիզը, Սյու-
սանի անտառները, ինձ անպես է թվում, թե դեղին մազերով
մի մանուկ մոլորվել է անտառի թավուտում, ընկնում է, վեր
կենում, բարակ մատներով բռնում փշերից, նորից քայլում:

Սև մի արջ, Սյուսանի բրդոտ մի արջ, ընկած կաղնու
փշակից դուրս է եկել և փափուկ թաթերի վրա հետևում է ման-
կան, պատրաստվում թաթով բամփելու նրան:

Դրանից է, որ ուզում ես բարձր, շատ բարձր կանչել օգ-
նություն:

ԾԱՆՈՔ ԲԱԿԸ

Ես մի անգամ էլ տեսա ժանոթ քակը: Դարպասով ներս մտնելիս թվաց, թե պիտի մոտենար մշեցի Աբրոն՝ ծեր դոնապանը, պիտի հարցնեք, թե ո՞ւմ եմ ուզում տեսնել: Դարպասի մոտ ոչ դոնապանը կար, ոչ նրա տախտակյա տնակը:

Ինչքան փոխվե՛լ է քակը... Նոր մարդիկ են անց ու դարձ անում, և այնտեղ, որտեղ առաջ դուք շարք էիք կանգնեցնում ձեր «սան»-երին ժամ տանելու, այնտեղ արևառ դեմքով, ոտաբորիկ պիտոններն են մարզանք անում, կեծացած սալքարերի վրա թմբուկի զարկերի տակ քայլում:

10

— Մե՛կ, երկու, ա՛ջ, ձախ...

Այն ժամանակ, երբ մեր շարքերը սագերի պես օրորալով, գլուխները կախ, դեմքերին ձանձրույթ, ձգվում էին առվի մոտ բուսած լորենու ստվերից մինչև վանքի պատերը, դուք էլ հետևում էիք մեր շարքերին, ձեր քայլերն էլ առանց շափի, առանց թմբուկի զարկերի: Ինչ ծիծաղելի կլինեք, եթե մեկը հրաման տար.

— Մե՛կ, երկու, ա՛ջ, ձախ...

Գիտե՞ք, որ մեր ամբողջ վյանքը հիմա ուրի՞մով է, զարկերը շափով, դոփյունը շեշտակի: Իսկ առաջ, հենց այս նույն քակում, դպրոցի կամարների տակ դոփյուն չկար, խաղաղ էր, ինչպես վանսեկան խուց: Մեզին ազդարարի զանգերն էին ծլնգում, սկսում էր օրը՝ երեկվա նման:

20

Բակում լորենիներ վան: Այն տարիներում էլ ամեն զարեան կանաչում էին ծառերը, և երբ դասարանում մի վարդապետ մեկնում էր «Կոտնթացոց թղթի» խմաստը, բաց պատուհանից շատ աչքեր էին նայում լորենու ճյուղերին, որոնց վրա

սև սարյակները ոստյուններ էին անում, պահվում կանաչ սա-
ղարթի մեջ: Իսկ մի աշակերտ զլուխը կախ, հայրսուրբից ծա-
ծուկ կարդում էր ծնկների վրա դրած «Էրֆուրտի ծրագիրը»:

Գարնան այդ օրերը... դուք ամեն օր ցեխապատ պարիսպ-
ների վրա ճեղքեր էիք տեսնում, անցքեր, որ ձեզնից ծածուկ
ձեր աշակերտներն էին փորել (դուք նրանց «սան» էիք ասում)
և անտառ փախել, քանի որ երկաթի դռների մոտ կանգնած
մշեցի Աբրոն սրբազան տեսչից հրաման էր ուզում:

10 Սարերի հողերում այժմ բամբակ են ցանում: Գիտեմ,
որ այժմ էլ զարմանում եք, թե ինչպես շոգեզուլթանի փայլուն
խոփերը փափուկ հողն են շուռ տալիս: Միրում էիք արորը՝ մի
զույգ գոմեշ լծած, մաճկալին՝ կեղտոտ թաշկինակը ճակատին,
ճիպոտն օդում ճոճելով:

Եվ երբ լծի վրա նստած, բեզարած մի երգ էր մրմռում,
դուք ժամերով կանգնում, նայում էիք նրան: Զեզ այնպես էր
թվում, թե դեռ ողջ ևն ուստանիկ իշխանները, դուք լսում էիք,
թե ինչպես արքայազնի բատրակները արարատյան շամբուտ-
ներում վարազին են հալածում:

20 Մարմին էր տալիս արևը, այնքան ցածր էր խոնարհ-
վում, ասես թաղվելու է տափարակի եղեգնուտում, ամպերն
արևմուտքում վառվում էին, մեկը՝ ծիրանագույն, մյուսն ար-
նագույն, կապույտն անափ ծովի նման էր երևում, հուր-հու-
րին տվող ամպերը գոնավոր կղզիներ: Դուք նայում էիք, և
ձեր շրթունքները իրիկվա աղոթքի պես կրկնում էին.

— Ո՛ր տարբ ինձ զծովան ծխանի և զառավոտն նավա-
սարդի...

30 Իմ խեղճ ու միամիտ վարժապետ, այդ ձեր սիրած հնօրյա
երգն էր: Եվ երբ դառնայիք, լճի ափին, լորիների տակ հաստ
հատորի էջերում խորատուզված ձեր «սան»-ին դուք պիտի
պատմեիք Փավստոս Փյուզանդից, և ձեր շեմքին երանության
ժպիտը պիտի փայլեր, մայր մտնող արևի պես:

Ասում են այժմ, երբ տրակտորն եք տեսնում, դուք շրջում
եք ձեր երեսը և տոնն վերադառնալուց պատուհանից նայում
Արարատյան դաշտին: Լորենիներ չկան լճափին: Կինեին էլ,
նրանց շվաքի տակ դուք չէիք տեսնի և ոչ մի «սան», որին
պատմեիք Փավստոս Փյուզանդի մասին:

Վաղուց, շատ վաղուց շէի եղել: Եվ երբ վերջին անգամ դուրս եկա դարպասից, Արրոն դուան մտտ էր: Այն օրից հետո այնքան շատ վայրեր եմ տեսել, այնպիսի օրեր եմ անցել, խորխորատ, հասկանո՞ւմ եք, մի խոր անդունդ է դժված, որի մյուս ափին եք մնացել դուք:

Բայց հերիք էր, որ բաց դարպասով ներս մտնեի, աչքիս քնկներ լայնարձակ բակը, պատուհանները երկաթ ճաղերով, «հյուսիսային» դռները, որ բաց էիք անում գարնան սկզբին,— հերիք էր, որպեսզի դուք ցցվեիք աչքիս առաջ, դռների մոտ:

Ձեզնից հեռանալուց հետո այնքան շատ երբեմնի պալատներ եմ մտել, վազելով եմ սանդուղքները բարձրացել, արքայական ընդարձակ սրահներում ինձ ազատ եմ զգացել, ասես մորենական հին խրճիթն էր: Բայց երբ բաց դարպասով ներս մտա, պահ մը կանգ առա, դարձացա, որ կապույտ դարպասները բաց են, մշեցի դռնապանը չկա:

Բարձրացա սանդուղքներով: Մեր ժամանակ էլ սանդուղքի երկաթները մաշվել էին, ծովել, տախտակները տեղ-տեղ գոգացել էին՝ շատ կրունկ էր քսվել տախտակին: Պատերն սպիտակ էին ներկած: Կրոր սրահը տեսա, որին «հանդիսարան» էինք ասում: Լենինի մեծադիր նկարը տեսա ոսկեգույն շրջանակի մեջ:

Հիշո՞ւմ եք՝ այդ շրջանակի մեջ սիրունատես մի կնոջ յուզաներկ նկարն էր. կնոջ գրկում՝ փամփրիկ երեխա, ձեռքին՝ շուշան: Ամեն մի նորեկի դուք բացատրում էիք, որ այդ կինը տիրամայրն է, շուշանն անարատ հղության նշանն է: Գիտեի՞ք դուք, թե ի՞նչ էին մտածում ձեր բեղ ու մորուսով «սաները» ամեն իրկուն նկարի առաջ, երբ մեկը կարդում էր «կանոնք պարկեշտության» և բոլորը մտածում «անարատ» հղության մասին:

Չկա հին շրջանակը: Չգիտե՞ք արդյոք, թե ո՞ւր է շուշանով կինը: Դուք տեսել եք մենիկի նկարը նոր շրջանակի մեջ, տեսել եք և դուր չի եկել ձեզ: Այդ մասին փնձ պատմեց մի կոմսոմոլ տղա:

Սանդուղքներից իջնելիս աչքիս ընկան հին զանգերի կեռերը, խրված առաստաղի գերանին: Դուք զանգահարում էիք,

10

20

30

երբ հարկավոր էր եկեղեցի գնալ: Եվ երբ պատմեցի այդ մասին, պիտոններն երբ ծիծաղեցին:

Բակուն Գամառ Քաթիպայի բրունգե կիսանդրին մնում է դեռ: Դուք պատմում էիք նրա մասին և ավելացնում, թե ի՞նչ է կամեցել նա, երբ ասել է. «Այս փմ մի հատիկ իղձը կատարեք»: Եվ եթե մեկը հարցնեք, թե ինչո՞ւ կիսանդրին աչքեր չունի, խոռոչները պարապ են, դուք պիտի ասեիք հարյուր անգամ կրկնած խոսքը՝ քանաստեղծի աղամանդյա աչքերի մասին:

10 Ծեսա բրունգե կիսանդրին: Աչքի խոռոչներում սարդը ոստան էր հյուսել, քողով պատել աչքերը, որովհետև նա էլ ձեզ նման մտքով տկար է, հասկանալու նոր օրերի խմաստը: Գլխին բրունգե մազերը ստռել էին, բարդ-բարդ փակչել իրար, ասես պոռեղ սապնոտ մազերն էր սանտրել:

Ասում են, առաջվա պես դուք գալիս եք, կանգնում արձանի առաջ, կարդում այն, ինչ անգիր գիտեք և մատով քերում ցեխի շիթերն արձանի կարմիր քարերից: Երբ քերում եք ցեխը, թիկունքով դառնում եք մի այլ արձանի, որ նոր է, ավելի բարձր և որի տակ թաղված մարդկանց ռմի հատիկ իղձը» մեր օրերն էին: Նրանք խորթ են ձեզ, անհարազատ: Զարմանում եք, թե ինչո՞ւ ամեն իրիկուն մի կարմիր ճրագ արձանի գլխից մանկան աչքի պես վառ թարթում է:

20 Այնպես հարմար է ձեզ բրունգե կիսանդրին, սազական ձեր հոգուն, և երբ կանգնում եք անշարժ, գրեթե նայում, դուք էլ մի կիսանդրի եք, մեռած քար, ձեր աչքերին էլ սարդը վաղուց ոստայն է հյուսել: Համոզված եք, որ ձեզ էլ թաղելու են վանքի մոտ, լորենու տակ, և ոչ ոք չպիտի գա ձեր շիրմաքարի ցեխերը քերելու:

* * *

30 Շոգ էր, շոգին խաղաղ էր բակը, անց ու դարձ անող շկար: Եվ եթե օձերը դուրս սողային բներից, խաղային պարիսպների վրա, ոչ մի ոտնաձայն նրանց չպիտի փախցնեք:

Անցա բակով: Ահա ծառուղին... Հիշո՞ւմ եք՝ տասը տարի առաջ էր, է՛լ ավելի: Այստեղ «խմբեր» կային, «գեներ ու գրահից թնդում էին լերիներ» և դուք ամեն մի «սանի» պատմում էիք «Շուշանն Շավարշանա», դրվագներ Ավարայրի օրե-

բից, ավագի վրա գծում էիք կորած քաղաքներ, գովում Բասենը, Ալաշկերտը, որտեղ երբեք դուք չեք եղել: Մեր մանկական հոգիներում ձեր բառերը տղայական երազներ էին ծնում, և մեր ձեռքին բռնած կերոնները մեզ զենք ու նիզակ էին թվում:

Ահա ծառուղին... ավհաստիառը օրհնում է հայ կամավորներին»: Դուք չալիս էիք, փակ մենք ուրախ էինք, որ այդ օրը դաս չպիտի սերտեինք, դուք մեզ չպիտի պատմեիք, որ «Մեծն Բրիտանիան հարուստ է պողպատով ու քարածուխով», երկրորդ ժամին մի ուրիշը չպիտի ասեր Բրքիշո կաթուղիկոսի վարքը: 10

Դուք շատ անգամ եք պատմել, որ Անգլիայում պողպատ ու քարածուխ շատ կա, և երբեք չեք պատմել նրանց մասին, որոնք հալում են երկաթ, զոդում պողպատ: Եվ ինչքան հեռու է ձեր պատմածը մեր օրերի անց ու դարձից, մեր գալիքից:

Հրճվանքից լալիս էիք և շէիք նկատում, թե ինչպես վառած կերոնները թեք էինք պահել, որ մոմը չկաթի մեր շորերին: Այդ օրը մշեցի Աբրոն էլ էր քացակա, և մենք իրիկվա դեմ անտառում գիծ մոզիներ էինք:

Վանքի մոտ մարմար գերեզմանաքարեր կան: Գաղթական երկու բիձա քիսաներից ղուլյասար թուփուն հանեցին, թուփունից մի քիչ թափվեց մարմարի վրա, և երբ բիձան ճաքճքած մատերով հավաքեց թուփունը, նրա աչքին չընկավ քարի գիրը՝ «նվագող վշտից հայրենյաց»: 20

Ես ձեզ պատահմամբ տեսա: Նստել էիք կամարի շվաքում, նայում էիք առվի ջրին: Անշարժ էիք ձուլածի պես: Ասես տարիներ առաջ նստել էք այդ կամարի տակ ու գիշեր ցերեկ նայում եք առվի ջրին:

Պառավ ձկնորան էլ այդպես նստում է գետի եզրին, ժամերով աչքերը չռում, հռում մի կետի: Եթե ձեզ այդպես նկարեին, իրավունք կունենային նկարի տակ գրելու «Հոգու խաղաղ խանգարում»: 30

Դուք ինձ խակույն շճանաչեցիք, բայց երբ հայտնեցի ազգս, «հիշում եմ» ասացիք, ժպտացիք: Ձեր բերանի խոռոչում ես ոչ մի ատամ չտեսա: Երևի դրանից էր, որ խոսելիս դուք բառերն ասես լնդերքի տակ ծամում էիք, լեզվով հրում:

Տեսա մատենադարանը: Դուք այնտեղ եք աշխատում, հին ձեռագրերը կարգի եք բերում, համարակալում: Եվ երբ մագաղաթյա մի մատյան եք բաց անում, լուսանցքների գունավոր նախշերին նայում, դուք դարձյալ Բյուզանդիին եք հիշում, ձեր աչքերը մագաղաթի վրա մի հին պատմութուն են կարդում:

Սենյակի անկյունում, մաշված բազմոցի վրա մոռում էր Վանա պառավ կատուն: Դուք ցույց էիք տալիս «նախնական երկրից» մի վավերագիր, և երբ ակնոցները հանեցիք՝ ներսես կաթուղիկոսի նամակը ցույց տալու, ինձ թվաց, թե դուք կույր եք, աչքեր էլ չունեք:

Պարարտամարմին մի փին սև վռաչի տակից նեղլիկ պատուհանների շարքում որոնում էր ծանոթ պատուհանը: Ինչո՞ւ Զանգեզուր չեք ասում, այլ Սյունյաց աշխարհ: Պատուհանից ալեխառն մորուքով մի գլուխ երևաց, ժպտաց: Վուայով կինը դռնակով ներս մտավ: Միբրուքը պատուհանը փակեց, փեղկի ետևից երևաց և վուայը:

Ինչ սառն էր ձեր սենյակում, ձեր բառերը՝ անսահման ձանձրույթ: Հեռանալիս դուք տրտունջ հայտնեցիք, որ նոր սերունդը էլ առաջվա գրքերը չի կարդում, նրանցից և ոչ ոք չի հարցնում այն, ինչ իմաստն է ձեր վշանքի: Ի՞նչ կանեիք, եթե մատենադարանում մագաղաթյա գրքեր չլինեին...

...Երեկոյան քաղաքում հրավառութուն կար: Պղնձե փողերը հնչում էին հաղթական մարշով: Զահեր էին վառել և դրոշների կարմիրը ջահերի լույսով արնագույն էր թվում: Մեկը բարձր ու զիչ խոսում էր պատշգամբից: Պղնձե փողերի հաղթական մարշը արձագանքի պես էր հնչում:

Իսկ դուք տոնական այդ իրիկուն աղմուկից հեռու կարդում էիք հինգերորդ դարի մագաղաթ...

ԿԱԾԱՆՈՎ

Արևը կախ էր ընկել դեպի մայրամուտ, երբ մենք մեր հտևում թողինք Ահնաձորի անտառները և ծերունի անտառապահի վերջին պատմութիւնն այն մասին, թե ինչպես ձմռան լուսնկա մի գիշեր արջը դուրս եկավ կաղնուտից, ինքն էլ բերդանով էր և այլն: Որսորդի սովորական պատմութիւն, որի իրական լինելը դժվար է որոշել, քանի որ վկան արջն է ու լուսինը: Արջը իբր թե վիրավոր փախավ:

Նեղլիկ կածանը, որ անտառի խորքերում հաճախ էր կորչում շոր տերևների մեջ, անտառից դուրս գալուց հետո ավելի լայնացավ, ձիերը փնջոցով բարձրացան սարն ի վեր: 10

Գագաթին Կատարի խաչի սպիտակ ժայռերը մեջք-մեջքի տված բարձր բուրգ էին կազմել: Մարդու աշխատանք չկար այնտեղ, ոչ ոք չէր տաշել սպիտակ ժայռերը: Բայց այնքան նոսր են սրբատաշ պարիսպների:

— Քերժերի գլխին խաչ կար, — ասաց անտառապահը, երբ նկատեց, որ մեր հայացքները դեպի ժայռերն են ուղղած:

— Առաջներում շատ էին ուխտ գալիս: Ետևի կողմից ճանապարհ կա: Մեկ-մեկ բարձրանում են, մտնում քարայրի մեջ: Մուժ քարայր է, ոչ գիր կա, ոչ խաչ: Վերևից, մթին քարատակում, ջուր է կաթում: Էնքան են ման եկել, բայց չեն գտել ջրի ակը: 20

— Խեղ ջուրն ի՞նչ է լինում, — հարցրեց ընկերս անտառապահին:

— Կորչում է քարատակում: Հենց էն ջրի համար են ուխտ գալիս:

Պատմեց, որ գյուղերում հավատք կա, թե Կատարի խաչը

չքերք կանանց արգանդում պտուղ է ծնում: Գալիս են, ոտաբորիկ բարձրանում սպիտակ ժայռի կատարը, շոքե-շոք մտնում քարանձավի մեջ, կանգնում, որ ջուր կաթի մազերին, կրծքին, ձեռներին: Եվ հետո շորեքթաթ դուրս են գալիս:

— Վախենալու տեղ է. ես մի անգամ գնացել եմ: էն տարին...

10 Թփի տակից աղվեսի ճուտը դուրս թռավ, փախավ սարն ի վեր: Անտառապատի խոտքը քերտնում մնաց: Ետևից հո՛յ տվավ, մտրակեց ձիուն, բայց ձին քայլերն էլ շարագացրեց, հայտնելով, որ եթե տիրոջ տարիքը ներում է աղվեսի ետևից վազել, այդ նա սփտի անի տեփական ոտքերով: Մերոնին մի անգամ էլ մտրակեց, հայհոյեց ձիուն: Ձին հայհոյանքն էլ կուռ տվավ:

Մենք տեսանք, թե ինչպես աղվեսը պահվեց քարերի արանքում: Երբ կածանը հասավ գագաթին, ձիերի ոտնաձայնից աղվեսը թաքատոցից դուրս եկավ, մի վայրկյան նայեց մեզ, պոչը հավաքեց ու նորից փախավ, այս անգամ դեպի սարահարթը, որի վրա երևում էին դեռ շհնձած արտեր:

20 Հսկա մի անգղ, արծվի շափ, սպիտակ ժայռերի գլխին թևերին արավ, նախ բարձրացավ վեր, ապա թևերն իրար հավաքած՝ քարի պես ընկավ արտերի մեջ: Անգղը տեսավ աղվեսի ճուտին:

Պայքար սկսվեց, մահվան և կյանքի կռիվ: Մերթ անգղն էր վայր ընկնում, աղվեսը փրցնում էր մի փետուր նրա թևից, մերթ աղվեսն էր պառկում մեջքի վրա, թաթերով պաշտպանվում անգղի մագիլներից ու կեռ կտուցից:

30 Հանկարծ անգղը թևին արավ, թռավ վեր, աղվեսի ճուտը ճանկերի մեջ: Օդում կռիվը շարունակվեց միայն մի քանի վայրկյան, որովհետև անգղը բաց թողեց աղվեսին, պտույտներ արեց և նստեց Կատարի խաչի գլխին:

Աղվեսն ընկավ արտի մեջ: Մի ըոպե հետո վեր կացավ, սկսեց վազել: Տարօրինակ էր վազում, գլուխը մի կողմի վրա թեքած՝ մերթ առաջ էր գնում, ընկնում, մերթ կողքի ծովում, վազում, ասես շէր տեսնում ոչ քար, ոչ թոփ: Անտառապահը հասավ աղվեսին, բռնեց: Մեզ թվաց, թե աղվեսը վազեց նրա կողմը:

Աղվեսի աչքերից արյուն էր կաթում: Անգղը կտցահարել էր աչքերը, հանել: Գրանից էր, որ աղվեսը տարօրինակ էր Վազում: Ոչինչ չէր տեսնում:

Մերունին բաց թողեց աղվեսին: Գլորվելով, գլուխը շարժելով կույր աղվեսը կորավ անտառում:

— Անհրավր միշտ աչքերն է ուտում,— ասաց անտառապահը անգղի մասին:

Շարունակեցինք ճանապարհը: Իրիկնապահ էր, գնալիք տեղը հեռու: Ձիերն էլ էին բեզարել: Կատարի խաշի ժայռերը հեռվում ավելի պարզ էին երևում, ասես սարի գլխին ամպ էր նստել: 10

Ձորում մթնեց, բայց աստղալույսի տակ կարելի էր որոշել արահետը, քար ու խուֆ: Մի ստվեր մեզնից մի քիչ հեռու բարձրանում էր ձորն ի վեր:

Երբ հավասարվեցինք, մթնում հազիվ կարելի եղավ տեսնել մարդու պառավ դեմքը: Այնքան դանդաղ էր քայլում և արագ հեռավոր, ասես շունչը պիտի տար:

— Ի՞նչ մարդ ես, ա՛յբր, ո՞ւր ես գնում,— հարցրի: Կանգնեց, շունչ առավ, հետո պատասխանեց.

— Շինական եմ, հրեն է՛ մեր շենը,— և մահակը մեկնեց հեռուն: Եթե ցերեկ էլ լիներ, դժվար թե հեռվում երևար նրա գլուղը: 20

— Բա ո՞ւր էս կես գիշերին, մեռակ...

— Տաշքենդ եմ գնալու, տղիս մոտ: Հրես լուսնյակ կլինի...— դանդաղ պատասխանեց նա, շարունակելով ճանապարհը:

Մինչև Տաշքենդ այդ շնչով, այդքան թույլ ոտքերով: Դեռ քանի ժամ պիտի քայլեր մինչև հասներ մոտակա գլուղը: Այն հարցին, թե ո՞վ է որդին, ծերունին անորոշ պատասխան տվավ: 30

— Մեծավոր ա... Երկիրիս գործերը նրա ձեռքովն ա անց կենում:

— Ինչի՞ ես գնում:

— Այ որդի, բա իմ հալը տեանում շե՞ս, մի ոտս գերեզմանումն ա: էսօր-էգուց որ մեռնեմ, բա իմ մյուլքիս, կալ ու

մարագիս ո՞վ ա տիրանալու: Քողնեմ, որ շուն ու գել ցրիվ տա՞ն...

Մի բուպե շունչ առավ, հետո ավելացրեց.

— Գա, երեսի ջրով եղածն փրան տամ, ինձ էլ պարտակի հողում, հետո գերեզմանիս ուշունց շտա:

Գյուղում կալ ու մարագ ունի, թթենու այգի, երկու կով, մի եզ: Կինը գարոնճաքին է մեռել, էլ ոչ ոք շունի, որդուց բացի:

— Դե նամակով գրեիր էլի,— ասաց ընկերս:

— Նամակը իմ խոսքիս շի հասնի, որ կանգնեմ, երեսին 10 ասեմ...

Եվ համարյա թե ասաց այն, ինչ մտքում որոշել էր որդուն ասել Տաշքենդ հասնելուց: Խոսքից երևաց, որ նա տրտրնջում է որդուն ուսում տալուց:

— Կողքիս նստած կլինեիր... էդ բոլորը գրքի սևն ու սպիտակը արեց:

Նրան դժվար էր և՛ խոսել, և՛ ձորով բարձրանալ: Դժվար էր նաև քայլել ձիերի հետ, թեկուզ ձիերն էլ կամաց էին փոխում ոտքերը: Մի քիչ հետո մարդն սկսեց ետ մնալ: Մեր և նրա միջև տարածութունը աննկատ շատացավ, շփտեմ լսե՞ց 20 նա մեր մնաս բարովը:

Մի անգամ էլ իջանք, մի այլ ձոր անցանք, բարձրացանք և ուշ գիշեր լուսնի լուսով դիմացի գյուղը տեսանք: Շան հաշքը մեզ ամայի ձորում թվաց որպես քաղցր կանչ:

Տան տերը ճրագը վառեց: Ճրագի տակ գետնին փռած կարպետը տեսանք և շարդված, բեզարած պառկեցինք կարպետի վրա:

— Տեսնես հիմի որտեղ է էն մարդը,— ասաց ընկերս:

— Բա աղվեսը կույր աչքերով,— ձայն տվավ ծերունի անտառապահը սենյակի մյուս անկյունից:

30 Մութ ձորեր, անտառ, նեղ արահետ... Աղվեսը թաթով արնոտ աչքերն է սրբում: Մի մարդ դանդաղ քայլելով գալիս է կանգնում, շունչ առնում, արահետով բարձրանում: Կատարի խաչի բարանձավում գիշեր-ցերեկ անհայտ ակնից պղտոր ջուր է կաթում, կորչում քարերի մեջ:

Առավոտը սովորական էր: Աշնան ակզբի առավոտ դյու-
ղում, մի քանի կալում եզները կամներն էին քաշում, մեկը
ուռի ճիւղտներից բթոց էր հյուսում, բոստաններում կարտո-
ֆիլ էին հավաքում:

Հողի վեճեր, գանգատ: Ծառը շվաք է անում հարևանի
արտին, տերը ծառը չի կտրում, ամեն օր կռիվ, խոսք ու
զրույց: Վեճը հին է, ամեն տարի ծառը տերևակալելու հետ էլ
վեճը նորոգվում է, աշունքադեմ վերջանում: Իսկ ծառն ամեն
տարի ճյուղ է տալիս և փթերով ընկույզ:

— Նա ինձ համար ծառ չի, որդու տեղ ա... Բա ես նրա 10
ճյուղին կարամ կացնով տալ,— ասում է տերը:

— Ես կտամ, ես,— կանչում է արտատերը:

— Դու իմ գլխին էլ կտաս, քեզ տ՛վ կթողնի...

Մեկը Պետապից էր գանգատվում: Հագին անզլիական շի-
նել էր, վրայից ծվենները կախ շոփա: Պետապը տոկոսներն
ուզում է, ինքն էլ չքավոր է, միջոց չունի:

Հետո, գյուղից դուրս գալիս, նախագահը պատմեց Պե-
տապից գանգատվողի մասին: Երկու օր առաջ նա դատարանի
որոշմամբ քսան ուրբի տուգանք էր տվել մի կնոջ անպատկառ
հայհոյելու համար: Դատարանում առաջարկել էին հաշտվել, 20
ներողութուն խնդրել կնոջից տուգանքից ազատվելու համար:
Կինը համաձայնվել է: Բայց նա կանչել է.

— էդքան էլ կտամ, էդ լիբբի առաջ խոնարհվիլ չեմ...

Կանչել է և ասել մի ուրիշ ծանր խոսք, որի համար կրրկ-
նակի պիտի տուգանեին, քայց դատավորը վճռի ընթերցումը
հերիք է համարել:

Գյուղից ներքև, տափարակի վրա, ֆուրգոնի շուրջը
խմբվել էր բազմութուն: Օտարութուն էին գնում մոտ տաս
հոգի՝ կին, երեխա: Ոմանք լալիս էին, զոգնոցի ծայրով ար-
ցունքները սրբում և արցունքի միջից բարենեւի հիշում նրանց, 30
որոնք հեռու գնացին մեկէլ տարին:

Մի պառավ կին հարսին է ճանապարհ դնում թոռան հետ:
Պատվիրում է իրերին լավ նայել, երեխային տաք պահել:

— Իվանին ասա, որ ցելերը ցաքելիս անպատճառ գա...

Բ՛հ կարանք մի եզ առնենք:

Մյուսը խանգարում է ակետորոշ խոսքը, մի կապոց ձա՛վար ու շորաթան մեկնում հարսին՝ հանձնելու իր աղջկան, որը նույն քաղաքումն է ապրում: Այդ կի՛նը ուրիշ պատվերներ էլ է տալիս. սկեսուրն առիթից օգտվելով, մոտենում է ու հաղարհորդ անգամ համբուրում թոռան թշերը: Համբուրում է այնպես պի՛նդ, որ պոռչների տեղը կարմրում է: Իսկ տղան ֆուրգոնում դարսած իրերի վրայից նայում է նրանց, որոնք խոնվել են ֆուրգոնի շուրջը:

20 Ձիերն իրար բաշ են շոյում, զրնգում են նրանց վզից կախած զանգուլակները:

— Դե՛, շուտ, եղացանք, օրը մթնեց,— կանչում է ֆուրգոնի տերը բլրակով արագ իջնող մեկին, որը հենց ճանապարհվելու ժամանակ հիշել էր իր մի քարեկամին, ետ վազել նրան էլ տեսնելու:

Գնացողներին բողբո՛ն են սիրտ տալիս, գնացողները իրենց վերջին ցանկովթյունն են հայտնում, որ հետո արբուլթյամբ պիտի կատարեն գյուղում մնացողները և ամեն անգամ հիշելիս թառանջ քաշեն:

20 Մի կին ֆուրգոնի ճաղերին մոտեցավ, մեկը ներսից կնոջը մոտեցրեց երկու տարեկան երեխայի: Ճաղերի ետևից մանուկը բանտարկչալի էր նման: Սակայն քանտարկչալը ժպտում էր, թաթը մեկնում կնոջը:

Բլրակով արագ իջնողը մոտեցավ, տեղավորվեց: Ֆուրգոնի տերը մտրակը շարժեց, ձիերը ուժ արին, ֆուրգոնը շարժեցին: Կանչերը, ձեռքի շարժումներն ավելի շատացան: Մեկը բարձրաձայն հեկեկաց: Մի քանիսը կախ ընկան ֆուրգոնի ետևից և այդպես նորից կրկնեցին այն խոսքերը, որ շատ անգամ էին ասել:

30 Կինը ֆուրգոնը շարժվելիս քայլեց հենց ֆուրգոնի հետ: Ետևի մեծ անիվը դառնում էր, երբեմն քսվում կնոջ շորերին: Ճաղերի ետևից երևաց մանկան գլուխը: Ներսից մի ձեռք կոացրեց նրան այնքան, որ մայրը համբուրեց, ձեռքերը փաթաթեց նրան, իսկ ֆուրգոնը շարժվում էր, ետևի անիվը երբեմն քսվում էր կնոջ շորերին, ֆուրգոնի հետ քայլում էր և կինը:

Ետևից մեկը կանչեց, որ հեղիք է: Կինը հեռացավ, ֆուր-

գոնն անցաւ: Լաց էր լինում և լացից ուսերը ցնցվում էին: Սպասեցին այնքան, մինչև ֆուրգոնը ծովեց ձախ, ծածկվեց բլրակի ետև: Դանդաղ ու ծանրաքայլ վերադարձան ետ:

Այդպես դառնում են գյուղի գերեզմանատեղից, խումբ-խումբ, գլուխները կամացուկ օրորալով: Ամենից վերջին քայլում էր այն կինը, որ վերջին համբուրողը եղաւ: Կինը մի քանի անգամ ետ դարձաւ, նայեց: Ֆուրգոնն էլ չերևաց:

Մեր ճանապարհը դարձյալ զառիվայրով էր: Մերոնեի անտառապահը մեզ ցույց տվեց ճանապարհը, մի քանի անգամ ասաց, թե Կարմիր քարին հասնելուց պիտի աչ գնալ, մոտեցաւ, ձեռք տվաւ մեզ: 10

— Աղվեսը, կույր աղվեսը,— հիշեցրեց նրան ընկերս: Անտառապահը ծիծաղեց:

— Գիշերս գալերը երևի ցրիվ են տվել... Կույրը շատ չի ապրի:

Սպասեց այնքան, մինչև բարձրացանք զառիվայրի գլուխը: Հետո ձին թեքեց գյուղի կողմը:

Այդ երկրում մի շարաթ մնացինք: Վերջին սարի գագաթից երևաց ընդարձակ հարթությունը, որի հորիզոնը հալվել, խառնվել էր երկնքի կապույտին: Թվում էր, թե կապուտակ ծով է և ոչ ցամաք տափաստան: 20

Զիհրը ետ տարան ծանոթ սարերը, քարատակ գոմերը, ուր ծնվել են նրանք, կերել զարի ու սարի խոտ և վարժվել մագլցելու քարափնները, փնչոցով զառիվայրը բարձրանալու:

Մի քիչ ներքև լայն ճանապարհին կանգնել էր փոշոտ մեքենան, մենակ մնացած բուղայի պես մոռնում էր:

Փակում էր աչքերդ, և քեզ թվում էր, թե նավակ է օրորվում ջրերի վրա: Մեքենան փոշու ամպ էր թողնում հսկեից և ծածկում եկած ճանապարհը: Ավազի հատիկները անխնայորի տակից թռչում էին հեռու: 30

Ճանապարհի կեսին մեքենան դանդաղեցրեց ընթացքը: Մի ֆուրգոն անիվը շարդել, մնացել էր: Տերը ձին նստել, գնացել էր նոր անիվ բերելու:

Մեքենան շատ զգույշ, համարյա սողալով, անցավ ֆուրգոնի կողքով: Կապոցների վրա նստողները նայեցին մեզ: Մեկը թե՛

— Ա՛յ մաշին... ի՛նչ եմ ասել...

Ֆուրզոնի ծայրին նստել էր Տաշքենդ գնացող ծերունին։
Փոշի էր նստել փափախին, սպիտակ միրուքին, շորերին։

Երբ մեքենան կամացուկ անցավ ֆուրզոնի կողքով, մի
վայրկյան միայն տեսա նրան։ Փոշոտ արտևանումքի տակ ինձ
թվաց, թե աչքի պարապ խոռոչներ են։ Մերումին տեղից
չշարժվեց։

ԿՈՒՐԻՍԵՑԻ ԱՆԴՐԵԱՍԻ ԴԻՄՈՒՄԸ

Այս պատմությունը սկսվում է այն օրից, երբ հողաբա-
ժանությունը հասնում է Մեղրու գավառի Կուրիս գյու-
ղին: Հողաչափը ջորու վրա նստած հենց որ հասնում է գյուղ
և իր թղթերը ցույց տալիս, հավաքվում են, ժողով անում,
հողկոմ ընտրում, հողերի ցուցակը կազմում: Մյուս օրը
սկսում են հողերը չափել:

Այսպես տեսնում է տասներկու օր: Կուրիսը փոքր գյուղ է,
ունի մոտ հիսուն ծուխ: Հողն էլ քիչ է, շնչին հասնում է 10
800 քառ. սաժեն: Տասներկու օրում հողերը բաժանելուց հե-
տո, հողաչափը համայնքի ժողով է գումարում: Կուրիսի հա-
մայնքը հաստատում է հողերի բաժանքը, չքավորները ուրա-
խություն արտահայտում են արձանագրությունը: Ով մինչ այդ
հող չունեի, ուրիշի հողերն էր վարձով վարում, հող է ստա-
նում:

Թղթերը խուրջինի մեջ դրած, հողաչափը նստում է ջո-
րին, մնաս բարով ասում Կուրիսին, ուրիշ գյուղ գնում: Այս-
պես անցնում են ամիսներ, մոռացվում է Կուրիսն էլ, նրա
հողաբաժանքի պատմությունն էլ:

ԿՈՒՐՈՍԻ ՀՈՂԱԲԱԺԱՆՔԸ

20

Աշունքվա մի օր փոստը բերում է մի դիմում, վրան
գրած՝ «Հայաստանի Գերագույն Խորհուրդին»: Փոստի ցրիչը
միտք է անում, թե այս ինչ «Գերագույն Խորհուրդ» է և որո-
շում է, որ երևի Կենտգործկոմը կլինի: Եվ իսկապես ցրիչը
չի սխալվում, գիմումը պիտի հասնի հենց այդպեղ:

417

Ո՞վ էր գրել դիմումը և ինչի՞ մասին: Կուրիս գյուղացի Անդրեաս Նովհաննիսյանը նույն գյուղի հողաբաժանքի մասին: Կարդում են, զարմանում: Այսպե՞ս էլ դիմում, մի՞թե այդքան անարդարություն է եղել հողերը բաժանելիս: Ի՞նչ էր գրել կուրիսցի Անդրեասը իր սեփական ձեռքով, թղթի շորս երեսի վրա:

«Կուրիսում հողերը շափելիս ոչինչ չեն խնայել: Քարերը, քոլերը, պատերը, անպետք հողերը շափել են, բաժանել»:

- 10 Եվ դրանից տուժել է «չբավոր դասակարգը», հողաշափը ոչ մի ուշադրություն չի դարձրել գյուղացոց բողոքին, սպառնացել է ծեծով, գյուղացիք էլ սուս են արել, համաձայնվել բաժանքին: Այդ գրելուց հետո Անդրեասը իր ցավից է գրում.

«Ինձանից խլեցին իմ սեփական հողերս, որոնք ինձ ապրուստի միջոց էին տալիս: Հինգ հարյուր վազ ունեցող խաղողի այգի եմ տվել, կարծելով թե ձեռք կվերցնեն ինձանից: Սակայն որտեղ... Առանց իմ կամքը հարցնելու խլել են ինձանից ամենալավ հողերս, ինձ զրկելով ապրուստից...»:

- 20 Դիմումի վրա, վերև բերած այս խոսքերի դիմաց «Գերագույն խորհուրդից» մի ընկեր կարմիր մատիտով նշանակել է «չբավոր դասակարգ», երևի քննիչին հիշեցնելու համար Անդրեաս Նովհաննիսյանի այն խոսքը, թե «հողաշափը չբավոր դասակարգին ճնշել է»:

Հողաբաժանքի դեմ բողոքելուց հետո կուրիսցի Անդրեասը ավելորդ չի համարել նկարագրել գյուղի ներքին կյանքը, նրա պակաս կողմերը, որպեսզի կարդացողի համար պարզ լինի, թե ինչքան ծանր դրություն մեջ է Կուրիսը և ինչքան արդար է ինքը՝ Անդրեասը:

ԳԱՅԼԵՐՆ ՈՒՏՈՒՄ ԵՆ ԳՅՌՆԵՐԻՆ

- 30 «Մեզանում այն է նկատվում,— գրել է Անդրեասը,— որ շուրս պղտորել ես, պետք է քեզ ուտեմ»:

Երևի ուզում է հիշեցնել գայլի և գառան պատմությունը, ցույց տալու համար, թե ինչպիսի գայլեր կան Կուրիս գյուղում, գայլեր, որոնք մի պատճառ են փնտրում Անդրեաս Նով-

հաննիսյանի «չքավոր դասակարգին» գառան պես կուլ տալու: Դրանից հետո Անդրեասը գրել է.

«Տեղն է գալիս Միքայել Նալբանդյանի խոսքը, թե ազատություն կա, բանտից շատ նեղ է: Կուրիսում մի ահռելի ուսումնարան ենք կառուցել և ես 2 տարի տուժել եմ, մեջքիս քաճ ու քար կրելով, որից ավելի քայքայվել եմ»:

Եվ դարձյալ խոսքը շուռ է տալիս հողի մասին:

«Իսկ հողը շնչի են վերածում: Խնդրում եմ հինգ շնչի իսկական հող թողնել ինձ: Հավատացնում եմ, որ իմ հողերս քնձ համար իբրև կանոնավոր ապրելու միջոց շատ քիչ են: Նաև մի սխալ, որ ինձ տվել են շորս շնչի, այնինչ ես հինգ շունչ եմ»:

Այս բոլորը կարդալուց հետո մարդ ակամա զարմանում է այն հողաշափի վրա, որ ջորու վրա նստած եկավ, շափեց ու գնաց և գրեց, թե հողաբաժանքը կանոնավոր է, և բողոք չկա:

ԱՆԴՐԵԱՍԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԶՔԱՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻՆ

«Զեզանից բարձր էլ ո՞ւմ դիմենք,— հարցնում է Անդրեասը «Գերագույն Խորհրդին» և ավելացնում.

— Տեղն է գալիս Ռաֆայել Պատկանյանի «Վանեցոց գանգատը». «Աստված, որ դու շատ բարի ես, մենք վար, դու վեր, շատ հեռու ես, խոշոր գործերով կպարապվես, ապա որին մենք գանգատվենք»:

«Վանեցոց գանգատն» անելուց հետո կուրիսեցի Անդրեասը բողոքում է գյուղում կատարված մի շարք գողությունների մասին, որի դեմ խորհուրդը ոչ մի միջոց ձեռք չի առել: Օրինակ, ամառվա ընթացքում նրա պատշգամբից գողացել են մի կարպետ, գողն այդպես էլ անպատիժ մնացել է:

«Մեզանում օրենքները գոյություն չունեն, թալանում են ամեն բան ազատ կերպով: Հույս ունեմ, որ Գերագույն Խորհուրդը ուշադրություն կդարձնե այս շարիքը վերացնելու»:

Ներողություն խնդրելով, որ երկար է գրում, Անդրեասը, գանգատվելով գյուղի... հավերից («ինչո՞ւ հավերը չեն բանտարկում, որ քանքսը չփշացնեն»),— գրում է կուրիսցին) հայտ-

նում է, որ փոստի ծախքը չկարողանալով գտնել, դիմումն ուղարկում է շատ ուշ:

Հե՛յ գիտի «չքավոր դասակարգ»:

ԳԻՄՈՒՄԸ ՀԱՍԱՎ «ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԳԻՆ»

Հենց որ գործավարը այս դիմումը դնում է «Գերագույն Խորհրդի» մի ընկերոջ սեղանի վրա և այդ ընկերն էլ ուշի ուշով կարդում է կուրիսցու գրածը, հենց նույն օրն էլ կարգադրվում է քննել, տեղում մանրամասն ստուգել, թե ինչե՞ր է կատարվում Կուրիսում, ի՞նչ թալանի մասին է խոսքը, ո՞վ էր այն հողաչափը, որ ցեխը ձյունով ծածկեց, ձյունը հալվեց ու տակից ցեխը երևաց:

Բավականին ժամանակ անցավ, մինչև այդ կարգադրությունը ձեռք բերեց անցնելով, հասավ Կուրիս գյուղը: Փոքրիկ թղթի հետ միասին գյուղ գնացին և մի քանի մարդիկ, ժողով անելու և քննելու, թե երբ է թալան եղել, ինչ գողեր են, որ ազատ ման են գալիս և ինչիցն է, որ Կուրիս գյուղում օրենքները չեն հորժում և գառներին, ջուրը պղտորելու համար, գայլերն ուտում են:

Ժողով են կանչում, ժողովում հողաբաժանքի հարցն են դնում, գողության, թալանի, կորած կարպետի, մի խոսքով այն բոլոր հարցերի, որի մասին կուրիսցին գրել է իր դիմումի մեջ:

Հնարավորություն չկա ժողովին մասնակցող գյուղացիների ասածները մեկ-մեկ գրելու, ինչպես և նրանց գրավոր ցուցմունքները տալու: Եթե Կուրիսի գյուղխորհուրդը մի թուղթ էր ստացել «շտապ քննություն կատարելու» մասին, այդ ժողովից հետո Կուրիս գյուղի հողաբաժանքի և Անդրեաս Հովհաննիսյանի գրած հարցերի մասին դրանից ավել թուղթ է գրվում:

Ի՞նչ է պարզել քննությունը, ի՞նչ է ասում Կուրիսի շքավոր դասակարգը Անդրեաս Հովհաննիսյանի մասին:

Ամենից առաջ հաստատվում է, որ նրա հինգերորդ շունը, որին հող չեն տվել, ծնվել է հողը բաժանելուց հետո: Իհարկե, հողաչափը հանցավոր է, որ հուլիսին է հողերը բաժանել և երեք ամիս չի սպասել, որ Անդրեասը մի ժառանգ էլ ունենար:

Անդրեասը Կուրիսի հողով հարուստ մարդն է եղել: Տարիներ շարունակ նրա հողերի վրա ուրիշներն են մշակութիւն արել, իսկ ինքը քաղաքներում ապրելով, ազատ ժամերին կարդացել է Ռաֆայել Պատկանյանի վանեցոց գանգատները:

Ոչ մի այգի չի տվել, հինգ հարյուր վազով: Անդրեասը հողով լրիվ բավարարված է և նույնիսկ մի քիչ էլ ավելի: Այդպես էլ գրված է համայնքի արձանագրութայն մեջ.

«Անդրեաս Հովհաննիսյանը Պատվակ անվանվող տեղում ուներ երկու մեծ հողամաս: Այդ հողամասերից մեկը, որ ավելի վատ էր, կտրված է, իսկ մյուսը, որն ավելի լավ է, թողնված է իրեն: Նա ստացել է հողատերի նորմայով և լավ կատեգորիա»:

Մարկայի փող շունեցող Անդրեասը, որ իր դիմումն ուշացրել էր դրա պատճառով, միջակից բարձր տնտեսութիւն ունի, գյուղի ունեւորներից է: Իսկ ի՞նչ գողութիւն է, որ կատարվել է Կուրիսում և գողերին անպատիժ են թողել:

ԿՈՒՐԻՍՈՒՄ ԳՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԹԱԼԱՆ

Կուրիս գյուղում երկու տարվա ընթացքում անթիվ անհամար գողութիւն է եղել: Տարել են մի ուլ և երկու հավ: Ուլը հետ է մնացել հոտից, կուրիսցի երկու ջահել ուլին պառկեցրել են փոսի մեջ և դանակը խրել կոկորդում: Ուլը բզաւվել է, օգնութիւն կանչել գյուղխորհրդից, բայց նախագահը չի լսել և կուրիսցի երկու ջահել ուլը անուշ են արել, բայց մյուս օրն ևեթ վճարել են ուլի արժեքը: Իսկ հավերը գողացել են անհայտ շարագործներ: Կալը կալսելիս հարևանի երկու հավ դեզի վրա քուջուջ անելու համար արժանացել են մահվան և տապակվել են կալատիրոջ կաթսայում:

Կուրիս գյուղում եղել է մի շտեմնված թալան, որի համար իրավունք ուներ Անդրեասը բողոք տալու «Գերագույն հորհրդին»: Գյուղի հովիվը ամառվա շոգին անցնում է մի բոստանի կողքով, աչքն ընկնում է հանաչ վարունգին: Սարի շորան, Կուրիսի վարունգ... Հովիվը թռնում է ցանկապատի վրայով, ծոցը լցնում է վարունգով: Հարա՛յ-հրոց, աղմուկաղաղակ: Հովիվը կարողանում է միայն վարունգի կեսը կուլ

տալ, որովհետև տերը վրա է հասնում, բկից բռնում: Ահա միակ թալանը երկու տարվա ընթացքում:

Ժողովում քննում են Անդրեաս Հովհաննիսյանի պատրզամբից գողացած կարպետի պատմութունը: Այս ամենից զարմանալին է: Դուրս է գալիս, որ կարպետն ուրիշինն է եղել, կարպետը կորել է գյուղի դպրոցից: Մեկը վեր է կենում և հայտարարում, որ ինքը «կասկածում է Անդրեաս Հովհաննիսյանի վրա նույն կարպետի մասին»:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՆՁԵՎ «ՅՈՒ ՊՈՐՏԸ»

10 Ասում է ինչքան անտառի խորքը մտնես, այնքան շատ ցախ կհավաքես: Քննում են Անդրեասի «յոթ պորտը», և պարզվում է, որ հնում կուրիսցին ինչ-որ պատմութուն է ունեցել, որի համար նրան գյուղից հեռացրել են:

«Անդրեաս Հովհաննիսյանը խարդախ մարդ է: Հողաբաժանքից հետո լարված դրության մեջ է մեր գյուղում: Նա անցյալում էլ խարդախ մարդ էր, որին հեռացրինք գյուղիցս: Եվ միայն վերջերս է եկել գյուղ...»:

Այսպես են ասել գյուղացիք նրա մասին, քննության ժամանակ:

20 Կա մի հեքիաթ, թե ինչպես երկու սոված մարդ թագավորի ախոռի կտրան մի հատ շամիչ են գտնում, փորում են կտուրը, ավելի շատ են գտնում, վերջը ծակում են և ընկնում շամիչով լի ախոռը:

Քննության ժամանակ փորել են, մի շամիչ են գտել, մի քիչ հետո երկուսը, երեքը, և վերջն ընկել են Անդրեասի ախոռը, այսինքն գտել են իսկական պատճառը, որի մասին արձանագրության մեջ միայն երկու խոսք է ասված:

Անդրեասը մի ուրիշ գյուղացու շատ ծածուկ հայտնել է.

— Դու մի քիչ հեռու կաց, ես խորհուրդը ցրեմ: Այդ մա-

30 սին ես աշխատում եմ:

Եվ նույն ճանապարհով մի թուղթ էլ գնաց, ուղղված Կուրիս գյուղի բնակիչ Անդրեաս Հովհաննիսյանին: Կուրիսցին կարդաց, աչքերը չռեց:

— Ձեր դիմումը թողված է անհետևանք...

„ՍՈՒՌՈՒԶ“

էլեկտրական մեծ լամպերը լույսով ողողել էին կայարանի պերրոնն ու զուգահեռ ընկած երկաթգծերը: Անձրևը նոր էր դադարել, և լույսի տակ պերրոնի սալահատակը փայլելում էր մաքուր սրբած հայելու պես, ~~իսկ ռելսերն ասես աղաղիք ձողեր լինեին: Անձրևաչուրը խառնվել էր ռելսերի մոտ թափված մազութին և շպալների արանքում գոյացրել սև, փոքրիկ լճակներ, որոնց յուղոտ մակերեսն արտացոլում էր լամպերի լույսը:~~

Հերթական գնացքն ուղևորվել էր: Մի քանի՝ աչքերն անքնությունից ուռած ուղևորներ հենվել էին փայտի մեծ աթոռներին, ննջում էին, ոտների արանքում կապոցներ, տոպրակներ: Կարմիր-կանաչ լապտերներով կոնդուկտորներ, անբաժան կողովը կամ մեծ կողպեքով արկղը թևի տակ, գնում գալիս էին, մտնում հերթապահի սենյակը կամ զանգի մոտ կանգնած զրուցում: Կեղտոտ գոգնոցով մեկն ավում էր առանց այն էլ անձրևից լվացված պերրոնը:

Երրորդ գծի վրա տասնհինգի մոտ ապրանքատար վագոններ կային, առանց շոգեմեքենայի: Յուրաքանչյուր վագոնի առաջ խռնվել էին տղամարդ ու կին, կանչում էին, ծիծաղում, խոսում: Պերրոնի վրա անց ու դարձ անողները երբեմն կանգնում էին, նայում վագոնների կողմը, ծիծաղում, եթե լավում էր սուր մի խոսք կամ հանաք:

Վսեորուչի գնացող գյուղացի երիտասարդներ էին: Հեռվի մթության մեջ, մերթ ընդ մերթ, գիշերահավի պես կանչում էր շոգեմեքենան, որ պիտի գար, տասնհինգ վագոններն առնելու ու տանելու:

Երգ, աղմուկ, աղաղակ և այդ ամենի հետ մի քանի զուռնա ու դհուլ, մի զիլ ծընգացնող դուդուկ, որ ծղրտում էր առավոտյան գետի ափը վազող սագերի պես:

Յուրաքանչյուր վագոնի առաջ հավաքվել էին գնացողների հարազատները, նրանց խառնվել էին և կոնդուկտորներ, կայարանի հերթապահ ծառայողներ, կառապաններ և սուկական ուղևորներ, որոնք հաջորդ գնացքով պիտի մեկնեին:

10 Մի վագոնում քյալալեցիք էին, մյուսում հոռոմցիք, երրորդում մաստարեցիք ու թալիսցիք: Վագոնից վագոն ձայն էին տալիս, ամեն վագոն աշխատում էր իր զուռնան ցել, իր վրա դարձնել ամբոխի ուշադրութունը, ամենից համով խոսք ասել և ծիծաղեցնել, ծիծաղու կոտորել:

— Գյազա շալե, տո շալե, — ձայն էր տալիս մի հոռոմցի, որ ուրախությունից, թե գինուց հարբել, անվերջ երգում էր, պարում: Ընկերները նրան մի կերպ բարձրացնում են, տեղավորում վագոնում: Բայց հոռոմցին վագոնի մեջ էլ է պարում. շխրտում են հատակի տախտակներն ու մեկ էլ՝ հո՛ւպ, վագոնից թռնում է ներքև, պարը շարունակում:

20 — Ջոկապետ ջան, հորդ հոգուն մեռնիմ... Տո, թողեք խաղամ...

Մյուսները ծափ են զարկում: Հոռոմցու կենտպարը քիչ հետո դառնում է շուրջպար: Պարում են բոլորը՝ «սորուշ» գնացողները, կառապան ու միլիցիոններ, կոնդուկտոր ու տելեֆոնիստ: Պարին զոռով խառնում են և մի պառավ կնոջ, որ մինչ այդ որդուց շէր հեռանում, խոսում էր, և ամեն խոսքի հետ արցունքն էր ծլլում:

Պարում էր պառավը մյուսների հետ, ճվում էին, ճշում, իսկ պառավը պարելիս էլ աղլուվաով արցունքն էր սրբում:

— Ով ծափ շզարկի, կնիկը մեռնի...

30 — Տո Լևոն, ծափ տու, Շուշանդ մոռցա՞ր:

Ու Լևոնը ծափ է տալիս, ծափի հետ միտքը թռչում է Մաստարա՝ Շուշանի մոտ:

Մյուս վագոնի առաջ մի այլ խումբ է պարում: Աշխատում են գետնին ավելի պինդ խփեն, զուռնան զիլ է կանչում. պարողներից մեկը զուռնայից էս բարձր ձայն է տալիս.

— Տո, հոռոմցիք, ուռած փորեր, ի՞նչ եք տղկել... Ջա՛նք
քյալալացիք, տո շալե՛, Մուկուչ, «Հոպոպը» շալե:

Պարը փոխում են: Հոռոմցիների մոտ հավաքվածներից
ոմանք նրանց մոտ են գնում, ուրիշ վագոններից են գալիս
և ոգևորված զուռնան մեկ ծկլթում է, մեկ հանդարտ է կլկլում:

Հոռոմցին ճարպիկ շարժումով բարձրանում է վագոն և
բարձր կանչում.

— Տո Տերտերանց Օնիկը շե՛մ ես... ընկերներ և բան-
վորներ, ես ձեր ջանին դուրբան... խորհրդային իշխանության
վով որ մտքեն հակառակ է, ես էնոր ականջը... 10

Ամբոխը հռհռում է, ընկերները փորձում են ներս տանել
նրան, բայց հոռոմցին նրանց ոտների արանքով դուրս է
պրծնում, թռչում գետնին ու նորից բղավում բեզարած զուռ-
նաչուն.

— Տո շալե, ես քու կյանքին մեռնիմ...

Մի այլ վագոնում նստոտել են տախտակների վրա: Մոմի
թրթռացող լույսի տակ հազիվ են երևում դեմքերը: Վագոնի
կիսամութ անկյունում նստած մեկը մեղմ, լալկան ձայնով
երգում է.

— Ընկել ե՛մ գերի՛... 20

— Օտար երկրներ...

Մյուսները ձայնակցում են այդ երգ-աղերսին, ամեն
մեկը բառերի մեջ դնելով այլ իմաստ՝ կովի, եզան, հողի,
Շուշանների հետ կապված:

— Նստել ես վագո՛ն...

— Սալդաթ բալա ջան:

Մի ձեր կոնդուկտոր, որ վերի վագոնների տակ կռա-
նում, լապտերով նայում էր, մի պահ կանգնեց, լսեց այդ
երգն ու դարձավ նրանց.

— Տո ա՛յ օղուլ, ի՞նչ կուլաս: Նիկալայի վախտն էղներ, 30
մերդ լացացնեին: Սորուչ կերթաս Դիլիջան, հո Սիրիր շե՛ն
քշե...

Երգողները մի պահ լռում են. քիչ հետո մի ուրիշն է բա-
րակ ձայնով ծոր տալիս այն մասին, որ «երկնքուց կախված է
Սողոմոնի գիրքը, կարդացեք, իմացեք սալդաթի միտքը»...

Ուկրաինացի մի քանի զինվորներ, որոնք վերադառնում

են պահակատեղից, խառնվում են ամբոխին, հարցնում՝ թե ովքեր են գնացողները: Մի կառապան գյումրեցու ուսանողները նրանց հասկացնում է: Ուկրաինացիք հետաքրքրվում են զուռնայով, մոտենում են պարողների մի խմբի: Ու հանկարծ պարողները մեջ են առնում նրանց. ուկրաինացի զինվորները քահ քահ ծիծաղելով պարում են «Հոռոմի» եղանակ:

Գնացողներից մի քանիսն աղմուկից հեռու ինչ-որ պատվիրում են իրենց հարազատներին: Մեկն իր բիձուն պատվիրում է ոչ մի դեպքում եզը չծախել, կոմսոմոլ մի տղա բջջի անդամին թերի թողած գործի մասին է պատմում: Պառավ կինը դեռ լալիս է, բարեմաղթում.

— Գնացեք, աջողութուն ձեզի...

Մի ուրիշը իր ազգական երիտասարդին սրտանց հուսադրում է.

— Էրթաս մարդ կդառնաս, բալաս:

Միլիցիոները մոտը կանգնած կառապանին պատմում է, ականջը դեմի վազոնից լսվող երգին.

— Վազոն, մի ժած տա՛...

20 — Մեր էրթու վախտը էստեղ շիվան էր... Սաղ կնկտինք բիթտուն կուլային: Ողորմած հոգի Բերբեռ Մուկուշը իսա երգն որ ըսեր, մեռլատան պես կուլային...

Հոռոմցի Օնիկը պարից բեզարել է, բայց չի հանդարտում: Եվ զուռնան կտրելուց բարձր կանչում է.

— Ա՛խ մի տաք փոր էղնի, քաշեմ փորիս...

Հոնդոցից հարևան վազոնի դուգուկի ձայնը չի լսվում: Ամբոխից մեկը կանչում է.

— Ա՛յ մորդ լուսը չբոռնա, Օնիկ:

Հանկարծ հեռվի մութում զիլ ծկլթում է շոգեմեքենան և շոգու փնչոցով մոտենում է վազոններին:

30 Իրարանցումն ուժեղանում է: Մնաս բարով են ասում, իրար խառնվում, իրար կանչում: Զոկապետները վազոնից վազոն են անցնում, նստեցնում: Զուռնայի ձայնը վազոնի ներսից է գալիս:

— Գնա՛ց, տո, էլե՛ք, էլե՛ք...

Վազոնները շրխկոցով իրար են հրում: Հնչում է սուլոցը, վազոններն օրորվում են շոգեմեքենայի ամեն մի փնչոցի

հետ: Լսվում է մի բարակ ձայն, շարունակում են երգել:

— Վազոն, մի՛ ժա՛ժ տա՛...

Պառավ կինը մոտեցել է վազոնին, որդին կռացել է վրան.

— Իրավունք կառնեմ, կուզամ:

Շոգեմեքենան սուլեց:

— Գնա՛ց, գնա՛ց...

Մեկ էլ թնդաց զուռնան ու դհուլը... Բազմաթիվ ձեռքեր
ու գլխարկներ օդում ճոճվեցին.

— Բարի ճանապարհ, աջողութիւն ձեզի...

Քիչ հետո վազոնները փայլփլուն ուսերի վրայով սու- 10
րալով կորան մութի մեջ: Վերջին վազոնի հտքին կարմիր
ճրագը թարթում էր որպես մանկան աչք: Պերրոնի վրա կանգ-
նած պառավ կինը զսպված հեկեկում էր, աչքը կարմիր, փոք-
րիկ ճրագին...

Լ. Ս.

ԿԱԳԸ

Ժողովը գեռ շէր սկսվել: Խորհրդի նախագահը հաճախակի կանչում էր միլիցիոներին, պատվիրում, որ ձայն տա վերի թաղին, կամ մոտիկ կանգնած մի երիտասարդի ճանապարհում այս ինչի տունը, որտեղ պետք է լինեն խորհրդի երկու անդամը, մի քանի գյուղացի: Գյուղի ծուռ ու մուռ փողոցներով գալիս էին մեկ-մեկ, խումբ-խումբ, ոմանք լուռ, ոմանք բարձր կանչելով: Եկողները տեղավորվում էին հենց փողոցում, նստոտում քարերի վրա, պատերի տակ:

10 Մեկը կարդում էր նոր ստացած լրագիրը, գիրկապ անելով ասում այն ամենը, ինչ տպված է, նույնիսկ փակագծի մեջ շարած «Զակտագ»-ը:

— Գյանջայի գավառի Բանանց գյուղում անհայտ շարագործները գողացել են Մովսես Սահակյանի մի զույգ եզր...

— Է՛, բան կարդա, բան լսենք... Եզինք են էլի, կողանան էլ, կգտնեն էլ: Տես Անգլիայի կողմերից ինչ կա...

Ընթերցողը շուռ է տալիս լրագիրը, կարդում «Արտաքին աշխարհից» ...Եվ մի քիչ հետո, նույն տոնով ասում.

— Բա՛, գազեթի լավ տեղը կերիլ են...

20 Խոսքը պատռած անկյունի մասին էր:

— Մուքունց տանը սլապիրոս քաշող չկա, բա էս ո՞վ արած կլինի,— հարցնում է ունկնդիրներից մեկը: Ընթերցողը մի ուրիշ սյունակի է անցնում:

Մի քիչ հեռու, մի ուրիշ խումբ տաք-տաք վիճում է ժողովի օրակարգի, հողերի բաժանքի մասին: Մի կողմը՝ արձակուրդով գյուղ եկած բանվորներ են, մյուսը՝ գյուղացիք:

— Համ ժալով ստանաս, համ էլ գաս էստեղ հող ստա-

նա՞ս: էդ ո՞նց կլինի... Դե քու կյանքդ ինձ տուր, իմ հողերը քեզ տամ,— ասում է մեկը և շուրջը նայում, կարծես ուզում է իմանալ, թե ինչ կարծիքի են մյուսները:

— Դե քու երեսիդ ունգը տուր, իմ ժալովը քեզ տամ: Կիշեր ցերեկ նավթի մեջ եմ թաթախ, քեզ ի՞նչ կա, փափախդ ծուռ դրած ոչխար ես պահում: Եկար էի Բաքու, բա ինչո՞ւ չկացիր. սարի արածանը միտդ եկավ հա՞... 10

— Դու ամեն շարաթ բաղնիս չգնաս, կնկանդ հետ կուր չգնաս, կապրե՞ս... փափախս որ վեր ունեմ, քրտինքի հոտից կխեղդվես: Կնիկդ 10 դեյրա ունի, իմ երեխան մի հալավ էլ շունի... 10

— Տո՛ւր է, տո՛ւր, երեսիդ ունգը տուր,— իր խոսքն է կրկնում բանվորը, ակնարկելով գյուղացու ուռած կարմիր թշերին:

— Հագիդ սապոզը տուր, երեսիս ունգը տամ...

Բանվորն արագ շարժումով քաշում, հանում է հաստ սապոզը և մոտեցնում նրա քթին:

— Դե՛ տուր:

— Է՛, թ՞նչ եք յավա-յավա խոսում,— մեջ է մտնում մի գյուղացի,— արաբոչին ի՞րա տեղում, ունչպարն ի՞րա: Խոսք ունեք, խոսք ասեք... 20

— Բա սա արաբոչի է՞,— վրա է պրծնում մի ուրիշը:— Հրեն է՞, էն կտուրը ժեշտած տունը սրանը չի՞... էդպես արաբոչի կլինի՞: Ա՛յ ուսին արաբոչի ասի, որ օրն անում է, օրը ուտում, մի տոպրակ էլ ծակած, վիզը քցած: Արաբոչին ուսին կասեն... 20

— Սրանք էլ են ասում, է՛, թե ապրուստը դժվար է: Ութ ժամ բանում են, երկու սուտկա քնում, ամսեկան մի կովի գին ստանում: Ձմեռը ոչխարը տար արանում պա՛նի, կիմանաս մեր հալը,— ասում է նա, ով համաձայնվում էր կարմիր թշերը բանվորի հնամաշ սապոզի հետ փոխելու: 30

— Դե արի մի օր իմ տեղը բանի,— վրա է տալիս մի երիտասարդ, որ մի տարի առաջ է գյուղից կտրվել, վերադարձել գյուղ և ծալը չկտորած շորերը հագին, շուտ-շուտ ձեռքը տանում է կրծքից կախած էժանագին ժամացույցի շղթային:

— Կնիժկադ տուր ինձ, քո տեղն էլ բանեմ, ընկերիդ տեղն էլ,— պատասխանում է մի գյուղացի:

— Ո՞ր կնիժկանս...

— Սավուզի:

— Արի ապրանքիդ հետ փոխենք,— տաքանում է երիտասարդը:— Միանգամից ձեռք քաշի քու տնտեսությունից, իմ տեղը քեզ տամ: Վրասեյակի խոզ ես դառել, վզիդ հաստոցին տես, դու կարող ե՞ս Բաքու ապրես...

10 Վեճն ավելի է թնդում: Խառնվում են ուրիշները: Ումանք լուռ են, միայն ծիծաղում են այս կամ այն կողմի սրամիտ պատասխանի վրա: Մի քանիսը վիճողներին տաքացնում են: Մի կոնտր, որ անխոս կանգնել է վիճողներին մեջ, ներքին հրճվանքով ժպտում է և սրան-նրան աչքով անում, երբեմն էլ բեղը մատին փաթաթում, ոլորում:

— Հագիս շորին նայի,— ասում է մի հին բանվոր,— տասը տարի առաջ եմ առել: Թե մի պարազ լինի կամ միտինգ, կհագնեմ, թե չէ էն քու ասած տոպրակն եմ հագնում: Իսկ դու գիտե՞ս ինչ ունես:

— Օդի մաքրություն...

20 Բոլորը ծիծաղում են սրամիտ պատասխանի համար, բացի ծեր բանվորից, որ մեկնում է կոշտուկներով պատած ձեռքերը և ասում.

— 50 հատ ոչխար ունես, իմս էլ էս ձեռքերն են:

— Մի ոչխար էլ ունենաս, ո՞վ պիտի պահի, առավոտն ո՞վ դեն անի: Ոչխարն ի՞նչ ես անում: Ծս ոչխար եմ պահում, պանիրը դու ես ուտում, միսը դու ես ուտում: Իմ կերածս ի՞նչ է,— դառնում է շորս կողմ, նայում: Կոնտրն է պատասխանում.

— Չորաթան,— և բեղը ոլորում:

30 — Մի շորաթան ուտողն էլ դու ես,— վրա է տալիս երիտասարդ բանվորը: Կամացուկ զրնգում է կրծքից կախ շրջաթան:— Ատամներիդ տակ երկու փութ յուղ կլինի հիմա: Տարին մի անգամ գալիս ես Բաքվա վակալը, վեցհարյուր մանթի առուտուր անում: Քու էդ կարկատած շուխայի աստառի տակ էլ շերվոն կլինես պահած: Ինչ քոռ գայլն ե՞ս...

Բեղը դադարում է ոլորելուց, ուզում է խոսի, բայց նրան հրում են, շրջանից դուրս անում:

— Նա հկավ վակզալը տեսավ, բա ե՞ս. հենց էսպես կարոտ մեռնե՞մ... Ի՞նչ ունեմ որ, մի մանգաղ, մի գոգնոց:

— Դու էլ ձմեռը կնկանդ ճիտ արա, քնի,— պատասխանում է մեկը, մյուսները հռհռում են:

— Մի վերմակ էլ չլինի, քցենք, տակը քնե՞նք: Կարպետի տակ ենք քնում, իսկ քաղաքում դու արբեշումի վերմակ ունես:

— Դու հանգիստ արջաքուն ես տալիս, ես քնիս մեջ էլ եմ տորմոզ անում:

— Տնաշեն, բա վար անելիս որ կարկուտը տալիս է, գլուխդ ուռչում: Տորմոզ անելուց էլ հեշտ բա՞ն... 10

— Կարկուտից գլուխդ ուռչում է, գլուխդ հո տե՞ղն է մնում: Բա որ շտանգը գլխիդ տա, սողանի պես կլպի՞...

Վեճին խառնվում է գյուղական դպրոցի ծառան:

— Ես էլ մեր երկրի բանվորն եմ էլի՞... Ուսումնարանում տասը ամիս ծառայել եմ, մինչև էսօր մի կոպեկ չեմ ստացել: Մեր երկիրն է մեղավոր:

— Բանվորն իր տեղը, գյուղացին՝ իր: Երկիրը չի բերքատու,— հայտարարում է մեկը: Խոսակցությունը հանդարտում է: Մի ծերունի ձայն է տալիս իր որդուն՝ շղթան կրծքից կախ երիտասարդ բանվորին: 20

— Վերին հանդի գարին չորացավ, ի՞նչ ես պարապ կանգնել... էս ժողովը ո՞րտեղից բերին բանի էս վատ ժամանակ:

Նրա կողքին նստած մի ուրիշ ծերունի ավելացնում է.

— Է՛հ, երկուսիդ վերջն էլ հողն է,— և սկսում պատմել մի առակ արծվի, ցինի և կաքավի մասին:

Սակայն ծերունու առակը մնում է թերի: Հավաքվածները շարվում են պատերի տակ: Քիչ հետո բացվում է ժողովը:

Նախագահը պատմում է.

— Ընկերներ՛, նախ և առաջ ստացված գրության մասին, որն որ ուղարկված է Բաքվի մեր գյուղական բանվորների միութեան կողմանից: Արդեն գյուղիս աղբյուրները շինելու համար հայրենակցությունից ստացված են 40 հատ վեց արշի-նանոց տուրուբաներ... 30

— Այ թե հա՛,— ձայն են տալիս այս ու այն կողմից:

— Ոչինչ, ջուրը խմեցինք...

— Էլի թե մի օգնություն լինի, Բաքվից է լինելու...

— Ընկերներ, լուռությո՜ւն պահպանեցե՛ք, — սաստում է նախագահը, — օրակարգը շի պրծել: Նաև հայրենակցությունից ստացված է մի նամակ, որում որ գրված է տրակտորի ընկերության մասին, թե ինչպես պետք է կազմենք և թե ինչ մեծամեծ օգուտներ կլինի գյուղիս այդ կողմանից և թե ինչ խոսքեր է ասված Լենինից տրակտորի մաշինի ընկերության մասին:

10 Եվ լուռության մեջ գիրկապ անելով նախագահը կարդում է Բաքվի բանվորների շեֆ հանձնաժողովից ստացված նամակն այն մասին, թե անհրաժեշտ է գյուղում միքենագործական ընկերություն կազմել և ձեռք բերել տրակտոր:

— Նաև շքավոր տնտեսություններից բոլորովին չվերցնեք անդամավճար: Մենք մեր կողմանից հավաքել ենք և տրակտորի ընկերության անունով բանկում քցել ենք յոթ հարյուր ռուբլի և կնիշկան ստացել...

Լսվում են ուրախության բացականչություններ:

20 Կանգնած ու նստոտած ժողովականներին հրելով, մի կերպ անցնելով եղիտասարդ բանվորը մոտենում է աչքերը նախագահի թղթին ուղղած, բերանը կիսաբաց գյուղացուն, որը քիչ թեքվել է մահակի վրա և այդպես էլ մնացել:

Երիտասարդը քաշում է նրա թևը:

— Հը՞, ո՞նց ես...

Գյուղացին սթափվում է, գլխի ընկնում, թե ինչի մասին է նա ականարկում:

— Դե խոսք էր էլի՞, ասեցինք... Ի՞նչ ես խորքերն ընկնում:

Նախագահը շարունակում է նամակի ընթերցումը:

ՕՉԻ ԲԵՐԱՆԻՑ

Նրբ պատմում էին ինձ այս ամենը, կասկածում էի, որ գուցե թե դեպքերը շփոթում են իրար, գույները մի քիչ խտացնում և ավելի հնարում, մանավանդ, որ մենք զրուցում էինք շատ գեղատեսիլ մի բլրակի գագաթի վրա, որի մացառապատ փեշերն իջնում և խոր անդունդ ձոր են գոյացնում, այնքան են մոտ իրար, որ քարայծն էլ կարող է ցատկել: Եվ խոր ու նեղ ձորում մոռալով, քարերն իրար տալով անցնում է Մարցի գետը բաց արնագույն ջրով, որովհետև ակունքների մոտ կարմիր ու մսոտ հողեր կան:

10

Չատի բիձան էր ասում, թե ինքը շատ պարզ հիշում է այն ժամանակները, երբ պախրաները սուրուով էին գալիս և հենց մեր նստած տեղում արածում: Այն ժամանակ անտառների մեջ կորած այդ գյուղն էլ, ինչպես ակնորն էր պատմում, մոլորած պախրալի պես էր...

Ահա դրա համար էլ հենց թեկուզ Չատի բիձու պատմածից շատ բան ինձ անհավատալի էր, միամիտ առասպել վաղուց անցած այն ժամանակներից, երբ սպիտակ պախրաները լուսնյակ գիշերներին խոտ պոկոտելով, իրար պողահարելով անցնում էին այն անտառներով ու ձորերով, ուր հիմա շեն ու բարեկեցիկ գյուղեր կան ու ձորի միջով էլ օձապտույտ կեռամաններով վազոններն են անցնում, որպես ուլունքի շարան:

20

Ու երբ մեզ հետ նստողներից մեկը տեղից վեր կացավ ու ինձ մոտենալով հետ քաշեց շրթունքներն ու ցույց տվեց ջարդուփշուր եղած, տեղ-տեղ սևացած ատամների շարքը և

էլ հետ տեղը նստելով սասց, որ մինչև հիմա էլ մրմուռն գգում է, ես պատասխան շուննի նրան տալու:

Խուլ երկիր էր: Չորերում և անտառներում ընկած այդ գյուղերը՝ Մարցը, Լորուտը, Շամուտը, Ահնիձորը, որոնց այժմ շրջանում կոչում են Մոտկորի հանրապետութուն՝ անտառի խորքում ընկած Մոտկոր ավերակ գյուղի անվամբ, մի գյուղի, որի եղած լինելը հաստատվում է քարե կամուրջի պատերով, որ հիմա էլ երևում է գետի երկու ափին, հին ճանապարհի հետքով և վերջապես բնակավայրերի խարխլած, կիսաքանդ պատերով, որոնց փլցրել և քարերն իրար են խառնել կաղնին ու լորին և գյուղը կորցրել իրենց թավուտում, — Մոտկորի հանրապետության այդ գյուղերն այն ժամանակ, երբ Չատի բիձան երեխա էր, խաղաղ ապրում էին:

10 — Ոչ մովորով կար, ոչ էլ խարջ ու տիրություն... մեր կոփվը գայլերի դեմ էր, մեր տանջանքն անտառում վարելահող շքելու համար էր:

Կտրատել են անտառը, ապառաժ տեղերը բարեբեր հող դարձրել, փորել առուններ և ճիլկուտի ջրերը դուրս տարել առուններով, տեղը ցանել կորեկ, գարի: Ամեն տարի մի բան են ավելացրել, բազմացել են ծխերը և եղած տների կողքին նոր տներ են կառուցել:

20 Խուլ այդ երկրում, այն ժամանակ, երբ Չատի բիձան, որ վերջին քսան տարվա ընթացքում ոտքը գյուղից դուրս չի դրել, որովհետև շատ է ծեր, — երբ Չատի բիձան հորիկն էր քշում, մի օր լուր է ստացվում, որ հեռու մի քաղաքում թուղթ են հանել այն մասին, թե ձորի գյուղերն ու անտառը դեռ էն գլխից, երբ բնակություն էլ չի եղել, պատկանում են էջմիածնի վանքին: Այդ թուղթը մինչև օրս էլ տեսնող չի եղել, թեկուզ նրա մասին շատ առասպել է հորինված: Ասելիս են եղել, որ 30 այդ հասարակ թուղթ չի, այլ շեյրանի կաշի, որի վրա ոսկե-տառ գրված է ռուսաց թագավորի բարևագիրը հայոց կաթողիկոսին և հենց այդտեղ էլ հիշված է, որ Մարցի ու մյուս գյուղերի անտառն ու հողերը վանքինն են և անեծք էլ կա գրված նրա համար, ով կհանդգնի հակառակ խոսել ոսկե գրչով գրածին:

Եվ այդ թղթով էլ սկիզբ է առնում դաժան ու խստաբա-

րո մարդկանց դինաստիան, որոնք, ճիշտ է, ազգակցական կապ իրար հետ շունեին, սակայն լուսավորչական սինոդի կարգադրությամբ մեկը մյուսին էր հանձնում եզան շղերից հյուսած մտրակը և Մարցում եղած ընդարձակ շտեմարանի ու «վանքի տան» բանալիները և գնում հոգևոր հայրերի օրհնությամբ վայելելու այն, ինչ ռամիկ հոտի մսիցն էր պոկված:

Այն, ինչ կատարել են նրանք, որոնք սրբազան սինոդի գործերում հիշատակվում են որպես «Մարցի վանքապատկան հողերի և անտառների պարոն կառավարիչ», իսկ գյուղերում՝ թավադ ու խան,— ինչ կատարվել է նրանց ձեռքով Մոտկորի գյուղերում, գուցե թե առասպել թվա նոր սերնդի համար, որի երևակայությունն անվարժ է պատկերացնելու մտրակի հարվածների տակ մոնշացող շինականին, որ արցունքն է կուլ տվել և կես ուշաթափ վիճակում մի կերպ իրեն աղբյուրին հասցրել, պատառոտած մսերից արյունը լվանալու:

Աղա Դարշո, Մարտիրոս, կուրթանեցի Տիգրան, Շահ Աբասով, Ռոստոմ,— ահա Մոտկորի գյուղերում թագավորած դինաստիան: Սրանցից ամեն մեկը տարբեր ձևով էր գլուխ, մեկը մյուսին գերազանցում էր շահատակության, ծեծի ու բանտարկության շափի մեջ: Բոլորն էլ ծեծել են, քիթ ու պոունգ ջարդել, անհնազանդ շինականին սոված, ծարավ գոմում պահել:

Կուրթանեցի Տիգրանի օրոք մահակով էին ծեծում նրան, ով կհանդգներ հակառակ խոսք ասելու և կամ շտար այն, ինչ սահմանում էր ինքը՝ «պարոն կառավարիչը»: Ռոստոմի տիրապետության օրոք մահակը վերացավ և նրան փոխարինեց պլաստուն կազակներից վերցրած պլետը, որով ծեծում էին մարմնի բաց մասերին՝ թիկունքին, ուսերին, ոտքերին: Ռոստոմը, որ դինաստիայի վերջին ներկայացուցիչը եղավ, «հանցավորին» կապել էր տալիս սյունին և ծեծում այնքան, մինչև պլետի կոթը ցավեցներ իր ձեռքը, որից հետո պլետը հանձնում էր իր շքախմբից որևէ մեկին:

Դարշոյի հաջորդ Մարտիրոսի բարբերն ավելի կոպիտ էին: Նա շէր գործադրում ոչ մահակ և ոչ էլ պլետ: Նրա հետ

10

20

30

ման եկող մարդիկ հաստ սապոգներ ունեին, պնդազուլիս մե-
փերով, նրա հետ ման եկող մարդիկ ունեին փթանոցի պես
բռունցքներ: Տրորում էին սապոգի տակ, մեխերը խրվում էր
մսերի մեջ և սապոգի տակ էին մնում մսի կտորները: Ու եթե
թավադն աչքով աներ ու բռունցքը ցույց տար, կարկտի պես
էին թափվում բռունցքի հարվածները, արնակոլով «մեղավորն»
ընկնում էր գետին և փորսող տալով աղբրսում:

— Պլետը միշտ մեր գլխից անպակաս էր,— Չատի բիծու
պատմությունն ընդհատեց գյուղացիներից մեկը,— էն է հա՛,
10 փախչում էինք, քոչում, որ վանքի ձեռիցն ազատվենք: Եթե
էսոր էլ աղքատ ենք, նրանց աղքատն ենք: Ճանճի պես հյուսթ-
ներս քաշում էին, թողնում շեշը... Ես երկու տղա ունեի, մեկ
էլ ես, օրնիրուն աշխատում էինք ու միշտ էլ սոված մնում...

* * *

Մարցի և հարևան գյուղերի յուրաքանչյուր ծուխ վանքին
էր տալիս տասը խուրձից մեկը, ամեն կովից երկու գրվանքա
յուղ, տունը մի ուրբլի անտառից փայտ բերելու համար, ոչ-
խարի մի օրվա կիթը, տասը սալ խոտից մի սալ, հարյուր
խոզից հինգ խոզ՝ անտառում կաղին ու աճար ուտելու հա-
մար: Բացի տասանորդից հօգուտ վանքի գանձում էին «աթո-
20 ռահաս»,— յուրաքանչյուր պսակի համար 3 ուրբլի և «հոգե-
բաժին»— մեռնողից մի ուրբլի:

Բայց այդ միայն «ոսկի գրիչով» սահմանածն էր: Իրա-
կանում ավելին էին գանձում: Բերքը հասնելուց, երբ խուրձեր
էին անում, ոչ ոք իրավունք չուներ խուրձը կալ բերելու: Պի-
տի սպասեին, որ թավադը գար, դաշտերում ման գար, խուր-
ձերը հաշվիր և իր ցուցակում նշանակեր: Կալը կարող էին
կալսել միայն նրանից հրաման ստանալուց հետո: Եվ վա՛յ
նրան, ում հետ թշնամություն ուներ, խուրձերն ավելի էր
նշանակում, հրամանն ուշ տալիս, անձրևի տակ հասկը ծլում
էր, խուրձերը սևանում էին, բերքն իզուր կորչում, իսկ աշ-
30 նանը նա պիտի տար այն, ինչ նշանակած էր ցուցակում:

Թավադը մենակ շէր ման գալիս: Նրանք իրենց ստորա-
գրյալ ձեռագրերն ունեին: Շահ-Աբասովը քսանից ավելի
ձեռագրերն ուներ, որոնց մի մասն անտառապահներ էին,

սակայն բերքը հավաքելուց նրա հետ էին ման գալիս և սան-
ձերը թույլ թողնում, որ ձիերը խժոեն գարու խուրձերը:

Թավադի մարդիկ ոռճիկ չէին ստանում, թեկուզ օրնիրուն
ձիու վրա էին և որպես անզղներ պտտում էին գյուղերի վրա
ու որս ճարելիս վրա տալիս:

— Դու ինձ բռնի, ես գիտեմ իմ շահին ումնից կառնեմ,—
ասում էին նրանք թավադին և գործի մտնելու հենց առաջին
օրից աշխատում էին շահել տիրոջ վստահությունը:

Եվ այն օրից մինչև հիմա գյուղում շատ խոսքեր են մնա-
ցել, որ օտար մարդուն հասկանալի չեն: Եթե մեկը դաժան է, **10**
նրա մասին ասում են, որ «Ռոստոմ մարդ» է; եթե ձին հարե-
վանի արտն է ընկնում և հասկերն ուտում, զանգատավորը
ձիատիրոջ հասցեին գյուղի հրապարակում մի քանի խոսք
ասելուց, պիտի հիշի «թավադների ձիուն»:

Ամեն գյուղում նրանք ունեին իրենց հավատարիմ մար-
դիկ, որոնք, ինչպես Չատի բիձան էր ասում, շպիտն էին, թա-
վադի աչքն ու ականջը: Նրանք հաղորդում էին, թե գյուղում
ինչեր են խոսում, ո՞վ է ամենից շատ տրտնջում, ո՞վ է առա-
ջարկում գնալ քաղաք, օրենքին դիմել և կամ խնդրագիր
ուղարկել էջմիածնի սինոդին, որ տուրքը քչացնեն և կամ թող-
նեն, որ վանքի նշանակածը գյուղն ինքը զանձի առանց թա-
վադի ու նրա մարդկանց: **20**

Հենց մյուս օրն էլ ծեծ էր ուտում նա, ով համարձակվել
էր բերանը բաց անել, և կամ տուգանք էին գրում, իսկույն
արձանագրություն կազմում, որ նրա խոզերն անտառն են
փչացրել. գործը գնում էր պրիստավին:

Ռոստոմի ժամանակ այդ էլ էր վերացված: էջմիածնի սի-
նոդից նշանակված «պարոն կառավարիչը» գյուղացիների ներ-
կայությամբ պրիստավի վրա էլ էր գողգողում: Վերջինս միշտ
նրանց հլու գործակատարն էր, իսկ Ռոստոմի ժամանակ նրան **30**
հետևող ձիավորներից ամեն մինը մի պրիստավի ուժ և իշխա-
նություն ուներ, որովհետև կարողանում էր ծեծել ում ցանկա-
նար, բանտարկել և նույնիսկ սպանել:

— Ում հետ թշնամի լինեին, ավելին ուզեին... Ժողովրդի
մեջ լեզու չկար, ով ուզեր խոսի, գլխին տալիս էին: Մի ձմեռ
էլ երեք մարդ ենք ջոկել, որ զնան Թիֆլիս քաղաքում մի աղ-

վակատ բռնեն վանքից մեզ ազատելու: Թե էն սհաթին ով խարար հասցրեց նրան, շիմացանք: Առավոտը կանուխ ճանապարհ են ընկնում... Մին էլ տեսնենք իրիկնադեմին խոզարածը հարայ է կանչում: Ասինք գել է վրա տվել կամ մի փորձանք պատահած կլինի... Գնացինք, տեսնենք մեր մարդիկ արնակոլո՞ւ՛ ձյունի մեջ վեր ընկած... Տվել էին աչքունքը խառնել իրար... Մեկն էլ իմ ողորմած հոգի քեռին էր: Նահենց դրա վրա էլ մեռավ...

10 Խոզարածն անտառում տեսնում է երկու ձիավորի, գլուխները բաշլուղով պինդ փաթաթած: Նա ճանաչում է ձիավորներից մեկին: Ու քիչ հետո, երբ ձիավորները դուրս են գալիս անտառից ու գյուղի ճանապարհով իջնում, խոզարածը լսում է ծեծվող մարդկանց ձայներ, հասնում է և տեսնում նրանց գետնին վեր թափած, արնի ու ձյունի մեջ շաղախված:

— Մեր գյուղում, — շարունակեց Չատի բիձան, — մի մեծ կալ կա... Ղավալանց կալ ենք ասում: Մի առավոտ վեր կացանք տեսնենք հիսուն զույգ եզ գերաններից կապոտած: Թավադի մարդիկն էլ ընկել էին հանդերն ու անտառը, որսկան շների պես ման էին գալիս, թե էլի եզներ գտնեն, բերեն կապոտեն, որ ամբողջ գյուղից տուգանք առնեն: Մեզ հարևան մի աղքատ մարդ տեսնում է, որ իր եզն էլ են կապել... Ոնց է հաջողացնում, եզը փախցնում է: Հենց էդ ժամանակ թավադը նրա առաջը կտրում է, պլետի տակ առնում... Ձիավորները եկան նրա տունը քրքրեցին: Կնկա գլխի շորն էլ տարան... Անմարդի խոսք շի լինի՝ կնանոց ոտնաշորն էլ էին տանում... էնքան անիրավ էին: Տախտակը ծակել էին, մեր վիզը գցել, մեր գլխին էլ պոպոք կոտրում...

• • •

10 Առաջին կառավարիչ Դարչուն իր թավադոթյան վերջին տարիներում Մարց գյուղում կառուցում է ընդարձակ մի տուն, որ շրջակայքում հայտնի էր վանքի տուն անունով: Ավելի բերդի էր նման, քան գյուղի տան: Հաստ և անտաշ քարերով ամուր պարսպած էր վանքի տունը, որի դարպասները բացվում էին ներս ընդունելու ցորնով, գարիով, բրդով ու խոտով քարձած ձիերի քարվանն ու սայլերի շարքը: Ներսում տեսակ-

տեսակ և գետնահարկ ամբարներ կային՝ ցորենինը ջուկ, գարունը ջուկ: Ամեն տարի ամբարները բերնե-բերան լցվում էին, ուրիշ տեղից վաճառական մարդիկ էին գալիս, գնում ցորենն ու գարին, և գյուղացիք իրենց ձիերով ու սայլերով վանքի ցորենը ձյուն ձմռանը պիտի ամբարներից կրեին և տանեին մինչև երկաթուղու կայարանը կամ շրջանի կենտրոնը և թափեին այնտեղ, ուր կհրամայեր վաճառականը: Վանքի տան պարիսպների ետև ուրիշ շենքեր էլ կային, կար ախոռ, ուր թավաղների ու նրանց մարդկանց ձիերն էին գարի ուտում. կար և մի սենյակ, ուր երբեմն իջևանում էր թավաղը գյուղ **10**
գալուց:

Քանի եզ ու սայլ է ջարդվել վանքի տան քար ու գերանը կրելուց: Առաջին թավաղն այդ տունը կառուցել է պլետի զոռով և նույնիսկ պատերը շարող վարպետներին, որոնք ուրիշ գյուղից են եղել, ոչինչ չի տվել: Սառած և դժվարին կածաններով, նեղ ու քարոտ կապերով անտառի խորքից Դարչոն ձմեռվա ցրտին կրել է տալիս գերանները:

— Ու ջարդող էլ եղավ, մատներ էլ սառան, փետացան, եզներ էլ ջարդվեցին... Հաստ գերան, նեղ ճանապարհ... եզների ոտը սոթ է տալիս, խեղճ հայվանները տնքում են, ուժ տալիս, կաշվի փոկերը կտրատում ու շեն կարողանում դարիվորը բարձրանալ: Մենք էլ եզների նման, նրանց հետ հավասար շարշարվում էինք: Մենք եզների կողքածաղներն էինք վեր հատում, թավաղի մարդիկն էլ ձիերն էին քշում մեզ վրա, կանչում, ուշունց տալիս, ձեռն ընկնողի ուսով շափում մտրակը...

Վանքի տանն էին իջնում և հոգևոր հայրերը, որոնք տարին կամ երկու տարին մի անգամ այցի էին դուրս գալիս օրհնելու հավատացյալ հոտին և ստուգելու մայր աթոռի կալվածքները: Պատահում էր, որ նրանք ընդունում էին գյուղացուց, «լսում» թավաղի ահից շատ զուսպ և խոնարհ աղերսող շինականին: Լսում էին և հորդոր կարգում, որ հարկավոր չէ և մահացու մեղք է մայր աթոռի անտառներում փայտ կտրել, շոայլում օրհնություններ և մուշ-մուշ մրափում բմբուլե բարձի վրա:

Դարչոյին հաջորդում է Մարտիրոսը, որ իր նախորդից օրինակ վերցնելով անտառի զանազան մասերում շինել է

տալիս պահականոցներ, որոնց կառուցման վրա աշխատեց-
նում է նույնիսկ կանանց: Այդ տարիներում սով է եղել և թե-
կուզ վանքի տան ամբարներում դեռ հին ցորենը մնում էր, մի
բուռ հատիկ անգամ չի տվել այն աղքատներին, որոնք ոսկրոտ
երեխաների ձեռքից բռնած անտառներում էին թափառում,
ուտում վայրի մրգեր, քանդում տատրակների բները և աղավ-
նի որսում:

Կիսախելագար մարդ էր նա: Ամենից շատ սիրում էր իր
շներին, որոնք բոլորն էլ մի գույնի և մի բոյի էին: Որսորդ
10 էր, թեկուզ հրացանով շատ քիչ էր որս անում: Նա շներին բաց
էր թողնում անտառում, ինքն էլ նրանց հետ վազում, հարայ
տալիս, խրտնեցնում պախրաններին, որչերից դուրս բերում
վայրի գազաններին, և շներն օղակ կազմած վրա էին վազում,
իսկ ինքը դանակը ձեռքին հարմար վայրկյանի էր սպասում,
որ վրա թռչի և դանակը խրի վիրավոր գազանի ծոծրակի մեջ:

Նրա շների վզին երկաթե օղակներ կար հագցրած, օղակ-
ների մեջ կեռ ու ցից-ցից մեխեր, որ քրքրում էին որսի միսն
այն ժամանակ, երբ շները երախները բաց արած վրա էին
վազում և կծոտում: Ամեն անգամ որսից վերադառնալուց հե-
տո թավաղը բրդով սրբում էր արնոտ մեխերը, մաքրում մսի
20 կտորներից և օղակները հանում, որ մեխերը խարտոցով սրի:
Նրա շներն այնպես էին վարժվել, որ օղակները հագցնելուց
հետո այլևս հանգիստ չէին մնում: Իսկ Մարտիրոսն առանձին
հաճույքով նրանց գրգռում էր, դարպասը փակում և գազա-
զած շների բերանը զցում փողոցում հենց այդ բոպեին բռնած
խոզի մի ճուտ և կամ հոտից ետ մնացած ոչխար:

Կուրթանեցի Տիգրանը ոչ տուն է կառուցել և ոչ էլ պա-
հականոց: Նա մի նպատակ ուներ՝ որքան և ինչպես կարելի
էր փող շատ հավաքել: Աժան գներով վաճառում էր անտառը,
30 սինողին գրություններ ուղարկում, որ ժողովուրդն աղքատ է,
պարտքերը շեն կարողանում տալ, այնինչ ոչ մեկի օրոք այն-
քան շատ դրամ չի գանձվել գյուղերից, որքան նրա օրոք: Հենց
լսում էր, որ այսինչ գյուղացին վաճառել է մի բան կամ մի
տեղից ձեռք է բերել մի քանի ռուբլի, իսկույն նրան տուգա-
նում էր այն գումարի չափ, որի մասին նա լսել էր: Պատա-
հում էր, որ փողոցով անցնելիս մի երեխայի ձեռքին երկու

կոպեկանոց է տեսնում: Նա ոչ միայն խլում է պղնձե դրամը, այլև երեխայի հորը կանչում և տուգանում... քսան ռուբլի:

— Եթե լակոտի ձեռին երկու կոպեկ ես դրել, ուրեմն քեզ քսան մանեթ պիտի լինի:

Նրա մարդիկ իզուր տեղը շէին ծեծում: Ու հենց առաջին հարվածից հետո, եթե ծեծվողը Կուրթանեցուն խոստանար մի ռուբլի, ծեծը կդադարեր, պարանների կապերը կթուլացնեին, որ կարողանար գնալ և բերել:

Կուրթանեցու մասին երկու բան են պատմում: Մեկ այն, որ նա միջնորդութուն է հարուցել վանքին հասանելիք «հոգեբաժին» մի ռուբլին երկուտակելու, քանի որ առաջվա շափ շեն մեռնում, դրա համար էլ մուտքը սակավ է: Երկրորդ արարքը գյուղում խանութ բանալն է: Մարցում առաջին խանութը բացվել է Կուրթանեցու օրով, խանութպանը եղել է նրա մարդը, որ կարողացել է երկու թե երեք տարում հավաքել այնքան, որ իրավունք է համարել հայտարարելու, թե Մարց գյուղում ինքը ժանգոտ կոպեկ էլ չի թողել, որ եկեղեցում պառավ կանայք պատարագի ժամանակ գանձակի մեջ գցեն:

Տիգրան Կուրթանեցին հեռանում է, հետն առնում պարկերով ոսկի, իր հաջորդին թողնում քայքայված տնտեսություն և պարտքեր:

Նրա հաջորդը՝ Շահ-Աբասյան ազգանունով մի օքմին, որին հենց առաջին օրը գյուղում անվանում են Շահ-Աբաս, Եփրեմ եպիսկոպոսի շնորհիվ («տեսնում է նրան», ինչպես ասում էր Չատի բիձան) կարողանում է գնել վանքի թավադ լինելու պաշտոնը և Մարցի մսից կտրել այնքան, ինչքան թուրը զորութուն ուներ:

Նրա օրը կարճ է տևում, որպես դաժան դև հանկարծ հայտնվում է Ռոստոմը, որ մինչ այդ աղքատ անտառապահ էր, ուներ լղար մի ձի և ժանգոտ թվանք: Նա մոռացնել է տալիս բոլորին և հասցնում այն վիճակին, որ Մարց գյուղում երանի տալով են սկսում մտաբերել Դարչոյին ու Մարտիրոսին և կասկածում, թե չլինի՞ ծնվել է ինքը Նեոը, և աշխարհը հասել է իր վախճանին:

Անտառապահը դառնում է ահեղ մի արքա, սանձարձակ ու վայրենի:

Ռոստոմը մոտակա գյուղիցն էր: Նրան ծանոթ էին անտառի բոլոր կածանները, սակայն ավելի լավ գիտեր այն ուղին, որով խուլ այդ երկրում կարելի է ունենալ անբավ գանձ, դառնալ կատաղած եզ և պողաճարել ամեն խոշընդոտ:

Նա միանգամից իրեն բաց չթողեց: Ասպարեզ մտավ իբր քարեսիրտ, նազով քայլեց, շատ կամաց, որ հետո ոստյուն անի և ճանկերը խոր խրի:

10 — Խոսալ մի, նրա անունը մի տա... Մենք մատուռ պիտի շինենք նրանից մեզ ազատողի համար,— ասաց մի գյուղացի, երբ Չատի բիձան անցած օրերի պատմությունը հասցրեց մինչև Ռոստոմի գյուղ գալը:

— Որտեղ մի լավ բան տեսներ, խլում էր... մեկի դռանը մի չաղլիկ ոչխար տեսներ, պիտի ասեր, սա ինձ է վայել... Եթե մեկի հագին մի լավ շոր տեսներ, էղ քեզ չի սազում կասեր, տուր ինձ... հեռու երեսից, լավ շունն էլ էր խլում, տանում: Տասը մանեթ տար մեկին պարտք, ամեն տեղ կտարածեր, թե ինքն աղքատին ձեռ է բռնում: Մեկ էլ կգար, կասեր, թե հիմա տուր, թե չէ էգուց առավոտ քսան մանեթ կառնեմ... Եվ առնում էլ էր... Ո՞վ էր նրա առաջին կարում խոսք ասի: 20 Ժողովուրդն ուռու պես դողում էր: Պրիստավի վրա մատն էնպես թափ տվավ, ասես գեղի գղիրն է առաջին կանգնած:

Շատ չի անցնում, Ռոստոմը վճարում է պարտքերը, քայքայված տնտեսությունը կարգի բերում և ամրացնում պրեսը, որի տակ ճմվում է գյուղը, ինչպես ձիթհանքի քարերի տակ կտավատի բլիթները: Հոսում է յուղը, որ բրտինք էր և արցունք, սինոդի սրբազան հայրերը գոճ էին, ու ամեն ինչ կարգի է գալիս:

Մի քանի տարում նա ստեղծում է իր տնտեսությունը: Ուներ ութ հարյուր ոչխար, տասը ձի, քառասունից ավելի կով, 30 մոտ հարյուր փեթակ մեղու: Այդքան միջոցից նա մի փութ մեղր էլ չէր ծախում: Շրջանակներով ոսկեզույն մեղրը նվեր էր ուղարկում գավառապետին և այլ մեծամեծ շինովնիկների. որոնք քննում էին գյուղացիների գանգատը:

Ռոստոմն անում է այն, ինչ մինչ այդ ոչ ոք չէր արել: Գյուղի սիրուն հարսն էլ նրա աչքին դառնում է գեր ոչխար, ոք

միայն իր հոտին էր սազական: Եվ եթե նրան չէր հաջողվում ուզածն անել, տուգանք էր գրում, միևնույն ժամանակ իմաց տալիս, որ եթե կնոջն ուղարկի իրեն մոտ, կարող է տուգանքը ջնջել:

Մի անգամ աչքն ընկնում է մեկի կնոջ: Հետևում է, և այն բռնակնի, երբ միամիտ կինն աղբյուրն է գնում, թաքստոցից գուրս է թռչում, փորձում նրան բռնել: Մարսափահար կինը փախչում է: Հենց նույն օրն էլ Ռոստոմն իմաց է տալիս այդ կնոջ ամուսնուն, որ պրիստավին արդեն մատնել է նրանից գանձվելիք տուգանքի մասին: Մարդ են մեջ գցում և միայն նրա միակ կողմն առնելուց հետո՝ Ռոստոմը համաձայնվում է տուգանքը զիջել: Իսկ կովին կոչում է նրա կնոջ անունով:

Լինում են մարդիկ, որոնք փորձում են նրան համոզել, որ փախլի նամուսին ձեռք չտա, լավ չի վերջանա, արյուն կխաղա մեջտեղ: Ու միշտ նույն պատասխանն էր տալիս.

— Առաջի գնդակը թող ես արձակեմ... նրանից հետո ինչ ուզում է թող լինի:

— Էլ առաջվա լղար ձիով չէր ման գալիս: Նրա տակին հրեղեն մի ձի էր, որի նմանը չկար ամբողջ շրջանում: Զույգ սանձերով հագիվ էին կարողանում գլուխը պահել: Ու եթե վրնջար, ձորերն արձագանք էին տալիս, իսկ թռչելուց պայտերը զրնգալով դիպչում էին քարերին և կայծեր էին թռչում սմբակներից:

Շամուտ գյուղում Դայնանց պառավի հետ պատահածը մինչև հիմա էլ բերնեբերան են պատմում: Ռոստոմը նրանց հին ծանոթն էր և առանձին շնորհ էր համարում իր հին ծանոթի տանն իջնել: Մի օր էլ, երբ հյուր է գալիս նրանց մոտ, ձին տանում են գոմում կապում, իրեն էլ հյուրասիրում:

— Երբ քնից զարթնում է, գնում է գոմը ձիուն նայելու: Տեսնում է, որ իր կապածը չի:

— Պառավ, էս ձիու գլխով մի բան է անցել... սրան ուրիշ ձիու վրա են քաշել...

Պառավը երդվում է, որ ինքը տեղեկություն չունի, գոմն էլ չի եկել: Անցնում է մի տարի, և հանկարծ Ռոստոմին լուր են բերում, որ Շամուտում մի ձի քուռակ է բերել, քուռակը նրա ձիուցն է, նրա նման: Երբ ստուգում է և քուռակը տես-

10

20

30

413

նում, անմիջապես խլում է քուռակը, գյուղացուն էլ տուգանում անտառից փայտ գողանալու համար:

— Դու ի՞նչ մարդ ես, որ իմ ձիու նմանն ունենաս...

— էլ համբերելու հնար չկար... մի գիշեր էլ խելք-խելքի տվինք, ասինք մարդ ուղարկենք էջմիածին, կաթողիկոսի ձեռու ոտն ընկնենք, գուցե թե մեզ խղճա, էս անիրավին փոխի, մեզանից հեռացնի... քսանհինգ մարդով ճանապարհ ընկանք: Ասինք, վնաս չունի, թող շատ լինենք, որ առաջներս չկտրեն: Էնպես էլ շարացած էինք, որ եթե պրիստավն էլ գար մեր առաջը, քարկոծ էինք անելու...

10 Ամենքս իրեն համար հաց վեր կալանք, ոտով ճանապարհ ընկանք, գնացինք Փամբակի գյուղերով դեպի Սիպտակի սարերը, վրա եկանք Աբարանի գյուղերը... Ամեն տեղ էլ մեր դարդն էինք պատմում, մեզ տանում էին, տեղ տալիս: Մի քանի դժվար տեղեր էլ գյուղացիք մեզ վալադ մարդ տվին, որ անցկացնի... Զորս օրում հասանք էջմիածին, ջարդվա՛ծ. կոտրատված, որի տրեխներն էր ցրիվ եկել, որն էլ ճամփի շատը հենց բորիկ էր գնացել: Էդպես հասանք կաթողիկոսի պալատի մոտ, պատերի տակ նստոտեցինք: Մի քիչ որ շունչ առանք, իրիկնապահին, տես-

20 նենք մի քանի վարդապետ եկան մեր կողքով անցան, ժամ էին գնում: Նրանցից մեկը մոտեցավ հարցրեց, թե ո՞րտեղացի ենք, ինչո՞ւ ենք պատերի տակ... ասաց՝ գնացեք, էգուց արեք, կաթողիկոսը հիմա չի ընդունում... վերջը ինչ երկարացնեմ, երեք օր մնացինք պատերի տակ: Մենք էլ տաքին անվարժ ժողովուրդ... խաշվեցինք, իմ ոտերս մաշկահան էր եղել: Երեք օրի վրա մեզ կանչեցին... գնացինք մի սրբազանի մոտ. նա հենց կաթողիկոսի մոտն էլ լինում էր: Մեր ցավն ասինք, լսեց, հետո թե դուք գնացեք, ես կարգադրություն կանեմ: Վերջն էլ մի վարդապետի կանչեց, հրամայեց, որ թանգարանը բաց անի, մեզ ցույց տա միջին եղած բաները: Հետներս մի քանի կոպեկ էինք տարել ճանապարհի ծախս... էն էլ թանգարանում խաշ-

30 համբույր տվինք. դատարկ ջիբով դուրս եկանք...
Ու մի քիչ հետո, ասես անցկացած ճանապարհը մտաբերելով, Զատի բիձան ավելացրեց.

— Զուր էլ գնացինք... եպիսկոպոսը հլա մինչի օրս էլ կարգադրություն է անում: Փամբակի կողմերում ճամփին

մեզ մի մարդ պատահեց, հարցրեց, թե ինչ մարդիկ ենք... մի քիչ միտք արեց ու ինձ թե՛ քիձա, ձեր գյուղում թվանք կճարվի՞, ես էլ ասի, բա առանց թվանքի գյուղ կլինի՞... թե մի կտրիճ տղա չկա՞, որ նրա փորը ծխով լցնի, ազատի ձեզ... ասեց ու ձին մտրակեց... իսկի շիմացանք էլ թե ով էր:

Անցնում է երկու-երեք ձմեռ: Յուրտ մի գիշեր, երբ բուքը պտույտ էր տալիս կտուրների վրա և երդիկներով ձյուն թափում, երբ գալյն անգամ դուրս շէր գալիս իր թաքստոցից, Մարց գյուղում մի ձիավոր ծեծում է քարափի գլխին կուշ եկած տնակի դուռը. ներսում ոչ լույս կար, ոչ էլ շունն էր հաշում: Զիավորը ձին կապում է դռնակից, բարձրանում թամբի վրա, ապա պատի գլխով թռչում:

Զիավորը վանքապատկան անտառի պահակներից էր, որ Ռոստոմի հրամանով այդ բուքին եկել էր տանտիրոջը վանքի տունը կանչելու քննության, քանի որ անտառից գողացած գերանների հետքերն անհետանում էին հենց նրա տան մոտ:

Տանը վայնասուն է բարձրանում: Տկլոր երեխաները դուրս են թափվում վերմակի տակից: Հիվանդ հայրը խնդրում է պահակին, որ կգա լույսը բացվելուց, որ հիմա ուժ չունի տեղից վեր կենալու: Դուռը մի անգամ էլ է բացվում, բուքը ձյուն է շարտում, և երեխաները տեսնում են, թե ինչպես յափուռջավոր մի մարդ մոր թևից բռնած դուրս տարավ:

— Նրան գերի էին տարել, որ առավոտը մարդը գնար վանքի տունը...

Երկու շաբաթ շանցած անտառի ճանապարհին երեք անգամ կրակում են: Եվ մինչև անտառապահները գյուղից դուրս կվազեին կրակոցի վրա, գետի մյուս ափին, անտառի միջից վրնջալով դուրս է փախչում սպիտակ ձին՝ Ռոստոմի արնոտ դիակը թամբից կախ ընկած, մի ոտքն ասպանդակի մեջ:

— Համարյա շիմացանք, թե ով սպանեց նրան: Երեք հոգի են եղել, ձյունի վրա ոտնատեղերը տեսանք... Մառի տակ փոս էին արել, նստել... Շատ էլ պապիրոս էին քաշել. մենակ էն, որ տունը քարափի գլխին էր... Եփրեմ էր անունը... երեքից մին նա էր... էն երկուսը մինչի օրս էլ շիմացվեց: Հենց դրանով էլ Եփրեմի տունը փչացավ... պատերը մնում են

քարափի գլխին... կնիկը գարունքվա դեմ մեռավ. երեսեքն էլ բարեկամներ տարան. մեծ տղան հիմա գինվորության մեջ է:

— Իսկ Եփրեմը,— հարցրի ես:

— էդ գործով փշացավ: Եկան քննություն արին. անասելի շարժարանք քաշեցինք: Կալմեջ էին արել մեզ ու տավարի նման պլետով վեր էին հատում... Հրես սրա ատամները էն ժամանակ փշրեցին... Սևքարեցի մի ուրյադնիկ կա, անունը Սահակ: Նրա նման անխիղճ ծեծող հավատա, որ ամբողջ կավկազա հողում շլիներ:

10 Տանում են Եփրեմին, հարևան գյուղիցն էլ նոր պսակված մի երիտասարդի, որ, ինչպես Չատի բիձան էր ասում, մի գյուղ արժեր՝ աշխատավոր, խոնարհ ու համեստ... Տանում են պրիստավի մոտ, քննություն են անում, երկուսին էլ ուղարկում բերդ: Բայց տեղ չեն հասնում... Ռոստոմի մարդիկ վրա են տալիս և երկուսին էլ թրերով մորթում, գլուխը մի ձոր քցում, թևը՝ մի: Ահ ու դողով հարազատները սիրտ են անում գնալ և ձորերից հավաքել թրատված մարմինները: Միայն երիտասարդի գլուխը չեն գտնում, իսկ մյուսի մարմնից էլ գայլերը պոկոտել էին կրծքի մսերը:

20 Է՛... ոնց անց կացան էն օրերը: Ով կհավատար, թե մեզ համար էլ մի օր լույս է բացվելու: Օձի բերանից մեզ ազատեցիք... Երևի կարդացած կլինես, որ էն վաղ ժամանակներում ճորտ ու պարոն են եղել... Մենք ճորտ էինք, պարոն էլ հո խիղճ չուներ... Ազատությունը որ եկավ, մի գիշերում վանքի տունը ցրիվ տվինք, քարերը ձորը թափինք: էն օրվանից թավադի հետքն էլ չքացավ, վանքինն էլ...

30 Իջանք բլրակից: Մութն էր, և ամառվա աստղալույսի տակ հագիվ կարելի էր նշմարել ճանապարհն ու քարերը: Ինչքան իջնում էինք, այնքան խլանում էր Մարց գետի աղմուկը. ասես գետն էր ավելի խոր թաղվում: Չատի բիձան առաջից էր քայլում, փայտով գետինը շոշափում, քարը փոսից որոշելու: Իսկ ներքևում պլպլում էին գյուղի մարմանդ ճրագները:

ՊԵՄՉԱՅԻ ՀԱՆՔԵՐՈՒՄ

Անի կայարան՝ ցամաք դաշտի մեջ մի քանի սպիտակ տներ՝ պառավ ակացիաների սովերի տակ. հողածածկ խրճիթներ՝ մակաղած հոտի նման: Կայարանի հերթապահը դժկամորեն մոտենում է պղնձյա զանգին, ասես կսկծում է, որ զնացքն այդքան քիչ է կանգնում: Ապա շոգեմեքենայի զիլ սուլոցը, որից դողում են ակացիաները: Գոռալով զլորվում են վազոնները, ռելսերի վրա թողնում տաք գոլորշի, մազութի կաթիլներ: Առաջին կեռմանում մի անգամ էլ է ծվծվում մեքենան, ինչպես ճայր ծովի վրա ու ծածկվում է բլուրների հետև, հետքից ցամաք հողի վրա նետում ծխի ժապավեն: 10

— Ընկեր, որտե՞ղ է «Անի-Պեմզան»,— հարցնում եմ:

— Պեմզայի զաղե՞քը,— պատասխանում է ինձ զանգահարը և ձեռքով ցույց տալիս դիմացի բլուրի կողմը:— Ահա ճամփեն...

Անիվների գուգահեռ հետքը խոր ակոսներ է գծել, ոտքով ու ձիով մարդիկ են անցել, տրորել ու հարթել ճանապարհը: Դեռ ծեծված ճանապարհ չէ, տեղ-տեղ անցնում է դեղնած ծղնոտի ու խոտի վրայով, իջնում շատ «ուսուլով», ինչպես տեղացիք են ասում և ապա նույնքան հանդարտ բարձրանում: 20

Չի երևում ոչ մի թուփ, ոչ մի թռչուն: Լուսթյունն այնքան խորն է, որ կարող ես լսել սրտիդ բարբախումը:

Ահա և բլուրը: Հետ եմ նայում. մերկ բազկի նման կեռ է սվել ճանապարհը: Ներքևում կայարանի շենքն ու ծառերը օազի նման են, ավելի շուտ կանաչ պարտեզ՝ ցամաք դաշտում: Իսկ եթե ջուր լինե՞ր, և դաշտն ու բլուրները թաղվեին կանաչի տակ, սպիտակ տները հասնեին Ալազյազի կապույտ գուգաթին:

Լ. Զանապարհն անմոռնչ եզան նման կախում է գլուխը: Կայարանը, ծառերը, պղնձյա զանգը կարծես սուզվում են ջրի տակ: Արևմուտքում բացվում է մի այլ անծայր տափարակ, եզերված բարձր լեռների պարսպով:

10 Ու հանկարծ շոր ու ցամաք ձորի մոտ, բարձրավանդակի վրա շարեշար ընկած քարաշեն երկհարկանի տներ, որոնց սպիտակ պատերն ու թիթեղյա ներկված կտուրները շեն համակերպվում շրջապատի ամայության և ծանր լուսթյանը: Ուրախությունից ուզում ես կանչել Քսենոֆոնի նման, երբ ծովը տեսավ:

Իսկ քառորդ ժամից հետո, բարձր տան սենյակում, որի դուռն անընդհատ բաց ու խուփ են անում, մտնում ու դուրս գալիս, հարցնում, երկար ու կտրուկ պատասխան ստանում այն ընկերոջից, որին բոլորը Քրիստափոր են կանչում և որը բավական աղմուկով կնքում է թղթեր, ստորագրում և միևնույն ժամանակ հրահանգներ տալիս մի քանի լեզուներով, բայց այն առողանությամբ, որ ունի լեզուն աշխատանքի բովում սովորած մարդը, — երբ տեսնում ենք այդ ամենը՝ ջրի մեջ ընկած ձյունի նման հավվում է ցամաք դաշտի ծանր պատկերը:

20 — Էստեղ առաջ ոչինչ չի եղել... Քրդերը փորել են մեծ զաղաներ, հարկովի վակզալի շափ, — ասում է Քրիստափորը և ծիծաղում իր համեմատության վրա: — Այնինչ — ոսկի կա թաղված հողի տակ:

Եվ շտապ մեկին կարգադրում է ինժեներին կանչելու, երկրորդին գիշերվա հերթի աշխատողներին դինամիտ տալու, ու օգտվելով վայրկյանի դադարից, հանում է սեղանի դարակից մի թերթ, մեկնում ինձ:

— Նա, կարդա... Իտալիայում պեմզայի փութը 22 մանեթ է ոսկով... Մերը նրանցից լավն է: Զալատոյե դելո, ի՞նչ ես ասում... Կրուզոմ պեմզա: Մեր տակին էլ է պեմզա:

30 Եվ նա հետ է քաշում աթոռը, կասես պեմզան հատակին է թափված:

Քրիստափորը «ուռում» է, երեսուն տարվա շախտյոր: Նա աշխատել է Զիատուրում, գերմանացիների մոտ, Ալավիրդի, Շամլուղ: Կապսում ջրանցքի թունելի քարերը պայթեցնելու գործը նա է ղեկավարել:

— Պագաժդի, գաբագոյ, — նորից է դառնում ինձ: — Հիմա կգնաս շախտերը, կտեսնես...

Շախտի անունը տալուց աչքերը փայլում են, դեմքն այլ կերպարանք է առնում: Հասկանում եմ, թե ինչու այդպիսի թափով է զարկում կնիքը: Վարժված ձեռքը ռիթմով կրկնում է 30 տարվա արածը՝ քլունգը զարկում է հանքին:

* * *

Ներքև ձորում պեմզայի մանրուքն ու ավազը բլրանման կիտուկներ են կազմել: Փայտյա բարձր կամուրջի վրայով վագոնները գլորվում են, շրջվում, և պեմզան թափվում է ցած, ծանր ու մեծ կտորները գլորվում են ավելի հեռու, մանրերը՝ մոտիկ: Բահերով լցնում են կլոր մաղերի մեջ, որոնց պտտելուց հողի փշրանքը մաղվում է, և մնում է ոսկեգույն պեմզան:

Հենց այդտեղ էլ բաժանվում են տեսակների՝ «էքսպորտ» և «շինարար» պեմզա: Առաջինը, որ ավելի խոշոր կտորներ է, տեղափոխում են այլ շենք, ուր կանայք թիթեղյա տաշտերի մեջ լվանում են, կոշտ խոզանակով քերում և լցնում միանման պարկեր, որոնց վրա մի կին անընդհատ դրոշմում է. «Ani-Arménia»: Ու այդ պարկերը նավի խորքերում դարսած լողալու են ծովեր, օվկիանոսներ...

Բարձրանում ենք պեմզայի կիտուկների վրայով: Իմ ուղեկիցը՝ նիհար ու բարի աչքերով երևանցի Հովհաննեսը, պատմում է, թե ինչ դժվար էր սկզբի տարին:

— Կոոպերատիվ չկար, ապրում էինք պալատիկաների տակ... Գալիս էին, մի օր աշխատում, փախչում: Մի խոսք, տաժանակրիլի աշխատանք էր... Այ, տեսնում ես մաղը, Քրիստափորի շինածն է, ձեռ նա է տվել:

Չազարածև մի արկղ է, ինչպես ջրաղացի ցորնատունը: Արկղի ներքևում փակցրած են նոսր ու խիտ մաղեր, իսկ ավելի ներքև տախտակի մի ուրիշ արկղ է, շարժական հատակով: Այդ ամբողջ բուրգը շարժվում է էլեկտրական ուժով:

Հանքով բարձած վագոնները մոտենում են արկղին, դատարկվում և հետ վերադառնում: Էլեկտրական մաղը և՛ ջրկում է պեմզան, և՛ հողն ու մանրուքը լցնում ներքին արկղի

մեջ, որի հատակը բացում են, հողը դատարկ վագոնների մեջ լցնում և հեռու թափում:

— Առաջ մենք էինք գլորում վագոնները, հիմա ձիերն են քաշում... Միանգամից հինգը-վեցը, — պատմում էր Հովհաննեսը: Մտտենում ենք հանքի բերանին: Կամարածև կտրվածք է, մաքուր ու շոր, պատերը կոկ, ինչպես գյուղական թոնիրը:

— Սա իմանում ես, ուրիշ շախտի պես չի... Օղը մաքուր, ամառը զով, ձմեռը տաք... Մի քիչ դինամիտի ծուխն ա, թե չէ ի՞նչ կա, ոնց որ Աստաֆյանը...

10 Բարակ ուսերն ուղղածիզ սլանում են ներս: էլեկտրական ճրագները պլպլում են: Իսկ դուրսն այնպե՛ս արև էր: Պաղ բամի է փշում: Հովհաննեսը վառում է ձեռքի լամպարը: Հեռվից լսվում է թույլ գվվոց, և կանչ. «Հե՛յ...», արծազանքը դրնգում է գետնի տակ, կտուրից մանրիկ փշրանքներ են թափվում:

— էս կողմն արի, — ձայն է տալիս Հովհաննեսը և պահվում պատի մեջ փորված նիշում:

Հետևում եմ նրան, ու մի րոպե անց լաբիրինթի կիսամութում երևում է ձիու սիլուետը, որ սլանում է հողմի նման: 20 Հետևից գլորվում են ծանր բարձած վագոնները:

Դուրս ենք գալիս թաքստոցից ու շարունակում մեր ճանապարհը: Շտոյլնյան ճյուղավորվում է, գնում ավելի խոր, բաժանվում են էլեկտրալարերը, վագոնների գծերը: Դատարկ է, լուռ: Հանքափորները շատ հեռվում են:

Հովհաննեսը հաճախ ձեռքի լամպը մոտեցնում է պատին և ցույց տալիս այն երակը, որի համեմատ և փորում են:

— Սրա վերևը ֆող ա, պեմզան տակն ա... Սա որ ցածրացավ, ուրեմն իմացի, որ այնպիսի խորը գնաց: Մեր նշանն էս տամարյն ա: Երակը սև շերտով անընդհատ հետևում է, 30 մերթ բարակնում, մերթ լայնանում:

— Սրան էլ խոխոլ ենք ասում: Սա նշան է տալիս, որ էքսպորտի պեմզա կա, լավ, իմանում ես... Համարյա ֆող չկա էսպես տեղում:

«Խոխոլը» բնական փշակներ են, լցված պեմզայի խոշոր կտորներով, ասես պարկի մեջ ոսկորներ են լցված:

— Հը՞, աղչի, քնե՞լ ես... Քանի՞ վազոն են հանել:— Նիշից դուրս եկավ մի կին, զգուշութեամբ ծածկելով գիրքը:

— 97,— պատասխանեց կինը Հովհաննեսին: Նրա նստած տեղը երկաթագծի ցանցի կենտրոնն է: Հանքահորի զանազան մասերից վազոնետները նրա կողքով են անցնում: Տարօրինակ էր նրա հաշվելու ձևը: Բարակ տախտակի վրա դրված են թվեր ըստ կարգի: Յուրաքանչյուրի մոտ լուցկու հաստութեամբ անցք: Կինը մեխի շափ երկաթը տեղափոխում է թվից թիվ և ուզած վայրկյանին ասում վազոնների հաշիվը:

Հովհաննեսը հաշվետախտակին էր նայում, իսկ ես ձեռքս մեկնեցի նրա գրքին: Ահռելի ծանրութեամբ սարի տակ, գետնի խորքում, իր նեղլիկ նիշի մեջ վազոնետից-վազոնետ այդ աղչիկը գիր կապ անելով կարդում էր Չեստովի «Կաշտանկան»: Այդ օրը նա 9-րդ էջն էր շրջել: 10

Մենք ծովեցիներ ձախ: Աղչիկը կուշ եկավ իր տեղում, գլուխը կախեց գրքի վրա... Հեռվից լսվեց ահարկու «հեյը»:

Մութն ավելի թանձրացավ: Իմ ուղեկցի լամպարը լուսավորում էր նեղ շտրեկների դար ու փոսը: Տեղ-տեղ պեմզայի կիտուկներ էին դարսած: Վազոնները դեռ նրանց շէին մոտեցել: 20

— Այ խոլխոլը... Հինգ վազոն պեմզա կա էս փոքր տեղը,— ասաց Հովհաննեսը և լույսը դարձրեց: Կարծես դիտմամբ իրար վրա շարած քարի պատ էր: Ու լույսի տակ աչքիս ընկավ հանքի սլատին փորած մուրճն ու մանգաղը...

— Բրոնյի տղերքն են սարքել,— բացատրեց Հովհաննեսը, լուսավորելով լաբիրինթի կամարները, բազմաթիվ անցքերը, հրապարակները կամ ինչպես նա էր ասում, գարոյները, շտրեկները:

Լույսերը նորից շատացան: Սակայն նրանք շարժվում էին կամ օրորվում: Չայներ էին լսվում, մեկը երգում էր խուլ ու մեղմ: Երևու ստվերներ, տաշկանները գլորելով, անցան մեր մոտով, ծովեցին դես:ի երկաթգիծը: 30

Մենք հանքի խորքերում էինք: Նրանց մոտ, որոնք շապիկն էլ են հանում, որ ավելի համարձակ քլունգով խփեն փուխը հանքին: Քարերը խշրտալով գլորվում էին փոշու ամպի մեջ, նավթի ճրագներն աղոտ փայլով էին լուսավորում:

Մի ուրիշ անկյունում պերՖորատորի պողպատյա բրիչով անցքեր էին փորում դինամիտի համար:

* * *

Մայրամուտ էր, երբ հանքից դուրս եկանք: Սակայն ոչ նախկին մուտքից:

— Ամենապերվի հանքը սա էր,— ասաց Հովհաննեսը: Մուտքը լոռվա ձորերի տունելի նման բարձր ու կամարածե, շատ ողորկ ու հարթ սարքած: Մուտքի ճակատին շորացած ճյուղերից պսակ, արևից ու անձրևից խանձված ֆաներայի վրա խունացած տառեր... «ցե մեր Հայաստանի նոր հանքեր»
10 1925 թ.»:

— Հիմա մի սմենան դուրս կգա, գիշերվանը կմտնի... Ամբողջ սուտկան աշխատանք կա...

Ու մենք իշանք տների կողմը: Փայտյա կամրջի մոտ եզան սայլերի շարանն էր: Բարձում էին պեմզան՝ կայարան տանելու համար:

Տների մոտ մեզ միացավ հանքերից դուրս եկող բանվորների մի խումբ: Նրանք շտապում էին լվացարանների կողմը: Ծանապարհին, թափ տալով փոշին շորերից ու երկարավիզ կոշիկներից, Ուրալից եկած մի ռուս հանքափոր իր հույն
20 ընկերոջն ինչ-որ բան էր պատմում իր երկրից ու նրա հանքերից: Մի հայ բանվոր կոտրատած ուսերենով նոր զորացրված կարմիր բանակայինին սովորեցնում էր արտհագուստ ստանալու կարգը: Քիչ հետո թիթեղյա թեյամանները շրխկացնելով գորշ բլուզով մարդիկ գնացին դեպի կուբերը:

Բայց և այնպես շրջապատի ցամաք ու մռայլ տեսքն իր կնիքն է դնում պեմզայի «զաղեքի» վրա: Շենքերը դեռ չեն ժպտում, թեկուզ ներսը մաքուր է, մահճակալները կարգով շարած: Ոչ ծառ կա, ոչ կանաչ, ոչ հանգստանալու վայր: Քիչ են ընտանիքով ապրող բանվորները. չհաշված սևագործները, որոնք տնից մի բանի օրով են կտրվում, մեծ մասն ապրում է զորանոցային կյանքով:

Թեյից հետո, երբ դուրս եկան բակը հանգստանալու, շատերը հետները հացի փշրանք էին բերել շների համար և թեկուզ մի քիչ կոշտ կերպով, սակայն սրտանց, ուրախությամբ

հացի փշրանքները շարտում էին շներին և շոյում նրանց: Մի քանի հոգի կանգնել էին բակում եղած միակ կանաչ, նոր տընկած ծառի մոտ և նայում էին տերևներին: Նրանցից մեկը կոացավ ու մատներով տնտղեց հողը, արդյոք չի՞ շորացել: Բանվորներից ոմանք, մանավանդ նորերը երբեմն բարձրանում են մոտակա բլուրը և Ալագյազի լանջերին ընկած կանաչ օազների մեջ ջոկում իրենց գյուղը, տեսողությունը լարում ավելին տեսնելու:

Բակում պատերի տակ նստում են, հավաքվում, ոմանք ձխում են, ոմանք զրուցում: Մի խումբ հրիտասարդներ 10 քաշքշում են ֆուտբոլի գնդակը: Գալիս է զուռնաչին, թևով սրբում զուռնի լեղվակը և սկսում: Կլոր պարի օղակը լայնանում է, մերթ սեղմվում: Մի ուս կին անցնում է բակի լայնքով. բազմաթիվ հայացքներ հետևում են: Անկյունում մի այլ խումբ Շիրակի մղկտող ու միալար երգով կանչում է. «Շուշան ջան, ա՛րի»...

Քրիստափորը հաշիվներ է անում և պատմում, թե ինչքան պիտի մեծանա Անի-պեմզան, երբ երկաթուղու գիծն ավարտվի, զնացքը հասնի մինչև հանքերը: Շուտով ստացվելու են 20 մեքենաներ, պեմզայի փոշին մամլելու համար: Փոշին շաղախի համար անփոխարինելի է: Պեմզայի հալոցքը սառչում է, ապակի դառնում: Անսպառ է պաշարը, մինչ խորքը կարելի է գնալ և խլուրդի նման փորել ու հանել: Բացվում են նոր հանքեր, հարուստ «էքսպորտի» պեմզայով:

— Պաղածղի դարագոյ... մենք Իտալիային կխփենք...

Մթնում է: Վառվում են շախմատի կարգով շարված էլեկտրական ճրագները, գոռում են բարաբանները: Սրտի նման բարախում է դինամոն: Լույսի տակ պեմզայի փոշին կաթնագույն փայլ է ստանում: Հանքահորի առաջ երևում են ստվերներ, որոնց ձեռքի ճրագներն ասես գետնի վրայով են 30 քարշ գալիս:

Բլուրներն ընկղմվում են խավարի մեջ: Լուսավորված զաղան լողացող նավի է նմանվում, որի լույսերը ճոճվում են: Օղը սառնանում է, իսկ հանքի խորքում, ճրագի տակ քրտնած բրոնզի փայլով բազուկները կծկվում են, բրիշով սարը քանդելու:

ՎԱՐԿԱԳՈՒՅՆ ՏՈՒՖԻ ԵՐԿՐՈՒՄ

Քլուրի ստորոտին, հարթության վրա մի սովորական գյուղ, տները՝ հարթ կտուրով, կտուրներին՝ ամռանը դեղնած դեղեր, աշնանն ու ձմռանը՝ աթարի սև կույտեր ու մզլած խոտի խուրձեր: Գյուղի մեջտեղը քարաշեն ժամը, նրա շուրջը՝ հանգստացող տավարի նման տները, իբր սիմվոլ այն խոսքի, որ դարեր շարունակ ասել են եկեղեցու բեմից՝ «եղիցի հոտ և հովիվ մի»: Ժամի սովերում «հայոց եկեղեցական-ծխական» դպրոցի խեղճ ու կրակ շինությունը, նեղլիկ պատուհաններով, ինչպես խուցը, ներսը՝ կիսամութ, հողից հատակ, ծոված, շարզված նստարաններ, դուրսը փոքրիկ բակը, որ միանում է ժամի գավթին:

Տները քարակույտերի են նման. հեռվից չի երևում ոչ դուռ, ոչ լուսամուտ: Քարակույտերը շատ են ընկել, գոյացրել ծուռ ու նեղլիկ, մճճված փողոցներ, ուր կեղտն ու ցեխը չորանում է, տրորվում ոտների տակ, պնդանում, որ անձրևին ու ձյունին նորից թազանա, արևի տակ գարշահոտությունը տարածի:

Ամեն մի կույտը, լինի տուն, օդա, գոմ, մարագ, հավաբուն, հաստ և ամուր քարերից է շարած, եթե շարողն ուժ է ունեցել, տաշել է, եթե ոչ քարը դրված է այնպես, ինչպես հանքից են հանել: Քարով է պատած բակը, կալը, բանջարանոցը, «բասմայի» տեղը և վերջապես տան կից փոքրիկ տարածությունը, որ ոչ կալ է, ոչ բանջարանոց և ոչ էլ բասմայի տեղ, այլ տան կից հողի պահեստ, որի շուրջը քարով պատել են պապերը, նրանց պապերը, և սերունդը ժառանգել է քարապատ

կառուցվածքն ու հողը, որպես «հայրենիք», օջախ, անձեռնմխելի սեփականություն:

Ավելացրեք այդ գորշ, անհաճո պատկերին մի քանի դեղնած բարդիներ, որ հասնում են գյուղի ծայրին և շվաքարան են ամռան տապին նախրից հետ մնացած հորթի ու կաղ ոչխարի համար, բարդիներ, որ ոչ մեծանում են, ոչ շորանում ու միայն մի ամիս է նրանց սաղարթը կանաչ, իսկ հետո դեղնած՝ փոշով ծածկած, — ահա ձեզ Շորագլայի գյուղը, ուր ապրել են հազարներով Աղասի, Օնիկ, փորփրել հողն արորով, թոնրի միջից սևացած օղայում քաջք ու հրաշքի հավատացել, կրծել ցամաք հացն ու վիզն անմոռնչ մեկնել: Այսպես է Շորագլայի գյուղի արտաքինը՝ չոր ու ցամաք, քար ու քարափ: Այդպես երևաց մեր աչքին Արթիկը, երբ հեռվից նկատվեց կիսակործան «Ամենափրկիչը», բայց լենինականից դուրս գալուց արդեն նկատելի էր, որ ճանապարհը ճոռան սալլի գծածը չի: Ավտոները գնացել ու եկել էին, ճանապարհը տրորել, տեղտեղ դար ու փոսը հարթել: Առաջին գյուղում այն ընդունելությունը, որ մարդիկ, երեխաները, հորթերը ցույց են տալիս ավտոյին, ապացույց է, որ ճանապարհը մեքենայի համար նոր է բանուկ դարձել: Երեխաները բղավում էին, ճշում, կանայք, նույնիսկ հասակավոր կանայք, վազում էին կտուրների վրայով, կախ ընկնում փողոցի վրա: Մի գյուղում, երբ մեքենան կանգնեց՝ դիմացից եկող նախիրը շխրտնեցնելու համար, կողքի տան սրահում պառկած հիվանդ ծերունին գլուխը վեր հանեց, զարմացած նայեց, ու երբ մեքենան շարժվեց, հիվանդը զլխաշորը պոկեց և օղում ճոճեց:

Ճանապարհին հանդիպում էինք բեռնած ֆուրգոնների, սայլերի. կրում էին տախտակ, բետոն, երկաթե ձողեր: Մի տեղ ճանապարհը սարքում էին: Զգացվում էր, որ մոտերքում մի կենտրոն քաշում է այդ ֆուրգոններին, սայլերին, մարդկանց, որոնք մտազբաղ գնում էին: Նոր տնկած սյուների շարքն ուղիղ գծով կտրում էր արտ, բլուր, քարափ և ձգվում դեպի Ալագյազը, որի կապույտ գազաթները պարզ երևում էին հեռվում, իբր ամպերից կախված ապարանք. ճանապարհի ձախ կողմը սպլտակին էին տալիս նոր հողաբլուրները, կամուրջի

10

20

30

կապերը, որոնց վրայով վագոնները պիտի սլանան դեպի Արթիկ:

Մեքենան մի անգամ էլ իջնում է, կտրում ձորակը և սլանում սլաքի նման ձգվող ճանապարհով: Ահա հին գյուղը:

— Եթե վարդագույն տուֆը շինեք, Արթիկի անունը մինչև Բելգիա չէր հասնի,— ասում է ընկերս: Ահա կայարանը:

Գյուղի ծայրին դեղնած բարդիների մոտ, երեք նոր շինություն պատերը փայլվում են արևի տակ: Արթիկի կայարանը. գնացքներն այստեղից ուղիղ մարշրուտով պիտի գնան հեռուները, հազարավոր վերստեր կտրելով: Մի խումբ բանվորներ քանդում են շենքերի առջև ընկած հողաբլուրը՝ ապագա պերրոնի համար:

Աջ կողմն ընկած է «Արթիկ-տուֆի» ապագա ավանը, գլխավոր շինությունները, տաս-տասներկու կորպուսներ, մի կամ երկու հարկանի: Ծենքերի առաջ ընդարձակ ծածկոցն է. վերևում, բլուրների վրա երկաթյա սյուներ, տախտակի կույտեր, իսկ ճիշտ մեջտեղը՝ անդեզիտի բլուրի վրա վիթխարի տրանսֆորմատորը, դեռ ծածկված գերաններով, սանդուղքներով ու տախտակներով:

20 Հրապարակում մեքենան կանդնում է: Թեկուզ մայրամուտ է, բայց աշխատանքը եռում է: Ընդարձակ ծածկոցների տակ սղոցում են, ռանդում, դուռ ու լուսամուտ պատրաստում, կուպր են եփում՝ տան ծածկի գերանների գլուխը կուպրելու, կրի և բետոնի շաղախ են պատրաստում, ավաղ մաղում, թիթեղագործը պատի վառարանների համար կլոր վահաններ է սարքում: Մի քանի հոգի սայլերը բարձում են գերաններով, բարակ ռելսերով, սև երկաթյա խողովակներով, և սայլերը ճրռռ հա ճրռ բարձրանում են, ցրվում զանազան կողմի վրա այն նոր ճանապարհներով, որ երակների նման ցրիվ են եկել բլուրների վրա:

30 — Տու դա՛, տու դա՛,— գոռում է շենքի պատին կանգնածը: Իսկ ներքևից մի քանի հոգի հրում են գերանը և ռիթմով տնքում:

Դրսում թափած են ցեմենտի տակաոններ, ապակիով լիք արկղներ, յուղի ու մազութի բիդոններ, վաղոնետներ, ռելսեր, պատրաստ դոնների ու լուսամուտների բուրգեր, թիթեղ ու

տախտակ, գերան ու շպալ, կղմինդր ու աղյուս: Գետինը պատած է տաշեղով, երկաթի ու թիթեղի կտորտանքով: Երբեմն տաշեղների արանքից քարը մամռոտած լանջն է դուրս ցցել: Ամեն ինչ այստեղ փոխվել է՝ գետնի երեսը, ճանապարհը, հողն ու խոտը:

Ռելսերի կույտի վրա նստել է մի բիձա և դանդաղ, հոգնած մարդու ախորժակով հաց է ուտում: Մոտենում եմ, խոսեցնում, հացի փշրանքները զգուշությամբ հավաքում է բռան մեջ և պատասխանում իմ հարցին:

— Հրաշք որ ասել են, էս է: Սա ոսկի աղբյուր է, լիու- 10
թյուն և լուսավորություն: Վագոնը կգա, դուանդ կշոքի, պատից կախ շէր, բերին ճակտից կախ արին: Մեր կնկտիք բոբլիկ էին, հիմա կարմիր տուպլի կհագնեն: Մի խոսք՝ գտած գանձն է, որ էսքան հազար տարի հողի տակ պառկած էր...

Գրասենյակի մոտ խոնվել են մի խումբ գյուղացիներ, որոնք օրավարձ աշխատում են: Ներսից մեկը փորձում է կարգ սահմանել պատուհանի առաջ խոնված բազմության համար: Լսվում են անկապ խոսքեր, ոմանք իրար են հրում, մեկը կատակ է անում, մյուսը զայրանում է, մի քանիսը գոռում են «սրով, սրով», «ղալաբալաղ միք էնե», սակայն իրենք էլ 20
խանդարում են հերթը, սաստկացնում աղմուկն ու ժխորը:

— Ինչի՞ կնեղենաս...

— Ինձ գրել է սեւագործ բանվոր... Մենք քարի հետ կշար-
շարվինք: Դեկրետը մեզ լեռնային բանվոր կսեպե...

— Վրա քշելով չի էղնի...

— Քարի հետ զօր ու գիշեր խաղամ, ինձ կաշկաշու հետ
հավասար տաս...

— Կեցի կասիրը կանչի, այ օղու...

— Բերմսբերգի վրա արտաժամյա ո՞վ է աշխատել,—
ներսից բղավում է հաշվապահը: 30

— Ճամփա տվեք ստորագրեմ,— ընկերներին բոթելով
առաջ է ընկնում մեկը:

— Տո դե լավ...

— Տո մի յավաշ է՞, արտաժամյա ստանամ:

— Սեթո,— բառաշում է մեկը,— ես առանցի գրամոտ-
նի եմ...

Այդ ժխորի մեջ երկու հոգի իրար հետ վիճում են, թե որտեղ է հեշտ աշխատել՝ վագոնների վրա, թե՞ քարհանքում: Ներսից նորից կանչում են:

— Ականջ էրեք,— բղավում են մի քանի հոգի միաբերան:

— Ով որ գրքույկ շունի, թող չկայնի,— հայտարարում է հաշվապահը:

— Ըհա, օղորմի հորդ,— պատասխանում է նրան պատուհանի տակ խոնվածներից մեկը: Սակայն ոչ ոք չի գնում: Փող ստացողները կոշտ մատներով համրում են ստացածը. 10 չերվոնեցը խշշում է: Ստացողը փողը խոր կոխում է ծոցը կամ ծոցի գրպանը և շտապում տուն:

Քարհանքը մոտիկ է: Տներից վեր բլուրի գագաթին մի քանի տեղ քար են հանում տեղական ձևով. ծանր մուրճերով զարկում են պողպատ սեպերին, կոճակների նման սեպերը շար են ընկնում փափուկ տուֆի լանջին, խրվում ներս ու մի հարված էլ՝ հանքը ճեղք է տալիս, ինչպես շաքարի գունդը: Տուֆը կամ ավելի ճիշտ տուֆի լավան ճեղքվում է հավասար և ուղիղ գծով: Քարի այս հատկությունն վրա է հիմնված տեղական ձևը:

20 Այս քարհանքի հանույթն օգտագործում են նոր կառուցվող տների համար: Ոչ մի տեղ մեզանում տների պատերն այդքան արագ չեն բարձրանում, որքան «Արթիկ-տուֆում», նոր շինած տներից մեկի պատերը շարել էին ութ օրում, իսկ տունը երկհարկանի էր, միջին մեծությամբ:

Վերի քարհանքի նորությունը նեղ գծանի վագոններն են, որոնցով քարերի փշրանքն են թափում, քարհանքները մաքրում և ապա կտրած քարը դարձյալ ուղիների վրայով տեղափոխում ցած, կառուցումների վայրը:

30 Ամենահետաքրքիրը մեքենայացված քարամշակումն է, որտեղ կենտրոնացված է համարյա ամբողջ աշխատանքը: Բլուրի լանջին տեղ-տեղ ուղիների գծերը խաչաձևում են իրար: Սև խողովակների շարանը ցույց է տալիս, որ հեռվից, Ալագյազի փեշերից ջուր է բերվելու: Տեղ-տեղ անցնում են քառակուսի կարվածքով հորերի կողքով, որոնց բերանին փայտյա վերելակներ են, հաստ պարանով փաթաթված:

Ինչքան հեշտ են տուֆը փորում: Այդ հորերը կամ ինչպես

Արթիկում են ասում՝ շուրֆերն ավելի հաճախակի են նրևում: Թեկուզ արևը նոր է էլել, բայց աշխատանքը ետում է: Ահա երկու հոգի բահով հող են քանդում. նրանք փորում են շուրֆի բերանը: Նրա կողքին բավական խոր են գնացել. շուրֆի բերանին կանգնած մեկը փաթաթում է պարանը և բարձրացնում քարի փշրանքով լի վեդրոն: Շուրֆի հատակին նստած է փորողը, նույն սեպերն ու մուրճը, ինչ որ քարհանքում: Մի քանիսն այնքան խոր էին գնացել, որ վերևից նայելով հագիվ կարելի էր նրանց նշմարել հորի մթության մեջ:

Շուրֆը քանդելը քարը մեքենայով հանելու առաջին աշխատանքն է: Շուրֆի խորությունը տուֆի շերտի հաստությունն է ցույց տալիս: Այդ հորերում դրվում են սղոցող սյունները՝ մոնտանսյորները, որոնք հենարան են պտտվող պողպատյա լարի, որը և կտրում է քարհանքն այնքան թեթև, ինչպես տատը թելով կտրում է փափուկ սապոնը:

Ահա և մոնտանսյորները: Եթե ձեզ չբացատրեն, դժվար է կապակցել այն բոլորը, ինչ աշփոզ առաջն է: Շուրֆերի ներսում ցցված են հաստ ուղիների շափ երկաթներ, որոնց ծայրին անիվներ են պտտվում: Այդպիսի սյուններ շատ են, տարբեր հեռավորության վրա: Պողպատյա լարն անընդհատ շրջան է տալիս. տեսնում եք ինչպես են անիվները դառնում, բայց թվում է, թե լարը չի շարժվում:

Մի գծի վրա ընկած շուրֆերի մեջ մոնտանսյորի սյունից մինչև մյուս մոնտանսյորի լարը թափով իջնում է և սղոցի նման խրվում տուֆի մեջ: Յուրաքանչյուր մոնտանսյորի մոտ փոքրիկ արկղ է, կվարցի կարծր ավազով. ջրախառն ավազը ծորակով թափվում է բարակ նովդանի մեջ, ջուրն ավազը լցնում է լարի կտրած ճեղքի մեջ, ավազն ընկնում է լարի տակ, գոյացնում սղոցի ատամները և լարի թափից ու ճնշումից ավազը սղոցում է տուֆին, ինչպես փափուկ գերան:

Կապույտ բլուղներով 5—6 երիտասարդներ շուրֆերի մոտ հսկում են. մեկն ավաղի հոսանքն է կանոնավորում, մյուսը՝ լարի ընթացքը. մի քանի հոգի փայտյա սանդուղքներով իջնում են ցած՝ ստուգելու արդյո՞ք լարը չի հասել մինչև քարի տակը: Բոլորն էլ նոր են, դեռ սովորում են: Նրանց ղեկավարող վարպետը և՛ բացատրում է մի խումբ այցելուներին, և՛

կարգադրութիւններ անում երիտասարդներին: Երբեմն նա ձեռքը մեկնում է լարին. ցեխախառն կուպտավուն ջուրը կաթկըթում է մատների արանքով: Լարի ջերմութիւնն ու կուպտավուն ջուրը նրա համար նշան է, թե ինչ է անում լարը գետնի խորքում:

Շուրֆերը փորված են իրարից հավասար հեռավորութիւն վրա, քառակուսիներով: Պողպատյա լարը այդ քառակուսիները կտրատում է, ապա բաժանում ավելի մսւնր մասերի. մոտեցնում են բարձրացնող կրանը, քարի սղոցած կտորները մեքենան բարձրացնում է, օդում պտուլտ անում և հսկա քարերը դարսում, իբրև աղյուսի կուլտ:

Գեռ նոր են՝ շուրֆերն էլ մոնտանսյորն էլ, բարձրացնող կրանն էլ և այն մարդիկ, որոնք աշխատում են և սովորում: Գործը դեռ չի մեծացել. քարհանքերը, ինչպես և հղկող ժամանակավոր գործարանը, որտեղ կարբորունդը և ադամանդյա սղոցները հղկում են տուֆը, կոկում այնպես, որ քարը ապակու նման ողորկ է դառնում: Քարհանքը, ժամանակավոր գործարանն աշխատում են փոքրիկ էլեկտրակայանի էներգիայով:

Շուտով Արթիկն էներգիա կստանա Լենինականից: Եվ երբ կառուցվեն երկաթուղու այն շորս գիծը, որ նոր կայարանից ճյուղավորվելով հասնելու են մինչև քարհանքերն ու ապագա մեծ գործարանը, — այն ժամանակ վիթխարի կաբել կրանը քարերը կբարձրացնի և շարժական կամուրջների վրայով կիջեցնի բաց վագոնների վրա, կդարսի և վագոնները կշարժվեն:

* * *

Երեկոյան, մի ընկեր, որ ղեկավարն է ամբողջ աշխատանքի և որն Արթիկ է եկել դեռ այն ժամանակ, երբ մի քար էլ չէր հանված, դիրեկտորի կաբինետում դարչնագույն թղթի վրա ցույց է տալիս այն ամենը, ինչ կա և ինչ պիտի լինի: Սպիտակ գծերի ու հորիզոնականների այդ կծիկը նա հետ է տալիս հանդարտ ու վստահ:

30

— Ահա նոր կայարանը... Չորս երկաթգիծ... Այ այս մեկը մոտենում է մեր ժամանակավոր գործարանին, որից մի քիչ ներքև գարնանը պիտի շինենք հսկա գործարան... Մեքենաներն սկսել ենք ստանալ, մեծ մասն արտասահմանից է:

Առիթից օգտվելով նա մի անգամ էլ է հիշեցնում գործի դժվարությունը: Միության մեջ տուֆը չի մշակվել, արտասահմանում չկա: Քարի մշակումն ամենից լավ Բելգիայում է դրված, սակայն այնտեղ էլ չկա տուֆ: Բելգիայի գրանիտի և մարմարի մոտ 50 քարհանքերը միասին չեն տալիս այնքան քար, ինչքան պիտի տա Արթիկը եկող տարի: Իսկ հնգամյակի վերջում Արթիկը պիտի օտ մի միլիոն խոր. մետր քար: Բելգիական գրանիտն ու մարմարը էժան շինանյութ չեն. նրանց շատ մեքինաները մեզ ձեռնառու չեն: Տուֆի յուրաքանչյուր խորանարդ մետրը փոխարինում է հիսուն աղյուսի: Եվ միայն գործի վիթխարի մասշտաբը հնարավորություն կտա արտադրանքն էժանացնելու:

10

— Ահա մեր ջրմուղը... Սրա վրա էլ բավական աշխատանք է թափվել: Մեզ ջուր հարկավոր է ոչ միայն կոմունալ կարիքների համար, ինչպես բաղնիսը, բնակարանները, այլև քարի հանման համար... ջուրը բերում ենք Մանթաշի ձորից, երևի լսած կլինես...

Ու ժպտում է, երբ խոսքն ընկնում է ապագայի ծաղկանոցներին... փոքրիկ անտառին: Նա զուսպ ժլատությամբ մի քանի խոսք է ասում այդ մասին, և ապա նորից անցնում դժվարություններին:

20

— Ահա Բրեմսբերգի գիծը... Հիսուն վազոն օղակ-օղակ պիտի վերի քարհանքերից իջնեն, քարը դատարկեն պահեստներում և նորից բարձրանան... Բրեմսբերգի նախատիպն ունենք... նորն ավելի մեծ վազոնետներ պիտի ունենա... Ահա մեր պահեստները, երկաթգծերի միջև... էս շենքն էլ փուռն է... ահա ակումբը... շինությունների այս խումբը բանվորական բնակարաններ են... մի քանիսն արդեն պատրաստ է:

Ու նորից է անց կենում դժվարություններին: Բանվորական որակյալ ուժի կարիքը մեծ է. տուֆի մասնադետ բանվոր չկա, պիտի պատրաստել աշխատանքներին զուգընթաց, որովհետև այլ վայրերում տուֆի մշակում չկա, ընդօրինակելը հնարավոր չէ: Աշխատանքը նորանոր խնդիրներ է առաջացնում:

30

— Այ օրինակ էսպիսի բան... Մենք չէինք նախատեսել, որ տուֆը բնական ճեղքվածքներ ունի.— և նկարում է թղթի

461

վրա շուրճը, նրա շորս պատը, ճեղքվածքները, որոնք դժվարացնում են միահավասար խորանարդներ ստանալը, իսկ այդ հանգամանքը կարող է թանկացնել քարը, եթե միջոցը չգտնենք... պիտի գտնենք և միայն մենք, էստեղ, տեղն ու տեղը...

Գյուղում կան մարդիկ, որոնք փնթփնթում են, թե քարամշակման ընդարձակումը պիտի իրենց հողազուրկ անի: Դեպքեր են եղել, որ շարամտորեն ջուրը բաց են թողել, ճանապարհը քանդելու համար, փայտե կամուրջների գերանները գողացել են:

— Դրանք բոլորը գլուխ գալու բան են... մի քիչ թեթեվանա՞նք, սկսելու ենք գյուղում աշխատանք տանել: Վերջի վերջո մեր ոեզերվը շրջակայքի գյուղերն են: Այ քեզ մի խնդիր էլ.— ու պատժում է, որ հնգամյակի վերջում տրանսպորտը կարող է բավական դանդաղեցնել քարի տեղափոխումը, եթե կենդանական—թիֆլիս գիծը տեղ-տեղ չլայնացվի:

— Նոր գիծ է Արթիկը, բայց մեծ գործ է... Նթե մենք տարին մի միլիոն կուբամետր քար տանք, մոտ շորս հարյուր տարի կհերիքի այն պաշարը, որ ունի ուսումնասիրված ույունը... իսկ շատ տեղեր կան, որ դեռ հետազոտված չեն:

... Կես գիշերից անց է: Դուրս ենք գալիս բակը. քնել է գյուղը. շները կենտահաչ են տալիս լուսնի վրա: Հեռվում կենդանականի ճրագները թարթում են: Ալագյազի պաղ քամին սլանում է դաշտն ի վայր: Լեռան ձյունապատ գաղաթը շողշողում է... իսկ ներքև դաշտում սպիտակին են տալիս երկաթգծի հողաբլուրը, նոր կայարանը: Շուտով, շատ շուտով, շոգեմեքենայի մուխը կխառնվի Ալագյազի ամպերին:

ՄԵՐ ԽՈՐՀՐԿԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ ԶՔԱՎՈՐ ԳՅՈՒՎԱՑԻՆՆԵՐԻՆ

Խորհրդային տնտեսության կառավարիչը խոսում էր մը-
շակների հետ, երբ մոտակա գյուղի չքավոր գյուղացիների
պատգամավորներն ու գյուղատնտեսը ներս մտան:

Գյուղատնտեսը մի կողմ քաշեց կառավարչին ու բացա-
տըրեց գործի դրությունը:

— Հա՛, բանն էսպես է. հիմի էս մարդկանց հույսը քեզ
վրա է, պիտի մի ճար անես:

— Գիտե՞ք ինչ կա,— ասաց կառավարիչը,— տեսնում 10
եմ, որ թունդ նեղն եք ընկել. բայց ո՞նց անենք, երկու տրակ-
տոր ունենք. մեկը մեզ համար հարկավոր է, մյուսն էլ փշա-
ցել է:

Դանելն առաջ ընկավ.

— Ընկե՛ր ջան, որ էսօր քո դուռն ենք եկել, իմացի՛ր, որ
տեղներս շատ նեղ է, պետք է մեր կուլակներից մեզ ազատեք.
էն է՝ ատամները սրած սպասում են, որ մեզ զզեն: Հատուկ
խնդրում ենք՝ մեզ վրա քաղցր աչք ունենաք:

— Ընկեր Ոսկան, էս մեր փշացած տրակտորը պիտի նո-
րոգենք, իրենց տանք: Հիմի քեզ վրա է, ինչ ուզում ես արա, 20
հնարքով լինի, թե հրաշքով՝ պիտի էս մարդկանց տրակտոր
տաս: Իսկ դուք, ընկերներ, հո լսեցի՞ք. մի շաբաթից հետո
կգաք ու կտանեք տրակտորը:

— Շնորհակալ ենք, մնաք բարով:

Գյուղի պատգամավորները ճանապարհվեցին դեպի գյուղ...

Մի շաբաթից հետո գյուղում ձայն ընկավ տրակտորի գա-
լու մասին. էլ մարդ շմնաց, դուրս եկավ թամաշա անելու:
Սկսած գյուղի ծայրի ջրաղացից մինչև կոոպերատիվի հրա-
պարակը տրակտորն անցնում էր անընդհատ «կեցցենների»
ուղեկցությամբ:

ՀԱՂԹԱԿԱՆ ՀԱՎԱՔԸ

Այնքան ոտքեր, այնքան անիվ ցամաք այս անապատը երբեք չեն կոխել: Հողերը մունջ են եղել, անբերք, և միայն վայրի կապառի փշոտ թփերն են խոր խրել իրենց ջրուտ արմատները: Հոնդացի է անտիրական քամին, ավազի շեղջակույտերը շիկացել են, և անապատի արորիզները՝ գորշ օձը, լիզել է կապառի դառը պտուղը:

Գուցե գլորվել է մոլորված մի սալ, անիվներն ակոսներ են գծել ու քամին ավրել է ակոսների ծիրը: Մարդը երկյուղով է անցել դեպի հեռվի կավե հյուղերը և երզել է մենակ մարդու տխուր երգը:

Հետո երկաթ գծերը կտրել են անջուր տափարակը, իրարից շատ հեռու շարել ստանցիոն տնակները՝ իրար նման, որպես երկու մունդիր: Եղել է քարե ջրամբար, պերրոնի առաջ դեղնած ակացի, տխուր զանգեր և գնացքը կարոտով ուղեկցող սլաքավար: Եվ երբ թափառել է քամին, ավազով ծեծել տնակները, կայարանի կենվորները նույնպիսի երկյուղ են ապրել, ինչպես կավե հյուղերի բնիկները:

Այս տափարակներում ջարդվել է «հայոց եռագույնը», և սարսափահար մի ամբոխ, կոխկրտելով դիակներ, խուճապի մատնված փախել է, ինչպես նախիրը հրդեհից, փախել է հրկիզելով, ավերելով, ցամաք անապատում դեգերել են գաղթականներ, ծարավից նեղված խմել են աղուտի ջրերը, մայրը փորփրել է դառնահամ արմտիք, և փոսերի մեջ, անջուր հեղեղատներում մնացել են մանուկների կմախքներ՝ սպիտակ, մարմար ոսկորներ, որոնց կույտերը ֆոսֆորյա լույսով առկայծել են ամայության մեջ, երբ տափարակի վրա խոնարհվել է աստղազարդ գիշերը:

Իսկ տափարակը մնում էր մունջ, անմարդաբնակ, մինչև այն օրը, երբ բարձրացավ կարմիր աստղը Արարատյան դաշ-

տում, երբ այնքա՛ն ոտքեր, այնքան երկաթ անիվներ ակոսեցին, տրորեցին, և կապույտ բրեզենտավոր մարդիկ առաջին անգամ իջեցրին քլունգները նոր քաղաքի հիմքերի համար:

Լուսաբացին ելան բարձին սայլերը, ֆուրգոնները, զարդարեցին ձիերի ճակատը ուռենու թարմ հյուղերով, կարմիր փնջեր հյուսեցին ձիերի բաշին, մեքենաները յուղեցին,— գյուղերից, կոլխոզներից ծայր առավ տոնական թափորը՝ անմիջական, անթումբ բամբակի դաշտերի միջով, բարդիների արանքով սայլերի ճանապարհով, խճուղով դեպի Սարդարապատ: Շարժվեցին մերձարաքսյան գյուղերից, շարժվեցին երգելով, թմբուկով, նվագով...

10

Այս տափարակով երբեք այսքան առույգ, այսպես զվարթ ու հաղթական բանակ չէր անցել:

Նրանք շունեն արնոտված, գնդակներից խանձված դրոշներ, և ոչ մի ասեղնագործ գազան չի փողփողում դրոշների վրա: Ուռենու անտաշ ձողեր են՝ ծայրին վճիտ կարմիրը, դրոշակակիրը գնեք ու զրահ շունի. արևառ մարդ է, քամուց, անձրևից ծեծված: Ու քայլում է, զլուխը բարձր, ձողն ուսին: Քամին խաղում է դրոշակի հետ, բաց զլխի մագերի հետ: Քայլում է հոսանքի դեմ, որպես նոր առաջնորդ, հողի մարդկանց կոփված բրիգադիր:

20

Ոչ ամրոց են ավերել, ոչ հրկիզել են քաղաքներ: Այս բանակը պայքարել է բամբակի անկախության համար, փշրել է գիմադրության թմբեր, պողպատյա խոփերով քանդել է հին կապիտալիստական հողատիրության ամբարտակը և որպես վարար հեղեղ ճեղքել է նոր հուն: Նրանց մկաններով է սևացել անծայրածիր դաշտը, ուր բամբակի անեզր մարգերը հերոսական աշխատանքի, արիության ու պատվո էջեր են:

Փշում է հողմը թաց շնշով, բարդիներից կաթկթում է գիշերվա ցողը: Այն ժամն է, երբ ջինջ օդում բուրում է ճամփի եզրի փշատենին, երբ թանձր ճահճուտում արածում են արագիլները, խոնարհում զլուխները, իբրև թե ընթերցում են, ապա վեր բարձրանում և մի ոտքի վրա արձանացած դիտում շտեմնված երթը:

30

Ահա միացան երկու ճանապարհ, երկուսն էլ սևացած սայլերով, ֆուրգոններով, մեքենաներով: Ողջունում են, կանչում,

իրար են նետում ուռնու ճյուղերը, և հարչուրավոր աղջիկներ սայլերի վրա երգում են «Մանանի երգը»: Փշում է հողմը, խաղում են մազերը, և իբրև կայծեր թրթռում են մազերի գունավոր ժապավենները:

Ինչքան մոտենում են կայարանին, այնքան ավելի շատ են միանում այդ վտակները, ձգվում է նրանց շղթան օձապտույտ, ուր-մուր, ինչպես պառկել է խճուղին: Կարծես ճանապարհ չի, այլ գետի սպիտակ հուն. ահա առաջին ալիքները իրար հրելով գալիս են՝ թմբուկներով, պղնձյա փողերով: 10 Ու չի երևում վերջը, հեռու է վերջը. սևին է տալիս, ինչպես Արագի առափնյա բարդիների շարքը:

Հոսանքը կանգ առավ կայարանի առաջ:

Գունդերը, բրիզադները իրենց դրոշակներով, իրենց երգերով անցան գիծը, իսկ ֆուրգոնները, սայլերը, մեքենաները ծովեցին ձախ, պտույտ անելու, որպեսզի կարգով շար ընկնեն շրջանակի վրա: Իսկ մարդկային ալիքները լցնում են տափարակը, որ եզերված է կիսակների, սպիտակ վրանների, փայտաշեն ծածկոցների և դրոշակազարդ սյուների շրջանակով:

20 Գալիս են, գալիս հազարներ, գալիս են ու ցրվում դեպի կիսակները, վրանները: Ահա մի ամբողջ մսուր՝ իր սարքով, ահա փայտաշեն մի տնակ՝ ճակատին գունավոր պլակատ այն մասին, որ 33 թվին ուսյունում անգրագետ մարդ չպիտի լինի: Մանտյորները շտապում են, դեռ բոլոր սյուներից ուսյորները չեն կախված, այնինչ բազմությունը կուտակվում է, ամբիոնից արդեն երգում են և խումբ-խումբ հավաքվում են սյուների շուրջը:

Շրջանակի կենտրոնում մեքենաներն են՝ տրակտորները, շարքացանները, ինչպես հեծյալ գնդի ձիերը դորահանդեսի ժամանակ: Հեծվորները մոտերքումն են, նրանցից յուրաքանչյուրի աչքը մեքենայի կողմն է:

Բոլորը ճանաչում են տրակտորները, գիտեն ով է տեղ բռնում: Հարցրու ո՞րն է «Արտաշի տրակտորը», և քեզ կոլխոզնիկը ցույց կտա աստղածև շար ընկած տրակտորների արանքում այն տրակտորը և դեռ մի քանի խոսք էլ կասի Արտաշի մասին, նրա վարը կպատմի, նրա «հունարը»: Նրանք գիտեն

տրակտորները, գիտեն Կորմիկի շարքացանը, և եթե աղջիկները բանեցնում են վիթխարի կալսիչը, այդ դեռ հետաքրքիր է, որովհետև «մեր Աշխենը» համարձակ չի մոտենում արագ դարձող փոկերին:

Արևը բարձրանում է, շոգ է: Վրանների տակ, ծածկոցների ստվերում արդեն տեղեր են գրավում: Թիկն եմ տալիս մի գերանի և նայում եմ անցնող բազմության ոտքերին: Երբ համրում եմ մինչև 58-ը, մտքումս ասում եմ՝ մի «տրեխավոր» և ապա նորից եմ շարունակում հաշվելը: Ո՛ւր կորան տրեխաները: Սալոգներ են, բոթեր, նույնիսկ դեղին կոշիկներ, իսկ կանանց ոտքին՝ բարձրակրունկ տուֆլիներ: Հազվագյուտ չեն մետաքս գուլպաները, սպիտակ, նոր հարթուկած բատիստը, վզին՝ կաշնե: Համարյա բոլորը մաքուր ածելած երեսով են, ծոցում երևում է մատիտի մետաղյա գլուխը: Ես ուշադրությամբ եմ դիտում կողքիս վրանը, միայն մեկն է սպիտակ միրուքով. նա գլուխը դրել է թևի վրա ու ննջում է: Մնացածը երիտասարդներ են, տղամարդիկ:

Տեղավորվում են ընտանիքով: Ինձ մոտ նստել է մեկը, երկու երեխայի հետ: Շորերը մաքուր են, շալվարի ծալքը մատնում է այն, որ զգեստը նոր է սնդուկից հանել: Խոսեցնում եմ. նախկին գաղթական է, բարբառի հետքը դեռ մնում է: Նա փաթաթում է ծխախոտ, արծաթյա «կութին» մեկնում է ինձ և ծուխը պնշերից հանելով ասում.

— Անուշ պյանի ուղիներ...

Իսկ ուղիներ կախված էր մեր գլխավերևը, վրանի գագաթից: Վրանի տակ նստողների վրա նա մաղում է ուրախ երգ, ինչպես գարնան ջերմ անձրևը: Ապա դադարում է:

— Միջում երկու հրոպե,— կրկնում է հարևանս և ապա երեխաների փոքրիկ ճակատից կոշտացած ձեռքերով սրբում քրտինքը:

Ականջիս հասնում է մի ուրիշ խմբի խոսակցություն: Նյութը նոր կոմբինատի հիմնադրումն է: Խոսում են խմելու ջրի մասին, մեկը Երևանից է ուզում ջուրը բերեն, մյուսը՝ Ալազյազի աղբյուրներից:

— էդ ջուրն էլ որ բերինք, Զակավկազի մեջ էսպես քաղաք չի լինի...

— Դահի լավ կապրենք, — վրա է բերում երկրորդը և ավելացնում, — էս բուրբ կոլխոզի վրա էլավ...

Զվարթ աղշկա զրնգան ձայնը թրթռում է սյունից սյուն, վրանից վրան: Տարիքով մի մարդ իր զարմանքն է հայտնում, որ Երևանից երգը այսքան պարզ է լսում:

— Տո հուստո՞ւց ա Երևան, — ծիծաղում է մեկը և մատը մեկնում դեպի ամբիոնը: — Այ տես... մեր Շողոն է, Աբեթնա-կի աղջիկը:

Մարդը չու՞մ է աչքերը կրկնապատիկ զարմանքով:

10 Հետո սուլում է գնացքը, թնդում է նվազախումբը: Գալիս են լենինականի դելեգացիան, տեքստիլը, նրանք, որոնք բամբակի սպիտակ քուլաները դարձնում են ծաղկավոր շիթ, հենց այս շիթը, որ փոփոում է աղջիկների հագին:

Գալիս է մի ուրիշ գնացք՝ հարավից, նախիջևանից: Իրար հետևից փոշեթաթախ ավտաները իբրև գորշ թռչուններ հավաքվում են, շար ընկնում:

Բազմությունը խոնվում է: Հազարամյա ավազն է խշշում ոտքերի տակ, կապարի թոփերը տրոբում են նրանք, որոնք սյունների տակ, վրանների առաջ կլոր պարի ընդարձակ օղակներ են կազմել և թռչում են, օրորվում թմբուկի զարկով:

20 Մի անկյունը հիշեցնում է գյուղական տոնավաճառ: Թափել են մրգեր՝ կողովներով, պարկերով: Եռուզեռը բանկոտպի կրպակների առջև է. պայթում են մեկը մյուսի հետևից արզնու, գարեջրի շշերի խցանները, երբեմն էլ շշերը: Խմում են տեղն ու տեղը՝ շշերից, բռնով, զավաթներով: Ոմանք կրծում են սառույցի թափանցիկ փշրանքներ, ոմանք էլ դեպի վրանների ստվերում տնդավորված կանանց ու երեխաների խմբերն են կրում գարեջուր, արզնի, լիմոնադ:

30 Իսկ վրանների հետև մի այլ կյանք է: Հանդիպել են իրար երիտասարդ տղա ու աղջիկ: Մի զույգ տարուբեր պնում են գալիս, կիզող արևի տակ, մի ուրիշը՝ ստվեր է արել թերթերով, երրորդը՝ ավելի հեռուն է գնում, հեռվի կապույտը, ուր տափարակը լեռնանում է և հասնում մինչև Ալազյազի փեշերը: Աղջիկը փրցնում է փշոտ թուփերից մի ճյուղ, մեկ մեկ փետում տերևները և երևի շի զգում, որ փշերը ծակծկում են մատները:

Ուրախության մի ալիք անցավ վրանից վրան, խմբից խումբ: Օտարոտի տարազով, ղոլ զոլ շորերով, քոլոզներով ստուդիան է եկել, «Առյուծ Մհերի» թմբուկով: Բազմությունը փլվում է նրանց կողմը, անանցանելի մի պատենշ օղակում է նրանց, լուում են գյուղական դժոխները, ամբողջ դաշտում թընդում է միայն ստուդիայի թմբուկը:

Հանկարծ ուսպորները ազդարարեցին միտինգի սկիզբը: Զինվորական նվագախմբի հաղթական հնչյունները խլացրին թմբուկի դղրոցը, շողշողացին պղնձի լայներախ փողերը և բազմության գլուխն անցած փողահարները մոտեցան ամբիո- 10
նին:

— Ընկերներ: Այսօր, Սարգարապատի ռայոնի կոլխոզնիկները տալիս են ռապորտ բամբակի ֆրոնտի հաղթանակների մասին: Փշրելով դասակարգային թշնամու դիմադրությունը... լենինյան կուսակցության ղեկավարությունամբ... դեպի նորանոր հաղթանակներ...

Մենք խոսք ենք տալիս կատարելու և գերակատարելու 53 հազար հեկտար բամբակի պլանը... Մեր հակառակորդները՝ կուլակը, դաշնակը փորձում են պայթեցնել մեր կոլխոզները: Նրանք անկյունից կրակում են մեր սկտիվ մարտիկների վրա, նրանք հրկիզում են... բայց մենք կփշրենք նրանց ոտնձգությունները... 20

Ծափերի տարափը հողմի նման փրցնում է ռադիոյի բառերը: Ալեկոծվում է բազմությունը: Մի խումբ բարձր աղաղակում է՝ ուռա, և ինչպես որոտը՝ այդ պանչին արձագանքում են նորանոր խմբեր, ապա խուլ արձագանքը գնում է հալվելու հեռվում:

Խոսում է երկրորդը, երրորդը: Թադիոն նմանեցնում է ձայները, նրբին ելեէջները ջնջում: Այնպես է թվում, կարծես խոսողը մեկն է, մի հրամանատար, որ բանակի ցնծության աղաղակների տակ հաղորդում է տրոֆեյների մասին: 30

Հետո հանկարծ տիրում է խոր լուսություն: Զի շարժվում ոչինչ, ոչ ոք չի խոսում: Լսելի է, թե ինչպես են ծփում դրոշակները:

Կարդում են կոլխոզնիկների հանդիսավոր երգումը, նոր հաղթանակների մրցակառնը, ուղղված բոլոր կոլխոզնիկներին՝

մինչև Մուղանի տափարակը, մինչև շքնաղ Աբխազիան, մինչև Ալպյան սարահարթները: Ու գնում է այդ կանչը ուղիորդ ալիքների հետ «մինչև Հելեսպոնոս, մինչև ծովը Վրկանա»...

Աղաղակները, ծափերը, ուռանները, փողերի հաղթական երգը միախառնվում են իրար, և բազմության ցնծությունը ելք է ստանում:

... Բարդինների ստվերները երկարում են, սյուները գետնի վրա գծում են երկարածիգ ակոսներ:

10 Վրանների հետևը թարմ հողի թմբեր են: Ելնում են վեր նրանք, որոնք բարձր ազդարարեցին, ու այդ օրն արարտյան հին տափարակում, հազարամյա մունջ հողերի վրա հիմնադրվում է սոցիալիստական նոր քաղաք:

Դաշտերի վրա իջնում է երեկոն... Վերադառնում են ֆուրգոնները, մեքենաները: Կուլխոզնիկները վերադառնում են ծանրախոհ, նոր հաղթանակների հոգսով: Եվ լայնածավալ դաշտի վրա, ինչպես առատ անձրև, մաղում է աղջիկների հնչեղ երգը:

ԳՅՈՒՂԱՇԽԱՏԱՎՈՐԻ ՏԵՏՐԱԿԻՑ

Մուժն ընկնելիս՝ մեկ-մեկ գալիս են գյուղխորհրդի անդամները:

— Դե՛, սկսենք, — հայտնում է ընկերս, որ ամբողջ օրը ոտքով շրջել է գյուղի դաշտերը, մեկ առ մեկ ցուցակ կազմել ցանած ցորենի ու բամբակի հերկի:

Նիստն սկսվեց: Նախագահում է գյուղխորհրդի նախագահը՝ Պողոսը:

Մեր նստատակն է ստուգել հողերի տարածությունը, հաշվել ազատ հողերը, տնտեսությունների թիվը և ըստ այդ տվյալների՝ տնտեսությունների վրա բաշխել 275 հեկտարը: Ծվյալներ պիտի քաղեինք հողամատյանից, այսպես կոչված «լրացուցիչ ցուցակից», Պողոսի դավթարից, որ չգիտեմ ինչու ծոցումն էր պահում, և... մնացածների հիշողություններից:

Լիտր առ լիտր հաշվում ենք ցորենը բազմաթիվ և բազմանուն տեղերում. «Ներքին շախր», «Ճամփի տակ», «Խարաբեք», «Յուրտ հողեր», «Ղամշկուտ», «Բարսեղի տափ» և հազար ու մի անուններ, որոնք կազմում են Քյոթանլիի հողերի քարտեզը: Հողամատյանը կազմել են 1923 թ.: Նրանից հետո փոփոխություններ են եղել, մեռել են, ծխեր են հանգել, բաժանվել են, ծնվել են, վերաբնակիչներ են եկել: Եվ ծխերի փոփոխության հետ էլ փոփոխվել է հողամատյանը: «Ղամշկուտի» 9 լիտրը, որ մատյանում գրված է Սահակ էյվազյանի անունով, այժմ դերձակ Համոյի ձեռքին է: Իսկ Համոն 27 թվին է գյուղ եկել, ճշգրիտ հայտնի չի, թե քանի շունչ է:

Եվ նման բյուր փոփոխություններ՝ շնչում, ավելացում: Մեր ընտրած միշտ խիստ դժվար էր, բայց միակը: Միայն

այդ կերպ կարելի է ստույգ որոշել, թե ո՞վ և ինչքա՛ն պիտի բամբակ ցանի:

Եվ ինչ տարօրինակ, շլաված, շատ անգամ անհասկանալի անունների ենք հանդիպում... «Կակտոս Ռուսիյան»... «Ղանդիոս Սհակյան» կամ, ինչպես գյուղում են ասում, թոփալ Ղանդո: «Պիոն հաշատրյան»... Այրի կին է, ունի Էրեք տղա՝ 16, 10 և 7 տարեկան. անունները Մանթաշով (մեծը), Լիազոր (ծնվել է 19 թ., երբ Դաշնակցության պարենավորման լիազորները գազազել էին) և Լենտրոշա: Մեծի անվան արտահանումը շրջապատը ձեակերպել է «Մանթաշ», իսկ ցուցակում մնացել է հինը:

— Դրա անունն էլ պիտի փոխվի,— տրտնջում է Պողոսը, կարծես անհաշիվ հոգսի ու պարտականության շարքում այդ էլ իր տեղն ունի:— Գաղափարի պակասությունիցն է... Պիոնին քանի անգամ ասի՝ խառնի՛ կարմիր կնունքին, թող էթա...

— Տո, անունն ի՛նչ նշան: Ասա ինքը նոր ծրագրով շարժվի,— պատասխանում է մյուսը:

— Գարեգին Ռվազյան,— կարդում եմ:— Յորենը քանի՞ հեկտար է...

Անսպասելի կերպով տիրում է, ինչպես ասում են, գերեզմանային լուսթյուն: Լսելի է, թե ինչպես լամպի պատրույգը ծծում է նավթը:

— Էդտեղ մի քիչ սպասի,— դանդաղ ասում է մեկը, որին դռան մոտ թիկնելու պատճառով, մինչ այդ չէինք նկատել: Եվ առաջ է գալիս, ծխախոտը սեղանի ծայրին դնում ու սառնասրտությամբ, ինչպես դատավճիռն են կարդում, բառերը հատ-հատ արտասանում.

— Աս որ կա, մեր գյուղի ամենապերվի կուլակն ա... Մինչև անգամ ես կարող եմ ասել, որ էվելի մեծ մասշտաբի կհարմարի: Դրո՞ւստ ա, թե չէ, ընկերներ,— դիմում է նա: Եվ 10—15 հոգի միանգամից արձագանքում են.

— Դրուստ ա...

Իսկ նա ոգևորված շարունակում է.

— «Ներքին շայիրը» ցորեն ա. «Ճամփի տակը» ցորեն ա,— էդ 65 լիտր... էն որ հիմա կարդացիք, էն Պիոն հաշատրյանի հողերը կիսու ցանել է ցորեն... Փօկի «Բարսեղի

տափը» կիսու ցանել է ցորեն... Դե քցի շտաքը, տես 120 լիտրը թամամեց, ինքն էլ 3 նաֆար: Ուրեմն թե պիտի Երևանու բազարումը փութն օխտը մանեթով ծախի: Հա, էն Կոլոյի հողը ցորեն ա... էլ ո՞րն ասեմ: Ինքն էլ պատերի տակը նստած սրան-նրան ծաղրի տակ ա քցում, թե շքավորի կնկա ջանը դուրս գա շանաք անելով: էդպիսի հակահոգին ա... բաս:

Եվ նորից քաշվում է տեղը:

Մյուսներն արտահայտվեցին: Առաջինի ասածը կարծես շեշտակի հարված էր: Լեզուները բացվեց. կարծես ավելի կողմնորոշվեցին: Նույնիսկ մեկը պահանջեց, որ արդեն ընթերցած ցուցակը վերանայվի: 10

— Տո նրա արարքը մինչի լուս պատմես, չի վերջանա... էն ի՞նչ աղվեսն ա, գիտո՞ւմ ես... նրա պոլի տակը քանդես, հավատա, որ էս բոպեին էլ ոսկի կգտնես: Ի՞նչ ոնց եք ճանաչում նրան...

Շարունակում ենք ընթերցումը:

— Մկրտիչ Աստվածատրյան, — կարդում եմ ցուցակը:

— էս ո՞վ է, — հարցնում է Պողոսը:

— Մկրտիչ Սարգսյան կլինի, — ուղղում է «անարխիստը»:

— Նա էլ կա, — պատասխանում եմ և սպասում, որ մարդիկ մտենան ու գտնեն: 20

Առաջին դեպքը չի: Ոմանք հոր անունով են գրված, ոմանք՝ պապի, ոմանք էլ՝ պապերի պապի: Մի եղբայրը հոր անունով է, մյուսը՝ պապի: Կանայք կան՝ հայրական ազգանունով, այնինչ նրանք ամուսնացել են, ազգանունը փոխել: Եվ ընդհակառակը. առաջին ամուսնության ազգանունը այժմ չկա, քանի որ երկրորդ անգամ է ամուսնացել: Ազգանվան փոփոխությունը կախված է եղել և գրողից: Եվ վերջապես, ինչպես Քյոթանլվում, այնպես էլ բոլոր գյուղերում, իսկական անվան հետ ոմանք ունեն և՛ ավելորդ անուն, և՛ ազգանուն: Քսան բոպե մենք կորցրինք, մինչև կարողացանք ստուգել, թե ով է Գևորգ Օհանյանը: Բանից դուրս եկավ, որ նրան կոչում են «Մուռ բոշա»: 30

— Հը՞, գտա՞ք, — հարցնում եմ:

— Տո, ջանրմ, էդպես մարդ չկա մեր գեղում...

— Խաշոյննց թազա փեսան շինի՞,— մոտ գալով հարցնում է մեկը:

— Տո, չէ՛... նա որտեղի՞ց Աստվածատրյան...

— Էհե՛յ,— բղավում է դռան մոտ կանգնածը,— Ասոյի Մկրեն է, Մկրեն...

Պողոսը ձեռքը ճակատին է խփում.

— Վայ, Մկրե՛... ո՞նց էի մոռացել...

Արդեն հոգնել են: Մի քանի հոգի կիսամթում, գլուխները սեղանին, մտւշ-մտւշ քնել են: Ճրագում նավթը հատնում է, բայց պիտի ցուցակները կազմել, ստուգումը վերջացնել, որպեսզի վաղը որոշենք, թե ո՞վ ինչքա՛ն պիտի բամբակ ցանի:

Շարունակում ենք ցուցակի ստուգումը:

Հանկարծ դուռը թափով բացում են, դուռը շրխկոցով կաշում է պատին ու հետ գալիս: Քնածները զարթնում են:

— Էս ի՞նչ ժողով ա,— գոռում է աչքերն արնոտ մեկը, գզգզված, ծվեկները կախ շինելն ուսին: Եվ առաջանում է.— ձեզ ո՞վ ա կանչել... էս ի՞նչ եք անում:

Հազիվ է ոտների վրա կանգնում: Սեթոն ուզում է մոտենալ: Արգելում ենք:

— Հին ռեժիմի ժամանակն ա՞, հը՞, խոսե՛ք, է՛...

Սեթոն չի կարողանում զսպել իրեն: Հարբածը փորձում է խփել նրան: Պողոսը տեղից վեր է թռչում: Ներս է մտնում երկրորդը ու բարակ, ներքին սարսափից կետ-կետ ձայնով բռռում է.

— Մեզ մորթեցի՛ք... Մեզ մորթեցի՛ք...— գոռում է ու ասես ինքն էլ իր ձայնից վախեցած, քարացած նայում է մեզ:

— Ինկերնե՛ր և քաղաքացիներ... Չքավոր գյուղացիներ... Ես ձե՛ր... Չքավորներ և ինկերներ...

Առաջին հարբածին մի կերպ դուրս են անում: Իսկ երկրորդն ինքն է գնում և մրթմրթում.

— Ինկերնե՛ր... և չքավորներ...

Դուրս ենք գալիս բակը: Մի քանի ստվեր իսկույն պահվում են եկեղեցու պատի հետևում: Կտուրի վրայով թփթփալով մեկը վազեց և թռավ ներքև: Նա երևի ընկավ փափուկ աղբակույտի վրա, որովհետև ընկնելու ձայնը չլսվեց:

— Լա՛վ, գնա՛նք...

— Տեսա՞ք, որ ասում էի կղժգո՛հն,— վրա է բերում մեկը: Նա չի կարողանում իր ներքին հրճվանքը զսպել: Նրանք, այն երկուսը, որ ներս մտան, զարմանալի նման էին իրար: Երկուսն էլ նիհար, մաշված, երկուսն էլ պատառտված շինելով, մեկը կեպին գլխին, մյուսը՝ աղտոտ թաշկինակով: Առաջինի մի կողքը ցեխոտ էր. երևի ընկել էր փողոցում:

— Ո՞ւմ մոտ են եղել,— հարցնում է Պողոսը իր հարե-վանին:

— Իբր թե չե՞ս իմանում,— կշտամբում է հարևանը: 10

— Լա՛վ, հետո կպարզենք... Առայժմ պատահածի ար-ձանագրությունը կազմի...

— Շրա՛խկ,— և փշրվում է մի պատուհան, ապակին զրնգում է:

— Խրճիթն էր,— կանչում է Սեթոն ու դուրս թռնում:

Մոտակա տներում շները հաշում են: Հեռվից լսվում է սուլոցի ձայն: Մու՛թն է: Ճրագը Պողոսի ձեռքին դողում է: Մոտենում ենք խրճիթին: Զարդել են պատուհանը. ապակու կտորտանքը թափված են գետնին, ներսը: Չթրճած աղյուսի կտոր է ընկած պատի տակ: Քար չի երևում: Գուց՛ս փայտով 20 են խփել կամ բռունցքով:

— Թե մի կպարզեմ՝ ո՛վ է՛ր...— զայրանում է Պողոսը:

— Մի ամիս շկա շուշեթի քցելուն,— ասում է մեկը և տնտղում մյուս ապակիները:— էս մեկն էլ ճաքել է...

— էդ կար... էդ քցելուց էդպես եղավ...

Քիչ հետո նորից ենք շարունակում աշխատանքը: էլ ոչ ոք չի քնում: Այդ պատահարը սրում է իրանց միտքն էլ, լսո-ղությունն էլ: Ավելի արագ ենք թերթում մատյանը, մարդկանց ավելի հեշտ ենք ճանաչում:

Մոտ 200 հեկտար «տեղ» արդեն արել ենք... Աքլորները 30 կանչում են: Միայն պատրույգի նավթն է վառվում: Խաչիկը հավաքում է մատյանները, մեր ցուցակները, և դուրս ենք գալիս գյուղխորհրդից:

• • •

Մու՛թն է: Իսկ Սեթոն գնաց ու չեկավ:

Կոմսոմոլի շաբաթօրյակը...

Երեկոյան Խաչիկն ամեն ինչ կազմակերպել էր: Հայտնի էին ջոկերը, ղեկավարները. յուրաքանչյուր ջոկ գիտեր, թե ո՞ր շքավորի բամբակի ցողունները պիտի հավաքի, ո՞ւր պիտի թափեն աղբն ու մոխիրը: Առաջին երթն էր, որին պիտի հաջորդեր ավելի հզորը, ավելի բազմամարդը: Այն եռուզեռը, որ նկատելի էր ու սկսել էր ալիքի նման բարձրանալ, առաջին ելքն էր գտնում այդ պարզ, անպաճույճ թափորով:

Գնացին երգելով, կատակներով, գնացին՝ տղա ու աղջիկ, հանաքով ու ծիծաղով: Գնացին և իրենց հետ տարան մի խումբ 10 «անկուս» պատանիների, մեծահասակ պիոներների, դպրոցի աշակերտների: Մի քանի ելեխաններ, ցեխը կոխ տալով, վազում էին երթի հետևից:

Առավոտյան դեմ գյուղ եկավ մի «Տորձոն» էլ: Եկավ ու խոփերը բարձրացրած, բազեի նման սլաց փողոցով. նրա ծանրությունից փայտե կամուրջն օրորվեց, բենզինի ու նավթի ծուխ շարտեց աթարի դեզերին, ցեխն պատերին ու սլացավ դեպի շիմանը, ուր երկու տրակտոր պտտվում էին իրար հետևից ընդարձակ տափարակում, պտտվում, ինչպես հիպպոդրոմում ձիերը և սև ալոսներ էին գծում:

20 Մի տրակտոր էլ: Այդ նշանակում է՝ օրը մեկ ու կես հեկտար ցել: Եթե տասն օր արև անի՝ 15 հեկտար: Բայց մենք երկուսն էլ ունենք: Ու պիտի նորերը գան, մի ամբողջ կալոն, պիտի գա ծանր «Կելսը», որի լայներախ խոփերը ամենակարծր հողն էլ թեթև են շրջում:

Պիտի գա տրակտորների կալոնը, «Տորձոն»-ներ ու ծանր «Կելսը». սակայն արև է ու դեռ չկան: Իսկ յուրաքանչյուր օրը վճռական նշանակութուն ունի մեր պլանի համար: Եթե հանկարծ ձյունի, հողերը կմնան խոպան, գարնանը շենք հասցնի և՛ վարը, և՛ ցանքը:

30 Հարկավոր է գութաններն էլ հանել:

Մոտենում ենք գյուղխորհրդին: Հավաքված խոսում են նրանք, ովքեր երեկ կային: Նոր դեմքեր էլ կան: Արդեն տեղեկացել են մեր աշխատանքի մասին: Գյուղխորհրդի անդամներն են պատմել, կոմերիտականներն են ագիտացիա արել սներում, իրենց բարեկամներին ու ծնողներին համոզել, որ բամբակի կոնտրակտ կնքեն:

— Ուրեմն մեզ էլ պրծում չկա, էլի,— ասում է Պողոսը, գրպանից հաց հանելով:

Նրա աշխատանքը շատ է: Գետափի ամրացման համար ամեն օր պիտի 20—25 բանվոր տա, պիտի տեղավորի տրակտորիստներին, գյուղական ճանապարհների և կամուրջների նորոգման գործին պիտի հետևի և սովորական կարգով Քյոթանվի պես վեց գյուղի առօրյային ընթացք տա:

Պողոսն անվա է, ոտքերը բուպիկ: Յեխոտ շուտի վրա կախվել են վարտիքի կապերը:

— Դուք սկսեք, մի ես տեսնեմ ինչ արեց կատարածուն... 10

Եվ շուտերը շլոփ-շլոփ քաշ տալով, գնաց կոոպերատիվի կողմը:

Բակը մտավ երիտասարդ մի աղջիկ, հնամաշ վերարկուն ուսերին. նրան հետևում էր մի ծեր կին: Երբ շրջվեցինք նրա կողմը, աղջիկն ամաշեց, կարմրեց: Նա կաղում էր. գուցե դրա համար կաս-կարմիր եղավ նրա երեսը: Ապա մտեցա՞վ ու, գլուխը վեր բարձրացնելով, շեշտակի նայեց մեզ:

— Սրան էլ գրե՛ք... Սրա նման մեր գյուղում բամբակ ցանող չկա...

— Հրանուշ, մեռնես դու... էս էլ քանի՞ հոգու բերիր: 20

— Չորսը,— պատասխանեց նա ու հանդիմանական շեշտով ասաց.

— Բա ամոթ չի՞, որ շրջանի մեջ ամեն տեղ մեր գյուղի վատությունից են խոսում:

Նրա աչքերը բոցկլտացին: Աղջիկը ձեռքերը խրել էր վերարկուի գրպանը, կարծես ձեռքում մի ինչ-որ բան էր պահել:

Զգացի, որ առանձին մի բան է ուզում ասել, գուցե թուղթ է գրպանում: Ընկերս հասկացավ ու բակում կանգնածների հետ ներս մտավ «կանցելարը»: Պառավն էլ գնաց:

Սեթոն տրակտորի մոտ սպասում է ձեզ...

30

Գյուղից դուրս, կամուրջի մոտ, մի փոքրիկ տնակից՝ դեմ հանդիման ելավ Հրանուշը: Զարմացա: Ի՞նչպես էր նա այդքան ճանապարհը կտրել ինձանից շուտ:

— Սեթոն հրես կգա... ներս մտեք,— ասաց նա:

Այդ «ներսը» նոր ու փոքրիկ խրճիթ էր, եղեգնածածկ կտուրով: Մի կին կռացել էր օրորոցի վրա: Օջախի մոտ շո-

քել էր մի 4—5 տարեկան տղա: Ներս մտնելիս նա նայեց ինձ և էլի առաջվա դիրքն ընդունեց: Խրճիթի կահկարասին պարզ էր, բայց մաքուր: Հասարակ թախտի վրա փռված էր նոր գործած կարպետը: Այդ տունը, փոքրիկ բակը, շատ նման էր այն հնձաններին, որ հազվագյուտ շեն ընդարձակ այգիներում:

— Էս իմ քույրս է,— ասաց Հրանուշը, թախտին նստելով: Նրա շարժ ու ձևի մեջ անսահման պարզություն կար և համարձակություն: Նա խոսում էր, ինչպես հին ծանոթի հետ: **10** Եվ առաջին խոսքից իր ուրախությունը հայտնեց, որ մենք «պիհնդ ենք բռնացրել»:

— Որտեղի՞ց իմացար...

— Խաչիկն էլ ասաց, Սեթոն էլ:

— Դու կոմերիտակա՞ն ես:

— 28 թվից...

— Ինչո՞ւ շաբաթօրյակին չես գնացել,— հարցրի և հանկարծ հիշելով նրա կաղ լինելը, իսկույն խոսքս դարձրի.

— Սեթոն ե՞րբ է էս օթախը շինել...

— Մի տարի չկա,— պատասխանեց Հրանուշը: Նա կար- **20** մըրել էր, ինչպես բակը մտնելուց:

Տիրեց լռություն: Ես ուզում էի մի կերպ նրան սիրաշահել, բայց հենց այդ րոպեին Սեթոն ներս մտավ:

— Հրանուշ, շայնիկը գնեիր էլի օջախում,— և դառնալով ինձ,— բարի լուս...

Հրանուշը վեր կացավ:

— Ես թեյ խմել եմ, Սեթո՞:

— Դու խմել ես, ե՞ս չեմ խմել,— ծիծաղելով ասաց նա, պսպղացին առողջ ատամների զույգ սպիտակ շարքերը:— Դի՛ր, ախշի...— ու կնոջը դառնալով, ասաց.— Ուտելու բան **30** չկա՞...

Կինը կռացած տեղն սկսեց արագ օրորել երեխային:

— Սեթո՞, կանչե՞լ ես ինձ...

— Հա, Հրանո՞ւշ, հայաթի դուռը դիր:

Ու մոտիկ նստելով, ասաց.

— Գիտե՞ս, ես իրիկունը խի դռան մոտն էի կանգնել:

— Չէ՛:

— Ես գլխի էի, որ էղպես մի բան պիտի լինի... Դե, օտար շես, քեզ կարելի չա ասել: Էն Ռվաղյանը, որ ասում էինք իրիկունը, նա էստեղի հակաների գլխավորն ա... Ժողովում շատ բան չէր կարելի ասել... Դու տեհա՞ր, որ նրա անունը տալուց, քարտուղարը մի տեսակ ռանգը փոխեց:

— Աչքիս շընկավ:

— Հա, էղպես եղավ... Իմ տեղը մուժն էր, ձերը լույս: Լամպը ձեր առաջին էր, կարող ա, որ շտեսնայիր: Ես իմանում էի, որ գալու են, համա ուզում էի իմ աչքով տեսնայի... Որ դուրս եկանք եկեղեցու մոտ, շվաք տեհա՞ր:

10

— Տեսա:

— Էն հենց ինքն էր:

— Ո՞վ:

— Ռվաղի թոռն, ո՞վ...

— Սեթո՞, գուցե սխալ ես...— Սեթոն պոռը ծպացրեց, գլուխն օրորեց:

— Ինչ որ քեզ ասում եմ, հաշվի, թե աչքովդ ես տեհել... Ես հավատարիմ մարդ ունեմ...

— Որտե՞ղ:

— Նրանց միջին: Էն նմուտում խաբարը կբերի:

20

— Ո՞վ է:

— Նրա բատրակը՝ Կոլոն: Ինքը եզիդի չա, համա հայերեն ինձանից լավ ա իմանում: Դուք հլա շեկած, ես արդեն իմանում էի, որ գալու եք... Քո անումդ չէի իմանում, համա հաշիկին, մեկ էլ էն գյուղատնտեսին գիտեի:

Հետաքրքրութունս արդեն փոխվում էր զարմանքի: Հրանուշը կոացել էր օջախի վրա, նայում էր սեացած թիյամանին:

— Դուք որ շրջանումն եք եղել, նա էլ է էնտեղ եղել... Իրիկունը կանչել է մի քանի հոգի:

— Շատվո՞ր են:

30

— Մեր գյուղում 4—5 հոգի են... Ուրիշ տեղից էլ են գալի: Մի եզիդի շեյխ կա, նա ամիսը երկու ոտք գալիս ա... Բուրդ ա բերում, պանիր, ոչխար... Նրանք աշնա են:

— Գիտեմ, գիտեմ...

— Ոնց որ ես ու դու.— Սեթոն նորից ծպտաց:— Հա, Կո-

լոն լավ չի լսել, բայց ասում ա՛ շատ են խոսել, մինչի աքլորականչը համարյա թե նստել են:

— Էն ո՞վ քար խփեց պատուհանին, — անհամբեր հարցրի ես:

— Ինքը:

— Ռվազյա՞նը:

— Հա:

— Բա ի՞նչ իմացար:

10 մի քանի մարդու. մինը մեր Սհակին. — Ինձ էլ ազգական ա հաշվում, մինն էն Գաբոյի տղին, էն որ առաջինը մտավ, ուզեց էլ ինձ խփի...

— Ո՞վ. Սեթ, — սրտնեղած հարցրեց Հրանուշը:

— Գաբոյի տղան...

— Կանչում ա, թե գոմի կտուրը քանդված ա, օգնեք, որ սարքեմ. դրանց լավ խմացնում ա... Որ տաքանում են, թե՛ շրջանից մարդիկ են եկել, չքավորների տները գրում են: Ո՞նց թե՛ ես դրանց ըսենք, ընենք... Մեր Սհակն էլ շաշ ա, կատարը տաքացավ թե չէ, էլ լեզուն չի պահի: ~~Տալիս~~ են, որ

20 խանգարեն... վերջը տեհար ինքդ: Իսկ իրանք հեռու են կանգնում... Մենք որ ներս ենք մտնում, ինքը մոտենում ա, շուշեն ջարդում: Քարով չի խփել, ձեռքի փետովը...

— Քեզ ո՞վ ասաց:

— Կոլոն, ո՞վ: Մինը շվացրեց... լսեցի՞ր:

— Հա:

— Էն Կոլոն էր... Ուրեմն թե՛ դարթուն եմ, էլի...

— Նրա սովորեցրած խոսքերը քեզ ո՞վ ասաց, Սեթո:

— Ինքը, Սհակը... Ես որ դուրս եկա, վազի դեպի կամուրջը: Ասի՛ աչքովս տեսնեմ: Տեսա... Կոլոյի քեչեն էլ քցել էր ուսին: Սհակը պատի տակ մեկնվել էր... Ես եմ նրան տուն տարել: Մի լաց էր լինում, ո՛ր, — ու քահ-քահ ծիծաղեց: — Գոռում ա տանը՝ «ինկերներ և չքավորներ»... Գոռում ա ու կրծքին խփում:

— Զահրումար խմի թող, — զայրացած բացականչեց Սեթոյի կինը. թախտին փռելով երեսսրբիչը, որ սփռոցի տեղ էր ծառայում:

— Ես ուրիշ բան եմ ասում, էդ գլխավորը չի,— ասաց Սեթոն, երեսարբիչի ծոպերը հարդարելով:— Նրանք խորհրդում մի մարդ ունեն, գլխի շեմ, թե ով ա:

— Ինչի՞ց գիտես, որ ունեն:

— Ինչ որոշեն, ինչ խոսան՝ էն ա նրանց ականջում:

— Քարտուղարը չլինի՞:

— Չէ՛, նրա գալուց առաջ էլ կար էդ կապակցութիւնը...

Ես ուրիշի վրա եմ կասկածավոր:

— Ո՞ւմ:

— Հաստատ իմանամ, հետո,— այնպես ինքնավստահ 10
ասաց նա, որ կարծես կասկածի հետք անգամ չէր կարող լինել, որ պիտի իմանա վաղ թե ուշ:

Հրանուշը թեյամանը մոտեցրեց: Ես վեր կացա գնալու:

— Մի ստաբան խմի, հետո... Հրանո՞ւշ, տես հո մարդ չի՞ երևում:

Հրանուշը բակի դռնակը բաց արեց:

— Չէ՛:

— Հենց կիմանաս թե վախից եմ էսպես... Չէ, զգուշու-
թիւնը լավ բան ա: Նրանք էլ շատ հարիՖ են՝ իմանան, թե 20
ով ա նրանց սեկրետը գողանում... է՛հ, վերջը դրանց վեր ենք
քցելու, համա մի քիչ շարշարում են...

Կես ժամ հետո ես գլուղխորհրդումն էի:

— Ա մարդ, էսքան ուշանալ կլինի՞,— հանդիմանեց գլու-
ղատնտեսը: Տես ինչքան պայմանագիր եմ կնքել,— թղթերի
կույտը ցույց տվալ հաշիկը:

— Դաշտումն էի...

«Կանցելարում» տեղ չկա: Իրար հոմշտկելով մոտենում են հաշիկի սեղանին: Մեր, ջահել, կին ու տղամարդ: Նրանք, որոնք գրվել են, դուրս շեն գալիս: Մեկն սպասում է տեսնի իր հարեանը քանի՞ լիտրի պիտի գրվի, որպեսզի հանդիմանի 30
կամ զայրանա, եթե իրենից պակաս գրել տա, մյուսն աչքը դրել է ֆոնդի հողին, սպասում է, որ այդ մասին «առանձին» խնդրի. երրորդը՝ որովհետև դուրսը ցուրտ է, գնալու էլ տեղ չունի: Համոզում եմ, հանդիմանում, զայրանում, ծիծաղում:

— Պարթև Աբրահամյան, — կանչում է հաշիկը: Լոում են. հեկեկում է մի կին՝ չորացած, մաշված... հաշիկը ցուցակում

կարդաց նրա մահացած որդու անունը, ինչպես գրված էր հողամատյանում, երբ նա էր ծխի գլուխը: Մայրը գլուխը շրջում է պատին, անձայն հեկեկում, սև գոգնոցի ծայրով աչքը սրբում: Ու շշնջում է.

— Քոռանաս, աստված... Աչքդ նրան տեսա՞վ:

— Անցածն անցել է, մե՛րս... Հանգստացի՛ր,— ասում է Պողոսը:

Այս խոսքից մոր հեկեկանքը սաստկանում է: Նա էլ չի կարողանում իրեն զսպել, երեխայի նման «Պարթև» կանչելով դուրս է գնում, թողնելով և՛ բամբակը, և՛ պայմանագիրը:

— Զարմանալի բան ա: Զորս տարին թամամեց, էլի անունը տալուց էսպես փլվում է,— մոմոաց մեկը:

— Դրան մոր շիգար են ասում, է՛,— վրա բերեց մյուսը:

— Տուր ինձ նրա պայմանը, ես կտանեմ նրանց տունը,— ասում է մի երիտասարդ:

Մոտենում են երկու պառավ կին:

— Գրա ինձ,— ասում է մեկը:

— Ոչ, ընկեր խաչիկ, դա դիդա՞ս ինչ պառա՞վ ա...

— Դրա նման բամբակը բեջարող չկա: Հերու մրցանակ ստացավ:

— Ինչքա՞ն գրեմ:

— Վաթսուն լիտր,— հանդարտ ասում է նա: Մի քանիսը զարմացած բացականչում են.

— Ա՛յ պառավ, հեկտար ու կես բամբակ կարա՞ս ցանի...

— էս ոսկի ձեռքերով,— ասում է ու ձեռքերն իրար տալիս: Միծաղում են: Մաշված, մաքառված ձեռքեր են, շորացած կաշի ու ոսկոր: Ով գիտե՞ քանի՞ հազար փութ բամբակ են մշակել այդ «ոսկի» ձեռքերը:

Մյուս պառավը նրանից քիչ է վերցնում:

30 — Հերիք է դրան... ոտները քամոտ են...— ասում են խաչիկի մոտ կանգնածները: Բայց պառավը մի պայման է գնում, որ իր հողը գութանով վարեն:

— Ինչի՞:

— Զեմ ուզում: Օրես դենն ինձ սազ չի էդ մաշինեքերը...— Միծաղը վեր է ածվում հռհռոցի: Առաջին պառավը հանդիմանում է.

— Գութնվորին մի շալ լավաշ, մի դազան փլավ տառ լավ ա՞, հա՞... 10:

— Էդպես ա կարգը:— Մյուսների հոհոցը նրան այնքան շղալրացրեց, որքան առաջին պառավի այդ խոսքը: Ու ձեռքը ձեռքին խփելով ասաց.

— Բրինձն էլ խտակել հազրել եմ... քեզ ի՞նչ:— Հոհոցը սաստկացավ:

— Պառավները կովան... Տո, կպան իրար,— կանչեց մեկը:

— Շնորհակալ եմ,— ասաց ու հեռացավ պառավը, պայ- մանագիրը գոտկալի տակ պահելով:

* * *

... Այսօր եռյակից գրություն ստացանք: Ժամը 12-ին տրակտորների կալոնը պիտի մտնի Քյոթանլու: Գրել են, որ աշխատանքը մյուս գյուղերում էլ հաջող է: Նորից են հիշեցնում, որ համայնական ժողովում շմոռանանք սոցիալիստական մրցության պայմանագիրը կնքելու: Պիտի գան հարևան թուրք գյուղից: Ուղարկել են և լրագրեր... Թեկուղ խրճիթն ստանում է, բայց գալու օրից թերթին շենք նայել: Եռյակից գրում են, որ շուտով կենտրոնից մեր շրջանն է գալու բանվորական բրիգադը...

Հաշվեցիք մեր աշխատանքը: Ութ գութան երեք օր է՝ վարում են... Տրակտորները բավական տեղ ցել են արել: Նրանցից միայն մեկը կեսօր չի աշխատել՝ բոլոր կոտրվելու պատճառով: Հինգ օրում 29 հեկտար վարել են:

— Նու 30 ասենք... 44-ն էլ կար... 74:— Եվ Խաչիկը տուկոսն է որոշում:

Հրանուշը երեկ գնաց. նա սովորում է շրջանի յոթնամյակում: Շաբաթ օրերը գալիս է, մի օր մնում, մյուս օրը վեց օրվա հաց շալակին գնում: Եթե սալլ է պատահում, նստում է: Գնում է՝ մի ր եկած ճանապարհով, բամբակի դաշտերի և կանաչ արտերի միջով... Ուրախ գնաց և ափսոսաց, որ չի տեսնելու տրակտորների մուտքը Քյոթանլու:

— Եկան, եկան...

Երեխաները վազեցին առաջ: Հրապարակում խմբված ժողովուրդն առաջ շարժվեց: Երեաց առաջին «Ֆորձոնը», հետո

երկրորդը, երրորդը, չորրորդը... վեց «Տորձոն»: Իսկ ամենից վերջը՝ ծանր «Կեյսը», նոր խոփերը վեր ցցած, որ շքեխոտ-վեն: Փրփրթում էին տրակտորները, ու նրանց աղմուկի մեջ որոշակի կարելի էր ջոկել «Կեյսի» աղմուկը, ասես փնթփրն-թում էր, որ իրեն ամենից վերջն են գցել ու զայրացած պահանջում էր խոպան ու կարծր մասհող, որ ցրիվ տա, փշրի...

Ժողովը հրապարակում եղավ: Մարդիկ նստոտեցին տրակտորների վրա, հենվեցին նրա անիվներին: Ու երբ հարևան գյուղի պատգամավորներն եկան, ժողովը վերածվեց անպա-
10 ճույճ, անզարդ միտինգի:

Երեկոյան դեմ տրակտորներն անցան հրապարակով, մտան կայանի բակը:

Շողե պատերը դողում էին նրանց թափից: «Կեյսը» թևով դիպավ ավերակ պատին ու փլցրեց մի շերտ, որ խանգարում էր նրա երթը...

ՄԱՐՄԱՐԻ ՏՈՒՆ ԿԱՌՈՒՑՈՂԸ

Երբ առնում եմ գրիչը նկարագրելու իմ հանդիպումը մի պարզ կոլտնտեսականի՝ Հայրոյի հետ, որի նման հարյուր հազարներ կան մեր երկրում,— պատմելու և մեր զրույցը երբ, ինչպես ասում են, վկան երեկոյան երկինքն էր և պղտոր առուն, որ Հայրոն բաժան-բաժան արձակել էր բամբակի մարգերի վրա,— ես ահագին ջանք եմ թափում այս նկարագրության ընթացքում սեղմած պահելու ներքին երկու զսպանակ՝ լեռնացած ուրախության և արդար գովքի, որին արժանի են հողի այդ մշակները, Արարատյան դաշտի շքնաղ երեկոն, կանաչ այգիները, ծիրանագույն ամպերը և այն իմաստուն խաղաղությունը, որ իջնում է արգավանդ դաշտի վրա, փշատենու սաղարթին, թպրտացող խարույկների և հոգնած մարդկանց վրա, որոնք երգերով դաշտերից դառնում են տուն:

10

Ես թողել էի մեծ ճանապարհը և արտերի միջնակներով, առուի հետ գնում էի դիմացի գյուղը, որի առաջին խրճիթները նշմարվում էին ուռիների արանքից:

Առվի եզրին հանդիպեցի միջին տարիքով մի մարդու, որ կռթնել էր բահին և հետևում էր մարգերի վրա կապած ջրին:

— Վարար շե՞ս կապել ջուրը... — և կուացա նոր ծլած բամբակենիների վրա, որ դողում էին ջրի թափից: 20

— Էս ջուր վարար պիտի, որ հող քիչ խմի...

Ինչո՞ւ պիտի հողը ջուր քիչ խմի և ինչո՞ւ քիչ ջուր խմելու համար մարգերում ջուրը պիտի սրընթաց գնա: Գուցե նա ճշմարիտը չի ասում: Եվ իմ հարցը մոտենում է հեռվից:

— Ո՞ւմ բամբակն է:

— Մերն է,— պատասխանեց և անցավ մի ուրիշ մարզի, որի ծայրը հեռվում չէր նշմարվում:

— Կոլխոզի՞ բամբակն է...

Նրա հայացքն արտահայտեց և՛ զարմանք, և՛ հանդիմանութուն, և՛ խորամանկ հեգնանք. իմ հարցն անտեղի էր:

— Մերն է, մեր կոլխոզինը...

10 Նա հանգիստ, ինչպես երկրորդ անգամ բացատրում են դասը, կրկնեց, որ այս սառնայի հողերը ծանր կավ են, բամբակը դեռ «մանուկ» է և եթե ջուրը լճանա, հողի երեսին կնստի ծանր կեղևը և կավի ամուր շերտը կխեղդի բամբակին: Որպես ավելորդ ապացույց, նա ասաց և այն, որ նրա կյանքի շատ տարիները «խաղացել» են հենց այդ հողերի վրա:

Հետո գրույցն առավ այս տարվա ցորեններին, նորից շուռ եկավ բամբակի վրա, անձրևների և քաղհանի շուրջը պտտվեց, ինչպես ջուրը, որ խշշալով գնում էր, պտույտ անում հողի կոշտերի շուրջը և գլուխը կախում դեպի մարզի եզրը: Երբ խոսք ընկավ աշխօրերի և աշխատանքի մասին, նա ծոցից հանեց խնամքով պահած գրքույկը, որից հայտնի էր, որ նրան անվանում են Հայրո, և Հայրոն արդեն ունեի 73 աշխօր:

20 — Կա՞ ձեր տանը ուրիշ աշխատող:

— Կինս է: Նրան էլ կա 29 աշխօր... Երեխաները չեն թողնում, թե չէ ավելի կառնեի:

— Ինչքա՞ն պիտի ստանաք:

— Եթե անցյալ տարվա պես բերք հավաքենք, մեզ կընկնի մինչև 30 փութ: Բայց էս տարի աշխօրին ավելի կհասնի. համ ցանքերը լավ են, համ աշխատանք հավասով կանեն:

— Դու կհասցնե՞ս երեք հարյուրի:

— Ավելին:

30 Սկսվում է մի խոսակցութուն, որ հետաքրքիր է ոչ միայն նրա համար, ով կարողանում է թվելու բազմապատկել և աշխատանքը վերածել ցորենի, բամբակի և ուրբիների: Նրա պատասխանների մեջ կա ստույգ ճշտություն: Նրա լեզուն առաջվա պրիմիտիվ բարբառը չէ, նա արդեն գիտի նոր և դժվար բարդություններ և սովորել է նախատեսել և կշռադատել:

Կհարցնեիր առաջ հողի մարդուն, թե ինչպե՞ս են ցան-

քերը և ի՞նչ է ակնկալում իր վաստակի դիմաց: Նա կտարակուսեր պատասխանելու այդ ծանր հարցին: Նախ ո՞վ ես և ինչո՞ւ ես հարցնում. ապա որտեղից իմանար, երբ դեռ հեռու է բերքահավաքը և մինչև բերքը տուն տաներ, տասը բաժին պիտի տար՝ պարտքատիրոջ, խարջ հավաքողին, «աթոռամաս», հանդապահին և հողատերին: Եվ նա խեղճության դրոշմը դիմքին երկյուղով կնայեր վերև և կասեր.

— Տեսնե՞ք ինչպես կլինի... Եթե մի ուտելու հաց գա, փառք իրեն... էդ էլ մեր բախտը: Այ էս արտը լավ հաց կտա, թե չէ իմ հողից ի՞նչ ես հարցնում...

10

Իրեն հողում ամեն ինչ վատ, հարևանի հողը՝ հարուստ, իրենց գյուղը՝ աղքատ ու խեղճ, հարևան գյուղը՝ առատության աղբյուր, վերջապես իրենց երկիրը՝ ցամաք (եթե միայն նրա մտածողության հորիզոնը ավելի լայն բացվեր, քան գյուղի հողերի սահմանը), մյուս երկրները՝ դրախտ: Այսպես էր խեղճության հին լեզուն, որ կոչվում էր «ցորեն լեզու» անծանոթ մարդու հարցասիրության դեպքում, զրսից եկողին՝ անձարակ և աղերսով նկարագրելու իր վիճակը:

Հայրոն և նրա նման հարյուր հազարները յուրաքանչյուր օր գիտեն իրենց և հարևանի աշխատանքը: Սրանք տեղյակ են ոչ միայն իրենց կոլխոզի, այլև հարևան կոլխոզի դրուժյանը: Գիտեն և այն, որ իրենց ձեռքումն է ավելացնելու աշխատանքի օրերը և օրվա միջինը՝ ցորենով, բամբակով, խաղողով:

20

— Սկզբից մեր կոլխոզն էնքան շեր ամրացել, ինչքան էս վեց ամիսն ամրացավ: Զտեցինք մաքուր, ազատվեցինք լողորներից և հիմա տեսնո՞ւմ ես, արևը մայր է մտել, բայց տես դաշտերում ինչքան աշխատող կա...

— Հայրո, դու գիտե՞ս քո հին հողամասի հին սահմանները:

30

— Ա՛յ,— և ձեռքը մեկնում է դեպի անեզր դաշտերը:

— Խառնվե՞ց գնաց... — Ժպտում է նա: — Այ, էնտեղ մի թումբ կար,— իսկ ես շեմ կարողանում որոշել, թե ո՞րտեղ թումբ կար,— էդ թմբի տեղից մինչև հին առուն էր:

Բայց թումբը հարթել են և լցրել հին առուն:

— Ես հարցնում եմ քո շնչաբաժին հողիդ մասին, մինչև կոլխոզ մտնելի: Ի՞նչ եկամուտ էիր ստանում...

Նա դժվարանում է պատասխանել:

— Ի՞նչ եկամուտ պիտի ստանար մի բատրակ, որ ունեւր երեք անձ և ոչ տուն, ոչ կթան... Քարոտ, անմշակ հող էր: Բեշարեցի երկու տարի, սերմ ձգեցի, սերմ առա և երկու տարի էլ պիտի քրտինք թափեի, մինչև հողը դառնար պիտանի: Ինձ որտեղից էդքան ուժ:

10 Եվ պատմեց իր կյանքը, իր կոիվը՝ հողի համար, մի աղքատ խրճիթի և «կթանի» համար, որ ցամաք շմնային ինքը և երեխաները:

Նա պատանի էր, երբ հեռու մի երկրից, որ անմարմին հուշ է նրա գլխում, տեղահան արված և պատերազմի արհավիրքներից սարսափած բազմության հետ գաղթեց այս անծանոթ դաշտը: Շրջեց որպես անօթեան, և հենց այդպիսի կավահող, Հայրոյի բամբակներից ոչ հեռու, գերեզման դարձավ մի ամբողջ տոհմի, որի վերջին շտապիղն էր այդ նիհար պատանին:

20 Հետո՝ բատրակ: Կիզիչ արև, դառնահամ ջրեր, ցամաք հաց, մի փալաս, որ նրան պաշտպանում էր և անծրևից, և գիշերային սառնությունից: Առաջը՝ մուսյլ և անթափանց խավար: Թվում էր, որ վախճանը չկար այդ անուրախ կյանքի:

Սակայն բացվեց այդ առավոտը և ի՞նչ արշալույսով...

— Ես գիտեի, թե ամենաբախտավորն եմ, երբ ինձ հին առվի տակ հող հատկացրին...

30 Հայրոն նորից կրկնեց, թե նրա համար ինչքան դժվար էր ոտքի կանգնելը, հետո ինչպես մտավ կոլեկտիվ, ինչպես երկու ամիս «փշում էր մեկ տաք, մեկ հով» և օրորվում էր ինչպես լեռան կատարի խոտը: Մտնի՞-շմտնի՞: Թե մի քիչ էլ ծանրանա իր բազուկների վրա և քաշված մի կողմը՝ ապրի առանձին: Այս էլ նա պատմեց ճշմարիտ խոսքերով, ինչպես եղել է՝ ցամաք, որպես նրա հին հողը:

Բայց այն, ինչ նա պատմեց խոր դառնությամբ, ամենից զարհուրելին թվաց ինձ: Եվ դեռ երկար ես նայում էի այդ պարզ և ոչ խորամանկ դեմքին, որի վրա հին խեղճության դրոշմը քերվել էր. և դառնում էին նորոգ վեհության և երկաթյա

կամքի կրակները, հին «շինականի» խարխուլված պատկերի միջից բարձրանում էր համայնական դաշտերի նոր մարդը:

... Մնվեց անդրանիկ որդին: Հայրոն այն ժամանակ ապրում էր ավերակ հնձանում և դեռ շուներ ոչ հողաբաժին, և ոչ բահ: Ընտանիքը քնում էր այն փալասի վրա, որ պարզեւել էր տերը ծառային: Չորեքթաթ գնաց այդ մանուկը հայրական փալասի վրա և հնձանի դռնակից տեսավ լուռ մի երկինք և համր պատ հենց հնձանի առաջ և պատի հտեւը՝ հեքիաթային այգի: Հետո ոտքի ելավ մանուկը և կամեցավ տեսնել այդ այգին՝ արգելանքի պատի հտեւը: Եվ միայն մի անգամ մազլցեց վերև... Հետո անոթացավ, մաշվեց և եղավ անզոր հասկ: Եկավ գարունը և մի առավոտ էլ չզարթնեց տղան, ինչպես բնի մեջ սառած թռչունի ձագը:

10

— Այնպես պատահեց, որ այդ օրը եկավ հողաշափը: Հողերը պիտի բաժանեին ըստ շնչերի... Ես շատ միտք արի և...

Եվ Հայրոն որոշում է գյուղխորհուրդից թաքցնել որդու մահը, որ չնվազի շնչերի թիվը, և չփոքրանա այն հողը, որ հասնելու է իրեն:

— Գնում էի գյուղխորհուրդ, սպասում... Գալիս էի տուն՝ լալիս էր մայրը դեղնած դիակի վրա...

20

Չորս օր նա արտասովեց այն հասարակ դագաղի վրա, որ հայրը գաղտնի հյուսել էր ուռնու կլեպներից: Չորրորդ օրը նրան հող տվին, որից հետո մեռած շունը գրանցվեց գյուղական ծխամատչանում:

— Դժվար, անմարդավայել կյանքից ընկանք էս լույս ճանապարհը...

* * *

Մենք միասին վերադարձանք գյուղը:

Հասանք նրա տնակը: Դուրս վազեցին երկու ժիր մանուկներ, ապա երևաց կինը: Ամեն ինչի վրա կար համեստության և խնամքի հետք:

30

Հին տան առաջ թափված էին տաշած քարեր, որոնք սպիտակին էին տալիս. կային և ուռնու գերաններ:

— Դաշտում դու ինձ հարցնում էիր, թե ի՞նչ պիտի անեմ, եթե այս տարի երեք հարյուրից ավել աշխօր ունենամ... Ես շուկա կհանեմ ավելցուկը և տուն կշինեմ, նոր տուն...

Հայրոն ինձնից հարցրեց, թե նոր տան համար և՞ս պիտի հատկացնել բակ՝ տնամերձ բանջարանոցի համար:

— Այն ժամանակ ես կտնկեմ իմ տան շորս կողմը ծառեր և տունս կլինի պալատ:

Ապա ոգևորվելով, թեկոս քաշեց.

— Մի տես ինչեր եմ առել նոր տան համար:

Հին, խարխլված խրճիթի մի անկյունում ես տեսա մարմարե լվացարան, մի նոր մահճակալ և երկու աթոռ: Նրանք խնամքով փաթաթված էին խսիրի մեջ:

10 — Էս լվացարանը իմ աշխօրով եմ առել,— միջամտեց կինը,— և պիտի պահեմ մինչև նոր տունը...

Ես հրաժեշտ տվի նրանց:

Իմ սրտում փլվեց լեռնացած ուրախությունը, և լուսնի տակ, ուռիների ստվերների մեջ, օրորվեցին վաղվա մարմարի տները, ուր խլրտում է նորոգ մարդկանց առօրյան:

Դրանից էր, որ շքնաղ թվաց և լիալուսինը արտերի վրա, Արարատյան դաշտի գիշերը, և այն ձայները, որ գալիս էին ծաղկած այգիներից:

ՄԻ ԿԻՆ ՊԱՏՄԱՄԱՎՈՐ Է

Նա կհամբուրի երեխաներին և նրանց կպատվիրի լսել տատին, ապա հրաժեշտ կտա ամուսնուն և կասի, որ «տատ, մուղսյիթ մնա»: Շողոն կպատասխանի. «բա հո մենք մեռած չե՞նք...»: Հետո նրա ձեռքը կսեղմեն Հոռոմսիմը, Ջավո մայրիկը, Ոսկինարը և բրիգադի ուրիշ կանայք, որոնք նրա հետ շանաքել են ու գոգնոցով «պարարտ» են թափել և մատներով հանդի-հատիկ հունդը թաղել են հողի մեջ:

Իսկ դուրսը՝ տան առաջ, արդեն սպասում է մեքենան... Այդ կինը՝ Թանկագինը կամ ինչպես գյուղում կոչում են՝ Թան- 10 գոն, մի անգամ ևս կնայի իր բակի շրաքարին և, ո՞վ գիտե, էլ ուրիշ ինչեր կտեսնի նրա աչքը, ինչեր կտեսնի այդ գեղջկուհին, որ և՛ մայր է, և՛ տանտիրուհի, և՛ պատվոգրով պարգեվատրված կոլտնտեսուհի, և որն ահա իր կյանքում առաջին անգամ ճանապարհ է գնում իբրև Հայաստանի խորհուրդների համագումարի պատգամավոր:

Փողոցում ոնց որ թե հարսանիք է, և կարծես տնից դուրս են բերում հարսին, բայց չեն լալիս, ինչպես լաց են լինում հարսի հարազատները, այլ այս և այն կողմից կանչում են.

— Թանգո, մեր կոլխոզի նամուսը, հա՛... 20

— Մենդակայանի հարցը շմոռանաս...

— Մեկ էլ տեսար տարան Անդրկովկաս...

— Թանգո, դե քեզ տեսնեմ, — և կոլտնտեսության նախագահը սեղմում է նրա ձեռքը: — Բարի ճանապարհ...

Նա մի անգամ էլ գրկում է իր փոքրիկ աղջկան, որին մի անգամ էս հարցրի.

— Բալիկ, մայրիկիդ հետ կերթա՞ս Երևան...

— Երթամ Երևան կորե՛մ...

Ապա մեքենան կճեղքի փողոցի ցեխը, Թանգոն էտ կնայի

հեռացող գյուղին, հարևաններին և ընկերներին, որոնք դեռ նայում են ավտոյին՝ երանությամբ և կարոտով, ապա գյուղը հետզհետե կընկղմվի փոսի մեջ և միայն կերևան ամայի հնձանները, որտեղ գիշերել են բրիգադները, գիշերել է նաև ինքը՝ շանաքավոր և քաղհանավոր Թանգոն:

Կոլտնտեսության վարչության ժողովին մի կին նստած էր կիսամութ անկյունում: Երկու սև աչքեր լարված նայում էին նախագահին: Իսկ նախագահը պատճառաբանում էր գյուղում հիվանդանոց և ծննդակայան կառուցելու անհրաժեշտությունը:

10 Երբ նախագահը խոսքը վերջացրեց, առաջին ելույթն ունեցողը ինչ-որ դժկամեց: Նա ակնարկեց, որ իրենց համար այդպիսի կառուցումը ծանր կլինի, որ այդ շենքերը պիտի նստեն աշխօրերի վրա: Պարզ էր, որ դեմ է: Եվ ինչպես վերջին ուղորդը արգումենտը, նա հայտարարեց, որ «էդ բանը (ծննդաբերությունը) սեզոնային բան է», և ուրեմն ծննդակայանն ամբողջ տարին չի աշխատի:

Այդքանն ասաց: Ապա անկյունում նստած կինը տեղից վեր թռավ և այնպես լվաց առարկողին, այնպես ծեփեց, որ 20 «սեզոնային բանի» վրա միամիտ հռհռացողները ցնցվեցին, կարծես նրանց հանկարծ անցկացրեցին սառը ջրվեժի տակով:

— Ամոթ քեզ: Եվ դեռ բրիգադիր ես... Իսկ քանի՞ կին են մեռել մեր գյուղում երեխայի վրա... Հաշիվ արե՞լ ես: Իսկ ինչո՞ւ նրանք մեռան, որովհետև բժիշկ չկար և չկար ծննդակայան: Էլ հերիք է: Ե՛վ ծննդակայանը, և՛ մսուրը մենք էնպես պիտի պահենք, ոնց մեր աչքի լույսը: Հո միայն աշխօր գցելու համար չե՞նք քրտինք թափել:

Եվ ծննդակայանի հարցը որոշվեց:

— Ո՞վ էր այդ կինը, — հարցրի նախագահին:

30 — Մեր Թանգոն է: Պարդևատրված հարվածային: Մեր գյուղից առաջին պատգամավորը Հայաստանի համագումարին...

Նախագահն ուրիշ շատ բան պատմեց այդ և առհասարակ կոլտնտեսության կանանց մասին: Ինձ ամենից ավելի էր հե-

տաքրքրում այդ, որովհետև իմ հիշողության մեջ դեռ թարմ են այն առարկությունները, որ անում էին գյուղացի կանայք առաջին ձմեռը, երբ մեր երկրում բարձրացավ կոլեկտիվացման ալիքը:

«Ես իմ երեխին մտուր շեմ տա...», «կոլխոզում երեխան հորը չի ճանաչի», «մեր երեխաները ժամով հաց ուտողը չեն», «կոլխոզի երեխաներին պիտի քշեն Մոսկվա», և ի՞նչ ասես որ այն ձմեռ կանանց բերանով շէր քարոզում դասակարգային թշնամին:

Ներս եմ մտնում այդ հին տան շեմքով:

10

Ամեն ինչ ծանոթ է, ամեն ինչ հին է. ջրի սև քարը՝ հեռակների վրա, հավաքունը՝ կավե մի փոքրիկ խրճիթ առանց լուսամուտի, տան դուռը, որի ունկը շողում է ինչպես օնիքս մարմար,— այնքան ձևաքեր բռնել են այդ ունկից, և դուռը երգելով բացվել է:

Արտաքինից ոչինչ չի փոխվել: Նորը ներսն է, տանը: Եվ այդ նորը վկայում է ոչ միայն այն, որ կոլտնտեսականները գնում են ունևոր կյանքի ուղիով, այլ և այն, որ նրանցից ոմանք արդեն սովորել են «մաքուր նստել»: Տուն կա, որտեղ գուցե միայն թախտն է հին, նաև կարպետը. մնացածը՝ մահճակալները, սեղանը, աթոռները, պատեֆոնը, պահարանները, մինչև պատառաքաղն ու ափսենները նոր են, բայց այդ ամենը դարսված են անկարգ, և կոլտնտեսականը, որ հագնում է և՛ կոշիկ, և՛ կրկնակոշիկ, դեռ չի սովորել կրկնակոշիկները նախասենյակում հանել ու տուն է մտնում ցեխոտ ոտքերով և գուցե դեռ անվա նստում է ճաշի, ինչպես երբեմն:

20

Բայց այս տանն ամեն ինչ մաքուր էր. ունեին կախարան վերարկուների համար, և սեղանի վրա դրված էր մոխրամանը: Ուրախ վառվում էր թիթեղյա վառարանը, և երկու փոքրիկ աղջիկ՝ մաքուր լվացված և մաքուր շորերով նստել էին վառարանի մոտ: Նրանցից մեկն այն շար աղջիկն էր, որ ասում էր.

30

— Երթամ Երևան կորե՛մ...

Նա բերում է երեք տետրակ՝ իր, քրոջ և մոր: Թանգոն

ժպտում է, երբ թերթում եմ իր տետրը: Ջարմանալի նման են
այդ գրերն աշխատանքի մեջ մաշված նրա ոսկորոտ մատներին:
Նա պատմում է, թե ինչ դժվարությամբ սովորեց գրել: Պատ-
մում է և անդադար, ինչպես բաց թողած մեքենա, աշխատում
է. մեկ վառարանին է մոտենում, մեկ՝ պահարանին, աչքը
նկատում է ինչ-որ թերի, և կողքով անցնելով շտկում է սփռոցի
ծայրը:

— Երեկ լավ ծեփեցիր, Քանգո...

— Ախր մի անհատ ասեր, էլի ցավ չէր. ասողը բրիգա-

10 դիր էր...

Հետզհետե հավաքվում են կանայք՝ Շողոն, Հոռոմսիմը,
հետո Ջավո մայրիկը և ուրիշներ:

— Ջավո մայրիկ, ինչո՞ւ Քանգոյին ընտրեցին պատգա-
մավոր...

— Առաջաքաշ է, դրա համար: Դու Քանգոյին դաշտում
տեսնեիր. կրակ էր, կրակ: Էնքան բամբակ որ տվել ենք, էս
մատներն են տվել: Կարկուտը որ շարդեց բամբակը, թողեց
չոփը. առավոտը տեսնեմ՝ ՄՏ կայանի խաչիկը մեր հանդը
կանգնած: Ասի խաչիկ, ինչո՞ւ ես ձեռքդ ծոցդ դրել. թե հա-
պա, Ջավո մայրիկ, ի՞նչ անեմ, պլանը ծովեց, էս կարկուտը
քանդեց մեզ: Ասի խաչիկ, դու հոգս մի արա. էս հողից քեզ
էնքան բամբակ տանք, որ մեջը լողաս: Դու միայն «պարարտ»
հասցրու: Թե՛ ճի՛շտ էս ասում մայրիկ. ասի՛ Ջավոն սուտ չի
ասի:

20

— Ասում ես Քանգոյին ինչու համար ընտրեցին... Գիշեր-
ցերեկ հանդումն էր. մենք բոլորս քուն շունեինք, մինչև կանա-
չեց բամբակը: Բամբակը տվինք, համա խաչիկը չի ուղարկել
ինձ խոստացած մինթանան...

30

— Բոլորդ եք աշխատել, հապա ինչո՞ւ Քանգոյին ընտրե-
ցին պատգամավոր: Թող քեզ ընտրեին, Ջավո մայրիկ...

— Հո միայն բամբակը չի՞,— խոսքին խառնվում է մի
տարիքավոր կին,— Քանդոն առաջին կինն էր, որ հենց էն
զլխից մտավ կոլեկտիվ և մինչև վերջ անսասան մնաց:

— Իսկ դո՞ւ:

— Ե՞ս,— և բարձրանում է այնպիսի զվարթ ծիծաղ, որ
մատնում է, թե իմ հարցը դեմ առավ մի «փակ» պատմության:

Եվ նույն ծիծաղով նրանք բաց են անում այդ փակ դուռը, և հենց ինքը՝ այդ տարիքով կինն սկսում է պատմել:

Բանից դուրս եկավ, որ դեմ առ դեմ նստած է հենց այն կինը, որը համառարածի օրերին «խմբապետ» էր ու քաշում էր եկեղեցու զանգերը և արդեն պատրաստել էր նավթը՝ հրդեհելու առաջին հիմնադիրներին տները:

— Թանգոյի տունը կա՞ր ցուցակիդ մեջ...

— Կար, բա չկա՞ր, — և կինը մղկտում է, խնդրում է, որ այլևս չհիշվի այն տարին: Նա վաղուց է կոլեկտիվի մեջ, աշխատում է ազնիվ, համայնական աշխատանքի բովում սրբելով 10 հնի ժանգը:

— Ասում ես ինչու Թանգոյին ենք ընտրել: Էն խառն օրերին դու տեսնեիր նրան: Կրակ էր կտրել: Թանգոն շիններ, ոչ մի կին չէր մնա կոլխոզում:

Իմ սրտում ես արդեն թիր եմ քվեարկել Թանգոյին, և մտքիս մեջ նորից զարթնում է այն առաջին ձմեռը:

— Մայրիկ, — դառնում եմ տարիքավոր կնոջը, — երեխաները հիմա ո՞նց են դեպի մսուրը...

— Մսուրը... Ես մի թոռ ունեմ, որ հենց նեղանում է թե չէ, ասում է՝ շորերս տվեք, գնում եմ մսուր: Էնտեղ լավ է, 20 ասում է, երգ կա, խաղալիք կա, քաղցր թեյ կա... Էն մեկէլն էլ, — և դառնում է հարևանուհիներին, որոնք գիտեն, թե ո՞վ է «էն մեկէլը», — երեկ թե՛ տատի, ես գնում եմ մանկապարտեզ վարժուհի պիտի դառնամ, հետո մի վարժապետ պիտի առնեմ, ձեր տնից գնամ... Էդպես է մսուրը: Մեր տներից լավ է...

Ինձ հետաքրքրում են կնոջ դիրքը և իրավունքները կոլտնտեսուկյան մեջ: Հիմա նա ինքնուրույն աշխատող է, և նրա աշխօրերը գրանցվում են առանձին: Կանայք պատմում են, որ դեպքեր կան, երբ կինը տղամարդուց ավելի շատ աշխօր է «քցում»: Եվ պատահել է, որ կինը բաժանվել է ամուսնուց 30 հենց միայն նրա համար, որ վերջինս քիչ աշխօր ունի:

Թանգոյի տանը պատմեցին հետևյալը. մի կին, որ աշխօրի սլատճառով բաժանվել էր ամուսնուց, «թասիբի» է բերում վերջինիս, և երբ ամուսինը ևս սկսում է լավ աշխատել, նրանք նորից միանում են մի ընտանիքի մեջ:

Երեխաները շատ են հետաքրքրվում ծնողների աշխատանք-

քով. Երբեմն նրանք մտնում են գրասենյակ և հաշվապահից տեղեկանում են, թե ո՞վ շատ աշխօր ունի՝ հա՞յրը, թե մայրը: Ինձ պատմեցին մի փոքրիկ տղայի մասին, որը տանը սարքել էր կարմիր և սև տախտակ: Եվ ամեն օր տղան հորը բարձրացնում էր սև տախտակին: Այդ համառ երեխան հորը «հալածում» է այնքան, մինչև մի օր հորը հաջողվում է կնոջ հետ միասին գրվել կարմիր տախտակին:

Բայց և այնպես դեռ կան կնոջն այսպանելու դեպքեր: Պատահում է, որ կանայք գիշերով գնում են դաշտ, և մի ոմն բամբասում է կոլտնտեսուհուն, նրա մասին ասելով անառակ խոսք: Դեռ չի հալվել արհամարհանքը դեպի կինն իբրև լավ աշխատողի: Իսկ ինչքա՞ն եռանդ ունեն կոլտնտեսության կանայք՝ դառնալու և՛ հաշվապահ, և՛ բրիգադիր, և՛ դաշտավար:

— Հիմա ապրելը հեշտացավ: Մեր սիրտը խաղաղվեց... Ուրախությունով ենք աշխատում, և մեր աչքին աշխատանքը հեշտ է երևում: Մնաց որ սովորենք ապրելու ձևը,— և Ոսկինարը, ոսկի մի մայր, բարակ ձայնով խոսում է, կարծես երգ է երգում, այնպես քաղցր ծոր է տալիս նա բառերը,— մնաց որ լավ տներ շինենք, տները լցնենք ուրախությունով... Ես ապրեմ էնքան, մինչև տեսնեմ նոր տները, բոլորը նոր: Էլ չի՛նեն էս քար ու քանդ տները, էս աժդահա պատերը, էս ցեխոտ հայաթները, թոնրի ծուխը, էս սևացած օճորքը... Առաջներում, որ աղջիկ էինք մարդու տալիս, մեկը պատճառ էր լինում. մեր լեզվով նրան ասում էինք սաբաբ: Եթե աղջիկը վատ տեղ էր ընկնում, սաբաբին նդովում էինք. եթե լավ տուն էր՝ օրհնանք էր, որ թափում էինք նրա գլխին: Հիմա մենք օրհնում ենք էս կոլեկտիվի սաբաբին...

— Ո՞վ է սաբաբը, մայրիկ:

— Հրեն է,— և մատը մեկնում է դեպի պատը:
30 Կարծես այս խոսքերը լսեց և ընկ. ՍՏԱԼԻՆԸ: Լսեց և ժրպտում է նկարի միջից, ժպտում է բարի և իմաստուն ժպտով:

* * *

Համագումարի դահլիճում մի կին պատգամավոր ուշադիր լսում է:

Նա մայր է, նա աշխատավորուհի է և ահա եկել է օրենք-

ներ սահմանելու: Նրա դեմքի մկանները ձգվում են. նա լսում է և անծանոթ բառեր, լարում է միտքը, որ բոլորը հասկանա, որովհետև վերագարձին նրան հարցնելու են Ոսկինարը, Զավո մայրիկը, Երջոն և հարյուր Հոռոմսիմ: Նրա ոսկրոտ մատները դողդողալով գծում են բառեր և խոսքեր: Բլոկնոտի էջերի վրա գյուղից նա բերել է մի քանի բառեր՝ «ծննդակայան», «մոտորաղացի հարցը», «լույսի մասին»:

Երբեմն նրա աչքերի առաջ փեղկվում է բեմը... Ահա իրենց փողոցը՝ իր հարազատները, նրանց ժպիտը և նախագահի վերջին պատվերը.

10

— Քեզ տեսնեմ, Քանզո...

Հետո նա դուրս է գալիս, շրջում է միջանցքներում: Լսում է ձայներ քաղաքներից ու հանքերից, գործարաններից և դաշտերից. այդ ամենը ձուլվում է, ինչպես որոտացող, նա հզորանում է, և գեղջուկ բարբառով մի պատգամավոր կին խոսում է գյուղերի մասին...

Հազարներ ու հարյուր հազարներ հիմա ժպտում են ինչպես առաջնորդը՝ բարի և իմաստուն ժպիտով:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՋԱՎՈՅԻ ԲՆԱԿԱՐԱՆԻՑ

1

Ասում եմ՝ պարզ գրեմ և նույնիսկ գորշ, անզարդ և անպաճույճ, թեև հիշում եմ այն գիշերը, ձյունը, որ աստղալույս էր մաղում քնած խրճիթների վրա, համր պատերը՝ խարույկի բոցերից կարմրած, պարողների երկար ստվերները և այն սև ծուխը, որ գունդ-գունդ բարձրանում էր և դժվար էր հալվում, որովհետև շոր տերևների ծուխ չէր, ոչ էլ ցախ էին վառել, ոչ արքատ, որ այրվում է յուղոտ փայլով, այլ վառել էին... և

10 հենց այստեղ կորչում է ձյունը, աստղալույսը, մնում է միայն խարույկը, որից դժվարությամբ էր անջատվում սև ծուխը: Կրակը ծանր էր վառվում, որովհետև այրվում էին հին խսիրներ, լաթ, փալասներ, այրվում էր դարավոր կեղտը, խեղճությունը, որ քե՛զ, Արարատյան շքնաղ դաշտ, դարձրել էր դառնության հովիտ:

Ջավոն այրում էր տնամեջը, Ջավոյի «տունն» էր այրվում, — ինչպես բղավում էին դեպի խարույկը վազող գյուղացիները, իսկ մեկը երկաթե շամփուրով խառնում էր կրակը, այրվող լաթերը թռցնում էր վեր և ձյունի հետ կայծեր էին

20 մաղում գյուղի վրա:

Ո՞վ է Ջավոն և ինչո՞ւ էր խարույկ վառել, ինչո՞ւ էր և՛ տխուր, և՛ զայրացած, և՛ ուրախ այնքան, որ պարում էր խարույկի շուրջը, պարում էր երգելով, և նրա հետ պարում էին նրա նմանները...

Ջավոն չբավոր էր: Էր՝ և ուզում ես այս այրող բառի վրայով անցնել հեշտ, ինչպես պարողները թռչում էին խարույկի

վրայով, ուզում ես, որ այդ մոռացված բառ դառնա և շքանա, ինչպես այն ծուխը, որ այնքան դժվար հեռանում էր Զավոյի այրվող հնից: Զբավոր էր, — և պատկերացնում ենք մի խարխուլ տուն, մի այրի կին, որ կթան շուներ, շուներ այգի. հաց, լծկան և ուներ «մի տուն լիքը սոված մանուկներ», երկու հոգնած ձեռքեր, մատները՝ մեռած-հողագույն, որովհետև տասը, քսան և երեսուն տարի այդ մատներն ուրիշի համար քաղհանել են, մանկ, լվացել և հաց են եփել: Կարելի է նկարագրել խավար գիշերին նրա ցուրտ օջախը, ճրագը՝ մի աշք, որ ահա հավիտյան կփակվի, և ճախարակի առաջ այդ կինը երգում է 10

Կարծես քիչ էր, որ տան հատակը հող էր, այլև, — տունը գետնափոր էր. հերիք չէր, որ դռնակը նեղ էր, այլև ներս մտնելուց պետք է կռանայիր և կիսամթնում դեռ պիտի տրորեիր աշքերդ, մինչև թոնրածխի և ինչ-որ գաղջ բորբոսնահոտի մեջ տեսնեիր պատերը, ապա «կահ-կարասին» — ամեն ինչ հողի գույն, մաշված և կարկատած: Այդ տների մասին էին ասում, 20 թե՛ վառես, խանձահոտ չի գա...

Աշնան մի ցուրտ օր մտա Զավոյի տունը: Նրա մասին պատմել էին, որ համատարածի ձմեռը «խշմար է վերցրել», — մի արտահայտություն, որով դաշտի գյուղերում այժմ հեղնում են այն ձմեռը կոլեկտիվն այսպանողներին: Նաև հետաքրքիր էր տեսնել շքավորությունը «դասական վիճակում»:

Որովհետև աթոռ չկար և ոչ էլ նստարան կար, — մնում էր տեղավորվել թոնրի պուռնկին՝ խսիրի վրա և ոտքերը կախել թոնրի մեջ:

Երկար կլինի պատմել մեր զրույցը: Զավոն շատ բան 30 պատմեց և՛ հնից, և՛ նորից, — բայց ամենից խոր իմ հիշողության մեջ տպավորվեց նրա պատասխանն իմ հարցին.

— Զավո, կսուսվարությունը, որ քեզ ասի ինչ ուզես կտանք՝ ի՞նչ կուզես...

— Մի շքած, սարքած օթախ՝ բարձր բալկոնով... էլ զատ չեմ ուզի... Ինձ թող նոր օթախից տանեն թաղեն:

Բաց դռնից նայում էի դուրս: Նայում էի այն «հորիզոնին», որ երևում էր Զավոյի տան ներսից, և նույնն էր երևում տան բակից. հարևանի խուլ պատը, — ուրիշ ոչինչ չէր երևում: Մի մեռած պատ հիստուն տարի փակել է նրա հորիզոնը: Ես մտաբերում էին Լոնդոնի այն բանվորուհուն, որին հարցրել են, թե որտեղ է Անգլիան և նա պատասխանել է. «...Ենթադրում եմ, որ այդպիսի երկիր երևի գոյություն ունի, բայց մինչև այժմ դրս մասին ոչինչ չեմ լսել...»:

10 Եվ ինչի՞ մասին կարելի է լսել, եթե հիստուն տարի ապրես այդ տանը, աչքերիդ առաջ նույն պատը, ուսերիդ վրա՝ նույն հոգսը...

2

Դեռ այն ցուրտ աշունքին, երբ թոնրի առաջ Զավոն պատմում էր իր կյանքը, նրա խոր հառաչի հետ դուրս թռան նաև հետևյալ բառերը.

— Նոր օթախ որ ունեցա, պիտի վառեմ, մոխիր անեմ էս զնդանը...

20 Ծշմարիտ, որ տուն չէր, այլ խավար զնդան էր, բայց ճշմարիտ էր նրա ցանկությունը՝ մոխիր անել և քամուն տալ հենց, օրինակ, այն խսիրը, որ փռված էր թոնրի պռունկին և որի վրա նստել էինք ես և ինքը: Ծշմարիտ ցանկություն էր այդ, թե դառնության ճիշ:

Այս նոյեմբերի 24-ին Արշալույս գյուղում Զավոն խարույկ էր վառել:

Արդեն գիշեր էր, և կրակի լույսով կարմրավուն էին երևում հին տան պատերը և այն պատը, որ հիստուն տարի նրա տան առաջը փակել էր, և չէին երևում ո՛չ լեռները, ո՛չ լայն դաշտը, այլ միայն երևում էր երկնքի մի պատառը, ինչպես բանտի պատուհանից:

30 — Զավո մայրիկ, էս ի՞նչ էր, — և մեկը շամփուրով կրակից հանում է մի այրվող փալաս:

— Էն իմ բարձի երեսն էր...

— Զավո, հապա է՞ս ինչ էր, — և բարձրացնում է նոր լաթ, ասելով, — ինչքան էլ ծանր է...

— Վրան հազար կարկստան կա...

— Զավոն, սրա վրա կակո՞ւղ էիր քնում,— և մի ուրիշը ոտքով դեպի կրակն է հրում թաղիքի կտորը:

— Մեջը հազար լու կար,— և բարձր ծիծաղում են. մեկը ձեռքի ճրագից նավթ է թափում մի հնամաշ գլխարկի վրա, որ Զավոն հանում է պատի ճեղքից:

— Հարուժի փոստը, Հարուժի փոստը...

— Քսան տարի գլխին էր: Ինքը մեռավ, սա մնաց,— և հնամաշ գլխարկը նետում են կրակի մեջ:

Մի ուրիշը վերցնում է կավե կոծկած պտուկը,— բայց Զավոն խլում է նրա ձեռքից, ինքն է ուզում փշրել, զարկում է 10 գետնով, պտուկը չի ջարդվում:

— Հին է, երեսը պինդ է,— և երկրորդն է զարկում, բայց դարձյալ չի կտորվում պտուկը, որ ով գիտի քանի սերունդի ձեռք է մաշել, եղել է օջախի «հարստությունը», ճաքել է՝ կոծկել են, ջուր են կրել, վարժվել են այնպես, որ այդ շնչին իրը դարձել է տան հարազատը:

Երրորդ անգամ պտուկը Զավոյի որդին է առնում, մոտենում է սալ քարին, բարձրացնում և այնպես թափով է զարկում, որ փշուր-փշուր զրնգում են բեկորները:

— Զարդի՛, իմ ջիգյարը վառեց,—ասում է Զավոն: Մյուս- 20 ները ծիծաղում են, բայց Զավոյի դեմքը մոռայլվում է: Նա մտազբաղ է. կարծես մի բան է հիշում, մտքով այստեղ չի,— նայում է խարույկին, բայց հիշողության մեջ ուրիշ կրակներ են... ծեծե՞լ են նրան, երբ Զավոն հարս էր և կավե պտուկի ունկը դեռ մնում էր,— լա՞ց է եղել,— մի ինչ-որ ծանր հիշողություն փշրվում է նրա հոգու մեջ:

Կանչում են, թե՛ Զավո՛, թող գերանները վառենք: Իսկ գերանները՝ ծուռ, որդնակեր,— դողում են, երբ պարողների դոփյունից գետինը թնդում է:

— Զմեռս հապա ի՞նչ պիտի վառեմ...

30

— Զավո, պիտի վառե՞ս բոլորը...

— Հապա ի՞նչ. առաջ-առաջ էս դուռը պիտի վառեմ,— և դուռը խուլ ճռնչում է, դուռը երգում է գուցե վերջին անգամ:

Ինչ-որ բան է կատարվում Զավոյի հետ. նա մերթ ինքը երգում և պարում է և նրա երկար ստվերը թրթռում է պատերի վրա, մերթ պարողների շարքից դուրս է գալիս և ձեռքերը

կրծքին ծալած նայում է կրակին: Նայում է դառն կսկիծով. կարծես ուզում է հիշողության մեջ տպավորել պատկերն այն աղքատ իրերի, որ նրա տունն էր, «տնամեջը», նրա անբաժան ընկերը հիսուն տարի:

Նրա հոգու մեջ հրդեհվում էր մի ուրիշ խարույկ. սև ծխի նման բարդ-բարդ հեռանում էր կարիքը, քաղցի ահը. այրվում էր կեղտը, հոգսը, վախը և բոցերի մեջ թրծվում էր նորոգ ոգին:

— Ախ իմ կորած հիսուն տարի...

10 — Զավո մայրիկ, կգա՞ս, թաքուն լա՞ց կլինես օշախիդ վրա:

— Սև մնա:

— Էլ ինչ սև մնա, որ ահա մոխիրը քամուն տվիր...

3

Երթը հին տնից դեպի նորը նման էր հարսանիքի:

Զավոն կարծես նորահարս էր, որին տանում էին լապտերների լույսով և ցնծության աղաղակներով: Կարծես հիսուն տարի գետնափոր զնդանում Զավոն շղթայված էր անուրախ կյանքի սյունին, և ահա փշրել են դուռը, այրել են հին զնդանը և նրան տանում են:

20 — Զավո՛, հիմա քեզ մի մարդ է պետք, — կատակում է մի ընկեր, որին նույնպես թվում է, թե Զավոն նորահարս է:

— Օխտը աշխօրով մի մարդ կառնեմ...

— Էդ ի՞նչ էժան է մարդը, Զավո:

— Մարդ կա, որ մի աշխօր էլ չարժի, գիտե՞ս...

— Մարդը թանկ է, կնիկն է էժան:

30 — Հիմա կնիկ չկա, ականջներիդ բամբակը հանիր... հիմա կնիկ չկա, հասկացա՞ր, — և Զավոն մի քանի անգամ է կրկնում այդ խոսքը: Ուզում է ասել, որ հիմա չկա անխոս, խեղճ, վիզը ծռած գեղջկուհին, որ «կնիկ» էր, որ ձայն շուներ և ճնշված, արհամարհված «կինարմատ» էր:

Մտնում ենք Զավոյի նոր տունը: Մտնում ենք, բայց չենք կրանում և չենք իշնում գետնի խորքը, այլ նոր սանդուղքով

բարձրանում ենք պատշգամբը: Զավոն սանդուղքի գլխից կանչում է բազմության.

— Այ դուք բարով, հազար բարով եկաք...

Ահա սրահը, նոր սենյակը՝ Զավոյի երազը: Զույգ լուսամուտները նայում են փողոցի վրա: Պատերը նոր են սպիտակացրել, և սենյակում դեռ մնում է գաջի թաց հոտը: Իրերը նոր են՝ վառարանը, սեղանը, մահճակալը: Զավոն մոտենում է վառարանին:

— Շնորհավոր, Զավո մայրիկ... կարա՞ս վառես:

— Նստեք, հաց բերեմ, գինի բերեմ... Շեն մնա իմ հարյուր ութսուն աշխօրը... 10

Նոր տունը Զավոն նվեր է ստացել: Նրան նվիրել է կոլեկտիվը՝ անձնուրաց աշխատանքի համար: Այստեղ առաջ կոլեկտիվի գրասենյակն էր:

— Զավո, զանգ տուր Երևան:

— Ես կշվարեմ... Զանգ տամ ի՞նչ ասեմ:

— Ասա՛ խոսում են Զավոյի բնակարանից...

Եվ այդ խոսքով ասվում է ամեն ինչ:

Խոսում են Զավոյի բնակարանից... Ի՞նչ պիտի ասեին երեք տարի առաջ, և ի՞նչ բնակարան կար, և ինչպե՞ս պիտի խոսեր, վերջապես ո՞վ էր Զավոն, ո՞վ գիտեր նրան: Նրա բնակարանում հառաչում էին, այնտեղ ցուրտ էր, խավար էր, Զավոյի տանը մրսում էին: 20

Խոսում են Զավոյի բնակարանից... Եթե հնար լիներ այդ գիշեր նրա հեռախոսը միացնելու լայնահաղորդ կենտրոնին, կմոտենար ինքը՝ Զավոն և ուրախ ձայնով ամբողջ աշխարհին կասեր:

— Ես եմ խոսում, Զավոն... Մենք ենք տվել բամբակի ամենաբարձր բերքը Հայաստանում... Ես գոհ եմ, ես հարուստ եմ, և եթե հարյուր մարդ գա, առատ սեղան բաց կանեմ և կասեմ բարով, հազար բարով եկաք իմ նոր տունը: 30

Ապա կհնչեն տանը հավաքված բազմության ուրախ աղմուկը, ծիծաղը, նրանց հանաքները, նրանց երգերը: Եվ բարձրաձայն կլսվի Զավոյի կանչը սանդուղքի գլխից, երբ լապտերը ձեռքին ընդունում էր առաջին հյուրերին:

— Շեն մնա Ստալինը, — էս ամենը նա տվեց...

Նրա պատշգամբից աստղալույսով երևում էր դաշտը մինչև հեռվի ձյունոտ լեռները: Այլևս շկար համր պատը, խեղճության խավար պատը: Այստեղից Զավոյի աչքերը կտեսնեն ընդարձակ հորիզոն, մինչև անեզր հեռուն:

Այդ էի մտածում նաև այն պարզ և համեստ մարդկանց մասին, որոնք կոչվում են ուայոնի ընկերներ: Նրանցից երկուսը ներկա էին՝ խարույկից մինչև նոր տունը, և Զավոն նրանց նստեցրեց սեղանի գլխավերևը: Նրանք քաշվել էին մի կողմ, երբ ահագին կանչերով գյուղացիները բորբոքում էին Զավոյի խարույկը, պարում էին կանայք, պարում էր և Զավոն: Նրանցից մեկը Զավոյին հանդարտ սովորեցնում էր, թե ինչպես օգտվել հևախոսից: Սովորեցնում էր նույն համառ համբերությամբ, ինչպես համոզել էր, որ «խշմար անելով» Զավոն դեռ երկար կմնար գետնահարկ նկուղում, — սովորեցրել էր, որ համայնական քրտնաջան աշխատանքը բերում է երջանկություն աշխատավորին:

Նրանք առաջինը բարձրացան նոր տան սանդուղքով: Նրանց հետքերով բարձրացան երեկվա գյուղացիները՝ Արշալույսի կոլտնտեսության այսօրվա հերոսները: Եվ նոր տանը 20 նրանց առաջին խոսքը հղավ գարնան ցանքի և նոր բերքի մասին:

Մի անհաղթ բանակ, երկաթե մարդկանց մի նոր ցեղ, գետնի խավարից հանել է աղքատ և ոտնահարված մարդուն, առաջնորդում է անդուլ և անկանգ, բարձրացնում է վեր և ինչքան բարձրանում, այնքան հղորանում է թափը, այնքան պայծառ է շողշողում մեր վաղը:

ԱՂՎԵՍԱԳԻՐՔ

Վարդան Այգեցի

առակագիր ժԳ դարի





ՆԱԽԱՇԱՎԻՂ

Առական բանքս է հրաշալի
Երգողն է սուրբ և պանծալի
Բարունեաց բարուն բարի
Որոյ Վարդան վերայ կոչի

Ա


«Վա՛յ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհ պիտի գաք ինձ-
նից հետո, որովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և շեմ կարող,
քանի որ գերեզմանի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն 10
այս գրքով կխոսեմ ձեզ հետ մինչև հինգ և մինչև յոթ սերունդ
և հոգով կմնամ ձեր մեջ»,— այսպես ավանդել է Վարդան
Այգեցին, մի վանական, որ հեղինակել է բազմաթիվ առա-
կախառն քարոզներ և որի անունով են կոչել միջնադարյան
հայ առակների և մանրավեպերի ձեռագիր ժողովածուները,
մերթ անվանելով «Գիրք առական ասացեալ վարդապետին
Վարդանայ ի պէտս հոգւոյ և մարմնոյ պիտանի», մերթ՝ «Վար-
դան Այգեցի վարդապետի ասացեալ» և մերթ՝ «Վարդանա-
գիրք»:

Այս և այլ այսպիսի վերնագրերով հայտնի ձեռագրերը 20
մինչև XVII դարն անընդհատ փոփոխվել են և ապա քարացել՝
երբ Ամատերդամում 1668 թվին տպագրվել է հայ առակների
առաջին ժողովածուն՝ «Գիրք աշխարհաց և առասպելաբանու-
թեանց, որ է Աղուէսագիրք» վերնագրով:

Ո՞վ էր Վարդան Այգեկցին կամ Այգեցին, որին հետնորդները տարբերելու համար XIII դարի մյուս Վարդաններից, անվանել են Մեծ Վարդան: Գծբախտաբար, շատ թերի են տեղեկությունները նրա կյանքի և գործունեության մասին, և այն, ինչ որ հայտնի է, մեծ մասա՞բ քաղված է նրա քարոզներից և թղթերից:

Ստույգ հայտնի չէ նրա ծննդյան թվականը: Հիշատակարանների մեջ այն ժամանակ սովորություն չէր նշանակել ծննդյան թվականը: Իր քարոզների մեջ մի քանի անգամ նա հիշատակում է իր ծննդավայրը՝ Մարաթը կամ Մարաթոն, որ Հալեպի մերձակա մի ավան էր և էր այն ժամանակի սիրիական հայ գաղութներից մեկը: Ուրեմն, եթե ծննդավայրի անունով կոչելու լինենք Վարդանին, ապա նրան պետք է անվանել Վարդան Մարաթեցի («Վարդան... որ ի Մարաթայ», ինչպես ինքն է գրել): Սակայն հայտնի փաստ է, որ հաճախ վանականներն իրենց կոչում էին ոչ թե ծննդավայրի, այլ այն վանքին կամ մենաստաններին կից դպրոցի անունով, որտեղ նրանք հռչակվել էին: Այդ ձևով էլ Մարաթեցին հռչակվում է Այգեկցի կամ Այգեցի, ի հիշատակ այն անապատի, ուր քաղվում է նա և ապրում մինչև մահ:

Վարդանը Մարաթից տեղափոխվում է Կիլիկիայի Արքակաղնի վանքը, որ աթոռանիստ վայր էր և նշանավոր էր իր դպրոցով, որտեղ հենց այդ ժամանակ բորբոքվել էր պաշքարը Արևմուտքի և Արևելքի կողմնակիցների միջև: Հզորանում էր Ռուբինյան հարստությունը Կիլիկիայում: Քաղաքները ծաղկում էին. արևմուտքից բազմազգի վաճառականներ արտահանում և ներմուծում էին հարուստ ապրանքներ: Քաղաքները ճոխ վաճառանոցներ էին և շահաստաններ: Առևտրի հետ ծաղկում էր պերճությունը և շոպյությունը մի կողմից, մյուս կողմից, տնանկները և աղքատները կազմում էին այնպիսի թիվ, որոնց ոտնահարվող իրավունքների պաշտպանության մասին խոսում է հենց ինքը Վարդանը: Քաղաքների հարստացման հետ միասին փոխվում էին նաև Կիլիկիայի հայերի, առաջին հերթին վաճառականների, բարքերը և լեզուն: Այսպես կոչված արևելքցիների պաշքարն ընդդեմ արևմուտքից եկող հոսանքի, դասային շահերի քաղաքական պաշտպանությունից



Վարդան Ազազե
առաջադիր ժողովարի

ՂԿԵ
ՍԱԳ

Վարդան Ազազեի «Ազգայնագրի» գրական տրեւումներն առաջին հրատարակութեան (1935 թ.) անվանաթերթը (գործ 2. Կտրուանի)

բացի, նպատակ ունի նաև անաղարտ պահել հայ լեզուն և հայ եկեղեցին, որի հիմքերը խարխուլում էին հենց այդ վաճառականները:

Արթակաղնի վանքում ուսանելուց հետո Վարդանն իրրև քարոզիչ հաստատվում է Կիլիկիայի Դուլե քաղաքում: Նրա արտասանած քարոզները վկայում են, որ Մարաթեցին հարել է արևելցիների բանակին, այսինքն նրանց, որոնք իզուր ջանում էին պատվար կանգնել նոր հոսանքի դեմ: Այսպես, Վարդանը եկեղեցու բնմիջ հանդիմանում է քաղաքում ապրող կանանց, որոնք «սիրում են զուգվել և զարդարել աչքերը և երեսը զանազան դեղերով ի գայթակղություն պատանիների»: Նա խոսում է այն կանանց մասին, որոնք «շար դեղերով իրենց զրկում են ծնելու կարողությունից և այդ սովորեցնում են նաև ուրիշներին»: Նա դժոխքի դատաստանով է սպառնում նրանց, որոնք շահով դրամ են տալիս, զրկում են տնանկին և մշակին, խաբում են կշեռքի մեջ, կաթի մեջ ջուր են խառնում և առհասարակ խարդախ մարդիկ են: Նրան՝ իրրև խոստովանահոր, Դուլեի բնակիչները հավանորեն գաղտնի պատմել են նաև ավելի ծանր մեղքեր: Եվ տարիներ հետո այդ մասին է ակնարկում Վարդանը՝ անապատի մեջ հիշելով վաղեմի Դուլե: «Ծս, ո՞վ իմ որդիներ, մանկությունից մինչև ծերություն շրջեցի աշխարհում և տեսա բազմաթիվ մեղքեր և ավելի շատ գաղտնաբար լսեցի»:

Դուլեում նրան հալածում են: Արդյոք նրանք էին հալածում, որոնց յուր քարոզներով խարազանում էր Վարդանը, թե կար այլ պատճառ. այդ մասին ոչինչ չի ավանդում ոչ ինքը և ոչ մի այլ ժամանակակից: Նա միայն դառնություններ գրում է. «Վա՛յ նրան, ում իշխան կամ առաջնորդ կկարգեն այս շար և դաժան ժամանակ»:

Ապաստանելով Ամիթ քաղաքում և այնտեղ ևս խաղաղություն չգտնելով, Վարդանը որոշում է թողնել «աշխարհը» և անապատ քաշվել: Կիլիկյան հայ իշխան Պաղտինի օժանդակությամբ նա հեռանում է Սև լեռան կողմերը՝ Անտիոքի մոտ, որտեղ ապրում էին քրճաղգեստ և մենակյաց անապատականները: Նա տեղավորվում է Այգեկ կամ Այգի կոչված վայրում, և այնտեղից էլ մնում է Այգեկցի կամ Այգեցի կոչումը: Հա-

վանական է, որ այդ Այգեկը մի վանք էր և այգի՝ մրգաբեր ծառերով, որ մշակել էին հենց իրենք՝ անապատականները:

Պաղտին իշխանին ուղղած թղթի մեջ Այգեցին իր մասին հետևյալն է գրում. «Ե՛վ ես ողորմելի Վարդանս գիտուններից տգետս... այս տառերը գրեցի Պաղտին իշխանի խընդրով... որովհետև մեր բնիկ ժառանգությունից հալածական եղանք և եկանք Այգեկ... և հայոց թվականն էր ՈԿԱ (1212) և հայոց թագավորն էր Լևոնն Ռուբինյանց Կիլիկիայում»:

Սակայն անապատում ևս նա խաղաղություն չի գտնում: «Դուլուկից եկանք Այգեկի սուրբ ուխտը,— գրում է Վարդանը,— 10
և երեք տարի անց երկու անգամ պատահեց, որ ես և ուխտի երկու զխավոր եղբայրներ նստեցինք և բամբասեցինք վանահորը և նրա բարեկամին»: Բայց այդ հասարակ բամբասանք չէր, որով անապատականները փարատում էին իրենց ձանձրութիւնը: Այդ պայքար էր՝ ուղղված վանահոր, ավելի ճիշտ՝ Այգեկում տիրող բարքերի դեմ: Բանն այն է, որ անապատականներն ապրում էին փարթամ կյանքով, ունեին այգի և արտ, և ճրգնելու փոխարեն գիշերն աղաղակներով փախցնում էին վայրի գազաններին և ցերեկը պարսաքար էին արձակում թռչունների վրա, որպեսզի սլաշտպանեն պտուղները և խաղողի 20
ողկույզները: «Ե՛վ այս ամենի վրա ավելանում է մեծագույն կորուստ, որովհետև վեճը և կռիվը, նախանձը և մախանքը չի պակասում, սա ի՛մն է և այն քո՛նն է (ասում են անապատականները): Ե՛վ այն ժամանակ այդ մենակյացի կյանք չէ, այլ աշխարհականի»: Ինքը՝ Վարդանը զխավորում է պայքարն այդ բարքերի դեմ: «Երկու տարի է, որ սատանան մեր մեջ նախանձ սերմանեց և վեճ և աղաղակ մրգաբեր ծառերի համար: Ե՛վ մենք մեծ պատերազմի և տրտմության մեջ էինք այս երկու տարին և չկարողացանք ելք գտնել»: Բայց «ելքը» զրտնում են, և հավանորեն ինքը Վարդանն է ցույց տալիս ելքը: 30
Մի կիրակի անապատականները հավաքվում են և տապարներն առնելով կտրատում են մրգաբեր ծառերը՝ գծտության աղբյուր թգենինները և ընկուզենինները, սերկևիլի և արքակաղնի ծառերը: «Ե՛վ ես մեղավորս քաջալերում էի իմ եղբայրներին, թե մի երկնչեք, որովհետև այս վարձք է և ոչ դատապարտություն, պարծանք է անապատիս և ոչ նախատինք»:

1220 թվին Վարդան Այգեցին հայտնվում է Գրազարկի վանքում: Այդտեղ է գրել նա յուր առակը՝ «Վասն տասն վաճառականաց, որ են մարդիկ» և առակի մեկնությունը: Այդ մասին ինքը հետևյալն է պատմում. «Ես, ողորմելի Վարդան Մարաթեցիս, այս մենավոր խուցի մեջ, աստվածաբնակ ուխտի սահմաններում, որ կոչվում է Գրազարկ, կամեցա տասը առակավոր բանով ձեռքս ել վաճառականներին և այն ութ որոգայթը, որ կա նրանց առաջ... Եվ շատ օրեր աշխատեցի և բազում անգամ սկսեցի և չհաջողվեց և տրտմելով վարանեցի և ստույգ իմացա, որ իմ բազմաթիվ անօրենությունները խավարեցրին իմ միտքը և փակեցին իմ շրթունքները և կապեցին լեզուն...»: Բայց և այնպես ավարտում է յուր աշխատությունը, որ ուղղված էր ոխակալության, լեզվագարության, որովայնամոլության, զրկանքի, շնության, կախարդության և անզրդջության դեմ:

Այգեցու մահվան թվականը հայտնի չէ: Նա հիշատակում է «խուժադուժ և անծանոթ ազգի» մուտքը Հայաստան: Խոսքը վերաբերում է մոնղոլներին, որոնք Հայաստան մտան 1220-ի սկզբներին: Ինքն իր մասին գրում է, որ «ծերությունը և երկարատև ցավերը կուրացրին իմ միտքը և իմ աչքերը»: Եթե ընդունենք, որ նա իրոք ապրել է մինչև «գառանցյալ և գարշելի» արևոտությունը, ինչպես ինքն է գրում, ապա ուրեմն հիմք կա ասելու, որ նա 1220-ական թվականներին չի մեռել, այլ ավելի ուշ: Ըստ Ն. Մանթի՝ Այգեցին XIII դարի 10-ական թվականներին դեռ ապրում էր:

Եվ մինչև խորին ծերություն Այգեցին խրատել է և բարոյախոսել, մարտնչել և խարազանել՝ երբեմն եկեղեցիներում, երբեմն քաղաքի հրապարակներում և երբեմն առաքելով թղթեր և առակախառն քարոզներ, միտ դնելով այն, որ «անպետք կայծաքարը և աննշան երկաթը պարզեում են հուր՝ ի սպաս մարդկային կյանքի»:

Բ

Մեզանում Վարդան Այգեցին առաջինը չէ, որ հորինել է առակներ: Նրանից առաջ արդեն հայտնի էր Մխիթար Գոշը, որը իրավամբ կարող է համարվել հայրը հայ առակաբանու-

թյան: Հայտնի է, որ XI դարում դպրոցներում ավանդում էին առանձին առարկա՝ «առասպելավարժություն» անվան տակ: Հայ մատենագիրներից ոմանք ոչ միայն հաստատում են առակների և ժողովրդական զրույցների գոյութունը դեռևս վաղնջական ժամանակ, այլև ոմանք, թերևս, ակամս մեջ են բերում այն զրույցները, «Որ ի գոհհիկս պատմի առակեալ», ինչպես օրինակ, Գր. Մագիստրոսը, որը պատմում է արտուտի առակը: Ոմանք՝ ինչպես Անանիա Իմաստասերը, Հովհան Օձնեցին, Հովհան Մանդակունին և ուրիշները սիրել են «օրինակով» խոսել, մի ձև, որ այնքան մեծ վարպետությամբ կիրառել է Վարդան Այգեցին:

Հայտնի է և այն, որ հայ հին պատմիչները և առհասարակ եկեղեցին շեն սիրել և հայաժել են ժողովրդական զրույցները, որոնց թվում նաև հեքիաթը և առակը և երգը: Ներսես Շնորհալու մասին Կիրակոս Գանձակեցին գրում է. «Զի այնպէս էին կամք սրբոյն, զի հնար իցէ ոչ ոք խօսեսցի ի խօսս աշխարհականս, բա՛ց ի գրոց, ոչ ի գինարբուս և ոչ յայլ ուրախութիւնս: Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն. զի փոխանակ վայրապար ձայնից, զայն ասասցեն»*: Բերդի գինվորները «ստորին» լեզվով պատմում էին «անառակ» զրույցներ: Այդպես էին նաև ուամիկները և վաճառականները գինարբուքի, այլ ուրախության և առհասարակ իրենց առօրյայի մեջ: Բայց այդպես էին նաև եկեղեցու դպիրները և հոգևորականների ստորին խավը, որ գումարվում էր ուամիկների որդիներից: Հետևաբար, նրանց ավելի ախորժելի էին «վայրապար» զրույցները՝ պարզ լեզվով, քան խրթին և ճոռոմ ճարտասանությունը, տրամախոսությունը և աստվածաբանական գիտելիքները: Գերազանցապես այդ խավից էին նաև այն՝ երբեմն անանուն գրիչները, որոնք դժվար տքնությամբ բազմացնում էին ձեռագրերը:

Եթե ներսես Շնորհալին հնար էր որոնում, որպեսզի այլևս

* «Քանի որ այնպես էր սուրբի կամքը, որպեսզի հնարավոր լինի, որ ոչ ոք չխոսի աշխարհիկ լեզվով, բացի գրաբար, ոչ գինարբուքի և ոչ այլ ուրախության ժամանակ, այդ նպատակով և նա երգեր հորինեց և սովորեցրեց նրանց, որոնք պաշտպանում էին բերդը, որպեսզի վայրապար ձայների փոխարեն, այդ երգերն ասեն»:

ոչ ոք խոսի «աշխարհի» լեզվով կամ գեղջուկ բարբառով, ապա միակողմանի կլինե՞ր այդ փաստը բացատրել միայն իբրև ձգտում վերջ տալու «ստորին» հայերենին: Կարելի է ենթադրել, որ զինվորները «վայրապար» խոսում էին բարբառով, որը հայերեն չէր, և ահա Շնորհալին նպատակ է դնում այնպիսիներին լեզու սովորեցնել և ինքը հեղինակում է առականեր և հանելուկներ, որ գրված են ոչ թե խրթին գրաբարով, այլ պարզ հայերեն:

Ահա, օրինակ, Շնորհալու մի հանելուկը նուան մասին.

է նա կանաչ կոճակ բուր.

Անապակ գինով լցած տկճոր.

Կարմիր մեղուք ի ներս աջուր,

Եղբայր դու կեր զինչ մեղրի ծոր:

10

Ուրեմն հայ հին դպրության մեջ նոր չէր ոչ առակը և ոչ բարոյախոսությունն առհասարակ: Կային եկեղեցական քարոզիչներ, որոնք խոսել և գրել էին «օրինակով»: Եթե դպրոցներում ավանդում էին «առասպելավարժությունն» իբրև առանձին առարկա, ապա կարելի է ենթադրել, որ գոյություն են ունեցել նաև դասագրքեր կամ առասպելների և առակների ժողովածուներ՝ իբրև նյութ դասավանդման: Եթե ավելացնենք և այն, որ Եզոպոսի առակները շատ վաղուց ծանոթ էին հայերին, ինչպես և «Վոլպխանու փիլիսոփային» (ըստ Թոմա Արծրունու) առակները, ապա կարելի է սսել, որ Վարդանի առակների ժողովածուից առաջ եղել են առակների այլ ժողովածուներ, որոնք հետագայում կամ խառնվել են Վարդանի առակագրքերին և կամ եթե շարունակել են առանձին մնալ, ապա վերակոչվել են Վարդանի անունով: Նույնիսկ հայ կենդանական վեպի որոշ տարրեր մտել են «Վարդանգրքերի» մեջ, և հետագա սերունդները շարունակել են Վարդան Այգեցուն վերագրել առակների ժողովածուների մեծ մասը:

20

30

«Եթե նույնիսկ պարզվի,— գրում է Ն. Մառը,— որ որևէ անհայտ քարոզիչ առակը կիրառել է ուսուցման ժամանակ, Վարդանի նշանակութունը դրանով չի նսեմանա: Վարդանը, որ ստեղծողն էր առակախառն քարոզի նոր տեսակի, ստացավ տաղանդավոր քարոզի եզակի համբավ, հիմք դնելով առակների լայն օգտագործման՝ բարոյախոսական նպատակով:

Որքան էլ պարզ լինեն ձևերը, որոնցով առասպելները և հեքիաթները դառնում են առականեր, հայ գրականության մեջ այդ ձևերն իբրև կիրառող առայժմ մենք ճանաչում ենք Վարդանին, և հենց նրա այլաբանությունները կարող են համարվել հայերի գրական այդ սեռի լավագույն օրինակները: Հետևաբար, առակաները, որոնք Վարդանի ժողովածուների հիմնական շերտն են կազմում, ամբողջովին և հավիտյան կմնան կապված Վարդանի անվան, թեկուզ նրանցից մեկի կամ երկուսի վրա ուրիշ, ավելի հին հեղինակներ ունենան որևէ իրավունք»:

10 Մեզ այստեղ չի զբաղեցնում այն խնդիրը, թե Վարդանին վերագրված մոտ չորս հարյուր առականերից և մանրավեպերից քանիսն են Վարդանի բուն գործը և քանիսը հավելված են հետագայում, ինչպես և շենք զբաղվի առհասարակ առակաների նշանակության քննությամբ: Բոլոր առկազիբներից և պատմիչներից առաջ առակը հորինել և պատմել է ինքը ժողովուրդը, և այդ տեսակետից երկրորդական նշանակություն ունի առկազրի անձնավորության խնդիրը:

20 Վարդան Այգեցու նշանակությունը մեծ է ամենից առաջ իբրև առականեր ժողովող և առակաները մեկնության հետ միասին ճաշակով և վարպետությամբ ամբողջացնող հեղինակ: Ահա Այգեցին կամենում է խարազանել ցանկասեր մարմինը և վեր հանել հոգին, իբրև մարդու բուն էություն: Կձանձրանար ունկնդիրը, եթե նա Ավետարանից մի նախադասություն բնաբան ընդունելով, հյուսեր քարոզը: Այգեցին դրա փոխարեն գործ է ածում պարզ զրույցի ձևը, ինչպես կյանք տեսած մի ծերունի կխրատեր որդուն, և ասում է. «Եզր մի լծիր էշի հետ. եզր որոճող է և էշը՝ ոչ: Այդպես հոգին անջատ է մարմնից, որովհետև հոգին իմաստուն է և մարմինը ցանկասեր»:

30 Բերենք մի այլ օրինակ Վարդանի առակախառն քարոզներից. «Մի մարդ ուներ չորս էշ, երեքը՝ երիտասարդ և ուժով և մեկը՝ պառավ և վատուժ: Եվ տերը երեքին շէր բեռնում, այլ խնամում էր և դարմանում. իսկ պառավ էշին ծանր էր բեռնում և ընկավ պառավ էշը և այլևս չկարողացավ տանել ծանր բեռ: Այսպես մարդս չորս ժամանակ ունի՝ տղայություն,

երիտասարդութուն, կատարյալ հասակ և ծերութուն: Այն երեք հասակն, որ զորավոր են, մարդ չէ կամենում բառնալ բեռով, այլ պարարում և գիրացնում է ուտիով և ըմպելով և ամեն ծանր բեռ բառնում է ծերացած մարմնի վրա:

Վարդան Այգեցու այս և այս կարգի առակաները բնորոշ են իրենց կատարյալ և ամբողջական արվեստով: Հետագայում առակաները փոփոխության են ենթարկվել, մշակվել են՝ բերանացի պատմվելով, ապա սարբեր գրիչների ձեռքով գրի են առնվել, յուրաքանչյուր անգամ կրելով ժամանակի և պատմողի կնիքը: Այդպես առաջացել են առակաների փոփոխակաները, որոնք տարբերվում են և՛ մեկնությամբ, և՛ բովանդակությամբ, և՛ լեզվով:

Որքան էլ կրոնա-բարոյական մեկնաբանությամբ Այգեցին ծանրաբեռնել է առակը, այնուհանդերձ նրա ստեղծագործութունը «աշխարհիկ» արվեստ է և ոչ հոգևոր: Նա մեկն է այն գագաթներից, որոնց վրայով է անցնում միջնադարյան հայ քաղաքային մշակույթի սահմանագիծը: Եթե Այգեցու առականերն ազատենք բարոյախոսական կցաններից, ապա կմնան զվարթ և սրամիտ պատմութուններ, երբեմն ուղղված հենց եկեղեցու և ֆեոդալների դեմ, — առականեր և իմաստուն մանրավեպեր, որ սիրելի էին միջնադարյան հայ վաճառականին և գյուղացուն: Նպատակ դնելով քարոզել հայ եկեղեցու հավատո հանգանակը քաղաքներում և դյուղերում, ամրապնդելու համար այդ եկեղեցու հիմքերը, որոնց խարխուլում էր միջնադարյան քաղս.քը, — Այգեցին քարոզը մատչելի դարձնելու համար լիաբուռն օգտվել է ժամանակի ժողովրդական բանահյուսութունից, վերամշակել է այն ըստ իր նպատակադրման, և այսպիսով գրի են առնվել բազմաթիվ անգիր դրույցներ: Առակախառն քարոզների հետ գրականության մեջ խուժել է առակը և մանրավեպը, իսկ վերջիններս իրենց հետ բերել են նաև ժողովրդական լեզու և ոճ, և այսպիսով սկսել է ձևավորվել միջնադարյան հայ «աշխարհիկ» արձակը:

Սակայն այդ արձակը հետագա դարերում չժամալվեց և չդարձավ ամբողջական գործ: Այսպես շամբողջացավ նաև հայ ժողովրդական վեպը, ինչպես և միջնադարյան հայ բունաստեղծության առանձին գոհարները չկապեցին ո՛չ թագ, ո՛չ պսակ:

Բայց և այնպես Վարդան Այգեցին կառուցող վարպետներից է այն հիմքի, որի վրա պետք է բարձրանար միջնադարյան հայ արձակի շենքը: Եվ եթե հետագա «անբարի և խավարայնի» ժամանակներում այդ շենքը չբարձրացավ, այնուհանդերձ, հիմքը վկայում է կառուցողների, նաև Վարդան Այգեցու մեծ վարպետութունը:

Գ

Մի քանի խոսք այս հրատարակության մասին:

- 10 Արդեն ասացինք, որ 1668 թ. Ամատերդամում լույս է տեսել առակաների առաջին ժողովածուն «Աղվեսագիրք» վերնագրով: Երկրորդ անգամ տպագրվել է Մարսելում 1676-ին, երրորդը՝ 1683 թ. դարձյալ Մարսելում և չորրորդը Լիվոռնոյում՝ 1698 թվին: Այսպիսով, XVII դարի երկրորդ կեսին չորս անգամ տպագրվել են առակաների ժողովածուները: Ըստ Ն. Մառի բացատրության, առաջին հրատարակիչը, ծանոթ լինելով եվրոպական լեզուների, կամեցել է առակաների ժողովածուն նմանեցնել այդ ազգերի նույնանուն գրքերին, օրինակ, «Fuchsbuch»-ին և անվանել է «Աղվեսագիրք»: Ի դեպ. Ն. Մառը խորին ուսումնասիրությամբ հաստատել է, որ արաբական
- 20 «Աղվեսագիրքը» թարգմանված է հայերենից, Վարդանի առակաների մի որևէ ժողովածուից:

Ի նկատի ունենալով, որ այս հրատարակության մեջ կան և բուն Վարդան Այգեցու առականեր, ինչպես և այլ առականեր և մանրավեպեր, որ կան Վարդանի կամ Վարդանին վերագրած առակաների ձեռագիր և տպագիր ժողովածուների մեջ, մենք ևս պահպանեցինք արդեն ընդունված «Աղվեսագիրք» անունը:

- Տեքստի, ինչպես և ծանոթագրությունների համար հիմք ընդունելով Ն. Մառի եռահատոր աշխատությունը, «Ժողովածոյք առակաց Վարդանայ», որն աննման կոթող է միջնադարյան հայ արձակի,— մենք հաճախ գերադասել ենք առակաների այն վարիանտները, որոնք «գոեհիկ» հայերեն են և բովանդակությամբ ավելի հարուստ: Առակաների մեկնաբանությունները շենք բերել, համարելով հնացած ավելորդաբանություն: Համարյա անփոփոխ են վերնագրերը: Բացի այդ, աշխատել ենք ըստ կարելույն պահել բնագրի ոճը, միաժամանակ նպատակ դնելով նյութը մատչելի դարձնել ընթերցողներին լայն խավերին:
- 30

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵՑԻ

ԱՂՎԵՍԱԳԻՐՔ

ԳԱՐՈՒ ՀԱՇԻՎ

Մի մարդ կալից գրաստով գարի էր կրում տուն: Եվ քու-
ռակը մոր հետ գնում էր և հետ դառնում: Իսկ տանը, ուր
կրում էին գարին, մի խոզ կար կապած, որին գիրացնում էին:
Եվ գարին անպակաս էր նրանից, որպեսզի ուտի և գիրանա:
Եվ քուռակն ասաց մորը. «Ինչո՞ւ համար այն խոզն առանց
աշխատանքի ուտում է գարին, որ մենք կրում ենք մեծ դժվա-
րությամբ, և մեզ, որ շարշարվում ենք, օրը մի անգամ են գա- 10
րի տալիս»: Մայրն ասաց. «Լսիր, որդյակ և մի շաբաթ ևս
համբերիր, և ապա ես քեզ պատասխան կտամ, և քո աչքերով
կտեսնես»:

Եվ մի շաբաթ հետո էլը և քուռակը բեռով տուն էին գա-
լիս. քուռակը մորից առաջ էր գնում և լսեց խոնչոցի ահագին
ձայն, որովհետև խոզը մորթում էին: Եվ խրտնեց քուռակը և
հետ փախավ դեպի մայրը, և մայրն ասաց. «Ի՞նչ եղավ քեզ,
որդյա՛կ, որ սոսկում ես. մի վախենար խոզից, որովհետև նրա-
նից գարու հաշիվն են ուզում»:

Եվ դարձյալ եկան կալը՝ գարի կրելու: Եվ երբ բարձած 20
վերադարձան տուն, քուռակը բարձրացնելով ոտքի սմբակը,
մորն ասաց. «Ո՞վ մայր, տես թե ոտքիս շի՞ փակչել գարու մի
հատ, որ ինձնից էլ հաշիվ ուզեն, ինչպես խոզից»:

ԱՅՐԻ ԿԻՆ ԵՎ ՈՐՌԻ

Մի այրի կին ունեւր տասը այծ և մի որդի: Եվ ամեն օր որդին այծերը տանում էր արոտ, և մայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ և փոխ էր տալիս հարեաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչո՞ւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ և փոխ տալիս հարեաններին: Մայրն ասաց. «Որդի, մեր կաթն քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի»:

10 Իսկ մի օր, երբ որդին այծերն արոտ էր տարել, երկնքում ծեւեց մի փոքր ամպ, և անձրև եկավ, և հեղեղ եղավ, և այծերը սրբեց լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով և դատարկ և ձեռքին միայն փայտը: Մայրն ասաց. «Որդի, ո՞ւր են այծերը, և ինչո՞ւ դու այսօր արևով եկար»: Որդին ասաց. «Մայրիկ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին և փոխ տալիս հարեաններին, հավաքվեց և հեղեղ դարձավ և եկավ մեր այծե-
րը տարավ, լցրեց գետը»:

ՄԻԱՅՆԱԿՅԱՑ ԵՎ ԳԱՄՓՈ ՇՈՒՆ

20 Մի միայնակյաց բնակվում էր մի գյուղի մոտ, և գյուղում նա սիրեց մի աղջիկ և բազում ժամանակ նրա հետ շնանում էր պոռոնկոթյամբ: Եվ գյուղի տանուտերն ունեւր մի գամփո շուն, որ խիստ պահող շուն էր և ամբողջ գյուղը պահում էր: Մի գիշեր միայնակյացն եկավ, որ շնանա այն կնոջ հետ, և գյուղի եզրին նրան հանդիպեց տանուտերի շունը և գամփոնց նրա վրա և նրան կծեց, և արյունը ճապաղ արեց և շատ վեր-
քեր արեց և նեղելով նրան քշեց: Եվ միայնակյացը լալով և արյունաթաթախ մտավ խուցը և դուռը փակեց, զղջաց և շոքեց աղոթքի, լաց եղավ և կուրծքը ծեծելով ասաց. «Աստված, բազում ժամանակ է, որ շնացա և շվախեցա քո դատաստանից և ոչ դառն դժոխքից զարհուրեցի, բայց այս գիշեր զարհուրե-
30 ցի մի գամփո շնից և շկարողացա շնություն անել»:

ԱՅՄԵՐ ԵՎ ԳԱՅԼԵՐ

Հավաքվեցին այծերը միասին և պատգամ ուղարկեցին գայլերի ազգին և ասացին, թե ինչու մեր մեջ լինի անհաշտ

խոռվութիւն, այլ ոչ թե խաղաղութիւն: Եվ հավաքվեցին
գայլերը և ուրախացան մեծ ուրախութեամբ և նամակով պատ-
գամ ուղարկեցին այծերի ազգին, նաև անթիվ ընծաներ: Եվ
գրեցին այծերին. «Լսեցինք ձեր բարի խորհուրդը և գոհա-
նամք աստծուց, որովհետև մեզ համար մեծ խնդութիւն է և
խաղաղութիւն. նաև իմացնում ենք ձերդ իմաստութեան, որ
հովիվն ու շներն են պատճառ և սկիզբ մեր խոռվութեան և
կովի. և եթե նրանց վերացնենք մեջտեղից, շուտով լինի խա-
ղաղութիւն»: Եվ այս լսեցին այծերը, հաստատեցին և ասացին.
«Իրավացի են գայլերը, որ մեզ սպանում են, որովհետև շները
և հովիվը նրանց հալածում են մեզնից»: Եվ այծերը վտարեցին
շներին և հովիվին և երգվեցին, որ հարյուր տարի մնան անխախ-
տելի սիրով: Եվ այծերը ցրվեցին լեռները և դաշտերը և սկսե-
ցին ուրախ լինել և ցնծալ և խաղալ, որովհետև արածում էին
լավ արոտներում, ուտում էին համեղ խոտեր, խմում էին պաղ
ջրեր և խնդում էին և վազվզում էին, փառք տալով, որ հասան
բարի ժամանակի:

Եվ գայլերը համբերեցին հարյուր օր, ապա հավաքվեցին
դաս-դաս, ընկան այծերի վրա և կերան:

ԵՐԿՈՒ ՆԿԱՐԻԶ

Մի ոմն թագավոր շինեց գեղեցիկ դարպաս և կամեցավ
զարդարել այնպիսի նկարներով, որոնց նման ոչ մի տեղ չէր
եղել: Եվ ընտրեց երկու նկարիչների և մեկին տվեց մի պատը,
մյուսին՝ մյուս պատը և նրանց միջև վարագույր քաշեց: Եվ
երբ նկարիչներն ավարտեցին իրենց գործը, թագավորը եկավ,
որ տեսնի նրանց գործը և տեսավ, որ մեկը նկարել էր գեղեցիկ
պատկեր և շատ հավանեց: Իսկ մյուսը բնավ ոչինչ չէր նկարել.
Նա պատը շատ գեղեցիկ սարքել էր և կոկիլ հայելուց ավելի
լավ: Երբ թագավորը տեսավ, որ չէր նկարել, այլ միայն կոկիլ
էր, զարմացավ և ասաց. «Դու ի՞նչ ես արել»: Նա ասաց. «Ես
ցույց կտամ իմ գործը»: Եվ ապա վեր քաշեց միջի վարագույ-
րը և երբ լույսը ծագեց և լուսավորեց կոկիած պատը, այն ժա-
մանակ մթնեց նկարազարդ պատը, որովհետև հայելու մեջ
երևում էին այն բոլոր պատկերները, որ նկարված էին մյուս
պատի վրա: Եվ թագավորն ասաց. «Այս մյուսից գեղեցիկ է»:

ԱՌՅՈՒԾ ԵՎ ԱՂՎԵՍ

Մի առյուծ կորյուն ծնեց, և հավաքվեցին կենդանիները կորյունին տեսնելու և ուրախանալու: Անղվեսն եկավ և հանդեսի ժամանակ, բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն և անարգեց, թե այդ է քո զորությունը, որ ծնում ես միայն մի կորյուն և ոչ բազմաթիվ: Առյուծը հանդարտաբար պատասխանեց և ասաց. «Այո՛, ես ծնում եմ մի՛ կորյուն, բայց առյուծ եմ ծնում և ո՛չ քեզ նման աղվիս»:

ԻՄԱՍՏՈՒՆ ԴԱՏԱՎՈՐ

- 10 Մի մարդ ուներ շար կին, և կինը կովեց նրա հետ և ասաց. «Կարծում ես թե քո երեք որդիները քեզնի՞ց են: Մեկն է քեզնից, իսկ երկուսը՝ բիճ են»: Եվ նա հարցրեց, թե ո՞րն է իմը, և կինը շասաց: Եվ երբ հայրը մեռնում էր, ասաց. «Իմ ամբողջ կայքը թող լինի իմ հարազատ որդուն»: Եվ եղբայրները կովում էին իրար հետ. մեկն ասում էր, թե ես եմ հարազատ որդին, և մյուսը՝ թե ես եմ: Եվ գնացին մի իմաստուն դատավորի մոտ: Եվ դատավորը հրամայեց նրանց հորը հանել գերեզմանից և նետ արձակել նրա վրա: Ով հորը զարկեք նետով, և նետը ծակեք հոր մարմինը, նա էր հարազատ որդին: Եվ երկու որդիները զարկեցին հորը, իսկ ճշմարիտ որդին դանակը քաշեց, որ սպանի եղբայրներին և լաց եղավ դառն արտասուքով և թաղեց հոր մարմինը:
- 30 Եվ իմացան, որ նա էր հարազատ որդին և նրան տվին հայրենի կայքը:

ԱՌՅՈՒԾ ԵՎ ԳԱՅԼ ԵՎ ԱՂՎԵՍ

- Առյուծն և գայլն և աղվեսն եղբայր եղան և որսի ելան և գտան մի խոյ, մի ոչխար, որ է մաքի և մի գառ: Ծաշի ժամին առյուծն ասաց գայլին, թե բաժանիր մեր մեջ այդ որսը: Եվ գայլն ասաց. «Ո՞վ թագավոր, աստված արդեն, բաժանել է՝ խոյը քեզ, մաքին ինձ և գառն աղվեսին»: Եվ առյուծը բարկանալով, ապտակ զարկեց գայլի ծնոտին, և դուրս թռան գայլի աչքերը, և նա նստեց և դառն լաց եղավ: Եվ դարձյալ ասաց

առյուծն աղվեսին, թե բաժանիր ոչխարները մեր մեջ: Եվ աղվեսն ասաց. «Ո՛վ թագավոր, աստված արդեն բաժանել է՝ խոյր քեզ՝ ճաշին, մաքին քեզ՝ հրամենքին և գառը քեզ՝ ընթրիքին»: Եվ առյուծն ասաց. «Ո՛վ խորամանկ աղվես, քեզ ո՞վ սովորեցրեց այդպես ճիշտ բաժանել»:

Եվ աղվեսն ասաց. «Ինձ սովորեցրին գայլի աչքերը, որ դուրս թռան»:

ԳԻՆԻ

Մի թագավոր մի որդի ուներ և հրաման արեց նայիպներին, թե ամեն օր ձեզնից մեկը թող տանի իմ որդուն և պատվի: Եվ տանում էին: Եվ մի օր մի նայիպ պատվելու էր տարել թագավորի որդուն և երեկոյան նրան տարավ թագավորի տունը, և ինքը գնաց: Թագավորի որդին խիստ գինով էր և հարբած դուրս եկավ, ընկավ աղբանոցը և մեռավ: Եվ թագավորը հրամայեց, թե իմ իշխանության ներքո ինչքան այգի կա՝ փակեք և կարասները կտտրատեք: Եվ այդպես արին:

Եվ մի այրի կին մի որդի ուներ, և այրի կինը պահեց յուր հնձանը և գինին և ամեն առավոտ և երեկո հացի վրա երկու թաս գինի էր տալիս որդուն, Եվ այրի կնոջ որդին մի գիշեր դուրս եկավ, սպանեց թագավորի առյուծին, և թագավորն առավոտյան հրամայեց, թե ով որ սպանել է իմ առյուծին, եթե գա և ինձ պատմի՝ նրան շեմ պատժի: Եվ եկան այրի կինը և նրա որդին: Թագավորը նրան հարցրեց, թե ինչպես սպանեցիր առյուծին: Եվ նա ասաց, թե գիշերով դուրս եկա, հանդիպեցի առյուծին և սպանեցի: Եվ մայրն ասաց, թե նրան գինով է սնուցել և պատմեց, թե ինչպես է գինով սնուցել:

Եվ թագավորը հրաման արձակեց, թե այգի տնկեք և գինին նայնպես խմեք, որ առյուծ սպանեք և ոչ թե աղբանոցում մեռնեք:

ԻՄԱՍՏՈՒՆ ԱՎԱԳ ԷՇ

Շատ էշեր գնում էին արքունի գործով, և նրանց մեջ կար մի ավագ էշ՝ իմաստուն և մեծ, քան մյուսները: Եվ ամենքը նրան պատվում էին, որպես հայր և առաջնորդ: Եվ ահա բարձրանում էին մի սար, և նա խառանչեց և գոռաց սաստիկ

ահագին և հետևի կողմից մեծամեծ ճայթյուն արձակեց: Եկան մյուս էջերը և ասացին. «Ո՛վ պատվական հայր, քո առջևի ձայնից բոլորս ունենք, իսկ ի՞նչ էր այն ահագին ճայթյունը, որ քո հետևի կողմից ելավ. աղաչում ենք, ասա՛ մեզ»:

Եվ նա ասաց. «Ո՛վ իմ որդիներ, ձեր առաջ սուտ չեմ երդվի և ճշմարիտ կասեմ, որ առջևի ձայնի զորութունից բնավ չեմ կարող իմանալ, թե ուրիշ ինչ ճայթյուն է ելնում իմ հետևի կողմից»:

ՄԻԱՄԻՏ ԳՈՂԵՐ

- 10 Երկու գող բարձրացան մի մեծատան կտուր և կամեցան երդով վայր իջնել և գողութուն անել: Եվ լուսնկա էր: Եվ մեծատուն մարդն իմացավ, որ գողերը երդիկի մոտ են: Եվ կինը մարդուն ասաց, թե այս ամեն գանձերը և ոսկին և կերպասը քեզ ո՞րտեղից են: Եվ մեծատուն մարդն ասաց. «Գնում էի գողության, մեծատուն մարդկանց երդիկով իջնում էի, և լուսնկա էր, ինչպես այժմ, և լուսնի շողերը երդիկից ներս էին ընկնում, ինչպես այժմ, և ես գրկում էի շողերի սյունը և վայր էի իջնում և այնպիսի մի բան էի ասում, որ ինչքան գեղեցիկ կերպաս կար այդ տանը, երևում էր ինձ, և կապում էի լուսնի շողերին և վեր բարձրանում: Եվ այս ամենն այդպես եմ վաստակել»:

Երբ գողերն այդ բանը լսեցին, խիստ ուրախացան և հավատացին այդ ցնորամիտ բանին և լուսնի շողերը գրկելով երդից վայր ընկան և ջարդվեցին:

ԵՂԵԳՆ ԵՎ ՄԱՌԵՐ

- Մի թագավոր զբոսանքի ելավ շրջելու լեռներում և հովիտներում: Եվ տեսավ, որ մեծամեծ ծառեր կային՝ կոտրատված և փշրված, և միայն մի եղեգ կար՝ կանգուն անարատ: Եվ թագավորն ասաց. «Ո՛վ եղեգ, ասա ինձ, թե ինչպես հաստատուն ես մնացել, երբ մեծամեծ ծառերը փշրվել են»: Եվ եղեգն ասաց. «Ո՛վ թագավոր, երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ կանգնեցին հողմի

դեմ, և հողմը նրանց փշրեց. իսկ ես խոնարհվեցի հողմի կամ-
քով և ահա կանգուն եմ»:

ԻՇԽԱՆ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆ

Մի իշխան կար խիստ շար և անիրավ: Եվ նույն քաղա-
քում ապրում էր մի այրի կին, և իշխանը հարկ պահանջելով
նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանն ունե-
նա խաղաղ և երկար կյանք: Գնացին, ասացին իշխանին, թե
քո շարության համար աղոթում է այրին: Եվ իշխանը եկավ և
ասաց. «Ես քեզ բարիք չեմ արել, ո՞վ կին, դու ինձ համար
ինչո՞ւ ես աղոթում»:

10

Այրի կինն ասաց. «Քո հայրը վատ մարդ էր. ես անիծեցի
և նա մեռավ: Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ շար: Եվ
այժմ վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզնից ավելի
շար լինի»:

ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐ

Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա
երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ո՞վ
ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կապանեն, որովհետև
փախչել չես կարող»: Եվ նա ասաց. «Ո՞վ անմիտ, ես չեմ գնում
պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու և կռվելու և հաղթելու»:

20

ՔԱԳԱՎՈՐ ԵՎ ՕՁ

Կար մի թագավոր, և ուներ նա մի սիրելի օձ, որ նրան
ամեն օր բերում էր մի կարմիր դահեկան: Եվ թագավորն ունե-
ցավ մի մանուկ, որին սնուցում էր գահի վրա և օձը նետում
էր մանկան պարանոցով, և այդպես խաղում էին օձն ու մա-
նուկը: Եվ երբ մանուկը մեծացավ, մի անգամ խաղի ժամանակ
սուրը հանեց և կտրեց օձի պոչը և գետին գցեց: Եվ զայրացավ
օձը, թույնով զարկեց մանուկին, և մանուկն իսկույն մեռավ, և
օձը գնաց օտար երկիր: Եվ երբ թագավորն եկավ և մանուկին
օձի թույնից սևացած և մեռած տեսավ և օձի պոչը գետնին
ընկած, իմացավ, որ յուր մանուկն է թրով կտրել օձի պոչը:
Եվ սգաց որդուն, տարավ թաղեց գերեզմանում:

30

Եվ անցավ մի առ ժամանակ, և թագավորը խնդրակներ ուղարկեց այն օձի մոտ և ասաց. «Գիտեմ, որ առաջ իմ որդին է ծնություն արել. նա կտրել է քո պոչը, ապա դու կծել ես նրան: Ինչ որ եղավ՝ եղավ, և իզուր գնացիր: Արի, և մենք կլինենք առաջվա նման իրար սիրելի և միասին կապրենք»: Իսկ օձը պատասխան տվեց և ասաց. «Այդպես չէ. քանի որ ես պիտի նայեմ իմ պոչի վրա, իսկ դու քո որդու գերեզմանին, ուրեմն մեր միջից թշնամությունը շի վերանա: Լավն այն է, որ դու և ես իրարից հեռանանք, որպեսզի այլ ուրիշ մեծագույն շարիք չծնվի մեր մեջ»:

ԱՌՅՈՒԾ ԵՎ ԱՂՎԵՍ ԵՎ ԱՐՋ

Առյուծն հիվանդացավ, և ամեն կենդանիները եկան նրան տեսության. միայն աղվեսն ուշացավ: Արջը շարախոսեց նրան, և աղվեսն դռնամուտից լսեց և ներս ընկնելով թավալվեց առյուծի առաջ: Առյուծն ասաց աղվեսին. «Բարի ժամի շեկար, գարշելի. ասա ինձ, ինչո՞ւ ուշացար»: Աղվեսն ասաց. «Մի՛ բարկանար, բարի թագավոր, երգվում եմ քո գլխով, որ քո առողջության համար այցելեցի շատ բժշկապետների և մեծ շարշարանք քաշեցի, բայց իմացա դեղը քո բժշկության»: Եվ առյուծն ասաց. «Բարի եկար, իմաստուն կենդանի, ի՞նչն է այդ դեղը»: Աղվեսն ասաց. «Խիստ պիտանի է և դյուրին. բժշկապետներն ասացին, թե կենդանի հանեք արջի մորթին և տաքտաք գցեք առյուծի վրա, և իսկույն մորթին ցավը կհանի հիվանդից»: Եվ առյուծը հրամայեց. արջին բռնեցին և սկսեցին հանել մորթին: Իսկ նա վայում էր և արձակում մեծամեծ ոռնոց:

Եվ աղվեսն ասաց. «Այդ ամենը քեզ և նրան, ով արքունիք մտնելով կշարախոսի մեկին»:

ԿԱՔ ՄԵՂՈՒ ՊԱՏՃԱՌ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Մի մարդ խանութ ուներ և մեղր էր ծախում, և մեղրից մի կաթ կաթեց գետնին, և մի պիծակ նստեց կաթի վրա, և կատուն վազեց և պիծակին առավ, և նրանից հետո շունը վա-

զեց և կատվին առավ, և խանութի տերը շանը զարկեց և սպանեց: Եվ այն գյուղին դրացի մի գյուղ կար, և շունն այդ գյուղից էր: Երբ շան տերն իմացավ, թե խանութպանն սպանել է յուր շանը, այն ժամանակ եկավ և սպանեց խանութպանին: Հետո երկու կողմից վեր կացան գյուղացիք և միմյանց հետ մեծ պատերազմ արին, և նրանց միջև կոտորած եղավ, և երկու կողմից կենդանի մնաց մի մարդ՝ մի կաթ մեղրի համար:

ԿՏԱԿ ՎԱՍՆ ԳԱՆՁԻ

Մի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծուլ որդիներ: Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց. «Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ գանձ են թաղել մեր այգում, և ես ձեզ ցույց շեմ տա նրա տեղը: Այդ գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի»: Եվ հոր մահից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորագույն էին վարում, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր, որ ինքը գտնի գանձը:

Եվ այգին սկսեց աճել և զորանալ և առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով:

ՈՒՂՏ ԵՎ ԳԱՅԼ ԵՎ ԱՂՎԵՍ

Ուղտը և գայլը և աղվեսը եղբայր եղան և ճանապարհը նկան և ճանապարհին գտան մի բլիթ հաց և միմյանց ասացին, թե ով ավագ է, թող նա ուտի: Եվ սկսեցին ասել իրենց տարիքը: Աղվեսն ասաց. «Ես այն աղվեսն եմ, որի անունը Ադամը դրեց»: Գայլն ասաց. «Ես այն գայլն եմ, որին Նոյը տապանն առավ»: Եվ ուղտը տեսնելով, որ նրանք իրենից ավագ դուրս եկան և հացը պիտի առնեն, հացը բերանն առավ և բարձրացնելով ասաց. «Մի՞թե ես երեկվա տղան եմ, որ այսչափ մեծացրել եմ իմ սրունքները»:

Եվ սկսեց հացն ուտել: Իսկ աղվեսը և գայլը ցատկելով նրա շուրջը, ոչինչ չկարողացան անել և փախան:

ԿՈՌԻՆԿ՝ ԹԱԳԱՎՈՐ ԹՈՉՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԷՇ

Հավաքվեցին թռչունները և ասացին, թե որի ձայնը զորավոր է, նրան մեզ թագավոր դնենք, որպեսզի պատերազմի

ժամին կանչի մեզ: Եվ կռունկը երկինք բարձրացավ և գոչեց. նրան հավանեցին թռչունները և օժեցին թագավոր: էշը եկավ և ասաց. «Այ, եթե ինձ ոտի տեղ անեիր, որ նրա փոխարեն ես բարձրանայի, դուք կլսեիր, թե ում ձայնն է զորավոր»:

ԵՋՆ ԵՎ ՁԻ

Եզր և ձին խոսեցին միմյանց հետ: Եզն ասաց. «Դու ո՞վ ես կամ ի՞նչի պետք ես»: Ձին ասաց. «Ես ձի եմ և ինձ թագավորները և իշխանները և պարոնները զարդարում են ոսկով և արծաթով և բազմում են ինձ վրա»: Եզն ասաց. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում և շարշարվում և հոգնում, և ապա դու և քո թագավորն ուտում եք: Եվ բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը, և եթե չվաստակեմ դու և քո թագավորն իսկույն կմեռնեք: Եվ դու երախտամոռ մի լինիր»:

ՀԻՄԱՐ ԵՎ ՁՄԵՐՈՒԿ

Մի հիմար և միամիտ մարդ ուներ մի դահեկան և առնելով դահեկանը գնաց քաղաք մի էշ գնելու և շրջեց քաղաքում և շուկայում և շատավ մի դահեկանի էշ, ապա կրկին եկավ շուկա և տեսավ մի մեծ ձմերուկ և հիացմամբ հարցրեց. «Այս ի՞նչ է»: Եվ վաճառականներն իմացան, որ նա հիմար է և ասացին, թե հնդու էշի ձու է և կհանի հնդու մեծ էշ: Եվ ուրախանալով մարդը, տվեց դահեկանը և առավ հնդու էշի ձուն: Եվ վաճառականները նրան պատվիրեցին, թե ձեռքիդ զգուշ տար, թե չէ կկոտրվի և էշը միջից կփախչի: Եվ ձմերուկը ձեռքին մարդն սկսեց գնալ զառիվայր ճանապարհով, և նրա ոտքը սայթաքեց, ձմերուկը ձեռքից դուրս պրծավ և գլորվեց խիտ անտառի մեջ, և անտառից մի նապաստակ վազեց և սկսեց փախչել, իսկ մարդը կարծեց, թե ձուն կոտրվել է, և ահա էշը ելել և փախչում է: Եվ հետևից վազելով կանչում էր նապաստակին և ձայն էր տալիս. «Ա՛յ հնդու էշ, վա՛յ ինձ, մի փախչիր. քուռի՛, քուռի՛, խնայիր ինձ և վերադարձիր»:

էշին ավետիս տվին՝ թե ցնծա՛ւ և ուրախ եղիր և մեծ ընծա պարգևիր, որովհետև քեզ թոռ ծնվեց: Եվ էշն ասաց. «Վա՛յ ինձ, բարեկամներ, եթե հարյուր թոռ էլ ծնվի, շեն թեթևացնի ժանրությունն իմ մեջքի բեռան»:

ԱՂՔԱՏ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ

Մի աղքատ մի գյուղ եկավ և մտավ գյուղի եկեղեցին, որ խարխուլ էր և անձրևակեղ: Եվ այն աղքատը անձրևաթաց էր և քաղցած և հագել էր պատառոտուն զգեստ և դողում էր և հոգնել էր ճանապարհից: Եվ ներս մտավ քահանան, սկսեց ժամ ասել: Առավ ավետարանը և կարդաց այն էջը, ուր գրված էր, թե օտարական էի՝ ընդունեցիք ինձ, մերկ էի՝ հագցրիք ինձ, քաղցած էի՝ կերակրեցիք ինձ, ծարավ էի՝ հագցրիք ինձ: Այն աղքատը լսեց և ուրախացավ. «Այս ինձ համար է ասված, և ահա շուտով կկատարեն իմ կամքը»: Իսկ քահանան ժամն արձակեց և գնաց տուն, և աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա մասին: Եվ աղքատն ասաց. «Այն գիրն, որ կարդաց, նա սուտ էր»: Եվ առավ ավետարանը, վրան քար դրեց և սուզեց ջրի մեջ: Եվ քահանան եկեղեցի գալով ավետարանը շգտավ և աղքատին ասաց. «Ո՛ւր է ավետարանը»: Եվ աղքատն ասաց քահանային. «Ի՞նչ ես անում սուտ ավետարանը, և ես տարա ջուրը գցեցի»: Եվ քահանան բարկանալով սկսեց ծեծել աղքատին, և աղքատն ասաց. «Ինչու՞ ես ծեծում ինձ, անիրավ. եթե հավատում ես, թե ավետարանն աստժո ճշմարիտ խոսքն է, ապա ինչու՞ շես կատարում նրա կամքը: Որովհետև ես օտարական եմ, և ինձ չեք ընդունում, մերկ եմ, և ինձ չեք հագցնում, քաղցած եմ, և չեք կերակրում ինձ, ծարավ եմ, և ջուր չեք տալիս: Մի՞թե աստված այդ բաների պակասությունն ունեք և այդ ամենն իրեն համար ասաց»:

ՀԱՅՐ ՈՒ ՈՐԴԻ

Մի մարդ աղջիկ առավ որդու համար, և որդին ամուսնացավ աղջկա հետ և երբ միավորվեց նրա հետ, շատ հիացավ

ամուսնութեան գործի վրա և ուրախացավ և սկսեց հորը խրատել ամուսնութեան գործի մասին:

Եվ հայրն ասաց. «Ո՛վ որդյակ, ես ամուսնութեան գործով ծնեցի քեզ, և այժմ դու՞ ես խրատում ինձ»:

ՄԱՐԴ ԵՎ ԸՆԿՈՒՅՉ ԵՎ ՁՄԵՐՈՒԿ

Մի մարդ ընկույզի ծառի տակ ձմերուկ էր ցանել: Եվ պտուղի ժամանակ եկավ, տեսավ մեծամեծ ձմերուկները և ծառին նայեց, տեսավ, որ ընկույզը մանր էր: Մարդն ասաց. «Տեր աստված, ինչ որ ստեղծել ես՝ ամենը կարգին է և մի բանի նման: Իսկ այս երկու պտուղը անկարգ են և բանի նման չեն»: Մարդն ասում էր, որ ընկույզի տեղ ձմերուկ պիտի լիներ ծառին, և ընկույզը ձմերուկի թփի վրա: Եվ նա պառկեց ծառի տակ և նայեց ծառին, և հանկարծ մի ընկույզ պոկվեց ծառից և շատ պինդ կպավ նրա ճակատին և ճակատը պատոեց և արյուն ելավ: Եվ մարդը վեր կացավ տեղից և աղաղակեց. «Տեր աստված, ինչ որ ստեղծել ես, ամենը կարգին է և կատարյալ, և ով չհավանի քո ստեղծածը, նրա ճակատը թող իմից վատ լինի, որովհետև եթե ընկույզի տեղ ձմերուկ լիներ, ինձ պիտի սպաներ»:

20 ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ԶՐԱՂԱՑ

Եկեղեցին պարծեցավ յուր սրբութեամբ և ասաց, թե «Ես եմ տաճար աստծո և դեպի ինձ են գալիս քահանաները և ժողովուրդը աղոթք մատուցանելու աստծուն և պատարագ, և հաշտվում է աստված աշխարհի հետ, և մեղքերին թողութուն է լինում»: Այն ժամանակ ջրաղացն ասաց եկեղեցուն, թե «Ինչ որ դու ասում ես, արդար է և ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի մոռանա, որ գիշեր ցերեկ աշխատում եմ և դատում այն, ինչ որ ուտում են քահանաները և ժողովուրդը և ապա քեզ են գալիս աղոթելու և երկրպագելու աստծուն»:

30 ԱՄԵՆԱԳԵՏ ՄԱՐԴ

Մի թագավոր կամեցավ աշտարակ շինել, և աշտարակը քանի ցերեկը շինում էին, գիշերը փուլ էր գալիս: Եվ նա հավա-

քեց յուր գիտուններին և պատճառը հարցրեց: Նրանք ասացին. «Եթե կամենում ես, որ այլևս չփլչի, դու գտիր մի տգետ մարդ, որից ավելի տգետ մարդ չլինի, և նրան կենդանի դիր պատի մեջ, և պատը թող շարեն. և այլևս չի՛ փլչի»: Եվ թագավորն ասաց. «Այդ բանի ընտրությունը և՛ դուք արեք և գտեք մի տգետ մարդ, որին կենդանի թաղեն պատի մեջ»:

Եվ գիտունները նստեցին միասին որոշելու, թե ի՞նչ տեղ կարող են գտնել տգետ մարդ, և մեկն ասաց. «Զկնորսն է տգետ, քանի որ նրա առն ու տալը մարդու հետ չի, այլ ջրի և ձկների»: Իսկ ոմանք ասացին. իշապանը, որ իշու հետ է լինում և յուր ողջ կյանքն անց է կացնում գրաստի հետ, շրջելով լեռ և անտառ: Ոմանք ծովարարին ասացին, իսկ ոմանք հովվին, որ ամառ-ձմեռ ոչխարների հետ շրջում է լեռներում, չի մտնում գյուղ կամ քաղաք: Եվ հավանություն արին և կամեցան հովվին բերել:

Այն ժամանակ գիտուններից մի ոմն ասաց, թե՛ «Մեր թագավորը մի հովիվ ունի, որ ծնվել է սարում ոչխարների մեջ և սնվել է այնտեղ և յուր կյանքում ոչ գյուղ է մտել, ոչ քաղաք»: Եվ ուղարկեցին տաս ձիավոր, որպեսզի մարդուն բերեն: Եվ ձիավորները գնացին գտան հովվին, որ կթում էր ոչխարը, և ողջունելով ասացին. «Թագավորը քեզ կանչում է»: Հովիվն ասաց. «Ես իմ կյանքում ոչ քաղաք եմ գնացել և ոչ գյուղ. ինձ ինչո՞ւ է կանչում»: Իսկ նրանք խորամանկությամբ ասացին՝ «Զենք իմանում»: Իսկ հովիվը պատվեց նրանց, գառ մորթեց և պանիր բերեց և ուրախացրեց նրանց և երգմամբ հարցրեց կանչելու պատճառը: Եվ նրանք ասացին, թե այս պատճառով է քեզ կանչում, որովհետև թագավորի գիտուններն ասել են, որ մի տգետ մարդու պեսք է դնել պատի մեջ, որպեսզի պատը շեն մնա:

Այն ժամանակ հովիվը ծիծաղեց և ասաց. «Հիմարը և տգետն այն գիտուններն են, որ այդպիսի ընտրություն են արել»: Եվ մի ոչխար բերելով ասաց. «Ես ձեզ ցույց կտամ իմ տգիտությունը»: Եվ ասաց. «Այս ոչխարը երկու գառ ունի փորում, մինը էգ է, և մյուսը՝ որձ. մեկի գլուխը սև է և մյուսինը՝ սպիտակ»: Եվ ոչխարը մորթեց և գառները փորից հանեց, և այնպես էր, ինչպես ասաց: Եվ մի այլ ոչխար բերելով ասաց.

«Այս ոչխարը մեկ գառ ունի փորում. մարմինը սև է, գլուխն սպիտակ և ինքը որձ»: Եվ մորթեցին, տեսան այնպես: Եվ հովիվն ասաց. «Ոչխարի այս երկու հոտը, որ կա ձեր առաջ, ամենին գիտեմ, թե որն է ծնելու և որն է ստերջ և որն է որձ ծնելու և որը՝ էգ և որը սև կամ սպիտակ և որը սև ու սպիտակ պուտերով: Զեր գիտունները կարո՞ղ են այդ իմանալ»: Զխավորներն ասացին. «Ոչ, ամենևին»: Հովիվն ասաց. «Ուրեմն իմացեք, որ ես շեմ այն հիմարը և տգետը, որին դուք փնտրում եք: Իսկ եթե կամենաք, ես ցույց կտամ տգետ մարդուն: Թագավորը թող յուր նայիպին բռնի, թալանի և ինչ ունի ամենն առնի և քաղաքի հրապարակում նրան կախի և շարաշար տանջի, որպես զի բոլոր քաղաքացիները տեսնեն. ապա նայիպին թող տանեն թաքցնեն և ասեն, թե նրան սպանեցին: Եվ երեք օր քաղաքում թող կանչեն, թե ինչ մարդ որ կգա և հանձն կառնի նայիպի գործը, նրա ամեն ապրանք այդ մարդուն կտանք և նրան կնշանակենք թագավորի նայիպ: Այն մարդը, որ կտեսնի այդ խաղը և կլսի ինչ որ արին նայիպի գլխին և առաջանալով կասի, թե ես ուզում եմ լինել նայիպ, այն մարդն է հիմար և տգետ, նրան բռնեցեք և կենդանի դրեք պատի մեջ, որպեսզի այլևս պատը չփլչի և շեն մնա»:

Իսկ նրանք եկան և թագավորին պատմեցին, և թագավորն արեց այնպես, ինչպիսի հովիվն ասել էր, և մինչդեռ քաղաքում կանչում էին, թե ով գա և հանձն առնի նայիպի գործը և իշխանութունը, նա կստանա նրա ապրանքը և հողը, այն ժամանակ մոտ վազեց մի ջրմի և թռնի մարդ և ասաց, թե ես հանձն կառնեմ այդ գործը: Եվ նրան հարցրին, թե տեսա՞ր ինչ արին նայիպի գլխին: Նա ասաց. «Այո՛, տեսա»:

Եվ իսկույն առան նրան և տարան, կենդանի դրին պատի մեջ և պատը հաստատուն մնաց:

ԱՂՎԵՍ ԵՎ ՈՐՍՈՐԴ

Որսորդը շներով տառապում և նեղում էր աղվեսին: Եվ աղվեսը դարձավ և ասաց. «Աղաչում եմ քեզ, ասա, թե ինչո՞ւ համար ես ինձ նեղում»: Եվ որսորդն ասաց. «Որպեսզի հանեմ քո մորթին»: Աղվեսը կանգնեց և ասաց. «Տեր աստված,

փառք քեզ, որ սրա ուզածն այս է: Իսկ ես կարծում էի, թե ինձ ուզում է նշանակել մեր գավառի հավարած կամ թռչնոցի վանահայր»:

ԻՇԵԱՆԱՎՈՐ ԵՎ ԻՄԱՍՏՈՒՆ

Կար մի աշխարհակալ իշխանավոր, և նա ուներ մի խիստ գեղեցիկ տղա: Եվ իշխանավորն ասաց, թե գեղեցիկ աղջիկ կանոնեմ, որ կին լինի իմ որդուն, և ունենամ գեղեցիկ թոռներ՝ ժառանգ իմ գահի: Եվ գնաց բերեց մի գեղնջիկ հարս և դեռ թոռ չէր ունեցել, երբ որդին մեռավ և հարսը մնաց: Եվ ինքը կամեցավ հարսին առնել և հարցրեց իմաստուններին, թե «կա՞ իրավունք», և նրանք ասացին, թե չկա իրավունք, որ հայրն առնի հարսին: Եվ նա չկամեցավ լսել նրանց և գտավ մի այլ իմաստուն, որ նրա սիրելին էր, և այդ իմաստունն ասաց իշխանավորին. «Աշխարհում յոթանասուներկու ազգ կա, և նրանցից ոչ մեկին չի հասնում այդ, բայց քեզ կհասնի»: Եվ իշխանավորն ասաց, թե «Ինչու աշխարհի յոթանասուներկու ազգին չի հասնում այդ, իսկ իրեն կհասնի»: Եվ իմաստունն ասաց. «Վախենում եմ պատճառն ասել, որովհետև կսպանես ինձ»: Եվ նա երդվեց չպատժել նրան, եթե պատճառն ասի:

Այն ժամանակ իմաստունն ասաց. «Որովհետև դու ամեն ազգից դուրս ես, և քո վրա չկա իշխանութուն, և ինչ կամենաս, կարող ես անել»:

ԱՂՎԵՍ ԵՎ ԹՂԹԱՏԱՐ ԳԱՅԼ

Աղվեսը մի գրած թուղթ գտավ և տարավ գայլին և ասաց. «Այս չափ ժամանակ աշխատեցի և բարեխոս մարդիկ մեջ գցեցի և իշխանից քեզ համար թուղթ հանեցի, որ ամեն գյուղ՝ ուր հանդիպես, քեզ պիտի տա մի ոչխար: Եվ ոչ շուն և ոչ մարդ քեզ չպիտի նեղեն»: Եվ այդպես խաբեց գայլին, և միասին գնացին մի գյուղ, և աղվեսը նստեց բլուրի վրա և թուղթը տվեց գայլին: Երբ գայլը գյուղի մեջ մտավ, վրա թափվեցին շները, և մարդիկ և նրան գզեցին և գանահարեցին: Եվ արյունաթաթախ գայլը հազիվ ազատվելով հասավ աղվեսին: Եվ աղվեսն ասաց. «Ինչու՞ ե թուղթը ցույց չտվիր»:

Եվ գային ասաց. «Ցույց տվի, բայց գյուղում հազար շուն կար, որ գիր չգիտեր»:

ԱՅՐԻ ԿԻՆ ԵՎ ԽՈՐԹ ՈՐԴԻ

Մի այրի կին ուներ մի կով, և նրա խորթ որդին ուներ մի էշ: Եվ խորթ որդին գողանում էր կովի կերը տալիս էշին: Եվ այրի կինն աստծուն աղաչեց, որ աստված էշին մեռցնի: Բայց կովը մեռավ, և այրին լաց եղավ և ասաց. «Ո՞վ աստված, մի՞թե չկարողացար էշը կովից տարբերել»:

ՀԱԼԱԼ ՄԱՐԴ

- 10 Մի երիտասարդ ուխտել էր հարամ բան ամենևին չուտել, և մի օր նա գնաց գետի եզրը և տեսավ, որ ջուրը մի խնձոր էր բերում: Երիտասարդն առավ և խնձորը կերավ անոթի, ապա միտն ընկավ իր ուխտը և խղճմտանքով գնաց գետն ի վեր, գտավ մի այգի և իմացավ, որ խնձորն այդ այգուց էր: Երիտասարդն ասաց այգետիրոջ. «Ողորմիր ինձ և առ խնձորի գինը կամ հալալ արա, որովհետև ես հարամ բան ամենևին չեմ կերել»: Եվ բուրաստանի տերն ասաց. «Կեսը, որ իմն է, հալալ քեզ, և կեսը՝ իմ եղբորն է, նրան տեր չեմ: Եվ իմ եղբայրը հեռու է այստեղից վեց օրվա ճանապարհ»: Եվ երիտասարդը ճանապարհ ընկավ և գտավ այն մարդուն, տասց. «Կամ առ քո կես խնձորի գինը և կամ հալալ արա ինձ»: Եվ մարդն ասաց. «Ոչ գինը կառնեմ և ոչ հալալ կանեմ: Թե կուզես, որ հալալ անեմ, ես մի աղջիկ ունեմ՝ որ ոչ ականջ ունի և ոչ լեզու և ոչ ձեռք և ոչ ոտք, նրան քեզ կին առ, որ հալալ անեմ»:
- Երիտասարդն անճարացած առավ այդ աղջկան, և երբ առագաստ մտան, տեսավ, որ աղջիկը ամենևին առողջ էր: Եվ երիտասարդն աներոջն ասաց, թե ինչո՞ւ էիր ծաղրում քո աղջկան: Եվ նա ասաց. «Ես ճշմարիտ էի, որովհետև ծնված օրից իմ աղջիկը արեգակի լույսը երդից է տեսել և օտար մարդու ձայն չի լսել և օտարի հետ չի խոսել և ձեռքով մեղք չի շոշափել և ոտքը դռնից դուրս չի դրել: Եվ ես քեզ նման հալալ մարդ էի ուզում, և ահա դու եկար»:

Մի զորավոր առյուծ նստել էր ճանապարհին, և տեսակ-տեսակ գազաններ այդ ճանապարհով գալիս էին դողալով և անցնում: Առյուծը հարցրեց նրանց. «Ինչո՞ւ եք փախչում և ո՞ւմ ահից եք զարհուրած փախչում»: Եվ նրանք ասացին. «Փախի՛ր և դու, որովհետև ահա գալիս է մարդը»: Եվ առյուծն ասաց. «Ո՞վ է մարդը, և ի՞նչ է նա, և ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում եք նրանից»: Եվ նրանք ասացին. «Կգա, կտեսնի քեզ և քեզ վա՛յ կլինի»:

Եվ ահա յուր հանդից եկավ մի հողագործ մարդ: Եվ առ-յուծն ասաց. «Մի՞թե դու ես այն մարդը, որ փախցնում է գազաններին»: Եվ նա ասաց. «Այո՛, ես եմ»: Առյուծն ասաց. «Արի՛ կովենք»: Մարդն ասաց. «Այո՛, բայց քո զենքերը քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են: Եկ նախ կապեմ քեզ, որպեսզի շփախչես, մինչև ես գնամ առնեմ իմ զենքը, և ապա կովենք»: Առյուծն ասաց. «Երդվիր, կգաս, և ես կլսեմ քեզ»: Մարդը երդվեց, և առյուծն ասաց. «Հիմա կապիր ինձ և գնա շուտ ու դարձիր»: Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց կաղնու ծառին և ծառից կտրեց մի բիր և սկսեց զարկել առյուծին:

Եվ առյուծը գռչեց. «Եթե դու մարդ ես, ավելի խիստ և անխնա զարկիր իմ կողերին, որովհետև այս խելքին այդպես է վայել»:

ՄՈՒԿՆ ԵՎ ՈՒՂՏ

Մի մուկ հպարտացավ: Կորավ նրա իմաստութունը, և նրա սիրտը լցվեց հպարտությամբ: Մուկը գնաց ուղտի մոտ և ասաց ուղտին. «Ինձ հրաման տուր քո կճղակի մեջ բուն դնեմ և այնտեղ բնակվեմ»: Եվ ուղտն ասաց. «Քեզ վնաս կլինի, որովհետև հանկարծ կոխ կտամ քեզ և կմեռնես»: Մուկն ասաց. «Քո սմբակը կակուղ է, և ինձ վնաս չի լինի»: Ուղտն ասաց. «Քո արյունը քո զլուխը»: Եվ մուկը ուղտի կճղակի մեջ շինեց իր բունը: Մի անգամ ուղտը ծանր բեռան տակ քայլեց և հանկարծակի կոխ տվեց մուկին: Եվ մուկը ճչաց, և նրա փորից դուրս եկավ ճրագուն, որովհետև մուկը գեր էր:

Այդ տեսանելով ուղտն ասաց. «Ահա, եղբայր, հենց այդ էր նեղում քեզ, որ դուրս ելավ քո փորից»:

Մի մարդ շրջում էր երկրե երկիր, և կինն ինչ հնար որ աներ, նա գրում էր թղթի վրա: Եվ նա երեք մեծ բեռներ շինեց և դեռևս գնում էր և թղթի վրա գրում կնոջ հնարը, որով կինը խաբում էր մարդուն: Եվ նա մտավ մի քաղաք, և քաղաքի դռան մոտ կար մի խիստ հնարագետ կին և այդ կինը մարդուն ասաց. «Բարի եկար»: Եվ կինը մեծարեց նրան և տուն տալով, կարծելով, թե այն մարդը շատ ունի կերպաս և ոսկի և արծաթ: Երբ երեկո եղավ, կինն ասաց այն մարդուն. «Բեռներդ քո ի՞նչ է, գուցե իմ պետքերի համար մի բան առնեմ»: Եվ նա ասաց. «Ոչինչ չունեմ ծախու»: Եվ կինն ասաց. «Ապա այդ, որ ունիս, ի՞նչ է»: Եվ նա ասաց. «Կնոջ հնար է. ինչ կին որ հնար է արել, շրջել եմ և գրել և բարձել և եկել եմ այստեղ, որ ուրիշ հնար գրեմ»: Եվ կինն ասաց. «Բարի եկար»:

Եվ այն ժամանակ կինը կամեցավ բեռներն այրել և հնարն իմացավ: Տան մեջ կար մի փուռ, որ կտաներ երեք բեռ թուղթ, և կինը բարկ վառեց փուռը և ձուկ տապակեց և դրեց հյուրի առաջ: Եվ ինքը վեր կացավ, դռները պինդ փակեց և խիստ բարձր ձայնով ճչաց հավար կանչելով, և եկան դրացիները սուսերներով և բիրերով և բախեցին տան դուռը: Եվ կինն ասաց այն մարդուն. «Եթե կամենում ես, որ քեզ սպանել չտամ, թղթերը տուր այրեմ փոխ մեջ, իսկ եթե ոչ՝ կասեմ, որ այս մարդը բռնաբարեց ինձ և քեզ սպանել կտամ»:

Եվ մարդը բեռները տվեց նրան, և կինը երեք բեռն այրեց փոխ մեջ և տան դռները բաց անելով ասաց. «Քանի տարի է իմ հորեղբոր որդին գնացել էր և ահա եկավ, և ես նրան ձուկ տվի ուտելու և փուշը բկի մեջ մնաց և զորով ազատվեց մահից»: Եվ եկան տեսան, որ ձուկը նրա առջևն էր, և գնացին:

ԳԱՅԼ ԵՎ ԱՂՎԵՍ ԵՎ ԶՈՐԻ

30 Գայլն և աղվեսն և ջորին եղբայր եղան և գնացին և երբ սովեցին և որսի չհանդիպեցին, ասացին. «Եկեք ուտե՛ք նրան, ով տարիքով փոքր է»: Այսպես ասացին գայլը և աղվեսը, որովհետև կամենում էին ջորուն ուտել: Եվ գայլին հարցրին, թե ո՞ր տարվա գայլն ես, և նա ասաց, թե ես այն գայլն եմ, որին

Նոյր տապանն առաւ: Եվ աղվեսն առաջ եկավ և ասաց. «Օ՛ր, դու տասը ազգով ինձանից փոքր ես, և ես այն աղվեսն եմ, որին աստված ստեղծեց»: Եվ ջորին եկավ և ասաց. «Իմ ծննդյան թվականը գրված է սմբակիս վրա, եկեք, կարդացեք և տեսեք քանի տարեկան եմ»: Եվ ոտքը բարձրացրեց: Աղվեսն ասաց գայլին. «Գիտեմ, որ դու դպրոցում եղել ես, արի գիրը կարդա»: Եվ գայլը հավատաց և գնաց կարդալու: Եվ ջորին ասաց. «Առաջ արի, որովհետեւ գիրս մանր է»: Եվ նա առաջ գնաց, և ջորին սաստիկ ուժով զարկեց գայլի ճակատին և ջախջախեց, և գայլը գնաց կողկոնձալով: Եվ աղվեսն ասաց գայլին. «Արի մի տող էլ կա, այն էլ կարդա»: 10

Գայլն ասաց. «Ես ինչ գիտեի գիրը. մենք ազգե ազգ մսագործ ենք և մսագործի որդի»:

ԳՈՂ ՔԱՀԱՆԱ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆ

Մի քահանա գողացավ այրի կնոջ կովը և ախոռը կապեց: Եվ կինն իմացավ և քահանային ասաց. «Տեր հայր, հասավ իմ մահվան ժամը. գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս»: Եվ այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի: Եվ կինն ասաց. «Տեր հայր, վերջին խոստովանությունը մահից առաջ պետք է անել եկեղեցում»: Եվ քահանան կովը բեմ բարձրացրեց և վարագույրը քաշեց նրա վրա: Երբ նրանք եկեղեցին մտան և նստեցին, այն ժամանակ կինը բարձրացրեց վարագույրը և կովին ասաց. 20

«Ո՛վ գարշելի, ես քեզ կով գիտեի և այժմ քեզ ո՛վ արեց պատարագիչ, ասա՛ ինձ»:

ԱՆՋԳԱՄ ԿԻՆ

Մի մարդ տրտում նստել էր քարի տակ և քնեց մի պահ և զարթնեց և շէր ուզում տուն գնալ: Եվ հանկարծ եկան երկու ճնճղուկ, նստեցին քարի վրա և մարդուն հարցրին, թե ինչո՞ւ նա տրտում է: Եվ մարդն ասաց, որ «Տրտում է, որովհետեւ աղքատ է»: Ծնճղուկներն ասացին. «Կխոստանա՞ս երբեք շահի ոչ ոքի, եթե քեզ ոսկու տեղ ցույց տանք»: Եվ մարդը 30

խոստացավ և երդվեց, և նրանք ասացին. «Այդ քարի տակ յոթ կարաս ոսկի կա թաղած, հանիր և տուն տար և եթե ասես մեկին, թե որտեղից է ոսկին, իսկույն կմեռնես»: Եվ մարդն ուրախացավ, գնաց յուր տուն, բրիչն առավ և գիշերով եկավ գաղտնի հանեց ոսկին և տարավ յուր տուն, սկսեց փարթամանալ և շքեղ տներ շինել, ունեցավ ձիեր և ջորիներ և եզներ և ոչխարի հոտեր և այլ ամենայն ինչ, որ վայել է աշխարհ սիրողին:

Եվ մի օր եզն ասաց մյուս եզան, թե «Ես ի՞նչ անեմ, որովհետև ամեն օր անխնա լծում են ինձ»: էջը, որ նրան մոտիկ էր, ասաց. «Վաղը սուտ հիվանդ եղիր և հազա: Երբ այդ տեսնեն, կխղճան և այլևս քեզ չեն լծի»: Եվ այս լսելով մարդը ծիծաղեց և մշակներին ասաց, թե այսօր չէ վաղը, այսինչ նշան էջը հիվանդ եզան տեղ լծեք: Մշակն առավոտյան էջը տարավ և լծեց մինչև իրիկուն, և երբ տուն եկավ, էջն ասաց հիվանդ եզան. «Ողորմելի եզնուկ, դու չգիտես, թե արտում ինչ էին ասում. ասում էին, թե այն հիվանդ եզը վաղը մորթենք, որ շատկի»: Լսիր ինձ և ոտքի կաց և առողջ եղիր, գնա լուծդ քաշիր, որ քեզ չմորթեն: Քեզ համար ավելի լավ է բանել, քան կյանքից զրկվել»: Այսպես ասաց էջը, որպես զի այլևս նրան շտանեն լծելու, որովհետև այդ օրը շատ էր աշխատել: Եվ այս լսելով մարդը նորից ծիծաղեց:

Այն ժամանակ նրա կինն ասաց. «Ո՛վ մարդ, մենք աղքատ էինք և հանկարծ հարստացանք և այսչափ ապրանքի և բարիքի տեր եղանք և ժամ առ ժամ կենում և ինքդ քեզ ծիծաղում ես, ինձ ինչո՞ւ չես ասում, թե որտեղից է այս ամենը, և դու ինչու ես ծիծաղում»: Մարդն ասաց. «Ո՛վ դու կին, եթե ասեմ, իսկույն կմեռնեմ. դրա համար չեմ ասում»: Իսկ կինը հանդգնեց և ասաց. «Ճար չկա, պետք է թսես»: Իսկ նա չէր ուզում ասել, բայց կինը նրան խիստ նեղեց և ասաց. «Պետք է որ ասես ինձ, եթե մեռնես էլ: Եթե ոչ՝ ես ինձ կսպանեմ»: Եվ մարդն անճարացավ և ասաց. «Ո՛վ կին, հավատա ինձ, որ առանց տարակուսանքի կմեռնեմ, թե որ ասեմ և երբ թույլ չես տալիս, երեք օր սպասիր, մինչև մատաղ անեմ, քահանաներին և աղքատներին կերակրեմ, ապա քեզ ասեմ և մեռնեմ»: Եվ շար կինը հազիվ հանձն առավ երեք օր սպասել:

Եվ մարդը մորթեց շատ ոչխարներ և գառներ և կանչեց քաղաքի քահանաներին, կարգավորներին և աղքատներին, և նստեցին ճաշի և մինչդեռ ուտում էին և ըմպում, այն մարդն սպասում էր:

Եվ մարդն ուներ շան լակոտ, որ տան մեջ նստել էր լի տրտմությամբ և սգով, և նույնիսկ արտասուք էին թափվում նրա աչքերից: Եվ իսկույն հանկարծակի եկավ աքլորը հպարտ և խրոխտալով և ներս մտավ, և նրա հետ կային քսան-երեսուն հավ աչից և ձախից: Շան լակոտն սկսեց աքլորին ասել. «Ո՞վ լիրբ և անաղուհաց, ի՞նչ ես խրոխտացել և տեսակ տեսակ ձայն ես հանում. շգիտե՞ս որ մեր տերը վաղը յուր գաղտնիքը պիտի կնոջն ասի և մեռնի: Իսկ դու լալու փոխարեն ուրախ ես»: Աքլորն ասաց. «Ձվերս ի վայր թե կմեռնի. ես որ նրա ծառան եմ, քսան-երեսուն կին ունեմ և նրանց զավթ եմ արել, իսկ նա չի՞ կարող մեկին իր հրամանքով պահել»: Շան լակոտն ասաց. «Ի՞նչ անի անզգամ կնոջն»: Աքլորն ասաց. «Երբ ամենքը վեր կենան մատաղից, թող առնի երեք-չորս դալար փայտ, դուռը փակի և կնոջն ասի՝ արի քեզ ասեմ իմ գաղտնիքը և նրան բռնի մերկացնի և կապի մի սյունից և այնքան ծեծի նրա կողերին և այլ տեղերին, որ ողջ տեղ չմնա, ամենը կապուտկի և ասի, թե շար կին, լավ է, որ դու մեռնես, քան թե ես, և դոնից հանելով նրան դուրս վարի, ասելով՝ գնա կորիր, ես այլ կին կառնեմ և քեզ շեմ ուզում»:

Եվ աքլորից լսելով այս բարի խրատը, այն մարդը դարձյալ ծիծաղեց: Եվ անզգամ կինը տեսնելով այդ, ամբոխի մեջ մոտեցավ նրան, շամաչելով ոչ մարդկանցից և ոչ քահանաներից և մարդուն ասաց. «Այժմ ինչո՞ւ ծիծաղեցիր, ասա ինձ և պատմիր, թե ինչպես հարստացար»: Եվ մարդն աղաչեց. «Մի քիչ համբերի, թող հյուրերը գնան, և ես քեզ ասեմ. այժմ ամոթ է նրանց առաջ բան ասել»:

Եվ երբ ամենքը գնացին, ընտանիքը դուրս հանեց և դուռն ամուր փակեց և ըստ աքլորի խրատի ձեռքն առավ կնոջը, ջարդեց ամեն ոսկորները և դուրս արեց: Իսկ կինը զղջալով նրա ոտքն ընկավ լալով և աղաչում էր ասելով. «Աստծու սիրուն, ինձ բան մի ասա և ամեն օր ինձ այսպես ծեծի, միայն ինձ

դուրս մի՛ անի և քեզնից մի՛ հեռացրու, որպեսզի աշխարհում
խաղք չլինեմ»:

Եվ այսպես մահից ազատվեց մարդը աքլորի խրատով:

ԴՐԱԽՏ ԵՎ ԳԵՂՋՈՒԿ ՄԱՐԴ

Մի գեղջուկ մարդ աղը շալակին բարձրանում էր դժվար
սարով, և տոթ ժամանակ էր: Եվ շատ հոգնեց մարդը և, բե-
10 ուր վայր դնելով, սկսեց բամբասել Ադամին և Եվային, թե
ինչո՞ւ նրանք անհամբերությամբ դուրս եկան դրախտից: Եվ
խսկույն երևաց հրեշտակը և նրան ասաց. «Եթե քեզ դրախտ
տանեմ, դու կհամբերե՞ս»: Եվ գեղջուկն ասաց. «Ե՞րբ լինի
այդ»: Եվ հանկարծ քուն իջավ նրա վրա, և տեսավ, որ դրախտն
է ընկել և շատ ուրախացավ: Եվ ապա տեսավ, որ դրախտի
մեջ մարդիկ կտրատում են դեռաբույս ծառերը և շհամբերելով
ասաց. «Այդ ի՞նչ մարդիկ եք, որ շոր ծառերը թողած, կտրա-
տում եք կանաչ ծառերը»: Եվ աչքերը բաց արեց, տե-
20 սավ, որ դարձյալ նստել է աղի բեռան մոտ և սկսեց դառն
արտասովել: Եվ գեղջուկ մարդը նորից տեսավ հրեշտակին և
ասաց. «Այլևս չեմ խոսի»: Եվ նա նորից դրախտ ընկավ և
տեսավ, որ մարդիկ կտրած ճյուղերը և փայտը շալակ են կա-
30 պել և շեն կարողանում շալակել, բայց դեռ դարսում են ճյուղ
և փայտ: Եվ շհամբերեց և ասաց. «Ո՞վ անխելքներ, թեթևաց-
րեք ձեր բեռը, որ կարողանաք շալակել»: Եվ գեղջուկ մարդը
նորից զարթնեց դժվար սարի վրա և սկսեց արտասովել և հրեշ-
տակը երրորդ անգամ նրան դրախտ տարավ, և նա տեսավ
մի մեծ քար, որից կապել էին տասներկու լուծ եղ, և ամեն
մեկը յուր կողմն էր քաշում, և քարը չէր շարժվում: Եվ մարդը
զարձյալ շհամբերեց և կանչեց. «Ո՞վ հիմարներ, մի կողմի
վրա քաշեք և միասին քաշեք, որ քարը տեղից շարժեք»:

Եվ զարթնելով գեղջուկ մարդն ասաց. «Լավ է ես իմ աղք
30 շալակեմ»: Եվ բարձրացավ դժվար սարով:

1. «Արաբերեն քարգմանության կողմն պետք է դնել վրացերեն քարգմանությունը Վարդանի հատկապես այն ժողովածուի, որ կոչվում է «Աղվեսագիրք» (Ն. Մառ, «Ժողովածոյք», էջ 574): Վրացերեն քարգմանության հայտարբերումը պարտական ենք գիտնական Ե. Տակայիշվիլուն: Վրաց քարգմանչի «Աղվեսագիրքը» ավելի մոտիկ է հայ տպագիր հրատարակության տեստին, քան այն բնագրին, որի վրա աշխատել է արաբ քարգմանիչը: Նույն էջի ծանոթության տակ Ն. Մառը գրում է, որ ըստ Ե. Տակայիշվիլու ենթադրության «Աղվեսագիրքը» վրացերեն քարգմանված է XIX դարում: Ն. Մառը ենթադրում է, որ առաջին քարգմանությունը կարող է եղած լինել XVIII դարում: Այդ կապակցությամբ հետաքրքիր է նաև Ն. Մառի դիտողությունը «Աղվեսագրի» և Սարա Սուլխան Օրբելիանու «Գիրք իմաստության և կեղծիքի» մասին, գրված 1719 թվից հետո, երբ Օրբելիանին վերադարձել էր Եվրոպայից, և «Աղվեսագիրքն» արդեն չորս անգամ տպագրված էր, «զուցե և քարգմանված վրացերեն»: (Ն. Մառ, § 54):

20 2. «Գարու հաշիվ».— Առական ունի մի քանի վարիանտ: Վերնագիրն է «Կոզեոն և ավանակ և խոզք»: Օգտվել ենք Ստեփաննոսի ժողովածուի մեջ եղած վարիանտից: Առական սկսվում է այսպես. «Ասի յոլմբիական, քէ այլ մի կրէր գրաստով...»: Սակայն Ոլիմպիանոսի անվան հիշատակությունը դեռ ապացույց չէ, որ սկզբնաղբյուրը նրա ժողովածուն է: Մի վարիանտ ունի առակի այսպիսի մեկնություն. «Խոզերը մարմնասեր մարդիկ են և փափկասերները և անդարձ մեղավորները և իշխանները. իսկ ֆուռակները՝ աղբատները»:

3. «Այրի կին և որդի».— Սկսվում է «ասի յառակաց» բաներով: Այրին կաթը «խափ» է տալիս, որ փոխադրել ենք «ճարեհանին փոխ տալ»: Մեզանում մինչև վերջերս դեռ մնում էր «խափի» սովորությունը, ըստ որի հարեաններն իրար հերթով փոխ էին տալիս օրվա կաթը՝ մի անգամ մերան անելու համար:

4. «Միայնակյաց և գամփռ շուն».— Բնագրում միայնակյացը զղջում է «և նույն ժամին պոռնկության դեր թողնում է նրան, որովհետև նա զղջաց»:

5. «Այծեր և գայլեր».— Առական ունի մի ֆանի վարիանտ: Նման է «Ապաշխարող գայլը» առակին, որ դարձյալ Վարդանի առակներից է: Ի. Մառը 1893 թվին, Արագածի վրա պեղումների ժամանակ ձեռք է բերում մի ձեռագիր՝ 1320 թվի: Այդ ձեռագրի մեջ կա այս առակը, գրված դիվանագիտական գրությունների բարձր ոճով. օրինակ՝ գայլերը, այծերին ուղղած իրենց թուղթն սկսում են այսպես. «Առ ամենիմաստ երջանիկ աստվածասեր և այծերի սուրբ ազգին գրում ենք մենք, գայլերի շարաքարո և մեղավոր և լիբբ ազգս...»: Նման առակ ունի նաև Եզոպոսը:

6. «Երկու նկարիչ».— Այս առակը գտնվել է Դավիթ Ղրիմեցու ձեռագրի մեջ, Վարդան Ալգեցու այլ առակների հետ, որոնց սկզբում կան այս առոգերը. «Այս առակները հավաքեցի և գրեցի («ժողովեալ գրեցի») ես մեղավորս Վարդան, մենակյացների ձեռում իմ հոգևոր որդիների համար»: «Ժողովեալ գրեցի»,— ճիշտ բնորոշումն է Վարդանի, իրեն առակագրի և նյութի, որ մինչ այդ անգիր գրույց էր:

7. «Առյուծ և աղվես».— Ունի նաև Եզոպոսը: Լոհմանն ունի «Նապաստակ և առյուծ» վերնագրով: Այս առակն աննշան տարբերությամբ կա նաև սիրիական առակների ժողովածուների մեջ:

8. «Իմաստուն դատավոր».— Առակը սկսվում է «ասի ՚ի պատմութեանց» բառերով: Բուն Վարդանի առակների մեջ չկա: Վերագրվում է Վարդանին՝ Ստեփաննոսի ժողովածուի հիման վրա:

9. «Առյուծ և գայլ և աղվես».— Առակն ունի մի ֆանի վարիանտ՝ տարբեր ժողովածուների մեջ: Նման առակ ունի Եզոպոսը, արաբական «Աղվեսագիրքը», սիրիական առակների

10

20

30

ժողովածուն: Եզոպոսի մոտ գայլի փոխարեն էջն է. կա առակի հայերեն մի վարիանտը, բստ որի արջն է ստանում «առյուծի բաժինը»:

10. «Գիհի».— Առաջին անգամ հրատարակել է Ղևոնդ վ. Հովնանյանը («Հանդես ամսօրյա», 1890, XI): Այս առակը մեջ է բերված «Գիրք առակաց ասացեալ վարդապետին Վարդանայ ի պէտս հոգոյ և մարմնոյ պիտանի» ձեռագիր մատյանում, գրված 1617 թվին: Տեքստի լեզուն և ոճը ևս վկայում են, որ այս առակը Վարդանին վերագրել են հետագայում:

11. «Իմաստուն ավագէշ».— Այս առակն աննշան տարբերությամբ կա թե Վարդանի ժողովածուների և թե «Բարոյախոսի» մեջ: Իմաստուն ավագէշի առակին կցված մեկնությունից հայտնի է անում, թե «մարդկային ազգը փառասիրությունից և ազահությունից հիմարանալով չի մտածում այն ահագին տանջանքի մասին, որ նրան սպասում է «յետ այս կենաց...»:

12. «Միամիտ գողեր».— Առակ Ստեփաննոսի ժողովածուից: Ըստ Ն. Մառի՝ ժողովածուն կազմողին ծանոթ է եղել «Աղվեսագիրք» անունը («հիշեցեք... Ստեփաննոս վարդապետին, որ ժողովրդին խրատելու համար գրել տվեց առակներ, որոնց մեջ աղվեսը մարդկանց օգուտի համար է): Ընդունելով, որ «գրել տվեց» («ետ գրել») կնշանակի արտագրել տվեց,— կարելի է ենթադրել, որ գոյություն է ունեցել անհայտ մի ձեռագիր, որից Ստեփաննոսի սյատվերով 1669 թվին կազմել են այս նոր ժողովածուն:

13. «Եղեգն և ծառեր».— Ըստ մի վարիանտի՝ «թագաւորն հնդկաց ել ի գրօսանս շրջել...»: Այդ հիման վրա կարելի է ասել, որ «հայկական այս առակը համառոտումն է արևելյան առակի» (Ն. Մառ): Նման սյուժե հայտնի էր դեռևս Սոփոկլեսին: Վարդանին վերագրած ամենահին ժողովածուների մեջ այս առակը մեջ է բերված հետևյալ մեկնաբանությամբ. «Յուցանե առակս, թե պարտ է սիրել խոնարհություն, հեզություն և համբերություն և հնազանդվել. շատերն են սատակել հպարտությամբ»: Ավելորդ է ասել, թե ինչ հնազանդություն էին պահանջում եկեղեցու ներկայացուցիչները «հավատացյալ հոտից»:

14. «Իշխան և այրի կին».— Այս առակը վերագրել են

Հովհան Մործորեցուն: Ն. Մառը հավասնական հեղինակ համարում է Միսիթար Դոշին: Այն սակավաթիվ առակներից է, որ գերծ են մնացել բարոյախոսական մեկնությունից: Առակն ունի միայն մի վարիանտ՝ Հովհան Մործորեցուն վերագրած «Քարոզ գրքի» մեջ:

15. «Քագավոր և օձ».— Հրատարակել է Ղ. վ. Հովհանյանը, 1890 թ.: Նման սյուժե ունի նաև «Կալիլա և Դիմնան»: Դրանով պիտի բացատրել, որ հայերեն տեխստը՝ «Քագավոր և օձ և որդի քագավորին» սկսվում է «ասի յառակաց» բառերով: Բացի Ամստերդամի «Աղվեսագրքի» (1668) վարիանտից, կան և հայերեն այլ վարիանտներ: Մենք հիմք ընդունել ենք Մտեփանենոսի ժողովածուի վարիանտը, որ ավելի կենդանի լեզվով է և ընդարձակ: Այդ առակը վերջանում է հետևյալ խրատով. «Հին թշնամին նոր սիրելի շի լինի, և նառ շկա, որ այլ լինի. ով միտս ունի, իմասցի»:

10

16. «Առյուծ և աղվես և արջ».— Առակը հայտնի է շուրս վարիանտով: Առակի վերջի գոեհկությունները կրճատել ենք: Նման առակ ունի նաև Եզոպոսը. այս առթիվ Ն. Մառը հետևյալ միտքն է հայտնել. «Հայկական տեխստը հանախ ներկայացնում է հունարենում անհայտ խմբագրություն, և այս դեպքում հայ այլաբանական գրականությունը մեզ համար կարող է պահած լինել Եզոպոսի առակի կորած վարիանտը» (Ն. Մառ, 478):

20

17. «Կաթ մեղու պատճառ պատերազմի».— Ձետեղել ենք նաև իբրև սկզբնաղբյուր Հովհ. Քումանյանի «Մի կաթիլ մեղրի»: Ավելի սեղմ ունի «Պանչանտա» սանսկրիտ մատյանը, ըստ որի որսորդն է գտնում մեղրի խորիսխը և ուզում է ծախել, մի կաթիլ կաթում է գետնին և այլն: Անհավանական համարելով սանսկրիտից անմիջապես հայերենի փոխադրելը, Ղ. վ. Հովհանյանը ենթադրում է, որ արաբ թարգմանությունից է մտել Ոսկեփորիկի և Վարդանի առակների ժողովածուների մեջ: Ըստ Ն. Մառի՝ «Աղվեսագրքի» մեջ անցել է «Կալիլա և Դիմնայից»:

30

18. «Կտակ վասն գանձի».— «Ցուցանե առակս, թե աշխատանքը մեծ բարիք է և շատ օգուտ թե այս և թե այն կյանքում»: Ամենատարածված առակներից մեկն է մեզանում, և

մինչև այժմ, մանավանդ այգեգործական շրջաններում, պատմում են, ակնարկելով այգին խոր փորելուց ստացվող օգուտը՝ առակի գանձը:

19. «Ուղտ և գալլ և աղվես».— Այս առակն ունի մի բանի խմբագրություն, տարբեր բարոյախոսական մեկնությամբ: Այսպես. ըստ մի վարիանտի՝ «ցուցանե առակս, թե աղատը չպետք է ձգտի մեծատան հետևից և ոչ էլ կովի մտնի նրա հետ»: Մյուսի մեկնությունը՝ «ցուցանե, թե մեծատունները և առաջնորդները ծծում են ժողովրդի ուղեղը, և շատերն են աղատանում»: Տարբեր սոցիալական խավեր նույն առակը մեկնել են՝ յուրաքանչյուրն ըստ յուր աշխարհայեցողության: Մեծատունները և եկեղեցին ֆարոգել են, որ աղատը չպիտի կովի նրանց դեմ և պիտի հաշտվի իր վիճակին. իսկ աղատն արդեն գիտակցել էր, որ մեծատունները և հոգևոր առաջնորդներն են յուր թշվառության պատճառը:

20. «Եղև և ձի».— Առակն արտացոլում է սոցիալական անհավասարության գիտակցությունը գյուղացիական խավերում՝ վաղնջական ժամանակ և նրանց բողոքը՝ ֆեոդալների դեմ: Այս կարգի առակ է նաև «Եկեղեցին և ջրաղացը», որով եկեղեցին համարվում է պորտաբույծ և «ջրաղացի», այսինքն՝ գյուղացիության ֆրոնդիստիկ ապրող: Առաջին առակի մեկնությունը՝ «ցուցանե առակս, թե մարդ կա, որ աշխատում է եզան նման և մարդ կա, որ միշտ ձի է հեծնում և ավերում է աշխարհը: Եվ եթե աշխատավորը եզան նման չաշխատի, ապա կմեռնի ձին և ձիավորը». այս մեկնությունն ապացույց է այդ գիտակցության զարթոնքի, և դեռևս երկար ժամանակ այդ առակն ավանդվել է, ինչպես հաստատում է աստապատցիներից գրի առած նույն առակի հետևյալ վարիանտը (Նավասարդյան, Հայ. ժող. հեթ., 7):

30

«Ոսկե քամբով ձին բեռնած եզան ասավ.

— Ես ձի ամ ձիավորին

Ոսկի արծո ամ քազավորին.

Եզն ասավ.

— Ես եզ ամ եզնավորին.

Ոսկե արծո ամ որչափին.

Ես շղատեմ արտն ու դարին.

Ղառղառնին պոչիդ տակին կշարվին»:

21. «Հիմար և ձմերուկ».— Մի վարիանտն ունի «ասի յառակաց» ձևը, որից կարելի է ենթադրել առակի մուտքը հայերեն ժողովածուների մեջ՝ գրավոր այլ աղբյուրից: Մխիթար Գոշն ունի այսպիսի առակ, բովանդակությամբ մի փիչ տարբեր (անփորձ մարդը սեխն ընդունում է ջայլամի ձվի տեղ և այլն): Հայ ժողովրդական բանահյուսությանը հայտնի են նման առակներ և ասացվածքներ:

22. «Աղջատ և ավետարան».— Մի ձեռագրի մեջ՝ «Յղֆատ և յերեց և ավետարան»: Կազմել ենք երկու վարիանտից: Բնագրում առակն այսպես շի վերջանում, ըստ մեկի՝ «ֆանանան ամոթալի եղավ», իսկ ըստ մյուս վարիանտի աղբատը ֆանանային մեկնաբանում է ավետարանի նշանակությունը, ինչպես մի ջերմեռանդ հավատացյալ: Այդ մասը համարելով բարոյախոսական կցան, որ վարպետությամբ ժամանակին միացրել են առակին,— գտաել ենք բուն առակից:

23. «Հայր ու որդի».— Բնագիրը չունի «և այժմ դո՞ւ ես խրատում ինձ» բառերը: Առակը վերջանում է հոր խրատով՝ ամուսնությունը «սրբությամբ գործելու մասին»:

24. «Մարդ և ընկույզ և ձմերուկ».— Աննշան տարբերությամբ այս առակը կա մի ֆանի ժողովածուների մեջ:

25. «Եկեղեցի և ջրաղաց».— Տե՛ս ծան. 20: Առակին կցված է հետևյալ մեկնությունը. «ցուցանե առակս, թե կան աշխարհի մարդիկ, որոնք միշտ աշխատում և դատում են, ինչպես մեղու. և թագավորները և իշխանները և ամենայն մարդիկ ուտում են նրանց վաստակը և ապա եկեղեցի գնալով աղոթում են աստծուն և հիշում»:

26. «Ամենատգետ մարդ».— Սկսվում է «ասի յառակաց» բառերով: Արևելյան ծագումն ակներև է:

«Ջրմի և թոնի» մարդ (մի ձեռագրում՝ «ջրմի և նոթի») կարելի է հասկանալ իբրև «ջրմուրի և թոնի մարդ»— խիստ ծարավ և թաթավ մարդ: Գուցե ակնարկում է այդպիսի մարդու անկարելիությունը, և ուրեմն հովիվը ծաղրում է թագավորի գիտուններին: Կարելի է հասկանալ, որ հենց ինքը՝ ամենատգետը՝ արտասովոր մարդ էր՝ և խիստ ծարավ և թաթավ ու թաց:

27. «Աղվես և որսորդ».— Բնագիրը՝ «Աղուէս և որսորդ».

10

20

30

աղվեսին հալածում են որսորդները: Աղվեսը կարծում է, որ իրեն ուզում են նշանակել «նիտանոցի հայրապետ»: Աղվեսի բերանով առակագիրը ծաղրում է վանահայրերին և եկեղեցականներին ընդհանրապես:

10 28. «Իշխանավոր և իմաստուն».— Երկու վարիանտն ունեն «Մելիք և կարդացող» վերնագիրը, թեև տեխստի մեջ սուլթանն է, որ ղադիից ֆեթվա է ուզում ամուսնության համար: Առակը նաև ծաղր է բազմակնության սովորության: Խմբագրելու ընթացքում դուրս ենք բողել այդպիսի բառերը: Առակը վերջանում է սուլթանի գղջումով («և եկեալ սուլտայն ի գրղջումն»): Այդ մասը շենք թարգմանել, իբրև առակի միտումնավոր վերջավորություն, որի նպատակն է ցույց տալ կրոնի զորությունը:

20 29. «Աղվես և թղթատար գայլ».— Օգտվել ենք Ամստերդամի «Աղվեսագրի» վարիանտից, որի վերջը տարբեր է և թույլ: Երբ գայլն ընկնում է շների բերանը, աղվեսին խնդրում է բերել թուղթը: Աղվեսը հեռվից կանչում է. «Ո՛վ գայլ, այդ գյուղում կարդացող չկա, լսող չկա. ի՛նչ կա որ թուղթը բերեմ»: Եվ շները գայլին սպանում են: Ավելի հաջող համարելով առաջին վարիանտի վերջը, մենք այն կցել ենք Ամստերդամի «Աղվեսագրի» վարիանտին:

Առաջին վարիանտը վերջանում է հետևյալ իմաստությամբ, որ բերում ենք առանց թարգմանելու. «ցուցանէ առակս, թէ մի վիճիր և մի անկանիր ի մէջ վիճողաց և բազում տգիտաց և աներկեղաց, այլ իմաստութեամբ փախիր ի դիաց և ի նոցին կամակատարաց և յանիրաաց»:

30 30. «Հալալ մարդ».— Առակից հանել ենք հետևյալ նախադասությունները. «Զի գրած է ի համաքն, թէ յսնօրէց զխնծորն ուտելն գաւուրն տրտմութիւն տանի». նաև՝ «և ատուած էրես ինձ և ուրախացեալ յոյժ և փառս ետուն ատուծոյ»: Վերջին նախադասության տեղ ավելացրել ենք. «և անա դու եկար»:

31. «Առյուծ և մարդ».— Այս առակի մասին Ն. Մառը գրել է. «Առակն ունի երեք խմբագրություն, որոնցից մեկի համար բնորոշ են ժողովրդական ձևերը և դարձվածիները և ավելի մանրամասն է... Մեզ համար միանգամայն հավանական է

Եզոպոսի առակի հունական տեքստի գոյությունը, միանգամայն համապատասխան հայկական վերսիային» (Ն. Մառ, 483): Մենք հիմք ընդունել ենք «Ժողովրդական ձևերով» հարուստ վարիանտը:

32. «Արվեստ կնոջ».— Բնագրում՝ «Արուեստ կնոջ»: Այս մանրավեպի մեկնությունը գրված է «գեղջուկ բառով», որ բերում ենք ընթերցողին ծանոթացնելու այդ լեզվին. «Ցուցանե առակս, թե մարդ հետ ֆելվոր կնոջ հուն ոչ կարե յելներ («Ի հուն էլանել = գլուխ հանել» — Ա. Բ.), որպես ասեն գեղջուկ բառով, թե կնկայն ֆելն բեռնելով է և հաղթե մարդկան. և մարդ ոչ կարե դիմանալ կնկայն ֆելին»...

10

33. «Անզգամ կին».— Այս մանրավեպի սկիզբը՝ ուր պատմվում է ծովային թագավորի և մարդու բարեկամության մասին, և թե ինչպես այդ մարդը սովորում է կենդանիների լեզուն՝ կրճատել ենք և ավելացրել հետևյալ պարբերությունը. «Եվ մարդուն հարցրին, թե ինչո՞ւ նա տրտում նստել է: Եվ մարդն ասաց, որ տրտում է, որովհետև աղքատ է: Մտերն ասացին. «Կխոստանա՞ս երբեք շասել ոչ ոքի, եթե քեզ ոսկու տեղ ցույց տանք», և մարդը խոստացավ և երդվեց, և ծտերն ասացին. «Այդ ֆարի տակ յոթ կարաս ոսկի կա թաղած, հանի և տուն տար և եթե ասես մեկին, թե որտեղից է ոսկին, իսկույն կմեռնես»: Եվ մարդը ուրախացավ»...

20


34. «Դրախտ և գեղջուկ մարդ».— Կոչվում է «Քրիստոնեայ և այլազգի, այլև օրինակ վինի յաղագս հաւատոյ», որի մեջ «այլազգին» պատմում է մի «օրինակով բան», որի վերնագիրն է «Աղն կսկծի»: Որովհետև Ամստերդամի «Աղվեսագրի» մեջ կար այդ առակն առանց ներածության և ավելի գրավիչ (տե՛ս նաև Դ. Վ. Հովնանյան, «Հետազոտ. նախնեաց ուսմուհիների վրայ», Մասն Ա., տետր Բ., 282), — մենք գերադասեցինք այդ վարիանտը, վերամշակելով առակի վերջին մասը:

30



ԱՅԼ ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐ





ՎԱՂԸ ՄԱՐՏԻ 8-Ն Է

Մարանենց հին տունն այդ օրն անճանաչելի էր դարձել: Մզլոտած օճորքը սրբել, մաքրել էին, գետինը լավ ավելել, պատերի ճեղքերը թղթով կալել ու շարվեշար կախ արել նկարներ, կարմիր շորով նկարների շորս կողմը սարքել: Եվ այնքան վա՛ռ էր երևում սև պատերի վրա կարմիր գույնը:

Երբ Մարանենց պառավը շեմքից ներս մտավ, զարմացավ մնաց.

— Ախլի, էս հո հարսանքատուն եք շինել մեր դարադամը...

10

— Մինա հորքիր, դու էգուց արի, հարսանիքն էգուց կտեսնես,— ձայն տվեց Աննան, որ քթոցի վրա բարձրացած աշխատում էր կարպետի մի ծայրը հագցնել պատին մեխած սեպին:

— Բա էդ ի՞նչ,— հարցրեց պառավ Մինան, մի քիչ առաջանալով:

— էս բեմ ա, բե՛մ... էգուց թատրոն ենք տալու,— պատասխանեց կինը և, կարպետի ծայրը սեպին հագցնելուց հետո, քթոցը մոտեցրեց մյուս պատին, վաղվա ներկայացման համար կարպետից վարագույր սարքելու:

20

Պառավ Մինան մոտեցավ մի ուրիշ կնոջ, որ թղթեղ էր խմորում ու փակցնում պատերին: Հարցրեց նրան, թե ի՞նչ թղթեր են, գլուխն օրորեց ու իրեն-իրեն խոսելով դուրս գնաց: Կանանցից մեկը նրա հետևից շանչ արեց, մյուսը նախատեց շանչ անողին:

— Ի՞նչ ա հասկանում, է՛, խեղճը, որ շանչ ես անում...

— Էն չի՞ հասկանում: Գիտե՞ս ինչ սատանան ա: Ասենք հիմա ա խեղճացել: Մարանենց Միհնան մի ժամանակ ուներ ո՞ր...

— Ձեռքովը գա հիմա էլ կանի, — ձայնեց մի ուրիշ կի՛ն, որ օգնում էր Աննային բեմը սարքելու:

— Ասում են հարսին գերեզման զցողը սա է եղել... Էնքան թուք ու մուր է տվել երեսին, ծեծել... Հիմի եկել ու քաղցր զրույց ա ուզում անի մեզ հետ: Էզուց տես ինչեր ա պատմելու մեր մասին...

10 Աննան և սարքում էր բեմը, և կես ականջ լսում ընկերների խոսք ու զրույցը Մարանենց պառավի մասին: Եվ երբ բեմից իջավ, որ հեռվից նայի պատերից կախ կարպետներին, հանկարծ աչքն ընկավ սեղանին ու սեղանի վրա դրած շալին: Աչքն ընկավ ու մի վայրկյան աչքը սառած մնաց.

— Հը՞, զարմացա՞ր: Տես ի՞նչ շալ եմ առել, — ասաց շալի տերը, նկատելով Աննայի սառած հայացքը:

— Չէ՛, էնպես, աչքս ընկավ... Աղչի, մի տեսեք բեմը պակաս տեղ հո շունի...

Ու մինչդեռ այս ու այն կողմից ձայն էին տալիս, մեկը՝ 20 թե. կարպետը ծուռն է կախված, մյուսը՝ որ բեմը լավ է սարքած, — Աննայի աչքը շալին էր: Կամաց-կամաց դեմքի արտահայտությունը փոխվեց, զգաց, որ հոգնել է ու նստեց տախտակի վրա...

Այդպիսի շալ ուներ և քույրը: Փաթաթվում էր միջին, երեվում էր միայն աչքն ու ունքը: Այնքան սիրուն էր Փառանձեմը ծաղկանկար շալով: Նստում էին տան առաջ, թթենու տակ, խողեր էին անում: Փառանձեմը տիկնիկներ էր շինում, տալիս իրեն: Եվ իսկույն Աննան պիտի վազեր հարևանի աղջիկներին ցույց տալու իր նոր տիկնիկը:

30 Աննայի միտն ընկավ, թե ինչպես մի անգամ տեսավ քարերի վրա ընկած բարակ ու երկար պսպղուն կտոր...

Ուրախացած մոտ վազեց, որ վերցնի, Փառանձեմը տեսավ ու ծկլթաց: Քարերի վրա գարնան արևի տակ տաքացող օձը կամացուկ շուլալվեց ու պահվեց քարերի արանքում:

Աննան ժպտում էր.

— Էն ուր փախավ կտորը...

— Էն օձ էր, օձ... որ բռնեիր, ձեռքդ կկծեր,— ասաց Փառանձեմն ու գրկեց նրան:

Նստում էին թթենու տակ ու եթե տանը մարդ չէր լինում, Փառանձեմն Աննային ուղարկում էր հարևանի աղջկան կանչելու: Մնողներն անհաշտ էին իրար, գնալ-գալ շունեին: Իսկ Փառանձեմն ու հարևանի աղջիկը մոտ ընկերներ էին: Եվ հենց որ տանն էլ ուրիշ մարդ չլիներ: Փառանձեմը կասեր.

— Աննա, գնա Սրբուհուն կանչիր... Համա լեզուդ կկարեմ, որ ուրիշին ասել ես: Էլ տիկնիկ չեմ շինի քեզ համար:

— Ինչի՞ ես պարապ նստել, Աննա,— ձայն տվավ սեղանի վրա թուղթ խմորող կինը,— վե՛ր, գործ արա: Էզուց մարտի 8-ը լինի, դու պարապ նստե՛ս... 10

Աննան ցնցվեց, սթափվեց: Ձեռքերը մազերին տարավ, երեսի վրա կախ ընկած մազերը հետ քաշեց, մոտեցավ սեղանին: Մի կին պատմություն էր անում: Աննան խմորը մատով քսում էր թղթին, դեն դնում: Մի ուրիշը խմորած թղթերը փակցնում էր զարադամի ծխից սևացած, հարյուր տարվա պատերին:

Մի անգամ էլ բակում նստել, միամիտ խաղում էին: Հանկարծ դուռը բացվեց, մայրը ներս մտավ ու Փառանձեմին ասաց. 20

— Գնա, մազերդ սանրի... Էն կապույտ դեյրադ էլ հագի: Տունը մարդ ա գալու:

— Բա ե՛ս...— հարցրեց Աննան: Մայրը չպատասխանեց, ավելն առավ և սկսեց շատ արագ-արագ ավլել սրահը, գետնին խսիր փռել: Փառանձեմը նայեց, շատ նայեց Աննային ու, երբ մայրը մի անգամ էլ կանչեց, վեր կացավ ու ներս մտավ տուն:

Մի քիչ հետո Մարանենց պառավն եկավ: Ու դեռ չէին քշիչացել իրար հետ մայրն ու Մարանենց Մինան, երբ ներս մտան հայրն ու մի ուրիշ երկար հասակով մարդ, որ կռանալիս գլուխը դռանը զարկեց ու թոնթորաց: 30

— Ափի, էլի մեր եզը պիտի ծախե՞ս,— հորը հարցրեց Աննան: Ի՛նչ ցուրտ էին այն մարդու մատները, երբ նա կոացավ և Աննայի թշերից բռնեց: Գոմում մի պառավ եղ կար: Ամեն զարնան մայրը մտադրվում էր ծախել, առնողները գա-

լիս գնում էին, ու եզր մնում էր գոմում: Այդպես էլ մնաց, մինչև որ մի առավոտ գոմում անշնչացած տեսան:

Քե ինչ կատարվեց այդ և հետագա օրերում, Աննան չէր կարող հասկանալ: Ու մի օր էլ շատ միս բերին, Փառանձեմի համար նոր շորեր առան, եկան հարևան ու բարեկամ, բակում կրակները վառեցին ու մեծ կաթսաները դրին կրակի վրա: Փառանձեմը լաց էր լինում: Աննան հենց որ հեռանում էր նրա մոտից, ուրախ-ուրախ թռչկոտում էր, եկողները միրգ էին տալիս: Բայց որ մոտենում էր Փառանձեմին, ուրախությունը կորչում էր...

10

Մութն ընկնելուց Փառանձեմն Աննայի հետ կամացուկ տնից դուրս եկավ: Գնացին, Փառանձեմը տան հետևում պահվեց, Աննան վազեց Սրբուհու մոտ: Այն իրիկուն նրանք քիչ խոսեցին: Հանկարծ մայրն երևաց, տեսավ Սրբուհուն: Փառանձեմն աղաչեց, լաց եղավ.

— Զա՛ն, էլ շեմ անի... Սիրտս ուզեց:

Մայրն էլ լաց եղավ, Սրբուհին էլ: Հետո բաժանվեցին: Տան անկյունում, ծովելիս, Փառանձեմը հետ նայեց: Աննան տեսավ, թե ինչպես Սրբուհին կանգնել էր իր տեղում: Եվ երբ տուն մտան, Աննան քրոջը կամացուկ հարցրեց.

20

— Բա Սրբուհին գիշերս բոստանում պիտի քնի՞...

Փառանձեմը կռացավ, համբուրեց: Աննան զգաց, թե ինչպես արցունքները կաթեցին Փառանձեմի աչքերից:

Զուռնի ձայնը երբ լավեց, Աննան դուրս թռավ: Դարպասը բաց արին, ինչ որ մարդիկ հարա՛յ-հրոցով, զուռնա դհոլով բակը մտան: Պարում էին բակում, ծափ էին տալիս: Մեկը բարձր կանչում էր... Դհոլի ձայնից դմբում էր տունը: Գնում գալիս էին: Մեկը թե՛

— Աղջի կորի է՛... ոտնատակ կլինես...

30

Աննան հետ եկավ քրոջը պատմելու, թե ինչ լավ են պարում բակում, ինչքան շատ մարդ են եկել: Փառանձեմի հագցնում էին: Մրսում էր: Մաղկանկար շալը զցել էր ուսին, լուռ կանգնել էր: Ինչ որ կանայք սարքում էին, շտկում, սիրտ էին տալիս: Ինչո՞ւ էին մոմ դրել Փառանձեմի ձեռքին: Մոմը գողում էր, կրակը թրթռում էր: Բարակ քող էին զցել Փա-

աանձեմի գլխին և մոմի լույսի տակ, քողի արանքից սփրթնած էր երևում Փառանձեմի դեմքը:

Մյուս առավոտ Աննան զարթնեց, զարմացած նայեց շորս կողմը: Իր տեղաշորում չէր քնել, շորերը հագին էր: Փառանձեմը չկար: Մայրն ուռած ու կարմրած աչքերով ներս ու դուրս էր անում, հավաքում ամանները, կարպետները:

Աննան նստեց տեղաշորում, աչքերը տրորեց, հետո նայեց մորը: Մայրը մոտեցավ, կուացավ ու նրան համբուրեց: Արցունքներն ասես մոր համբույրին էին սպասում, որ ծլլացին: Երազի պես թվաց լուսադեմին Փառանձեմի դեմքը: Ականջին ինչ-որ բան ասաց, պինդ համբուրեց: Իսկ Աննան տրտնջում էր, որ քունը տանում է:

10

Նույն օրն էլ գնաց քրոջը տեսնելու: Ուրիշ տուն էր, ուրիշ մարդիկ, և այդ ուրիշների մեջ լուռ ու անխոս Փառանձեմը: Երկար հասակով մարդը գրկեց, ուզեց համբուրի: Բայց Աննան դուրս թռավ նրա գրկից, վազեց քրոջ մոտ: Բեղերն այնպես էին ծակում և այնպես վատ հոտ էր գալիս նրա բերանից:

Այդ տանը մնաց մինչև իրիկուն: Բաժանվելիս Փառանձեմը նրան միրգ տվեց, կանչեց մի անկյուն և ասաց.

— Սրբուհուն կասես, որ կիրակի օրը մեր բոստանում ինձ տեսնի: Համա տես, որ ուրիշին ասել ես, էլ քեզ տիկնիկ... Լացը խեղդեց, չկարողացավ խոսքը վերջացնի:

20

— Էստեղ լավ չի, արի գնանք մեր տուն, — ասաց Աննան: Փառանձեմը ժպտաց:

— Դե, մութն ընկնում ա, գնա, բալիկս: Նանին հիմա մենակ ա: Խելոք կաց...

Գնում էր, գալիս: Մի քանի անգամ Փառանձեմը եկավ իրենց տուն: Առաջվանը չէր: Աննան ուզում էր, որ նստեին թթենու տակ, հավաքում էր գույնզգույն կտորներ, բայց Փառանձեմն էլ առաջվա պես սիրուն տիկնիկներ չէր սարքում:

30

— Էլ հերիք ա, Աննա... Մարանենց պատերը սաղ թղթեցինք, — ասաց կինը, որը Աննայի խմորած թղթերը փակցնում էր պատերին:

Կինն իր պատմությունը դեռ չէր վերջացրել: Աննան լավ չէր լսել նրա պատմածը... Երկու ձիով էին... Կարճիկ մարդը

հենց նրանց տեսած թե չէ... էդ ժամանակ Մարանենց էս պա-
ռավը դեռ ջահիլ աղջիկ է լինում...

— Աննա, համ զրույցին ականջ արա, համ էլ սրանից մի
հատ գրի, բեմի մեջ կախ տանք,— ասաց պատմություն անող
կինը, Աննային մեկնելով թղթի մի կտոր և ապա բաց գիրքը:

Աննան գրքից պիտի արտագրեր մի քանի խոսք: Փորձեց,
լավ դուրս չեկավ... Տառերը խառնվում էին իրար, շաղվում:
Թուղթը շուռ տվավ մյուս երեսի վրա...

10 Ու մի օր էլ Աննան գնաց ու Փառանձեմին անկողնում
պառկած տեսավ: Գնացել էր կորեկ քաղելու, թռել էր առվի
վրայով, ճմացել էր ոտքը, և թաթի խաղը դուրս էր ընկել:
Մինչև իրիկուն աշխատել էր արտում, երեկոյան կաղալով տուն
եկել: Մյուս օրն անկողնից դուրս չէր եկել:

Փառանձեմն Աննային որ տեսավ, ասես սիրտը բացվեց:
Վերմակի մի տուտը բարձրացրեց, Աննան թեք ընկավ նրա կող-
քով: Մի կին տաք մոխիր էր լցնում պարկերի մեջ և շուտ-շուտ
տաք մոխրով լի պարկերը մոտեցնում Փառանձեմի ուռած
ոտքին: Քույրը ցավից տնքում էր, կինը սիրտ էր տալիս:

Այդ օրը մայրն էլ եկավ: Աննան անշափ ուրախ էր: Նրան
20 թվում էր, թե ուրիշի տան չեն, այլ իրենց, Փառանձեմը սուտ է
պառկել, ոտքը չի էլ ուռել: Այնպես էր ուզում գլորվել ու խա-
ղալ նրա վերմակի վրա, ինչպես առաջ, երբ միատեղ էին քնում
և ինքը կանուխ էր զարթնում, խաղում քրոջ մազերի հետ:

Մյուս օրը Մարանենց Մինան եկավ: Սպասում էին դալլաք
Սիմոնին: Փառանձեմը մաշվել, դեղնվել էր: Գիշերը քունը չէր
տարել: Երբեմն տնքում էր, բայց ոչինչ, և ոչ մի խոսք չէր
ասում: Դալլաք Սիմոնն եկավ, վերմակը վեր քաշեցին, և Աննան
տեսավ քրոջ ուռած ու սպիտակ ոտքը:

30 Իրեն դուրս տարան: Բակում ուրիշ երեխաներ կային, խա-
ղում էին: Աննան կանգնել ու նրանց էր նայում, երբ հանկարծ
ականջովն ընկավ քրոջ ճիշը: Վազեց դեպի դուռը, հրեց. դու-
ռը ներսից փակել էին: Փառանձեմը ցավից ծկլթում էր, բարձր
կանչում: Աննան դուռն մոտ լաց էր լինում, ուսով դուռը հրում,
բռունցքներով զարկում: Ներսում ոտնաձայներ էր լսում,
գնում էին գալիս, ամանների շրխկոցի ձայն էր լսվում: Դուռը
հանկարծ բացվեց: Մի կին արնով լի տաշտը դուրս էր տա-

նում: Աննան ներս մտնելիս կպավ տաշտին, քիչ մնաց տաշտն ընկներ կնոջ ձեռքից:

Փառանձեմը աչքերը բաց ու խուփ էր անում: Սպիտակել էր երեսը, շրթունքները կապտել էին: Աննան զարմացավ, թե ինչու Փառանձեմը նստում է ու իրեն ոչինչ չի ասում, չի կանչում կողքին նստելու: Դալլաք Միմոնը վերմակի ծայրին էր քսում արնոտ ածելին և հույս էր տալիս, որ երկու օրից ուռուցքը կքաշի:

— Էն հարամ արյուն էր, էն որ դուրս եկավ, երկու օր էլ չի քաշի, ցավը կհանդարտի, ուռուցքը կնստի:

Մայրն անխոս էր: Կռացել էր, երբեմն ձեռքով սրբում էր Փառանձեմի ճակատի քրտինքը: Միայն Մարանենց Մինան էր, որ դալլաքի հետ զրուցում էր և մի պատմութուն անում, թե ինչպես տարիներ առաջ մի ուրիշի գլխին էլ է այդպիսի փորձանք պատահել և թե ինչպես էր նա առողջացել:

— Փորձանք ա, կպատահի... Մարդս որ կա, մի անգիտուն հեյվան ա... Միայն Տերը կարող ա փորձանքն իմանա:

Սակայն օրեցօր ուռուցքը շատացավ, վերքի տեղերը թարխտոեց: Փառանձեմը դժվար էր շնչում, չէր կարողանում տեղում շարժվել: Ո՛չ ուտում էր, ո՛չ խմում, և ո՛չ էլ խոսում: Երբեմն աչքերը բաց էր անում, նայում սրան-նրան, շրթունքները շարժում, բայց ձայն չէր լսվում, թեկուզ կոանում էլ էին և ականջները մոտեցնում բերանին:

Ու մի անգամ մայրը նայեց աղջկա դեմքին, շարժվող շրթունքներին, Աննային ասաց.

— Սրբուհուն ա ուզում, Աննա, գնա կանչի...

Երբ Սրբուհին ներս մտավ, Փառանձեմը ժպտաց: Զկարողացավ ոչ մի խոսք ասել: Աննան տեսավ, թե ինչպես Սրբուհին աչքերը սրբելով դուրս եկավ սենյակից, մի անգամ էլ հետ նայեց բաց դռնով և նրան կանչեց.

— Գիշերս գնանք մեզ մոտ, Աննա, նանեդ ու ափեդ էստեղ են մնալու...

Առավոտ կանուխ, երբ Սրբուհու հետ միասին Աննան մոտեցավ Փառանձեմենց բակին, ներսից վայնասունի ձայն լսեցին: Սրբուհին թողեց Աննայի ձեռքը և մազերը քանդելով, ներս վազեց: Փառանձեմը մեռել էր...

10

20

30

— Ի՞նչ եղավ, Աննա, հը՞, էդ ինչ ա, աչքերդ ջրակալած են,— հարցրեց կինը, որ պատմութիւնն արդեն վերջացրել ու նայում էր, թե ինչպէս է Աննան շուռ ու մուռ տալիս թուղթը։
Աննան փղձկաց, արցունքները թափվեցին սպիտակ թղթի վրա։

— Ինչո՞ւ ես լալիս Աննա... գիժ հո շես... էգուց մարտի 8-ն է, դու ճառ ես ասելու...

— Հեշ, միտս եկավ մեր Փառանձեմը,— ասաց Աննան և արցունքները սրբեց։ Տիրեց լռութիւն։

10 — Թե ողջ մնար, հիմա մեր միջի առաջավորը կլիներ...

— Էնքան էդպէս անտերունչ և անխոս մեռել ե՞ն... Ի՞նչ էր մեր հալը։ Բա կարո՞ղ են հիմա զոռով պսակեն, դալլաք Սիմոնին կթողնեինք, որ նշտարեր...

Աննան ունքերն իրար հավաքեց, մոտեցրեց թանաքն ու փետուրի ծայրով թղթի վրա մեծատառերով գրեց.

Խորհրդային
Իշխանությունը
Տեղ աշարոյթուն
Բերեց, կեցցե
Տարրի 8-ի Կռնը

20

Հետո վեր կացավ, գրածը կախեց բեմի ճակատից, մի քիչ նայեց ու թեթևութիւն զգաց։

Մութ էր, երբ կին ու աղջիկ ցրվեցին գյուղի ծուռ ու նեղլիկ փողոցներով։ Ու հեռվից իրար կանչում էին.


— Աղջկերք, էգուց կանուխ կգաք, մարդ շատ կլինի, բուրին իմաց կանեք...

Աննան քայլում էր մյուսների հետ։ Վճռական և ուրախ շեշտ կար նրա ձայնի մեջ, երբ ընկերներից բաժանվելուց գյուղի խաղաղ փողոցում բարձր կանչեց.

30 — Աղջկերք, վաղը մարտի 8-ն է...

ՀԱՎԵԼՎԱԾ





„ԵՐԲ ՈՐ ԲԱՑՎԵՆ ԴՌՆԵՐ ՀՈՒՍՈՒ“

Սենդին նստել էր քաղաքային այգում և օրվա լրագիրն էր կարդում: Նստարանի ճոնշոցը նրան սթափեցրեց: Փնշոցով նստարանի վրա նետեց իր «մարմին ծանրության» շքեղ հագնեղած մի մարդ, որի վզկապը շատ էր նեղ ծնոտի կախ ընկած ծալքերի համար: Փորն այնքան էր դուրս ընկած, որ մարդը ուղիղ կանգնած ժամանակ իր ոտքերը շէր տեսնում:

— Լրագիր՝ կկարդաք կոր, — հարցրեց նորեկը, վիզը խեղդվողի պես ծոմռելով:

Սենդին հասկացավ, որ նորեկը օտարական է, երևի գաղութահայ: Երևանի այգում այդ բարբառը օտարոտի թվաց նրան, և պահ մի կեցավ, ապա գլխով դրական նշան տվավ:

— Ես ադ թերթերեն բան մը շեմ հասկընար, — շարունակեց նորեկը, — կրճատումներ ա՛հռելի, Մեսրոպյան ուղղագրությունը այլանդակած կտեսնամ հոս: Ի՞նչ ըսել է նախալուսփոխօգկոմ, շնշահեղձ կըլլա մարդ, մինչև արտասանն նե...

Եվ իրոք, այնպես խռոաց, ասես մտի շերտերի տակ թաղված կոկորդի մեջ մի անասուն մորթեցին: Նորեկը ուրիշ բաներից էլ տրտնջաց, և Սենդին հասկացավ, որ այդ դժգոհության պատճառն ավելի շատ մլեկներն են և տոթը ցերեկվա:

Ո՞վ, ի՞նչ, ուրկից, — հարցական ու բացականչ բառերի տարափից, որ նորեկը տեղաց Սենդիի գլխին, երբ նա «աղվաբիկ սիգարա մը ծխել կուզեր», — Սենդին հասկացավ, որ հարևանը «պարոն Քիրաշյանն» է, արտասահմանի աղքատախնամի լիազորը, եկել է Հայաստան «տեսնելու, թե ուսկից հարմար է նպաստել սա մեր տառապյալ ժողովրդին»:

«Ժողովուրդ» բառն արտասանելիս Քիրաշյանի հաստ շուր-

թերը ձգվում էին, խողովակ կազմում, որտեղից ելնում էր նախ՝ մի բառ, ապա տնքոց: Այդ տնքոցը, որ շատ խորից էր, թանձրամիս մարմնի խորերից, կարծես բառի արձագանքն էր:

Քիրաջյանը սկսեց պատմել, որ ինքը «հեռվեն եկած է մալաոխային դեմ մաքառելու և ազգին ֆիզիքը ազնվացնելու»: Էլ ուրիշ շատ բան պատմեց, բայց Սենդին ուշադիր չէր լսում:

Նրան դուր էր գալիս մսի այդ հսկա զանգվածի՝ փորի մակընթաց ու տեղատու լինելը և այն անորոշ ձայները, որ ելնում էին մարմնի խորերից, իբր բողոք շոգի դեմ, մոծակների գեմ, նոր ուղղագրության դեմ:

Նա իմացավ, որ Քիրաջյանը «ազարակներու և ավանակներու տեր» է, գաղութահայ հարուստներից, որոնք աղքատախնամի գործերով են պարապում, եկեղեցու համար գանձանակ հավաքում, «հայասեր» օտարների պատվին ճոխ ընթրիք սարքում և ճառում՝ նստած, կանգնած, բաժակը ձեռքին, ճառում ավտոյի մեջ, ճառում հյուրի ձեռքը սեղմելիս: Իսկ հետո՞. այդ հետոն նրանց աշխատանքի իմաստն է, «ազգային» աստառը: Հետո նրանք դուրս են ասում, Ֆրանկո-Մարսել, կարատ, «քեմփեյն», — որ վարժապետն ու տիրացուն (իսկ Սենդին գաղութներում այդ երկու տիպերից շատերին էր տեսել) կարծում են, թե այդ նշանակում է «օտարների միջամտություն», «ազգային օջախ» և «անկախություն»:

Քիրաջյանը սրտենդել սկսեց, իսկ Սենդին շարունակեց լրագրի ընթերցումը:

— Հրամանքնիդ ուսկի՞ց եք, — ելավ մի ձայն մսի գունդի խորերից (կամ թե՛ «Ձայնը հնչեց էրզրումի հայոց լեռներեն»):

— Երկաթուղեցի:

— Ադ ըլլալու բան չէ. տեղ մը ծնած եք անշուշտ:

— Ես ծնած չեմ տակավին: Մայրս ծնել է ինձ գնացքի մեջ,

30 բուրդովին պատահմամբ:

— Հոգիդ սիրեմ, պատմե. զիս շատ մեծարած պիտի ըլլաք, եթե հետս գավաթ մը սուրճ խմեք: Կտեսնամ, որ դուք ալ ինձի պես օտարական մըն եք:

Սենդին և Քիրաջյանը ուղղվեցին դեպի մոտակա սրճարան: Առաջինը միայն քայլում էր, երկրորդը և՛ քայլում, և՛ օրորվում: Սենդին հեռվից ձուլված էր երևում, իսկ ընկերը՝ կազմված

մսի խոշոր կտորների անկարգ միացումից: Եթե ոտքն առաջ շարժեր, փորն աջ ու ձախ պիտի օրորար, իսկ լանջն ու վիզը... օ՛, մի հարցնեք, այդ շարժումը ենթակա չէր մեխանիկայի և ոչ մի օրենքի:

Սրճարանում մի քանի մարդ «նարդի» էին խաղում: Մենկյունում նստել էր մեկը, որ երեք գործ միանգամից էր անում. թեյ էր խմում, լրագիր կարդում և ճաղատ գլուխը ինքնագոհ շոյում:

Սենդին նստեց, իսկ Քիրաջյանը տեղավորվեց այնպես, որ նրա փորի բարձր գագաթը սեղանին դեմ առավ: Սուրճի երկու գավաթ, երկու բաժակ պաղ ջուր և անուշ մասլահաթ: Սենդին իր ծննդյան պատմությունը սկսեց: 10

Խոսակցությունը երկար պիտի տևեր, եթե Սենդին չհիշեր, որ գնալիք տեղ ունի: Քիրաջյանը խնդրեց հանդիպել իրեն և հասցեն տվավ:

Նա հազիվ էր յուր թանձրամիս մարմնի ծանրությունը ոտքերին բարձել շարժվելու համար, երբ Սենդին ճարպիկ շարժումով նրա ձեռքը թոթովեց ու փողոց ելավ՝ ուրախ, կայտառ:

Իսկ երբ Քիրաջյանը ուզում էր սրճարանից դուրս գալ, նրան մոտեցան երկու հոգի, որոնցից մեկը՝

— Պարոն Քիրաջյան, մի բոպե լսեք մեզ... 20

Քիրաջյանը դարձավ, նայեց վերից վար, շրթունքները շարժվեցին, կարծես ուզում էր ասել.

— Թող տվեք, պե՛, ի՞նչ կուզեք ինձմեն...

— Մենք գիտենք, որ դուք պատվական հայ եք, ազգասեր մեծատուն, մի բոպե լսեք մեր վեճը և դատեցեք: Մենք ձեր խոսքը կհարգենք, որովհետև... մենք բուրժուական կողմն ենք... (այս խոսքերը շշուկով արտասանեց): Ես նախկին եմ, ընկերս՝ վերակազմյալ:

Մարդկանց արտաքինը վստահություն ներշնչեց Քիրաջյանին, մանավանդ շնորհքով փողկապը նրանց: 30

Քիրաջյանը նորից սուրճ պատվիրեց, այս անգամ երեք գավաթ, և սկսեց դարձյալ անուշ մասլահաթ:

Թե ի՞նչ էին խոսում, հայտնի չեղավ ուրիշ մարդկանց: Սուրճ բերող աղջիկը նրանց խոսածից միայն հասկացավ, որ առժողովմբ Հայկոպի կարասները չի տալիս, և որ շուտով

կառավարութեան ընթացքը պիտի փոխվի, «աչ պիտի նստին», ինչպես ասում էր փողկապով մարդը...

• • •

Յերեկվա շոգը սաստկացել էր:

Քիրաջյանի թոքերը իզուր էին փութսերի պես մեկ ուռչում, մեկ տափակում: Արովյան փողոցում անհրաժեշտ քանակով թթվածին չկար գաղութահայ աղքատախնամի համար, և քրտինքը ծորում էր առատորեն, բաղնիսից նոր դուրս եկողի պես:

10 Փողոցում օրվա այդ ժամին, երբ արևը ճիշտ գագաթիդ է զարկում, համարյա ոչ ոք չկար: Մի քանի մրգավաճառ ջուր էին շաղ տալիս մայթի կեծացած քարերին: Անկյունի հովում մուշ-մուշ քնել էին մուշաները դադրած:

Մի մանուկ զի՛լ ձայնով կանչում էր, ծոր տալիս՝ «Պաղ աղբյուրի ջո՛ւր...»: Ճիշտ այդպես ցերեկվա շոգին գյուղում շոգից նեղված մի աբլոր կտուրից ծուլորեն իր ծուղորուղուն է կանչում:

— Բեր սրբեմ, է՛, — լսեց Քիրաջյանը և դանդաղ շարժումով պարանոցը թեքեց: Կոշիկ սրբող մի երեխա աշխուժով ցատկեց փայտե արկղին ու նորից կանչեց:

20 — Անունդ ի՞նչ է, տղաս, — հարցրեց նա:

— Վարազդատ: — Եվ իսկույն ավելացրեց.

— Բեր սրբեմ, է, լա՛վ սրբեմ...

Քիրաջյանը ժպտաց. «Երևելի հայկական անուն ունիս», — ասաց և դանդաղ հեռացավ դեպի տուն:

Նա սովորութիւն ուներ իր սենյակի պատուհանից դիտել Արարատին: Եվ ինչ մտքեր շէր հղանում այդ պահին ուղեղը «բարիգործական»:

30 Արարատին դիտելուց հետո, նա մոտեցավ իր երկար և ընդարձակ մահճակալին և անհոգորեն փովեց, ձգվեց «մինչև ծովը վրկանա»: Եվ մահճակալի զսպանակները ճոնչացին խուլ:

Իրիկվա հովը քնքրորեն շոյում էր շոգից խանձված դեմքերը մարդկանց, երբ Քիրաջյանը զարթնեց, սրբեց քրտինքը դեմքի և լվացվելու շտապեց:

— Կարելի՞ է, — լսվեց դրսից մի ձայն:

— Խնդրե՛մ,— եղավ պատասխանը: Ներս մտավ հասակն առած մի մարդ, կղերական թերթի նախկին խմբագիր, որ 40 տարի հայոց պատմութիւնն էր ավանդել և հազար անգամ կրկնել աշակերտներին, թե հայ ժողովուրդը պիտի տիրանա «Արցախի և Տավրոսի լեռներին», հայոց պատմական թեւրին»: Աշակերտները լսում էին նրան և դասամիջոցին երգում «Էրզրումից մինչև Բասեն»:

— Ես ձեզ բերել եմ գիտական մի շարադրութիւն, նվիրված Պետրոս Գետադարձի հրաշագործութիւնն, — ասավ նա ու սեղանի վրա դրեց ձեռագրի սովոր մի հատոր: 10

— Սրանց չեմ տա, չեն տպի, անհավատներ են: Առեք ձեզ հետ տարեք՝ ձեզ մոտ տպելու:

— Աղեկ կըլլա, կառնի՛մ... Պետք է ազգին մտավորն ալ փրկել, մենակ ֆիզիքը հերիք չէ բնավ...

— Նաև եկա ձեզ հայտնելու սրբազանի կողմից, որ ձեր ներկայութեամբ այս օրվա հավաքութիւնը պատվեք, — ու ժպտաց «Գետադարձը» ողորմելի ժպտով, դեմքը կծկեց այնպես խեղճ, ասես դիմացինը նրան մի բան էր ընծայելու:

Երկուսով էլ գնացին: «Հրաշագործութիւնն» հեղինակը մի առանձին հոգատարութեամբ օշնեց Քիրաջյանին զգեստը մաքրելու: Ո՞վ գիտե, գուցե գտներ նա մի մեկենաս և վաղուց պատրաստ ձեռագիրն ազատվեր փոշուց: 20

• • •

Հավաքութիւնը անմեղ պատրվակով էր սարքված: Տիկին Վարդուհին էր հրավիրել, տարիքով մի կին, որ այժմ քաշվել է ասպարիզից, սակայն սրան նշան չի մոռանում պատմել «մի բաժակ թեյ»-ի հետ կապված օրերի մասին, երբ ամեն կիրակի տուփերով հանգանակութիւնն էր անում հօգուտ զինվորների, վիրավորների, երբ նահանգապետի կնոջ հետ զինվորական հիվանդանոցից տուն չէր գալիս: Ի՞նչ լավ օրեր էին, ի՞նչ ուրախութիւնն էր, և ինչ ջահել օֆիցերներ կային... կորավ, անցավ, շաղի պես գոլորշիացավ:

Եկել էր և Ղևոնդ սրբազանը, որին շատ էր դուր գալիս նստել տիկին Վարդուհու կողքին և սեղանի տակ ոտքը մոտեցնել նրա հաստիկ սրունքներին: Հին գինու պես դուրալի 30

ջերմութիւնն էր հոսում սրբազանի արյան մեջ, և այդ ժամերին նա իրեն ավելի առույգ էր զգում:

Քիրաջյանի մուտքը ժպիտներով և հաճույալի խոսքերով ընդունեցին: Կաղչիկ մի օքմին, որ ժամանակին մեծ կարողութիւն ունէր, իսկ այժմ՝ մատենավարի պաշտոն, իրենց տուն մարդ ուղարկեց, թանկագին հյուրի համար մառանում պահած հին գինուց բերելու:

10 Ուրիշներ էլ կային, որոնց թվում և մի նախկին միսիստր, որը իր հուշերը գրի առնելով էր զբաղված: Սրբազանի կողքին նստել էին երկու հոգի, որոնցից մեկը ճարպակալել էր պատերազմից առաջ, մյուսը՝ պատերազմի ընթացքում:

— Ինչպես եք տեսնում Երևանը, — Քիրաջյանին հարցրեց Ղևոնդ սրբազանը, միրուքի աջ ու ձախ կողմից շոյելով:

— Աղվար կտեսնամ... Հոս ալ պատվական հայեր կան...

— Է՛, պարոն Քիրաջյան, լավ չի. շին թողնում, որ մի շունչ քաշենք, — ասաց նա, որ ճարպոտել էր պատերազմի ընթացքում:

— Ամենայն ինչ անցավոր է, — վրա բերավ սրբազանը:

— Մայր աթոռը ողջ ըլլա...

20 — Օ՛, էջմիածին, «մշտականաչ կիպարիս, Հայաստանյայց մրմունջների ընդունարտն», անգիր և զգացված արտասանեց «Պետրոս Գետադարձը»:

Այդ բոլորին էլ դուր եկավ: Նույնիսկ տիկին Վարդուհին, որ այնքան էլ ջերմեռանդ հավատացյալ չէր, արտասպիեց: Նա մտաբերեց փառահեղ մի մաղթանք, երբ «զենք ու զրահից թնդում էր լերինք», երբ ֆոռում էր կանանց միութեան պահանջներում...

30 Խոսեցին դեսից դենից, ազգային պատվիրակութիւնից ու պատրիարքարանի գործերից, յսինոդի հին արարքներից և բնակարանների խտացումից: Յուրաքանչյուր ոք իր միտքը համեմտում էր զսպած մի ցանկութեամբ, և լուսավորչական այդ հավաքութիւնի առաքելական մրմունջներին հովանի էր Ղևոնդ սրբազանի խոսքը, թե «ամենայն ինչ անցավոր է»:

Միայն երկու ճարպագունդերն էին հետաքրքրվում նազդով, դուլարի և շերվոնեցի կուրսով:

Երբ ծածուկ ցանկութիւններին զեղումը ավարտեցին, և

արտանց խոսելը հերիք եղավ, տիկին Վարդուհին նրանց հա-
րևան սենյակը հրավիրեց, ուր ձյունի պես ճերմակ սփռոցի
վրա շարված էին պես-պես պնակներ, շիշեր և համեղ կերա-
կուր: «Պետրոս Գետադարձի» աչքերը պղտորվեցին. վաղո՛ւց,
շատ վաղուց էր, երբ վերջին անգամ նա խժռել էր հոբելյա-
նական մի հավաքույթի ճոխ սեղան:

Գինին թուլացնել սկսեց լեզվի կապանքները, մտքերը
թև առան, թռան հեռո՛ւն, «դեպի երկիր», նեբրովթ ու Սիփան,
Տարոն ու Վան: էլ «անկախ», էլ «ա՛խ Հայաստան», էլ «երբ
պիտի գա հայ թագավոր, դրոշակներ ծածա՛ն, ծածան» (այս- 10
տեղ նախկին մինիստրը դեմքը խոժոռեց, նա ուզեց փաստա-
ցի ուղղում անել, թե Հայաստանը ռամկավար հանրապետու-
թյուն պիտի լինի, բայց բարվոք համարեց լռել):

Քիրաջյանը ճառեց: Նա ասաց, որ ինքը եկել է Հայաս-
տանի ճահիճները շորացնելու, նոր ջրանցքներ շինելու և այդ
բոլորը կատարում է «չքնաղ Արմենիո» համար: Եվ բոլորը
միասին բաժակները շորացրին, գինին վետ-վետ խայտալով
կոկորդից վար հոսեց:

Տիկին Վարդուհին հուզմունքից համարյա թե լալիս էր,
խսկ սրբազանն ավելի էր մերձենում նրան: Մութ էր ուղեղի 20
մեջ, և չգիտեր նա, թե ինչու այդպես առույգ է, գինի՛ն է ջեր-
մացնում, թե տիկնոջ ազդերը պառավ:

— Ա՛յ, հասկանում եմ, լազաթ կա էլի՛, սրբազան, ապա
ափսոս չի՞ լավ կամպանյան, — ասաց կաղլիկ օբմինը:

— Այո՛, այո՛, ամենայն ինչ անցավոր է...

Քիրաջյանը սկսեց երգել: Նրա ձայնը հնչում էր «Բամբ,
որոտան», որպես խոշոր թմբուկի թնդյուն:

— Երբ որ բացվեն դռներ հուսո...

— Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ...

— Սավետ, սավետ, ասա սավետ էլի, — բարձրաձայն 30
կանչեց ճարպագունդը վերջին:

— Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա...

— Պարլամենտ, պարլամենտ, — ճոճանակի պես օրոր-
վելով ոտքի կանգնեց նախկին մինիստրը և զգացման առա-
տությունից գինու բաժակը ջարդեց: Հուսո դռները ավելի բաց-

վեցին, համարյա կրնկահան եղան, և հարբած ուղեղներում
խելացի միտքը դարձավ հազվագյուտ:

... Քաղաքը հոգնած վաղուց էր քնել ամառվա կարճ և
անհանգիստ քնով: Փողոցներում միայն ուշացած անցվորի
կարելի էր հանդիպել և պահակների, որոնք մերթ ընդ մերթ
սուլում էին:

Քիրաջյանը վերադառնում էր տուն «Պետրոս Գետա-
դարձի» ուսին հենված: Խեղճը հազիվ էր դիմանում այդ ծան-
րության, բայց չէր տրտնջում, թե չէ փողոցում Քիրաջյանը
10 կարող էր փռվել հասակով մի, և կստացվեր «ազգային խայ-
տառակչություն»:

Իր սենյակը մտնելուց առաջ՝ Քիրաջյանը փորձեց ըստ
սովորույթի մի անգամ էլ Արարատի կողմը նայել, բայց
գլուխը դիպավ լվացարանի մարմարին, նա մրթմրթաց քթի
տակ «չքնաղ Արմենիո» մասին և ընկավ մահճակալի վրա,
առանց Արարատը տեսնելու:

• • •

Քիրաջյանը Երևանում մնաց մի ամսի շափ: Զեկուցումներ
էր կազմում, տեղեկություններ էր հավաքում ձահիճները շո-
րացնելու մասին, կենսովիճվարի հետ պայմանագիր էր հաստա-
տում Հաբեշխտանի մարդասիրական կոմիտեից գրամեքենա
20 ստանալու, այցելում էր Ղևոնդ սրբազանին, տիկին Վարդուհուն
և ուրիշ շատերի, քիթը վեր էր քաշում, երբ փողոցով բահերն
ուսին անցնում էին պատկոմները շարեշար, կանչում էր ինժե-
ներների, տեխնիկների, պլան էր խնդրում, հաշիվներ էր կազ-
մում, հետաքրքրվում էր Հայաստանի բնակչության մահ ու
ծնունդով, ուտում էր «լուլա-քեպապ» սմաղով և առանց սմաղի,
արհեստավորաց դպրոցի ծրագիր էր կազմում, առավոտյան մի
ժամ ատամներն էր լվանում, օժում իրեն անուշահոտ ջրերով,
օրը երկու թաշկինակ փոխում, ժամերով նայում Արարատի ձյու-
նապատ գագաթին, հոգու խորունկ թաքստոցներում որոճում
30 «սեփական» մտքեր և այդ ամենից հոգնած նետում իրեն լայն
ու արձակ մահճակալի երկաթե զսպանակների վրա:

Մի անգամ էլ Սենդին նրան տեսավ Նորքի քաղերում,
օրիորդ Վիտուշի հետ: Քիրաջյանը ոտքերը մկրատի բերանի

պես շոյել էր՝ մարմնի կշիռը հավասար պահելու և, խոնավ շըր-
թունքները ծպպցնելով, ինչ-որ բան էր ասում օրիորդ Վիտուշին:
Վիտուշն էլ ոտքերը անշնորհք քսում էր իրար, ինչպես ճանճն է
քսում՝ շաքարը լիզելուց հետո: Սենդիին ծպտաց քթի տակ. միտն
քնկավ Քիրաջյանի խոսքը «ազգին Ֆիզիքն ազնվացնելու մա-
սին»:

Սենդիին նրան Դավմայի այգիների մոտ տեսավ: Այն հար-
ցին, թե որ քամին է նրան քաղաքից այսքան հեռու բերել, Քի-
րաջյանը պատասխանեց, թե «հողերը դիտելու եկած եմ»:

էլ նրան շտեսավ:

10

Քիրաջյանը վերադարձավ՝ պատմելու ազգային սրտերին
հայրենիքի վերաշինության մասին, ասելու, որ «հոն ալ պատ-
վական հայեր շատ կան»: Նա իր հետ տարավ մի քանի արկղ
տեղեկություններ, քաղվածքներ, պլան ու նախահաշիվ, կանո-
նագիր ու ծրագիր, նամակ ու լուսանկար: Արկղներում էր
«Պետրոս Գետադարձի հրաշագործության պատմությունը», Ղե-
վոնդ սրբազանի կոնդակը հավատացյալ հոտին, տիկին Վար-
դուհու բարեագիրը այն ջահել կամավորին, որ գնաց ու շե-
կավ:

Քիրաջյանը գնացքում տեղավորվել էր առք փառք, նա **20**
բացել էր մի մատյան և իր վերջին հուշերն էր նոթագրում
«մշտականաչ կիպարիսի» մասին:

— Իմալ անուշ ֆոտ կուտա իսա մարդու ճակետ,— ասաց
մշեցի մի գյուղացի, գնացքում նրա մոտով անցնելիս:

Նա չսեց: Գնացքն արգեն Անիին էր մոտենում: Արարատի
գագաթը ամպի ճերմակ քուլայի պես էր երևում:

Գնացքի պատուհանից նայում էր Քիրաջյանը ամպի քու-
լային, Ախուրյանին, և նրա մտքի առաջ ցցվում էր ազգային
պատվիրակը, Վիլսոնը հանգուցյալ, հայասիրաց միությունը,
մըսթըր Բյուքը, որ գեսաւան էր և խոսք էր տվել Հայաստանի **30**
անկախությունը պաշտպանել, եթե Հոլանդիան իր համաձայ-
նությունը տա:

— Ձեր տոմսակը,— լսեց նա հատու մի ձայն ու շփոթ-
ված տոմսակը փնտրել սկսեց:

Խիստ և հարկու մի ուժ տեսավ նա այդ ջահել պատանու
մեջ, որ լրջմիտ իր պաշտոնն էր կատարում: Նրա մարմինը

փշաքաղվեց ավելի, երբ մտաբերեց, որ Ղևոնդ սրբազանն անուժ է, նախկին ռամկավար Ադիլյանը զառամ է, հետևորդ շունի, իսկ պատկոմները միշտ երգում են՝ «Գնանք դեպի կարմիր ապագա...»:

Մուժը իջավ, պատեց սար ու ձոր, գիշերը մի թանձր սավանով ծածկեց Շիրակի դաշտերն արգավանդ, և մութի հետ մի խուլ կասկած՝ օձի պես սողաց Քիրաջյանի ներսում: Նա կծկվեց անզոր, կուշ եկավ անկյունում:

10 Գնացքի անիվների դղրդոցը միալար՝ կարծես կրկնում էր անընդհատ, որ էլ երբեք, երբեք նա չի տեսնելու Արարատի գագաթը ճերմակ...

• • •

Ամիսներ անցան:

Մրգառատ աշունն եկավ՝ շիրայով համեղ, նուռ ու խաղողով: Զյունի պես սպիտակ մարգերը բամբակի փովել էին: Մի ուրախ շունչ եկավ ոսկեզույն խաղողի հետ, բամբակի բարդանների հետ: Հնձանի մոտ, մահառով հարբած կատեպանը ծոր էր տալիս.

— Նուան կլեպ պոռոշ...

20 Սենդին սիրում էր բարձրանալ վեր, նստել ձորի գլխին և իրիկվա դեմ նայել քաղաքին: Զորի մեջ Զանգին էր աղմկում խուլ վշշոցով, և երբ մուժը ուղտերի դանդաղ քայլվածքով իջնում էր սարերից դեպի տափարակն անձայր, նա լսում էր մի անուշ զրնգոց, ասես արևառ դաշտերն էին զրուցում իրիկվա հովի հետ:

Մուժը թանձրանում էր, հալվում էին մութի մեջ ամեն ինչ, և շարահճի աչքերի պես թարթում էին լապտերները լուսառատ:

30 Սենդին մի քնքուշ կարոտով լսում էր ձայները խաղաղ իրիկվա և նայում կարմիր աստղին, որ վառվում էր բարձր, ամենից բարձր, քաղաքը պարուրում շողերով իր կարմիր և գիշերվա մութի մեջ ժպտում չքնաղ ժպիտով...

ОДИН ИЗ МНОГИХ

Село Яйджи издали похоже на груды каменных глыб, беспорядочно наваленных друг на друга. Немного выше полукругом, стоят отвесные скалы, готовые обвалиться от малейшего толчка. Только пожелтевшие скирды сена, коричневые конусы кизяка, да слабый дымок дают знать, что тут село.

Злые волкодавы с лаем встречают нас. Здоровенный парнишка охотно соглашается проводить до сельсовета.

На сравнительно широком дворе весело и шумно играют дети. 10

— Наша школа, — говорит проводник.

Прозвенел звонок, и дети после перемены стали собираться в класс. Передав лошадь парню, я вошел в школу.

Помещение школы ничем не отличается от обычной крестьянской избы. Только стены побелее, как снаружи, так и внутри. Два крохотных окна с железной решеткой напоминают николаевскую предварилку.

Учитель, немного сгорбленный, усталый, на вид флегматик, подошел, поздоровался и любезно разрешил послушать урок. 20

Школа помещалась в одной комнате. Учитель занимался с утра до вечера, сначала с одной группой, потом — с другой, а вечером — в ликпункте.

На неокрашенных, довольно грубых партах сидело человек сорок. Стены голые, нет карты, если не считать испачканный плакат госстраха. В углу большая печь. Толпят кизяком и от этого в классе стоит душный, тяжелый

запах. Ученики по очереди приносят немного кизяку, дневную порцию.

Шел урок армянского языка. Мое присутствие рассеивало внимание учеников и любопытные глаза их то и дело смотрели на меня. Они перешептывались.

Солнце через решетки окон слабо освещало большой класс, погруженный в полумрак.

10 Вошли председельсчета и двое крестьян, громко поздоровались со мной. Я умышленно избегал разговора с ними, дабы не мешать занятиям. Но, видно, так часто практикуется: во время урока входят крестьяне и, отрывая учителя от занятий, говорят ему о личных делах.

Косоглазый мальчик, сидящий на последней парте, все время отвечал первым.

—Косоглазый, а умнее всех, — громко проговорил пред и засмеялся. Засмеялись и ученики. Один только он, униженный своим физическим недостатком, присел обиженно, покраснел и замолк до конца урока.

20 Немного спустя, стоя возле печи, крестьяне беседовали о предстоящем ремонте школы, а учитель объяснял детям, какие бывают звери.

Когда мы вышли, я дал знать товарищу из сельсовета, что на уроках нельзя говорить громко и мешать занятиям.

Почти все дети школьного возраста учатся, но трудно приходится учителю. Нагрузка до истощения. Второй учитель нужен до зарезу.

—Трудно, не по силам, — жаловался учитель, тов. Аршак. — Девятый год я учителем и чувствую, что сил на долго не хватит.

30 После урока пошли к нему. Такая же изба, как помещение школы, только стены почернее. Единственное окно было заклеено намасленной газетной бумагой и от этого было темно в комнате. Пол земляной, но не сырой. Посредине комнаты большой стол, покрытый старыми номерами газеты «Баку». Возле стола — деревянная кровать и та-

буретка, в углу печь, а у входа кувшин с водой. Вот и вся утварь комнаты сельского учителя.

На передней стене какие-то надписи мелом и углем:

...«Давида за кастрюлю и бадейку пуд проса», «Андреаса, сына Манука, еще пуд ячменя».

Видя, что я разбираю надписи на стене, тов. Аршак, улыбаясь, поторопился объяснить в чем дело:

— В прошлом году летом здесь жил лудильщик. Это его заметки, с кого сколько следует.

Тов. Аршак женат, имеет одного сына. Жена из этой же деревни, малограмотная крестьянка, целиком занята домашним хозяйством, варкой и стиркой. 10

— Работы много. Кроме школы состою бессменным секретарем сельсовета. Если кому-нибудь нужно письмо написать, или полученное прочитать, или заявление какое,—все ко мне идут, даже во время урока.

Единственная газета, которую он читает (и то не регулярно), это местная еженедельная «Рачпар». Ему мало известно, что творится в больших городах, в других странах.

И почти все понаслышке. Поедет кто-нибудь из крестьян в город, там наслышится чего-нибудь и приедет, да расскажет в деревне, что Германия заключила договор с Англией против Франции и тому подобную чепуху. 20

А у т. Аршака недоконченное среднее образование. Девять лет тому назад он в последний раз оставил Баку и приехал на родину. С тех пор безвыездно живет в селе. И как-то растворился в гуще крестьянской, стал почти таким же, как все крестьяне. Только старается быть хорошим учителем, не отстать хотя бы от жизни уездного города. 30

— Еще недостаток. Из-за жалованья приходится идти в город. А отсюда до города порядочно, верст восемнадцать. Жалованье выдают неаккуратно, иногда по частям.

На столе книги, полученные от наробраза. Книги общеобразовательного содержания, есть и о трудовой школе,

о комплексном методе. Они еще не разрезаны и толстый слой пыли, указывающий на истекшее время, покоится на них.

— Некогда читать. Придешь усталый, поешь немного, сейчас же клонит ко сну.

Жена тов. Аршака хлопочет возле печки, варит ужин. Она такая же стыдливая и «немая», как и остальные крестьянки. Со мной разговаривает мимикой, с мужем при мне — шепотом.

10 Тов. Аршак снимает лапки и сидит на корточках, предоставляя мне табуретку. Курит он табак — зеленоватые листья с мусором, — аккуратно скручивая «цыгарку» из газетной бумаги.

На мой вопрос, почему не выписывает газету для себя, он как-то беспомощно покачал головой, улыбаясь улыбкой много работавшего и уставшего человека.

— Что же, выпишу. Адреса не знаю. Наробраз ничего не говорил нам про это...

20 Единственное удовольствие для него — это дни, когда он идет за жалованьем в город. Проведет он там день, два и со свежими впечатлениями возвращается обратно в свое село с конусами кизяка, с кривыми улочками, в свою школу.

— Много дают и летние курсы по подготовке учителей. Уже два года, как они бывают у нас. Как-то хорошо на курсах, свежо. А то среди этих скал совсем пропадешь, — жалобно, с какой-то труппью одинокой души говорил он.

30 Беседовали долго, до поздней ночи. Все было ново и интересно для него: достижения авиации и радио, учительский съезд и тепловоз. Он дал слово выписать газету, чтобы подробнее узнать про все то, о чем говорили мы в этот вечер.

На следующее утро, когда прощался с ним, он вышел из класса проводить меня и крепко пожал мне руку.

— Напишу я в газету про твою жизнь, тов. Аршак, — сказал я ему.

— Ну, кто я! Пишите о радио, об аэроплане, — ответил он добродушно и вошел в класс.

ՇԱՏԵՐԻՑ ՄԵԿԸ

Յայլի գյուղը հեռվից նման է իրար վրա անկարգ թափված քարակույտերի: Փոքր-ինչ վերև կիսաբլուրածև կանգնած են դիք ժայռերը՝ պատրաստ ցած փլչելու նվազագույն ցնցումից: Միայն խոտի դեղնած դեղերը, աթարի դարչնագույն բուրգերն ու բարակ ծուխն են մատնում, որ այստեղ գյուղ է:

Կատաղի գելխեղղները հաշոցով են դիմավորում մեզ: Մի հսկայամարմին տղա սիրով հանձն է առնում մեզ մինչև գյուղ-խորհուրդ ուղեկցել:

10 Համեմատաբար ընդարձակ մի բակում գվարթ ու աղմկոտ խաղում են երեխաները:

— Մեր դպրոցն է, — ասում է մեր ուղեկցորդը:

Զանգը հնչեց, և երեխաները դասամիջոցից հետո սկսեցին հավաքվել դասարան: Զիս տղային տալով՝ ես մտա դպրոց:

Դպրոցի շենքը ոչնչով չի տարբերվում սովորական գյուղական խրճիթից: Միայն պատերն ավելի սպիտակ են թե՛ դրսից, թե՛ ներսից: Երկաթե ճաղերով երկու փոքրիկ պատուհանը նիկոլայի ժամանակվա նախնական կալանքի բանտախուց են հիշեցնում:

20 Ուսուցիչը՝ մի քիչ կորամեջք, հոգնաբեկ, տեսքից ֆլեգմատիկ, մոտեցավ, բարևեց ու սիրով թույլ տվեց դասը լսել:

Դպրոցը տեղավորված էր մի սենյակում: Ուսուցիչը պարապում էր առավոտից իրիկուն, նախ մեկ, հետո մյուս խմբի հետ, իսկ երեկոյան՝ լիկկայանում:

Չներկած, բավական կոպիտ նստարաններին մոտ քառասուն հոգի էր նստած: Պատերը մերկ են, քարտեզ չկա, եթե շհաշվենք պետապի կեղտոտված պլակատը: Անկյունում մեծ վառարան: Աթար են վառում, և դրանից դասարանում խեղդող, ծանր հոտ է: Աշակերտները հերթով մի քիչ աթար են բերում, օրվա վառելիքը:

Հայոց լեզվի դաս էր: Իմ ներկայությունը շնդում էր աշակերտների ուշադրությունը, և նրանց հետաքրքրասեր աչքերը շուտ-շուտ ինձ էին նայում: Նրանք իրար մեջ քշփշում էին:

Արևը լուսամուտի ճաղերի միջից թույլ լուսավորում էր 10 կիսախավարի մեջ թաղված մեծ դասարանը:

Մտան գյուղխորհրդի նախագահն ու երկու գյուղացի, բարձրաձայն բարևեցին ինձ: Ես դիտավորյալ խուսափում էի նրանց հետ զրույցի բռնվելուց, որ շխանգարեմ պարասյունները: Բայց, երևում է, դա ընդունված բան է. դասի ժամանակ ներս են մտնում գյուղացիները և, ուսուցչին դասից կտրելով, խոսում են անձնական գործերից:

Մի շիլաք երեխա, վերջին նստարանին նստած, ամբողջ ժամանակ առաջինն էր պատասխանում:

— Տես է, շաշ ա, բայց բոլորից խելոք ա,— բարձր ասաց 20 նախագահն ու ծիծաղեց: Աշակերտներն էլ ծիծաղեցին: Միայն ինքը, իր ֆիզիկական թերությունից նվաստացած, վիրավորված տեղը նստեց, կարմրեց ու ձայնը կտրեց մինչև դասի վերջը:

Մի քիչ անց, վառարանի մոտ կանգնած, գյուղացիները խոսում էին դպրոցի առաջիկա վերանորոգման մասին, իսկ ուսուցիչը բացատրում էր երեխաներին, ինչպիսի գազաններ են լինում:

Երբ մենք դուրս եկանք, ես գյուղխորհրդի ընկերոջը հակացրի, որ դասերին շի կարելի բարձր խոսել ու խանգարել 30 պարասյուններին:

Դպրոցական տարիքի բոլոր երեխաները սովորում են, բայց ուսուցչի գործը ծանր է: Ուժասպառության աստիճան ծանրաբեռնված է: Խիստ մեծ է երկրորդ ուսուցչի պահանջը:

— Դժվար է, ուժից վեր,— դանգատվում է ուսուցիչը՝

ընկ. Արշակը:— Իննեորդ տարին է, որ ուսուցիչ եմ և զգում եմ, որ ուժերս շատ չեն բավականացնի:

Դասից հետո գնացինք նրանց տուն: Նույնպիսի խրճիթ է, ինչ որ դպրոցի շենքը, միայն պատերն ավելի սև են: Միակ լուսամուտին լրագրի յուղած թուղթ էր փակցրած, և դրանից սենյակում մութ էր: Հատակը հողից էր, բայց խոնավություն չկար: Սենյակի մեջտեղը մեծ սեղան, «Բաքու» թերթի հին համարով ծածկված: Սեղանի մոտ փայտե մահճակալ ու աթոռ, անկյունում վառարան, իսկ մուտքի մոտ կժով ջուր: Ահա և գյուղական ուսուցչի սենյակի ամբողջ կահավորանքը:

10 Առջևի պատին կավիճով ու ածուխով արված ինչ-որ գրություններ կան.

«Դավթից պղնձի ու բաղյայի համար մի փութ կորեկ», «Անդրեասից՝ Մանուկի որդուց, ևս մի փութ գարի»:

Տեսնելով, որ փորձում եմ կարդալ սլատի գրությունները, ընկ. Արշակը ժպտալով շտապեց բացատրել բանն ինչ է.

— Անցյալ տարի ամառն այստեղ կլայնգործ էր ապրում: Նրա նշումներն են, ումից ինչքան ստանալիք ունի:

20 Ընկ. Արշակն ամուսնացած է, ունի մի տղա: Կինը նույն գյուղից է, կիսագրագետ գեղչկուհի, ամբողջությամբ զբաղված է տնային տնտեսությամբ, եփել-թափելով:

— Աշխատանք շատ կա: Դպրոցից բացի գյուղխորհրդի մշտական քարտուղարն եմ: Եթե մեկին նամակ է պետք գրել կամ ստացածը կարդալ կամ մի դիմում դրել, բոլորն ինձ մոտ են գալիս, նույնիսկ դասի ժամին:

Միակ լրագիրը, որ կարդում է (այն էլ ոչ միշտ) տեղական «Ռաշպարն» է: Նա շատ բան չգիտե, ինչ է կատարվում մեծ քաղաքներում, ուրիշ երկրներում:

30 Եվ գրեթե ամեն ինչ իմանում է՝ սրանից նրանից լսելով: Գյուղացիներից մեկը քաղաք կգնա, այնտեղ մի բան կլսի ու կգա գյուղում կպատմի, որ Գերմանիան Անգլիայի հետ Ֆրանսիայի դեմ պայման է կապել ու դրա նման այլ հիմարություններ:

Իսկ ընկ. Արշակը թերի միջնակարգ կրթություն ունի: Ինը տարի առաջ նա վերջին սնդամ թողեց Բաքուն ու եկավ հայրենիք: Այն ժամանակվանից մշտապես ապրում է գյուղում: Եվ մի

տեսակ ձուլվել է գյուղացիների տարերթին, դարձել համարյա մյուս գյուղացիների պես: Միայն աշխատում է լավ ուսուցիչ լինել, ետ շմնալ գոնե գավառական քաղաքի կյանքից:

— Մի ուրիշ թերութուն էլ կա: Ռոճիկի համար ստիպված քաղաք ենք գնում: Իսկ այստեղից քաղաք ահագին ճանապարհ է, մի տասնութ վերստ: Ռոճիկը անկանոն են տալիս, երբեմն մաս-մաս:

Սեղանին ժողկրթբաժնից ստացած գրքերն են, որոնք հանրակրթական են, կան գրքեր նաև աշխատանքային դպրոցի և կոնպլեքսային մեթոդի մասին: Նրանք դեռ թղթատված չեն, 10 և փոշու հաստ շերտ կա վրաները, որ ցույց է տալիս, թե շատ ժամանակ է անցել:

— Կարդալու ժամանակ չկա: Հոգնած գալիս ես, մի բան ուտում, իսկույն քունդ տանում է:

Ընկ. Արշակի կինը դործ է անում վառարանի մոտ, ընթրիք է պատրաստում: Նա էլ մյուս գեղջկուհիների պես ամաշկոտ ու «չխոսկան» է: Ինձ հետ նշաններով է խոսում, իմ ներկայությամբ ամուսնու հետ՝ շշուկով:

Ընկ. Արշակը հանում է տրեխները, պազում, աթոռը ինձ տրամադրելով: Թութուն է ծխում (կանաչավուն տերևներ՝ 20 աղբի հետ խառը), լրագրի թղթով խնամքով «ծգարա» է փաթաթում:

Իմ հարցին, թե ինչու իր համար լրագիր չի գրվում, նա մի տեսակ անօգնական օրորում է գլուխը, ժպտալով՝ շատ աշխատած ու հոգնած մարդու ժպիտով:

— Ինչ կա որ, կգրվեմ: Հասցեն չգիտեմ: Ժողկրթբաժինը մեզ դրա մասին ոչինչ չի ասել:

Միակ հաճույքը նրա համար այն օրերն են, երբ գնում է քաղաք ոռճիկ ստանալու: Մի-երկու օր կմնա այնտեղ և թարմ տպավորություններով կվերադառնա աթալի բուրգերով, ծուռ 30 փողոցներով իր գյուղը, իր դպրոցը:

— Շատ բան են տալիս նաև ուսուցիչների պատրաստման ամառային դասընթացները: Արդեն երկու տարի է, մեզ մոտ կան: Մի տեսակ լավ է լինել դասընթացին, թարմութուն կա, թե չէ էս ժայռերի մեջ լրիվ կկորչես, — խղճալի, միայնակ հոգու թախիծով ասում է նա:

Զրուցում ենք Երկար, մինչև ուշ գիշեր: Ամեն ինչ նոր է ու հետաքրքիր նրա համար՝ ավիացիայի և ռադիոյի նվաճումները, ուսուցիչների համագումարն ու ջնրմաբարշը: Նա խոստացավ թերթ գրվել, որ մանրամասն իմանա ամեն ինչի մասին, որ խոսեցինք այդ գիշեր:

Մյուս առավոտ, երբ հրաժեշտ էի տալիս նրան, նա դասարանից դուրս եկավ ինձ ճանապարհ զցելու և ամուր սեղմեց ձեռքս:

— Ես կգրեմ թերթում քո կյանքի մասին, ընկ. Արշակ,—
10 ասացի նրան:

— Է՛, ո՞վ եմ ես: Ռադիոյի, անրոպլանի մասին գրեցեք,— բարեհոգի արձագանքեց նա ու մտավ դասարան:

БАГРАТАВАН

Все горы и дороги занесены снегом. Конь с трудом пробивает себе путь по снегу. Резкий ветер бьет прямо в глаза. Осталось еще много пути, но сумерки уже насаждают, и я спешу до ночи добраться до места.

Держу путь в Багратаван, заброшенную далеко в горах Зангезура деревню, в 70-ти верстах от Герюсы.

10 Багратаван и его район — особый мирок. Он находится на высоте 7.000 футов. На его прекрасных пастбищах паслись в былые времена лучшие породы коров и овец. Молочные продукты Багратавана были известны далеко за его пределами и высоко ценились на рынке.

Багратаван был скорее городом, чем деревней. До войны в Багратаване было два маслоделательных и сыроваренных завода, несколько магазинов, кредитные и другие общества.

20 Багратаван (Базарчай) был населен молоканами, переселенными сюда из России царским правительством, которое предоставило им лучшие земли. Соседние села не имели столько земли и такого достатка. «На полях Базарчая, — говорили в старину, — никогда не заходит солнце». Такое несправедливое распределение земель создало большие трения между базарчайцами и крестьянами других сел.

Война разорила Базарчай и нарушила его мощное хозяйство. Через Багратаван прошло много искателей приключений: «хумбы», предводители которых разобрали

по рукам скот и другие богатства села. Жители разбежались. Молокане переселились на Кубань и в другие места.

Сейчас в Багратаване живут молokane и армяне, переселившиеся сюда из окрестных сел. Молокан до четырехсот человек, возвратившихся сюда лишь при Советской власти.

* * *

Было совершенно темно, когда я добрался до Багратавана. Проезжая по улице, я услышала шум из одного дома. Окна дома светились. Заглянув в окно, я увидел собрание молokane. Одни за другим подходили к столу люди, подписывали какую-то бумагу и отходили. Мне показалось, что я присутствую на прыгунском собрании. 10

Молодой парень вышел из дому и провел меня в комнату. На мой вопрос он ответил с улыбкой:

— Ничего, мы получили платья и материи от Амеркома и парни шумят при раздаче.

Мой проводник оказался братом сельского учителя. Скоро явился и учитель. Павел Кузьминин, безусый и безбородый. Симпатичная личность. Занят одной мыслью — восстановить школу, устроить школу. 20

Павел выражал сомнение, чтобы в этот вечер можно было созвать собрание. Я согласился. Нужно было обогреться, высушить платье, отдохнуть.

Вошел в комнату армянин, приняв меня за должностное лицо, стал жаловаться, что его притесняют. Дело в том, что воспользовавшись отъездом молokane в 1918 году, жители соседних армянских сел заняли молokane дома. Затем вернулись молokane. Вот, между ними происходят по этому поводу трения. Вошедший жаловался, что у него отобрали одну комнату и передали Павлу Кузьмину, которому раньше принадлежал дом. Жаловавшийся говорил так настойчиво, что пришлось пройти вместе с ним в его комнату, находившуюся тут же, рядом с квартирой Павла, учителя. 30

Обширная комната, в углу русская печь, а рядом тут же тундир, устроенный новым жильцом.

— Но ведь тундир дымит?! Русская печь гораздо лучше.

Собеседник мой, однако, остался при своем мнении.

Через несколько минут вошел Павел с котомкой в руках. Он принес «платье», полученное час назад при дележе. Ему достались поношенный сюртук, панама, ботинки и бумага.

10 — Ни к чему не годны! Продам, куплю тужурку.

В панаме нашлось письмо. Свои пожелания благотворитель заканчивает словами:

«Оставайтесь покорным слугой Христа».

Павел читает и смеется.

Собираются крестьяне. Начинаются жалобы на неправильное распределение платья. Одни жалуются на то, что ему дали меньше, чем другому, другой говорит, что он получил шесть мужских шляп, между тем дома мужчин, кроме него самого, нет.

20 Павел больше интересуется новостями из внешнего мира. Ведь в селе почти не получают газет, а приезжие из города заносят случайные номера.

Павел показывает крестьянам номер крестьянской газеты, найденный у меня. Любуются рисунками.

— Вот, посмотри, как нужно доить корову, — говорит Павел, показывая рисунки в газете.

— Я бы отлично доил сам, но нет у меня коровы, — вздыхает Парамонов.

В деревне много хозяйств, не имеющих вовсе скота.

30 Только начинают обзаводиться скотом. Крестьяне знают толк в рациональном скотоводстве.

Крестьяне с большой охотой говорят о породистом скоте, наводят справки о том, где можно приобрести новые плуги и семена. Я советую крестьянам организовать артель для получения кредита. Решаем на следующий

день созвать собрание по вопросу организации сыроваренного завода.

Мы говорили об артели, когда в комнату вошел высокого роста старик с седой бородой. Все, за исключением Павла, встали и почтительно поклонились ему. Старик сказал что-то и вышел вместе с другими.

— Это один из адвентистов, он созывает собрание сектантов.

В Багратаване живут адвентисты и прыгуны. Последние более фанатичны. Каждая секта имеет свою молельню. 10

Вокруг Павла группируются несколько молодых людей. Они «без веры». В селе последних не любят, стараются нейтрализовать.

— Вы не знаете, как фанатичны наши прыгуны. Если бы не боялись, съели бы нас живьем! — говорит Павел.

— Невежественны; не понимают, Павел! — говорит Уляша, подкладывая в самовар угли.

На селе слабая ячейка комсомола, руководителем которой является Павел.

— Прыгуны не позволяют своим сыновьям посещать наши собрания. 20

Школа не имеет особого помещения. Армянская и русская школы расположены в одном и том же доме. Каждая школа имеет своего учителя.

На селе есть кооператив, но не всегда в нем бывают товары. Частных лавок нет.

Мы беседуем до поздней ночи. Павел не дает мне покоя. В один вечер он хочет узнать все, что творится на свете, но о чем почти не знают в далеком Багратаване.

На дворе воеет метель. Ветер крепчает. Кажется снег весь дом. 30

— Так у нас продолжается 6 месяцев. Шесть месяцев мы бываем оторваны от мира! — говорит Павел, прихлебывая чай.

Зимний вечер тянется бесконечно. Ветер не унимается. Он хочет, чувствуется, в одну ночь занести снегом все село.

В избе никто не спит.

— Непременно кого-нибудь задушит сегодня буря. Часто так бывает: занесет кого снегом и только через несколько месяцев, когда найдут случайно труп, узнается, что погиб человек.

10 В ночной темноте кружится ветер. Кажется, во мгле кружатся прыгуны и среди них этот седобородый сектант, который так недружелюбно посмотрел на меня и на Павла.

— Если еще один день пробудешь здесь, — говорит Уляша, — все дороги закроются. Не сумеешь выехать.

Я остался в Багратаване еще день. Дороги, действительно, не было. Днем ветер стих.

20 — Видел-ли его, этого человека в черном? — спросил Павел, когда мы вернулись к обеду домой. — Это прыгунский пророк. Все село вышло встречать его, но это большой шарлатан и развратник. Несколько лет назад он в своей печке задушил человека. Все об этом знают. А теперь стал пророком!

— Довольно, Павел, нехорошо! — умоляет Уляша. Да, вдвойне тяжела работа в молоканской деревне.

ԲԱԳՐԱՏԱՎԱՆ

Բոլոր սարերն ու ճանապարհները ձյունով են ծածկված: Ձին դժվարությամբ է ճանապարհ բացում ձյունի միջով: Սուր քամին ուղիղ աչքերիս է խփում: Դեռ շատ ճանապարհ կա, բայց մութն արդեն վրա է տալիս, և ես շտապում եմ մինչև գիշերն ընկնելը տեղ հասնել:

Ճամփա եմ ընկել Բագրատավան, Զանգեզուրի լեռներում կորած հեռու մի գյուղ: Գորիսից 70 վերստի վրա:

10 Բագրատավանն ու իր շրջանը մի ուրույն աշխարհ են: Այն գտնվում է 7000 ոտնաչափ բարձրության վրա: Նրա հիանալի արտավայրերում անցյալներում լավագույն ցեղի կովեր ու ոչխարներ էին արածում: Բագրատավանի կաթնամթերքը հայտնի էր իր սահմաններից դուրս և շուկայում բարձր գին ուներ:

Բագրատավանը ավելի շուտ քաղաք էր, քան գյուղ: Մինչև պատերազմը Բագրատավանում յուղի և պանրի երկու գործարան կար, մի քանի խանութ, վարկային և այլ ընկերություններ:

20 Բագրատավանում (Բագարչայ) մալականներ էին ապրում, որոնց վերաբնակեցրել էր ցարական կառավարությունը՝ տալով նրանց լավագույն հողերը: Հարևան գյուղերը այդքան հող և այդպիսի հարստություն չունեին: Հնում ասում էին՝ «Բագարչայի հողերում արևը մայր չի մտնում»: Հողերի այդպիսի անարդար բաշխումը բագարչայցիների ու մյուս գյուղերի բնակիչների միջև մեծ ընդհարումների պատճառ էր դառնում:

Պատերազմն ավերել է Բազարչայն ու քայքայել նրա հարուստ տնտեսությունը: Բագրատավանի վրայով շատ բախտախնդիրներ են անցել՝ «խմբեր», որոնց պետերը մեջ-մեջ էին արել անասուններին ու գյուղի մյուս հարստությունները: Բնակիչները փախել են: Մալականները քոչել են Կուբան և ուրիշ տեղեր:

Հիմա Բագրատավանում ապրում են մալականներ ու շրջապատի գյուղերից այստեղ տեղափոխված հայեր: Մալականները մոտ շորս հարյուր հոգի են, որ այստեղ են վերադարձել միայն սովետական իշխանության օրոք:

10

* * *

Բոլորովին մութ էր, երբ հասա Բագրատավան: Փողոցով անցնելիս՝ տներից մեկի միջից աղմուկ լսեցի: Տան պատուհանները լուսավորված էին: Ներս նայելով պատուհանից՝ ես տեսա մալականների ժողովը: Իրար ետևից սեղանին էին մոտենում մարդիկ, ինչ-որ թուղթ էին ստորագրում ու մի կողմ քաշվում: Ինձ թվաց, թե ներկա եմ պրիզունների հավաքին:

Մի ջահել տղա դուրս եկավ տնից ու ինձ սենյակ տարավ: Իմ հարցին նա ժպտալով պատասխանեց.

— Բան չկա, ամերկոմից հագուստ ու կտորեղեն ենք ստացել, տղաները վիճում են բաժանելու ժամանակ:

20

Պարզվեց, որ ուղեկցորդս գյուղական ուսուցչի եղբայրն էր: Շուտով ուսուցիչն էլ հայտնվեց. Պավել Կուզմինինը բեղմորուք չունի: Համակրելի անձնավորություն է: Միայն մի միտք ունի՝ վերականգնել դպրոցը, դպրոցը կարգի գցել:

Պավելը կասկած հայտնեց, թե այս երեկո կարելի լինի մարդկանց ժողովի հավաքել: Օս համաձայնեցի: Տաքանալ էր պետք, շորերը շորացնել, հանգստանալ:

Մի հայ մտավ սենյակ, ինձ պաշտոնյա մարդու տեղ դնելով սկսեց զանգատվել, թե իրեն նեղում են: Բանն այն էր, որ 1918 թ. մալականների գնալուց օգտվելով, հարևան հայ գյուղերի բնակիչները գրավել էին մալականների տները: Հետո մալականները վերադարձել էին: Հենց այդ պատճառով էլ նրանց միջև վեճեր էին լինում: Ներս մտած մարդը զանգատվում էր, որ իրենից մի սենյակ վերցրել ու տվել էին Պավել

30

Կուզմինինին, որին առաջ պատկանել էր տունը: Գանգատվողն այնպես համառորեն էր խոսում, որ ստիպված եղանք նրա հետ անցնել իր սենյակը, որ հենց այստեղ էր, ուսուցիչ Պավելի բնակարանի կողքին:

Ընդարձակ սենյակ էր, անկյունում ուսական վառարան, իսկ հենց կողքին էլ նոր բնակչի շինած թոնիրն էր:

— Ախր թոնիրը ծուխ է անում: Ավելի լավ չի՞ ուսական վառարանը:

Զրուցակիցս, սակայն, մնաց իր կարծիքին:

10 Մի քանի րոպեից հետո մտավ Պավելը, ձեռքին մախաղ: «Հագուստն» էր բերել, որ մի ժամ առաջ ստացել էր բաժանումից: Նրան բաժին էր ընկել մի հին սերթուկ, պանամա գլխարկ, մի գույգ կոշիկ ու թուղթ:

— Բանի պետք չեն: Կծախեմ, տուժուրկա կառնեմ:

Պանամայի մեջ նամակ կար: Բարեգործն իր մաղթանքներն ավարտում էր այս բառերով.

«Մնացեք Քրիստոսի խոնարհ ծառայում»:

Պավելը կարդում է ու ծիծաղում:

Հավաքվում են գյուղացիները: Սկսվում են գանգատները

20 շորերի անարդար բաժանումից: Ոմանք գանգատվում են, որ իրենց ուրիշներից քիչ են տվել, մեկ ուրիշն ասում է, թե վեց հատ տղամարդու գլխարկ է ստացել, իսկ տանն իրենից բացի ուրիշ տղամարդ չկա:

Պավելն ավելի շատ հետաքրքրվում է արտաքին աշխարհի նորութուններով: Գյուղում համարյա թերթ չեն ստանում, իսկ քաղաքից եկածները պատահական համարներ են բերում:

Պավելը գյուղացիներին է ցույց տալիս ինձ մոտ գտնված գյուղացիական թերթի մի համարը: Հիանում է նկարներով:

— Այ, տե՛ս, թե ինչպես պիտի կովը կթել, — ասում է Պա-

30 վելը, ցույց տալով թերթի նկարները:

— Ես էլ շատ լավ կկթեի, բայց կով չունեմ, — հառաչում է Պարամոնովը:

Գյուղում շատ տնտեսութուններ կան, որ բոլորովին անասուն չունեն: Նոր-նոր են սկսում ձեռք բերել: Գյուղացիները ուղիղտալ անասնապահութունից լավ են հասկանում: Նրանք մեծ հաճությամբ խոսում են ցեղական անասունների մա-

սին, տեղեկանում են, թե որտեղից կարելի է գութան ու սերմացու ճարել: Ծն գյուղացիներին խորհուրդ եմ տալիս վարկ ստանալու համար արտել կազմակերպել: Որոշում ենք հաջորդ օրը ժողով գումարել պանրագործարան կազմակերպելու հարցով:

Մենք արտելից էինք խոսում, երբ սենյակ մտավ սպիտակ մորուրով մի բարձրահասակ ծերունի: Բոլորը, բացի Պավելից, վեր կացան ու հարգանքով գլուխ տվին: Ծերունին ինչ-որ բան ասաց ու մյուսների հետ դուրս եկավ:

— Դա ազգենտիստներից է, ազանդավորների ժողովի է կանչում: 10

Բազրատավանում ազգենտիստներ ու պրիզուններ են ապրում: Վերջիններն անվելի ժողեռանդ են: Ամեն ազանդ իր աղոթատունն ունի:

Պավելի շուրջը մի քանի երիտասարդ են համախմբված: Նրանք «հավատ չունեն»: Գյուղում դրանց շեն սիրում, աշխատում են շեզոքացնել:

— Դուք չգիտեք, ինչքան մոլեռանդ են մեր պրիզունները: Որ չվախենային, մեզ հում-հում կուտեին,— ասում է Պավելը:

— Տգետ են, շեն հասկանում, Պավել,— ասում է Ուլյաշան, ինքնաեռի մեջ ածուխ գցելով: 20

Գյուղում թույլ է կոմսոմոլի բջիջը, որի ղեկավարն է Պավելը:

— Պրիզունները իրենց տղաներին մեր ժողովներին դալու շեն թողնում:

Դպրոցն առանձին շենք չունի: Հայկական ու ռուսական դպրոցները մի տան մեջ են: Ամեն դպրոց իր ուսուցիչն ունի:

Գյուղում կոոպերատիվ կա, բայց միշտ չէ, որ այնտեղ ապրանք է լինում: Մասնավոր խանութներ չկան:

Մենք զրուցում ենք մինչև ուշ գիշեր: Պավելն ինձ հանգիստ չի տալիս: Մի երեկոյում նա ուզում է իմանալ ամեն ինչ, որ կատարվում է աշխարհում, բայց որի մասին հեռավոր Բագրատավանում համարյա ոչինչ չգիտեն: 30

Դրսում ոռնում է բուբբը: Քամին սաստկանում է: Թվում է, տունը կբջի-կտանի:

— Մեզ մոտ այսպես է լինում վեց ամիս շարունակ: Վեց

ամիս մենք կտրված ենք աշխարհից,— ասում է Պավելը, թեյը կում անելով:

* * *

Չմեռվա երեկոն ձգվում է անվերջ: Քամին շի հանդարտում: Կարծես ուզում է մի գիշերվա մեջ ձյունով ծածկել ամբողջ գյուղը:

Խրճիթում ոչ ոք քնած չէ:

— Բուքն այսօր անպայման մեկին խեղդելու է: Հաճախ է այդպես լինում: Մեկնումեկին ձյունը ծածկում է, և միայն մի քանի ամիս անց, երբ պատահամաբ գտնում են դիակը, իմացվում է, որ մարդ է զոհվել:

Գիշերվա մթնում պտտվում է քամին: Թվում է, մշուշի մեջ պրիգուններն են պտույտ գալիս ու նրանց մեջ այս սպիտակամորուս աղանդավորը, որն այդպես անբարյացակամ նայեց ինձ ու Պավելին:

— Եթե մի օր էլ այստեղ մնաս,— ասում է Ուլյաշան,— բոլոր ճամփաները կփակվեն: Դուրս գալ չես կարողանա:

Ես մի օր էլ մնացի Բագրատավանում: Ճանապարհ, իսկապես որ, չկար: Ցերեկը քամին հանդարտվեց:

— Տեսա՞ր դրան, այդ սև հագած մարդուն,— հարցրեց Պավելը, երբ մենք ճաշին տուն եկանք:— Դա պրիգունների մարգարեն է: Ամբողջ գյուղը դուրս էր եկել դրան դիմավորելու, բայց ինքը հայտնի խաբեբա է ու անառակ: Մի քանի տարի առաջ իր վառարանում մարդ էր խեղդել: Բոլորը գիտեն: Իսկ հիմա մարգարե է դարձել:

— Հերիք է, Պավել, լավ չի,— խնդրում է Ուլյաշան:

Այո՞, մալականների գյուղում աշխատանքը կրկնակի ծանր է:

ПО СЕЛАМ ЗАНГЕЗУРА

I

Маленькая пещера среди скал служит местом ночлега пастухов-подростков. Днем пасут стадо на горах, а к вечеру овец сгоняют под скалы, у которых сторожат их злые волкодавы.

Маленькая пещера-клуб. По вечерам у входа ярко горит костер. Вокруг него сидят пастухи и варят ужин: картошку, чечевичную похлебку или молоко.

Село далеко, в ущелье. Только в неделю раза два 10 спускается кто-нибудь из пастухов в село за хлебом, за солью.

Среди пастухов есть батраки и комсомольцы. У них своя ячейка и строгая дисциплина. Есть секретарь ячейки, читают доклады, в неделю раз бывают собрания.

Секретарь недавно ликвидировал свою азбучную неграмотность. Сидя у коптилки, он составляет на клочке бумаги протокол, выводит буквы, как будто рисует. Иногда он забывает, какая буква как пишется, тогда, открывая свою книжку, ищет эту букву и, найдя ее, самодовольно 20 улыбается.

Вот один из протоколов, составленных секретарем их ячейки. На клочке оберточной бумаги простым карандашом написан порядок дня и начерчены графы.

По первому вопросу в протоколе занесено так: «Реферат прочел доклад», потом черточка и «постановили»: «Поняли все единодушно». Второй вопрос о сквернословии. Решено: «Применить в жизни». Выходит, что ячейка за ругань. Ничуть: они постановили не ругаться. Маленькая «оплошность» секретаря.

10 Дальше — перечень лиц, получивших выговоры кто за драку, а кто за буйство. В конце «слушали» «о священнике Галусте» и решили: «В бога не верить и не пасти овец священника».

II

В сельской школе ставят спектакль. Организаторы целый день бегают, собирают простыни для занавеса, доски, ковры. Нет сцены. Приходится самим на скорую руку устроить и сцену.

Вечером суетня увеличилась.

20 Понемногу стекаются зрители. Пьесу ставят учитель, приказчик кооператива, инструктор пионерской организации и сотрудница почтовой конторы. Она за кулисами (за коврами) пискливым дискантом репетирует «Майр Аракси». Кто-то кричит за сценой:

— Вартуш, нет ли у тебя булавки?

Немного шерсти, пробки, сажки, теста и газетной бумаги, — вот весь грим. Гримирует инспектор по сбору кошевого налога.

Спектакль в селе — целое событие. Мальчишки резвятся, толпятся возле входа, шумят и смотрят через окно на сцену.

30 Понемногу зала наполняется крестьянами. Тут и женщина с грудным ребенком, старик с палкой и крестьяне, — в больших, остроконечных папах, — от сохи, после дневной работы. Они курят и беседуют тихо между собой.

— Сурен, дай молоток, — кричит один из актеров.

Сорвался занавес и пытливая публика смотрит на «разукрашенную» сцену.

Слышно, как сотрудница почты говорит другому.

--- Значит, после твоего ухода я спую.

-- Веревка нужна. Ашот, дай сюда полу...

Ашот за услугу просит разрешения сидеть возле суфлера, который примостился внизу и сидит на корточках.

В зале публика волнуется, кто-то кричит «скорее», аплодируют, словом, как в городе.

— Врам, научи, как поднять занавес...

Наконец сцена готова. Подымают занавес, т. е. снимают булавки и простыни свисают.

10

Посредине сидит «бог» и держит телефонную трубку (из газетной бумаги). Рядом Михаил-архангел, Агаронян. Входит епископ и просит хаши. За сценой, во дворе, ревет осел. В зале хохот, артисты смущаются, а «бог» беседует с ЦК комсомола.

Архангел в лаптях, в дешевом плаще госторга и богородица (сотрудница почты) вместе поют, а снизу аккомпанирует мандолина и «тар».

Через час спектакль закончился. Один из актеров объявляет публике об этом.

20

III

Можно проехать Шушинское шоссе, не заметив, что под скалами у дороги приютилось село Цакер.

На разбитом тарантасе ночью подъезжаем к чайхане, где предстоит ночлег.

Издали слышны громкие детские голоса.

— Вечерняя школа, это дети занимаются, — сказал хозяин чайханы, увидя, что я внимательно прислушиваюсь к этому хору. И он любезно соглашается проводить меня в эту школу.

30

В широкой комнате, освещенной маленькой лампой, с большим столом посередине, на досках примостились подростки.

593

Своим приходом я потревожил их, они замолкли, и удивленные взоры их усталились на меня.

Среди детей выделялся рослый мужик в лаптях, в оборванной одежде. На мой вопрос, кто руководит занятиями,

— Я, — ответил он тихо, тоном провинившегося человека. И рассказал всю историю вечерней школы Цакера...

10 — Село наше далеко, школы нет, учителя не прислали. И я решил заниматься с детьми. В одной газете я читал о том, что Ленин «приказал» уничтожить неграмотность.

— Знает ли кто-нибудь про вас, получаете ли жалование?

— Нет.

Товарищ Михаил, бывший бакинский рабочий, грамоте научился в Баку, а теперь в селе занят своим хозяйством и вечерней школой.

20 Тридцать учеников, добрая половина их пастухи, которые весь день проводят с козами на скалах Цакера, беря с собой свои книжки, а вечером сходятся в школу.

Ученики шепчутся весело, а некоторые продолжают читать вслух урок.

На стене портрет Ильича. И как будто ласковым взором следит он и рад, что бакинский рабочий Михаил в отдаленном, заброшенном селе, творя великое дело, исполняет его заветы.

Смугленькая, худощавая девочка как-то съежилась и, быстро моргая черными глазами, смотрит то на меня, то на книгу.

30 — Чей портрет? — обращаюсь я к ней.

— Ленина, — отвечает она и смущенно опускает голову. Шепот усиливается.

— Кем был Ленин? — задаю ей вопрос.

— Другом трудящихся всего света, — и ее худенькие руки очертили в воздухе круг.

— А кто теперь на месте Ленина?

— Его товарищи.

В чайхане темно.

Все спят.

Лежу на тахте и сквозь сон слышу бодрую, хоровую песню детей.

А угрюмые скалы Цакера, как будто нехотя, эхом отзываются на голоса их, как будто ропщут, что встревожен их многовековой покой.

ՄԵՐ ԳՅՈՒՂԱԵՐՈՒՄ (Բ)

I

Ժայռերի միջի փոքրիկ անձավը պատանի շոբանների գիշերելու տեղն է: Ցերեկը հոտն արածում է սարերում, իսկ իրիկունը ոչխարը քշում են ժայռերի տակ, ուր հսկում են նրանց կատաղի գայլախեղդ շները:

Փոքրիկ քարանձավ-ակումբը: Իրիկունները մուտքի առաջ պայծառ վառվում է խարույկը: Նրա շուրջը նստում են շոբաններն ու ընթրիք են եփում՝ կարտոֆիլ, ոսպով ապուր կամ կաթ:

10 Գյուղը հեռու է, ձորում: Շաբաթվա մեջ միայն մեկ-երկու անգամ շոբաններից մեկը իջնում է գյուղ հաց, աղ բերելու:

Չոբանների մեջ բատրակներ ու կոմսոմոլներ կան: Նրանք բջիջ ունեն ու խիստ կարգապահությոն: Կա բջիջ քարտուղար, զեկուցումներ են կարդում, շաբաթը մեկ ժողով է լինում:

Քարտուղարը նոր է վերացրել իր այբբենական անգրագիտությունը: Ծրագի մոտ նստած թղթի կտորի վրա արձանագրություն է կազմում, գծում է տառերը, ասես նկարում է: Երբեմն մոռանում է, թե որ տառն ինչպես է գրվում, այդ ժամանակ բացում է իր գիրքը, փնտրում է տառը, ու գտնելով, 20 ժպտում է ինքնագոհ:

Ահա արձանագրություններից մեկը, որ կազմել է բջիջ քարտուղարը: Մի կտոր փաթեթի թղթի վրա հասարակ մատիտով գրված է օրակարգը, և սյունակներ են քաշված:

Առաջին հարցի վերաբերյալ արձանագրության մեջ գրված է. «Ռեֆերատը զեկուցում կարդաց», հետո գծիկ և «որոշեցին»՝

«Բոլորը միաձայն հասկացան»: Երկրորդ հարցը հայհոյախոսութեան մասին է: Որոշել են՝ «Կիրառել կյանքում»: Ստացվում է, որ բոլորը հայհոյանքի կողմնակից է: Բնավ: Նրանք որոշել են շահայտել: Քարտուղարի փոքրիկ «վրիպումն» է:

Այնուհետև նրանց անուններն են, ովքեր նկատողություն են ստացել, որը կռիվ անելու, որը իրեն անկարգ պահելու համար: Վերջում «լսեցին» «Գալուստ քահանայի մասին» և որոշեցին՝ «Աստծուն շահվատալ և տերտերի ոչխարը շարածեցնել»:

II

Գյուղի դպրոցում ներկայացում են տալիս: Կաղմակերպիչները ամբողջ օրը վազվզուքի մեջ են, վարագույրի համար սավաններ են հավաքում, տախտակ, գորգեր: Բեմ չկա: Ստիպված են ինքները մի կերպ նաև բեմ սարքել:

Երեկոյան իրարանցումը մեծանում է:

Կամաց-կամաց հավաքվում են հանդիսականները: Ներկայացումը տալիս են ուսուցիչը, կոոպերատիվի գործակատարը, պիոներ հրահանգիչը և փոստի գրասենյակի աշխատակցուհին: Նա կուլիսների (գորգերի) ետևում ծվծվան բարակ ձայնով երգի փորձ է անում՝ «Մայր Արաքսի»: Մեկը բեմի ետևից կանչում է:

— Վարդուշ, մոտո գորոց չկա՞:

Մի քիչ բուրդ, խցան, մուր, խմոր ու լրագրի թուղթ՝ այս է ամբողջ գրիմը: Գրիմը անում է քոչվորական հարկի տեսուչը:

Գյուղում ներկայացումը մեծ իրադարձություն է: Երեխաները թռչկոտում են, խմբվում մուտքի մոտ, աղմկում են ու պատուհանից ներս նայում բեմին:

Կամաց-կամաց սրահը լցվում է գյուղացիներով: Այստեղ են ծծկեր երեխայով մի կին, փայտը ձեռքին մի ծերունի և գյուղացիք՝ սրածայր մեծ փափախներով, գութանից, օրվա աշխատանքից եկած: Նրանք ծխում են ու հանդարտ զրուցում իրար հետ:

— Սուրեն, մուրճը տուր, — բղավում է դերասաններից մեկը: Վարագույրը պոկվել է, ու հետաքրքրասեր հասարակությունը նայում է «զարդարված» բեմին:

Լսվում է, ինչպես փոստի աշխատակցուհին ասում է մյուսին.

— Ուրեմն, հենց որ դու դուրս գնաս, ես երգում եմ:

— Պարան է պետք: Աշոտ, վարագույրը տուր էստեղ...

Աշոտը օգնության դիմաց թույլտվություն է խնդրում նստելու հուշարարի մոտ, որը տեղավորվել է ներքևում ու պպզած նստել:

Գահլիճում հասարակությունը հուզվում է, մեկը կանչում է՝ «շուտ արեք», ծափահարում են, մի խոսքով, ինչպես քաղաքում:

— Վռամ, ցույց տուր, վարագույրը ո՞նց են բացում...

Վերջապես բեմը պատրաստ է: Բացում են վարագույրը, այսինքն՝ քորոցները հանում են, ու սավանները ցած են կախվում:

Մեջտեղում նստել է «աստված» ու հեռախոսի փողն է բռնել (լրագրի թղթից շինած): Կողքին Միքայել հրեշտակապետն է, Ահարոնյանը: Մտնում է եպիսկոպոսն ու խաշ է ուզում: Բեմի ետևից բազում մի էշ զուռ է: Գահլիճում քրքիչ է, դերասանները շփոթվում են, իսկ «աստված» զրույց է անում կոմսոմոլի կենտկոմի հետ:

Հրեշտակապետը՝ տրեխներով, պետառի էժանագին թիկնոցով, և աստվածածինը (փոստի աշխատակցուհին) միասին երգում են, իսկ ներքևից նվագակցում են մանդոլինան ու թառը:

Մի ժամ հետո ներկայացումը վերջացավ: Հանդիսականներին այդ մասին հայտնում է դերասաններից մեկը:

III

Կարելի է անցնել Շուշվա խճուղին, ու շնկատել, որ ժայռերի տակ ճանապարհի մոտ ծվարել է Մակեր գյուղը:

Գիշերը խարխուլ տարանտասով մոտենում ենք շայխանային, որտեղ պետք է գիշերենք:

Հեռվից մանկական բարձր ձայներ են լսվում:

— Երեկոյան դպրոցն է, երեխաներն են պարապում,— ասում է շայխանայի տերը, տեսնելով, որ ես ուշագիտ լսում եմ

այդ խմբական ձայները: Եվ նա սիրով համաձայնում է ինձ տաննել այդ դպրոցը:

Փոքրիկ լամպով լուսավորված ընդարձակ սենյակում, մեջ-
հեղում սեղան, տախտակների վրա տեղավորվել են հրեխա-
ները:

Իմ գալը խանգարեց նրանց, լռեցին ու զարմացած հա-
յացքները հառեցին ինձ:

Երեխաների մեջ աչքի էր զարնում բարձր հասակով մի
տրեխավոր գյուղացի՝ պատառոտված հագուստով: Իմ հարցին,
թե ով է վարում պարապմունքները, նա մեղավոր մարդու տո- 10
նով ցածր պատասխանեց.

— Ես, — ու պատմեց Մակերի երեկոյան դպրոցի ամբողջ
պատմությունը...

— Մեր գյուղը հեռու է, դպրոց չկա, ուսուցիչ չեն ուղար-
կել: Ես էլ որոշեցի երեխաների հետ պարապել: Մի թերթում
կարդացել եմ, լենինը հրամայել է, որ անգրագիտությունը
վերացնենք:

— Ձեր մասին գիտե՞ն, ոռճիկ ստան՞ում եք:

— Չէ:

Հնկեր Միքայելը՝ բաքվեցի նախկին բանվոր, գրել կարդալ 20
էր սովորել Բաքվում, իսկ հիմա գյուղում զբաղվում է իր տնտե-
սությամբ ու երեկոյան դպրոցով:

Երեսուն աշակերտ, նրանցից կեսը շոբան են, որոնք ամ-
բողջ օրը այծերի հետ են Մակերի ժայռերի վրա՝ հետները
գրքերն առած, իսկ երեկոյան հավաքվում են դպրոցում:

Աշակերտները աշխույժ քչփչում են, իսկ մի քանիսը շա-
բունակում են բարձրաձայն կարդալ դասը:

Պատին Իլլիչի պատկերն է: Եվ կարծես սիրալիք հայաց-
քով նա հետևում է սրանց և ուրախ է, որ հեռու, մոռացված մի
գյուղում, վսեմ գործ կատարելով, իր ավանդներն է իրագոր- 30
ծում բաքվեցի բանվոր Միքայելը:

Սևուկ, նի:ար մի աղջիկ մի տեսակ կծկվել ու սև աչքերը
շուտ-շուտ թարթելով, մեկ ինձ է նայում, մեկ գրքին:


— Ո՞ւմ պատկերն է, — դիմում եմ ես նրան:

— Լենինի: — ասում է նա ու ամաշկոտ՝ գլուխը ցած կա-
խում: Քչփչոցն ուժեղանում է:

- Ո՞վ էր լենինը,— հարցնում եմ նրան:
— Ամբողջ աշխարհի աշխատավորների բարեկամը,— և
նրա նիհար ձեռքերը օդում շրջան են գծում:
— Իսկ ո՞վ է հիմա լենինի տեղը:
— Նրա ընկերները:
Չայխանայում մութ է:
Բոլորը քնած են:
Պառկում եմ թախտին ու քնի միջից լսում եմ երեխաների
աշխույժ խմբական երգը:
10 Իսկ Մակերի մռայլ ժայռերը, կարծես ակամա, արձագան-
քում են նրանց ձայներին, կարծես դժգոհ են, որ խանգարել են
նրանց անդորրը դարավոր:

ԲՆԱԳՐԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ





Բակունցի երկերի այս հրատարակության Բնագրային տարբերակներ բաժնի վերաբերյալ մանրամասն բացատրություններ տրված են առաջին հատորում (էջ 557—560): Այժմ փոքր լրացում ենք անում՝ մասնավորապես այս հատորի տարբերակների կապակցությամբ և շատ սեղմ ամփոփում նախորդ հատորի բացատրությունները:

Բաժնումս ներկայացված են Բակունցի մի քանի երկերի հեղինակային նախնական և հետագա խմբագրումների տարբերությունները: Այս հատորում նախորդի համեմատ քիչ են այն երկերը, որոնք այդպիսի տարբերակներ ունեն, և նրանց միջև եղած տարբերությունների քանակն էլ համեմատաբար փոքր է: Կա նաև մի այլ տոանձնահատկություն. այս հատորում եղած բնագրային վեց տարբերակներից չորսը արդյունք են այն բանի, որ Բակունցը այդ ստեղծագործությունները զետեղել է իր կազմած «Կարմիր արև» դասագրքի մեջ (Ուսման հինգերորդ տարի, Երևան, 1930)՝ փոփոխումներով: Դրանք են՝ «Տրախտորի մաշին», «Քանգին», «Մեր գյուղերում» (Ա), «Օձի բերանից»: Սովորաբար բնագրային տարբերակներ առաջանում են այն պատճառով, որ հեղինակը արդեն հրատարակած երկը (կամ շրագրակած ձևագիրը) բարելավում է, մշակում: Այդպիսի գրական ու լեզվաոճական աշխատանքի արդյունք են առաջին հատորում ներկայացված բնագրային տարբերակները: Ներկա հատորում այդ բնույթի են «Արտելիա» և «Մատուն տղան» երկերի տարբերակները. ընդ որում, նախնական բնագրի մեջ հեղինակի կատարած փոփոխումները շատ քիչ են, տարբերությունները՝ ծավալով գրեթե աննշան: Մյուս չորս երկերում դասագրքի մեջ զետեղելու համար կատարված փոփոխությունները ճիշտ չի լինի զեղարվեստական մշակում համարել: Քեև այդ կարգի բարելավումների տարբեր էլ առկա են, բայց փոփոխությունների հիմնական մեկնակետը մանկավարժական մոտեցումն է եղել. օրինակ, «Օձի բերանից» ակնարկը շատ ծավալուն է, և 5-րդ դասարանի դասագրքում ճիշտ չէր լինի նույնությամբ զետեղել: Ուստի հեղինակը զգալիորեն կրճատել է, բայց ոչ թե զեղարվեստական, այլ մանկավարժական նկատառումով: Այդպիսի կրճատումներ կան նաև «Մեր գյուղերում» (Ա) ակնարկի դասագրքային տարբերակում: Կամ՝ նույն «Օձի բերանից»-ը զետեղելով դասագրքի մեջ, հեղինակը թավաղ բառը հանել է, թեև առաջին հրատարակման մեջ այն բազմիցս է օգտագործված: Պարզ է, այդ ևս արված է մանկավարժական նկատառումով. գրողը ճիշտ չի համարել դասագրքում այդ օտար բառը գործածել (թեև իր հերոսների խոսքում): Իսկ դրա գործածությունը պահպանելու դեպքում պետք էր բացատրություն տալ, թե ինչ է առհասարակ թավաղը, ինչու են վանքապատկան հողերի կառավարչին ևս գյուղացիները թավաղ անվանել և այլն: Մինչդեռ այդպիսի բացատրություն տալու նպատակահարմարություն դասագրքում չի եղել: Նման նկատառումով հերոսի խոսքում

արքայան բառն էլ հեղինակը փոխել է համանիշ նախկնպոս-ով և այլն: «Մեր գյուղե-
րում» (Ա) ակնարկում գյուղացի հերոսների խոսքից հանված են հատկանշական
մի շարք բառեր, ինչպես՝ սկամի, շեր, գյուղաբան, օլպզել էր և այլն (փոխարինված
են արոտ, գրպան, գյուղեր, կանգնել էր բառերով): Սանոթ լինելով Բակունցի գեղար-
վեստական մշակումների բնույթին, կարող ենք ասել, որ նա նշված կարգի փոփոխու-
թյուններ չէր կատարի, եթե նույն 1930 թ. այդ երկերը մշակեր իր որևէ հերթական ժո-
ղովածուի մեջ դնելու նպատակով:

Հարց առաջացավ՝ քննարարյին նման տարբերակներից ո՞րը համարել հիմնական՝
վերջինը, որ դասագրքում է դրված, թե՞ նախորդը: «Տրախտորի մաշինը» և «Թանգին»
դասագրքի մեջ շատ քիչ փոփոխություններով են դրված և մանավանդ առանց կրճատ-
ման. հավատարիմ մնալով մեր ընդունած սկզբունքին, հիմնական քննարկը համարե-
ցինք վերջին հեղինակային հրապարակումը, որ դասագրքինն է: Մյուս երկու գեպքում
(«Մեր գյուղերում», «Օձի բերանից») ստիպված եղանք խախտել այդ սկզբունքը, քանի
որ հեղինակային վերջին հրապարակման (դասագիրք) կրճատումները և մանկավար-
ժական բնույթի մյուս փոփոխումները շատ զգալի էին: Այդ երկերի հիմնական քննարկը
ենք համարել դասագրքին նախորդող հրապարակումները և տարբերակ՝ վերջին (դա-
սագրքային) հրապարակումը:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորի քննարարյին տարբերակներում չեն ներ-
կայացված կետադրական տարբերությունները, տպագրական վրիպակների հետևանքով
գոյացած տարբերությունների մեծ մասը, որոշիչ հոդի լ և ն տարբերակներից մերթ
մեկը, մերթ մյուսը գործածելու հետևանքով գոյացած տարբերությունները: Զուտ ուղղա-
գրական տարբերությունները նույնպես չեն ներկայացված, աննշան բացառությամբ, երբ
ուղղագրական տարբերությունը կարող է ռճական թևկուզ շնչին արժեք ունենալ: Բնա-
կանաբար՝ բամբալ ա / բամբալ է, ոնց ա / ոնց է, գեղում / գյուղում, գել / գալլ և նման
տարբերությունները ուղղագրական չեն, այլ բառաձևային, և ամբողջությամբ ներկա-
յացված են. նույնը վերաբերում է նաև զնդի / զունդի, վնդի / վնիսի, գարիով / գարով
բնույթի տարբերություններին, որոնք ձայնավորը մե՛րթ սղելու, մե՛րթ թողնելու հետ են
առնչված:

Հասկանալի է, որ չեն ներկայացված բակունցյան քննարկում գրողի մահից հետո
արված այն բոլոր փոփոխությունները, որոնք դասական և 1922 թ. ուղղագրությունները
ներգելու արդյունք են:

Առհասարակ բնագրային տարբերակներ բմբռնումը վերաբերում է միայն հեղի-
նակային տարբերակներին, և նշվում են միայն բնագրային աղբյուրներում եղած տա-
րբերությունները, որոնք հեղինակի աշխատանքի արդյունք են կամ, համենայն դեպս, նրա
հրապարակած քննարկում են առկա:

Քննարարյին տարբերությունների ներկայացման կարգը հետևյալն է. թեք գծից՝ /,
ձախ տրված է հատորում տպված հիմնական քննարկի բառը, կապակցությունը կամ նա-
խադասությունը, գծից աջ՝ տարբերակը (կամ տարբերակում եղածը): Սկզբում նշված է
հատորի այն էջը և տողը, որտեղ գտնվում է հիմնական քննարկի տվյալ բառը, կա-
պակցությունը կամ նախադասությունը: Օրինակ.

էջ 76

8 կանանց / կնանոնց (հ2)

Նշանակում է հատորի 76-րդ էջի 8-րդ տողում (հիմն. քննարկը) կա կանանց մեք.

որի դիմաց բնագրային տարբերակում առկա է կնանոնց: (հշ)-ն պայմանական նշան է, որ ցույց է տալիս տարբերակի աղբյուրը, սովյալ դեպքում նշանակում է «Խորհրդային Հայաստան» լրագիր: Եթե (Ձ) է, նշանակում է բնագիրը հեղինակային ձեռագիր է, Լթե (Մ) է նշանակում է «Մարտակոչ» թերթում տպագրված բնագիր և այլն:

Պարբերականների և զբեերի անունների հապավման ցուցակը տրված է Մանրագրությունների սկզբում:

Հատորի ներկա բաժնում՝ բնագրերի մեջ կատարված հեղինակային կրճատումները և ավելացումները նշված են այնպես, որ լրացուցիչ բացատրության կարիք չկա:

«Ա Ր Տ Ե Լ Ի Ա»
(էջ 26)

«Արտելիան» բնագրային երկու աղբյուր ունի՝ հշ (1925, № 206) և Պ: Երկրորդը գիտված է հիմնական բնագիր և տպված հատորում (թեք գծի աջ կողմում տրված են հշ-ի այն հատվածները, որոնք տարբեր են հիմնական բնագրի համապատասխան մասերից. սրանք դժի ձախ կողմում են):

էջ 26:

21—22 ներքև անդունդ է / ներքև անդունդ է (հշ)

էջ 27

- 8 քափ-քտնֆի մեջ / քափ-քտնֆի մեջ (հշ)
- 20 սարուկարգին / սարու կարգին (հշ)
- 22 էլ. ո՛նց ա / էլ ո՛նց է (հշ)
- 36 ցատկոտում / զարկոտում (հշ)

էջ 28

- 15 զեղում / զյուղում (հշ)
- 33 զյուղին է նվիրել / զյուղին են նվիրել (հշ)

էջ 29

26—27 հա ծրից դուրս ա քաշում / հա օծրից դուրս է քաշում (հշ)

29 քամբալ ա / քամբալ է (հշ)

էջ 30

- 24 կարող ա / կարող է (հշ)
- 29 Կելը / Կայլը (հշ)
- 31 ով ա կերել / ով է կերել (հշ)

էջ 31

3 էլ ա փիս / էլ է փիս (հշ)

28 Վնոել է շարունակել նախադասությունից հետո մինչև աստղանիշերը—հշ-ի բնագրում՝ 'Իծվար է դիմանալ խավարի այն աչիին, որ ծառանում է արմատախիլ անելու: մատող տունկը, որ զյուղում քննույլ արմատներ է զցել—Պ-ում չկա: Բացի նշվածներից, հշ-ի բնագրում Եղած զգույլ և անզգույլ ձեերը Պ-ի մեջ առկա են զզույլ և անզգույլ ձեերով, սակայն հիմնական բնագրում այդ բառերը ուղղել ենք հիմք ունենալով հշ-ի բնագիրը (տե՛ս նաև «Արտելիան»-ի ծանոթագրությունները):

«Տ Ր Ա Խ Տ Ո Ր Ի Մ Ա Շ Ի Ն»

(էջ 33)

Ունի բնագրային երեք աղբյուր՝ հւշ (1925, № 221), Գ և ԿԱ: Հիմնական է դիտված և հատորում տպված երրորդ բնագիրը, մյուս երկուսում հիմնականի համեմատ եղած տարբերությունները տրված են թեք զծի աչ կողմում:

էջ 33

25 անխոս հարան էր / անխոս հարս էր (հւշ)

էջ 34

17—18 ձեռքերում դեռ ուժ ունի / ուժերում դեռ ուժ ունի (հւշ, Գ)

22 ասացին / ասեցին (հւշ, Գ)

25 ուզել է / ուզում է (հւշ)

30 Էտեից հասնում է / Էտեից է հասնում (հւշ, Գ)

էջ 35

5 մեջն են լցնում / մեջ են լցնում (հւշ, Գ)

6 բափում է սերմացուն / բափվում է սերմացուն (հւշ)

13 Իսկ տրիերն էլ / Հսկա տրիերն էլ (հւշ)

21 Հավաքված են գյուղացիք / Հավաքվում են գյուղացիք (հւշ)

էջ 36

22 էսպես / էդպես (հւշ)

27 ու հետո / և հետո (հւշ)

էջ 37

7 Գործերը պրծան / Գործերը պրծավ (հւշ)

21 Եվ խոսքը շարունակում է / Եվ այդ դուետից հետո նա խոսքը շարունակում է (հւշ, Գ)

էջ 38

6 գյուղում / զեզում (հւշ, Գ)

Մ Ա Տ Ո Ր Ի Ն Տ Ղ Ա Ն

(էջ 65)

Ունի բնագրային երկու աղբյուր՝ հւշ (1926, № 11) և Գ: Իբրև հիմնական է դիտված և հատորում տպված Գ-ի բնագիրը: Երկու բնագրերի միջև կան հետևյալ տարբերությունները:

էջ 67

5 մանչում էր / մեչում էր (հւշ)

25 Մոռիկայից / Մոսկովից (հւշ)

էջ 68

4, 23 Ետեից / հետեից (հւշ)

31 Նույնիսկ գործը դուր էկավ / Նույնիսկ գործը դյուր էր զալիս (հւշ)

էջ 69

7 Երկյուզ / Երկյուղուց (հւշ)

32 սարերը կանաչին տվին / սարերը կանաչին տվին (հւշ)

էջ 70

9 մի օրավարի վարձն էր ուզում / մի օրավար վարձն էր ուզում (հւշ)

Բանի բնագրային երեք աղբյուր՝ հշ (1926, № 71), Պ և ԿԱ Իրրև հիմնական է քննարկած և հատորում տպված վերջինը: Քեք զծի աչ կողմում սրվում են հշ-ի և Պ-ի բնագրերում եղած այն հատվածները, որոնք տարբեր են հիմնականում բնագրի նույն մասերից:

էջ 72

15 ընկավ / ընկան (հշ, Պ)

24 զնդի / զունդի (հշ)

25—26 աշխարհի Լրեսիև / աշխարհիս երեսիև (հշ)

26 աղբած բոստանը / բոստանը աղբած (հշ, Պ)

էջ 73

2 Ետևև / Ետևև (հշ)

23 Ասես վերչ շպիտի ունենար / Եվ վերչ շպիտի ունենար (հշ)

25 սև հողեր պարարտ / սևահող պարարտ հողեր (հշ)

էջ 74

3 սպեհատ ցորեն / սպե հատ ցորեն (հշ)

9 Ուրախ լուրեր շկան / ուրախ լուրեր շեկավ (հշ)

13 ծնկներ / ծնկեր (Պ)

21 հղակտոր / հղակտոր (հշ)

30 հիմնահատակ / հիմնատակ (հշ)

32 Երկաթե / Երկաթի (հշ)

էջ 75

18 հողերը սելավի բերանն ընկան / հողերը սելավի բերանն ընկավ (հշ)

էջ 76

8 կանանց / կնռնոց (հշ)

14 ՀՍհշ / ՀհՍՀ (հշ)

15 ներհեր / ներհև (հշ)

էջ 77

5 Երկաթե օգերով / Երկաթ օգերով (հշ, Պ)

Մ Ե Բ Գ Յ Ո Ի Ղ Ե Բ Ո Ի Մ (Ա)

(էջ 337)

Մտորե քերված տարբերությունները և նրանց ներկայացման կարգը մյուսներից առանձնանում են. թեք զծի աչ կողմում այստեղ տրված է Հեղինակային վերջին մշակման արդյունքը (որ տեղ է գտել ԿԱ-ում), իսկ ձախում՝ նախնականը, այն է՝ հշ-ի (1925, № 107) բնագրիներ: Պատճառն այն է, որ որոշ նկատառումներով (տե՛ս այս բաժնի սկզբում) «Մեր գյուղերում» (Ա) ակնարկի նախնական բնագիրն ենք դիտել հիմնական, և դրել հատորում, իսկ դասազրթի համար մշակված վերջին բնագիրը՝ համարել ենք տարբերակ:

էջ 337

12 սկամիև / արտոր (ԿԱ)

23 սպարզներով / կոշիկներով (4Ա)

25—26 շերից հանում մի փոքր բուրբ / զբաղանքից հանում է մի փոքր բուրբ (4Ա)

էջ 338

2 վերաբերմունք ա / վերաբերմունք կա (4Ա)

6 Նայած որ էս տարվա—բառերից սկսած մինչև պարբերության վերջը (լավ մտա-
նազետ շկան բառերը, էջ 338, տող 12)—4Ա-ում չկա:

15 շին. / շինարարական (4Ա)

20—21 գյուղարան կա, որ դպրոցի ֆունդամենտը դրել են / գյուղեր կան, որ դպրոցի
հիմքը դրել են (4Ա)

27 վախճան դուրյան մեջ էր / վառ դուրյան մեջ էր (4Ա)

30 Ուզես բանկը / Բանկը (4Ա)

30 վարկ. ընկերության / վարկային ընկերության (4Ա)

31 միջակ և չփավոր / չփավոր և միջակ (4Ա)

էջ 339

8 Պետք է / Պետք ա (4Ա)

17—18 պատասխանում է հարցերին / պատասխանում է բոլոր հարցերին (4Ա)

18 ու հանկարծ մի բան է մտաբերում—4Ա-ում չկա

19 Հա մտառաց ասել—բառերից սկսած մինչև էս երկու տարին դպրոց ունեն բա-
ռերը (էջ 339, տող 36) եղած հատվածը 4Ա-ում չկա:

էջ 340

3 հէ-ի բնագրում՝ Կարն ա գրած, է՛. դուր հետո մտաուր կգրեմ—4Ա-ում չկա:

4 Ձեկուցում է / շետո գեկուցում է (4Ա)

9 560 հատ լծկան / 560 լծկան (4Ա)

11 Պյուղում ունի / Պյուղն ունի (4Ա)

12—13 (տեղից հարցնում են՝ «ի՛նչ», «աշակե՛րտ, ի՛նչ» ժպտալով պատասխանում է
գեկուցողը) / աշակերտ (4Ա)

14 կուլտուրական / կուլտուրական (4Ա)

24—25 շեն հակասո՞ւմ (երևի ուզում էր ասի պակասում) / շեն բացակայում (4Ա)

26 Ձէ՛, շեն հակասում.— պատասխանում է—4Ա-ում չկա:

32 իր արածի / արածի իր (4Ա)

33—34 12 հատ նիստ / 12 նիստ (4Ա)

էջ 341

15 Հարցնում են—բառերից մինչև ձեռք-ձեռք է անցնում—բառերը (էջ 341, տող 19)
եղած հատվածը 4Ա-ում չկա:

21 Զարմացա—բառից մինչև մեր գյուղերում բառերը (տող 22) ընկած հատվածը
4Ա-ում չկա:

23 պալտոն / վերարկուն (4Ա)

27 աշխատանքի / աշխատանքների (4Ա)

էջ 312

4 փութի / փրի (4Ա)

7 պպեյ է գետնին / կանգնել է (4Ա)

12 պիտի անի / պիտի սովորի (4Ա)

14 նանպետական գերդաստան / ընտանիք (4Ա)

608

16 հունձի / 6նձի (4Ա)

20—21 «բիբլար օլաշայ» / («Բիբլենք» կլիճեն) (4Ա)

23—24 շողերի մի խուրձ դիմացի պատին է ընկել / շողն ընկնում է դիմացի պատին (4Ա)

Կ Ա Մ Ա Ն Ո Վ

(էջ 409)

Ունի բնագրային երկու աղբյուր՝ հեղինակային ձեռագիրը (Ձ), և ԽՀ-ի (1927, № 7) բնագիրը (մանրամասն տե՛ս Մանոթագրութուններում), Հիմնական է դիտված ԽՀ-ի բնագիրը: Ստորև տրվում են գրա և ձեռագրի միջև եղած տարբերությունները: էջ 409

18 Առաջներում շատ էին ուխտ գալիս—նախադասությունից հետո Ձ-ում՝ Ասեճ հիմա էլ են գալիս—ԽՀ-ում չկա:

18 Ստեի / Հետեի (Ձ)

18 ուխտ գալիս / ուխտ գնում (Ձ)

էջ 410

16—17 նայեց մեզ / մեզ նայեց (Ձ)

28—29 Օղում կոիվը շարունակվեց միայն մի ֆանի վայրկյան, որովհետև անգղբ բաց բողեց ազվեսին / Օղում կոիվը շարունակվեց միայն մի ֆանի վայրկյան: Անգղբ բաց բողեց ազվեսին (Ձ)

35 ազվեսը վազեց / ազվեսն ինքը վազեց (Ձ)

էջ 411

3 Ոչինչ չէր տեսնում—Ձ-ում չկա (Ձ)

4 Մերունին բաց բողեց ազվեսին / Մի ֆիչ նեա ծերունին բաց բողեց ազվեսին (Ձ)

5 անտատում / անտատի մեջ (Ձ)

12—13 Ջորում մթնեց, բայց աստղալույսի տակ կարելի էր որոշել արանեաք / Ջորում մութ եղավ: Աստղալույսի տակ կարելի էր որոշել արանեաք (Ձ):

15—16 կարելի եղավ տեսնել մարդու պառավ դեմքը / կարելի եղավ տեսնել մարդու ապիտակ մորուքը (Ձ)

էջ 412

1 շուն ու գեղ / շուն գայլ (Ձ)

23 բվաց որպես ֆաղցր կանչ / նենչեց որպես ֆաղցր կանչ (Ձ)

25 տեսանք և շարզված, բեզարած պտակեցիճ / տեսանք, շարզված, բեզարած պտակեցիճ (Ձ)

28 ազվեսը կույր աչքերով / ազվեսը կույր (Ձ)

էջ 413

19 որոշմամբ ֆան ռուրի տուգանք էր տվել / որոշմամբ նա ֆան ռուրի տուգանք էր տվել (Ձ)

25 վնոի / վնիոի (Ձ)

էջ 414

8 շուրջը / շուրջ (Ձ)

12 ար / ար (Ձ)

13 ետ վազել / նետ վազել (Ձ)

19—20 Երեսից կնոջը մտանցրեց / Երեսից Երան մտանցրեց (2)

30 Ետևի / Հետևի (2)

32 մայրը համբուրեց / մարդը համբուրեց (2)

36 Ետևից / Հետևից (2)

էջ 415

3 Ետև / Ետև (2)

6— 7 մի Բանի անգամ Ետ դարձավ / մի Բանի անգամ էլ դարձավ (2)

9 ցույց տվեց ճանապարհը / ցույց տվեց կաժանը (2)

22 Ետ տարան / Ետ տարան (2)

էջ 416

3 Փռչի էր Ետևի փափախին, սպիտակ միտուհի, շորերին / Փռչի էր Ետևի սպիտակ միտուհի, փափախին (2)

4 Երբ մեքենան կամացուկ անցավ / Երբ մեքենան կամացուկ սողալով անցավ (2)

6— 7 տեղից շարժվեց / տեղում շարժվեց (2)

Օ Ջ Ի Բ Ե Ր Ա Ն Ի Ց

(էջ 433)

Ունի բնագրային երկու աղբյուր՝ ԽՂ (1928, № 170) և ԿԱ: Իրրև հիմնական է դիտված և հաստորում գրված առաջին հրատարակումը՝ ԽՂ-ի բնագիրը (բացատրությունը տե՛ս այս բաժնի սկզբում): Ստորև տրված են երկու բնագրերի միջև եղած տարբերությունները:

ԽՂ-ի բնագրի հետևյալ ծավալուն հատվածները շկան ԿԱ-ի բնագրում.

Սկզբից մինչև Ես պատասխան շունեի Երան տալու բառերը (էջ 434, տող 2):

Երբ Չատի բիձան երեխա էր բառերից (էջ 434, տող 13), մինչև տներ են կառուցել բառերը (էջ 434, տող 21):

որ վերջին բառերից (էջ 434, տողեր 22—23) մինչև երբ Չատի բիձան բառերը (էջ 434, տող 24):

Այդ բոլորը մինչև օրս էլ բառերից (էջ 434, տող 28) մինչև փորձող տալով աղերսում բառերը (էջ 436, տող 7):

Բայց այդ միայն բառերից (էջ 436, տող 22) մինչև Ես նյնիսկ սպանել բառերը (էջ 437, տող 33):

Ձիավորները եկան բառերից (էջ 438, տող 23—24) մինչև պապոֆ կատրում բառերը (էջ 438, տող 27):

Վանքի տան բառերից (էջ 439, տող 7) մինչև գյուղ գալուց բառերը (էջ 439, տող 10—11):

Սառած բառից (էջ 439, տող 15) մինչև գերանները բառը (էջ 439, տող 17):

Վանքի տանն էին իջնում բառերից (էջ 439, տող 26) մինչև ճանկերը խոր խոր բառերը (էջ 442, տող 7):

Պրիտտավի վրա բառերից (էջ 442, տող 20) մինչև ձիալ Եմանն ունենա բառերը (էջ 444, տող 3):

Ամեն տեղ բառերից (էջ 444, տող 13) մինչև անցկացնի բառը (էջ 444, տող 15):

Փամբակի բառից (էջ 444, տող 36) մինչև թե ով էր բառերը (էջ 445, տող 5):

Պատերը մնում են բառից (էջ 445, տող 35) մինչև զինվորության մեջ է բառերը (էջ 446, տող 2):

Հարևան գյուղից բառերից (էջ 446, տող 10) մինչև տանում են պրիստավի մոտ բառերը (էջ 446, տող 13):

Ան ու դողով բառերից (էջ 446, տող 16) մինչև մտեր բառը (էջ 446, տող 19):

ԿԱ-ում չկան նաև հետևյալ փոքր հատվածները.

էջ 436, տողեր 13—19. անտառում կողին ու անար ուտելու համար:

էջ 442, տողեր 16—17. Տասը մանեք տար մեկին պարտք, ամեն տեղ կտարածեք, բն ինքն աղբատին ձեռ է բռնում:

էջ 444, տող 26—28. նա հենց կաթողիկոսի մոտն էլ լինում էր: Մեր ցավն աթինք, լսեց, հետո:

էջ 446, տող 13—15. երկուսին էլ:

ԿԱ-ի բնագրում փոփոխված և ավելացված է հետևյալը (ձախ կողմում ԽՀ-ի, աջում ԿԱ-ի տարբերակներն են):

էջ 434

23—24 որ վերջին քսան տարվա ընթացքում ռուր գյուղից դուրս չի դրել, որովհետև շատ է ձեր.— երբ Չատի բիձան / դեռ երեսու էր և (ԿԱ)

էջ 436

8—9 Չատի բիձու պատմությունն ընդհատեց գյուղացիներից մեկը / շարունակում է Չատի բիձան (ԿԱ)

էջ 438

17—18 Քավաղի մարդիկն / վանքի մարդիկն (ԿԱ)

22—23 Քավաղը նրա առաջը կտրում է / նրա առաջը կտրում են (ԿԱ)

28—29 Առաջին կառավարիչ Դարչուն իր թավաղության վերջին տարիներում / վանքի կալվածքների առաջին կառավարիչ (ԿԱ)

33 գարիով / գարով (ԿԱ)

էջ 439

5 և / ու (ԿԱ)

19—20 եզներն էլ շարդվեցին—բառերից հետո ԿԱ-ում՝ պատմությունը շարունակեց ձերունին (ԽՀ-ում չկա):

20 տնում են / տնում էին (ԿԱ)

24 թավաղի մարդիկն / վանքի մարդիկն (ԿԱ)

էջ 444

5, 18, 23 կաթողիկոս / կաթուղիկոս (ԿԱ)

19 նստատեղիներ / նստեցիներ (ԿԱ)

21—22 ո՞րտեղացի ենք / որտեղից եք (ԿԱ)

26 սրբազանի մոտ / եպիսկոպոսի մոտ (ԿԱ)

34 բիձան / բիձեն (ԿԱ)

էջ 445

20—21 բուր ձյուն է շարունակում / բուր ու ձյուն է շարունակում (ԿԱ)

31 ոտնատեղերը / ոտնատեղեր (ԿԱ)

էջ 445

23—34 մեռակ էն, որ տունը քարափի գլխին էր... Եփրեմ էր անունը... երեքից մին նա

էր / մեկը մեր գեղացի Եփրեմն էր, ֆարափի գլխի տան տերը (4Ա)

34 մինչի օրս / մինչև օրս (4Ա)

էջ 445, տող 35—էջ 446, տող 2 պատերը մնում են ֆարափի գլխին... կնիկը գա-
րունգվա դիմ մեռավ. երեսնին էլ բարեկամներ տարան. մեծ աղան հիմա գինվորու-
քյան մեջ է / պատերը մինչև օրս էլ մնում են (4Ա)

էջ 446

10 Տանում են Եփրեմին / Եփրեմին առնում են (4Ա)

14—15 Բայց տեղ չեն հասնում... Ռոստամի մարդիկ վրա են տալիս / Բայց հաճապար-
նին Ռոստամի մարդիկ վրա են տալիս (4Ա)


20 ոնց անց կացան էն օրերը—բաներից հետո 4Ա-ում—հառաչելով վերջացրեց
Չատի քիձան (ԽՀ-ում չկա):

23—24 պարոնն էլ հո խիզն շունեք / պարոնն էլ խիզն շունեք (4Ա)

25—26 էն օրվանից բավադի հետոն էլ չհացավ, վաճֆինն էլ... / էն օրվանից վաճֆի
հետոն էլ չհացավ մեր գյուղից (4Ա):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒՄՅՈՒՆՆԵՐ





Ա. ԲԱԿՈՒՆՑԻ ԵՐԿԵՐԻ ԱՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՅՑՈՒՆՆԵՐԸ
(ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ), ՈՐՈՆՔ ՀԻՇՏԱՍԱԿՎԱՍ ԵՆ
ԵՐԿԵՐՈՐԻ ՀԱՏՈՐՈՒՄ

- Մթնածոր: [Պատմվածքներ]: Երևան, Պետհրատ, 1927, 184 էջ:
Պատմվածքներ: Երևան, Պետհրատ, 1928, 43 էջ:
Սպիտակ ձին: [Պատմվածքներ]: Մոսկվա, ԽՍՀՄ ժող. կենտր. հրատ., 1929, 72 էջ:
Սև ցիլերի սերմնացանը: Պատմվածքներ: Երևան, Պետհրատ, 1933, 203 էջ:
Անձրևը: [Պատմվածքներ]: Երևան, Պետհրատ, 1935, 80 էջ:
Նղբայրության ընկուզենիները: [Համանուն պատմվածքը և կյուրես]: Երևան, Պետհրատ, 1936, 155 էջ:
Երկեր: Երևան, Հայպետհրատ, 1955, 687 էջ:
Ամբողջական գործը երեք հատորով: Բեյրութ, տպ. Սեան, հտ. Ա, 1955, 216 էջ:
Հտ. Բ, 1956, 196 էջ:
Նղբայրության ընկուզենիները: [Պատմվածքներ], Երևան, Հայպետհրատ, 1959, 183 էջ:
Երկեր երկու հատորով: Երևան, Հայպետհրատ, 1964, հտ. 1, 745 էջ: Հտ. 2, 623 էջ:

ՀԱՏՈՐՈՒՄ ԳՐՔԱՍՎԱՍ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԳԳ—«Արվեստ, գրականություն, դիտություն», շաբաթաթերթ, «Գրուխտար» օրաթերթի (Քփղիս) հավելված
ԳԱԹ—Գրականության և արվեստի թանգարան (Երևան)
ԳԴ—«Գրական դիրքերում» հանդես (Երևան)
ԵԲ—«Երիտասարդ բուլղեիկ» հանդես (Երևան)
ԵԸ—Ա. Բակունց Նղբայրության ընկուզենիները (Գրքույկ): Երևան, 1936:
ԶՎ—«Заря Востока» օրաթերթ (Քփղիս)
Ժ—«Ժողովուրդ» լրագիր (Երևան)
ԽՀ—«Խորհրդային Հայաստան» օրաթերթ (Երևան)
Կ—«Կուխտղեիկ» գյուղացիական հանդես (Երևան)
ԿԱ—Կարմիր արև: Ուսման հինգերորդ տարի: Կազմեց Ա. Բ.[ակունց]: Երևան, 1930:
ՀԱ—«Հայաստանի աշխատավորուհի» հանդես (Երևան)
Զ—Զեռագիր
Մ—«Մարտակաշ» օրաթերթ (Քփղիս)
ՄՃԿ—«Մանկալ» օրաթերթ (Երևան)
Ն—«Նորք» հանդես (Երևան)

ՆԱ—«Նոր ակոս» շաբաթաթիթ (Ծրևան)

ՆԱշԽ—Նոր աշխարհ: Ե տարի: Կազմեցին մի խումբ ուսուցիչներ: Ծրևան, 1931: Իրական
կազմողներն են՝ Ա. Բակունց, Խ. Կանայան, Զ. Հարությունյան:

Պ—Ա. Բակունց Պատմվածքներ: Ծրևան, 1928:

ՍԶԺ—Ա. Բակունց Սպիտակ ձին [Ժողովածու], Մոսկվա, 1929:

ԲՆԱԳՐԵՐԸ

Ակսել Բակունցի երկերի դիտական հրատարակության առաջին հատորը, որ լույս
տեսավ 1976 թ., ընդգրկում է հեղինակի պատմվածքների ընտրանին, երեք պատմվածքա-
շարով՝ «Մթնածոր», «ԱԼ ցեների սերմնացանք», «Անձրևը»: Երկրորդ հատորում տեղ են
գտել գրողի մյուս պատմվածքները, ակնարկները և ոչ ծավալուն այլ գեղարվեստական
գործեր, որոնք չեն մտել առաջին հատոր, ինչպես և Վարդան Այգեկցու քառասուն առակ-
ների բակունցյան վերարտադրությունները՝ «Ազվեսագիրքը»:

Ըստ նախնական ծրագրի այս հատորի մեջ պետք է լիներ նաև գրողի «Ջանգեղու»
կինսերմագիրը, բայց հատորը կազմելու ժամանակ պարզ դարձավ, որ նպատակահար-
մար է այն դեռ երրորդ հատորում. նախ երկրորդ հատորի նյութերը սպասածից ավելի
շատ եղան, իսկ «Ջանգեղուրը» համեմատաբար ծավալուն երկ է և, եթե տարբերակի հետ
գրվեր այս հատորի մեջ, ծավալը շատ կմեծանար: Քանի որ երրորդ հատորում ներկա-
յացվելու են հիմնականում գրողի առավել ծավալուն ստեղծագործությունները, «Ջանգե-
ղուրը», իբրև դրանցից մեկը, տարբերակի հետ միասին ավելի ճիշտ կլինի զննել այդ հա-
տորում: Միաժամանակ, «Ազվեսագիրքը», որ ծավալով ավելի փոքր է, նպատակահար-
մար գտանք դեռ ոչ թե երրորդ, այլ այս հատորի մեջ:

Այսպես, երկրորդ հատորում ընդգրկվել են հեղինակի 63 գեղարվեստական ստեղծա-
գործություններ, իսկ «Ազվեսագրքի» 40 առակներն և երկերից մեկի այլ խմբագրության
հետ միասին քնագրերի քանակն այստեղ հասնում է 104-ի:

Երկրորդ հատորի կառուցվածքը նույնն է, ինչ և առաջին հատորինը. ա) Հիմնական
բնագրեր, բ) Այլ խմբագրումներ, գ) Բնագրային տարբերակներ, դ) Մանրագրություն-
ներ: Այս հատորում ավելացված է միայն Հավելված (տե՛ս ծանոթագրությունը ստորև):
Հիմնական քնագրերը ներկայացված են երեք բաժնով՝ 1) Պատմվածքներ և պատ-
կերներ, 2) Ակնարկներ, 3) «Ազվեսագիրք»:

Բոլոր երկերը հատորում տպագրված են ըստ պահպանված քնագրային աղբյուրների.
տվյալ դեպքում դրանք են հեղինակի կենդանության օրոք նրա ստեղծագործությունների
առաջին հրատարակումները՝ հաճախ իր մասնակցությամբ կատարված, ապա՝ դրանց
հեղինակային հաշորդ հրատարակումները (նաև իր կազմած դասագրքերում), հեղի-
նակային ձեռագրերը: Նախապես մամուլում և դասագրքերում հրատարակված և այս հա-
տորում տեղ գտած բակունցյան երկերից միայն մեկի՝ «Կածանով» ակնարկի, ձեռա-
գիրն է պահպանված, այն էլ հիմնականի համեմատ տարբերակ է: Հատորում ընդգրկված
մյուս երկերի ձեռագրերը սպարծեղում չկան, թեև բացառված չէ, որ խմբագրությու-
ններում օգտագործված՝ նրանցից մեկը կամ մի քանիսը գտնվեն (ինչպես Մաշտոցի ան-
վան մատենադարանում պատահմամբ գտնվեցին «Մթնածոր» ժողովածուի տպարանա-
յին ձեռագրերը. տե՛ս առաջին հատորի ծանոթագրությունները): Այս հատորում հրա-
պարակված է նաև մի ձեռագիր (հեղինակային), որը նախկինում երբևէ չի տպագրվել:

Հեղինակի կենդանության օրոք նրա երկերի վերատպումները (մեծ մասամբ կըր-
ճատ) տարբեր անձանց կողմից կազմված դասագրքերում՝ քնադրային աղբյուրի արժեք
չունեն։ ԸՄԵ երկի մեզ ծանոթ առաջին կամ միակ հրատարակումն է գտնվում այլպիսի
դասագրքում, ապա այն քնադրային աղբյուր է դիտված։ Ծնամահու որևէ վերատպում
քնադրային աղբյուրի արժեք չունի։

Հատորում ընդգրկված ստեղծագործություններից 25-ը մինչև օրս մնում էին նա-
խախորհրդային կամ խորհրդային շրջանի պարբերական մամուլի, ժողովածուների կամ
դասագրքերի էջերում և զրոգի մահվանից հետո առաջին անգամ են հրատարակվում։
Մյուս երկերը, բացի մեկից (ինքնազրի հրատարակումից), հեղինակի կենդանության
օրոք կատարված նախնական հրատարակումներից հետո տեղ են գտել Ծնամահու լույս
տեսած երկերի ժողովածուների մեջ՝ 1955 և 1964 թթ. կամ այլ հրատարակումնե-
րում։

Նախնական հրատարակումից հետո առաջին անգամ են լույս տեսնում, օրինակ,
այնպիսի երկեր, ինչպիսիք են Բակունցի տպագիր երախայրիքը՝ «Հիմար մարդը» հե-
քիաթը (1913 թ.), զրոգի՝ բանակից զորացրվելուց հետո հրատարակած ստեղծագոր-
ծությունները՝ «Աղոթք», «Աշտուր», «Անաստում» (1918 թ.), «Մեր գյուղերում» ակնար-
կաշարը (1925)՝ բաղկացած հինգ ծավալուն ակնարկներից, «Գավառական նամականի»
շարքի երկրորդ ակնարկը, Ծ. Չարենցի կազմած մի դասագրքում մոռացված «Գյուղ-
աշխատավորի տետրակից» ակնարկը և ուրիշ պատմվածքներ ու ակնարկներ։ Ընդ որում,
ակնարկներից երեքի՝ մեզ ծանոթ հրատարակումները միայն ուսուցիչ են, և որոշեցիկ
զրանք դնել հատորի հավելվածում՝ հայերեն ետ թարգմանությունների հետ միասին։

Այս հատորում ևս մեր գլխավոր նպատակներից է եղել հնարավորին շատ տես-
զարտ, նախնական վիճակում ներկայացնել Բակունցի հեղինակային քնադրերը։ Ծիշտ է,
նրանց հրատարակումներին միշտ չէ կամ գուցե քիչ ղեպքերում է մասնակցել հեղինակ-
ը, և հնարավոր է, որ նախնական տպագրությունների մեջ հասած այս կամ այն բա-
ռածկը, կապակցությունը կամ նախադասությունը խմբագրության աշխատանքի արդյունք
լինեն, բայց, այնուամենայնիվ նրանք ավելի նախնական են, «ավելի մոտ» հեղինակին,
ուստի պետք էր ղգույժ լինել տպագիր քնադրային աղբյուրների բոլոր տողերի նկատ-
մամբ։ Այն էլ ասենք, որ ոչ քիչ ղեպքերում հնարավոր է լինում հեղինակայինը խմբագրի
կամ սրբագրիչի միջամտությունից տարբերելը։

Քնադրերում, բնականաբար, ուղղագրական համակարգը փոխված է. Բակունցի եր-
կերը տպագրվել են դասական և 1922 թ. ուղղագրություններով, այժմ նրանք հրատա-
րակվում են 1940 թ. ուղղագրությամբ, որ և ներկայումս ընդունված է Հայաստանում։
Քնադրերում ուղղված են նաև տպագրական վրիպակները, ինչպես և այլ բացահայտ
լեզվական-ուղղագրական անճշտություններ, որոնք շատ ղեպքերում աղճատում են բո-
վանդակությունը։ Մեր կատարած ուղղումները (հաճախ քնադրային այլ աղբյուրների
հիման վրա) աննշան միջամտություններ են հեղինակային հիմնական քնադրերում և
մանրամասն նշված են ծանոթագրությունների մեջ. ներկայացված է բառի կամ հատ-
վածի քնադրային շուղղված նմուշը և ուղղումը, ուստի ընթերցողը, ուսումնասիրողը
հնարավորություն ունի մեր կողմից անճիշտ կամ վրիպում համարված նախնական տա-
րբերակին ծանոթ լինելու։ Չեն նշված միայն որոշ, շատ բացահայտ վրիպակների ուղղում-
ները։

Մեծ մասամբ պահպանել ենք հիմնական գիտված քնադրերում եղած ուղղագրական

հնացած այն ձևերը, որոնք չեն առնչվում 1940 թ. ուղղադրական բարեփոխությունների հետ, թողել ենք նաև լեզվական-ուղղադրական շատ անմիօրինակություններ, չմշակված, անհարթ նախադասություններ, կասկածելի բառաձևեր և այլն՝ դրանց վրա ուղադրություն հրավիրելով ծանոթագրություններում:

Ծանոթագրությունների մեջ մի շարք դեպքերում չենք նշել ուղղադրական այն նորացումները կամ միօրինակացումները, որոնք չեն առնչվում 1940 թ. ուղղադրական բարեփոխության հետ, այլ ուրիշ որոշումներով կամ առանց որոշման են հաստատված: Օրինակ, շատ գործածված ամբան, ձմբան ձևերը (եփվան բեյլը, էէն տուրին), «Գալառական նամականի», «Մեր գյուղերում», «Զմռան մի գիշեր» և այլն) դարձրել ենք աման, ձման: Ապա՝ բնագրերում ունենք ճամպա, ճամբա, ճամփա զուգահեռ ձևերը («Աշոտը», «Անտառում», «Մատուն տղա» և այլն), երբեմն ձևերից երկուսը նույն բնագրի կամ միևնույն երկի տարբերակներում են գործածված. ուղղել ենք ըստ այժմ ընդունված ձևի՝ ճամփա: Կամ՝ գան-ը (եփոտ) դարձրել ենք գաղ, ֆեֆույլ-ը («Արտեփա»)՝ ֆեֆույ, մաբա-ը (եմբո որ բացվեն...)՝ մանաո, դյուր գալ-ը և դյուրալի-ն (ն. տ.)՝ դուր գալ, դուրալի: Միֆիչ, միֆանի, աչոֆ ձևերը (շատ են գործածված)՝ մի ֆիչ, մի ֆանի, աչոֆ, ֆեֆյաթ-ը («Հերոս նորարը»)՝ ֆեֆիաթ և այլն:

Միաժամանակ, հակառակ այժմ ընդունված ուղղադրական որոշ կանոնների, բնագրերի հեղինակային բնույթը ավելի պահպանելու համար թողել ենք համեմատաբար քիչ հնացած կամ ինչ-որ չափով ընդունելի թվացող շատ ձևեր, որոնք առկա են բնագրերում. օրինակ, այնպիսի անշատ գրություններ, ինչպես՝ անց ու դարձ, չեմ ու չում, սուս ու փուս, մեկն ու մեկը, ձեռնե ձեռոֆ, լուս ու մուսը, վեր ու վար, բաց ու խուփ, դես ու դեն, շուս ու մուս, տեր ողորմյա (թագրեխ), կես զիշեր և այլն: Պահպանել ենք նաև գծիկով գրված աբսպիսի ձևեր՝ գյուղից-գյուղ, գնալ-գալ, ոտից-գլուխ և այլն: Նշենք նաև, որ այս անշատ և գծիկավոր ձևերը բոլոր բնագրերում չէ, որ տեղ են գտել, և եթե բնագրերում այս կարգի բառերը կցված գրություն ունեն, նույնպես պահպանել ենք անփոփոխ: Պահպանել ենք նաև հեղինակի գործածած զոռնի ձևը (եֆնչքան էլ սովը զորբը)՝ «Եղբ. ընկ.» և այլն: Ամենուրեք պահպանված է բուն (կենդանու, թռչունի) ձևը, որ, կարծում ենք, արևելահայերենի համար ավելի ճիշտ է, քան բույն-ը:

Պահպանված ուղղադրական անմիօրինակությունները նշված են համապատասխան երկերի ծանոթագրություններում: Մեծ մասամբ նշված են նաև բնագրերում եղած և պահպանված խոսակցական-բարբառային ուղղադրական ձևերը (հեղինակային)՝ ֆցել, զզուշ, ճեյ զիդի և այլն:

Ասվեց, որ ներկա հատորում տեղ գտած ստեղծագործությունների մի մասը տպագրվել է գրողի երկերի ետմահու կատարված այլ հրատարակությունների՝ գլխավորապես 1955 թ. միհատորյակի և 1964-ի երկհատորյակի մեջ: Դրանցում այդ երկերը տեղ են գտել մեծ կամ փոքր կրճատումներով, բնագրային փոփոխումներով: Հեղինակային բնագրի զգալի խախտումներ կան «Աղվեսագրքի» 1955, 1972 թթ. հրատարակությունների մեջ: Քանի որ այս հատորում գրված են բոլոր երկերի 1920—30-ական թվականների նախնական բնագրերը, ուստի հիշյալ կրճատումներն ու փոփոխությունները որևէ չափով տեղ չեն գտել:

Ամեն կերպ ջանացել ենք բնագրերում պահպանել նաև նախնական հրատարակումների կետագրությունը, որ մեծ մասամբ հեղինակային պիտի լինի. ուղղումներ կամ լրացումներ ենք կատարել, եթե արդի կետագրական կանոններից շատ լուրջ շեղումներ են

եղել և երբ կետադրական սխալը կամ անհրաժեշտ կետի բացակայությունը բովանդակությունը հասկանալուն վնասել են: Այս վերջին կարգի ուղղումները, որ հիմնականում առողջանությունը նշանակող մուծումներ կամ ճշտումներ են, ժանտթագրություններում երբեմն նշել ենք: Կետադրական մյուս ուղղումները չեն նշված:

Շատ ենք ջանացել նաև մեր սեփական վրիպումներից զերծ պահել հատորը, թեև գրա լիակատար արդյունքի գրավականը չունենք:

ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

Արդյո՞ք այս հատորում ընդգրկվել են Բակունցի բոլոր այն պատմվածքներն ու աղակերպները, որոնք չեն մտել առաջին հատոր: Ո՛չ, անշուշտ:

Հատորի մեջ տեղ չգտած այդ նյութերը երկու տեսակ են՝ ա) նրանք, որ անկասկած եղել են և հաստատ ոչնչացված են, բ) որոնք չեն հայտնաբերված, և հնարավոր է, որ գտնվեն: Առաջին խմբի մեջ են այն անտիպ պատմվածքները, որոնց մասին հիշատակություններ են մնացել. օրինակ, Գր. Միմոնյանը գրողների համամիութենական առաջին համագումարում հայտարարեց, որ Բակունցը «ունի հեղափոխությունից առաջ գրված, սակայն չհրատարակված պատմվածքներ» («Գրական թերթ», 1934, № 23), Գիտենք նաև 1918 թ. առաջին կեսում գրված և մեծ մասամբ անտիպ մնացած այն պատմվածքների մասին, որոնք ամփոփված են եղել զինվոր Բակունցի «Գարնանային» անունը կրող տետրակում: Նույն թվականի աշնանը հրատարակված երեք երկերը, ըստ երևույթի, այդ տետրակից են: Սակայն տետրակի մեջ ընդգրկված մյուս երկերը անհայտ են մնում, ինչպես որ անհայտ է նրանց ճակատագիրը: Գրողի կինը՝ Վարվարա Զիվիչյանը մեզ հայտնել է, որ 1931—1932 թթ. Պետերհոֆում մոտ երեք ու կես ամիս մնալուց հետո Բակունցը վերադարձել է Երևան՝ իր հետ բերելով նոր գրված պատմվածքներ միջնադարյան Հայաստանի կյանքից: Այդ կարգի մի շտապագրված պատմվածքի մասին կա նաև այլ վկայություն (Հ. Մկրտչյան, Ակսել Բակունց, Ե., 1958, էջ 106):

Ե. Չարենցից պահպանվել է հետևյալ վկայությունը. «Ակսելը գրել է քորդ աշխատավորության կյանքից մի շարք այնքան հաջող պատմվածքներ, որ բոլորն էլ մտցված են մեր քրդական դասագրքերի մեջ» (Ե. Չարենց, Գրականության մասին, Ե., 1957, էջ 135): Մենք նաև չենք Հայաստանում եղած քրդերին դասագրքերի ամենահարուստ հավաքածուն (Ալ. Մյանիկյանի անվ. հանրապետ. գրադ.), հետաքրքրվել ենք մասնագետ քրդագետներից, հատկապես Հաջին Զնդիից: Որևէ դասագրքում նման պատմվածք չենք հայտնաբերել և ոչ ոք չգիտի այդպիսի պատմվածքների պարունակող դասագրքի մասին:

Կարծում ենք, որ Չարենցի վկայությունը այն մասին, թե Բակունցը գրել է քրդերի կյանքից պատմվածքներ, անհիմն չէ, և, հավանաբար, դրանք ըստ ինչ-որ ծրագրի պետք է մտնեին քրդական դասագրքերի մեջ, բայց ինչ-ինչ պատճառներով տեղ չեն գտել և, ըստ երևույթի, մնացել են հեղինակի մոտ ձեռագիր վիճակում: Ուշադրության արժանի է գրողի որոշ ժամանակակիցների, զլխավորապես կնոջ՝ Վ. Զիվիչյանի, վկայություններն այն մասին, որ Բակունցը հրատարակված երկերի շարքի և դեռ ավելի ունեցել է ձեռագիր երկեր, որոնց մի մասն առհասարակ չէր ուղում հրատարակել, մյուս

¹ «Հայրենիք» (ամսագիր), 1955, № 8, էջ 3:

մասը ծրագրում էր հարմար առիթով լույս ընծայել, Այս ամենը, ըստ նույն տեղեկությունների, ոչնչացված է:

Մյուս երկերը, որոնք կարող էին ընդգրկվել այս հատորում, բայց տեղ չեն գտել, ժամույնում, դասագրքերում հրատարակված կամ գուցե ձեռագիր պահպանված այն հնարավոր բնագրերն են, որ մենք չենք կարողացել հայտնաբերել: 1959—60 թթ. երկու անգամ հրատարակեցինք զրոյի երկերի մատենագիտությունը¹, բայց մի քանի տարի անց մամուլում հայտնաբերեցինք այնպիսի երկեր, որոնք մեզ ծանոթ չէին մատենագիտությունը կազմելու ժամանակ (օրինակ, «Մարուշ», «Կապը», «Один из многих», «Багратаван», «По селам Зангеура» ակնարկները), գտանք նաև ծանոթ երկերի անծանոթ մնացած հրատարակումներ (առաջին ու երկրորդ «Գալառական նամականիներին», «Արտելիայի», «Մինա բերիի», «Եսոնարճ աղչկա» 1920-ական թվականների ուսերեն առաջին հրատարակումները և այլն):

Մինչև այժմ Բակունցի երկերի առավել լրիվ ժողովածուն եղել է 1964 թ. երկհատորյակը, որը 1955 թ. միհատորյակի համեմատ լրացվել է մեր կազմած մատենագիտության օգնությունը և, բնականաբար, նրանում տեղ չեն գտել այն բոլոր երկերը, որոնք չկան մատենագիտության մեջ: Բացի դրանից, մատենագիտության մեջ եղած մի շարք երկեր նույնպես ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել այդ երկհատորյակից: Ուրեմն և բակունցյան երեք պատմվածքաշարերից դուրս են մնացել պատմվածքները, պատկերները, ակնարկները ընդգրկելու տեսակետից այժմ ամենալրիվը դառնում է ներկա հատորը, թեև լրիվ չէ բացառաձև իմաստով:

ԾՅԵ մինչև սույն հրատարակության 3-րդ և 4-րդ հատորների լույս ընծայումը գտնվեն մինչև այժմ չհայտնաբերված պատմվածքներ կամ ակնարկներ, բնականաբար, տեղ կգտնեն այդ հատորներից որևէ մեկում:

ՊԱՏՄՎԱԾՔ ԹԵ ԱԿՆԱՐԿ

Ա. Բակունցի երկերի ներկա հրատարակության առաջին հատորում ստեղծագործությունների դասավորությունը հեղինակային է, քանի որ հատորում տեղ գտած երեք պատմվածքաշարերը կազմել և նրանց մեջ երկերի դասավորությունը որոշել է ինքը՝ հեղինակը:

Այս հատորում ընդգրկված պատմվածքները, ակնարկները և մյուս ոչ ծավալուն գործերը շարքերից դուրս են, ուստի նրանց դասավորումը հատորը կազմողին է:

Շարքի արժեք ունի միայն «Աղվեսագիրքը», որի նյութերը հատորում դասավորված են ըստ 1935 թ. հրատարակության: Մյուս երկերը ճիշտ համարեցինք նախ քաժանել երկու խմբի, պզա յուրաքանչյուր խմբում կիրառել ժամանակագրական դասավորություն, այն է՝ ամեն խմբում նյութերը դասավորել ըստ առաջին հրատարակումների ժամանակագրական կարգի: Թեև այստեղ մի փոքր շեղում է թույլ տրված. մեկ պատմվածք և երեք ակնարկ հանված են ժամանակագրական կարգից և դրված հավելվածում: Ակնարկները առանհրժեք թարգմանություններ են և, հավանաբար, ոչ հեղինակի կողմից կատարված, իսկ պատմվածքը շունի տարեթիվ:

¹ «Ակսել Բակունցի ստեղծագործությունը» (Ե., 1959), զբոսում և առանձին՝ «Ակսել Բակունց, Կենսագրութ. և մատենագիտութ.» (Ե., 1960):

Ներկա հատորում ընդգրկված բոլոր ստեղծագործությունները երկու խմբի բաժանելու գլխավոր պատճառը ակնարկները պատմվածքներից և ոչ ակնարկային գեղարվեստական մյուս գործերից առանձնացնելու անհրաժեշտությունն է եղել: Ակնարկները՝ իրենց հողվածային որոշ տարրերով, անշուշտ, տարբեր են գեղարվեստական առավել ակնհայտ ընդհանրացումների ունեցող մյուս ոչ մեծ երկերից: Այս բաժանումը թելադրում է ինքը՝ նյութը: Ընդ չէր լինի հատորում ընդգրկվելիք բոլոր ստեղծագործությունները ներկայացնել ժամանակագրական մեկ ընդհանուր շարքով:

Սակայն դրա հետ միասին երբեմն շատ էլ հեշտ չէ բակունցյան ակնարկը պատմվածքից և ուրիշ ոչ մեծ գեղարվեստական երկերից տարբերելը, որոշ դեպքերում էլ զա, կարծում ենք, անհնար է:

Ընդհանրապես, պատմվածքը ակնարկից բաժանող սահմանը դժվար է գծել, իսկ բակունցյան մի շարք ստեղծագործությունների դեպքում այդ դժվարությունն ավելի է մեծանում: Բակունցի պատմվածքների, վիպակների, վեպերի, պատկերների մի զլխավոր առանձնահատկությունն էլ իրական կամ փաստական նախապատմությունների, նախակերպարների ու, եթե կարելի է ասել, նախավայրերի գեղարվեստականացումն է: Բայց նույնը կարելի է ասել նաև բակունցյան ակնարկների մասին: Գրողի երկերի մեջ այն, ինչ համարում ենք ակնարկ, գեղարվեստական ստեղծագործություններ են: Բայց և միաժամանակ դրանցում ներկայացված են իրական վայրեր, դեպքեր, մարդիկ՝ այսպես ասած, անփոփոխ: Ակնարկներից յուրաքանչյուրի գեղարվեստական հատկանիշը պայմանավորված է նաև նրանով, որ շնայած փաստերն ու մարդիկ անփոփոխ են ներկայացված, բայց և բոլոր իրական վայրերը, դեպքերն ու մարդիկ հեղինակային կնիք սևեն, ներկայացված են հատկանիշների՝ գույների, պատկերների, եղիւթյունների հեղինակային ընտրություններ ու գրելաձևով:

Բայց չէ՞ որ իրողությունների հեղինակային ընտրությունը և կնիքը նրանց պատկերման վրա, ինչպես և գրելաձևը էլ ավելի բնորոշ են պատմվածքներին: Ուրեմն ինչպե՞ս են տարբերվում Բակունցի ակնարկները սյառվածքներից:

Կարելի է թվարկել տարբերիչ մի քանի առանձնահատկություններ. մեզ թվում է, զրանցից են հետևյալները. 1) Ակնարկներում մարդկանց ու վայրերի իրական տեսները սովորաբար անփոփոխ պահպանված են. միայն քիչ դեպքերում ուղղակի շեք նշվում և հազվադեպ նշվում է մտացածին տեսն: Պատմվածքներում իրական տեսները կարող են փոխվել և շփոխվել, ընդ որում, ավելի հաճախ փոխված են լինում: 2) Պատմվածքներում երկու և ավելի նախակերպար երբեմն միացված են մի կերպարի մեջ, որևէ իրական անձի անուն կարող է օգտագործված լինել անվանելու համար բուրովին այլ նախակերպարի՝ սրան երկի հերոս դարձնելուց հետո (օրինակ, որոշը Ավին «Միսաձորում» — տե՛ս առաջին հատորի համապատասխան ծանոթագրությունները): Ակնարկներում փաստական նյութի այս կարգի գեղարվեստական մշակումներ մեծ մասամբ շեք արվում: 3) Պատմվածքում որևէ իրական անձ կարող է պատկերվել այնպիսի վայրում, ուր նա չի եղել, որ արվում է գեղարվեստական երկի մտահղացումը ավելի նպատակաույժ մարմնավորելու նպատակով: Ակնարկում նյութի նման մշակում ևս չի հանդիպում կամ հազվադեպ է լինում: 4) Ակնարկներում ներկայացված իրողությունների մեջ հեղինակային նպատակաղորդված հավելումներ ու փոփոխումներ սովորաբար շեք կատարվում (լինում են հազվադեպ), մինչդեռ պատմվածքների համար օգտագործված փաստերը լրացված են լինում այլ դեպքերով: 5) Պատմվածքներին բնորոշ է

հերոսի կյանքը կամ կյանքի մի հատվածը ներկայացնող գեղարվեստական դիպաշարը (սյուժեն), ակնարկները մեծ մասամբ իսկական իմաստով նման գեղարվեստական դիպաշար չեն ունենում: 6) Բակունցյան պատմվածքներում Նեղինակն, Ի վերջո, նպատակ չի ունեցել ներկայացնելու եղելություններ, իրական մարդկանց ու վայրեր, այլ այդ ամենը օգտագործել է իր ներշնչմանը կամ մտահղացմանը մարմին տալու համար: Ակնարկներում նույնպես ինչ-որ շափով առկա է մտահղացումն արտահայտելու մղումը, միայն ճիշտ չի լինի ասել, թե իրողություններն օգտագործված են դրա համար: Ակնարկներում մարդկանց, դեպքերի ու վայրերի բուն պատկերումը գլխավոր նպատակն է: 7) Պատմվածքներն էլ մի շարք դեպքերում որևէ որոշակի իրադարձություն են արձագանքում, բայց դա ավելի հատուկ է ակնարկներին: Բակունցը ակնարկ սովորաբար գրել է որևէ թեթի կամ ամսագրի պատմիկում և ըստ նրանց պահանջների, մինչդեռ այդպես գրված պատմվածքները համեմատաբար քիչ են (օրինակ, «Վաղը մարտի ութն է» կամ «Քանդիս»): Բնականաբար, ակնարկները ավելի հաճախ լրագրային են, մամուլի բարձրացրած հարցերին արձագանքող և երբեմն մոտենում են հոդվածի մակարդակին: Ը՛իշտ է, այդպիսի պատմվածքներ էլ կան, բայց այդ հատկանիշը պատմվածքի մեջ ակնարկային «շերտ» է, իսկ ավելի բնորոշը պատմվածքի համար Նեղինակային մտահղացման մարմնավորումն է և գեղարվեստական ճշմարտության բացահայտումը:

Կարելի է նշել բակունցյան ակնարկը պատմվածքից զանազանող նաև այլ տարբերություններ, բայց, այդ բոլորով հանդերձ, մի շարք դեպքերում տարակույսներ և տատանում է երեան գալիս նրանց տարբերման ժամանակ: Օրինակ, այնպիսի երկեր, ինչպիսիք են «Վան բնյը», «Բրոզապան Գևտն» կամ «Ձմռան մի գիշեր», ակնհայտորեն ակնարկ չեն, ինչպես և անվիճելիորեն ակնարկ են գյուղերի անուններով կոչվող «Քիչանագը», «Նոտը», «Լճենը», «Արմաշը», «Կյորան» և այլն: Բայց ահա ունենք նաև «Տրախտորի մաշինը» կամ «Արտելիան», որոնք շունեն տեղի և անձանց որոշակիություն և Նեղինակի կողմից պատմվածք են անվանված, բայց և ակնարկային, լրագրային զգալի տարրեր են պարունակում: Ի՞նչ ասել: Բավական տատանվելուց հետո դրանք գրել ենք պատմվածքների մեջ, թեև ճիշտ կլիներ նաև ակնարկների շարքում զետեղելու: Նույն կարգի դժվարություններ են հարուցել նաև այնպիսի գործեր, ինչպես՝ «Տպարանի պապառան», «Աշխատանքի հերթանքը», «Կածանով»-ը, «Սանոթ բակը» և այլն (առաջին երկուսը համարել ենք պատմվածք, մյուս երկուսը՝ ակնարկ):

Այսպես, ակնարկ թե պատմվածք բաժանումները երբեմն պայմանական են:

Որոշ դեպքերում էլ դժվար է տարբերել բակունցյան ակնարկը հոդվածից: Օրինակ, «Մեր գյուղերում» ակնարկաշարի որոշ մասեր կարծես հոդված են, իսկ գյուղերի կյանքին նվիրված մի քանի հոդվածներ, ինչպես, օրինակ, «Նամակներ գյուղից» հոդվածը («Նորհրդային Հայաստան», 1924, № 299), ունեն ակնարկի որոշ առանձնահատկություններ: Կամ՝ «Նոտորչուրի կոմունան» ակնարկային շատ բան ունի իր մեջ, և մենք դժվարանում էինք որոշել այն զեն՝ այս հատորում՝ ակնարկների մեջ, թե՞ թողնել շորորդ հատորի համար, որտեղ հավաքվելու են գրողի բոլոր կարգի հոդվածներն ու այլ

գեղարվեստական երկերը:

Հնարավոր է, որ պատմվածք-ակնարկ-հոդված մեր կատարած խմբավորմանը առանձին երկերի կապակցությամբ համաձայն լինեն որոշ ընթերցողներ: Հիշենք նաև, որ երկերի առաջին հատորում տեղ գտած «Մթնաձորը» և «Անձրևը» շարքերում նույնպես կան ակնարկներ (օրինակ, «Նաղապատը» կամ «Հյուսիսային ձորը»): Բայց, ինչ խոսք,

տիակ կլինե՞ր շարքերը խախտել և այդ ակնարկները դնել այս հատորի Ակեադեմիկներ բաժնում:

Ամեն դեպքում, ակնարկների մի առանձնահատկությունն էլ այն է, որ նրանք օղակ են՝ պատմվածքների և հողվածների միջև:

Հատորում երկերի առաջին խումբը կամ բաժինը վերնագրված է Պատմվածքներ և պատկերներ (և ոչ սոսկ՝ Պատմվածքներ) այն պատճառով, որ նրանում գրված որոշ երկեր որևէ մտտեցմամբ չեն կարող պատմվածք կոչվել: Դրանցից են, օրինակ, «Աղոթք», «Անաստում», գուցե նաև՝ «Հին տանը» երկերը և այլն: Քերևս, նման դեպքերում պայմանական է պատկեր անվանումը, բայց և կարծում ենք, հիշյալ բնույթի գործերի համար այն ավելի մոտ է ճշտին, քան պատմվածք-ը: Հնդ որում, այդ երկերից մեկ-երկուսը (օրինակ, «Աղոթք») արձակ բանաստեղծություններ են, բայց գերադասեցինք պատկեր ընդհանուր անունը գործածել, որ ավելի ընդգրկող է, և նրանով կարելի է անվանել հատորում տեղ գտած և՛ արձակ բանաստեղծությունները, և՛ ուրիշ արձակ ստեղծագործություններ, որ պատմվածք չեն:

Չնայած դրան, նշված վերնագիրը դարձյալ ամբողջությամբ չի արտահայտում բաժնի պարունակությունը, քանի որ այնտեղ հենց առաջին երկը ոչ պատմվածք է, ոչ պատկեր, այլ՝ հեքիաթ: Հարկ կա՞ր արդյոք բաժնի վերնագրի մեջ ավելացնելու նաև ճեֆիաք բառը: Թվում է՝ ոչ:

Ամեն դեպքում առաջին բաժնի մեծագույն մասը կազմում են պատմվածքները՝ թեև հաճախ բավական տարբեր բնույթի ու կառուցվածքի: Դրանք պատմվածք են դասակարգում իմաստով, և հիմք չկա նրանց այլ անուններով, օրինակ, նովել (նորավեպ) կոչելու, ինչպես երբեմն անում են: Պատմվածք անվանումը լայն բովանդակություն ունի և միանգամայն հարմար է բաղկունցյան համապատասխան երկերի համար: Ինքը հեղինակն էլ մի շարք դեպքերում իր նման գործերը անվանել է պատմվածք. օրինակ, «Դալուստի վիկը» (1925 թ.) կոչել է ագրո-պատմվածք, 1928 թ. երկերի փոքր ժողովածուն՝ «Պատմվածքներ», 1933 թ. հրատարակված «Մե ցելերի սերմնացանը» ժողովածուի վերնագրին կցել է Պատմվածքներ բացատրող ենթավերնագիրը, 1934 թ. Քփղիսում ողակներն լույս տեսած ժողովածուն վերնագրել է «Семь рассказов» և այլն:



Չնայած Բակունցից պահպանված ոչ ծավալուն գեղարվեստական երկերի ընտրանին ամփոփված է առաջին հատորում, սակայն երկրորդ հատորում ևս կան ճանաչում գտած գործեր, ինչպիսիք են «Եղբայրության ընկալները», «Իվան բեյը», «Բևան, Բևան...»-ը և այլն: Միաժամանակ, ընթերցողներին, ինչպես և գրականագետներին քիչ հայտնի կամ անհայտ մի շարք երկեր, որոնք տեղ են գտել այս հատորում, իրենց գեղարվեստական արժանիքներով, բաղկունցյան բնորոշ խոսքային հատկանիշներով նույնպես գրագի առաջնակարգ ստեղծագործություններից են: Բացի վերոհիշյալներից, գրանց մեջ են նաև 1918 թ. երեք ստեղծագործությունները («Աղոթք», «Աշուտը», «Անտառում»), ապա՝ «Հին տանը», «Ձմեռան մի դիշեր», «Մայրը», «Երգապան Գևորգ» պատմվածքները և այլն:

Բակունցի ակնարկները, տեղուշա, ընդհանուր առմամբ գեղարվեստական արժանիքներով չեն կարող համեմատվել նրա լավագույն պատմվածքների հետ և հաճախ

ավելի քիչ գեղարվեստական ընդհանրացումներ ունեն ու ավելի շատ են առնչված ժամանակի հրատուպության կամ, ավելի ճիշտ՝ ժամանակավորի հետ: Երա հետ մեկտեղ, գրողի ակնարկների մեծ մասն ունի ակնհայտ արժանիքներ, այդ թվում՝ գեղարվեստական: Սովորաբար նախակերպող բառը գործածում են սլաոմվածքների, վեպերի և այլ ոչ ակնարկային ստեղծագործությունների համար: Իրոք, ակնարկի հերոսները, կարծես, հենց նախնական են, նախակերպարներ, այսինքն՝ ոչ թե հեղինակի ձեռնկարներն են, այլ լուսանկարներ: Բայց ավելի լուրջ ուշադրությունը, մասնավորապես Բակունցի ակնարկների նկատմամբ, ցույց է տալիս, որ նրանցում էլ կան կերպարներ, որ ինչքան էլ գերակշիռ լինի ակնարկների մեջ հրատուպության կամ պատվեր կատարելու տարրը, այնուամենայնիվ, նրանցից ամենալավերի մեջ արվեստագետ հեղինակի «ձեռագիրը» գեղարվեստական լիարյուն կերպարներ գծանկարել է: Բնակարանների տեսակետից ևս ակնարկներն ունեն ուշագրավ շատ հատվածներ (օրինակ, աղվեսի և անզգի կուիվը «Կածանով» ակնարկում կամ կուսական անտառների պատկերները «Շաքիրզում»):

Բակունցի ակնարկներն ունեն նաև գրականագիտական հետաքրքրություն, քանի որ նրանց մեջ գտնում ենք գրողի որոշ պատմվածքների («Միրհավ», «Մարտ» և այլն) նախակերպարներ, նախապատմություններ (տե՛ս այս և առաջին հատորի ծանոթագրությունները):

Այս ամենով հանդերձ, ակնարկը մնում է ակնարկ և ոչ քիչ դեպքերում ժամանակավորության դրոշմով: Անշուշտ, դա ինչ-որ շափով վերաբերում է նաև պատմվածքներին, բայց և փաստ է, որ ակնարկներում խոշոր, ճշմարիտ արվեստագետի զգացողությունը ավելի հաճախ է նահանջ կատարում լրագրի կամ դասագրքի՝ սովյալ ժամանակի պատանջների առջև, քան պատմվածքներում:

• • •

Բակունցի երկերի ներկա գիտական հրատարակությունը ձգտում է լիակատարության, հատկապես պահպանված գեղարվեստական գործերը պետք է ամբողջությամբ տեղ գտնեն նրանում: Արդ. գրողը կենդանության ժամանակ առիթ ունեցել է իր երկերի մեջ ընտրություն անելու՝ մասնավոր հրատարակված ստեղծագործություններից առանձնացնելով, հոգատար մշակման ենթարկելով ու իր երեք զլխավոր ժողովածուների մեջ հավաքելով երեք տասնյակից ավելի ստեղծագործություններ: Ուրեմն երկերի ներկա հրատարակության առաջին հատորում ամփոփված ստեղծագործությունները հեղինակային ընտրությամբ են հավաքվել: Այս հատորում գործերի մի մասը կարծես «հակառակ հեղինակի կամքի» է հրատարակվում. նախ, այդ երկերից մի քանիսը Բակունցը, գուցե և, երբևէ չդներ իր որևէ ժողովածուի մեջ, ապա՝ 1920—1930-ական թվականների առաջին շտապ հրատարակումներից հետո հատորում տեղ գտած երկերի մեծագույն մասը որևէ հեղինակային բարելավման, մշակման չի ենթարկվել: Իրոք, որոշ ակնարկների, պատմվածքների մեջ նկատելի են թե անմշակ լինելու դեպքեր, թե կրճատման և բարեփոխման արժանի հատվածներ:

Սակայն դասական հեղինակների երկերի ակադեմիական, գիտական հրատարակությունները կազմելիս հաճախ հաշվի չի առնվում հեղինակի «կամքը», քանի որ այդ հրատարակությունների նպատակը միայն ընթերցողականը չէ. նման շատ օրինակներ

կարելի է բերել թե՛ ուսւ, թե՛ արևմտանվրոպական դասականների երկերի գիտական լավագոյն հրատարակութուններէց:

* * *

Այլ խմբագրումներ և Բնագրային տարբերակներ բաժինները ինչպես նախորդ, այնպես էլ այս հատորում միմյանցից զանազանվում են նրանով, որ լուսաջինում գրվում է: Երկի հիմնական բնագրից շատ տարբերվող փոփոխակը՝ ամբողջովյամբ, իսկ երկրորդում ներկայացվում են նույն երկի իրարից համեմատաբար ավելի քիչ զանազանվող փոփոխակների միայն տարբերութունները:

Թե՛ այլ խմբագրումները և՛ թե՛ բնագրային տարբերակները վերաբերում են միայն նույն երկի մի քանի բնագրային աղբյուրների միջև եղած տարբերութուններին: Առաջին հատորի մեջ ամփոփված ստեղծագործութուններից յուրաքանչյուրը (բացի «Միրանի փողը» և «Պրովինցիայի մայրամուտը» երկերից) ունի առնվազն երկու բնագրային աղբյուր, իսկ մի մասի բնագրային աղբյուրների քանակը շուր կամ հինգ է: Եվ, քանի որ հեղինակն իր ստեղծագործութունները ամեն մի նոր հրատարակման համար մեծ կամ փոքր մշակումների է ենթարկել, ուստի բնագրային աղբյուրների քանակի մեծութունը այս դեպքում նշանակում է տարբերակների շատութուն: Այդ է պատճառը, որ առաջին հատորում զգալի քանակ են կազմում թե՛ Այլ խմբագրումներ բաժնի մեջ գրված բնագրերը և թե՛ մանավանդ Բնագրային տարբերակներ բաժնի նյութը: Միաժամանակ, որքան քիչ լինեն երկերի բնագրային աղբյուրները, այնքան քիչ կլինեն այլ խմբագրումներն ու տարբերակները: Սա վերաբերում է այս հատորին, որտեղ հավաքված երկերը՝ առանձին բացառությամբ, մեկական բնագրային աղբյուր ունեն: Այս է պատճառը, որ Այլ խմբագրումներ բաժնում կա ընդամենը մեկ բնագիր (առաջին հատորում ինն են)՝ իսկ Բնագրային տարբերակներ բաժնում նշված են 6 ստեղծագործության առանձին բնագրերի միջև եղած տարբերութունները և այն էլ փոքրածավալ (առաջին հատորում ներկայացված են 28 երկերի բնագրային տարբերութուններ, հաճախ բավական ծավալուն):

Բնագրային տարբերակներ բաժնում և Մանրագրութունների մեջ այս հատորում

1 Այս հատորն արդեն շարված էր և 20 մամուլ տպագրված, երբ իմացանք (ս. թ. 29. 6), որ 1931 թ. լույս տեսած «Նոր աշխարհ. 6 տարի» դասագիրքը, որի անվանաթերթին նշված է «Կազմեցին մի խումբ ուսուցիչներ», իրականում կազմել են Ա. Բակունցը, Խաչատուր Կանայանը, Հակոբ Հարությունյանը: Սա նշանակում է, որ դասագրքում Բակունցի ութ երկերի հրատարակումները հեղինակային են և բնագրային աղբյուրի արժեք ունեն: Դրանցից 2-ը՝ «Աշխատանքի հերոսները» և «Կոմսոմոլի փոկերով»՝ այս գործերի մեջ ծանոթ առաջին հրատարակումներն են և հատորում տպագրված են որպես հիմնական բնագրեր: Մյուս 6 գործերը հրատարակվել են նաև նախքան «Նոր աշխարհը»: Սրանցից մեկը՝ «Հյուսիսային ձորը» տեղ է գտել 1-ին հատորում: Մյուս 5 ստեղծագործութունները՝ «Տրախտորի մաշին», «Տպարանի պատշաճ», «Պեմզայի հանքերում», «Վարդագոյն սուֆի երկրում», «Հաղթական հավաքը», որ տպագրվում են այս հատորում, հիմնական գիտված բնագրերի համեմատ ունեն տարբերութուններ, որոնք պետք է ներկայացվեին բնագրային տարբերակներ բաժ-

ևս օգտագործված է տողահամարների կարգը¹: Առանձին երկերի ծանոթագրությունների մեջ տեղեկանքների մի մասը տրվում է ընդհանուր շարադրանքի կարգով, մյուս մասը՝ ծանոթագրվող բառը, անունը կամ հատվածը պարունակող էջի ու տողի նշումի մոտ:

Նախորդի համեմատ այս հատորում յուրաքանչյուր երկի ծանոթագրության սկիզբը փոքր-ինչ փոխված է. նախորդում ամենակգրում թվարկվում էին երկի բնագրային աղբյուրները՝ համառոտագրված, այստեղ դրա կարիքը չկա, քանի որ երկերի մեծ մասը թւնի մեկ բնագրային աղբյուր, որը և ծանոթագրության մեջ նշվող առաջին հրապարակումն է: Մի քանի աղբյուրի առկայության դեպքում ծանոթագրության մեջ համապատասխան տեղեկանք է տրվում:

Այդպես, այս հատորի ծանոթագրություններում յուրաքանչյուր երկի վերնագրի թուակ տրվում են նախ բնագրի հրապարակումների հետ առնչված տեղեկություններ, ապա՝ այժմյան հրապարակման համար հիմնական բնագրի մեջ արված ուղղումները (եթե կան), նշվում են շուղղված՝ անհարթությունները և հնացած ձևերը: Այնուհետև, հաղորդվում են տեղեկություններ երկը գրելու հանգամանքների, նախակերպարների, մյուս տեղեկագրությունների հետ տվյալ երկի ունեցած առնչությունների, ինչպես և տեղ գտած աշխարհագրական անունների, անձնանունների, մեջբերումների, ասույթների վերաբերյալ և այլն:

Հատորում ընդգրկված երկերի գրության ստույգ ժամանակը (ամիս, ամսաթիվ) ալժմ որոշել անհնար է: Եվ մեծ մասամբ գրության թվականներ շինք նշում, բայց և պետք է նկատի առնել, որ գրեթե բոլոր ակնարկները տպագրվել են գրելուց առավելազույնը մեկից երեք ամիս հետո (բացառությունների դեպքում տեղեկանք տրվում է): Պատմվածքները գրելու և հրապարակելու միջև ընկած ժամանակը կարող է ավելի մեծ լինել, բայց այս հատորում ընդգրկվածները հիմնականում տպվել են գրվելուց ամենաշատը մի քանի ամիս անց, միայն հազվագյուտ դեպքում կարող է ժամանակամիջոցը մեկ-երկու տարվա հասնել:

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հ Ի Մ Ա Ր Մ Ա Ր Դ Ը

(էջ 7)

Հրապարակվել է «Աղբյուր» մանկական հանդեսի (Թփղիս) 1913 թ. 10-րդ (հոկտեմբերի) համարի Մանկական աշխարհի բաժնում՝ Աշտիկեոտ ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ նույնությամբ:

Նում: Ընարավոր է նաև, որ «Նոր աշխարհի» այդ հրապարակումներից մեկ-երկուը այս հատորում տպագրվելին որպես հիմնական բնագիր: Քանի որ այլևս անհնար է համապատասխան փոփոխություններ մտցնել շարված ու կիսով չափ տպագրված հատորում, բավարարվել ենք բնագրային տարբերակներ և Մանոթագրություններ բաժիններում շարվածքը մասամբ փոփոխելով՝ որոշ ճշտումներ անել և մի քանի տեղ տեղեկանքներ տալ:

¹ Տողերը համարակալելիս վերնագրերը, մի երկի առանձին մասերի համարները նույնպես տող են հաշվված (առտղանիշերը համարակալումից դուրս են):

Ա. Բակունցն իր ինքնակենսագրութեան մեջ (Ճեռագիրը պահւում է ԳԱՔ-ում) գրեք է. «1915—16 ուսումնական տարում, գաղթի պատճառով փակվել էր ճեմարանը, և ես այդ տարին ուսուցիչ «հրավիրվեցի» Զանգեզուրի լոր գյուղը: Ամառը ես «չարութուն» էի արել, որ և կարելի է հաշվել իմ գրական մկրտութունը, եթե շահաշնորհ «Հիմար մարդը» վերնագրով մի հեքիաթ, որը 1911 թվին տպեց «Աղբյուր» ամսագիրը:

1915 թ. այդ «չարութունը» այժմ հայտնի է. Գորիսի քաղաքագլուխ Մատթեոս Տեր-Գրիգորյանի վերընտրութեան կապակցութեամբ Բակունցը 1915 թ. Շուշիի «Փայլակ» թերթում հրատարակել է մի երգիծական հողված քաղաքագլխի դեմ՝ «Մատթեոս Մատթեոս... (Մի անհայտ մարդու անհրաժեշտ կենսագրութեան փորձ)» վերնագրով («Փայլակ», 1915, հուլիսի 26): Ինչ վերաբերում է «Հիմար մարդը» հեքիաթին, ապա նրա հրատարակման ճիշտ թվականը հեղինակը մոռացած է եղել ինքնակենսագրութունը գրելիս:

Էջմիածնի Գեորգյան ճեմարանում սովորելիս Բակունցը գրում էր շափածո և արձակ գործեր ու կարգում դասընկերներին: Ուսումնառութեան տարիներին նա թղթակցեց է Թփղիսի և Շուշիի տարբերականներին. ըստ երևույթին, առաջին գրվածքը, որ ճեմարանական 14-ամյա Աղեքսանդր Քևայան-Բեկյանը ուղարկել է մամուլում հրատարակելու, եղել է «Հիմար մարդը»:

Դժվար է ասել, թե ինչու հատկապես այդ հեքիաթն է ուղարկել:

«Հիմար մարդը» հայ ժողովրդական հանրահայտ հեքիաթի (կա նաև «Աստծուն՝ զանգատ զնացող մարդը» վերնագրով)¹ տարբերակներից մեկի վերաշարադրանքն է: Այդ հեքիաթի մի այլ տարբերակ (կամ գուցե մի քանիսը միավորելով) մշակել է Ղ. Քումանյանը՝ անվանելով «Անխելք մարդը»²: Դա Քումանյանի առաջին արձակ ստեղծագործություններից է և առաջին տպագրված հեքիաթը (1894 թ.): Անկասկած է, որ Քումանյանի կ'ընտրած տարբերակն է ավելի հաջող, կ'մշակումն ավելի բարձրարժեք է, քան Բակունցինը: Պետք է ենթադրել, որ 1913 թ. Բակունցը կարդացած չի եղել Քումանյանի երկը, որ հրատարակված էր նույն «Աղբյուրի» 1894 թ. № 4-ում, այլապես նա ոչ կգրեր այդ հեքիաթը, ոչ էլ առիթ կուեններ «Աղբյուրին» ուղարկելու (հավանաբար, «Աղբյուրի» խմբագրությունում էլ չեն հիշել, որ 19 տարի առաջ տպագրել են նույն հեքիաթի մի այլ տարբերակը):

Ա Ղ Ո Ք Ք

(էջ 10)

Հրատարակվել է «Ժողովուրդ» լրագրի (Երևան) 1918 թ. հոկտեմբերի 3-ի համարում (№ 15)՝ Բակունց տտորագրությամբ: Տպագրվում է երկրորդ անգամ նույնությամբ Ուղղում.

էջ 11, տող 31. Ժ-ի բնագրում՝ բուրբին իրենց շերտաներ առա—ուղղել ենք՝ բուրբին իրենց շերտաները տուր:

Չենք ուղղել հնացած կամ այժմ անճիշտ թվացող որոշ ձևեր, ինչպես՝ սիրո բառեր ենչվեն (էջ 11, տող 32):

¹ «Հայ ժողովրդական հեքիաթներ», հ. 7, Ե., 1977, էջ 65—67, նաև՝ Յ. Լավա—տարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք 5-րդ, Թփղիս, 1889, էջ 71—74:

² Ղ. Քումանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Ե., 1949, էջ 131—133:

1918 թ. ամռանն ու աշնանը Բակունցը Երևանում աշխատել է որպես թերթերի (այդ թվում՝ «Ժողովուրդ» և «Հասարակ») լրագրի ու սրբագրիչ: Ինքն այսպես է հիշում այդ օրերը. «Ամեն օր պիտի շրջի հիմնարկները պետական, լուրեր հավաքի, թե ի՞նչ է պատահել, ո՞ւմ են սպանել, գողերը քանի տուն են կտրել, քանի խանութ թալանել:

Լուրերիս համար տողավարձ էի ստանում, և որովհետև հունձն առատ էր, պատահարները բազմաթիվ, շարքավազ վերջին մի քիչ դրամ էր ընկնում գրպանս, մյուս շարքավազներս առնում համար:

Հիշողությանս մեջ ազոտ՝ այն տարուց մնացել է իմ պատկերը՝ անկարգ, աղտոտ մազեր, ինչպես մացառուտ, բեղի տեղերը նոր ծլած մազ և զգեստի պես մի բան, որի մեջ ես ավելի խրտվիլակի էի նման:

Ձինվորական ուղևոր շորերից նոր էի ազատվել (սէն տարին):

«Աղոթք», ինչպես և «Աշտուր» ու «Անտառումը» Բակունցը «Ժողովուրդ» թերթում հրատարակել է՝ այդ լրագրի սրբագրիչ ու լրագրի աշխատելու ժամանակ:

1917 թ. դեկտեմբերի 26-ին Բակունցը էշմիածնից մեկնել է Կարին, ռազմաճակատ, որպես կամավոր: Այդ օրերին ռուսական բանակը սկսել էր ռազմաճակատը թողնել ու փոքրիկ վերադառնալ Ռուսաստան: Արևմտյան Հայաստանի այն հատվածները, որոնք ռուսական բանակի հսկողության տակ էին, կարող էին վերագրավվել թուրքական զորքերի կողմից, և բացվում էին Անդրկովկաս մտնելու դռները: Ամենաողբերգականն, անշուշտ, հայության վիճակն էր: Արևմտահայության զանգվածային կոտորածներից ու տեղահանություններից հետո պահպանված բեկորները վերադարձել էին ռուսական հսկողության անցած հայրենի վայրերը, և ավերի ու մոխրի մեջ նորից կյանքի նշաններ էին երևան գալիս:

Ինքնաճակատում մնացած, գլխավորապես, հայկական և անդրկովկասյան զորքերը Ղարաղացյան դիմադրել թուրքական բանակի հարձակմանը, և հանձնվեցին ոչ միայն Տրապիզոնն ու Երզնկան, այլ նաև Կարինը (որի պաշտպանության հետ մեծ հույսեր էին կապում), ինչպես և մոտակա վայրերը, ողջ շրջակայքը: Ապա հանձնվեցին Ռուսահայաստանի քաղաքներն ու գյուղերը՝ Կարս, Սարիղամիշ, Ալեքսանդրապոլ, Իգդիր և այլն: Արշավանքը լուրջ դիմադրության հանդիպեց Ղարաքիլիսայի և մանավանդ Ապարանի ու Երևանի (Սարդարապատ) մոտ, ուր թուրքական բանակը ետ մղվեց:

Բակունցը ծառայել է նախ Թուրքաստանյան, ապա Երզնկայի գնդերում: Նա մասնակցել է այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած մարտական գործողություններին, մասնավորապես Աշկալայի, Իլիշայի, Արդահանի, Սարդարապատի ճակատամարտերին: Էինելով շարքային զինվոր ապրել է պատերազմի, ռազմաճակատի «հարուցած» բոլոր զգացումներն ու տվալատները՝ մահի մշտական մտտիկություն, սպանիչ հոգևություն, քաղց, նահանջի խուճապ, տեսել է արյուն, մահեր, դիակներ, խեղանդամում: «Ես արյուն շատ եմ տեսել՝ կոփվ. կոտորած», — ավելի ուշ գրել է նա (սէն տարին): Բակունցը ակնատես է եղել նաև հրամանատարության անշնորհությունը, զինվորների դասալքությանն ու անկարգություններին, արևելահայ-արևմտահայ անմիտ հակառակություններին: Տեսել է ավերված ու հայալրկված հարյուրավոր գյուղեր, հայության պահպանված բեկորների երկրորդ փախուստը կոտորածից:

Կամավոր մեկնելիս՝ Բակունցը պատերազմը պատկերացնում էր ըստ զբոսի ու ճառերի: Շատերի նման նա ևս երազում էր սխրանք և կարծում էր, թե պատերազմը հերոսությունների թատերարժեք է: «Ձեռք ու զրահից թնդում էին լերինք» —

հետագայում հիշում էր եւ Հեմարանի շրջակայքում 1914—15 թթ. տիրող հերոսականութիւն միջուկորտը («Օսանոթ բակը»), որ, անշուշտ, ազդել էր նրա վրա: Գիմելով իր Հեմարանական ուսուցչին, Բակունցը գրում է. «Դուք մամն մի սանի պատմում էիք «Շուշան Ծավարչան», դրվագներ Ավարայրի օրերից, ավագի վրա գծում էիք կորած քաղաքներ, գովում Բասենը, Ալաշկերտը, որտեղ երբեք դուք չեք եղել: Մեր մանկական հոգիներում ձեր բառերը տղայական երազներ էին ծնում, և մեք ձեռքին բռնած կերոնները զենք ու նիզակ էին թվում» (նույն տեղում): Բակունցը սկսում է երազել իր «հեթանոս հայրենիքը», «սրբազան Եփրատը», որ «ցողում է ծաղիկներն եղեմական» (տե՛ս «Անտառում» պատկերը). «Ես ցանկացա մարմինս թրջել սրբազան գետի մեջ և բարեպաշտորեն երկրպագել հեթանոս հայրերիս աստվածներին՝ ամենաճերմակ արջառները զոհելով» (նույն տեղում):

Եվ ահա ռազմաճակատ, մահեր, դիակներ, սարսափ, խուճապ... Պատկերացումները փոխվում են, զգացումներն ու ապրումները՝ նույնպես:

Մանոթագրութիւնների ներածական մասում արդեն ասել ենք, որ ռազմաճակատում Բակունցը ունեցել է մի տեսր «Գարնանային» (կամ՝ «Գարնանամուտ») անունով, որի մեջ զանազան գրառումներ է արել, արձանագրել իր պատանեկան պատկերացումների փլուզումը, պատերազմական խոհերն ու ապրումները: Հավանաբար, «Աղոթքը» և հաջորդ երկու երկերը այդ տեսրի պարունակութունից են:

Պատերազմի վիպային պատկերացման փլուզում իրական մարտի դաշտերում շատ-շատերն են ապրել, և քերը չէ, որ բավական տպավորիչ գրել են դրա մասին՝ Տոլստոյ, Ռեմարկ, Զարենց, Հեմինգուեյ...: Բակունցը լրացնում է այդ շարքը: 1918 թ. նրա հրապարակած այդ երեք դործերը, ինչպես և հետագայում գրված որոշ երկեր (հատկապես «Այու սարի լանջին» պատմվածքը) արտահայտում են գրողի հիասթափութունը պատերազմից առհասարակ:

«Աղոթքը» երեքից առաջինն է հրապարակվել ու այսօր էլ խորապես հուզում է նրանում եղած անկեղծ ներշնչանքը, իրերի խոր ըմբռնողութունը:

էջ 11, տողեր 8, 15, 26—27, 31 շեղագ, եւս՝ շեղգւնեը—այս անունը հիշվում է եւս «Անտառում» պատկերում (էջ 19, տող 3), խորհրդանշում է Բակունցի պատանեկության ընկերուհի Քազուհի Սաֆրազբեկյանին (ծն. 1898 թ.), իր համաքաղաքացի այդ աղջկա նկատմամբ Բակունցը սիրո զգացմունք է ունեցել:

Ըստ Բակունցի դասընկեր և բարեկամ Վաղարշակ Հովակիմյանի (տե՛ս «Անտառում» պատկերի ծանոթագրութիւնները) հուշերի (պահվում են ԳԱԹ-ում) Ք. Սաֆրազբեկյանը եղել է գրողի դասընկերուհին Գորիսի ծխական դպրոցում: Ուսուցիչ-դաստիարակ Հովհաննես Գրիգորյանը Սանդրուն նստեցրել էր Քազուհի Սաֆրազբեկյանի հետ միասին առաջին նստարանի վրա: Քազուհի հանդիսանում էր Գորիսի ուսուց դպրոցի տեսուչ Սաղաթ-բեկ Սերգեեիչ Սաֆրազբեկյանի դուստրը... Սկսելով, լրջախոհ ու լրջամիտ Քազուհի իր զույգ սև սաթի պես, խնամքով հյուսված ծամերով, հազիվ լինել լոթք տարեկան ու թեև հասակով փոքր-ինչ բարձր էր Սանդրոյից, բայց կարգապահութամբ և ընդունակութամբ եզակի էր դասարանի աղջիկների մեջ և ոչնչով հետ չէր մնում Օսանդրուց,— հիշում է Վ. Հովակիմյանը և շարունակում. «Մի քանի տարի անց նրանց մտերմութիւնը բնականաբար վերածվեց փոխադարձ շիրմ սիրո, որը սակայն, ցավոք սրտի, չունեցավ ցանկալի վախճան»:

Ժամանակին վստահելով Վ. Հովակիմյանի հիշողությանը «Բակունցի կյանքն ու արվեստը» գրքում (Կ., 1974) գրել ենք. «Դպրոցում Ալեքսանդրի մտերիմներից է եղել Քազուհի Սաֆրազրեկյանը» (էջ 16—17): Սակայն Քազուհու եղբոր՝ Գևորգ Սաֆրազրեկյանի հաղորդած տեղեկության համաձայն իր ջուրը սովորել է Գորիսի երկրասյան ուսուսական դպրոցում, որի տեսուչն էր նրանց հայրը: Հետո Քազուհին ուսումը շարունակել է Քփղիսի Ս. Նիսյանի գիմնազիայում: Այժմ բնակվում է Մոսկվայում:

Մենք նամակ գրեցինք տիկ. Ք. Սաֆրազրեկյանին՝ խնդրելով տալ մի քանի հարցերի պարզաբանում: Ստացանք հանգամանալից պատասխան նամակ, որի համար մեր երախտագիտությունն ենք հայտնում նրան:

Նամակում մասնավորաբար զրված էր. «Ալեքսանդրը տարիքով ինձնից փոքր էր նա եղբորս՝ Գևորգի հասակակիցն էր, որի հետ ընկերություն էր անում:

Ես նրա հետ երբեք չեմ սովորել»:

Հստ երևույթին. Վ. Հովակիմյանը տարիների հեռվից ինչ-որ բան շփոթել է՝ Ալեքսանդրին և Քազուհուն դասընկերներն համարելով:

Այնուհետև, Ք. Սաֆրազրեկյանի նամակում կարդում ենք. «1918 թ. նրա (Ալեքսանդրի) գրած ստեղծագործությունները՝ նվիրված Հերդային, ինձ էին վերաբերում... Այն ամառ Գորիսի երիտասարդությունը որոշեց խմբակ կազմակերպել և ներկայացում տալ: Այդ նպատակով մենք հավաքվեցինք այն ժամանակվա նոր դպրոցի շենքում: Հանկարծ լսեցի, որ մյուս սենյակից ինձ կանչում են՝ կապիու աղաներից մեկի ձեռքը, որը կտրվել էր ապակիով: Իմ հարցին, թե ինչո՞վ պիտի կապեմ, պատասխանեցին, որ վիրակապ կա: Պարզվեց, որ Ալեքսանդրի ափն է ապակիով կտրվել, և ես կապեցի: Այդպես մենք ծանոթացանք: Երբ ես տուն եկա, եղբայրս՝ Գևորգը, ծիծաղում էր վրաս: Անաց, որ Ալեքսանդրը դիտմամբ էր կտրել ափը, որպեսզի ես կապեի, ու այդպես ծանոթանայինք:

Մենք ներկայացրինք արտասահմանյան մի գրողի թատերգությունը, որտեղ Ակսել անունով մի պատանի սիրում ու սիրահետում է Հերդա անունով աղջկան:

Ներկայացումը ղեկավարում էր Ալեքսանդրը, և ես, իհարկե, խաղում էի Հերդայի, իսկ ինքը Ակսելի դերը:

Դրանից հետո նա հաճախ էր ինձ Հերդա անվանում և նույնիսկ ինձ բանաստեղծություն բերեց «Հերդային» վերնագրով: Ես երկար ժամանակ պահում էի այդ բանաստեղծությունը, որպես հիշատակ իմ շահելության, բայց ի վերջո, ցավոք, կորա՛վ, ո՛րը գրեցի, չգիտեմ: Այնպես, որ նրա Ակսել կեղծանունը Ալեքսանդր անունից չէ, այլ մեր ներկայացումից»:

1918 թ. ստեղծագործությունները, ուր կա Հերդա անունը տպագրվել են հիշյալ ներկայացումը Գորիսում խաղացվելուց ավելի քան մեկ տարի անց, և Ք. Սաֆրազրեկյանի գրած Այն ամառը պետք է հասկանալ 1917-ի ամառը: Նորվեգացի գրող Բ. Բիերնսոնի «Նորապսակները» կատակերգության մեջ կա Ակսել անունով հերոս, և մենք ենթադրել էինք ու գրել, թե Գորիսում այդ երկն է բեմադրվել (տե՛ս «Բակունցի կյանքն ու արվեստը», էջ 31): Այժմ, երբ Ք. Սաֆրազրեկյանի նամակից պարզվում է, որ Հերդա անունն էլ է կապված նույն ներկայացման հետ, մեր ենթադրությունը հերքվում է, քանի որ Բիերնսոնի «Նորապսակներում» Հերդա չկա:

Տեսնենք, թե էլ ինչ հուշեր ունի Քազուհի-Հերդան իր երիտասարդության մասին: «Այդ ամառ մենք շատ բարեկամացանք: Նա հաճախ էր լինում մեզ մոտ: Մի ան-

զամ ինձ բերեց իր ձեռագրով արտագրած՝ Ավետիք Իսահայկյանի «Արու-լալա Մահարի» ստեղծագործությունը և սիրում էր այն կարգալ:

Երբ մտերիմների մեր խումբը հավաքվում էր որևէ մեկի մոտ կամ զնում էինք զբոսանքի, հետո նա անպայման ինձ ճանապարհում էր, խոսում իր զգացմունքների մասին:

Ալեքսանդրը բորբոքուն էր, ինչ-որ շափով անհավասարակշիռ, վերին աստիճանի ազնիվ մի տղա, հրաշալի ժպիտով:

Ք. Սաֆրազբեկյանի հուշերից իմանում ենք նաև, որ հաշորդ անզամ նա Բակունցիին հանդիպել է 1919 թ. ամռանը Երևանում և հետո 1923 թ. դարձյալ Երևանում, երբ ինքն ամուսնացած էր: «Միայն այդ ժամանակ,—գրում է նա,—ես հասկացա, որ շեմ զնահատել նրա զգացմունքների խորությունը, տեականությունը, նրա անկեղծությունը, և, ուշագրություն չդարձնելով, անցել եմ նրա կողքով: Այդպես մենք հրաժեշտ տվեցինք միմյանց առհավետ»:

Ա Շ Ո Տ Ր

(էջ 12)

Հրապարակվել է «Ժողովուրդ» լրագրի 1918 թ. հոկտեմբերի 13-ի համարում (№ 18)՝ Աղ. Բակունց ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի: Կատարված ուղղումներն են:

էջ 12, տող 20. Ժ-ի բնագրում՝ դեպի հույերի դաշտեր—ուղղված է՝ դեպի հայրենի դաշտերը:

էջ 12, տող 21—22. Ժ-ի բնագրում՝ կանսնչով—ուղղված է՝ կանեչով:

էջ 14, տող 1. Ժ-ի բնագրում՝ միալուր—ուղղված է՝ միալար:

Չենք ուղղել «աչքերը... բացավառում էին» (էջ 12, տող 16—17) նախադասության մեջ բացավառում-ը, քանի որ այդ ձևով Բակունցի ժամանակ այս բառն ըմբռնվում էր նաև բացավառվում-ի նշանակությամբ:

Պատմվածքը, որ ակնհայտ հակապատերազմական բնույթ ունի, պետք է որ իրական հիմք ունեցած լինի: Պատմվածքի երկրորդ մասում, հավանաբար, Կարինի մոտ տեղի ունեցած ոչ մեծ մարտերից մեկն է նկարագրված: Տե՛ս նաև «Աղոթք» պատկերի ծանոթագրությունները:

Ա Ն Տ Ա Ռ Ռ Մ

(էջ 15)

Հրապարակվել է «Ժողովուրդ» լրագրի 1918 թ. նոյեմբերի 3-ի համարում (№ 27)՝ Աղ. Բակունց ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի. ուղղագրության սովորական արդիացման հետ կատարել ենք նաև հետևյալ ուղղումները՝ ի զուր>ի զուր, զունտ>զունդ, իհիր>երհ, ճամբորդ>ճամփադղ, ունկրնդիր>ունկնդիր, ճար-հրալ>հարհրալ:

Այս երկի մտահղացման ու բովանդակության մասին տե՛ս «Աղոթք» պատկերի ծանոթագրությունները:

էջ 15, տող 1, 4 և այնուհետև. Անտառում, անտառ և այլն—խոսքը էջմիածնի վանքի անտառի մասին է:

էջ 15, տող 2. Ընկերոջս՝ Վաղոյին:— Այս նվիրագրման հասցեատերը Բակունցի համաքաղաքացի, մանկության ու պատանեկության մտերիմ ընկեր Վաղարշակ Հովակիմյանն է (1894—1968): Նա Բակունցի հետ սովորել է Գորիսի հայկական դպրոցում՝

1905—1908 թթ.: Ապա ընտանիքի հետ տեղափոխվել է Միջին Ասիա: 1914-ին վերագարծել է Անդրկովկաս, դարձել կամավոր Անդրանիկ զորավարի խմբում և մեկնել ռազմաճակատ: Զորավար Անդրանիկի հետ եղել է շատ մարտերի մասնակից: 1921 թվականից կրկին հաստատվել է Միջին Ասիայում, բնակվել գլխավորապես Տաշքենդում: Կյանքի վերջին տարիները անց է կացրել Երևանում և այստեղ մահացել: 1918 թ. նրա և Ա. Բակունցի միջև խոսակցություն է տեղի ունեցել, որի ժամանակ Բակունցը, առգորված հակապատերազմական տրամադրությամբ, ընկերոջը խորհուրդ է տվել թողնել զինվորականությունը: Վաղարշակը հակառակ դրան պնդել է, որ խառը ու ծանր տարիներին ինքը ճիշտ ընտրություն է արել՝ մնալով զինվորական, և որ Ալեքսանդրն էլ պետք է այդպես վարվի: «Անտառում»-ը, ըստ երևույթին, այդ բարեկամական վեճի արձագանքն է:

Էջ 19, տող 3. Ու հիշեցի Հերգային. նաև՝ էջ 18, տողեր 26—27. փշռա սալորենու բափը ինձ հիշեցրեց գանգաճեբ մի գլխով—խոսքը Բակունցի պատանեկան մտերմուհու՝ Քազուհի Սաֆրազբեկյանի մասին է. տե՛ս «Աղոթք» պատկերի ծանոթագրությունները:

է Ն Տ Ա Ր Ի Ն

(էջ 20)

Առաջին անգամ հրապարակվել է «Նոր ակոս» շաբաթաթերթ-հանդեսի 1924 թ. սեպտեմբերի 16-ի համարում (№ 10, էջ 179—183): Ապա մասնակի փոփոխություններով տեղ է գտել երկհատորյակի առաջին հատորում (1964): Այժմ տպագրվում է երրորդ անգամ՝ ըստ առաջին հրապարակման բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 23, տող 2. ՆԱ-ի բնագրում՝ կատարվելու—ուղղել ենք հլինելով շարակարգի բովանդակությունից՝ կատարվել:

էջ 24, տողեր 21—22. ՆԱ-ի բնագրում՝ Գլուխը ճզվ էր և արյունը կար-կար բափվում էր—ուղղված է՝ Գլուխը ճզվել էր, և արյունը կար-կար բափվում էր:

Պատմվածքը ինքնակենսագրական է՝ ակնարկային որոշ տարրերով. պատկերված է Երևանը 1918 թվականին: Սկզբի մասում (մինչև առաջին աստղանիշը) խոսքը վերաբերում է նույն թվականի հայաց խորհրդարանին (պառլամենտին), որի նիստերը տեղի էին ունենում ներկայիս Շահումյան փողոցում, զրոսայգու դիմաց գտնվող շենքում (№ 4), որը 1922 թ. հունվարից տրամադրվեց Երևանի պետական թատրոնին, ապա զբաղեցնում էր Հ. Պարոնյանի անվան Երաժշտական կատակերգության թատրոնը (Օպերտան):

էջ 20, տող 2—3. Այնեպ, ուր այժմ պետական քառանի դերասանը շնորհով խողով է «Երևակայական հիվանդը»—խոսքը Մոլիերի «Երևակայական հիվանդ» կատակերգության մասին է, որը Երևանի պետաթատրոնի խաղացանկում եղել է մի շարք տարիներ. առաջին անգամ բեմադրվել է 1923 թ. նոյեմբերին (մասնակցել են Մ. Ջանյանը, Ա. Ավետիսյանը, Ս. Մելիքեթյանը, Տ. Շամիրխանյանը, Հ. Ներսիսյանը, Ա. Ոսկանյանը և ուրիշներ): Հեղինակը՝ պատմվածքը գրելու թվականին (1924) պետաթատրոնի խաղացանկից հիշում է հատկապես «Երևակայական հիվանդը» երգիծական խոսքախաղի համար և նախադասությունը շարունակում է այսպես. Հենց այդ նույն առաճում ճավաճվել էին 97 վաճառպետ, 97 երևակայական հիվանդ: Նկատի ունի Հայաստանի խորհրդարանի անդամներին:

էջ 20, տողեր 13—14. կաղիկ մեկն ամբիսն էր բարձրանում և սայլի շյուղած անկ-վի պես նոնշում՝ զեկուցում բյաւրեի մասին—ըստ երևույթին, նկատի ունի այն ժամա-նակվա ելեմտական նախարար Գրիգոր Զաղեթյանին:

էջ 20, տողեր 9—10. այն տարին աշտարակի ժամացույցն էլ չէր խփում—խոսքն, ըստ երևույթին, վերաբերում է Երևան Ապուլո կինոթատրոնի (հետագայում «Կինո պրոլետար», այժմյան Լենինի հրապարակում) աշտարակի վրա գտնվող ժամացույցին:

էջ 20, տող 18. Բվեստորին աշխով աներ—Բվեստոր (լատիներեն է) այստեղ նշա-նակում է խորհրդարանի վարչատնտեսական ղեկավար:

էջ 21, տող 19. «Սահման տղերանց էին մատուցեմն յուրյանց»—երգիծական կեր-պարանափոխումն է՝ «Սահմանք քաջաց զէնն իւրեանց» հայտնի ասացվածքի, որ ավանդ-ված է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի մեջ (գիրք Ա, գլ. Ը):

էջ 23, տողեր 19—20. Բայց այս անգամ ես զճացի միլիցիայկետի մատ: Այդ մար-զուն հրավիրել էին արտասահմանից—հավանաբար, նկատի ունի 1918 թ. Երևանի մի-լիցիայի պետ Ս. Զալալյանին:

«ԱՐՏԵԼԻԱ»

(էջ 26)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. սեպտեմբերի 11-ի համարում (№ 206)՝ Ալեկս ստորագրությամբ: Նույն թվականին ու-սերեն թարգմանությունը տպագրվել է «Զարյա Վոստոկա» թերթում (№ 1003), որպես ենթավերնագիր փակագծում գրված է՝ По селам Зангезура: Ապա՝ 1926 թ. կրճատ տեղ է գտել Հ. Սուրխաթյանի «Կարմիր արև, 7-րդ տարի» դասագրքում: Այնուհետև, աննշան փոփոխումներով, հեղինակը «Արտելիան» դրել է «Պատմվածքների» 1928 թ. հրատարակության մեջ: Նույն թվականին տեղ է գտել Սուրխաթյանի հիշյալ դասագրքի նոր հրատարակության կազմում, իսկ 1930 թ.՝ Ծ. Զարենցի կազմած «Գրականության գասընթաց 2-րդ աստիճանի 7-րդ խմբերի և տեխնիկումների համար» դասագրքում: Տպագրվել է Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ «Պատմվածքների» 1928 թ. հրատարակության. «Խորհրդային Հայաստանի» բնագրի հա-մեմատ փոքր տարբերությունները նշված են Բնագրային տարբերակներ բաժնում: «Պատմվածքների» մեջ տեղ գտած բնագրում մեր կատարած ուղղումներն են.

էջ 26, տող 3, էջ 27, տող 6. Գ-ի բնագրում՝ զգուշ—ուղղված է ըստ ԽՀ-ի՝ զգույշ:

էջ 26, տող 22. Գ-ի բնագրում՝ անզգուշ—ուղղված է ըստ ԽՀ-ի բնագրի՝ անզգույշ:

էջ 30, տող 7. Գ-ի և ԽՀ-ի բնագրերում՝ բազրեմ—ուղղված է ըստ բակունցյան ալլ երկերի բնագրերում եղած գործածության՝ բազրեն:

էջ 32, տող 7. Գ-ի բնագրում՝ «Բազ Մեխի»—ուղղված է ըստ նույն բնագրի ալլ գործածության (էջ 31, տող 32) և ԽՀ-ի բնագրի՝ «Բազ—Մեխի»:

«Արտելիան» նրանում շոշափված հարցի լրագրային հրատարակությամբ, պատմված-քին հատուկ, թեկուզ թույլ արտահայտված դիպաշարի բացակայությամբ, կերպարների աշ պատմվածքային հատկանիշներով ակնարկային բնույթ ունի, բայց և չկա ակնարկի համար շատ կարևոր հատկանիշը՝ վարի ու մարդկանց որոշակիությունը (օրինակ, չկա նկարագրված դուռի, շրջանի անունը): Բացի դրանից, հեղինակն այս գործը դրել է

Պատմվածքներ վերնագիրը կրող գրքույկում, ուր ընդամենը շորս երկ կա, որոնցից առաջին երկուսը «Արտիկան» և «Տրախտորի մաշինն» են: Վերջինը, թեև նույնպես ակնարկային ակնհայտ բնույթ ունի, բայց դարձյալ զուրկ է ակնարկին հատուկ որոշակի վայրի ու անձանց նշումից: Այս հանգամանքները դժվարացնում են հիշյալ երկերի տեղը հաստորում ճշգրիտ որոշել (դեռևս սկնարկների, թե՛ պատմվածքների մեջ): Ի վերջո, կարևոր համարեցինք, որ հեղինակն այդ երկերին տվել է պատմվածք անունը: Գուցե ասվի, թե շորս երկերից բաղկացած գրքույկի Պատմվածքներ վերնագիրը պայմանական է, Քերես: Մենք նույնպես պայմանականորեն ենք այս երկու ստեղծագործությունը ներկա հաստորում դնում պատմվածքների շարքում:

Էջ 28, տող 5. «Խճիթը», «Փ04»-ը—առաջինը խրճիթ-ընթերցարանն է, որ 1920-ական թվականներին գյուղերում գրադարանի դեր էր կատարում: Փ04-ը փոխադարձ օգնության կոմիտե-ի հապավումն է: Նույն թվականներին այդ կոմիտեները հացահատիկով և այլ նյութերով օգնում էին շունեք գյուղացիներին:

Էջ 29, տող 4. «Մանկալը»—գյուղացիական թերթ, հրատարակվել է Երևանում 1922—1931 թթ. (տե՛ս նաև «Մեր գյուղերում» և ակնարկը):

«Տ Ր Ա Խ Տ Ո Ր Ի Մ Ա Շ Ի Ն»

(Էջ 33)

Առաջին անգամ հրատարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. սեպտեմբերի 30-ի համարում (№ 221)՝ Ալեքել ստորագրությամբ: Ապա՝ 1926 և 1927 թթ. տեղ է գտել (կրճատ) 2. Սուրխաթյանի «Կարմիր արև. 4-րդ տարի» դասագրքի երկու հրատարակություններում: Այնուհետև, հեղինակը զետեղել է «Պատմվածքների» 1928 թ. հրատարակության մեջ: Դրանից հետո բազմիցս տպագրվել է դասագրքերում, ինչպես 2. Սուրխաթյանի «Հայ գրականության» (Արևելահայ) 2-րդ հատորում (Ե., 1926), Մ. Գասպարյանի կազմած «Հայերենի աշխատանքի գրքում» (1928 թ. հրատարակության մեջ՝ հատված «Վարձակայան» վերնագրով, 1929 թ. հրատ. մեջ՝ հատված «Առաջ և հիմա» վերնագրով), նույնի կազմած «Դեպի նոր կյանք» դասագրքում (1929 թ. հրատ. մեջ, հատված «Տրակտոր» վերնագրով, 1930 թ. հրատ. մեջ՝ հատված «Վարձակայան» վերնագրով), Ե. Զարենցի կազմած «Գրականության դասընթացի» երկու հրատարակություններում (6-րդ տարի, 1928, 1930), «Կյանք և աշխատանք» դասագրքում (կազմ.՝ Ս. Դավթյան, Մ. Սահակյան, 2. Խողոյան, 1930), Մ. Դուրգարյանի կազմած «Պատանի կոլտոգնիկում» (1930), «Դասագիրք լեզվի և գրականության» մեջ (կազմ.՝ Ս. Տարնցի, Խ. Կանայան, Ն. Ալավերդյան, 1932) և այլն: «Տրախտորի մաշինը» ամբողջությամբ Բակունցը զետեղել է իր կազմած «Կարմիր արև. 5-րդ տարի» դասագրքում (1930 թ.), դրել է նաև «Նոր աշխարհում» (1931 թ.):

1964 թ. տպագրվել է Երկերի երկհատորյակում (հ. 1):

Հեղինակի կենդանության օրոք կատարված բոլոր հրատարակումներից բնագրային աղբյուրի արժեք ունեն շորսը՝ «Նորհրդային Հայաստանում», «Պատմվածքներում» և հեղինակի կազմած դասագրքերում հրատարակածները: Այժմ «Տրախտորի մաշինը» տպագրվում է ըստ Բակունցի կազմած «Կարմիր արև» դասագրքի բնագրի՝ Այդ, ԽՀ-ի և Պ-ի բնագրերի միջև եղած ոչ մեծ տարբերությունները տրված են Բնագրային տարբերակներ բաժնում: Բացի այդտեղ նշվածներից, կրեք բնագրային

աղբյուրներում կան նաև ուղղադրական տարբերակներ, ինչպես՝ մե՛րթ տպված է մի՛քանի, մե՛րթ՝ մի քանի, մե՛րթ՝ ծուռ ու մուռ, մե՛րթ՝ ծուռուժուռ, մե՛րթ՝ վար ու ցանք, մե՛րթ՝ վարուցանք և այլն: Անկախ այն բանից, թե որ ձևը որ բնագրում է տեղ գտել, այս հատորի բնագրի համար ընտրել ենք այժմ ընդունված ուղղադրական ձևերը: Գցել բառը՝ հակառակ նույն շրջանում հրատարակված մի շարք այլ գործերի (որոնցում քցել ձևն է իշխում), այս երկի բնագրերում գրական ձևով է տպված:

Բակունցի կազմած «Կարմիր արև» դասագրքում «Տրախտորի մաշին»-ից հետո գրված են հետևյալ հարցերն ու արաչադրանքները.

— Հետևելով ու մասնակցելով ձեր գյուղի գաբնանացան աշխատանքներին ու ծառայունակի կամպանիային—պարզեցե՛ք, թե ինչպես են վերաբերվում գյուղացիները ձեր գյուղը եկած գյուղատնտեսին: Կատարում են նրա ցուցումները: Իսկ մի քանի տարի առա՞ջ:

— Ի՞նչ նոր մեքենաներ են այս տարի բերել ձեր գյուղը և ո՞րտեղից: Ո՞վ է բացատրել գյուղացիներին նրանց բանեցնելու ձևը: Ձեր գյուղացի՞ է մեքենավարը. ո՞րտեղ է սովորել:

— Ձեր դպրոցն ի՞նչ մասնակցություն է ցույց տվել գաբնանացանի աշխատանքներին.— հաշիվ տվե՛ք այդ մասին ձեր գյուղի հասարակական ժողովում: Այդ ժողովի համար հրավեր գրե՛ք և փակցե՛ք փողոցի պատին:

— Կազմե՛ք այդ հաշվետու ժողովի արձանագրությունը, ուղղե՛ք դատարանում և տրտագրե՛ք ձեր տետրակներում:

«Տրախտորի մաշինը» ակնարկի շեշտված հատկանիշներ ունենալով՝ միաժամանակ նկարագրված գյուղի և անձանց որոշակիություն չի պարունակում, և 1928 թ. «Պատմվածքներ» անունը կրող ժողովածուի մեջ հեղինակը շորս երկերից առաջինն այն է գրել: Թեև «Տրախտորի մաշինը» կարող էր տեղ գտնել Ակնարկներ բաժնում, նկատի առնելով վերը նշված հանգամանքները, այն դրեցինք Պատմվածքներ և պատկերներ բաժնի մեջ (տե՛ս նաև «Արտեիլիա»-ի ծանոթագրությունները):

«Տրախտորի մաշինում» ուղեկցող ընկերը (անունը չի տրված), ինչպես կարողացել ենք պարզել, գյուղատնտես, գրող ու մշակութային գործիչ Կոստանդին Մելիք-Շահնազարյանն է (Տմբլաշի հաշանը), որի հետ Ա. Բակունցը մտերիմ է եղել: Իրոք, ցարական շրջանում նա շրջել է հայկական գյուղերում՝ նոր մեքենաներ և գյուղատնտեսական կանոններ արժատալորելու նպատակով:

էջ 34, տող 3 և հետո. Բյուսվա—նախկինում գյուղի տանուտերը:

էջ 34, տող 4 պրիստավ—տե՛ս «Իվան բեյը» պատմվածքի համապատասխան ծանոթագրությունը:

Ա Բ Գ Ա Ր Ե Ն Ց Ի Վ Ա Ն Ի Դ Ա Տ Ը

(էջ 39)

Ուռաչին անգամ հրատարակվել է «Մաճկալ» լրագրի 1926 թ. մարտի 31-ի համարում (№ 26)՝ Ակսել ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ «Մաճկալում» հրատարակված բնագրի:

Այս պատմվածքը Բակունցի երկերի այն խմբի մեջ է, որը նվիրված է 1920-ական թվականներին հաճախ արժարժիղ կուլակ-բատրակ խնդրին (տե՛ս նաև «Թանգին» ու «Արաբաշի Զաքին» պատմվածքները և նրանց ծանոթագրությունները):

Առաջին անգամ հրապարակվել է «Նորք» հանդեսի 1926 թ. գիրք 1-ում (էջ 47—69), 1930 թ. Բարձրում լույս է տեսել աղբյուրներին առանձին գրքուկով (Քարգմանիչ՝ Տ. Իսմիրանով), Այնուհետև, տեղ է գտել Երկրի 1955 թ. միհատորյակում և 1964 թ. երկհատորյակի առաջին հատորում՝ որոշ փոփոխություններով: Այժմ տպագրվում է ըստ 1926 թ. «Նորքում» հրապարակված բնագրի:

Կատարված ուղղումներն են.

էջ 43, տող 7. Ն-ի բնագրում՝ քեզքենի—ուղղված է ըստ նույն բառի այլ գործածությունների՝ քազքենի:

էջ 51, տող 30. Ն-ի բնագրում՝ ձեռքը շփեց ճատակին—հավանաբար վրիպակ է՝ ուղղված է՝ ձեռքը շփեց ճակատին:

էջ 52, տող 22—23. Ն-ի բնագրում՝ միտքը բակից ու պարտեզից հեռու էին բռնում—ուղղված է՝ միտքը բակից ու պարտեզից հեռու էր բռնում:

Մնացած զեպերում «Նորքի» բնագիրը նույնությամբ պահպանված է: Այդ թվում մնում են ոչ միայն հերոսների, այլև հեղինակային խոսքում եղած ժողովրդաբարբառային այնպիսի ձևեր, ինչպես՝ լեճ, իրա քեֆին (էջ 42, տող 12) կամ՝ շեյ գիգի (էջ 43, տող 10) և այլն, շնայած նույն բնագրում առկա են միևնույն բառերի գրական ձևերը՝ լայն (էջ 42, տող 2), իր (էջ 44, տող 13), շեյ գիտի (էջ 44, տող 13) և այլն: Հեղինակային խոսքում գործածված է սամովար, հերոսի խոսքում՝ սամովար, երկուսն էլ պահպանված են: Հետևյալ նախադասության մեջ. Ավելի շատ խոսք ու գրույց կար գրասենյակներում (էջ 50, տող 20) մեղ թվում է, որ պետք է լինի եզակի՝ գրասենյակում, սակայն պահպանեցինք՝ բնագրի հոգնակին, քանի որ գրասենյակներ հեղինակի կողմից կարող է հասկացված լինել նաև որպես նույն հիմնարկի սենյակներ:

Պատմվածքում նկարագրված «Գավառական մի քաղաք»-ը՝ «լայն և ուղիղ փողոցներ»-ով, «կանաչ խոտ մայիների վրա, տների առաջ՝ բոստաններ» և այլն, 1930-ական թվականների Գորիսն է:

էջ 42, տող 1 և այնուհետև. բեյ (նույնն է՝ քեկ)—նախկինում հայերի մեջ գործածվում էր իբրև պատիվ նշանակող մականուն. այդպես կոչում էին գլխավորաբար պետական պաշտոնյաներին և այլ «մեծամեծներին»: Բակունցի երկերում, բացի Խվան բեյ-ից, կան նաև՝ Մաթթոս բեյ, Ներսես բեյ, Պավլի բեյ, Արիֆուլար բեյ և այլն:

էջ 43, տող 12 և հետո. պրիստավ—ցարական Ռուսաստանում ոչ մեծ վարչական շրջանի տարիկանության պետ:

էջ 46, տող 34. Ասես վախտարան արտագրող—Ավետարանը Աստվածաշունչ գրքի երկրորդ բաժնի՝ Նոր կտակարանի, մի մասն է, քրիստոնեության հիմնական գրքը, և ամբողջությունն է շրջա կանոնական ավետարանների՝ Մատթեոսի, Մարկոսի, Գուկասի, Հովհաննեսի: Միջնադարում Ավետարանը հատուկ երկուլիցածությամբ ու շանագրությամբ էին ընդօրինակում (արտագրում): Գրիչները (արտագրողները) և ծաղկողները (նկարիչները) սովորաբար իրենց վարպետությունը առավելագույն չափով էին գործադրում Ավետարանն ընդօրինակելիս: Բակունցն այդ նկատի ունի:

Առաջին անգամ հրապարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. հունվարի 15-ի համարում (№ 11)՝ Ակսել ստորագրությամբ, Ապա տեղ է գտել 1928 թ. «Պատմվածքների» մեջ. երկու հրապարակումներն էլ ունեն բնագրային աղբյուրի արժեք. տարբերություններն անշան են (տե՛ս ԲՆագրային տարբերակներ բաժնում): Նույն 1928 թ. պատմվածքը տպագրվել է նաև Ե. Չարենցի կազմած «Գրականության դասընթացում» (ուսման 6-րդ տարի): Տեղ է գտել Երկերի 1954 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ հեղինակի վերջին հրապարակման՝ 1928 թ. «Պատմվածքների» բնագրի:

Ուղղում.

էջ 67, տող 8. Պ-ի բնագրում պոզեր—վրիպակ է, ուղղել ենք՝ պոզեր (ԽՀ-ի բնագրում ճիշտ է):

էջ 67, տող 10. Պ-ի բնագրում կնոջ հրում—ուղղել ենք՝ կնոջը հրում:

Չարենցի կազմած դասագրքում պատմվածքի բնագիրը անշան տարբերություններ ունի այժմ հրապարակվող բնագրի համեմատ: Անհնար է որոշել, թե այդ փոփոխությունները Չարենցն ինքնուրույն է կատարել, թե՞ առել է Բակունցի համաձայնությունը: Բովանդակության մասին տե՛ս «Թանգին» պատմվածքի ծանոթագրություններում:

Թ Ա Ն Գ Ի Ն

(Էջ 72)

Առաջին անգամ հրապարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. մարտի 25-ի համարում (№ 71)՝ Ակսել ստորագրությամբ, ապա տեղ է գտել «Պատմվածքների» 1928 թ. հրատարակության մեջ: Այնուհետև, հեղինակը պատմվածքը գրել է իր կազմած «Կարմիր արև. Ուսման 5-րդ տարի» դասագրքում (Ե., 1930): Երեք հրապարակումներն էլ բնագրային աղբյուրի արժեք ունեն: Բացի դրանից, պատմվածքը կրճատումներով կամ լրիվ տեղ է գտել հետևյալ դասագրքերում. Ս. Հակոբյանի «Կարմիր արևի» երկու հրատարակություններում (Ե., 1927, 1929), «Նեպի նոր կյանք» (քաղաքային հանրակրթարանների համար, Ե., 1929), «Նորհրդային գյուղ» (գյուղական հանրակրթարանների համար, Ե., 1929), ինչպես և «Լեզվի և գրականության դասագրքում» (6-րդ տարի, Ե., 1933): Վերջին անգամ պատմվածքը տպագրվել է Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1):

Այժմ տպագրվում է ըստ Բակունցի կազմած «Կարմիր արև» դասագրքի բնագրի, որ հեղինակի վերջին հրապարակումն է: Վերոհիշյալ երեք բնագրային աղբյուրների միջև տարբերությունները շատ փոքր են. արված են ԲՆագրային տարբերակներ բաժնում:

Բակունցի «Կարմիր արև» դասագրքում պատմվածքից հետո գրված են հետևյալ հարցերը.

— Ինչպիսի գյուղացի էր Թաևգին:

— Ինչ միջոցներով էր նա հարստություս դիգել:

— Երբ նրա ձեռքից հողերը խլեցին. նա իրո՞ւմ ուզում էր իր հողը մտտիկ ազգականներին բաժանի.— Երբ ոչ՝ ի՞նչ էր նրա նպատակը:

— Եկառագրեցե՛ք ձեր գյուղի հողատեր և կուլակ տնտեսությունների վախճանը: Հագործածանության ժամանակ նրանցից վերցրած հողն ո՞ւմ է հատկացվում:

— Իրենց կորցրած իրավունքները ետ բերելու համար ի՞նչ միջոցների են դիմում երանք. ճիշեցե՛ք ձեր գյուղի փորձից:

«Քանզին» ևս Բակունցի էրկերի այն խմբից է, որոնք նվիրված են 1920-ական թվականների հայ գյուղի զորքանների կամ կուլակների պատկերմանը: Դա հիշյալ թվականների հայ գրականության արևելյան հատվածում հաճախ արծարծվող հարցերից էր, և Բակունցը պատշաճն է մատուցել: Նույն խմբի մյուս երկերից են «Ջորրան» (տե՛ս այս հրատ. 1-ին հատորը) և «Մատուն տղան», այդ խմբին բովանդակությամբ մոտ են նաև «Արարաչի Զարին», «Արզարենց Իվանի դատը» և ուրիշներ:

Էջ 73, տող 31. Խա՛ն ու սառղա՜ր—խան էին կոչվում մոնղոլ-թաթարական տիրակալները, ա՛վելի ուշ պարսից տեղական իշխանները, հողատերերը: Սառղար կոչվում էին պարսկական տիրապետության ժամանակ (նախքան 1828 թ.) պարսից շահի կողմից նշանակվող կուսակալները, հատկապես Երևանի խանությունում: Նշանակում է նաև պարսից զորավար: Դառնալ խա՛ն ու սառղա՜ր նշանակում է լինել արտօնյալ, ունևոր և այլն:

Ք Ա Լ Ո Ւ Ս Տ Ի Վ Ի Կ

(էջ 78)

Առաջին անգամ տպագրվել է 1926 թ. առանձին գրքույկով (19 էջ)՝ «Գյուղացու գրադարան» մատենաշարի ներքո (№ 26, 29): Դա Բակունցի հրատարակած առաջին գիրքն է: Հաջորդ տարիներին հատվածաբար տպագրվել է հետևյալ դասագրքերում. «Հայերենի աշխատանքի գիրք. հասակավոր կիսագր. դպր. և ինքնագրագ. համար» (կազմ. Մ. Գասպարյան), Ե., 1928, «Կարմիր արև» 7-րդ տարի (կազմ.՝ Հ. Սուրխաթյան) Ե., 1928, «Երրորդային գյուղ: Աշխ. գիրք գյուղական հանրակրթ. համար», Ե., 1929, «Կարմիր արև. Ուսման 5-րդ տարի» (կազմ.՝ Ա. Բակունց), Ե., 1930, «Նոր կյանք» 3-րդ տարի, Հյուսիս. Կովկասի, Ղրիմի և Ուկրաինայի դպր. համար» (կազմ. Ա. Տեր-Հարությունյան, Ե., Զաքարյան), Մոսկվա, 1930: Ապա տեղ է գտել 1964 թ. երկհատորյակի առաջին հատորում: Բնագրային աղբյուրի արժեք ունեն պատմվածքի առաջին հրատարակումը և Ա. Բակունցի կազմած «Կարմիր արևում» տպագրվածը: Վերջինը, սակայն բավական կրճատ է, ամբողջությամբ հանված են 4-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ մասերը, 5-րդ մասից երկու հատված, և պատմվածքի 13 մասերը վեր են ածվել 3-ի: Կան վրիպակներ: Հեղինակային գեղարվեստական մշակում չկա. եղած շատ մասնավոր փոփոխություններն անկարևոր են: Այսպես, էջ 82, տող 12. գրքույկի բնագրում՝ հետ, դասագրքում՝ ետ, էջ 82, տող 13. գրքույկի բնագրում՝ յուր, դասագրքում՝ իր. էրկու տեղ՝ էջ 83, տող 15, էջ 91, տող 14. գրքույկում՝ ասեց, դասագրքում՝ ասաց, էջ 80, տող 15. գրքույկում՝ համարել, դասագրքում՝ համբել:

Այժմ տպագրվում է ըստ 1926 թ. բնագրի, միայն որոշ կետադրական ճշտումներ մուծված են դասագրքային բնագրի համաձայն:

Բակունցը, «Գալուստի վիկը» դնելով իր կազմած «Կարմիր արև» դասագրքի մեջ վերջում աշակերտների համար կցել է հետևյալ հարցերը.

— Ի՞նչ առաջարկներ արեց գյուղատնտեսը և այդ առաջարկներն օգտուր ո՞րն էր:

— Ինչպե՞ս հասկանանք Թալուսամ ազօր հասցեյին Գալուստի ասած «Ուկեղք ցնդացել է, էլ ծովիլ շի» դարձվածքը:

— Ի՞նչ բնավորության տեր էր Գալուստը: Իսկ Թալուսամ ապե՞րը. այդպիսի բեավորության տեր մարդիկ կա՞ն ձեր ծանօթների շրջանում:

— Գալուստի «կազմեր կարդալն» ու «ժողովներ գնալը» ի՞նչ օգուտ տվեց նրան:— Գալուստն ի՞ր այդ բնավորությամբ կարո՞ղ էր սուսելի ճիմը դնել:

— Ի՞նչ նոր կուլտուրական բույս կամ գյուղատնտեսական մի այլ նորություն է առաջարկում ձեր գյուղատնտեսը. դրա օգուտների մասին գրեցե՞ք ձեր պատի բերքում:

1926 թ., երբ լույս տեսավ «Գալուստի վիկը» գրքուկը, Բակունցն աշխատում էր ՀՍՍՀ Հողօրոգիկոմատում որպիս հողվարույթյան բաժնի պետի տեղակալ և շարունակում էր գործուն մասնակցությունը քրեիլ Հայաստանի գյուղ. տնտեսական կյանքին: Նա եռանդուն աշխատանք է տարել նաև «Գյուղացու գրադարան» մատենաշարը կազմակերպելու և աշխուժացնելու նպատակով: Այդ մատենաշարով հրատարակվում էին փոքր գրքուկներ, որոնք հասցեագրված էին հողի աշխատավորին: Նպատակն էր գյուղացուն գիտելիքներ տալ հողագործական, անասնապահական, այգեգործական աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար: Ուստի մատենաշարի հրատարակությունները պետք է գրված լինեին պարզ, առանց նեղ մասնագիտական անվանումների, Բակունցը մեծ ջանքեր էր թափում այդ ուղղությամբ՝ «Գյուղատնտեսական կյանք» ամսագրում մանրամասն գրախոսելով մատենաշարի մի շարք գրքուկներ: Նա նաև նորանոր հեղինակների էր ընդգրկում այդ գործի մեջ, և ինքն էլ գրում էր, կատարում թարգմանություն՝ այդ մատենաշարով լույս ընծայելու համար: «Գալուստի վիկից» հետո նույն 1926-ին «Գյուղացու գրադարան» մատենաշարով (№ 30)՝ հրատարակվեց Բակունցի «Կարտոֆիլի մշակությունը» (տե՛ս Երկերի ներկա հրատ. 4-րդ հատորում), 1927 թ. (№ 47)՝ «Նոտորություն կոմունան» (տե՛ս 4-րդ հատորում) և Ս. Յրիդելիի «Տասը պատգամ անասնապահին» գրքուկը՝ Բակունցի փոխադրությամբ (№ 40):

Այդ գրքուկները բարձր գնահատվեցին խորհրդային և Սփյուռքի հայ մամուլում (տե՛ս, օրինակ, «Մաճկալ», Երևան, 1926, հունիսի 10, № 46, «Մարտակոչ», Քփղիս, 1926, հունիսի 16, № 135, «Արագած», Փարիզ, 1926, № 16 և այլն): Հատկապես նշվում էր, որ հեղինակը կարողացել է ժամանակի գյուղատնտեսության մակարդակով կարևոր գիտելիքներ հրամցնել հայ գյուղացուն՝ նրան հասկանալի եղանակով: Բարձր էին գնահատվում Բակունցի գյուղատնտեսական այդ երկերի գեղարվեստական հատկանիշները: Հատուկ ուշադրության արժանացավ «Գալուստի վիկը», որի մասին «Մարտակոչը» 1926 թ. (№ 135) գրում էր. «Ակսել Բակունցի այս փոքրիկ պատմվածքը, որ առանձին բրոշյուրով հրատարակել է Խ. Հայաստանի Հողօրոգիկոմատը, շատ նման է իր կառուցվածքով և ձևով Ակսելի բոլոր պատմվածքներին... Գրվածքը կարդացվում է մեծ հաճությամբ ու հետաքրքրությամբ. կան բնորոշ շատ մոմենտներ՝ գյուղական կյանքից վեցրած, և բախումների տիպիկ կտորներ: Հողօրոգիկոմատը լավ կլինի նման պատմվածքների սերիան ուժեղացնի և տարածման գործը կանոնավորի, մասնավոր գավառներում»:

Սա Բակունցի գրական գործի առաջին դրական գնահատականներից էր (դրան նախորդել էր նույն «Մարտակոչը» 1925 թ. նոյեմբերի 1-ի համարում Ա. Կարինյանի հոդվածը՝ Բակունցի ակնարկներին տրված դրական գնահատականով):

«Գալուստի վիկը» ժամանակին իր դերը կատարել է՝ Հայաստանում անասնակերի արդյունավետ տեսակներից մեկի՝ վիկի մշակութունը զարգացնելու համար: Այս երկը հեղինակը գրել է և ընթերցողին մատուցել ոչ թե իբրև գեղարվեստական գործ, այլ որպես վիկի մշակութունը Հայաստանի մի շարք շրջաններում տարածելու գործնական քարոզ և ուղեցույց: Ժամանակին գրքուկը կարդում էին գրագետ հողագործները, նաև քարձրածայն ընթերցվում էր գյուղերում:

Գյուղատնտեսական այս պատմվածքից զատ, Բակունցը իբրև գյուղատնտես ու հոգաշինարար, գյուղերում շրջելիս՝ գրույցների, ժողովների ժամանակ էլ ու ամեն առիթով բացատրել է Հայաստանի տարբեր շրջաններում գյուղատնտեսական արդյունավետ մշակութուններ արմատավորելու եղանակներն ու միջոցները, դրանցից ստացվող օգուտները: Իր գյուղատնտեսական բազմաթիվ հոդվածներում էլ նույնն է արել: Մասնավորապես կերաբույսերի՝ վիկի, առվույտի, կորնզանի մշակութայն արմատավորմանը նա նվիրել է մի շարք հոդվածներ (տե՛ս, օրինակ, «Կարմիր ուշադր», 1923, № 21, «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 8, 10 և այլն):

Այսօր, իհարկե, «Գալուստի վիկը» արգո-պատմվածքը մեծապես կորցրել է իր արգո նշանակությունը, բայց պահպանել է պատմվածքի արժեքը՝ գեղարվեստական ու հանաչողական հատկանիշներով, ինչպես և հայ գյուղի նկատմամբ բակունցյան սիրո ու հոգատարության ոգով:

Պատմվածքում նկարագրված գյուղը, հավանաբար, Բակունցի հարազատ Նրիշենն է (Գորիսի մոտ): Ուշադրություն է գրավում երեք անգամ Սանդ աղբյուրի հիշատակումը. այդ աղբյուրը հեղինակն իր երկերում սովորաբար հիշատակում է Երիշենը նկատի ունենալիս (հմտ. «Ձմռան մի գիշեր», «Եղբայրության ընկուղենիները» պատմվածքները), և այն իրոք գտնվում է Երիշենում: Քաղաքը, ուր գնում է Գալուստը սայլով և վերադառնում, Գորիսն է:

Էջ 78, տող 1 և այնուհետև. վիկ—նակ՝ վիկա, լորագգիներին պատկանող խոտաբույս է, գյուլուլի մի տեսակը, օգտագործվում է իբրև անասնակեր: Հայաստանում սկսել են մեծ չափերով ցանել 1920-ական թվականների երկրորդ կեսից:

Գ Ր Ո Գ Ա Պ Ա Ն Գ Ե Վ Ո Ն

(էջ 93)

Առաջին անգամ հրատարակվել է «Նորք» հանդեսի 1926 թ. գիրք 2-ում. վերնագրից ցած՝ Ախել Բակունց: Ապա 1964 թ. տեղ է գտել Երկերի երկհատորյակում (հ. 1)՝ որոշ կրճատումներով: Այժմ ապագրվում է ըստ «Նորքի» բնագրի:

Ուղղումներ.

Էջ 94, տողեր 27—30. Ն-ի բնագրում՝ Իսկ առաջին ուղևորը, որ հրապարակում նստել և Գևոյի դրագում նստած անցել քաղաքի ծուռ ու մառ փողոցները, հրապարակր. լսել գրոգապանի հնարած պատմությունը, կեղծ գայությունը:—Ուղղել ենք՝ Իսկ առաջին ուղևորը, որ հրապարակում էր նստել և Գևոյի դրագում նստած անցել քաղաքի ծուռ ու մառ փողոցները, հրապարակը, լսել էր գրոգապանի հնարած պատմությունը, կեղծ գայությունը:

Էջ 96, տող 16. Ն-ի բնագրում՝ խեղճը—ուղղել ենք ըստ շարակարգի բովանգողության՝ խիղճը:

էջ 107, տող 14. Ն-ի բնագրում՝ քացնոզ ավառա շները—ուղղել ենք՝ քազնոզ ավառա շները:

Յնորգի» բնագրում կան անստույգ նախադասութիւններ: Էջ 101, տողեր 3—5. Նրանք փորձով գիտեին, որ այդ միջամտութիւնն ավելի ծանր հարվածների պատճառ էր դառնում և մտ այն խոսքերին, որ վերաբերում էին ուտելուն ու խմելուն: Ինչ-որ հատված տպագրութեան ժամանակ դուրս է ընկել: Քողի ենք նույնութեամբ (ավելացնելով ստորակետ դառնում-ից հետո), քանի որ հատվածի լրիվ ուղղումը բնագրում մեր լուրջ միջամտութիւնը կլինէր: Էջ 105, տողեր 10—14. Պակասավոր է և անկանոն ամբողջ պարբերութիւնը՝ երկու նախադասութիւններով. մեկի սկիզբն է՝ Շատ քիչ էր պատահել... մյուսինը՝ Այդ էր պատճառը...: Նույնպէս շներ ուղղել:

«Գրոգապան Գևոն» ընդհանրութիւն ունի բակունցիան մի քանի այլ երկերի հետ՝ հատկապէս «Եվան բնի» և «Պրովինցիալի մայրամուտի»: Բոլոր դեպքերում էլ պատկերված է անցյալի մարդկանց, նրանց հոգեբանութեան անհետացումը, բայց և այս երեք երկերում խոսքը ոչ թէ գլուղին, այլ քաղաքին է վերաբերում: Ընդ որում, «Գրոգապան Գևոնի» և «Եվան բնի» գլխավոր կերպարները հետո. ևս դրական համարվելուց և հեղինակի սիրելի հերոսները լինելուց, բայց նրանց մէջ անգամ Բակունցը առաջինութեան ուղիղ գծեր է հայտնաբերել և նրանց ողբերգութեան ու կործանման համար անգամ, կարծես, ցած է զգում («Պրովինցիալի մայրամուտի» հերոսը նման է մյուս երկուսին. բայց, ի տարբերութիւն նրանց, կարծես նրա դատապարտվածութիւնը խորապէս զգալով, հեղինակը թաքուն համակրանք է տածում այդ հերոսի նկատմամբ):

էջ 93, տող 7 և այլուր. գրագ—երկարավուն սայլ, որի առջևի և ետին ակերի սանիները միացված են հասուկ տաշած գերանով (որը ռուսերեն կոչվում է գրագ, իսկ սայլը՝ գրագի): Գրագապան—գրոգ պահող և վարող:

Հ Ի Ն Տ Ա Ն Ը

(էջ 111)

Առաջին տեղում հրատարակվել է «Յնորգային Հայաստան» օրաթերթի 1927 թ. հունվարի 9-ի համարում (№ 6)՝ Ալիսէլ ստորագրութեամբ: Երկրորդ անգամ տպագրվել է երկերի երկնամտորշակում (Շ. 1)՝ մասնակի փոփոխումներով: Այժմ տպագրվում է երրորդ անգամ, նույնութեամբ պահպանված է «Յնորգային Հայաստանի» ընկալը:

Ուղղումներ.

Հեանայ գեպրում (էջ 111, տողեր 5—7) թվաց, թէ ուղղման կարիք կա. Հավերժ ամառն շուրին փախում են հավաքնից և կանեփուտում ձու ամում: Հաս երկուսիսին, շուրին վրեպակ է, հիշար՝ շողին: Սակայն, հետազոտել է ես, որ շուրին-ը հեղինակային լինել է վերջո. գերազանցեցիք ուղղել՝ շողին:

էջ 112, տող 29. Նաևուն—ուղղել ենք բառ այլ գործածութիւնների՝ նաևուն:

էջ 112, տող 33. ԽՆ-ի բնագրում՝ բայց չկա ասածը Ավան ամին. հիմա ուրիշ օրե՞ս են—ուղղել ենք՝ բայց չկա ասածը. Ավան ամի. հիմա ուրիշ օրե՞ր են:

էջ 116, տողեր 16—17. ԽՆ-ի բնագրում՝ Հեղեառ հոբոսեր—այլ տեղերում (էջ 116;

տողեր 2, 5, էջ 116, տող 20) Հեղեար մարտու է, ըստ այդմ ուղղել ենք՝ Հեղեար մարտուր:

Չենք ուղղել բարբառից եկող մի քանի անճիշտ ձևեր, անհամաձայնություններ, ինչպես. էջ 111, տող 13. վար ընկավ, էջ 111, տողեր 17—18. աչխս ընկավ ճակատիդ կենթոններ, էջ 113, տող 32. ասես ավագի ճատիկներ էր բափվում:

Նամակի ձև առած այս ստեղծագործության գլխավոր հերոսի՝ Ավան ամու, անունը հանդիպում է նաև Բակունցի այլ երկերում՝ «Կարմրաքար», «Մինա բիրին»: «Կարմրաքարի» Ավան ամին իր տարբերքի մեջ է, դեռ հնի ավանդները մի կերպ պահպանող գյուղում: Այստեղ նա հայ նահապետականության բնորոշ ներկայացուցիչն ու զաղափարախոսն է, իհարկե, խառնվածքի ու քնավորության ուրույն գծերով, որոշակի աշխարհընկալմամբ, շատ գործուն, ավյունով: «Մինա բիրին» պատմվածքում Ավան ամին արդեն բավական ծեր է. գյուղում կնոջ հետ մենակ են մնալիլ, նրանց այցելում է քաղաքում բնակվող և «տաս տարուց ավելի» գյուղում շեղած որդին՝ կնոջ ու դստեր հետ: «Հին տանը» նամակ-պատկերում Ավան ամին բոլորովին զառամյալ է: «Շատ ես ծերացել, Ավան ամի: Եթե եզդ այդքան պառավեր, լուծը վիզը մաշեր, ատամները թափվեին ու էլ չկարողանար շոր հարդը որոճալ, իհարկե, ձեռքիդ դանակով կմորթեիր պառավ եզան...»,— գրում է Ակսելը՝ հատուկ շեշտելով հայ նահապետականության դասապարտվածությունը:

«Հին տան» Ավան ամին էլ է «Կարմրաքարի» հերոսի պես նահապետականության զաղափարախոս («Որքան նահապետական ես, Ավան ամի. ինչպես չծիծաղել խոսքիդ վրա, թե ամի օրից, երբ հացը կշեռքի վրա դրին, աշխարհքից վերացավ լիությունն ու բարեկամը», «Քաղաքն առաջ էլ թեզ համար շարքի որջ էր», «Դու գիտես, թե գյուղը ամուր պատվանդան է»): Արտաթիւնով «Հին տան» Ավան ամին բավական նման է «Մինա բիրին» հերոսին, տարբերվ էլ նրան ավելի մոտ է:

Այսպես. երեք տարբեր երկերում, ըստ երևույթին, առկա է միևնույն հերոսը՝ երեք ժամանակամիջոցներում, և խորհրդանշում է նահապետականության վերջին երեք շրջանները: «Կարմրաքարում» արդեն խախտված են նահապետական գյուղի հիմքերը, բայց Ավան ամին դեռ եռանդով կռվում է Հիրանների, Մկրտումների ու Եփրեմների դրամապաշտության ու խարդախամտության, ինչպես և Արզումանների քաղաքասիրության ու գյուղը լքելու տրամադրությունների դեմ: «Մինա բիրինում» Ավան ամին մնալով նախկինը ցավ ի սրտի հարմարվել է իրողությանը՝ գյուղում լքված մնալուն և հին գյուղի արմատական փոփոխմանը. թեև կինը՝ Մինա բիրին փոքր հույս ուներ թոռանք հավատացյալ ու գյուղական ամոթխած աղջիկ դարձնելու (այդ հույսն ի դերև է հյւնում): «Հին տանը» պատկերում այլևս հույսի որևէ նշույլ չկա: Զառամյալ Ավան ամին մենակ է, ոչ միայն զավակներն են լքել նրան, այլև՝ կինը («չավ է, որ նանին մեռել է ու չի տեսել մեր ցաք ու ցրիվ լինելը»): Այս երկը հայ նահապետականության դամբանականն է: Թեև, անպայման, սրտացավությամբ թափանցված, իբր հեշտ ասված խոսքերի տակ հեղինակի ապրած ներքին ցավով լի Ակսելը շատ շատերից լավ գիտեր, որ պատմության ընթացքով ասպարեզից անհետանում էր հայոց դարավոր Մթնաձորը՝ Ավան ամիներով, Մինա բիրիներով, որոնց նկատմամբ, սակայն, սրտագին նվիրում ուներ այդ նույն Ակսելը:

Առաջին անգամ հրապարակվել է «Երիտասարդ բոլշևիկ» ամսագրի 1927 թ. հունվարի համարում (№ 1). վերնագրից առաջ՝ Ակսել: Հաշորդ տարին տեղ է գտել 2. Սուրխաթյանի կազմած «Կարմիր արև. 7-րդ տարի» դասագրքում, 1929-ին մի հատված՝ «Բատրակ Օվիսը և կուլակ Ջաֆին» վերնագրով տպագրվել է «Երիտասարդային գյուղ. աշխատանքի գիրք գյուղական հանրակրթարանների համար» դասագրքում (կազմ.՝ Մ. Գասպարյան): Այնուհետև տպագրվել է Նրկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1)՝ որոշ կրճատումներով ու փոփոխումներով: Այժմ տպագրվում է ըստ առաջին հրատարակման բնագրի:

Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 117, տող 14. ԵՐ-ի բնագրում՝ նոյաբ—ուղղել ենք ըստ նույն բնագրում եղած մյուս ձևի՝ նոյաբ:

էջ 118, տողեր 4—5. ԵՐ-ի բնագրում՝ դիմում տալիս—ուղղել ենք՝ դիմում է տալիս:

էջ 119, տող 34. ԵՐ-ի բնագրում՝ «զարիբանցի»—այնուհետև նույն բառն ամենուրեք, մեծատառով է, ըստ այդմ ուղղել ենք՝ «Ղարիբանցի»:

էջ 125, տող 19. ԵՐ-ի բնագրում՝ տարեց տարի—ուղղել ենք՝ տարեցատարի:

էջ 126, տող 9. ԵՐ-ի բնագրում անմիջ—ուղղված է՝ անմիտ:

Ուղղված են նաև այնպիսի հնաձևություններ, ինչպես՝ դյուր չեկավ (էջ 121, տող 4)՝ գուր չեկավ: ԵՐ-ի բնագրում առկա են՝ տնով տեղով, սրա նրա (էջ 123, տող 20), տեղ տեղ (էջ 124, տող 12), իրեն իրեն (էջ 125, տող 25), շուտ շուտ (էջ 126, տող 27).—բոլորը դարձրել ենք դժիկով:

ԵՐ-ի բնագրում կա կառնտակին բառը (էջ 119, տող 22), որ կարող է և կոռնտակին-ի տպագրական աղավաղումը լինել, թեև այդ կոռնտակին-ն էլ հնարավոր է, որ հեղինակային լինի՝ երևի անշատ զրված, ուստի ուղղեցինք՝ կոռն տակին: Կա ունիմ հին ձևը (գյուղացի հերոսի խոսքում—էջ 122, տող 6), որ հնարավոր է այստեղ ունեմ ձևի տպագրական աղավաղումը լինի, թեև՝ չի բացատրվում նաև հեղինակային լինելը, ուստի շուղեցինք: Զուգահեռաբար գործածված են արևամուտ և արևմուտ ձևերը (էջ 124, տողեր 2—3, 28) նույնությամբ թողել ենք: Բակունցը թուրքական—չի վերջածանցը մե՛րթ —չի, մե՛րթ —չի ձևերով է գործածում. յուրաքանչյուր գործում թողել ենք եղած ձևը, այստեղ՝ —չի (արարաչի):

Այս պատմվածքը զրված է «Երիտասարդ բոլշևիկ» ամսագրի պատվերով և արտահայտությունն է 1920-ական թվականների երկրորդ կեսին մամուլում, գրականության մեջ հանախ արծաթծվող կուլակ-բատրակ հակադրության (տե՛ս նաև «Թանգին» պատմվածքի ծանոթագրությունները):

Վ Ա Ղ Ը Մ Ա Ր Տ Ի 8-Ն Է

(էջ 129)

Առաջին անգամ հրապարակվել է «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի 1927 թ. փետրվարի համարում (№ 2). վերնագրից առաջ՝ Ակսել: Ապա մշակումից հետո հեղի-

նակն այն զետեղել է «Սպիտակ ձին» խորագիրը կրող պատմվածքների ժողովածուի մեջ (Մոսկվա, 1929): Այնուհետև, պատմվածքը տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ «Սպիտակ ձին» ժողովածուի բնագրի՝ հետևյալ ուղղումներով:

էջ 131, տող 34. ՍՁ-ի բնագրում տեսանք—ուղղել ենք ըստ բովանդակության՝ տեսանք:

էջ 133, տող 3. ՍՁ-ի բնագրում՝ համբուրին—ուղղել ենք՝ համբուրյին:

Պատմվածքի 1927 և 1929 թթ. բնագրերի տարբերությունները նախապես ուզում էինք ներկայացնել Բնագրային տարբերակներ բաժնում, սակայն պարզվեց, որ այդ տարբերությունները, հատկապես «Մութը ընկնելուց՝ Փառանձեմը Աննայի հետ կամացույց տնից դուրս եկավ» (էջ 132, տողեր 7—8) նախադասությունից հետո այնքան շատ են, որ տարբերությունների ցուցակը բավական ծավալուն կլիներ, ուստի, ավելի ճիշտ համարվեց «Հայաստանի աշխատավորուհու» տարբերակը տպագրել առանձին՝ Այլ խմբագրումներ բաժնում:

Պատմվածքը գրված է «Հայաստանի աշխատավորուհու» խմբագրության պատվերով: Բակունցն իրրև նախակերպարներ և նախադեպքեր նկատի է ունեցել իրենց ընտանիքը և հատկապես քույրերին՝ Անահիտին (Աննային) և Փառանձեմին: Վերջինիս ամուսնությունը, հիվանդությունն ու մահը, որ ներկայացված է վերհուշի ձևով, իրողություններ են: Իրողություն է նաև 1920-ական թվականներին կանանց մեջ աշխատանք տանելու Աննայի հակումը: Այդ կարգի մի այլ կերպարի՝ «Մթնածորի «չարքը» պատմվածքի հերոսուհի Ասյայի (տե՛ս Երկերի այս հրատարակության առաջին հատորը)՝ համար, նույնպես իրրև նախակերպար նկատի է առնված Աննան: Նա քույրերի մեջ Բակունցի անմիջական ավագն էր, Փառանձեմը՝ փոքրը: Պատմվածքում հեղինակը Փառանձեմին դարձրել է ավագ, Աննային՝ փոքր, գեղարվեստական պատումն ավելի համոզիչ դարձնելու նպատակով (փոքր քույրն է վերհիշում մեծին): Պատմվածքի վերջում գրված ձեռագիրը Աննայինն է. Բակունցի խնդրանքով քույրը այդ շորս տողը գրել է Երևանում, գրողի այն ժամանակվա բնակարանում (Կոնդ):

Բ Ե Վ Ա Ն, Բ Ե Վ Ա Ն...

(էջ 137)

Առաջին անգամ հրատարակվել է «Նորք» հանդեսի 1927 թ. դիրք 1-ում. վերնագրից հետո՝ Ալեյ Բակունց: Ապա տեղ է գտել Երկերի 1955 թ. միհատորյակում և 1964 թ. երկհատորյակի առաջին հատորում՝ զգալի կրճատումներով: Այժմ տպագրվում է «Նորք» նախնական տպագիր բնագիրը: Կատարված ուղղումներն են.

էջ 139, տող 9—10. Ն-ի բնագրում՝ Գիտակցական վերաբերմունք իր վիճակը—հավանաբար տպագրական վրիպակ է, ուղղել ենք՝ Գիտակցական վերաբերմունք դեպի իր վիճակը:

էջ 147, տողեր 8, 13. Ն-ի բնագրում ջրաբաժան—ուղղել ենք նույն բնագրում բառի այլ գործածությունների համաձայն (օր.՝ էջ 148, տող 30)՝ ջրբաժան:

էջ 155, տողեր 4—5. Ն-ի բնագրում՝ քաղ տալիս—ուղղված է ըստ նույն բնագրում բառի այլ գործածությունների (էջ 157, տող 7, էջ 157, տող 21, էջ 158, տող 34)՝ քաղ տալիս:

էջ 157, տող 2. Ն-ի բնագրում՝ կարող են—ուղղված է՝ կարա՞ղ են:

էջ 158, տող 3. Ն-ի բնագրում՝ «Եղալլան»—ուղղված է ըստ նույն բնագրում բառք ալլ գործածությունների (էջ 157, տող 9, էջ 158, տող 6, էջ 159, տող 17)՝ «Եղալլանհն»:

էջ 160, տող 16. Ն-ի բնագրում՝ ներքից—ուղղել ենք ըստ բովանդակութիւնի՝ ներ-
դից:

էջ 163, տողեր 9—11. Ն-ի բնագրում՝ Բայց երբ նաճապարհի կողքին սայլեր տն-
սավ, սայլերը ետ մնացին, սելվորները զղակներն օրում ճոճելով կանչեցին, Տիտասը
տեսավ, թե ինչպես սայլերը ետ մնացին—անտեղի կրկնված է սայլերը ետ մնացին-ը.
Հնարավոր է, որ վրիպակ լինի: Բովանդակությունից ելնելով առաջին գործածությունը
հանել ենք:

էջ 163, տող 21. Ն-ի բնագրում՝ իմանա՞ր—բացականշական նշան ենք ավելացրել
ելնելով բովանդակությունից՝ իմանա՞ր:

Չենք ուղղել խոսակցական ուղղագրութիւնի որոշ ձևեր, ինչպես՝ զգուշ (էջ 158,
տող 15), որ սովորական է Բակունցի երկերում և տվյալ գործում իր գրական-ուղղա-
գրական տարբերակը չունի: էջ 157, տող 10. անհաշող է թե կաղն իր մտքերն էր անում
նախադասությունը (իմաստն է՝ կաղը միտք էր անում), որ մեզ հեղինակային թվաց,
և չուղղեցինք:

«Քևան, Քևան» պատմվածքը մեկն է բակունցյան այն երկերից, որոնցում նկա-
րագրված է հայ գլուղի պատանիների ու երիտասարդների փախուստը դեպի քաղաքներ
(նաև՝ «Հին տանը», «Մինա բերին», «Մայրը», «Կարմրաքար» և այլ երկերում):

Պատմվածքի լույս տեսնելուց մոտ մի տարի անց «Գրական դիրքերում» ամսագիրը
(1928, № 3) տպագրեց Ռաֆայել Աթայանի հոդվածը «Նորք» հանդեսի առաջին համարի
տեսությունը նվիրված: Այնտեղ ուշադրութիւն էր արժանացել Բակունցի պատմվածքը,
որի մասին գրված էր. «Ակսելի «Քևան, Քևան»ը, ինչպես նրա բոլոր պատմվածքները,
կարդացվում են հետաքրքրութիւնով: Նա աշխատում է ցույց տալ, թե ինչպես քաղաքից
սլոթը սարով» էն կողմ գտնվող հովիվ պատանու մեջ արթնանում է քաղաքում լինելու,
աշխարհ տեսնելու ու սովորելու իղձը, որը նա իրականացնում է հաղթահարելով բոլոր
արգելքները: Այդ նրան հաջողվել է: Ակսելը այստեղ էլ շի մոռացել իր արջին, և հովիվ
Տիտոսի մասին ասում է. «Հեռվից՝ նա անտառից մուրվակա՛ արջի թոթովի էր նման»:

էջ 143, տողեր 33. Էտեղից մի օրում կնասնես Սիսիանի մնալին, էտեղից էլ օր
ու կեսվա նաճապարհ է մինչև մաշինին հասնես և այլն—պատմվածքի հերոս Անտոնի
նկարագրած այս ճանապարհը 1920-ական թվականներին ամենահարմարն էր Երևան
գնալու: Համար. այն Գորիսից Բիշանագ լեռան վրայով՝ Բիշանագի լեռանցքով (2346 մ.
բարձրությամբ) տանում է դեպի Նախիչևան, այստեղից էլ գնացքով կարելի էր հասնել
Երևան (տե՛ս նաև «Բիշանագ» ակնարկի ծանոթագրությունները): Պատմվածքի գլխա-
վոր հերոս Տիտոսն այդ ճանապարհով էլ գնում է, և ճանապարհորդութիւնն նկարագրու-
թյունն էլ կազմում է պատմվածքի մեծ մասը:

Բակունցն այդ ճանապարհով առաջին անգամ անցել է 1910 թ., երբ մեկնում էր
էջմիածին սովորելու: Ապա մինչև պատմվածքը գրելը այլ առիթներ էլ է ունեցել այդ-
տեղով անցնելու, ընդ որում, 1917 թ. աշնան սկզբին, ըստ որոշ տեղեկությունների, նա
Գորիսից ուղթով է գնացել մինչև Նախիչևան: Դա նրա փախուստն էր հայրենի քաղա-
քից (որտեղ ուսուցիչ էր աշխատում) դպրոցի տեսուչ Ա. Շիրինյանի հետ ընդհարվելու

կապակցութիւնը: Հավանաբար այս ճանապարհորդութիւնն է պատճառ դարձել, որ Բակունցը մանրամասն իմանար Գորիս—Նախիջևան ճանապարհը՝ Բիշանագի տեսարաններով, օդի շերմաստիճանի փոփոխումներով, մառախուղով, երկու իջևանատներով, նրանցում տիրող բարձրերով, հարթավայրում սեխի բանջարանոցներով, սեխատերերով և այլն: Ուշադրութիւն է գրավում և այն, որ պատմվածքի հերոս Տիտոսը նույնպես աշխանն է ճանապարհվում Երևան:

Բիշանագի լեռնանցքով այժմ էլ կա երթևեկութիւն, բայց ավելի թույլ (քանի որ գործում է Ջանգեզուր—Երևան առավել դյուրին ճանապարհը՝ Եղեգնաձորով):

էջ 146, տող 17. «Պառավի ուլերը»—խոսքը հայկական հայտնի ավանդութեան մասին է. գարնանամուտին օրերը տաքանում են, պառավն իր ուլերը հանում է արտա, բայց անսպասելի ցուրտ և փոթորիկ է սկսվում, ուլերը ոչնչանում են: Պառավի ցուրտը ստ ժողովրդային ավանդութեան ապրիլի առաջին կեսում է լինում, ըստ եկեղեցական օրացույցի շարժական է, տևում է յոթ օր, ութ գիշեր կամ փետրվարի վերջից մինչև մարտի սկիզբը, կամ մարտի մեջ: Ավանդութեան իմաստն այն է, որ մինչև պառավի ցուրտը շանցի, գարնան շերմութեան վրա հույս դնել չի կարելի:

էջ 147, տողեր 8—9. Բարձր սաբերը ջրբաժան սահմանն են երկու մեծ գավառների—խոսքը Ջանգեզուր լեռնաշղթայի և մասնավորաբար Բիշանագ լեռան մասին է. երկու մեծ գավառներն են Ջանգեզուրն ու Նախիջևանը: Հետագա նկարագրութիւնը՝ սկսած «Գագաթին ամպերը թանձրացան...» խոսքից մինչև «Նա արդեն սարի ջրբաժան սահմանն անցել էր...»,—վերաբերում է լեռնանցքին:

էջ 147, տողեր 11—12. հանդարտահոս և լայն տարածվող մի գետ, նաև էջ 148, տող 32. մնալի հանդարտահոս գետը—խոսքը վերաբերում է Որոտան գետին, որ սկիզբ է առնում Սիսիանի շրջանի հյուսիսում, հոսում դեպի հարավ-արևելք Սիսիանի շրջանով՝ այն բաժանելով երկու մասի, ապա անցնում է Գորիսի շրջանի հարավով դեպի արևելք (Աղբրեջան):

էջ 160, տող 28. Զանապառնը փաղափ այգիների մեջ մտավ—խոսքը Նախիջևան քաղաքի մասին է:

S P U N Q T S via P U S Ա Ն Դ Ո Ւ Ր
(էջ 166)

Առաջին անգամ հրատարակվել է «Երոզհրդային Հայաստան» օրաթերթի 1928 թ. հուլիսի 8-ի համարում (№ 159). վերնագրից առաջ՝ Ալեքի: Ապա տեղ է գտել 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ առաջին հրատարակման: Ուղղել ենք ԽՀ-ի բնագրում եղած տպագրական ակնհայտ վրիպակները, ինչպես, օրինակ, էջ 174, տող 16. ԽՀ-ի բնագրում՝ դազգլանի, ուղղված է՝ դազգանի: Հնաձևութիւններն ու անմիակերպութիւնները թողնված են անփոփոխ. օրինակ, ուղղագրական-արտասանական հնաձևութիւն է աժան-ը (էջ 166, տող 21), որ շենք ուղղել: Հեղինակային անմիակերպութիւն է մերթ № 26 (էջ 170, տող 30, էջ 171, տող 3), մերթ № 26-ը (էջ 171, տողեր 9, 12) գրելը, որ նույնպես շենք ուղղել: Մնացել են նաև հեղինակային այնպիսի ձևեր, ինչպես՝ ունևեր (էջ 166, տող 12), տասերեմ (էջ 168, տող 15), Թողել ենք Մաբուտ, գանոն (փոխանակ՝ ֆանոն) ձևերը՝ ենթադրելով, որ հեղինակը դրանք գործածել է որպես իր հերոսի արևմտահայ արտասանութիւնը բնորոշող տարրեր:

Այս պատմվածքը մասնավոր ընդհանրություն ունի «Նովնաթան Մարշ» վիպակի և «Երբ որ բացվեն դռներ հուտ» պատմվածքի հետ. երեք դեպքում էլ առկա է սփյուռքահայ հերոս՝ նման տեսանկյունով պատկերված:

էջ 166, տող 1. via—լատիներեն է, նշանակում է միջով, գրվում է նաժակաների, փոխադրարձանների, տոմսերի, անցաթղթերի վրա:

էջ 166, տող 1 և հետո. Բայանդուր—երկաթուղային կայարան և քնակավայր (ինչնականից հարավ. via Բայանդուր նշանակում է Բայանդուրով, Բայանդուրի միջով):

էջ 166, տող 4 և հետո. «Հայրենիքի ձայն»—ԱՄՆ-ում եղել է «Ձայն հայրենյաց» շարաթաթերթ, բայց՝ 1899—1900 թթ.: Պատմվածքում, ըստ երևույթին, ակնարկը Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» օրաթերթին է վերաբերում:

էջ 166, տող 6. Աղբատախնամ—ըստ երևույթին, նկատի է առնված ամերիկահայ բարեգործականի տիկնաց հիմնած աղքատախնամներից մեկը:

էջ 166, տող 11. Խըր Ուոքքաուն—նշանակում է Արևելյան Վոթքաուն (անգլերեն է). Բոստոնի մոտ գտնվող այդ քաղաքում 1920-ական թվականներին և հետո շատ հայեր են քնակվել:

էջ 166, տող 16 և այնուհետև. մանուսա. բամբակե գործվածք՝ գծավոր (անունը ծագում է փորթասիական Մանիսա քաղաքից):

էջ 166, տող 20. «Հայ փնյնրը» ընկերության...—անգլերեն «High painter»-ի տառադարձումը պիտի լինի. նշանակում է «Բարձրորակ ներկարար», բայց անգլերեն բառի նայ արտասանությունը, հավանաբար, ընկալվել է նաև հայերեն, իբր հայ ներկարար:

էջ 166, տող 21—22. փլեստրի գործ—սվաղի գործ (անգլերեն plaster բառի հայերեն տառադարձումն է):

էջ 166, տող 25. աքաթմանենրու—աքաթման անգլերեն նշանակում է քնակարան (appartement):

էջ 166, տող 26. Բոթրոֆոր—անգլ.՝ մետաղե դրամապահարան:

էջ 166, տող 27—էջ 167, տող 1. Ս. Փրկչի օրացույցը—խոսքն ըստ երևույթին, վերաբերում է Կ. Պոլսի հայոց Ս. Փրկչի հիվանդանոցի տարեկան օրացույցներին:

էջ 167, տող 2. Մաղկազարդ կիրակի—հայ եկեղեցու զարնանային տոներից, որ կատարվում է Ջատկին նահարդող կիրակի օրը:

էջ 167, տող 3. «Պեսեթ պարթի»—անգլերեն է (basket party)՝ նշանակում է զամբյուղի հյուրասիրություն. այսպես ԱՄՆ-ում կոչվում են խմբային այն հանդիպումները կամ դաշտահանդեսները, որոնց մասնակիցները իրենց հետ բերում են ուտելիք:

էջ 167, տող 11. «Ստամպուլ» բեքրդի վրա—նշանակում է «Ստամբուլ» ձայնապնակի վրա:

էջ 167, տողեր 11—12. հայրենակաճ գունճի վարպետ Օկսենտ Տաշեյանի նվագը—որթան կարողացանք պարզել 1920-ական թվականներին ԱՄՆ-ում եղել է Տաշեյան ազգանունով ձայնապնակ վաճառող:

էջ 167, տող 13. «Գոլլարդետա Գան վեռնիմ»—թուրքերեն է, նշանակում է՝ թեքիդ մեջ հոգիս տամ. 1920-ական թվականներին տարածված թուրքական մի երգի տողն է հետևյալ տնից. «Էնտամըն դայալըմտա Գյոզլարիմի սիլամամ, Գոլլարդետա շան վերայիմ, Բաշկա բիր շեյ դիլամամ» (Պատկերդ մտքիս մեջ՝ Աշեքա շեմ կարող սրբել, Թեքիդ մեջ հոգիս տամ, Ուրիշ ոչինչ շեմ ուզում):

էջ 169, տողեր 1—2. Լեւինակաւնի մեծ աղետին—խոսքը Լեւինակաւնում 1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած երկրաշարժի մասին է:

էջ 169, տող 6. Սաղամ Գամորի առասպելական պատկերը—ըստ Հին կտակարանի Սողոմ և Գամոր քաղաքները (Պաղեստին) անառակութեան որշեր էին դարձել և կրակով կործանվեցին: Այժմ Սաղամ Գամոր նշանակում է մեծ աղետի վայր կամ անառականոց, խառնականոց:

Ձ Մ Ռ Ա Ն Մ Ի Գ Ի Շ Ն Ր

(էջ 175)

Առաջին անգամ հրապարակվել է «Սպիտակ շին» վերնագիրը կրող ըրտ պատմվածքների ժողովածուի մեջ (Մոսկվա, 1929), ապա տեղ է գտել Երկրի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ «Սպիտակ ձին» ժողովածուի բնագրի:

Կատարված է ուղղում.

էջ 177, տող 31. ՍՁԺ-ի բնագրում՝ Սանգաղը յուր—պետք է վրիպակ լինի, «Եղբայրութեան ընկուզենիները», «Գալուստի վիկը» պատմվածքներում հիշված է Սանդ աղը յուր, որ իրոք կա Երիշեն գյուղում. ըստ այդմ ուղղել ենք՝ Սանդ աղը յուր:

Ըստ ՍՁԺ-ի բնագրի նույնությամբ թողնված են ուղղագրական բարբառայնություններ և հնացած ձևերը (ֆցեցի, ֆցեց, էտ, տակն ու վրա և այլն):

Պատմվածքում նկարագրված է Ա. Բակունցի մայրական տունը Երիշեն գյուղում (Գորիսի մոտ). հերոսներն են գրողի պապը՝ Հարությունը (Արթինը), որի անունն այստեղ չի տրվում, տատը՝ Նազու աղջիկը, քոհին՝ Ղազարը, քոհու երկու երեխաները, ինքը՝ հեղինակը նրանց հասակակից, և այլ ազգականներ՝ Առաքելը, սրա որդի Ավանը, ջազացուկ Անդրին:

Բակունցի պապենական տունը Երիշենում այսօր էլ կանգուն է, կա նաև այն սենյակը, որը մանրամասն նկարագրված է այս պատմվածքում: Տան առաջին հարկի այդ քնդարձակ սենյակում եղել ենք 1961 թ., երբ գրեթե ամեն ինչ պահպանված էր այն վիճակում, ինչպես նկարագրված է Բակունցի պատմվածքում՝ թոնիրը, քուրսին, երդիկը (վերջինս փակված էր, քանի որ վերևում կառուցված էր երկրորդ հարկ): Բակունցի ազգականները ցույց տվեցին այն տեղը, ուր գիշերները նստում էր Արթին պապը և զրուցում կամ պատմություններ անում:

Երիշենի գերեզմանատանը մնում է Բակունցի պապի ու տատի շիրմաքարը, հետևյալ փորագրությամբ՝ «Հանգիստ Յարութին խորշուղիան վճ. 1915 թ. 83 ամաց և կին Նորա Նազուն վճ. 1920 թ. 75 ամաց» (տես նաև Ա. Բակունցի Երկրի սույն հրատարակության 1-ին հատորում «Նամակ ոռւսաց թաղավորին» պատմվածքի ժանոթագրությունները՝ էջ 650—654):

Երիշեն կատարած նույն այցելության ժամանակ հանդիպել և զրուցել ենք ջազացուկ Անդրու՝ Անդրիաս Օրդյանի, և նրա կնոջ՝ Հենազ բիբու (Հերթենազի) հետ: Ջազացուկ Անդրուն իբրև նախակերպար Բակունցն օգտագործել է «Կարմրաքար» վեպի գլխավոր հերոսներից մեկին (համանուն) պատկերելիս (տե՛ս Երկրի սույն հրատարակության ձրրորդ հատորում), նա գործող անձ է նաև «Հերոս նոքարը» պատմվածքում (տե՛ս ժանոթագրությունները այս հատորում):

Պատմվածքում հիշատակվող Օրուշը, ըստ երևույթին, եղել է Բակունցի պապի մտե-

քիմ ընկերներից (քիմիաներից): Այդ անվանը հանդիպում ենք նաև «Եղբայրություն» ընկուզենիները» պատմվածքում, որի գլխավոր հերոս Աթա ապոր կերպարում շատ բան կա Բախուցի պապ Արթինից (տե՛ս նաև «Եղբայրություն ընկուզենիները» պատմվածքի ծանոթագրությունները):

«Ձմռան մի գիշերը», ըստ երևույթին, հեղինակը գրել է «Նամակ ուսաց թագավորին» պատմվածքի հետ միաժամանակ և երկուսն էլ հրատարակել է «Սպիտակ ձին» ժողովածուի մեջ: Ստույգ հայտնի է, որ միաժամանակ են գրվել «Կյորեն» ու «Եղբայրություն ընկուզենիները», որոնք նույնպես միասին հրատարակվեցին մի գրքույկում՝ 1936 թ.: Սացույց է տալիս, որ Բախուցը միաժամանակ երկու երկ գրելու սովորույթ ունեցել է, մասնավորապես եթե այդ երկերը հերոսների ու վայրերի ընդհանրություն են ունեցել: «Ձմռան մի գիշեր» և «Նամակ ուսաց թագավորին» պատմվածքների միջև այդ կարգի ընդհանրությունը մեծ է. վերջինում նույնպես գլխավոր հերոսները գրողի պապն ու տատն են, սրանց թոռները. միայն այնտեղ պատմությունը պատվում է Բախուցի ավագ թոռու՝ Եղբոր, շուրջը, նրա արտոմանն ու փախուստի առիթով, թեև ինքը՝ այդ թոռին, պատմվածքում անձնապես ներկա չէ:

«Ձմռան մի գիշերում» իրական են նաև հիշատակվող վայրերը՝ ձաֆ Բուր, Լուս խաչերը, Սանդ աղբյուրը և այլն:

Պետք է որ իրական լինի նաև Առաքելի ցրտահարության պատմությունը:

Այս աստիճան իրապատում երկը, այնուամենայնիվ, ճիշտ չէր լինի ակնարկ համարել գլխավորապես երկու պատճառով. ա) այն նվիրված չէ որևէ արդիական կամ առօրյա հարցի, այլ կենցաղային, ազգագրական ուղղվածություն ունի, ք) այն տարիներ առաջ տեղի ունեցածի վերհուշ է:

Մ Ա Յ Ր Ը

(էջ 185)

Առաջին անգամ հրատարակվել է «Գրական դիրքերում» հանդեսի 1929 թ. հոկտեմբերի համարում (№ 10)՝ վերնագրից առաջ՝ Ակսել Բախուցը: Ապա կրճատումներով տեղ է գտել հետևյալ դասագրքերում. «Գասագիրք հայ լեզվի և գրականության» (Բանվ. կոմիտեաների համար): 3-րդ տարի», կազմ.՝ Զ. Սարգսյան, Տ. Վանյան, Ե., 1932, «Լեզվի և գրականության դասագիրք» 7-րդ տարի», կազմ.՝ Ծ. Չարենց, Ե., 1933: Այնուհետև տպագրվել է Երկերի 1955 թ. միհատորյակում և 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ առաջին հրատարակման: Այդ բնագրում կան լեզվական անհարթություններ և անմիօրինակություններ, որ թողել ենք. օրինակներ՝ «...մթնում երկու պառավ դեռ երկար էին քլփշում, մինչև Ուսանը հորանչի և կողքին դառնալով կնոջը պատվիրեր իրեն կանուխ զարթեցնելու» (էջ 190, տողեր 2—4. խախտված է ժամանակը. առկա է ճիշտ կլինի՝ «մինչև Ուսանը հորանչեր» և այլն): Կամ՝ միևնույն հերոսի խոսքում գործածված են մե՛րթ Ջանի մո՛խը (էջ 191, տող 24), մե՛րթ Ջանի մո՛րուր (էջ 191, տող 29) ձևերը: Սահակ անունը կ' հեղինակային, կ' հերոսների խոսքերում գործածված է մե՛րթ այդ ձևով (էջ 193, տող 32, էջ 194, տողեր 22, 31, էջ 195, տողեր 1, 5 և այլն), մե՛րթ խոսակցական Սհակ ձևով (էջ 194, տող 10, էջ 195, տողեր 14, 15). սրանք, կարծում ենք, հեղինակային են, ուստի չենք ուղղել:

Պատմվածքում հատկապես շատ է գործածված Բցիլ ձևը (Բցուղ, Բցում, Բցած, Բցեց.

Քցի, կֆցես), չկա զցել ձևի որևէ օրինակ: Ուրեմն, Բ-ով գրութիւնը նպատակային է, հեղինակային, և ուղղելը ճիշտ չէր լինի:

Ուղղումներ.

էջ 185, տող 20. ԳԴ-ի բնագրում՝ Բաքի Օհանը Զանու մայրն է եղել—ուղղել ենք ըստ բովանդակության՝ Բաքի Օհանը Զանու հայրն է Լղել:

էջ 189, տող 1. ԳԴ-ի բնագրում՝ Ունանը զոզոզալով ծառը բաց էր անում... նախադասութիւնը իբրև նոր պարբերութիւն չի սկսվում, դարձրել ենք նոր պարբերութիւն միայն:

էջ 191, տող 10. ԳԴ-ի բնագրում՝ կիսկարմիր—ուղղված է՝ կասկարմիր:

էջ 192, տող 31. ԳԴ-ի բնագրում՝ Անտոնը նրա քեր բռնեց, մտավ ու բարձրացրեց ճանրուղով—ուղղել ենք՝ Անտոնը նրա քեր մտավ ու բարձրացրեց սանրուղով:

«Մայրը» Բակունցի այն խմբի երկերից է, որոնք ընթերցողին են ներկայացնում Լիտուանացիական փախուստը գյուղից (տե՛ս նաև «Բևան», Բևան... պատմվածքի ծանոթագրութիւնը), ինչպես և գյուղում մնացող նահապետական գյուղացիների վերջին սերունդին:

Պատմվածքում պատկերված է Գորիսը:

էջ 187, տող 3. Նրանց միակ կովը, պոզը կտրած Խաղիզը... համեմատել «Հին տանը» էջ 113, տող 23. Մեր պառավ կովն եկավ, եղջյուրի մեկը կտրած:

էջ 192, տող 33—34. Մի՞քն դեռ ճիշտ է որսող Ավան—Որսող Ավի անունն ունի նաև «Մթնածոր» պատմվածքի (տե՛ս Ա. Բակունցի Երկերի սույն հրատարակության 1-ին հատորը) գլխավոր հերոսը:

էջ 194, տող 1. Իվան քնյի օթախնեում, տող 7 և հետո.— Իվան Քնյի օթախները դու «Բունդից ես ճանաչում...» Ե՛ս... և այլև—համեմատել «Իվան քնյը» պատմվածքի հետ, որտեղ նույն անունով հերոսը աշխատանքից հեռացվելուց ու կնոջ մահից հետո ինքն էլ մահանում է, և նրա տունը մնում է անբնակ: Այս պատմվածքում այդ տունն արդեն դարձել է գրասենյակ և պիտենբրական հավաքատեղի:

Վ Ճ Ի Ռ Ը

(էջ 198)

Առաջին անգամ հրատարակվել է «Նոր ուղի» հանդեսի 1930 թ. դիրք 1—3-ում. վերջագրից առաջ՝ Ավան: Այս տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (Տ. 1)՝ մասնակի կրճատումներով: Այժմ տպագրվում է ըստ «Նոր ուղի» բնագրի: Նրանում կան լեզվական, ուղղագրական անմիօրինակութիւններ, որոնք ըստ երևույթին հեղինակային են, և շնորք ուղղել. օրինակ, առկա են՝ հոֆիը (էջ 200, տող 19), հոֆուը (էջ 200, տող 24), հոֆիը (էջ 207, տող 25) ձևերը կամ հերոսի նույն խոսքում՝ ապսպսեցի (էջ 202, տող 8) և ապսպրել էր (էջ 202, տող 12) զուգահեռները: Այստեղ ևս գործածված է ֆցել ձևը (ֆցեց, ֆցելով), մի տեղ միայն առկա է զցած: Ծիշտ համարեցինք այս անմիօրինակութիւնները ևս թողնել անխախտ. դրանք կա՛մ հեղինակային նպատակադրում ունեն, կա՛մ, եթե վրիպում են, դարձյալ հեղինակային պետք է լինեն: Ուղղում.

էջ 200, տող 36. ՆՈՒ-ի բնագրում՝ Խալբանդ Տանո—ուղղել ենք ըստ նույն կապակցության այլ գործածութիւնների՝ Նալբանդ Տանո:

Այս պատմվածքը վերաբերում է հայ գյուղը հրգիծորեն պատկերող բակունցյան երկերի խմբին (որի մեջ են նաև՝ «Միրանի տափ», «Գյուլբահարի համար», «Մրոց», «Եվ բատրակը թույլ տվավ իրեն...» պատմվածքները, մի քանի ակնարկներ, ինչ-որ շափով «Կյորեն» ու «Որդի որոտմանը»)։

էջ 205, տող 8. Հիմա Բալխանու կանտոնումը...— Բալխանին՝ Բաքվի թաղամասերից է, նավթարդյունաբերական կենտրոն։

Հ Ե Ր Ո Ս Ն Ո Ք Ա Ր Ը

(էջ 209)

Առաջին անգամ հրատարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1930 թ. մայիսի 1-ի և 4-ի համարներում (№ 100, 101)՝ Ակսել ստորագրությամբ։ Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակի մեջ (հ. 1)՝ մասնակի փոփոխումներով։ Այժմ տպագրվում է ըստ առաջին հրատարակման։ Այդ տպագրությունը վրիպակաշատ է, առատ են նաև բարբառային ու հնացած գրությունների։ Ուղղել ենք միայն ակնհայտ սխալներն ու վրիպակները, ինչպես և կրկնաչափոր ու հարադրաժող բառերի մի քանի անգծիկ գրությունները։

էջ 210, տողեր 28—29. ԽՂ-ի բնագրում՝ երեք չորս—ուղղված է՝ երեք—չորս։

էջ 214, տողեր 12—13. ԽՂ-ի բնագրում՝ լամպերը քամուց մեղմ օրոքվում յեն—պետք է տպագրական վրիպակ լինի, —ուղղված է՝ լամպերը քամուց մեղմ օրոքվում էին։

էջ 214, տող 23. ԽՂ-ի բնագրում՝ բիլետի—ուղղված է ըստ պատմվածքի մեջ նույն բառի այլ գործածության՝ բիլետի։

էջ 215, տող 5—6. ԽՂ-ի բնագրում՝ մի թուրքի տան էինք ապրում, Քեմուրի տան—ուղղել ենք՝ մի թուրքի տան էինք ապրում՝ Քեմուրի տանը։

էջ 215, տող 26. ԽՂ-ի բնագրում՝ Ուրախ ուրախ—ուղղված է՝ Ուրախ—ուրախ։

էջ 215, տող 32. ԽՂ-ի բնագրում՝ վեր վեր—ուղղված է՝ վեր—վեր։

էջ 216, տող 28. ԽՂ-ի բնագրում՝ աչք ունեից—ուղղված է՝ աչք—ունեից։

էջ 217, տող 16. ԽՂ-ի բնագրում՝ սրան նրան—ուղղված է՝ սրան—նրան։

էջ 118, տող 7. ԽՂ-ի բնագրում՝ Գալուտի հետը—ուղղել ենք ըստ բովանդակության՝ Գալուտի հերը։

էջ 218, տող 7. ԽՂ-ի բնագրում՝ չաղաչյան Անդրեն, ըստ այդմ՝ առանց հոգ ձևը՝ Անդրեն—տպագրական վրիպակ պետք է լինի. ուղղված է ըստ նույն անվան (ու մականվան) հետագա գործածությունների (էջ 222, տողեր 16, 19, 25 և այլն), ինչպես և ըստ «Կարմրաբար» վեպում եղած գործածությունների՝ չաղացյան Անդրին։

էջ 119, տող 1—2. ԽՂ-ի բնագրում՝ ոչ ոքի շառենք մեր հեռանալը—ուղղել ենք՝ հյնելով բովանդակությունից՝ ոչ ոքի շառենք իրենց հեռանալը։

էջ 119, տող 5. ԽՂ-ի բնագրում՝ հեռացանք—ուղղել ենք ըստ բովանդակության՝ հեռացան։

էջ 219, տող 35. ԽՂ-ի բնագրում՝ տաս օր էտեղ եք—հավանաբար վրիպակ է. հյնելով բովանդակությունից ուղղել ենք՝ տասը օր էտեղ ենք։

էջ 221, տող 17. ԽՂ-ի բնագրում՝ հիշողությունս կտրվում, ինչպես թրով ճեղքած—ուղղված է՝ հիշողությունս կտրվում է, ինչպես թրով ճեղքած։

էջ 222, տող 22. ԽՂ-ի բնագրում՝ շաղմախը—ուղղված է՝ շախմախը։

էջ 222, տող 26. ԽՆ-ի բնագրում՝ բստեղ—ենեւով բովանդակութիւնից բացական-
չական նշան ենք ավելացրել՝ բստեղ՝:

Չենք ուղղել բարբառային որևէ ձև (ֆցցց, Գա՛նլ և այլն), նաև այնպիսի անհամա-
ձայնութիւն, ինչպես, էջ 212, տող 2՝ փայլիլեց Երա Եշածև աշեհրը: Եզակի բայի հետ
հոգնակի ենթակա դեմը հատուկ է ժողովրդային խոսքին և հաճախ է հանդիպում Բա-
կունցի լեզվում (նաև հեղինակային): Թողնված է նաև հետևյալ անհամաձայնութիւնը
(բակառութիւն)՝ Մեր ընկերների մի մասը մնացել էին (էջ 114, տողեր 20—21): Չենք
ուղղել բնագրում հետևողականորեն գործածված բայլընկի ձևը (թեև այլ դեպքերում հե-
զինակը գործածել է բայլընկի, բայլընկի ձևերը):

էջ 224, տողեր 3—4-ում ԽՆ-ի բնագիրն ունի՝—Մի խոսք՝ ես արգեն ռոֆի վրա էի.
Ֆրոնտս արգեն վերջացել էր...— չի բացառվում, որ ֆրոնտս ձևը տպագրական վրի-
պակ լինի (թեբևս, ճիշտը՝ ֆրոնտը), բայց, հնարավոր է նաև ս-ով ձևը. նման բովան-
դակութեամբ ձևեր (ցուցական հոդով) հանդիպում են բարբառում և խոսակցականում
(գիշերս որտեղ մնանք, տարիս երաշտ էր և այլն): Որոշեցինք ֆրոնտս-ը շուղղել:

«Ներսս նորարը» Բակունցի հերոսապատում պատմվածքների խմբից է՝ թեև գեղար-
վեստական արժեքով երևի չի հասնում մյուս երեքին՝ «Բրուտի տղան», «Սև ցելերի
սերմնացանը», մասամբ՝ «Վանդունց Բագին» (ընդ որում, չորս դեպքում էլ հերոսա-
կան կերպարը սպանվում է):

Պատմվածքը, որ տպագրվել է «Երրորդային Հայաստանի» մայիսյան կյան տոնին
չվիրված համարներում, հավանաբար գրվել է թերթի պատվերով:

էջ 210, տող 13. Ջոն Ռիդի «Տասը օր» էր...—խոսքը վերաբերում է ամերիկյան
գրող Ջոն Ռիդի «Տասը օր, որ ցնցեցին աշխարհը» գրքին, որտեղ նկարագրված են Հոկ-
տեմբերյան հեղափոխության իրադարձությունները:

էջ 210, տող 31. Խուստափի գլխին—Խուստափ կամ Խուստապ, Ջանգեզուրի լեռնե-
րից է (զաղաթը 3216 մ): Գտնվում է Ղափանի շրջանում, շրջկենտրոնից հարավ-արև-
մուտք: 1920 թ. այստեղ ամրացել էր Նժդեհի իր զորքով:

էջ 210, տող 31—32. Ղափանի կողմը ֆրոնտը դեռ մնում էր—այսինքն՝ Ղափանի
շրջանը Նժդեհի իշխանութեան տակ էր, և կոիվները շարունակվում էին:

էջ 214, տող 6 և հետո. Բաբկուշատ (նույնը այլ երկրում գործածված է նաև Բաբ-
գուշատ ձևով—օրինակ «Կաղնու գերանը» պատմվածքում. ավելի-ճիշտ է թվում Բաբ-
կուշատ-ը): Բակունցի երկրորդ հաճախակի հանդիպող տեղանուն է: Նույն վայրը նաև
կոչվում է Գետե, Գետամեչե, հաբապայք, Բաբկուշատի տափարակ և այլն: Որոտան
գետը, սկիզբ առնելով Միսիանի լեռներից, մի քանի վտակներ ընդունելով և անցնելով
միսիանի շրջանը, մտնում է Գորիսի շրջան, ապա հոսում դեպի արևելք: Հայկ. ՍՍՀ-ի
առհաման անցնելով մտնում է Աղբբեջան և սահմանի մոտ գտնվող էյվազլար (էյվազլու)
գյուղից սկսած ավելի խոր հուն է մտնում ու կոչվում է Բաբկուշատ: Ապա՝ Բարկուշա-
տից դեպի արևելք՝ հյուսիսից հարավ հոսող Հազարու (Հաքարի) գետը միանում է Բար-
կուշատին. դրանք դառնում են մի գետ, որը հոսում է դեպի Արաքս: Նույն վայրերում
մի քանի վտակներ էլ թափվում են Բարկուշատի և Հազարուի մեջ: Այդ շրջանը Ջանգե-
զուրի լեռնցիներն անվանում են Գետե կամ Գետամեչ: Առատ ջրերը ոռոգում են ար-
տերն ու բանջարանացները, կիրճերում և հովիտներում ձմեռը մեղմ է լինում, բերքը

առատ: Զանգեզուրի հայ գյուղացիները սովորաբար գնում էին Բարկուշատի գյուղերը բրինձ, ցորեն գնելու, աշխատանքի և այլն:

էջ 214, տող 17.—Ամբողջ ձմեռ մնացին, Գետեբում—նույն է, ինչ Բարկուշատը. տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

էջ 215, տող 1. Սարվաճաղ—Բարկուշատի շրջանի ադրբեջանական գյուղերից պետք է լինի:

էջ 215, տող 7. Մեր ձորեբում, տող 15. Մեր ձորերի շատ մառդկանց և այլն.— Ի տարբերություն Գետեբ անվան, որով գործիսցիները կոչում են Բարկուշատի բերքաուտ շրջանը, Ձորեբ անունով կոչում են լեռնային Զանգեզուրը, մասնավորապես Գորիսի շրջանը:

էջ 218, տող 7, նաև էջ 222, տողեր 16, 19, 25 և այլն. ջաղացպան Անդրի կամ Անդրի ամի—այս նույն հերոսը կա Բակունցի նաև այլ երկերում՝ «Կարմրաքար», «Ջրմուռն մի գիշեր» և այլն: Իբրև նախակերպար Բակունցը նկատի է ունեցել իր մորաքրոջ որդի Անդրեաս Օրդյանին: Այդ անձը (այժմ մահացած) եղել է Գորիսի մերձակա Նրիշեն գյուղի ջրաղացպանը, նաև՝ երգասաց, գրուցասաց: 1961 թ. եղել ենք նրա տանը: Անդրի ամին միջանասակ, նիհարավուն դեմքով. կապույտ աչքերով մարդ էր, ծնված 1886 թ.: Երիշենի ջրաղացպանն է եղել 1906-ից մինչև 1929 թվականը: Հակված էր կյանքի առեղծվածների շուրջ գրուցելու, գիտեր շատ պատմություններ, երգեր, որոնց մի մասը ինքն էր հորինել:

էջ 220, տող 8. սպասում էր 84-րդ բրիգադայի առաջ շարժվելուն—նույն զորամասի հիշատակությունը կա նաև «Քրուտի տղան» պատմվածքում (սույն հրատ. 1-ին հատոր). «Կարմիր բանակի 84-րդ բրիգադը վրան էր զարկել լեռնաշղթայի երկարությունը», «84-րդ բրիգադը խոստով էր արճիճի լեզվով»: Խոսքը վերաբերում է 11-րդ Կարմիր բանակի 28-րդ հրաձգային միավորման 84-րդ բրիգադին:

Տ Պ Ա Ր Ա Ն Ի « Գ Ա Գ Ա Շ Ա Ն »

(էջ 225)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը Ա. Բակունցի կազմած «Կարմիր արև» (1930 թ.) դասագրքում է: Ապա տեղ է գտել «Նոր աշխարհ». Ե տարի» դասագրքում (1931 թ.): Այժմ տպագրվում է ըստ «Կարմիր արևի» բնագրի: Կատարված ուղղումներն են.

էջ 225, տող 2. ԿԱ-ի բնագրում պատմվածքի վերջին երկու մասերը համարենք ունեն՝ 2, 3, առաջին մասը՝ շունի. վերնագրից հետո վաճառքի ենք՝ 1:

էջ 225, տող 14. ԿԱ-ի բնագրում՝ ցույց տալով ազդեցությունը մառմինը—վերջին բառը պետք է վրիպակ լինի, ուղղել ենք, ինչնով բովանդակությունից՝ ցույց տալով ազդեցությունը:

էջ 226, տող 3. ԿԱ-ի բնագրում՝ «եռագիծն» ուղղված է՝ «խաղիծն»:

Չուղղեցինք խոսակցական-ուղղագրական որոշ ձևեր, որոնք կարծում ենք, հեղինակային են. օրինակ Դանիել անունը բուրդ դեպքերում տպված է Դանել ձևով, որը և պահպանված է: Չուղղեցինք նաև այնպիսի անհամաձայնություն, ինչպիսին է «տեղեց հարցերը» (էջ 227, տողեր 29—30):

Նկարագրված տպարանը և նրա նոր շենքը այժմյան Ալավերդյան և Կենյանց փողոցների անկյունում եղածն է (Ալավերդյան 65), ուր հիմա տեղավորված է № 1 տպարանը:

Չնայած ակնարկային որոշ բնույթին, այս երկը գերադասեցինք պատմվածք համա-
բնլ, քանի որ, թվում է, գերակշռում են պատմվածքի հատկանիշները:

Դասագրքում պատմվածքից հետո զրված են հետևյալ առաջագրանքներն ու հարցերը:
Այցելեցե՛ք մեր ֆաղխորհուրդը և ծանոթացե՛ք նրա սեկցիաների աշխատանքներին:

— Ի՞նչ հրահանգներ են տվել ընտրողները ֆաղխորհրդի այս տարվա կազմին, ծա-
նոթացե՛ք այդ հրահանգների զլխավոր կետերին:

— Քանի՞ հոգի են ֆաղխորհրդի կազմում. տվե՛ք դիագրամներով ֆաղխորհրդի կազմն
ըստ սեռի, ըստ ազգության և սոցիալական դրության:

— Ի՞նչպե՞ս էր կառավարվում մեր ֆաղաբ խորհրդայնացումից առաջ. երբ հեա-
րավոր է, ծեոֆ բերե՛ք այդ մասին նախորդ հարցում տված տեղեկությունները և համե-
մատեցե՛ք իրար հետ, ի՞նչ եզրակացության կհանգե՛ն:

Էֆեկուրսիայի արդյունքների մասին դասաբանում զեկուցելու համար կազմեցե՛ք ծա-
գիր և այն օգտագործեցե՛ք գրավոր աշխատանքի համար:

Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք Ի Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ը

(էջ 230)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը «Նոր աշխարհ», Ե տարի» դասագրքում է
(1931 թ.): Այժմ տպագրվում է նույն բնագրի՝ մի քանի փոքր ուղղումներով.

էջ 231, 8-րդ սողից հետո նԱշխ-ի բնագրում կա առանձին բաժնի համար՝ 2 թի-
վը—երկի բովանդակությունը ցույց է տալիս, որ զա մվելորդ համար է, հավանարար
տպագրական վրիպակ է, ուստի հանել ենք:

էջ 231, սող 19. նԱշխ-ի բնագրում՝ էն մոտիքը—երկախոսության գծիկ ենք դրել
ըստ բովանդակության՝ — էն մոտիքը:

էջ 233, սող 28, էջ 234, սողեր 4, 13. նԱշխ-ի բնագրում—Ալլանվերդի բառածևը
փոխված է ըստ արդի գրության՝ Ալավերդի:

էջ 234, սող 22. նԱշխ-ի բնագրում՝ Ավ գիտի—ուղղել ենք՝ Ո՛վ գիտի:

էջ 235, սող 31. նԱշխ-ի բնագրում՝ Արիբ, արի զեանե՛ք—ուղղել ենք՝ Արի, արի զեանե՛ք:

էջ 237, սող 11. նԱշխ-ի բնագրում՝ Նրա մտի առաջ հետ էր տալիս—ուղղել ենք
ըստ խոսքի կազմության՝ Նա մտի առաջ հետ էր տալիս:

Բացի այս ուղղումներից, արել ենք նաև հետևյալը: Դասագրքում Բակունցի պատմը-
վածքի վերևում խոշորատառ տպված է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ, որ
լնդհանուր դասագրքային շարքի խորագիր է և վերաբերում է նաև հաջորդ այլ նյութե-
րին (տարբեր հեղինակների). այդ խորագիրը հանել ենք, որպես ոչ Բակունցի երկի ան-
միջական վերնագիր՝ հիմք ընդունելով դասագրքի վերջում եղած բովանդակության մեջ
տրվածը. այնտեղ Ալեկի-ի դիմաց Աշխատանքի հերոսներ վերնագիրն է: Բովանդակու-
թյան մեջ այս վերնագիրը թվահամար չունի, իսկ բնագրում վերոհիշյալ ընդհանուր
խորագրից հետո զրված է՝ 1. Աշխատանքի հերոսները, դասագրքում հաջորդ նյու-
թը Գ. Սարյանի «Հարվածայիններ» ոտանավորն է, որ ունի 2. թվահամարը: Այդպես
մյուս բոլոր նյութերը համարակալված են (բոլորը 127 համար): Կնշանակի՝ Աշխա-
տանքի հերոսներ-ի 1 համարը դասագրքի բոլոր նյութերի համարակալմանն է վերա-
բերում և դասագրքից դուրս՝ արժեք չունի: Մենք այդ համարը ևս հանել ենք: Եղած

մյուս համարները 1-ից 4՝ Բակունցի պատմվածքի շրջա մասերին են վերաբերում և թողնված են:

Այս և «Կոմսոմոլի փոկերով» պատմվածքները, ըստ երևույթին, հատուկ զրվել են «Նոր աշխարհ» դասագրքի համար: Այդտեղ Բակունցի երկերից ութն են զրված. նաև՝ «Հաղթական հավաքը», «Հյուսիսի ձորը», «Պեմզայի հանքերում», «Վարդագույն տուֆի երկրում», «Տպարանի «պապաշան», «Տրախտորի մաշին» (տե՛ս էջ 625—626-ի տողատակերը):

«Նոր աշխարհ» դասագրքում Բակունցի այս երկից հետո կարդում ենք. ՀԱՐՅՈՒ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

— Նկարագրեցե՛ք ակումբը: Տվե՛ք մանարանի ցեխի վառիչի զեկուցման սեզմ բազմադասակարգությունը: Բնութագրե՛ք լսարանի կազմն ու առամադրությունը: Բացատրեցե՛ք վարպետ Անդրեյի դարձի պատճառները:

— Ի՞նչ մտքեր կարող էին ծագել ձեր բանվորի մեջ, երբ նա նայում էր իր որդի Վաղոյին: Համեմատեցե՛ք նոր և որդու կյանքի ընթացքը և բացատրեցե՛ք տարբերությունը:

— Սեր կարող է պատահած լինել հեղինակի ակնարկած այն դեպքը, որ վարպետ Անդրեյին մղեց դեպի հարբեցություն.— խորհրդայնացումից առա՛ջ. բե՛հ հետո, ինչու՞. Ի՞նչ բնույթի դեպք կարող է այդ եղած լինել:

— Ի՞նչ միջոցներով են բարձրացնում բանվորներն աշխատանքի առաջարկականությունը:

— Ինչպե՛ս է զրված ձեր դպրոցում սոցմրցման և հարվածայնության գործը,— նկարագրեցե՛ք և արե՛ք ձեր դիտողությունը: Ձեր պատի թերթի հաճառ գրե՛ք «Սոցմրցումն ու հարվածայնությունը մեր դպրոցում» էջուրի մասին մի սեզմ հողված:

— Կազմեցե՛ք սոց. պայմանագրի մի օրինակ:

— Կազմեցե՛ք լոզունգներ և պլակատներ ձեր դպրոցի ուսումնական-առաջարկական աշխատանքների մասին:

Կ Ո Մ Ս Ո Մ Ո Ւ Ի Փ Ո Կ Ն Բ Ո Վ

(էջ 238)

Մեզ ծանոթ առաջին հրատարակումը եղել է «Նոր աշխարհ. Ե տարի» դասագրքում (1931 թ., կազմեցին մի խումբ ուսուցիչներ): Այժմ երկրորդ անգամ սպազրվում է նույն այդ բնագիրը. կատարված ուղղումներն են.

էջ 238, տող 16—17. ՆԱՀԻ-ի բնագրում՝ Կատարածուն հանկարծակի եկավ—ուղղել ենք ելնելով խոսքի բովանդակությունից՝ Կատարածուն հանկարծակիի եկավ:

էջ 241, տողեր 19—20. ՆԱՀԻ-ի բնագրում՝ սերմագտիչներն—ուղղել ենք ըստ նույն երկում բառի այլ գործածության (էջ 241, տող 1)՝ սերմագտիչներն:

էջ 243, տող 4. ՆԱՀԻ-ի բնագրում՝ լավ էին դիտել մեհենաները—հավանաբար վրիպակ է, ուղղել ենք ելնելով խոսքի բովանդակությունից՝ լավ շին դիտել մեհենաները: Չենք ուղղել լեզվական մի անհարթություն. էջ 238, տողեր 7—8. շեմում ստեղծեց պինդ դոփեց՝ ձյունը բափվելու համար: Ճիշտ կլինե՛ր՝ բափելու, բայց եղած ձևը հազիվ թե հիմք ունենանք ոչ հեղինակային կամ բացարձակ սխալ համարելու:

Ըստ երևույթին, Բակունցն այս և «Աշխատանքի հերոսները» (տե՛ս ծանոթագրությունները) պատմվածքները գրել է հատկապես «Նոր աշխարհ» դասագրքի համար: Դա-

ապագայում պատմվածքի ընթացից հետո տրված են ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

— Ի՞նչ անելիքներ ունի կոմսոմոլը գյուղում:

— Ինչո՞վ կարող է օգտակար լինել պիտեմեական կազմակերպությունը կոլեկտիվ գյուղին:

— Ի՞նչ հասարակական աշխատանքներ է մտնակցել ձեր դպրոցը, դասարանը, կոլեկտիվը:

— Ի՞նչ վերնագիր կղենք այս հողվածի շուրջ մասերից յուրաքանչյուրին:

— Բացատրեցե՛ք առաջին հատվածի ստորակետերը, գծերն ու վերջակետերը:

«ԸՆԿԵՐ ԳԱԼՈՒՍՏԸ»

(էջ 244)

Առաջին անգամ հրատարակվել է «Կոլխոզնիկ» երկշաբաթաթերթի 1931 թ. № 10-ում (մայիս) և 11-ում (հունիս). վերնագրերի վերևում՝ Ալսեյ Բակունց: Ապա տպագրվել է Երկրերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ առաջին հրատարակման ընթացի: Կատարված ուղղումներն են.

էջ 246, տող 26. Կ-ի բնագրում՝ շեռ մտացել—ուղղել ենք էլնելով բովանդակությունից՝ շեռ մտացել:

էջ 247, տող 23. Կ-ի բնագրում՝ նոր նոր—ուղղված է՝ նոր-նոր:

էջ 248, տող 27. Կ-ի բնագրում՝ «էա իլ վաղասի» (1922 թ. ուղղագրությունը տրված է՝ «ժա իլ վաղասի»), նաև էջ 248, տողեր 29—30, Կ-ի բնագրում՝ «էա ախրի գամանի» (1922 թ. ուղղագրությամբ՝ տպված է՝ «ժա ախրի գամանի»):— Հավանաբար երկու դեպքում էլ հեղինակը պարբերական յա արտասանությունը մեքենայորեն արտահայտել է դասական ուղղագրությամբ նա, որ սակայն 1922 թ. ուղղագրությամբ կարգացվում է էա, այսինքն՝ 1940 թ. ուղղագրությամբ պետք է առադարձինք հենց այդպես՝ էա, իսկ դա սխալ է վերարտադրում պարբերական արտասանությունը: Նկատի ունենալով այդ ուղղել ենք՝ «ժա իլ վաղասի» և «ժա ախրի գամանի»:

Ուղղել ենք նաև մի շարք տպագրական վրիպակներ, սխալներ: Անխախտ ենք թողել պատմվածքի լեզվական կիսարարբառային միջավայրը (էա, էն, էսպես, ներքի, էնդրովայան, ֆցել, օտ և այլն): Աշխատել ենք թողնել նաև անմիօրինակությունները, որոնք ուղղված են հետևյալ դեպքերում. կոլեկտիվ-կոլեկտիվ-կոլեկտիբ զուգահեռ գործածված ձևերից կոլեկտիվ-ը դարձրել ենք կոլեկտիվ: Անկանոն գործածված են Սահակ և Սհակ ձևերը, նույնիսկ միևնույն նախադասության մեջ կա թե՛ մեկը, և թե՛ մյուսը (էջ 245, տողեր 3, 5). «Մարը» պատմվածքում նույն անմիօրինակությունը պահպանել ենք, այստեղ այն պահպանելը ճիշտ չէր լինի, քանի որ անկանոնությունը խոսքի ակնհայտ շնչակվածության արդյունք է և շատ զգալի է, ուստի որոշեցինք Սհակ ձևերը գարձնել Սահակ: Գլխավոր հերոսի անվան Գալե և Գյալե զուգահեռ ձևերից պահել ենք երկրորդը: Գալե ձևը գործածված է ընդամենը երեք անգամ (էջ 248, տողեր 2, 4, 8), մյուս բոլոր դեպքերում առկա է Գյալե: Որոշեցինք հիշյալ երեք դեպքերում էլ ավելացնել յ-ն: Թողել ենք խոսակցական ուղղագրության այնպիսի ձևեր, ինչպես Սմբաթ, բալ-չեկի և այլն:

Գետը է նկատի առնել, որ այս երկը հատկապես գրված է 1920-ական թվականների գյուղացիների համար, նրանց առավել հարողատ լեզվով:

Գատմվածք է թե ակնարկ «Ընկեր Գալուստը»,— կարծում ենք, գծար է որոշել:

Պատմվածքի հատկանիշ է այն, որ որոշակի չի ասված, թե ինչ վայր է պատկերվածը, ապա՝ գլխավոր հերոսը կերպար է դառնում պատմվածքային մոտեցմամբ, մյուս հերոսի՝ Սահակի խոսքը շատ մեծ է, երկի զգալի մասն է զբաղեցնում, որ խորթ է ակնարկին. հեղինակը որևէ անձի այդքան երկար խոսք ճշտորեն հիշել չէր կարող. ուրեմն և մեծ մասամբ իր հեղինակածն է, որ ավելի հատուկ է պատմվածքին: Բայց մյուս կողմից, շատ ակնհայտ է արծարծված հարցի նրատապ-առօրեական լինելը (հարցը պարբերականի հանձնարարությամբ պետք է առաջ քաշված լինի), ապա՝ հերոսների անունները, ըստ երևույթին, պահված են անփոփոխ: Սրանք էլ ավելի ակնարկի հատկանիշներ են: Որոշեցի՞նք այս երկը, այնուամենայնիվ, պատմվածքների մեջ դնել, որ պայմանական է, և ակնարկների շարքը դասելը ևս սխալ չէր լինի:

Չնայած պատկերված վայրի անորոշությանը, ակնհայտ է, որ Զանգեզուրի գյուղերից մեկն է նկարագրվում. Գյալին «գետերումը քար է շարդում»,— այսինքն՝ գնացած է եղել Բարկուշատի հովիտն աշխատելու (տե՛ս «Հերոս նոթարը», պատմվածքի ծանոթագրությունները Բարկուշատի և Գետերի մասին), իսկ դա նշանակում է, որ Զանգեզուրից է գնացել, առավել հավանականը՝ Գորիսի շրջանի որևէ գյուղից, Ապա «էն ժամանակ Մեխր էր նստում» (էջ 444, տող 21) խոսքը նույնպես Զանգեզուրի մասին կարող էր ասվել (այս դեպքում՝ ոչ Ղարաբաղի):

էջ 249, տողեր 30—31. Մեր զեղը Բագի անունով մի դավլած կա—այս անունով վարսավոր հիշվում է նաև «Կյորենում», որպես տեղացի:

էջ 254, տողեր 18—25. Մսուրների և մանկապարտեզների մասին գյուղական կանանց պատկերացումը տե՛ս նաև «Մի կին պատգամավոր է» ակնարկում:

Ժ Պ Տ Ո Ւ Մ Է Մ Ա Ր Գ Ը
(էջ 260)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը Ե. Չարենցի կազմած դասագրքում է (Գրականության և լեզվի դասընթաց. Ուսման 7-րդ տարի: Կազմեց Ե. Սողոմոնյան, Պր. 2, Ե., 1932): Այս հրապարակումն էլ ցույց է տրված Բակունցի մատենագիտության մեջ («Ակսի Բակունց. Կենսագրութ. և մատենագիտ.» էջ 134), որի հիման վրա պատմվածքի նշված բնագիրը (մասնավոր փոփոխումներով) տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (Ն. 1): Այժմ տպագրվում է դասագրքի բնագիրը:

Ուղղում.

էջ 264, տողեր 15—16. դասագրքի բնագրում՝ գործարանների ծխեկույզի գազաբերուղիված է՝ գործարանների ծխեկույզների գազաբերեր:

Դասագրքի բնագրում (էջ 266, տող 4) կա Մամոնտած երես մաշկը ծալ-ծալ մի կին արտահայտությունը, ուր մամոնտած-ը, ըստ երևույթին, ինչ-որ բառի ազդեցությունն է. շուղեցի՞նք՝ հեղինակայինը ստույգ վերականգնել չկարողանալով:

Պատմվածքում նկարագրվածը Խարկով քաղաքն է, որտեղ Բակունցը սովորել է 1920 թ. ամռանից մինչև 1923 թ. հուլիսը և լավ ծանոթ էր քաղաքին: 1929 թ. Բակունցը նորից կարճ ժամանակով եղել է Խարկովում. գուցե այս այցելությունն է ազդակ հանգիստացել պատմվածքը գրելուն:

Առաջին մասում նկարագրված է Խարկովը Դենիկինի իշխանության օրոք (1919 թ.), երկրորդում՝ վրանգելի հարձակման ժամանակ (1920 թ. գարուն): Այն օրերին ազգի ունե-

ցած դեպքերի մասին տեղեկութիւնները հեղինակը կարող է ստացած լինել հարկովի իր
ւրնէ ծանոթից: Երրորդ մասում նկարագրված տոնակատարութիւնը, ըստ երևութիւն, հե-
ղինակն անձամբ է ակնանտես եղել վերոհիշյալ այցելութիւն մամանակ:

էջ 260, տող 25. Երբ Գեներալը փառաբանում է խոսքը վերաբերում է հարկովի
գրավմանը Ա. Գեներալի զորքերի կողմից 1919 թ.:

էջ 262, տող 27—28. Վրանգելի սև օղակը մտնելում է—խոսքը վերաբերում է 1920 թ.
գարնանը Ղրիմից Ուկրաինա մտած Գ. Վրանգելի զորքերին, որոնք փորձում էին գրավել
հարկովը և Դոնբասը:

էջ 262, տող 28. Ընկալվ Մեյխտապուրը—Մեյխտապուր քաղաքը հարավ-արևելյան Ուկ-
րաինայում (Ջապորոժիեի մարզ) է, որ գրավել էր Վրանգելը:

էջ 262, տող 29. Դոնբասը կտնդի, նաև էջ 262, տողեր 4—5. հարձակվում են շախ-
տերի ույոնի վրա—խոսքը վերաբերում է Դոնեց գետի՝ քարածխով հարուստ ավազանին,
Ուկրաինայի արևելքում, Ջապորոժիեի և հարկովի մարզերի միջև գտնվող:

էջ 267, տող 11. Այստեղ պիտի լինի Մագնիտոսուբոյը—խոսքը Ուրալում (Չելյա-
բինսկի մարզ) Մագնիտնայա լեռան մոտ կառուցվող մետաղաձուլական գործարանի
մասին է: Գործարկվել է 1932 թ.: Այժմ այդ վայրում է Մագնիտոգորսկ քաղաքը:

էջ 267, տող 14. Վոլգան միանում է Դոնին—խոսքը վերաբերում է Վոլգան Դոնին
միացնող ջրանցքին (Դոնի Ռոստովի և Վոլգոգրադի միջև), որի կառուցման նախագծա-
յին և հետազոտական աշխատանքները նոր սկսվել էին պատմվածքը գրելու տարիներին՝
1920-ական թվականների երկրորդ կեսում: Կառուցումն ավարտվել է 1952 թ.:

Կ Ա Ղ Ն Ո Ւ Գ Ե Ր Ա Ն Ը

(էջ 269)

Մեզ ծանոթ առաջին հրատարակումը Ե. Չարենցի կազմած «Լեզվի և գրականության
գասազրույց» է (7-րդ տարի, 1933 թ.): Հնարավոր է, որ նախապես հրատարակված լինի
որևէ պարբերականում, թեև մեր որոնումը արդյունք չտվեց: Պատմվածքի սկզբում հեղի-
նակը գրում է. «Ծն խոստացել եմ «գազեթ քցել» Սիմոն ամուսն և նրա զրույցը» (էջ 269,
տողեր 5—6) և ապա՝ «Ձէ, Սիմոն ամի, պատմի... Ծն գազեթ եմ քցելու քո ասածը...»
(էջ 273, տողեր 18—19): Սրանից արդյոք չի՞ կարելի եզրակացնել, որ պատմվածքը
նախապես որևէ թերթում կամ ամսագրում է տպագրվել: Բախունցի երկերի մատենագի-
տութիւն մեջ էլ նշել ենք հիշյալ հրատարակումը, ըստ որի պատմվածքը տեղ է գտել
գրողի Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է դասագրքի բնագիրը.
ուղղել ենք տպագրական վրիպակները, օրինակ, պատմվածքի մի մասում (սկզբից մինչև
275-րդ էջի 10-րդ տողը) գործածված է բեզ ձևը, հետո՝ բեկ: Առաջին ձևի գործածու-
թիւնն ավելի շատ է, ուստի մյուս ձևերում կ-երը զ դարձրինք:

էջ 271, տող 24. ավգում էին Բարգուշտում.—այս տեղանունը գործածված է Բա-
կունցի նաև այլ երկերում (Սեղաբայրության ընկուզենիները, «Կյորես», «Հերոս նոքարը»
և այլն)՝ ավելի հաճախ՝ Բարկուշտ ձևով, որ հայերենի համար ավելի ճիշտ է, բայց
այստեղ գերադասելիք պահպանել ներկա բնագրի ձևը: Վայրի մասին տե՛ս «Հերոս նո-
քարը» պատմվածքի համապատասխան ծանոթագրությունը:

Առաջին անգամ հրատարակվել է 1936 թ. փետրվարին «Կյորեխ» հետ միասին «Նորայրության ընկուզենիները» վերնագիրը կրող գրքուկում: Այդ երկու երկերը Բակունցը գրել է միաժամանակ՝ 1935 թ. ամռանը, Գորիսում: Ընդ որում, «Նորայրության ընկուզենիները» գրել է Ա. Վշտունու՝ 1935 թ. լույս տեսած Երկերի մեծադիր (28,5×20) էջերին (նաև ոտանավորների վրա. այսինքն՝ գրքի էջերը գործածել է իրրև չգրված բուլղ): 1955 թ. պատմվածքը տեղ է գտել Երկերի միհատորյակում, 1959-ին՝ պատմվածքների ժողովածուի մեջ, որ նույնպես «Նորայրության ընկուզենիները» ընդհանուր խորագիրն ունի: 1960-ին տպագրվել է «Սովետահայ գրականության ընտիր էջեր: Արձակ» ժողովածուի մեջ, 1964-ին Երկերի երկհատորյակի առաջին հատորում և այլն: Այժմ տպագրվում է 1936 թ. առաջին հրատարակման բնագիրը:

Կատարված ուղղումներն են.

էջ 280, տող 27. Ե՛լ-ի բնագրում՝ ուլժ—ուղղված է՝ ուժ:

էջ 282, տող 35. Ե՛լ-ի բնագրում՝ Պաների երես ենք տեսնում—նախադասությունը դարձրել ենք հարցական՝ ելնելով նախադասության բովանդակությունից՝ Պաների երես ենք տեսնում:

էջ 283, տող 8. Ե՛լ-ի բնագրում՝ մարդ-մուրդ մեաց—հարցական նշան ենք դրել ըստ բովանդակության՝ մարդ-մուրդ մեաց:

էջ 290, տողեր 2—3. Ե՛լ-ի բնագրում՝ Հապա էսֆան մարդ մի Օհան պապի շարժի— ուղղված է ըստ բովանդակության՝ Հապա էսֆան մարդ մի Օհան պապի շարժի՝:

էջ 293, տող 17. Ե՛լ-ի բնագրում՝ հոռովիլի—ուղղված է՝ հորովիլի:

էջ 293, տող 18. Ե՛լ-ի բնագրում՝ ոլոր մուր— ուղղված է՝ ոլոր-մուր:

էջ 294, տողեր 7—12. Ե՛լ-ի բնագրում՝ անկանոն է հետևյալ նախադասությունը՝ Ո՛ւմ հետ էր խոսում Աթա ապերը,— իճն էլ չգիտեր, բայց խոսում էր, որովհետև չէր կարելի գառնանամուտի արևին լինելի տատափի խաղաղ ձորում, լսել ջրի ձայնը, այն խորհրդավոր ձայները, որ հեշում են ֆարանձավներում,— տեսնել ձորը խոր լուրջան մեջ:— Վերջում ավելացրել ենք՝ և շտոսել:

էջ 294, տող 22. Ե՛լ-ի բնագրում քերթին առած—ուղղել ենք ըստ բովանդակության՝ քերթին արած:

էջ 295, տող 6. Ե՛լ-ի բնագրում՝ դարբնոցներից—ուղղված է ըստ բովանդակության՝ դարբնոցներից:

էջ 305, տող 15. Ե՛լ-ի բնագրում ընկուզով—հավանաբար տպագրական վրիպակ է, ուղղել ենք նկատի առնելով նույն բնագրի մեջ եղած ընկույզ ձևը (էջ 308, տող 16)՝ ընկուզով:

էջ 306, տող 30. Ե՛լ-ի բնագրում՝ ի՛նչ մարդիկ են մտել բալը—հավանաբար տպագրական վրիպակ է, ուղղված է ըստ բովանդակության՝ ի՛նչ մարդիկ են մտել բաղը:

էջ 306, տող 34. Ե՛լ-ի բնագրում՝ Մեկն ոռուերեն—ուղղված է՝ Մեկը ոռուերեն:

Ե՛լ-ի բնագրում կան նաև ուղղագրական, լեզվական այլ ձևեր, որոնք այսօր անհարթ կամ հնացած են ընկալվում, բայց թողնված են նույնությամբ: Օրինակ, շեն ուղղված իրրև հարադրություն անշատ զրված այնպիսի բառեր, ինչպես՝ մեկն ու մեկին.

Մի առ ժամանակ և այլն, որոնք այժմ կցված են գրվում: Պատմվածքում կա քերականական թվի անհամաձայնություն (քակառություն). էջ 289, տողեր 3—4. Նրանց մեծ մասը արևմտյան ֆրանսում մասնակցել էին..., որ նույնպես թողնված է, քանի որ հեղինակային պետք է լինի (այդպիսի կապակցություններ հանդիպում են նույն շրջանի այլ գրողների երկերում ևս):

Այս բնագրում ևս զուգահեռաբար առկա են՝ ֆցել և գցել ձևերը (էջ 281, տող 19՝ ֆցեն, էջ 285, տող 18՝ ֆցել, էջ 287, տող 29՝ ֆցեց, էջ 288, տող 14, էջ 294, տողեր 16—17՝ ֆցում, էջ 291, տող 2՝ ֆցեցին.—բայց էջ 290, տող 28՝ գցեց). առաջինը, որ շատ է գործածված և հեղինակային է, ճիշտ շհամարեցիք ուղղել, իսկ երկրորդը ճիշտ էլք լինի փոխել սխալ ձևի:

Զի ուղղված նաև այնպիսի անմիօրինակություն, ինչպիսին է հեղինակային խոսքում մերթ ջրաղացպան (էջ 279, տող 17, 22), մերթ ջաղացպան (էջ 290, տողեր 6—7) գործածելը:

ԵՆ-ի բնագրում կան նաև անճիշտ տպված առողջանության նշաններ, մանավանդ շատ են այդպիսի անհրաժեշտ նշանների բացակայության դեպքերը: Ելնելով բովանդակությունից, ուղղել ենք միայն այնպիսիք, որոնց շուղղելը կարող էր բնագիրը սխալ հասկացվելու պատճառ լինել:

Պատմվածքում նկարագրված է մերթ Գորիսի Շենը (Կյորեսը), մերթ՝ մերձակա Երիշներ: Օրինակ, «երևում էր Միշին մահալում» (էջ 291, տողեր 19—20), «Արեգունի ձորերում» (էջ 292, տող 4) խոսքերը Գորիսի Շենի թաղամասերին են վերաբերում (վերջինը՝ Գյունեյն է), մինչդեռ կա նաև «Պղնձաբարը գրնգաց» (էջ 293, տողեր 21—22), «Հին ջրաղացով գյուղը» (էջ 298, տող 4), «Աթա ապերը տեսավ հիեղեցու պատի տակ նստած գյուղացիներին» (էջ 298, տողեր 5—6) և այլ խոսքեր, որոնք Երիշներին են վերաբերում. կամ կա՝ «Հեռվում գեաահուլտի վրա փովել էր քաղաքը» (էջ 294, տող 35),—սա Գորիսի մասին է, ինչպիսին այն երևում է Երիշների բարձունքից (Գորիսի Շենից քաղաքը ոչ թե հեռվում էր երևում, այլ՝ մոտ, գետի մյուս ափին): Հեղինակը իր նկարագրությունների համար, կարելի է ասել, միավորել է Կյորեսի և Երիշների մի շարք տեսարաններ:

Պատմվածքում հիշված մի շարք անձինք դեպքերին ժաՊանակակից, իրական, պատմական դեմքեր են՝ Նժդեհ, Բալի Ղարղաշ, Խանլար փաշա, Գրո (Դրովի գործը— էջ 283, տող 9): Պատմվածքում հիշվող մի շարք տեղանուններ և հերոսների անուններ կան նաև «Կյորեսում»:

էջ 278 տողեր 4—5. Օսմանլուի մեծ կովի տարին—կատի ունի 1877—78 թթ. ուսթուրթական պատերազմը: Պատմվածքում երկու անգամ գրված է հիսուն տարի առաջ (էջ 278, տող 6—7, էջ 281, տող 24), և կատի է առնված այդ պատերազմից մինչև 1919 թ. ընկած ժամանակաշրջանը. իրականում անցել էր ոչ թե 50, այլ 41—42 տարի:

էջ 278, տող 22 և այնուհետև. Աքա ապեր—Այս անունով է նույնամբ նման հերոս կա նաև «Կյորեսում» (տե՛ս սույն հրատարակության 3-րդ հատորը): Թվում է, այս կերպարը ստեղծելիս՝ Բակունցը նկատի է ունեցել ինչ-որ նախակերպար, բայց և զգալիորեն օգտագործել է իր պապ Արթինի մի շարք հատկանիշները. օրինակ, հայտնի է, որ Արթինը ազդեցիկ քրեմենքի քրեմենք է սնեցել, այդ թվում Բարկուշատի հովտից:

«Ձմռան մի գիշեր» պատմվածքից իմանում ենք, որ Արթինը ունեցել է Օրուշ անունով քրիվա, այսինքն՝ «եղբայրության ընկուզենիների» աղբրեշանցի հերոսին համանուն։ Աթա ապեր կա նաև Բակունցի «Ջանգեղուր» բնագրում, որ սակայն էությունը բուրովին տարբեր է այս Աթա ապերից։

էջ 279, տող 15 և այնուհետև. 'Ինճանի ձոր—հիշվում է նաև «Կյորեսում»։ Մենք հետաքրքրվել ենք Դորխում տեղացիներից այդ ձորի մասին, մոտերքում ցույց տվեցին Դրնգդրեզանի կոշվող ձորը։

էջ 280, տողեր 27—28. Քարաճուղի շրջան—խոսքը Դորխի մոտ գտնվող Քարահունջ գյուղի թթի օղու մասին է։

էջ 280, տող 27. Նորսի գինին—Նորսը Նախիջևանի գավառի գյուղերից է։

էջ 281, տողեր 33—35. Պրիրու շառա... Էս փոսիկի բիրին, Լս էլ կավալեր... Քառափ, բաշօղի։ Չերվուկի տես ղյուշան տեղ... և այլն—Ֆղթաաղի ժամանակ գործածվող բառեր ու արտահայտություններ են (մասամբ՝ աղավաղված ոտերին և ֆրանսերեն)։

էջ 282, տողեր 13. տե՛ր Նորեմայի առած «աշխարհավեր պատերազմը» հիշեցնում է «Կարմրաքար» վեպի հերոս Նույնպես տե՛ր Նորեմայի արտահայտությունները։

էջ 282, տող 23 և այնուհետև. Նիպանց Անդրի—«Եղբայրության ընկուզենիների» այս հերոսը ինչ-որ շափով նման է «Կարմրաքար» վեպի ջաղացպան Անդրուն, բայց այս պատմվածքում նա գյուղի ջրաղացպանը չէ (հիշատակվում է այլ ջրաղացպան, որը մի դեպքում ծիծաղում է Անդրու կատակներից. «մինչև անգամ ջրաղացպանն էր ծիծաղում»—էջ 283, տողեր 14—15, այլ դեպքում ներկա է նախքան Անդրու գալը—էջ 279, տողեր 7—8)։

Նիպանց Անդրի և ջաղացպան Անդրի հանդիպում են նաև Բակունցի այլ երկերում. մասնավորապես վերջինը «Ձմռան մի գիշեր» և «Հերոս նոքարը» պատմվածքներում (տե՛ս ծանոթագրությունները)։

էջ 286, տող 11. Սուրբան Մուրադ—Օսմանյան կայսրության Մուրադ անունով շրոս սուլթաններից, հավանաբար, նկատի ունի Մուրադ 2-ին, որի զորքերը 1444 և 1448 թթ. հաղթեցին խաչակիրներին և հնարավոր դարձրին Կ. Պոլսի գրավումը 1453 թ.՝ այս Մուրադի որդի Մահմեդ 2-րդի կողմից։

էջ 290, տող 5. սկսվում էր օտար վեճը. «կոսմովուկ»-ը—Նույն արտահայտությունը տե՛ս նաև «Կարմրաքար» վեպում։

էջ 290, տող 32. պրիտապ—տե՛ս «Բլան բելը» պատմվածքի համապատասխան ծանոթագրությունը։

էջ 291, տող 33. Բարկուշա—գետ և հովիտ Ջանգեղուրից արևելք։ Մաքրամտան տե՛ս «Հերոս նոքարը» պատմվածքի ծանոթագրություններում։

էջ 298, տող 9. Ապրիլն եկավ պառավի ցրտով—ակնարկում է պառավի ուլերի պատմությունը—տե՛ս «Բևան, Բևան...» պատմվածքի ծանոթագրություններում։

էջ 301, տող 29. Գետամեջերը—Նույնն է ինչ Գետեղը, Բարկուշա. տե՛ս «Հերոս նոքարը» պատմվածքի ծանոթագրություններում։

Առաջին անգամ հրապարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1924 թ. հունիսի 13-ի (№ 135) և հունիսի 19-ի (№ 139) համարներում Ալ. Բակունց ստորագրությամբ: Այժմ նույն այդ բնագիրը հրապարակվում է երկրորդ անգամ:

Բնագրում կան ուղղագրական անմիօրինակություններ. մասնավորապես անկա են՝ մեջիտ (էջ 312, տողեր 26, 27, 36), մեջիդ (էջ 313, տող 6) և մեջիդ (էջ 318 տող 32) ձևերը. պահել ենք մեջիտ-ը, որ ամենից շատ է գործածված, մյուսներն ուղղելով ըստ այդմ:

Ուղղումներ.

էջ 313, տող 16—17. Մ-ի բնագրում՝ տիղմ բերում է առատաձեռն փռում—ուղղված է ըստ բովանդակության՝ տիղմ բերում և առատաձեռն փռում:

էջ 318, տող 36. Մ-ի բնագրում՝ «Շյարֆ գափուսի» փոքրիկ ճամօրենքը—ուղղել ենք՝ «Շյարֆ գափուսի»-ի փոքրիկ ճամօրենքը:

1924 թ. հունիսին Բակունցը բնակվում էր Երևանում և աշխատում տեղի սերմնաբուծարանում: Հավանաբար, այդ ժամանակ է նա նշանակվել Քիզիսում հրատարակվող «Մարտակոչ» օրաթերթի, իսկ փոքր-ինչ անց նաև «Զարյա Վոստոկա» ռուսերեն լրագրի խղթակից: Գեպի նախիջևան ուղևորությունը պետք է կատարած լինի նաև «Մարտակոչ» խմբագրության հանձնարարությամբ: Այդ ուղևորության արդյունքը լինում է ոչ միայն «Շյարֆ Գափուսի» ակնարկը, այլև, որ շատ ավելի կարևոր է, երեք արևմտահայ որբերի տեղափոխումը Երևան: Նախիջևանի շուկայում Բակունցը տեսնում է երեք ցնցոտիավոր, կեղտոտ մանուկներ: Մոտենում է, խոսում, պարզվում է՝ հայեր են: Երեքին չլ իր հետ բերելով Երևան՝ երկուսին հանձնում է մանկատուն, իսկ մեկին՝ Ստեփան Վարդանյանին, առնում է իր խնամքի տակ:

էջ 311, տող 1 այնուհետև... Շյարֆ գափուսի—բացատրված է ակնարկում (էջ 318, տող. 5)՝ Արևելի դռներ, լրագրի անունն է:

էջ 315, տող 4. Շարուր—հնագույն հայկական բնակավայր: Ցարական շրջանում մտնում էր Երևանի նահանգի մեջ (Շարուր-Գարալազյազ գավառ.), 1921-ից Ադրբեջանական ՍՍՀ-ին է միացված (Նախիջևանի ԱՍՍՀ-ի հյուսիսային հատվածը):

ԳԱՎԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ (շարք)

Այս վերնագրով Բակունցը երեք ակնարկ է հրապարակել Քիզիսի «Մարտակոչ» օրաթերթում, որի թղթակիցն էր 1924—1925 թթ.: Քերև, կարելի էր այս հատորում երեքն էլ միավորել ու ներկայացնել իրրև մեկ երկ՝ «Գավառական նամականի» անվան տակ: Սակայն գերադասեցինք ակնարկներից յուրաքանչյուրը ներկայացնել առանձին՝ հրապարակման թվականների հերթականությամբ: Բանն այն է, որ դրանք նույն շրջանում Բակունցի գրած մյուս գյուղական ակնարկների բնույթի են, նման, օրինակ, «Մեր գյուղերում» ակնարկաշարին, և այս դեպքում «Գավառական նամականի» վերնագիրը ոչ թե միավորում է գրողի գյուղական ակնարկներից միայն այս երեքը՝ որպես մյուս-

ներից տարբեր շարք, ալլ ավելի շատ խորհրդանշական արժեք ունի: Եթե, Երինակ, «Մեր գյուղերում» վերնագրված ակնարկներից որևէ մեկը դեհեք «Գաժառական նամականի» շարքում կամ հակառակը, անհերոգաշնակութուն չի առաջանա: Ուստի, ավելի ճիշտ համարեցինք ինչպես որ ակնարկներից յուրաքանչյուրը լույս է տեսել առանձին, այնպես էլ զետեղել հատորում ըստ հրատարակման ժամանակագրության:

Այդ երեք նույնանուն ակնարկները միմյանցից տարբերակելու համար յուրաքանչյուրի վերնագրի մոտ փակագծում համարներ ենք դրել՝ Ա, Բ, Գ: Ըստ այդմ, ունենք առաջին, երկրորդ և երրորդ «Գաժառական նամականի»-ներ:

Գ Ա Վ Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի (Ա)
(էջ 320)

Հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1924 թ. դեկտեմբերի 27-ի համարում (№ 298)՝ Ակսել ստորագրությամբ: Նույն թվականին ռուսերեն թարգմանությամբ տպագրվել է «Զարյա Վոստոկա» օրաթերթում (№ 768)՝ «Провинциальные письма» վերնագրով: Տեղ է գտել Երկրի 1964 թ. երկհատորյակում (հ. 1)՝ փոքր կրճատումներով: Այժմ տպագրվում է առաջին հրատարակման բնագիրը՝ հետևյալ ուղղումներով:

էջ 322, տողեր 6—7. Մ-ի բնագրում՝ ...եթե նրա հիշատակման արժանի կողմերը՝ փոստ լինե, կամ զագսի ձին և կամ բե անցյալ տարվա այրույանը—նկատի ենք առել, որ նախադասության մեջ թվարկված առարկաներից երկուսը՝ ձին և այրույանը որոշի: Հող ունեն, իսկ մեկը՝ փոստ բառը՝ չունի: Հավանաբար տպագրական վրիպակ է, ուղղել էնք՝ ...եթե նրա հիշատակման արժանի կողմերը՝ փոստը լինե կամ զագսի ձին և կամ անցյալ տարվա անրույանը:

էջ 323, տող 7. Մ-ի բնագրում՝ բազմազան զարժառանները—ուղղել ենք՝ հլնելով բովանդակությունից՝ բազմանան զարժառանները:

էջ 325, տող 9. Մ-ի բնագրում ույժը—ուղղել ենք՝ ուժը:

էջ 325, տող 13. Մ-ի բնագրում՝ սրանից նրանից—ուղղված է՝ սրանից—նրանից:

Մ-ի բնագրում առկա է ուղղագրական անմիտրինակություն՝ էջ 321, տող 28, էջ 322, տող 7՝ այնուպան, բայց էջ 321, տողեր 31, 34՝ այնուպան և այնուպանգա—ճիշտ համարեցինք այնուպան-ը ուղղել՝ անրույան, մյուս ձևը թողնել:

«Գաժառական նամականի» այս առաջին ակնարկի երեք մասերում էլ պատկերված է Գորիսը մեղմ երգիծանքով, որոշ շահազանցումներով: Հրատարակվելուց հետո որոշ գորիսցիներ խիստ դժգոհություն են հայտնել, բողոքել: Գորիսում լույս տեսնող «Կարմիր ռաշպար» թերթի 1925 թ. հունվարի 10-ի համարում տպագրվեց Գ. Ղազարյանի «Ակամա պատասխան քաղաքացի Ակսել-ին» հոդվածը, որտեղ Բակունցի ու նրա ակնարկի հասցեին խիստ վարկարեկիչ խոսքեր են գրված («առաջնակարգ սուտ է», «դատում է պրովոկացիա», «քաղաքացի Ակսելը շատ անպետք ստատիստիկ է», «Գորիսը ուներ մի ժամագործ, որը... կոշիկ կարելու մասին այնքան հասկացություն ուներ, որքան քաղաքացի Ակսելը ժուռնալիստիկայից», կային քաղաքական մեղադրանքներ: Հայրենի քաղաքում գրողի շուրջը բորբոքվում է անբարյացակամ մթնոլորտ, և դա էր պատճառներից մեկը, որ 1926 թ. մարտին Բակունցը Գորիսից տեղափոխվեց Երևան:

Մինչդեռ «Գաժառական նամականի» երեք ակնարկները Թփղիսում, Երևանում և այլուր ուժեղացրին հետաքրքրությունը Ակսել ստորագրող գյուղատնտես-թղթակցի շուրջը:

Քփղիսում այն ժամանակ գեոեո հայ մշակութային զարգացող կյանք կար՝ հայ մտավորականության, հատկապես տեղի բազմաթիվ հայկական դպրոցների ուսուցիչները: Բակունցը շատերի համար սիրելի գրող էր դառնում:

Բնավառական նամակահին» հետաքրքրությունն առաջացրեց նաև արտասահմանում: Վիեննայում պահանջվող հայագետ Հակոբոս Տաշաճեան իր «Բնավառական գիտություններ հայերեն գիտական լեզվի մասին» (1926 թ.) ուսումնասիրության մեջ (էջ 15) շեմոթրեն անդրադարձավ Բակունցի առաջին «Բնավառական նամակահինում» հայաց լեզվի հարցին նվիրված հատվածին:

Բակունցը, ինչպես մի քանի այլ երկերում (հատկապես «Կյտրեսում»), այստեղ եռիստ է արտահայտվել մայրենի լեզուն արձամարձող քաղթնիներին նկատմամբ. «Յոթ տարի է անցել Հոկտեմբերից, և դեռ մարդիկ կան՝ հին պիտաններ, որոնք հայերենը համարում են գլուխացու լեզու, անվայել էրիենց» շրջանի համար: Քա՛րը գլխին, թող համարեն. բայց զայրանում ես, երբ ժողովում են այդ տում, և մեշահանական տիղմի մեջ սնված, չինովնիկի մունդիի տակ աճած մի էջս-գործավար, որ այսօր մատենավար է սովորական,— և անգամ թեկուզ ետրաշխի վերատուգիչ հունձնաժողովի,— զայրանում ես, երբ ընդհանուր ժողովում ձայն է խնդրում և խոսում... ուսերեն (երբ լսողների կեսից ավելին իրենց քաղաքից ուրիշ քաղաք չեն գնացել)» (էջ 323, տողեր 19—28):

Պետք է ասել նաև, որ մայրենի լեզվի նկատմամբ հարգանքն ավելացնելու խնդիրը 1920-ական թվականներին առհասարակ հաճախ էր արժարժում խորհրդային մամուլը: 1921 թ. հուլիսի 1-ին «Մոսկովայի Լայպստան» օրաթերթը (№ 115) տպագրեց առաջնորդ՝ «Անհետաձգելի պահանջ» վերնագրով: Այդ խմբագրականով Երևանի և Քփղիսի հայ մամուլում սկիզբ առավ հողվածների մի ամբողջ շղթա, որի մի օղակն էր Բակունցի առաջին «Բնավառական նամակահին»: Հիշյալ առաջնորդում մասնավորապես ասված էր. «Մեր մտավորականության մեջ ազգայնականների կողքին կա մի ուրիշ տարր, որը սոցիալիստական պետության համար նույնքան անհանգուժելի է, ինչպես և առաջինը: Դա այն տարրն է, որ կտրված է իր հայրենիքից և համակված յուրօրինակ բուրժուական հակահայկական տրամադրություններով: Դա այն տարրն է, որ ամենայն կերպ պաշտպանել է ուսուկանացման այն սկզբունքը, որ կիրառվել է մեր երկրում ցարիզմի օրերից: Այդ տարրին պատկանող մտավորականները չեն ցանկանում ամենեին ուսումնասիրել հայ լեզուն և կյանքը ու գերագատում են կառավարել երկիրը ուսական լեզվի միջոցով: Այդ տարրի ներկայացուցիչներից շատ շատերը սիրում են անշնորհք ուսահրենով ցուցադրել իրենց բացասական վերաբերմունքը գեպի հայ լեզուն... Դրանց թվում է, թե այժմ իրենք իրավունք ունեն հակադրել գաշտակցականների վայրենի նացիոնալիզմին կազմակերպի գեհնիկ ուսուիֆիկատորությունը:

Այդ բոլորի գեմ մենք, ամենից առաջ հայ կոմունիստները, պիտի կավենք անհետաքրքրեն և անողորմոր:

Հայաստանը կապված է եղբայրական կապերով ետրօրգային Ռուսիայի հետ: Բայց նա միաժամանակ դրա հետ անկախ մի հանրապետություն է, որ ունի իր ուրույն ազգային գեմքը: Հայաստանը հայ աշխատավորների, հայ ժողովրդի պետությունն է: Եվ այդտեղ պետական լեզուն ետյուրենն է. Նա, ով չի ցանկանում այդ բերունել, ով գիտավորությունը խուսափում է գործածել հայերենը պետական հիմնարկությունների մեջ, իրավունք վարում է հակահեղափոխական մի գործ:

Նա, ով չի կարող համակերպել մեր պետության առջ պահանջին կարող է հեռանալ

Քրիթից: Նույն բնույթի հոդվածներ տե՛ս նաև «Խորհրդային Հայաստան», 1923, 5 հուլ., 29 դեկտ., 1924, 20 դեկտ., 1925, 21 փետր., 5 հունիսի, 1929, 25 ապր. և այլն):

Մի ժամանակ «Գավառական նամականիս» դիտվում էր իբրև Բակունցի առաջին հրատարակված երկը, այդ կարծիքը մի շարք անգամ է հայտնվել: Իրականում, այդ ակնարկաշարի հրատարակումից տասնմեկ տարի առաջ է տպագրվել Բակունցի «Հիմար մարդը» (տե՛ս ծանոթագրությունը), և դրանից հետո մինչև «Գավառական նամականիս» գրողը տպագրել է շուրջ երկու տասնյակ գեղարվեստական երկեր ու հոդվածներ:

«Գավառական նամականի» շարքը իր երեք ծավալուն ակնարկներով, հայ գավառի, գյուղի կյանքի կենդանի պատկերներով պարզապես մեծացրեց հետաքրքրությունը Բակունցի հանդեպ:

Գ Ա Վ Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի (Բ)

(էջ 325)

Առաջին անգամ հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթում, 1925 թ. փետրվարի 12-ին (№ 35)՝ Ալեկսի ստորագրությամբ: Հաջորդ օրը՝ փետրվարի 13-ին առաերեն տպագրվել է «Զարյա Վոստոկա» օրաթերթում (№ 893)՝ «Брѹн» վերնագրով: Ապա տեղ է գտել Երկերի 1954 թ. երկհատարյակում (հ. 1): Այժմ տպագրվում է անգրանիկ հրատարակման բնագիրը:

Ակնարկի առաջին մասը պատկեր է Գորիից. «...անօզ մի կին ամեն օր կուժն օւտին՝ այս ցուրտ ձմռան բոկոտն անցնում է մեր փողոցով»,— դա Գորիսի այժմյան ճենիների փողոցն է, որի № 35 տանը ներկայումս տեղափոխված է Բակունցի տան-թանգարանը, իսկ նախկինում դա էղև է Բակունցի հայրական տանը, որի առջևով էլ ամեն օր անցնելիս է եղել բուկոտն կինը:

էջ 326, տող 25. Իրանիյեսը—խոսքը վերաբերում է իսպանական ժխպասան, հրատարակագիր Իրանես Բլասկո Վիսենտեին (1867—1928):

էջ 327, տող 32. Վերիշեն—խոսքը Բակունցի մայրական Սրիշեն գյուղի մասին է, որն այժմ գրեթե միացել է Գորիին:

էջ 328, տող 19. Բուուեր մի փոքրիկ գյուղ է—Բուուեր գտնվում է Գորիսի մաս, Սրիշենին գրեթե կից:

էջ 329, տողեր 19—20. «Խառհրգավար միտեննուներ»—խոսքը վերաբերում է Մուրացյանի համաստան պատմվածքին, որի գլխավոր հերոսուհին՝ քույր Աննան, քաղաքից մեկնում է գյուղ և նվիրվում գյուղացի երեխաների կրթությանն ու զաստիարակությանը:

էջ 329, տողեր 20—31. «Երկաթե երգեր». «Վուլկան» ու «Տիտան», մի խումբով մի ամբողջ «Նրաբխուպեղիս»—երգիծական ակնարկ է 1920-ական թվականներին հրատարակվող աղմկաշար շարժան երկերի մասին. պետք է որ հատկապես նկատի առած լինի Վ. Ալազանի «Նրաբխուպեղիս» (Սրևան, 1925), Գ. Մահարու «Տիտանիկը» (Լենինական, 1924):

Գ Ա Վ Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի (Գ)

(էջ 331)

Առաջին անգամ հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթում, 1925 թ., ապրիլի 19-ին (№ 89)՝ Ալեկսի ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ: «Մարտակոչի» բնագիրը պահպանված է՝ հետևյալ ուղղումներով.

էջ 332, տողեր 4—5. Մ-ի բնագրում՝ Ուրեմն հարկավոր գյուղի խորհուրդին ավելի իրավունք տալ—է-ի պակասը տպագրական վրիպակ պետք է լինի, ուղղված է՝ Ուրեմն հարկավոր է գյուղի խորհուրդին ավելի իրավունք տալ:

էջ 332, տող 24. Մ-ի բնագրում «խելքար»—ուղղված է «խելքատ»:

էջ 332, տողեր 26—27. Մ-ի բնագրում՝ ամբողջ տարին կոիվ տալիս—է-ի պակասը պետք է, որ տպագրական վրիպակ լինի, ուղղված է՝ ամբողջ տարին կոիվ է տալիս:

էջ 333, տող 27. Մ-ի բնագրում՝ աչխ մաշինին կտրոտ մնաց—ուղղել ենք ըստ բովանդակության՝ աչխ մեշին կտրոտ մնաց:

էջ 333, տող 23 և հետո. Գիլան դայի—երրորդ «Գավառական նամականու» այս մասում Գիլան դայի անունով գյուղացու եկարագրությունը հիմք է տալիս մտածելու, որ նա «Միրճավ» պատմվածքի համանուն հերոսի նախակերպարն է (տե՛ս նաև Երկերի ներկա հրատարակության 1-ին հատորում «Միրճավ» պատմվածքի ծանոթագրությունները):

էջ 334, տող 16. Մ-ի բնագրում՝ Իմ միտքն ավելի է պարզում—ուղղել ենք ըստ բովանդակության՝ Իր միտքն ավելի է պարզում:

Ակնարկի առաջին հատվածում, պետք է ենթադրել, որ Ղափանի շրջանի հորհուրդների համագումարին է խոսքը վերաբերում (նույն թվականի մայիսին հրապարակված «Մեր գյուղերում» առաջին ակնարկի մեջ նկարագրված է Միսիանի շրջանի հորհուրդների համագումարը): Երրորդ հատվածում հիշվում է գյուղի անունը՝ Զեյվա (էջ 335, տող 30), ուր իջևանած է եղել հեղինակը, նույն անունով մի քանի գյուղերից սա պետք է որ Ղափանի շրջանի Զեյվան լինի:

էջ 335, տող 29, 30. Գռուեսի ծրագրի մասին—խոսքը վերաբերում է 1923—1924 թթ. ամերիկյան դրամատեր Գռուեսի մշակած ծրագրին, որի նպատակն էր զարգացնել պատերազմում պարտված Գերմանիայի քայքայված աղյուսներումը և ռազմական կարողությունը:

ՄԵՐ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ (շարք)

«Մեր գյուղերում» ակնարկաշարը ևս, (ինչպես և «Գավառական նամականին») կարելի էր այս հատորում գնել իբրև մեկ երկ՝ տարբեր մասերով, սակայն դա նույնպես նպատակահարմար չհամարեցինք: Այս խորագրով հինգ ակնարկներից շոքը նախապես տպագրվել են հայերեն, իսկ մեկը՝ ռուսերեն, հայերեն տպագրվածներից երեքը «հորհրդային Հայաստան», մեկը «Մարտակոչ» օրաթերթերում՝ 1925 թ. տարբեր ամիսների. նրանց ընդհանուր վերնագիրը ևս սոսկ մատենաշարային արժեք ունի (տե՛ս նաև «Գավառական նամականու» ծանոթագրությունները): Այս շարքին վերաբերող ռուսերեն ակնարկը տպագրվել է 1925 թ., «Զարյա Վոստոկայի» մեջ՝ «По селам Зангезура» վերնագրով (տե՛ս ծանոթագրությունը), որն ըստ ժամանակագրական հերթականության երկրորդն է ակնարկաշարում: Հասկանալի է, որ ճիշտ չէր լինի այս հինգ՝ տարբեր ժամանակ, տարբեր լեզվով, հրապարակված ակնարկները ներկայացնել իբրև մեկ միասնական երկ՝ խախտելով հատորում նյութերի դասավորման կարգը:

«Մեր գյուղերում» շարքի հինգ ակնարկները միմյանցից գանազանելու համար նույնպես համարակալել ենք հայկական տառերով՝ վերնագրերի մոտ, փակագծով:

Կարելի էր По селам Зангезура («Մեր գյուղերում» վերնագրի թարգմանությունն է)

ակնարկին շտալ (Ք) համարը, թողնել առանց համարի, քանի որ հայերեն չի հրապարակվել, բայց ճիշտ համարեցինք ակնարկաչարի ամբողջությունը պահպանել ժամանակագրական համարակալումով, թեև այս ակնարկը դրեցինք հավելվածում:

Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ո Ւ Մ (Ա)

(էջ 337)

«Մեր գյուղերում» շարքի այս անդրանիկ ակնարկը տպագրվել է «Երրորդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. մայիսի 13-ի համարում (№ 107)՝ Ալեքի ստորագրությամբ: Ապա Բակունցն այն զետեղել է իր կազմած «Կարմիր արև» դասագրքում (1930 թ.): Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ «Երրորդային Հայաստանի» բնագրի:

Հեղինակի կենդանության ժամանակ կատարված վերահիշյալ երկու հրապարակումներն էլ բնագրային աղբյուրի արժեք ունեն: Այսպիսի դեպքերում հիմնական բնագիր ենք համարել աղբյուրներից վերջինը, որ սովորաբար բարելավված է լինում հեղինակի կողմից: Ինչպես վերև ասել ենք, այս անգամ այդ կերպ չենք վարվել, քանի որ «Կարմիր արևում» հեղինակի դրած բնագիրը հարմարեցված է դպրոցական դասագրքի պահանջներին. մի շարք բառեր ու արտահայտություններ գրականացված են, որի հետևանքով թեև լեզուն առավել գրական ու դասագրքային է դարձել, բայց ակնարկում ժամանակի ու միջավայրի պատկերման գունավորումը թուլացել է (տե՛ս նաև Բնագրային տարբերակներ բաժնի ներածականը): Օրինակ, գյուղացի հերոսների խոսքերում գործածված «կամի-ն» փոխարինված է «քոռո-ով», 12 հատ նիստ-ը՝ 12 նիստ-ով, գյուղաբանք-ը դարձել է գյուղեր և այլն: Ապա՝ մի քանի ընդարձակ հատվածներ, ընդ որում, բավական ընդամենը գրական ժամանակի և մարդկանց պատկերման տեսակետից, հանված են:

Նման փոփոխություններն ու կրճատումները հիմնավոր են ակնարկը դասագրքում գնելու: Մտնանկյունից, դրանք մանկավարժական մշակումներ են, բայց ոչ՝ գրական: Ակնարկի առաջին հրապարակումը երկրորդի համեմատ գեղարվեստական տեսակետից առավելություններ ունի, ուստի որոշեցինք այն համարել հիմնական բնագիր, իսկ դրա համեմատ դասագրքային հրապարակման տարբերությունները ներկայացրել ենք Բնագրային տարբերակներ բաժնում:

Միաժամանակ, «Երրորդային Հայաստանի» բնագրում եղած մի քանի սխալներ, վրիպակներ ուղղել ենք ըստ «Կարմիր արևի» բնագրի:

Ընդհանրապես, առաջին հրապարակման բնագրում կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 337, տող 27. ԽՀ-ի բնագրում՝ Երկու ամսում...—գրել ենք երկախոսության գծիկ՝ —Երկու ամսում...

էջ 338, տող 15. ԽՀ-ի բնագրում՝ Սիսիանում—գրել ենք երկախոսության գծիկ՝ —Սիսիանում:

էջ 339, տողեր 11—12. ԽՀ-ի բնագրում «էն օրազում նստաբան կա, բերեք նստեմք» —ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի, որը և բովանդակությանը ներդաշնակ է, ուղղագրական տեսակետից ավելի ճիշտ՝ «էն օրախում նստաբան կա. բերեք նստեմք»:

էջ 339, տողեր 20—21. ԽՀ-ի բնագրում՝ Այ, լծենը հիմա լավ աշխատում—երկու տպագրական վրիպակ կա (Լծեն գյուղի անունը փոքրատառ է և չկա աշխատում-ի օժանդակ բայը), ուղղված է՝ Այ, լծենը հիմա լավ աշխատում:

էջ 340, տող 3. ԽՂ-ի բնագրում՝—Կարճ ա գրած է—պետք է վրիպակ լինի, ուղղված է՝ Կարճ ա գրած, է՝:

էջ 340, տող 9. ԽՂ-ի բնագրում՝ 500—ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի՝ 560:

էջ 340, տող 9. ԽՂ-ի բնագրում՝ 1498՝—ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի՝ 1428:

էջ 340, տող 24. ԽՂ-ի բնագրում՝ շեն հակասում—ղրված է հարցական նշան՝ ըստ քովանդակութիւնի՝ շեն հակասում:

էջ 340, տող 34. ԽՂ-ի բնագրում՝ 18, ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի՝ 13:

Գյուղացիների խոսքում առկա են և եղանակիչը առանձին գրելու դեպքեր (կը որոշի, կը բռնենք)։ Չուղղեցինք՝ ենթադրելով, որ հնարավոր է հեղինակն ինքը եղանակիչն անջատ գրած լինի՝ ը հնչյունը կիսաբարբառային խոսքում շեշտելու նպատակով։ Նույն անջատ գրութիւնը գտնում ենք նաև «Մեր գյուղերում» շորրորդ ակնարկի մեջ՝ տպագրված «Մարտակոչում» (այսինքն՝ տարբեր քաղաքներում տպագրված այդ ակնարկների մեջ հիշյալ գրութիւնն ձևը քիչ հավանական է, որ խմբագրութիւնների մուծածը լինի)։

Բակունցն այս ակնարկը զետեղելով իր «Կարմիր արև» դասագրքի մեջ, վերջում գրել է հետևյալ հարցերը.

— Ձեր գյուղում խորհուրդ կա՞: Ինչպիսի՞ կազմ ունի: Ովքե՞ր իրավունք ունեն բերովելու: Ի՞նչ է վարձու աշխատանքը և ի՞նչ դասակարգի մարդիկ են օգտվում վարձու աշխատանքից:

— Ի՞նչ է խորհուրդների համագումարը և ի՞նչ է պատգամավորը:

— Ի՞նչ են ՓՕԿ-ը, ՊՏԱՊ-ը, ի՞նչ խոսքերից են կրճատված:

— Տվե՛ք ձեր գյուղի պատկերը և համեմատեցե՛ք այս հատվածի մեջ դուրս բերված գյուղերի հետ:

— Ի՞նչ մարդիկ են առաջացել նոր գյուղում: Դժնցե՛ք նրանց պատկերը:

— Ի՞նչ նոր բաներ և դարձվածքներ են գործածում այս պատմվածքում գյուղ-խորհրդի և շրջգործկոմի նախագահները: Կազմե՛ք այդ բաների ցուցակը:

— Նկարագրե՛ք ձեր գյուղխորհրդի աշխատանքները: Ստուգե՛ք նրանց տարեկան հաշվետվությունը:

— Նկարագրե՛ք ձեր գյուղի լիկկայանը: Ճի՞շտ է ասում այն ձերուհի, երեխաներին դպրոցից չհանելու համար: Ձեր գյուղի երեխաներից քանի՞սն են դպրոցից դուրս մնացել: Որոշեցե՛ք նրանց տոկոսը:

— Ո՞վ է կառավարում խորհրդային գյուղը. ձեր այցելած գյուղխորհուրդն ի՞նչ սեկցիաներ ունի, և ի՞նչ աշխատանքներ են տարել նրանք:

— Ի՞նչ հասարակական և ֆաղափական կազմակերպություններ կան ձեր գյուղում. ի՞նչ են արել ԿԱՆ և ՄԱՄ բջիջները ձեր գյուղում. ձեր դպրոցը ինչո՞վ է մասնակցել ու աջակցել նրանց աշխատանքներին:

— Ի՞նչ են անում կուս. և կոմերիտ բջիջները ձեր գյուղում:

— Դու՛ք էլ ձեր դաս-խորհրդից կամ դասկոմից պահանջեցե՛ք հաշվետու զեկուցում:

Ակնարկում պատկերված գյուղխորհուրդների հերթական համագումարը տեղի է ունենում Սիսիանում՝ շրջգործկոմի գրասենյակում. զեկուցումների մեջ հիշվող՝ Լծեն, Բունակոթ, Անգեղակոթ, Ախլաբյան գյուղերը գտնվում են Սիսիանի շրջանում (Լծենի մասին տե՛ս առանձին ակնարկն այս հատորում)։

էջ 338, տող 27 և հետո. կոպեքրատիվ, նաև կոպեքրատիք—այս և 1920-ական թվականների մյուս ականարկներում խոսքը վերաբերում է սպառողական կոոպերատիվին, որպիսիք այդ թվականներին կազմակերպվում էին Հայաստանի գյուղերում և քաղաքներում:

էջ 338, տող 33. և հետո. ՓՕԿ—հապավումն է փոխադարձ օգնության կամիտե-ի. այդպիսիք 1920-ական թվականներին կազմակերպվում էին գյուղերում շուկաներին միջբերով, սերմացուով և այլ նյութերով օգնելու համար (տե՛ս նաև «Արտեիլիա»-ի ծանոթագրությունը):

էջ 341, տող 9. ՄՈՊՐ—հապավումն է՝ Международная организация помощи борцам революции անվան: Այդ անունով կազմակերպությունը 1920—30-ական թվականներին շատ հայտնի էր և մեծաքանակ անդամներ ուներ:

Բ Ի Զ Ա Ն Ա Գ

(էջ 343)

Առաջին անգամ հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1925 թ. հունիսի 10-ի համարում (№ 130)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել ԵրկԹրի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ «Մարտակոչի» բնագրի: Կատարված ուղղումն է.

էջ 347, տող 13. Մ-ի բնագրում՝ Բեռում էր—կարծում ենք տպագրական վրիպակ է, ուղղված է՝ Բոռում էր:

Ակնարկում նկարագրված է Սիսիանի շրջանը Նախիջևանի հարթավայրից բաժանող լեռը և համանուն լեռնանցքը, որով այն ժամանակ կատարվում էր հիմնական երթևեկությունը Ջանգեզուրի և Երևանի միջև: Նույնն ափիլի մանրամասն նկարագրված է «Բեան, Բեան...» պատմվածքում (տե՛ս ծանոթագրությունը): Խոսքը Բիշանազ (կամ Բիշանակ) լեռան և նույնանուն (կոչվում է նաև Սիսիանի) լեռնանցքի մասին է: Բիշանազը Սալվարդի կամ Սալվարթոի (նաև Ջանգեզուրի) լեռնաշղթայի մի մասն է:

Այս ուղեորության ժամանակ լեռնանցքին մոտ՝ նրա հարավարևելյան մասում գտնվող Բիշանազ աղբյուրանական գյուղում Բակունցի կարճ ժամանակ իջևանելը ազդակ է եղել «Սարու» պատմվածքի ստեղծմանը. վերջինիս նախակերպարները առկա են այս ականարկում (տե՛ս «Սարուի» ծանոթագրությունը Երկերի սույն հրատարակության առաջին հատրում): Նշենք նաև, որ «Սարուն» գրեթե հեղինակը թեև զլիավոր կերպարները ստեղծել է Բիշանագում ստացած տպավորություններից, բայց Սարու գյուղի շրջալս անտառների նկարագրությունը, գյուղացիների սովորությունների, իշխող աղանդի պատկերումը ափիլի առնչված են 1926 թ. աշնանը դեպի Բարկուշատի հովիտը և Ջանգեջան (Աղբյուրանական ՍՍՀ) Բակունցի կատարած ուղեորության հետ: Այդ ուղեորության արդյունքներից մեկն էլ «Շաթրիզ» ականարկն է եղել (տե՛ս այս հատրում): Այդ ականարկում նկարագրված Շաթրիզ գյուղի շրջապատը, որ Սյուտանի լեռնային խոտ անտառներն են, շատ է հիշեցնում «Սարուի» մեջ նկարագրված անտառները: Բացի դրանից, դեպի Ջանգեջանի գավառ կատարած այդ ուղեորության ժամանակ Բակունցը եղել է շրջակայքի այլ գյուղերում ևս, հավանաբար, նաև նույն գավառի Սարու գյուղում, որի անունով կոչել է իր պատմվածքը և, ըստ երևույթին, այնտեղ եղած աղանդն է նկարագրել:

Առաջին անգամ հրատարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. հուլիսի 10-ի համարում (№ 156)՝ Ակտել ստորագրությամբ: Այժմ սպառվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի: Կատարված են հետևյալ ուղղումները:

էջ 351, տող 1. ԽՂ-ի բնագրում՝ «ենյ զիդի...—ըստ բովանդակության դրել ենք բացականչական նշան և սկզբում մեծատառ՝ «ԷՆՅ զիդի...»:

էջ 352, տող 10. ԽՂ-ի բնագրում՝ ասում է զտունեն, փշում է «տարանինան»—փոխել ենք ստորակետի տեղը՝ ելնելով բովանդակությունից՝ ասում է, զտունեն փշում է «տարանինան»:

էջ 353, տող 28. ԽՂ-ի բնագրում՝ նորին դիմն—պետք է սպազրական վրիպակ լինի. ուղղել ենք ըստ բովանդակության՝ նորին դեմ է:

էջ 354, տողեր 11—12. ԽՂ-ի բնագրում՝ տղամարդու շորեր հագնվում—կարծում ենք վ բայամասնիկը հեղինակային չէ, ուղղել ենք՝ տղամարդու շորեր հագնում:

էջ 354, տող 25. ԽՂ-ի բնագրում՝ Հա՛, տերտեր—դրել ենք երկախոսության գծիկ՝ —Հա՛, տերտեր:●

Բնագրում կա արտասանական-ուղղագրական հետևյալ անմիօրինակությունը՝ էջ 353, տող 30. ագրամոն, տող 32. «ագրամոնը», տող 33. ագրանովր: Սա ագրոնոմ բառն է միևնույն գյուղացի հերոսի բերանում: Ճիշտ չհամարեցինք միակերպ դարձնելը: Մի տեղ (էջ 353, տողեր 24—25) անկանոնություն կա. ըստ երևույթին, շարելիս հատված է դուրս բնկել:

«Մեր գյուղերում» այս երրորդ ակնարկը առաջինի նման վերաբերում է Սիսիանի շրջանին: Հավանաբար շրջկենտրոնում գյուղխորհուրդների հերթական համադումարին մասնակցելուց հետո (տե՛ս «Մեր գյուղերում», առաջին ակնարկն ու ծանոթագրությունը) Բակունցը, իբրև Զանգեզուրի գլխավոր գյուղատնտես, մեկնել է Սիսիանի գյուղերը. դրանք են ակնարկում հիշատակվող Թազա գյուղը (կոչվել է նաև Թազաքենդ, այժմ՝ Թասիկ), Ալեյուն (այժմ՝ Սալվարդ), Մազրան (այժմ՝ Բարձրավան): Ակնարկի սկզբում հիշատակված Ուլու շայր՝ Որոտանի վրանկներից է:

էջ 349, տող 3. Խոյեցի են, լեզուն չի զանազանվում իզդիրցու լեզվից—նկատի ունի գյուղացիների՝ Պարսկահայքից, այն է՝ Խոյի, Սալմաստի շրջաններից գաղթած լինելը: Խոյեցիների մի մեծ զանգված փոխադրվել է Ռուսաստանի տիրապետության տակ անցած հայաստանյան շրջանները Պարսկաստանի և Ռուսաստանի միջև 1828 թվականի Քուրմենեյաչի պայմանագրի կնքվելուց հետո: Զանգեզուրում հաստատվել են խոյեցիների մի շարք գյուղեր՝ գլխավորապես Սիսիանի, մասամբ Գորիսի շրջաններում: Սիսիանի շրջանում հաստատվածները մինչև այժմ էլ պահպանել են իրենց մայրենի բարբառը, Գորիսի շրջանում եղած խոյեցիները կորցրել են իրենց բարբառը և յուրացրել արցախայունիքյան բարբառի Գորիսի խոսվածքը:

Ինչ վերաբերում է Իզդիրի կամ Սուրմալուի շրջանի բնակչության լեզվին, ապա այն միատարր չի եղել. խոսել են և՛ Խոյի, և՛ արարատյան բարբառների խոսվածքներով:

էջ 349, տող 4. Ցեղացիք Երանց «չլլան» են ասում—այժմ էլ Սիսիանի շրջանում

Արցախ-Սյունիքի բարբառով խոսող տեղացիները խոչեցիներին կլլան են ասում՝ նկատի առնելով նրանց բարբառի ելեկշումը:

էջ 350, տողեր 8—9. Գաղթելուց հետո, միեղձ այժմ, 90 տարվա ընթացքում—ստացվում է, որ խոչեցիները Սիսիանի շրջան են եկել 1835 թ.: Իրականում ավելի վաղ են եկել, և մոտավորապես ճիշտ է ակնարկի սկզբում՝ «...Քաղա գլուղը, որ հարյուր տարվա անցյալ ունի», նույնը կա նաև «էծեն» ակնարկում (տե՛ս այս հատորում)՝ «էծենը» հարյուր տարի առաջ խոչից գաղթել է» (էջ 387, տող 14):

էջ 350, տող 25. «Մանկալի» խմբագրությունը—խոսքը Երևանում 1922—1931 թթ. հրատարակված գյուղացիական «Մանկալ» լրագրի խմբագրութան մասին է (որի աշխատակիցն է եղել Ա. Բակունցը):

էջ 350, տողեր 25—26. Մյասնիկյանի նվիրած...—խոսքը ՀեՍՀ-ի Ժողովուրդի նախագահ Ալ. Մյասնիկյանի (1886—1925 թթ.) մասին է:

էջ 351, տող 2. մովրավի օրերից—մովրավ ժողովուրդն անվանում էր գավառապետին՝ պարսկական տիրապետության ժամանակաշրջանում և մասամբ էլ առասական տիրապետության առաջին շրջանում:

էջ 351, տող 2. մովրավի օրերից—մովրավ ժողովուրդն անվանում էր գավառապետին՝

էջ 353, տող 10. Չեմբերյեն—այս ազգանվամբ անգլիական մի քանի քաղաքական գործիչներ են եղել. այստեղ խոսքը վերաբերում է Օստին Չեմբերլենին (1863—1937), որն ակնարկի հրապարակման ժամանակ Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարարն էր (պահպանողական):

Ս Ա Ր Ա Լ Ո Ւ

(էջ 356)

Առաջին անգամ հրապարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1925 թ. օգոստոսի 6-ի համարում (№ 178)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ «Մարտակոչ» քննադրի Ուղղումներ.

էջ 356, տող 24. Մ-ի բնագրում՝ իրեն ասում—ուղղել ենք ըստ բովանդակության՝ իրենն ասում:

էջ 360, տող 33, էջ 362, տող 24. Մ-ի բնագրում՝ սկեսառ—ուղղել ենք ըստ բովանդակության և բնագրում այլ տեղ (էջ 359, տող 8) նույն անձին սկեսուր կոչելու հիման վրա՝ սկեսուր:

էջ 362, տող 31—32. Մ-ի բնագրում՝ բոցը բարձրանում է, կայծեր են բռնում վեռ. պսպղում մութի մեջ—բողնում—ը պետք է վրիպակ լինի, ուղղված է՝ բռնում:

Այս բնագրում առկա է ծպպացնում են ձևը՝ հակառակ այն բանի, որ հատորի այլ բնագրերում նույն բայը տպված է մեկ պ-ով: Բոլոր դեպքերում թողել ենք քննադրի ուղղագրությունը: Կա թվի անհամաձայնություն (էջ 359, տող 25)՝... մի բալիսման, որնչ իմատը..., որ թողնված է:

«Մարալու» ակնարկը քրդերի կյանքին նվիրված Բակունցից մեզ հայտնի միակ երկն է, թեև ասվել է, որ գրողն ունի այդ բնույթի նաև այլ օրհնը (տե՛ս Մանթաշրթյունների ներածականում):

էջ 356, տող 1. Սարալու—այս արոտավայրը, ինչպես մեզ տեղեկացրին Զանգեզու-

բից, իբր այժմ գտնվում է Միսիանի շրջանում (արևելյան մասում), ըստ այլ տեղեկատվության՝ Գորիսի շրջանի հարավ արևմտյան մասում (տե՛ս հաջորդ ծանոթագրությունը)

էջ 356, տող 2. Գյազրեւի—լեւ Գորիսի շրջանում, Տաթև գյուղից հարավ-արևմուտք (դեպի Միսիանի շրջանը), ըստ Բակունցի նկարագրության ակնարկում պատկերված Սարալուն այդ լեռան լանջին է գտնվում:

էջ 356, տող 19. Քյուրդիստան—խոսքը վերաբերում է Աղբրեջանական ՍՍՀ (աշխիհ շրջանին, որտեղ քրդեր են բնակվում (նախկինում Լաշիհի ինքնավար մարզ). գտնվում է մի կողմից Գորիսի ու Միսիանի, մյուսից՝ Լեռնային Ղարաբաղի միջև:

Կ Յ Ո Ր Ա

(էջ 364)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստանի» 1925 թ. օգոստոսի 26-ի համարում (№ 193)՝ Ալիսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ սպազրվում է ըստ ԽՀ-ի բնագրի:

Ուղղում.

էջ 365, տող 4. ԽՀ-ի բնագրում՝ առա նրա—ուղղված է՝ առա-նրա:

Բնագրում կան մի քանի այլ ուղղագրական—լեզվական՝ այժմ անհարթություն թվացող ձևեր, որոնք շին ուղղված. օրինակ, այստեղ ևս առկա է ենթակայի և քայի ժողովրդային բնույթի անհամաձայնություն՝ էջ 368, տողեր 15—16. Շորեռա սպունգի պես անձրև է ծծել, կա նաև ասեց ձևը (էջ 367, տող 18), որ նույնպես հաճախ է հանդիպում Բակունցի խոսքում (ասաց ձևին զուգահեռ): Կա տառ ձևը (էջ 369, տող 13). տասը ձևին զուգահեռ (էջ 369, տող 19):

էջ 364, տող 1 և հետո. Կյուրա—ժողովրդի արտասանությամբ՝ Կյուրի, նաև՝ Կյուրու. Գորիսի շրջանի գյուղերից է, շրջակենտրոնից հարավ արևելք, վերանվանված է Ձորաշեն, այժմ միացած է Ազատաշեն (Ախլուլիշեն) և Այգեձոր (Մաղանշուղ) գյուղերին: Նոր գյուղը կոչվում է Հարթաշեն:

էջ 364, տող 21. զլլրաշի ժամանակ—այսինքն՝ պարսկական տիրապետության շրջանում:

Ինչպես ակնարկում է նկարագրված, գյուղը՝ լեռների մեջ, ձորաբնակ, ժայռափոր է եղել, Գորիսի ու Միսիանի շրջանի մի քանի այլ գյուղերի նման: Եվ արդեն 1920-ական թվականներին (եթե ոչ ավելի առաջ) Կյուրայի գյուղացիները, ինչպես և Գորիսի Շենի, Խնձորենկի ու նմանօրինակ այլ գյուղերի բնակիչներ, ծրագրած են եղել ձորից դուրս գալ տափարակ, քանի որ հնում արշավանքներից պատսպարող և կենցաղային տեսակետից էլ մի շարք հարմարություններ ընձեռած ձորերն ու քարանձավները կորցրել էին իրենց այդ նշանակությունը:

Այդ ձգտումը Բակունցը նկարագրել է նաև իբր այլ ստեղծագործություններում (համառ. «Հյուսիսի ձոր», «Մեր գյուղերում» (Գ)):

Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ո Ւ Մ (Գ)

(էջ 370)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. հոկտեմբերի 20-ի համարում (№ 238)՝ Ալիսել ստորագրությամբ: Այժմ սպազրվում է երկրորդ անգամ՝ ըստ նույն սպագիր բնագրի:

Ուղղում.

էջ 372, տող 1. ԽՆ-ի բնագրում՝ ասորական երկրներ ավերող—ուղղված է՝ ասորական՝ երկրներ ավերող. քանի որ ասորական-ը երկրներ-ին չի վերաբերում:

ԽՆ-ի բնագիրը սույն է անհարթ, երբեմն տառերը շեն ընթերցվում, մի քանի բառի գրություն կոահելով ենք վերականգնել: Օրինակ՝ էջ 371, տող 6—8. Քոխսանգ ազգանունը երեք անգամ սույն է և բոլոր դեպքերում դժվար են ընթերցվում առաջին ու վերջին ձայնավորները. կամ՝ էջ 371, տող 8—9. Կուրաքին բառի ի-ն գրել ենք են-իադարար, բնագրում տեղը բաց է և այլն:

Հակառակ «Մեր գյուղերում» շարքի առաջին ու երրորդ ակնարկների, որոնցում որոշակի անվանված են պատկերված վայրերը, այս ակնարկն ավելի անորոշ է այդ տեսակետից: Հողավաճառման գյուղական պայմանագրում (ղարալայում) հիշատակված են Խնձորեսկ (էջ 371, տող 6) և Ջանգեզուր գավառի Ալիզուլիշեն գյուղերը: Առաջինը Գորիսի շրջանի հայտնի Խնձորեսկն է, երկրորդը՝ նույն շրջանի գյուղերից (1940 թ. վերանվանված Ազատաշեն): Եվ այնուամենայնիվ, այս հիշատակումներից որոշակի չի երևում, թե ամբողջ ակնարկը որ գյուղի մասին է:

էջ 372, տողեր 1—4. ասորական՝ երկրներ ավերող, փաղափներ գրավող և փառե փանդակների վրա արևայական սնապարձությամբ այդ արշավանքների մասին պատմող բազմադրի...—խոսքը ոչ թե ասորական, այլ ասորական (աշուրական) կամ ասորեստանյան, այսինքն՝ ոչ թե Ասորիքի, այլ Ասորեստանի թագավորների մասին է:

էջ 372, տող 5—6. գրված է համարյա թե «երկարագիր». հինավուրց «պատիվներով»—երկարագիրը հին հայերեն գրագրերի տառատեսակներից է, ըստ շատ մասնագետների կարծիքի, հնագույն տեսակը: Երկարագրով ընդօրինակված են հնում առավել հարգված բնագրերը, առաջին հերթին Ավետարանները: Երկարագրերը հիմնականում այժմյան հայերեն գլխատառերն են: Եղել են բոլորագիծ և ուղղագիծ երկարագրեր: Պատիվը կամ պատիվները բառակրճատման նշաններն են, որոնք հին ձևագրերում դրվում էին կրճատված բառերի վերևում:

էջ 372, տող 9. Քյումրաթի ձոր—Գորիսում տեղագրիչ: իմացել ենք, որ այս անունով է կոչվել Գորիսի հինավուրց Շենի (Կյորեսի) թաղամասերից մեկը (տե՛ս սույն հրատարակության առաջին հատորում «Ղյումրաթի ձոր» ակնարկի ծանոթագրությունը):

էջ 373, տողեր 19—20 և հետո. ձորերի մեջ գտնվող գյուղերը՝ ժայռափոր տներով, որ Գորիսի շրջանին բնորոշ են եղել, այժմ տեղափոխված են հարթ վայրեր: Այս ակնարկի կրկրորդ մասում հարուցված խնդիրը՝ գյուղերը ձորերից հանելու վերաբերյալ, առկա է նաև այլ երկերում, (օրինակ, «Ղյումրաթի ձոր», «Կյորա» ակնարկներում. տե՛ս նաև վերջինի. ծանոթագրությունը այս հատորում):

Խ Ո Տ

(էջ 375)

Առաջին անգամ հրատարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1925 թ. նոյեմբերի 14-ի համարում (№ 259)՝ Ալեկ ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկրի 1964 թ. երկհատորյակում: Այժմ սույն գրվում է ԽՆ-ի բնագրից: Կատարված ուղղումներն են.

էջ 375, տող 18. ԽՆ-ի բնագրում՝ ապրանք ա որխ գցում—ուղղված է՝ ապրանք ա սեխ գցում:

էջ 376, տող 3. ԽՆ-ի բնագրում՝ էշավարը—ուղղված՝ էշավոր:

էջ 376, տող 9—10. ԽՆ-ի բնագրում՝ կախվել են ճանապարհի վրա, կոպտել—թեև Մրցախ—Սյունիքի բարբառում կա կոպա արմատը ծուռ նշանակությամբ (կոպապտի տալ—ճամփան ծոնել, կոպապտի խոսել—ծուռումուռ խոսել, կոպաղ—ծուռ բուսած), բայց մեզ այս բնագրում կապելը տպագրական վրիպակ լիվայց և ուղղեցինք՝ կախվել են ճանապարհի վրա, կոպցել:

էջ 377, տողեր 29—32. ԽՆ-ի բնագրում՝ խոտում, ուր սևենի խաղողը փաթաթվում է քարձր ծառերին, որ հեճանենեում սևենի խաղողից քաղցրահամ գինին են ստանում և խմում փրեռով, հողի մեծ զավարենեով. ուր ճառաչենեում մեծամեծ շինվելիները գալիս էին, լախումս—կարծում ենք, որ հեճանենեում..., -ի սկզբի ուր տպագրական վրիպակ է, ուղղել ենք՝ ուր:

Ակասծ 378-րդ էջի 5-րդ տողից կան գրաբար հատվածներ ու բառեր, որոնք ԽՆ-ի բնագրում տպած են մե՛րթ դասական, մե՛րթ նոր ուղղագրությամբ. թողել ենք նույնությամբ:

Ոչ գրական մի քանի ձևեր, որոնք առկա են ակնարկի բնագրում, ըստ հարկի որոշ զեպքերում ուղղված են, այլ զեպքերում պահպանված. օրինակ, ընկույզը շորս անգամ տպված է խոսակցական-բարբառային ձևով՝ ընկուզ (էջ 376, տողեր 17, 18, 22, 27), որ բաղունցյան բնագրերում անսովոր է. որոշեցինք ուղղել հեղինակային խոսքում եղած երեք գործածությունները (տողեր 17, 18, 27) և նույնությամբ թողեցինք հերոսի խոսքում եղածը (տող 22): Անդրեաս անունը մի շարք անգամ գործածված է միայն Անդրեաս ձևով (էջ 377—378). հեղինակային պետք է լինի, ուստի շուղեցինք:

Ակնարկի վերջում նկարագրված գյուղական թատրոնը ինչ-որ չափով նման է «Շատերից մեկը» («Один из многих») ակնարկում նկարագրված թատրոնին:

էջ 375, տող 1. Խոտ—Գորխի շրջանի գյուղերից, Շինուհայրի մոտ, շրջկենտրոնից հարավ:

էջ 375, տող 2-ի հետո. Կատուի խաչ—տե՛ս «Կածանով» ակնարկի ծանոթագրությունները:

էջ 375, տողեր 25—26. Բարկուշատ—Գետ և նրա հովիտը Ադրբեջանական ՍՍՀ-ում (տե՛ս «Հերոս նորարը», «Ճորայրության ընկուզենիները» երկերի ծանոթագրությունները): Քրա ես կարող էի առաջ Բարկուշատ գնալ—նկատի ունի ազգամիջյան կոիվների շրջանը, երբ հայերը լինի կարող անվտանգ գնալ Բարկուշատի՝ ադրբեջանցիներով բնակեցված հովիտը:

էջ 380, տողեր 4,5. «Տարթ»—Ղափանի շրջանում կա Տարթի գյուղ. հավանաբար այն նկատի ունի:

Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ո Ւ Մ (Ե)
(էջ 381)

Առաջին անգամ հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1925 թ. նոյեմբերի 14-ի համարում (№ 262)՝ Ակաբի ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի:

Ուղղում:

էջ 383, տող 3. Մ-ի բնագրում՝ շինի—կարող է ենթադրվել, թե բարբառային ձև է, ջանի որ գյուղացի հերոսի խոսքում է, բայց երևում է, որ շ-ից հետո տառ չի տպվել, ուղղել ենք ըստ այլ երկերում գյուղացի հերոսների խոսքում հղած ձևերի՝ շինի:

Վրիպակ է բնագրում եղած ոստոյնով ձևը (էջ 384, տող 10), որ ուղղված է՝ ոստոյնով: Այս բնագրում ևս (գլխավորապես հերոսների խոսքում) կ հղանակիչը առանձին գրելու դեպքեր կան՝ կը գա (էջ 382, տող 32), կը տան (էջ 383, տող 24), կը բե-րենք, կը կախենք, կը լինի (էջ 386 տողեր 4, 5): Դա, ըստ երևույթին, հեղինակային է, ջանի որ այդ ձևերը յսուկա են «Մեր գյուղերում» շարքի երկու ակնարկներում (տե՛ս նաև շարքի առաջին ակնարկի ծանոթագրությունները)՝ ընդ որում, մեկը Երևանում, մյուսը Թփղիսում տպագրված:

«Մեր գյուղերում» շարքի այս հինգերորդ և վերջին ակնարկը կարող է նաև պատմվածք ընկալվել, հատկապես վայրի որոշակիություն չլինելու պատճառով: Սակայն համարեցինք ակնարկ, ջանի որ շարագրանքը ակնարկային է և նույն «Մեր գյուղերում» ակնարկաշարից է:

Այս, ինչպես և 1920-ական թվականների ակնխոստ այլ ակնարկներում հաճախ հիշվող կոոպերատիվը,— սպառողական կոոպերատիվն է (տե՛ս նաև «Մեր գյուղերում» առաջին ակնարկն ու նրա ծանոթագրությունները):

Լ Մ Ե Ն

(էջ 387)

Առաջին անգամ հրատարակվել է «Մարտակոչ» օրաթերթի 1926 թ. մարտի 26-ի համարում (№ 67)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկ-հատորյակի առաջին հատորում: Այժմ տպագրվում է ըստ «Մարտակոչի» բնագրի:

Ուղղում.

էջ 388, տող 14. կոխ կապել մտնի հետ—ուղղված է՝ կոխ կպել մտնի հետ:

Լծենը գտնվում է Սիսիանից հարավ-արևելք, Դարապաս գյուղի մոտ, Որոտանի ձոր վտակի ափին: Դա Սիսիանի շրջանի այն գյուղերից է, որոնցում բնակվում են խոյեցիներ: Բակունցը, սովորաբար, իր երկերում տարբեր վայրերի հայ գյուղացիներին խոսեցնում է նրանց բարբառի երանգը պահպանելով, բացառություն են խոյեցիները, որոնց նա այս ակնարկում և այլ երկերում խոսեցնում է Ջանգեզուրի խոսվածքի երանգով:

էջ 387, տող 14. Լծենը հարյուր տարի տառչ խոյից գաղթել է, եկել...—իրոթ, 1926 թ. մոտ հարյուր տարի էր, ինչ խոյեցիները եկել էին խոյից ու շրջակայքի գյուղերից և հաստատվել Սիսիանի շրջանում (տե՛ս նաև «Մեր գյուղերում» երրորդ ակնարկն ու ծանոթագրությունները):

Ա Ր Մ Ա Շ

(էջ 391)

Առաջին անգամ հրատարակվել է «Եսորհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. ապրիլի 25-ի համարում (№ 97)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկերի

1964 թ. կրկնատրյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երրորդ անգամ՝ ըստ առաջին հրատարակման բնագրի:

Կատարված ուղղումներն են.

էջ 393, տող 23. ԽՂ-ի բնագրում՝ ծծեն—համարել ենք վրիպակ և ուղղել՝ ծենն:

էջ 394, տող 5. ԽՂ-ի բնագրում՝ բառաշին հորքեր—բովանդակությունից լիովին պարզ է դառնում, որ վրիպում է. ուղղել ենք՝ բառաշին կոլեր:

էջ 395, տողեր 6—7 ԽՂ-ի բնագրում՝ Պատմում, որ իրենց ապրած տեղերը—վրիպակ պետք է լինի. ուղղված է՝ Պատմում է, որ իրենց ապրած տեղերը:

Ակնարկը Բակունցի այն երկերից է, որոնք նվիրված են արևմտահայ վերաբնակիչներին կյանքին, բացի «Արմաշից», այդ երկերից են նաև «Լառ-Մարգար», «Միրանի փոքր», «Մուրոյի սղուց»-ը, «Քեռի Դավոն» պատմվածքները (տե՛ս առաջին հատոր), «Մամուրի տուն կառուցողը» ակնարկը (այս հատորում):

էջ 395, տող 1. Արմաշ—այս անունով հայկական բնակավայր եղել է Նիկոմիդիայի (Իզմիրի) գավառում (Կ. Պոլսի մոտ)՝ Պարտիզակի, Ալաիքեկի և հայկական այլ բնակավայրերի հարևանությամբ (Արմաշն այժմ կոչվում է Դյուլլուրախշա): Հիմնավոր ենթադրություն կա, որ հին Արմաշի բնակիչները Ջալալիների ապստամբության ժամանակ (16-րդ դարի վերջեր, 17-ի սկզբներ) գաղթել եկել են այդտեղ Հայաստանի Տերտիմ—Սրգիկա շրջանից, ավելի ստույգ՝ Սեպուհ լեռան մոտակայքից, ուր եղել է Չարմաշ վանքը (ստուգաբանվում է՝ շարը մաշող): Ենթադրում են, որ Արմաշ անունը ծագել է Չարմաշ-ից շ-ի անկումով (թեև հնարավոր է նաև, որ առաջին բաղադրիչը արհայկական արժատը լինի): Հին Արմաշում կամ մոտակայքում եղել է Չարխափան Ս. Աստվածածին դպրեմանքը:

Բակունցի ակնարկը նվիրված է նոր Արմաշին, որը հիմնադրվել է 1926 թ. ապրիլին: Հիմնադիրներից մեկի՝ հայագետ-բանասեր Համբարձում Գասպարյանի, վկայությամբ նույն թվականի փետրվարին Դավալուի (այժմ՝ Արարատ) հասարակական ժողովում, որին մասնակցել են հիմնադրվող գյուղի ապագա բնակիչները, որոշում է ընդունվել կառուցվելիք բնակավայրը անվանել Արմաշ՝ ի պատիվ հին Արմաշում եղած դպրեմանքի: Այդ որոշումն ընդունվել է, չնայած կառուցվելիք բնակավայրի ապագա բնակիչների մեջ արմաշցիները աննշան փոքրամասնություն են կազմել:

Արմաշը սկսել է կառուցվել Երևան—Նախիջևան խճուղու մոտ՝ չհասած ՀեՍՀ Արագ-գայան (այժմ Երասխ) երկաթուղային կայարանին: Ներկայումս Արմաշը մեծ բնակավայր է Արարատի շրջանում:

էջ 393, տող 4. Կավալա—գործածվում է նաև Կավալլա ձևով. Հունաստանի քաղաքներից է՝ էգեյան ծովի հյուսիսային ափին, որի մոտ 1920-ական թվականներին հայ գաղթականների ճամբար կար (տե՛ս նաև «Լառ-Մարգար» պատմվածքն ու ծանոթագրությունները սույն հրատարակության առաջին հատորում):

էջ 393, տող 4—5. Սյրիայի ավազուեներից—նկատի ունի Սիրիայի ամայի անապատները, գլխավորապես Դեր-Ջորը, ուր Թուրքիայի կառավարությունը սկսած 1915 թվականից արսորում էր Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Անատոլիայի հայությանը, և որտեղ քաղցից ու հիվանդություններից հարյուր-հազարավոր մարդիկ մեռան:

էջ 393, տող 27. Յավայի կավե կոծ—Յուվա գյուղը (այժմ՝ Շահումյան) Ղամար-

լուի (այժմ Արտաշատի) շրջանում է և հայտնի էր բարձրորակ բրուտագործությանը Արարատյան դաշտում լավագույն կավե ամանների կենտրոնն էր: Այժմ էլ այդ գյուղում կան բրուտներ:

Շ Ա Ք Ր Ի Ջ

(էջ 396)

Առաջին անգամ հրապարակվել է «Ետրհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. հոկտեմբերի 22-ի համարում՝ Ակոել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է երրորդ անգամ ըստ առաջին հրապարակման բնագրի: Կատարված ուղղումներն են.

էջ 396, տող 16. ԽՀ-ի բնագրում՝ փայտամատը բերանբաց նայում է—տպագրակած վրիպակ ենք դիտել փայտամատ-ը և ուղղել՝ փայտաճատը:

էջ 396, տողեր 22—24. ԽՀ-ի բնագրում՝ պիտի կոսցած բարձրանայ, ձիու բաշից բռնած, ձիու բռնելուն միշտ պատահատ, եթե սմբակը օայթափի—վրիպակ ենք համարել ձիու երկրորդ ձևը (ձիու բռնելուն), ուղղել ենք՝ ձիուց (ձիուց թռնելուն):

էջ 401, տողեր 16—19. ԽՀ-ի բնագրում՝ վեցերորդ ամիսն է բառերով սկսվող նախադասությունն անկանոն է. ասվում է մտնում մերք մանը, բայց երկրորդ մերք-ը չկա: Առաջին մերք-ը ավելորդ է, որ և հանեցինք.

Բնագրային աղբյուրում կան նաև այլ բառեր կամ նախադասություններ, որոնք գուցե և վրիպակով են տպագրված կամ կարող են թվալ այդպիսիք. տարրեր նկատառումներով հիմնավոր չհամարեցինք դրանք ուղղել:

Օրինակ. էջ 397, տող 5. Մի ցանկություն է ծնում ներօղ՝ կանչել բարձր—հնարարավոր է, որ ծնում-ը վրիպակ թվալ (ճիշտը՝ ծնվում) և գուցե իրոք վրիպակ է, բայց Բակունցի խոսքում այդ կարգի առանց վ ձևեր հանդիպում են, և հիմնավոր չհամարեցինք ուղղելը:

Բնագրում կա մեծվել բայաձևը (էջ 396, տող 25. մեծվել են ճղներն իրար), որ կարող է վրիպակ թվալ (1964 թ. երկհատորյակում՝ հ. 1, էջ 69Ժ, ուղղված է՝ խճճվել ևճ): Սակայն արցախ-սյունիքյան բարբառում կա մեծվել բայը խճճվելու իմաստով, և բնագրային աղբյուրում բառը ճիշտ է տպված (նույն բառը հեղինակը գործածել է նաև «Վարդագույն տուֆի երկրում» ակնարկի մեջ):

Այս ակնարկը մեկն է ադրբեջանցիների կյանքին նվիրված բակունցյան երկերի խմբից, որի մեջ են նաև «Սարու», «Հերոս նոքարը» պատմվածքները, «Շյարբ Գափուսի», «Բիշանագ» ակնարկները, «Նոյսյուրության ընկալեցիները» պատմվածքի ու «Կարմրաքար» վեպի որոշ մասեր և այլն:

Հետաքրքրական է ակնարկի երկրորդ մասի վերջում (էջ 400, տողեր 33—38 և էջ 401, տողեր 1—7) եղած նկարագրության նմանությունը «Ալպիական մանուշակ» պատմվածքի համապատասխան հատվածներին: Համեմատել. «Շաթրիզ»՝ «Քայլելիտ զրնգում էին արծաթ ուլունքները, բարձրահասակ էին երևում և բարակիրան, կռանում էին, նայում ինքնաեռին, փշում: Թվում էր, թե սրբազան ծես են կատարում, ծունկ են չոքում ինքնաեռի պղնձե կուռքի առաջ և համբուրում նրա ժանգոտ ունկերը»: «Ալպիական մանուշակ»՝ «...բարակ մեջքով էր և բարձրահասակ... քայլում էր խսիրի վրա, զրնգում էին նրա թևերի արծաթագույն սուրմաները, փոքրիկ զանգակների ձայն հա-

նում... նստել էր օջախի առաջ, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նստում տաքացող ջրին: Նա խառնում էր կրակը... օջախի մոտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թվում էր քրմուհի՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող»:

Այս նմանությունը հնարավոր է, որ տարբեր երևույթների միևնույն հեղինակային ընկալման արդյունք լինի: Բայց և շի բացատրում, որ Շաթրիզում Բակունցի ստացած տպավորությունը դեր է կատարել «Ալպիական մանուշակը» գրելիս: Պետք է ենթադրել, որ «Ալպիական մանուշակը» գրվել է «Շաթրիզից» հետո, այսինքն՝ 1926 թ. հոկտեմբերի երկրորդ կեսից մինչև դեկտեմբերի վերջն ընկած ժամանակամիջոցում (առաջին անգամ տպագրվել է «Նորհրդային Հայաստանի» 1927 թ. հունվարի 1-ի և 4-ի համարներում):

Բակունցի Երկերի սույն հրատարակության առաջին հատորում «Ալպիական մանուշակի» ծանոթագրություններում ճիշտ չէինք համարել, «Աև ցելերի սերմնացանը» ժողովածուի (1933 թ.) մեջ «Ալպիական մանուշակի» տակ դրված 25—27 թվականները, որոնք նշում են պատմվածքը գրելու և վերամշակելու ժամանակները: Հիմնվել էինք երկու փաստի վրա՝ ա) որ Մեղրու շրջանի Կաթավարերգում Բակունցը եղել է 1926 թ. ուշ գարնանը կամ ամռանը և բ) որ հեղինակը պատմվածքն առաջին անգամ կարդացել է Երևանում իր ընկերուհի և պատմվածքի հերոսուհի (սև թավշի գլխարկով կինը՝ ծովափին) ժնեյա Գյուզալյանին, իսկ դա կարող էր տեղի ունենալ 1926 թ. երկրորդ կեսին (երբ ժ. Գյուզալյանը Երևանում է եղել): Այժմ հավանաբար, ավելանում է նաև երրորդ վերահիշյալ փաստարկը, որ ավելի որոշակի է դարձնում պատմվածքը գրելու ժամանակը:

էջ 396, տող 2. Սյուսանի օսրեերը, այնուհետև նաև՝ Սյուսանի անտառները (էջ 397, տողեր 7—8) գտնվում են Ղափանից հարավ-արևելք՝ Ողջի գետի ձախ ափին (այժմ Ադրբեջանական ՍՍՀ): Այդտեղ բարձրաբերձ լեռնային անտառների մեջ է եղել նաև նկարագրված գյուղակը:

էջ 396, տող 2. Բաբելոնյան տափառակ—Բաբելոնյան գետի հովիտը Ադրբեջանական ՍՍՀ-ում, Ջանգեզուրից արևելք (մանրամասն տե՛ս «Հերոս նոթարը» պատմվածքի ծանոթագրություններում):

էջ 397, տողեր 34—35. Փսենոֆոնի ուրախությունը, երբ նա ծովը տեսավ—խոսքը վերաբերում է հին հույն հեղինակ Փսենոֆոնին (մ. թ. ա. մոտ 430—355 թթ.), որն իր «Անարասիս» երկում նկարագրել է տաս հազար հույն զինվորների նահանջը, որոնց մեջ էր նաև ինքը իբրև հրամանատարներից մեկը: Զինվորներին վարձել էր Պարսից արքա Արտաքսեռքսես Բ-ի եղբայր Կյուրոս Կրտսերը, որի նպատակն էր տապալել եղբորը և արքա դառնալ: Հույն վարձկանները մ. թ. ա. 401 թ. արշավում են Փոքր Ասիայի արևմուտքից մինչև Միջագետք: Կյուրոսը պարտվում է, և հունական զորքը նահանջում է դեպի Աև ծով (Պոնտոս), անցնում նաև Հայաստանի միջով, ապա ծովով և ափերով շարժվում դեպի Փոքր Ասիայի արևմուտքը: Մինչև ծով հասնելը նահանջը շատ ծանր և տառապալից է լինում, երբ մի բարձունքից հույները տեսնում են ծովը, անսահման ուրախությունից աղմուկ են բարձրացնում, բոլորը ճչում են. «Մովը, ծովը» (տե՛ս Փսենոֆոն, Անարասիս, Ե., 1970, էջ 101): Բակունցը նկատի ունի այս ուրախությունը:

«Պեմզայի հանքերում» ակնարկի մեջ (տե՛ս այս հատորում) գրել է. «Ուզում ես կանչել Փսենոֆոնի նման»,—գարձյալ նկատի ունի հույների բացականչությունները ծովը

տեսնելու առիթով (թեև «Անարասիս» մեջ մասնավորապես Քսենոֆոնի բացականչաթյան մասին խոսք չկա):

էջ 398, տող 15. Զանգիլան—նաև՝ Զանգելան—բնակավայր Ադրբեջանական ՍՍՀ-ի հարավում, Ղափանի շրջանից արևելք, Բարկուշատ գետի հովտից հարավ, Ղափան—Մնչկան երկաթգծի շուրջը:

էջ 400, տողեր 5, 7, 10.—Շնորհակալ եմ շուրայից:— շուրայի իշխանություն և այլն.— շուրա պարսկերեն նշանակում է խորհուրդ. գործածված է խորհրդային իմաստով:

Մ Ա Ն Ո Ք Բ Ա Կ Ը

(էջ 403)

Առաջին անգամ հրատարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1926 թ. դեկտեմբերի 19-ի համարում (№ 292)՝ Ակսել ստորագրությամբ, Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի, կատարված ուղղումներն են.

էջ 404, տող 1. ԽՀ-ի բնագրում՝ կանանց— ուղղված է՝ կանաչ:

էջ 404, տող 9. ԽՀ-ի բնագրում՝ Սարեբին հողերում այժմ քամրակ են ցանում— առաջին բառն ըստ երևութի, աղավաղումն է ինչ-որ այլ բառի, որ չկարողացանք որոշել, պայմանականորեն ուղղել ենք այսպես՝ Սարեբի հողերում այժմ քամրակ են ցանում:

Բնագրում կան արևմտահայերենի ձևեր, ինչպես. էջ 405, տող 14. պան մը, տող 27. իրկուն, էջ 406, տող 14. սանտրել: Բյուզանդ-ը գրված է ըստ արևմտահայ արտասանության Փյուզանդ (էջ 404, տողեր 30, 36): Բնականաբար, ամենը նույնությամբ թողնելված է, քանի որ պետք է հեղինակային լինի՝ արված խոսքի ռեալիզման նպատակով: Հեղինակը ակնարկի զլխավոր հերոսի՝ իր նախկին ուսուցչի, լեզվին հատուկ ձևեր գործածելով, հավանաբար, ցանկացել է զգացնել տալ արևմտահայերենի առկայությունը նրա խոսքում:

Բնագրում երկու անգամ գործածված է հղություն հնացած և այժմ սխալ թվացող ձևը (էջ 405, տողեր 25, 29) նույնպես թողել ենք:

Ակնարկում նկարագրված է էջմիածնի Գևորգյան ճեմարանի բակը, ինչպես նաև ճեմարանի և կացարանի ներքը: Այդ ամենը, իրոք, ծանոթ ու հարազատ են եղել նախկին ճեմարանական Բակունցին: Նա ճեմարան ընդունվել է 1910 թ. (միանգամից 3-րդ դասարան), չորս տարի անընդմեջ սովորել է, ապա 1915—16 ուսումնական տարում ընդմիջում տվել (զբաղվել ուսուցչությամբ), քանի որ ճեմարանի շենքը տրամադրվել էր արևմտահայ զաղթականությանը: 1916—17 ուսումնական տարում Բակունցը շարունակել է ուսումը և ավարտել դասարանական (դպրոցական) բաժինը: Այնուհետև, դիմել է ընդունվել է լսարանային բաժին (Ա լսարան), սակայն 1917 թ. աշնանը կարճ ժամանակ սովորելով ճեմարանի առաջին լսարանում, դեկտեմբերի 26-ին այլ ուսանողների հետ Գ. Էդիլյանի ղեկավարությամբ մեկնել է ռազմաճակատ իբրև կամավոր:

Ապա՝ ինը տարի ընդմիջումից հետո այցելել է էջմիածին և ճեմարան, դա եղել է 1926 թ. նոյեմբերին (ակնարկի վերջում նկարագրվում է նոյեմբերի 7-ի կամ 29-ի տոնակատարությունը Վաղարշապատում. «Երեկոյան քաղաքում հրավառություն կար: Պղնձն փողերը ճշում էին հաղթական մարշով»): Այնպես որ, հեղինակի գրածը («Վա-

դուց, շատ վաղուց չէի եղել») ընդամենը ինը տարի պետք է հասկանալ: Այդ այցն էլ նկարագրված է ակնարկում:

Ակնարկի սկզբում և այլ տեղերում հիշված մշեցի Աբրոն իրական անձ է, եղել է ճեմարանի պահակը և դռնապահը:

Բակի լորենիները, պարիսպը, տախտակյա տնակը ճեմարանի նախկին բակի իրական մասերն են կազմել. այժմ շկան պարիսպը, դարպասը, տնակը, Երկաթ ճաղերով պատուհանները, հյուսիսային դռները, սանդուղքները՝ մաշված ու ծոված երկաթներով ու տեղ-տեղ գոգացած տախտակներով վերաբերում են ճեմարանի շենքի դուրսն ու ներսին, և այժմ էլ ամենը կա գրեթե նույն ձևով: Նույն շենքի մեջ են ակնարկում հիշվող կլոր սրահը (հանդիսարանը), առաստաղի գերանին խրված զանգերի կեռերը և այլն:

Գամառ Քաթիպայի (Ռ. Պատկանյանի) բրոնզե կիսանդրին ակնարկում նկարագրված տեղից հանված է և փոխադրված շենքի հակառակ մասում եղած բակը, իսկ նրա տեղում Ա. Միկոյանի կիսանդրին է: Հիշվող հուշարձանը («դառնում եք մի այլ արձանի, որ նոր է, ավելի բարձր և որի տակ թաղված մարդկանց «մի հատիկ իղձը» մեր օրերն էին» — էջ 406, տողեր 18—20) կառուցված է եղել ակնարկի հրապարակումից ոչ շատ առաջ. դա խորհրդային իշխանության համար զոհվածների սյուն-հուշարձանն էր, որ այժմ հանված է:

Բակուցի այս այցելության ժամանակ ճեմարանի շենքը տրամադրված էր Վաղարշապատի: զպրոցին, և պիտենրների մարզանքի մասին ակնարկի սկզբում ասվածը նույնպես իրողություն է:

Ակնարկի երրորդ մասում (երկրորդ աստղանիշից հետո) նկարագրված ծառուղին («Անա ծառուղին... Վեհափառը օրհնում է կամավորներին») արդեն վանքի բակին է վերաբերում, քանի որ այն շրջանի կաթողիկոս Գևորգ և Սուրենյանը կամավորներին օրհնել է վանքի բակում, այն ժամանակվա վեհարանի պատուհանից:

Ճեմարանը և նրա բակը (ծանոթ բակը) նկարագրելուց հետո հեղինակն անցնում է վանքի բակի նկարագրությանը: «Վանքի մոտ մարմար գերեզմանաքարեր կան» — խոսքը վերաբերում է Մայր տաճարի զանգակատան շուրջը եղած շիրմաքարերին: Վանքի բակում է նաև Մատենադարանի նախկին շենքը, որ հետո տրամադրվեց հոգևոր ճեմարանին:

Ակնարկում հիշատակվող լիճն ու անտառը նույնպես վանքի լիճն է և նրա մոտից սկսվող անտառը:

Ակնարկից տեղեկանում ենք, որ նրա գլխավոր հերոսը հեղինակի նախկին դասատուն է և ապա մատենադարանի աշխատող: Միաժամանակ, ինչպես ասվեց, նրա արտասանությունից (Փյուզանդ և այլն) կարելի է ենթադրել, որ նա արևմտահայ է: Պարզ է գառնում, որ 1926 թ. այդ անձը բավական ծեր է եղել («Զեր բերանի խոռոչում ես ոչ մի ատամ չտես»), ակնոց է դրել: Ո՞վ է այդ անձը:

Մենք ուշադրության առանք Գևորգյան ճեմարանում Բակուցի՝ մեզ հայտնի բոլոր դասատուներին (Գ. Հովսեփյան, Մ. Բերբերյան, Ա. Հովհաննիսյան, Կ. Տեր-Մկրտչյան, Գ. Էդրիյան, Ս. Տեր-Հակոբյան, Մ. Յանթրոսյան, Հ. Ստեփանյան, Ա. Հովսեփյան, Հ. Մախանդյան և ուրիշներ), նրանցից որևէ մեկը չի համապատասխանում ակնարկի հերոսի բավանքերին: Դիմեցինք Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող Օ. Էգանյանին, որն ուսումնասիրել է Մատենադարանի ձեռագրացուցակների և աշխատողների պատմությունը: Նա հայտնեց, որ այդ տվյալներով անձը Մատենադարանի

նախկին գրապահ Գազրիկ Ներսիսյանն է՝ արևմտահայ, նա Մատենադարանում կազմել է, այսպես կոչված, «Գազրիկյան ցուցակը», որտեղ գրանցվել են վասպուրականից և Մուշեցի 1915—16 թթ. էջմիածին բերված ձեռագրերը (տե՛ս նաև Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, Կ. Ա, Երևան, 1965, էջ 108—109):

էջ 403, տողեր 25—26. մի վարդապետ մեկնում էր «Կորեքացոց քղբի» իմաստը— խոսքը վերաբերում է Պողոս առաքյալի «Թուղթ առ կորնթացիս» («Ուղերձ կորնթացիներին») նորկտակաբանային երկին: «Թուղթ առ կորնթացիս» երկուսն են՝ առաջին և երկրորդ:

էջ 404, տող 3. «Էրֆուրտի ծրագիրը»—Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագիրը, որ ընդունվել է 1891 թ. էրֆուրտ քաղաքում տեղի ունեցած համագումարում: Ց. էնգելսը քննադատել է այդ ծրագիրը որպես համաձայնողական: Բակունցը գրելով՝ «Եսկ մի աշակերտ գլուխը կախ, հայրսուրբից ծածուկ կարդում էր ծընկնեթի վրա դրած «էրֆուրտի ծրագիրը», ցանկացել է ակնաբույժի ճեմարանում հեղափոխական գրականության գաղտնի ընթերցումը: Սակայն բուն «էրֆուրտի ծրագիրը» այդ բանն ակնարկելու համար հաշոյղ օրինակ չէ: Արդյո՞ք գրողը նկատի չի ունեցել Կ. Մարքսի «Գոթայի ծրագրի քննադատությունը», որ կարճ կոչվում է նաև «Գոթայի ծրագիր» (պարունակում է գերմանական սոցիալ-դեմոկրատների 1875 թ. Գոթա քաղաքում ընդունած ծրագրի խիստ քննադատությունը): Դա այնպիսի երկ է, որ ճեմարանում կարող էր ընթերցվել Բակունցի նկարագրած ձևով:

էջ 404, տողեր 25—26. Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի և զառավառն նավասարդի...-- հայկական հեթանոսական հին երգի տողերն են: Երգից մի փոքր հատված պահպանված է Գրիգոր Մազիստրոսի թղթերում (ԼԳ): Ահա այն.

«Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի
Եվ զառաւօտն նաւասարդի,
Հվազելն եզանց և զվարզելն եղջերուաց.
Մեք փող հարուստք և թմրկի հարկանէտք,
Որպես օրէն էր թագաւորաց»:

էջ 405, տողեր 2—3. Այն օրից հետո այնքան շատ վայրեր եմ տեսել, այնպիսի օրեր եմ անցել, խորխորաւ... և այլն—խոսքը վերաբերում է մի ժամանակամիջոցի, որ սկսվել է 1917-ի վերջից՝ Բակունցի ռազմահակատ մեկնելու օրերից և ավարտվել Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում սովորելու շրջանով (1920—1923): Այդ ընթացքում Բակունցը ծանր օրեր է ապրել. մասնակցել է 1918 թ. ձմռանն ու գարնանը Հայաստանի հողում՝ սկսած Կարինից մինչև Սարդարապատ, տեղի ունեցած մարտերին և աղետալի նահանջին, տեսել շատ արյուն, մահեր ու ավերածություն, «ճաշակել» քաղց, հիվանդություն, կրել այլ տառապանքներ՝ մարմնական, հոգեկան:

էջ 406, տողեր 5—6. «Այս իմ մի հատիկ իղձը կատարեմ»—Ռ. Պատկանյանի «Իմ կտակը» բանաստեղծության տողն է: Ահա ամբողջը.

Կյանքիս մեջ մի հատ սին փառք ունեցա.
Յուրբ էջմիածին թաղվել ցանկացա,

Սիրական իմ ազգ՝ թե Աստված սիրես,
Այս իմ մի հատիկ իղձս կատարես:

էջ 406, տող 32—34. տասը տարի առաջ էր, էլ՝ ավելի: Այստեղ «խմբեր» կային, «գեներ ու զբանից քնդում էին լերիներ» — խոսքը վերաբերում է հայ կամավորական խումբերին, որոնք 1914—1915 թթ. անցնում էին էջմիածնով, կանգ առնում վանքի բակում: Այս դեպքում՝ «տաս տարի առաջ էր, էլ ավելի» — ճիշտ տեղեկատվություն է:

«Զեներ ու զբանից քնդում էին լերիներ» — մարտաշունչ-ազգային հրգեղից մեկի վերափոխված տողն է:

էջ 406, տող 35. «Շուրան Շավարշան» — Գ. Ալիշանի վիպերգն է, որտեղ նկարագրվում է հայոց Սանատրուկ թագավորի դուստր, քրիստոնեություն ընդունած Սանգուխի նահատակությունը:

էջ 406, տող 35 — էջ 407, տող 1. զրվագներ Ավարայրի օրերից — նկատի ունի Վարդանանց պատերազմը Ավարայրի ճակատամարտով, որ տեղի ունեցավ 551 թ. Տղմուտ գետի ափին, Ավարայր գյուղի մոտ, համառուն դաշտում, որը կոչվում է նաև Արտազի գաշտ, ավելի հին անունն է Շավարշավան դաշտ՝ Շավարշան (այժմ Մակու) քաղաքով: Այդտեղ հայերը անձնվիրաբար դիմագրավեցին պարսկական մեծ բանակին:

էջ 407, տողեր 1—2. Բասենը. Ալաշկերտը — նկատի ունի Հայաստանի Բասենի գաշտն ու գավառը և Ալաշկերտի դաշտը (Բաղրևանդ գավառ). երկուսն էլ Մեծ Հայքի Այրարատ աշխարհի մասերն են: Բասենը գտնվում է Կարինից արևելք, զբաղեցնում է Արաքսի վերին հոսանքի շրջակայքը, Ալաշկերտի դաշտը (Ալաշկերտ քաղաքով) Հայկական պար լիռնաշղթայից հարավ է: Երկուսն էլ այժմ գտնվում են թուրքական տիրապետության տակ:

էջ 407, տող 24. «Նվագող վշտից հայրենյաց» — հայոց կաթողիկոս (1892—1907) Մկրտիչ Խրիմյան Հայրիկի շիրմաքարի մակագրության մի հատվածն է (ավելի ստույգ՝ Նուագող վշտից հայրենեաց Հայոց):

էջ 408, տողեր 9—10. Ներսես կաթողիկոսի նամակը — Ներսես Աշտարակեցի կաթողիկոսի (1843—1857) մասին է:

Կ Ա Ս Ա Ն Ո Վ

(էջ 409)

Առաջին անգամ տպագրվել է «Մարտակոչ» օրաթերթում, 1927 թ. հունվարի 11-ին (Մ 7)՝ Ալկելի ստորագրությամբ: Երկրորդ անգամ Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1):

Գրականության և արվեստի թանգարանում պահվում է այս ակնարկի ձեռագիրը: Գրված է փոքր (10,7×17,5 սմ) թերթիկների վրա (յուրաքանչյուրի մեկ էջին), հեղինակի ձեռքով, մուգ մանուշակագույն թանաքով: Թերթիկը դեղնած են, թուղթն անհարթ, յուրաքանչյուր էջում տողերի քանակն է 32—33: Էջերի վերևի ձախ անկյուններում նույն թանաքով կա համարակալում, որ սկսվում է 2-ից և վերջանում 12-ով: Առաջին էջը չկա:

Նրբ 1958—59 թթ. մենք կազմում էինք Ա. Բակունցի մատենագիտությունը, երբ

մեջ «Մարտակոչում» տպագրված «Կածանով» ակնարկը դրեցի՞ք, բայց առանց կարգալու, որ տեղիք տվեց թյուրիմացության: Մատենագիտության մեջ (1960 թ.) Պանգլանված անտիպ գործեր վերնագրի տակ (էջ 113) նշեցի՞ք երկու ձեռագրեր, որոնք ըստ Գրականության և արվեստի թանգարանի տեղեկատվության անտիպ են համարվում. դրանցից մեկը «Երբ որ բացվեն դռներ հուսո» պատմվածքն է, մյուսը, ելնելով բովանդակությունից, պայմանականորեն վերնագրեցի՞ք «Տաշքենդ գնացող մարդը»։ Բանի որ ձեռագրի առաջին էջը (ուստի և վերնագիրը) չկար: Միաժամանակ, մատենագիտության մեջ (էջ 47) դրեցի՞ք ձեռագրի 4-րդ էջի լուսանկարը՝ «Ա. Բակունցի մի անտիպ ակնարկի ձեռագիրը» բացատրությամբ:

Մատենագիտության օգնությամբ «Կածանով» ակնարկը տեղ գտավ Երկերի 1964 թ. երկհատույակի առաջին հատորում: Երկրորդ հատորի վերջում կա «Կազմողի կողմից» վերջաբան, որտեղ ասված է. «Երկհատույակից դուրս է մնացել «Հովնաթան Մարչ» վիպակը: Դուրս են մնացել հեղինակի նաև վաղ շրջանի երկու անտիպ գործերը (որոնցից մեկի առաջին թերթը չի պահպանվել)»: Ուրեմն, կազմողը՝ Ս. Պայազատը, նույնպես կարծել է, թե ձեռագիրը, որի առաջին էջը պակաս է, անտիպ է՝ չի մանալով որ այն նույն «Կածանով» ակնարկն է, որը տեղ է գտել իր կազմած երկհատույակում:

1965 թ. «Սովետական գրականություն» ամսագրին հանձնեցի՞ք Բակունցի հիշյալ երկու ձեռագրերի բնագրերը: «Երբ որ բացվեն դռներ հուսո» պատմվածքը շտպագրվեց, իսկ առաջին էջը պակաս ձեռագիրը տպագրվեց ամսագրի 1965 թ. 3-րդ համարում՝ «Գրական ժառանգություն» խորագրի ներքո: Որոշ ժամանակ անց թյուրիմացությունը պարզվեց. Սպիտակ, որ ձեռագիրը «Կածանով» ակնարկն է, ուրեմն և անտիպ չէ: «Սովետական գրականություն» ամսագրում (1965, № 5, էջ 160) հրատարակեցի՞ք Նումակ խմբագրությամբ, որ ներդրություն ինդրեցի՞ք անփութության համար:

Ձեռագրի և «Մարտակոչում» տպագրված բնագրի միջև կան որոշ տարբերություններ. ներկա հատորում ակնարկը տպագրված է ըստ «Մարտակոչի» բնագրի, իսկ նրա և ձեռագրի միջև եղած տարբերությունները ներկայացված են Բնագրային տարբերակներ բաժնում:

«Մարտակոչի» բնագրում կատարված ուղղումներն են.

էջ 412, տող 4. Մ-ի բնագրում՝—Ին երեսի ջրով եղածն իրան տամ—ուղղված է ըստ ձեռագրի՝—Գա, երեսի ջրով եղածն իրան տամ:

էջ 416, տող 6. Մ-ի բնագրում՝ խոտոցներ են—ուղղված է ըստ ձեռագրի՝ խոտոցներ են:

«Կածանով» ակնարկի ձեռագրում շեն նշված գրություն թվականն ու վայրը: Գրականության և արվեստի թանգարանի տեղեկատվության համաձայն այդ ձեռագիրը «Երբ որ բացվեն դռներ հուսո» պատմվածքի հեղինակային ինքնագրի հետ թանգարան է հանձնել Ա. Կարինյանը՝ հայտնելով, թե դրանք ինքը ստացել է հեղինակից իր խմբագրած «Պայթար» շարաթաթերթում տպագրելու համար: Բանի որ «Պայթարը» հրատարակվել է միայն 1923 թ., Բակունցն էլ իսրկովից Հայաստան է եկել նույն թվականի հուլիսին, ուստի եթե ստույգ է հիշյալ տեղեկությունը, ապա երկու երկերն էլ պետք է գրված լինեն և «Պայթարին» հանձնված նույն 1923 թվականին:

«Կածանով» ակնարկի բովանդակությունից իմանում ենք, որ հեղինակը այն գրելու ժամանակ աշխատելիս է եղել իբրև գյուղատնտես, շրջել է գյուղից գյուղ, գրողովի հո-

դաշնական գործերով, և որ նկարագրվածը աշնանն է տեղի ունեցել: Սա լուրջ կասկած է առաջացնում 1923-ի նկատմամբ: Բանն այն է, որ այդ թվականի սեպտեմբերին Բակունցը Երևան էր տեղափոխվել և սեպտեմբերի 7-ից աշխատանքի անցել տեղի սերմնարածարանում, ապա Գորիս է տեղափոխվել մոտ մի տարի անց՝ 1924 թ. Տոկոսեմբերի երկրորդ կեսին և Աշխատանքի անցել իբրև Ձանգեզուրի գավառական գյուղատնտես, հետո հորածնի վարիչ: Այդ ժամանակից սկսած է, որ Բակունցը շրջել է Ձանգեզուրի գյուղերում, գրադվել գյուղատնտեսական գործերով: Թվում է, որ ակնարկում նկարագրվածը վերաբերում է 1925 կամ 1926 թ. աշնանը: Ենթադրության համար հիմք է ծառայում նաև այն, որ այս բնույթի մի ակնարկ հազիվ թե Բակունցը 1923-ին գրելուց հետո իր մոտ պահեր ավելի քան երեք տարի և հրապարակեր 1927 թ. հունվարին: Ի վերջո, չի կարելի հաշվի շտապել նաև Ակսել ստորագրությունը, որ գրողը սկսել է հետևողականորեն դնել իր երկերի տակ 1925-ի սկզբներից: Ուստի, մեր կարծիքով, ակնարկը չի կարող գրված լինել 1923-ին «Պայքարի» համար, այն կարող էր գրվել միայն 1924 թ. հոկտեմբերից հետո, իսկ ավելի որոշակի՝ 1926 թ.:

Դժվար է աներկայորեն ասել, թե ակնարկում ինչ վայր է նկարագրված: Սկզբում հիշվում են Աճեաձորի անտառները: Առաջին պահ դա կարող է վրիպակ թվալ, ինչպես, որ թվացել է երկհատորյակը կազմողին. այնտեղ տեղանունն ուղղված է՝ Աճեիձոր. հավանաբար ենթադրվել է, թե խոսքը Ալավերդում շրջանի Ահեիձորին է վերաբերում: Կարծում ենք, որ նկարագրված վայրը պետք է Ձանգեզուրում գտնվելիս լինի. ծեր գյուղացու Տաշքենդ գնալու հանգամանքը և այլն, որ նրա որդին Տաշքենդում է, ավելի հավանական են դարձնում նրանց զանգեզուրցի լինելը, քանի որ շատ ավելի քիչ հավանական է, որ լուսեցու որդին Տաշքենդ փոխարկված լինի և հայրը գնալիս լինի այդ քաղաքը: Գյուղից սայլով (ֆուրգոնով) մի խումբ մարդիկ են հեռանում, քանի որ ծերուկը նստել էր նույն սայլը, պետք է մտածել, որ սայլի ուղղությունը ծերունու ուզածն է եղել (հավանաբար՝ դեպի Բաքու, որտեղից կարող էր Տաշքենդ գնալ): Կնշանակի սայլով մեկնողները դեպի Բաքու էին գնում, որ նույնպես բնորոշ է Ձանգեզուրին և ոչ թե Լոռուն:

Ինչ վերաբերում է Աճեաձոր անվանը, ապա չկարողացանք ստույգ որոշել, թե Ձանգեզուրի որ մասում կա այդ անունով անտառ և նրա մեջ՝ Կատարի խաչ: Աճեաձոր (Այնեաձոր) անունով գյուղ եղել է Եղեգնաձորի շրջանում: Աճեաձոր է կոչվում Գորիսի շրջանի Հալիձոր գյուղից ոչ հեռու գտնվող մի անտառամաս: Արդյո՞ք այս վերջինն է Բակունցի նկարագրածը, թե՞ մի այլ Աճեաձոր, որտեղ իրոք կա Կատարի խաչ:

«Խոտ» ակնարկում նույնպես հիշվում է Կատարի խաչ: Համեմատենք. «Կածանով» «Գագաթին Կատարի խաչի սպիտակ ժայռերը մեջք-մեջքի տված բարձր բուրգ էին կաղմեղք, «Գյուղերում հավատք կա, թե Կատարի խաչը շքեր կանանց արգանդում պտուղ է՝ ծնում»։ «Խոտ»՝ «Երբ «Կատարի խաչի» բարձունքից նայում ենք ներքև, խոր ձորին» (էջ 375, տողեր 2—3) կամ՝ «...չք ուղում հնաճալ «Կատարի խաչից», ներլիկ կածանով իջնել ներքև (էջ 375, տող 8): «Բևան, Բևան...» պատմվածքում գլխավոր հերոս Տիտոսը մտածում է. «Տեսնես Կատարի խաչի ուխտավորի շափ մարդ կլինի» (էջ 144, տողեր 12—13): Հնարավոր է, որ սրանք երեք կամ երկու տարբեր «Կատարի խաչեր» լինեն, բայց գուցե և միևնույնի մասին է խոսքը:

Գորիսի շրջանում խոտ գյուղից հյուսիս-արևելք կա մի սար Խաչին քերձ անունով (Աղբրեչանի սահմանի մոտ), արդյո՞ք այդ լեռն է Բակունցը նկարագրել «Կածանով» ու «Խոտ» ակնարկներում:

Կ Ո Ւ Ր Ի Ս Ե Ց Ի Ա Ն Դ Ր Ե Ա Ս Ի Դ Ի Մ Ո Ւ Մ Ը
(էջ 417)

Առաջին անգամ հրապարակվել է «Մաճկալ» օրաթերթի 1927 թ. փետրվարի 17-ի համարում (№ 14)՝ Ակսել ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի:

Կատարված ուղղումներն են.

էջ 419, տողեր 20—21. ՄՃԿ-ի բնագրում՝ «վանեցեց գանգատը» — վրիպակ է (մի քանի տող ներքև տպված է ճիշտը). ուղղել ենք՝ «վանեցոց գանգատը»:

էջ 420, տողեր 7—8. ՄՃԿ-ի բնագրում՝ կարգադրվում ֆենեկ—ուղղել ենք՝ կարգադրվում է ֆենեկ:

էջ 421, տողեր 21—22. ՄՃԿ-ի բնագրում՝ բղղավել է—հավանաբար վրիպակ է, ուղղել ենք՝ բղավել է:

Մի քանի լեզվական և ուղղագրական անմիօրինակություններ ճիշտ չհամարեցինք ուղղել: Օրինակ, բնագրում առկա են կուրխեցի (էջ 417, տող 1) և կուրխցի (էջ 418, տող 24, էջ 419, տող 34 և այլն) ձևերը, որ պահպանված են:

Ակնարկն այնպիսի տպավորություն է թողնում, որ Ա. Բակունցն ինքն է գնացել Կուրխ՝ Անդրեասի դիմումը քննելու: Այն ժամանակ նա աշխատում էր «Մաճկալ» թերթի խմբագրությունում և, ըստ երևույթին, նրան գործուղած են եղել Մեղրու շրջան՝ դիմումի փաստերը քննելու:

էջ 417, տող 3. Մեղրու գավառի Կուրխ գյուղին—Կուրխն, իբրք, Մեղրու շրջանում է, շրջկենտրոնից հյուսիս-արևմուտք:

էջ 419. տող 20—21. Թաֆայել Պապկանյանի «Վանեցոց գանգատը»—խոսքը Ռ. Պատկանյանի «Հայի գանգատը» բանաստեղծության է վերաբերում. հարող տողերում բերված է այդ բանաստեղծության մի քառատողը, բայց խիստ աղավաղված (տե՛ս Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1963, էջ 120):

«Ս Ո Ր Ո Ւ Զ»
(էջ 423)

Առաջին անգամ հրապարակվել է «Արվեստ, գրականություն, գիտություն» շաբաթաթերթի (Թփղիսում հրատարակվող «Պրոլետար» օրաթերթի հավելված) 1928 թ. հունվարի 1-ի համարում (№ 1)՝ Ակսել ստորագրությամբ: Այժմ նույն բնագիրը տպագրվում է երկրորդ անգամ: Կատարված են հետևյալ ուղղումները.

էջ 424, տողեր 31—32. ԱԳԳ-ի բնագրում՝ միտքը բողնում է Մաստառ—խոսքի քովանդակությունը թելադրում է, որ բողնում է-ն վրիպակ է. ուղղել ենք՝ բոչում է:

էջ 425, տող 2. ԱԳԳ-ի բնագրում՝ տո շալի՛, Մուկուչ, «Հոպպար» շալե—կարծում ենք օկզբի շալի—ն վրիպակով է տպված, նույն խոսքում ճիշտ է՝ շալե-ն, ընդ որում բնագրում քիչ հետո (էջ 425, տող 15) դարձյալ շալե ձևն է, որ և Շիրակի խոսվածքի հարազատ տարրն է, (իսկ շալի ձևը՝ խորթ). հեղինակը շեր կարող նույն նախադասության մեջ իրար կից գործածել մե՛րթ շալի, մե՛րթ շալե, ուստի առաջինն ուղղեցինք՝ շալե՛:

էջ 425, տող 25. ԱԳԳ-ի բնագրում՝ նտեկ եմ վագո՛ռոն...—ըստ երևույթին, եմ-ը ճիշտ չէ, պետք է որ վրիպակով տպված լինի, ուղղված է՝ նտեկ ես վագո՛ռոն:

էջ 426, տող 1. ԱԳԳ-ի բնագրում՝ խոնկում են ամբոխին—ուղղել ենք՝ խոնկում են ամբոխին:

Ակնարկում նկարագրված է Լենինականի կայարանը, տրված են տեղի ու շրջակայքի բնակիչների կենցաղային սովորույթների, խոսնվածքային առանձնահատկությունների պատկերներ, որպիսիք՝ ավելի ընդարձակ կտավով առկա են «Որդի Որոտման» վեպի պահանջված հատվածներում՝ «Մեր ծանոթը», «Վազոն մի ծած գար» (տե՛ս Երկերի սույն հրատարակությունից 3-րդ հատորը): Ընդ որում, թե՛ այս ակնարկում, թե՛ «Որդի Որոտմանի» մեջ նկարագրված է նաև գնացքը (վեպում՝ վազոնի ներսը):

էջ 423, տող 1 և 24. էջ 425, տող 31. ստորև և վեներուլ—առաջինը երկրորդի (ВСОБУЧ-ի) շիրակյան արտասանությունն է:

էջ 424, տողեր 8—9 և հետո. Մի վազոնում էլյալիցի էին, մյուսում հոռուցի, երբորում մաստաբցիք ու քալիցիք:—հոսքը վերաբերում է Լենինականի շրջակայքի՝ համապատասխանաբար Ախուրյանի, Արթիկի, Քալինի շրջանների գյուղերի բնակիչներին:

էջ 425, տող 2. «Հնայալը» շալի—խոսքը ժողովրդական մի պարեղանակի մասին է:

էջ 425, տողեր 20—21.—Ընկել ե՛մ գերի՛...
—Օտար երկրներ...
Նստել ես վազո՞տն...

Սալդաթ բալա շան:

էջ 425, տողեր 25—26.

Նստել ես վազո՞տն...

Սալդաթ բալա շան:

էջ 425, տողեր 34—35. Երկնքուց կախված է Սողոմոնի գիրքը,

Կարգացեք, իմացեք սալդաթի միտքը:

Ռոլորը 1910—1920-ական թվականներին տարածված ժողովրդական զինվորապանդիտային երգերի հատվածներ են: Նույնը և՛ էջ 426, տող 18, էջ 427, տող 2. Վազո՞ն, մի՛ ծած աա՛. ժողովրդական երգի մի քառատողի սկիզբն է, որի տարբերակը կա «Որդի Որոտման» վեպում՝ «Վազոն, մի՛ ծած գար» ձևով:

Կ Ա Պ Ղ

(էջ 428)

Առաջին անգամ հրատարակվել է «Արվեստ, գրականություն, գիտություն» շաբաթաթերթի («Գրույեռար» օրաթերթի հավելված) 1928 թ. հունվարի 22-ի համարում (№ 4)՝ Ալեսլ ստորագրությամբ: Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ նույն բնագրի:

Ուղղել ենք բնագրի խումբ խումբ-ը (էջ 428, տող 7)՝ ավելացնելով գծիկը Ինչպե՛ս ալլ բնագրերում, այստեղ ևս չենք ուղղել Բցած, Բցնե՛մ, Բցել բարբառային գրության ձևերը, որոնք հեղինակային են:

Այս երկը մեկն է նրանցից, որոնց ակնարկ թե՛ պատմվածք լինելը դժվար է որոշել: Նկարագրված խոսակցության ու ժողովի վայրը նշված չէ, և առհասարակ վայրի ու անձանց որոշակիություն չկա. միայն հիշատակվում է Բաքուն, որ ակնարկի հերոսներից մի քանիսի աշխատանքի վայրն է: Չնայած դրան, պատուժը այնքան ակնարկային

Քվաց, որ գերադասելի համարեցինք ղեկի ակնարկների շարքում (եթե մեկը ընկալի
հրրև պատմվածք, հազիվ թե հնարավոր լինի լրջորեն առարկել):

Չնայած վայրի անորոշությանը, նկարագրվածը պետք է լինի մեկը Զանգեզուրի
գյուղերից, որոնց բնակչությունը զանգվածաբար Բաքու էր տեղափոխվում կամ՝ Մի-
շին Ասիա:

էջ 428, տող 12. «Ղակտագ» — Անդրկովկասի ֆեդերատիվ հանրապետության հե-
ռագրական գործակալության ուսերեն անվան (Закавказское телеграфное агенство)
հապավումն է:

էջ 428, տող 13. Գյանջայի զավտի Բաճանց գյուղում — խոսքը Գանձակի (այժմ
Գիրովաբադ) մերձակա հայկական խոշոր գյուղերից մեկի մասին է:

էջ 430, տող 7. Վրասնյալի խոզ — նույնը տե՛ս «Կարմրաքար» վեպի 3-րդ մասում
Արզումանի խոսքի մեջ:

Օ Ձ Ի Բ Ե Ր Ա Ն Ի Ց

(էջ 433)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1928 թ.
հուլիսի 22-ի համարում (№ 170), վերնագրից առաջ՝ Ալլան:

Ապա 1930 թ. հեղինակը ակնարկը կրճատած տպագրել է իր կազմած «Կարմիր արև»
գասազրքում: Այնուհետև տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1)՝ որոշ
կրճատումներով: Այժմ տպագրվում է ըստ առաջին հրապարակման բնագրի:

Բնագրային աղբյուրի արժեք ունեն և՛ «Խորհրդային Հայաստանի», և՛ «Կարմիր
արևի» հրապարակումները: Վերջինում առաջինի համեմատ կրճատված են մեծ ու փոքր
շատ հատվածներ (կեսից ավելին), ավելացված են կամ փոփոխված մի շարք խոս-
քեր: Երկու բնագրերի բոլոր տարբերությունները ներկայացրել ենք Բնագրային տա-
բերակներ բաժնում: Միաժամանակ, որպես հիմնական բնագիր այս անգամ ևս (տե՛ս
Նաև «Մեր գյուղերում» (Ա) ակնարկի ծանոթագրությունները) համարել ենք երկի հե-
զինակային առաջին հրապարակումը, քանի որ գասազրքում եղած փոփոխումները զե-
զարվեստական մշակման արժեք չունեն, այլ մանկավարժական նկատառումներով ար-
ված կրճատումներ, լրացումներ և փոփոխումներ են:

Անհրաժեշտ համարեցինք հիմնական բնագրում մի քանի կետադրական և ուղղա-
գրական ճշտումներ անել ըստ «Կարմիր արևի» բնագրի: ԽՂ-ի բնագրում եղած լեզվա-
կան մի քանի անկանոնություններ հնարավոր չեղավ ճշտել ըստ ԿԱ-ի բնագրի, քանի
որ համապատասխան հատվածները գասազրքում կրճատված են: Դրանցից մի քանիսն
ուղղել ենք այլ հիմնավորմամբ, մի քանիսն էլ թողել ենք նույնությամբ:

ԽՂ-ի բնագրում կատարված ուղղումներն են.

էջ 436, տող 28. ԽՂ-ի բնագրում՝ խորձերն, նաև էջ 436, տող 30՝ խորձեր — ուղղել
ենք ըստ նույն բառի միևնույն բնագրում եղած այլ գործածությունների (էջ 436, տողեր
23, 25—26)՝ խորձեր:

էջ 438, տող 3. ԽՂ-ի բնագրում Միճն էլ տեսնենք — ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի՝
Միճ էլ տեսնենք:

էջ 440, տող 6. ԽՂ-ի բնագրում՝ վայրենի մրգեր, — ուղղել ենք՝ վայրի մրգեր:

էջ 442, տող 17. ԽՂ-ի բնագրում՝ Մեկ էլ գար, ասեք — ուղղել ենք ելնելով բովան-
գակությունից՝ Մեկ էլ կգար, կասեք:

էջ 443, տող 26. ԽՆ-ի բնագրում՝ շնորհիվ էր համարում—ուղղել ենք՝ շնորհի էր համարում:

էջ 445, տող 31. ԽՆ-ի բնագրում՝ ծառի—ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի՝ Ծառի:

էջ 445, տող 32. ԽՆ-ի բնագրում՝ շատ—ուղղված է ըստ ԿԱ-ի՝ Ծառ:

էջ 445, տող 35. ԽՆ-ի բնագրում՝ փշացան—ուղղված է ըստ ԿԱ-ի բնագրի և բովանդակության թևադրանքով՝ փշացավ:

Զենք ուղղել լեզվական որոշ անհարթություններ. օրինակ, էջ 440-ի 16-րդ տողում կա թվի անհամաձայնություն՝ օղակներ կար հացքրած (փոխանակ՝ կային), որ հեղինակային պետք է լինի, Եահ-Աբասով անունը գործածված է նաև Եահ-Աբասյան ձևով և այլն: Ամենը թողել ենք նույնությամբ:

«Կարմիր արև» դասագրքում «Օձի բերանից» ակնարկը համառոտված դնելով՝ վերջում Բակունցը կցել է հետևյալ հարցերը.

— Գյուղը Ե՛րբ ազատվեց կալվածատերի լծից:

— Ի՞նչու՞ Չատի բիձան իրենց հին կյանքն անվաճում է «Օձի բերան»:

— Ձեր գյուղում կայի՞նց կալվածատերեր. տեղեկացե՛ք, քե ի՞նչ էին վճարում գյուղացիները նրանց:

— Գյուղացիները կարո՞ղ էին ցարական կառավարության օրոք «աղվակատի» միջոցով ազատվել կալվածատիրոջ ճնշումից:

— Մեր պապերն ու տատերը մեզ սովորեցրել են, ու հիմա էլ շատերը նրանցից եույն համոզմունքին են, որ վաճեր, եկեղեցիները ժողովրդին լուսավորել են, փրկել ու պաշտպանել. այս հողվածը ձեզ ի՞նչ համոզմունքի է բերում:

Ակնարկում նկարագրված է գլխավորապես Ալավերդու այժմյան շրջանի Մարց գյուղը, իսկ ընդհանրապես խոսքը վերաբերում է լոռու մի ոչ ընդարձակ շրջանի Ակնարկում հաղորդված զրույցը՝ հեղինակի և գյուղացիների միջև, տեղի է ունեցել Մարց գյուղի խոր ձորի մոտ գտնվող մի բարձունքում («շատ զեղատեսիլ մի բլրակի վրա»), որտեղից ակնարկի վերջում զրուցակիցները գյուղ են վերադառնում: Վանքապատկան հողերի հիշատակված կառավարիչները՝ Աղա Դարչո, Մարտիրոս, Կուրբանեցի Տիգրան, Եահ-Աբասով, Ռոստոմ, իրական անձինք են: Վերջինը Հովհ. Քումանյանի կրտսեր եղբայրն է՝ Ռոստոմ Քումանյանը (1872—1915 թթ.): Մենք զրուցել ենք Ռոստոմի դստեր՝ Վարսենիկ Քումանյանի հետ: Նա Բակունցի ակնարկում իր հոր մասին գրվածի դեմ մի շարք լուրջ առարկություններ էր անում: Հովհաննես Քումանյանը գյուղում ապրող իր եղբայրների բաժանության առթիվ 1908 թ. Քիզիլից Դեսը գրել է նամակ, որի մեջ կան Ռոստոմին վերաբերող բնութագրումներ. զրանցից որոշ պատկերացում կարելի է կազմել Ռոստոմի բնավորության այնպիսի գծերի մասին, որպիսիք, համապատասխան պայմաններում (վերատեսչի պաշտոն և այլն) զարգանալով, կարող էին մոտենալ ակնարկում նկարագրված Ռոստոմի հատկանիշներին. թեև հիմք կա մտածելու, որ այդ հատկանիշները ակնարկում չափազանցված են: Ստորև բերում ենք Քումանյանի հիշյալ նամակը:

Միրելի Ռոստոմ.

Սա պարզ տեսնում եմ, որ դուք բաժանվում եք: Դրա դեմ ոչինչ չունեմ, և շատ հասկանալի բան է: Բայց մարդու խելքն ու նամուսը էդ տեսակ ժամանակներն են երեվում: Էնպես արեք, որ ոչ մի աղմուկ չը դուրս գա ձեր մեջ: Ամոթ է:

էնպես արեք, որ մեկդ մյուսիդ շարկեք: Առհասարակ մարդու զրկելը վատ բան է, բայց ախպրը ախպորը երբեք չպետք է զրկի: Աշխարհքում ամեն բան էլ աշխատելու ու գտնելու: բան է, բայց ախպր չեն ծախում ոչ մի տեղ: Ապրելը նրա համար է լավ, որ քաղցրութիւն կա մեջը. եթէ կոպով ու դառնութիւնով է լինելու—ա՛վելի լավ է չիինի:

Կնանկնց խելքով շընկնեք: Նրանք կարճատես են, հետուն չեն կարողանում տեսնել ու հասկանալ:

Վերջապես ամեն կերպ աշխատեցեք նանին շրվշտացնել: Մանավանդ քեզ համար նա շատ է եղել գլուխը ես դրած:

Վահան էլ էն տեսակ տղա է, որ նրա հետ զաւմաղալ անելը մեղք կլինի:

Մի խոսքով, եթէ մի զաւմաղալ, մի անհամութիւն դուրս եկավ—ես քեզանից եմ նեղանալու: Առաջինը, որ դու ես դրանց միջի մեծը, երկրորդը, որ քու համբերութիւնն է կտրած:

Լավ մտածի ու էնպես արա, որ հավանեմ ձեր արածը:

Փառք Աստուծոյ—մի մեծ բան չըկա մեջ տեղը: Իսկ ես իմ կողմից ամեն տեսակ ձեռք կօգնեմ: Իհարկեմ, ոչ մի բան չեմ ուզում ձեռքանից—ինչ ուզեք, էն էլ ձեռք կտամ իմ ունեցածից, միայն թէ էնպես շանեք, որ սիրտս կտրեք ձեռքանից: Իմացած կաց, որ մի բան ա՛վել կամ մի բան պակաս—դատարկ բան է, բայց մարդու նամուսն ու ափապոր կամ տան սերը—մեծ բան է: Ծա լավ գիտեմ, որ ինչքան էլ դու անհամբեր լինես, այնուամենայնիվ լավ ես հասկանում ամեն բան, նրա համար էլ հույս ունեմ—որ այնպես կանես, ինչպես վայել է մեր օջախին ու մեր անունին:

30 հուլիսի

Թիֆլիզ

Քո Հովհաննէս

Վանքապատկան հողերին վերաբերող՝ այս ակնարկում արծարծված խնդիրը նյութ է դարձել նաև Բակունցի բեմագրով 1930 թ. հանված «Սև թևի տակ» (նախապես՝ «Ազգայնաշան ջրվեժի մոտ») շարժանկարի համար (բեմադրող Պ. Բարխուդարյան, նկարահանող Ա. Ստանկե): Մենք չկարողացանք գտնել բեմագրի հեղինակային բնագիրը, բայց բովանդակութիւն պահպանված համառոտ վերաշարադրանքից հետևում է, որ նկարի հիմքում ընկած են Ռուստոմ Թումանյանի հետ պայված դեպքերը, նրա սպանութիւնը, հաջորդ վերակացուի երևան գալը:

էջ 433, տողեր 8—9. Մարցի զեւ—Մարց գյուղի մոտով անցնող գետ, որ սկիզբ է առնում Աղստեի լեռներից, հոսում դեպի Հյուսիս-արևմուտք, թափվում Դերեռը:

էջ 434 տող 4. Մարցը, Լորուտը, Շամուտը, Ահնիձորը—Ալավերդու շրջանի գյուղերից են՝ շրջկենտրոնից հարավ-արևելք, Զաթինդաղ լեռից հարավ ընկած:

էջ 435 տողեր 2—3. լուսավերչական սինդղի կարգադրութեամբ—սինդղը Հայոց լուսավորչական եկեղեցու խորհուրդն էր, որը ղեկավարում էր Ռուսաստանի հայոց եկեղեցիների վարչական ու տնտեսական գործերը կաթողիկոսի նախագահութեան ներքո, Հիմնվել է 1836 թ. ռուսական եկեղեցու սինդղի օրինակով:

էջ 435, տող 29. պլաստուն կազակներ—նույն արտահայտութիւնը կա նաև «Օրանջիա» պատմվածքում՝ «է՛յ, պլաստուն կազակ» (տե՛ս Երկերի սույն հրատ. հ. 1, էջ 125): Նախկինում հայերը այսպես անվանում էին ցարական բանակի կազակային զորաբաժինների զինվորներին:

էջ 437, տող 29 և հետո. պրիստավ—տե՛ս «Եվան քելը» պատմվածքի համապատասխան ծանոթագրութիւնը:

էջ 441, տող 33. ծնվել է ինքը նեոր—նեա (նեոն), ըստ հայկական ավանդույթի նշանակել է Քրիստոսի հակառակորդ, դաժանութիան մարմնացում, սուտ առաքյալ, որ պետք է գա աշխարհի վերջից առաջ, ահա՛վոր շարիքներ գործի, բայց պարտվի Քրիստոսից: Նեա ասում են նաև առհասարակ դաժան, շարագործ մարդկանց:

էջ 442, տող 1. Ռոստոմը մտառակ գյուղիցն էր—խոսքը կոռու (Ալավերդու շրջան) Դսեղ գյուղի մասին է, որ Թումանյանների ծննդավայրն է:

էջ 446, տող 7. Սևաբեցի. մի ուրյաղնիկ կա—խոսքը, հավանաբար, այժմյան Իջևի վանի շրջանի Աեքար գյուղի մասին է: Ուրյաղնիկ կոչվում էին ցարական շրջանում գաղառական ուստիկանություն ստորին կարգի որոշ պաշտոնյաներ:

Պ Ե Մ Ջ Ա Յ Ի Հ Ա Ն Փ Ե Ր Ո Ւ Մ
(էջ 447)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1929 թ. հոկտեմբերի 15-ի համարում (№ 236)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել «Նոր աշխարհ». Ե տարի» դասագրքում (Ե., 1931): Այժմ սույնգրվում է ըստ առաջին հրատարակման:

«Խորհրդային Հայաստանի» սույնգրությունը վրիպակաշատ ու սխալաշատ է, կատարված ուղղումներից են.

էջ 447, տող 13. ԽՆ-ի բնագրում՝ գալի՞քը—ուղղել ենք ըստ բառի այլ գործածության (էջ 448, տող 21)՝ գաղեքը:

էջ 448, տող 9. ԽՆ-ի բնագրում՝ քսենոֆոնի—ուղղված է Քսենոֆոնի:

էջ 449, տող 7. ԽՆ-ի բնագրում՝ մանրուհն—ուղղված է՝ մանրուհն:

էջ 449, տող 19. ԽՆ-ի բնագրում՝ Armènia—ուղղված է՝ Arménia:

էջ 449, տող 28. ԽՆ-ի բնագրում՝ առածն—ուղղված է՝ Չագարածն:

էջ 450, տող 22. ԽՆ-ի բնագրում՝ ճուղավորվում է—ուղղված է՝ ճյուղավորվում է:

էջ 452, տող 1. ԽՆ-ի բնագրում՝ պոքֆարատարի—ուղղված է՝ պոքֆորատորի:

Ուղղված են նաև այլ մանր վրիպակներ, այդ թվում կետադրական: Ալլաճվեղի Խախկին ձևը դարձրել ենք այժմ ընդունված՝ Ալավեղի:

Չուղղեցինք բարակնում (էջ 450, տող 30) գավառաբանությունը (բարականում հիմաստով), որ հերոսի խոսքում է:

Ակնարկը, երևում է, գրված է թերթի պատվերով ու գործուղմով, հավանաբար, բնագրում կան խմբագրական միջամտություններ, սույնգրվելիս էլ, կարծում ենք, չի արբագրվել հեղինակի կողմից: Իսկ ընդհանրապես, Բակունցի շտապ գրված ակնարկներից է:

էջ 448, տող 9. ուզում ես կեռելի Քսենոֆոնի նման—իրականում ոչ թե Քսենոֆոնը, այլ մյուս հույն զինվորներն են բացականչել՝ Մո՛վը, ծո՛վը, մ. թ. ա. 5-րդ դարում, երբ Միջագետքից սկսած տառապալից ցամաքային ճանապարհ անցնելով դեպի հյուսիս, հասել են Սև ծովին (մանրամասն տե՛ս «Շաթրիզ» ակնարկի համապատասխան նշանակությունում):

էջ 448, տող 33. Քրիստափորը «ուսում» է—ուսում նշանակում է հույն:

էջ 448, տող 34. աշխատել է Զիառուում—Զիատուրին բնակավայր է Վրաստանում:

էջ 448, տող 35. Շամլուղ—Ալավերդու շրջանի բնակավայր, որի շրջակայքում պղնձի հանքեր կան:

էջ 450, տող 9. Աստաֆյանը—Երևանի Արտվան փողոցի նախկին անունը:

Վ Ա Ր Դ Ա Գ Ո Ւ Յ Ն Տ Ո Ւ Ֆ Ի Ե Ր Կ Ր Ո Ւ Մ

(էջ 454)

Առաջին անգամ հրապարակվել է «Ետրհրդային Հայաստան» օրաթերթի 1929 թ. հոկտեմբերի 20-ի համարում (№ 241)՝ Ակսել ստորագրությամբ: Ապա տեղ է գտել «Ետր աշխարհ», Ե. տարի» դասագրքում (1931 թ.): Այժմ սպազրվում է ըստ առաջին հրապարակման:

Կատարված ուղղումներն են.

էջ 454, տողեր 4—5. ԽՆ-ի բնագրում. արարի սև խուրճեր ու մզլած խոտի կույտեր—որոշեցիկ ուղղել, դարձրինք՝ արարի սև կույտեր ու մզլած խոտի խուրճեր:

էջ 454, տող 5. ԽՆ-ի բնագրում՝ մեջ տեղը—ուղղված է՝ մեջտեղը:

էջ 456, տող 35. ԽՆ-ի բնագրում՝ բետոններ—ուղղված է՝ բիդոններ:

էջ 457, տող 25. ԽՆ-ի բնագրում՝ չի յնդի (արդի ուղղագրությամբ) չի եղնի). քանի որ բար շորագլայցի բանվորն է գործածում, ըստ այլմ ուղղեցինք՝ չի էղնի:

էջ 458, տող 20. ԽՆ-ի բնագրում՝ փառհանքի, էջ 460, տող 14՝ փառհանքերը— ուղղված են ըստ միևնույն բնագրում նույն բառի ավելի մեծաքանակ գործածությունների (էջ 458, տողեր 12, 25, 26, էջ 460, տողեր 17, 21, էջ 461, տող 5)՝ փառհանքի-փառհանքերը:

էջ 459, տող 1. ԽՆ-ի բնագրում՝ շույֆերն—վրիպակ է, ուղղել ենք՝ շուրֆերն:

էջ 459, տող 13. ԽՆ-ի բնագրում՝ մանտանայրներ—ուղղված է ըստ նույն բառի այլ գործածումների (էջ 459, տողեր 23, 24, 25, էջ 460, տող 12)՝ մանտանայրները: նույն բառը մի տեղ (էջ 459, տող 16) գործածված է մանտանայրները ձևով, դարձյալ ուղղված է՝ մանտանայրները:

էջ 460, տողեր 14—17. ԽՆ-ի բնագրում կա անկանոնություն. Գործը դեռ չի մեծացել: Փարհանքերը, ինչպես և հղկող ժամանակավոր գործարանը, որտեղ կարքա-բուրդը և աղամանդյա սղոցները հղկում են տուֆը, կոկում այնպես, որ փառը ապակու-նման աղուր է դառնում:— չի մեծացել բառից հետո վերջակետը փոխարինել ենք միջակետով, որից փոքր-իչ կանոնավորվել է խոսքը:

ԽՆ-ի բնագրում առհասարակ շատ են ուղղագրական անմիտքանկություններն ու հնացած ձևերը, որոնց մի մասը ճիշտ համարեցիկ ուղղել՝ հեղինակային նախնական բնագրի տեսքին վնասած չլինելու նկատառումով: Կամ՝ ԽՆ-ի բնագրի մի տեղում (էջ 456, տողեր 20—21) գրված է, որ մայրամուտ է, իսկ հետո (էջ 459, տող 2)՝ արևը նոր է ելել. կամ՝ հեղինակային վրիպում է, կամ՝ անփութություն (չի ասված, որ մի գիշեր անցել է): նույնպես շուրդիցինք:

Ակնարկի բովանդակությունից և այլ հատկանիշներից երևում է, որ գրվել է «Ետրհրդային Հայաստան» թերթի խմբագրության հանձնարարությամբ ու գործուղմամբ:

էջ 454, տողեր 7—8. «Եղիցի հոտ և հովիվ մի»—Աւետարան ըստ Յովհաննու—Փ, 16. հայերեն դասական թարգմանությամբ՝ «Եղիցին մի հոտ և հովիւ».— Հիսուսի խոսքերն են իր հետևորդների ու իր մասին:

էջ 455, տող 8. և հետո՝ Ետագյալ—Շիրակը՝ հարակից մասերով (եղև է նաև այդ անվամբ գյուղ):

ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕԳՆՈՒՄ ԵՆ
ԶՔԱՎՈՐ ԳՅՈՒՂԱՑԻՆՆԵՐԻՆ
(էջ 463)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը Մ. Գասպարյանի «Խորհրդային գյուղ» գա-
սագրքում է (Աշխատանքի գիրք գյուղական հանրակրթարանների համար), 1929 թ.
հրատարակության մեջ (էջ 33—34): Հնարավոր է, որ լինի ավելի վաղ տպագրություն:
Բացառված չէ նաև, որ այս հատորում տպագրվածը հատվածը լինի մի ավելի ընդար-
ձակ ակնարկի:

Հ Ա Ղ Ք Ա Կ Ա Ն Հ Ա Վ Ա Ք Ը
(էջ 464)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1931 թ.
հուլիսի 3-ի համարում (№ 154)՝ Ակսել ստորագրությամբ: Նույն թվականին տեղ է գտել
«Նոր աշխարհ». Ե տարի» դասագրքում: Այժմ տպագրվում է ըստ առաջին հրապարակ-
ման:

«Խորհրդային Հայաստանում» տպագրությունը վրիպակաշատ և սխալաշատ է: Կա-
տարված ուղղումներից են.

էջ 464, տող 7. ԽՀ-ի բնագրում՝ կապարի—ուղղել ենք՝ կուպարի:

էջ 465, տողեր 2—3. ԽՀ-ի բնագրում՝ մարդի առաջին անգամ—ուղղված է՝ մարդիկ
առաջին անգամ:

էջ 465, տող 18. ԽՀ-ի բնագրում՝ ձողին ուսին—ուղղված է՝ ձողն ուսին:

էջ 465, տող 32. ԽՀ-ի բնագրում՝ խոնհարում—ուղղել ենք՝ խոնհարում:

էջ 466, տող 3. էջ 468, տող 3. ԽՀ-ի բնագրում՝ բորում—ուղղել ենք՝ բրբում:

էջ 466, տողեր 28—30. ԽՀ-ի բնագրում՝ Շրջանակի կենտրոնում մեկնաներն են՝
տրակտորներ, շարժացաններ: Նրանք ինչպես հեծյալ գնդի ձիերը գորահանգեսի ժամա-
նակ:—անկանոնություն է. վերջակետը փոխարինել ենք ստորակետով, հանել ենք
Նրանք բարձր... շարժացաններ, ինչպես հեծյալ... և այլն:

էջ 466, տողեր 32—33. ԽՀ-ի բնագրում՝ տեղը բռնում—ուղղել ենք՝ տեղ բռնում:

էջ 470, տող 5. ԽՀ-ի բնագրում՝ միախառնվում իրար—ուղղել ենք՝ միախառնվում
են իրար:

Ուղղել ենք նաև այլ վրիպակներ, այդ թվում կետադրական, Սարգսաբաղ ձևը
գարձրել ենք Սարգարապատ:

Չենք ուղղել բառերի մի քանի հնացած, նաև ոչ գրական գրության կամ արտասա-
նության ձևեր, ինչպես՝ Մանտյոններ (էջ 466, տող 24, այժմ՝ մոնտյոն), հարբուկած
(էջ 467, տող 12, ճիշտը՝ արդուկած), տեղն ու տեղը (էջ 468, տողեր 24—25, այժմ՝
տեղնաւտեղը), սարահարբներ (էջ 470, տող 2,—ավելի ճիշտ է՝ սարահարբեր): Այս
կարգի ձևերը գործածական էին ժամանակին և, կարծում ենք, հեղինակային պետք է լի-
նեն, ուստի ճիշտ համարեցինք չուղղել (բնագրում մեր միջամտությունները չափից
ավելի շատացնելու նկատառումով): Չենք ուղղել նաև մի քանի անկանոնություններ
(օրինակ, էջ 466, տող 36-ից մինչև էջ 467, տող 4):

Քերթում ակնարկի երրորդ սյունակում գծանկարված է դեմք, որի ներքևում գրված է. «Սարգիս Ազատյան. Աղշարիի կուլեկտիվի հիմնադիրներից, Չքավոր գյուղացի, հարվածային»:

Ակնարկը, ինչպես ընթերցումից է նկատելի, գրված է լրագրի պատվերով և գործուղմամբ, իր վրա կրում է անորյա հրատապության, լրագրայնության կնիք:

էջ 464, տողեր 19—21. սկսած Այս տափարակներում բառերից խոսքը վերաբերում է Սարգարապատի ճակատամարտին, որին մասնակցել է ինքը՝ հեղինակը, բայց տուրք տալով այն ժամանակ ընդունված տեսակետին, անճիշտ է ներկայացրել այդ ճակատամարտը:

էջ 470, տող 3. «մինչև Հելլեսպոնտ, մինչև ծովը՝ Կրկանտ» — հմմտ. Հ. Քումանյանի «Հոգեհանգիստ» բանաստեղծության մեջ. «Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև Մոսկոս հայոց, մինչև Հելլեսպոնտ, մինչև Պանոսի ափերն ալեկոծ»:

Գ Յ Ո Ի Ղ Ա Շ Խ Ա Տ Ա Վ Ո Ր Ի Տ Ե Տ Ր Ա Կ Ի Ց
(էջ 471)

Մեզ ծանոթ առաջին հրատարակումը Ե. Չարենցի կազմած «Գրականության և լեզվի դասընթաց. Ուսման լռիչքի տարի» դասագրքի 2-րդ պրակում է (Ե. 1932. Կազմեց՝ Ե. Սողոմոնյան): Այժմ տպագրվում է երկրորդ անգամ՝ ըստ այդ բնագրի, որի մեջ ուղղված են տպագրական վրիպումներն ու որոշ բառերի գրության շատ հնացած կամ անճիշտ ձևեր, ինչպես. «Ճամպի տակ»-ը դարձրել ենք՝ «Ճամպի տակ» (էջ 471, տող 16, էջ 472, տող 34), մեմագ մեկը դարձրել ենք՝ մոմագ մեկը (էջ 482, տող 12), հրհոց-ը՝ հանոց (էջ 482, տող 35, էջ 483, տողեր 6—7), վարսիկ-ը՝ վարսի (էջ 477, տող 9) և այլն:

Բարբառայնությունները, այդ թվում բալունցյան բնագրերում շատ հանդիպող ֆցել-ը ու թփի բարբառային անհամաձայնությունը (ինչպես. կտորտակը քափված են—էջ 475, տող 19)՝ չենք ուղղել:

Քյոթեղու անունով գյուղեր 1930-ական թվականներին եղել են վայոց ձորում, Աշտարակի և էջմիածնի շրջաններում: Նկարագրված է, հաճանաբար, էջմիածնի շրջաններ: Գասագրքի մեջ ակնարկի վերջում Ե. Չարենցը դրել է հետևյալ 15 հարցերը և առաջադրանքները.

Խմբավորեցե՛ք այստեղ հանդես եկող անուններն ըստ դասակարգային պատկանելիության:

— Ի՞նչ միջոցներով են կապակները պայտառում Խաճողային իշխանության նուշակումների դեմ գյուղում:

— Բնութագրեցե՛ք գյուղի շրջաօրայն վերաբերմունքը դեպի բամբակագործ կամպանիան և դեպի կալուկությունը:

— Բնութագրեցե՛ք Սևրային. Սանակին և կամերտունի Լրանային:

— Միջավայր և մտղիական քնուրույզ ի՞նչ մանր-մունր, բայց կարևոր և արժանազանություններ ունի նեղիտակը. բեզդեցե՛ք:

— Հեղինակը լավ է ճանաչում գյուղական միջավայրը. գյուղացիների կենցաղն ու երգերությունը և այլն. ի՞նչ փաստեր կարող ե՛ք բերել:

— Մտանքի բաժանեցե՛ք այս երգվածը և վերնագրը որե՛ք ամեն մի մասին:

— Դիտեցե՛ք, թե գյուղացիների լեզվի մէջ, բարբառից զատ, ի՞նչ նոր բառեր, ձևեր և այլն են մտնոք գործել և ընդգծեցե՛ք:

— Ինչո՞վ եք բացատրում այդ նորամուծւթյունները:

— Գյուղացիների խոսքերը վերածեցե՛ք մաքուր գրական լեզվի:

— Ինչպե՞ս տարվեց բամբակագանի կամպանիան ձեզ մոտ:

— Ի՞նչ մասնակցություն ցուցաբերեցիք այդ կամպանիային:

Մ Ա Ր Մ Ա Ր Ի Տ Ո Ւ Ն Կ Ա Ռ Ո Ւ Յ Ո Ղ Հ

(էջ 485)

— Առաջին անգամ հրատարակվել է «Նորհրդային Հայաստան» օրաթերթի 1933 թ. հունիսի 14-ի համարում (№ 135)։ Վերնագրից առաջ՝ Ա. Բակունց: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1): Այժմ տպագրվում է ըստ առաջին հրատարակման բնագրի:

Կատարված ուղղումներն են.

էջ 486, տողեր 4—5. ԽՂ-ի բնագրում՝ հանդիսանություն—ուղղել ենք՝ *ելնելով շաբաթարգի բովանդակությունից՝ հանդիմանություն:*

էջ 488, տողեր 34—36—էջ 489, տողեր 1—2. ԽՂ-ի բնագրում. Եվ դեռ երկուր ետ նայում էի այդ պարզ և ոչ խորամանկ դեմքին, որի վրա հին խնդրության դրոշմը փեծովի և դառնում էին նորոգ վեճության և երկաթյա կամփի կրակները, հին «շինականի» խաբխիված պատկերի միջից բարձրանում էր համայնական դաշտերի նոր մարդը:— Անկանոնություն կա խնդրության դրոշմը բառերից հետո մինչև նորոգ վեճության բառերը: Տպագրական աղճատում է. ըստ երևույթին, ինչ-որ բառ սխալ է տպվել և դարձեց փեծովի (գուցե փեղվի), ապա՝ հավանաբար, վառվում էին-ը դարձել է դառնում էին, և ինչ-որ այլ բառ կամ բառեր են դուրս ընկել: Անկանոնությունը փոքր-ինչ մեղմելու նպատակով փեծովի-ը դարձրինք փեղվի և ավելացրինք էր օժանդակ բայն ու միջակետ, այսպես՝ ...հին խնդրության դրոշմը փեղվի էր. և դառնում էին նորոգ վեճության և երկաթյա կամփի կրակները...

էջ 489, տող 33. ԽՂ-ի բնագրում՝ հայտնում էիք, աղավաղում պետք է լինի, ուղղել ենք *ելնելով բովանդակությունից՝ հարցնում էիք:*

Այս ակնարկը գրված է «Նորհրդային Հայաստան» լրագրի խմբագրության պատվերով՝ թերթի տոնական հատուկ համարում հրատարակելու համար:

Ակնարկը մեկն է արևմտահայ վերաբնակիչների կյանքին նվիրված բակունցյան երկերից (տե՛ս «Արմաշ» ակնարկի ծանոթագրությունը), տվյալ դեպքում պատկերված է Արարատյան դաշտի գյուղերից մեկում հաստատված վերաբնակիչ: Ի տարբերություն մյուսների, այստեղ զգալի է 30-ական թթ. հատուկ շեքթայնության կնիքը: Թերթի համարը բաղկացած է 6 էջից, առաջին էջի ճակատին կա կոչ՝ «Հարվածային կուտեստականներին ջերմ ողջույն»: Նույն համարում տպագրված տոնական նյութերից է Ծ. Զարեհից «Ե՞րգ կոխողնիկներին» բանաստեղծությունը: «Մարմարի տուն կառուցողը» լրագրապատկերիկ բնույթով համահնչյուն է տոնական համարում զետեղված մյուս նյութերին:

էջ 487, տող 16. «ցորեն լեզու»—նույն արտահայտությունը տե՛ս նաև «Եղբայրության ընկուզենիներում»:

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1935 թ. հունվարի 14-ի համարում (№ 12). վերնագրից առաջ՝ Ակսել Բակունց: Ապա տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակում (հ. 1)՝ կրճատումով: Այժմ տպագրվում է ըստ առաջին հրապարակման բնագրի:

Ակնարկի վերջում անկանոն թվաց մի նախադասություն, էջ 497, տողեր 14—16. այդ ամենը ձուլվում է, ինչպես որոտացող, նա հզորանում է, և գեղջուկ բարբառով մի պատգամավոր կին խոսում է գյուղերի մասին.—որոտացող դերբայից հետո, ըստ՝ երևույթին, դուրս է ընկել մի բառ: Նախադասությունը թողել ենք նույնությամբ:

Թերթում ակնարկի վերջում տպված է՝ Հունվարի 10, որ գրելու թվականը պետք է լինի:

Ակնարկում նկարագրվածը վերաբերում է Վաղարշապատի (այժմ՝ Էջմիածնի) ջրջանի Արշալույս գյուղին: Կուտնտեսության նախկին նախագահ՝ Սերգո Հովակիմյանը, որ ակնարկի հերոսներից է, մեզ պատմել է, թե ինչպես Բակունցը երկու անգամ եղել է իրենց գյուղում, բնակվել միառժամանակ և գրել երկու ակնարկ՝ մեկն այս, մյուսը «Խոսում են Զավոյի բնակարանից»: Երկուսն էլ գրվել են «Խորհրդային Հայաստան» թերթի պատվերով:

Ակնարկում հիշատակվող բոլոր անձինք իրական են, արշալույսցիներ՝ Քանկագինը (կամ Քանգոն), Մոռոն, Հոռոմսիմը, Զավո մայրիկը, Ոսկինարը: Քանգոն՝ Քանկագին Մովսիսյանն է. իրոք, եղել է Հայաստանի Խորհրդայինների 8-րդ համագումարի պատգամավոր, ինչպես նաև այն պատգամավորության անգամ, որը Հայաստանի խորհրդայինացման 15-ամյակի առթիվ 1935 թ. դեկտեմբերի 30-ին ընդունվեց Կրեմլում (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1935, 31 դեկտ. № 301):

Այնուհետև, հիշատակվող ՄՏ կայանի հաշիկը նույն թվականին Վաղարշապատի ՄՏ կայանի պետ հաշիկ Հակոբջանյանն է:

Ակնարկը տպագրվել է Հայաստանի Խորհրդայինների 8-րդ համագումարին (1935 թ. հունվարի 9—11) նվիրված հանդիսական համարներից վերջինում, և մյուս նյութերի նման իր վրա կրում է համապատասխան դրոշմը: Այս, ինչպես նաև հաջորդ՝ «Խոսում են Զավոյի բնակարանից» ակնարկում Ստալինի անվան հիշատակությունը արդյունք է 30-ական թվականներին ստեղծված մթնոլորտի:

Էջ 493, տողեր 5—9. հմմտ. «Ընկեր Գալուստը» պատմվածքում եղած նույն կարգի մտքերի հետ (էջ 253, տողեր 16—19):

Ն Ո Ս Ո Ւ Մ Ե Ն Զ Ա Վ Ո Յ Ի Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Ի Ծ

(Էջ 498)

Առաջին անգամ հրապարակվել է «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 1935 թ. նոյեմբերի 29-ի համարում (№ 275)՝ Ակսել Բակունց ստորագրությամբ (հեղինակի ինքնագիր ստորագրության պատճենն է): Այսպե տեղ է գտել Երկերի 1964 թ. երկհատորյակի մեջ (հ. 1)՝ կրճատումներով: Այժմ տպագրվում է ըստ առաջին հրապարակման բնագրի:

Այս, ինչպես և «Մի կին պատգամավոր է» ակնարկում պատկերվածը Վաղարշապատի (այժմ էջմիածնի) շրջանի Արշալույս գյուղն է: Զավոն (այսինքն՝ Զավահիրը), ինչպես և ակնարկում հիշված մյուս անձինք՝ իրական են: Իրողություն է նաև այն, որ 1935 թ. նոյեմբերի 24-ին Արշալույս գյուղում ղեկավարության կողմից կազմակերպվել է Զավոյի հին տան հրապարակային հրկիզումը և այդ կնոջ հանդիսավոր փոխադրությունը նոր տուն: Բակուցը, ինչպես վկայում է Արշալույս գյուղի կուտնտեսության նախկին նախագահ Սերգո Հովակիմյանը, ներկա է եղել այդ արարողություններին: Նորամուտի սեղանի զլխին նստող երկու հոգուց մեկը Վաղարշապատի շրջամի այն ժամանակվա քարտուղար Պետրկ Պետրոսյանն է: Իրողություն է նաև տան հինավուրց պատիկը շարդելու մուեզին փորձերը:

Զավոյի՝ նկարագրված ցնծության կողքին տեղ են գտել խոսքեր նաև նրա տրամուսյան մասին. «Զավոյի դեմքը մոռյվում է, նա մտազբաղ է» կամ՝ «մերթ պարողների շարքից դուրս է գալիս և ձեռքերը կրծքին ծալած նայում է կրակին: Նայում է դառն կակիծով» և այլն: Արդյո՞ք ավանդականը հիմնահատակ այրելու, շարդելու կակիծը չէր դա:

Այս ակնարկը ևս գրվել է թերթի խմբագրության պատվերով: Այդ և նախորդ թվականներին՝ Բակունցի դեմ ավելի չ'ույ սկսված հալածանքը սաստկացրել էր (տե՛ս, օրինակ, «Խորհրդային արվեստ» 1934, № 7, 13, 1935, № 1, 2, «Первый Всесоюзный съезд советских писателей», 1934, էջ 630 և այլն)՝ հաջորդ երկու թվականներին գազաթնակետին հասնելու համար: Բակունցի տաղանդն իրապես գնահատողները՝ ՀԿԿ կենտկոմում, «Խորհրդային Հայաստանի» խմբագրությունում, Գրողների միությունում ջանում էին ոչ միայն գրողին պաշտպանել՝ հրապարակելով հոդվածներ ի նպաստ նրա էրկերի, այլև նրան հանձնարարելով գրել այսպիսի ակնարկներ, որոնք պետք է որ նաև վահանի դեր կատարեին արձակվող նետերի դեմ: Նշենք, որ թերթի նույն համարում (բաղկացած 12 էջից) տպված էին տոնական-ներբողական այլ նյութեր. ինչպես՝ Ե. Զարենցի «Տասնհինգ տարի (դիֆերամբ)» բանաստեղծությունը, Ն. Զարյանի «Ստալինը», Ա. Իսահակյանի «Այս շրջանը դուրսագնացություն է» հոդվածը (գրված արտասահմանից), Ա. Եահուովարյանի, Ա. Գուլոյանի, Ս. Մարտիկյանի հոդվածները և այլն: Հանդիսական նույն բնույթի հոդվածներով կամ շահածոյով հանդես էին եկել նաև Վ. Քոթովնցը, Ալ. Քամանյանը, Մ. Արեղյանը, Մ. Սարյանը, Հ. Ներսիսյանը, Հ. Դանիելյանը, Գ. Գեմիրձյանը, Հ. Կոչոյանը, Գ. Մահարին, Ն. Տիգրանյանը, Փ. Թերլեմեզյանը, Հ. Քոչարը և ուրիշներ:

էջ 499, տող 5. «մի տուն լիքը մանուկներ» — տող 2. Քոմանյանի «Գուրմանի երգից»:

Ա Ղ Վ Ե Ս Ա Գ Ի Ր Փ

(էջ 505)

Վարդան Այգեկու (կամ ըստ Բակունցի գործածության՝ Այգեցու) առականի բակունցյան փոխադրությունների առաջին հրապարակումը կատարվել է 1934 թ. նոյեմբերի 29-ին, «Գրական թերթում» (№ 30): Թերթի այդ համարում տպագրվեց 8 առակ «Աղվեսագիրք» ընդհանուր վերնագրի տակ: Այդ առականն են. «Աղվես և թղթատար

գայլ», «Առյուծ և գայլ և աղվես», «Հալալ մարդ», «Իշխանն և այրի կին», «Այրի կին և խորթ որդի», «Իմաստուն զինվոր», «Հալալ-որդի», «Առյուծ և Աղվես»: Կա փոքր բացատրություն՝ Վարդան Այգեկցու «Աղվեսագիրքը» վերնագրով: Այնտեղ մասնավորաբար ասված է. «Ընկ. Ա. Բակունցն այս տարի գրադրել է վերջինիս (Վարդան Այգեկցու—Ռ. Ի.) առականի ուսումնասիրությանը և ընտրովի 40 առակ փոխադրել ժամանակակից գրական լեզվի»: Հաջորդ՝ 1935 թ. Պետրասուր առանձին գրքուկով հրատարակեց հիշյալ 40 առակները (նրանց մեջ՝ և «Գրական թերթում» տպվածները), Աղվեսագիրք վերնագրով. անվանաթերթին նաև Նեղինակն է նշված՝ Վարդան Այգեցի, առակագիր ՓԳ դարի: Առաջաբանը («Նախաշավիղ») և ծանոթագրությունները գրել է Ա. Բակունցը: Գրքուկը ձևավորել է և նկարագրողել Հ. Կոչոյանը: 117-րդ էջում կա հիշատակարան՝ ձևավոր գրված. «Այս գիրքը կազմել է Ակսել Բակունցը: Նկարագրողել է Հակոբ Կոչոյանը: Տպված է Պետհրատի տպարանում: Երևան: Հազար ինը հարյուր երեսունհինգ թվին»:

«Գրական թերթում» տպագրված 6 առակների և գրքուկում նրանց վերատպված բնագրերի միջև աննշան տարբերություններ կան: Դրանք են. «Առյուծ և գայլ և աղվես» առակի մեջ—թերթում՝ եվ դարձյալ առյուծն ասաց, գրքուկում՝ եվ դարձյալ ասաց առյուծն: «Հալալ մարդ»— թերթում՝ ծնված օրից իմ դուստրն, գրքուկում՝ ծնված օրից իմ աղջիկ (տե՛ս ուղղումները), թերթում՝ և ոչ էեզ հալալ կանեմ, գրքուկում՝ և ոչ հալալ կանեմ, թերթում՝ աղջիկն ամենևին, գրքուկում՝ աղջիկը ամենևին: «Այրի կին և խորթ որդի» առակում—թերթ՝ և տալիս էշին, գրքուկ՝ տալիս էշին:

Այս՝ 1940 թ. մանուկների համար նկարագրող լույս տեսավ «Առյուծը, աղվեսն ու արջը» գրքուկը (վերևում՝ Վ. Այգեկցի)՝ առանց Բակունցի անվան հիշատակության և բակունցյան բնագիրը աղավաղված: 1955 թ. «Աղվեսագիրքը» վերահրատարակեց Հայպետհրատը՝ Ա. Բակունցի առաջաբանով, բայց առանց նրա ծանոթագրությունների և առանց կազմողի ու գրական արևելահայերեն վերարտադրողի անունը նշելու: Թե՛ առաջաբանում, թե՛ առակների բնագրերում կատարված են մի շարք լեզվական շփմանավորված փոփոխություններ: 1972 թ. Հայպետհրատը «Դպրոցական գրադարան» մատենաշարով հրատարակեց գրքուկ, որի անվանաթերթին կարդում ենք՝ Վ. Այգեկցի Առակներ: Դրված են 37 առակներ բակունցյան վերարտադրությանը, սակայն առանց Բակունցի անվան հիշատակության, առանց նրա առաջաբանի և ծանոթագրությունների: Առակների բնագրերում կատարված են լեզվական անհիմն փոփոխություններ (նաև Վարդանի անվան, կարծում ենք, շփմանավորված հապավում՝ Վ.): Այս երկու հրատարակություններով Վարդան Այգեկցու միջնագրայան առակների բակունցյան վերարտադրությունները, որոնք երբեմն հեռացած են սկզբնաղբյուրներից (տե՛ս ստորև), ներկայացվեցին որպես զուտ Այգեկցու առակներ: Այնուհետև, «Աղվեսագրքի» Նախաշավիղը «Վարդան Այգեկցի» վերնագրով տեղ է գտել Ա. Բակունց, «Գրականության մասին» ժողովածուի մեջ. (Ե., 1959) և Երկերի 1964 թ. հրատարակության 2-րդ հատորում՝ հեղինակային բնագրում կատարված փոփոխություններով (Նույնիսկ Բակունցի գործածած Այգեցի ձևը ամենուրեք փոխարինվել է Այգեկցի ձևով):

Ներկա հատորում 1935 թ. «Աղվեսագիրքը» դրված է նույնությամբ՝ երեք մասերով. 1. Բակունցի առաջաբանը (Նախաշավիղ), 2. Այգեկցու առակները՝ նույն դասավորությամբ, 3. Բակունցի ծանոթագրությունները:

Նույնությամբ պահպանել ենք նաև բոլոր վերնագրերը:

Վատարված ուղղումներն են. էջ 516, տողեր 6—10. 1935 թ. բնագրում. Հետագայում առակները փոփոխության են ենթարկվել, մշակվել են՝ բերանացի պատմելով—վերջին բառն ուղղել ենք ելնելով նախադասության բովանդակությունից՝ պատմվելով: Ուղղել ենք նաև 1922 թ. ուղղագրությամբ տպագրված միջին հայերեն և գրարար որոշ հատվածներ. էջ 513, տող 6, էջ 514, տողեր 10—13:

Բակունցը Վարդան Այգեկցու առակները գրական արևելահայերենի վերածելիս ձեռքի տակ է ունեցել Ն. Մառի «Ժողովածոյք առակաց Վարդանայ» («Сборник притч Вардана») աշխատությունը՝ երեք մասից բաղկացած. 1-ին մասը (Պետերբուրգ, 1899) Մառի ծավալուն ուսումնասիրությունն է Վարդան Այգեկցու առակների վերաբերյալ, 2-րդ մասը (Պետերբ., 1894) առակների բնագրերն են, 3-րդը՝ հավելվածն է: Բակունցը առակները գրական արևելահայերեն փոխադրել է բացառապես ըստ Մառի հրատարակած բնագրերի, նախաշավիղը գրելիս և ծանոթագրությունները կազմելիս էլ մեծապես օգտվել է Մառի ուսումնասիրությունից: Նույնիսկ նախաշավիղի սկիզբը («Վա՛յ ինձ, ով իմ որդիներ...») Մառի ուսումնասիրության մեջ բերված (մաս 1, էջ 283) քաղվածքից է թարգմանված:

Մառից մեջ բերված ընդարձակ հատվածը (էջ 514, տող 31—էջ 515, տող 10) ազատ թարգմանություն է հիշյալ աշխատության 1-ին մասի 382-րդ էջից:

Ն. Մառի ուսումնասիրությունից Բակունցի նախաշավիղն են թափանցել նաև անճշտություններ. օրինակ, նախաշավիղի վերջում ասված է. «...1668 թ. Ամստերդամում լույս է տեսել առակների առաջին ժողովածուն»՝ «Աղվեսագիրք» վերնագրով: Երկրորդ անգամ տպագրվել է Մարսելում 1676-ին, երրորդը՝ 1683 թ. դարձյալ Մարսելում և շորրորդը Լիվոնոյում 1698 թվին: Այսպիսով, XVII դարի երկրորդ կեսին շուրջ անգամ տպագրվել են առակների ժողովածուները: Այս ամբողջն առնված է Մառի ուսումնասիրությունից: Իրականում՝ Վարդան Այգեկցու առակները «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Աղուէսագիրք» ընդհանուր վերնագիրն ունեցող գրքի մեջ 17-րդ դարում լույս են տեսել երեք անգամ՝ Ամստերդամում 1669 թ. (տպագրությունն սկսվել է 1668-ին), Մարսելում 1683-ին և Կ. Պոլսում 1698 թ.:

Ներսես Շնորհալու մասին Կիրակոս Գանձակեցուց բերված քաղվածքը (էջ 513, տողեր 15—20) այդ հեղինակի «Պատմութիւն Հայոց»-ից է, ըստ 1909 թ. Թփղիսի հրատարակության (էջ 111): Նախաշավիղի 1935-ի բնագրի մեջ քաղվածքի գրաբարյան ուղղագրությունը ամբողջովին փոխված է 1922 թ. ուղղագրության, ինչպես և տեղ են գտել բառերի ազավաղումներ (որոնք պահպանված են նախաշավիղի հետագա հրատարակություններում): Մենք վերականգնել ենք հատվածի ուղղագրությունը և բառաձևերը Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի լավագույն հրատարակության բնագրում (Կ. Մելիք-Օհանջանյանի պատրաստած, Ե., 1961) նույն հատվածը փոքր-ինչ այլ տեսք ունի. սգի այնպիսի էին կամք սրբոյն, զի թէ հնար իցէ՝ ոչ որ խօսեսցի ի խօսս աշխարհականս, բայց ի գրոց, ոչ ի գինարբուս և ոչ լայլ ուրախութիւնս: Վասն այնորիկ արար նա երգս և ուսոյց այնոցիկ, որ պահէին զբերդն, զի փոխանակ վայրապար ձայնից զայն ասասցեն» (էջ 120): Ներսես Շնորհալու նմանօրինակ գործունեության մասին Գանձակեցին գրել է նաև իր գրքի մի այլ մասում. «Եւ զի լամենայնի հանճարեղ

էր Ներսէս, արար և առակս խորհրդաբարոյ ի գրոց և հանելուկս, զի փոխանակ առաջ-
պիւնաց՝ զայն ասասցեն ի զինարբունս և ի հարսանիս (ն. տ., էջ 147):

Գանձակեցու գրքի այս հատվածները ժամանակին անճիշտ են մեկնաբանվել. դրա
արձագանքն է նաև Բակունցի նախաշավղում ասված հետևյալ միտքը. «Կարելի է են-
թադրել, որ զինվորները «վարպար» խոսում էին բարբառով, որը հայերեն չէր, և ահա
Շնորհալին նպատակ է դնում այնպիսիներին լեզու սովորեցնել, և ինքը հեղինակում է
առակներ և հանելուկներ, որ զրված են ոչ խրթին գրաբարով, այլ պարզ հայերեն»
(էջ 514, տող 3—8); Մինչդեռ որևէ ոչ հայերեն, օտար լեզվի մասին Գանձակեցու գրած-
ներում խոսք չկա: Ասվածը վերաբերում է հայ զինվորների (այսինքն՝ զինվորի զգեստ
հագած հայ շինականների) մայրենի, հայերեն բարբառներին, որոնցով խոսում էին, եր-
զում, պատմում: Շնորհալին ձգտել է, որ բարբառախոս զինվորները (և ոչ միայն նրանք)
երգեն և պատմեն ժամանակի հայոց գրական լեզվով, որն այժմ անվանում ենք միջին
գրական հայերեն: Դա ժողովրդին հասկանալի լեզու էր: Ուստի ճիշտ չէ, որ իբր Շնոր-
հալին ցանկացել է օտարախոսներին հայերեն սովորեցնել: Նա ձգտել է բարբառախոս-
ներին գրական լեզու սովորեցնել, և թե՛ բարբառը, թե՛ գրական լեզուն հավասարապես
հայերեն էին:

Շնորհալին գրել է հին գրական (գրաբար) և միջին գրական հայերենով երկեր:
Առաջինները նախատեսված են եղել գերազանցապես եկեղեցու, երկրորդները ժողովրդի
(այդ թվում զինվորների) համար: Գանձակեցին թե՛ գրաբարը, թե՛ միջին հայերենը
գրոց է անվանում: Եվ իրոք, երկուսն էլ գրի կամ գրվող լեզու էին:

Բակունցի ենթադրության վերջին մասն է հիմնավոր. այն, որ զինվորների համար
Շնորհալու հեղինակած երկերը «գրված են ոչ թե խրթին գրաբարով, այլ պարզ հայե-
րեն». այդ «պարզ հայերենը» հենց միջին գրական հայերենն է, որով գրված են նաև Վար-
դան Այգեկցու շատ առակներ:

Ընդհանրապես, Ա. Բակունցին հայ միջնադարը և միջնադարյան գրականությունը
լրջորեն սկսել են հետաքրքրել, հավանաբար, 1920-ական թվականների երկրորդ կեսից,
բայց հատկապես՝ 30-ական թվականներին: Նա էլ միածին մատենադարանում եռանդով
որոնել է միջնադարյան հայ աշխարհիկ մի ծավալուն վիպերգի ձևազգիր, թեև ապարդյուն:
Ինքը հայ միջնադարի կյանքից գրել է պատմվածաշար, որից առանձին երկեր կարդա-
ցել է ընկերներին ու ծանոթներին: Ապա գրողին հրապուրել է Վարդան Այգեկցու արձա-
կը: Հետաքրքրությունը երկու պատճառ ուներ. նախ. 30-ական թվականների սկզբից Չա-
րենցի շուրջը համախմբված հեղինակների և հենց Չարենցի համար հայ միջնադարյան
գրականությունը սեևոուն ուղադրության առարկա էր դարձել, որ ոչ միայն հայեցողական,
այլև գործնական՝ միջնադարյան որոշ գրական-լեզվական ավանդների կիրառման նշա-
նակություն ուներ: Ապա՝ Բակունցը նույն այդ շրջանում ռճական որոնումների մեջ էր,
հատկապես փնտրում էր խոսքի սեղմության օրինակելի նմուշներ: Մ. Արագին հիշում է.
«Մի ժամանակ նրան շատ մտահոգում էր ստեղծագործության ձևի հարցը:

— Ուզում եմ գտնել մի այնպիսի ձև,— ասում էր նա,— որ լինի ավելի թան-
գարզ, հակիրճ և հասկանալի» («Գրական թերթ», 1959, № 43):

Հայ միջնադարյան արձակը, մասնավորապես Վարդանի առակները այդպիսի լեզվի
լավ օրինակներ տալիս էին և չէին կարող չզրավել գրողի ուղադրությունը:

Այգեկցուն Բակունցը գնահատել է այսպես. «Նա մեկն է այն գագաթներից, որոնց
վրայով է անցնում միջնադարյան հայ քաղաքային մշակութային սահմանագիծը». և ապա՝

«...Վարդան Այգեցին կառուցող վարպետներից է այն հիմքի, որի վրա պետք է բարձրա-
նար միջնադարյան հայ արձակի շենքը: Եվ եթե հետագա «անբարի և խավարայնի» մա-
մանակներում այդ շենքը շրարձրացավ, այնուհանդերձ հիմքը վկայում է կառուցողների,
նաև Վարդան Այգեցու, մեծ վարպետությանը» (էջ. 516, տողեր 15—17, էջ 517 տո-
ղեր 1—6):

Գուցե վիճելի լինեն Վարդան Այգեցուց հետո ստեղծված միջնադարյան հայ ար-
ձակի մասին հայտնված մտքերը («այդ շենքը շրարձրացավ», «այդ արձակը հետագա
դարերում չծավալվեց»), բայց և դրանք, թերևս որոշ հիմքեր ունենան: Մինչդեռ նույն
տեղում չափածոյի մասին ասվածը դժվար թե հիմնավոր լինի և, ըստ երևույթին, հե-
ղինակի համոզումը չի արտահայտում. «միջնադարյան հայ բանաստեղծության առան-
ձին զոհարները չկապեցին ո՛չ թագ, ո՛չ պսակ» (էջ 516, տողեր 35—36): Այգեցուն
և մասամբ միջնադարյան արձակ առակին նվիրված այս ոչ մեծ առաջարկում,
կարծում ենք, հարկ չկար նաև միջնադարյան հայ բանաստեղծությանը զնահատական
տալու: Թերևս, այդ ձևակերպումը գրողն ակամայից զետեղել է իր նախաշավտում՝
տուրք տալով այն քննադատությանը, որ ուղղված էր Ծ. Չարենցի «Ես իմ անուշ-ձ-ի
և նրա հայտնի տողի դեմ՝ «Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ձևկատ չկա»:
Ինչպես հայտնի է, Չարենցն անգամ մի ժամանակ ստիպված եղավ «հրաժարվել» իր
այդ բանաստեղծությունից:

էջ 514, տողեր 10—13. է նա կանաչ բառերով սկսվող բառատողը ներսես Ենոր-
հալու հայտնի հանելուկներից է (վերջին հրապարակումը տե՛ս ներսես Ենորհալի Յա-
ղագս երկնի և զարդոց նորա, Ե., 1968, էջ 38):

էջ 517, տող 28: Fuchsbuch—գերմաներեն է, բառացի նշանակում է Ազվեսագիրք:

Ա Ղ Վ Ե Ս Ա Գ Ի Ր Ք

(էջ 518)

Առակների 1935 թ. բաղնջյան բնագիրը ճշտորեն տպագրելով՝ ուղղագրության
նորացումից և կետագրական ու մեծատառերի որոշ ճշտումներից բացի, կատարել ենք
հետևյալ ուղղումները.

էջ 522, տող 33. 1935 թ. բնագրում՝ բարձրանում էիմ—տպագրական վրիպակ է,
ուղղված է՝ բարձրանում էին:

էջ 527, տող 6. 1935 թ. բնագրում՝ խոսացին—ուղղել ենք՝ խոսեցին:

էջ 527, տող 6. 1935 թ. բնագրում՝ Ձին ասաց—ուղղված է ըստ բովանդակության՝
Եզն ասաց:

էջ 530, տող 33. 1935 թ. բնագրում՝ այս ոչխար—պետք է վրիպակ լինի, ուղղված է՝
այս ոչխարը:

էջ 531, տող 9—10. 1935 թ. բնագրում՝ թագավոր բոլ յուր նայիպին բռնի—ուղղված
է՝ թագավորը բոլ յուր նայիպին բռնի.

էջ 533, տող 29. 1935 թ. բնագրում՝ իմ աղջիկ—կարծում ենք վրիպակ է, ուղղված է՝
իմ աղջիկը:

էջ 534, տող 2. 1935 թ. բնագրում՝ տեսակ տեսակ—ուղղված է՝ տեսակ-տեսակ:

էջ 535, տող 2. 1935, թ. բնագրում՝ երկր երկիր—ուղղված է՝ երկր-երկիր:

էջ 538, տող 11. 1935 թ. բնագրում՝ զգիտես—ուղղված է ըստ բովանդակության՝

չգիտես:

Կան անմիօրինակություններ, որ շնք ուղղել, օրինակ՝ Բակունցը «Աղվեսագրքի» Մանոթություններում երկու անգամ գործածել է ավագը բառածը (էջ 542, տողեր 10, 12, նույնը կա առակի միջնադարյան ձեռագրում, մինչդեռ առակի բակունցյան բնագրում (էջ 522, տող 29) առկա է ավագ էջ անշատ ձևը: Երկու ձևն էլ թողել ենք անփոփոխ: Չենք ուղղել նաև հնացած, նոր գրական հայերենին այժմ անհարազատ, բայց ոճական արժեք ունեցող ձևերը, ինչպես՝ առտաստոփ էին բափվում (էջ 538, տող 6):

Թեև Բակունցի կազմած «Աղվեսագրքի» առակները երբեմն կոչում ենք թարգմանություն, հաճախ՝ փոխադրություն, բայց իրականում նրանք թարգմանական վերարտադրություն չեն և փոխադրություն էլ չեն՝ սովորական իմաստով: Առակներին Բակունցի կցած ծանոթագրությունների ընթերցումն արդեն իսկ պարզ է դարձնում, որ նահաճախ մի առակի տարբեր փոփոխակներից առանձին հատվածներ միմյանց միացնելով՝ առակին տվել է բոլորովին նոր բնույթ, մի շարք դեպքերում էլ սեփական լրացումներն է արել առակների բնագրերում, կրճատումներ է կատարել՝ հաճախ էական և այլն: Ընդ որում, այդ կարգի փոփոխությունների մի մասն է միայն նշված Բակունցի Մանոթություններում:

Միաժամանակ, առակների մի շարք մասեր (որոնք գերակշիռ են), իրոք թարգմանություն են միջնադարյան բնագրերից և ճշգրիտ, ստույգ թարգմանություններ են՝ ոճական հմուտ նմանողականությամբ արված:

Ուրեմն, Վարդանի առակների բակունցյան վերարտադրությունները գրական յուրովի աշխատանքի արդյունք են և իրենց վրա կրում են Բակունցի հեղինակային կնիքը: Ինչպես և, անշուշտ, 1930-ական թվականներին իշխող որոշ մտայնությունների դրոշմը «Աղվեսագրքի» լույս տեսնելը 1935 թ. անակնկալ էր շատերի համար: Հիշենք, որ հայ միջնադարյան գրականությունը այդ տարիներին մերժվում էր՝ իբրև «կղերաֆեոդալական», «ռեակցիոն» և այլն: Բակունցի կազմած «Աղվեսագրքով» նորհրդային Հայաստանում առաջին անգամ հանրային ընթերցանության համար, մեծ տպաքանակով (10.000) լույս էր տեսնում միջնադարյան մի նշանավոր հեղինակի երկերի ժողովածուն: Դա այն օրերի հայոց գրական կյանքում բացառիկ երևույթ էր:

Բակունցի կազմած «Աղվեսագրքի» մեջ տեղ գտած գրական արևելահայերեն 40 առակների լեզվական, գրական առանձնահատկությունների մասին ուշագրավ աշխատանք է գրել Մայիս Ավդալբեկյանը. բարձր գնահատելով Բակունցի աշխատանքն ու արվեստը՝ գրականագետը անդրադարձել է նաև գրողի ծանոթագրություններին այսպես. «Առակների սոցիալական բովանդակության երբեմնի բնութագրումները սեփական են (այսինքն՝ Բակունցին—Ռ. Ի.), բայց ավելի պատմական հետաքրքրություն են ներկայացնում, քան գիտական» («Ակսել Բակունցի ստեղծագործությունը» (հոդվ. ժող.), Ե., 1959, էջ 254):

Համամիտ ենք այս դիտողությանը և պետք է ավելացնենք, որ թեև առակների մեծ մասի բակունցյան վերարտադրությունները՝ գրողի ստեղծագործական կնիքով հանդերձ, պահպանել են հարազատություն միջնադարյան խոսքի և բովանդակության նկատմամբ, բայց մի շարք դեպքերում էլ գրողի ծանոթագրությունների մեջ տեղ գտած որոշ նորարարություններ կարող ենք թվագրել որպես լրացումներ, կրճատումներ, խմբագրումներ: Եվ նոր «Աղվեսագրքում» տեղ գտած մի ոչ մեծ խումբ առակների արտահայտում են ոչ թե Վարդան Այգեկցուն և առհասարակ միջնադարյան առակիները որոշ մտածելակերպ, այլ՝ 1930-կան թվականներին հատուկ մտտեցումներ:

Պրբեմն այդ առակների բնագրերից հանված են ոչ միայն վերջույթները (մեկնություններ)՝ Յուզմնէ առակս սկզբով, այլև Բակունցի ապրած ժամանակի տեսակետից «անհարմար» հատվածներ. օրինակ, «Միայնակեաց և զամբո շուն» առակի մեկնության հետ հանված է նաև այսպիսի հատված առակի բուն բնագրից. «արդ ողորմեայ ինձ Քրիստոս. և խնայ զիս ի ձեռաց սատանայի. և ՚ի նոյն ժամն էթող զնայ դևն պոռնկութեան, որ զղչացաւ և ապայշուեաց» (Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ, ՍՊր, 1893, էջ 9—10. Ուղղագրութիւնը բոլոր քաղվածքներում նույնությամբ պահպանված է): Այս հատվածը շարունակութիւնն է Բակունցի անավարտ թղթած նախագաստության (էջ 519, տող 30): Նախագաստությունն ամբողջությամբ մերժումն է անառակության և շունի այն իմաստը, ինչ առակը ստացել է նախագաստութիւնը կեսից կրճատված վիճակում: Ընդ որում, առանց այդ կրճատման առակին լիովին համապատասխան է Վարդանի տված մեկնութիւնը. «Յուցանէ առակս, թե շատ մարդիք ապրին ի մեղաց և ի դժոխոց ի յահէ արիւնաց և յամաւթոյն և ի նախատանաց» (նույն տեղում, էջ 26):

Առհասարակ, Վարդանի անուեով հայտնի առակների մեծ մասը հեղինակային ստեղծագործութիւններ են: Վարդանը, ինչպես ամեն հեղինակ, նյութ հավաքելու համար զգտնել է տարբեր աղբյուրներից՝ ժողովրդական բանահյուսութիւններից, Եզդասի և Ոլլիմպիանոսի առակներից, Բարդայխոս (Ֆիդիոլոզ) ժողովածուի նյութերից և այլն, բայց հավաքածը մշակել է որպես հեղինակ: Այգեկցու միևնույն առակի տարբերակներն անզամ բովանդակությամբ կամ առանցքով միասնական են: Եվ ամեն առակի բաղադրիչ մասերը, այդ թվում վերջույթը («Յուցանէ առակս»), մեծ մասամբ անկապտելի մասերն են ամբողջի: Չի կարելի համաձայնել այն տեսակետին, ըստ որի միջնադարյան առակների քաղք վերջույթները կամ մեկնութիւնները բարդախոսական ավելորդ կցորդներ են: Շատ դեպքերում հակառակն է դիտվում: Օրինակ, «Մուկն և ուղտ» առակի մեկնութիւնը բուն առակի բնականոն շարունակութիւնն է, առանց որի ասակը կիսով չափ է հասկանալի, բայց հանված է նոր խմբագրման մեջ. «Յուցանէ առակս, թէ շատ ի հարստութենէ հպարտանայն. և այլ ի փառաց աշխարհիս, որ գայ նոցա, և այլք ի գիտութենէ. իսկ որ խելք ունի, նայ յորժամ որ փառք աշխարհիս գայ, նայ յայնժամ խոնարհի և հեզ լինի, որ գտվի ի յԱստուծոյ և ի մարդկանէ» (նույն տեղում):

Ամեն դեպքում մեկնութիւնների հանումը Վարդանի առակների նվազագույն չափի փոփոխումն է: Խմբագրումները երբեմն շատ ավելի խոր են թափանցել: Օրինակ, «Աղքատ և երէց և Աւետարան» առակի բովանդակութիւնը անճանաչելի է փոխված (էջ 528, տողեր 6—29): Նախ այդ վերնագիրը չի պահպանված, նրանից հանված է և Երեց-ը, մինչդեռ առակն ամբողջությամբ երեցին է վերաբերում: Վերնագրի այդպիսի կրճատման համապատասխան խմբագրված է այնպես, որ լիովին փոխվել է բովանդակութիւնը: Այգեկցու առակն ուղղված է երեցի կամ քահանայի դեմ, որը չի հետևում Ավետարանի հանձնարարականին՝ աղքատներին ու զրկվածներին օգնելու վերաբերյալ: Ընդ որում, առակի երկու տարբերակներում էլ դա է բովանդակութիւնը, ինչպես և այն, որ քահանան վերջում ընդունում է իր սխալը: Եթե միայն այդ վերջին մասը հանվի, առակի բովանդակութիւնը չի փոխվի, բայց արմատական խմբագրման հետևանքով առակը դարձել է այնպիսին, որպիսին չէր կարող գրել Այգեկցին և չի գրել: Նոր խմբագրման մեջ, օրինակ, չկա հետևյալ հատվածը, որ վատ կողմից է բնութագրում քահանային. «և արձակեաց էրէցն ժամն և զնաց և եթող զաղքատն անդ և ոչ տարաւ ի տուն. գիտէր էրէցն»

և ոչ արար»: Այսինքն՝ քահանայի պարտականությունն էր աղքատին իր տունը տանել, կերակրել, հագցնել, բայց նա չի արել: Սա է առակի առանցքը, որ հանվել է: Նոր խմբագրման մեջ լիակ աղքատի հետևյալ խոսքերը, որոնք նա ասում է իրեն ծեծող քահանային. «Մի յարկաներ զես, թէ հանց կու հաւատաս, որ աւետարան է խօսք Քրիստոսի, ընդէր ոչ կատարեցեր, զոր կարողացեր. ես օտար էի և ոչ ժողովեցեր, մերկ էի և ոչ զզնցուցեր, քաղցեալ էի և ոչ կերակրեցեր» (նույն տեղում, էջ 264): Հանված է նաև արա անմիջական շարունակությունը՝ «և էրէցն ամօթալից եղև ու ավարտը՝ «պարտ է հաւատալ և կատարել, որ հրամայել է: Առակի տարբերակը ավարտվում է այսպես. «Մի՞թե Աստուած ինչ սակասութիւն ունէր, որ իւր համար ասաց զայն. վասն կարօտեաց և աղքատաց համար ասաց, թէ որ ի փոքրականցս յայնցանէ միոյն արարէք, նա ինձ արարէք. դարձեալ՝ որ ողորմին աղքատին, փոխ տայ Աստուծոյ» (նույն տեղում, էջ 265): Այս հատվածն էլ կրճատվել է այնպես, որ լիովին հակառակ միտքն է ստացվել:

Այսպիսի խմբագրման ենթարկված առակները, բնականաբար, ճիշտ չէ դիտել Վարդան Այգեկցու երկեր, և նրանց միջոցով որոշել Այգեկցու մտածելակերպը կամ միջնադարյան հայ արձակի բնույթը: Ուստի ճիշտ չի վարվել Հայպետհրատը միջնադարյան առակների 1930-ական թվականների վերոհիշյալ բնույթի խմբագրումները առակների մյուս թարգմանությունների հետ 1955 և 1972 թթ. ներկայացնելով իբրև զուտ Վարդան Այգեկցու հեղինակած երկեր (վերափոխման և խմբագրման մասին ակնարկ անգամ չանելով): Բակունցն իր կազմած «Աղվեսագրքի» Մանգրույուններում բարեխղճություն է ունեցել բացատրություններ տալու, հասկացնելու այդ մասին, իսկ նոր հրատարակիչները իրավունք են համարել առակների բակունցյան վերարտադրությունները լույս ընծայել առանց Մանգրույունների:

Այժմ դժվար է որոշել, թե Վարդանի անունով հայտնի մի քանի առակների մեջ վերոհիշյալ բնույթի փոփոխումները, կրճատումներն ու լրացումները Բակունցի ինքնակա մտածողացման արդյունք են եղել, թե՞ տուրք էին ժամանակի որոշ պահանջներին՝ «Աղվեսագիրքը» գոնե այդ կերպ հրասպարակ հանելու նպատակով:

Իրողությունն այն է, որ «Աղվեսագիրքը» նույնիսկ այդպիսի խմբագրումներով և հարմարեցումներով հանդերձ սվիներով ընդունվեց այն մարդկանց կողմից, որոնք կարծես հատուկ առիթի էին սպասում, որպեսզի «Աղվեսագրքի» կազմողի ու առակների վերարտադրողի հասցեին լուրջ մեղադրանքներ տեղային:

«Գրական թերթում» 1934 թ. նոյեմբերի 29-ին տպված 8 առակների առթիվ «Սովետական արվեստը» հրասպարակեց ծաղրանկար և երկար մեկնաբանություն («Եթորհրդային արվեստ», 1934, № 13, դեկտ. 31, էջ 10), որտեղ Բակունցը մեղադրվում էր այն բանի համար, որ նոր գրական լեզվի է վերածել ու որոշել է հրասպարակել առակները, իսկ «Գրական թերթն» ու Պետհրատը դատապարտվում էին, որ հանձն են առել տպագրելու Մաղրանկարում Պետհրատի տնօրենն ասում է. «...այդ «թարգմանությունների» մի մասը տպագրվեց «Գրական թերթ»-ում, և թերթի ասելով ընթերցողները «հասփշտակությամբ կլանեցին»: Աղվեսը պատասխանում է. «Կլանեցի՞ն, Բայց վախենում եմ, որ այդ ձևով շատերը ստամոքսի լուրջ խանգարումներ ստանան»: Ապա հանդեսի խմբագրությունը հարց է տալիս, թե ինչու՞ Պետհրատը հրատարակում է «Աղվեսագիրք» և ոչ թե Եզոպոսի, Լաֆոնթենի, Կոիլովի առակները. հետևում է սպասախանը, ըստ որի՝ «եթե Պետհրատը վաղաժամ է համարում» այդ այլազգի հեղինակների առակների հրատարա-

Այժմը, «Յերևա, դաստիարակչական և զառչարական տեսակետից, ապա առավել այդ Կարող է վերաբերել «Աղվեսագրքին»:

Հանդեսի հաջորդ համարում երկու մեծագիր էջ տրամադրվեց նույն կարգի մեղադրանքներին՝ «Աղվեսագրքի» և լիբերալիզմի թակարդի ընկած աղվեսների մասին՝ վերնագրի տակ («Ենորհրդային արվեստ», 1935, № 1, հունվ. 15, էջ 6—7): «Գրական թերթը» մեղադրվում էր այն բանի համար, որ «չմտածված շտապողականությամբ աշխատել էր առակների մի մասը, որպես իդեոլոգիական դաստիարակության զովացուցիչ պիլուններ «կլացնել» տալ ընթերցողներին... Մեր ընթերցողները հարկ եղած կերպով քննադատորեն արժեքավորելով Այգեկցու առակները, հակառակ «Գրական թերթ»-ի խմբագրության հավաստիացումներին «կլանում են» ոչ թե վերոհիշյալ առակների մտալը, այլ շտեմնված ոգևորությամբ դիմավորում են բողեբիկյան արվեստի լավագույն նմուշներին մեկը՝ «Զուպակը»:

«Աղվեսագրքի» կապակցությամբ ավելի խիստ արտահայտություններ էլ արվեցին գրողի հասցեին (տե՛ս «Ենորհրդային Հայաստան», 1935, № 107, մայիսի 11, խմբագրական): Եղան նաև Բակունցին պաշտպանողներ («Գրական թերթ», 1935, № 1, հունվ. 10), բայց, իհարկե, իշխեց մեղադրանքների գիծը: Իրոք, ինչ կլինեք, եթե «Աղվեսագիրքը» նույն տպաքանակով աշխարհաբար լույս տեսներ լիովին ըստ վարդան Այգեկցու:

Մ Ա Ն Ո Ք Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

(էջ 540)

Բակունցը իր վերարտադրած բոլոր առակները չէ, որ ծանոթագրել է: Չեն ծանոթագրվել «Իմաստուն զինվոր», «Կոռունկ՝ թագավոր թուշունների և էջ», «Եշին թոռ ծնվեց», «Այրի կին և խորթ որդի», «Մուկն և ուղտ», «Գայլ և աղվես և ջութի», «Գող քահանա և այրի կին» առակները:

Ինչպես վերն ասվեց, Ծանոթությունները կազմելիս գրողը օգտվել է Ն. Մառի վերոհիշյալ աշխատությունից՝ զխավորապես առաջին մասից, որտեղից և Ծանոթությունների ու առաջարանի մեջ են թափանցել բոլոր անճշտությունները:

Բացի դրանից, մի շարք քաղվածքներ, որոնք գրաբար են կամ միջին հայերեն, աւստի պետք է դասական ուղղագրությամբ գրվեին, Բակունցը գրել է նոր ուղղագրությամբ (Ինչպես Ծանոթություններում, այնպես էլ «Սախաշավղում»): Առավել շփոթեցնող զեպքերում նոր ուղղագրությունը դարձրել ենք դասական:

Միևնույն առակը բնագրում (էջ 528, տող 30) վերնագրել է Հայր ու որդի, Ծանոթություններում՝ Հայր Երզի (էջ 545, տող 16): Այս վերջինը համապատասխանեցրել ենք բակունցյան բնագրի վերնագրին:

Ծանոթություններում հիշատակված հեղինակների անունները՝ Եզոպոս, Սոֆոկլես, Ոլիմպիանոս, Լոման և այլն, ինչպես և որոշ երկերի վերնագրեր՝ «Բարոյախոս» (Յիզիոլոգ), «Կայիլա և Իմնա», Ոսկեփորիկ (միջնադարյան հայերեն ժողովածու), Պանչանտրա և այլն առնված են Ն. Մառի վերոհիշյալ աշխատությունից:

Գրականության և արվեստի թանգարանում պահվում է Բակունցի հետևյալ նամակը (ինքնագիր) ուղղված Կարեն Միքայելյանին:

Միրելի Կարեն,

«Ազգեսագիրքը» լույս տեսավ, մի օրինակ ուղարկում եմ Ձեզ. որպես խոստացել էի: Ինչ վերաբերում է ուսերեն հրատարակության՝ սուր ջո և պարանոց մեր. տնօրինիր, ինչպես թե՛ք կուզի: Մամիկոն Գևորգյանը ևս մի նամակ է գրել Ջիվելեզովին, որպեսզի «Ազգեսագիրքը» հրատարակի Academia-ն: Ռուսերեն հրատարակության ղեկավարմ կարճ՝ ևս իմ պարտքը կատարեցի և եթե հարկ լինի, ավելին կանեմ, որպես զի ուսներն էլ կարգան մեր Այգեցուն: Մնացածը՝ դու գիտես:

Փռ Ակսել

16. 2. 35

Որեմն, ծրագիր է եղել Բակունցի վերարտադրած և կազմած «Ազգեսագիրքը» հրատարակել ռուսերեն: Ինչպես նամակում է ասված, գրողը ծրագրել է՝ ռուսերեն հրատարակության համար ավելացնել առակների քանակը, փոխել առաջարանն ու ծանոթությունները և եթե հարկ լինի ավելին անել: Արդյոք առակների մի մասի վերարտադրությունները նույնպե՛ս ևս մտադիր է եղել վերանայել՝ բնագրերին հարազատ դարձնելու նպատակով: Հնարավոր է, որ նման նպատակ էլ եղած լինի, քանի որ հրատարակիչը պետք է լիներ Academia-ն, որը բնագրերի հարազատությունը պահպանելու տեսակետից կարող էր պահանջվող լինել: Բայց և հազիվ թե 1930-ական թվականներին որևէ հրատարակչություն հանձն առներ նույնությամբ հրատարակելու Այգեկցու առակները:

Ինչ վախճան է ունեցել «Ազգեսագիրքը» ռուսերեն տպագրելու ծրագիրը, չգիտեմք, համեմայն ղեկավար, վերոհիշյալ գծավորությունները հաղթահարելը հեշտ գործ չէր: Հնարավոր է նաև, որ հրատարակչությունը խափանվել է 1936-ի ամռանը Բակունցի «անհայտ քաղաքացիական» պատճառով:

Ա Յ Լ Խ Մ Բ Ա Գ Ր Ո Ւ Մ Ն Ե Ր

Վ Ա Ղ Ը Մ Ա Բ Տ Ի 8-ն է

(էջ 551)

Տպագրվում է ըստ պատմվածքի առաջին հրատարակման՝ «Հայաստանի աշխատավորուհի», 1927, № 2 (փետրվար), վերնագրից ձախ՝ Ակսել: Այդ բնագրում կատարված ուղղումներն են.

էջ 551, տողեր 5—6. ՀԱ-ի բնագրում՝ Եվ այնքան վառ էր—ուղղված է ըստ ՍԶԺ-ի բնագրի՝ Եվ այնքան վա՛ռ էր:

էջ 551, տող 26. ՀԱ-ի բնագրում՝ Ի՞նչ ա, հասկանում է խեղճը, որ շանչ ևս անում—տպագրական վրիպակ պետք է լինի, ուղղված է ըստ ՍԶԺ-ի բնագրի՝—Ի՞նչ ա հասկանում, է՛, խեղճը, որ շանչ ևս անում:

էջ 552, տող 25. ՀԱ-ի բնագրում՝ Այնքան սիրուն է Փառանձներ—հավանաբար վրիպակ է, ուղղված է ըստ բովանդակության (նախորդ և հաջորդ նախադասությունների բաշերը անցյալ անկատար են), որ և հաստատվում է ՍԶԺ-ի համապատասխան հատվածով՝ Այնքան սիրուն էր Փառանձներ:

էջ 553, տող 17, շԱ-ի բնագրում՝ դարտամի—ուղղված է ըստ նույն բնագրում քառի այլ գործածութեան (էջ 551, տողեր 9—10), որ և ավելի համապատասխան է թվում գորիսյան արտասանութեանը՝ դարաղամի:

էջ 556, տող 24. շԱ-ի բնագրում՝ Մինան տեսավ—ուղղված է ըստ ՍԶԺ-ի բնագրի, որ և համապատասխան է շարակարգի բովանդակութեանը՝ Մինան եկավ:

էջ 558, տողեր 2—3. շԱ-ի բնագրում պատմութիւն և արդեն վերջացրել ու նայում էր—պետք է տպագրական վրիպակ լինի, ուղղել ենք ըստ ՍԶԺ-ի բնագրի՝ պատմութիւնն արդեն վերջացրել ու նայում էր:

Չուղղեցինք բարբառային — արտասանական գրութեան այնպիսի ձևեր, ինչպես՝ քոք, աղչի, ջանի կամ բարբառային անհամաձայնութիւններ՝ շատ մտքը են կկել (էջ 554, տող 31) և այլն:

Պատմվածքի և նրա նախակերպարների մասին տեղեկութիւնները՝ տե՛ս հիմնական բնագրի ծանոթագրութիւններում:

Շ Ա Վ Ե Լ Վ Ա Ս

«ԵՐԲ ՈՐ ԲԱՅՎԵՆ ԴՌՆԵՐ ՇՈՒՍՈ»

(էջ 561)

Պատմվածքը հրատարակվում է առաջին անգամ: Բնագրային աղբյուրն է Երևանի գրականութեան ու արվեստի թանգարանում պահվող ձեռագիրը: Գրված է հեղինակի ձեռքով 13 փոքրագիր (13×20,5 սմ) թերթիկների վրա (յուրաքանչյուրի մեկ էջում): Քուլթը սպիտակ է (թիչ դեղնած), փայլուն: Յուրաքանչյուր էջում կա 35—36 տող: Վերջում ստորագրված է՝ Ակսել Բակունց, որից ցած, ձախ կողմում դարձյալ հեղինակի ձեռագրով փակագծում գրված է՝ Герусы, Агроному Ал. Бакунцу: Ամեն էջի վերևի ձախ անկյունում գրված է համար, այդպես՝ 1-ից մինչև 13: Թվական չկա: Բնագրում կատարել ենք հետևյալ ուղղումները.

էջ 561, տող 5. Ձ-ում վիզկապ—ուղղել ենք՝ վզկապ:

էջ 561, տող 8. Ձ-ում՝ լրագիր կկարդա՞ք կոր—հարցական նշանը տեղում չէ, ուղղել ենք՝—Լրագիր՞ կկարդա՞ք կոր:

էջ 562, տող 9. Ձ-ում՝ շոքի դեմ (չի բացառվում, որ խոսակցական ձևի գերազանհատութիւն է, ինչպես Բցել-ը, որ այն ժամանակ գրողը հաճախ էր գործածում, բայց ավելի հավանական է, որ վրիպում է)—ուղղել ենք շոքի դեմ:

էջ 562, տող 13. Ձ-ում՝ պտրտավում—հավանաբար վրիպում է—ուղղել ենք՝ պտրտում:

էջ 562, տող 26. Ձ-ում՝ «ձայնը հնչեց...»—երգի առանձին տող է, ուղղել ենք՝ «Ձայնը հնչեց...»:

էջ 563, տող 15. Ձ-ում՝ Լա հազիվ էր յուր բանձրամիտ մարմնի ծանրություն ոտքերին բարձել—հավանաբար, վրիպում է, ուղղել ենք՝ Լա հազիվ էր յուր բանձրամիտ մարմնի ծանրությունը ոտքերին բարձել:

էջ 564, տողեր 13—14. Ձ-ում՝ «Պազ աղբյուրի ջուր...»—ուղղել ենք՝ «Պազ աղբյուրի ջուր...»:

էջ 564, տող 23. Զ-ում՝ «Երևելի հայկական անուն ունիս»—ուղղել ենք՝ «Երևելի քայկական անուն ունիս»:

էջ 565, տող 31. Զ-ում՝ գոլորշացավ—ուղղված է՝ գոլորշիացավ:

էջ 566, տող 25. Զ-ում՝ «Երբ զենև ու զբահից...»—ուղղել ենք՝ երբ «զենև ու զբահից...»:

էջ 567, տող 4. Զ-ում՝ Գետաձոր, վրիպում է—ուղղել ենք՝ Գետազարձի:

էջ 568, տող 12. Զ-ում՝ Իր սենյակ մտնելուց առաջ—ուղղել ենք՝ Իր սենյակը մտնելուց առաջ:

Կատարել ենք նաև մի քանի կետադրական ու այլ կարգի աննշան շտկումներ: Դյուր գալ-ը, դյուրալի-ն, դյուր եկավ-ը (էջ 565, տողեր 32, 34, էջ 566, տող 23) դարձրել ենք դուր գալ, դուրալի, դուր եկավ: Որոշ հնաբանություններ թողել ենք, այդ թվում դիտել Մաւրաթին (էջ 564, տողեր 25—26), Արարատին դիտելուց հետո (էջ 564, տող 28) ձև-վերջը: Ի տարբերություն գրողի այլ ձեռագրերի, այս մեկի մեջ նկատելի է անփութություն. շատ են հեղինակային վրիպումները: Արդյո՞ք շտապ գրված սևագիրը չէ:

Պատմվածքի ձեռագիրը, մի ուրիշի հետ (տե՛ս «Կածանով» ակնարկի ծանոթագրությունները) Ա. Կարինյանը հանձնել է գրականության և արվեստի թանգարան՝ հայտնելով, որ երկու ձեռագրերն էլ հեղինակը ներկայացրել է իր խմբագրած «Պայթար» գրական շաբաթաթերթին հրատարակելու համար: Ձեռագրի տակ հասցեի առկայությունը վկայում է, որ պատմվածքը գրվել է այն ժամանակ, երբ Բակունցը հաստատված է եղել Գորիսում: 1923 թ. հուլիսին հարկովից գալով Գորիս՝ նա այդտեղ մնացել է մինչև սեպտեմբեր (կամ օգոստոս), ապա տեղափոխվել է Երևան, այնուհետև, 1924 թ. հոկտեմբերի էրկրորդ կեսին նորից է մեկնել Գորիս և այդտեղ բնակվել մինչև 1926-ի մարտը: Եթե վստահելի է Ա. Կարինյանի տված տեղեկությունը, ապա պատմվածքը Բակունցը գրել է 1923 թ. հիշյալ ժամանակամիջոցում, քանի որ «Պայթարը» հրատարակվել է միայն 1923-ին: Բայց չի բացատրվում, որ Ա. Կարինյանի տված տեղեկությունը ստույգ չէ (նա «Կածանով» ակնարկի ձեռագիրն էլ է «Պայթարին» հանձնված նյութերից համարել, որ սակայն չի հաստատվում), և պատմվածքը «Պայթարին» չի կղել հանձնված: Այս դեպքում այն կարող է գրված լինել 1924, 1925 թվականներին, բայց ոչ ուշ, քան 1926-ի մարտը:

Ակսել Բակունց ստորագրությունը նույնպես թիչ բան է ասում այս կապակցությամբ. 1924 թվականից գրողը սովորություն ուներ իր գեղարվեստական երկերը ստորագրելու Ակսել, թեև՝ թե՛՛ այդ, թե՛՛ հաջորդ թվականներին երբեմն ստորագրում էր նաև Ակսել Բակունց՝ հատկապես ամսագրերին և շաբաթաթերթերին տված նյութերի տակ (օրինակ, «Նոր Ակոս», 1924, № 7):

Այս պատմվածքը մեկն է գրողի այն երկերից, որոնցում պատկերված են սփյուռքահայ գործիչներ. այդ խմբի մյուս գործերից են «Հովնաթան Մարչը» (Երկերի սույն հրատարակության 3-րդ հատոր) և «Տրանզիտ Վձ Բայանդուր»-ը (այս հատորում): Կարծում ենք, ավելի հաջողված է «Հովնաթան Մարչը», իսկ ամենաթույլը, ըստ երևույթի, «Երբ որ բացվեն...»-ն է: Երկուսում էլ սփյուռքահայ գործիչը գալիս է Հայաստան, և ցույց է տրվում նրա անտեղյակությունը իրական Հայաստանից, վրիպանական, հաճախ պատրանքային հայրենասիրությունը: Ե. Սայանը ժամանակին նկատել է, որ Բակունցի Մարչը կենդանագիրն է արտասահմանն ունեցող միսիոնով Հայաստան եկող

գաղութահայի, և որուն մեջ, որոշ շահով ամեն մեկս կարող ենք ինքզինքնիս գտնել» (Ձ. Եսայան, Պրոմեթեոս ազատագրված, Մարսել, էջ 154):

«Երբ որ բացվեն դռներ հուսո» պատմվածքը «Շոքման Մարշի» նախափորձն է, նրա դեռևս շատ նախնական, անմշակ մի տարբերակը: Բացի դրանից, այս պատմվածքի երևան գալն ունի այլ դրդապատճառներ. նախ այդ ժամանակ սուր էր պայքարն ընդդեմ անցյալի որոշ քաղաքական մտայնությունների, և Ա. Բակունցը՝ իր ազգական, Հ4(բ)4 Կենտկոմի քարտուղար Երեմիա Բակունցի կողմից դեռևս 1923 թվականից ներքաշվել էր այդ գործի մեջ: Նա համապատասխան բովանդակությամբ գեկուցում տվեց, հողվածները գրեց մամուլում (տե՛ս «Եսոյհայի» Հայաստան» 1923, № 206, 215, 261, 262) և այլն: Այս պատմվածքը, թերևս, այդ շարքի օղակներից է եղել, և «Շոքման Մարշից» ու «Տրանզիտ Վիձ Բայանդուր»-ից տարբերվում է նաև նրանով, որ քննադատությունը միայն սփյուռքահայ գործչին չէ, որ վերաբերում է:

«Երբ որ բացվեն...» պատմվածքում, թերևս, կարելի է նկատել նաև արձագանքը Բակունցի որոշ հիասթափությունների, որոնք այլ կերպարանքով մասամբ սկիզբ էին առել դեռևս 1918 թ. կարին-Կարս-Ալեքսանդրապոլ դժբախտ իրադարձությունների ժամանակ:

Ամեն դեպքում, Բակունցի նման արվեստագետը չէր կարող չզգալ, որ «Երբ որ բացվեն...»-ը ինչ-որ շահով բունազրոսիկ է ստացվել, և զուցե հենց իր խնդրանքով է, որ այն չի հրապարակվել ժամանակին: Համենայն դեպս, եթե ճիշտ է, որ այն «Պայքարին» է հանձնված եղել և եթե նրա խմբագիրն ինչ-ինչ պատճառներով չի կարողացել տպագրել՝ հակառակ Բակունցի ցանկության, ապա գրողը, ցանկանալու դեպքում, կարող էր այդ կամ հաջորդ թվականներին հրապարակել որևէ այլ պարբերականում: Բայց փաստ է, որ չի հրապարակել: Ուրեմն չի ցանկացել: Խոչ էլ եղած լինի, Երկերի ակադեմիական հրատարակության մեջ այս պատմվածքը պետք է տեղ գտներ: Նկատի առնելով, որ գրելուց հետո որոշ ժամանակ անց հեղինակը կարող է և սրտած լինել առհասարակ հրապարակել պատմվածքը, ինչպես և պատմվածքը գրելու թվականի անորոշությունը (որ թույլ չի տալիս այն տեղադրել հաստորի պատմվածքների ժամանակագրական շարքում),— որոշեցինք այս երկը տպագրել հավելվածում:

էջ 561, տող 1, էջ 567, տող 28. «Երբ որ բացվեն դռներ հուսո» և հետո՝ էջ 567, տողեր 29, 32. Եվ մեք երկրեն փախա առ մեռ... Ցանկամ տեսնել զիմ կիլիկիա...— «Կիլիկիա» երգի (խոսք Ն. Ռուսինյանի) առաջին, երկրորդ և յոթերորդ տողերն են:

էջ 562, տող 26. «Ձայնը հեշեց էրգումի հայոց լեռներեն»— սկզբնատողն է ազգային-մարտաշունչ երգի, որի տարբերակներից մեկը սկսվում է այսպես.

Ձայն մը հեշեց էրգումի հայոց լեռներեն,
Թունդթունդ ելան հայոց սրտեր գեների շարժումեն:

էջ 564, տողեր 29—30. «միևնև ծովը Վրկանա»—կա նաև «Ղաղթակաև հավաք» ակնարկում (տե՛ս ծանոթագրությունները):

էջ 565, տող 9 և հետո. Պետրոս Գետադարձ—հայոց կաթողիկոս 1019—1058 թթ., որ բյուզանդական ուժով կողմնորոշում ուներ: Նրա միջոցով Հովհաննես Սմբատ թագավորի կտակը՝ Անիի Բյուզանդիային հանձնելու մասին, 1023 թ. մատուցվեց Բյուզանդիայի կայսր Բարսեղ II-ին: 1045 թ. նա Վեստ Սարգսի հետ Անիի բանակները հանձ-

Նեց բուզանդացիներին, որով վերջ տրվեց հայոց Բագրատունյաց թագավորութիւնը, և հող ստեղծվեց Անին սելջուկների կողմից 1064 թ. գրավվելու համար:

էջ 566, տողեր 25—26. «ԳեճԷ ու գրահից քնդում էր լեռին»—նկատի ունի 1915 թ. կամավորական շարժումը (տե՛ս նաև «Ծանոթ բակը» ակնարկում):

էջ 567, տողեր 26—27. Նրա ծայրը հնչում էր «Բամբ, որատան»—երգիծորեն նկատի են առնված (ու փոփոխված) «Օն անդր առաջ» երգի առաջին բառերը. «Բամ, փորոտան» (խոսք Ղ. Ալիշանի):

էջ 569, տող 29. Վիլսոնը—խոսքը ԱՄՆ-ի քաղաքական գործիչ Վուդրո Վիլսոնի մասին է (1856—1924), որ պրեզիդենտ էր 1913—1921 թթ.: Հայտնի է առաջին համաշխարհային պատերազմից հետո Հայաստանի սահմանները որոշող վիլսոնյան ծրագիրը, որ վավերացվեց Սևրի դաշնագրով (1920 թ.) և որով առաջարկվում էր հայկական պետության համար տրամադրել ընդարձակ մի տարածք Սև ծովից հարավ-արևելք՝ դեպի ծով ելք ունեցող: Այդ ծրագիրը մնաց միայն թղթերի մեջ և խանդավառաց շտապ ազդեցություն չարդարեց:

էջ 570, տող 18. Նուան կլեպ պոռոզ—մի տող ժողովրդական երգից, որ հիշված է նաև Բակունցի «Սև «հացը» պատմվածքում (տե՛ս Երկերի սույն հրատարակության 1-ին հատորը): Երգի մի տարբերակը հրապարակված է Մ. Արեղյանի «Ժողովրդական բառիկներում» (Երևան, 1940, էջ 222, № 716):

Շ Ա Տ Ե Ր Ի Ց Մ Ե Կ Ը

(էջ 576)

ОДИН ИЗ МНОГИХ

(էջ 571)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը ուսերեն է՝ «Զարյա Վոստոկա» օրաթերթի 1925 թ. մարտի 15-ի համարում (№ 827) Այժմ տպագրվում է երկրորդ անգամ ըստ «Զարյա Վոստոկայի» բնագրի:

Ուղղումներ.

էջ 572, տող 26. Զվ-ի բնագրում до зареза—ուղղված է՝ до зарезу:

էջ 574, տող 9. Զվ-ի բնագրում шопотом—ուղղված է՝ шепотом:

Լրագրում վերնագրից հետո փակագծում տպված է՝ От нашего зангезурского корреспондента, վերջում՝ Аксель.

Ակնարկը թարգմանել է Լիանա Հովսեփյանը:

Ա. Բակունցն առհասարակ ուսերեն գրում էր, բայց հնարավոր չէ ստույգ որոշել, թե այս ակնարկը նախապես ուսերեն է գրել, թե՛ հայերեն: Որոշ արտահայտություններ մտածել են տալիս, որ թարգմանված է հայերենից և այն էլ ոչ հեղինակի կողմից (տե՛ս նաև «Багратаван» ակնարկի ծանոթագրությունը):

Ցայի (այժմ Հարժիս) գյուղը, որի դպրոցն ու ուսուցիչն են ներկայացված ակնարկում, Գորիսի շրջանում է, շրջկենտրոնից հարավ-արևմուտք:

էջ 578, տողեր 26—27 (հայերեն). տեղական «Ռաշպարն» է. էջ 573, տող 18 (ուսերեն) Местная еженедельная «Рацпар» —խոսքը Գորիսում 1921 թվականից մինչև 1930-ը հրատարակված «Կարմիր ուշապար» գյուղացիական թերթի մասին է:

էջ 579, տող 3 (հայերեն). զավասական քաղաքի կյանքից, ապա՝ ստիպված քաղաք ենք գնում. էջ 573, տողեր 29—32 (ռուսերեն) уездного города, ապա՝ приходится идти в город—այդ քաղաքը Գորիսն է:

Բ Ա Դ Ր Ա Տ Ա Վ Ա Ն

(էջ 586)

БАГРАТАВАН

(էջ 581)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը ուսուցիչ է՝ «Զարյա Վաստկա» օրաթերթի 1925 թ. ապրիլի 3-ի համարում (№ 841): Այժմ տպագրվում է երկրորդ անգամ՝ ըստ նույն բնագրի:

Կատարված ուղղումներն են.

էջ 582 տողեր 8—9. ԶՎ-ի բնագրում՝ пум из одного из домов—ուղղված է՝ шум из одного дома:

էջ 583 տողեր 18—19. ԶՎ-ի բնագրում՝ кроме его—ուղղված է՝ кроме него:

էջ 584 տողեր 27—28 ԶՎ-ի բնագրում покою—ուղղված է՝ покоя:

Լրագրում վերնագրից հետո փակագծում տպված է՝ От нашего зангезурского корреспондента, վերջում Аксель, ձայն կողմում կա՝ Герюсы:

Քարգմանել է Լ. Հովսեփյանը:

Ակնարկը պետք է գրված լինի 1925-ի ձմռանը: Զի կարելի բացառել, որ հեղինակը, որպես «Զարյա Վաստկայի» թղթակից, նյութը գրած լինի ուսուցիչի՝ հատուկ այդ թերթի համար: Թեև Բակունցի ակնարկներից ու պատմվածքներից մի քանիսը, որոնք տպագրվել են «Զարյա Վաստկայում», անտարակույս նախապես գրվել են հայերեն, ապա թարգմանվել ուսուցիչի (օրինակ, «Մինա Բիրի») պատմվածքը.—տես Երկերի սույն հրատարակության առաջին հատորում:

Բազմաթիվ Միսիսի շրջանի Բազարչայ գյուղի հին անունն է: Բազարչայը Երեւանից Եղեգնաձորով Գորիս գնացող խճուղու վրա է, Աղիզբեկովի շրջանի սահմանին մաս: Այժմ այդ գյուղը պետք է տեղափոխվի մոտակա սարահարթը, քանի որ նրա տեղում լիճ է լինելու:

Թուսերեն молокоը բառը այժմ հայերեն տառադարձվում է մուլկան ձևով, սակայն քանի որ Ա. Բակունցն ունի գործածած մալական ձևը (տե՛ս, օրինակ, «Քիչանագ» ակնարկը), ուստի այն թողեցինք նաև «Բազարտավան» ակնարկի թարգմանության մեջ:

Մ Ե Ր Գ Յ Ո Ւ Ղ Ե Ր Ո Ւ Մ (Թ)

(էջ 596)

ПО СЕЛАМ ЗАНГЕЗУРА

(էջ 591)

Մեզ ծանոթ առաջին հրապարակումը ուսուցիչ է՝ «Զարյա Վաստկա» օրաթերթի 1925 թ. հունիսի 3-ի համարում (№ 891): Այժմ տպագրվում է ըստ նույն բնագրի: Ուղղում.

էջ 592, տող 35. ԶՎ-ի բնագրում՝ стену—ուղղված է ըստ բովանդակութեան «сцену»
էջ 593 տողեր 27—28. ԶՎ-ի բնագրում՝ сказал хозяин чайхане— ուղղված է՝
сказал хозяин чайханы:

էջ 594 տող 32. ԶՎ-ի բնագրում՝ шопот—ուղղված է՝ шепот:
«Զարյա Վաստկայում» վերնագրից հետո փակագծում տպված է От нашего кор-
респондента—վերջում՝ Аксель:

1925 թ. ընթացքում Բակունցը միմյանց հետևից հրատարակում էր «Մեր գյուղե-
րում» վերնագրով ակնարկներ՝ Երևանի «Խորհրդային Հայաստան» և Քփդիսի «Մար-
տակոչ» թերթերում, որոնց թղթակիցն էր նա: Նույն ժամանակ Բակունցը իրեն «Զարյա
Վաստկա» լրագրի հատուկ թղթակից այդ թերթում և հրատարակում էր իր գործերը:
«Մեր գյուղերում» հայերեն ակնարկները հրատարակվել են հետևյալ ժամանակագրու-
թյամբ. 1925 թ. մայիսի 13-ին, հուլիսի 10-ին, հոկտեմբերի 20-ին, նոյեմբերի 14-ին:

Նույն թվականին «Զարյա Վաստկայում» ռուսերեն հրատարակվել են հետևյալ թղթ-
թակցութունները. մարտի 15-ին՝ «Однн из многих», ապրիլի 3-ին՝ «Багратаван»,
հունիսի 3-ին՝ «По селам Зангезура», նոյեմբերի 5-ին «Мина ԾНБИ»: Ռուսերեն
հրատարակված երկերից վերջինը պատմվածք է, մյուս երեքը՝ ակնարկներ, որոնք նման
են «Մեր գյուղերում» հայերեն ակնարկներին: Ակնարկներից հրորոգը՝ «По селам Зан-
гезура» շատ ընդհանրություններ ունի «Մեր գյուղերում» վերնագիրը կրող ակնարկնե-
րի հետ: Այդ վերնագիրը անդրկովկասյան ռուսերեն թերթի համար այն ժամանակ
հազիվ թե թարգմանեին տառացի՝ «По нашим селам», քանի որ դա ոչինչ չէր ասի
ուս, ինչպես և առհասարակ ոչ հայ ընթերցողներին: Ըստ երևույթին, ռուսերեն վերնա-
գիրն ավելի որոշակի դարձնելու համար нашим-ի փոխարեն Зангезура բառն են դրել:
Ճիշտ է, մոտ շորս ամիս անց (1925 թ. հոկտեմբերի 15-ին) նույն «Զարյա Վաստկա-
յում» հրատարակված «Արտեիխա» պատմվածքի ենթավերնագրում փակագծի մեջ
նույնպես կա По селам Зангезура, բայց դա նախ վերնագիր չէ, ապա, կարծում ենք,
որ հեղինակային չէ. ավելի վաղ «Խորհրդային Հայաստանում» հրատարակված նույն
«Արտեիխան» այդպիսի ենթավերնագիր չունի:

Ռուսերեն հրատարակված այդ հրորոգ ակնարկը կառուցվածքով նման է հայերեն
հրատարակված «Մեր գյուղերում» Գ, Դ, Ե ակնարկներին, որոնք բոլորն էլ բաղկացած
են երեք մասից, և այդ մասերից յուրաքանչյուրը առանձին գլուղի կամ առանձին հարցի
է նվիրված: Բացառություս է Ա ակնարկը, որը մի գլուղի ու մի հարցի է նվիրված և մա-
սերի չի բաժանված: Այսպիսով, հիմք կա ենթադրելու, որ հայերեն «Մեր գյուղերում»
առաջին ակնարկից հետո ռուսերեն հրատարակված «По селам Зангезура» ակնարկը
նույն շարքի երկերից է, ըստ ակնարկների հրատարակման ժամանակագրութեան այն
ստացել է Բ համարը (դրել ենք հայերեն վերնագրի մոտ): Հիմք չգտանք նույն ակնարկա-
շարի մասերից համարելու միևնույն թվականին տպված «Однн из многих» և «Багра-
таван» ակնարկները. նախ նրանք ավելի վաղ են տպագրվել, քան «Մեր գյուղերում»
վերնագիրը կրող հայերեն առաջին ակնարկը և ապա՝ այդ երկուսի վերնագրերը որևէ
հիմք չեն տալիս նրանց այդ շարքի գործ համարելու: Հիշենք, որ նույն 1925 թվականին,
«Մեր գյուղերում» շարքից բացի, Բակունցը հայերեն հրատարակել է նաև մի շարք
այլ ակնարկներ՝ երկու «Գավառական նամականի», «Քիշանագ», «Մարալու», «Կյորա» և
այլն: Դրանց բնույթի են նաև ռուսերեն տպագրված հիշյալ երկու ակնարկները:

Արդյոք «Մեր գյուղերում» այս Բ ակնարկը ինքը Բակո՞ւնցն է ուսներն թարգմանել իր հայերեն գրածից, թե՞ թարգմանվել է «Զարյա Վաստկայի» խմբագրությունում: Հավանական է վերջինը:

Ակնարկի առաջին և երկրորդ մասերում տեղանուն չկա, երրորդ մասում խոսվում է Շուշիի խճուղու և նրա մոտ գտնվող Մակեր գյուղի մասին: Դա Գորիսի շրջանի փոքր գյուղերից է, շատ մոտ Տեղ գյուղին (դեպի արևելք): Սա ենթադրել է տալիս, որ ակնարկի նախորդ մասում նկարագրվածը նույն խճուղու մոտ գտնվող Տեղ գյուղն է:

Ակնարկի երկրորդ մասում նկարագրված է գյուղական թատրոն, որպիսին գտնում ենք նաև «Խոտ» ակնարկում (տե՛ս այս հատորում):

էջ 597, տող 19 (հայերեն). փորձ է անում՝ «Մայր Աբախի», էջ 592, տողեր 20—21 (ռուսերեն). репетирует «Майр Аракси»—Խոսքը վերաբերում է հայկական «Մայր Արաքսի ափերով» երգին (խոսք Ռ. Պատկանյանի, երաժշտություն Պ. Աֆրիկյանի):

էջ 598, տող 27 (հայերեն). Շուշվա խճուղին. էջ 593, տող 23 (ռուսերեն). Шуминское шоссе—խոսքը վերաբերում է Գորիսից Լաչինով Շուշի տանող խճուղուն:

«По селам Зангезура» ակնարկը նույնպես թարգմանել է Լ. Հովսեփյանը: Վերնագրի՝ «Զանգեզուրի գյուղերում» թարգմանությունը մենք դարձրել ենք «Մեր գյուղերում»՝ նկատի առնելով վերն ասվածը՝ «Զարյա Վաստկայի» խմբագրությունում հայերեն վերնագրի հնարավոր ազատ թարգմանության մասին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Պատմվածքներ և պատկերներ	Երկիր	Բնագրային տարբերակներ	Մանրագր.
Հիմար մարդը	5		
Աղոթք	7		629
Աշոտը	10		627
Անտառում	12		631
Էն տարին	15		631
Էն տարին	20		632
«Արտելիս»	26	605	633
«Տրախտորի մաշին»	33	606	634
Արգարենց Իվանի դատը	39		635
Իվան բեյը	42		636
Մատուն տղան	66	606	637
Թանգին	72	607	637
Գալուստի վիկը	78		638
Դրոպագան Գևոն	93		640
Հին տանը	111		641
Արարաչի Զաքին	117		643
Վաղը մարտի 8-ն է	129		643
Բևան, Բևան...	137		644
Տրանզիտ via Բալանդուր	166		646
Զմռան մի գիշեր	175		648
Մայրը	185		649
Վճիռը	198		650
Հերոս նոքարը	209		651
Տպարանի «պապաշան»	225		653
Աշխատանքի հերոսները	230		654
Կոմսոմոլի փոկերով	238		655
«Ընկեր Գալուստը»	244		656
Ժպտում էր մարդը	260		657
Կաղնու զերանը	269		658
Եղբայրության ընկուզենիները	278		659
Ակնարկներ	309		662
«Շյարք զափուսի»	311		662
Ձ Գավառական նամականի (շարք)			663
Ձ Գավառական նամականի (Ա)	320		663
Ձ Գավառական նամականի (Բ)	326		665
Ձ Գավառական նամականի (Գ)	331		665
Ձ Մեր գյուղերում (շարք)			666
Ձ Մեր գյուղերում (Ա)	337	607	667
Նախ Բիշնազ	343		669

Պ	Մեր գյուղերում (Գ)	349	670
Ս	Սարալու	356	671
	Կյորա	364	672
	Մեր գյուղերում (Գ)	370	672
	Խոտ	375	673
	Մեր գյուղերում (Ե)	381	674
Զ	Լժեն	387	675
Արց-Արմաշ		391	675
Շաթրիզ		396	677
-	Սանոթ բակը	403	679
✓	Կածանով	409	682
6	Կտրիսեցի Անդրեասի դիմումը	417	685
	«Սորուշ»	423	685
✓	Կապը	428	686
Չ	Օձի բերանից	433	687
	Պեմզայի հանքերում	447	690
Վրթ	Վարդազուն տուֆի երկրում	454	691
Մեր խորհրդային տնտեսությունները	օգնում են		
	չբավոր գյուղացիներին	463	692
Մ	Հաղթական հավաքը	464	692
?	Գյուղաշխատավորի տնտրակից	471	693
?	Մարմարի տուն կառուցողը	485	694
?	Մի կին պատգամավոր է	491	695
✓	Խոսում են Զավոյի բնակարանից	498	695
Վարդան Այգեցի, Աղվեսագիրք		505	696
Ա. Բալունց Նախաշավիղ		507	698
Աղվեսագիրք		518	700
Գարու հաշիվ		518	
Այրի կին և որդի		519	
Միայնակյաց և զամփո շուն		519	
Այծեր և զայլեր		519	
Երկու նկարիչ		520	
Առյուծ և աղվես		521	
Իմաստուն զատավոր		521	
Առյուծ և զայլ և աղվես		521	
Գինի		522	
Իմաստուն և ավագ էջ		522	
Միամիտ գողեր		523	
Եղեգն և ծառեր		523	
Իշխան և այրի		524	
Իմաստուն զինվոր		524	
Քաղավոր և օձ		524	
Առյուծ և աղվես և արջ		525	

Կաթ մեղու պատճառ պատերազմի	525	
Կտակ վասն դանձի	526	
Ուղտ և դալլ և աղվես	526	
Կոունկ՝ Թագավոր թռչունների և էշ ծզն և ձի	527	
Հիմար և ձմերուկ	527	
էշին թոռ ծնվեց	528	
Աղքատ և Ավետարան	528	
Հայր ու որդի	528	
Մարդն և ընկույզ և ձմերուկ	529	
Նկեղեցի և ջրաղաց	529	
Ամենագետ մարդ	529	
Աղվես և որսորդ	531	
Իշխաններ և իմաստուն	532	
Աղվես և թղթատար դալլ	532	
Այրի կին և խորթ որդի	533	
Հալալ մարդ	533	
Առյուծ և մարդ	534	
Մուկն և ուղտ	534	
Արվեստ կնոջ	535	
Գալլ և աղվես և ջորի	535	
Գող քահանա և այրի կին	536	
Անզգամ կին	536	
Դրախտ և զեղբուկ մարդ	539	
Մանրարքյուններ	540	704
Այլ խմբագրումներ	549	705
Վաղը մարտի 8-ն է	551	705
Հավելված	559	
արև. «Երբ որ բացվեն դռներ հուռո»	561	706
Один из многих	571	709
Շատերից մեկը	576	709
Багратаван	581	710
Բագրատական	586	716
По селам Зангезура	591	
Մեր գյուղերում (Բ)	596	716
Բնագրային տարբերակներ	601	
Մանրագրութուններ	613	
Ա. Բակունցի երկերի այն հրատարակութունները, որոնք հիշատակված են երկրորդ հատորում	615	
Հատորում գործածված պայմանական հապավում- ներ	615	
Բնագրերը	616	
Ընդգրկումը	619	
Պատմվածք թե ակնարկ	620	

ՊԿՍՆԷ ԲԱԿՈՒՅ

Ե ր կ ե ր

Հատոր II

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր

Ս. Ա. ԱՆԱՍՏԱՍՅԱՆ

Փնդարվեստական խմբագիր

Հ. Ն. ԳՈՐՄԱԿԱՆՅԱՆ

Տեխնիկական խմբագիր

Ս. Կ. ՉԱՔԱՐՅԱՆ

Սերագրիչ

Է. Ա. ՍՈՆԵԿՅԱՆ

ИБ 111

Պատվեր 869

Հրատ. 4831

Տպարանակ 20.000

Հանձնված է շտրվածքի 26. 07. 1978 թ.: Ստորագրված է տպագրության 9. 08. 1979 թ.:

Տպագրական 44,75 մամուլ + 3 ներդիր, պայման. 41,62 մամուլ, հրատ. 37,35 մամուլ:

Տառատեսակը՝ «գրքի սովորական», տպագրությունը՝ հարթ:

Թուղթ № 1, 60×84¹/₁₆, Գինը 4 ռ. 15 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան 19, Բարեկամության 24 գ.

Издательство АН Арм. ССР, Ереван 19, Барекамутян 24г.

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան 19, Բարեկամության 24.

Типография Издательства АН Арм. ССР, Ереван 19, Барекамутян 24.